Հարգելի՛ ընթերցող.

ԵՊՀ հայագիտական հետազոտությունների ինստիտուտը, չհետապնդելով որևէ եկամուտ, իր կայքերում ներկայացնելով հայագիտական հրատարակություններ, նպատակ ունի հանրությանն ավելի հասանելի դարձնել այդ ուսումնասիրությունները:

Մենք շնորհակալություն ենք հայտնում հայագիտական աշխատասիրությունների հեղինակներին, հրատարակիչներին:

Մեր կոնտակտները՝

Պաշտոնական կայք՝ **http://www.armin.am**

էլ. փոստ՝ **info@armin.am**

ՎԼԱԴԻՄԻՐ ՊԵՏՐՈՍՅԱՆ

ՍՏԵՓԱՆ ՇԱՀՈՒՄՅԱՆ.
ՆՐԱ ԿՅԱՆՔԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ

Հատոր երկրորդ

ԵՐԵՎԱՆ 2013

ՀՏԴ 93/99:323.272
ԳՄԴ 63.3 + 66.017

Երախտագիտություն եմ հայտնում Սփյուռքի նշանավոր ազգային-հասարակական գործիչ, հրապարակախոս **Նազարեթ Սրմաքեշյանին** սույն աշխատության երկրորդ հատորի տպագրությունը հովանավորելու համար:

Հեղինակ

Աշխատանքը կատարվել է ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտի նոր ագույն պատմության բաժնում:

Խմբագիր՝ Բաբկեն Վարդանյան

Պ505
Պետրոսյան Վլադիմիր
Ստեփան Շահումյան. նրա կյանքի պատմությունը /Վ. Պետրոսյան.- Եր.: Հեղ. հրատ., 2013 թ.: Հատոր 2.- 580 էջ
Գիրքը նվիրված է հայ ժողովրդի արժանավոր զավակ Ստեփան Շահումյանի կյանքին ու գործունեությանը:

ՀՏԴ 93/99:323.272
ԳՄԴ 63.3 + 66.017

ISBN 978-9939-0-0924-1

© Պետրոսյան Վլադիմիր, 2013

Ես սիրով իմ համեստ նպաստը կը բերեմ «Ստեփան Շահումեան. նրա կեանքի պատմութիւնը» գրքի երկրորդ հատորի տպագրութեանը, նկատելով, որ յարգարժան հեղինակ Վլադիմիր Պետրոսեանը իր այդ աշխատութեամբ ոչ միայն մոռացութիւնից կը փրկէ հայ ժողովրդի արժանավոր զաւակ Ստեփան Շահումեանի անունը, այլեւ կը մերկացնէ պատմութեան կեղծարարներին, որոնք կը փորձեն արատավորել հայ ժողովրդի այդ մեծ զաւակի անունն ու գործը:

ՆԱԶԱՐԷԹ ՍՐՄԱՔԵՇԵԱՆ

Զուիցերիա, Ժընեւ
10 Յունիս, 2013

Արտահայտելով իմ խորը երախտագիտությունը Սփյուռքի նշանավոր ազգային հասարակական գործիչ, հրապարակախոս Նազարեթ Սրմաքեշյանին, պարտքս եմ համարում ընթերցողին ներկայացնել նրա համառոտ կենսագրությունը:

Նազարեթ Սրմաքեշյանի կենսագրությունը

Նախ նրա ծնողների մասին: Նրա հայրը՝ Հրանտ Սրմաքեշյանը, ծնվել է Կոստանդնուպոլսում 1880 թվականին և մանուկ հասակից զգացել է հայերի նկատմամբ թուրքական իշխանությունների գործադրած բռնությունների ծանրությունը:

Հրանտը զբաղվում էր ջրի խողովակներ ու վառարաններ պատրաստելով և վայելում էր իր շրջապատի հարգանքը: Երբ սկսվում է Առաջին համաշխարհային պատերազմը, Հրանտ Սրմաքեշյանն էլ հազարավոր հայ երիտասարդների հետ տարվում է թուրքական բանակ: Գուցե նա էլ կիսեր տասնյակ հազարավոր հայ երիտասարդների ողբերգական ճակատագիրը, եթե մի դիպվածով չփրկվեր:

Հայ զինվորներին ոչ միայն համազգեստ ու զենք չէին տվել, այլև հացից էին զրկել: Եվ հայ զինվորները իրենց քաղցը հագեցնելու համար մրվում էին բույսերով: Դրա հետևանքով բազմաթիվ զինվորներ թունավորվում են ու մահանում:

Հրանտ Սրմաքեշյան

Մի անգամ էլ թուրքական հրամանատարին հարկավոր է լինում բույսեր ուտեցնել: Հրանտը հանձն է առնում և պատրաստում է այդ բույսերը: Դրա համար, իբրև պարգև, նա առնում է երկու հատ հաց, որը նա բաժանում է իր հվանդ ընկերներին:

Շուտով թուրք հրամանատարը տեղափոխվում է Հալեպի ռազմաճակատ և իր հետ տանում է նաև Հրանտին: Հրանտը Հալեպում մնում է մեկ տարի: Այստեղից նրան հաջողվում է վերադառնալ Կ. Պոլիս, Հալեպից իր հետ բերելով երկու հայ որբ տղաների:

Անտանելի չոգի պատճառով Հրանտը երկու որբերի հետ միասին տեղավորվում է Կ. Պոլիս տանող գնացքի վագոններից մեկի տանիքին: Կայարաններից մեկում թուրք զինվորները բռնությամբ Հրանտին ու որբերին իջեցնում են վագոնի տանիքից և զբաղեցնում նրանց տեղը: Հրանտը ստիպված մի կերպ որբերի հետ խցկվում է վագոնի մեջ:

Երբ գիշերվա մեջ գնացքն անցնում է ցածր բարձրություն ունեցող թունելով, վագոնի տանիքին տեղ զբաղեցրած թուրք զինվորները չեն նկատում վտանգը և նրանցից ոչ ոք չի փրկվում...

Կ. Պոլսում Հրանտը հանդիպում է Կոնիայից մի կերպ փրկված Լուսաբերին, ամուսնանում են և որոշում հեռանալ այդ քաղաքից: Նրանք հաստատվում են Ռումինիայում, որտեղ էլ 1926 թ. հոկտեմբերի 6-ին ծնվում է նրանց ավագ որդին՝ Նազարեթը:

Երբ սկսվում է Երկրորդ համաշխարհային պատերազմը, Սրմաքեշյան ընտանիքը վերադառնում է Ստամբուլ: 1946 թ. Հրանտ Սրմաքեշյանն առաջիններից մեկն էր, որ ցանկություն է հայտնում վերադառնալ Հայրենիք՝ Սովետական Հայաստան: Սակայն թուրքական իշխանությունները ոչ մի հայ ընտանիքի չեն արտոնում Հայաստան վերադառնալ...

1966 թ. Ստամբուլում մահանում է Հրանտ Սրմաքեշյանը: Իսկ Լուսաբերը մահանում է 1972 թ: Մահից առաջ նա իր զավակներին ավանդում է. «Զմոռանալ Հայաստանը»:

Ծնողների մահից հետո Նազարեթ Սրմաքեշյանը վերջնականապես կարողանում է հեռանալ Ստամբուլից և կնոջ՝ Սոնայի ու զավակների հետ հաստատվում է Շվեյցարիայի Ժնև քաղաքում: Նա դառնում է Շվեյցարիար-

Լուսաբեր Սրմաքեշյան

յի Հայկական համայնքի եռանդուն գործիչներից մեկը և իր ազգային գործունեությունը ծավալում է եվրոպական մի շարք երկրներում:

Այդ գործունեությունը կապված է եվրոպական տարբեր երկրների բանտերում տառապող հայ հայրենասեր երիտասարդներին օգնություն կազմակերպելու հետ: 1884 թ. սեպտեմբերի 17-ին հայ բողոքական քահանա Հարություն Հելվեճյանի, Սիյուռքի նշանավոր հասարակական գործիչ Հովհաննես Չիլինկիրյանի հետ միասին Նազարեթ Սրմաքեշյանը դառնում է հայ քաղաքական բանտարկյալների օգնության կենտրոնական հանձնախմբի ստեղծողներից մեկը:

Այդ հանձնախումբն իր նպատակն էր համարում «ամէն գնով օգնել հայ քաղաքական բանտարկեալներուն եւ անոնց արգելափակեալ կեանքը տանելի դարձնել զէթ մասամբ, զանոնք քաջալերել հոգեւորապէս, բարոյապէս ու նիւթապէս՝ մինչեւ անոնց ազատագրումը»:

Հանձնախումբն իր խնդիրն էր համարում օգնել բոլոր հայ երիտասարդ քաղաքական բանտարկյալներին՝ առանց կուսակցական խորականության:

1988 թ. դեկտեմբերի 7-ի ահավոր երկրաշարժից հետո Նազարեթ Սրմաքեշյանը ջանք չի խնայել Հայաստանին օգնություն կազմակերպելու գործում: Իսկ երբ սկսվում է Ղարաբաղյան շարժումը, Նազարեթ Սրմաքեշյանի գերդաստանը օգնության է հասնում Լեռնային Ղարաբաղի հայ բնակչությանը: Այսօր էլ այդ հայրենասեր գերդաստանը նույն եռանդով շարունակում է օգնել Հայաստանին ու Լեռնային Ղարաբաղին:

Նազարեթ Սրմաքեշյանը Սիյուռքում ճանաչված հրապարակախոս է: Նա հանդես է գալիս հայ կյանքի տարբեր խնդիրներին վերաբերող հոդվածներով: Նրա հրապարակախոսական հոդվածների մի ծաղկաքուլ «Ազգովին զգաստանանք» խորագրով հրատարակվել է Երևանում 2011 թվականին, որն անմիջապես գրավում է ընթերցողների ուշադրությունը և արագորեն սպառվում է:

Հայաստանից հեռու ապրելը նրան չի խանգարում, որպեսզի հստակորեն զգա Մայր Հայենիքի զարկերակը:

Նազարեթ Սրմաքեշյանի հայացքների մասին գաղափար կազմելու համար նպատակահարմար եմ համարում ընթերցողի ուշադրությանը ներկայացնել տարբեր տարիներին նրա հրապարակախոսական հոդվածներից մի քանի հատված:

1. «Սպիտակի ահաւոր երկրաշարժին յաջորդող օրերուն, Զուիցերահայ այրազան կազմակերպութեանց միահամուռ գործակցութեամբ, օգնութեան յանձնախումբ մը կազմուեցաւ, կեդրոն ունենալով Ժընեւի Հայկական եկեղեցին: Զուիցերիոյ բարեսիրտ և առատաձեռն ժողովուրդը, նոյնիսկ յետին գիւղէն և գիւղաքաղաքներէն թղթատարութեամբ կամ իրենց ամենամօտիկը եղող Հայկական միաւորներու միջոցաւ, թոններով ու թոններով զգեստ, սննդանիւթ և այլ իրեր կուտակեցին: Եկեղեցւոյ շրջափակի տարածութեան վրայ պարապ տեղ չէր մնացած: Փլատիկէ «գոլի»ներու իսկական բլուր մը կազմուած էր: Նոյնիսկ լեցուէցան պարապ շտեմարաններ և դպրոցներու գետնայարկ գաւիթները, հակերը անձրևէն և ձիւնէն պաշտպանելու համար: Բարեբախտաբար, հակառակ եղանակի սառնութեան, ճիշդ 11 օր կաթիլ մը անձրեւ և կամ ձիւն չը տեղաց, մեզի պարգեւելով ժամանակ, որ այդ բոլորը ամբարենք եկեղեցիին յարակից՝ ետեւի կիսակառոյց Հայկական կեդրոնի շենքի տանիքին տակ, որուն ջինութիւնը արդէն քանի մը տարիէ ի վեր, աւարտած էր:

Այդ լարուած օրերուն, յանկարծ, Զուիցերիացի նուիրատուներ սկսան մեզի հարց տալ, թէ այս եղած օգնութիւնները իրենց տեղը և նպատակին կը հասնի՞ն: Մենք շուարումի մատնուեցանք: Ողբան ալ գիրենք գոհացնող երաշխիքներ թուեցինք՝ հարցականները աւելցան: Սկիզբը գոլիներու վրայ «Երեւան» մակնիշը կը գրէինք: Յետոյ աւելի ապահով նկատելով՝ գոլիներուն վրայ «Էջմիածին» գրել սկսանք: Մէկ քանի ամիս յետոյ իմացանք և լրագիրներու մէջ կարդացինք, թէ համաշխարհային տարողութեամբ Հայաստան փութացող օգնութիւնները, Հայաստանի վերին իշխանատրներու մեծաշնորհին ներքեւ և թոյլտութեամբ, Երեւանի պողոտաները ողողած սեղանիկներու վրայ ցուցադրուելով կը վաճառուին, և այս դրութիւնը, դժբախտաբար, աւելի նրբին ձեւով, կը շարունակուի մինչեւ այսօր» (02.12.1995):

2. «...Ստիպուած ենք, ամէն գնով ու ազգովին, մեր կրթական կեանքի ու հիմնարկներու բարեկարգման էական գործը յաջողցնել, ի հեճուկս մեզ պատակտել ուզող սրմսրմղուկ, ներքին և արտաքին խանգարիչներու և թշնամիներու.:

Ա. Բ. Գ.- ի զէնքը Ս. Մ. Մաշտոց մեզի շնորհեց: Այդ օրէն ասդին, դարեր ամբողջ, մենք պաշտպանուեցանք բոլորիս ծանօթ ամէն տեսակի փորձանքներէ, վերապրելով և շարունակելով Հայ Ազգին գոյութիւնը: Հիմա դրութիւնը ալ աւելի ծանր է Սիրիոյի տարածքին: Բայց ունինք բարեբախտութիւն մը՝ ունինք նիւթական կարելիութիւն, որով կրնանք Մաշտոցի զէնքը գործածել աւելի գիտակից և իմաստուն ձեւով, վերազինուիլ ի խնդիր գոյատեւումի: Այլապէս՝ ձախողութիւնը մահացու և վերջնական կրնայ ըլլալ, պատմութեան խորերէն ցայսօր վերապրող մեր Հայ Ազգին համար»: (02.03.1996):

3. «Խ. Միութեան անսպասելի և յանկարծակի փլզումէն յետոյ, այլ ազգերու կարգին, մեր Հայաստան երկրին ալ, երկինքէն ինկած պարգեւի նման, իր անկախութեան տիրացաւ, զարմանքի և շուարումի մատնելով բոլորը: Մէկ անգամէն Հայաստան ինքզինք դրամատիրական առեղծուածային սիրթեմի խառնափնդոր ու հազարումէկ թակարդներով լի խաչմերուկի մը առջեւ գտաւ:

Մինչեւ այդ օր, Հայաստանի հայը, համեմատաբար, հանգիստ էր: Կարգաւորուած դրութիւն մը կար: Ամեն ոք իր գործը ունէր: Չէր մտածեր թէ վաղը գործ պիտի ունենա՞յ թէ ոչ: Հասած էր կեանքի որոշ մակարդակի: Ներքին թուրիզմով չբաւարարուած ան կ'ուզէր, կը փափաքէր արտասահման ճամբորդութիւններ կատարել, զոր յայտնի պատճառներով այս մէկը, մասամբ արգելքի կը հանդիպէր, կը յարուցէր խոչընդոտ անոր առջեւ: Մինչ արեւմտեան խաթարող փրոփականտի ազդեցութեան տակ, բռնուած արտասահման այցի ախտէն, հայրենաբնակ հայն իր հանգիստ կեանքը կը խանգարէր, կը թունաւորէր:

Սովետական կարգերու փլուզումով, Հայաստանցի հայը նմանեցաւ բարբոր և անհոգ ապրող այն անփորձ պատանիին, որ յանկարծ, իր հոր մահացումէն որբացած, ընտանիքի «բեռ»ը ստանձնելու պարտաւորութեան տակ, այս մէկն կրելու անկարողութեան առջեւ մնքած ու ապշահար, հոգեկան անկումի կը մատնուի:

Առ այդ, Հայաստանի դրամատիրական տնտեսութեան յատուկ նախնական պայմաններու չգոյութեան և անգիտակցութեան պատճառով գոյացած պարապութենէն ու խառնիճաղանչէն օգտուելով, կարգ մը պատեհապաշտ, ազգային ոգիէ պարպուած մարդոց սակաւաթիւ խմբակ մը, «աչքաբաց» անձեր, «Ազատութիւն, Անկախութիւն, Մարդկային իրաւունքներ, Անձնական նախաձեռնութիւն» լոզունգներու թմբկահարութեամբ, Տոլարի սիրոյն ամէն արբութիւն ոտնակոխելով ու միջոցներու միջեւ խորութիւն չդնելով, չտես և ցուցամոլ «նորահարուստ» մաֆիական տիպարներու դասակարգ մը կազմեցին, որոնք նորակազմ իշխանութիւններու որոշ շրջանակներուն հետ գործակցաբար, սկսան ժողովուրդը կեղեքել ու հայրենիքը թալանի տալ:

Այսպէս՝ աղքատութիւնը և չքաւորութիւնը ժողովուրդի նկարագրի փոփոխութեան պատճառ եղան: Երկրին մէջ ամէն ինչ դարձաւ ծախու: Նոյնիսկ՝ ազգային պատմական անգնահատելի ու եզակի արժէքներ...:

Մենք դարերով ոտնակոխ, գերի եղած, տեսակ-տեսակ փորձութեան ենթարկուած, չարչարուած, նահատակուած և փոքրացած ազգ ենք: Այս բոլոր պատուհասները մասամբ մեր նկարագրին բնորոշ անմիաբանութեան ու նախանձի ախտին հետեւանքն են, ժխտական ու կործանարար:

Ուրեմն կրնանք հարց տալ, թէ ինչո՞ւ մենք այսպէս ենք՝ անմիաբան, այլամերժ, իրարու հանդէպ չունինք հանդուրժողութիւն, սիրոյ ու յարգանքի զգացումը: Արդեօ՞ք այս բոլորը արդիւնք են մեր դարերով գերի, ստորադաս և ստրուկ ապրածի հոգեվիճակին: Մենք մեր փրկութիւնը կարծեր ենք գտնել եսասիրութեան, անձնականը ձեռքէ չհանելու մարմանջով հաւաքական շահը, համազգայինը անտեսելու մէջ: Եւ այս համոզումը, այսպիսով, նկարագի՞ր դարձեր է մեր մէջ:

...Մեզի պէտք է, կը կարծենք, անշահախնդիր, սրտացաւ, ուղղամիտ և պարկեշտ, ազգային հոգսերով տոչորուն, մեզ պատակոտել ուզող արտաքին թշնամի ուժերու մեքենայութեանց հակադրուող, աչալուրջ ու բանիմաց ղեկաւարութիւն մը, որ ինչու չէ՝ թող քիչ մըն ալ ըլլայ Տիգրաղորբեալ Իշխանութիւն: Ժողովրդաւարութիւն բառը իր մէջ, մասամբ մըն ալ, անմիաբանութիւն և ուժերի ջլատում կը նշանակէ: Պէտք չէ թողուլ, որ ան անիշխանութեան տանի Ազգը: Խարխափումներու, անորոշութեան, ապագայի մտահոգութեանց մղձաւանջի մէջ կը գտնուինք:

Ուրեմն հիմակուընէ ստիպուած ենք կտրուկ միջոցներով մատղաշ նոր սերունդը ազգային գիտակցութեամբ, բարոյական արժանիքներով, իրարու հանդէպ զոհաբեր գտնուելու ոգիով դաստիարակել: Անոնք պէտք է ըլլան միաբան, առաքինի ու երկպառակտիչ կուսակցական նախապաշարումներէ ձերբազատուած և ազգանուէր: Չիրենք այսպէս դաստիարակելու հիմքերը հարկ է նետել:

...Հարկ է ձերբազատուիլ ներքին ու արտաքին պատեհապաշտներէն, իրենց դիրքն ու շահը կորսնցնելու համար ամէն միջոցի դիմելու պատրաստ եղող ազգին մակաբոյծներէն: Հայրենիքի և Սփիւռքի մէջ չեն պակսիր կորովի, զոհաբերող, քիչով գոհացող իմաստուն անձեր, որոնց կամքէն և գործելակերպէն կախեալ է, մեծ չափով, Հայութեան ապագան» (01.01.1997):

4. «...Ամէն ազգ, իր աշխարհագրական, պատմական, տնտեսական և ռազմավարական ապահովութեան շահարկումներէն մեկնելով, ստիպուած է կողմերէն մէկուն յարելու: Մեր պարագային՝ դարերու փորձառութեամբ, ճակատագրականօրէն կապած ենք Հիւսիսի մեր դարաւոր բարեկամին՝ Ռուսիոյ: Ան ինչ վարչաձեւ ալ ունենայ՝ միեւնոյնն է, Ռուսիա և Հայաստան, ազգային ապահովութեան մտահոգութենէ մղուած, իրարու բնական զինակիցներ են, երկու երկիրները, մեծ կամ փոքր՝ ունին հասարակած նոյն թշնա-

մինները: Անհեռատեսության ու ազգայնամոլական պատճառներով եթէ իրարու դաւեն, երկուքին ալ վախճանը եկած կրնանք համարել:

Թուրքին սաղայէլական նպատակն է, նախ՝ մեզ բաժնել Հիւսիսի զինակիցէն, եթէ կարելի է՝ նոյնիսկ մեզ թշնամացնել անոր տուտերով, զրպարտութիւններով կամ տնտեսական շահաւետ սին խոստումներով, անշուշտ՝ միշտ Ամերիկայի զօրակցութեամբ:

...Այսօր, Սովետ Միութեան փլուզումէն յետոյ Ռուսիա իր պատմութեան ամէնէն տկար ժամանակներէն մին կ'ապրի: Ուրեմն, այս ժամանակաւոր տկարացումը, պէտք չէ պատճառ դառնայ, որ տուժէ Ռուսիոյ հետ Հայաստանի եղբայրական և ռազմավարական դաշինքը: Զգաւենք անոր: Ինչպէս վերը ըսինք՝ Թուրքին մեզի շոայլած բարիդրացիական, խաղաղութեան (իր ուզած ձեւով) ու տնտեսական բարգաւաճումի խաբուսիկ խոստումներէն տարուելով դիրք չփոխեն: Թուրքին մեղրածոր լեզուին չհաւատանք, անկէ չխաբուինք (ինչպէս որ 1915-էն առաջ, Հայութեան մէկ կարեւոր մասը հաւատաց Թուրքին, նոյնիսկ զինք եղբայր որակելով...) և իր գիրկը չիյնանք:

Սովետ Միութեան փլուզումէն յետոյ, երկնային պարգեւի նման, Հայաստանն ալ, իր կարգին, անկախութիւն ստացաւ, ճիշդ 1918ի Ա. Հանրապետութեան նման, և ժողովուրդը երգ ու պարելով փողոց թափեցաւ: Այս բոլորը հեռատեսիէն տեսանք: Մենք, որ արեւմտեան աշխարհը և Թուրքերը լաւ կը ճանչնանք, ցաւ զգացինք մեր ազգակիցներու ապազային ենթարկուելիք տաղտուկներուն և վտանգին կանխատեսումով» (19.09.1998):

5. «Երկնքի իշխանութիւնը երկրի վրայ տարածելու առաքելութիւն ունեցողներէն շատեր, առաջնորդուած իրենց հոգեւոր կոչում ունենալու հանգամանքէն, փոխանակ Յիսուսի աշխարհիկ կեանքի, կենցաղի, վարուելակերպի, բարոյական միտքը և գաղափարները ընդօրինակելու և Քրիստոսի օրինաւոր յաջորդները ըլլալու, դժբախտաբար, աշխարհիկ բոլոր փառքերէն ու հաճոյքներէն, նոյնիսկ սեռային վայելքներէն անպակաս չեն մնար անոնք՝ ըլլան վարդապետ, թէ եպիսկոպոս: Օրինակներ յիշատակելը անյարիր և ալ աւելի նուաստացուցիչ կ'ըլլայ...:

Երբ 1961-ի ամռան, երջանկայիշատակ Վազգէն Ա Վեհափառը, Գարեգին Խաչատուրեան Պատրիարքի վախճանման առթիւ Պոլիս եկաւ, իր քարոզներէն միւոյն մէջ ապէս արտայայտուեցաւ: Ես ժողովուրդի մը երեք հոգիէն մին գիտնական եղող երկրէ մը կու գամ: Ուրեմն, նիւթապաշտութեան հակազդելու մէջ, նոյնպէս զարգացած և պատրաստուած, իրենց կոչումին վայել հոգեւորականներ պէտք է հաստատել...» (01.01.1999):

6. «Տնտեսութիւնը կարեւոր վարկած մըն է բոլոր ժողովուրդներու և անձերու համար: Այս իրականութիւնը ընդունելով հանդերձ, դէմ ենք, որ տնտեսութեան պիտակի տակ, հայ ժողովուրդը սխալ, ազգակործան քաղաքական ընկալումներու առաջնորդուի: Հայաստանը Ամերիկեան ու Թուրքական վասալ պետութիւն դարձնելը պարզապէս դավաճանութիւն է:

Ժիրայր Լիպարիտեան և Լեւոն Տէր Պետրոսեան նոյն գործընթացը կը հետապնդէին: Լիպարիտեանի դիմակը վեր առնելու համար, եօթը տարի սպասել պէտք եղաւ: Քոչարեանի նախարարապետութեան նախօրեակին, «ընտանիքի կարօտը» մտաբերելով, ան Ամերիկա վերադարձաւ: Ժ. Լիպարիտեան, երեք ամիս առաջ, Պոլիս կը գտնուէր, իր նոր հրատարակիչի գիրքին համար կարգ մը գիտելիքներ հաւաքելու պատրուակով: Անգստրաս գացած և մէկ ժամ Տէմիրէլի հետ գլուխ գլխի մտերմիկ տեսակցութիւն ունեցած է: Շատ հետաքրքրական է գիտնալ, թէ արդեօք ի՞նչեր խօսեցան: Երեւակայելը, շատ ալ դժուար չէ...:

Ժիրայր Լիպարիտեան և Լեւոն Տէր Պետրոսեան չէ՞ին գիտեր, թէ Ուիլսոնեան բլանով՝ 1920-ի Սեւրի դաշնագրով իրագործելի Ազատ, Անկախ Հայաստանը հազիւ երեք տարի ետք, 1923-ի Լոզանի դաշնագրով ամբողջովին շրջեցաւ, վերափոխուեցաւ: Ուրեմն՝ ինչպե՞ս հաւատալ Ամերիկայի:

Ինչպէ՞ս հաւատալ 1915-ի ցեղասպանութիւնը կիրարկող Թուրքին: Մեզ մէջ շատ շատեր, միայն 1915-ը կը յիշեն: 1915-ով վերջակէտը դնել ուզուեցաւ: Ոչ մէկը կը յիշատակէ այդ թուականէ առաջ և դարեր ու դարեր մեծ ու փոքր և այլազան ձեւերով յարատեւ կիրարկուած 1915-ները» (24.08.1999):

7. «Մեր մեծագոյն, կարեւորագոյն և էական խնդիրը մեր ապագան է: Հայ մնալու «լինել կամ չլինել»ու կենսական վարկածը: Ուրեմն հարկ է՝ համայն հայութեան խնդրահարոյց հարցերը, մտահոգութիւնները քննարկել, տէրութեան հովանիին տակ հաւաքաբար նստիլ-խորհրդակցիլ, մտածել, վճռել, մեր տկարութիւնները, կարողութիւնները, առաւելութիւնները, նկարագիրը, իրարու հանդէպ մեր ունեցած դիրքը, կեցուածքը ուսումնասիրել քննարկել և ընդհանուր յայտարարի գալ և հաստատ որոշումների յանգել, գաղիքը բլանաւորել, որպէսզի հայ անհատը գիտակցի դէպքերու հանդէպ բռնելիք վարուելակերպը: Վերջապէս՝ հաւատայ և ըստ այնմ շարժի:

Այս փուլին Սփիւռքի կուսակցութիւններու այս ընոյթի առկայութիւնը այլեւս հարցական կը դառնայ: Կուսակցութիւնները որքան ալ մրցակցութիւնը յառաջադիմութեան գործօն նկատեն, ըստ մեզի անոնք սխալ են: Ժամանակավրէպ են: Մանաւանդ՝ ներկայ պայմաններու մէջ: Երբ առաւելա-

գոյն միասնութիւն ու գործակցութիւն կը պահանջուի բոլոր հայերէն: Որովհետու անոնց՝ միջ-կուսակցական գզվռտուքը հակամարտութեան և անհամաձայնութեան տեղի կու տայ: Անցեալին անոնք կիրքեր բորբոքեցին, թշնամութեան և ազգային բաժանման դուռ բացին և այս ու նման պատճառով պարտութեան և եղեռնի գետին պատրաստուեցաւ:

...Արցախի ազատագրման կոմիտէի 11 անդամներէն մին ըլլալով Լ. Տ. Պետրոսեան՝ իր նմաններուն մէջէն կրցաւ պրծիլ և Խորհրդային կարգերու փլուզման այդ անորոշ վիճակէն օգտուելով՝ կարողացաւ Հայաստանի նախագահութեան տիրանալ: Իրմով Հայաստանի փորձանքներով լի, աղէտաբեր շրջանը սկսաւ: Իր անկարողութեան պատճառով...իբր թէ«խաղաղութիւն ձեռք բերելու» միամիտ պատրուակով, 8-10 հազար քաջարի հայրենասէրներու կեանքի գնով կամ ձեռք բերուած Արցախի մէկ հողամասին ապագայի ապահովութիւնը երաշխաւորելու պատրուակով, հողը թշնամիին զիջելու տրամադրութիւն ցոյց տուաւ: Ինք և իր մերձաւորներուն՝ անազնիւ ու անխղճամիտ պատեհապաշտներուն պատճառով, երկրին մէջ ահաբեկչութիւն և սարսափ ծայր տուին: Սրտացաւ ու հայրենասէր պաշտօնատարներ վատաբար, իրենց ծոծրակներէն գնդակահարուելով մահացան...:

Սփիւռքի (ներառեալ Ռուսահայ) մեր հայրենաբաղձ ազգայիններն են որ ներդրումներ կ'ընեն երկրին: Տարիներով կ'ունկդրեմ Հայաստանի Հեռատեսիլը...Երբեք չեմ լսած Հայաստանի մեր «էլիտար»ներէն մէկուն առատաձեռնութիւնը: Արդեօ՞ք անոնք վստահութիւն չունին Հայաստանի ապագային և, այդ պատճառով, արտաներդրումներ կ'ընեն:

Տիրահռչակ Լ. Տէր Պետրոսեանի ազգամնաս գործունէութիւններէն մէկն ալ եղաւ այն, որ Սովետական շրջանի համբաւաւոր քաուչուքի «Նայիրիտ» ու «Երազ»ի նման մեծ գործարաններ, որոնք Սովետական ժամանակի փառքը կը կազմէին, ուր հազարաւոր մարդիկ կ'աշխատէին և իրենց հացը կը վաստակէին, այդ գործարանները վերակենդանացնելու համար տեղական և Սփիւռքի գործունեա, փորձառու անձերու միջոցով օրուան նորագոյն թեքնիկայով բարեփոխելու տեղ, մեքենաները երկաթի գինով դրացի երկիրներուն ծախուեցան:

Այս ոճրային արարքի պատճառաւ հարիւր հազարաւոր անձեր անգործ մնացին և երկիրը իսկական անելի մատնուեցաւ: Հետեւանքը այն եղաւ, որ մէկ ու կէս միլիոն մարդ արտասահման գաղթեց: Արտահոսք եղաւ: Մինչդեռ կը մտածէինք, թէ Հայաստանի «Անկախացում»ով հայրենադարձ պիտի սկսէր: Այս ահաւոր և յոյժ մեղադրելի արարքը երկիրը յետամնացութեան, աղքատութեան և ժողովուրդը ահռելի յուսայատութեան մատնեց...:

Հայաստանի իշխանութիւնները «էլիտար»ներու ճնշումով, ուելի քան տասնեակ տարիներէ ի վեր կը մարտնչին, որ թրքական սահմանը բացուի: Բոլորին ծանօթ է, որ Հայաստանի շուկան թրքական ամէն տեսակի ապրանքով լիքն է: Ուրեմն՝ այս ի՞նչ խեղկատակութիւն ու խաբկանք է...:

Մեր համոզումով՝ եթէ թուրքերը նոյնիսկ սահմանը բանան, գոցողը մենք պետք է ըլլանք: Որովհետեւ ասկէ տնտեսական, մանաւանդ, ընկերային և բարոյական...անդարմանելի վնասներ պիտի կրենք:

Մեր երկիրը՝ Հայաստան, թուրքական երկու պատի միջեւ սեղմուած հողամաս մըն է: Հաւանական պատերազմի մ'ընթացքին, վերը յիշուած ազգին ծուծը ծծած «էլիտար»ները, իրենց արտաներդրումներուն երկիրները կը փախչին: Թուրքական այս սպառնալիքէն, պատուհասէն երկիրը պաշտպանելու համար միայն հարենասիրութիւնը չի բաւեր: Հայրենասիրութեան կից կան նաեւ ուրիշ ազգակ-անհրաժեշտութիւններ: Ժողովուրդը պէտք է աղքատութենէ, չքաւորութենէ փրկել: Առնուազն բարեկեցիկ կեանք մը հարկ է ապահովել անոր: Ան ունենալու է գործ, տուն, ընտանիք պահելու միջոց: Որպեսզի պատերազմի պարագային, այս բոլոր արժէքները պաշտպանելու համար, չյամենայ, չտատամսի, և դիմէ պատերազմի ճակատ: Երթայ մարտնչելու: Աղքատը, չքաւորը փախուստ կու տայ (քիչ բացառութեամբ), որովհետեւ պաշտպանելիք ոչինչ չունի: Միայն իր անձը փրկելու կ'աշխատի:

Հայաստան, եթէ բարգաւաճած, շատ մը ճիւղերով պտղաբեռնաւորուած կանանչ տերեւներով ու փարթամ տեսքով ծառի մը նմանեցնենք, զայն խնամելու համար ինչպէս որ անհրաժեշտ ջուրով ջրել հարկ է, Հայաստանն ալ պահպանելու և պաշտպանելու համար, զայն արիւնով...ջրելու պարտաւոր ենք» (01.01.2011):

8. «Թուրքիան սկսած է քաղաքա-տնտեսական հրապուրիչ«ժեսթ»եր ընել Հայաստանին: «Ինայծ երկարել» անոր շահամոլ շրջանակներուն, «սիրաբանութիւն» առաջարկել: Հայաստանի առեւտրական որոշ շրջանակներ արդէն հոգի կու տան, որ թուրքերուն հետ գործառնութիւններ ընեն: Ինչ որ լարուած ծուղակը իյնալ կը նշանակէ, դաւին զոհ երթալ: Անշուշտ, որ այս մէկը թուրքերուն բնորոշ, փափաքած մարտավարութիւնն է:

Թուրքերը լաւ գիտեն Հայաստանի գործարարներուն այս տկարութիւնը՝ սահմանը բանալու կապակցութեամբ, որ, իբր թէ, ուելի աժան փոխադրութեան հնարաւորութիւն պիտի ընձեռնէ հայկական կողմին:

Մինչդեռ, սահմանին բացումը աւելի շատ Թուրքիոյ Հիւսիսարեւելեան մասի ժողովուրդին ծայրահեղ աղքատութեան և անգործութեան վերացումին, թեթեւացման պիտի օգնէ, երթեւեկը պիտի աշխուժանայ, տնտեսութիւնը ծաղկի-զարգանայ: Եւ այսպիսով՝ Հայաստանի մեր սիրելի գործարարները իրենց գձուձ շահերուն համար, Թուրքիոյ (մեր պատկան հողամասի) բնակչութեանը օգնելու Հայաբնակ, մինչեւ անգամ վատ և դավաճանական դեր կատարելու դրութեան պիտի մատնուին:

Այնպէս որ, Ադրպէյճանի նաւթին սիրոյն սահմանը գոց պահող Թուրք իշխանութիւնը եթէ վաղը սահմանը բանալ ուզէ, մենք պէտք է զայն՝ սահմանը գոցենք(«Նայրի», Բացատրիկ, 2012 թ.):

ԳԼՈՒԽ 12

ՍՈՎԵՏԱԿԱՆ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԺՈՂԿՈՄՍՈՎԵՏԻ ԴԵԿՐԵՏԸ «ԹՈՒՐՔԱՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԱՍԻՆ»

1. ԱՐԵՎՄՏՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՑԱՐԱԿԱՆ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔԸ

Այժմ անհրաժեշտ եմ համարում ընթերցողի ուշադրությանը ներկայացնել սույն աշխատության առաջին հատորի էջերում հիշատակված Սովետական Ռուսաստանի ժողկոմսովետի «Թուրքահայաստանի մասին» դեկրետը և դրա հետ կապված իրադարձությունները:

Ընթերցողին թող տարօրինակ չթվա, որ ես ընդհատում եմ Շահումյանի կյանքի ու գործունեության ժամանակագրական պատմությունը մինչև 1918 թ. մայիսի վերջը տեղի ունեցած իրադարձությունների շարադրանքով և վերադառնում եմ «Թուրքահայաստանի մասին» դեկրետի ընդունման ժամանակին:

Իհարկե, կարելի էր նաև չխախտել այդ ժամանակագրությունը և շարունակել պատմությունը նույն ընթացքով: Կարծում եմ, որ նյութի հետագա շարադրանքից ընթերցողին հասկանալի կլինի, թե ինչն է ինձ պարտադրում նյութն այդպես շարադրել, չխուսափելով մի շարք վկայակոչումներ կրկնելուց, որը նույնպես արդարացված է, հաշվի առնելով պրոբլեմի կարևորությունը:

Ելնելով Սովետական Ռուսաստանի ժողկոմսովետի «Թուրքահայաստանի մասին» դեկրետը գնահատելու անհրաժեշտությունից, հարկ եմ համարում, որքան հնարավոր է համառոտ անդրադառնալ Արևմտյան Հայաստանի վերաբերյալ Առաջին համաշխարհային պատերազմի ընթացքում ինչպես ցարական Ռուսաստանի, այնպես էլ նրա դաշնակից տերությունների վարած քաղաքականությանը:

Համաշխարհային պատերազմի առաջին տարիներին Կովկասյան ռազմաճակատում ձեռք բերած հաղթանակների շնորհիվ ռուսական բանակը գրավել էր Օսմանյան կայսրության տարածքի մի մասը, որի մեջ էր համարյա ամբողջ Արևմտյան Հայաստանը՝ ներառյալ Էրզրումը, Վանը և Բիթլիսը:

Այս կապակցությամբ հարկ եմ համարում համառոտ անդրադառնալ այն հանգամանքին, թե ցարական կառավարությունը ինչ քաղաքականություն

էր վարում Արևմտյան Հայաստանի գրաված տարածքների վերաբերյալ:

1916 թ. Մեծ Բրիտանիան ու Ֆրանսիան իրենց դաշնակից Ռուսաստանից գաղտնի նախաձեռնեցին Օսմանյան կայսրության բաժանումը, որն ավարտվել էր Ժորժ Պիկոյի (Ֆրանսիա) և Մարկ Սայքսի (Անգլիա) ստորագրած նախագծով:

Երբ այդ նախագիծը հայտնի է դառնում ռուսական կառավարությանը, Անգլիան ու Ֆրանսիան որոշում են Ռուսաստանին ևս մասնակից դարձնել Օսմանյան կայսրության բաժանմանը:

Ռուսաստանի արտաքին գործերի նախարար Սազոնովը 1916 թ. փետրվարի 29-ին Նիկոլայ Երկրորդ ցարին ուղղված իր զեկուցագրում տեղեկացնում է վերոհիշյալ նախագծի հիմնական դրույթների մասին, ընդգծելով, որ Անգլիայի և Ֆրանսիայի առաջարկած սահմանագիծը տեղագրական տեսակետից «թվում է բավական բնական, բայց քաղաքական և ստրատեգիական նկատառումներով այն հազիվ թե կարելի լինի համարել ընդունելի»:

«Պետք է,- շարունակում է Սազոնովը,- անցանկալի համարել այն, որ խառն ու անհանգիստ բնակչություն ունեցող վայրերում մեր ասիական սահմանագծի մեծ երկայնության վրա հայտնվում է եվրոպական մեծ, թեկուզ հենց ներկայումս մեզ դաշնակից, տերություն և անկյունով այն միրճվում է ռուս-պարսկական սահմանագծի մեջ: Բացի դրանից, տեղական քրիստոնյաների մեջ մեր միսիոներական շահերի կարևորության պատճառով, մենք, մասնավորապես, չենք կարող Ուրմիայի մարզում հանդուրժել այլ եվրոպական պետության գերիշխանությունը»:

Դրա փոխարեն Սազոնովը գտնում էր, որ Ռուսաստանի համար ավելի շահավետ կլիներ հարավում ընդհանուր սահման ունենալ որևէ ասիական մահմեդական պետության՝ լինի արաբական խալիֆայության, թե թուրքական սուլթանության հետ: Սազոնովը նաև այն միտքն էր հայտնում, որ Կ. Պոլսի և նեղուցների հարցով Ֆրանսիայի հետ բանակցությունները նկատի ունենալով, անհրաժեշտ է համաձայնվել դրա փոխարեն Ֆրանսիային թողնել Սիրիան ու Կիլիկիան:

Զեկուցագրի վերջում Սազոնովը ցարին խնդրում էր տալ համապատասխան ցուցումներ (*Հայաստանը միջազգային դիպլոմատիայի և տարեսկան արտաքին քաղաքականության փաստաթղթերում (1918-1923)*, Եր, 1972, էջ 388-390):

Սազոնովի զեկուցագիրը քննարկվում է կառավարությունում և Նիկոլայ Երկրորդի համաձայնությամբ նա 1916 թ. ապրիլի 13-ին Պետրոգրադում

ֆրանսիական դեսպանին հանձնված հուշագրում հայտնում է, որ ռուսական կառավարությունը պատրաստ է հաստատել երկու պետությունների մշակած համաձայնագիրը այն դեպքում, եթե պահպանվեն հետևյալ պայմանները, որոնցից առաջինում ասվում էր. «Ռուսաստանն անեքսիայի է ենթարկում Էրզրումի, Տրապիզոնի, Վանի և Բիթլիսի մարզերը մինչև Սև ծովի ափի՝ առաջիկայում որոշվելիք այն կետը, որն ընկած է լինելու Տրապիզոնից դեպի Արևմուտք» (**նույն տեղը**, էջ 392):

1916 թ. ապրիլի 26-ին Պետրոգրադում Ֆրանսիական դեսպան Պալեոլոգը Սազոնովին հայտնում է իր կառավարության համաձայնությունը վերոհիշյալ մարզերի վերաբերյալ (**նույն տեղը**, էջ 393-394):

1916 թ. մայիսի 17-ին Լոնդոնում Ռուսաստանի դեսպան Բենկենդորֆը Անգլիայի արտաքին գործերի նախարարին տեղեկացնում է, որ Ռուսաստանը երկու պետությունների համաձայնագրին կմիանա այն դեպքում, եթե ընդունվի Ռուսաստանի վերոհիշյալ առաջարկությունը (**նույն տեղը**, էջ 395):

Իր ներկայացրած պահանջի կապակցությամբ Անգլիայի և Ֆրանսիայի համաձայնությունը ստանալուց հետո Սազոնովը Ռուսաստանի Մինիստրների խորհրդին ուղարկած զեկուցագրում հայտնելով Հայաստանի բոլոր ծայրերից ստացվող տանջալի հազարավոր հայերի կոտորածի լուրերի մասին, գրում է հետևյալը. «**Եթե զերմանացիներին ու թուրքերին հպատակվոր է Հայաստանն ստանց հայերի, եթե անհրաժեշտ է ոչնչացնել հայկական տարը, եթե նրանք ուզում են ոչնչացնել մեր մահմեդականների և քրդերի ու թուրքերի միջև եղած պատնեշը, ապա Ռուսաստանի խնդիրն է ամեն գնով վերականգնել այդ հայկական տարը, թուրքերի ու քրդերի և մեր թաթարների միջև եղած այդ պատնեշը: Հայկական բնակչության պահպանումն անհետաձգելի խնդիր է: Ուստի անհրաժեշտ է ամեն կերպ ձգտել նրան, որպեսզի աջակցություն ցույց տրվի մեր սահմաններում ապաստան գտած այդ դժբախտ փախստականներին, նպատակ ունենալով նրանց պատերազմից հետո վերադարձնել իրենց հայրենիք**» (Ընդգծումն իմն է- Վ. Պ.):

Այնուհետև Սազոնովն անհրաժեշտ է համարում առաջարկել կառավարությանը Կովկասի փոխարքային տեղեկացնել հետևյալը.

«1....Ռուսաստանի վրա է ընկած հայերի համար այս ծանր ողբերգության պահին ամեն կերպ աջակցելու բարոյական պարտքը իր դարավոր ճնշողների դեմ պայքարի նետված, խաղաքարտի վրա իր գոյությունը դրած ռուսական զահին ու Ռուսաստանին հավատարիմ հայ ժողովրդին:

2. Ինչպես Թուրքիան, այնպես էլ հատկապես Գերմանիան ձեռնարկում

են բոլոր միջոցները ոչնչացնելու Հայերին և նրանց դուրս քշել Հայաստանից: Ուստի, բնական է, որ մեր զինվորական իշխանության խնդիրը պետք է լինի, մեր կողմից նրա այս կամ այն հատվածները զբաղեցնելու չափով, լայնորեն աջակցել Հայաստանում հայկական տարրերին, ինչպես նաև ամեն կերպ օգնել Հայերի էվակուացմանը մեր նահանջի դեպքում:

3. Լայն օգնություն ցույց տալ փախստականներին, միաժամանակ միջոցներ ձեռնարկել, որ նրանք չտարածվեն Կովկասում և Ռուսաստանում, որպեսզի հետագայում հնարավոր լինի նրանց ետ ուղարկել Հայաստան:

4. Հատկապես անհրաժեշտ է Կովկասում բարյացակամ վերաբերմունք ունենալ Հայերի նկատմամբ, նկատի ունենալով ռուսական շահերին նրանց անձնուրաց նվիրվածությունը, ինչպես նաև այն դերը, որը Հայերը կարող են խաղալ ապագայում Հայաստանի և Թուրքիայի կառուցվածքի ժամանակ, ինչպիսի կերպարանք էլ որ ունենա...» (Борян Б. А., Армения, международная дипломатия и СССР, ч. 2, М.-Л., 1929, стр. 417- 419):

Ռուսաստանի կառավարության հանձնարարությամբ 1916 թ. հունիսի 5-ին Գերագույն գլխավոր հրամանատարության շտաբի պետ, գեներալ-լեյտենանտ Ալեքսեևը Նիկոլայ Երկրորդի հաստատմանն է ներկայացնում «Պատերազմի իրավունքով նվաճված Թուրքական մարզերի կառավարման ժամանակավոր կանոնակարգի» նախագիծը:

Այդ նախագծում նշվում էր հետևյալը.

Առաջին. Պատերազմի իրավունքով Թուրքիայից գրաված տարածքների կառավարման համար հիմնադրվում էր զինվորական գեներալ-նահանգապետի գլխավորությամբ ժամանակավոր ռազմական գեներալ-նահանգապետություն:

Երկրորդ. Ժամանակավոր զինվորական գեներալ-նահանգապետի կառավարմանն էր հանձնվում Թուրքիայի հետ պետական սահմանից սկսած գրաված բոլոր մարզերը:

Երրորդ. Գեներալ-նահանգապետության տարածքը բաժանվում էր մարզերի և օկրուգների, որոնց կառավարումը հանձնվում էր մարզերի զինվորական նահանգապետներին և կորպուսների պետերին: Զինվորական գեներալ-նահանգապետի ներկայացմամբ քաղաքներում կարող էին ստեղծվել ոստիկանության քաղաքային վարչություններ:

Չորրորդ. Իրենց ենթակայության տակ դրված երկրամասում ռազմական գեներալ-նահանգապետության պաշտոնյաների և հիմնարկությունների գլխավոր պարտականությունն էր համարվում հանգստության ու կարգի վերականգնումը, բնակչության կյանքի, պատվի, ունեցվածքի, կրոնական և քաղաքացիական ազատության ապահովումը: Գրաված տարածքների բոլոր ժողովուրդներին ռուսական իշխանությանը անվերապահ ենթարկվելու հիման վրա տրվում էր ռուսական կառավարության առջև լիակատար հաշվառություն:

Միաժամանակ սահմանվում էին մարզերի զինվորական նահանգապետերի, օկրուգների, տեղամասերի պետերի պարտականությունները, ինչպես նաև գյուղատնտեսության, դատական մարմինների, հարկային համակարգի, վերահսկողության իրականացման հիմունքները (**Ռուսաստանի պետական արխիվ**, ֆ. 1779, ց. 2, գ. 404, թթ. 12-30):

1916 թ. հունիսի 14-ին Սազոնովը Կովկասի փոխարքային նամակով հայտնում է վերոհիշյալ կանոնակարգը կիրառության մեջ դնելու մասին և ընդգծում հետևյալը. «Մեր առաջիկա խնդրի ամենամեծ դժվարությունն ու բարդությունը հայկական հարցի բարձրացումն ու լուծումն է: Ամբողջությամբ վերցրած այն փոքր-ինչ դուրս է գալիս ռուսական ներքին պետական կյանքի սահմաններից ինչպես այն առաջնակարգ միջազգային դերի պատճառով, որը Ռուսաստանին բաժին է ընկել Թուրքիայում հայկական բարեկարգումներն անցկացնելիս, այնպես և այն պատճառով, որ Փոքր Հայքում հայերի մի մասը կմնա ուրիշ պետության իշխանության ներքո: Մեր օգտին անջնջելի հայկական զավառների առաջիկա կարգավորման ժամանակ մենք չենք կարող հաշվի չառնել այդ երկու հանգամանքները»:

Այնուհետև Սազոնովը հիշեցնում է հայկական մարզերում բարենորոգումներ իրականացնելու մասին 1914 թ. հունվարին ստորագրված ռուս-թուրքական պայմանագիրը, «որի ոգուն համապատասխան հայ ազգայնականները ձգտում են Ռուսաստանի հովանու տակ հաստատել կատարյալ ինքնավարություն», և այդ կապակցությամբ հետևյալ տեսակետն է հայտնում. «Ինձ թվում է, որ այս հարցի այս կամ այն կերպ լուծումը, ոչ ներքին, ոչ արտաքին քաղաքականության տեսակետից բնավ չի համապատասխանում Ռուսաստանի պետական շահերին: Ինչ վերաբերում է հայերին լայն ինքնավարություն տալուն, ապա չպետք է մոռանալ, որ Մեծ Հայքում, որն այսօր նվաճված է Ռուսաստանի կողմից, հայերը երբեք չեն կազմել մեծամասնություն, իսկ նրանց նկատմամբ պատերազմի ժամանակ Թուրքերի գործադրած պատժիչ միջոցառումներից հետո, որոնք բուն հայերի վկայությամբ եղել են ահավոր չափերի,- այդ հարաբերակցությունն էլ ավելի է փոխվել ի վնաս հայերի, որոնք այժմ հազիվ թե կազմելիս լինեն բնակչության մեկ քա-

ողջ մասը: Այս պայմաններում Հայկական ինքնավարությունն իրավամբ կհամարվի փոքրամասնության կողմից մեծամասնության անպարտ ստրկացումը» (ընդգծումն իմն է- Վ. Պ.):

Իր նամակի վերջում Սազոնովը նշում է, որ Թուրքիայի նվաճված մարզերի կարգավորման համար անհրաժեշտ է խստորեն ղեկավարվել օրինականության և արդարության սկզբունքներով և անաչառ վերաբերել տարբեր ազգությունների պատկանողներին, առանց նրանց միմյանց հակադրելու և ցույց չտալ բացառիկ հովանավորություն որևէ ազգության՝ ի վնաս մյուսի:

«Այս ձևով,-եզրակացնում է Սազոնովը,- հնարավոր կլիներ հայերին, որոշյալ սահմաններում, վերապահել դպրոցական և եկեղեցական անկախություն, մայրենի լեզվից օգտվելու իրավունք, ինչպես նաև քաղաքային և գյուղական ինքնավարություն՝ ընտրությունների ժամանակ բնակչության հարաբերակցության տոկոսի պահպանմամբ հանդերձ: Ոչ քրիստոնյա տարրերի նկատմամբ հարկավոր է կիրառել նույն սկզբունքները, որքանով դա թույլ կտան տեղական պայմանները և նրանց կուլտուրական զարգացման աստիճանը: Վերը հիշված ժամանակավոր կանոնակարգի նախագիծը մասամբ արդեն հաշվի է առնում այդ տեսակետը, ինքնավարության ինչ-որ մի մասնիկ տալով գյուղական համայնքներին և գյուղական մարզերին» (Հայաստանը միջազգային դիպլոմատիայի և տնտեսական ազատության քաղաքականության փաստաթղթերում (1918-1923), Եր, 1972, էջ 396-399):

Ի պատասխան Սազոնովի նամակի, Կովկասի փոխարքան 1916 թ. հուլիսի 3-ին հայտնում է իր նկատառումները, ընդգծելով իր համաձայնությունն առաջարկված նախագծի վերաբերյալ: Փոխարքան գտնում է, որ ռուսական կայսրության ներկա սահմանների ներսում հայկական հարց գոյություն չունի, նկատի ունենալով, որ փոխարքայության տարածքում հայերը մահմեդականների, վրացիների և ռուսների հետ միասին հանդիսանում են իրավահավասար ռուսահպատակներ:

Միաժամանակ փոխարքան նշում է, որ «պետական տեսակետից հայկական հարց, ըստ էության, գոյություն չունի լոկ ներկա պատերազմից առաջ եղած կայսերական սահմաններից դուրս, այսինքն մեր կողմից այժմ նվաճված թուրքական վիլայեթների շրջանում»:

Փոխարքան ևս նպատակահարմար չի գտնում Թուրքահայաստանին ինքնավարություն տալը: Ահա, թե ինչ է նա գրում. «Ռուսաստանը, որը, անշուշտ, ամենից ավելի մեծ եռանդով էր պաշտպանում լայն բարենորոգումների անցկացումը Թուրքահայաստանում, չի կարող հաշվի չառնել այս պատերազմի ընթացքում մահմեդական ճնշման հետևանքով հայ ժողովրդի կրած տառապանքները: Կասկածից վեր է, որ Թուրքիայից նոր նվաճված մարզերի կարգավորման ժամանակ հարկավոր է ամենակտրուկ ձևով սկիզբ դնել օրինականության ու արդարության՝ հանդեպ նվաճված մարզերում բնակվող բոլոր ազգությունների»:

Չշոշափելով Ռուսաստանի հովանու ներքո Հայաստանի ինքնավարության հարցը, փոխարքան այն տեսակետին է հանգում, որ այդ հարցը «ամենայն հավանականությամբ առայժմ կյանքի չի կոչվելու» և որը, իր կարծիքով «կարող է միայն վտանգավոր կերպով բարդացնել այս պատերազմի ժամանակ ծնունդ առած հարցերի լուծումը»:

Այնուհետև փոխարքան իր համաձայնությունն է հայտնում և հնարավոր է համարում «հայերին վերապահել դպրոցական և եկեղեցական անկախություն, եկեղեցական հարստությունների և գույքերի կառավարման իրավունք՝ բոլոր պաշտոնական դեպքերում ռուսաց լեզվի առաջնության պայմանով, ինչպես նաև հայերին վերապահել քաղաքային և գյուղական ինքնավարություն՝ ընտրությունների ժամանակ բնակչության հարաբերակցության տոկոսի պահպանմամբ հանդերձ» (նույն տեղը, էջ 400-402):

Հարկ եմ համարում բավարարվել բերված պաշտոնական փաստաթղթերն ընթերցողին ծանոթացնելով և ընդգծել հետևյալը.

Առաջին. Պարզ է դառնում, որ ցարական Ռուսաստանի կառավարությունը պատերազմի արդյունքով Թուրքիայից գրաված տարածքների կառավարման համար մտադրություն է ունեցել միայն ստեղծել ժամանակավոր ռազմական գեներալ-նահանգապետություն, որը պատերազմից հետո անցնելու էր Կովկասի փոխարքայի կառավարման տակ:

Երկրորդ. Ցարական Ռուսաստանի կառավարությունը մտադրություն չի ունեցել պատերազմի արդյունքով Թուրքիայից գրաված Արևմտյան Հայաստանին ինքնավարություն շնորհել:

Երրորդ. Կովկասյան ռազմաճակատի հրամանատարությունը և Կովկասի փոխարքան կատարեցին միայն առաջին քայլերը ժամանակավոր գեներալ-նահանգապետություն ստեղծելու համար և այդ գործը փաստորեն ընդհատվեց 1917 թ. փետրվարին սկսված հեղափոխության պատճառով:

2. ԱՐԵՎՏՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔԸ

Այժմ անհրաժեշտ եմ համարում, որքան հնարավոր է համառոտ, ընթերցողի ուշադրությանը ներկայացնել 1917 թ. մարտի 2-ին ստեղծված Ռուսաստանի ժամանակավոր կառավարության քաղաքականությունն Արևմտյան Հայաստանի նկատմամբ:

1917 թ. մարտի 9-ին Ժամանակավոր կառավարությունը վերացրեց Կովկասի փախարքայությունը և Անդրկովկասի կառավարման համար ստեղծեց Անդրկովկասի Հատուկ կոմիտե (ՕԶԱԿՈՄ), որի վրա է դրվում նաև ռուսական զորքերի կողմից գրավված Արևմտյան Հայաստանի կառավարումը: ՕԶԱԿՈՄ-ը կազմվեց Պետական դումայի հետևյալ անդամներից. Մ. Խաչամով (կադետ)՝ նախագահ, անդամներ՝ Մ. Պապաջանյան (կադետ), Մ. Ջաֆարով (կադետ, իրականում՝ մուսավաթական), Կ. Աբաշիձե (սոցիալ ֆեդերալիստ): Կարճ ժամանակ անց, հաշվի առնելով վրաց մենշևիկների դժգոհությունը, Ժամանակավոր կառավարությունը ՕԶԱԿՈՄ-ի կազմի մեջ մտցրեց նրանց ներկայացուցիչ Ա. Չխենկելին, որին էլ տրվեց ներքին գործերի ղեկավարումը:

*Դաշնակցությունը նույնպես դժգոհ էր, որ Ժամանակավոր կառավարությունը իրեն մասնակից չի դարձրել ՕԶԱԿՈՄ-ին: Այդ դժգոհությունը բարվարարվում է և 1917 թ. մարտի 12-ին Ժամանակավոր կառավարության որոշմամբ դաշնակցության ներկայացուցիչ Հակոբ Զավարյանը (Զավրիև) մտցվում է ՕԶԱԿՈՄ-ի կազմի մեջ (**Ռուսաստանի պետական արխիվ**, ֆ. 1779, ց. 2, գ. 3, թ. 36):*

Իմ նպատակի մեջ չի մտնում այստեղ լուսաբանել ՕԶԱԿՈՄ-ի ամբողջ գործունեությունը: Ուզում եմ միայն ընդգծել, որ ՕԶԱԿՈՄ-ի ստեղծման հենց առաջին օրից երևացին այնտեղ ընդգրկված քաղաքական ուժերի հակասությունները: Առանձնապես եռանդով էին գործում աղրբեջանցի մուսավաթականներն ու վրաց մենշևիկները, որոնք ձգտում էին իրենց հարցերը լուծել հայ ժողովրդի հաշվին:

Օգտվելով ստեղծված խառնաշփոթ վիճակից, թաթարները (աղրբեջանցիներ), բացահայտ և ուժգին կերպով զինվում էին, դա բացատրելով «հետադիմական ուժերի դեմ պայքարը նախապատրաստելու անհրաժեշտությամբ»:

Թաթարների գործողություններից, ինչպես նշվում է Ժամանակավոր

կառավարությանն ուղղված զեկուցագրերից մեկում, մեծապես անհանգստացած էին ոչ միայն հայերը, այլև ռուսները: Վերջիններիս անհանգստությունն ավելի էր խորանում այն պատճառով, որ ռազմաճակատի թիկունքում երկաթուղին անցնում էր թաթարներով բնակեցված շրջաններով:

Ավելին, ՕԶԱԿՈՄ-ի անդամ մուսավաթական Ջաֆարովը բացահայտորեն հայտարարել էր այն մասին, որ Կովկասի մահմեդական բնակչությունը որևէ մասնակցություն չի ունենա Թուրքիայի հայկական վիլայեթների կարգավորման գործին, պահանջելով մահմեդականներին վերադարձնել հայկական տարածքները: Ջաֆարովը հայտարարել էր նաև, որ մահմեդականները համաձայն կլինեն հայկական վեց վիլայեթների ինքնավարությանը միայն Թուրքիայի հովանավորության ներքո:

Մուսավաթականներն այնքան վստահ էին գործում, որ նույնիսկ նրանց առաջնորդ Ալի Թոփչիբաշևը Թիֆլիսի քաղաքագլուխ Ալեքսանդր Խատիսյանին առաջարկել էր հրավիրել հայերի և թաթարների խորհրդակցություն և քննարկել, թե ինչպես պետք է գործել Կովկասում ռուսական տիրապետության անկման դեպքում:

*Ժամանակավոր կառավարությանը հայտնի էր նաև, որ թաթարները որոշել էին կազմել մահմեդական մարզերի ինքնավարություն, որի մեջ մտնելու էին Անդրկովկասը, Դաղստանը, Պարսկական Ադրբեջանը և Անդրկասպյան երկրամասը (**Ռուսաստանի պետական արխիվ**, ֆ. 1779, ց. 1, գ. 1470, թթ. 4-6):*

Ստեղծված իրավիճակից ելնելով Պետրոգրադում գտնվող ՕԶԱԿՈՄ-ի անդամ Հ. Զավրիևը, որը նախապես բանակցություններ էր վարել Ժամանակավոր կառավարության ղեկավարների հետ, 1917 թ. ապրիլի 25-ին այդ կառավարության մինիստր-նախագահ, իշխան Գ. Լվովին ներկայացնում է նամակ-գրություն, դրան կցելով իր կազմած «Ռուսական զորքերի կողմից Թուրքահայաստանի գրաված տարածքներում կառավարումը կարգավորելու մասին» որոշման նախագիծը:

Իր նամակում Զավրիևը նախ խնդրում է կառավարության նիստին, որտեղ քննարկվելու է վերոհիշյալ հարցը, հրավիրել Պետական դումայի անդամ Ահեմյանին՝ անհրաժեշտ բացատրություններ տալու համար:

Նախնական բանակցությունների ժամանակ Զավրիևին հայտնի էր դարձել, որ Ժամանակավոր կառավարությունը մտադիր է գրաված տարածքների կառավարման համար նշանակվող գլխավոր կոմիսարի ենթակայության տակ դնել Կովկասի զինվորական իշխանություններին: «Հայերը,- ընդգծում

էր Զավրիևը,- չեն կարող թույլ տալ այդպիսի ենթակայություն և այդ հարցում ոչ մի զիջման կամ համաձայնության չեն գնա»:

Զավրիևը հայտնում էր նաև, որ գլխավոր կոմիսարին ժամանակավոր կառավարության ենթակայության տակ թողնելը «հանդիսանում է թուրքերեն տիրապետությունից և մինչև այժմ Կովկասում պահպանված զինվորական չինովնիկության բռնություններից հայերի ազատագրման հիմնական պայմանը»:

Այնուհետև Զավրիևը դնում էր գեներալներ Յուդենիչին ու Բոլխովիտինովին Կովկասից անհապաղ հեռացնելու անհրաժեշտությունը, որոնց մնալը վտանգում էր երկրամասում ժամանակավոր կառավարության հեղինակությունը (Ռուսաստանի պետական արխիվ, ֆ. 1779, ց. 1, գ. 1470, թթ. 1-2):

Իր ներկայացրած որոշման նախագծով Հայ հեղափոխական դաշնակցության կուսակցության պատվիրակ Հ. Զավրիևն առաջարկել էր հետևյալը.

Առաջին. Ռուսական զորքերի կողմից գրավված Թուրքահայաստանի տարածքը քաղաքացիական կառավարման իմաստով դուրս է բերվում Կովկասի իշխանությունների, ինչպես նաև Կովկասյան ռազմաճակատի զինվորական իշխանությունների ենթակայությունից և անմիջապես ենթարկվում է ժամանակավոր կառավարությանը:

Երկրորդ. Ուժի մեջ էր համարվում վերն արդեն հիշատակված 1916 թ. հունիսի 15-ի որոշմամբ հաստատված ժամանակավոր զինվորական գեներալ-նահանգապետի մասին կանոնակարգը, միայն այն տարբերությամբ, որ գեներալ-նահանգապետի փոխարեն լիազորությունները տրվելու էին ժամանակավոր կառավարության կողմից նշանակված Թուրքահայաստանի գլխավոր կոմիսարին:

Թուրքահայաստանի գլխավոր կոմիսարին կից լինելու էր քաղաքացիական մասով օգնական, որը ժամանակավոր կառավարության կողմից նշանակվելու էր հայ ազգությանը պատկանող անձանցից (Ռուսաստանի պետական արխիվ, ֆ. 1779, ց. 1, գ. 1470, թ. 8):

Հ. Զավրիևի ներկայացրած նախագիծը քննարկվել է ժամանակավոր կառավարության ապրիլի 26-ի նիստում և ընդունվել է նույնությամբ (նույն տեղը, ց. 2. գ. 3, թ. 255):

Հարկ է նշել, որ ժամանակավոր կառավարությունը վերոհիշյալ գեներալներին Կովկասից հեռացնելու պահանջը թողել է անհետևանք: Այդ մասին է վկայում գեներալ Յուդենիչին ուղարկած 1917 թ. մայիսի 1-ին Գ. Լվովի հեռագիրը, որով տեղեկացվում էր վերոհիշյալ որոշումն ընդունելու մասին:

1917 թ. մայիսի 15-ին Ժամանակավոր կառավարությունը քննարկել է պատերազմի իրավունքով Թուրքիայի գրաված տարածքների գլխավոր կոմիսարին տրվող ղեկավար ցուցումների մասին արտաքին գործերի նախարար Մ. Տերեշչենկոյի ներկայացրած նախագիծը:

Հաստատվել են հետևյալ ղեկավար ցուցումները.

Առաջին. Չկանխորոշելով Հայաստանի ապագա աշխարհագրական և քաղաքական սահմանները, Ժամանակավոր կառավարությունը Ասիական Թուրքիայում այժմ պատերազմի իրավունքով գրաված տարածքներից վաղնջական է համարում Վանի, Բիթլիսի և Էրզրումի հայկական վիլայեթները:

Երկրորդ. Երկրի տնտեսությունը բարձրացնելու շահերից ելնելով, ինչպես նաև հանուն արդարության Թուրքիայում ջարդերի ենթարկված ու արտաքսված հայերի ոտնահարված իրավունքները վերականգնելու համար անհրաժեշտ է միջոցներ ձեռնարկել այդ մարզերում վերաբնակեցնել ընթացիկ պատերազմում և նախորդ տարիներին Ռուսաստանի սահմանները տեղափոխված հայերին:

Հավասարապես նույն իրավունքը վերապահվում էր նախկին Թուրքահպատակ հայերին: Գլխավոր կոմիսարին առաջարկվում էր բնակեցման իրականացնել աստիճանաբար հայկական կազմակերպությունների ներկայացուցիչների մշակած պլանի համաձայն:

Երրորդ. Ազգային հարաբերությունների հնարավոր բարդացումները կանխելու նպատակով, մինչև հատուկ կարգադրություն, թույլ չտալ այդ տարածքներում վերաբնակվել այն թուրքերին, լեզգիներին և քրդերին, որոնք հեռացել են թուրքական զորքերի հետ միասին:

Նույն որոշմամբ Կովկասյան ռազմաճակատի մատակարարման գլխավոր պետ գեներալ-լեյտենանտ Պյոտր Ավերյանովը նշանակվում է Թուրքահայաստանի գլխավոր կոմիսար: Հակոբ Զավրիևը նշանակվում է գլխավոր կոմիսարի օգնական (նույն տեղը, ց. 2, գ. 4, թ. 13-14):

1917 թ. օգոստոսի 8-ին Ժամանակավոր կառավարության որոշմամբ գլխավոր կոմիսարի երկրորդ օգնական է հաստատվում Պետական դումայի նախկին անդամ Ֆ. Իվանիցկին:

Գլխավոր կոմիսարը Ժամանակավոր կառավարության որոշման հիման վրա առաջին հերթին ձեռնամուխ է լինում Թուրքահայաստանի վերոհիշյալ երեք վիլայեթներում ստեղծվող մարզերի և օկրուգների սահմանների հաստատմանը: Նրա որոշմամբ Թուրքահայաստանում ձևավորվում է երեք վարչական

միավոր իրենց համապատասխան զավառներով, Էրզրումի, Խնուսի և Վանի շրջաններ: Միայն Խնուսում կոմֆոար է նշանակվում հայ՝ Համբարձումյանը:

Ստեղծված պայմանների արդյունքով փախստական հայերից 140 հազար մարդ վերադառնում է հայրենի բնակավայր (Грант Аветисян, Брест-Литовск: как были отторгнуты Турцией Карс, Ардаган и Батум, Ер. 1994, стр. 6):

Պետք է, սակայն, նշել, որ Ժամանակավոր կառավարությունը հետևողական չեղավ իր ընդունած որոշումը, թեկուզ և թերի, իրականացնելու համար: Հ. Զավրիևի ջանքերն էլ արդյունք չէին տալիս, հանդիպելով ցարական նախկին չինովնիկների և գեներալների դիմադրությանը:

Իր հերթին ՕԶԱԿՈՄ-ն էլ չէր դրսևորում հետևողականություն Ժամանակավոր կառավարության որոշումն իրականացնելու համար, քանի որ դրանում շահագրգռված չէին վրացի մենշևիկներն ու ադրբեջանցի մուսավաթականները, որոնք, ինչպես նշվել է, ՕԶԱԿՈՄ-ի կազմում ունեին գերիշխող դիրք և ղեկավարվում էին միայն իրենց շահերով:

3. «ԹՈՒՐՔԱՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԱՍԻՆ» ԴԵԿՐԵՏԻ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

Այժմ ընթերցողի ուշադրությանը ներկայացնեմ Սովետական Ռուսաստանի Ժողկոմսովետի «Թուրքահայաստանի մասին» դեկրետը, նկատի ունենալով, որ դա անմիջապես առնչվում է Ստ. Շահումյանին:

Ա. ՍՏԵՓԱՆ ՇԱՀՈՒՄՅԱՆԻ ԱՌԱՋԱՐԿԱԾ ԾՐԱԳԻՐԸ

Անհրաժեշտ եմ համարում նախ ընթերցողին ներկայացնել Շահումյանի տեսակետն Արևմտյան Հայաստանի և, ընդհանրապես, Հայաստանի մասին:

1917 թ. հոկտեմբերի 6-ին ՌՄԴԲ(բ)Կ Կովկասյան երկրային համագումարում ունեցած ելույթում Շահումյանը հայտարարում է. «Ազգային հարցի լուծման ժամանակ անխուսափելիորեն դրվում է նաև Թուրքահայաստանի հարցը: Այդ հարցի լուծումը մենք պետք է թողնենք հենց այդ մարզի բնակչությանը, որն ինքը պետք է որոշի իր բախտը: Ռուսաստանին միանալու՝ նրանց որոշման դեպքում, նրանք պետք է միացվեն հայերին: Ազգայինկուլտուրական ավտոնոմիայի դեպքում ամբողջ կուլտուր-դաստիարակչական աշխատանքը տրվում է ազգային սեյմերին, որոնք միավորում են տվյալ ազգի անդամներին, որտեղ էլ որ նրանք գտնվեն. կուլտուր-ազգային ավտոնոմիայի այս ծրագիրը մենք միշտ ժխտել ենք և համարել ռեակցիոն ու բացահայտ նացիոնալիստական»:

Այնուհետև, նկատի ունենալով Անդրկովկասի երեք գլխավոր ազգերին, Շահումյանն առաջարկում է, որ Անդրկովկասը հարկավոր է բաժանել երեք մարզերի.

«**Առաջին.** Արևմտյան Անդրկովկաս- Քութայիսի, Բաթումի նահանգներ և Թիֆլիսի նահանգի մի մասը.

Երկրորդ. Արևելյան Անդրկովկաս- Երևանի, Կարսի, Ելիզավետպոլի նահանգները և Թիֆլիսի նահանգի մի մասը. (այստեղ պարզ երևում է 1917 թ. հոկտեմբերի 15-ին «Кавказский рабочий» թերթում թույլ տրված խմբագրական հետևյալ սխալը՝ պետք է նշվեր ոչ թե «Ելիզավետպոլի նահանգը», այլ «Ելիզավետպոլի նահանգի մի մասը», ինչը, որ հասկանալի է դառնում հաջորդ տողից- Վ.Պ.):

Երրորդ. Բաքվի, Ելիզավետպոլի մի մասը և Դաղստանի մարզը» (**Ստ. Շահումյան**, նույն տեղը, հ. երրորդ, Եր. 1978, էջ 270):

Այս կապակցությամբ հարկ է նշել, որ չեն գտնվել վերոհիշյալ ՌՄԴԲ(բ)Կ Կովկասյան երկրային համագումարի արձանագրությունները և դրանց մասին կարելի է գաղափար կազմել միայն լրագրային հաշվետվությունից:

Այսպիսով, **նախ**, Շահումյանը բացահայտորեն հանդես էր գալիս Արևմտյան Հայաստանի անկախության օգտին, որի բնակչությունը, եթե կամենում է իր բախտը կապել Ռուսաստանի հետ, ապա պետք է միանար հայերին, այսինքն Արևելյան Հայաստանին:

Երկրորդ. Շահումյանն ավելի հեռատես լինելով, ուրվագծել է Անդրկովկասի ապագա երեք ազգությունների պետականության սահմանները, այդ թվում Հայաստանի վերաբերյալ, նրա մեջ ընդգրկելով նաև Ղարաբաղը:

Այսպիսով, թերևս մեր իրականության մեջ, Շահումյանն առաջինն է, որ այդպես հստակ նշել է Անդրկովկասի ապագա երեք ազգությունների պետականության սահմանները: Իհարկե, դա չէր համապատասխանում վրաց մենշևիկների և ադրբեջանական մուսավաթականների ծրագրերին, որոնք սովոր էին իրենց հարցերը լուծել հայ ժողովրդի հաշվին:

Ինչպես վկայում է Միկոյանը, պատգամավորների մեծ մասը չեն հասկացել ու չեն պաշտպանել Շահումյանի առաջարկությունները, «դոգմատիկ կերպով կառչելով ծրագրի հին դրույթներից» (**Ա. Ի. Միկոյան**, Պայքարի ուղիով, Գիրք առաջին, Եր. 1972, էջ 150): Իսկ թե համագումարում ինչու Շահումյանի առաջարկությունը չի ընդունվել, ապա դա պարզ է դառնում նրա

առաջարկած ազգային-տարածքային սահմաններին ուշադրությամբ նայելուց:

*Միկոյանը նշում է ազգային հարցի վերաբերյալ ընդունված բանաձևի հետևյալ հատվածը. «Համագումարը հայտարարում է, որ ինքը չի հանձնարարում կովկասյան ազգությունների ո՛չ անջատում, ո՛չ էլ ֆեդերատիվ պետությունների ստեղծում» (**Ա. Ի. Միկոյան,** Պայքարի ուղիով, Գիրք առաջին, Եր. 1972, էջ 150): Իհարկե, այսպիսի ձևակերպումով համագումարը ձայների մեծամասնությամբ մերժում է Շահումյանի առաջարկությունը:*

Հետագայում Միկոյանը հիշելով, որ 1917 թ. հոկտեմբերի սկզբին Կովկասի բոլշևիկների առաջին երկրամասային համագումարում ազգային հարցի մասին զեկուցող Մ. Տորոշելիձեն «պաշտպանել է մարզային ինքնավարության հին դիրքը», նշում է, որ Շահումյանն առաջ է քաշել նոր առաջարկություն՝ «Անդրկովկասը բաժանել երեք տարածքային ազգային ինքնավար մարզերի՝ հաշվի առնելով այդ տարածքների բնակչության ազգային կազմը: Դժբախտաբար, համագումարը չհասկացավ փոփոխված քաղաքական իրադրության նոր պահանջները և այն ժամանակ մերժեց Շահումյանի առաջարկությունը»:

*«Ես,- շարունակում է Միկոյանը,- այդ համագումարի պատգամավոր էի և նույնպես նրանց թվում էի, ովքեր չհասկացան և չպաշտպանեցին Շահումյանի առաջարկությունը (թեև ինձ համարում էի մեր կուսակցության ազգային քաղաքականությունը հասկացող մարդ): Դա մեր քաղաքական սխալն էր» (**Ա. Ի. Միկոյան,** Պայքարի ուղիով, Գիրք առաջին, Եր. 1972, էջ 188-189):*

Ինչպես վերոհիշյալ համագումարի ժամանակ, այնպես էլ դրանից հետո Շահումյանի առաջարկության դեմ հանդես եկածների տեսակետները ժամանակ առ ժամանակ, դառնում են քննարկման առարկա, որոնց հեղինակները դիմում են ամեն միջոցի, չխորշելով նույնիսկ սուտ, իրականությանը չհամապատասխանող ու չինծու տեղեկություններով վարկաբեկել Շահումյանին:

Իրենց շահերից ելնելով, նույնիսկ սովետական իշխանության տարիներին, նրանք միշտ էլ փորձել են նենգափոխել վերոհիշյալ հարցում Շահումյանի արտահայտած տեսակետը: Բազմաթիվ օրինակներից հարկ եմ համարում այստեղ հիշատակել վրացի հեղինակ Մ. Ցերցվաձեին, որը դեռևս 1978 թ. ռուսերեն տպագրված գրքում պարզապես կեղծելով Շահումյանի արտահայտած միտքը, գրում է հետևյալը. «Ստեփան Շահումյանը մարզային ավտոնոմիա պահանջելով, սխալ թույլ տվեց, գտնելով, որ Անդրկովկասում անհրաժեշտ է երկու ավտոնոմիա՝ Արևելյան Անդրկովկաս և Արևմտյան Անդրկովկաս: Արևելյան Անդրկովկասին նա միացնում է Երևանի, Ելիզավետպոլի և Թիֆլիսի նահանգի մի մասը, իսկ Արևմտյան Անդրկովկասին՝ Թիֆլիսի նահանգի մի մասը և Քութայիսի նահանգը, ինչպես և Բաթումի մարզն ու Սուխումի օկրուգը» (М. Церцвадзе, Революционное движение в Грузии в 1914-1917 гг., часть 2, стр. 235):

*Այսպես անվայելուչ և քմահաճ կերպով Շահումյանին վերագրելով իր հնարած սուտը, Ցերցվաձեն պնդում է. «Այսպիսով, առաջին. այդ ավտոնոմիան ոչ վրացական էր, ոչ ադրբեջանական և ոչ էլ հայկական, երկրորդ, բոլորովին անհասկանալի է, թե Շահումյանն ինչու է անդամահատել Վրաստանի տարածքը, մասնավորապես Թիֆլիսի նահանգը» (**նույն տեղը**, էջ 235):*

Վրացի հեղինակը իրեն չհասկացողի տեղ է դնում և Անդրկովկասը երեք մարզի բաժանելու Շահումյանի առաջարկը՝ չի ուզում տեսնել, և գրում է երկու մարզի մասին: Նա չի ուզում հասկանալ, որ Շահումյանը երեք մարզի բաժանում առաջարկելով նկատի է ունեցել վրացիների, ադրբեջանցիների և հայերի պատմականորեն ձևավորված բնակության ազգային տարածքները:

*Դրա հետ միասին, վրացի հեղինակը իբր թե ուղղում է Շահումյանի թույլ տված «սխալը» և գրում է. «Ազգային հարցի միակ լուծումը կարող է լինել միայն Վրաստանի, Հայաստանի և Ադրբեջանի տարածքային ինքնավարության, դրանցից իրավահավասար Միության հիմքի վրա Անդրկովկասյան ֆեդերացիայի ստեղծման դեպքում» (**նույն տեղը**, էջ 235):*

Վրացի հեղինակին շատ է զայրացրել հատկապես Թիֆլիսի նահանգն «անդամահատելու» Շահումյանի առաջարկը, մոռանալով, որ այդ ժամանակ Թիֆլիսի նահանգի մեջ էին մտնում հայկական վաղնջական տարածքները, որոնց զավթելու փորձերը եղել են 1918-1920 թվականներին և այսօր էլ վրացի նացիոնալիստները չեն թաքցնում իրենց նկրտումները:

Ադրբեջանցի մեկ այլ կեղծարար է. Իսմայիլովը, արդեն մեր օրերում, նկատի ունենալով Շահումյանի վերոհիշյալ առաջարկությունը, նրան մեղադրում է ադրբեջանական տարածքները՝ Ելիզավետպոլի մի մասը, այն է Ղարաբաղը, Զանգեզուրը զավթելու և Հայաստանին հանձնելու մեջ:

Բ. ՎԱՀԱՆ ՏԵՐՅԱՆԻ ՎԿԱՅՈՒԹՅՈՒՆԸ

Այժմ անհրաժեշտ եմ համարում պարզել, թե ինչպե՞ս է ընդունվել «Թուրքահայաստանի մասին» դեկրետը և ի՞նչ պատճառներով չի կիրառվել:

1917թ. նոյեմբերի 15-ին հրապարակվեց «Ռուսաստանի Ժողովուրդների իրավունքների դեկլարացիան», որտեղ Ժողովրդական կոմիսարների խորհուրդը իր գործունեության հիմքում դրած սկզբունքների մեջ ընդգծում էր նաև «Ռուսաստանի ժողովուրդների ազատ ինքնորոշվելու՝ ընդհուպ մինչև անջատվելու և անկախ պետություն կազմավորելու իրավունքը»:

Ահա այս դեկլարացիայի հիման վրա տեղի է ունենում Լենինի հետ Վահան Տերյանի ու Սարգիս Լուկաշինի հանդիպումը: Լենինն առաջարկում է կազմել զեկուցագիր Թուրքահայաստանի մասին, որին և ձեռնամուխ է լինում Վահան Տերյանը:

Այդ հանդիպման մասին 1917 թ. նոյեմբեր- դեկտեմբերին Վ. Տերյանը գրել է մի շարք նամակներ: «Ընկերներից մեկին» ուղղված նամակում Տերյանը գրել է. «Ներկայացրի մի записка *Հայաստանի (Տաճկ.) մասին և* проект декрета об Армении. *Ազգային գործերի կոմիսար ընկ. Ստալինը (Ջուղաշվիլի) շատ հավանեց* записка-*ս և դեկրետի պրոեկտը»:*

Այնուհետև Տերյանը հայտնում է, որ Ժողկոմսովետի նիստում մոտ օրերս կքննարկվի, հույս հայտնելով, որ կընդունվի:

«Այսօր,- շարունակում է Տերյանը,- զրույց ունեցա այդ առթիվ և ընկեր Լենինի հետ, որին բացատրեցի, թե ինչու անհրաժեշտ է առայժմ զորքերը չհանել Հայաստանից և պայմանավորվել Հայաստանի ինքնորոշման աքսորվածների ու փախստականների վերադարձով ու այլ գարանտիաներով:

*Նա շատ լավ վերաբերվեց և պարզեց, որ երբ ինքն ասում է զորքերը հանել Հայաստանից, սրանով ուզում է ասել, թե **երբ հայերը պահանջեն այդ**, որպեսզի նրանց վրա ճնշում չլինի Ռուսիայի կողմից և նրանք ստիպված չլինեն ռուսական օրենսդրություն ընդունել: Իսկ հայերի ապահովության համար, եթե նրանք այդ կամենան, **նա բնավ դեմ չէ, որ մնան հավասարապես զորամասերը**» (ընդգծումն իմն է- Վ. Պ.):*

*Նամակի վերջում Տերյանը գրում է.«Շատ հետաքրքիր բաներ կան պատմելու, բայց հնար չկա գրելու այդ ամենը: Չկարծես թե ես էլ դաշնակցականների նման ավանտյուրաների հետևից եմ ընկել: Երկար պատմություն է սա: Ես քեզ միայն էությունն ասի» (**Վահան Տերյան**, Երկերի ժողովածու, հ. չորրորդ, Եր. 1979, էջ 324):*

Նույն օրերին գրած մեկ այլ նամակում Տերյանը հայտնում է Ստալինի հետ զրույցի մասին, նշելով հետևյալը. «Ստալինն ասաց՝ մենք իսկույն եթե կկարգադրենք, որ զորքերը հեռանան և հայերին հնար տրվի ինքնորոշվելու: Ես վիճեցի: Դա իմ записка-*ն տալու ժամանակ ասաց: **Բայց այսօր, երբ արդեն կազմված էր** записка-*ս, **ուրիշ կերպ էր խոսում** (ընդգծումն իմն է- Վ. Պ.): Լենինին ես բացատրեցի, և նա, իհարկե, շատ լավ հասկացավ բանն ինչումն է: Տեսնենք ինչ է լինելու» (**նույն տեղը**, էջ 324-325):*

Պողոս Մակինցյանին գրած մեկ այլ նամակում Վահան Տերյանը նոր մանրամասներ է հայտնում: Նա գրում է հետևյալը. «Լենինը հարցրեց՝ Ինչ են ուզում հայերը: Ուզում են ջոկվե՞լ ռուսեթից, թէ՞ ուզում են միանալ: Ասի՝ ռուսահայերը չեն ուզում ջոկվել, իսկ տաճկահայերը ուզում են անկախ լինել:

- Ինչպե՞ս, ուրեմն, երկու մա՞ս լինել, հարցրեց Լենինը: Ասացի՝ ըստ երևույթին առայժմ այդպես կլինի և պարզեցի, որ ես անձնապես կողմնակից եմ, որ միանան երկու հատվածները և հետո ինքնորոշվեն, որ լինելու է, ըստ իս, ինքնորոշում ռուսաստանյան օրիենտացիայով, բայց մեծամասնությունը ուզում է, կարծեմ, որ Տաճկահայաստանն անկախ լինի, իսկ Ռուսահայաստանը՝ Ռուսիայի հետ ներքին ինքնավարությամբ հանդերձ...»:

Նույն օրերին Տերյանը Ներսես Տեր-Գրիգորյանին ուղարկած նամակում Լենինի հետ հանդիպման մասին գրել է հետևյալը. «Երբ իմ բոլոր դիտողությունները Հայաստանի մասին հայտնեցի և փոքրոգությամբ անհաստակ թողի ռուսահայերի խնդիրը, նա ինձ հարց տվեց.

-Մի՞թե տաճկահայերի և ռուսահայերի մեջ կա լեզվական, դավանաբանական կամ այլ որևէ տարբերություն:

-Ես հայտնեցի, որ՝ ոչ:

-Այդպիսի դեպքում ինձ անհասկանալի է, թե ինչո՞ւ Դուք խոսում եք մի այն տաճկահայերի ինքնորոշման մասին...»:

«Ես,- շարունակում է Տերյանը,- հայտնեցի, որ այդ խնդրի մասին ես ունեմ առանձին իմ կարծիքը, որ ռուսահայերի համար առայժմ պետք է մնալ խորհուրդների հետ, մինչև որ տաճկահայերը հավաքվեն և այն ժամանակ միասին ինքնորոշվեն, իմ կարծիքով՝ ռուսական օրիենտացիայով, բայց հաստատ համոզված չլինելով, թե հայերի մեծամասնությունն էլ (միտքս ընկան «ողերանց» քյալլադյոզությունները), այդպես կուզենա, խնդրի ժամանակավոր լուծումը այդպես հարմար եմ դատում...»:

Նամակի վերջում (նկատի ունենալով Քրիստոսի 12 աշակերտներից թերահավատ Թովմասին), Տերյանը գրում է. «Եվ դու, ո՜վ Ներսես-Թովմասդ,

*որ կասկածում էիր, թե «բալշևիկ» ղեկավարները չեն հասկանա հայերիս ներկա վիճակը՝ ֆրոնտը քանդելու և ռուս զորքերը հանելու վերաբերմամբ, այժմ իմացիր և հավատա, որ Լենինը շատ լավ հասկանում է մեր վիճակը...» (**նույն տեղը**, էջ 325-326):*

Գ. ՎԱՀԱՆ ՏԵՐՅԱՆԻ ՎԿԱՅՈՒԹՅՈՒՆԸ

Այժմ ընթերցողին ներկայացնեմ Թուրքահայաստանի մասին Վ. Տերյանի կազմած զեկուցագրին:

Իր զեկուցագրի սկզբում Տերյանը Թուրքահայաստանի ճակատագրի հարցը գնահատում է որպես հայ կյանքի ամենատուր, ամենածանր, ամենացավոտ հարցը և նշում, որ «արդեն շատ տասնյակ տարիներ ոչ միայն հայ մտավորականության, այլև բանվորական ու գյուղացիական դեմոկրատիայի ամենալայն մասսաների բոլոր մտքերն ու ամբողջ ուշադրությունը պինդ գամված են եղել հայկական կյանքի այդ «անիծյալ հարցին», որ մեծ ու փոքր տերությունները զանազան պատրվակներով մեթոդիկ կերպով իրականացրել են «Թուրքիայի հայերի անողոք ու դաժան, սիստեմի վերածված, պարբերական բնաջնջումը»:

Այնուհետև Տերյանը կովկասահայերի ու Թուրքահայերի պետական ահմաններով բաժանված լինելը գնահատելով որպես հայկական կյանքի դաժան, արյունալի իրողություն, բացատրում է, որ այդ իրողությունը «պահպանում էր մշտական տագնապի մթնոլորտը, սերտորեն շաղկապելով «մարանական ազգային ճակատի» շարքերը, ուժգնորեն ներշնչելով և լայնորեն տարածելով բոլոր դասակարգերի սերտ միասնության, համախմբման գաղափարը՝ հանուն ազգի ֆիզիկական գոյության պաշտպանման և աքողելով, մթագնելով, թուլացնելով ազգի ներսում դասակարգային պայքարի և տարբեր ազգերի պատկանող պրոլետարների համերաշխության գաղափարների ազդեցությունը»:

Անդրադառնալով Թուրքիայում կազմակերպվող հայկական կոտորածների կապակցությամբ Եվրոպայի հասարակական կարծիքին և դրան մշտապես դիմող պահպանողական-կղերական, լիբերալ-բուրժուական և ազգայնական մանրբուրժուական կուսակցությունների ներկայացուցիչներին, Տերյանը փաստում էր, որ «այդ «եվրոպական հասարակությունը» Հայաստանից առաջվող ամենացնցող լուրերին կարող էր արձագանքել լոկ դատարկահնչյուն կարեկցական խոսքերի առատ հեղեղով, գլադստոնների բոցաշունչ-հանդիսավոր ճառերի վիժումներով կամ Հայաստան ուղարկելով մի որոշ քանակությամբ փող, որ հանգանակում էին բուրժուական միջավայրի՝ պարապությունից ձանձրացող բարեգործ տիկնայք և նրանց... կուշտ ամուսինները»:

Այնուհետև Տերյանը նշում էր, որ եվրոպական բուրժուազիայի շահերը պաշտպանող իմպերիալիստ-դիվանագետները սուլթանին «բարեկամական միջնորդություններ» էին անում «իբր՝ հանուն Արևելքում քրիստոնյաների «արդարացի» շահերի պաշտպանման», խուսափելով «հայեր», «Հայաստան» բառերից, որպեսզի չհարուցվեր սուլթանների զայրույթը:

«Այդ բոլոր «բարեկամական միջնորդությունները»,- գրում էր Տերյանը,- որոնց բուրժուական (կղերական և մանր) միջավայրից եղած հայ պոլիտիկանները հսկայական նշանակություն էին տալիս և որոնց հետ մեծ հույսեր էին կապում, վերջանում էին, ինչպես և պետք էր սպասել, նրանով, որ «միջամտած» տերությունը ստանում էր այս կամ այն եկամտավոր կոնցեսիան կամ կապիտուլյացիան, դրանով գրգռելով իր մրցակիցների ու հարևանների ագահ ախորժակը: Կղերական, բուրժուական և մանր բուրժուական բանակի հայ հայրենասերներին ուրիշ բան չէր մնում, բայց եթե սպասել մի նոր «դեպքի» (կարդա՝ նոր սպանդի), որպեսզի նորից մաշեն եվրոպական գիշատիչների չեմքերը, գիշատիչներ, որոնց ջրաղացին ջուր էին լցնում այդ բոլոր դեպքերն ու առիթները»:

Տերյանը բերում է վիճակագրական տվյալներ, որոնց համաձայն 17-րդ դարում հայերն Արևմտյան Հայաստանում կազմում էին ամբողջ ազգաբնակչության 98 տոկոսը, իսկ մահմեդականները՝ 2 տոկոսը և նշում, որ սուլթանների հայահալած քաղաքականության հետևանքով արդեն 1914 թ. հայերը կազմում էին ամբողջ ազգաբնակչության 42 տոկոսը, մնացած 58 տոկոսը հույներ, քրդեր, եզիդիներ, ղզլբաշներ և Թուրքեր էին, ընդորում մահմեդական ազգաբնակչությունը կազմում էր 38 տոկոս:

Միաժամանակ Տերյանն ընդգծում է հետևյալը. «Հայ ազգաբնակչության տոկոսը զգալիորեն կբարձրանար, եթե Թուրքահայաստանում ստեղծվեին անձնական և գույքային անվտանգության տարրական երաշխիքներ, որը հնարավորություն կտար վերադառնալ ամենավերջին տարիներս Հայաստանից զանազան երկրներ գաղթած, բայց հայենիքի հետ կապերը չխզած հարյուր հազարավոր հայերի, որոնք պատրաստ էին առաջին իսկ հնարավորության դեպքում վերադառնալ իրենց ավերված հարազատ օջախը»:

Տերյանն այն տեսակետն է հայտնում, որ եթե ջարդերի հետևանքով տարբեր երկրներում ցրված հարյուր հազարավոր հայերին հնարավորություն

տրվի վերադառնալ, ապա նրանք կկազմեն Արևմտյան Հայաստանի բնակչության կեսից ավելին:

Անդրադառնալով հայկական վիլայեթներում էական ռեֆորմներ մտցնող 1914 թ. հունվարի 26-ին ստորագրված ռուս-թուրքական համաձայնագրին, Տերյանը նշում է, որ «բարենպաստ պայմաններում այդ ռեֆորմի բնական հետևությունը կլիներ ինքնավար Հայաստանի ստեղծումը, և դա հայերին իսկական ինքնորոշման հնարավորություն կտար... Այդ պայմաններում հայ ժողովուրդը կկարողանար համաժողովրդական քվեարկությամբ որոշել իր բախտը, եթե ռուսական և եվրոպական հեղափոխությունները հայերին թույլ տային, որ իրենք վճռեն իրենց բախտը»:

«Հայ սոցիալ-դեմոկրատները,- շարունակում է Տերյանը,- հենց այդ հույսն էին տածում: Նրանք միշտ հետու էին պատրանքներից Եվրոպայի իմպերիալիստական դիվանագետների միջավայրից եկած ամեն տեսակ հայասերների «մարդասիրական» և «բարեկամական» զգացմունքների նկատմամբ, հայասերներ, որոնք հանուն «մարդասիրական» բարձր զգացմունքների, երբեք չէին դավաճանի իրենց կապիտալիստ-տերերի և նրանց պետությունների շահերին: Հայ սոցիալ-դեմոկրատները ոչ միայն չէին սնում այդպիսի պատրանքներ, այլև միշտ մերկացնում էին այն բուրժուական և մանրբուրժուական հայրենասերներին, որոնք ոչ միայն իրենք էին հավատում իմպերիալիստական Եվրոպայի գիշատիչ դիվանագետներից Հայաստանի համար աղերսելով ազատություն ստանալու հնարավորությանը, ոչ միայն այդ պատրանքով սնում էին ժողովրդական լայն մասսաներին, այլև շատ հաճախ ենթարկվում էին հենց այդ դիվանագետների նողկալի պրովոկացիային, վարաժամ ապստամբության հանելով ժողովրդական մասսաներին և նրանց ենթարկելով անողոք ճնշման»:

Հիշեցնելով, որ սկսված համաշխարհային պատերազմից օգտվելով Թուրքիան վերացրել էր Արևմտյան Հայաստանի մասին կնքված վերոհիշյալ համաձայնագիրը, Տերյանը գրում է հետևյալը. «Ամբողջովին պանիսլամիզմի գաղափարով տոգորված երիտասարդ թուրքերի կառավարությունը, հայկական չարաբաստիկ հարցից մեկընդմիշտ ազատվելու պատրվակ որոնող Էնվերի ու Թալեաթի ...գլխավորությամբ օգտվեց համաշխարհային հրդեհից, որպեսզի ամենասարսափելի ձևով լուծեր հայկական հարցը: Այդ կառավարությունը վճռեց հայերին ֆիզիկական բնաջնջման ենթարկել, որպեսզի դրանով իսկ մեկընդմիշտ վերջ տար Հայաստանի վերաբերյալ հարցին»:

Այնուհետև Տերյանը հանգամանորեն ներկայացնում է Առաջին աշխարհամարտի ընթացքում արևմտահայության բնաջնջման պատկերը և գրում է. «Սկսվեց, մի կողմից, Թուրքահայաստանի խաղաղ և անզեն հայ ազգաբնակչության անողոք բնաջնջումը և, մյուս կողմից, հայերի բռնի արտաքսումը Միջագետք, ըստ որում, արտաքսումը զուգակցվում էր ոչ միայն հայերի ամբողջ ունեցվածքի կողոպուտով, ոչ միայն դաժանություններով, այլև շատ հաճախ արյունալի դատաստանով, այնպես որ արտաքսվողների կեսից ավելին կործանվեց մարդասպանների ձեռքով, աքսորավայրը չհասած»:

«Այսպիսով,-եզրակացնում է Տերյանը,- երկու և մեկ քառորդ միլիոն թուրքահայերից ողջ է մնացել մոտավորապես կեսը» և ընդգծում է, որ «ողջ մնացած և տարբեր երկրներ արտագաղթած հայերը, որոնք իրենց կապերը չեն խզել հայրենիքից, պատրաստ են վերադառնալ Հայաստան, հենց որ այստեղ ստեղծվեն անձնական և գույքային անվտանգության զեթ տարրական երաշխիքներ»:

Տերյանը հատուկ ուշադրություն է հրավիրում Արևմտյան Հայաստանի նկատմամբ Ռուսաստանի Ժամանակավոր կառավարության վարած քաղաքականության վրա, նշելով հետևյալը. «Սոցիալիստ Կերենսկու գլխավորած կոալիցիոն կառավարությունը չէր կարող հայերին... տալ ազատություն, թեպետև այդ կառավարությունը խոսքով ընդունեց «ազգերի ինքնորոշման իրավունքը»: Կերենսկու այդ կառավարությունը հարկ չհամարեց որոշակի որեն ասելու իր մտադրությունը ինքնավար Հայաստան ստեղծելու և հայերին հարազատ օջախները վերադարձնելու մասին»:

«Այդ կառավարությունը,- փաստում է Տերյանը,- 8 ամսվա ընթացքում ոչ մի վճռական քայլ չարեց վերականգնելու ավերված Հայաստանի այն մասը, որը «պատերազմի իրավունքով» գրավված է ռուս զորքերի կողմից»:

Տերյանը նշում է նաև, որ Ժամանակավոր կառավարությունը շարունակել է ցարական կառավարության քաղաքականությունը, Կովկասյան ռազմաճակատում թողնելով «հին բարձր հրամանատարական կազմը... որն ամեն կերպ խոչընդոտում է հայ հասարակական կազմակերպություններին՝ գաղթականներին հայրենիք վերադարձնելու և տեղավորելու Թուրքահայաստանում»:

Տերյանը հայտնում է, որ այդ հին հրամանատարության հետ միասին «հին չինովնիկների այդ ամբողջ ավազակախումբը» բացահայտ թշնամանք էր հայտնում դեպի հայերը և պրովոկացիոն միջոցներով զինվորներին գրգռում են հայերի դեմ, ասելով, որ «հայերի պատճառով են զինվորները տանջվում խրամատներում քաղցի ու ցրտի մեջ»:

«Հայ բոլշևիկները,- ընդգծում է Տերյանը,- գիտեն, որ բանվորների ու

չբավարարություն զարգացիների կառավարության ստեղծումը կարող է ազատություն բերել Թուրքահայերին և բուժել նրանց խոր վերքերը»:

Այնուհետև Տերյանը համոզմունք է հայտնում, որ այժմ իշխանության գլուխ կանգնած մեր առաջնորդներն ու ընկերները՝ ժողովրդական կոմիսարները իրատես կանգնեցնեին հայ բոլշևիկների ուղի տակի հողը, «աջակցած կլինեին մեզ. եթե Հայաստանի զտնեին այժմ իսկ մի Դեկրետ հրապարակել, որով Հայաստանի բանվորական և գյուղացիական կառավարության հաստատությունը՝ վճռականորեն պաշտպանել Թուրքահայերի լիակատար ազգային ինքնորոշման ձգտումը, ըստ որում նշվեր, որ ժողովրդական կոմիսարների կառավարությունն ըստ ամենայնի կոժանդակի այն երաշխիքների ստեղծմանը, որոնք Թուրքահայաստանի հայ ազգաբնակչությանն ինքնաբաշման իրավան Հանրավորություն կտային»:

Ըստ Տերյանի, այդպիսի երաշխիք պետք է համարեանա ինչպես բոնի կերպով Միջագետքի և Թուրքիայի այլ վայրերն արտաքսված, այնպես էլ Ռուսաստանում գտնվող գաղթականների և Ամերիկա ու այլ երկրներ գաղթած բոլոր Հայերի Հանար Հայրենիք վերադառնալու Հարավորություն ստեղծելը: «Լոկ այս երաշխիքներն ապահովելու դեպքում,- ընդգծում է Տերյանը,- կարելի է խոսել Հայաստանի իրավան ինքնորոշման մասին: Այլապես հայ ժողովրդի ինքնորոշման մասին ամեն մի խոսակցություն կհնչի որպես դատարկ զրույց»:

Տերյանը գրում էր. «...Մեզ թվում է, որ այժմ պետք է ձեռնամուխ լինել այն գաղթականների տեղավորմանը, որոնք տեղաբաշխված են Անդրկովկասում. ընդ որում շատ կարևոր է այժմ իսկ հայտարարել, որ ռուսական զորքերը դուրս չեն բերվի պատերազմի իրավունքով մեր կողմից գրավված Հայաստանի մասից, մինչև այնտեղ չստեղծվեն անձնական անվտանգության Հարատև երաշխիքներ, և մինչև այնտեղ նոր կյանք չհաստատվի» (ընդգծումն իմն է- Վ. Պ.):

«Անհրաժեշտ է,- առաջարկում էր Տերյանը,- որ «պատերազմի իրավունքով» գրավված Հայաստանի մարզերի կառավարումն անմիջականորեն կապված լինի կենտրոնական իշխանության Հետ և թույլ չտրվի ենթարկելու Հատուկ Անդրկովկասյան կոմիտեի կամ այլ տեղական իշխանության, քանի որ, ինչպես փորձը ցույց է տվել, կառաջացնի տեղական քաղաքական և Հատուկ նպատակների պայմաններից բխող մի ամբողջ շարք բարդություններ»:

Զեկուցագրի վերջում Տերյանը գրում էր. «Եթե պահպանվելու է մեր զորքերի կողմից Հայաստանի գրավված մասը կառավարող այժմյան Գլխավոր կոմիսարիատը, Համենայնդեպս, ցանկալի կլիներ այժմ իսկ այդ մարզերի կառավարման գործի մեջ ներգրավել Թուրքահայ ընտրյալ ներկայացուցիչներին, այդ ներկայացուցիչներից ստեղծելով մեր զորքերի կողմից գրավված Հայաստանի մարզերի կառավարման Գլխավոր կոմիսարիատին կից Հատուկ Սովետ: Այդպիսի ցանկություն շարունակ Հայտնել են իրենք՝ Թուրքահայերը, ինչպես մամուլում, այնպես էլ ժողովներում և Համագումարներում» (Վահան Տերյան, Հ. չորրորդ, եր. 1979, էջ 353-361):

Դ. «ԹՈՒՐՔԱՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԱՍԻՆ» ԴԵԿՐԵՏԸ

*Սովետական Ռուսաստանի կառավարությունը 1917 թ. դեկտեմբերի 20-ին քննարկում է Ստալինի ձեռքով գրված «Թուրքահայաստանի մասին» դեկրետի նախագիծը: Որոշվում է հարցը հետաձգել մինչև Ստալինը իր կազմած նախագիծը նախապես քննարկի Պոռչ Պոռչյանի հետ (*Декреты Октябрьской революции, том 1, М. 1933, стр. 394):

Պ. Պոռչյանի հետ հարցը քննարկելուց, նրա համաձայնությունը ստանալուց հետո Ստալինը երկրորդ անգամ, 1917 թ. դեկտեմբերի 29-ին «Թուրքահայաստանի մասին» դեկրետի նախագիծը, առանց փոփոխության, ներկայացնում է Ժողկոմսովետի քննարկմանը: Այդ օրն էլ ընդունվում է «Թուրքահայաստանի մասին» դեկրետը:

1917 թ. դեկտեմբերի 31-ին «Правда» *և* «Известия» *թերթերը հրապարակում են «Թուրքահայաստանի մասին» դեկրետը Ժողովրդական կոմիսարների սովետի նախագահ Վ.Ի. Լենինի և Ազգությունների գործերի ժողովրդական կոմիսար Ի. Վ. Ստալինի ստորագրությամբ:*

Հիշեցնելով, որ պաշտպանում է Ռուսաստանի կողմից օկուպացված «Թուրքահայաստանի» հայերի ազատ ինքնորոշման իրավունքը՝ ընդհուպ մինչև լիակատար անկախություն, Ժողովրդական կոմիսարների սովետը գտնում էր, որ այդ իրավունքի կենսագործումը հնարավոր է միայն մի շարք նախնական երաշխիքների պայմաններում, որոնք բացարձակապես անհրաժեշտ են հայ ժողովրդի ազատ հանրաքվեի համար:

Դեկրետով այդպիսի երաշխիքներ էին համարվում՝

***Առաջին.** Զորքերի դուրս բերումը «Թուրքահայաստանից» և հայկական ժողովրդական միլիցիայի անհապաղ կազմակերպումը՝ «Թուրքահայաստանի» բնակիչների անձնական ու գույքային անվտանգությունն ապահովելու նպատակով:*

***Երկրորդ.** Տարբեր երկրներում գրված գաղթական հայերի, ինչպես նաև վերադարձի հայերի անարգել վերադարձը «Թուրքահայաստանի» սահմանները:*

Ի.Վ. Ստալինի ձեռքով գրված Սովետական Ռուսաստանի ժողկոմսովետի «Թուրքահայաստանի մասին» դեկրետը (բնագիր)

Декрет о „Турецкой Армении".

Совнарком Российской Республики, признавая, что народы, что Рабочие и Крестьянские Правительство России поддерживает право армянского оккупированной Турецкой Армении" на свободное самоопределение вплоть до полной независимости.

Совнарком Российской Республики считает, что осуществление этого возможно лишь при условии реальных предварительных гарантий, абсолютно необходимых для свободного референдума армянского народа.

Данными гарантиями Совнарком Российской Республики считает:

1) Полное очищение войск из прежней Турецкой Армении" и немедленное образование армянского народного ополчения в числе небольшого личного и имущественного безопасного нейтрального „Турецкой Армении"

2) Безпрепятственное возвращение беженцев-армян, а также эмигрантов-армян, разбросанных в различных странах, в прежние „Турецкой Армении"

3) Безпрепятственное возвращение в прежние „Турецкой Армении" насильственно выселенных во время войны Турецкими властями турок армян, на место Совнарком Российской Республики настаивает при мирных переговорах с Турецкими Комиссарами

4) Образование Временного Народного Правительства „Турецкой Армении" в виде Совета доверия Армянского народа, избранного на демократических началах.

Чрезвычайному Временному Комиссару по делам Кавказа Степану Шаумяну поручается вплоть населения „Турецкой Армении" включение содействие к этим осуществлению пунктов 2-го и 4-го, а также ~~в скорейшем осуществлении пункта~~ приступить к созданию Смешанной Комиссии ~~на основании~~ для установления срока и способа вывода войск из прежней „Турецкой Армении" (пункт 1-ый).

Примечание. Географические границы „Турецкой Армении" определяются демократическими требованиями представителей Армянского народа по соглашению с ~~...~~ демократическими избранными представителями смежных спорных (мусульманских и иных) округов совместно с Чрезвычайным Врем Комиссаром по делам Кавказа.

Председ. Сов. Нар. Комиссаров
Н. Ленин

Народный Комиссар по делам национальностей
И. Джугашвили (Сталин)

Верно

Рукопись И. В. Сталина: Декрет о «Турецкой Армении» — 11 января 1918 г. (29 декабря 1917 г.)

Уменьшено

Նշվում է. Ռուսերեն՝ ժամանակ թուրքական իշխանությունների կողմից բանի կիրառով Թուրքիայի խորքերն արտաքսված հայերի անարգել վերադարձը «Թուրքահայաստանի» սահմանները, որի վրա ժողովրդական կոմիսարների սովետը պետք է պնդի թուրքական իշխանությունների հետ ունենալիք իրավաբանությունների ժամանակ:

Նշվում է. «Թուրքահայաստանի» ժամանակավոր ժողովրդական կառավարության կազմակերպումը՝ դեմոկրատական հիմունքներով ընտրված հայ ժողովրդի պատգամավորների խորհրդի ձևով:

1917 թ. դեկտեմբերի 16-ին Սովետական Ռուսաստանի ժողկոմսովետի որոշմամբ Կովկասի գործերի արտակարգ կոմիսար նշանակված Ստ. Շահումյանին դեկրետով հանձնարարվում էր ամեն տեսակ օգնություն ցույց տալ «Թուրքահայաստանի» բնակչությանը 2-րդ և 4-րդ կետերի իրականացման գործում, «ինչպես նաև ձեռնարկել «Թուրքահայաստանի» սահմաններից զորքերը հեռացնելու ժամկետներն ու եղանակը որոշելու համար խառը հանձնաժողովի կազմումը»:

Հարկ եմ համարում պարզաբանել, որ դեկրետի հետագա բոլոր հրապարակումներում փոխանցմամբ նշվում են «2-րդ և 3-րդ կետեր», մինչդեռ բնագրում նշվել են «2-րդ և 4-րդ կետեր»:

«Թուրքահայաստանի մասին» դեկրետի վերջում նշված «Մանիֆեստություն» մեջ տպվում էր հետևյալը. «Թուրքահայաստանի» աշխարհագրական սահմանները որոշվում են դեմոկրատական հիմունքներով ընտրված հայ ժողովրդի ներկայացուցիչների կողմից խառը, վիճելի (մուսլիմական և այլոց) օկրուգների դեմոկրատական հիմունքներով ընտրված ներկայացուցիչների համաձայնությամբ՝ Կովկասի գործերով արտակարգ ժամանակավոր կոմիսարի հետ միասին»:

Այստեղ հարկ եմ համարում նշել, որ եթե ցարական կառավարությունն ու ժամանակավոր կառավարությունը Թուրքահայաստանի կառավարման համար նշանակել էին հայ իրականությունը չիմացող, հայկական կյանքին միանգամայն օտար մարդկանց, ապա Սովետական Ռուսաստանի կառավարությունը Թուրքահայաստանի կառավարումը հանձնում է Ստ. Շահումյանին, որը լավ գիտեր իր ժողովրդի պատմությունը, ամբողջ հոգով կապված էր իր ժողովրդի հետ: Այս հանգամանքը, անշուշտ, ուներ մեծ նշանակություն և Շահումյանն էլ ամբողջությամբ զգում էր իր պարտքն ու պատասխանատվությունը սեփական ժողովրդի առջև:

Այնուհետև անչափ կարևոր էր նաև այն հանգամանքը, որ Շահումյանի

վրա էր դրվում Արևմտյան Հայաստանից ռուսական զորքերը դուրս բերելու ժամկետների կարգավորումը, որը նրան տալիս էր լայն լիազորություններ զորքերը, ըստ անհրաժեշտության, տեղաշարժելու համար:

1917 թ. դեկտեմբերի 31-ին «Правда» և «Известия» թերթերում դեկրետի հրապարակման հետ միասին Ստալինը, որպես ազգությունների գործերով ժողովրդական կոմիսար, հանդես է գալիս «Թուրքահայաստանի մասին» հոդվածով:

Իր հոդվածի սկզբում Ստալինը հիշեցնում է, որ Թուրքահայաստանը այն միակ երկիրն է, որ Ռուսաստանը գրավել է «պատերազմի իրավունքով» և գրում է, որ Թուրքահայաստանը «այն «դրախտային անկյունն» է, որը երկար տարիներ Արևմուտքի ազահ դիվանագիտական իղձերի և Արևելքի արյունոտ վարչական մարզանքների առարկա է ծառայել (և շարունակում է ծառայել)»:

Այնուհետև Ստալինն անդրադառնալով հայերի ջարդերին ու կոտորածներին, նշում է, որ բոլոր երկրների դիվանագետները փարիսեցիական «պաշտպանությամբ» քողարկել են հայերի նոր կոտորածները, որի հետևանքով մնացել է «արյունաշաղաղ, խաբված ու ստրկացված Հայաստանը»:

«Հայաստանի զավակները,- շարունակում է Ստալինը,- իրենց Հայրենիքի հերոս պաշտպանները, բայց բնավ ոչ-հեռատես քաղաքագետները, որոնք շատ անգամ են խաբվել իմպերիալիստական դիվանագիտության գիշատիչների կողմից,- չեն կարող այժմ չտեսնել, որ դիվանագիտական կոմբինացիաների հին ուղին Հայաստանի ազատագրության ուղին չէ»:

Հայ ժողովրդի բախտը սերտորեն կապելով Հոկտեմբերյան Հեղափոխության հետ, Ստալինը հիշեցնում է, որ այդ Հեղափոխությունը խորտակել է ազգային ճնշման շղթաները, պատռել է «ժողովուրդների ձեռքն ու ոտքը» կաշկանդող ցարական գաղտնի պայմանագրերը և կկարողանա մինչև վերջ հասցնել ժողովուրդների ազատագրության գործը:

Ստալինը տեղեկացնում է, որ վերոհիշյալ նկատառումներից ելնելով ժողովրդական կոմիսարների սովետը որոշել է «հատուկ դեկրետ հրատարակել «Թուրքահայաստանի» ազատ ինքնորոշման մասին: Այդ առանձնապես անհրաժեշտ է այժմ, երբ գերմանա-թուրքական իշխանությունները, հավատարիմ իրենց իմպերիալիստական բնությանը, չեն թաքցնում օկուպացված մարզերը բռնությամբ իրենց իշխանության տակ պահելու իրենց ցանկությունը»:

*Հոդվածի վերջում Ստալինն ազդարարում է. «Թող իմանան Ռուսաստանի ժողովուրդները, որ ռուսական հեղափոխությանը և նրա կառավարությանը խորթ են զավթումների ձգտումները: Թող ամենքն իմանան, որ ազգային ճնշման իմպերիալիստական քաղաքականությանը ժողովրդական կամքարտների սովետը հակադրում է ճնշված ժողովուրդների լիակատար ազատության քաղաքականությունը» (Ի. Վ. **Ստալին**, Երկեր, հ. 4, Եր. 1948, էջ 30-31):*

Ե. «ԹՈՒՐՔԱՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԱՍԻՆ» ԴԵԿՐԵՏԻ ԻՐԱԳՈՐԾՄԱՆ ԵՐԱՇԽԻՔՆԵՐԸ

«Թուրքահայաստանի մասին» դեկրետի ընդունումից մոտ 15 օր առաջ, 1917 թ. դեկտեմբերի 18-ին, Ժողկոմսովետի որոշման համաձայն Շահումյանը նշանակվել էր Կովկասի գործերով ժամանակավոր արտակարգ կոմիսար: Լենինի և Ստալինի ստորագրած վկայականում նշվում էր նաև, որ Շահումյանն այդ պարտականությունները կատարելու էր մինչև Կովկասի երկրամասում սովետական իշխանության հաստատումը:

1918 թ. հունվարի 31-ին «Кавказский вестник Совета Народных Комиссаров» *թերթում հրապարակվել է Կովկասի գործերի ժամանակավոր արտակարգ կոմիսար Շահումյանի կոչը՝ ուղղված բանվորների, զինվորների և գյուղացիների պատգամավորների բոլոր սովետներին, Կովկասի բոլոր բանվորներին, զինվորներին և գյուղացիներին:*

Իր կոչում Շահումյանը նշում էր, որ բանվորների, զինվորների և գյուղացիների պատգամավորների ինտերնացիոնալ-դեմոկրատական և հեղափոխական սովետների փոխարեն ստեղծվել են ազգային խորհուրդներ, որոնք ազգային կառավարության դեր են խաղում:

Շահումյանը զգուշացնում էր. «Այս ազգայնական քաղաքականության հետևանքով Կովկասն ու, մասնավորապես, Անդրկովկասն անխուսափելիորեն գլորվում են դեպի հակահեղափոխության ու ազգայնական պատերազմների անդունդը»:

Այնուհետև նկատի ունենալով Անդրկովկասյան կոմիսարիատի քաղաքականությամբ ստեղծված անարխիան, Շահումյանն անդրադառնում է մենշևիկների և մահմեդական բեկերի շահերը ներկայացնող մուսավաթականների ձայների հնչին մեծամասնությամբ ստեղծված Կովկասյան սեյմին և գրում է հետևյալը. «Բացի բոլշևիկներից, որոնք չցանկացան սեյմին արժանացնել նույնիսկ իրենց ներկայությունը, հօգուտ սեյմի անպետքության արտահայտվեցին սոցիալիստ-հեղափոխականները և «Դաշնակցությունն» կուսակցությունը»:

*Շահումյանը որոշակիորեն հայտարարում էր, որ ստեղծված վիճակից դուրս գալու, «ազգամիջյան կռիվների և կովկասյան ժողովուրդների փոխադարձ ոչնչացման սարսափների առաջն առնելու միակ միջոցը, եթե արդեն ուշ չէ,- Կովկասում սովետական իշխանության ստեղծելն է» (**Ստ. Շահումյան**, նույն տեղը, հ. չորրորդ, էջ 98-99):*

1918 թ. հունվարի 31-ին հրապարակվել է Շահումյանի դիմումը՝ ուղղված Անդրկովկասի մահմեդական գավառների գյուղացիական բնակչությանը: Շահումյանն անդրադառնում է մահմեդական գյուղացիության ծանր վիճակին, խանների ու բեկերի ճնշումից ազատագրվելու խնդրին և առանձնահատուկ կերպով դիմելով գյուղացի եղբայրներին, ընդգծում է հետևյալը. «Ձեր բեկերն ու խանները մինչև այժմ քանիցս գրգռել են ձեզ հայ գյուղացիների դեմ և կոտորած են սարքել ձեր միջև: Բավական է, ինչքան այդպիսի եղբայրասպան կռիվ եղավ: Հայ գյուղացիները նույնպիսի աշխատավորներ են, ինչպես և դուք: Նրանք էլ են ուզի ելնում իրենց բեկերի ու հարուստների դեմ»:

*Շահումյանը կոչ էր անում մահմեդական գյուղացիներին, որպեսզի «խաղաղ ու եղբայրաբար ապրեն հայերի հետ» (**Ստ. Շահումյան**, նույն տեղը, հ. չորրորդ, էջ 108-109):*

Այսպիսով, ինչպես նշված, այնպես էլ մյուս ելույթներում, կոչերում և այլ փաստաթղթերում, որոնց մասին արդեն ասվել է նախորդ էջերում, Շահումյանը, որպես Կովկասի գործերով արտակարգ կոմիսար, դնում էր հայ և մուսուլման գյուղացիների մեջ սերմանված փոխադարձ ատելությունը վերացնելու, հայ-թուրքական կոտորածների վտանգը կանխելու անհրաժեշտությունը և անդուլ կերպով աշխատում էր այդ ուղղությամբ:

Այժմ անդրադառնանք այն հարցին, թե կա՞յին արդյոք երաշխիքներ «Թուրքահայաստանի մասին» Ժողկոմսովետի դեկրետի իրագործման համար:

Մինչ այս հարցին անդրադառնալը, հարկ եմ համարում ընթերցողի ուշադրությանը ներկայացնել հետևյալը.

***Առաջին.** Հոկտեմբերյան հեղափոխությունից առաջ, 1917 թ. մայիսի 7-ին զորամասերից և գնդերից բանվորների և զինվորների պատգամավորների սովետ ընտրվող պատգամավորներին տված «Նակազի» մեջ Լենինը հանձնարարում էր, որ նրանք պետք է հաշտություն առաջարկեն «բոլոր պատերազմող երկրներին՝ բոլոր ճնշված կամ անիրավահավասար ժողովուրդներին առանց որևէ բացառության ազատագրելու պայմանով»:*

«Դա նշանակում է,- պարզաբանում էր Լենինը,- որ վելիկոռուսները բռնությամբ չեն պահի ո՛չ Լեհաստանին, ո՛չ Կուրլանդիային, ո՛չ Ուկրաինային, ո՛չ Ֆինլանդիային, ո՛չ Հայաստանին, ընդհանրապես ոչ մի ժողովրդի»:

«Վելիկոռուսները,- շարունակել է Լենինը,- բոլոր ժողովուրդներին առաջարկում են եղբայրական միություն և մեկ ընդհանուր պետության ստեղծում յուրաքանչյուր առանձին ժողովրդի հոժարակամ համաձայնությամբ և ոչ մի դեպքում ուղղակի կամ անուղղակի բռնության միջոցով»:

«Այդպիսի հաշտության պայմանների համաձայն,-ընդգծել է Լենինը,- վելիկոռուսները պարտավորվում են անհապաղ դուրս բերել զորքերը թե՛ Գալիցիայից, թե՛ Հայաստանից, թե՛ Պարսկաստանից, ինչպես այդ ժողովուրդներին, այնպես էլ ընդհանրապես առանց բացառության, բոլոր ժողովուրդներին թողնելով, որ նրանք միանգամայն ազատորեն որոշեն՝ արդյոք իրենք ցանկանում են ապրել առանձին պետության մեջ, թե՞ միութենական պետության մեջ՝ ում հետ ուզենան» (**Վ. Ի. Լենին,** ԵԼԺ, հ. 32, էջ 51):

Մեկ այլ առիթով, 1917 թ. հունիսի 14-ին Լենինը նկատի ունենալով էսէռների «Дело народа» թերթի հարցադրումը, որով քննադատվում էր ֆրանսիական սոցիալիստ մինիստր Ալբեր Թոման, նշելով, թե «մեզ համար, օրինակ, շատ հետաքրքիր կլիներ լսել սոցիալիստ Ալբեր Թոմայի կարծիքը Ալժիրի «ինքնորոշման» մասին», գրում է հետևյալը. «Այո՛, մեզ համար շատ հետաքրքիր կլիներ լսել նույնպես և՛ Կերենսկու, և՛ Ծերեթելու, և՛ Զենզինովի, և՛ Սկոբելևի կարծիքը Հայաստանի, Գալիցիայի, Ուկրաինայի, Թուրքեստանի «ինքնորոշման» մասին»(**Վ. Ի. Լենին,** ԵԼԺ, հ. 32, էջ 310-311):

Այնուհետև դիմելով Կերենսկուն և վերոհիշյալ մյուս գործիչներին, Լենինը հարցնում է. «Մի՞թե դուք «իշխանության գլուխ կանգնած ռուսական բուրժուազիայի» մինիստրության մեջ բարձրացրել եք ռուսական Իռլանդիայի, ռուսական Ալժիրի, հարցերը, այսինքն Թուրքեստանի, Հայաստանի, Ուկրաինայի, Ֆինլանդիայի և այլ հարցերը: Ե՞րբ եք դուք բարձրացրել այդ հարցը: Ինչո՞ւ այդ մասին դուք չեք պատմում ռուս «ժողովրդին»» (**Վ. Ի. Լենին,** ԵԼԺ, հ. 32, էջ 311-312):

Բավարարվեմ Լենինից մեջբերում կատարել և հիշեցնեմ, որ նախորդ էջերում հիշատակված 1917 թ. հունիսին տեղի ունեցած սովետների համառուսաստանյան առաջին համագումարում ունեցած ելույթում Լենինն առաջինն է հանդես է եկել անկախ հայկական հանրապետություն ստեղծելու օգտին: (**Վ. Ի. Լենին,** ԵԼԺ, հ. 32, էջ 358-359):

Ուսումնասիրողներից մեկը չհամաձայնվելով Լենինի առաջարկին, այն անվանում է «բացահայտ դեմագոգ լոզունգ» և հիշեցնում է Կերենսկու հետևյալ պատասխանը. «Մենք չենք կարողանա հեռանալ Հայաստանից, քանի որ այդ ժամանակ Հայաստանից ոչինչ չի մնա: Նա կոչնչանա քրդերի և թուրքերի կրակից ու սրից» (**Геноцид армян.** Документы и комментарий, составитель Ю. Барсегов, М. 2005, том 2, часть 2, стр. 297):

Այստեղ հարկ է նկատի ունենալ հետևյալը: **Նախ,** ժամանակավոր կառավարության ղեկավար Կերենսկին կանգնած էր «Պատերազմը շարունակել մինչև հաղթական վախճան» սկզբունքի վրա, որը թելադրվել էր Անտանտի երկրների կողմից: Բոլշևիկյան կուսակցության ղեկավար Լենինը ելնում էր իմպերիալիստական պատերազմից Ռուսաստանի դուրս գալու և ժողովուրդներին ինքնորոշվելու իրավունք շնորհելու պահանջից:

Երկրորդ. 1917 թ. հոկտեմբերի 26-ին (հին տոմարով) բանվորական, զինվորական և գյուղացիական սովետների 2-րդ համառուսաստանյան համագումարն ընդունել էր Լենինի կազմած դեկրետը հաշտության մասին: Այդ դեկրետը հռչակում էր «անհապաղ հաշտություն առանց անեքսիաների (այսինքն՝ առանց ուրիշների հողերի հափշտակման, առանց ուրիշ ժողովուրդների բռնի միացման) և առանց կոնտրիբուցիաների»:

1917 թ. նոյեմբերի 15-ին ընդունվել է Սովետական Ռուսաստանի Ժողկոմսովետի «Ռուսաստանի ժողովուրդների իրավունքների հռչակագիրը», որով ազդարարվում էր նաև հետևյալը.

1. Ռուսաստանի ժողովուրդների ազատ ինքնորոշվելու՝ ընդհուպ մինչև անջատվելու և անկախ պետություն կազմավորելու իրավունքը:

2. Ազգային և ազգային-կրոնական բոլոր և ամեն տեսակ արտոնությունների և սահմանափակումների վերացումը:

1917 թ. դեկտեմբերի 3-ին Սովետական Ռուսաստանի Ժողկոմսովետը «Ռուսաստանի և Արևելքի բոլոր մահմեդական աշխատավորներին» ուղղված դիմումի մեջ նորից հայտարարում էր, որ Ժողկոմսովետը դեմ է ուրիշների հողերի զավթմանը և հատկապես նշում, որ «Թուրքիայի բաժանման և Հայաստանը նրանից «խլելու» մասին պայմանագիրը ոչնչացված է: Հենց որ դադարեն ռազմական գործողությունները, հայերին կտրվի իր քաղաքական ճակատագիրը ազատ որոշելու իրավունք» (**Декреты Советской власти,** том 1, М. 1957,стр. 113-115):

(Փակագծի մեջ նշեմ, որ առանձին ուսումնասիրողներ «խլելու» բառը կարդում են առանց չակերտների կամ չակերտների մեջ դրված բառը կարդում են ուղղակի իմաստով: Մինչդեռ «խլելու» բառը չակերտներով գրվածն

այստեղ նշանակում է Թուրքահայաստանի նկատմամբ Թուրքիայի իրավունքի բացառում):

Ավածից կարելի է եզրակացնել հետևյալը. Սովետական Ռուսաստանի կառավարությունը, անձամբ նրա ղեկավար Լենինը սկզբունքորեն դեմ էին ամեն տեսակ անեքսիաների, բայց Արևմտյան Հայաստանի նկատմամբ կիրառվող քաղաքականության մեջ դեմ չէին այնտեղ ռուսական զորքերի պահպանմանը, որը տվյալ դեպքում համապատասխանում էր հայ ժողովրդի շահերին, ինչի մասին այնպես ուղղակի արտահայտվել էր Վ. Տերյանը իր վերոհիշյալ զեկուցագրում:

Կարևոր եմ համարում նշել հետևյալ հանգամանքը: Սովետական Ռուսաստանի կառավարությունը իր գոյության հենց առաջին օրից հանդես էր գալիս «անհապաղ հաշտություն առանց անեքսիաների և առանց կոնտրիբուցիաների» պահանջը իրականացնելու դիրքերից: Դա Սովետական Ռուսաստանի սկզբունքային դիրքորոշումն էր, որի մասին Լենինը տարբեր առիթներով հայտարարում էր մշտապես:

Բայց Լենինը Թուրքահայաստանի կապակցությամբ չէր պնդում այդ սկզբունքի կիրառումը և համաձայնվում էր, որպեսզի Արևմտյան Հայաստանում մնան ռուսական զորքերը:

Ընթերցողներին հրավիրելով խորհել այս փաստի շուրջ, շարունակեմ ներկայացնել դեպքերի զարգացման ընթացքը:

Ամենից առաջ անհրաժեշտ է պարզել, թե Անդրկովկասում ինչպիսի վերաբերմունք են ցույց տվել Սովետական Ռուսաստանի ժողկոմսովետի ընդունած դեկրետի նկատմամբ:

Խոսքը տանք Ս. Վրացյանին. «Կային մարդիկ, որոնք այդ օրերին ցույց էին տալիս Խորհրդային Ռուսաստանի համբան՝ առաջարկելով ձեռք մեկնել բոլշևիկներին, որոնց առաջապահները դեռ մնում էին Բաքում եւ Սոչիում: Այդ տրամադրութեան որոշ չափով նպաստում էին եւ Թիֆլիսում առացուող աղօտ լուրերը, որ իբր թէ Լենինը առանձին դեկրետով յայտարարել է Հայաստանի անկախութիւնը: Սակայն, այդ մտքի անհեթեթութիւնը այնքան էր ակներեւ, որ նոյնիսկ, նրա հեղինակները լուրջ քայլեր չարին այդ ուղղութեամբ: Ռուսաստանը շատ էր հեռու Հայաստանից, իսկ բոլշևիկների ոյժը՝ աւելի քան խնդրական» (Ս. Վրացյան, Հայաստանի հանրապետութիւն, էջ 35):

Ընթերցողին թողնելով Ս. Վրացյանի վերոհիշյալ մտքերում եղած հակասությունների գնահատումը, ասեմ հետևյալը: Հայ ժողովուրդն անչափ կշահեր, եթե Ս. Վրացյանն ու իր համախոհները համագործակցեին այն մարդկանց հետ, «որոնք այդ օրերին ցույց էին տալիս Խորհրդային Ռուսաստանի համբան»:

Բայց դրա փոխարեն, նրանք շարունակում էին Անդրկովկասյան կոմիսարիատի ներսում համագործակցել մենշևիկների ու մուսավաթականների հետ, որոնք բոլորովին էլ շահագրգռված չէին Հայաստանի ճակատագրով և իրենց գլխավոր նպատակն էին դարձրել պայքարը Սովետական Ռուսաստանի դեմ, իրենց հույսը կապելով Գերմանիայի ու Թուրքիայի հետ:

«Թուրքահայաստանի մասին» դեկրետի իրականացման գլխավոր պայմանն Արևմտյան Հայաստանի տարածքում ռուսական զորքերի պահպանումն էր ու Սովետական Ռուսաստանի հետ համագործակցելը:

Իսկ ի՞նչ վիճակ էր տիրում Կովկասյան ռազմաճակատում:

Փորձեմ այս հարցին պատասխանել եղած փաստերի օգնությամբ, եզրակացությունը թողնելով ընթերցողին:

Երկարատև պատերազմն ավելի էր խորացրել Ռուսաստանի սոցիալ-քաղաքական ճգնաժամը: Եվ այդ ճգնաժամն անպայման պետք է ազդեր երկու ռազմաճակատներում կռվող ռուսական բանակի ընդհանուր կարգապահության վրա: Այսպիսի վիճակը զգել էր նաև բանակի մարտունակությունը:

Ընդհանուր կարգապահության ու մարտունակության անկման վրա կարևոր ազդեցություն էր գործում նաև մարդկային կորուստը:

Մինչև 1917 թ. փետրվարյան հեղափոխությունը ռուսական բանակը տվել էր 6 միլիոնից ավելի մարդու կորուստ, այդ թվում մոտ 560 հազար սպանված, 2 միլիոն 440 հազար վիրավոր, 2 միլիոն 640 հազար գերի և այլն: Ռուսական բանակը կորցրել էր 63 հազար սպա:

Բնականաբար սոցիալ-քաղաքական ճգնաժամի պայմաններում մարդկային հսկայական կորուստները խոշոր ազդակ էին բանակի կազմալուծման համար:

Պատերազմն իսկապես հոգնեցրել էր Ռուսաստանի ժողովուրդներին, սակայն ժամանակավոր կառավարությունը մտադրություն չուներ այն ավարտել: Թիկունքում ևս տեղավորված շատ զորամասերում զինվորների խլրտումները դարձել էին անկասելի: Հատկապես այդ տեսակետից աչքի էին ընկնում Պետրոգրադում և Կիևում գտնվող զորամասերը:

Կառավարությունը ուրիշ այլ միջոց չգտավ խնդիրը լուծելու համար և որոշում է այդ զորամասերը ուղարկել Կովկասյան ռազմաճակատ: Դժվար չէ կռահել, թե այդ զորամասերի զինվորներն ինչպես պետք է իրենց պահեին ռազմաճակատում:

Արևմտյան ռազմաճակատում կռվող ռուսական բանակում ընդհանուր կարգապահության անկումը և մյուս երևույթները, լուրջ հետևանքներ ունեցան նաև Կովկասյան ռազմաճակատում գտնվող կես միլիոնանոց հսկայական բանակի վրա, այն էլ ավելի ծանր ու առանձնահատուկ պայմաններում:

Այստեղ նկատի է առնվում այն իրողությունը, որ Կովկասյան բանակը ձեռք բերած լուրջ հաղթանակների շնորհիվ Թուրքիային պատկանող տարածքում խորացել էր մինչև 600 կմ և իր հսկողության տակ էր պահում 1200 կմ Սև ծովից մինչև Ուրմիա լիճ ձգվող ճակատը: Իսկ Արևմտյան ռազմաճակատում կրած անհաջողությունների հետևանքով բանակը նահանջելով հասել էր պետական սահմանին:

ՕՁԱԿՈՄ-ն ու Կովկասյան ռազմաճակատի հրամանատարությունը, արդեն 1917 թ. հոկտեմբերի վերջին, երբ Պետրոգրադում հռչակվել էր Սովետական իշխանություն, ձեռնամուխ եղան բանակի զորացրմանը, որն իրականացվում էր տարերային պայմաններում:

Երկաթուղային կայարաններում կուտակվել էին մեծ քանակությամբ զորացրված զինվորներ, որոնց փոխադրումը կատարվում էր խափանումներով, սննդամթերքի պակասությունն ավելի սրությամբ էր զգացվում: Գերակշռում էր ինքնակամ նահանջը, որը ձմեռային պայմաններում զինվորներին մղում էր կամայական գործողությունների: Մեծանում էր դասալքությունը: Զինվորները զանգվածորեն հեռանում էին, չսպասելով զորացրման հերթին:

Փաստորեն խոշոր բնակավայրերը, ամրացված շրջանները, ամրոցները, երկաթուղային կայարանները և այլ կարևոր օբյեկտներ մնում էին անպաշտպան:

Կովկասյան ռազմաճակատում այլևս արձագանք չէր գտնում Կերենսկու պարտադրած՝ «Պատերազմ մինչև հաղթական վախճան» կարգախոսը: Ավելացնենք, որ լեռնային դժվար պայմանները, սկսված սառնամանիքը, բանակի վատ մատակարարումը չէին կարող անհետևանք մնալ:

Զինվորը հոգնել էր պատերազմից, և նա տուն էր ուզում վերադառնալ: Ռազմաճակատից գրված նամակներում զինվորները դժգոհում էին, որ իրենք անելիք չունեն Կովկասի լեռներում, հարկավոր է շուտ հաշտություն կնքել և տուն վերադառնալ:

Ատրճանաբար ծավալվում ու անկասելի էր դառնում դասալքությունը: 1917 թ. փետրվարից անմիջապես հետո Կովկասյան ռազմաճակատում հաստատվել էր մի տեսակ անպաշտոնական զինադադար, որը շարունակվում է ամբողջ 9 ամիս: Զինվորներն ու սպաները զանգվածաբար արձակուրդ էին ստանում: Իհարկե, այս ամենը նպաստում էր ռազմաճակատի մերկացմանը:

Նկատի ունենալով ստեղծված ծանր վիճակը, 1917 թ. դեկտեմբերի 20-ին Շահումյանը մատնանշում էր այն վտանգի մասին, որ կստեղծվեր Թուրքերի հետ դեռևս հաշտություն չկնքելու պայմաններում, եթե ռուսական զորքերը միանգամից թողնեն ռազմաճակատն ու հեռանան: Շահումյանը միաժամանակ գտնում էր, որ 1917 թ. դեկտեմբերի 5-ին կնքված զինադադարի պայմաններում քիչ հավանական է, որ պատերազմը վերսկսվի:

«Բայց,- զգուշացնում էր Շահումյանը,- որքան էլ քիչ հավանական լինի պատերազմի վերսկսումը, այնուամենայնիվ, անհրաժեշտ է ռազմաճակատում գեթ որևէ պաշտպան զորամաս: Եթե Թուրքական բանակը չի ուզում և չի կարող պատերազմել, ապա բաց տեղում առաջ շարժվել նա ազատ կերպով կարող է: Իսկ մենք այնտեղ ունենք շատ գույք, ամրություններ ու հանդերձանք, որոնք պաշտպանության կարիք են զգում» (**Ստ. Շահումյան,** նույն տեղը, հ. չորրորդ, Եր. 1978, էջ 60):

Սակայն առաջացել էր մեկ այլ պատճառ, որը իմ կարծիքով, ավելի է արագացնում սկսված պրոցեսը: Ես նկատի ունեմ ազգային զորամասեր կազմակերպելու գործնական քայլեր ձեռնարկելը: Այդ մասին հանգամանորեն անդրադարձ կլինի ստորև:

Ռազմաճակատում սկսվում է մի ահավոր իրարանցում: Ազգային զորամասեր կազմակերպելու նպատակով ռազմաճակատից ետ էին կանչվում ոչ միայն ռուսները, ուկրաինացիները, լեհերը և այլոք, այլ նաև հայերն ու վրացիները: Առաջիների գնալը, եթե կարելի է հասկանալ, ապա ոչ մի կերպ չի կարելի արդարացնել, որ հայ զինվորները Կովկասյան ռազմաճակատից բերվում էին Թիֆլիս՝ ազգային գունդ կազմելու համար: Բայց որ դրանով ռազմաճակատում թշնամու առջև ճանապարհը բացվում էր, ոչ ոքի կարծես չէր հետաքրքրում:

Այս վտանգը, որը չէին զգում Անդրկովկասյան կոմիսարիատում գործող կուսակցությունները, հասկանում էին շարքային զինվորները, որոնք էլ բողոքում էին այդ անմիտ հրամանների դեմ:

Ահա մի փաստ: 1917 թ. դեկտեմբերի 8-ին Համադանի կայազորի մոտինգի որոշման մեջ ասվում է. «Մենք՝ վրացիներս, հայերս, օսերս և իմերեթցիներս, Համադանի կայազորի զինվորներս, երեք հարյուր հոգով հավաքվելով ցույցի և քննարկելով ազգային գնդեր ստեղծելու վերաբերյալ գեներալ Պրժևալսկու հեռագիրը, միաձայն որոշեցինք բողոքել ազգային գնդեր կազմակերպելու և մարդկանց ըստ ազգությունների բաժանելու դեմ: Մենք ցանկանում ենք միասին լինել ռուսների հետ, ինչպես դա առաջներում էր, ուստի

և չենք ենթարկվում գեներալ Պրժևալսկու հրամաններին և չենք ճանաչում բուրժուական Անդրկովկասյան կոմիսարիատը, որը մեզ բաժանում է ազատ Ռուսաստանից: Մենք ճանաչում ենք միայն ժողովրդական կոմիսարների սովետի և բանվորական, զինվորական ու գյուղացիական սովետների իշխանությունը: Խնդրում ենք բոլոր վրացի, իմերեթցի, օս ընկերներին միանալ մեր կոչին» («Кавказский рабочий», 02. 01 1918 г.):

Երբ զորամասերում ստացվում է Պրժևալսկու հրամանը, զանգվածաբար արձակուրդ գնալու հետ միասին սկսվում է զանգվածային դասալքություն: Իսկ նոյեմբերի 24-ից հետո, երբ Անդրկովկասյան կոմիսարիատը որոշում է անջատվել Սովետական Ռուսաստանից, արդեն ոչ մի ուժ չէր կարող պահել ռազմաճակատից հեռացող ռուս զինվորներին:

Ահա, թե ինչ էր գրում այդ մասին Ստ. Շահումյանը 1917թ. դեկտեմբերի 9-ին. «Կովկասում կանգնած է ռուս զինվորների կեսմիլիոնանոց բանակ, զինվորներ, որոնք երեք տարի արյուն են թափել, պաշտպանելով Կովկասի սահմանները: Ինչ եք կարծում, կարո՞ղ է նա հանգիստ մնալ ռազմաճակատում, երբ դուք դավաճանում եք ռուսաստանյան հանրապետությանը, երբ դուք Կալեդինին գերադասում եք Լենինից: Ռուս զինվորը ոչինչ չպետք է ունենա Վրաստանի, Հայաստանի, Ադրբեջանի ինքնավարության դեմ: Բայց նա իրավունք ունի վճռականապես բողոքելու Ռուսաստանի բանվորա-գյուղացիական հեղափոխության նկատմամբ թույլ տված ձեր դավաճանության դեմ: Ռուս զինվորը կարող է իրեն հարց տալ, թե ես ինչու պիտի պաշտպանեմ ճակատը թուրքերից, եթե ես Կովկասում «եկվոր» տարր եմ, որի շահերը կովկասցիք չեն կամենում հաշվի առնել» (**Ստ. Շահումյան,** նույն տեղ. հ. չորրորդ, Եր. 1978, էջ 50):

Ռուսական բանակը ռազմաճակատից հեռացնելու մեջ ամենից շատ շահագրգռված էին վրաց մենշևիկներն ու ադրբեջանցի մուսավաթականները: Իսկ հայերը պետք է ամուր պահեին իրենց սահմանները պաշտպանող ռուս զորքին:

Բայց դրա փոխարեն դաշնակցությունն աջակցում էր մենշևիկներին ու մուսավաթականներին՝ որքան կարելի է շուտ Կովկասից հեռացնել ռուսական բանակը:

«Նրանք,- գրել է Վ. Տերյանը,- այդ դավաճան չխենկելիները, խան-խոյ-կիները և խատիսյանները Կովկասը Ռուսաստանից անկախ, բաժանված հայտարարեցին...: Եվ Ռուսաստանի բանվորական ու գյուղացիական խորհուրդների հետ միանալու փոխարեն, կարճամիտ դաշնակցականները միացան թուրք բեկերի ու վրացի ազնվականների շահը պաշտպանող ավազակների հետ...: Փոխանակ հեղափոխական Ռուսաստանի հետ դաշն կապելու, նրանք դաշն կապեցին հակահեղափոխական և արյունարբու բեկերի ու դավաճան մենշևիկների հետ: Եվ մի տգեղ օր, մի զզվելի օր դավաճանները Կովկասը Ռուսաստանից անկախ հայտարարեցին, կտրեցին Ռուսաստանից»:

«Արյունարբու իմպերիալիստ (այսինքն թալանչի) Տաճկաստանն էլ,- շարունակում է Տերյանը,- հենց այդ էր ուզում: Երբ նա տեսավ, որ պաշտոնապես Կովկասը կտրվեց Ռուսաստանից, իսկույն ևեթ զորքը շարժեց առաջ և գրավեց Կովկասի հայաբնակ երկրները: Տաճկաստանն այսպես ասաց՝ քանի որ դուք Ռուսաստանից անկախ պետություն եք, ուրեմն իմ՝ Ռուսաստանի հետ կապած պայմանները ձեզ չեն վերաբերում...» (**Վահան Տերյան,** Երկերի ժողովածու, հ. չորրորդ, Եր. 1975, էջ 147-148):

Կարծում եմ պարզ է, թե ում էր ձեռնտու ռուսական զորքերի հեռանալը Կովկասյան ռազմաճակատից, Կովկասը Ռուսաստանից անջատելը: Քիչ է, եթե ասեմ, որ դրանից ամենից շատ վնասվում էր հայ ժողովուրդը:

Անհրաժեշտ եմ համարում նշել, որ Սովետական Ռուսաստանի կառավարությանը բոլորովին էլ ձեռնտու չէր Կովկասյան ռազմաճակատի մերկացումը և իր հերթին միջոցներ էր ձեռնարկում այն կասեցնելու համար:

Նա գիտակցում էր, թե ինչ վտանգավոր իրադրություն կստեղծվի Կովկասյան ռազմաճակատից ռուսական զորքերի հեռանալուց հետո և բոլոր միջոցներով ձգտում էր դա կանխել:

1918 թ. հունվարի 10-ին Սովետական Ռուսաստանի զինված ուժերի գերագույն գլխավոր հրամանատարի ժամանակավոր պաշտոնակատար Ակ. Մյասնիկյանն երեք հեռագիր է ուղարկել Կովկասյան ռազմաճակատի հրամանատարության հասցեով:

Առաջին հեռագրում ասվում էր. «Բժշկական շատ հանձնաժողովներում կատարվում են չարաշահումներ: Որոշ հանձնաժողովներ չեն գործում, որպիսին նպաստում է դասալքությանը, հանցագործությունների զարգացմանը... Հրամայում եմ սահմանել խիստ ու աչալուրջ հսկողություն բոլոր բժշկական հանձնաժողովների նկատմամբ: Սովետներին ու կոմիտեներին խնդրում եմ հիմնավորապես հետևել նշված հանձնաժողովների աշխատանքին և վերցնել հսկողության տակ նրանց, ովքեր աջակցում են ինքնակամ զորացրմանը, համտարած դասալքությանը»: (ՀՀ ԱԱ, ֆ. 222, ց. 1, գ. 24, 1-ին մաս, թ. 141):

Երկրորդ հեռագրով Ակ. Մյասնիկյանը հայտնում էր. «Տեղերից հաղոր-

դումներ են ստացվում զորամասերի, հիմնարկությունների ու վարչություն-ների ունեցվածքի կորստի, թալանի և ոչնչացման մասին: Խնդրում եմ տե-ղական սովետներին ու կոմիտեներին, զինվորական բոլոր կազմակերպու-թյուններին խստորեն հետևել ժողովրդական ունեցվածքին: Դրա ամբողջու-թյան պահպանման համար սահմանվում է խիստ հսկողություն: Հասարա-կական բարիքի բոլոր գաղտնի ու բացահայտ հափշտակիչները կկանգնեն հեղափոխական տրիբունալների դատի առջև» (ՀՀ ԱԱ, ֆ. 222, ց. 1, գ. 24, 1-ին մաս, թ. 140):

Երրորդ հեռագրով Ա. Մյասնիկյանը հրամայում էր. «Ճշտորեն և անշեղ կատարել. սովետներին, կոմիտեներին և դեմոկրատական կազմակերպու-թյուններին խնդրում եմ աջակցել, ոչ մի զինվոր չի կարող ազատ արձակվել զենքով ու զինամթերքով: Ժողովրդի համընդհանուր զինումն իրականաց-վում է համապետական կարգով և հանրապետության ընդհանուր օրենսդ-րության միջոցով և մինչ այդ, ազատ զենքը պետք է գտնվի զինվորական պահեստներում սովետների ու կոմիտեների հսկողության ներքո» (ՀՀ ԱԱ, ֆ. 222, ց. 1, գ. 24, 1-ին մաս, թ. 139):

Ա. Մյասնիկյանն այս հեռագրերն ուղարկել էր նաև Հայոց ազգային խորհրդին, հույս ունենալով, որ այնտեղ կհասկանան, թե հենց Հայաստանին ինչ վտանգ է սպառնում զորքերի հեռանալը ռազմաճակատից և անհրաժեշտ միջոցներ կձեռնարկեն զորքը ռազմաճակատում պահելու և հեռագրում նշ-ված հարցերին ուշադրություն դարձնելու համար:

Սակայն Հայոց ազգային խորհրդում Ա. Մյասնիկյանի հեռագրերին ուշադ-րություն չդարձրեցին, մի կողմ նետեցին, դրանց վրա մակագրելով «Իր հար-ցով չի ուղարկված», գտնելով, որ դա «իրենց չի վերաբերում» (**նույն տեղը**):

Վերացնել Ռուսաստանից անջատվելու ճանապարհի բոլոր արգելքները: Ահա վրաց մենշևիկների և աղրբեջանական մուսավաթականների գլխավոր նպատակը: Իսկ այդ արգելքների մեջ գլխավորը ռուսական բանակի ներկա-յությունն էր: Որքան շուտ հեռանար զորքը, այնքան արագ վրա կհասներ Անդրկովկասյան երեք ժողովուրդների ազգային խորհուրդների որդեգրած անկախությունը:

Բայց կար մի վերջին խոչընդոտ ևս, որն անհրաժեշտ էր հաղթահարել: Եվ այդ վերջին խոչընդոտը ռուսական զորքերի ներկայությունն էր:

Հարկավոր էր լարել բոլոր ուժերը և Անդրկովկասից դուրս հանել ռուսական զորքերը, որի տակ հասկացվում էր Սովետական Ռուսաստանը: Բոլորը մոռա-ցել էին Թուրքիային, կարծես այն այլևս դադարել էր վտանգավոր լինելուց:

Այսպիսի քարոզչությունը սերմանում էր նաև ատելություն Ռուսաստա-նի ու նրա բանակի նկատմամբ: Մենշևիկներն ու մուսավաթականները չբա-վարարվեցին դրանով: Նրանք ձեռնարկեցին հեռացող զորքի զինաթափում: Այս պրովոկացիաների հեղինակները չէին սխալվում իրենց հաշիվների մեջ: Նրանք լավ գիտեին, որ հեռացող զորքը կամավոր զենքը չի հանձնելու և զի-նաթափելու ամեն փորձ հանդիպելու էր զորքի դիմադրությանը:

Ուրեմն, թափվելու էր անմեղ արյուն: Իսկ դա հարմար միջոց էր ռուսա-կան զորքի նկատմամբ ատելությունն ու թշնամական վերաբերմունքն ավե-լի խորացնելու համար:

Անդրկովկասյան կոմիսարիատի ղեկավար շրջանների հաշիվները պարզ էին, բոլոր միջոցներով ձգտում էին Ռուսաստանին ներկայացնել որպես Անդրկովկասի ժողովուրդների թշնամու:

Ռուսական բանակի զինաթափման առաջին քայլը ձեռնարկվեց 1918թ. հունվարի 18-ին Շամխորում:

Այս հանցագործության կազմակերպիչն ու ոգեշնչողը վրաց մենշևիկնե-րի առաջնորդ Նոյ Ժորդանիան էր, որը Ելիզավետպոլում գտնվող մահմեդա-կան ազգային կոմիտեին ուղարկած հեռագրով կոմիսարիատի անունից հանձնարարել էր զինաթափ անել ռազմաճակատից վերադարձող ռուս զին-վորներին և նրանց հաշվին զինել ազգային գնդերը: Ժորդանիան չէր բավա-րարվել հեռագիր ուղարկելով: Նա զրահապատ գնացքով զենք էր ուղարկել Ելիզավետպոլ՝ մահմեդականներին զինելու և նրանց օգնելու ռուս զինվորնե-րին զինաթափելու և գնդակահարելու համար:

Մահմեդական ազգային խորհուրդը բացահայտորեն Ելիզավետպոլում հավաքում է հազարավոր մահմեդականների, զինում նրանց և գնացքով ու-ղարկում Շամխոր:

Մի կողմից այդ զրահապատ գնացքը, մյուս կողմից դարան մտած 10 հա-զար զինված մահմեդականները Շամխորի կայարանում հարձակվում են ու սկսում գնդակահարել վագոններում նստած ռուս զինվորներին: Արդյունք-քում սպանվում և վիրավորվում են հազարավոր ռուս զինվորներ: Մահմե-դական ազգային խորհրդի ձեռքն է անցնում 15 հազար հրացան, 70 գնդա-ցիր և 20 թնդանոթ:

1918 թ. հունվարի 31-ին ռուս զինվորներին գնդակահարելու փաստի վերաբերյալ հանդես է գալիս Շահումյանը և վճռականորեն մերկացնում է այդ հանցագործությունը կազմակերպող Ժորդանիային, ինչպես նաև մահ-մեդական ազգային խորհրդի ղեկավարներին: Շահումյանն ընդգծում է

*Հետևյալը. «Արդեն ոչ ոքի համար գաղտնիք չէ, որ Անդրկովկասում գոյություն ունի վրացական-մահմեդական հակահեղափոխական ազնվականական բլոկ. այդ բլոկը գոյություն ուներ նաև ցարական ռեժիմի օրով, և այդ բլոկի ոգին էր Նիկոլայ Ռոմանովը: Այժմ հակահեղափոխական ազնվականական բլոկի ոգին է Ավակի Զիմենկելին- այս ևս ոչ ոքի համար գաղտնիք չէ» (**Ստ. Շահումյան,** նույն տեղը, հ. չորրորդ, էջ 114-115):*

Շահումյանը չի բավարարվում ռուս զինվորների նկատմամբ գործադրած հանցագործությունը բացահայտելով ու դրա կազմակերպիչների ճիշտ հայտնելով ու նպատակները ցույց տալով:

*Շահումյանը զգուշացնում էր, որ մահմեդական բեկերը սիստեմատիկաբար նախապատրաստում են հայ-թուրքական կոտորած: «Բեկերի այս ամբողջ ոճրագործական աշխատանքը,- ընդգծում էր Շահումյանը,- միաժամանակ հայ-թուրքական կոտորածի նախապատրաստումն է: Արդեն իսկ հունվարի 9-12-ի դեպքերի օրերին Ելիզավետպոլի ամբողջ հայ բնակչությունը, Ելիզավետպոլի, Շուշու, Ղազախի և այլ գավառների ամբողջ հայ գյուղացիությունը, ապրում էր կոտորածի սպասումի մղձավանջային օրեր: Բոլորը զենք էին վերցրել, գյուղերի շուրջը խրամատներ փորել, ամբողջ կյանքը մոռել էր, և աշխատավոր բնակչությունը բոլոր առ բոլոր սպասում էր, թե հայ-թուրքական կոտորածների վարպետները՝ բեկերն ու խանները խաբված գյուղացիներին նորից եղբայրասպան պատերազմի կտանեն հայ գյուղացիների դեմ» (**Ստ. Շահումյան,** նույն տեղը, հ. չորրորդ, էջ 116-117):*

*Մտահոգված հայ բնակչության ճակատագրով, Շահումյանը նշում էր, որ բեկական հակահեղափոխությունը զենքը ցած չի դնի, քանի որ ստանում է Ժորդանիայի, Գեգեչկորիի, Զիմենկելիի պաշտպանությունը և գայրույթ հայտնում այն բանի համար, որ վերջիններիս «հանցավոր խաղը բողոքի ու պայքարի չի հանդիպում անգամ «Դաշնակցություն» կուսակցության կողմից, որի ներկայացուցիչներն Անդրկովկասյան կոմիսարիատում նիստեր են ունենում: Չէ՞ որ այդ հակահեղափոխական, այդ վրացական- մահմեդական ազնվականական բլոկին զոհ է գնալու ապստամբ մահմեդական գյուղացիության հետ միասին նախ և առաջ հայ գյուղացիությունը» (**Ստ. Շահումյան,** նույն տեղը, հ. չորրորդ, էջ 117):*

1918 թ. փետրվարի 6-ին Շահումյանը Սովետական Ռուսաստանի ժողկոմսովետի անունից վճռական բողոք է հայտնում կատարված հանցագործության դեմ և նկատի ունենալով, որ ռուս զինվորներից խլված զենքով զինվում են մահմեդական բանդաները, զինվորներին կոչ էր անում «ոչ մի դեպ-

*քում զենքը չհանձնել բռանացողներին» (**Ստ. Շահումյան,** նույն տեղը, հ. չորրորդ, էջ 132-133):*

Շահումյանի գայրույթը, իհարկե, տեղին էր: Բայց ամբողջ ցավն էլ նրանում էր, որ կոմիսարիատում նիստերի նստած դաշնակցության ներկայացուցիչները շատ լավ գիտակցում էին, որ ռուսական զորքից խլված զենքը մուսավաթականները , ի վերջո, օգտագործելու էին հայ ժողովրդի դեմ, սակայն հայեցողական վերաբերմունքից այն կողմ չեն անցնում:

Ահա մի քանի վկայություն: Սիմոն Վրացյան. «...Զինաթափում չէր այդ (նկատի ունի Շամխորը- Վ.Պ.), այլ զինվորների թալան: Դժբախտ ու տանջված, իրենց տան կարոտը քաշող մարդկանցից խլում էին ամեն ինչ, անգամ կօշիկները: Եվ հենց տեղն ու տեղը ծախում էին: Աստվածախմբերը ծախում էին զենքերը: Ինչ որ գարշելի բան էր տեղի ունենում»:

*Ավետիս Ահարոնյան. «Մենք՝ հայերս թաթարներու կողմէ ռուսներու դէմ գործուած այս արարքները եւ բռնութիւնները կը նկատենք իբրեւ հայու դէմ ուղղված: Որովհետեւ մեր շահերը նոյնն են, հաստատապէս շահագրգռուած ենք ճակատի պաշտպանութեամբ եւ թաթարները որքան ջանան մեզ հաստատել, թէ այս շարժումը միմիայն ռուսներու դէմ ուղղված է, գիտենք, որ անգամ մը անոնց հետ հաշիւը կարգադրեն՝ հայերը բնաջնջելու պիտի սկսին» (**«Արեւ»,** 5 հունիսի, 1969 թ.):*

Ինչ որ ասվում է, իհարկե, ճշմարտություն է, բայց ինչո՞ւ նրանք բարձրաձայն չէին բողոքում, ինչո՞ւ չէին պահանջում պատժել մեղավորներին:

Դրա փոխարեն նրանք շարունակում էին համագործակցել Անդրկովկասի կառավարիչների հետ: Մի՞թե մեղավոր էին միայն մենշևիկներն ու մուսավաթականները: Ո՞վ էր բռնել այդ հայ գործիչների ձեռքը:

Ինչո՞ւ նրանք չընդունեցին Ստ. Շահումյանի առաջարկությունն ուժերը համախմբելու և հայ ժողովրդի պապենական հողերը փրկելու մասին: Եզրակացությունը թողնելով ընթերցողին, բերեմ մեկ այլ վկայություն, որը վերաբերում է Անդրանիկ Օզանյանին:

1918թ. մարտի վերջին, երբ արդեն հայտնի էր դարձել Բրեստ-Լիտովսկի պայմանագրի ընդունումը, Անդրանիկը գտնվում էր Ակբասանդրապոլում և զբաղված էր իր բանակի կազմավորմամբ, նրան Ա. Խատիսյանը հրավիրում է ժողովի:

Այդ ժողովի մասին «Զօր. Անդրանիկի Կովկասեան ճակատի պատմական օրագրութիւն» գրքում հայտնվում է հետևյալը. «Պարսկաստանէն Ռուսաստան անցնող ճակատի ռուս զինուորները Տեվերուեն (Դավալու- Վ. Պ.) անց-

նելով Ալեքսանդրապոլ կուգային իրենց զենքերով միասին տուն երթալու: Այս ժողովը որոշեց, որ Ալեքսանդրապոլէն Անի քաղաք զիգզակ դարձուած երկաթուղագծին երկաթները վերցնեն եւ կարմիր ճրագներ կախեն վայրաշարժը առաջ չգնալու եւ զինաթափ ընեն զանոնց, պատրուակելով, թէ երկրին հանգիստը եւ անդորրութիւնը կը խանգարեն իրենց ճամբորդության միջոցին: Հակառակ պարագային եթէ ռուս զինուորը զինաթափ չըլլայ, զենքի ուժով, բռին զինաթափ ընեն զանոնց»:

Ա. Խատիսյանը խնդրում է, որ Անդրանիկն իր կարծիքը հայտնի ռուս զինվորներին զինաթափելու մասին: Զորավարը պատասխանում է վրդովմունքով. «Այս ի՞նչ ծիծաղելի եւ աղէտաբեր որոշում է, որ կատարեցիք դուք առանց անդրադառնալու վաղուան առաջ եկած արդյունքին: Հայաստանի հողի վրայ ռուս տուն դարձող եւ մեր բարեկամութեան վատահող զինուորը նեղել իր ձեռքը գտնուած զէնքի համար, եւ հակառակ պարագային զինու զօրությամբ զինաթափ ընել զանոնք... Հայ և ռուս ժողովուրդներուն մէջ ահաւոր եւ անկամրջելի խրամատ մը բանալ ըսել է: Զէ, ասիկա ինձի համար անհանդուրժելի եւ անտանելի է»:

«Դուք ո՞վ էք,- այնուհետև զայրացած հարցնում է Անդրանիկը,- կամ ինչո՞ւ համար ռուս զինուորին զինաթափ ընէք պատրուակներ ստեղծելով: Հոն է մեր դարաւոր թշնամին, զայն զինաթափ ընենք... Ռուսիա մեզի հակայ ռազմամթերք, հարստութիւն, ուտելիք եւ հագնելիք թողուց, մենք պէտք չունինք անոնց քանի մը հատ հրացաններուն, մենք անոնց բարեկամութեան պէտք ունինք... Այսպիսի քայլ մը մեր ցեղին, մեր անունին, մեր ասպետական ոգիին եւ ազգային առաքինութիւններուն հակառակ արտահայտութիւն մը պիտի ըլլա: Ինչո՞ւ զիս կանչեցիք հոս, ես չեմ ուզեր պատասխանատուութեան բաժին վերցնել անմեղ արիւններու մէջ, երկու ցեղեր թշնամացնելով... Մեր միակ բարեկամը Ռուսիան է եւ դուք ձեր աղէտաբեր ձեռնարկով զանոնք ալ կուզէք հեռացնել մեզմէ» (**Զօր. Անդրանիկի Կովկասեան ճամբարի պատմական օրագրութիւն**, Պոստոն, 1924, էջ 186-188):

Դաշնակցությունը, եթե փոքր-ինչ ապաշխարելու մտադրություն ունեցավ, ապա, թեկուզ և ուշացումով, ժողովրդական հերոս Անդրանիկին երախտագետ պետք է լինի, որը իր վճռական դիրքորոշումով դաշնակցությանը թույլ չի տվել ռուս զինվորներին զինաթափ անելու գործում վրաց մենշևիկների և ադրբեջանական մուսավաթականների զազրելի օրինակին հետևելու և իր պատմության էջերը ևս մի սև փաստով պակասեցնելու համար:

1917 թ. դեկտեմբերի 17-ին Ստ. Շահումյանը զգուշացնում էր. «Հատ ազ-

գությունների առանձնանալու և ինքնորոշվելու ձգտումը, ազգային տարածքները սահմանազծելու փորձերը, սեփական ազգային զորագնդերի ստեղծելը,- այս բոլորը կատարվում է սրվող դասակարգային պայքարի մթնոլորտում և Կովկասում գտնվող կեսմիլիոնանոց ռուս բանակի ներկայությամբ, որը իր հայրենիքից կտրված երեք տարի պատերազմ է մղել Հենց այդ ազգությունների շահերը պաշտպանելով: Ռուս զինվորներին առանձնապես շատ է վրդովեցնում այն հանգամանքը, որ ազգային զորամասերը ռուս զինվորների հաշվին են զինվում ու զգեստավորվում: Հաճախ գնդեր են զինաթափ արվում տեղն ու տեղը ազգային նոր զորամասերը զինելու համար»:

«Կովկասյան նացիոնալիզմի ամենացավալի հետևանքը,- մատնանշում էր Ստ. Շահումյանը,- ռազմաճակատի կազմալուծումն է: Բնական է, որ քանի դեռ հաշտություն չի կնքվել, զորքերը պետք է պաշտպանեն ռազմաճակատը, սակայն կովկասյան նացիոնալիստների ստեղծած մթնոլորտում կա՞ն արդյոք ուժեր, որոնք կարողանային ռուս զորամասերին իրենց դիրքերում պահել...

Մենք մատնանշում ենք նրանց քաղաքականության անխուսափելի հետևանքները և, երբ մեր մատնանշումներն արդարանում են, նրանք ուզում են մեր վրա գցել մեղքը: Բանակին գլուխ և ռազմաճակատից չարժում են ոչ թե մեր «ապիտատիան», ոչ թե մեր խուրքերը ձեր նացիոնալիզմի մասին, այլ ձեր նացիոնալիստական գործերը» (**Ստ. Շահումյան**, նույն տեղը, հ. չորրորդ, էջ 56-59):

1917թ. դեկտեմբերի 20-ին «Կովկասյան բանակի ետ քաշվելու առթիվ» հոդվածում Ստ. Շահումյանը գրում էր. «Ռուսական զորքերի անակնկալ ետ քաշվելը չափազանց ծանր դրություն է ստեղծում Թուրքահայաստանում: Մենք արդեն գիտենք այս անիծյալ պատերազմի ժամանակ հայերի կրած հարյուր հազարավոր զոհերի մասին: Հավանորեն, դրանցից պակաս թվով խաղաղ քրդեր ու թուրքեր չեն ոչնչացել ռազմական գործողություններից, սովից ու ցրտից: Ռուսական զորքերի ետ քաշվելու լուրն առաջ կբերի հարյուրավոր վայրերից փախած, մի կողմից՝ թուրքերի ու քրդերի, մյուս կողմից՝ հայերի շարժում: Իմանալով իրերի դրությունն այդ դժբախտ երկրում, մենք պետք է հավատացած լինենք, որ այնտեղ մի նոր դժոխք է ստեղծվում, անմեղ խաղաղ բնակչության արյան նոր գետեր են հոսելու: Մեր հեղափոխական բանակը չի կարող անտարբեր մնալ դեպի այդ բնակչության բախտը»:

«Մեր բանակը,- այնուհետև ընդգծում էր Ստ. Շահումյանը,- չպետք է ենթարկվի նացիոնալիստների պրովոկացիային: Մեր գիտակից ընկեր զինվորները պետք է բացատրեն զորքին, որ ժողովրդական մասսաները, որ գյուղացիական չքավորությունը, որին նրանք տեսնում են իրենց շուրջը, մեղք չունեն Անդրկովկասյան կոմիսարիատի պարագլուխների դավաճանության

մեջ... Մեր գիտակից ընկերները պետք է զորքի մի մասին պահեն ռազմաճակատում, ինչպես այդ բնակչության շահերից ելնելով, այնպես էլ... պետական նկատառումներով և սեփական օգուտի նկատառումներով» (**Ստ. Շահումյան**, նույն տեղը, հ. չորրորդ, էջ 61-62):

Ես մտածված եմ Կովկասյան ռազմաճակատի մերկացման խնդրի վերաբերյալ նորից մեջբերում կատարում Ստ. Շահումյանից: Թող ընթերցողն ինքը խորհի, որքանով են ճշմարիտ այն պնդումները, թե Սովետական Ռուսաստանի ղեկավարությունը շահագրգռված էր մերկացնել Կովկասյան ռազմաճակատը: Չէ՞ որ ինքը՝ Շահումյանը, այդ կառավարության ներկայացուցիչն էր արտակարգ լիազորություններով: Եվ նա չէր կարող գործել հակառակ կենտրոնական կառավարության:

Ինքը՝ Սովետական Ռուսաստանի ղեկավար Լենինը, 1918թ. փետրվարի 23-ին կենտգործկոմի նիստում, նկատի ունենալով Կովկասյան ռազմաճակատը, զեկուցման մեջ ասում է. «**Այն ամենը, ինչ որ Հնարավոր էր անել, այդ չլսված, անչափ հոգնած բանակը պահելու համար, այն ամենը, ինչ որ Հնարավոր էր անել նրան ավելի ուժեղ դարձնելու համար, արվեց**»: (ընդգծումն իմն է- **Վ.Պ.**): (**Վ. Ի. Լենին**, ԵԼԺ, հ. 35, էջ 447):

Երբ հնարավոր չեղավ ռուսական զորքերը պահել ռազմաճակատում, երբ Անդրկովկասը կառավարող մենշևիկների, մուսավաթականների և դաշնակցականների վարած քաղաքականության պատճառով այդ ուղղությամբ Շահումյանի ջանքերն արդյունք չտվեցին, նա 1918 թ. փետրվարի 6-ին կոչով դիմում է Կովկասյան բանակի ետ քաշվող զորքերին:

Դատապարտելով Շամխորում ռուս զինվորների կոտորածը կազմակերպելու հեղինակներին, Շահումյանը գրում էր, որ «բանվորները, գյուղացիները և նրանց հետ միասին ազգային գնդերի զինվորներից շատերն արդեն գալիս են իրենց շահերի գիտակցությանը» և, այնուամենայնիվ, հույս էր հայտնում, որ «սրանից հետո, պատերազմը վերջացնելուց և լրիվ զորացրում հայտարարելուց հետո, այլևս ոչինչ չի կարող ձեզ պահել Կովկասում: Խաղաղությամբ գնացեք տուն, բայց չարունակեցեք հավատարմությամբ ծառայել բանվորագյուղացիական մեծ հեղափոխության գործին» (**Ստ. Շահումյան**, նույն տեղը, հ. չորրորդ, էջ 130-131):

Վերջապես մի կարևոր իրողության մասին, որին քիչ ուշադրություն է դարձվում:

Անտանտի պետությունները մեծապես շահագրգռված էին Կովկասյան ռազմաճակատից ռուսական զորքի հեռացմամբ: Անգլիայի ներկայացուցիչ գեներալ Շորոմը, Ֆրանսիայի ներկայացուցիչ գնդապետ Շարդինեն, ԱՄՆ-ի

ներկայացուցիչ Սմիթն ամեն ինչ անում էին ռուսական զորքերի հեռացումը իրենց նպատակներին ծառայեցնելու համար:

Շատ փաստերից բերեմ միայն ԱՄՆ-ի հյուպատոս Վիլբեյ Սմիթի 1917 թ. դեկտեմբերի 18-ի նամակը՝ ուղղված ՕԶԱԿՈՄ-ի նախագահ Խաղամանովին: Սմիթը, նախ խոստանում էր, որ դաշնակիցները շուտով «մեծ օգնություն ցույց կտան Անդրկովկասի Ֆեդերատիվ կառավարությանը» և ապա տալիս հետևյալ հանձնարարությունը.

1. «Կապի մեջ մտնել Կուբանի և Թերեքի պետությունների հետ:

2. Կովկասյան բանակի տրամադրության տակ դնել կազակային ջոկատներ, որոնք հայկական և վրացական զորամասերի հետ միասին պաշտպանության գիծ կկազմեն ռազմաճակատի և Թիֆլիսի միջև ընկած երկաթուղու տարբեր կետերում, ռազմաճակատից վերադարձող և ներքին կարգի համար վտանգավոր զորամասերը զինաթափելու նպատակով» (Внешние сношения, 1918 г. том. 2, стр. 607):

Փաստորեն վտանգավոր զորամասերի զինաթափումը կատարվում էր Անտանտի հանձնարարությամբ: Հեռացող ռուսական զորամասերի զինաթափումը, ինչպես տեղի ունեցավ, օրինակ 1918 թ. հունվարին Շամխորի կայարանում, ուղեկցվեց ռուս զինվորների սպանությամբ: Այդ կերպ խորանում էր թշնամանքն ու ատելությունը ռուսների և Անդրկովկասի ժողովուրդների միջև:

Բայց դա բոլորը չէր: Կար ևս երկու կարևոր հանգամանք:

Առաջին. Նորաստեղծ Սովետական Ռուսաստանի դեմ Հյուսիսային Կովկասում Անտանտի աջակցությամբ ձևավորվում էին զինված ջոկատներ, որոնց համալրումը նախատեսված էր կատարել Կովկասյան ռազմաճակատից վերադարձող զինվորներով:

Տուն վերադարձող զինվորների մեծ մասն անտեղյակ էր երկրում կատարվող քաղաքական փոփոխություններից: Միաժամանակ Հյուսիսային Կովկասում ձևավորված նոր ռազմաճակատի պատճառով փակվել էին կենտրոնական Ռուսաստան տանող ճանապարհները: Տուն վերադարձող զինվորները հայտնվեցին երկընտրանքի առջև՝ մնա՞լ Հյուսիսային Կովկասում, թե՞ ետ վերադառնալ Անդրկովկաս:

Սմիթը վերոհիշյալ նամակում Խաղամանովին հանձնարարում էր համագործակցել Կուբանի և Թերեքի կառավարությունների հետ և փակել Անդրկովկաս վերադառնալու ցանկություն ունեցող զինվորների ճանապարհը:

Կովկասյան ռազմաճակատից վերադարձող զինվորների մեծ մասը համալրեցին այդ ժամանակ Հյուսիսային Կովկասում ձևավորվող Կալեդինի, Կրասնովի և Դենիկինի բանակները և դարձան քաղաքացիական պատերազմի մասնակից:

Ավելին, Անտանտի տերություններն այնքան էին շտապում, որ նույնիսկ իրենց նավերը տրամադրեցին ռուսական զորքերը Տրապիզոնից Ղրիմի թերակղզի տեղափոխելու և այնտեղ գտնվող հակասովետական ուժերը համալրելու համար:

Հենց այս վտանգն էլ նույնպես նկատի ունենալով Սովետական Ռուսաստանի կառավարությունը ձգտում էր զորքերը պահել Կովկասյան ռազմաճակատում, թեև Բրեստի պայմանագրով ստանձնել էր դրանք հեռացնել Կովկասյան ռազմաճակատից :

Սակայն ռազմաճակատի հրամանատարությունը հենց առաջին օրից հրաժարվում էր ենթարկվել Սովետական Ռուսաստանի կառավարությանը և չէր կատարում Սովետական զինված ուժերի հրամանատարության կարգադրությունները:

Երկրորդ. Անտանտի երկրները Թուրքիայի դեմ ռազմական գործողություններ էին վարում Մերձավոր Արևելքում, Կիլիկիայում, որտեղ թուրքական բանակները նրանց ուժեղ դիմադրություն էին ցույց տալիս: Հարկավոր էր չեղել Թուրքիայի ուշադրությունը դեպի Անդրկովկաս, որի նվաճման մասին նա վաղուց էր երազում:

Ռուսական զորքերին Կովկասյան ռազմաճակատից հեռացնելը Թուրքիայի համար պայմաններ էր ստեղծում այդ երազանքն իրականացնելու համար: Եվ արդյունքում Մերձարևելյան ռազմաճակատը Թուրքիայի համար դառնում էր երկրորդական: Նրա համար ինչպես ասում են՝ ավելի լավ է ձեռքում մի փոքրիկ թռչուն ունենալ, քան երկնքում մի արագիլ:

Այսպիսով, Կովկասյան ռազմաճակատից ռուսական բանակի հեռանալու ներքին պատճառների հետ միասին կարևոր դեր էր խաղում արտաքին միջամտությունը, որն իրականացնում էին Անտանտի տերությունները:

Ահա, այսպիսին էր «Թուրքահայաստանի մասին» դեկրետի ընդունման ժամանակ տիրող իրավիճակը:

Մեկ անգամ էլ ընդգծեմ, որ այդ դեկրետի իրագործման գլխավոր, ավելի ճիշտ, միակ պայմանը ռուսական զորքերի ներկայությունն էր և Անդրկովկասի չանջատվելը Ռուսաստանից:

Մինչդեռ Անդրկովկասն անկախացավ, անջատվեց Ռուսաստանից, իսկ ռուսական զորքն էլ կոմիսարիատում դեկավար դիրք ունեցող կուսակցությունների ջանքերով դուրս բերվեց Արևմտյան Հայաստանից, որն ամբողջապես գրավված էր այդ զորքի կողմից: Ռուսական զորքի փոխարեն Արևմտյան Հայաստանի տարածքը զբաղեցնում էին թուրքական զորքերը:

Ուրիշ ի՞նչ ուժով, ի՞նչ միջոցներով պետք է իրագործվեր «Թուրքահայաստանի մասին» դեկրետը: Միամտություն կլիներ մտածել, թե այդ դեկրետը կարելի էր իրականացնել թուրքական զորքերի ներկայությամբ:

Հանրագումարի բերելով վերը շարադրվածը, նորից ուզում եմ ընթերցողի ուշադրությունը կենտրոնացնել այն հարցի վրա, թե ո՞ւմ մեղքով և ի՞նչ պատճառներով է ձախողվել Սովետական Ռուսաստանի Ժողկոմսովետի «Թուրքահայաստանի մասին» դեկրետի իրագործումը:

Այս հարցերի անաչառ պատասխանը ցույց է տալիս մեղավորների ճիշտ հասցեն, որոնք հետին թվով փորձում են իրենց վրայից գցել պատասխանատվությունը:

Ավածի կապակցությամբ տեղին եմ համարում ընդգծել հետևյալը: Հայ հեղափոխական դաշնակցությունը ոչ միայն համագործակցում էր վրաց մենշևիկների և աղրբեջանական մուսավաթականների հետ, ենթարկվում էր Անտանտի թելադրանքին, այլև, ըստ էության, ոչնչով չօգնեց Շահումյանին՝ կենսագործելու «Թուրքահայաստանի մասին» դեկրետը: Վերը բերված դաշնակցության ղեկավարներից Ս. Վրացյանի տեսակետը, Ահարոնյանի անտարբեր վերաբերմունքը Մյասնիկյանի հեռագրերի նկատմամբ դրա ապացույցներից մեկն են:

Ես որոշակի հիմք ունեմ պնդելու, որ Դաշնակցության որդեգրած քաղաքականությունը ինչպես դեկրետի իրականացման, այնպես էլ Կովկասյան ռազմաճակատից ռուսական զորքերի հեռացման գործում արդարացում չունի:

Համարձակություն չունենալով ընդունել, մեղմ ասած, իր թույլ տված սխալ քաղաքականությունը, դաշնակցությունը և նրա գաղափարախոսության հետևորդները «Թուրքահայաստանի մասին» դեկրետը չիրագործելու, Կովկասյան ռազմաճակատից ռուսական զորքերը դուրս բերելու պատասխանատվությունը դնում են Ստալինի վրա և դատապարտում նրան:

Ահա, օրինակ, ինչ է գրում դաշնակցության գաղափարախոսության նորօրյա հետևորդ Յու. Բարսեղովը: Վկայակոչելով Մոսկվայում բանակցություններ վարող Վահան Տերյանին, նա գրում է, թե «Նույնիսկ Լենինը համաձայնվել է բավարարել հայերի խնդրանքը և զորքերը դուրս չհանել»: «Բայց Ստալինը,-շարունակում է Բարսեղովը,- վճռականորեն դեմ էր: Արդյունքում բոլշևիկյան կառավարությունը չըմբռնեց Հայաստանում զորքը պահելու հայերի խնդրանքը: Կան բոլոր հիմքերը պնդելու, որ հայերի կոտրածի շարունակումը ոչ միայն ռուսական զորքերի դուրս բերման անխուսափելի արդյունքն էր, այլև իր՝ Ստալինի նպատակը», և դա վերագրում Ստալինի հայատյածությանը:

Այդպես էլ չբերելով որևէ փաստ, Բարսեղովը եզրակացնում է. «Ստալինը և Ռուսաստանի սովետական կառավարությունը լքեցին հայերին դժբախտության մեջ, ամբողջ ճանապարհին ամեն ինչ ոչնչացնող դեպի Բաքու շարժվող թուրքական բանակի հետ նրանց երես առ երես թողեցին միայնակ» (Геноцид армян, там же. стр. 305-306):

Հարկ եմ համարում ասել, որ ժամանակին Հայաստանի գիտությունների ազգային ակադեմիայում հանդիպել եմ Յու. Բարսեղովին և նրան առաջարկել եմ ցույց տալ այն բոլոր հիմքերը, որոնցով պնդում է իր տեսակետը: Նաև ասացի, թե ինչու հայերի գենոցիդի մասին իր հրապարակած երեք տարբերակով հատորներում տված մեկնաբանությունները հաստատելու որևէ փաստաթուղթ ցույց չի տվել: Իմ հարցերին իբրև պատասխան Բարսեղովը միայն ասաց, թե դրա անհրաժեշտությունը չի եղել:

Ես միշտ եղել եմ և մնում այն կարծիքին, որ, առհասարակ, պատմաբանը չի սխալվում: Նա միայն պատմական այս կամ երևույթի, իրադարձության, որևէ գործչի մասին կարող է ունենալ և հայտնել իր տեսակետը: Բայց պարտադիր եմ համարում պատմական իրադարձությունների, գործիչների վերաբերյալ որևէ տեսակետ արտահայտելիս, դրանք գնահատելիս չխախտել անաչառ, օբյեկտիվ պատմականության պահանջը, այն է՝ բերել իր տեսակետը հիմնավորող փաստեր: Իհարկե, ամեն մի ուսումնասիրողի, այդ թվում նաև Յու. Բարսեղովի, իրավունքն է որևէ պատմական երևույթի վերաբերյալ իր տեսակետն արտահայտել, բայց պարտադիր պայմանով՝ պահպանել օբյեկտիվ պատմականության պահանջը:

Նախորդ էջերից ընթերցողը ծանոթացել է Վ. Տերյանի զեկուցագրին, ինչպես նաև այդ մասին նրա նամակներին: Նորից մեջբերեմ Տերյանի հայտնած տեղեկությունը: Նա Ստալինի հետ ունեցած զրույցի մասին գրել է հետևյալը. «Ստալինն ասաց՝ մենք իսկույն ևթ կկարգադրենք, որ զորքերը հեռանան և հայերին հնար տրվի ինքնորոշվելու: Ես վիճեցի: Դա իմ записка*-ն տալու ժամանակ ասաց: **Բայց այստեղ, երբ արդեն կարդացել էր** записка*-ս, **ուրիշ կերպ էր խոսում** (ընդգծումն իմն է- Վ. Պ.): Լենինին ես բացատրեցի, և նա, իհարկե, շատ լավ հասկացավ բանն ինչումն է: Տեսնենք ինչ է լինելու» (**Վահան Տերյան**, Երկերի ժողովածու, հ. չորրորդ, 1979, էջ 324-325):*

Նկատեմ, որ խոսակցությունը Ստալինի հետ եղել է մինչև Տերյանի զեկուցագրին նրա ծանոթանալը: Իսկ ծանոթանալուց հետո Ստալինը «արդեն ուրիշ կերպ էր խոսում», այսինքն՝ Ստալինը կողմ էր, որ զորքերը մնային Կովկասյան ռազմաճակատում:

Վերջապես, եթե Ստալինը դեմ լիներ, ապա նա չէր համաձայնվի կազմել և ժողկոմսովետի քննարկմանը ներկայացնել «Թուրքահայաստանի մասին» դեկրետի նախագիծը և դրա հրապարակման հետ հանդես չէր գա հոդվածով, որի մասին անդրադարձ է եղել նախորդ էջերում:

Իհարկե, Ստալինը հասկանում էր, որ միայն դեկրետի ազդարարումով հնարավոր չէ գերմանա-թուրքական զավթիչներից պաշտպանել «պատերազմի իրավունքով» գրաված Թուրքահայաստանը և նրանց հակադրում է «ժողովուրդների լիակատար ազատագրության քաղաքականությունը», որը տվյալ դեպքում հնարավոր էր միայն Արևմտյան Հայաստանում ռուսական զորքերի ներկայությամբ: Ասվածը հաշվի չառնելով, Յու. Բարսեղովն այն տեսակետն է հայտնում, որ «Թուրքահայաստանի մասին» դեկրետի իրականացումը «Ռուսաստանի կառավարությունը կապում էր սոցիալիստական հեղափոխության շահերի հետ» և իբրև դրա ապացույց վկայակոչում է Ստալինի վերոհիշյալ հոդվածը (Геноцид армян, там же. стр. 193): *Մինչդեռ Ստալինը, ինչպես նշվել է, հայ ժողովրդի բախտը սերտորեն կապում էր Ռուսաստանի, Հոկտեմբերյան հեղափոխության բախտի հետ և հոդվածում, առհասարակ, չի օգտագործում «շահեր» բառը:*

Վերջում մեկ անգամ էլ կամենում եմ ընդգծել, որ Սովետական Ռուսաստանի ժողկոմսովետի «Թուրքահայաստանի մասին» դեկրետը չի հաջողվել իրականացնել, որովհետև

Առաջին. *Անդրկովկասը կառավարող ուժերի հակատուսական, հակասովետական քաղաքականության արդյունքով ռուսական զորքերը հեռացվեցին Կովկասյան ռազմաճակատից: Ռուսական զորքերի հեռանալուց հետո թուրքական զորքերը գավթեցին Արևմտյան Հայաստանի տարածքը:*

Երկրորդ. *Անդրկովկասը կառավարող ուժերը հրաժարվեցին ճանաչել Սովետական Ռուսաստանի կառավարությանը և երկրամասը հայտարարեցին Ռուսաստանից անկախ:*

Երրորդ. *Կովկասի գործերով ժամանակավոր արտակարգ կոմիսար Շահումյանի վրա էր դրված նաև «Թուրքահայաստանի մասին» դեկրետի իրականացումը:*

Սակայն Անդրկովկասյան կոմիսարիատի ղեկավարները չճանաչեցին Շահումյանի լիազորությունները, ընդունեցին նրան ձերբակալելու որոշում և բռնի ուժով հարկադրեցին նրան հեռանալ Անդրկովկասի կենտրոն Թիֆլի-

սից և զրկում արտակարգ կոմիսարի իր պարտականություններն իրականացնելու հնարավորությունից: Եվ, իհարկե, այսպիսի պայմաններում Կովկասի գործերով ժամանակավոր արտակարգ կոմիսար Շահումյանի գործադրած ջանքերը չէին կարող հաջողությամբ պսակվել:

Անհիմն են բոլոր նրանց հետին թվով արդարանալու փորձերը, ովքեր 1917-1918 թթ. Շահումյանի հետ համագործակցելու փոխարեն, մի կողմ էին դրել Արևմտյան Հայաստանի, ամբողջ հայ ժողովրդի անվտանգության շահերը և համագործակցում էին «Թուրքահայաստանի մասին» դեկրետի իրագործման մոլի հակառակորդների՝ վրացի մենշևիկների և աղրբեջանցի մուսավաթականների հետ:

Ամփոփելով ասվածը, կամենում եմ «Թուրքահայաստանի մասին» դեկրետը գնահատել հետևյալ տեսանկյունից.

1. «Թուրքահայաստանի մասին» դեկրետը նորագույն ժամանակաշրջանի դիվանագիտության պատմության մեջ և միջազգային հարաբերությունների պրակտիկայում այն առաջին փաստաթուղթն է, որով մեծ տերություններից մեկը՝ Սովետական Ռուսաստանը պաշտոնապես հայտարարել ու պաշտպանել է Արևմտյան Հայաստանի ազատ ինքնորոշման իրավունքը, ընդհուպ մինչև լիակատար անկախություն:

2. «Թուրքահայաստանի մասին» դեկրետն եղել է այն միակ պետական ակտը, որի կենսագործմամբ ստեղծվել էր իրական հնարավորություն Հայկական հարցի լուծման համար:

ԳԼՈՒԽ 13
ԲՐԵՍՏ-ԼԻՏՈՎՍԿԻ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԸ
1. ԵՐԵՔ ՏԵՍԱԿԵՏ

Տևական պատերազմից ավելի էր հյուծվել Ռուսաստանը: Դրության փրկումը պատերազմից դուրս գալն էր համարվում: Սովետական Ռուսաստանի կառավարությունն անհապաղ պատերազմին վերջ տալու նպատակով ընդունում է «Հաշտության մասին» դեկրետ, որով կռվող բոլոր կողմերին առաջարկում էր դադարեցնել պատերազմն առանց անեքսիաների ու ռազմատուգանքի:

Իհարկե, այս առաջարկությունը չի ընդունվում Անտանտի երկրների կողմից: Իսկ Գերմանիան ելնելով իր արտաքին ու ներքին իրավիճակից, համաձայնվում է Բրեստ-Լիտովսկում բանակցություններ սկսել Սովետական Ռուսաստանի կառավարության հետ:

1917 թ. նոյեմբերի 27-ին (դեկտեմբերի 10-ին) Լենինը Ստալինի հետ միասին մշակում է Բրեստի բանակցություններին մեկնող սովետական պատվիրակության համար «Հաշտության մասին» ծրագրի համառոտագրությունը որպես դիրեկտիվ ցուցում: Այդ ծրագիրը բանակցությունները բաժանել էր երկու մասի՝ քաղաքական և տնտեսական:

Քաղաքական բանակցությունների գլխավոր թեման համարվում էր «առանց անեքսիաների և ռազմատուգանքների» հիմնական սկզբունքը:

Այնուհետև տրվում է «անեքսիա» հասկացության հետևյալ բացատրությունը. «Անեքսիա է հայտարարվում ամեն մի տարածք, որի բնակչությունը 19-րդ դարի երկրորդ կեսից սկսած արտահայտել է դժգոհություն իր տարածքը ուրիշ պետությանը միացնելու համար կամ պետության մեջ նրա դրությամբ, հավասարապես արտահայտվել է այդ դժգոհությունն այդ տարածքներում ազգային շարժումների առաջ բերած, ազգային վեճերի, բախումների, հուզումների և այլնի առաջացրած զրկանության մեջ, սեյմերի, մունիցիպալիտետների, ժողովների և նմանատիպ հիմնարկությունների որոշումներում, պետական և դիվանագիտական փաստաթղթերում»:

Դիրեկտիվում նշվում են նաև ազգերի ազատ ինքնորոշման իրավունքը երաշխավորող հետևյալ նախնական պայմանները.

ա) զորքերի դուրս բերում ինքնորոշվող մարզի սահմաններից.

բ) նշված մարզում փախստականների, ինչպես նաև պատերազմի սկզբից իշխանությունների կողմից այնտեղից արտաքսված բնակիչների վերադարձում.

գ) «բ» կետն իրականացնելու համար տվյալ մարզում ինքնորոշվող ազգի ղեմոկրատական հիմունքներով ընտրված ներկայացուցիչներից ժամանակավոր կառավարչության ստեղծում և այլն (Документы внешней политики СССР, М. 1957, том. 1, стр. 44-45, 708):

Նշված պայմաններն իրագործելու առաջադրանքով էլ սովետական պատվիրակությունը, որի մեջ մտնում էին Ա. Իոֆֆեն, Լ. Կամենևը, Մ. Պոկրովսկին, Լ. Կարախանը և ձախ էսէռներից Ա. Բիցենկոն, Վ. Կարելինը, Տրոցկու գլխավորությամբ մեկնում է Բրեստ-Լիտովսկ: Դեկտեմբերի 2-ին սկսվում են բանակցությունները:

Մինչ այդ բանակցություններին անդրադառնալը, հարկ եմ համարում ընթերցողի ուշադրությունը հրավիրել հետևյալ հանգամանքի վրա:

Ինչպես Բրեստի բանակցությունների ժամանակ, այնպես էլ դրանից հետո գոյություն է ունեցել իրադարձությունների զարգացման վերաբերյալ երեք տարբերակ:

Առաջին. «Ձախ կոմունիստները» Բուխարինի գլխավորությամբ և բոլշևիկների հետ ժամանակավորապես համագործակցող ձախ էսէռները պաշտպանում էին պատերազմը շարունակելու տարբերակը: Նրանք գիտեին, որ պատերազմը շարունակելու դեպքում Ռուսաստանը ոչ միայն դատապարտված է պարտության, այլև գերմանական զորքերի կողմից լիակատար օկուպացման: Նրանք գիտեին նաև, որ այդ դեպքում Ճապոնիան չի ուշացնի Հեռավոր Արևելքի ու Սիբիրի զավթումը: Գիտեին այս ամենը, բայց պահանջում էին շարունակել պատերազմը և հաշտություն չկնքել:

1918 թ. մարտի 6-8-ին տեղի ունեցած ՌԿ(բ)Կ 7-րդ արտահերթ համագումարում Բուխարինը հայտարարում է. «Մեր միակ փրկությունը կայանում է նրանում, որ պայքարի ընթացքում մասսաները կզգան, թե ինչ է գերմանական արշավանքը, երբ գյուղացիներից կխլեն սագոզներն ու կովերը, երբ բանվորներին կհարկադրեն աշխատել 14 ժամ, երբ նրանց կքշեն Գերմանիա, երբ երկաթե օղակը կհագցնեն նրանց ոտնգներին, այն ժամանակ, հարգելի ընկերներ, մենք կստանանք իսկական սրբազան պատերազմ»:

Բուխարինը համոզում էր, որ գերմանական օկուպացումից հետո երկրում կսկսվի պարտիզանական պատերազմ, որը մեծ կորուստներ կպատճառի օկուպանտներին: Դրա հետևանքը կլինի Գերմանիայում պատերազմից դժգոհության աճը և այնտեղ ու ամբողջ Եվրոպայում կսկսվի հեղափոխություն:

«Ձախ կոմունիստները» պահանջում էին պատերազմ հայտարարել միջազգային իմպերիալիզմին, նրանք պատրաստ էին «հանուն համաշխարհային հեղափոխության» գնալ նույնիսկ սովետական իշխանությունը կորցնելուն:

Բուխարինի տեսակետը պաշտպանում էին Ա. Լոմովը, Մ. Ուրիցկին, Ա. Բուբնովը, Ֆ. Ձերժինսկին, Ն. Օսինսկին և մի շարք այլ նշանավոր բոլշևիկներ:

Հետագայում, 1924 թ. փետրվարին Բուխարինը Բրեստի պայմանագրի հարցում հրապարակավ ընդունում է իր թույլ տված սխալը (Н. И. Бухарин, Избранные произведения, М., 1988, стр. 50-51):

Երկրորդ. Կարելի էր չստորագրել ստորացուցիչ պայմանագիրը, բայց և չսկսել «հեղափոխական պատերազմ»: Բրեստի բանակցություններում սովետական պատվիրակության ղեկավար Տրոցկին առաջ է քաշում «ոչ հաշտություն, ոչ պատերազմ» սկզբունքը: Նա 1918 թ. փետրվարի 10-ին բանակցությունների նիստում հայտարարում է. «Մենք դուրս ենք գալիս պատերազմից: Մենք այդ մասին հայտնում ենք բոլոր ժողովուրդներին ու նրանց կառավարություններին: Մենք հրաման կտանք Գերմանիայի, Ավստրո-Հունգարիայի, Բուլղարիայի և Թուրքիայի զորքերի դեմ կանգնած մեր բանակների զորացրման մասին: Մենք ապատում ենք և հաստատ հավատում ենք, որ մյուս ժողովուրդները շուտով կհետևեն մեր օրինակին»:

«Ռուսաստանի ֆեդերատիվ հանրապետության ժողովրդական կոմիսարների սովետի, կառավարության անունից,- շարունակում է Տրոցկին,- սույնով ի գիտություն ենք հայտնում մեր հետ կռվող դաշնակից և չեզոք երկրների կառավարություններին և ժողովուրդներին, որ հրաժարվելով զավթողական պայմանագիրը ստորագրելուց, Ռուսաստանը, իր կողմից, հայտարարում է Գերմանիայի, Ավստրո-Հունգարիայի, Թուրքիայի և Բուլղարիայի հետ պատերազմը դադարեցված: Միաժամանակ ռուսական զորքերին տրվում է հրաման ամբողջ ռազմաճակատում լիակատար զորացրման մասին» (Л. Д. Троцкий, К истории русской революции, М. 1990, стр. 149-150).

Տրոցկու հետ այս հայտարարությունը ստորագրել էին միայն Իոֆֆեն, Պոկրովսկին և երկու ձախ էսէռները:

Տրոցկին վստահ էր, որ Բրեստում իր ունեցած ելույթներն այնպես կցնցեն Գերմանիայի և Ավստրո-Հունգարիայի պրոլետարիատին, որ այդ երկրներում հեղափոխությունը կդառնա մոտակա օրերի հարց: Այդ պատճառով էլ Գերմանիան չի արշավի Պետրոգրադի վրա, վստահեցնում էր Տրոցկին, հրաժարվելով ստորագրել հաշտության պայմանագիրը:

Ժողկոմսովետն այսպիսի լիազորություն չէր տվել Տրոցկուն: Դա նրա անձնական նախաձեռնությունն էր: Լենինը Տրոցկու առաջ քաշած կարգախոսը համարում է ավանտյուրա:

Իսկապես, Տրոցկու գործունեությունը շատ թանկ է նստում Ռուսաստանի վրա: Պայմանագրով նախատեսված 150 հազար քառ. կիլոմետրի փոխարեն Գերմանիան օկուպացնում է մոտ մեկ միլիոն քառ. կիլոմետր, միաժամանակ սահմանելով 6 միլիարդ մարկի ռազմատուգանք:

*Շահումյանը Բուխարինի ու Տրոցկու, ինչպես նաև նրանց հետևորդների բռնած դիրքը համարում էր աքլորություն (**Ստ. Շահումյան**, նույն տեղը, հ. հինգերորդ, էջ 181-182):*

***Երրորդ.** Լենինի և նրա համախոհների բռնած դիրքը Բրեստի հաշտության վերաբերյալ հետևյալն էր: Պատասխանելով Բուխարինին, Լենինը ՌԿ(բ)Կ 7-րդ արտահերթ համագումարում ասում է հետևյալը. «**Այո՛, մենք տեսնում ենք միջազգային համաշխարհային հեղափոխությունը, սակայն ասայժմ դա մի շատ լավ հեքիաթ է, շատ գեղեցիկ հեքիաթ,- ես ամբողջովին համաձայնում եմ, որ երեխաներին հատուկ է գեղեցիկ հեքիաթներ պատմելը:** (Ընդգծումն իմն է- **Վ. Պ.**):Սակայն ես հարցնում եմ՝ լուրջ հեղափոխականին հատո՞ւկ է արդյոք հեքիաթներին հավատալը» (**Վ. Ի. Լենին**, ԵԼԺ, հ. 36, էջ 22):*

Ահա, թե ինչու Լենինը վճռականորեն հանդես էր գալիս Բրեստի պայմանագիրը ստորագրելու օգտին:

Հաշտության պայմանագիրը ստորագրելու համար Լենինին ու նրա կողմնակիցներին դավաճանության մեջ մեղադրողները կարծում են, թե ճիշտ կլիներ հրաժարվել Բրեստում հաշտությունը կնքելուց և թույլ տալ ինտերվենտների կողմից Ռուսաստանի օկուպացման դեպքում այն բոլոր ծանր հետևանքները, որոնց մասին խոսում էր Բուխարինը:

2. ԲՐԵՍՏՈՒՄ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ ԶԻՆԱՊԱՊԱՐԸ

Այժմ շատ համառոտ Բրեստում տեղի ունեցած բանակցությունների մասին:

Առաջին հերթին կողմերը բանակցություններ են վարում զինադադարի մասին: Հետո դրանք ընդմիջվում են մեկ շաբաթով: Այդ կապակցությամբ 1917 թ. նոյեմբերի 30 (դեկտեմբերի 13)-ին Սովետական Ռուսաստանի արտաքին գործերի ժողկոմատը հրապարակում է հաղորդում, որտեղ նշվում է, որ զինադադարը ներկա պահին կրում է սեպարատ բնույթ, որի համար պատասխանատվությունն ընկնում է այն կառավարությունների վրա, որոնք հրաժարվում են ներկայացնել զինադադարի իրենց պայմանները:

Հաղորդման մեջ ընդգծվում էր հետևյալը. «Ոչ մի բռնի անեքսիաներ: Ժողովուրդների ճակատագիրը, նրանց տնտեսությունը, նրանց պետությունը, նրանց մշակույթը չպետք է որոշվի սվինների ուժով: Միայն իր, ժողովրդի ազատ կամքը պետք է որոշի նրա պատկանելիությունն այս կամ այն պետականությանը կամ նրա պետական անկախությունը: Բոլոր ժողովուրդները, որոնք զգում են կամ գիտակցում են իրենց ճնշվածությունը, պետք է հնարավորություն ստանան իրենց հետագա ճակատագրի մասին ազատորեն արտահայտվել ռեֆերենդումի միջոցով»:

Անհրաժեշտ էր համարվում, որ հանրաքվեի համար փախստականները պետք է վերադարձվեն, օտար զորքերը պետք է հեռացվեն: Այս սկզբունքը ժողկոմսովետը տարածում էր կռվող բոլոր երկրների վրա:

«Պատերազմի սարսափներից հատկապես դաժանորեն տուժված մարզերը,- նշվում էր հաղորդման մեջ,- պետք է հատուցվեն բոլոր պատերազմող երկրների կապիտալիստական դասակարգերի հարկման միջոցով կազմակերպված միջազգային ֆոնդից, քանի որ կապիտալիստական դասակարգերի վրա է ամբողջովին ընկնում պատասխանատվությունն այս պատերազմի համար»:

Այնուհետև հայտարարվում էր, որ «այսպիսին են այն սկզբունքները, որ ժողովրդական կոմիսարների սովետը դնում է հաշտության բանակցությունների հիմքում» (Документы внешней политики СССР, М. 1957, том. 1, стр. 45-46):

Վերջապես 1917 թ. դեկտեմբերի 2(15)-ին Բրեստ-Լիտովսկում Սովետական Ռուսաստանի և Գերմանիայի ու նրա դաշնակիցների (Բուլղարիա, Ավստրո-Հունգարիա, Թուրքիա) միջև ստորագրվում է զինադադար: Զինադադարը սկսվում էր դեկտեմբերի 4-ից և ուժի մեջ էր մնում մինչև 1918 թ. հունվարի 4-ը:

Պայմանագրում նշվում էր, որ «զինադադարը տարածվում է Բալթիկ և Սև ծովերի միջև ընկած ցամաքային ռազմաճակատում գտնվող նշված պետությունների բոլոր ցամաքային և օդային ուժերի վրա: Միաժամանակ ստորագրված զինադադարի պայմանագրում ընդգծվում էր. «Ասիայում ռուս-թուրքական ռազմական գործողությունների թատերաբեմում զինադադարը սկսվում է միաժամանակ» (Документы внешней политики СССР, М. 1957, том. 1,стр 47-51):

Բրեստ-Լիտովսկում ստորագրված զինադադարի պայմանագրի 3-րդ կետում ասվում էր. «Ափսոսում ռազմական գործողությունների ռուս-թուրքական թատերաբեմում երկու կողմերի զինավոր հրամանատարները փոխհամաձայնությամբ սահմանում են ինչպես դեմարկացիոն գիծը, այնպես էլ կողմերի միջև հաղորդակցությունը՝ 4-րդ կետի պայմանները պահպանելու պայմանով»:

Իսկ այդ 4-րդ կետով պայմանավորվող կողմերի ժողովուրդների միջև բարիդրացիական հարաբերությունների զարգացման և ամրապնդման նպատակով սահմանվում էին զորքերի միջև հաղորդակցության կազմակերպման կանոնները:

1917 թ. դեկտեմբերի 9 (22)-ին Բանվորների, զինվորների, գյուղացիների պատգամավորների Համառուսաստանյան սովետի Կենտրոնական գործադիր կոմիտեն հրապարակում է դիմում ուղղված բոլոր երկրների աշխատավոր մասսաներին: Հայտնելով սկսված բանակցությունների մասին, դիմումի մեջ ընդգծվում էր հետևյալը. «Ռուսական դեմոկրատիայի պատվիրակությունը իր պարտքն է համարել առաջին հերթին Կենտրոնական տերությունների ներկայացուցիչներին ընդգծել, որ իր նպատակը հանդիսանում է ոչ թե սեպարատ զինադադար և հաշտություն կնքելը, այլ համընդհանուր հաշտություն՝ Ռուսական հեղափոխության հռչակած սկզբունքների հիման վրա» (**Նույն տեղը**, էջ 58-59):

3. ԵՐԶՆԿԱՅԻ ԶԻՆԱԴԱԴԱՐԸ

Զինադադարի պայմանագրի վերոհիշյալ 3-րդ կետի հիման վրա 1917 թ. դեկտեմբերի 5 (18)-ին Երզնկայում ռուսական և թուրքական բանակների միջև առանձին ստորագրվում է զինադադարի պայմանագիր, որը ուժի մեջ էր մտնում դեկտեմբերի 5-ին ժամը մեկից սկսած:

Պայմանագիրը ստորագրած Կովկասյան ռազմաճակատի ռուսական զորքերի զինավոր հրամանատարությունը հետագայում հրաժարվում է ճանաչել Սովետական կառավարությունը:

Երկու կողմերը պարտավորվում էին կատարել բոլոր պայմանները մինչև վերջնական հաշտության հաստատումը: Եթե կողմերից որևէ մեկը կխախտեր պայմանագիրը, ապա այդ մասին հայտնելու էր 14 օր առաջ:

Պայմանագրի համաձայն դադարեցվում էին բոլոր տեսակի ռազմական գործողությունները: Դադարեցվում էր զորքերի տեղաշարժը: Հաստատվում էր դեմարկացիոն գիծը, արգելվում էր երկու կողմից էլ բնակիչների և զինվորականների մուտքը չեզոք գոտի:

Այս ընդհանուր պայմաններից բացի, թուրքական կողմը պայմանագրի 11-րդ հոդվածով պարտավորվում էր «բոլոր ջանքերը գործադրել, որպեսզի քրդերին ստիպի ճշտորեն կատարելու պայմանագրի բոլոր պահանջները»: Նույն հոդվածով ռուսական կողմը դեմարկացիոն գիծը խախտող քրդերի թշնամական գործողությունները ճնշելու էր ռազմական ուժով:

Պայմանագրի 12-րդ հոդվածով սահմանվում էր, որ ռուսական հանրապետության և Գերմանիայի ու նրա դաշնակիցների միջև զինադադար կնքելու դեպքում բոլոր կետերը պարտադիր են լինելու նաև Կովկասյան ռազմաճակատի համար (**Նույն տեղը**, էջ 53-56):

Զինադադրի պայմանագիրը նշանակում էր, որ երկու կողմերի զորքերը մնում էին մինչ այդ եղած սահմաններում: Այսինքն ռուսական զորքերը մնում էին իրենց գրաված սահմանագծում:

Այստեղ հետևյալ հարցն է առաջանում: Երբ բանակցություններ էին ընթանում Սովետական Ռուսաստանի և Գերմանիայի ու նրա դաշնակից պետությունների միջև, որոնց մեջ էր նաև Թուրքիան, ինչո՞ւ վերջինս Անդրկովկասյան իշխանությունների և ռուսական հրամանատարության հետ առանձին զինադադար կնքեց՝ գերազանցելով վերոհիշյալ 3-րդ կետով նախատեսված սահմանները:

Կա երկու պատճառ: Նախ ՕԶԱԿՈՄ-ի ու Կովկասյան ռազմաճակատի հրամանատարությունը հրաժարվել էին ընդունել Սովետական Ռուսաստանի իշխանությունը:

Եվ երկրորդ, որն, անշուշտ, բխում էր առաջինից, Թուրքիան դրա դեմ չի բողոքում, որովհետև Կովկասյան ռազմաճակատի հրամանատարության և ՕԶԱԿՈՄ-ի դիրքորոշումն իրեն միանգամայն ձեռնտու էր, քանի որ նա դրա մեջ տեսնում էր մոտակա ապագայում Ռուսաստանից Անդրկովկասի անջատման հնարավորությունը: Եվ Թուրքիան հետևողականորեն վարում էր այդ քաղաքականությունը:

Դատելով Երզնկայի զինադադարի պայմանագրից, պետք է ասել, որ Թուրքիան անպայման տեղյակ էր Բրեստի բանակցություններում իր դաշնակից Գերմանիայի ծրագրերին և առանձին զինադադար չէր կարող կնքել առանց Գերմանիայի գիտության: Փաստորեն զինադադարի պայմանագիրը նույնը խաղ էր, որին էլ կամովին տրվեցին ՕԶԱԿՈՄ-ն ու Կովկասյան ռազմաճակատի հրամանատարությունը:

Ինչպես արդեն նշվել է, ՕԶԱԿՈՄ-ն ու Կովկասյան ռազմաճակատի հրամանատարությունը փորձում էին բանակի զորացրումն իրականացնել կազ-

մակերպված:

Բայց Երզնկայի զինադադարի կնքումից հետո բանակի զորացրման կազմակերպումը խաթարվում է, դառնում է անհնարին՝ սկսված կազմալուծման հետևանքով: Զինվորական խմբերը արդեն զանգվածաբար դասալքում էին և ինքնակամ հեռանում զբաղեցրած բնագծերից:

Թեև կնքվել էր զինադադար, բայց Թուրքական կողմն ավելի էր փնտրում այն խախտելու համար: Եվ, ինչպես միշտ, գտնվում է հարմար ավելը:

Կովկասյան ռազմաճակատի Թուրքական զորքերի հրամանատար Վեհիբ փաշան 1918 Թ. հունվարի 26-ին Էրզրումում գտնվող գեներալ Օդիշելիձեին հեռագրով իր մտահոգությունն է հայտնում, Թե «Հայկական բանդաները» վտանգ են սպառնում մահմեդական բնակչությանը, որոնց անվտանգությունը պաշտպանելու նպատակով Թուրքական զորքերը հարկադրված են առաջ շարժվել և գրավել այն բնագծերը, որտեղից հեռացել են ռուսական զորքերը:

Ահա, այսպես, Թուրքական կողմը որևէ հիմք չունենալով, Կովկասյան ռազմաճակատում խախտում է զինադադարի պայմանագիրն ու անցնում է հարձակման...

4. ԲԱՆԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԸՆԹԱՑՔԸ

Իսկ այդ ընթացքում Բրեստում երկու կողմերի միջև գնում էր լարված ու անհաշտ պայքար:

Այստեղ հարկ եմ համարում նշել, որ այսօր էլ Բրեստ-Լիտովսկի հաշտության բանակցությունները, ստորագրած պայմանագիրը շարունակում են մնալ մեր լայն հասարակայնության ուշադրության կենտրոնում, քանի որ նրանցում լուծվում էին նաև Հայաստանի հետագա ճակատագրին վերաբերող խնդիրները:

Եվ դրանց մասին պատկերացում կազմելու համար փորձեմ ընթերցողին միայն ներկայացնել շատ համառոտ հետևյալը:

Զինադադարի պայմանագիրը ստորագրելուց հետո 1917 Թ. դեկտեմբերի 9(22)-ին սկսվեցին հաշտության բանակցությունները: Առաջին նիստում Սովետական պատվիրակությունը հանդես է գալիս հռչակագրով, որտեղ հիմք ընդունելով «Հաշտության մասին» դեկրետը, առաջարկում է հաշտության բանակցությունների հիմքում դնել վեց կետ, այդ Թվում հետևյալը.

Առաջին. Արգելվում է պատերազմի ժամանակ գավթած տարածքների որևէ բռնի միացում: Այդ տարածքներն օկուպացրած զորքերը դուրս են

հանվում կարճ ժամկետում:

Երկրորդ. Ամբողջությամբ վերականգնվում է այն ժողովուրդների քաղաքական ինքնուրույնությունը, որոնք ներկա պատերազմի ժամանակ զրկվել են այդ ինքնուրույնությունից:

Երրորդ. Մինչև պատերազմը քաղաքական ինքնուրույնությունից չօգտվող ազգային խմբերին երաշխավորվում է այս կամ այն պետությանը պատկանելու կամ ռեֆերենդումի միջոցով իր քաղաքական ինքնուրույնությունն ազատորեն որոշելու հարցը: Այդ ռեֆերենդումը պետք է կազմակերպվի այնպես, որպեսզի ապահովվի տվյալ տարածքի ամբողջ բնակչության համար, չբացառելով վտարանդիներին ու փախստականներին քվեարկության լիակատար ազատություն (**նույն տեղը,** էջ 59-61):

Դեկտեմբերի 12(25)-ին գերմանական պատվիրակության ղեկավար Կյուլմանը ներկայացնում է Քառյակ տերությունների դիրքորոշումը: Կողմերի դիրքորոշումը պարզելուց հետո սովետական պատվիրակությունն առաջարկում է կատարել 10-օրյա ընդմիջում, որպեսզի Անտանտի տերություններին հնարավորություն տրվի միանալ հաշտության բանակցություններին:

Դեկտեմբերի 17(30)-ին սովետական կառավարությունը դիմում է դաշնակից տերություններին, նրանց առաջարկելով մասնակցել հաշտության բանակցություններին, «որպեսզի նրանք կարողանան իրենց մասնակցությունը բերել Ռուսաստանի և Թշնամական երկրների միջև սեպարատ հաշտության բոլոր հետևանքներից» (**նույն տեղը,** էջ 67-70):

Անտանտի տերությունները ցանկություն չհայտնեցին ընդունել սովետական կառավարության առաջարկը: Սովետական կառավարությունը հարկադրված էր դեկտեմբերի 14(27)-ին միայնակ շարունակել սկսված բանակցությունները Գերմանիայի և նրա դաշնակիցների հետ:

Այդ օրն էլ գերմանական պատվիրակությունը ներկայացնում է իր առաջարկությունը, որի 2-րդ կետում ասվում էր հետևյալը. «Քանի որ Ռուսական կառավարությունը, իր սկզբունքներին համապատասխան, Ռուսական պետության կազմի մեջ մտնող բոլոր ժողովուրդների համար, առանց բացառության, հռչակել է ինքնորոշման, ընդհուպ մինչև լիակատար անջատման իրավունք, ապա նա ի գիտություն է ընդունում Լեհաստանում, Լիտվայում, Կուրլանդիայում, Էստլանդիայի և Լիֆլանդիայի մասերում բնակվող ժողովուրդների կամքն արտահայտող հայտարարությունները նրանց լիակատար պետական անկախության և Ռուսաստանյան Ֆեդերացիայից անջատվելու ձգտումների մասին» (**նույն տեղը,** էջ 713):

Այս կապակցությամբ 1917 թ. դեկտեմբերի 30-ին (1918 թ. հունվարի 12-ին) սովետական պատվիրակությունը հայտարարում է նախորդ երկու նիստերի ժամանակ օկուպացված տարածքների ճակատագրի վերաբերյալ առաջացած տարաձայնությունների մասին, ընդգծելով, որ գերմանական առաջարկությունների 2-րդ կետը նա չի կարող հաշվի առնել որպես օկուպացված մարզերի բնակչության կամքի արտահայտություն, որի մասին խոսք է գնում նշված կետում, քանի որ այդ մասին հասարակական խմբերի, հիմնարկությունների հայտարարություններն արվել են օտարերկրյա օկուպացիայի ռեժիմի պայմաններում»:

Հայտարարության մեջ ասվում էր նաև, որ ժողովուրդների, մասնավորապես լեհ ժողովրդի նկատմամբ բռնությամբ ու հանցագործությամբ ստեղծված նախկին Ռուսական կայսրության հին սահմանները կործանվել են ցարիզմի հետ միասին: Իսկ Ռուսական հանրապետության եղբայրական ժողովուրդների դաշինքի նոր սահմանները և Ռուսաստանի կազմից դուրս գալու ցանկություն ունեցող ժողովուրդների սահմանները պետք է որոշվեն համապատասխան ժողովուրդների ազատ որոշմամբ:

*«Միայն այն ժամանակ,- ընդգծվում էր հայտարարության մեջ,- Ռուսական հանրապետությունը իրեն երաշխավորված կզգա որևէ տարածքային վեճերի ու կոնֆլիկտների մեջ ներքաշելու փորձերից, երբ նա վստահ կլինի, որ հարևան մարզերից իրեն բաժանող սահմանը որոշվել է այդ սահմաններում բնակվող ժողովուրդների ազատ կամքով, այլ ոչ թե միակողմանի բռնությամբ, որն ընդունակ է միայն ժամանակավորապես ճնշելու այդ կամքը» (**նույն տեղը**, էջ 76-79):*

Այսպիսով, սովետական պատվիրակությունը հետևողականորեն պաշտպանում էր ժողովուրդների քաղաքական ինքնորոշման մասին կամքն ազատ արտահայտելու սկզբունքը:

*1918 թ. հունվարի 4 (17)-ին Սահմանադիր ժողովն ընդունում է Լենինի գրած «Աշխատավոր և շահագործվող ժողովրդի իրավունքների» հռչակագիրը: Սահմանադիր ժողովը ողջունում էր նաև Ֆինլանդիայի լիակատար անկախությունը, Պարսկաստանից զորքերի դուրս բերումը սկսելը և Հայաստանի ազատ ինքնորոշումը հռչակելու Ժողովրդական կոմիսարների սովետի քաղաքականությունը (**նույն տեղը**, էջ 85-87):*

1918 թ. հունվարի 5(18)-ին գերմանական պատվիրակությունը ներկայացնում է իր տարածքային պահանջները, որով Ռուսաստանից խլվում էր 160 հազար քառակուսի կիլոմետրից ավելի տարածք, այդ թվում Լեհաստան, Մերձբալթիկան, Ուկրաինան, Բելոռուսիայի մեծ մասը:

Ահա այսպիսին էր իրավիճակը, երբ 1917 թ. դեկտեմբերի 29-ին (1918 թ. հունվարի 11-ին) Ռուսաստանի Ժողկոմսովետն ընդունում է «Թուրքահայաստանի մասին» դեկրետը, որին անդրադարձ է եղել նախորդ էջերում:

1918 թ. հունվարի 14 (27)-ին Սովետների համառուսաստանյան 3-րդ համագումարը քննարկելով հաշտության հարցը, ընդունված որոշմամբ պաշտպանում է համընդհանուր դեմոկրատական հաշտության հասնելու համար սովետական կառավարության ձեռնարկած քայլերը:

Միաժամանակ համագումարն ընդգծում է, որ ավստրո-գերմանական պատվիրակության ներկայացրած պայմանները ոչ միայն ոտնահարում են դեմոկրատիայի սկզբունքները, այլև ամբողջությամբ ժխտում են այն սկզբունքները, որոնք ընդունվել էին Գերմանիայի և նրա դաշնակիցների պատվիրակության կողմից 1917 թ. դեկտեմբերի 12(25)-ին:

*Համագումարը հանձնարարում է սովետական պատվիրակությանը ձգտել անհապաղ դադարեցնել պատերազմը և պաշտպանել Ռուսական հեղափոխության ծրագրի հիման վրա հաշտության սկզբունքները (**նույն տեղը**, էջ 90- 91):*

*Միաժամանակ համագումարը հաստատում է Ֆինլանդիայի և Հայաստանի մասին Ժողկոմսովետի և Համառուսաստանյան Կենտգործկոմի դեկրետները (**նույն տեղը**, էջ 93):*

1918 թ. փետրվարի 9-ին գերմանական պատվիրակությունը իր տարածքային պահանջները ներկայացնում է վերջնագրի ձևով:

Ընդհատված բանակցությունները վերսկսելու նախօրյակին, երբ Սովետական Ռուսաստանի արտաքին գործերի ժողկոմ Տրոցկին որպես պատվիրակության ղեկավար, պատրաստվում էր մեկնել Բրեստ-Լիտովսկ, Լենինը նրան տալիս է հետևյալ ցուցումը. «...Մենք կդիմանանք մինչև գերմանացիների ուլտիմատումը, ուլտիմատումից հետո մենք կտանք»:

Փետրվարի 10-ին Լենինը հեռագրով Տրոցկուն լրացուցիչ հայտնում է հաշտությունը ստորագրելու անհրաժեշտության մասին: Անտեսելով Լենինի ցուցումները, փետրվարի 10-ի երեկոյան նիստում Տրոցկին հայտարարում է, որ «հրաժարվելով ստորագրել զավթողական պայմանագիր, Ռուսաստանը իր կողմից հայտարարում է պատերազմը դադարեցված Գերմանիայի, Ավստրո-Հունգարիայի, Թուրքիայի և Բուլղարիայի հետ: Միաժամանակ ամբողջ ռազմաճակատում ռուսական զորքերին տրվում է լիակատար զորացրման հրաման» (Л. Д. Троцкий, К истории русской революции,

M. 1990, стр. 149-150):

1918 թ. փետրվարի 16-ին գերմանական գեներալ Հոֆմանը պաշտոնապես հայտարարում է, որ փետրվարի 18-ից ավարտվում է զինադադարը և Գերմանիայի ու Ռուսաստանի միջև վերսկսվում է պատերազմական դրություն (Документы внешней политики СССР, М. 1957, том. 1, стр. 105): *Գերմանական զորքերը սկսում են հարձակումը Բալթիկ ծովից մինչև Սև ծով ընկած ամբողջ ռազմաճակատի գծով:*

Ռուսական բանակի մնացորդներն անկարող լինելով դիմադրել և կասեցնել գերմանական զորքերի ճնշումը, սկսում են անկանոն նահանջել, նրանց հնարավորություն տալով անմիջական սպառնալիք ստեղծել Պետրոգրադի համար:

Հաշվի առնելով գերմանական զորքերի ռազմական առավելությունը, երկրի ծանր դրությունը, մարտունակ բանակի բացակայությունը և ժողովրդի հոգնածությունը ձգձգվող պատերազմից, 1918 թ. փետրվարի 19-ին Գերմանիայի կառավարությանը Լենինի և Տրոցկու ստորագրությամբ ուղարկված ռադիոհեռագրով հայտնվում է. «Ժողովրդական կոմիսարների սովետը ստեղծված պայմաններում հարկադրված է հայտարարել, որ համաձայն է ստորագրել հաշտություն այն պայմաններով, որոնք առաջարկվել են Բրեստ-Լիտովսկում Քառյակ միության պատվիրակությունների կողմից» (**նույն տեղը**, *էջ 106):*

Իսկ փետրվարի 20-ին Գերմանիայի հարձակման կապակցությամբ Ժողկոմսովետը կոչով դիմում է ամբողջ Ռուսաստանի աշխատավոր բնակչությանը: Նկարագրելով գերմանական հարձակմամբ ստեղծված ծանր վիճակը, Ժողկոմսովետը կոչ է անում ամուր կարգապահություն հաստատել և դիմադրել հարձակվող գերմանական զորքերին (**նույն տեղը**, *էջ 107-109):*

Սակայն գերմանական զորքերը չեն դադարեցնում հարձակումը: Միայն փետրվարի 21-ին գերմանական կառավարությունը ներկայացնում է հաշտության իր պայմանները, որոնք Պետրոգրադում ստացվում են փետրվարի 23-ի առավոտյան:

Գերմանիայի ներկայացրած պայմաններն ունեին ուլտիմատումի բնույթ և ավելի ծանր էին, քան նախկինում առաջարկած պայմանները: Ռուսաստանի առջև դրվում էր պահանջ՝ հրաժարվել Ուկրաինայից, Մերձբալթիկայից, Ֆինլանդիայից և անհապաղ հեռացնել իր զորքերը:

Գերմանիայի ներկայացրած պայմանների 5-րդ կետում ասվում էր. «Ռուսաստանը իր տրամադրության տակ եղած բոլոր միջոցներով պետք է նպաստի արագ և պլանաչափ կերպով Թուրքիային վերադարձնելու նրա անատոլիական պրովինցիաները և ճանաչում է Թուրքական կապիտուլյացիաների վերացումը» (**նույն տեղը**, *էջ 112-113):*

Իր ուլտիմատումին պատասխանելու համար Գերմանիան Ռուսաստանին տալիս է 48 ժամ:

Փետրվարի 23-ին Ժողկոմսովետը քննարկում է Գերմանիայի ներկայացրած պայմանները և որոշում է. «Գերմանական կառավարության առաջարկած հաշտության պայմաններն ընդունել և նոր կազմով (նախագահ՝ Գ. Սոկոլնիկով, քարտուղար՝ Լ. Կարախան) պատվիրակություն ուղարկել Բրեստ-Լիտովսկ» (**նույն տեղը**, *էջ 112):*

Փետրվարի 28-ին սովետական պատվիրակությունը հրապարակում է հայտարարություն, որով վճռական բողոք է հայտնվում գերմանական պայմաններն ընդունելու մասին սովետական կառավարության որոշումից հետո գերմանական զորքերի առաջ շարժվելու դեմ և պահանջում է անհապաղ դադարեցնել Ռուսաստանի դեմ հարձակողական գործողությունները:

Երբ վերսկսվում են բանակցությունները, գերմանական կողմը մարտի մեկին ներկայացնում է լրացուցիչ պահանջ՝ Ռուսաստանը պետք է իր զորքերը հեռացնի Կարսից, Արդահանից ու Բաթումից, որը փաստորեն նշանակում էր, որ Թուրքիան զավթում է այդ օկրուգները:

Գերմանական ուլտիմատումի մեջ նշվում էր, որ Գերմանիան նշված սահմաններից արևելք ընկած Ռուսաստանի տարածքներից իր զորքերը կհեռացնի միայն համընդհանուր հաշտություն կնքելուց և ռուսական բանակի լիակատար զորացրումից հետո (**նույն տեղը**, *էջ 710):*

Այսպիսով, օգտվելով Սովետական Ռուսաստանի արևմտյան ու հարավային սահմաններում ստեղծված անչափ բարդ իրավիճակից, Գերմանիան ու նրա զինակիցները պարտադրում են ծանր, իսկապես թալանչիական պայմանագիր: Ռուսաստանին ոչինչ չէր մնում, քան դրա ստորագրումը:

Բրեստի պայմանագրով Գերմանիան Սովետական Ռուսաստանից զավթեց 919 միլիոն դեսյատին տարածք՝ 85 միլիոն բնակչությամբ: Ռուսաստանը զիջեց նաև հացահատիկային տարածքի 35 տոկոսը, շաքարի ճակնդեղի տարածքի 87 տոկոսը, ֆաբրիկաների ու գործարանների 54 տոկոսը, քարածխի արտադրության 89 տոկոսը, երկաթահանքերի 74 տոկոսը, չուգունի արտադրության 77 տոկոսը, պողպատի արտադրության 74 տոկոսը, ամբողջ ածխարդյունաբերության 9/10 և մետաղագործական արդյունաբերության է 3/4 մասը:

1918 թ. մարտի 3-ին ստորագրվում է Ռուսաստանի և Գերմանիայի ու նրա դաշնակիցների միջև հաշտության պայմանագիրը, որի 4-րդ հոդվածը մարտի 1-ին Թուրքիայի պահանջով մտցվել էր Գերմանիայի կողմից:

Այդ հոդվածում, որը վերաբերում էր Արևմտյան Հայաստանին, ասվում էր հետևյալը. «Ռուսաստանը կանի այն ամենը, ինչ որ իրենից կախված է, որպեսզի ապահովի իր զորքերի դուրս բերումը Արևելյան Անատոլիայի նահանգներից և վերջիններիս կանոնավոր վերադարձը Թուրքիային:

*Ռուսական զորքերը պետք է անհապաղ դուրս բերվեն նաև Արդահանի, Կարսի և Բաթումի օկրուգներից: Ռուսաստանը չի միջամտի այդ օկրուգների պետական-իրավական և միջազգային-իրավական նոր կազմակերպման գործին, այլ այդ օկրուգների բնակչությանը հնարավորություն կտա դրացի պետությունների, մասնավանդ Թուրքիայի համաձայնությամբ հաստատել նոր կարգ» (**նույն տեղը**, էջ 121):*

Գերմանական ճնշման մասին նշվում է ռուսական հաշտության պատվիրակության 1918 թ. մարտի 3-ին հրապարակած դեկլարացիայում, որտեղ ասվում էր, որ Ռուսաստանի բանվորագյուղացիական կառավարությունը հարկադրված է ընդունել Գերմանիայի ներկայացրած ուլտիմատումը և ուղարկել է պատվիրակություն՝ «մեզ բռնությամբ պարտադրած պայմանները ստորագրելու համար»:

«Հաշտությունը,- ասվում էր դեկլարացիայում,- որն այժմ կնքվում է Բրեստ-Լիտովսկում, Ռուսաստանի, Գերմանիայի, Ավստրո-Հունգարիայի, Բուլղարիայի և Թուրքիայի ժողովուրդների ազատ համաձայնության վրա հիմնված հաշտություն չէ: Այդ հաշտությունը թելադրված է զենքի ուժով: Դա հաշտություն է, որ առանձները սեղմած, հարկադրված ընդունում է հեղափոխական Ռուսաստանը»:

*Սովետական պատվիրակության դեկլարացիայում ընդգծվում էր նաև հետևյալը. «Կովկասում ակնհայտորեն խախտելով գերմանական իսկ կառավարության բանաձևած փետրվարի 21 (8)-ի վերջնագրի պայմանները և հաշվի չնստելով Արդահանի, Կարսի և Բաթումի մարզերի բնակչության իրական կամքի հետ, Գերմանիան այդ մարզերը բռնի կերպով անջատում է Թուրքիայի օգտին, մարզեր, որոնք ոչ մի անգամ նվաճված չեն եղել թուրքական զորքերի կողմից» (**նույն տեղը**, էջ 117-119):*

Այս բողոքը վերաբերվում է Բրեստ-Լիտովսկի պայմանագրով Գերմանիայի կողմից պարտադրված վերոհիշյալ 4-րդ հոդվածին:

Հարկ եմ համարում նշել, որ սովետական պատվիրակությունը նախապես

ներկայացրել էր հաշտության պայմանագրի իր տարբերակը, որի 3-րդ հոդվածում մեզ հետաքրքրող խնդիրն ուներ հետևյալ ձևակերպումը. «Այն ազգային խմբերին, որոնք մինչև պատերազմը չէին օգտվում քաղաքական ինքնուրույնությունից, հնարավորություն է տրվում հանրաքվեի միջոցով ազատորեն որոշելու այս կամ այն պետությանը պատկանելու հարցը: Այդ հանրաքվեն պետք է կազմակերպվի այնպես, որ ապահովվի տվյալ տարածքի ամբողջ բնակչության, չբացառելով տարագիրներին ու փախստականներին, քվեարկության լիակատար ազատությունը»:

Իսկ 4-րդ հոդվածով սովետական պատվիրակության ներկայացրած նախագիծը դնում էր ազգային փոքրամասնությունների իրավունքների պահպանումը, անկախ նրանց գտնվելու վայրից:

Դժվար չէ նկատել, որ եթե այս հոդվածը ընդունվեր, ապա դրա կիրառումն անպայման կնշանակեր, որ Արևմտյան Հայաստանը ստանալու էր ինքնորոշման իրավունք, իսկ Թուրքիայի տարածքում ապրող հայերն էլ՝ իրավահավասարության իրավունք: Բայց Գերմանիան ու Թուրքիան ամենակատաղի կերպով առարկեցին դրանց քննարկմանը:

Հակառակ Սովետական Ռուսաստանի առաջարկության, Թուրքիան իր դաշնակից Գերմանիայի աջակցությամբ ներկայացնում է հետևյալ պահանջները.

«ա). Վերադարձնել այն շրջանները, (Կարս, Արդահան, Բաթում), որոնք իր ժամանակին տրվել են Ռուսաստանին ռազմատուգանք վճարելու փոխարեն:

բ). Անկախ կովկասյան պետության ճանաչում:

գ). Հրաժարում այդ պետության ներքին գործերին և նրա կառավարման ձևի ընտրության միջամտությունից: Բացի դրանից Ռուսաստանը պետք է, համաձայն նրա ածխյան կառավարության կողմից հռչակված ինքնորոշման սկզբունքի, այդ սկզբունքը տարածի նաև ռուսաստանյան պետության մահմեդական ժողովուրդների վրա»:

Գերմանիան, ընդառաջելով իր դաշնակցին, բանակցությունների քննարկումից հանել է տալիս Հայկական հարցը, որը բավարարում էր Թուրքիային և նա չի պնդում մյուս պահանջների վրա, որոնք նա հետագայում կարողանում է կենսագործել:

Այս մասին Սովետական Ռուսաստանի արտաքին գործերի ժողկոմ Գ. Չիչերինը գրել է. «Այն բանից հետո, երբ մենք ժամանեցինք Բրեստ-Լիտովսկ, մեզ ներկայացվեց մի նոր պայման ևս, որը վատթարացնում էր նախկին վերջ-

նագիրը (նկատի է առնվում մարտի մեկին գերմանաթուրքական բլոկի ներկայացրած վերջնագիրը- Վ. Պ.) այն է՝ Կարսի, Բաթումի և Արդահանի անջատումը Ռուսաստանից, ընդ որում մեզ հայտնվեց, որ դա հակադիր կողմի մինիմալ պահանջն է» (Г. Чичерин, Статьи и речи, М., 1961,стр. 26):

Բացի հիմնական պայմանագրից Բրեստ-Լիտովսկում Թուրքիայի ցանկությամբ և Գերմանիայի պնդմամբ կնքվում է ռուս-թուրքական լրացուցիչ պայմանագիր:

Այդ պայմանագրի առաջին հոդվածով սահմանվում էր հետևյալը.

1. Ռուսական հանրապետությունը պարտավորվում է հիմնական պայմանագրի 4-րդ հոդվածի համաձայն նշված պրովինցիաներից իր բոլոր ուժերը հանել մինչև պատերազմը գոյություն ունեցած սահմանից այն կողմ՝ 6-8 շաբաթվա ընթացքում:

2. Ռուսական և թուրքական զործող բանակների զլխավոր հրամանատարները որոշում են թիվ 1 կետի համաձայն ռուսական զորքերի էվակուացիայի և սահմանի մյուս կողմ դուրս բերելու, ինչպես նաև նրանց անվտանգությունն ապահովելու կարգը:

3. Օկուպացված տարածքներից էվակուացիայի ժամանակ Ռուսական հանրապետությունն ապահովելու է անվտանգությունը, մինչև որ այդ տարածքները նորից զբաղեցնեն թուրքական զորքերը:

4. Ռուսական հանրապետությունը սահմանի պահպանության համար օգտագործելու է մեկ դիվիզիա մոտավորապես 150 կամ ավելի կիլոմետրի վրա, մնացած բանակը զորացրում է և ուղարկում երկրի խորքը:

5. Ռուսական հանրապետությունը պարտավորվում է զորացրել ռուսական և թուրքական հպատակներից կազմված հայկական չեթեները, որոնք գտնվում են ինչպես Ռուսաստանում, այնպես էլ օկուպացված թուրքական պրովինցիաներում:

6. Ռուսական հանրապետությունը, մինչև համընդհանուր հաշտության կնքումը, իր սահմանի վրա կամ Կովկասում չի կենտրոնացնի նույնիսկ վարժական նպատակով մեկ դիվիզիայից ավելի զորք:

Իսկ Թուրքիան իր մնացած մյուս հակառակորդների դեմ պատերազմը շարունակելու անհրաժեշտությունից հարկադրված իր բանակը պահելու է ռազմական դրության մեջ:

Լրացուցիչ ռուս-թուրքական պայմանագրի 2-րդ հոդվածով ռուսական զորքերը Կարսի, Արդահանի և Բաթումի սանջակներից էվակուացնելուց հետո սահմանը վերականգնվում էր այն տեսքով, ինչպիսին եղել էր մինչև 1877-1878 թթ. ռուս-թուրքական պատերազմը (Документы внешней политики СССР, М. 1957, том. 1, стр. 199-204):

Այս պայմանագրով սահմանվում էին նաև մյուս խնդիրները, որոնք նույնպես չէին բխում Ռուսաստանի շահերից:

1918 թ. մարտի 15-ին Սովետների համառուսաստանյան արտակարգ 4-րդ համագումարը վավերացնում է Բրեստ-Լիտովսկի պայմանագիրը:

1918 թ. մարտի 14-ին Չիչերինը Սովետների համառուսաստանյան 4-րդ արտակարգ համագումարում զեկուցում է Բրեստի պայմանագրի մասին: Անդրկովկասի հարցին անդրադառնալով նա ասում է հետևյալը. «Հաշտությունը ստորագրելու պահին մենք հանդես եկանք դեկլարացիայով, որով հայտարարեցինք, որ տվյալ պայմաններում, պատմության մեջ չլսված այն բռնի գործողությունների պայմաններում, որոնք կիրառվել են մեր նկատմամբ, մենք հարկադրված ենք հաշտություն ստորագրել, բայց մենք հրաժարվեցինք դրա ամեն մի քննարկումից:

Մեր կողմից մյուս դեկլարացիան հատուկ կերպով արվել է Բաթումը, Կարսը և Արդահանն անջատելու մասին հարցի կապակցությամբ այն բանից հետո, երբ Կենտգործկոմի կողմից ընդունվեցին գերմանական կառավարության և նրա դաշնակիցների կողմից հաշտության ուլտիմատում պայմանները: Այն բանից հետո, երբ մենք ժամանեցինք Բրեստ-Լիտովսկ, մեզ ներկայացվում է նախկին ուլտիմատումը վատթարացնող ևս մեկ նոր պայման, այն է՝ Ռուսաստանից Կարսի, Բաթումի և Արդահանի անջատումը, ընդորում մեզ հաղորդվեց, որ դա հակառակ կողմի մինիմալ պահանջն է: Եվ դրա համար, բացի հաշտության պայմանագիրը ստորագրելու մասին մեր ընդհանուր դեկլարացիայից, մենք ներկայացրինք բողոքի հատուկ դեկլարացիա՝ մեզ պարտադրած նախկին ուլտիմատումն ավելի վատթարացնելու նոր պայմանների կապակցությամբ»:

Այնուհետև Կարսի, Արդահանի և Բաթումի մասին Չիչերինն ասում է հետևյալը. «Պայմանագիրը հստակ չի արտահայտվում, որ այդ մարզերը Ռուսաստանից անջատվում են, այդ մարզերը մաքրվում են ռուսական զորքերից, Ռուսաստանը չի խառնվելու նրանցում նոր կարգի կազմակերպմանը: Նոր կարգը պետք է հաստատվի հարևան պետությունների, հատկապես Թուրքիայի համաձայնությամբ: Տվյալ դեպքում անեքսիան ունի որոշ չափով կոծկված տեսք... բայց էությունը մնում է նույնը» (Նույն տեղը, էջ 667):

1918 թ. հուլիսի 23-ին պատասխանելով Բրեստի հաշտությունը ստորագրելու կապակցությամբ արտահայտված մեղադրանքներին, Լենինն ասել

*է հետևյալը. «Զուր են մեզ մեղադրում չափազանց ստորացուցիչ, ծանր ու բռնի Բրեստի պայմանագիրը կնքելու համար և դրա մեջ տեսնում են լիակատար դավաճանություն մեր իդեալներին և հակվածություն դեպի գերմանական իմպերիալիզմը: Եվ բնորոշ է, որ այդ մեղադրանքը բխում է բուրժուական շրջանակներից ու նացիոնալ-համաձայնողական տարրերից, որոնք ներկայումս Ուկրաինայում, Ֆինլանդիայում և Կովկասում (մենշևիկները) գրկաբաց են դիմավորում գերմանական յունկերներին: ...Գերմանիան բացահայտ իմպերիալիստական նպատակներով կողոպտչական պատերազմ է մղում» (**Վ. Ի. Լենին**, ԵԼԺ, հ. 36, էջ 679):*

5. ՍՈՎԵՏԱԿԱՆ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ՀԵՏԱԳԱ ԴԻՎԱՆԱԳԻՏԱԿԱՆ ՔԱՅԼԵՐԸ

Անհրաժեշտ եմ համարում նշել, որ Բրեստ-Լիտովսկի պայմանագիրը ստորագրելուց հետո Թուրքիան, շարունակում էր խախտել այդ պայմանագիրը, օգտվելով Գերմանիայի հովանավորությունից ու պաշտպանությունից: Իր հերթին Գերմանիան բացահայտորեն անտեսում էր Բրեստի պայմանագրի պահանջները խախտելու փաստերի վերաբերյալ Սովետական Ռուսաստանի բողոքն ու պահանջը:

Ստեղծված իրավիճակի մասին որոշակի պատկերացում կազմելու նպատակով, հարկ եմ համարում ժամանակագրության առումով առաջ անցնել և համառոտակի ընթերցողին ներկայացնել Սովետական Ռուսաստանի ձեռնարկած դիվանագիտական քայլերը մինչև Բրեստի պայմանագրի չեղյալ հայտարարելը:

1. 1918 թ. ապրիլի 12-ին Չիչերինի և Կարախանի ստորագրությամբ Սովետական Ռուսաստանի արտաքին գործերի ժողկոմատը գերմանական կողմին բողոքում է այն մասին, որ Կովկասյան ռազմաճակատում Թուրքական բանակների ու քրդերի հարձակումներն ուղեկցվում են հայկական բնակչության մասսայական կոտորածով, որ հազարավոր կանայք ու երեխաներ մորթոտվում են, նրանց ունեցվածքը թալանվում է ու հրի մատնվում:

«Պայմանագիրը,- ասվում էր այդ բողոքում,- որը մենք Բրեստում հարկադրված ենք եղել ստորագրել, Արդահանի, Կարսի և Բաթումի օկրուգների բնակչության ճակատագրի որոշումը թողել էր այդ բնակչության կամքի արտահայտությանը: Այդ օկրուգներում կատարվածը վկայում է, որ տասնյակ տարիներով իրականացվող հայ բնակչությանը ոչնչացնելու քաղաքականությունը շարունակվում է նաև այժմ»:

Այնուհետև նշվում էր, որ Թուրքական ռազմաճակատում առավելությունը եղել է Ռուսաստանի կողմը, որը հարկադրանքով Արդահանը, Կարսը և Բաթումը զիջել է միայն նրա համար, որ Թուրքիայի դաշնակիցը Գերմանիան էր:

«Այն սարսափների պատասխանատվությունը, որոնց ենթարկվում է այժմ Թուրքական զորքերի զբաղեցրած մարզերի հայկական բնակչությունը, ընկնում է գերմանական կառավարության վրա, որի ուղղակի օգնությամբ Թուրքիան գավթել է այդ մարզերը»:

Արտաքին գործերի ժողովրդական կոմիսարիատը վճռականորեն բողոքում է Արդահանի, Կարսի և Բաթումի բնակչության ինքնորոշման իրավունքը խախտելու դեմ և վստահություն է հայտնում ու պնդում է «Գերմանիայի կողմից արագ և վճռական միջամտություն՝ Կովկասում կատարվող խարդաղ բնակչության հետագա ոչնչացումն ու մորթոտումը կանխելու նպատակով, ինչպես դա տեղի է ունեցել Արդահանում» (Документы внешней политики СССР, М. 1957, том. 1, стр. 240-241):

2. Անդրկովկասի անկախության հռչակման կապակցությամբ Սովետական Ռուսաստանի արտաքին գործերի ժողկոմի տեղակալ Չիչերինը 1918 թ. մայիսի 11-ին երկու նոտա է հանձնում Գերմանիայի դիվանագիտական ներկայացուցիչ Միրբախին:

Առաջին նոտայում ասվում էր, որ Անդրկովկասի անկախության հռչակման վերաբերյալ Ռուսական կառավարությունը իր ժամանակին հարցում է ուղարկել Թիֆլիս, բայց պատասխան չի ստացել: Անդրկովկասի անջատումը երբեք չի ճանաչվել Ռուսաստանի սովետական կառավարության կողմից:

Նկատի ունենալով այդ հանգամանքը, Չիչերինն առաջարկում էր. «Թուրքական սահմանում Բրեստի պայմանագիրը իրագործելու մասին բանակցությունները վարել միայն ու միայն Ռուսաստանի սովետական կառավարության հետ» (Документы внешней политики СССР, М. 1957, том. 1, стр. 285):

Երկրորդ նոտայում, որը հանձնվել էր նույն օրվա երեկոյան, Չիչերինը հայտնում է, որ սովետական կառավարությունը Թուրքական և գերմանական դեսպանորդներին մատնացույց է արել, որ Անդրկովկասի անջատումը չի ճանաչվել սովետական կառավարության կողմից: «Մենք,-գրում էր Չիչերինը,- արդեն գերմանական և Թուրքական կառավարություններին Մոսկվայում գտնվող իրենց ներկայացուցիչների միջոցով առաջարկել ենք Բրեստի պայմանագրի իրականացման վերաբերյալ բանակցությունները վարել մեզ

*հետ» (**նույն տեղը**):*

*3. Արևելքում գերմանական զորքերի գլխավոր հրամանատարից ստացված ռադիոգրի առթիվ 1918 թ. մայիսի 11-ին Լենինը Ղրիմի օկուպացման դեմ գերմանական կառավարությանը ուղարկած վճռական բողոքում նշում է. «Մենք մի անգամ ևս համառորեն խնդրում ենք գերմանական կառավարությանը՝ հաղորել մեզ, թե արդյոք նա կանգնա՞ծ է Ուկրաինայի, Ֆինլանդիայի և Թուրքիայի հետ հաշտությունը ցանկալի լինելու դիրքի վրա և ինչպիսի՞ քայլեր է ինքը ձեռնարկել ու կձեռնարկի այդ նպատակով» (**Վ. Ի. Լենին**, ԵԼԺ, հ, 36, էջ 392):*

*Լենինի այս բողոքի հիման վրա 1918 թ. մայիսի 13-ին Չիչերինը Միրբախին հանձնած նոտայում հայտնում է. «Քանի որ պետք է համաձայնություն ձեռք բերվի Կովկասում ռազմական գործողությունները դադարեցնելու մասին, ապա սովետական կառավարությունն ընդունում է գերմանական դիվանագիտական ներկայացուցիչ Միրբախի առաջարկությունը սովետական կառավարության և այսպես կոչված անդրկովկասյան կառավարության միջև միջնորդությունը, առավելապես, որ Գերմանիան ու Թուրքիան հանդիսանում են Անդրկովկասի քաղաքական իրադարձությունների փաստացի մասնակիցներ» (*Документы внешней политики СССР*, М. 1957, том. 1, стр. 296):*

1918 թ. մայիսի 14-ին Միրբախը պատասխանելով Չիչերինի նոտային, առաջարկում է գրավոր ներկայացնել սովետական կողմի պահանջներն ու ցանկությունները, այսպես կոչված Անդրկովկասյան կառավարության վերաբերյալ:

4. Մայիսի 15-ին Չիչերինը նոտայով տեղեկացնում է սովետական կողմի հետևյալ պահանջը. «Անհրաժեշտ է Սովետական Ռուսաստանի կառավարության լիազոր ներկայացուցչին մասնակից դարձնել Բաթումում ընթացող բանակցություններին, որոնք վարվում են մի կողմից գերմանական և օսմանյան կառավարությունների, մյուս կողմից այսպես կոչված անդրկովկասյան կառավարության միջև»:

*Միաժամանակ Չիչերինն հայտնում էր, որ պնդելով սովետական ներկայացուցչի մասնակցությունը Բաթումում ընթացող բանակցություններին, ժողովրդական կոմիսարիատն ընդգծում է, որ դրանով ոչ մի կերպ չի ենթադրվում Ռուսական կառավարության կողմից այսպես կոչված անդրկովկասյան կառավարության ճանաչում, ընդ որում առանց նրա մասնակցության կնքված պայմանագիրը նա չի ճանաչի (**նույն տեղը**, էջ 302-303):*

Սովետական Ռուսաստանի պահանջը մնում է անհետևանք և նա չի ճանաչում Բաթումի պայմանագիրը:

5. 1918 թ. մայիսի 22-ին Չիչերինը համաձայնվում է Բրեստի պայմանագրից բխող Կովկասի դրության վերաբերյալ դեռևս չպարզված հարցերի շուրջ Մոսկվայում հատուկ հանձնաժողով հրավիրելու գերմանական կողմի ցանկությանը: Նույն օրը Միրբախը հայտնում է Չիչերինին, որ Զիսենկելու գլխավորած անդրկովկասյան կառավարությունը ուղարկում է իր ներկայացուցչին բանակցելու Անդրկովկասի անկախությունը ճանաչելու շուրջ:

*6. Մայիսի 23-ին Չիչերինը Միրբախին հանձնած պատասխան նոտայում հիշեցնում է նախորդ նոտաներում բարձրացված հարցերի մասին և նորից ընդգծում է, որ առանց Ռուսաստանի մասնակցության Բաթումում կնքվող պայմանագիրը նրա կողմից չի ճանաչվելու: Միաժամանակ Չիչերինը հայտնում է, որ համաձայն է Զիսենկելու ներկայացուցչի հետ բանակցություն վարել և ընդգծում է, որ դա չի նշանակելու «այսպես կոչված անդրկովկասյան կառավարության ճանաչում», որը հակասում է անդրկովկասյան բնակչության մեծամասնության ցանկություններին (**նույն տեղը**, էջ 316-317):*

7. 1918 թ. մայիսի 26-ին Բաթումի բանակցությունների ժամանակ թուրքերը Բաքվի սովետի կողմից մուսուլմանական բնակչությանը նեղելու պատրվակով նրանց օգնելու, ինչպես նաև զորքերը պարսկական ռազմաճակատ տեղափոխելու համար մենշևիկյան Վրաստանի ներկայացուցիչներից ուլտիմատումով պահանջում են «ապահովել Կովկասի վրայով թուրքական զորքերի ազատ անցումը երկաթուղով, որքան հնարավոր է արագ կերպով»:

Մենշևիկյան Վրաստանը բավարարում է թուրքերի պահանջը և իր տարածքով թույլ է տվել Բաքվի վրա հարձակվելու և Պարսկաստան անցնելու համար նախատեսված թուրքական զորքերին:

*Այս կապակցությամբ 1918 թ. մայիսի 31-ին Չիչերինը գերմանական դիվանագիտական ներկայացուցչին հեռագրում է հետևյալը. «Արևելյան Անդրկովկասը Բաքվի հետ միասին ամբողջությամբ մերն է: Այժմ թուրքական հրամանատարությունն Անդրկովկասից պահանջել է իրեն հանձնել ամբողջ երկաթուղին: Հայտարարում է, թե թուրքերը գնում են Բաքվի վրա, որտեղ իբր թե մուսուլմանները օգնություն են պահանջում: Այնտեղ ամեն մի ծագում ունեցող ժողովրդական մասսաները մեր կողմն են: Դա Պայմանագրի կտրուկ խախտում է, դա հակասում է Գերմանիայի հավաստիացումներին» (**նույն տեղը**, էջ 338):*

8. 1918 թ. հուլիսի 7-ին Լենինը հեռագրում է Ցարիցինում գտնվող Ստա-

լինին. «Բաքվի վերաբերյալ ամենակարևորը, որպեսզի դուք Շահումյանի հետ լինեք անընդհատ կապի մեջ և որպեսզի Շահումյանը իմանա Բեռլինում դեսպան Իոֆֆեին արված գերմանացիների պահանջն այն բանի վերաբերյալ, որ գերմանացիները համաձայնվել են Բաքվի վրա թուրքերի հարձակումը կասեցնել, եթե մենք գերմանացիներին երաշխավորենք նավթի մի մասը: Իհարկե, մենք կհամաձայնվենք: Այսպես, եղեք անխնա ձախ էսէռների դեմ և հաճախ հաղորդեք» (Վ. Ի. Լենին, ԵԼԺ, հ. 36, էջ 415):

*1918 թ. հուլիսի 22-ին Լենինը հեռագրում է Շահումյանին. «Կարող եմ միայն պաշտպանել Ստալինի հեռագիրը Բաքվի սովետի նարոդնիկական ֆրակցիայի Սովետների 5-րդ համագումարի կամքի վերաբերյալ» (**նույն տեղը**, էջ 402):*

*9. 1918 թ. հուլիսի 25-ին Չիչերինը Գերմանիայի դիվանագիտական ներկայացուցչին հանձնած նոտայում հայտնում է, որ չնայած Գերմանիայի վստահեցմանը գերմանա-թուրքական զորքերը շարժվում են Բաքվի վրա և գտնվում են արդեն Շամախիում: «Մենք,-ասվում էր նոտայում,- ամենաեռանդուն կերպով բողոքում ենք Բրեստի պայմանագրի այդ խախտման և Սովետական կառավարությանն անսասան հավատարիմ Բաքվի մարզի վրա ուղղված այդ գրոհի դեմ: Մենք հաստատ հույս ունենք, որ գերմանական կառավարությունը կկարգադրի կանգնեցնել այդ զորքերի առաջ շարժվելը և վերջ կդնի մեր տարածքի անձեռնմխելիության նկատմամբ այդ հանցավոր ձգտմանը» (*Документы внешней политики СССР, М. 1957, том. 1, стр. 410):

10. 1918 թ. օգոստոսի 2-ին Չիչերինը գերմանական ներկայացուցիչ Հեր Ֆերիին հանձնած նոտայում հայտնում է, որ Կովկասից ստացված հաղորդումը ճշտում է Բաքվի վրա հարձակվող բանակի մասին, որին կից մի քանի շաբաթ առաջ կազմավորված այսպես կոչված կամավորական բանակային կորպուսն իր մեջ է ներառել նախկին «վայրենի դիվիզիայի» մնացորդներին:

*Հայտնվում էր նաև, որ այդ դիվիզիայի մնացորդները ձուլվել են կանոնավոր թուրքական բանակի գումարտակների հետ և բացի դրանից, թուրքերը օկուպացված շրջաններում բռնությամբ մուսուլմանական բնակչությանը պարտադրում են տանել զինվորական ծառայություն: Հենց այդ «կամավորական բանակ» կոչվածն է շարժվում Բաքվի վրա: «Մենք,- ընդգծում էր Չիչերինը,- համոզված ենք, որ թուրքական բանակի վերաբերյալ մեզ տված հավաստիացումը վերաբերում է նաև վերը նշված այդ բանակին» (**նույն տեղը**, էջ 416-417):*

11. 1918 թ. օգոստոսի 19-ին Չիչերինը գերմանական հյուպատոսին ուղարկած նոտայում հայտնում է, որ հակառակ գերմանական և թուրքական կառավարությունների տված հայտարարություններին, վերջին շաբաթների ընթացքում թուրքական բանակը շարունակում է հարձակվել, արդեն գրոհում է Բաքվի վրա:

Այնուհետև հայտնելով մղված մարտերի մասին, Չիչերինը գրում է թուրքական զորքերի հրամանատար Շևքեթ փաշայի Բաքուն հանձնելու կոչի մասին:

Նորից վճռական բողոք հայտնելով Բրեստի պայմանագիրը խախտելու դեմ, Չիչերինը զգուշացնում է, որ թուրքական զորքերի կողմից Բաքուն գրավելը կլինի իսկական կատաստրոֆա:

*Նկատի ունենալով Բեռլինում սկսված սովետա-գերմանական բանակցությունները, Չիչերինը հույս էր հայտնում, թե Գերմանիան թույլ չի տա իրականացնել այդ կատաստրոֆան և մատնացույց էր անում, թե Բաքվի նավթը ինչ նշանակություն ունի ոչ միայն Ռուսաստանի, այլև այն երկրների ժողովրդական տնտեսության համար, որոնց հետ Ռուսաստանը պատրաստվում է տնտեսական հարաբերությունների մեջ մտնել (**նույն տեղը**, էջ 428- 429):*

*12. 1918 թ. օգոստոսի 19-ին Բեռլինում Սովետական Ռուսաստանի լիազոր ներկայացուցիչը Գերմանիայի արտաքին գործերի մինիստրին հանձնած նոտայում հայտնելով Բաքվի վրա թուրքական զորքերի շարունակվող հարձակման մասին, համոզմունք է հայտնում, որ գերմանական կառավարությունը միջոցներ կձեռնարկի կասեցնել այդ հարձակումը և զգուշացնում է, որ թուրքերի կողմից Բաքուն գրավելու դեպքում անկասելի կդառնա հայերի կոտորածի վտանգը և Բաքվում կգերազանցեն անպրոսեր տրամադրությունները (**նույն տեղը**, էջ 430-431):*

13. 1918 թ. օգոստոսի 21-ին Լենինը և Չիչերինն Ատրպատականի սովետի նախագահին ուղարկած հեռագրով հանձնարարում են Բաքու՝ Շահումյանին հաղորդել հետևյալը. «Գերմանացիները տնտեսական որոշ զիջումներ ստանալով, համաձայնվել են չգրավել Բաքուն ու Բաքվի գավառը: Անհրաժեշտ է ամեն գնով Բաքվից հեռացնել անգլիացիներին: Այդ դեպքում մեզ համար ապահովված է Բաքուն և Բաքվի գավառը, թուրքերի հեռացումն այդտեղից և Գերմանիայի պարտավորությունը՝ չգրավել Բաքուն: Այդ մասին Գերմանիայի հետ կնքված է համաձայնագիր»:

14. 1918 թ. օգոստոսի 27-ին Բեռլինում Սովետական Ռուսաստանի և Գերմանիայի ու նրա դաշնակիցների միջև կնքված Բրեստի պայմանագրին

որպես լրացում ստորագրվում է ռուս-գերմանական պայմանագիր:

Այս լրացուցիչ պայմանագրի 6-րդ գլխի 13 և 14-րդ հոդվածները վերաբերում էին Կովկասին: 13-րդ հոդվածով Ռուսաստանը հայտարարում էր իր համաձայնությունն այն մասին, որ Գերմանիան ճանաչում է Վրաստանին որպես ինքնուրույն պետական մարմին:

14-րդ հոդվածով Գերմանիան որևէ երրորդ պետության աջակցություն ցույց չի տա Կովկասում Վրաստանի կամ Բրեստի պայմանագրի 4-րդ հոդվածի 3-րդ պարբերության մեջ հիշատակված օկրուգների (Արդահան, Կարս, Բաթում) սահմաններից դուրս ռազմական գործողություններին: Գերմանիան իր ազդեցությունը կներգործի, որպեսզի Կովկասում երրորդ պետության մարտական ուժերը չանցնեն հետևյալ գծից. Կուրի գետաբերանից մինչև Շամախիի գավառի և Բաքվի նահանգի սահմանագծի հատման կետը:

*Իսկ Ռուսաստանը իր ուժերի չափով կաջակցի, որպեսզի Գերմանիան ստանա Բաքվում արտադրվող նավթի մեկ քառորդ մասը: Դրա փոխարեն Գերմանիան պարտավորվում էր Ռուսաստանին հատկացնել քարածուխ օկուպացված Դոնբասից (**նույն տեղը**, էջ 443-444):*

15. 1918 թ. սեպտեմբերի 2-ին Չիչերինը Համառուսաստանյան Կենտգործկոմի նիստում զեկուցում է լրացուցիչ պայմանագրի մասին: Նա ասում է, որ Ռուսաստանը չի ճանաչում Վրաստանի ինքնուրույնությունը, բայց համաձայնվում է դրա ճանաչմանը Գերմանիայի կողմից:

*«Մյուս կողմից,- շարունակում է Չիչերինը,- Ռուսաստանին է մնում Բաքվի գավառը և Գերմանիան ձգտելու է, որպեսզի երրորդ երկիրը՝ Թուրքիան չանցնի այդ գավառի սահմանային գիծը: Պետք է նկատի ունենալ, որ բուրժուազիայի և համաձայնողականների դավաճանությունը Բաքվում և նրանց կողմից անգլիացիների հրավիրումը ուժգին կերպով մեզ համար դժվարացնում է մեր դրությունը այդ հոդվածը իրականացնելու գործում» (**նույն տեղը**, էջ 465):*

*16. 1918 թ. սեպտեմբերի 12-ին Բեռլինում Սովետական Ռուսաստանի լիազոր ներկայացուցիչը նոտա է հանձնում Գերմանիայի արտաքին գործերի մինիստրությանը, հայտնելով, որ Ռազմա-Վիրական ճանապարհի վրա կանգնած գերմանական զորքերը խախտելով ստորագրված Լրացուցիչ պայմանագիրը, փակել են սովետական զորքերի ճանապարհը, որոնք առաջադրանք ունեն ազատագրել Բաքուն անգլիացիներից (**նույն տեղը**, էջ 477-478):*

17. Պետք է նշել, որ Գերմանիան Սովետական Ռուսաստանի բոլոր նոտաներին չէր պատասխանում կամ էլ տալիս էր խուսափողական պատասխան: Այդ մասին է վկայում 1918 թ. սեպտեմբերի 20-ին սովետական լիազոր-ներ-

*կայացուցչին Գերմանիայի արտաքին գործերի մինիստրության վերբալ (բանավոր) նոտան (**նույն տեղը**, էջ 497):*

18. 1918 թ. սեպտեմբերի 20-ին Չիչերինը նոտա է ուղարկում Թուրքիայի արտաքին գործերի մինիստրին: Սակայն այդ ժամանակ թուրքական դեսպանը Մոսկվայում չէր գտնվում, իսկ սովետական ներկայացուցիչն էլ բացակայում էր Թուրքիայից, սովետական նոտան Գերմանիայի վրայով Թուրքիա է հասցվում միայն հոկտեմբերի 5-ին:

Իր նոտայում Չիչերինը նշում է, որ Թուրքիան խախտում է Կարսի, Արդահանի և Բաթումի օկրուգների վերաբերյալ Բրեստի պայմանագիրը, որով այդ օկրուգների կարգավիճակը պետք է որոշվեր բնակչության ազատ կամքի արտահայտությամբ: Սակայն այդ օկրուգներում, թուրքական զորքերի օկուպացումից հետո, մտցվել է ռազմական օկուպացիայի ռեժիմ, ուղեկցվում է թալանով և խաղաղ բնակչության նկատմամբ կիրառվում են անթույլատրելի բռնություններ: Միաժամանակ բռնի կերպով հավաքագրվում է 19 տարեկանից բարձր տղամարդ բնակչությունը:

Չիչերինն ընդգծում էր նաև, որ բնակչությունը ենթարկվում է ահաբեկման և այդպիսի պայմաններում նրան տրված կամքի ազատ արտահայտելու իրավունքը վերածվել է բացահայտ ծաղրի: Քվեարկության նախօրյակին հեղինակավոր քաղաքացիները, որոնց ազդեցությունը կարող էր լինել ոչ Թուրքիայի օգտին, աքսորվել են, ձերբակալվել են և շատ դեպքերում նույնիսկ գնդակահարվել են: Քվեարկությունն ընթացել է բացահայտորեն թուրքական իշխանությունների հսկողությամբ: Այդպիսի պայմաններում քվեարկության արդյունքները չէին կարող որոշված չլինել:

Այնուհետև Չիչերինը հայտնում էր. «Գոնելով, որ Ռուսաստանից անջատված այդ օկրուգների բնակչության նկատմամբ այդպիսի բռնությունը Պայմանագրի 4-րդ հոդվածի էական խախտում է, Սովետական կառավարությունը սույնով հայտարարում է, որ նա չի կարող համաձայնվել Կարսի, Արդահանի և Բաթումի օկրուգների բնակչության այսպես կոչված ազատ կամքի արտահայտության արդյունքների հետ և իրենց մարզերում նոր կարգ հաստատելու այդ բնակչության իրավունքը համարում է չօգտագործված և նշված օկրուգներում նոր կարգի հարցը համարում է բաց»:

«Հաշտության պայմանագրով,- շարունակում է Չիչերինը,- ռազմական գործողությունները Ռուսաստանի և Թուրքիայի միջև դադարեցվել են, բայց Թուրքիայի կողմից ռազմական գործողությունները վերսկսվել են ու այժմ ընթանում են: Թուրքական կանոնավոր զորքերը ավազակախմբերի հետ մի-

ատին զբաղեցնում են Սովետական Հանրապետության տարածքները, քաղաքներն ու գյուղերը ենթարկելով թալանի ու ավերածության, գնդակահարելով կամ բռնություններ կիրառելով քրիստոնյա բնակչությանը, չբացառելով կանանց ու երեխաներին:

Սովետական կառավարությունը բազմիցս բողոքել է Թուրքիայի կողմից չարունակվող ռազմական գործողությունների դեմ, բայց այդ բոլոր բողոքները մնացել են անարդյունք: Վերջապես սույն թվի հուլիսին թուրքական բանակը ձեռնարկում է արշավանք Բաքվի վրա և հակառակորդի գերազանց ուժերի դեմ սովետական զորքերի հերոսական դիմադրությունից հետո, իր համար ճանապարհ է բացում դեպի այդ քաղաքը, որը Սովետական Հանրապետության կարևորագույն քաղաքներից մեկն է:

Սովետական կառավարության բոլոր բողոքներին Օսմանյան կառավարության ներկայացուցիչները պատասխանել են ուղղակի ժխտելով թուրքական հարձակման փաստը կամ պառհատարանում են, թե իբր Բաքվի շրջանում գործում են միայն տեղական բնակիչներից կազմված անկանոն ավազակախմբերը, այն դեպքում, երբ Բաքվի վրա հարձակումը կատարել է թուրքական կանոնավոր բանակը և հուլիսի 30-ին քաղաքը հանձնելու պահանջով Բաքվի բնակչությանն է դիմել Շևքեթ փաշան:

Այժմ, երբ Բաքուն գրավված է և թուրքական զորքերը գտնվում են քաղաքում, երբ անպաշտպան բնակչությունը և ամբողջ քաղաքը մի քանի օր չարունակ թուրքական զորքերի և նրանց միացած թաթարական ավազակախմբերի կողմից ենթարկվում են կործանման ու թալանի սարսափներին, թուրքական ներկայացուցիչների պատասխանը, թե իբր Բաքվի վրա հարձակումը կատարել են միայն տեղական ավազակախմբերը, չեն համապատասխանում իրականությանը: Թուրքիան, կոծկելով իր բռնի գործողությունները, սիստեմատիկ կերպով խախտում է Բրեստ-Լիտովսկի պայմանագիրը և տեղի է ունենում Սովետական Հանրապետության տարածքների ուղղակի զավթում ու թալան:

Օսմանյան կառավարությունը անցած կես տարվա ընթացքում անընդհատ խախտել է Բրեստ-Լիտովսկի պայմանագիրը, չնայած Սովետական կառավարության բոլոր բողոքներին: Այժմ նա զավթել ու սարսափելի թալանի է ենթարկել Ռուսական Հանրապետության կարևորագույն քաղաքներից մեկը: Օսմանյան կառավարությունը դրանով ցույց է տվել, որ Ռուսաստանի և Թուրքիայի միջև Բրեստ-Լիտովսկի պայմանագիրն արդեն գոյություն չունի:

Ռուսաստանի սովետական Ֆեդերատիվ Հանրապետության կառավարությունը հարկադրված է ընդունել, որ Օսմանյան կառավարության գործողությունները փաստորեն վերացրել են Ռուսաստանի և Թուրքիայի միջև խաղաղ հարաբերություններ հաստատած Բրեստ-Լիտովսկի պայմանագիրը» (**նույն տեղը**, էջ 490-492):

19. 1918 թ. սեպտեմբերի 21-ին Չիչերինը գերմանական դիպլոմատ հյուպատոսին ուղղված նոտայով հիշեցնում է Լրացուցիչ պայմանագրի 14-րդ հոդվածով Գերմանիայի ստանձնած պարտավորությունը՝ թույլ չտալ երրորդ պետությանը ռազմական գործողություններ սկսել Բաքվի ուղղությամբ և այդ կապակցությամբ զգուշացրել է Բաքվի վրա հարձակման վտանգի մասին: Նա նշում է, որ ի պատասխան այդ ամենի, գերմանական կողմը ժխտել է թուրքական հարձակման փաստը կամ էլ խոստացել է այդպիսի հարձակման դեպքում կասեցնել այն: Սակայն Գերմանիան որևէ միջոց չի ձեռնարկել (**նույն տեղը**, էջ 492-493):

Իր հերթին սովետական լիազոր-ներկայացուցիչը 1918 թ. սեպտեմբերի 21-ին Գերմանիայի արտաքին գործերի մինիստրությանը հանձնած նոտայում նկատի ունենալով, որ գերմանական մամուլում «բավականությամբ հաղորդվում է Բաքուն թուրքերի կողմից գրավելու լուրը», նշում է հետևյալը. «Ռուսաստանի կառավարական շրջանակը և ռուս ժողովուրդը լիակատար կերպով համոզված էին, որ Գերմանիայի խոստացած ներգործությունը կլիներ այնքան արդյունավետ, որ որևէ երրորդ տերության զինված ուժերը չէին համարձակվի անցնել սահմանված գիծը: Այն փաստը, որ Թուրքիայի զինված ուժերն անցել են այդ գիծը և որ Բաքուն օկուպացված է, անպատելի են եղել Ռուսաստանի համար և դրան համապատասխան ռուսական կառավարական շրջանակներում դրան տրվում է արտակարգ լուրջ նշանակություն»:

Նոտայում ընդգծվում էր նաև հետևյալը. «Հաշվի առնելով Բաքվի համբահայտ նշանակությունը ռուսական առևտրի և ռուսական արդյունաբերության համար, այդ իրողությունը չի կարող ռուս-գերմանական համաձայնության համար առանց հետևանքի մնալ» (**նույն տեղը**, էջ 494-496):

20. 1918 թ. սեպտեմբերի 20-ի սովետական նոտան ստանալուց հետո Բեռլինում գտնվող Թուրքիայի մեծ վեզիր Թալեաթ փաշան ցանկություն է հայտնում հանդիպել սովետական լիազոր-ներկայացուցիչ Ա. Իոֆֆեին և բանակցել նրա հետ:

1918 թ. սեպտեմբերի 21-ին սկսվում են այդ բանակցությունները: Սովետական ներկայացուցիչն առաջարկում է Կովկասում ստեղծված կոնֆլիկտը խաղաղորեն լուծելու հետևյալ պայմանները.

Առաջին. Թուրքիան կանոնավոր, ոչ կանոնավոր իր բոլոր զորքերը՝ ամբողջ զինվորական հանդերձանքով, և թուրքական բոլոր կամավորներին, ինչպես նաև թուրքական քաղաքացիական չինովնիկներին հեռացնում է մինչև Բրեստի պայմանագրով հաստատված սահմանը:

Երկրորդ. Բրեստի հաշտության պայմանագրի խախտումով թուրքական զորքերի կողմից Ռուսաստանին պատճառած վնասները պարզելու համար ստեղծվում է հատուկ միջազգային հանձնաժողով:

Երրորդ. Երկու կողմերը դիմում են գերմանական կայսերական կառավարությանը՝ սույն պարտավորությունների իրականացումը երաշխավորելու խնդրանքով:

Թալեաթը համաձայնվում է զորքերը հեռացնել Բաքվից և ընդհանրապես Կովկասից մինչև Բրեստի պայմանագրով հաստատված սահմանը: Բայց նա միաժամանակ մերժում է ընդունել այն պայմանը, որով թուրքական զորքերից մաքրված տարածքները պետք է անմիջապես հանձնվեին սովետական իշխանություններին (**նույն տեղը**, էջ 727):

21. 1918 թ. հոկտեմբերի 3-ին Բեռլինում Թուրքիայի դեսպան Ռիֆաաթ փաշան նոտայով ներկայացնում է արձանագրության նախագիծը, որով հայտնվում էր, թե Օսմանյան կառավարությունն արդեն սկսել է իր զորքերը հեռացնել մինչև Բրեստի պայմանագրով հաստատված սահմանը, սակայն դրա մեջ բացակայում էր թուրքերի էվակուացված տարածքներն անմիջապես սովետական իշխանություններին հանձնելու մասին կետը:

Սովետական կողմի առաջ քաշած հիմնական պայմանները չընդունելու կապակցությամբ Ռուսաստանի լիազոր-ներկայացուցիչը 1918 թ. հոկտեմբերի 3-ին, ի պատասխան թուրքական դեսպան Ռիֆաաթ փաշայի նոտայի, նորից հիշեցնում է Թալեաթին ներկայացրած վերոհիշյալ պայմանները և հայտնում է, որ Մեծ վեզիրը հայտարարել է, թե առանց իր ընկերների հետ խորհրդակցելու չի կարող պատասխան տալ: Թալեաթը Բեռլինից մեկնելու նախօրյակին հայտնել է, որ Օսմանյան կառավարության պատասխանը սովետական կողմին կտրվի 1918 թ. սեպտեմբերի 30-ին: Կ. Պոլսից Թալեաթը հեռագրով խնդրում է պատասխանը հետաձգել մինչև հոկտեմբերի 2-ը, քանի դեռ չի հասցրել խորհրդակցել իր ընկերների հետ:

Իոֆֆեն նկատի ունենալով թուրքական զորքերը հեռացնելու մասին հաղորդումը, իր նոտայում գրում է, որ իր տված այն հարցին, թե թուրքական դեսպանի պատասխանը նշանակո՞ւմ է արդյոք, որ Թուրքիան հեռացնում է թուրքական ոչ կանոնավոր զորքերը և ընդունում է առաջադրված մյուս

պայմանները, դեսպանը չի պատասխանել՝ իր կառավարությունից համապատասխան ցուցում չստանալու հետևանքով:

Հաշվի առնելով Թուրքիայի կողմից պայմանների մերժումը, Իոֆֆեն նոտայով տեղեկացնում է, որ Սովետական կառավարության հանձնարարությամբ դադարեցնում է Մեծ վեզիրի հետ սկսած բանակցությունների շարունակումը (**նույն տեղը**, էջ 509-510):

22. 1918 թ. հոկտեմբերի 7-ին Սվերդլովի և Լենինի ստորագրությամբ հետևյալ հեռագիրն է ուղարկվում Իոֆֆեին. «Համաձայն չենք ստորագրել թուրքական արձանագրությունը, մինչև Բաքուն մեր իշխանություններին հանձնելը չընդունվի, որովհետև առանց այդ կետի բոլոր հիմքերը կան կարկածելու՝ գաղտնի համաձայնությունների գոյությունն Անտանտի հետ Բաքուն նրա ձեռքը հանձնելու մասին» (**նույն տեղը**, էջ 513; **Վ. Ի. Լենին**, ԵԼԺ, հ. 50, էջ 437):

Առաջ անցնելով հարկ է նշել, որ Լենինի և Սվերդլովի կասկածները հիմք ունեին: 1918 թ. հոկտեմբերի 30-ին թուրքական կառավարությունն Անտանտի տերությունների հետ կնքված Մուդրոսի դաշնագրով համաձայնվել էր Բաքուն Անտանտի կողմից օկուպացնելու մասին: 1918 թ. նոյեմբերին այդ համաձայնության համապատասխան թուրքերը իրենց զորքերը հանեցին Բաքվից և քաղաքը հանձնեցին Անտանտին:

23. 1918 թ. հոկտեմբերի 10-ին Չիչերինը Թուրքիայի արտաքին գործերի մինիստր Նեսիմի բեյին ուղարկած նոտայում նորից բողոքում է Կարսի, Արդահանի և Բաթումի մարզերում թուրքական ռազմական իշխանությունների կողմից տեղական բնակչության նկատմամբ գործադրած գազանային հաշվեհարդարի դեմ: Չիչերինը նշում է նաև, որ այդ մարզերում կատարված հանրաքվեն տեղական բնակչության ազատ կամքի արտահայտություն չի կարող լինել, քանի որ ամբողջությամբ կեղծվել է իրական պատկերը:

Չիչերինն ընդգծում է, որ Անդրկովկասում թուրքական իշխանությունների գործողություններն ամբողջովին խախտում են Բրեստի պայմանագիրը: Նկատի ունենալով, որ դեպի Բաքու թուրքական զորքերի արշավանքը թուրքական կառավարությունն արդարացնում է Բաքուն գրավելու անգլիացիների սպառնալիքով, Չիչերինը դա համարում է պատրվակ Բաքուն զավթելու համար, քանի որ անգլիական փոքրաթիվ ջոկատն անկարող էր որևէ դիմադրություն ցույց տալ և իսկույն հեռանում է Բաքվից հենց որ թուրքական զորքերը սկսում են Բաքվի գրոհը:

Չիչերինը վճռական բողոք հայտնելով, նորից թուրքական կողմից պար-

*հանձում է զորքերը հեռացնել մինչև Բրեստի պայմանագրով նշված սահմանը (**նույն տեղը**, էջ 514-516):*

Բրեստի պայմանագրի կնքումից հետո մինչև դրա չեղյալ հայտարարելը Սովետական Ռուսաստանի արտաքին գործերի ժողկոմատը գերմանական կառավարությանը ուղարկում է տասնյակ ու տասնյակ բողոքներ այն մասին, որ Գերմանիան խախտում է նաև Հյուսիսային Կովկասի, Ուկրաինայի, Բելոռուսիայի, Մերձբալթիկայի, Բալթիկ և Սև ծովերի վերաբերյալ Բրեստի պայմանագրով ընդունած պարտականությունները:

Բոլոր այդ բողոքները գերմանական կառավարությունը նույնպես թողնում է անհետևանք և զանազան պատրվակներով հրաժարվում է կամ ձգձգում դրանք կատարել:

Ես միայն շատ համառոտ ընթերցողին ներկայացրեցի Անդրկովկասի վերաբերյալ Բրեստի պայմանագիրը ստորագրելու և դրանից հետո տեղի ունեցած իրադարձությունները: Դրանք չի կարելի անտեսել և բավարարվել միայն Սովետական Ռուսաստանին մեղադրելով Բրեստի պայմանագիրը ստորագրելու համար:

Կա՞ր այլընտրանք Բրեստի պայմանագիրը չստորագրելու համար: Իհարկե, կար: Բրեստի պայմանագիրը չստորագրելու դեպքում գերմանական զորքերը ունեին հնարավորություն իրենց նվաճումներով հասնել Պետրոգրադ և Մոսկվա, քանի որ Ռուսաստանն անկարող էր որևէ լուրջ դիմադրություն ցույց տալ:

Նույնը վերաբերում է նաև Անդրկովկասին:

6. ԲՐԵՍՏ-ԼԻՏՈՎՍԿԻ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ

Այժմ փորձենք անդրադառնալ այն հարցին, թե Բրեստ-Լիտովսկի պայմանագիրն ինչ հետևանքներ է ունեցել Հայաստանի տարածքների կորստի խնդրում:

Մամուլում, հատկապես վերջերս, շատ է գրվում ու խոսվում այն մասին, որ այդ պայմանագրով Սովետական Ռուսաստանը Թուրքիային «ծախեց» հայ ժողովրդի շահերը:

Ավելին, սևեռուն կերպով այն միտքն է արտահայտվում, թե այդ պայմանագրով Ռուսաստանը Թուրքիային հնարավորություն տվեց գրավել Արևմտյան Հայաստանը:

Ես բոլորովին հակում չունեմ ժխտել այն չափազանց աննպաստ դերը, որ

հայ ժողովրդի համար խաղացել է այդ պայմանագիրը:

Ինչպես երևաց պայմանագրի 4-րդ հոդվածի բովանդակությունից, դրա իրականացումը դրվում էր Ռուսաստանի վրա: Բայց Սովետական Ռուսաստանը զրկված էր այդ հնարավորությունից, քանի որ Կովկասյան ռազմաճակատի հրամանատարությունը հրաժարվում էր ենթարկվել Ռուսաստանի կենտրոնական կառավարությանը: Իր հերթին Անդրկովկասի կոմիսարիատն էլ վարում էր Ռուսաստանից անջատվելու քաղաքականություն:

Իրականում Բրեստ-Լիտովսկի պայմանագիրն իրագործում էր հենց Անդրկովկասյան կոմիսարիատը, որը չճանաչելով Սովետական Ռուսաստանին, զինադադարի առանձին բանակցություն էր վարում թուրքերի հետ, համաձայնելով Բրեստ-Լիտովսկի պայմանագրին:

*Ս. Վրացյանը գրել է. «Նոյեմբերի 17-ին Կովկասեան ռուս բանակի հրամանատարը... Վեհիբ փաշայից նամակ առացաւ զինադադար կնքելու առաջարկութեամբ: Նոյն օրերին, բոլշեւիկների նախաձեռնութեամբ, զինադադարի բանակցութիւններ էին սկսուած եւ ռուս-աւստրեւզերման ռազմաճակատում: Անդրկ. կոմիսարիատը յեղափոխական կենտրոնի ու հրամանատարութեան համաձայնութեամբ, ընդունեց թիւրքական առաջարկը եւ ռազմաճակատ ուղարկեց 5 հոգինոց մի յանձնախումբ- 2 ռուսներ հրամանատարութեան կողմից եւ Ա. Ջամալեան, վրացի Թեւզայա եւ ռուս Սմիրնովը, որպես Անդր. կոմիսարիատի ներկայացուցիչներ: Հանդիպումը երկու պատուիրակութիւնների միջեւ տեղի ունեցաւ դեկտեմբեր 2-ին, Երզնկայում, իսկ դեկտեմբեր 5-ին ստորագրուեց զինադադարի համաձայնութիւնը... կողմերը պարտաւորում էին... եթէ զինադադար կնքուէր նաեւ կենտրոնական պետութիւնների եւ Ռուսաստանի միջեւ, նրա բոլոր պայմանները պետք է լինէին պարտադիր Կովկասեան ճակատի համար եւս: Եւ որովհետեւ դեկտեմբեր 5-ին լուր էր ստացել, որ նախորդ օրը զինադադար էր կնքուել եւ Ռուսաստանի ու կենտրոնական պետութիւնների միջեւ, պատերազմական գործողութիւնները կանգ առին ոչ միայն Կովկասեան, այլեւ ամբողջ պարսկական գծի ու Սեւ ծովի վրայ:.. Անդրկ. կոմիսարիատը իր քայլի մասին անմիջապէս տեղեկացրեց եւ Միջագետքի անգլիական հրամանատարութեան ու Թիֆլիսի դաշնակից ներկայացուցիչներին» (**Ս. Վրացյան**, Հայաստանի հանրապետութիւն, էջ 46-47):*

Ինչպես տեսնում ենք, Թուրքիան վաղօրոք գիտեր, թե ինչ էր պնդելու Բրեստ-Լիտովսկի բանակցությունների ժամանակ, իսկ Անդրկովկասյան կոմիսարիատն էլ իր գործողությունների մասին զեկուցում էր անգլիացիներին, նույնիսկ հարկ չհամարելով ստորագրված զինադադարի մասին տեղեկացնել

Ռուսաստանի կենտրոնական կառավարությանը:

Թուրքական կողմին այս քայլը տվել է ցանկալի արդյունք: Դրան հետևում է երկրորդը: 1918 թ. հունվարի մեկին Վեհիբ փաշան առաջարկում է սկսել հաշտության բանակցություններ:

*Դարձյալ դիմենք Ս. Վրացյանին: Ահա, թե ինչ է գրում նա. «Անդրկովկասեան կոմիսարիատը, յեղափոխական կենտրոնի եւ ազգային խորհուրդների ներկայացուցիչների հետ միասին, քննելով Վեհիբ փաշայի առաջարկը՝ պատասխանեց, թէ ինքը պէտք ունի խորհրդակցելու Ռուսաստանի ուրիշ ինքնավար շրջանների հետ եւս եւ 3 շաբաթից կը յայտնէ իր վերջնական որոշումը: Միաժամանակ կոմիսարիատը թիւրքերի առաջարկութեան մասին իմացրեց խորհրդային իշխանութիւնը չճանաչող Ուկրաինայի եւ Հարաւ-Արեւելեան Դաշնակցութեան կառավարութիւններին՝ հրաւիրելով նրանց խորհրդաժողովի փետրուար 1-ին, Թիֆլիսում: Սակայն... պատասխան չտացվեց... Եվ փետրուար 1-ի նիստում, Անդրկ. կոմիսարիատը, համախորհուրդ յեղափոխական կենտրոնի, ազգային խորհուրդների եւ բանակի հրամանատարութեան հետ, որոշեց տեղեկացնել Վեհիբ փաշային, թե ինքը պատրաստ է սկսելու հաշտութեան բանակցութիւնները եւ խնդրում է հաղորդել տեղն ու վայրը, ուր կարող են հանդիպել իրար երկու կողմերի պատվիրակութիւնները» (**նույն տեղը**):*

Ինչպես պարզվում է, հաշտության բանակցությունների հարցում ևս անտեսվում էր Սովետական Ռուսաստանը:

*Իսկ ի՞նչպես էր վերաբերվում Անդրկովկասյան կոմիսարիատը Բրեստ-Լիտովսկի բանակցություններին: Չեռնպահ մնալով կարծիք հայտնելուց, այս անգամ էլ դիմենք Ս. Վրացյանին: «Ստացուեց, գրում է նա,- մի անթել հեռագիր Բրեստ-Լիտովսքի բոլշեւիկեան պատուիրակութեան քարտուղար Կարախանից, որ ասում էր. «Համեմատած փետրվար 21 վերջնագրի հետ նոր առաջարկը պարունակում է վերջնագրի ժամանակակէտ: Այդ պատճառով, այլեւս որովհետեւ գերմանացիները մերժեցին մինչեւ դաշնագրի ստորագրութիւնը դադարեցնել պատերազմական գործողութիւնները, մենք վճռեցինք ստորագրել դաշնագիրը, որի քննութեան մէջ ենք դեռ, եւ ստորագրելուց յետոյ՝ մեկնել: 21 փետր-ի պայմանների ամենալուրջ կէտն է՝ Արդահանի, Կարսի եւ Բաթումի անջատումը Ռուսաստանից՝ ինքնորոշման ձեւի տակ» (**նույն տեղը**):*

«Այս հեռագիրը, -շարունակում է Վրացյանը,-խորին զարմանք ու վրդովմունք առաջ բերեց Սէյմի շրջաններում: Նույն օրն իսկ գումարուեց բոլոր

*ֆրակցիաների եւ կոմիսարիատի անդամների արտակարգ մի ժողով, որը միաձայնութեամբ ընդունեց բողոքի հեռեւեալ հեռագիրը, որ եւ ուղարկուեց անմիջապէս. «Բրեստ-Լիտովսկի՝ հաշտութեան խորհրդաժողովին, Պետրոգրադ՝ Սմոլնարկոմին, Լոնտոն, Փարիզ, Ուաշինկթոն, Հռոմ, Թոքիո. Կ. Պոլիս, Բեռլին, Վիեննա՝ արտաքին գործոց նախարարներին, Քիեւ՝ Կենտրոնական Ռադային, Օտեսա՝ Սովդեպին. - Համաձայն սէյմի վճռի, Անդրկովկասեան կառավարութեան, Անդրկովկասին եւ նրա սահմաններին վերաբերուող ամէն մի դաշնագիր, որ կնքուում է առանց իր գիտութեան ու մասնակցութեան, համարում է զուրկ միջազգային արժէքից եւ պարտադրեցուցիչ ուժից իրեն համար: Այսու յայտնում է նաեւ ի գիտութիւն հանրութեան, որ Անդրկ. սէյմը արդեն ընտրել է հաշտութեան պատուիրակութիւն, որը, ըստ Թուրքիայի հետ կայացուած նախնական համաձայնութեան, պարտադրում է մեկնել Տրապիզոն վերջնական հաշտութիւն կնքելու նպատակով» (**նույն տեղը**):*

Իսկ ինչպես էր գնահատում Բրեստ-Լիտովսկի պայմանագիրը Շահումյանը: Նա իր տեսակետը հստակորեն արտահայտել է 1918 թ. հունիսի 7-ին Բաքվի սովետի նիստում, պատասխանելով Թիֆլիսում գտնվող իրենց կուսակիցներին պաշտպանող մենշևիկներին:

«Ես կամենում եմ մի քանի բացատրություններ տալ և, նախ և առաջ կանգ առնել Բրեստի չարաբաստիկ պայմանագրի վրա: Մատնանշվեց, որ Անդրկովկասի վրա թափված բոլոր ձախորդությունների պատճառը Բրեստի պայմանագիրն է, և որ հետագայի գործողությունները միայն զուտ վիրաբույժի փորձեր են, որպեսզի բուժեն հիվանդ մարմինը: Կարելի է, իհարկե, ֆրազները մեկը մյուսի ետևից շարել, բայց որպեսզի դրանք կարողանան մասսաների վրա ազդել՝ դրանց ետևում ճշմատություն պետք է թաքնված լինի»:

Այնուհետև նշելով, որ պետությունների միջև փոխհարաբերություններն որոշվում են ոչ թե թղթի կտորներով, այլ ուժերի ռեալ հարաբերակցությամբ, Ստ. Շահումյանն ասում էր հետևյալը. «Ինչ էր խանգարում Անդրկովկասին չիրագործել այդ պայմանագիրը և պաշտպանել իրեն նրանից: Մենք, բոլշևիկներս, երբեք չենք հայտարարել, անգամ երբ ստորագրել ենք այդ պայմանագիրը, որ այստեղ պետք է անպայման այն պահպանել: Մենք այդ պայմանագիրը դիտել ենք որպես պարտադրված պայմանագիր, որը պետք է հաշվի առնենք, քանի որ դիմադրություն ցույց տալու համար պահանջված չափով ուժ չունենք»:

*Իսկ ի՞նչ էր առաջարկում Ստ. Շահումյանը: «Երբ մեր առաջ այստեղ հարց դրվեց, - ասում էր նա,- թե ինչպես վարվել Բրեստի պայմանագրին և պե՞տք է արդյոք մեր կողմից որևէ հայտարարություն արվի Բրեստի պայմանագրի կատարման մասին,- մեր կուսակցությունը միաձայն որոշեց Կարսը, Բաթումը և Արդահանը հանձնելու մասին ոչ մի հայտարարություն չանել, և իրոք ոչ մի հայտարարություն չարինք: Որպես կենտրոնական իշխանության պաշտոնական ներկայացուցիչ, ես անձամբ պետք է հայտնեի իմ կարծիքը, բայց այդ առթիվ մենք հանդես չեկանք, ենթադրելով, որ Կարսն ու Բաթումը պաշտպանելու համար Անդրկովկասը բավականաչափ ուժ ունի: ...Նկատի առնելով նաև, որ մեր դեմ էին շարժվում ոչ թե գերմանական ուժեղ զորքերը, այլ հոգնած ու կազմալուծված թուրքերը, մենք կարծում էինք, որ Անդրկովկասը կարող է իրեն պաշտպանել և չտալ այն, ինչ որ գիջված է Բրեստի պայմանագրով» (**Ստ. Շահումյան**, նույն տեղը, հ. հինգերորդ, էջ 84):*

1918 թ. հուլիսի 16-ին Բաքվի սովետի նիստում Շահումյանը, պատասխանելով Բրեստի պայմանագիրը քննադատող կուսակցությունների ներկայացուցիչներին, նորից անդրադառնում է Բրեստի հաշտությանը և ասում է հետևյալը. «Երբ մեր կառավարությունը ստորագրում էր Բրեստի ամոթալի պայմանագիրը, նա մատնանշում էր, թե այդ բանի պայմանագիրը մենք ստորագրում ենք ոչ այն հույսով, որ մեզ մոտ իրոք խաղաղություն կթագավորի, այլ այն պատճառով, որ հարկադրված էինք այն ստորագրել և, զուցե այդ հաշտությունը ստորագրելով՝ մենք դրանով իսկ կկարողանայինք կանգնեցնել թշնամու հարձակումը»:

*«Սակայն,- շարունակում է Շահումյանը,- Գերմանիային պատերազմ հայտարարելու և այդ պատերազմը մղելու համար անհրաժեշտ է ռեալ ուժեր ունենալ: Մեր կառավարությունը կարծում է, որ այդ ռեալ ուժերը մենք չունենք, որ մենք չենք կարող հեղափոխական պատերազմ մղել, ուստի և չպետք է աքլորանանք և խաղաքարտի վրա դնենք Ռուսաստանի բախտը» (**Ստ. Շահումյան**, նույն տեղը, հ. հինգերորդ, էջ 181-182):*

Իսկ ինչպիսին էր Լենինի վերաբերմունքը Անդրկովկասի հարցում Բրեստի պայմանագրի կապակցությամբ:

Այս մասին Լենինը հանգամանորեն արտահայտվել է 1918 թ. մայիսի 14-ին Համառուսաստանյան կենտգործկոմի և Մոսկվայի սովետի միացյալ նիստում ունեցած ելույթում:

*«Ես,- ասել է Լենինը,- կասեմ նաև միայն այն, որ Կովկասյան սահմանում այդ անորոշ դրությունը ստեղծվել է Գեղեչկորիի կառավարության չափազանց անհերեթի տատանման հետևանքով, մի կառավարություն, որը սկզբում հայտարարեց, թե Բրեստի հաշտությունը չի ճանաչում, իսկ հետո անկախություն հռչակեց, չասելով մեզ, թե որ տարածքի վրա է դա տարածվում: Մենք բազմաթիվ ռադիոհեռագրերով հարցում ենք արել, թե բարեհաճեք հաղորդել՝ ինչ տարածքի եք դուք հավակնում: Անկախություն հավակնելը՝ դա ձեր իրավունքն է, բայց պարտավոր եք, եթե խոսում եք անկախության մասին, ասել, թե որն է այն տարածքը, որ դուք ներկայացնում եք: Դա մի շարթ առաջ էր: Հակայական քանակությամբ ռադիոհեռագրեր են գրվել, բայց ոչ մի պատասխան չկա: Դրանից օգտվում է գերմանական իմպերիալիզմը: Ուստի Գերմանիային և Թուրքիային, որպես օժանդակ պետություն, հնարավորություն է տրվում առաջ շարժվել ու առաջ շարժվել, ոչ մի բանի չպատասխանելով, ոչ մի բանի վրա ուշադրություն չդարձնելով, հայտարարելով՝ մենք կվերցնենք այն, ինչ կկարողանանք վերցնել, մենք չենք խախտում Բրեստի հաշտությունը, որովհետև անդրկովկասյան բանակը այն չի ընդունում, որովհետև Կովկասն անկախ է: Ումի՞ց է անկախ Գեղեչկորիի կառավարությունը: Սովետական հանրապետությունից նա անկախ է, բայց գերմանական իմպերիալիզմից նա մի քիչ կախյալ է, և դա բնական է» (**Վ. Ի. Լենին**, ԵԼԺ, հ. 36, էջ 401):*

Խոսելով կենտրոնական կառավարության վերաբերմունքի մասին, Ստ. Շահումյանն ասում էր հետևյալը. «Երբ մենք հարց դրինք, թե ինչպես կվերաբերվի դրան կենտրոնական կառավարությունը, որը ստորագրել է Բրեստի պայմանագիրը, մեզ համար պարզ էր, որ կառավարությունը կարող է մի այն ողջունել կովկասյան հերոսներին»:

Շահումյանը նշում է, որ Կովկասյան ռազմաճակատում թուրքերը չունեին խոշոր ուժեր և բերում է դաշնակցության տվյալները, ըստ որի Սև ծովից մինչև Պարսկաստան ձգվող ռազմաճակատում թուրքերն ունեին ընդամենը 18-20 հազար հոգնած ու կազմալուծված զորք, որով չէին կարողանա գրավել Անդրկովկասը:

*Իսկապես, Կովկասյան ռազմաճակատում գտնվող թուրքական բանակը կրած ծանր պարտություններից հետո դժվարությամբ էր ուշքի գալիս: Վեհիբ փաշան իր զորքի մասին ասում է. «Հերիֆները գեշ կը կռվին, ձեռքս 12.000 հոգի ունիմ միայն, եռիս բնաւ պահեստի ուժ չունիմ» (**Թուշամատան**, էջ 193):*

Սակայն ռուսական բանակի կազմալուծմանը զուգահեռ երիտթուրքերի կառավարությանը հաջողվում կարգի բերել մի քանի զորամաս, նպատակ

հետապնդելով վերակսել ռազմական գործողությունները: Այս գործին էլ ձեռնամուխ է լինում նոր հրամանատար նշանակված Ֆերիկ Վեհիբ Մեհմեդ փաշան:

Հայկական և թուրքական բանակների մասին Ս. Վրացյանը հայտնում է հետևյալը. «1918 թ. սկզբին Վեհիբ փաշայի հրամանատարության տակ կային հազիվ 10.000 կտուղներ, որոնց թիվը մարտին հասավ 25.000-ի: Նազարբեգեանը Վեհիբ փաշայի դեմ ունէր աւելի քան 17.000 զինվոր Կարս-Սարիղամիշ ճակատի վրայ» (**Ս. Վրացեան**, Հայաստանի Հանրապետութիւն, էջ 71):

Ստ. Շահումյանի գնահատմամբ թուրքական բանակը ուներ 18-20.000 զինվոր, իսկ հայկականը՝ 30.000: Ինչպես երևում է, երկու բանակներն էլ ունեին մոտավորապես նույն քանակությունը: Բայց հարկ է նշել, որ թուրքական բանակը ոչ միայն բզկտված էր, այլև ուներ զինամթերքի պակաս:

Եվ Շահումյանը հենց հայկական զինված ուժերին նկատի ունենալով էր ողջունում «կովկասյան հերոսներին», համոզված լինելով, որ այդ ուժով հնարավոր էր կասեցնել թուրքական արշավանքը:

Իսկապես, Անդրկովկասում ամենազորեղ զինված ուժը կարող էր տալ միայն հայ ժողովուրդը: Կարծես թե այս հանգամանքը բավական էր, որպեսզի հայերի ձեռքին լիներն, գոնե, կարևոր նախարարությունները: Բայց հայերին տրվում են միայն ֆինանսների (Խ. Կարճիկյան) և խնամատարական (Հ. Օհանջանյան) նախարարությունները: Արտաքին, ներքին գործոց, զինվորական և հաղորդակցությունների նախարարություններն իրենց ձեռքը վերցրեցին մենշևիկներն ու մուսավաթականները:

Այս պարագայի մասին տարիներ անց Ա. Խատիսյանը գրել է. «Անդրկովկասեան իշխանութեան զինուորական ղեկավարութիւնը հայերի ձեռքը չէր, ուստի այն կը ծառայէր հակահայկական, այսինքն՝ ռազմաճակատին հակառակ նպատակների: Որովհետեւ թաթարները պարզապէս թուրքերի կողմն էին, իսկ վրացիներն անոնց ուժ կուտային փաստօրէն: Անդրկովկասեան կոմիսարիատը իրաւունք չէր տայ զօրահաւաք ընելու, որուն համար կը բէրէր զանազան ձեւական առարկութիւններ: ... Պետք է նկատի ունենալ նաեւ, որ երկաթուղիներն ալ հայերու ձեռքը չէին, այլ թաթարներու եւ վրացիներու, որոնք կը մերժէին մեզ վագոններ տալ դեպի ճակատ զօրք փոխադրելու համար...»:

Իսկ պատմաբան Լեոն ավելի խիստ է գնահատում իրավիճակը. «Փոխարկելով պաշտոնների բաժանումը սովորական պարզ լեզվի, ստացվում էր այն իրականությունը, որ իրան հայ ազգի ամբողջությունը համարող Դաշնակցությունը կրում էր մի նոր չարաչար պարտություն, ստանձնելով երրորդական

դեր կովկասյան նոր իրականության մեջ: Այսպիսով, հայ ժողովուրդը կորցնում էր իր ունեցած դերն ու նշանակությունը» (**Լեո, Անցյալից**, 1925, էջ 117):

Բայց ստեղծված այսպիսի անարդարացի վիճակը ոչ մեկին չէր անհանգստացնում, թեև զգում էին դրա տխուր հետևանքները:

Երևանում լույս տեսնող արևմտահայ դաշնակցության «Աշխատանք» թերթը 1918 թ. մայիսի 2-ին գրում էր. «Այժմ մեր դէմ ամբողջ ճակատի վրայ տաճիկը ներկայ պայմաններում չի կարող դուրս բերել մինչեւ իսկ 10.000-անոց կանոնաւոր սպառազինուած մի բանակ: Ահա այն ուժը, միակ ուժը, առաջին եւ վերջին ուժը, որ նա կարող է հանել մեր դէմ: Ճշմարիտ է, Էրզրումի, Ղարսի եւ Ալեքսանդրապոլի յաջողութիւններն ու պահեստները մի փոքր թարմացրին նրան: Ճշմարիտ է, վերջին օրերի դէպքերն առժամանակից քքում առաջացրին մեր մէջ եւ յոյս ներշնչեցին նրան, բայց այդ երեւոյթներն արդիւնք չէին նրա զինուորական առաւելութեան կամ ռազմական հզորութեան, այլ յայտնի ապացոյց մեր դիւանագիտական հանճարի սնանկութեան, եւ որ աւելի պախարակելին է, երկիւղին»:

Բաքվի դաշնակցականների ղեկավարներից՝ Սերգեյ Մելիք-Յոլչյանը գրել է. «Գործադիր կոմիտեն, կոալիցիոն սկզբունքներով կազմուած լինելով սոցիալիստական կուսակցութիւններից, կը տեսնէր Մուսավաթի քրիստոնէական աշխատանքները Ատրբէջանի սահմաններում ...մահացու հարուած հասցնելու յեղափոխութեան, քշելու այլազգիներին Բազուից, անջատելու յեղափոխական Ռուսաստանից...» (**«Հայրենիք»**, մայիս, 1925, էջ 117):

Ինչպես տեսնում ենք, բոլորն էլ զգում էին այդ բլոկի բուն նպատակները, սակայն միշտ չէ, որ կատարվում էին ճիշտ քայլեր: Այս ասելով, ես նկատի ունեմ առաջին հերթին դաշնակցության միանալը վերոհիշյալ երկու կուսակցություններին:

Նրանց, ովքեր այն տեսակետն էին հայտնում, պնդելով, թե Անդրկովկասի բոլոր դժբախտություններն առաջացել են Բրեստի պայմանագրից հետո, Շահումյանը հարցնում է. «Մի՞թե դրանից հետո բլոկ կնքվեց մենշևիկների և մուսավաթականների միջև, մի՞թե Բրեստի պայմանագրից հետո մենշևիկները թույլատրեցին մուսավաթականներին զինաթափ անել ու գնդակահարել էշելոնները»:

Շահումյանը հիշեցնում է Անդրկովկասյան սեյմում մենշևիկ Օնիսաշվիլու այն հայտարարությունը, ըստ որի ռուսական կողմնորոշումը ռեակցիոն է և պետք է ուրիշ կողմնորոշում փնտրել: Օնիսաշվիլու հայտարարությունը պաշտպանում է Զխեիձեն, ասելով, «թե լավ է ընկնել Թուրքիայի, քան բոլշևիկների գիրկը»: «Երբ մարդը,-շարունակում է Շահումյանը,- նման սր-

տահայտություններ է իրեն թույլ տալիս, ապա այստեղ ի՞նչ գործ ունի Բրեստի պայմանագիրը»:

Այդպիսի դիրքորոշում էր որդեգրել նաև դաշնակցությունը, որի ղեկավարներից Խատիսյանն արտահայտել է Տրապիզոնի բանակցությունների նախօրյակին: Պատմաբան Լեոն հիշելով բանակցություններից առաջ տեղի ունեցած Անդրկովկասյան պառլամենտի խորհրդակցության մասին, գրել է հետևյալը.

*«Խոսակցություն սկսվեց քաղաքական բովանդակությամբ, որը պտտվում էր Թուրքիայի շուրջ: Մեր Խատիսյանը հավատարիմ իր համակերպվող բնավորության, արդեն ավանտներ էր տալիս, թե դաշնակցությունը պիտի փոխե իր օրենտացիան: Այլևս արևմտյան, ոչ էլ հյուսիսային պիտի լինի հայերի օրենտացիան, այլ արևելյան: Այս հայտարարությունն արժանանում էր թուրք (այսինքը՝ ադրբեջանական մուսավաթականներ-Վ.Պ.) պատվիրակների բարձրաձայն հավանություններին... Մեր թուրք ընկերները... բացարձակ կերպով հայտարարում էին, որ Անդրկովկասի կենսական շահը պահանջում է, ռուս տիրապետողներ այլևս չլինեն այնտեղ: Բոլոր ազգերը պիտի միանան կանգնեցնելու համար հյուսիսից եկող ամեն մի արշավանք» (**Լեո, Անցյալից**, էջ 375):*

*Արժե հիշել նաև Անդրանիկ Օզանյանի շատ կարևոր գնահատականը. «Դաշնակցությունը, - գրում էր նա,- փոփոխվեցավ հազար ուղղություն: Օր մը ռուսասէր էր, միւս օր ռուսատեաց, օր մը Թուրքերու թշնամին էր, միւս օր անոնց բարեկամը, օր մը անգլասէր էր, միւս օր կը պոռար «անկցի Անգլիան», օր մը Պարսկաստանի բարեկամն էր, միւս օր կը կռուէր անոր դէմ: Այս հանգամանքը միայն ցոյց կուտայ թէ դաշնակցութիւնը զուրկ էր այն հեռատեսութենէն եւ իմաստութենէն, զոր անպայման պէտք է ունենայ ժողովրդի մը ճակատագրին հետ խաղացող ոեւէ անհատ կամ կազմակերպութիւն: Ինչը կորսնցուցած մարմին մը ինչպե՞ս պիտի կրնար ղեկավարել ազգ մը: Ահա թէ ինչու համար մեր ազգը առաջնորդուեցաւ աղէտէ աղէտ եւ դժբախտութենէ դժբախտութիւն» (**Զօր. Անդրանիկ կը խօսի**, էջ 16):*

Ամփոփելով Բրեստի պայմանագիրը ստորագրելու շատ համառոտ ընթացքը, հարկ եմ համարում նորից ընդգծել, որ դա չէր բավարարում Թուրքերին: Նրանք դա հաշվի չէին առնում ստորագրելուց հետո էլ և շարունակում էին իրականացնել իրենց վաղեմի ծրագիրը՝ գրավել Անդրկովկասը:

Եթե նույնիսկ Բրեստի պայմանագիրն Անդրկովկասին ու Հայաստանին չվերաբերեր, ապա կա՞ր երաշխիք, որ ռազմաճակատից ռուսական զորքերի հեռանալուց հետո, Թուրքիան չէր փորձի գավթել Անդրկովկասը: Իհարկե,

միամտություն կլինի այդպես կարծել, մանավանդ որ Անդրկովկասյան սեյմը դարձել էր Թուրք-գերմանական բլոկի հլու կամակատարը և բացահայտորեն գործում էր նրա թելադրանքով:

Այնպես որ, իմ համոզմամբ, միանգամայն ավելորդ է այժմ դատողություններ անել Անդրկովկասի և Հայաստանի համար Բրեստի պայմանագրի բերած վնասների մասին: Ավելին, ճշմարտությունը պահանջում է նաև փաստել, որ ինչ-որ չափով Բրեստի պայմանագիրը զսպում էր Թուրքերի նվաճողական ձգտումները, որոնք հատկապես Գերմանիան աշխատում էր կոծկել: Բայց և դրա հետ միասին չպետք է մոռանալ, որ իրադարձությունների ամբողջ ընթացքը ցույց է տալիս, որ լիներ Բրեստը, թե ոչ, միևնույնն է, Թուրքիան իրագործելու էր իր նպատակը, ինչը, որ վկայում է պատմությունը:

Այս կապակցությամբ հարկ եմ համարում այստեղ հիշել, որ Թուրքական արշավանքի ծանր օրերին նշանավոր պատմաբան Նիկողայոս Ադոնցը և Հովհաննես Զավրյանը, որպես Ազգային խորհրդի լիազորներ, Գերմանիայի արտաքին գործերի մինիստրին, Ռայխստագի նախագահին բողոքում են, որ օգտվելով ռուսական զորքերի հեռանալուց, «տաճկական զորքերը ներխուժել են անպաշտպան երկիրը և անխտիր կեղեքում են ոչ միայն տաճկահայերին, այլև ռուսահայերին»:

Նրանք գրում էին, որ «Հակառակ բրեստեան դաշնագրի, որ ընդունում է երեք կովկասեան նահանգների ինքնորոշման իրատունքը, տաճկաց զօրքն առաջ է խաղում դէպի Կարս ու Արդահան, աւերելով երկիրը և բնաջնջելով քրիստոնեա ազգաբնակութեանը»:

Ադոնցն ու Զավրյանը հայերի հետագա բախտի պատասխանատվությունը դնում էին Գերմանիայի վրա, որովհետև «նրա պնդումով է, որ ռուս զօրքը դուրս է հանած հայկական նահանգներից, և այժմ նրանից է կախված զսպելու տաճիկ զօրքերին և թույլ չը տալ, որ նրանք իրենց սովորական էքսցէսները կատարեն վրեժից ու ցասումից դրդված»:

*«Դժուար է հաշտուել այն մտքի հետ,- գրում էին վերջում Ադոնցն ու Զավրյանը,- թէ Գերմանիայի նման մի քաղաքակիրթ երկիր հնարատրութիւն ունենալով ազդել դաշնակից Տաճկաստանի վրայ, թոյլ կը տայ, որ Բրեստեան հաշտութեան պայմանագիրն անհամար աղետների աղբիւր դառնայ հայ ժողովրդի համար, որը իր կամքից անկախ ստիպված է եղել մասնակցելու այս համաշխարհային պատերազմին» (**«Արև»**, մայիսի 16, 1918 թ.):*

Ես կարծում եմ, որ այսօր, մեր օրերում, Բրեստի պայմանագիրը ինչ-որ հանգրվան համարողները, մտածված կերպով վերոհիշյալ իրողությունները

հաշվի չառնելով, հարվածի պաքն ուղղում են Սովետական Ռուսաստանի դեմ, մնալով տալով հակառուսական տրամադրություններ ունեցողներին, որոնք, ամենայն հավանականությամբ, անտեղյակ են իրադարձությունների զարգացման իրական պատմությունից:

Բրեստ-Լիտովսկի պայմանագիրը կարճ կյանք ունեցավ: Գերմանիայում կատարված հեղափոխությունից և պատերազմում նրա պարտությունից օգտվելով, 1918 թ. նոյեմբերի 13-ին Սովետական Ռուսաստանը չեղյալ է հայտարարում Բրեստ-Լիտովսկի պայմանագիրը:

Վերջում կամենում եմ ընթերցողի ուշադրությունը նորից բևեռել Բրեստ-Լիտովսկի պայմանագրի 4-րդ հոդվածի վրա: Այդ հոդվածի երկրորդ պարբերությունում ասվում էր հետևյալը. «Ռուսաստանը կանի այն ամենը, ինչ որ իրենից կախված է, որպեսզի ապահովի իր զորքերի դուրս բերումը Արևելյան Անատոլիայի նահանգներից և վերջիններիս կանոնավոր վերադարձը Թուրքիային»:

Այսպիսով պարզվում է, որ Ռուսաստանը պարտավորվել է Թուրքիային վերադարձնել միայն Արևելյան Անատոլիայի այն նահանգները, որոնք պատերազմի իրավունքով գրավել էին ռուսական զորքերը:

Այս կապակցությամբ էլ, ինչպես արդեն վեր նշվել է, Շահումյանը նկատի ունենալով հոգնած ու կազմալուծված թուրքական բանակը, գտնում էր, որ Անդրկովկասը կարող է իրեն պաշտպանել և չտալ այն, ինչ որ զիջված է Բրեստի պայմանագրով, այսինքն ռուսական զորքերի կողմից գրաված Արևելյան Անատոլիայի նահանգները: Հենց այդ նպատակով էլ Շահումյանը մատնացույց էր անում թուրքական և հայկական ուժերի հարաբերակցությունը, ինչպես նաև հեռացող ռուսական բանակի թողած հսկայական ռազմապաշարը, որը գտնվում էր Էրզրումի, Կարսի, Սարիղամիշի, Ալեքսանդրապոլի և այլ պահեստներում:

Բրեստի պայմանագրի 4-րդ հոդվածի երրորդ պարբերությունում ասվում էր. «Ռուսական զորքերը պետք է անհապաղ դուրս բերվեն նաև Արդահանի, Կարսի և Բաթումի մարզերից: Ռուսաստանը չի միջամտի այդ մարզերի պետական-իրավական և միջազգային-իրավական նոր կազմակերպման գործին, այլ այդ մարզերի բնակչությանը հնարավորություն կտա դրացի պետությունների, մանավանդ Թուրքիայի համաձայնությամբ հաստատել նոր կարգ»:

Փաստորեն 4-րդ հոդվածի երրորդ պարբերության համաձայն Ռուսաստանը Թուրքիային չէր հանձնում Արդահանի, Կարսի և Բաթումի նահանգ-

ները, այլ միայն պարտավորվում էր այնտեղից ռուսական զորքերը հանել, պայմանով, որ նշված մարզերի բնակչությանը հնարավորություն կտա հատկապես Թուրքիայի և հարևան պետությունների, այդ թվում նաև Ռուսաստանի համաձայնությամբ նոր կարգ հաստատել:

Այսպիսով պարզվում է, որ 4-րդ հոդվածում որևէ խոսք չկա այն մասին, թե Ռուսաստանը Թուրքիային է հանձնում Կարսի, Արդահանի և Բաթումի մարզերը: Նա միայն պարտավորվել է այդ մարզերից հեռացնել ռուսական զորքերը, որպեսզի տեղի բնակչությանը հնարավորություն տրվի ազատ հանրաքվե կատարել: Իհարկե, այդ պահանջը վերաբերում էր նաև Թուրքիային՝ նրան իրավունք չտալով իր զորքերը մտցնել նշված մարզերը:

Սակայն, Տրապիզոնի բանակցությունների ժամանակ թուրքական պատվիրակությունը Բրեստի պայմանագրի 4-րդ հոդվածը ներկայացնում է իր քմահաճույքով և պնդում է վերոհիշյալ մարզերը հանձնել իրեն:

Իսկ այդ ժամանակ Կովկասում լույս տեսնող թերթերը, քաղաքական գործիչներից շատերը Բրեստի պայմանագիրը հասկանում էին այնպես, ինչպես մատուցում էր Թուրքիան: Ահա, այս կերպ գոյության իրավունք է ստանում Թուրքիայի մատուցմամբ Բրեստի պայմանագրի 4-րդ հոդվածի աղավաղված բովանդակությունը:

Եվ փոխանակ Շահումյանին լսելու, որն հարկ է համարում ընդգծել, որ ինքը որևէ հայտարարություն չի արել վերոհիշյալ մարզերը Թուրքիային հանձնելու մասին, այլև հույս է հայտնել, որ Կովկասի հերոսները թույլ չեն տա Կարսը, Արդահանն ու Բաթումը հանձնել Թուրքերին, Անդրկովկասյան իշխանությունները և հետագայում նաև Հայաստանի հանրապետության ղեկավարությունը ստանձնած գործիչները հապճեպ յուղի տեղ են ընդունել Թուրքիայի սարքած կեղծիքը և չեն պնդել Բրեստի պայմանագրի պահանջը ճշտորեն կատարելու վրա:

Իր քմահաճույքով կեղծված ներկայացնելով Բրեստի պայմանագիրը, թուրքական պատվիրակները ինչպես Տրապիզոնում, այնպես էլ Բաթումի բանակցությունների ժամանակ պնդում էին, թե իրենց համար տուրք է այդ պայմանագիրը, որի հիման վրա էլ պահանջում են Կարսի, Արդահանի և Բաթումի մարզերը:

Զավեշտը կայանում էր նաև նրանում, որ Տապիզոնի, հետո նաև Բաթումի բանակցություններին մասնակցող Անդրկովկասյան պատվիրակները, այդ թվում և Հայոց ազգային խորհրդի ներկայացուցիչները, առանց ծանոթանալու և հասկանալու Բրեստի պայմանագրի 4-րդ հոդվածի պայմաննե-

ը, հրաժարվում էին ընդունել Բրեստի պայմանագիրը:

Իսկ Բաթումի բանակցությունների ժամանակ Հայոց ազգային խորհրդի պատվիրակները հետևելով գերմանացիների ու Թուրքերի թելադրանքին, մերժեցին Սովետական Ռուսաստանի պահանջը և չհամաձայնվեցին, որ պետքի նրա ներկայացուցիչը, որը տվյալ դեպքում լինելու էր Շահումյանը, մասնակցեր Բաթումի բանակցություններին: Ինչ խոսք, եթե Սովետական Ռուսաստանի ներկայացուցիչը մասնակցեր Բաթումի բանակցություններին, ապա նա թուրքերին թույլ չէր տա կեղծված ներկայացնել Բրեստի պայմանագրի 4-րդ հոդվածը:

Դժբախտաբար, ինչպես այն ժամանակ, նաև սովետական պատմագրության մեջ և մեր օրերում մի շարք հեղինակներ հենվել են թուրքերի կողմից խորամանկորեն հնարած կեղծիքի վրա և կրկնում են իրականության հետ որևէ առնչություն չունեցող տեսակետը, թե Սովետական Ռուսաստանի կառավարությունը Կարսի, Արդահանի և Բաթումի մարզերը հանձնել է թուրքերին:

Ես այս տեսակետը ներկայացնում եմ նպատակ չունենալով արդարացնել Սովետական Ռուսաստանի կառավարությանը: Բայց հարկ եմ համարում ընդգծել, որ եթե Անդրկովկասյան իշխանությունները չանջատվեին Ռուսաստանից և իրենց չդնեին գերմանա-թուրքական մականի տակ, Սովետական Ռուսաստանին չզրկեին Բրեստի պայմանագրի 4-րդ հոդվածով բնակչության ազատ հանրաքվե անցկացնելու հնարավորություն տալուց, ապա իրադարձությունների զարգացումը կարող էր այլ ընթացք ունենալ:

ԳԼՈՒԽ 14
ՇԱՀՈՒՄՅԱՆԻ ԶԳՈՒՇԱՑՈՒՄՆ ԱՆՏԵՍԵԼՈՒ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ

Ինչպես նախորդ էջերում նշվել է, Շահումյանը եռանդով գործում էր Կովկասյան ռազմաճակատում ռուսական զորքերը պահելու համար: Նա անդադար զգուշացնում էր, թե հատկապես Հայության համար ինչ աղետալի հետևանքներ կունենա ռուսական զորքերի հեռանալը:

Սակայն. դժբախտաբար, Անդրկովկասի ղեկավարությունը ստանձնած քաղաքական ուժերը՝ վրաց մենշևիկները, ադրբեջանցի մուսավաթականները և հայ դաշնակցականները, առավելապես շահագրգռված էին Անդրկովկասը Ռուսաստանից անջատելով և Կովկասյան ռազմաճակատից ռուսական զորքերը, որքան հնարավոր է արագորեն հեռացնելով: Հատկապես Երզնկայի զինադադարի կնքումից հետո նրանց թվում էր, որ այլևս Թուրքիան վտանգ չէր ներկայացնում:

Ասածն էլ նկատի ունենալով, կարևոր եմ համարում, որքան հնարավոր է, համառոտակի անդրադառնալ Կովկասյան ռազմաճակատում կատարված իրադարձությունների ընթացքին, որոնց մասին Շահումյանի զգուշացումները, մեղմ ասած, չեն արժանացել Անդրկովկասյան իշխանությունը ստանձնած քաղաքական ուժերի և հատկապես դաշնակցության ուշադրությանը:

1. ԷՐԶՐՈՒՄԸ ՀԱՆՁՆՎԵԼ Է ԴԱՎԱՃԱՆՈՒԹՅԱՄԲ

Կովկասյան ռազմաճակատում զինադադար հաստատելու ուղղությամբ թուրքական դիվանագիտական խաղը հետևողական նպատակներ էր հետապնդում: Ռուսական զորքերի հեռանալը տեղ էր բացում թուրքերի համար:

Սակայն թուրքերին հարկավոր էր ժամանակ շահել քայքայված ուժերը վերադասավորելու համար: Թուրքերի մտադրություններն աննկատ չէին մնում: Ս. Վրացյանը գրում էր. «Վեհիբ փաշան եւ կովկասեան մահմեդականները շատ լաւ գիտէին թէ ինչ են անում: Նրանք ձգտում էին խառնափնթորել Կովկասը, կազմալուծել ճակատն ու թիկունքը եւ այդպիսով հեշտացնել թուրք զօրքերի յառաջխաղացումը, որը սկսուեց յունուարի վերջերին» (Ս. Վրացյան, Հայաստանի հանրապետութիւն, էջ 70):

Հայոց ազգային խորհուրդն ամբողջ երկու ամիս փաստորեն որևէ գործնական քայլի չդիմեց ռազմաճակատում մնացած հայկական զորքն ուժեղացնելու համար, միամտաբար հուսալով, թե թուրքերը չեն խախտի Երզնկայի զինադադարը:

Բայց նրանք մոռանում էին, թե ում հետ գործ ունեին: Իսկ այդ երկու ամիսը բավական եղավ, որպեսզի Թուրքերը համախմբեին իրենց ուժերը:

Անհրաժեշտ է նկատել, որ քանի Թուրքիան անմիջական վտանգ չէր սպառնում Վրաստանին, մենշևիկները մարտական կեցվածք էին ընդունել և սուր էին ճոճում: Սակայն կարճ ժամանակ անց, նրանք համաձայնության եկան գերմանացիների հետ և Վրաստանը դրեցին Գերմանիայի հովանավորության տակ:

Անդրկովկասում գործող մյուս ուժը՝ մուսավաթն անջատ բանակցություններ էր վարում Թուրքիայի հետ, աջակցում նրան և անհամբեր սպասում Թուրքերի գալուն:

Պարզ էր բոլորի համար, որ մենշևիկների ու մուսավաթականների քաղաքական նպատակները չէին կարող բխել Հայաստանի շահերից:

Ստեղծված պայմաններում Հայաստանը փաստորեն մենակ էր մնում հարձակվող Թուրքերի գերակշռող ուժերի դեմ, զրկված հաջող պատերազմ մղելու համար անհրաժեշտ տնտեսական ռեսուրսներից, որը չէր կարող ձեռք բերել Ռուսաստանից կտրվելու պատճառով:

Եվ ստացվեց այնպես, որ ռուսական զորքերը դուրս էին հանվում Արևմտյան Հայաստանից ու հայկական զորքերը միայնակ պետք է պաշտպանեին իրենց հայրենիքը:

1918 թ. սկզբին ստեղծված իրադրությունը Լեոն այսպես է գնահատում «Հայկական կոչված 6 վիլայեթները գրեթե ամբողջովին մաքրված էին Թուրք զորքերից և իրապես գտնվում էին հայ ազգային զորամասերի ձեռքին: Ոչինչ չէր պակասում այդ երկրի պաշտպանության համար: Ռուսական բանակը թողել էր այնտեղ անբավ զենքեր, թնդանոթներ, ռազմամթերք, ուտելիք, մի խոսքով՝ ամեն բան, ինչ հարկավոր է մի բանակի՝ իր դիրքերը երկար ժամանակով պաշտպանելու համար: Ամեն ինչ կար լի ու առատ, ազատություն և անկախություն որոնող մի ժողովրդի համար այսպիսի պատերազմություն դարերով չի ծնվում»:

Եվ իսկապես այս հսկայական տարածքը պաշտպանելու համար հարկավոր է ունենալ մեծաթիվ զորաբանակ: Վերևում արդեն նշվել է, որ Հայոց ազգային խորհուրդն ուշ սկսեց տեղից շարժվել: Հաշվի չառնվեց ժամանակի գործոնը, որն այնքան կարևոր էր ռազմաճակատը համալրելու համար:

Այդ օրերին Էրզրումից հաղորդվում էր. «Մեր վիճակը բարոյական տեսակետից խիստ ամուր է թէ այստեղ գարնիզոնում և թէ ֆրոնտում: Զինվորները հայտնում են կատարյալ պատրաստականություն պատերազմական բոլոր խնդիրները կատարելու: Հարկավոր է, որ անմիջապես մարդ ուղարկեք,

*մանավանդ առաջին գնդի համար, որ մինչև այժմ օժանդակություն չի ստացել: Այստեղ մեզ համար չափազանց նպաստավոր տրամադրություն է ստեղծված, միայն մարդկանց մեծ կարիք կա: Ձեր ամբողջ ուշադրությունը դարձրեք մարդ ուղարկելու վրա: Մարդ և միայն մարդ» (Լեո, **Թուրքահայ հեղափոխության գաղափարագաղութները**, հ. 2, Փարիզ, 1935 թ., էջ 198):*

Ռազմաճակատը համալրելու համար ազգային խորհուրդը շատ ուշացումով է սկսում զորահավաք կազմակերպել: Սակայն հայտարարված զորահավաքը ցանկալի արդյունք չէր տալիս: Խոսքն ավելի շատ էր, քան գործը: Դրա հետ միասին ռազմաճակատից հստակ ու գործնական տեղեկություններ չէին ստացվում:

Այս առումով հատկատես աչքի էր ընկնում դաշնակցության հայտնի գործիչ Արշակ Ջամալյանը. որը ռազմաճակատից հայտնում էր, թե հնարավոր է ճակատը պաշտպանել, քանի որ Թուրքական բանակը լրիվ քայքայված է: Մինչդեռ Թուրքական բանակը Վեհիբ փաշայի հրամանատարությամբ արդեն ուշքի էր եկել: Ջամալյանի հաղորդած լավատեսությունը պարզապես անտեղյակության արդյունք էր:

Արշակ Ջամալյանի այդպիսի անլուրջ վերաբերմունքը նկատի ունենալով, Լեոն տվել է հետևյալ գնահատականը. «Իր կյանքի մեջ համարյա բոլոր մատնագիտությունների մեջ վարպետ էր իրեն ցույց տվել... կամավոր էր գնացել... և այս բանը բավական եղավ, որ նա դառնա պատերազմական հարցերի լավատեղյակ մասնագետ» (Լեո, Անցյալից, էջ 370):

Բայց Թուրքերը կդավաճանեին իրենց բնույթը, եթե Թուրքեր չլինեին: Նրանք դիմեցին դիվանագիտական մի նոր խաղի: 1918 թ. հունվարի 14-ին Անդրկովկասյան կոմիսարիատին առաջարկում են հաշտության պայմանագիր կնքելու նպատակով բանակցություններ սկսել: Հունվարի 28-ին կոմիսարիատը համաձայնվում է այդ առաջարկությանը:

Սակայն, ստանալով կոմիսարիատի համաձայնությունը, Թուրքերը ակտում են ամեն կերպ ձգձգել բանակցությունների սկսումը:

Հունվարի 28-ին Վեհիբ փաշան Կովկասյան ռազմաճակատի գլխավոր հրամանատար գեներալ Պրժևալսկուն հեռագրով նորից հայտնում է, թե հայերը բռնություն են գործադրում Թուրք բնակչության նկատմամբ:

Թուրքական հրամանատարությունն այսպիսի պրովոկացիոն միջոցներով ձգտում էր հասնել իր նպատակին:

Չնայած Թուրքերի նպատակը պարզ էր, սակայն ռազմաճակատի հրամանատարությունը, որը սերտորեն համագործակցում էր Անդրկովկասյան

կոմիսարիատի հետ, որևէ մտադրություն չուներ կանխել թուրքերի հնարավոր առաջ շարժվելը :

Դրա փոխարեն Պրժևալսկին Անդրկովկասյան կոմիսարիատի գիտությամբ Երզնկայի զորամասերի հրամանատար Մորելին ուղարկած հեռագրով հայտնում էր, որ թուրքական բանակների Կովկասյան ռազմաճակատի հրամանատար Վեհիբ փաշան ռադիոհեռագրով զգուշացնում է, որ նկատի ունենալով ստեղծված վիճակը, ստիպված է, չխախտելով զինադադարը, մի քանի զորամասեր առաջ շարժել «դեպի մեր զբաղեցրած շրջանները»:

Այնուհետև, Պրժևալսկին այդ հեռագրով հրամայում էր. «Երզնկայի վրա թուրքական զորամասերի հարձակվելու դեպքում, որի մասին հավանաբար դուք կզգուշացվեք թուրքերի կողմից, հավաքելով ամբողջ ջոկատը և կռվի առիթ չտալով թուրքերին, սկսել աստիճանաբար նահանջել դեպի Կարմիր: Մի շտապեք նահանջել, եթե հնարավոր է՝ կանգնել Զելիկից արևմուտք, դեպի Եփրատի կիրճը տանող ճանապարհի սկզբին, որպեսզի հնարավորություն տաք Զելիկից և Փամբից դուրս բերել պաշարները: Երզնկայում և մյուս կետերում եղած պաշարները ոչնչացնել» (ՀՀ ԱԱ, ֆ. 374, ց. 1, գ. 30, թ. 10):

Հեռագրով հաղորդած այս հրամանն առաջ է բերում տարակուսանք Երզնկայի պաշտպանների շարքերում: Պարզվում էր, որ հարկավոր չէ դիմադրել, այլ պետք է թողնել Երզնկան ու նահանջել:

Երզնկայում արագորեն տարածվում է նաև թուրքերի կողմից հարձակումը սկսելու լուրը:

Եվ որպեսզի իրենց կամքը կարողանային թելադրել, թուրքերը 1918 թ. փետրվարի 12-ին սկսում են ռազմական գործողություններ ծավալել: Անդրկովկասյան կոմիսարիատը նորից հայտնվում է ծուղակում: Թուրքերին հաջողվում է մի անգամ ևս բթացնել բոլորի զգոնությունը:

Այդ հարձակմամբ թուրքերը կոպտորեն խախտում են Բրեստ-Լիտովսկի և Երզնկայի զինադադարի պայմանագրերը: Դատելով եղած փաստերից, Վեհիբ փաշան չէր անցնի հարձակման, եթե զգար :ր իր առջև կա ուժեղ կռվող բանակ:

Վեհիբ փաշան իր հարձակումը բացատրում էր այն բանով, որ ռազմաճակատում ռուս զորքերին փոխարինած հայկական ուժերն իբր թե բռնություններ էին գործադրում թուրք խաղաղ բնակչության նկատմամբ:

Փաշան ցինիկաբար հավատացնում էր, որ այդ հարձակումը չի խախտում զինադադարի պայմանագիրը և որ այն չպետք է դիտել որպես թշնամական քայլ ռուսական բանակի նկատմամբ, որ թուրքական զորքերին խիստ

հրաման է տրված խուսափել ռուսական զորքերի հետ ընդհարումից, բայց հայկական զորքերին չի ճանաչում որպես ռուսական կանոնավոր զորախումբ:

Եվ իր արշավանքը Վեհիբ փաշան ներկայացնում էր որպես մարդասիրության ու քաղաքակրթության անհրաժեշտություն:

Ավելին, Վեհիբ փաշան Կովկասյան ռազմաճակատի հրամանատարությանը հայտնում էր, որ պետք է այնքան առաջ շարժվի, մինչև հանդիպի ռուսական զորքերին:

Փետրվարի 13-ին թուրքերը գրավում են Երզնկան: Թեև հայկական զորախումբն աչքի էր ընկնում համարձակությամբ, բայց ինչ կարող էր միայնակ անել թուրքերի գերակշռող ուժերի դեմ:

Հայկական զորախումբը Սեբաստացի Մուրադի գլխավորությամբ սկսում է նահանջել իր հետ տանելով մեծ քանակությամբ գաղթականներ: Նահանջը կատարվում էր ուժեղ սառնամանիքի պայմաններում, որին զոհ գնացին բազմաթիվ զինվորներ ու գաղթականներ: Փետրվարի 22-ին թուրքերն արդեն Մամախաթունում էին:

Փետրվարի 24-ին Երզնկայի հայկական զորաջոկատը հասնում է Էրզրում, որտեղ էլ համալրվելով ձևավորվում է որպես Երզնկայի գունդ, խնդիր ունենալով պաշտպանել Էրզրումը:

Օրինական հարց է առաջանում. ինչո՞ւ Կովկասյան ռազմաճակատի հրամանատարությունն ու Անդրկովկասյան կոմիսարիատը ոչ մի միջոցի չեն դիմում Երզնկայի զինադադարը խախտող թուրքերի արշավանքը կասեցնելու համար:

Այս հարցին պատասխանելու համար պետք է ասել, որ Անդրկովկասի իշխանություններին և ռազմաճակատի հրամանատարությանը պարզ էր թուրքական կողմի մտադրությունը՝ որքան հնարավոր է Երզնկայի գրավումից հետո արագորեն առաջ շարժվել, գավթել Էրզրումը, որից հետո Կարսը ու այնուհետև՝ Ալեքսանդրապոլը:

Անդրկովկասյան իշխանություններին հայտնի էր թուրքերի մտադրությունը, բայց և այնպես ոչինչ չձեռնարկեցին ուժերը համախմբելու համար:

Երիտթուրքերը շարունակում էին նաև ուժեղացնել դիվանագիտական ճնշումը, պահանջելով Անդրկովկասյան իշխանություններից անջատվել Ռուսաստանից: Երիտթուրքերը համոզված էին, որ Ռուսաստանից Անդրկովկասի անջատմանը կհետևեր իր տիրապետության հաստատումը:

Իսկ 1918 թ. փետրվարի 10-ին ձևավորված Անդրկովկասյան սեյմը, նրանում ղեկավար դեր ունեցող կուսակցությունները և նրանց ենթակա ազգա-

յին խորհուրդները պարզապես դարձել էին երիտթուրքերի ձեռքին խաղալիք: Նրանք որոշակի միջոցներ չձեռնարկեցին երկրամասի պաշտպանությունը կազմակերպելու համար:

Ամենից առաջ դրանում շահագրգռված պետք է լիներ Հայոց ազգային խորհուրդը, քանի որ թուրքական սպառնալիքն անմիջապես կախված էր Հայության գլխին:

Պարզապես շատ քիչ գործ է կատարվում զորքերի համալրման համար, նույնիսկ չէին հետևում, որ զինվորագրվածները հասնեին ռազմաճակատ:

Բայց դրա փոխարեն Հայոց ազգային խորհուրդը, չգիտես ինչ հիմքերով տրամադրված էր լավատեսորեն, որն իր արտահայտությունը գտնում է փետրվարի 12-ին Ազգային խորհրդում Ռ. Տեր-Մինասյանի ելույթում: «Այս րոպեին, ասաց նա,- մեր ուժերով թուրքերին հավասար ենք: Հարց է նույնիսկ թե ո՞վ շատ ուժ ունի, մենք, թե նրանք»:

Ռ. Տեր-Մինասյանը նույնիսկ պարծենում էր, ասելով, թե «Անդրկովկասի բախտը հայերի ձեռքին է, մենք դեռ հաղթողի դերի մեջ ենք» (ՀՀ ԱԱ, Հայոց ազգային խորհրդի նիստերի արձանագրություններ):

Քիչ է ասել, որ այս լավատեսությունն այդպես էլ մնում է լավատեսություն: Դա որևէ վճռական միջոցով չի ամրապնդվում:

Պետք է նշել, որ Անդրկովկասում հաստատված սեյմի կառավարությունը միահամուռ ու միասնական էր գործում Սովետական Ռուսաստանի դեմ: Սակայն այդ միասնությունը չկար թուրքական արշավանքի ուժեղացման զուգընթաց: Ավելին, աստիճանաբար այնտեղ եղած ներքին հակասությունները գնալով ավելի սրությամբ էին դրսևորվում

Պակաս դեր չէր խաղում նաև Կովկասյան ռազմաճակատի հրամանատարությունը փաստորեն իր ձեռքը վերցրած գեներալ Օղիշելիձեն, որի քույրը Վեհիբ փաշայի կինն էր: Ահա այս դավաճանն էլ մշտապես թուրքական զորքերի հրամանատարին տեղեկացնում էր իրերի վիճակի մասին:

Առաջ շարժվող թուրքական զորքերն արդեն բախում էին Էրզրումի դարպասները: Էրզրումն անառիկ ամրոց էր և նրա պաշտպանությունն անչափ կարևոր:

Պաշտպանել Էրզրումը, նշանակում էր ամուր փակել թուրքերի մուտքն Անդրկովկաս: Էրզրումում էր գտնվում նաև ռազմաճակատի հրամանատար Օղիշելիձեն, որը Ա. Խատիսյանի վկայությամբ այստեղ գտնվող հայկական զորքերին տալիս էր հակահայկական հրամաններ:

Թվարկենք այն անձանց, որոնց վրա դրված էր Էրզրումի պաշտպանությունը և որոնք գործում էին Օղիշելիձեի հրամանով: Մենշևիկ Ստավրովսկի՝ Էրզրումի քաղաքապետ: Մուսավաթական Ալի բեյ Պեպինով՝ քաղաքապետարանի քարտուղար, որը հետո դարձավ Նուրի փաշայի ուղեկիցը: Շտաբ-կապիտան Տվերդոխլեբով, իր շուրջն էր հավաքել հակահայկական տրամադրություններ ունեցող սպաներին, որոնք ամեն կերպ աշխատում էին չկատարել գնդապետ Մորելի հրամանները: Այստեղ էր գտնվում նաև մուսավաթական հայտնի գործիչ Թոփչիբաշևը:

Օղիշելիձեի հետ համագործակցում էին բժիշկ Զավրիևի կողմից նշանակված Էրզրում քաղաքի և մարզի կոմիսար Տիգրան Աղամալյանը և միլիցայի պետ Արմենակ Միրոյանը: Դաշնակցության այս երկու անդամների մասին պատկերացում կազմելու նպատակով ընթերցողի ուշադրությանը ներկայացնեմ միայն մեկ-երկու վկայություն:

Առաջին. «Կարնոյ զինուորական պետ պր. Տիգրան Աղամալեան անճարակ դաշնակցական ուսուցիչ մըն էր: Ուսուցիչ մը Կարնոյ պէս ռազմական քաղաքի մը զինուորական պետն էր: Աղամալեան կրցած էր ոչ զինուորները դասաւորել եւ ոչ ալ թնդանօթներուն հոգ տանիլ: ...Աղամալեան եւ իր օգնականները Ցէրէչեան եւ Թորոսեան Կարնոյ պահեստանոցները բանալով շաքար, իւղ, ալիւր, հրացան կառքերու մէջ լեցնելով Կովկաս կը փոխադրէին զորքերու հետ եւ թղթէ դրամները ոսկիի կը վերածէին: Թրքահայ գաղթականը եւ զինուորը թուրք բռնուած լրտեսները կը բերէին եւ զինուորական այս ներկայացուցիչներուն կը յանձնէին, ասոնք կաշառքներու եւ կամ ցոփ հեշտանքի մը փոխարէն ազատ կարձակէին» (**Զօրաւար Անդրանիկի Կովկասեան ճակատի պատմական օրագրութիւնը**, Պոսթոն, 1924 թ., էջ 80-81):

Երկրորդ. «Էջեր իմ յուշերէն» -ի Բ. հատորում Միրոյանի մասին Սեպուհը գրել է. «Վերջին րոպէին ան մեզ դավաճանեց. իր զինուորները պատրաստուած էին կռուին մասնակցելու իր գլխաւորութեամբ, սակայն ան կնոջ խօսքին անսալով, կնամարդի եւ վատոգիօրէն կինն առաւ եւ ծլկաւ» (**Սեպուհ, Էջեր իմ յուշերէն**, հ. Բ. էջ 70):

Երրորդ. Հայ զինվորական միության Էրզրումի կոմիտեի սպաների մասին Վահան Թոթովենցը գրում է. «Մենք չի հանդիպեցանք ոեւէ հայ սպայի, բոլորն էլ հասարակ շորեր հագած, կորուած էին զինուորներու մէջ: Անդրանիկ ոչ ոք տեսաւ, որպեսզի կարեւոր բան մը ըսեր: ...Մինչ Անդրանիկ այդ վիճակով ճակատ կը պահէր, ներսը, քաղաքին մէջ մեր զինուորական միութեան անդամները, յատկապէս Տիգրան Աղամալեանը, դրամի փոխանակութեամբ կը զբաղէր: Թուղթ դրամը կը փոխէր դեղին ոսկիի հետ, ամեն բանի պատրաստ ըլլալու համար» (**Զօրաւար Անդրանիկի Կովկասեան ճակատի**

պատմական օրագրությունը, Պոսթոն, 1924 թ., էջ 364):

Ըստ եղած տվյալների, այդ ժամանակ Էրզրումում կար մոտավորապես 15 հազար հայ զինվոր ու աշխարհազորային: Քաղաքում կար նաև 5 հազար թուրք զինվոր, հազուստը փոխած ու թաքնված տեղի թուրք բնակիչների մոտ: Հենց այս զինվորների հետ էլ կապ էր հաստատել Թոփչիբաշևը, որը Օդիշելիձեի գիտությամբ օգնում էր նրանց զենք ձեռք բերելու համար:

Իհարկե, այս ամենը չէր կարող վրիպել հայ հայրենասեր սպաների կողմից: Նրանցից մեկը՝ գնդապետ Թորգոմը 1918 թ. հունվարի 28-ին Էրզրումում հայտարարում է հայկական անկախություն, փորձելով կասեցնել թուրքերի զինումը: Վտանգավոր այս սպային Օդիշելիձեն արտաքսում է Թիֆլիս: Այստեղ Անդրանիկը նրանից տեղեկանում է կատարվածի մասին և Թորգոմին տալով 170 զինվոր, նորից ուղարկում է Էրզրում:

Էրզրումում ստեղծված վիճակը, որոշ ղեկավար գործիչների անբարոյական վարքագիծը զինվորների վրա թողնում էին բացասական ազդեցություն:

Էրզրումի զորաջոկատի հրամանատարությունը զրկվել էր ինքնուրույն գործելուց: Զանազան կազմակերպությունների անհարկի միջամտությունն ավելի էր թուլացնում կարգապահությունը:

Փաստորեն ոչ ոք չէր մտահոգվում Էրզրումի պաշտպանության կազմակերպմամբ: Ով հնարավորություն ուներ, շտապում էր զբաղվել իր անձնական շահով:

Ստեղծված պայմաններում զինվորները մտահոգված էին մի բանով՝ որքան հնարավոր է շուտ հեռանալ Էրզրումից: Ոչ մի զինվոր չէր համաձայնվում ենթարկվել կաշառքով ու թալանով զբաղվող հրամանատարին:

Էրզրումում տիրում էր անկազմակերպվածություն: Ուժեղանում էր խուճապը: Բոլորին համակել էր Էրզրումից հեռանալու ձգտումը: Փաստորեն կազմալուծված էր Էրզրումի պաշտպանությունը:

Ահա, այսպիսի ծանր պայմաններում, Հայոց ազգային խորհուրդը փոխարնակ կողմից միջոցներ ձեռնարկեր և Էրզրումից հեռացներ վերևում նշված գործիչներին, մոտիկից զբաղվեր Էրզրումի պաշտպանությունը կազմակերպելու գործով, հրաժարվում է պատասխանատվությունն իր վրա վերցնել և որոշում է օգտագործել ժողովրդական հերոս Անդրանիկի հեղինակությունը:

Հայոց ազգագային խորհուրդը շատ լավ գիտեր, որ Էրզրումում գտնվող դաշնակցականների, նրանց հետ համագործակցող հրամանատարների մեքջով ձախողվել է Էրզրումի պաշտպանությունը:

Անդրանիկին Էրզրում ուղարկելու նպատակը մեկն էր՝ Էրզրումի համար պատասխանատվությունը գցել ժողովրդական հերոսի վրա, նրան վերադրել

Էրզրումի մոտալուտ անկասելի կորուստը:

Երբ 1918 փետրվարի 14-ին (մարտի 2-ին) Անդրանիկը հասնում է Էրզրում, արդեն Օդիշելիձեն դավաճանաբար արձակել էր Էրզրումը թուրքերին հանձնելու հրամանը և ինքն էլ մեկնել Թիֆլիս:

Անդրանիկն Էրզրումում հանդիպում է սկսված մեծ խուճապի: Ճիշտ է, գնդապետ Մորելը փոխել էր Օդիշելիձեի հրամանը, բայց արդեն ուշ էր: Խուճապը գրեթե անհնարար էր կասեցնել:

Սակայն Անդրանիկի ժամանելն որոշ չափով զսպում է դավաճրներին: Ջորավարն եռանդուն գործունեություն ծավալելու հետ միասին հետևյալ հեռագիրն է ուղարկում Թիֆլիս՝ ազգային խորհրդի նախագահ Ահարոնյանին. «Կարնոյ ճակատի դրությունը վատ է: Մեր զինուորները տակավին չհասան: Այստեղ գտնուած Ա. եւ Դ. գունդերը կը մերժեն կռվիլ, նոր ուժեր ուղարկեցէք: Մարդիկ ղրկեցէք այս զինուորները համոզելու: Աշխատեցէք մեր թիկունքը ապահովել»:

Ինչպես վկայում է Վ. Թոթովենցը, այս հեռագրի պատասխանը չի ստացվում: Իսկ Էրզրումում անկազմակերպվածությունն այն աստիճանի էր հասել, որ Թոփչիբաշևն անարգել հեռախոսային կապ էր պահպանում թուրքական բանակի հրամանատարության հետ:

Շուտով Անդրանիկի հետախուզության ձեռքն է ընկնում այդ մուսավաթականի գաղտնի նամակագրությունը Վեհիբ փաշայի հետ:

Նամակներից մեկում Թոփչիբաշևը Վեհիբ փաշային հայտնում էր որ ինքը գտնվում է հայերի հսկողության տակ ու շտապեցնում էր արշավելը և ավելացնում. «Կովկասէն լուր կառնեմ կրցածնուն չափ կտրած են հայերու ճանապարհները»:

Անդրանիկը կարգադրել էր ձերբակալել դավաճան Թոփչիբաշևին, սակայն Զավրիևի և Աղամալյանի ջանքերով նա փրկվում ու փախչում է Թիֆլիս:

1918 թ. փետրվարի 12-ին թուրքերը սկսեցին հարձակվել Էրզրումի ուղղությամբ: Քաղաքում ջանքեր էր գործադրվում առաջացած խուճապը մեղմելու համար: Միաժամանակ ժողովրդական հերոսն անձամբ մասնակցում էր մարտական գործողություններին, ոգևորում զինվորներին:

Հայ մարտիկները կռվում էին հերոսաբար: Մուրադի ջոկատն Անդրանիկի հետ միասին նետվում է Հակագրոհի: Չնայած հայկական զորաջոկատների ցուցաբերած կամքին, թուրքական ճնշումը գնալով ուժեղանում էր թարմ ուժեր ստանալու շնորհիվ:

Վճռական գրոհի նախօրյակին թուրքերը կենտրոնացրել էին մոտավորա-

պես 5000 զինվոր, 12 լեռնային հրանոթ և գնդացիրներ:

Հայկական ուժերը, որոնք գործում էին Անդրանիկի հրամանատարությամբ, բաղկացած էին մոտ 2300 զինվորից: Զորաջոկատը ուներ 24 գնդացիր, 20 դաշտային հրանոթ և այլն:

Փետրվարի 26-ի երեկոյան Անդրանիկը հրավիրում է խորհրդակցություն:

Վերը նշված դեպքերի կազմալուծիչ ազդեցությունը զնալով խորանում էր: Զինվորների մեծ մասը կռվել չէր ցանկանում:

Անդրանիկը ստեղծված պայմաններում առաջին հերթին խնդիր է դնում՝ կանխել խուճապը, որը չատ էր խորացել ու անուղղելի վնաս պատճառել:

Անդրանիկը փորձում է ետ վերադարձնել դիրքերը լքած զինվորներին, բայց քիչ հաջողության է հասնում:

Փետրվարի 27-ի վաղ առավոտյան թուրքերն անցնում են գրոհի: Նրանց միանում են Էրզրումում ծպտված հազարավոր զինված մահմեդականներ: Այդ օրն էլ Էրզրումն անցնում է թուրքերի ձեռքը:

Էրզրումի անկումից տարիներ անց, դրա համար ուղղակի պատասխանատուների մեղքը բարդեցին Անդրանիկի վրա, փորձելով նսեմացնել ժողովրդական հերոսի հեղինակությունը:

Հայկական կորպուսի հրամանատար գեներալ Նազարբեկովը, որն այդ ծանր օրերին ռազմական գործողությունները փորձում էր ղեկավարել Թիֆլիսից, հետագայում իր հուշագրության մեջ գրել է, որ Անդրանիկին Էրզրում ուղարկելու մասին իմացել է պատահաբար: Նրա կարծիքով Անդրանիկը չէր կարող փոխարինել գնդապետ Մորելին և դառնալ Էրզրումի ջոկատի պետ, որովհետև Անդրանիկի անձնական քաջագործությունները, արժանի ժողովրդականությունը և պարտիզանական հայդուկի փորձը «քիչ են Էրզրումի նման կարևոր նշանակություն ունեցող ամրոցի ու քաղաքի պաշտպանությունը կազմակերպելու համար»:

Մի պահ համաձայնվենք Նազարբեկովի հետ: Բայց հարցնենք՝ իսկ ի՞նչ արվեց Էրզրումի պաշտպանությունը կազմակերպելու, Էրզրումում ստեղծված խուճապը կասեցնելու համար:

Ինչպես ռազմաճակատի, այնպես էլ Հայկական կորպուսի հրամանատարությունը ոչ մի օգնություն չկազմակերպեցին, հետագայում ամեն ինչի համար մեղքը բարդելով Անդրանիկի վրա:

Այսպես վարվեց ռազմական հրամանատարությունը: Իսկ Հայոց ազգային խորհո՞ւրդը, որտեղ ղեկավար դերը պատկանում էր դաշնակցությանը:

Այս հարցին պատասխանելու համար ուզում եմ վկայակոչել Ս. Վրացյանին: Ահա, թե ինչ է նա գրել. «Էրզրումի ամրացված շրջանի պետ նշանակվել էր Անդրանիկը: Քաջ հայդուկ, հիանալի խմբապետ, պարտիզանական կռիվների հմուտ վարիչ՝ Անդրանիկը, զորավարի ուսադիրներ դնելուց հետո, մեծ չափով կորցրեց իր հմայքը: Ուսադիրները չէին արգելում, որ ռուսական բանակի սպաները շարունակեին համարել նրան խմբապետ՝ անձեռնահաս վարելու խոշոր զորամասեր և բերդի պաշտպանության բարդ գործ: Անդրանիկը ինքը ևս, իր հերթին, լավ չէր զգում իրեն նոր դերում. ոչ խմբապետ էր, ոչ զինվորական: Խմբապետությունից հրաժարվել, զորավար չէր դարձել: Այդ պատճառով, մինչև վերջն էլ չկարողացավ կենտրոնացնել իր ձեռքը բերդի և զորամասի ղեկավարության գործը: Այս պարագան քիչ չնպաստեց Էրզրումի արագ խորտակումին» (**Ս. Վրացյան**, նույն տեղը, էջ 95):

Այսպիսով, հետին թվով, դաշնակցությունն էլ է Էրզրումի անկման մեղքը բարդում Անդրանիկի վրա, պատասխանատվությունից հեռու պահելով իր «քաջարի» կուսակիցներին, որոնց անբարոյական վարքագիծը փաստորեն անկասելի էր դարձրել Էրզրումի անկումը:

Դավաճանության ու դավադրության հետևանքով ընկավ Էրզրումը: Էրզրումի անկումը համահայկական աղետ էր: Դա ոչ այնքան թուրքերի ռազմական ուժի հետևանք էր, որքան նրա դիվանագիտության հաղթանակը:

Բայց դիմենք ժամանակի վավերաթղթերին, որոնք մեր առջև կբացեն Էրզրումյան ողբերգության ամբողջ խորությունը:

Երևանում լույս տեսնող արևմտահայ դաշնակցականների «Աշխատանք» թերթը գրում էր. «Ինչո՞ւ նահանջեցինք: Ասե՞լ, որ թշնամի գերազանց ուժն էր, որ մերոնց հարկադրեց քաղաքը թողուլ, -ո՛չ երբեք, որովհետև անիկա հազիվ 4000 հոգի ըլլար, իսկ մեր զինուորներուն թիւը 9-10.000 կը հասնէր, ասե՞լ որ պէտք եղած անհրաժեշտ ռազմամթերքը կը պակսէր, ամենեին ո՛չ, որովհետև այնքան ռազմանիւթ կար, որ նոյնիսկ հակողութեան տակ պահել կարելի չէր, ասե՞լ որ թշնամիի դիրքերը մերոնցմէ չատ աւելի նպաստաւոր էին, նոյնպես հիշդ չէ, որովհետև մերոնք 500 է աւելի թիւղանոթներով ապահովուած բերդերով շրջապատուած էին, մինչդեռ թշնամին բաց դաշտին մէջ կը գտնուէր» («**Աշխատանք**», մայիսի 18. 1918 թ.):

Էրզրումում եղած հակայական ռազմամթերքն Օդիշելիձեի դավաճանական հրամանի հետևանքով թողնվեց թուրքերին: Ահա այդ հրամանից մի հատված. «Զոչնչացնել պարենամթերքի պաշարները, չպայթեցնել պար-

հեստոները, այլ այդ բոլորը պահպանել ու հանձնել Թուրքերին» (Սարգսյան Ե. Թուրքիան և նրա նվաճողական քաղաքականությունը Անդրկովկասում 1914-1918 թթ., Եր. 1964, էջ 648):

Դավաճանությունն այնքան էր խորացել, որ չհաջողվեց իրագործել Անդրանիկի հրամանը՝ ոչնչացնել այդ ամբողջ զինամթերքը և չթողնել թշնամուն:

Միայն զայրանալ կարելի է, որ բոլորը զգում էին Էրզրումի կարևորագույն նշանակությունը Հայաստանի համար, բայց գործնական քայլեր չձեռնարկեցին այն պաշտպանելու համար:

1920 թ. անգլիական պրեսիդենտ Լ. Ջորջի հետ ունեցած զրույցում Ավետիս Ահարոնյանն ընդգծում էր. «Քանի որ խոսքը Էրզրումին է վերաբերում, թույլ տուէք ինձ, պր. նախագահ, քանի մը խօսք ասել նաեւ այդ բերդաքաղաքի կարեւորութեան մասին մեր պետութեան ապահովութեան տեսակէտից: Էրզրումը իր դիրքով ռազմական իշխում է ամբողջ Հայաստանին: Բոլոր ճամբաները ղէպի մեր երկրի սիրտը՝ այնտեղից են անցնում: Նա առաջացած մի մշտական սպառնալիք պիտի մնայ մեր պետութեան սրտին ուղղված, եթե Հայաստանին չմիացուի: Անհնարին է երեւակայել Հայաստանը առանց Էրզրումի» («Նայիրի» (Բեյրութ), փետրվարի 22, 1970 թ.):»

Ավելի վաղ, Էրզրումի հանձնման նախօրյակին նույն Ահարոնյանն ասում էր Վ. Թոթովենցին, որ Կարինը մեր ազատության կենտրոնն է, Կարինը պահել կնշանակի «մեր անկախութեան բոլոր հաստատիքը ձեռք բերել»:

Այս ամենը խոսքով: Իսկ գործո՞վ: Ահա միայն մի փաստ, որը պատմում է Վ. Թոթովենցը. «Անդրանիկ իր հետ բերած էր երկու վագոն լեցուն թամբ Կարսի ձիաւոր խմբի համար: Բացինք վագոնները, թամբերուն տեղը դուրս եկան հին զինուորական շորեր, թամբերը չկային: Անդրանիկին ջղայնութիւնը հասաւ իր գագաթնակէտին: Այդ թամբերու մասին երկար վիճաբանութիւն եղած էր Թիֆլիսի մէջ: Քորպուսի հրամանատարութիւնը կուզէր ինք ունենալ այդ թամբերը, բայց Անդրանիկ ստիպեց ժամ առաջ դուրս բերել այդ թամբերը Թիֆլիսէն: Առ հասարակ Անդրանիկ կողմնակից էր եւ կը պնդէր բոլոն կերպով, որքան որ կարելի էր, շատ բան բերել Հայաստանի եւ հայ ազգաբնակչութեան խիստ եղած տեղերը: Կարսի մէջ իմացուեցաւ, որ խաբած էին Անդրանիկը: Կարսի ձիաւոր խումբը կազմ եւ պատրաստ էր մեկնելու ճակատ, եթէ ձիերը թամբեր ունենային: Կարսի ձիաւոր խումբը մնաց այնտեղ» (Զորավար Անդրանիկի...օրագրութիւնը, էջ 303):

Թուքական դիվանագիտությունը շարունակում էր ճնշումը: Թուրքական գործակալները պնդում էին Վեհիբ փաշայի այն հայտարարությունը, թե առաջ է շարժվելու մինչև ռուսական բանակի հետ հանդիպելը և Անդրկովկասյան կոմիսարիատի ղեկավարությանը համոզում էին, թե Թուրքերը կանգ են առնելու 1914թ. սահմանին հասնելուց հետո, քանի որ սահմանն անցնելը կնշանակեր պատերազմ հայտարարել կոմիսարիատին:

Ահա, այս խարդավանքն իրականացնելու նպատակով Թուրքերը պահանջում են ռազմաճակատից հեռացնել արևմտահայերից կազմված կամավորական ջոկատները:

Սեյմում նստած հակահայկական ուժերը հաճույքով կատարում են այդ պահանջը: Դրա հետ համաձայնվում են Հայոց ազգային խորհուրդը և հայկական զորամասերի նախկին ցարական բանակից մնացած ազդեցիկ հրամանատարները, որոնք նույնպես ուզում էին ազատվել կամավորական խմբերից: Թե ինչ ծանր հետևանք ունեցավ այս անմիտ քայլը, կպարզվի հետագայում:

2. ՏՐԱՊԻԶՈՆԻ ԲԱՆԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Դեպքերը զարգանում էին խելահեղ արագությամբ: Անդրկովկասյան սեյմի կառավարությունը 1918 թ. փետրվարի 16-ին, այն ժամանակ, երբ ընթանում էին Բրեստի բանակցությունները, ենթարկվելով Թուրքիայի թելադրանքին, ընդունում է որոշում՝ հաշտության բանակցություններ սկսել Թուրքիայի հետ: Այսպիսի որոշումը Թուրքական հեռահար դիվանագիտության արդյունքն էր:

Այդ օրն էլ սեյմը միաձայն ընդունում է Թուրքերին ներկայացվող հաշտության պայմանները: Ս. Վրացյանը բերում է այդ պայմաններից երկուսը: Ահա այն.

«3. Կնքուելիք հաշտութեան դաշնագրին իբրեւ հիմք պէտք է դրուի 1914 թուին, պատերազմի յայտարարութեան վարկեանին, Ռուսաստանի եւ Թուրքիայի միջեւ գոյութիւն ունեցող պետական սահմանների վերականգնումը:

4. Պատիրակութիւնը ջանայու է ձեռք բերել արեւելեան Անատոլիայի ժողովուրդների համար ինքնորոշման իրաւունք եւ, ի մասնաւորի, Թուրքահայաստանի համար ինքնավարութիւն՝ Թիւրք պետական շրջանակներում»:

«Հայերի համար, -շարունակում է Վրացյանը,- առանձնապէս ծանր էր վերջին կէտը. այնքան յոյսերից յետոյ նորից մնալ «Թիւրք պետականութեան

*շրջանակներում» -սարսափելի էր: Բայց այդքան համեստ պահանջն էլ մեծ դժվարությամբ կարելի եղավ մտցնել հաշտության հիմնական պահանջների մեջ» (**Ս. Վրացյան**, նույն տեղը, էջ 61):*

Ելնելով սույն աշխատության համար նախատեսված ծավալից, հարկ եմ համարում, որքան հնարավոր է համառոտ անդրադառնալ 1918 թ. մարտի 1 (14)-ին Տրապիզոնում սկսված բանակցություններին:

Տրապիզոնի բանակցությունների համար կազմվում է Անդրկովկասյան սեյմի պատվիրակություն, որի մեջ մտնում էին վրացի մենշևիկների, աղրբեջանական մուսավաթականների և հայ դաշնակցության ներկայացուցիչները:

Պատվիրակությունը բազմամարդ էր՝ 40 հոգի: Ըստ կուսակցությունների՝ պատվիրակության մեջ էին 2 մենշևիկ, 2 դաշնակցական, 2 մուսավաթական, մեկական ներկայացուցիչ մուսուլմանական սոցիալիստական բլոկից, Հումմեթից, Ռուսաստանի մուսուլմանների կուսակցությունից, սոցիալիստ-ֆեդերալիստներից և վրաց նացիոնալ դեմոկրատներից: Մնացածը զինվորական և այլ հարցերով խորհրդատուներ էին: Պատվիրակության ընդհանուր ղեկավարն էր Ա. Զիմենկելին:

Հայոց ազգային խորհրդի կողմից պատվիրակության կազմում մտնում են Հ. Քաջազնունին և Ա. Խատիսյանը: Պատվիրակության խորհրդականների մեջ էին նաև Ա. Բաբախանյանը (Լեո), Ռ. Տեր-Մինասյանը: Պատվիրակության գործերի կառավարիչն էր Մ. Թումանյանը:

Պետք է նկատի ունենալ, որ հայ ժողովրդի համար ստեղծված այդ ծանր ժամանակաշրջանում դաշնակցությունը, որ դեռ կարողանում էր ինչ որ կերպ հայ իրականության մեջ պահպանել իր ժողովրդականությունն ու հեղինակությունը, սկզբում ՕԶԱԿՈՄ-ի կազմում, հետո նաև Անդրկովկասյան կոմիսարիատի մեջ վրացի մենշևիկների և աղրբեջանական մուսավաթականների գերիշխող բլոկի կողմից մղվել էր երկրորդական դիրքի վրա:

Դրա հետ մեկտեղ երբեք չհարթվեցին այդ երեք կուսակցությունների միջև եղած խոր հակասությունները: Այս հանգամանքին անդրադառնալով, Ստ. Շահումյանը 1918 թ. մարտի 9-ին գրել է. «Անդրկովկասյան կոմիսարիատը ներկայացնում էր երեք ազգային կուսակցությունների՝ վրացական մենշևիկների, հայ դաշնակցականների և մուսուլմանական բեկերի բլոկ: Անդրկովկասյան հատուկ կոմիտեում, որ նույնպես բավական տիրահիշատակ է, նստած էին վրացի Զիմենկելին, հայ Պապաջանովը և մուսուլման Ջաֆարովը: Յուրաքանչյուրն իր հատուկ առանձնասենյակում տեղորինելով

*«իր» ազգի բախտը՝ նրանք ատում էին իրար, չէին վստահում իրար և արևելյան կառավարիչների օրինակով զբաղվում էին փախադարձաբար իրար վատություն անելով, իրար լրտեսելով, հետապնդելով և փոխադարձ ինտրիգներով: Անդրկովկասի համար միասնական իշխանություն գոյություն չուներ» (**Ստ. Շահումյան**, նույն տեղը, հ. չորրորդ, էջ 150):*

Ահա այսպիսի խոր հակասություններով խճճված Անդրկովկասյան պատվիրակությունը Տրապիզոնի կոնֆերանսում պետք է լուծեր ու պաշտպաներ Անդրկովկասի ժողովուրդներին հուզող խնդիրները, իսկ դաշնակցությունը պաշտպաներ հայ ժողովրդի շահերը:

Տրապիզոնի հաշտարար կոնֆերանսն իր աշխատանքը սկսում է 1918 թ. մարտի 1 (14)-ին: Մինչ պաշտոնական բանակցությունների սկսումը, Անդրկովկասյան պատվիրակությունը իր նիստում քննարկում է բանակցությունների ընթացքում իր գործունեության ծրագիրը:

*Նախ միաձայն որոշվում է ռուսական կողմնորոշումից հրաժարվել և ընդունել թուրքական կողմնորոշում: Այնուհետև դրվում է հետևյալ հարցը. «Տրապիզոնում պատվիրակությունը ո՞ւմ անունից պետք է բանակցություններ վարի: Պետք է հանդես գա իբրև Ռուսիայի մի մա՞սը, թե՞ իբրև միացյալ անկախ Անդրկովկաս»: Որոշվում է, որ Անդրկովկասի պատվիրակությունը հանդես է գալու սեյմի անունից (**ՀՀ ԱԱ**, ֆ. 200, ց. 1, գ. 9, թ. 9):*

Իսկ պատվիրակության հաջորդ նիստում աղրբեջանական կողմի ներկայացուցիչ Գանիևը նորից բարձրացնում է կողմնորոշման խնդիրը և տալիս է հետևյալ հարցը. «Հայաստանը բաժանված է երեք մասի՝ ռուսական, թուրքական, պարսկական ու այդ մասերը հավանական է կուզենան միավորվել: Այդ դեպքում ի՞նչ կողմնորոշում կունենա Հայաստանը՝ ռուսական, թե՞ թուրքական»:

*Այդ հարցին Ա. Խատիսյանը պատասխանում է. «Այնքանով, որքանով Կովկասն անջատվել է Ռուսաստանից, ապա հնարավոր է, որ հայերն իրենց համար ընտրեն թուրքական կողմնորոշում, եթե, իհարկե, դա գտնեն իրենց համար շահավետ» (**նույն տեղը**, թ. 41):*

Անդրկովկասյան պատվիրակության նիստում քննարկվում է նաև հայոց հարցը, որի մասին ընդարձակ զեկուցում է տալիս Խատիսյանը: Նիստին ներկա Լեոն գրում է. «Այն, ինչ տեսա այդ զեկուցումից հետո՝ երբեք չի անհետանա իմ հիշողությունից: Դժբախտ հայ ժողովուրդ... Ում առաջ էր դրված նրա կրած սարսափների դատը: Ովքե՞ր պիտի փրկության դուռ բաց անեին նրա համար: Մուսավաթնե՞րը պիտի վրդովվեին, նրանք, որոնք պատրաստ էին ամեն րոպե կրկնել միևնույնը հայերի գլխին: Իսկ վրացի նա-

ցիոնալիստնե՞ր...»:

Ըստ Լեոյի վկայության, Խատիսյանի զեկուցումից հետո, վրաց ներկայացուցիչ Գվազավան ասում է. «Այդ բոլորը հուզիչ է, բայց մենք ի՞նչ գործ ունենք այդ բոլորի հետ: Մեզ համար մեծ բան կլինի և Բաթումի ազատելը, եթե կարողանանք: Իսկ եթե հայոց հարց բարձրացնենք, տանուլ կտանք և Բաթումը» (Լեո, Անցյալից, էջ 388):

Ի պատասխան վրացիների բռնած այս դիրքի, հայ ներկայացուցիչները պահանջում են թուրքերին զիջել Արդահանի, Օլթիի և Բաթումի վրացական մասերը: Մուսավաթականներն էլ պնդում էին ամեն կերպ բավարարել թուրքերի պահանջները:

Երբ մուսավաթական պատվիրակին հիշեցնում են, որ թուրքերի գլխավոր նպատակն է գրավել ամբողջ Անդրկովկասը, Խան-Մամեդովը պատասխանում է. «Թուրքական զորքերի առաջխաղացումը և նրանց կողմից վիճելի մարզերի գրավումը պետք է դիտել ոչ թե որպես դրանց նվաճում, այլ կարգ ու կանոնի վերականգնում»:

*Այնուհետև Խան-Մամեդովը նկատի ունենալով ռազմաճակատում մնացած հայ կամավորական ջոկատներին, հայտարարում է, որ «Հեռացած ռուսական զորքերին փոխարինող կովկասյան ազգային զորամասերը թուրքերի կողմից դիտվում են որպես չեթնիկներ (պարտիզաններ), քանի որ Անդրկովկասը տակավին կազմում է Ռուսաստանի մի մասը»: Նա պահանջում է այդ ջոկատները հեռացնել ռազմաճակատից (**Ապրեսյան Ե.**, Թուրքիան և նրա նվաճողական քաղաքականությունն Անդրկովկասում 1914-1918 թթ., Եր., 1964, էջ 358):*

Անդրկովկասյան պատվիրակության կազմում տիրող այս հակասությունները մուսավաթականների մատուցմամբ հայտնի են դառնում թուրքերին, որոնք էլ հաջողությամբ դրանք օգտագործում էին բանակցությունների ընթացքում:

Միաժամանակ թուրքերը բանակցություններին զուգահեռ այդպես էլ չեն դադարեցնում ռազմական գործողությունները:

Թուրքերի վարքագիծը Խատիսյանի գնահատմամբ այն էր, որ «միաժամանակ եւ բանակցութիւններ վարել եւ պատերազմ մղել՝ ամբողջովին իրենց կամքը պարտադրելու համար»:

Ահա, այսպիսի հանգամանքներում սկսվեցին Տրապիզոնի բանակցությունները: Հենց առաջին նիստի ժամանակ, Անդրկովկասյան պատվիրակությունը կատարում է զիջում՝ հանձնաբար հրաժարվում է բանակցությունների ընթացքում փոխհաջորդայնությամբ նախագահելու սկզբունքից, և

նախագահությունը տալիս է թուրքական պատվիրակության ղեկավար Ռաուֆ բեյի ձեռքը:

Առաջին նիստում Ռաուֆ բեյը հայտարարում է, որ Օսմանյան կառավարության պատվիրակությունն անկեղծորեն ձգտելով բարիդրացիական հարաբերություններ հաստատել ձևավորման պրոցեսում գտնվող Անդրկովկասյան հանրապետության հետ, Անդրկովկասյան պատվիրակությանը խնդրում է ճշտորեն հուշակել հիշյալ հանրապետության էությունը, ձևի, քաղաքական ու վարչական կազմակերպության վերաբերյալ և հարցնում է. «Կատարե՞լ է արդյոք վերջին պայմանը, որը պահանջվում է պետության կազմավորման ժամանակ միջազգային իրավունքով»:

Մարտի 15-ին սկսված երկրորդ նիստում Անդրկովկասյան պատվիրակության ղեկավար Չիխենկելին որպես պատասխան, հայտարարում է. «Բոլշևիկյան հեղաշրջումից հետո Անդրկովկասում առաջացել է նոր ինքնուրույն կառավարություն՝ պատասխանատու սեյմի առջև և որ Անդրկովկասը փաստորեն իրենից ներկայացնում է միջազգային հարաբերությունների սաղարեզ մնալով և առանց իր գիտության կնքված Բրեստի պայմանագրի դեմ բողոքող պետություն, որը դեռևս չի հուշակել պետություններին իր անկախության մասին»:

Չիխենկելու հայտարությունը չի բավարարում Ռաուֆ բեյին, որը ներկայացված փաստաթղթով պահանջում է տալ թուրքական կողմին հետաքրքրող հարցերի պարզաբանում:

Ստորև բերվող այդ փաստաթուղթն ամբողջովին բացահայտում է թուրքական կողմի մտադրությունը.

«Անդրկովկասյան պատվիրակության ներկայացրած հուշակագրում ասված է. «Բոլշևիկյան ապստամբության պահից սկսած դադարել է ռուսական կենտրոնական իշխանության գործունեությունն Անդրկովկասի տարածքում և առաջացել է սեյմի առջև պատասխանատու նոր ինքնուրույն կառավարություն:

Օսմանյան պատվիրակությունը պատիվ ունի խնդրելու պարզաբանել Անդրկովկասի տարածքների սահմանները:

Անդրկովկասյան պատվիրակության հուշակագրում ասված է, որ «Անդրկովկասի սեյմի կառավարությունը հեռագրով պատերազմող տերությունների արտաքին գործերի մինիստրներին ուղարկել է իրենց բողոքը Բրեստ-Լիտովսկում կնքված հաշտության պայմանագրի այն մասի դեմ, որը վերաբերում է Անդրկովկասին, առանց իրենց գիտության ու հավանության կնքված պայմանագիրը միջազգային իրավունքի տեսակետից ճանաչելով զուրկ ամեն

մի նշանակությունից և իր համար ոչ պարտադիր»:

«Օտոմանյան պատվիրակությունը,- այնուհետև ասվում էր Թուրքական պատասխանում,- իր պարտքն է համարում հաստատել, որ բոլորովին էլ չանտեսելով միջազգային իրավունքի կանոնները, որոնց ուժով երկու պետությունների միջև կնքված պայմանագրերը որևէ ազդեցություն չեն կարող ունենալ երրորդ պետության նկատմամբ, անհրաժեշտ է, որպեսզի այս վերջինը կարողանա օգտվել այդ կանոններից, կազմավորվեր միջազգային իրավունքին համապատասխան սկզբունքներով և որպեսզի այն միջոցներ ձեռնարկեր մյուս բոլոր պետությունների կողմից ճանաչվելու համար: Հավատալի է, որ ճանաչումը չի կարող ունենալ հետադարձ ուժ:

Ի միջի այլոց, Անդրկովկասի կառավարությունը նույնիսկ չի եղել ձևավորված Բրեստ-Լիտովսկի բանակցությունների ժամանակ և մինչև այժմ ոչինչ չի արել մյուս տերությունների կողմից իրեն ճանաչելու համար»:

«Այս իրողությունը,- մատնանշում էր Թուրքական պատվիրակությունը,- հաստատվում է նաև 1918 թ. հունվարի 23-ի պ. Դեգեչկորիի նամակի բովանդակությամբ: Այդ նամակում ասվում է, որ «Անդրկովկասի կառավարությունը կանգնել է այն անհրաժեշտության առջև, որպեսզի իր վարվելակերպն ու իր գործողությունները, նկատի ունենալով ռազմական գործողությունների դադարեցումը, համաձայնեցնի Ռուսաստանյան Հանրապետության տարածքային միասնությունը կազմող մյուս ինքնավար կառավարությունների վարվելակերպին ու ակտերին»:

Այնուհետև Թուրքական կողմն ընդգծում է. «Ինչ վերաբերում է Բրեստ-Լիտովսկի կոնֆերանսին Անդրկովկասի պատվիրակների մասնակցության, ապա ինքնին պարզ է, որ նշված բանակցությունների ժամանակ Կովկասում անկախ պետության գոյություն չունենալը բացատրվում է իրեն Ռուսաստանյան ֆեդերատիվ հանրապետության անդամ համարող Անդրկովկասյան կառավարության վարքագծով, ինչպես նաև կոնֆերանսին իր ներկայացուցիչներին ուղարկելուց ձեռնպահ մնալով»:

«Այսպիսով,- ասվում էր Թուրքական կողմի պատասխանի վերջում,- ակնհայտ է, որ եթե Անդրկովկասյան պետությունը, ստեղծված իրավունքի սկզբունքներին համապատասխան, ցանկություն հայտներ մասնակցել բանակցություններին, ապա նրան ոչինչ չէր խանգարի մասնակցել այդ բանակցություններին:

Օտոմանյան կառավարությունը Ռուսաստանի դեմ ռազմական գործողությունների ժամանակ իմանալով Անդրկովկասում կազմված պետության

մասին և վերջինիս կողմից Ռուսաստանից անջատվելու մտադրության մասին, ցանկություն է հայտնել ծանոթանալ նրան և նրա հետ մտնել բարիդրացիական հարաբերությունների մեջ:

Ի միջի այլոց, մինչև ներկա ժամանակը Կովկասյան ռազմաճակատում կանգնած է բացառապես միայն ռուսական բանակը:

Վերոհիշյալ նկատառումների հիման վրա Օտոմանյան պատվիրակությունն անընդունելի է համարում Անդրկովկասյան պատվիրակության հռչակագիրը Կովկասին վերաբերող Բրեստ-Լիտովսկի պայմանագրի հատվածի անվավերության վերաբերյալ»:

Ուժեղացնելով ճնշումն Անդրկովկասյան պատվիրակության վրա, Թուրքական կողմը բռնում է ավելի անզիջող դիրք: Դա հատկապես դրսևորվում է մարտի 20-ին, բանակցությունների չորրորդ նիստի ժամանակ, երբ Թուրքական կողմը պահանջում է պաշտոնապես ընդունել Անդրկովկասի կառավարման ձևը, տարածքի սահմանները, պետական լեզուն և կրոնը, ինչպես նաև ճշտորեն ընդունել Անդրկովկասյան կառավարության վերաբերմունքը Օտոմանյան կայսրության նկատմամբ:

Ռաուֆ բեյը հայտարարում է, որ Անդրկովկասյան կառավարությանն Օտոմանյան կայսերական կառավարությունը չի ճանաչում և նրա բողոքը Բրեստ-Լիտովսկի պայմանագրի դեմ իրավական ոչ մի ուժ չունի:

Թուրքական պատվիրակությունը պնդում է նաև, որ Անդրկովկասյան պատվիրակության կամքից անկախ, Բրեստ-Լիտովսկի պայմանագրի պարտավորություններն ամբողջապես իրողություն են և պարտադիր:

Հայտարարելով, որ ներկա բանակցություններն այլ նպատակ չունեն, բացի Բրեստ-Լիտովսկի պայմանագրից դուրս մնացած տնտեսական ու առևտրական հարաբերությունների և դրանց գործնական հիմքերի նախապատրաստումից, Ռաուֆ բեյն ասում է. «Օտոմանյան պատվիրակությունը ցանկություն է հայտնում, որպեսզի Անդրկովկասը հայտարարի անկախություն, մինչև որ սկսված բանակցությունները կընդունեն վերջնական բնույթ և կհասցնեն երկու կողմի համար շատ ցանկալի բարենպաստ արդյունքի» (**Վրաստանի կենտրոնական արխիվ**, ֆ. 1819, ց. 1, գ. 18, թ. 13):

Մարտի 21-ին, բանակցությունների 5-րդ նիստի ժամանակ, Զիսենկելին, ի պատասխան Թուրքական կողմի վերոհիշյալ հարցադրումների, հայտարարում է, որ Անդրկովկասյան պատվիրակությունը Բրեստ-Լիտովսկի պայմանագրի հարցում մնում է իր տեսակետին և առաջ է քաշում չորս հիմնական խնդիր.

1. Ստեղծված պայմաններում Անդրկովկասյան սեյմն իրեն լիազորված է համարում հաշտություն կնքել Թուրքիայի հետ:

2. Ձեռնամուխ լինելով հաշտության բանակցություններին, Անդրկովկասյան սեյմն իր առաջ նպատակ է դրել Թուրքիայի հետ կնքել վերջնական հաշտություն:

3. Կնքվող հաշտության պայմանագրի հիմքում պետք է դրվի մինչև 1914 թ. պատերազմի հայտարարման պահին Ռուսաստանի հետ Թուրքիայի պետական սահմանների վերականգնումը:

*4. Պատվիրակությունը ձգտում է Թուրքական պետականության շրջանակներում հասնել Արևելյան Անատոլիայի, մասնավորապես Թուրքական Հայաստանի ժողովուրդների համար ինքնորոշման իրավունքին» (**Վրաստանի կենտրոնական արխիվ**, ֆ. 1819, ց. 1, գ. 17, թ. 35):*

Ռաուֆ բեյը կտրականապես մերժում է այս պատասխանը, այն գնահատում է իբրև Թուրքիայի ներքին գործերին միջամտելու մտադրություն և հայտարարում է. «Բանակցությունները կարող են շարունակվել միայն այն բանից հետո, երբ Անդրկովկասյան կառավարությունը կհրաժարվի Բաթումի, Արդահանի և Կարսի սանջակների վերաբերյալ ունեցած պահանջից»:

*Ջիենկելիին մնում էր եզրակացնել, որ «Կարսը, Արդահանը և Բաթումը չեն կարող լինել մեր քննարկման առարկան» (**Վրաստանի կենտրոնական արխիվ**, ֆ. 1819, ց. 1, գ. 18, թ. 15):*

Բանակցությունները կարծես թե մտնում էին փակուղի և երկու կողմերն էլ համաձայնվում են ընդհատել դրանք և զեկուցել իրենց կառավարություններին: Բանակցություններն ընդհատվում են մինչև ապրիլի 5-ը: Իսկ այդ ընթացքում Թուրքերը շարունակում էին առաջանալ դեպի Անդրկովկաս:

*Այդ մասին Խատիսյանը գրել է. «Ատրճանաթար, ռազմական գործողությանց զարգացման հետ զուգընթաց Կովկասեան ճակատի վրայ, մենք հասանք այն եզրակացությեան, թէ անհրաժեշտ է որոշ հողային զիջումներ ընել Թուրքերուն: Իսկ երբ այդ համոզման եկանք, սկսան ներքին վէճերը Կովկասեանց ազգութեանց ներկայացուցիչներու միջև: Վրացիները չէին ուզեր զիջիլ Պաթումը, հայերն ալ ոչինչ կուզէին զիջիլ Կարսէն, իսկ թաթարները չէ զոք էին այդ խնդիրներու մէջ» (**Ա. Խատիսեան**, նույն տեղը, էջ 33):*

Հարկ եմ համարում ընթերցողի ուշադրությանը ներկայացնել Տրապիզոնի բանակցությունների ընթացքում Խատիսյանի ռուսերեն կատարած օրագրային գրառումներից մեկ-երկու հատված:

«Մարտի 20- Կարծես թե մեզ ձեռնտու է Բրեստ-Լիտովսկի պայմանագրի «ինքնորոշման» իրավունքով:

Մարտի 22- Ռաուֆ բեյի կարծիքը հայկական հարցի վերաբերյալ. «Հայերը դավաճանեցին Թուրքիային: Պատերազմից առաջ Թուրքերը նրանց առաջարկեցին միություն կազմել ռուսների դեմ, քանի որ նրանց վստահում էին: Բայց հայերը փախչում էին բանակից, հեռանում էին Ռուսաստան և կռվում էին Թուրքերի դեմ: ...Թուրքերն այս պատերազմը սկսեցին եվրոպական ազդեցությունից ազատվելու համար և չեն տանի որևէ միջամտություն իրենց ներքին գործերին, նույնիսկ Անդրկովկասյան կառավարության կողմից: Դրա համար, եթե Անդրկովկասյան կառավարությունը ցանկանում է Թուրքիայի հետ հաստատել բարեկամություն ու խաղաղություն կնքել, նա պետք է տարածքային զոհողություն կատարի և մի կողմ թողնի հայկական հարցը»:

Այն հայտարարությունը, որ առանց հայկական հարցի լուծման հնարավոր չէ հանգստացնել Կովկասը, Ռաուֆը նկատեց, որ երբ հաշտություն կնքվի, այն ժամանակ Օտոմանյան կառավարությունը ինքը կհրապարակի մի ակտ՝ փախստական հայերին վերադարձնելու մասին:

Մարտի 24- առաջին անգամ հարց բարձրացավ, որ, ըստ երևույթին, հարկ կլինի ընդունել Բրեստ-Լիտովսկի պայմանագիրը: Թուրքերը հավանաբար առաջ են շարժվում և կգրաղեցնեն ամբողջ վիճելի տարածքը ու արդեն այդ ժամանակ նրանք նվաճման իրավունքով, այլ ոչ թե Բրեստ-Լիտովսկի պայմանագրով, կօկուպացնեն մարզերը: Նման պայմաններում պատվիրակության անդամները գտնում են, որ ավելի լավ է շտապ կարգով ճանաչել Բրեստ-Լիտովսկի պայմանագիրը: Վրացիները, ըստ երևույթին, դեմ են Բրեստ-Լիտովսկի պայմանագրին, որովհետև վախենում են որ աջարացիները կինքնորոշվեն Թուրքիայի օգտին: Քաջազնունին արտահայտվեց Բրեստ-Լիտովսկի պայմանագրի օգտին, ենթադրելով, որ Կարսի ու Կաղզվանի հայերը կինքնորոշվեն Անդրկովկասի օգտին:

Եվ որպեսզի Անդրկովկասյան սեյմը իրավունք ունենար խոսել Բրեստ-Լիտովսկի պայմանագրով նշված տարածքների մասին, պետք է իրեն անկախ հայտարարեր:

Դիմադրում են Թուրքերը, թե քանի Բաքուն բոլշևիկների ձեռքին է, չեն կարող միանալ անկախությանը և պահանջում են օգնել այնտեղից բոլշևիկներին քշելու համար: Կարճիկյանի ու Դեգեչկորիի անունով Քաջազնունին հեռագրեց. «Մեր պարտքն ենք համարում «Դաշնակցություն» կուսակցության ամենայուրջ ուշադրությունը հրավիրել, որ պայմանագրի ընդունումը

համարվում է չարիքի փոքրագույնը: Խատիսով, Քաջազնունի»: Այս հեռագիրը ուղարկվեց մարտի 30-ի գիշերը» (ՀՀ ԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 9, թ. 107):

Մարտի 22-ին Անդրկովկասյան պատվիրակության մի մասը վերադառնում է Թիֆլիս՝ սեյմին զեկուցելու բանակցությունների ժամանակ Թուրքերի ներկայացրած պահանջների մասին:

Պատվիրակության զեկուցումը քննարկելուց հետո, սեյմը որոշում է պատվիրակության ղեկավարին տալ արտակարգ լիազորություններ՝ պատվավոր հաշտության հասնելու ուղղությամբ ինքնուրույն ու անհրաժեշտ քայլեր կատարելու համար:

Տրապիզոնի բանակցությունների վերջին, 6-րդ նիստը գումարվում է մարտի 23-ին (ապրիլի 5-ին): Անդրկովկասյան պատվիրակության ղեկավար Չխենկելին հրապարակում է հայտարարություն, որտեղ, մասնավորապես, նշվում են հետևյալ հարցերը.

1. Օտոմանյան պատվիրակությունը չի ներկայացրել Բրեստ-Լիտովսկի պայմանագրի տեքստը:

2. Եթե հաշտության բանակցությունների համար ելակետը պետք է լինի Բրեստ-Լիտովսկի պայմանագիրը, ապա որքանո՞վ է օրինաչափ բանակցություններ վարել միայն Օտոմանյան կառավարության հետ, այլ ոչ թե պայմանագիրը ստորագրած քառյակ միության բոլոր պետությունների կառավարությունների հետ:

Միաժամանակ Չխենկելին ասում է. «Սակայն ելնելով բարեկամական հարաբերություններ հաստատելու շահերից, Անդրկովկասյան պատվիրակությունն առաջարկում է նախկին սահմանների նոր փոփոխություն, որով Թուրքիային են անցնում Օլթիի ամբողջ օկրուգը, Արդահանի հարավային մասը, Կարսի հարավ-արևմտյան մասը և Կաղզվանի արևմտյան մասը»:

Այսպիսի առաջարկություն անելով, Չխենկելին ամեն կերպ ձգտում էր վերոհիշյալ տարածքների հաշվին պահել Բաթումը: Բայց դա բոլորը չէր: Հայկական պատվիրակության լուռ համաձայնության պայմաններում Չխենկելին հայտարարում է նաև, որ իր պատվիրակությունը հրաժարվում է Թուրքական Հայաստանի վերաբերյալ առաջարկությունից, որպեսզի դրանով ցույց տա, որ նա նպատակ չի ունեցել միջամտել Օտոմանյան պետության ներքին գործերին:

Լսելով Չխենկելիի հայտարարությունը, Ռաուֆ բեյն առաջարկում է փակել նիստը, մինչև Անդրկովկասյան պատվիրակության հայտարարության վերաբերյալ կստացվեն իր կառավարության հանձնարարականները:

Սրանով էլ Տրապիզոնի բանակցությունները պաշտոնապես ավարտվում են:

Ապրիլի 6-ին Անդրկովկասյան պատվիրակության անունով ստացվում է Թուրքական կառավարության վերջնագիրը, որով պահանջվում էր 48 ժամվա ընթացքում պատասխան տալ Բրեստ-Լիտովսկի պայմանագրի վերաբերյալ:

Սեյմի պատասխանն ուշանում էր և վերջնագրի ժամկետը լրանալուց հետո արտակարգ լիազորություններ ստացած Չխենկելին ապրիլի 10-ին հայտարարում է, որ Անդրկովկասյան պատվիրակությունն ընդունում է Բրեստ-Լիտովսկի պայմանագիրը և պատրաստ է դրա հիման վրա շարունակել հետագա բանակցությունները:

Երբ հայտնի է դառնում Չխենկելիի հայտարարությունը, սեյմն ընդունում է հետևյալ որոշումը. «Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Անդրկովկասի սահմանների վերաբերյալ Թուրքիայի և Անդրկովկասի միջև հաշտության համաձայնություն չի կայացել, Անդրկովկասյան պատվիրակությանն առաջարկում է անհապաղ վերադառնալ Թիֆլիս»:

Ապրիլի 13-ին Թուրքական պատվիրակության ղեկավար Ռաուֆ բեյը, ի պատասխան Չխենկելիի վերոհիշյալ հայտարարության, Անդրկովկասյան պատվիրակության առջև դնում է Անդրկովկասն անկախ հայտարարելու պահանջը և զգուշացնում, որ եթե դա չարվի, ապա անիմաստ է շարունակել բանակցությունները:

Այսպես, Թուրքիան հետևողականորեն շարունակում էր ճնշում գործադրել և հասնել Ռուսաստանից Անդրկովկասի անջատման:

Ահա այս հարցում էլ Թուրքիայի և Անդրկովկասյան սեյմի քաղաքական ձգտումները համապատասխանում էին իրար: Սեյմի մեջ մտած բոլոր կուսակցություններին ամենից շատ հետաքրքրում էր Ռուսաստանից անջատվելը և ոչ թե թուրքական վտանգը:

1918 թ. ապրիլի 13 (22)-ին, երբ Անդրկովկասյան պատվիրակությունը պատրաստվում էր հեռանալ Տրապիզոնից, թուրքական վերջնագրի հիման վրա, կատարելով թուրքերի կամքը, սեյմն Անդրկովկասը հռչակում է անկախ պետություն: Ստեղծվում է այնպիսի վիճակ, որը Խատիսյանի խոսքերով ասած, հաշտության փոխարեն բերում էր պատերազմ:

Բաքվի հայոց ազգային խորհուրդը հրապարակած հայտարարության մեջ ընդգծում էր. «Տաճիկները, չնայած որ հաշտության բանակցություններ են վարում մեզ հետ Տրապիզոնում, միաժամանակ արշավանք են սկսել Կով-

կասեան ճակատում: Այդ փաստն անկասկածօրէն ցոյց է տալիս, որ իմպերիալիստական Տաճկաստանի ջարդարար իշխանութիւնները Կովկասի ժողովուրդների հետ արդար, դեմոկրատական հաշտութիւն կնքելու լուրջ դիտում չունեն, այլ ձգտում են հաշտութեան բանակցութիւններով նենգօրէն քնեցնել մեզ, մեռցնել մեր դիմադրական կամքը, որպէսզի աւելի հեշտութեամբ գրաւեն մեր երկիրը» («Արև», մարտի 10 (23), 1918 թ.):

Հաջորդ օրը «Արև» թերթը իրավացի կերպով դժգոհում է, որ Բաքվից հայտնված զգուշացումը Տրապիզոն բանակցությունների համար մեկնած պատվիրակությունը հաշվի չի առել և գրում է հետևյալը. «Երբ մենք այն միտքն էինք յայտնում, որ Տրապիզոնը կարող է մի նոր Բրեստ-Լիտովսկ դառնալ Անդրկովկասի համար, մենք փաստային քիչ տեսակներ ունէինք մեր ձեռքի տակ այդ միտքը հիմնավորելու համար: Այնուհետև ստացած տեղեկութիւնները եկան հաստատելու մեր երկիղի հիմնաւորութիւնը»:

Տրապիզոնում ընթացող բանակցությունները համարելով «նենգ դիւանագիտութիւն», «Արև»-ը եզրակացնում էր, որ այդ դիվանագիտությունը, «ինչ որ մեզ սպառնում է, ավելի վատ է, որովհետև նա մեզ համար դարձեալ նահատակութիւն է պատրաստում, սակայն նահատակութեան այն տեսակը, որ ժողովուրդը գոհէկօրէն ամենաանխելք կենդանու անուան հետ է կապում: Ամեն ինչ, բայց ոչ այդ» («Արև», մարտի 11 (24), 1918 թ.):

Հարկ եմ համարում նշել, որ վերոհիշյալ հայտարարությունն ու «Արև» թերթում հայտնված գնահատականն ընդունվել է Ռոստոմի ներկայությամբ ու նրա մասնակցությամբ:

Ինչ տվեց Տրապիզոնը հայերին: Բոլորի աչքերի առաջ զոհաբերվեցին հայ ժողովրդի կենսական շահերը:

Նույնիսկ պատվիրակությունը չկարողացավ պաշտպանել 300 հազար արևմտահայ գաղթականների հայրենիք վերադառնալու իրավունքը:

Ստեղծված իրավիճակն ամբողջացնելու նպատակով վկայակոչենք Ս. Վրացյանին: «Թիֆլիսում,- գրել է նա,- սակայն, ամէն բան արդէն որոշուած էր, վրացիներն ու Թուրքերը վճռել էին՝ վերջ տալ պատերազմին, ընդունել թիւրքական վերջնագիրը եւ յայտարարելով Անդրկովկասի անկախութիւնը, վերսկսել հաշտութեան բանակցութիւնները: Այս քայլն անելիս վրացիները որոշ յոյսեր էին կապում Գերմանիայի հետ, որոնց ներկայացուցիչներին Զիմենկելին հանդիպել էր Տրապիզոնում միւս պատգամաւորներից գաղտնի, իսկ Թուրքերի համար (նկատի ունի մուսավաթականներին- Վ. Պ.) Թիւրքիան ցանկալի բարեկամ մը էր:

Այսպիսով հայերի համար ստեղծում էր ահաւոր կացութիւն. միանալ վրացիներին ու Թուրքերին՝ նշանակում էր ձեռք քաշել ոչ միայն ամբողջ Թուրքահայաստանից, այլ եւ Ռուսահայաստանի մի երրորդ մասից, եւ դեռ հարց էր՝ կը գոհանայի՞ն արդյօք Թիւրքերը միայն Բրեստ-Լիտովսկի սահմաններով»:

«Զմիանալ,- ընդգծում է Վրացյանը,- նշանակում էր անջատուել հարեւաններից, մնալ մենակ, կտրուած ամբողջ աշխարհից, շրջապատուած մահմեդական ծովով, թիւրքական բանակի սպառնալիքի տակ՝ դատապարտուած ստոյգ մահուան: Պետք էր ընտրել չարիքներից փոքրագոյնը, եւ հայերը միացան հարեւանների որոշման: Ուրիշ ճանապարհ չկար: Ապրիլի 9-ին գումարուեց սեյմի 22-րդ նիստը, ուր դրուեց Անդրկովկասի անկախութեան յայտարարութեան հարցը: Մեռելատան էր նմանում այդ օրը սեյմի դահլիճը: Մենակ հայերը չէին սգաւոր, վրացիներն էլ լաւ չէին զգում իրենց: Տոնական տրամադրութիւն ունէին միայն վրացի ազգայնականները, բայց, մանաւանդ, Թուրքերը... Մուսավաթական ֆրակցիան իրեն զգում էր նոր փեսայի դերում: Զէ՞ որ իրականում էր իրենց նուիրական տենչը՝ մի քայլ դեպի Ռուսաստանի քայքայումը, մի քայլ դեպի «Թուրք ազգերի դաշնակցութիւնը»՝ Ղրիմից Վոլգա, Վոլգայից Թուրքիստան եւ Թուրքիստանից՝ Անատոլիա»:

«Իսկական սգի մէջ էին հայերը,- շարունակում է Վրացյանը,-սիրտ չկար խօսելու: Եվ ինչ խօսի. բոլոր խօսքերն արդեն ասուած էին: Նրանց ապրումները արտայայտեց Յ. Քաջազնունին: Յուզուած, մաղերը ցրիւ՝ բարձրացաւ ամբիոն ու կարդաց. «Պարոնայք սեյմի անդամներ: Դաշնակցութեան ֆրակցիան՝ գիտակցելով շատ պարզ այն մեծ պատասխանատուութիւնը, որ առնում է իր վրայ այս պատմական վայրկեանին, միանում է ինքնորոյն Անդրկովկասեան պետութեան յայտարարութեան» (Ս. Վրացյան, նույն տեղը, էջ 84-87):

Սեյմի նույն նիստում ելույթ է ունենում նաև Էսէռ Լ. Թումանյանը, որը զգուշացնում էր. «Անդրկովկասի ներկա պայմաններում հայտարարված անկախությունը ոչ այլ ինչ է, եթե ոչ դառնալ կատարյալ ստրուկ Թուրքիային: ...Պետք է անկեղծորեն խոստովանել, որ Անդրկովկասի «անկախության» գաղափարը գալիս է Թուրք իմպերիալիստներից: Այդ հարցը Անդրկովկասի կենաց ու մահվան հարցն էր: Ինչո՞ւ դուք չեք դիմում հանրաքվեի օգնությունը: Հավատացա՞ծ էք արդյոք դուք, որ եթե այդ հարցը վճռեր ազատ քվեարկության ճանապարհով, ժողովուրդը չէր ասի «Զեմ ցանկանում այն անկախությունը, որը գալիս է Թուրքական սուլթանի մահակի տակից»: Անկա-

*խությունն, որը հռչակված է այնպիսի պայմաններում, ինչպիսին ներկայումս գոյությունն ունի Անդրկովկասում, դա նշանակում է անցում դեպի Թուրքիայի կողմից լրիվ ստրկացումը... Անդրկովկասն անկախ հռչակելը ոչ այլ ինչ է, եթե ոչ կողմնորոշում դեպի Թուրքիան և այդ փաստը դուք ոչ ոքից չեք կարողանա թաքցնել» (**Վրաստանի կենտրոնական արխիվ**, ֆ. 1875, ց. 1, գ. 4, թ. 68):*

Անդրկովկասյան սեյմի վարած քաղաքականության ամբողջ ծանրությունը ընկնում էր հայ ժողովրդի վրա:

Վերոհիշյալ բազմաթիվ մեջբերումները հստակորեն վկայում են, որ հայ քաղաքական գործիչները, որոնք տեղ ունեին սեյմի կազմում, պատկերացնում էին այն ամբողջ վտանգը, որ սպառնում էր հայ ժողովրդին:

Ա՛յո, միայն պատկերացնում էին, խոսում էին այդ մասին, բայց ոչ մի գործնական քայլի չդիմեցին:

Ի՞նչն էր պատճառը: Անպատասխանատվությո՞ւնը, իրաղարձությունների ետևից գնա՞լը: Իհարկե, դրանք կային, բայց գլխավորը՝ սեփական ժողովրդի շահերից չբխող քաղաքականությունն էր, որն ամենից առաջ նշանակում էր նպաստել Ռուսաստանից Անդրկովկասի անջատմանը:

Այս ամենն էլ նկատի ունենալով Ստ. Շահումյանը զգուշացնում էր. «Անդրկովկասի անջատումը Ռուսաստանից... վերջին հաշվով նշանակում է անցնել Թուրքիայի խնամակալության տակ: Ռուսաստանից անջատում ցանկանալ ... դա կլինի շրջադարձ Եվրոպայից դեպի Ասիա: Ռուսաստանից այդ անջատումը հարկավոր է միայն խաներին ու բեկերին: Այդ անջատումը առաջին վճռական քայլն է դեպի Թուրքիային ենթարկվելը: ... Ոչ ոքի համար անսպասելի չպետք է լինի, եթե ես ասեմ, որ հայ մասսաները կենսակարոտեն շահագրգռված են այն բանում, որպեսզի քաղաքականությունն արմատապես փոխվի, որովհետև եթե այդ քաղաքականությունը շարունակվի, ապա հայ բնակչությանը գլխովին ոչնչացում է սպառնում, որը վիճակվեց նրան Թուրքահայաստանում»:

Ահա, համառոտ այն իրավիճակը, որ կար Տրապիզոնի բանակցությունների ժամանակ ու հետո:

Ռուսաստանից Անդրկովկասի անջատումը հայ ժողովրդին կանգնեցրեց անասելի դժվար կացության առջև, որը հաղթահարելու համար նրանից պահանջվեց հիզերի գերմարդկային լարում:

1918 թ. ապրիլի 22-ին Թուրքիայի պահանջով Անդրկովկասյան սեյմը հայտարարում է Անդրկովկասի անջատումը Ռուսաստանից, այն հռչակելով

որպես «անկախ դեմոկրատական ֆեդերատիվ հանրապետություն»:

Վրաց մենշևիկ Չխեենկելու գլխավորությամբ կազմված նոր կառավարությունը հենց առաջին օրից դառնում է գերմանա-թուրքական բլոկի հլու կամակատարը: Սակայն Թուրքերի նպատակների մեջ չէր մտնում միացյալ Անդրկովկասի գոյությունը:

Թուրքերը ուժեղացրին ճնշումը, և Անդրկովկասի անկախությունը հռչակելուց ուղիղ 34 օր անց, ուլտիմատում ներկայացնելով, հարկադրեցին հռչակել Վրաստանի, Հայաստանի և Ադրբեջանի անկախություն:

3. ԿԱՐՍԻ ԱՆԿՈՒՄԸ

Տրապիզոնի բանակցությունների ընթացքում Թուրքական կողմը բռնել էր անզիջում դիրք: Դրա հետ միասին ռազմաճակատում նույնպես շարունակվում էր ճնշումը: Թուրքական բանակը ոչ մի բանի առաջ չկանգնելով, սողում էր դեպի Անդրկովկաս:

Տրապիզոնում Չխեենկելին գաղտնի բանակցում էր ամեն գնով Բաթումը պահելու համար: Այդ է վկայում, օրինակ, ներքին գործերի մինիստր Ռամիշվիլու հեռագիրը, որ նա Գեգեչկորիի անունից ապրիլի 11-ին ուղարկել էր Չխեենկելուն, որով հավանություն էր տրվում Կարսն ու Արդահանը զիջելու որոշմանը, պայմանով, որ Բաթումը պետք է մնա վրացիներին:

Սեյմի մեջ տեղ գրաված բոլոր կուսակցությունները կարծես համաձայնվել էին այն բանում, որ Կարսի հանձնումով կփրկվի Անդրկովկասը: Եվ մինչ քննարկվում էր Կարսի ճակատագիրը, Թուրքերը Էրզրումի գրավումից ուղիղ 21 օր անց, հասան Սարիղամիշ:

Թվում էր, թե Թիֆլիսի հայոց ազգային խորհուրդը կկարողանա այդ 21 օրվա ընթացքում միջոցներ ձեռնարկել առաջացող Թուրքերի դեմն առնելու համար:

Էրզրումի անկումը զգաստացրել էր հայ ժողովրդին: Ամենուրեք կազմվում էին կամավորական ջոկատներ, ստվարացել էր ռազմաճակատ մեկնելու ցանկություն ունեցողների թիվը:

Սարիղամիշում հայկական բանակն ուներ 10 հազար զինվոր, այդ թվում նաև մեծ քանակությամբ արևմտահայ կամավորներ:

Նախորդ էջերում արդեն նշվել է Վեհիբ փաշայի դիվանագիտական այն խաղը, որով հայտարարում էր, թե շարունակում է առաջանալ մինչև ռուսական բանակին հանդիպելը, պահանջելով ռազմաճակատից հեռացնել հայ կամավորական ջոկատներին:

Սարիղամիշում գտնվող հայկական զորքերի հրամանատար գեներալ Արեշյանն անտրտունջ կատարում է Վեհիբ փաշայի պահանջը: Նույն պահանջը ներկայացնում էր նաև սեյմը:

Բոլորն էլ գտնում էին, որ հենց արևմտահայերից կազմված ջոկատները հեռացվին ռազմաճակատից, Վեհիբ փաշան արդեն իր առջև կտեսնի կանոնավոր բանակ և կկատարի իր խոստումը՝ կանգնելով 1914 թ. սահմանի վրա:

Արեշյանը ռազմաճակատից Կարս ու Ակբանդրապոլ է հեռացնում արևմտահայերից կազմված կամավորական ջոկատները, զգալիորեն թուլացնելով Սարիղամիշի պաշտպանությունը:

Արևմտահայերից կազմված ջոկատները հիմնականում կռվում էին Սեբաստացի Մուրատի հրամանատարությամբ, որը հետո Թիֆլիսից անցավ Աստրախան ու այնտեղից մեկնեց Բաքու՝ Ստ. Շահումյանին օգնելու նպատակով:

Հետաքրքիր է նշել, որ քանի արևմտահայերի կամավորական ջոկատները չէին հեռացել Սարիղամիշից, Թուրքական բանակը չէր համարձակվում առաջանալ:

Ահա այսպիսի պայմաններում, ապրիլի սկզբին Սարիղամիշ են մեկնում Հայոց ազգային խորհրդի անդամները՝ գեներալ Նազարբեկովի ուղեկցությամբ:

«Սարիղամիշը,- գրել է նաև այնտեղ եկած Ս. Վրացյանը,- գտանք քառասային վիճակի մեջ: Քաղաքը դատարկել էր: Բնակիչները թողած տուն ու տեղ՝ հեռացել էին: Մնացել էին կասկածելի մարդիկ, որոնք գիշեր ու ցերեկ թալանով էին զբաղված: Զինուորական պահեստները մնացել էին անպաշտպան. անհաշիվ հարստություն էր ամբարված - զենք ու ռազմամթերք, զինուորական եւ քաղաքացիական հագուստ... անսպառ դեղօրյաք, ալիւր, շաքար-տասնյակ միլիոնների արժէքով հարստություն: Ռուս բանակը լքել ու հեռացել էր խուժանացած: Տէր չէր մնացել: Զօր. Արէշեանը հազիւ կարողանում էր իր զինուորական անմիջական պարտականություններին հասնել: Ռուս բանակի փայլուն զինուորականի համբաւ ունէր, բայց այժմ խեղճացել, ջղայնացել, թրջուած հաւ էր դարձել. բոլորովին անհամապատասխան էր իրեն վիճակուած դերին» (**Ս. Վրացյան**, Կեանքի ուղիներ, էջ 206):

Վրացյանի վկայությամբ Սարիղամիշում մնացին Վահան Փափազյանը, ինքը և Վահան Նավասարդյանը: «Մեր դերը պետք է լինէր, - գրում էր նա,- սիրտ տալ եւ աջակցել զօր. Արէշեանին պաշտպանելու ռազմաճակատը, որ բնաւ պաշտպանելու տրամադրություն չէր ցոյց տալիս»:

Իսկ Վ. Փափազյանը «Իմ յուշերը»-ի մեջ գրում էր. «Դժբախտաբար, Արէշեանի պէս հրամանատարի մը յանձնուած էր այդ ճակատը, որ անջիղ, Հայաստանի եւ հայութեան հետ չկապած, ձեւապաշտ, անտարբեր ու բիւրոկրատ մարդ մըն էր: Աւելի շատ հետաքրքրուած էր թուրք զինուորներու եւ գերիներու անմխաս պահպանութեամբ եւ խնամքի խնդրով, քան ճակատի դրութեամբ» (**Վ. Փափազյան**, նույն տեղը, էջ 471-472):

Հայ զինվորները լի էին վճռականությամբ թշնամու դեմ կռվելու համար: Բայց ո՞վ պետք է նրանց կազմակերպված գրոհի տաներ, ո՞վ պետք է հոգար նրանց զենքով ու զինամթերքով ապահովելու մասին:

Տիրող վիճակի մասին Վ. Թոթովենցը գրում էր. «Սարիղամիշի մեջ... կային երկու իրարամերժ իշխանություններ, մէկը հայ զինուորական քիւրը եւ երկրորդը Անդրանիկէն ընտրուած Հայաստանի երկրապահ զօրամասի զօրահաւաք քաղիտան Պանդուխտը՝ յայտնի Հնչակեան: Սարիղամիշը կներկայացնէր ռուսական բանակի սիրտը եւ բանակի մեծագոյն հարստությունը մնացած էր այստեղ» (**Զօրավար Անդրանիկի...օրագրություն**, էջ 307):

Այնուհետև նա պատմում է, որ հայ զինվորական միությանն և Պանդուխտի միջև սկսվել էր պայքար եղած ռազմամթերքը զորքի վրա բաժանելու համար և որ միությունը խանգարում էր զորքը զինելուն:

Արժե հիշատակել մի վկայություն ևս, որի հեղինակն Արևմտահայ ապահովության խորհրդի նախագահ Վահան Փափազյանն է. «Սեբաստացի Մուրատն ու Սեպուհը կուզէին մաքրել Կաղզուան-Օլթի տարածութեան մէջ գտնուող Թուրք եւ քուրդ ավազակային տարրերը եւ մէկ գիշերուայ մէջ անցք բանալ դէպի Թուրք բանակի թիկունքը... զարնել ետեւէն եւ խուճապի մատնել, միեւնոյն ատեն մեր զօրքը հարուածէր նաեւ Սարիղամիշի ճակատեն: Այս ծրագիրը ինծի կը թուէր իրականանալի: Կարծեմ Վրացեանը եւ Նաւասարդեանն ալ կը բաժնէին: Նոյն գիշեր զօրավար Արէշովին յայտնեցինք ծրագրի մասին եւ անոր յաջող իրականացման հաւանականութիւնները: Զօրավարը խակ եւ վնասակար համարեց Մուրատի ու Սեպուհի «չեթեներով» գործ տեսնելը. «անկանոն ուժեր են, իրենց կարելի չէ վստահիլ, իսկ ծրագիրը զինուորական տեսակէտէն անգործադրելի»: Ապարդիւն վէճերէն վերջ, վերադարձանք ժիտական պատասխանով: Զայրացած Մուրատը եւ Սեպուհը իրենց ձիաւորներով թողին Սարիղամիշը եւ հեռացան» (**Վ. Փափազյան**, նույն տեղը):

1918 թ. ապրիլի 5-ին Սարիղամիշն իր անհամար զենք ու զինամթերքով,

պարենի պաշարով հանձնվեց Թուրքերին:

Ո՞վ էր մեղավորը: Ի՞նչու հանձնվեց Սարիղամիշը: Չէ՞ որ այն պաշտպան նելու բավարար միջոցներ կային: Մի՞թե միայն դեր էր խաղում հրամանատարության անվճռականությունը: Չկա՞ր այստեղ ավելի զորեղ պատճառ:

Սարիղամիշը գրավելուց հետո թուրքական բանակն անարգել շարժվում է դեպի Կարս:

Ապրիլի 19-ին Հայոց ազգային խորհրդի անդամները և Տրապիզոնի բանակցությունների մասնակիցներն Ակբասանդրապոլում նիստ են գումարում ռազմաճակատում տիրող դրությանը ծանոթանալու համար: Ներկա էին նաև Կովկասյան բանակի հրամանատար Լեբեդինսկին և գեներալ Նազարբեկովը, որոնք էլ զեկուցում են իրադրության մասին:

Ի՞նչ էր զեկուցում Նազարբեկովը: Ահա մի քաղվածք նրա զեկուցումից. «Այժմ ամբողջ ճակատում ունենք 6 հազար զինվոր, որը մեծ թիվ չէ, իհարկե, քանի որ նախաձեռնությունը պատկանում է թշնամուն: Մենք չունենք հետախուզություն: Կարսի պաշտպանության համար եղած ուժերը քիչ են: Մեզ հարկավոր են նոր ուժեր: Զորքը չունի բավարար հագուստ, սնունդը նույնպես գոհացուցիչ չէ: Զորամասերը հոգնած են, նոր ուժերով չեն թարմացվում: Մենք մենակ թշնամուն դիմադրել չենք կարող: Տաճկահայերից էլ առանձին օգնություն չպետք է սպասել»:

Կարծում եմ, որ ընթերցողի համար աննկատ չի կարող մնալ այս պարտվողական տրամադրությունը: Ինչպե՞ս կարելի էր անտեսել, որ կամավորների թիվն օր օրի չատանում էր և միայն հարկավոր էր նրանց զինել ու կազմակերպված տանել ռազմաճակատ: Ինչպե՞ս կարելի էր Էրզրում և Սարիղամիշ քաղաքներում կուտակված հսկայական զենք-զինամթերքը և պարենը, որը մնացել էր ռուսական բանակի հեռանալուց հետո, հանձնել թուրքերին:

Կարսում, որը դեռ թուրքերին չէր հանձնվել, նույնպես, ռուսական բանակի հեռանալուց հետո մնացել էր անհաշիվ քանակությամբ ռազմամթերք ու պարեն:

Եվ այդ ամբողջ միջոցներով զորքը զենք ու զինամթերքով, հագուստով ու պարենով ապահովելու փոխարեն, գեներալ Նազարբեկովը դժգոհում էր, ասելով, թե զորքի զինվածությունը բավարար չէ:

Ինչո՞ւ այդ ամբողջ ունեցվածքն իր նպատակին չծառայեց:

Եվ վերջապես, ինչո՞ւ ռազմաճակատից հեռացվեցին արևմտահայ կամավորական ջոկատները, որոնք աչքի էին ընկնում իրենց մարտունակությամբ: Իսկ Նազարբեկովը դժգոհում էր, ասելով, թե տաճկահայերից օգնություն

չպետք է սպասել:

Նիստում զեկուցում է նաև Հ. Քաջազնունին: Նա ասում է, որ «պատերազմ մղել թուրքերի դեմ մենք չենք կարող, ուստի պիտի ընդունենք Բրեստ-Լիտովսկի պայմանագիրը և հաշտություն կնքենք»: Այս առաջարկությունը ճիշտ է, չի ընդունվում, բայց պետք է կարևորել այդպիսի տրամադրության գոյությունը:

Լեոն, որը մասնակցում էր վերոհիշյալ նիստին, գրում էր, որ Քաջազնունու առաջարկությունը չընդունվեց հատկապես Միշա Արզումանյանի հետևյալ հայտարարությունից հետո. «Կարսը հեռու չէ այս տեղից... եկեք գնանք Կարս... տեսնենք նրա ամրությունները, նրա զինվածության չափը, եթե այս բոլորը տեսնելուց հետո դուք կասեք, թե կարելի է այդպիսի մի բերդ թշնամուն տալ առանց պատերազմի, այդ ժամանակ հարցը միանգամայն լուծված կլինի» (Լեո, Անցյալից, էջ 306):

Հայոց ազգային խորհրդի անդամներն անտեսում են Արզումանյանի փաստարկները և նրանցից ոչ ոք ցանկություն չի հայտնում Կարս մեկնել և ծանոթանալ իրավիճակին:

Միայն հետո պետք է պարզվեր, որ Կարսի ճակատագիրն այդ ժամանակ արդեն որոշված էր և Ակբասանդրապոլում գումարված նիստն էլ ցուցադրական նպատակ էր ունեցել:

Ամբողջ դժբախտությունն էլ այն էր, որ այդ ամենից անտեղյակ էին դիրքերում կռվող հայ զինվորները և այն հազարավոր գաղթականները, որոնք ստիպված տուն-տեղ և ունեցվածք թողած, անասելի սառնամանիքի պայմաններում հետևում էին նահանջող հայկական զորամասերին:

Աահնք, որ չնայած եղած տրամադրություններին, հայկական զորամասերը քաջաբար կռվում էին թուրքերի դեմ, պատճառում նրանց զգալի կորուստներ: Սարիղամիշից հետո ամբողջ 20 օր հայկական զորամասերը համառ դիմադրությամբ կասեցնում էին թշնամու առաջ շարժվելը:

Այժմ դժվար է պատկերացնել, թե հրամանատարության ու ազգային խորհրդի ազդեցիկ անդամների պարտվողական տրամադրությունների պայմաններում հայ մարտիկներն ինչ ուժ էին գտնում իրենց մեջ թշնամուն դիմադրելու համար:

Ապրիլի 24-ին թուրքերին հաջողվում է դուրս գալ Կարսի մատույցներ: Նորից կորցվում է 20 կարևոր օր և այդ բացառիկ հնարավորությունը չի օգտագործվում:

Հնարավո՞ր էր արդոք, Կարսը պահել և չհանձնել թուրքերին: Իհարկե,

հնարավոր էր: Եվ ահա, թե ինչու:

Կարսը գրոհող թուրքական զորքն ուներ նրան ուղեկցող անկանոն ավազակախմբերի թիվն էլ հաշված՝ 12-13 հազար զինվոր, 36 թնդանոթ և 108 գնդացիր: Հայկական ուժերն իրենց տրամադրության տակ ունեին 7 հազար զինվոր, 162 թնդանոթ, 70 գնդացիր:

Ավելացնեմ նաև, որ Կարսի ամրոցի ինժեներական կառույցները հուսալի վիճակում էին: Ամրոցն ապահոված էր անհրաժեշտ սանիտարական միջոցներով, էլ չեմ ասում, թե ինչքան շատ ռազմամթերք ու պարեն կար:

Այս միջոցները բավական էին ոչ միայն Կարսը հուսալիորեն պաշտպանելու, այլև թուրքական բանակին զգալի կորուստներ պատճառելու համար:

Ասվածը փաստելու համար ներկայացնեմ գեներալ Դեևի զեկուցագրից միայն մեկ օրինակ. «Ապրիլի 24-ին, ժամը 11-ին կրակ բացեցին գրեթե բոլոր թնդանոթները: Թուրքերը դադարեցրին հարձակումը և հրետանային կրակ բացեցին ինչպես հարավային, այնպես էլ արևմտյան ամրոցների վրա: Թշնամին միայն լեռնային հրետանի ուներ, որի արկերը կորուստ չէին պատճառում ամրոցի պաշտպաններին: Հրետանային մարտը տևեց մինչև մութն ընկնելը, իսկ հայկական երկրորդ գնդի բռնած Սեղանասարի առաջավոր դիրքերում հրետանային փոխհրաձգություն էր տեղի ունենում: Երկրորդ գնդի զորամասերն երեկոյան կողմ սվինամարտով թուրքերից մաքրեցին հիշյալ լեռը»:

Սակայն, Կարսի ճակատագիրը վճռված էր հայ ժողովրդի թիկունքում: Համառոտ այդ մասին:

1918 թ. ապրիլի 23-ին գեներալ Օղիշելիձեն հեռագրով Նազարբեկովին հայտնում է, որ նախորդ օրը սեյմը հռչակել է Անդրկովկասի անկախություն և հրամայում է անհապաղ թուրքական զինվորական իշխանություններ հետ բանակցություններ սկսել ռազմական գործողությունները դադարեցնելու համար:

Նույն օրը Զիսենկելին հեռագրում է Վեհիբ փաշային և հայտնում, որ Անդրկովկասյան կառավարությունն ընդունում է Բրեստ-Լիտովսկի պայմանագիրը, հռչակել է իր անկախությունը և պատրաստ է վերսկսել բանակցությունները Բաթումում:

Գեներալ Նազարբեկովը, որը տեղյակ չէր Կարսի տակ հայ զորքերի տարած հաղթանակի մասին, ապրիլի 23-ին Ալեքսանդրապոլից հրաման է արձակում՝ անհապաղ դադարեցնել ռազմական գործողությունները:

Նույն օրը Վեհիբ փաշան ներկայացնում է իր պահանջները՝ հայկական

զորքերը պետք է ետ քաշվեն Կարսի ամրոցից երկու կիլոմետր հեռավորության վրա և դադարեցնեն մարտական գործողությունները:

Թուրքերի պահանջներն ընդունվում են անվերապահորեն:

Ապրիլի 24-ին Զիսենկելին ու Օղիշելիձեն Նազարբեկովին հրաման են ուղարկում՝ պահանջելով թուրքերի հետ պայմանավորվել Կարսը հանձնելու մասին:

Թուրքերն անարգել հնարավորություն են ստանում մոտենալ Կարսին: Վեհիբ փաշան ձգտում էր Կարսը գրավել նախապես չպայմանավորվելով այն էվակուացնելու մասին, որովհետև նպատակ ուներ տիրանալ Կարսում եղած հայկական քանակությամբ զինամթերքին ու պարենին:

Ապրիլի 24-ին, գիշերվա ժամը 12-ին մոտ, Նազարբեկովն ուղղակի հրաման է ստանում Կարսից զորքերը դուրս բերել և հեռացրել դեպի Ալեքսանդրապոլ:

Գեներալ Նազարբեկովը փորձում է այս հրամանը կատարելուց առաջ միջոցներ ձեռնարկել էվակուացվող հայ բնակչության անվտանգությունն ապահովելու համար: Նա այդ նպատակով Վեհիբ փաշայից խնդրում է երկուշաբթի ժամկետ, անհրաժեշտ համարելով այդ մասին հեռագրել Թիֆլիս:

Քաղաքականությունից շատ հեռու կանգնած գեներալ Նազարբեկովը միաժամանակ Հայոց ազգային խորհրդին հեռագրով հայտնում էր Կարսը հանձնելու մասին Զիսենկելիի հրամանը, միամտաբար կարծելով, թե այնտեղ նստած գործիչները դրանից տեղյակ չեն:

Բայց արդեն շատ ուշ էր: Զիսենկելին թուրքերի հետ գործարքը պետք է հասցներ իր ավարտին:

Ապրիլի 25-ին Զիսենկելին և Օղիշելիձեն Նազարբեկովի միջոցով հեռագրում են Վեհիբ փաշային, «Անդրկովկասյան Հանրապետության զորքերի կողմից Կարսի մարզը մաքրելու հետ միաժամանակ թուրքական զորքերը պետք է մաքրեն Բութայիսի և Թիֆլիսի նահանգները»:

Այնուհետև, խնդրվում էր Կարսից զորքերի ետ քաշման համար տալ յոթ օր ժամանակ, որպեսզի հնարավոր լիներ Կարսից դուրս հանելու ամբողջ զինվորական ունեցվածքը:

Իսկ Վեհիբ փաշան գիջելու ոչ մի մտադրություն չուներ: Զէ՞ որ նա ձգտում էր իր ձեռքը գցել Կարսի զինանոցը:

Ապրիլի 25-ի երեկոյան ժամը 5-ին թուրքական հրետանին հանկարծակի գրոհ է սկսում: Քաղաքը հրի է մատնվում: Գնդակոծությունից զոհվեցին

հարյուրավոր անմեղ մարդիկ:

Սկսվում է անկառավարելի խուճապ: Կարսից զլխիկոր հեռանում էին հայ զինվորները, որոնք դեռ կարող էին կռվել թշնամու դեմ, բայց խաբվել էին թե ազգային պոռոտախոսների և թե Անդրկովկասյան կառավարության կողմից:

Կարսում ստեղծված իրավիճակը պատկերացնելու համար հարկ եմ համարում վկայակոչել դաշնակցության հայտնի գործիչներից մեկին՝ բժիշկ Հովակիմ Մելիքյանին, որը գրել է հետևյալը. «Ազգաբնակչությունը զլխակորույս փախչում էր դեպի կայարան: Մի տեղ մայրը կորցրած զաւակին էր փնտրում դառնագին լաց ու կոծով: Մի ուրիշ տեղ զաւակն էր ողբում ու կանչում հօրն ու մօրը....: Ափսոսի միջով, անտանելի ցեխի մէջ, ցիրուցան եղած հայ զինվորները քայլում էին, անընդհատ հայհոյելով դաւաճանների հասցէին...: Ղարսի անբմբռնելի անկումը, միանգամայն յուսալքեց եւ խուճապի մատնեց հայ բանակը: Ամբողջ ճանապարհին հրամանատարութեանը չհաջողվեց գոնէ մի գումարտակ կազմել, գաղթն ապահովելու համար: Զինուորները սպառազինուած քայլում էին, առանց աչք դարձնելու եւ լսելու տրուած հրամաններին»:

Իբրև բողոք Կարսը թուրքերին հանձնելու դեմ, Զիսենկելու կառավարության մեջ մնած դաշնակցական երկու մինիստրները դուրս են գալիս նրա կազմից: Բայց 2 օր անց, նրանք ետ են վերցնում իրենց հրաժարականը:

*Այս մասին Ա. Խատիսյանը գրել է. «Մենք նորէն քննութեան առինք կացութիւնը: Գիտէինք, որ հանրային կարծիքը մեզ կը դատապարտէ Զիսենկելիի դահլիճին մասնակցելու համար: **Բայց ամէն բանէն վեր կը դասէինք Անդրկովկասի ժողովուրդների համերաշխութեան պահպանման գաղափարն ու անհրաժեշտութիւնը** (ընդգծումն իմն է- Վ. Պ.): Այդ պատճառով ալ առաւօտեան ժամը 4-ին եկանք այն եզրակացութեան, թէ ուրիշ ելք չունինք բայց եթէ ընդունիլ Զիսենկելիի վարչապետութիւնը եւ մտնել անոր դահլիճին մէջ: Ու մենք տուինք մեր հաւանութիւնը»:(Ա. Խատիսեան, Հայաստանի հանրապետութեան ծագումն ու զարգացումը, էջ 56-57):*

Ինչպես ասում են ամեն ինչ պարզ էր: Այդ թատերական խաղը միամիտների համար էր: Կառավարության կազմի մեջ մնալը շատ ավելի կարևոր էր, քան սեփական ժողովրդի ու երկրի անվտանգությունը, որից ավելի վեր էր դասվում «Անդրկովկասի ժողովուրդների համերաշխության պահպանման գաղափարն ու անհրաժեշտությունը»: Հենց դրանով էլ նրանք ղեկավարվեցին ու համաձայնվեցին Կարսը հանձնել թուրքերին:

Զիսենկելին ու Օղիշելիձեն դաշնակցության լուռ համաձայնությամբ չեն բավարարվում թուրքերին որպես ընծա՝ մատուցելով Կարսը:

Իսկ թուրքական զորքերի հրամանատար Վեհիբ փաշան էլ չի բավարարվում Կարսը գրավելով: Նրան հարկավոր էր առաջ շարժվել: Եվ այդ նպատակով նա Անդրկովկասյան կառավարությունից պահանջում է զինաթափել ռազմաճակատի մյուս հատվածներում կռիվը շարունակող հայկական զորամասերը: Զիսենկելին չի հապաղում այդ պահանջը կատարել:

Վեհիբ փաշայի ու Զիսենկելիի կամքով Նազարբեկովը հրաման է արձակում, որով արգելում է գեներալ Անդրանիկին Ախալքալակում որևէ թշնամական գործողություն ծավալել թուրքական բանակի դեմ: Նազարբեկովը նույն կերպ վարվում է նաև Դրոյի հրամանատարությամբ Իգդիրի հարավում գործող հայկական զորամասի հետ, որը կարողացել էր կասեցնել թուրքական բանակի առաջխաղացումը:

Ստեղծվել էր տարօրինակ վիճակ: Թուրքական զավթիչների դեմ իր հայրենի հողը պաշտպանելու համար միայնակ կռվում էր հայկական բանակը իր վրա կրելով ամբողջ ծանրությունը:

Սակայն այդ բանակը համարվում էր Անդրկովկասյան կառավարության բանակ, իսկ ռազմաճակատի հրամանատարությունն իրականացնում էր Օղիշելիձեն՝ հայտնի իր հայատացությամբ:

*Ամեն ինչ թուրքերին զիջվում էր հայ ժողովրդի հաշվին և Զիսենկելիի մտքով բոլորովին էլ չէր անցնում «**Անդրկովկասի ժողովուրդների համերաշխության» պահպանման համար պաշտպանել հայ ժողովրդի շահերը:***

Բոլոր փաստերը վկայում են, որ հայկական բանակը կարող էր, թե իր քանակով, և թե իր տրամադրության տակ եղած զենքով կանգնեցնել թուրքերի առաջ շարժվելը: Դժվար չէ եզրակացնել, թե ինչ հանգամանքների թելադրանքով այդ տեղի չունեցավ:

Մինչ միայնակ մնացած հայ ժողովուրդն իր վերջին ուժերն էր լարել, վրացի մենշևիկներն իրենց դաշնակցին լքելով, Բաթումում բանակցություններ սկսեցին Գերմանիայի ներկայացուցչի հետ:

Կնքված պայմանագրի համաձայն գերմանական զորքը մտնում է Վրաստան և ստանձնում է նրան պաշտպանել իր դաշնակից Թուրքիայից: Սա Զիսենկելիի կողմից նոր հարված էր հայ ժողովրդին, որի ներկայացուցիչները դեռ շարունակում էին համագործակցել նրա հետ:

Ովքե՞ր էին մեղավոր Կարսի ողբերգության համար: Թեև անցել են տարիներ, բայց տվյալ հարցը բոլորովին էլ հռետորական չէ: Որովհետև

Կարսի ողբերգությամբ հայ ժողովրդի առջև բացվում է մի նոր, ավելի սարսափելի դժոխք, որի հետևանքները մինչև այսօր էլ իրենց զգացնել են տալիս:

Ինչպես նշվել է, Կարսում եղած զինված ուժերը, ռազմամթերքը բավական էին Թուրքերին ոչ միայն կազմակերպված դիմադրություն ցույց տալու, այլև նրանց ետ շպրտելու համար:

Իհարկե, իրեն զգացնել էր տալիս զինվորի հոգնածությունը տևական պատերազմից: Բայց այդ հոգնած զինվորի թիկունքում գործած դավաճանությունը կատարում է իր սև գործը:

Ես այստեղ հարկադրված եմ նորից հիշել դաշնակցության ղեկավարներին, որոնց մարտաշունչ խոսքերին հավատացել էր նաև գեներալ Նազարբեկովը, համոզված լինելով, որ նրանք կբարձրացնեն զորքի բարոյական ոգին, կոգևորեն նրան՝ չնահանջել և ամուր կանգնել թշնամու դեմ:

Փաստորեն Անդրկովկասյան կառավարության անդամ դաշնակցական գործիչները և Թիֆլիսի հայոց ազգային խորհրդի դաշնակցական ղեկավարները դրսևորեցին, մեղմ ասած, անհասկանալի վարքագիծ, համաձայնվելով Կարսի կորստին: Նրանք այնքան անպատասխանատու էին, որ նույնիսկ չգիտեին, թե ինչ է կատարվում Կարսի շուրջ և միայն անհարկի մեջամտություններով Նազարբեկովին զրկել էին ինքնուրույն գործելուց: Ավելին, իրենց վարքագծով ուժեղացրել էին խուճապը:

Հետաքրքիր է հիշել, երբ ապրիլի 12-ին Չխենկելին սեյմի նիստում հայտնեց, որ սեյմը ընդունում է Բրեստ-Լիտովսկի պայմանագիրը և այդ կապակցությամբ տեղեկացրել է Վեհիբ փաշային Կարսը դատարկելու հրամանի մասին, Խատիսյանն ու մյուսները «Նոր Հասկացան», որ «Կարսն արդեն հանձված է տաճիկներին» (**Ա. Խատիսյան**, նույն տեղը):

Իսկ մինչ այդ ի՞նչ էին անում նրանք, ինչո՞վ էին զբաղված ու մտահոգված: Սարքվեց իսկական թատերական բեմադրություն:

Դաշնակցության անդամներն իբրև բողոք դուրս եկան Անդրկովկասյան կառավարության կազմից, բայց մի քանի օր ետ վերադարձան:

Այսպիսի վարքագիծը ոչ մի արդարացում չունի, դա միայն պատասխանատվությունից խուսափելու քայլ էր: Այնպես որ, Կարսի ողբերգության համար պատասխանատվության ու մեղքի իր բաժինն ունի դաշնակցությունը...

4. ԱԼԵՔՍԱՆԴՐԱՊՈԼԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ

Կարսի գրավումից հետո Թուրքերն ավելի խորացրին իրենց խորամանկ քաղաքականությունը: Եթե մինչև Կարսի գրավումը նրանք պնդում էին Բրեստ-Լիտովսկի պայմանագրի կատարման վրա, ապա այժմ հանդես էին գալիս բոլորովին այլ պահանջով:

Նրանք արդեն հաշվի չէին նստում Բրեստ-Լիտովսկի պայմանագրի հետ և դրեցին Ալեքսանդրապոլ-Երևան-Ջուլֆա երկաթուղին իրենց հանձնելու պահանջը:

Այդ երկաթուղու նշանակությունը Հայաստանի համար անչափ մեծ էր: Այն արտաքին աշխարհի հետ կապող միակ ուղին էր, որից զրկվելը Հայաստանի համար նշանակում էր ամեն ինչ կորցնել:

Գրավել այդ երկաթուղին՝ նշանակում էր դառնալ Հայաստանի տերը: Ահա սա էր Թուրքիայի գլխավոր նպատակը, որը կոծկվում էր զորքերն Ատրպատական տեղափոխելու պատրվակով:

Դժբախտաբար հայ իրականության մեջ քիչ չէին այն գործիչները, որոնք շարունակում էին հավատալ Թուրքերին, թե նրանք հավատարիմ կմնան զորեն Բրեստ-Լիտովսկի պայմանագրին:

«Զօրավար Անդրանիկի օրագրի» էջերում կարդում ենք հետևյալը. դիմելով գեներալ Նազարբեկովին, Անդրանիկն ասել է. «Ռուսները Թուրքերին տուած են Բրեսթ Լուտովսկիի դաշնագրով մինչեւ Արփա Չայ: Թուրքերը մինչեւ հոս պիտի գան, երբ հոս գան Ալեքսանդրապոլն ալ պիտի գրաւեն եւ պիտի երթան մինչեւ Բագու: Եկուր Ալեքսանդրապոլի հայկայ պահեստները փոխադրենք Լօռիի լեռները եւ հոն դիրքեր բռնենք»:

Կեներալ Նազարբէկով ըսաւ. «Ադանգ բան կարելի՞ է, Թուրքեր պիտի յարգեն իրենց ստորագրութիւնը, իրենք մենակ չեն, իրենց հետ գերմանական ստորագրութիւնը կայ» (**Զօրաւար Անդրանիկի...օրագրութիւնը**, էջ 96-97):

Անցնում է բավական կարճ ժամանակ և Անդրանիկի զգուշացումն իրականություն է դառնում: Թուրքերը մի կողմ են նետում թե դաշնագիրը և թե իրենց տված խոստումը:

Բայց ավելի դյուրահավատ են գտնվում Ա. Խատիսյանն ու Հ. Քաջազնունին, որոնց էլ մայիսի 13-ին Վեհիբ փաշան ներկայացրել էր երկաթուղին հանձնելու պահանջը:

Ահա թե ինչ է այդ մասին գրել Հ. Քաջազնունին. «Եթե երկաթուղին չտանք, ապա Վեհիբը կգնա երթային մարշով (նա նույնիսկ ասաց՝ «չքերթով»), այնքան քիչ է հավատում մեր դիմադրողականությանը: Բայց վախե-

նում է, որ քաղաքների ու գյուղերի միջով զորքերի այդպես անցնելու ժամանակ ինքը չի կարողանա կարգ պահպանել և որ երկրամասի բնակչությունը կարող է շատ լուրջ աղետների ենթարկվել:

Խալիլի և Վեհիբի խոսքերից անձամբ իմ մեջ (կարծեմ նաև Խատիսովի մեջ) այն համոզմունքը գոյացավ, որ Թուրքերն այս անգամ չեն ստում, որ նրանց իսկապես որ խիստ անհրաժեշտ է լուռ հնարավորության շուտ անցնել Թավրիզ, և որ տվյալ, համենայն դեպս, պահին նրանք ուրիշ նկատառումներ ու դիտավորություններ չունեն»:

Ինչպես ասում են, մեկնաբանություններն ավելորդ են:

Իսկ ի՞նչ էր կատարվում այդ օրերին Հայ-Թուրքական ռազմաճակատում: Իմ համոզմամբ պերճախոս են եղած վկայությունները, որոնցից մի քանիսը կամենում եմ ներկայացնել ընթերցողին:

1918 թ. մայիսի 22-ին, «Մշակ» թերթում տպագրվել է գնդապետ Վիրինսկու հետևյալ զեկուցագիրը. «Մայիսի 15-ին երեկոյան ժամը 5-ին Թուրքերը մեր աջ թևի վրա գրավեցին Օրթաքիլիսան, կտրելով երկաթուղագիծը և շարունակեցին առաջանալ դեպի Ջաջուռ. ձախ թևի վրա Թուրքերը գրավեցին Փոքր Ղարաքիլիսան և սկսեցին դուրս գալ Ալեքսանդրապոլի թիկունքը: Զինադադարի հանկարծակի խախտումը քաղաքի և շրջակայքի մեջ մեծ խուճապ առաջացրեց. ամբողջ բնակչությունը կփախչի, տանելով իր հետ նաև զինվորները, որոնք աշխատում էին ազատել իրենց ընտանիքները: Կացությունն անհույսի լինելու պատճառով հրամայվեց Թուրքերի մոտ բանագնացներ ուղարկել քաղաքի և բերդի հանձնման պայմանները մշակելու համար: Պայմանները հետևյալն էին.

1. Ալեքսանդրապոլ քաղաքը և նրա մեջ եղած զինամթերքը հանձնվելու է Թուրք իշխանությանը.

2. Թուրք զորքի մի մասը պետք է մտնի քաղաք կարգը պահպանելու համար, իսկ մյուս մասը պետք է շարունակի առաջխաղացումը դեպի արևելք.

3. Մեր զորամասերն Ախուրյանից պետք է ետ քաշվեն 25 կիլոմետր.

4. Երկաթուղային կայարանը, դեպոն, արհեստանոցները, շոգեմեքենաները և ամեն ինչ քաղաքի ու բերդի մեջ պետք է անվնաս մնան: Մեր զորամասերը պետք է դիրքեր գրավեն Ալեքսանդրապոլից արևելք» («Մշակ», մայիսի 22, 1918)

Դաշնակցական Հայտնի գործիչ բժիշկ Հովակիմ Մելիքյանը 1925 թ. գրել է. «Մեր գլխավոր շտաբը պետք է Ալեքսանդրապոլից փոխադրություն Ղարաքիլիսա: Այդ փոխադրությունը որոշում են կատարել մայիսի 15-ին, որի առ-

թիռ, մայիսի 14-ի գիշերը, գլխավոր շտաբի համաձայնությամբ, բարձրաստիճան զինվորականները կազմակերպում են ընկերական խնճույք:

Գիշերուայ մոտ ժամը 2-ին, խնճույքի տաք ժամանակ, տաճկական բանակից ստանում են տաճկերէն մի գրություն, որով տաճիկները պահանջում էին, «Մինչև առաւօտեան ժամը 7-ը, թոյլ տալ իրենց անցնել Ալեքսանդրապոլի կայարանից երկաթուղագծով Պարսկաստան, անգլիացիների դէմ: Եթէ հրամանատարությունը անյարմար կը գտնի Ալեքսանդրապոլի միջով անցնել, այն դեպքում ցոյց տայ մի ուրիշ ճանապարհ, որտեղից հնարաւոր կը լինի զօրքն անցկացնել Պարսկաստան»: Սակայն մեր շտաբում չի գտնվում մէկը, որ տաճկերէն կարողանար կարդալ, ուստի որոշում են առաւոտեան վաղ ուղարկել ամրոցապետ Եանկովսկուն տաճկական հրամանատարի մօտ, խնդրելու որ գրությունը փոխուի կամ ռուսերէն կամ ֆրանսերէն, որպէսզի կարելի լինի հասկանալ եւ պատասխանել:

Ներկայացուցիչ Եանկովսկին, սպիտակ դրօշակը մեկնած, գնում է այն ժամանակ, երբ տաճիկները արդէն սկսել էին գործողությունները եւ շղթաները շարժել քաղաքի վրայ:

Ժամի մօտ 1-ին, տաճկական հրամանատարության մօտից վերադառնում է ամրոցապետ Եանկովսկին եւ յանձնում հրամանատար Նազարբէկեանին տաճկական նոր պահանջները, որոնցով առաջարկում էին «ամբողջ գնացքները տրամադրել տաճիկներին, իրենց զօրքերը Պարսկաստան փոխադրելու համար: Քաղաքը յանձնել եւ զօրքերը դուրս բերել այնտեղից Ջաջուռ, թողնելով միայն միլիցիան եւ մի գումարտակ հեծելազօր, որին միացնելով տաճկական մի հեծելազօր՝ միասին քաղաքի մէջ ժանդարմերիայի դեր կը կատարեն: Թուրքերը պահանջեցին, որպեսզի հայկական զորքը Ալեքսանդրապոլից ետ տանել 25 կմ հեռու»:

Հ. Մելիքյանը հայտնում է, նաև, որ «Զօր. Նազարբէկեանը համաձայնում է առաջարկուած պայմաններին: Իր զինուորներից մէկի միջոցով նա ուղարկում է տաճկական հրամանատարին իր համաձայնագիրը...Զօր. Նազարբէկեանը ժամը 3-ին թողնում է իր տեղը զօրավար Արէշեանին եւ ինքը գնում է Ղարաքիլիսա»:

Կատարելով Թուրքերի պահանջները, հայկական զորամասերը հեռանում են Ալեքսանդրապոլից:

Անմիջապես քաղաքը լցվում է գաղթականներով, սայլերով և պարեստոնից ու բերդից ազատ արձակված դասալիքներով: Միլիցիան փորձում է վերականգնել կարգը, բայց հաջողության չի հասնում: Բոլորն էլ փախչում

էին դեպի Ջաջուռի լեռնանցքը:

Դժվար չէ պատկերացնել այն ահավոր խուճապը, որ ստեղծվել էր Ալեքսանդրապոլի անկումից հետո:

Հայկական զորամասերից մի քանիսը շարունակում էին համառ դիմադրություն ցույց տալ երկու կողմից Ալեքսանդրապոլը շրջանցած թուրքական զորքերին: Սակայն օգնություն չստանալու և շրջապատման մեջ ընկնելու վտանգի պատճառով նրանք դադարեցնում են դիմադրությունը և հեռանում դիրքերից:

Վերոհիշյալ գիշերային խնջույքին մասնակցող սպաները սկսված խուճապի պատճառով չեն կարողանում հասնել իրենց զորամասերը և միանում են փախչողներին: Այս ամենի մասին, ինչպես նաև մարտկոցների պետերից տխուր զեկույցներ ստանալուց հետո Նազարբեկովը նույնպես հեռանում է Ալեքսանդրապոլից:

Ահա, թե ինչ է գրել այդ մասին գեներալ Նազարբեկովը. «Իմ տրամադրության տակ դրված կորպուսի ամենասպառնալից հարցը ներկայումս զորքերի ապահովումն է ամեն տեսակի պարենով: Էվակուացիան ժամանակին կազմակերպելու անհնարինության, գաղթականների կուտակման և Կարսում ու Ալեքսանդրապոլում շարժական կազմի անբավարար լինելու, ինչպես և այդ երկու կետերում թուրքերի կողմից հակայական պաշարներ գրավելու հետևանքով, կորպուսի տրամադրության տակ մնացած մարտական գույքի, պարենային ու փուրաժային պաշարները բոլորովին աննշան են: Մեր զորքերը հասել են գրեթե հնարավոր նահանջի ծայրահեղ կետերին, հարկ է ընդունել, որ դրությունը, առանց դրսից եկող օգնության, անելանելի է, պատերազմի հետագա շարունակումը թուրքերի հետ անհնարին է դառնում»:

Խոսելով Ալեքսանդրապոլում ստեղծված վիճակի, քաղաքն առանց որևէ դիմադրության թուրքերին հանձնելու մասին, անհրաժեշտություն է առաջանում անդրադառնալ Հայկական կորպուսի հրամանատար Նազարբեկովի վարքագծին:

Իհարկե, անժխտելի է գեներալ Նազարբեկովի ռազմական փորձն ու հմտությունը: Բայց նա չէր տիրապետում նախաձեռնությունն ու պատասխանատվությունը ստանձնելու համարձակությանը:

Միաժամանակ ռուսական բանակում երկարատև ծառայությունը նրա մոտ ներարկել էր կարգապահություն, վերադասին ենթարկվելու ընտելություն: Այս ամենի պատճառով էլ նա անվերապահ ենթարկվում էր Կովկասյան ռազմաճակատի շտաբին և իր համար պարտադիր էր համարում այնտեղից ստացվող հրամանների կատարումը:

Նազարբեկովը քաղաքականությունից հեռու էր, չգիտեր Անդրկովկասում գործող քաղաքական ուժերի մտադրությունները:

Քաղաքականության մեջ չկողմնորոշվելու հետևանքով գեներալ Նազարբեկովը հաճախ ենթարկվում էր Հայոց ազգային խորհրդում թելադրող դիրք ունեցող դաշնակցության որոշ ղեկավար գործիչների միջամտություններին, որոնք ոչ միայն անհարկի էին, այլև շատ հաճախ վնասակար: Այդպես եղավ Էրզրումից սկսած մինչև Ալեքսանդրապոլի ողբերգությունը:

Ալեքսանդրապոլից Նազարբեկովն ավտոմեքենայով մեկնում է դեպի Ղարաքիլիսա: Ճանապարհով անցնող հազարավոր գաղթականներ նրան անեցքով էին ուղեկցում: Լսվում էին նաև բացականչություններ՝ «Նազատբեգոմ»: Խուսաչեն գյոմրեցիները նույնիսկ այդ ողբերգության պահին, երբ տուն ու տեղ թողած փախչում էին Ալեքսանդրապոլից, չէին կորցրել հումորի զգացումը՝ «Նազարբեկով» ազգանունը դարձրել էին «Նազատբեգոմ»:

Ըստ երևույթին, ամբողջ կատարվածը սթափեցնում է Նազարբեկովին, նա որոշակիորեն փոխվում է հոգեբանորեն:

Հրամաններին անվերապահ ենթարկվելը նրա մոտ մղվում է հետին պլան:

Նազարբեկովը իրեն պատասխանատու է զգում ոչ թե հրամանները կատարելու, քաղաքական տհաս գործիչներին ենթարկվելու, այլ սեփական ժողովրդի վերջին բեկորները փրկելու համար:

Եվ այդ պահից գեներալ Նազարբեկովն իրեն դրսևորում է որպես հայրենասեր, պատասխանատու իր ժողովրդի ճակատագրի համար:

Հետագա իրադարձությունները դարձան պերճախոս վկայությունն այն բանի, թե ինչի էր ընդունակ Նազարբեկովը, երբ նրա ռազմական տաղանդը ներդաշնակվում է սեփական ժողովրդի ճակատագրի նկատմամբ պատասխանատվության հետ:

ԳԼՈՒԽ 15
ՇԱՀՈՒՄՅԱՆԻ «ՓՈՔՐԻԿ ԲԱՑԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ»

*Շահումյանը մարտի 5-ին մասնակցում է Բաքվի սովետի գործադիր կոմիտեի նիստին և ելույթ է ունենում Ելիզավետպոլի իրադարձությունների առթիվ: Նա ընդգծում է, որ ռուս զինվորների վրա հարձակումը կազմակերպել են Անդրկովկասյան կոմիսարիատի վրա հենված մուսուլմանական բեկերն ու խաները: «Քանի դեռ գոյություն ունեն Կովկասի կոմիսարիատը, Ելիզավետպոլի մուսուլմանական ազգային կոմիտեն,- նշում է Շահումյանը,- որի գլուխ կանգնած են բեկերն ու խաները՝ հայ-թաթարական կոտորածի կազմակերպիչները, այդ իրադարձությունները կարող են կրկնվել» (**Ստ. Շահումյան**, նույն տեղը, հ. չորրորդ, էջ 148-149):*

1918 թ. փետրվարի 21-ին (մարտի 6-ին) Շահումյանը մասնակցում է Բաքվի բոլշևիկյան կազմակերպության կոնֆերանսին և զեկուցում է Անդրկովկասում տիրող քաղաքական դրության մասին: Այնուհետև ելույթ է ունենում պատերազմի և հաշտության մասին: Շահումյանն ընդգծում է, որ այն հաշտության պայմանագիրը, որ համաձայնել է ստորագրել Սովետական Ռուսաստանի կառավարությունը, «պարզապես որոշակի տակտիկական քայլ է Ժողկոմսովետի կողմից և ամենևին էլ հակված չէ այն ընդունելու որպես իսկական հաշտություն, որին ձգտում է ռուսական հեղափոխությունը»:

*«Կայուն, ազնիվ դեմոկրատական հաշտություն,- նշում է Շահումյանը,- կարող են կնքել միայն ապստամբած ժողովուրդները» (**Ստ. Շահումյան**, նույն տեղը, հ. չորրորդ, էջ 157):*

Փետրվարի 26-ին Շահումյանը հանդես է գալիս Փետրվարյան հեղափոխության տարեդարձին նվիրված միտինգում: Պահպանվել է այդ ելույթի լրագրային հաշվետվությունը: Իր ելույթի սկզբում Շահումյանը համոզմունք է հայտնում, որ մոտեցել է բոլոր ազնիվ հեղափոխականների երազանքի ժամանակը՝ սոցիալիզմի հաղթանակի ժամանակը:

Այնուհետև անդրադառնալով Գերմանիայի հետ ստորագրած հաշտությանը, Շահումյանը դա համարում է շախմատային խաղաքայլ, «որի նպատակն էր ժամանակ շահել իր դիրքերն ամրացնելու համար»: Գերմանացիները հասկացել են այդ և անցել են հարձակման: «Նրանց նպատակը պարզ է՝ նրանց հարկավոր է ոչնչացնել սովետական իշխանությունը Ռուսաստանում»:

*«Մենք,- հայտարարում է Շահումյանը,- անցել ենք պառլամենտարիզմի դարը: Հարկավոր է ստեղծել սովետների հանրապետություն, որը և վերջ կդնի մարդու կողմից մարդու ամեն մի շահագործման» (**Ստ. Շահումյան**, նույն տեղը, հ. չորրորդ, էջ 140-141):*

Շահումյանի այս ելույթի վերաբերյալ մուսուլմանական ազգային կոմիտեի «Известия» թերթը վկայակոչելով բուրժուական «Баку» թերթի դրախտությունը, իր առաջնորդող հոդվածում դժգոհություն է հայտնում Շահումյանի դատախոսության «տոնից» ու «միտումից»:

1918 թ. մարտի 19-ին Շահումյանը «Бакинский рабочий» թերթում հրապարակում է «Փոքրիկ բացատրությունը», որը հարկ եմ համարում ընթերցողի ուշադրությանը ներկայացնել չնչին կրճատումով:

«...Առաջնորդողի հեղինակը...գտնում է, որ ես հակահեղափոխությունը բաշխում եմ ոչ թե ըստ դասակարգերի, այլ ըստ ազգությունների, որ ես ցուցադրում եմ «մի ազգություն (բնավ ոչ դասակարգերը) տերերի վիճակում, իսկ մյուսը՝ ստորացած վիճակում, ոմանց որպես գայլեր, ոմանց էլ գառներ»...Եվ դրանից հետո հեղինակը վրդովմունքով հարցնում է. «Այստեղ ի՞նչ պայքար կա պրոլետարիատի իդեաների համար»:

«Известия»-ի խմբագիրները երևի շատ ձեռնհաս դատավորներ են այս հարցում, թե իրոք ի՞նչն է իսկական «պայքարը պրոլետարիատի իդեաների համար», բայց ես պետք է ասեմ, որ հպիվ թե կարելի էր նույնիսկ «Баку» թերթի դրախտականով հետևություն անել, որ իբր թե ես «հակահեղափոխությունը բաժանում եմ ըստ ազգությունների»:

Ընդհակառակը, այդ հարցերի վերաբերյալ իմ բոլոր դատախոսություններն ու հոդվածները Անդրկովկասի նացիոնալիստական կուսակցությունների քաղաքականության հենց դասակարգային աստառն են մերկացրել: Մուսուլմանական բեկերի ու խաների կուսակցությունն այդ դատախոսություններում և հոդվածներում պատկերվել է բոլորովին էլ ոչ որպես կուսակցություն, որի համար պատասխանատու լինի ամբողջ մուսուլմանական ազգը:

Եվ այդ ազգն իր ամբողջությամբ ամենևին էլ չի պատկերվել մի այլ ազգի նկատմամբ «գայլի» կերպարանքով... Շամխորի ողբերգության հերոսները և Անդրկովկասյան սեյմում քաղաքականությունը՝ պարոնայք Սաֆիքյուրդսկիները և Խան-մամեդովները, մեր կարծիքով «գայլեր» են ամենից առաջ մուսուլմանական գյուղացիության և մուսուլմանական պրոլետարիատի նկատմամբ:

Եվ իրար հետ լիովին համընկնող մուսուլմանական ու հայ աշխատավոր մասսաների շահերը միևնույն չափով թշնամի են Ելիզավետպոլի նահանգի

Փեոդալների և առհասարակ Անդրկովկասի կալվածատերերի և բուրժուազիայի շահերին, որոնք առանց ազգի խտրության ամբողջ գյուղացիության ու պրոլետարիատի կործանում ու ստրկացում են պատրաստում մեր երկրամասում:

«Известия»-ն գտնում է, որ եթե ես հակահեղափոխության դեմ պայքարելու նպատակ եմ ունեցել, ես հազիվ թե կարողանայի հասնել իմ նպատակին՝ իմ դասախոսության «տոնի» և «միտումի» շնորհիվ: Ես պետք է իմ հերթին ասեմ. եթե առաջնորդողի հեղինակը նպատակ ունի ինձ պատկերել իբրև մուսուլմանական ազգի թշնամի, ապա հազիվ թե նա հասնի իր նպատակին...

Նույն այդ համարում իմ անունը երկու անգամ հիշատակվում է պ. Մ. Թաղիևի Ելիզավետպոլի իրադարձությունների վերաբերյալ զեկուցման մեջ: Զեկուցողը նախ մատնանշում է, թե Եվլախն ավերող էշելոնների հետ գնում էր «Կովկասի արտակարգ կոմիսար Շահհումյանը», և ապա ինձ հրավիրում է հաստատել ոմն Սալոքվաձեի վկայությունն այն մասին, որ էշելոններն առանց մուսուլմանների կողմից որևէ առիթի քարուքանդ արեցին Եվլախ կայարանը, և ապա, Քալանդաձեի վկայությունն այն մասին, թե Եվլախ կայարանում մուսուլմանների կողմից չի կատարվել «ոչ մի» կրակոց:

Որ Եվլախ կայարանում զոհվել են կայարանում գտնվող մի քանի տասնյակ անմեղ մուսուլմաններ, դա ցավալի ճշմարտություն է: Բայց դա սովորական երևույթ է, որ միշտ էլ զոհեր են դառնում աղքատ ու անմեղ մարդիկ: Եվ նույնիսկ այն հարյուրավոր մուսուլմանները, որոնք սպանվել էին Շամխորի մոտ, թեկուզև զենքը ձեռքներին, մի՞թե նույնպիսի անմեղ զոհեր չեն: Նրանց գյուղերից կանչել էին բեկերն ու խանները, որոնք նստած են ազգային կոմիտեում. նրանք այդ մուսուլմաններին գայթակղեցրել էին հարուստ ավարով, ասել էին նրանց, թե Թիֆլիսի կառավարությունը հրամայում է զինաթափել էշելոնները...:

Զեկուցողի բերած վկաների ցուցմունքների առթիվ ես կասեի նաև հետևյալը: Ես գնում էի 7-րդ էշելոնով, չգիտեմ Եվլախում ինչպես սկսվեց ընդհարումը, բայց իրավացի չէ վկա Քալանդաձեն, որն ասում է, թե մուսուլմանների կողմից ոչ մի կրակոց չի եղել: Այն էշելոնը, որով գնում էր տողերս գրողը, 15 րոպեի ընթացքում գտնվում էր մուսուլմանների կողմից ամենաառանդուն գնդակոծության տակ և այդ ամբողջ ժամանակ մենք, վագոնում գտնվողներս, փրկվելու համար ստիպված էինք պառկել հատակին և թաքնվել արկղների ու պարկերի ետևը:

«Известия»-ի գրողները շարունակ խոսում են մուսուլմանական ազգի

անունից: Դա բոլոր երկրների ու ժողովուրդների նացիոնալիստների հին վարվելաձևն է: Բայց այն ժամանակ, երբ մուսուլմանական ազգի մեջ բացահայտ քաղաքացիական պատերազմ է սկսվել, երբ գյուղացիներն ապստամբել են դարավոր կեղեքիչների՝ բեկերի ու խանների դեմ, ծիծաղելիության չափ տարօրինակ է թվում, որ «Известия»-ի շուրջը խմբված ազնվականական նացիոնալիստական մտավորականությունը հանդես է գալիս ամբողջ մուսուլմանական ազգի պաշտպանի դերում: Է՛լ ավելի ծիծաղելի ու տարօրինակ է թվում, երբ «Известия»-ի գրողները խոսում են ինտերնացիոնալիզմի մասին, «պրոլետարիատի իդեաների համար պայքարելու» մասին,- ու կասկածի տակ են առնում ուրիշների, մասնավորապես տողերիս գրողի ինտերնացիոնալիզմի անկեղծությունը:

Մուսուլմանական նացիոնալիստների համար խիստ հրապուրիչ է այնպես պատկերել, թե Շահումյանը հայ է, նա հանդես է գալիս մուսուլմանական բեկերի ու խանների դեմ, նշանակում է նա թաքնված դաշնակցական է, թեպետև իրեն բոլշևիկ է անվանում:

Կար ժամանակ, երբ մեզ, մի խումբ բոլշևիկներիս, հայ նացիոնալիստները հայ ազգի թշնամիներ էին անվանում այն բանի համար, որ մենք վրացի սոցիալ-դեմոկրատների հետ միասին պայքար էինք մղում «դաշնակցություն» կուսակցության դեմ:

Երկու-երեք տարի առաջ, երբ հայ նացիոնալիստները խայտառակ ու հանցավոր դաշինք կազմեցին ինքնակալության և Կովկասում նրա ներկայացուցիչ Վորոնցով-Դաշկովի հետ, մենք հանդես էինք գալիս նրանց դեմ վճռական քննադատությամբ և մեզ անվանում էին «թուրքոֆիլներ», համարյա թե թուրքական կառավարության ու տեղական մուսուլմանների ուղղակի վարձկաններ:

Մենք կարող էինք մի քանի այդպիսի մոմենտներ թվել ամենամոտ անցյալից, երբ հերթով մերթ հայկական, մերթ վրացական, մերթ ռուսական նացիոնալիստները կասկածի տակ էին առնում կամ ավելի ճիշտ ցույց էին տալիս, թե կասկածի տակ են առնում մեր ինտերնացիոնալ պրոլետարական քաղաքականության անկեղծությունը:

Մենք միշտ էլ արհամարանքով ենք պատասխանել մեր հակառակորդներին: Եվ երբ այժմ այդ անում են մուսուլման նացիոնալիստները, մենք հարկավոր չենք համարում այլ կերպ վերաբերվել:

«Известия»-ի գրողների այդ փորձերը վտանգավոր կլինեին մի քանի տարի առաջ: Նրանց կարող էին հավատալ մուսուլմանների դեմոկրատական

մասսաները, իսկ պրոլետարական կուսակցության հեղինակությունը կարող էր թուլանալ: Բայց այժմ, երբ մուսուլմանների մեջ կան կազմակերպված և գիտակից բանվորներ, երբ արդեն կա «Հումմեթ» կազմակերպությունը, մուսուլմանների մեջ կան ձախ սոցիալիստ-հեղափոխականներ- մուսուլմանական նացիոնալիստների, բեկերի ու խաների սպասարկուների այդ պրովոկացիոն ճիգերը մեզ չեն չփոթեցնում:

Այնպես որ, և՝ զեկուցման հեղինակ Թաղիևին, ինչպես և առաջնորդողի հեղինակին մենք ասում ենք, եթե դուք նպատակ ունեք արդարացնել շախտորյան հանցագործությունների հերոսներին՝ նրանց մերկացնողների հասցեին անվանարկումներ և մութ ակնարկներ ուղղելու միջոցով, ապա հաճով թե դուք համնեք ձեր նպատակին...» (**Ատ. Շահումյան**, նույն տեղը, հ. չորրորդ, էջ 163-167):

Շահումյանի գրած «Փոքրիկ բացատրությունը» համարյա ամբողջությամբ ընթերցողի ուշադրությանը ներկայացնելուց հետո, հարկ եմ համարում ասել հետևյալը:

Նախորդ էջերում արդեն խոսք է եղել ադրբեջանցի պատմահեն Էլդար Իսմայիլովի կեղծիքներով լեցուն գրքի մասին: Իրեն վարկաբեկելու, մուսուլմանական ժողովրդի թշնամի հռչակելու փորձերին Շահումյանը ժամանակին պատասխանել ու հերքել է իր հասցեին ուղղված այդ անհիմն մեղադրանքները:

Սակայն պարզվում է, որ մուսուլմանական նացիոնալիստներին այսօր էլ հանգիստ չի տալիս Շահումյանի անունն ու գործը: Այժմ էլ իր նացիոնալիստ նախորդներին կրկնում է կեղծարար Իսմայիլովը, որը Շահումյանին ներկայացնում է որպես ադրբեջանական ժողովրդի թշնամի և առանց որևէ հիմքի, ինչ-որ արխիվային նյութեր վկայակոչելով, գրում է, թե Շահումյանի նպատակն է եղել ֆիզիկապես բնաջնջել ադրբեջանական բնակչությանը:

Ադրբեջանցի պատմահենը գրում է նաև, թե «Շահումյանի քաղաքականությունը, ըստ էության, եղել է ֆաշիստական: Անկախ այն բանից, թե ինչն է նրան շարժել և ինչ նպատակներ է նա հետապնդել, ազգային հողի վրա մասսայական սպանությունները՝ ֆաշիզմ է գործողության մեջ»:

Ադրբեջանցի կեղծարարը գրում է նաև, թե իր «գիրքը գրել է նրա համար, որպեսզի բացահայտի Շահումյանի էությունը և լայնորեն լուսաբանի նրա հակաադրբեջանական գործունեությունը»:

Ժամանակին Բաքվում և Մոսկվայում ռուսերեն լույս տեսած Շահումյանի ելույթներում ու զեկուցումներում, գրած հոդվածներում ու նամակներում,

ինչպես նաև, հատկապես հայ-ադրբեջանական հակամարտությունների մասին աշխատություններում որևէ խոսք չկա, թե նա թշնամաբար է վերաբերվել ադրբեջանական ազգի նկատմամբ:

Սույն աշխատության նախորդ էջերում հանգամանորեն անդրադարձ է եղել Շահումյանի բոլոր նյութերին և հավատացած եմ, որ ընթերցողը համոզվել է, որ դրանցում որևէ թշնամական ակնարկ չկա ադրբեջանական ժողովրդի մասին: Այդպիսին են նաև Շահումյանի մյուս աշխատությունները, որոնց անդրադարձ կլինի հաջորդ էջերում: Իրականությունը այս է:

Պետք է ցավով նշել, որ մեր իրականության մեջ նույնպես հայտնվում են ազգությամբ իրենց հայ կոչողներ, որոնք աշխատում են ետ չմնալ ադրբեջանցի կեղծարարներից և միացած նրանց, նույնիսկ հայկական առաջին հերոսատեսությամբ իրենց մաղձն են թափում Շահումյանի հիշատակի վրա, անվանարկում նրա բարի անունը:

Ադրբեջանական մուսավաթականների ժառանգորդները, որոնք այսօր Ադրբեջանում իրականացնում են «Մուսավաթի» գաղափարախոսությունը, ավերեցին ու հողին հավասարեցրին Բաքվում գտնվող Շահումյանի գերեզմանը: Նրանք նույնիսկ չխորշեցին հայտարարել, թե Բաքվի 26 կոմիսարների եղբայրական գերեզմանը «քաղաքաշինության նպատակներից» ելնելով, քանդելու և տեղափոխելու ժամանակ հայտնաբերվել է միայն 25 կմախք, որոնց մեջ չի եղել Շահումյանի դին:

Որ Բաքվում այդպես բարբարոսաբար են վերաբերվել Շահումյանի գերեզմանի նկատմամբ, հասկանալի է: Բայց բոլորովին անհասկանալի է, որ մեր օրերում, 2012 թ. փետրվարին, ճիշտ և ճիշտ այն օրերին, երբ Բաքվում և Մոսկվայում կազմակերպվում էր պատմահեն Իսմայիլովի կեղծիքներով լեցուն գրքի շնորհանդեսները, Երևանում լույս տեսնող բավական ազդեցիկ «Ազգ» թերթը իր էջերը տրամադրում է նույնիսկ Հայաստանի ժողովրդական նկարիչի պատվավոր կոչմանն արժանացած մեկին, որը հետևելով ադրբեջանցիների բարբարոսությանը, պահանջել է քանդել ու վերացնել Երևանի կենտրոնում գտնվող Շահումյանի հուշարձանը («**Ազգ**», փետրվարի 12, 2012 թ.)

ՇԱՀՈՒՄՅԱՆԸ ԶԳՈՒՇԱՑՆՈՒՄ Է ԱԶԳԱՄԻՋՅԱՆ ՊԱՏԵՐԱԶՄՆԵՐԻ ՍԱՍԻՆ

1918 թ. փետրվարի 26-ին Շահումյանը դասախոսություն է կարդացել անդրկովկասյան երկաթուղում տեղի ունեցած իրադարձությունների և երկրամասում իրականացվող քաղաքականության մասին: Այդ դասախոսության լրագրային շարադրանքը տպագրվել «Баку» թերթում մարտի մեկին:

Շահումյանը հանգամանորեն ներկայացնում է Շամխորի կայարանում ռուս զինվորներին զինաթափելու, նրանց թալանելու և սպանելու փաստերը և հարցնում է.«Ինչի՞ց առաջացավ այդ ամենը» ու պատասխանելով այդ հարցին, նշում է հետևյալը. «Եթե իրար հետ համադրենք հունվարի 4-6-ի օրերը, երբ Ելիզավետպոլի նահանգում սկսվեց ազգարարային շարժումը. և հունվարի 7-ը, երբ սկսեցին զինաթափումները, ապա պարզ կդառնա, որ Ելիզավետպոլի մուսուլմանական կոմիտեն, որը բաղկացած է կալվածքներ ունեցող խաներից, բեկերից ու աղալարներից, զինաթափումը կազմակերպեց նրա համար, որ գյուղացիության ուշադրությունը չեղի ազգարարային շարժումից, նրա գործունեությունը ուղղի անցնող էշելոնների դեմ նյութվող պայքարին և նաև նրա համար, որ ստեղծվող կորպուսը սպառազինելով հանի իր գաղտնի իղձերի ու ցանկությունների իրականացմանը»:

«Չէ որ,- շարունակում է Շահումյանը,- ոչ ոքի համար գաղտնիք չէ, որ հակահեղափոխական մուսուլմանությունը և չոմինիստական կուսակցությունները ձգտում են ստեղծել ինքնավար Ադրբեջան՝ Բաքու մայրաքաղաքով, այն հաշվով, սակայն, որ Ադրբեջանը գտնվի Թուրքիայի հովանավորության տակ: Այդ մասին կազմվել են համապատասխան բանաձևեր, այդ գաղափարով են տոգորված շատ համագումարներում արտասանված բազմաթիվ ճառեր»:

Այնուհետև Շահումյանը նշում է, որ այդ ուժերը բացահայտորեն խոսում են Ռուսաստանից անջատվելու և Թուրքիային միանալու անհրաժեշտության մասին: Իրենց այս նպատակին հասնելու համար խաներն ու բեկերը կարող էին միայն ուժով կատարել, և ստեղծում են ազգային զորքեր, որոնք զենք չունեին: Եվ Անդրկովկասյան կոմիսարիատի օգնությամբ նրանք կազմակերպում են Շամխորի ողբերգությունը:

«Զարմանք է կարծել,- փաստում է Շահումյանը,- իհարկե, թե Ելիզավետպոլի մոտ տեղի ունեցածը պատահական դեպք է, թե կարելի է հետագա արյունալի ընդհարումներից խուսափել: Ոչ: Այն ժամանակից սկսած, երբ Անդրկովկասյան կոմիսարիատը կանգնեց ազգային քաղաքականության

պատվերի վրա, ընդհարումներն անխուսափելի դարձան»:

Շահումյանի գնահատմամբ վիճակն էլ ավելի վատ է Անդրկովկասյան կոմիսարիատում, որտեղ ամբողջ իշխանությունը մուսավաթականների, դաշնակցականների, վրաց մենշևիկների ձեռքին է: Նա գտնում էր, որ տարբեր ազգային խմբերի անջատվածությունը, նրանց քաղաքական անհամաձայնեցվածությունը բնականաբար տանում են դեպի նացիոնալիստական ձգտումների աստիճացում:

Շահումյանը գրում էր. «Դասակարգային սկզբունքների փոխարինումն ազգային սկզբունքներով տարավ դեպի սեպարատիզմ, իսկ այս վերջինը՝ դեպի ազգային պատերազմների անխուսափելիություն Կովկասում»:

Ոչ թե արտաքին ռազմաճակատը պաշտպանելու, այլև ազգամիջյան պատերազմի համար էին կազմակերպվում ազգային զորամասեր, որը, ինչպես ընդգծում էր Շահումյանը, «երևում է այն բանից, որ կովկասյան ռազմաճակատ գնացին միայն հայկական զորամասեր»:

«Վրացիները,- շարունակում է նա,- հրաժարվեցին նույնիսկ մեկ զինվոր ուղարկել ռազմաճակատ, իսկ մուսուլմանների մասին խոսելն ավելորդ է: Ազգային գնդերը ստեղծվում են ոչ թե արտաքին սահմանները պաշտպանելու, այլ ապագա ազգային պատերազմների համար»:

Փաստորեն Անդրկովկասյան կոմիսարիատն ու Անդրկովկասյան սեյմը բեկերի ու խաների ճնշման տակ հրատարակած հողային օրենքով գերի են դարձել նրանց ձեռքին: Հիշեցնելով այդ մասին, Շահումյանն ընդգծում է հետևյալը. «Այժմ ամենուրեք բացահայտորեն ասում են այն մասին, որ Անդրկովկասում միայն երկու մշտական ժողովուրդներ կան՝ մուսուլմանները և վրացիները, իսկ մյուս բոլոր տարրերը եկվորներ են և պետք է հեռանան երկրամասից»:

Այսպիսով Շահումյանը բացահայտում է վրաց մենշևիկների և մուսուլման մուսավաթականների որդեգրած հակահայկական քաղաքականությունը, որով նրանք հայերին համարում էին եկվոր և պահանջում էին նրանց հեռացնել Անդրկովկասից: Այստեղ տարօրինակ ոչինչ չկա, քանի որ վերոհիշյալ երկու ուժերն էլ մշտապես միասին էին գործում հայերի դեմ: Տարօրինակն այն է, որ նրանք իրենց պահանջը դնում էին իրենց հետ իշխանության մեջ գտնվող դաշնակցականների ներկայությամբ:

Այնուհետև Շահումյանը հաղորդում է, որ իր այցելած բոլոր գյուղերում հայերի շրջանում տիրում է տագնապ, «նրանք սպասում են մի վտանգի, որի բռնկումները երևում են ամենուրեք: Ելիզավետպոլում, օրինակ, ռազմաճա-

կատից ժամանած 70 հայ զինվորներ, որոնք կոմիսարի օգնական Մալխասոբովի պահպանության ներքո գնում էին իրենց հայկական զորամասը, ենթարկվեցին գնդակոծության ու նրանցից 13 հոգի սպանվեց: Հաջորդ օրը գնդակոծության ենթարկվեց 200 բնակիչ, որոնցից 50 հոգի սպանվեց: Գյուղերում տիրում է կողոպուտ, ավազակություն, սպանություններ»:

*Իր դասախոսության վերջում Շահումյանը հայտարարում է. «Այս ահեղ ժամին Անդրկովկասը կարող է փրկել միայն Բաքվի պրոլետարիատը, որը պաշտպան է կանգնած սովետական իշխանությանը, և նրա ցանկության դեպքում կարելի է սովետական իշխանությունը տարածել ամբողջ Անդրկովկասի վրա: Դա երկրամասի համար իսկական փրկություն կլինի ազգային պատերազմների սարսափից» (**Ստ. Շահումյան**, նույն տեղը, հ. չորրորդ, էջ 326-330):*

Առաջ անցնելով նշեմ, որ Շահումյանի զգուշացումը որոշ ժամանակ անց դառնում է իրականություն: Ասածը հաստատելու համար միայն հիշեցնեմ մեկ-երկու փաստ:

Առաջին. *Դեռ Հայաստանի հանրապետությունը չէր հասցրել կարգավորել իր գործունեությունը, երբ մենշևիկյան Վրաստանը ձեռնարկում է հայ-վրացական պատերազմ, նպատակ հետապնդելով զավթել Հայաստանի հյուսիսային շրջանները:*

Հայաստանի դեմ ագրեսիա սանձազերծելու հետ միաժամանակ վրացի գործիչները դիմելով հայերին հայտարարում էին. «Ձեր ինչին է պետք ինքնուրույն հայկական հանրապետությունը, ավելի լավ չի լինի, որ դուք ապրեք Մեծ Վրաստանում» («Вперед», 12.01.1919):

Երկրորդ. *Մուսավաթական Ադրբեջանը ձգտում էր իր իշխանությունը տարածել Մուղանի, Ղարաբաղի, Զանգեզուրի, Օրդուբադի, Շարուր-Դարալագյազի, Նախիջևանի և Երևանի նահանգի վրա: Մուսավաթականների թելադրանքով Երևանի նահանգում ապրող մուսուլմանները ստեղծել էին այսպես կոչված «Արազյան Հանրապետությունը» և այդ տարածքը հայտարարել էին Ադրբեջանի անկապտելի մաս:*

Դրա հետ միասին մուսավաթական գործիչները հայերին խորհուրդ էին տալիս, ասելով. «Ձեր ինչին է պետք փոքրիկ հայկական հանրապետությունը, ավելի լավ չէ միավորվել մեկ մեծ հայ-ադրբեջանական հանրապետության մեջ» («Вперед», 12.01.1919 г.):

«ՍՏԵՂԾՎԱԾ ՎԻՃԱԿԻՑ ԴՈՒՐՍ ԳԱԼՈՒ ՄԻԱԿ ԵԼՔԸ»

1918 թ. մարտի 15-ին Շահումյանը Բաքվի սովետում զեկուցում է Կովկասի դրության մասին: Զեկուցման սկզբում Շահումյանը նշում է, որ ինքը Ժողովրդական կոմիսարների սովետի որոշմամբ նշանակվել է Կովկասի գործերի ժամանակավոր կոմիսար և որ իրեն հանձնարարված է «ստեղծել սովետներ այնտեղ, որտեղ դրանք չկան, օժանդակել դրանց այնտեղ, ուր դրանք իրենց խղճուկ գոյությունն են քարշ տալիս»:

Այնուհետև նկատի ունենալով, որ սովետական իշխանության հակառակորդները իրեն արտակարգ կոմիսար նշանակելը նմանեցնում են ցարական ինքնակալների կողմից Կովկասի փոխարքա նշանակելու հետ, Շահումյանը նշում է, որ իրականում իր «գլխավոր խնդիրն է ամրապնդել սովետական իշխանությունն այստեղ, Կովկասում»:

«Բաքվի սովետը,- ընդգծում է Շահումյանը,- պետք է դառնա քաղաքացիական պատերազմի գլխավոր հենարանը և կենտրոնն Անդրկովկասում, այն պատերազմի, որ Ռուսաստանում բացահայտ կերպով հայտարարել է Ժողովրդական կոմիսարների սովետը: Նա Անդրկովկասի աշխատավոր ժողովրդին մարտի պետք է տանի ընդդեմ շահագործողների, որն անվիճելիորեն վերջանալու է պրոլետարիատի հաղթանակով»:

«Այն մեծ քաղաքացիական պատերազմում,- մատնացույց է անում Շահումյանը,- որ մղվում էր և դեռ մղվում է Ռուսաստանում, ռեակցիոն դասակարգերի ուժն եղել է ավանդույթների և տնտեսական հզորության մեջ, բայց այդ դասակարգը լոկ մի փոքր խումբ է աշխատավոր ժողովրդի հսկայական մասսայի համեմատությամբ, և միայն պաշտպանողական-համաձայնողական տարրերն էին ուժեղացնում ռեակցիոն դասակարգերի դիմադրությունը»:

Շահումյանը բերում է Ռուսաստանում զարգացող իրադարձությունների մասին մի շարք փաստեր և նշում է, որ այնտեղ այժմ ջախջախված բուրժուական մտավորականության սաբոտաժն այլևս վտանգ չի ներկայացնում, իսկ հեղափոխության բացահայտ թշնամիները պարտված են:

Դրա հետ միասին Շահումյանը նշում է, որ հակահեղափոխության վերջին հենարանը գտնվում է Անդրկովկասում: Եվ որպես դրա ապացույց, Շահումյանը հայտնում է հետևյալը. «Հեղափոխության սկզբներին դումայական կոմիտեն Կովկաս ուղարկեց կովկասյան ամենագլխավոր ազգությունների դիտավորյալ կերպով ընտրված ներկայացուցիչներին՝ Պապաջանովին,

Չիեռնկելոն և Ջաֆարովին: Նրանց ամբողջ քաղաքականությունը տարվում էր ազգերն առավելապես անջատելու ոգով: Յուրաքանչյուրն աշխատում էր ազգային խորհուրդներ կազմակերպել, որպեսզի նրանց մեջ գտներ իր հենարանը: Ինտերնացիոնալ հեղինակավոր իշխանություն չկար»:

Շահումյանը հայտնում է նաև այն մասին, որ Գեզեչկորին ու Չիեռնկելին որոշում են Կովկասում ստեղծել միատարր սոցիալիստական իշխանություն համառուսական կուսակցությունների ներկայացուցիչներից, այսինքն մենշևիկներից ու էսէռներից, իսկ «Դաշնակցություն» և «Մուսավաթ» կուսակցություններին նրանք չէին էլ ցանկանում տեսնել իշխանության մեջ:

Այս գաղափարով Ն. Ժորդանիան այնքան էր տարվել, որ նույնիսկ Դեմոկրատական խորհրդակցությունում հայտարարել էր, թե «Կովկասում միանգամայն հնարավոր է սովետական իշխանության ստեղծումը»:

Իհարկե, Դեմոկրատական խորհրդակցությունը մերժում է Ժորդանիայի առաջարկը և որոշում է Անդրկովկասում պահպանել Անդրկովկասյան հատուկ կոմիտեի իշխանությունը, որը շարունակվում է մինչև Հոկտեմբերյան հեղափոխությունը:

Իսկ երբ Հոկտեմբերյան հեղափոխությունից հետո կազմվում է Անդրկովկասյան կոմիսարիատը, այլևս «մոռացվեցին կովկասյան իշխանության միատարրությունն ու սոցիալիստականությունը, և հրավիրվեցին նույնիսկ ֆեոդալական ազնվականության ներկայացուցիչներն ի դեմս Խաս-Մամեդովի և Խան-Խոյսկու»:

Անդրկովկասյան կոմիսարիատը նախ հրաժարվում է ճանաչել Սովետական Ռուսաստանի կառավարությունը, վարում է անջատողական քաղաքականություն և դրանով «ուժեղանալու հնարավորություն է տալիս նացիոնալիզմին»: Առաջինն այդ ուղղությամբ գործում է վրացիների ազգային համագումարը, որը Ժորդանիայի ղեկավարությամբ որոշում է կազմակերպել իր ազգային խորհուրդն ու գնդերը: Վրացիներին հետևում են հայերն ու ադրբեջանցիները:

«Այսպիսով,-փաստում է Շահումյանը,- նացիոնալիստական քաղաքականությունը տարվում էր բացահայտ կերպով, առանց քաշվելու: Անդրկովկասում, որտեղ խիստ խառն են ազգությունները, այդպիսի նացիոնալիստական քաղաքականությունը տանում է դեպի այդ ազգերի կործանում»:

Շահումյանը ստեղծված վիճակից դուրս գալու միակ ելքը տեսնում էր գյուղական, գավառային և մարզային սովետների կազմակերպման մեջ:

Անդրադառնալով Անդրկովկասյան կոմիսարիատի վարած քաղաքակա-

նությանը, Շահումյանը նշում է, որ այդ կոմիսարիատը իրեն վարկաբեկել է ժողովրդական լայն մասսաների աչքում և հազիվ քարշ էր տալիս իր ողորմելի գոյությունը: Նույն սկզբունքներով կազմվել է կոմիսարիատին փոխարինած Անդրկովկասյան սեյմը:

Հիշեցնելով, որ Անդրկովկասյան կոմիսարիատը չի կատարել իր առջև դրված հիմնական խնդիրը՝ հողի մասին օրենքի ընդունումը և ընդառաջելով բեկերի ու կալվածատերերի ցանկությանը, գյուղացիներին ստիպել է հարկերը մուծել 1916 թ. ստրկացուցիչ դրույքներով:

Պաշտպանության տակ վերցնելով մուսուլման չքավոր գյուղացիների շահերը, Շահումյանն արդարացի է համարում բեկերի ու խաների դեմ նրանց բարձրացրած ապստամբությունը: Նա նշում է հետևյալը. «Մինչդեռ բեկերն օգտագործում են ազգային զորքերն ընդդեմ գյուղացիների և ճնշում են նրանց ապստամբությունները, բացահայտորեն հայտարարելով, որ իրենք ռեալ ուժ են գազանացած գյուղացիների դեմ: Պաշտպանողականների համաձայնողական քաղաքականության շնորհիվ Անդրկովկասում այդպիսի ուժեղ իշխանություն տալ ռեակցիոն դասակարգերի ձեռքը՝ դա ամենամոայլ, անթույլատրելի, հակահեղափոխական աշխատանք է»:

Իր զեկուցման մեջ Շահումյանը կարևորում է կողմնորոշման հարցը և այդ կապակցությամբ հիշեցնում է սեյմում Ժորդանիայի ներկայացրած զեկուցումը, որտեղ նա ասել է, թե «հայերը և վրացիները հակված են դեպի ռուսական կողմնորոշումը, իսկ թաթարները թուրքական կողմնորոշումն են պահպանում: Այդ պատճառով պետք է ընտրել միջին գիծ այդ երկու կողմնորոշումների միջև: Այդպիսի գիծ է Անդրկովկասի անջատումը Ռուսաստանից»:

«Դա,- նշում է Շահումյանը,- ցանկալի է միայն հակահեղափոխական դասակարգերի համար, որոնք ձգտում են անջատվել ռուսական դեմոկրատիայից, հետևաբար, նաև հեղափոխությունից, և այդպիսով, վերջին հաշվով, անցնել Թուրքիայի հովանավորության տակ: Թաթար աշխատավոր ժողովուրդն ուրիշ կողմնորոշում ունի: Այն վայրերում, ուր հողային ապստամբություններ էին տեղի ունենում, գյուղացիներն ասում էին, որ իրենք մորթոտում են իրենց խաներին ու բեկերին, որովհետև եթե ռուսական զինվորների հեռանալուց հետո գան թուրքերը, ապա բեկերն ու խաները կամրանան ու դարձյալ, ինչպես առաջ, տիրություն կանեն նրանց գլխին»:

Եվ ասվածից Շահումյանը կատարում է հետևյալ եզրակացությունը. «Պրոլետարական դասակարգը և գյուղացիները չեն կարող Ռուսաստանից

անջատում ցանկանալ, որովհետև դա կլինի շրջադարձ Եվրոպայից դեպի Ասիա: Ռուսաստանից այդ անջատումը հարկավոր է միայն խաներին ու բեկերին: Այդ անջատումն առաջին վճռական քայլն է դեպի Թուրքիային ենթարկվելը, որը և այժմ շարժվում է առաջ, դեպի Կովկաս»:

«Ելնելով իր շահերից,- շարունակում է Շահումյանը,- անդրկովկասյան դեմոկրատիան պետք է եռանդուն կերպով բողոքի այդ անջատման դեմ, նա պետք է պատրաստ լինի զենքը ձեռքին դուրս գալու այդ ռեակցիոն քաղաքականությունը կիրառողների դեմ և այս գործում ղեկավար դերը պետք է պատկանի Բաքվի սովետին»:

Եվ Բաքվի սովետի դերը հստակեցնելու համար Շահումյանը նշում է, որ եթե Բաքուն չգնա հակահեղափոխականների դեմ, ապա ռեակցիոն քաղաքականությունը կիրառողները կգան Բաքվի դեմ: Շահումյանն ընդգծում է, որ հակառակ դեպքում «մուսուլմանական նացիոնալիստները փափագում են Բաքուն դարձնել Ադրբեջանի մայրաքաղաք: Ուստի, ռեակցիոներներն առաջին իսկ հնարավորության դեպքում կշարժվեն Բաքվի սովետի դեմ»:

Շահումյանը նկատի ուներ հետևյալը. Բաքվում հաստատվել էր սովետական իշխանությունն, որի հաղթանակի ծավալման դեպքում սովետական իշխանությունը տարածվելու էր արդեն սովետական դարձած Ադրբեջանի վրա, ինչպես, որ դա կատարվեց 1920 թվականի ապրիլի վերջին: Հակառակ դեպքում, եթե մուսուլմանական նացիոնալիստները գրավեին Բաքուն և այնտեղ հաստատեին իրենց իշխանությունը, ապա այդ դեպքում Բաքուն կդառնար նացիոնալիստական Ադրբեջանի մայրաքաղաք, ինչը, որ կատարվեց մի քանի ամիս անց:

Շահումյանը կարևորում էր Անդրկովկասյան սեյմի դեմ պայքարի անհրաժեշտությունը: Այս առումով նա մուսուլման գյուղացիների ապստամբությունը՝ բեկերի ու խաների դեմ, ինչպիսին էլ որ լինի դրա արտաքին արտահայտությունը, համարում էր «իսկական հեղափոխական շարժում իրենց կեղեքողների դեմ»:

Սեյմի դեմ պայքարի օրինակ էր նա համարում վրացի գյուղացիների ապստամբությունը իրենց կալվածատերերի դեմ, որոնք մի քանի տեղում գրավել էին հողը: Պրոլետարիատի միջավայրում էլ է նկատվում հեղափոխական շարժումը: Այս բոլորը վկայում են, որ «երերում է հողը ինտերնացիոնալ սոցիալիզմի այդ դավաճանների ոտքերի տակ»:

Եվ Շահումյանն ընդգծում էր. «Մենք միայն պետք է օգնության հասնենք արդեն հուզված ժողովրդական լայն մասսային: Անհրաժեշտ է կազմակեր-

պել աշխատավոր ժողովրդի իշխանության մարմիններ՝ սովետներ, որպեսզի հարված տրվի ազգային սեպարատիզմին, որն այնքան աղետներ է բերում Անդրկովկասին»:

Որպես առաջին խնդիր, Շահումյանը համարում էր Բաքվում բանվորների, զինվորների և գյուղացիների պատգամավորների սովետների համագումարի հրավիրումը և այդ կապակցությամբ կարևորում էր Բաքվի նահանգում գյուղացիական սովետներ կազմակերպելն ու ընդարձակելը: Դրա շնորհիվ մուսուլմանական գյուղացիության զանգվածները կընդգրկվեին սովետների աշխատանքում:

*Զեկուցման վերջում Շահումյանը վստահություն էր հայտնում, որ Բաքվի սովետը իր դիրքի բարձրության վրա կլինի և կկատարի իր վրա դրված խնդիրները: «Մեզ,- ավարտելով իր խոսքը, ընդգծում էր Շահումյանը,- գուցեև վիճակվի նույնիսկ ընկնել իրրև հակահեղափոխության զոհեր, բայց մենք պետք է կատարենք մեր պարտքը հանուն սոցիալիստական հեղափոխության» (**Ստ. Շահումյան**, նույն տեղը, հ. չորրորդ, էջ 168-173):*

Շահումյանի զեկուցման հիման վրա Բաքվի սովետն ընդունած բանաձևում արտահայտվում է Անդրկովկասում սովետական իշխանության ստեղծման օգտին և ընդգծում է. «Բաքուն պետք է դարձնել Անդրկովկասում սովետական իշխանության համար մղվող պայքարի հենակետ» (Большевики в борьбе за победу социалистической революции в Азербайджане, Баку, стр. 317):

ՍԵՓԱԿԱՆ ՈՒԺԵՐ ՍՏԵՂԾԵԼՈՒ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅՈՒՆԸ

Նախորդ էջերում արդեն խոսք է եղել այն մասին, որ դեռևս 1917 թ. նոյեմբերի 2-ին Բաքվի սովետի նիստում հաջողության չհասնելով, այնտեղից հեռացել էին մենշևիկները, էսէռները ու դաշնակցականները: Սակայն, որոշ ժամանակ անց, նրանք նորից վերադառնում են:

Դեկտեմբերին տեղի ունեցած Բաքվի սովետի ընտրություններում բոլշևիկները ստանում են 48 տեղ, էսէռները՝ 85 տեղ (նրանց մեջ մեծամասնություն էին կազմում բոլշևիկների հետ համագործակցող ձախ էսէռները), դաշնակները՝ 36, մուսավաթականները՝ 18, մենշևիկները՝ 13 տեղ:

Փաստորեն Բաքվի սովետում մեծամասնությունը պատկանում էր աջ ուժերին: Բոլշևիկներին պաշտպանում էին ձախ էսէռներն ու ձախ դաշնակցականները: Այստեղից էլ բոլշևիկյան խմբակցության գլխավոր նպատակը՝ մի

կողմից եռանդուն աշխատանք տանել մասսաներին իրենց կողմը գրավելու համար, մյուս կողմից էլ վարել այնպիսի տակտիկա, որպեսզի հնարավոր լիներ օգտագործել հակառակորդի շարքերում եղած հակասությունները, և նրանցից ոմանց դիտելով ժամանակավոր ուղեկիցներ՝ օգտվել նրանց աջակցությունից:

Բայց դա քիչ էր: Հարկավոր էր ստեղծել սեփական ուժեր և հենվել դրանց վրա: Հենց այդ նպատակով էլ Շահումյանի գլխավորությամբ սկսվում է Հեղափոխական զինված ուժերի կազմակերպումը, ուժեր, որոնք հավատարիմ կլինեին սովետական իշխանությանը: Այդ ուղղությամբ առաջին կարևոր քայլն եղավ կարմիր գվարդիայի ստեղծումը, որի մեջ առաջին հերթին մտնում էին բանվորները և ռազմաճակատից տուն վերադարձող զինվորները, որոնք ձեռք էին բերել որոշակի փորձ:

Կարմիր գվարդիայի կազմավորման գործում հսկայական դեր է խաղում Գ. Ղորղանյանի (Կորգանով) գլխավորությամբ ստեղծված ռազմահեղափոխական կոմիտեն:

Բաքվի կարմիր գվարդիան ուներ ինտերնացիոնալ կազմ, որի մեջ էին մտել Բաքվի բնակիչներից ռուսներ, հայեր, վրացիներ, աղրբեջանցիներ և այլն, ընդհանուր թվով 6000 մարդ, ինչպես նաև Արևմտյան ռազմաճակատից և պարսկական ռազմաճակատից վերադարձած 4 հազար հայ զինվորներ, որոնք դեպի Երևան ու Թիֆլիս տանող ճանապարհների փակ լինելու պատճառով, հնարավորություն չէին ունեցել մեկնել Հայաստան:

Կարմիր գվարդիայի մեջ էին մտել նաև դաշնակների ղեկավարությամբ կազմված հայկական ազգային զնդերը, որոնց մասին անդրադարձ կլինի հաջորդ էջերում:

Շահումյանը կարևորում էր Բաքվի նավահանգստում գտնվող նավատորմը սովետի կողմը գրավելու խնդիրը: 1918 թ. մարտի 16-ին Ստալինին ուղարկած նամակում Շահումյանը հայտնում էր, որ որոշվել է նավատորմը ոչ թե վերացնել, այլ վերակառուցել: «Գործը,-գրում էր նա,- շատ բարդ է ու խճճված: Մենք ստեղծել ենք վերակառուցման հանձնաժողով, որն աշխատում է իմ նախագահությամբ: Մեզ համար այնքան կարևոր է ու հրատապ նավատորմի վերակառուցելը և ուժեղացնելը, որ ես որոշել եմ դրա համար ուշանալ այստեղ և օրական 5-6 ժամ ժամանակ եմ հատկացնում: Առանց նավատորմի մեզ համար գրեթե անհնարին կլիներ դիմանալ»:

Այնուհետև Շահումյանը Ստալինին հայտնում էր, որ չնայած բանակի զորացրմանը, որոշվել է պահպանել Կովկասյան բանակի ռազմահեղափոխական կոմիտեն, որը համարյա բացառապես բաղկացած է բոլշևիկներից ու

ձախ էսէռներից, որոնց նա գնահատում էր որպես «լավ տղաներ»:

Ռազմահեղափոխական կոմիտեի պահպանումը Շահումյանը բացատրում է նրանով, որ «կաշկանդված չլինենք ամեն տեսակ դաշնակցական, աջ էսէռական ու մուսավաթական խմբակցություններով, որոնք մասնակցում են Բաքվի սովետին»:

Շահումյանը գրում էր նաև այն մասին, որ ռազմահեղափոխական կոմիտեն իրեն է ենթարկել Բաքվի բոլոր զինված ուժերը և «հանդիսանում է, ավելի ճիշտ ուզում է դառնալ կարմիր բանակի շտաբը Կովկասում»:

Միաժամանակ Շահումյանը խնդրում էր ուղարկել ռազմահեղափոխական կոմիտեին հատկացված 10 միլիոն ռուբլին և նշում էր Թուրքեստանի արտակարգ կոմիսար Կորոզեևի միջոցով ստացված 30 միլիոն ռուբլու բաժանման գործում Պետական բանկի և Պետական պալատի հարուցած քաշքշուկը: Նա առաջարկում էր այսուհետև փողն ուղարկել իր կամ ռազմահեղափոխական կոմիտեի տրամադրության տակ:

Ստալինին ուղարկած նամակում Շահումյանն անդրադառնում է նաև դաշնակներին տրվելիք զենքի մասին և խնդրում է հետևյալը. «Գործն այնպես ձևակերպել, որպեսզի վերջնական լուծումն այստեղ կախված լինի ինձնից: Կոնյուկտուրայից ելնելով՝ մենք կվճռենք այստեղ: Ես փոփոխություն չեմ սպասում նրանց (դաշնակցականների) քաղաքականության մեջ, բայց լավ կլինի, եթե նրանք տեղում ավելի շատ կախված լինեն մեզնից»:

Շահումյանը հայտնում էր նաև Թիֆլիսից ստացած տեղեկության մասին, ըստ որի սեյմում Ռուսաստանից անջատվելու հարցը դեռևս վերջնականապես չի վճռված, որ այդ հարցը ժողովրդական զեկուցումից հետո հանձնվել է հանձնաժողովին: «Իրականում,- գրում էր Շահումյանը,- սեյմի կուսակցությունների համար հարցը համարվում է վճռված և այդ առայժմ անդրկուլիսյան որոշումներով նրանք մեկնել են հաշտության բանակցությունների» (նկատի ունի Տրապիզոնի բանակցությունները- Վ. Պ.):

Նամակի վերջում Շահումյանը հայտնում էր, որ Ռուսաստանից անջատվելու դեմ Թիֆլիսում և Անդրկովկասի մյուս քաղաքներում կազմակերպվել են մասսայական միտինգներ՝ սեյմի դեմ ուղղված բողոքներով (*Ստ. Շահումյան*, նույն տեղը, հ. չորրորդ, էջ 174-176):

Կենտրոնում ընդունվել էր որոշում Կասպիական նավախումբը վերացնելու մասին: Այդ որոշումն իրականացնելու համար Պետրոգրադից Բաքու էր ուղարկվել վերացման հանձնաժողովի կոմիսար Պենդյուրինը: Շահումյանը չի համաձայնվում նավախումբը վերացնելու որոշման հետ և առաջարկում է

նավախումբը վերակառուցել և ենթարկել Բաքվի սովետական իշխանությանը: Պենդյուրինը համաձայնվում է և աշխատում է Շահումյանի գլխավորությամբ ստեղծված հանձնաժողովում:

Ռուսաստանից հետո 1918 թ. մարտի 16-ին Սովետական Ռուսաստանի ծովային գործերի ժողովրդական կոմիսար Պ. Դիբենկոյին ուղարկած զեկուցագրով Պենդյուրինը հայտնում էր հետևյալը. «Պարզելով...Կասպիական նավախմբի վիճակն ու դերը, և այդ հարցը քննելով բանվորների, զինվորների և նավաստիների պատգամավորների Բաքվի սովետի գործադիր կոմիտեի և Կովկասյան երկրամասի արտակարգ կոմիսար ընկեր Շահումյանի հետ, որոշեցինք չլիկվիդացնել նավախումբը, այլ ժամանակավորապես թողնել ծովային գերատեսչության տնօրինության տակ և վերակառուցել այն, ուժեղացնելով նրա մարտական հզորությունը»:

Նավախումբը պահպանելու և Բաքվի սովետին հանձնելու առիթը, ինչպես նշում էր կոմիսարը, ծառայել է հետևյալ հանգամանքը.

«Առաջին. Բաքու քաղաքը հանդիսանում է Ռուսաստանի սովետական հանրապետության կարևորագույն կետերից մեկը հեղուկ և ամեն տեսակ վառելիք, այն է՝ նավթ, կերոսին և այլն մատակարարելու և հայթայթելու իմաստով:

Երկրորդ. Քաղաքական իմաստով Բաքու քաղաքը ունայ ուժ է և միակ իշխանությունն է, որ Կովկասում պաշտպանում է Ռուսաստանի սովետական հանրապետությունը և լոկ Բաքու քաղաքն է, որ նավախմբի գոյության շնորհիվ մնում է Ռուսաստանի սովետական հանրապետության կարևորագույն մի մաս: Սովետական իշխանությունը, որը ուժեղ և հզոր մարտական միավորի կարիք է զգում հանձին նավատորմի, որպեսզի բարոյական և ակտիվ ուժ հանդիսանալով թափանցի Կովկասի խորքերը, նպատակ ունենալով տապալել ամրացած դավաճանական Կովկասյան սեյմը» (Ռ. Հ. Բաղանյան, նույն տեղը, էջ 488-499):

«ՄՈՒՍԱՎԱԹ»-Ի ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՈՒԺԵՂԱՑՈՒՄԸ

Մուսուլմանական ռեակցիոն ուժերի համախմբումը, ադրբեջանական ազգային խորհրդի գործունեության ծավալումը, ազգային զինված ուժեր ստեղծելը մեծապես ուժեղացրել էին «Մուսավաթի» ազդեցությունը:

Դեռևս 1917 թ. մայիսին Բաքվում տեղի էր ունեցել Ռուսաստանի առաջին համամուսուլմանական քաղաքական համագումարը, որին մասնակցել էին նաև Դաղստանի, վոլգյան թաթարների, կիրգիզների, կալմիկների և այլոց

ներկայացուցիչները: Համագումարի նախագահն էր երդվյալ հավատարմատար, առաջին Պետական դումայի անդամ Ալի Մարդաշ բեկ Թոփչիբաշևը:

Համագումարում առանձնակի համակրանքով են ընդունվել սոցիալիստների և մուսուլման-նացիոնալիստների ելույթները, որոնցում հատկապես ընդգծվել էր Ռուսաստանի կազմի մեջ մտնող ժողովուրդներին ազգային ինքնորոշման իրավունք չնորհելու հանգամանքը:

Համագումարում առաջին անգամ հնչել էր «մուսավաթ» անվանումը երբ ողջույնի խոսք է ասվել «Թյուրքական նացիոնալիստական կուսակցություն «Մուսավաթ»-ի անունից:

Համագումարում շատ է խոսվել Ռուսաստանի բոլոր մուսուլմաններին քաղաքական և տարածքային միավորման մասին, անհրաժեշտ է համարվել ձուլվել Թուրքիայի, Պարսկաստանի և Հնդկաստանի մուսուլմանների հետ:

*Մուսուլմանների համագումարում ազդեցիկ դեր են ունեցել Թոփչիբաշևը, Ֆաթալի Խան-Խոյսկին (ապագա Ադրբեջանական հանրապետության առաջին վարչապետ), Մ. Հաջինսկին (ապագա Ադրբեջանական հանրապետության վարչապետի տեղակալ, արտաքին գործերի մինիստր, իսկ 1920-1921 թթ. Ադրբեջանի ժողովրդական կոմիսար), Բեյրութ Չիվանշիրը (ապագա Ադրբեջանական հանրապետության ներքին գործերի մինիստր, որին 1921 թ. Կ.Պոլսում սպանել է Թոռվակյանը), Նասիբեկ Ռասուլբեկովը (ապագա Ադրբեջանական հանրապետության վարչապետ) և ուրիշներ, որոնք էլ դարձան «Մուսավաթի» աչքի ընկնող պարագլուխները (*Архив русской революции, *том. 9, Берлин, 1923, стр.103-104):*

«Ռուսական հեղափոխությունը,- ինչպես նշվում է «Ռուսական հեղափոխության արխիվ» բազմահատորյակում,- մտցնելով կազմալուծում հսկայական երկրում, ստեղծում է առավել պատշաճ պայմաններ «քաղաքական ավանտյուրիզմի» համար: Մի՞թե մեկ այլ պայմաններում միջին ընդունակության տեր փաստաբանը, ինչպիսին էր Ֆաթալի Խան-Խոյսկին, կամ լիակատար անտաղանդ ուսուցիչ Նասիբեկ Ռասուլբեկովը կարող էին նույնիսկ երազել բարձրանալ, ճիշտ է փոքրիկ, բայց, այնուամենայնիվ, ժամանակավորապես սովետների պետության մինչև վարչապետի աստիճան, հեռագրեր փոխանակել Վիլսոնի, Կլեմանսոյի կամ Լլոյդ Ջորջի հետ: Եվ դա դեռ քաղաքական ավանտյուրիզմի լավագույն ներկայացուցիչներն են»:

«Մուսավաթ» կուսակցությունը,- եզրակացնում է «Արխիվը»,- դա վերևում եղած մեկ, երկու, երեք հարյուր ավանտյուրիստներն ու խարդախներն են և ներքևում՝ թաթարական ժողովրդական մասսաների կոնգլոմերատը, որը միայն ընդունակ է դարեր շարունակ կատարել այն, ինչ հրամայում

է խանը, բեկը, նահանգապետը և այլք» (Архив русской революции, том. 9, Берлин, 1923, стр.109):

«Մուսավաթ»-ի մեջ էր մտել թաթարական մշակույթի, խոշոր բուրժուազիայի և կալվածատիրական դասակարգի ամբողջ ծաղկեփունջը: Նրա ազդեցությունը հիմնվում էր թաթարական մասսայի քարոզության և կենցաղի նախնադարյան կացութաձևի վրա, որի ժամանակ մասսաները միշտ ղեկավարվում են ունեցվածքային կամ ծառայական դրության բացառիկ դիրքում գտնվող մարդկանց կողմից:

Մասսաները ղեկավարվում էին ոչ թե առաջնորդների որդեգրած գաղափարներն ընդունելով, այլ առաջնորդների հրամանով, որը կատարվում էր անվերապահորեն:

«Մուսավաթ» կուսակցությունը սահմանազատվելով Ռուսաստանից և և իր հիմնական թեզն ընդունելով ժողովուրդների ինքնորոշման սկզբունքը, որոշակիորեն թաթարական մասսաներին տանում էր դեպի Ռուսաստանից լիակատար խզում, դրա հետ միասին նա ձգտում էր Թուրքիայի հետ կապերի ամրապնդմանը:

Երկրի ներքին կյանքի կարգավորման՝ ազգարարային, բանվորական, ժողովրդական կրթության և այլ հարցերում «Մուսավաթ»-ի քաղաքական ծրագիրը իրենից ներկայացնում էր սոցիալիստական տարբեր ծրագրերի խառնուրդ, որն այդ կուսակցության պարագլուխներին իրավունք էր տալիս ասել, թե «Մուսավաթը» սոցիալիստական կուսակցություն է:

Բայց չնայած, իշխանության գալով, Ադրբեջանական հանրապետության պառլամենտում մուսավաթականները հայտարարեցին, որ «Մուսավաթը» որևէ ընդհանրություն չունի սոցիալիզմի հետ, որ սոցիալիզմը նրա ծրագրում ընդամենը եղել է իր իսկական էությունը կոծկող ցուցափեղք:

Հաշվի առնելով մուսավաթականների ազդեցության ուժեղացումը, Շահհումյանը մեծ ուշադրություն էր դարձնում մուսուլմանական գյուղերում և մուսուլման բանվորների շրջանում հեղափոխական աշխատանքը ծավալելու վրա: Այս գործում հսկայական դեր էին խաղում «Հումմեթ» կազմակերպությունը Ն. Նարիմանովի, Մ. Ազիզբեկովի և այլոց գլխավորությամբ, ինչպես նաև «Ադալաթ» («Արդարություն») սոցիալ-դեմոկրատական կազմակերպությունը, որը ստեղծվել էր Իրանից Բաքու եկած բանվորների մեջ աշխատանք տանելու համար:

«Մուսավաթը», որին ամեն կերպ աջակցում էր Անդրկովկասյան սեյմը, եռանդով գործում էր իր իշխանությունը Բաքվում և ամբողջ Ադրբեջանում

հաստատելու համար: Գլխավոր խոչընդոտը Բաքուն էր, որի դեմն էլ «Մուսավաթը» ուղղել էր իր գլխավոր հարվածը, այդ նպատակի համար օգտագործելով բոլոր միջոցները, այդ թվում դեռևս Բաքվում գործող քաղաքային դուման:

Բաքվում որոշակի ազդեցություն ուներ նաև դաշնակցությունը, որը առեղծել էր բավական ուժեղ և լավ զինված ազգային ջոկատներ:

Բաքվում առկա էր նացիոնալիստական հողի վրա ազգամիջյան բախումների վտանգը: Այս հանգամանքն էլ նկատի ունենալով, Շահհումյանը ինքիր էր դնում ավելի եռանդով քարոզել ինտերնացիոնալիզմի գաղափարները:

Այդ նպատակով Շահհումյանը նույնպես հաճախ լինում էր աղրբեջանական գյուղերում, մասնակցում էր տեղերում կոմիտեների ու սովետների կազմակերպմանը: 1918 թ. մարտի սկզբին Բաքվում ստացվում է Թովուզի շրջանում հայ-թուրքական կոտորած կազմակերպելու լուրը: Շահհումյանը մարտի 7-ին մեկնում է Թովուզի շրջան, լինում է Գանձակում, Ղազախում, հանդիպում է հայ և թուրք բնակիչների հետ և իր համոզիչ խոսքով կանխում է մուսուլմանական բեկերի կազմակերպած հայ-թուրքական կոտորածը:

Բաքվում ապրող տարբեր ազգությունների շրջանում ազգային համերաշխության գաղափարն ամրապնդելու նպատակով Շահհումյանը նախաձեռնում է Բաքվի բանվորների ինտերնացիոնալ հայրենակցական միությունների կազմակերպումը: Այս հայրենակցական միությունների միջոցով հեղափոխական աշխատանք էր տարվում գավառներում:

Հայ-թուրքական ընդհարումների վտանգն այդ ժամանակ առանձնապես զգացվում էր Ելիզավետպոլի նահանգում: Հենց այդ պատճառով էլ Շահհումյանը հատուկ ուշադրություն էր դարձնում Ելիզավետպոլից Բաքվում աշխատող բանվորների հայրենակցական միությանը, որի անդամների եռանդուն մասնակցությամբ որոշակի գործ է կատարվում ազգամիջյան խաղաղություն հաստատելու համար:

ՇԱՀՀՈՒՄՅԱՆԻ ԴԱՍԱԽՈՍՈՒԹՅՈՒՆԸ

Շահհումյանի գլխավորած Բաքվի սովետի գործադիր կոմիտեն հաղթահարելով բազմաթիվ դժվարություններ, աստիճանաբար առաջ էր գնում, իր ձեռքը վերցնելով իշխանության լծակները: Պարենային կազմակերպությունների աշխատանքը հսկելու, սովի վտանգի դեմն առնելու համար ստեղծվում է պարենային հանձնաժողով, որի ղեկավարումը կարճ ժամանակ անց իր ձեռքն է վերցնում գործադիր կոմիտեն:

Մշակվում և Բաքվի սովետում հաստատվում է հեղափոխական տրիբունալի կանոնադրությունը, նախապատրաստվում է հին դատական մարմինները վերացնելու գործը: Ստեղծվում է ֆինանսական հանձնաժողով: Վերահսկողություն է սահմանվում տրանսպորտի և կապի բոլոր միջոցների վրա:

Հեշտ չէր ընթանում այս ամենի իրականացումը: Ահա էր բացահայտ և գաղտնի սաբոտաժը, որն իրականացնում էին ազգային խորհուրդներն ու քաղաքային դուման:

Լարված աշխատանքի հետ միասին Շահումյանը ժամանակ էր գտնում լինել գործարաններում, հանքավայրերում, հանդիպել բանվորներին, պատասխան ու անկեղծ զրույց ունենալ նրանց հետաքրքրող հարցերի, ինչպես նաև Բաքվի սովետի գործադիր կոմիտեի գործունեության մասին:

Շահումյանը հաճախ նաև հանդես էր գալիս զեկուցումներով ու հրապարակային դասախոսություններով, որոնց ներկա էին լինում բազմաթիվ մարդիկ: 1918 թ. մարտի 21-ին Շահումյանը Բաքվի Սուրախանի թաղամասում հանդես է գալիս «Համաշխարհային սոցիալիստական հեղափոխությունը և ժողովրդական կոմիսարների սովետի խաղաղության քաղաքականությունը» թեմայով դասախոսությամբ:

Նույն թեմայով նա հանդես է եկել՝ մարտի 23-ին, 24-ին, 25-ին, 30-ին, 31-ին: Հետաքրքրությունն այդ թեմայի շուրջ այնքան շատ էր, որ դրա լրագրային շարադրանքը հրապարակվում է մարտի 30-ին «Бакинский рабочий» թերթում:

Դասախոսության սկզբում Շահումյանը տալիս է Փետրվարյան և Հոկտեմբերյան հեղափոխությունների համեմատությունը և նշում է, որ վերջինիս արդյունքով իշխանությունն անցել է բանվորների ու գյուղացիների ձեռքը: Եվ չպետք է զարմանալ, որ կապիտալիստներն ու կալվածատերերը դեմ են այդ հեղափոխությանը, որովհետև «սոցիալիստական հեղափոխությունը իր հարվածները ուղղում է նրանց դեմ»:

«Բայց,- նշում է Շահումյանը,- նույնպիսի չարությամբ են վերաբերվում Հոկտեմբերյան հեղափոխությանը մենշևիկները և աջ էսէռները», որոնք ոչ մի առարկություն չունենալով սոցիալիզմի դեմ, ասում են, թե «ներկայումս սոցիալիզմի մասին լրջորեն խոսել կարող են միայն ֆանտազյորները, մեկ էլ անարխիստները»: Նրանք վկայակոչում են Մարքսին, որը նույնպես ասել է, թե «սոցիալիզմը հեռավոր ապագայի գործ է»:

Շահումյանը հանգամանորեն քննարկում է մարքսիստական փաստարկ

ները, որոնց մեջ գլխավորն այն էր, ըստ որի «Ռուսաստանը տնտեսապես հետամնաց է և պատրաստ չէ կուլտուրական տեսակետից»: Նա հիշեցնում էր, որ 1902 թ. կազմված կուսակցության ծրագիրը ուներ երկու մաս՝ մինիմում և մաքսիմում ծրագիր: Բոլշևիկներն այդ ժամանակ ասում էին, որ Ռուսաստանում առաջիկա հեղափոխությունը կլինի բուրժուական և բացատրում էր, թե ինչ իմաստով էին այդ ասում:

«Եթե,- ընդգծում էր Շահումյանը,- մենք սկսեինք խոսել սոցիալիզմի մասին հետամնաց երկրում, ապա դա անհնարին կլիներ, քանի որ ոչ մի տնտեսական հիմք չկար...: 1905 թ. բանվորները դեպի բարիկադներ էին գնում ոչ թե հանուն սոցիալիզմի, այլ «քաղաքական ազատություններ իրականացնելու համար»:

Այնուհետև Շահումյանը հիմնավորում էր, որ տվյալ հեղափոխության մեջ բանվոր դասակարգի դաշնակիցը միմիայն չքավոր գյուղացիությունն է: «Այժմ,- նշում էր Շահումյանը,- Ռուսաստանն այնպիսի պայմաններում է, որ չքավորությունը պետք է պրոլետարիատի դաշնակիցը լինի»:

«Գյուղացիական տնտեսությունը,- շարունակում էր Շահումյանը,- չի կարող ուրի կանգնել առանց պետական օգնության նույնիսկ այն դեպքում, երբ կալվածատիրական հողերը նրանց ձեռքն անցնի: Դրա համար միլիարդներ են հարկավոր»:

Շահումյանը նշում էր այդքան դրամ ստանալու հետևյալ միջոցները.

Առաջին. Ոչնչացնել միլիտարիզմը: Այսինքն, ռազմական ծախսերը կրճատել և հատկացնել գյուղացիական տնտեսություններին:

Երկրորդ. Ոչնչացնել ուտիկանական ռեժիմը: Այսինքն, ուտիկանական ռեժիմի պահպանման համար կատարվող ծախսերը տրամադրել գյուղացիական տնտեսություններին:

Երրորդ. Ոչնչացնել բյուրոկրատիզմը: Այսինքն, պետական ապարատը կրճատել և ազատված միջոցները հատկացնել գյուղացիական տնտեսություններին:

Հակադրվելով մենշևիկների տեսակետին, որոնք պնդում էին, թե պրոլետարիատի դաշնակիցը կապիտալիստական բուրժուազիան է՝ կադետները, Շահումյանն ընդգծում էր, որ կյանքն արդեն շատ բան է լուծել և այլևս ոչ ոք չի հավատում, որ կադետները հեղափոխական կուսակցություն են և պրոլետարիատի դաշնակիցները:

Այնուհետև Շահումյանը հանգամանորեն պատասխանել է այն հարցին, թե ինչու են բոլշևիկները փորձում սոցիալիստական հեղափոխություն կա-

տարել և նշում է. «Սոցիալիստական հեղափոխության խոշորագույն նվաճումներից մեկը սովետական իշխանությունն է: Ոչ ոք չի կասկածում, թե սովետները կարող են փոխարինել կործանվող պետական մեխանիզմը»:

Շահումյանը պարզաբանում էր բուրժուական պառլամենտարիզմի և սովետական կազմակերպության հարաբերությունը և ընդգծում էր. «Անվերապահորեն բանվոր դասակարգի համար սովետներն ավելի ձեռնտու են, քան պառլամենտը»:

*Մարտի 26-ին տեղի ունեցած դասախոսությանը ներկա գտնվող Բաքվի մենշևիկների պարագլուխ Այոլոն հանդես է եկել և փորձել է առարկել Շահումյանին: Պատասխանելով նրան, Շահումյանն ասել է. «Մարդկանց մասին պետք է դատել ոչ թե նրանց խոսքերով, այլ նրանց գործերով: Բանվոր դասակարգն արդեն տվել է ձեր գործերի գնահատականը և ձեզ այլևս չի հաջողվի հիմարացնել նրան» (**Ստ. Շահումյան**, նույն տեղը, հ. չորրորդ, էջ 181-187):*

ԳԼՈՒԽ 16
«ՄՈՒՍԱՎԱԹ»-Ի ԶԻՆՎԱԾ ԽՌՈՎՈՒԹՅՈՒՆԸ

1. ԵՐԻՏԹՈՒՐՔԱԿԱՆ ՀՐԱՄԱՆԱՏԱՐՈՒԹՅԱՆ ՊԱՀԱՆՋՈՎ ԱՐԳԵԼՎՈՒՄ Է ՀԱՅ ԶԻՆՎՈՐՆԵՐԻՆ ՎԵՐԱԴԱՌՆԱԼ ՀԱՅԱՍՏԱՆ

Մինչև 1918 թ. մարտ ամսին տեղի ունեցած դեպքերին անդրադառնալը, հարկ եմ համարում նշել մի կարևոր հարցի մասին, որը հաճախ անտեսվել է որոշ ռուսամասիրողների կողմից:

Նախորդ էջերում արդեն նշվել է, որ մուսավաթականները եռանդուն մի-ջոցներ էին ձեռնարկում ներկա Ադրբեջանի տարածքից հեռացնելու ռուսներին: Որոշ տեղերում էլ, ինչպես օրինակ, Մուղանում, Լենքորանում, նրանք ֆիզիկապես ոչնչացրին բազմաթիվ ռուսների և ավերեցին տասնյակ ռուսական գյուղեր: Ջարդերից փրկված ու ապրելու միջոցներից զրկված բազմաթիվ ռուսներ ապաստան են գտնում Բաքվում:

Ինչպես այն ժամանակ, այնպես էլ սովետական տարիներին ու նաև մեր օրերում ադրբեջանցիներն ամեն կերպ ճգնում են թաքցնել ռուսների նկատմամբ մեթոդիկ կերպով կազմակերպված ջարդերն ու տեղահանումները և դրանք ներկայացնում շատ մեղմ գույներով:

Այդ նույն ժամանակ, ինչպես Արևմտյան ռազմաճակատից, և հատկապես Պարսկաստանից Բաքու էին եկել մեծ քանակությամբ զորացրված հայ զինվորներ, որոնք ձգտում էին վերադառնալ Հայաստան: Նրանց մի մասին հաջողվել է վերադառնալ Հայաստան:

Բայց, երբ թուրքերը խախտելով Երզնկայի զինադադարը, սկսել էին առաջ շարժվել, սպառնալով մտնել Արևելյան Հայաստանի տարածք, Բաքվում գործող հայոց ազգային խորհուրդը ձեռնարկում է զորացրված հայ զինվորներից գունդ կազմակերպել և ուղարկել Կովկասյան ռազմաճակատ: Այդ գնդի հրամանատար է դառնում Բաքվում գտնվող Համազասպը:

Սակայն մուսավաթականները թուրքական զորքերի հրամանատարության ցուցումով փակում են երկաթուղին: 1918 թ. հունվարին երկու անգամ հայկական գունդը փորձում է մեկնել, բայց ճանապարհին հանդիպում է մուսավաթականների զինված դիմադրությանը և զոհեր տալով, հարկադրված ետ է վերադառնում Բաքու: Այդ երկու դեպքում էլ զոհվում է 100-ից ավելի հայ զինվոր:

1918 թ. հուվարի վերջին Պարսկաստանից Բաքու է վերադառնում հայ-վրացական միացյալ գունդը Դոմբաձեի հրամանատարությամբ: Երբ այս

միացյալ գունդը հասնում է Քյուրդամիրի կայարան, այստեղ մուսավաթականները վրացի զինվորներին թույլ են տալիս մեկնել Վրաստան, իսկ հայ զինվորներին արգելում են Հայաստան մեկնել, սպառնալով բոլորին ոչնչացնել, եթե չվերադառնան Բաքու:

Այսպիսով մուսավաթականները բռնի միջոցներով փակելով երկաթուղին կատարում են երիտթուրքական հրամանատարության հանձնարարությունը՝ թույլ չտալ ոչ մի հայ զինվորի անցնելու Կովկասյան ռազմաճակատ, որտեղ նրանք կարող էին համալրել թուրքերի դեմ կռվող Հայկական կորպուսի զորամասերը:

Ահա, մուսավաթականների գործադրած բռնությունների հետևանքով Հայաստան մեկնելու փոխարեն մեծ քանակությամբ հայ զինվորներ մնացել էին Բաքվում, որոնք նույնպես, ինչպես ապաստան գտած ռուս բնակիչները, զրկվել էին տարրական պայմաններից:

Փաստորեն մուսավաթականները իրենց գործողություններով նպաստում են, որպեսզի Բաքվում մնացած մեծ քանակությամբ հայ զինվորները համախմբվեն ջոկատների ու գնդերի մեջ:

Ինչպես այն ժամանակ, այնպես էլ հետագայում, հատկապես մեր օրերում, մուսավաթական գաղափարախոսները մոռանում են այս իրողությունը և մարտյան դեպքերի համար մեղադրում են դաշնակցական համարված Շահումյանին և դաշնակցականների ղեկավարությամբ գործող Բաքվի հայոց ազգային խորհրդին, որոնք թույլ չեն տվել Բաքուն գրավել և իբր թե կազմակերպել են արյունահեղություն:

Շամխորի կայարանում հազարավոր ռուս զինվորների սպանելով, նրանց զենքին տիրանալով, մուսավաթական բեկերն ու խաներն անպես էին ոգևորվել, որ որոշում են գրավել Բաքուն: Այս գործում նրանց օգնում էին անդրկովկասյան իշխանությունները, խռովարարներին ուղարկելով գերմանական մատուցերի համար 200 հազար հատ փամփուշտ, թուրքական մատուցերի համար 50 հազար հատ փամփուշտ: Խռովությունը սկսելու պահին մուսավաթականներին էր միացել Թիֆլիսից ուղարկված վրացական զինվորներից կազմված գունդը:

Շամխորից հետո մուսավաթականները ավելի եռանդով էին շարունակում մուսուլմանական ազգային գնդերի կազմակերպումը: Նրանք ձգտում էին այդպիսի գունդ ձևավորել նաև Բաքվում: Այդ նպատակով էլ Բաքու է փոխադրվել գեներալ Շիխլինսկու հրամանատարությամբ ստեղծված մուսուլմանական կորպուսի շտաբը:

Զգալով, որ Բաքվում մուսուլմանական գնդի ստեղծումը կստեղծի լարվածություն, անխուսափելի կդարձնի տարբեր ազգային գնդերի միջև զինված բախումը, Բաքվի սովետն ու նրա գործադիր կոմիտեն Շահումյանի գլխավորությամբ վճռականորեն դեմ են արտահայտվում մուսավաթականների մտադրությանը:

Գործադիր կոմիտեն սովետի կազմի մեջ մտնող կուսակցությունների անդամների ներկայությամբ բազմաթիվ անգամ քննարկում է Բաքվում մուսուլմանական ազգային գնդի ստեղծման հարցը և գտնում է դա անցանկալի:

Վերջապես բազմաթիվ քննարկումներից հետո գործադիր կոմիտեն ձայների մեծամասնությամբ որոշում է «Բաքվում մուսուլմանական ազգային գնդի ներկայությունը համարել անցանկալի»:

Այս որոշման դեմ քվեարկում են մուսավաթականները Ռասուլ-Զադեի գլխավորությամբ, մատնացույց անելով Բաքվում հայկական գնդի գոյության փաստը:

Ի պատասխան Ռասուլ-Զադեի հայտարարության, Շահումյանի առաջարկությամբ և հայոց ազգային խորհրդի համաձայնությամբ որոշվում է Բաքվից հանել հայկական ազգային գունդը կամ այն հանձնել Բաքվի սովետի ենթակայությանը:

Բաքվից հայկական ազգային գունդը հանելու համար հարկավոր էր, որպեսզի մուսավաթականները բացեին Հայաստան տանող երկաթուղին: Մուսավաթականները չեն համաձայնվում երկու պատճառով:

Առաջին. Նրանք գիտեին, որ հայկական ազգային գունդը, որի մեջ կար մոտ 4000 լավ զինված մարդ, և որ այդ գնդի հետ կարող էին Հայաստան մեկնել Բաքվում մնացած ոչ լրիվ տվյալներով 10-14 հազար զորացրված հայ զինվորներ, որոնք համալրելու էի թուրքերի դեմ կռվող հայկական կորպուսը: Սրա հետ մուսավաթականները չէին կարող համաձայնվել, որովհետև դրանով խախտելու էին իրենց գլխավոր դաշնակից ու հովանավորող Թուրքիայի պահանջը:

Երկրորդ. Եթե մուսավաթականները համաձայնվեին հայկական ազգային գունդը հանել Բաքվից, դա նշանակում էր, որ իրենք ևս զրկվելու էին Բաքվում իրենց ազգային գունդն ունենալու հնարավորությունից:

Այնուամենայնիվ, ուժի մեջ է մնում գործադիր կոմիտեի որոշումը, որով անցանկալի էր համարվում Բաքվում մուսուլմանական ազգային գնդի ստեղծումը: Իսկ հայկական ազգային գունդը, ինչպես կնշվի հաջորդ էջերում, դրվում է Բաքվի սովետի տրամադրության տակ:

2. ՌԱՍՈՒԼ-ԶԱԴԵՆ ԱՀԱԲԵԿՈՒՄ Է

Գործադիր կոմիտեի որոշումից հետո մուսավաթականները սկսում են Բաքվում գաղտնի կազմակերպել զինված միավորումներ: Աստիճանաբար Բաքու են գալիս «վայրենի դիվիզիայի» սպաները, որոնք վարժեցնում են Շեմախինկա, Զեմբերեքենդ թաղամասերում ստեղծված ջոկատներին: Այդ ջոկատների զինվորներն իրենց պահում էին սանձարձակ, չէին ենթարկվում իշխանություններին, քաղաքում կրակում էին: Մուսավաթականների այս գործողությունները Բաքվում սրում էին քաղաքական իրավիճակը: Ավելի ու ավելի էր զգացվում սովետական իշխանության հետ մուսավաթականների ընդհարման վտանգը:

Մարտյան դեպքերից երեք օր առաջ, երբ սովետի գործադիր կոմիտեում քննարկվում էր ստեղծված վիճակը, Ռասուլ-Զադեն հայտարարում է, որ իրենք ոչ մի կերպ չեն կարող հաշտվել մուսուլմանական ազգային գնդի կազմակերպումն արգելելու պահանջի հետ, որ իրենց մտադրությունը կատարելու համար պատրաստ են տալ ցանկացած քանակությամբ զոհեր: Ռասուլ Զադեն ահաբեկում էր, որ Բաքվի շրջակայքի մուսուլմանական գյուղերը պատրաստ են իրենց ցույց տալ զինված աջակցություն («Вперед», 06.04.1919):

Հանդիպելով գործադիր կոմիտեի անդամների միահամուռ դիմադրությանը, Ռասուլ-Զադեն իր կողմնակիցներով հեռանում է նիստից և այդ օրվանից մուսավաթականները սկսում են բոյկոտել գործադիր կոմիտեի որոշումները: Քաղաքում հաճախակի են դառնում կրակոցները, մեծանում է բնակչության անհանգստությունը: Ռազմահեղափոխական կոմիտեն դիմում է վճռական միջոցների՝ զինաթափում և պատժում է կրակոցների հեղինակներին: Ոչ ոքի բացառություն չի արվում:

3. ՄՈՒՍԱՎԱԹԱԿԱՆՆԵՐԸ ՍԿՍՈՒՄ ԵՆ ԶԻՆՎԱԾ ԽՌՈՎՈՒԹՅՈՒՆ

Երբ Բաքվի սովետի գործադիր կոմիտեն զբաղված էր իր իշխանությունը հաստատելու միջոցառումների իրականացմամբ, հակահեղափոխական ուժերը դիմում են վճռական քայլի:

Առաջինը հանդես են եկել մուսավաթականները, սկսելով զինված պայքար Բաքվի սովետի դեմ:

Մուսավաթականները քաղաքի տարբեր փողոցներում խրամատներ են փորում, քարերից բարիկադներ են սարքում: Մուսավաթական ջոկատներին միանում են կրոնական մոլեռանդությամբ բորբոքված զինված ավազակախմբերը:

Ինչպես նախորդ էջերում նշվել է, որոշվել էր Բաքվում գտնվող Կասպյան նավախումբը չլիկվիդացնել ու հանձնել Բաքվի սովետի գործադիր կոմիտեին: Մուսավաթականները չտապում են խանգարել այդ որոշման կատարմանը և 1918 թ. մարտի 16-ին իրենց զինված խտությունը սկսում են գրավելով «Էվելինա» նավը:

Տեղեկանալով այդ մասին Ռազմահեղափոխական կոմիտեն մարտի 16 (28)-ին իր զինված ջոկատներից մեկն ուղարկում է նավահանգիստ: «Էվելինա» նավի վրա գտնվող մուսավաթականները կրակ են բացում ջոկատի վրա և սպանում ու վիրավորում են մի քանի կուրսիրզվարդիական:

Ռազմահեղափոխական կոմիտեն և սովետի գործադիր կոմիտեն քննարկելով միջադեպը, որոշում են նավի վրա գտնվող խմբին զինաթափ անել: Մուսուլմանական ազգային խորհրդի և հայկական ազգային խորհրդի ներկայացուցիչները հրավիրվում են Ռազմահեղափոխական կոմիտե և նրանց տեղյակ է պահվում զինաթափման որոշման մասին:

Հայկական ազգային խորհրդի ներկայացուցիչները հասկանում են իրավիճակի վտանգավորությունը և հայտարարում են, որ կպահպանեն չեզոքություն: Իսկ մուսուլմանական ազգային խորհուրդը համաձայնվում է հանձնել նավի վրա գտնվող խմբի զենքը: Դա տակտիկական քայլ էր, քանի որ պարզվում է, որ զենքի մեծ մասը թաքցրել ու չէին հանձնել:

Հաջորդ օրը, մարտի 17 (29)-ին, վաղ առավոտից սկսած, մուսուլմանական ազգային խորհուրդը Բաքվի տարբեր թաղամասերում կազմակերպում է միտինգներ, բողոքելով Ռազմահեղափոխական կոմիտեի որոշման դեմ, պահանջելով ետ վերադարձնել բռնագրավված զենքը:

Երեկոյան Բաքվի սովետի գործադիր կոմիտե եկած մուսուլմանական ազգային խորհրդի ներկայացուցիչները միտինգների մասնակիցների անունից պահանջում են վերադարձնել զենքը: Գործադիր կոմիտեի հանձնարարությամբ նրանց հետ բանակցող Ա. Զախարիձեն համաձայնվում է զենքը ետ վերադարձնել, պայմանով, որ վերջ տրվեն բողոքի միտինգներին:

Ուշ երեկոյան Ն. Նարիմանովի նախաձեռնությամբ նրա բնակարանում տեղի է ունենում մուսուլմանական ազգային խորհրդի անդամների և Շահումյանի հանդիպումը: Շահումյանը համաձայնվում է նույն պայմաններով զենքը ետ վերադարձնել «Հումմեթի» միջոցով:

Սակայն պարզվում է, որ այդ բանակցությունները «Մուսավաթը» տարնում էր ժամանակ շահելու և Բաքվի սովետի գործկոմի զգոնությունը բթացնելու համար: «Մուսավաթի» գործակալները Բաքվի շրջակայքում գտնվող մուսուլմանական գյուղերի բնակիչներին համոզել էին, որ Բաքվի սովետը պատրաստվում է հարձակվել նրանց վրա և բոլորին կոտորել:

Եվ այդ հարձակումից պաշտպանվելու համար «Մուսավաթը» գյուղացիներին կոչ էր անում հարձակվել Բաքվի սովետի վրա: Բորբոքելով կրոնական մոլեռանդությունը, մարտի 18 (30)-ին մուսավաթական ջոկատները սկսում են Բաքվի սովետի դեմ ձգված գործողություններ: Նրանք զինաթափում են մի քանի վայրերում գտնվող փոքրաթիվ կարմիրգվարդիական ջոկատներին և գիշերը հարձակվում են Բալախանիի և Սաբունչիի շրջանների ուղղությամբ:

Ցանկանալով իրենց կողմը գրավել հայկական ազգային խորհրդին, «Մուսավաթի» ղեկավարները հանդիպում են դաշնակցության ղեկավարներին և փորձում են նրանց համոզել, թե իրենց պայքարն ուղղված է միայն սովետական իշխանության դեմ, որին դաշնակները նույնպես չէին համակրում:

Սակայն Բաքվի հայոց ազգային խորհրդի դաշնակցական ղեկավարները մերժում են մուսավաթականներին և ընդունում են որոշում՝ կանգնել Բաքվի սովետի պաշտպանության դիրքերում:

Միաժամանակ «Մուսավաթը» մյուս ուժերին՝ էսէռներին, մենշևիկներին, կադետներին իր կողմը գրավելու նպատակով նրանց հայտարարում է, թե իր նպատակը հայերի դեմ պայքարելն է:

Մուսավաթականների հակահեղափոխական խռովությունը վերացնելու նպատակով մարտի 31-ի գիշերը Շահումյանի գլխավորությամբ ստեղծվում է Բաքու քաղաքի և նրա շրջանների հեղափոխական պաշտպանության կոմիտե:

Կոմիտեի ստեղծման մասին հայտարարության մեջ նշվում էր հետևյալը.

Առաջին. Կոմիտեն հանդիսանում է Բաքվի և շրջանի սովետական բոլոր կազմակերպությունները միավորող զինվորական, քաղաքական բարձրագույն մարմին:

Երկրորդ. Քաղաքի և շրջանի մյուս բոլոր հեղափոխական, քաղաքական կազմակերպությունները ենթարկվում են պաշտպանության կոմիտեին:

Երրորդ. Պաշտպանության կոմիտեն իր գործունեության մասին պարբերաբար տեղեկություններ է տալիս Բաքվի պատգամավորների սովետին:

Շահումյանի հետ միասին Բաքվի պաշտպանության կոմիտեի մեջ էին մտել Կովկասյան բանակի ռազմա-հեղափոխական կոմիտեի նախագահ Գ. Կորգանովը, Բաքվի սովետի նախագահ Պ. Ջափարիձեն, Բաքու քաղաքի ռազմա-հեղափոխական կոմիտեի նախագահ Ի. Սուխարցևը, «Հումմեթ»-ի ներկայացուցիչ Ն. Նարիմանովը, աջ էսէռների ներկայացուցիչ Ս. Սահակյանը, դաշնակցության ներկայացուցիչ Ս. Մելիք-Յոլչյանը:

Ստեղծվում են պաշտպանության կոմիտեի հետևյալ բաժանմունքները՝

Պարենավորման և հայթայթման՝ ղեկավար՝ Շահումյան.

Ընդհանուր (հաղորդակցության ճանապարհներ, քաղաքային տնտեսություն, բժշկա-սանիտարական գործեր՝ ղեկավար՝ Պ. Ջափարիձե.

Առևտրի, արդյունաբերության, ֆինանսների՝ ղեկավար Ս. Սահակյան, օգնական՝ Ս. Մելիք-Յոլչյան.

Քաղաքի պաշտպանության՝ ղեկավար՝ Ի. Սուխարցև

Ռազմա-ծովային՝ ղեկավար՝ Ն. Նարիմանով.

Կոմիտեի քարտուղար՝ Ն. Կուզնեցով:

Մարտի 31-ի գիշերը պաշտպանության կոմիտեն ընդունում է դիմում՝ ուղղված բոլոր ազգությունների բանվորներին և դեմոկրատական տարրերին:

«Սովետական իշխանության թշնամիները,- ասվում էր դիմումի սկզբում,- Բաքու քաղաքում գլուխ են բարձրացրել: Զարությունն ու ատելությունը, որով նրանք վերաբերվում էին բանվորների ու զինվորների հեղափոխական մարմնին, վերջին ժամանակներս սկսել էին բացահայտ հակահեղափոխական ելույթների ձև ընդունել»:

Այնուհետև դիմումում հիշատակվում են հեղափոխության թշնամիների ելույթները, այդ թվում նաև «Էվելինա» շոգենավի վրա գտնվող ջոկատի լպիրշ վարքագիծը, և նշվում էր հետևյալը. «Այս ամենն ասում է, թե ինչպիսի ոճրագործ պլաններ ունեն հակահեղափոխականները, որոնք հանմիսված են գլխավորապես բնական «Մուսավաթ» կուսակցության շուրջը և նպատակ ունեն տապալելու բուրժուազիայի ու կալվածատերերի համար ատելի սովետական իշխանությունը»:

Բաքվի սովետի գործադիր կոմիտեն և Կովկասյան բանակի ռազմահեղափոխական կոմիտեն հայտնում էր, որ Բաքվում սովետական իշխանությունը վտանգի մեջ է և բոլորին կոչ էին անում զենքը ձեռքներին ուղի կանգնել նրան ժողովրդի թշնամիներից պաշտպանելու համար:

Հայտարարվում էր, որ այսուհետև զինված ուժերի բոլոր գործողությունները ղեկավարելու է Բաքու քաղաքի և նրա շրջանների հեղափոխական պաշտպանության կոմիտեն:

Այնուհետև նշվում էր, որ «Մուսավաթ» կուսակցության նացիոնալիստները և նրանց ետևից ընթացող հակահեղափոխական տարրերն արդեն ռազմական գործողություններ են սկսել սովետի դեմ: «Մենք,- ասվում էր դիմումի մեջ,- այդ ոճրագործ տարրերին արժանի հակահարվածը կտանք: Մենք դրա հետ միասին կմերկացնենք ամբողջ մուսուլմանական ազգի անունից խոսող՝ հեղափոխության այդ թշնամիներին այն բանում, որ նրանք ամենից առաջ մուսուլմանական աշխատավոր մասսաների թշնամիներն են»:

Դիմումը կոչ էր անում մուսուլմաններին և հայերին, բոլոր ազգությունների բանվորներին և դեմոկրատական տարրերին «չենթարկվել չովինիստական տարրերի պրովոկացիային և իսկական վճռական դերին բացահայտորեն, անվախ կերպով զենքը ձեռքին կանգնել Բաքու քաղաքի Հեղափոխական պաշտպանության կոմիտեի կարմիր դրոշի տակ»:

Դիմումը ստորագրել էին Կովկասի գործերի ժամանակավոր արտակարգ կոմիսար Ս. Շահումյանը, Բաքվի սովետի նախագահ Պ. Ջափարիձեն, Կովկասյան բանակի ռազմահեղափոխական կոմիտեի նախագահ Գ. Կորգանովը և Բաքու քաղաքի ռազմահեղափոխական կոմիտեի նախագահ Ի. Սուխարցևը (**Ստ. Շահումյան**, նույն տեղը, հ. չորրորդ, էջ 188-189):

Պաշտպանության կոմիտեն Բաքու քաղաքում հայտարարում է ռազմական դրություն և ձեռնարկում է դրան համապատասխան խստագույն միջոցներ: Քաղաքացիներին արգելվում էր երեկոյան ժամը 8-ից տանից դուրս գալը, փողոցներում խմբերով հավաքվելը:

Քաղաքում հրաձգություն կատարողները տեղում բռնվում էին և գնդակահարվում: Թալանով զբաղվողները ձերբակալվում էին և հանձնվում ռազմահեղափոխական տribունալին:

Քաղաքում կարգը պահպանելու նպատակով տարբեր թաղամասեր են ուղարկվում զինված ջոկատներ:

Պաշտպանության կոմիտեն հատուկ կերպով զգուշացնում էր, որ առանց ազգային խտրության, քաղաքացիների իրավունքները խախտող յուրաքանչյուր անձ խստորեն կպատժվի ռազմական դրության համաձայն:

Առաջին հաջողություններով ոգևորված մուսավաթական զինված ջոկատները մտնում են Բաքվի մուսուլմանական թաղամասեր, նպատակ ունենալով այդ միջոցով այդտեղ ներքաշել հայկական զինված ուժերին: Եթե դա տեղի ունենար և մուսուլմանական թաղամասում սկսվեին փողոցային մարտեր, ապա դրանից անպայման առաջին հերթին կտուժեին մուսուլման բնակիչները:

Այսպիսի պրովոկացիոն գործողություններով մուսավաթականները ձգտում էին Բաքվում առաջ բերել ազգամիջյան ընդհարում, ազգային պատերազմ: Այդ վտանգը կանխելու նպատակով Շահումյանի առաջարկությամբ նավերից տրվում է մի քանի համազարկ, որով էլ կանխվում է «Մուսավաթի» զինված ջոկատների թափանցումը մուսուլմանական թաղամասեր:

Բաքու քաղաքում մուսավաթական խռովության ընթացքի մասին պատկերացում կազմելու համար կամենում եմ ընթերցողի ուշադրությանը ներկայացնել Պաշտպանության կոմիտեի մի քանի հրամաններ:

Առաջին. Ապրիլի 4-ին հանձնարարվում է Ն. Նարիմանովին և Ա. Իսմայիլովին՝ կազմակերպել «Հումեթ» և «Աղալաթ» մուսուլմանական սոցիալիստական կուսակցությունների բյուրո՝ մուսուլմանական աշխատավոր մասսաներին սովետական մարմինների հետ ավելի սերտորեն կապելու համար (**Ստ. Շահումյան**, նույն տեղը, հ. չորրորդ, էջ 191):

Երկրորդ. Ապրիլի 6-ին Պաշտպանության կոմիտեի որոշմամբ կարմիր բանակ կազմակերպելու և վերջին դեպքերի ժամանակ տուժած չքավորությանն օգնելու համար 50 միլիոն ռուբլի գումարով հարկվում են բոլոր առևտրական բանկերը, վարկային ընկերությունները, ֆաբրիկագործարանային ձեռնարկությունները, առևտրաարդյունաբերական ընկերությունները, հոլանդ և այլ ընկերությունները (**Ստ. Շահումյան**, նույն տեղը, հ. չորրորդ, էջ 192):

Երրորդ. Ապրիլի 6-ի հրամանով մինչև պաշարողական դրության վերացումը, արգելվում էր տարբեր խմբերի, անձերի, կուսակցությունների ու հիմնարկությունների կողմից բնակչությանն ուղղված կոչերի, դիմումների տպագրումը: Չկատարողների համար սահմանվում էր մինչև 1000 ռուբլի տուգանք և տպարանների գրավում (**Ստ. Շահումյան**, նույն տեղը, հ. չորրորդ, էջ 193):

Չորրորդ. Ապրիլի 7-ի կոչով հայտնվում էր, որ Դաղստանյան գնդի հակահեղափոխական բանդաները հարձակվել են քաղաքի վրա: Ապրիլի 7-ին, ցերեկվա ժամը 12-ին նրանց թիզանոթները սկսել են հրաձգություն գործադիր կոմիտեի զրահապատի դեմ: Այդ բանդայի հեծյալ ու հետևակային ջոկատներն արդեն շարժվում են Բալաջարի և Բաքվի ուղղությամբ:

«Մեզ անհրաժեշտ է,- ասվում էր կոչում,- նրանց հակահարված տալ քաղաքից դուրս, նրանց մոտ չթողնելով մեզ: Բոլոր զինված ուժերը պետք է պատրաստ լինեն: Բոլոր խաղաղ բնակիչները պետք է հանգստություն պահպանեն, խուճապի չենթարկվեն և չլսեն պրովոկատորներին, որոնք միշտ էլ

հայտնվում են ծանր բոպեներին և իրենց մութ նպատակներն են հետապնդում»:

*Պաշտպանության կոմիտեն ազդարարում էր. «Բաքվի մոտ վճռվում է Անդրկովկասի ճակատագիրը: Մեր պարտությունը կնշանակի հեղափոխության կործանում մեր երկրամասում և կհացնի միջնադարյան խանությունների ստեղծման ու Թուրքական լծի: Մեր հաղթանակը կլինի բանվորագյուղացիական հեղափոխության հաղթանակը, կլինի Կովկասի ազատության ու կուլտուրական բարգավաճման երաշխիքը» (**Ստ. Շահումյան**, նույն տեղը, հ. չորրորդ, էջ 194-195):*

Հինգերորդ. *Ապրիլի 8-ի հրամանով հայտարարվում էր բոլոր զինված ուժերի՝ կարմիր գվարդիայի, ինչպես նաև զենք ունեցող բոլոր առանձին անձանց գորահավաք: Չորահավաքից խուսափողները համարվում էին սովետական ժողովրդական իշխանության թշնամիներ, որոնց նկատմամբ կկիրառվեն խիստ միջոցներ (**Ստ. Շահումյան**, նույն տեղը, հ. չորրորդ, էջ 196-197):*

Բաքվի պաշտպանության կոմիտեն համախմբում է իր տրամադրության տակ եղած բոլոր զինված ուժերը և կազմակերպում է քաղաքի պաշտպանությունը, ետ մղելով հակահեղափոխական զորքերի գրոհները: Համառ ջանքերի շնորհիվ հաջողվում է վերացնել Բաքվին սպառնացող մահացու վտանգը:

1918 թ. մարտին խռովության ջախջախումից հետո, մուսավաթականները նոր միջոցներ էին ձեռնարկում իրենց վաղեմի մտադրությունն իրագործելու համար: Նրանք չէին հաշտվում, որ Բաքուն շարունակում էր մնալ սովետական և Ռուսաստանին պատկանող քաղաք:

1918 թ. մայիսի 18-ին Անդրկովկասյան կառավարության և Սեյմի համատեղ նիստում Ռուստամբեկովը հերթական անգամ բարձրացնում է Բաքվի սովետական իշխանության դեմ վճռական միջոցներ ձեռնարկելու հարցը և հայտարարում է, որ «Բաքվի բոլշևիկյան-դաշնակցական շարժումը հիմնահատակ հենվում է այնտեղ գտնվող մեծ քանակությամբ հայ զինվորների վրա»:

*Կարճիկյանը վճռական բողոք է հայտնում Ռուստամբեկովի «բոլշևիկյան-դաշնակցական շարժում» արտահայտության դեմ և մատնացույց է անում, որ Բաքվում շարժումը բացարձակապես բոլշևիկյան է, որին դաշնակցությունն կուսակցությունը չի պաշտպանում և հանդես է գալիս դրա դեմ» (**Վրաստանի կենտրոնական արխիվ**, ֆ. 1819, ց. 1, գ. 4. թթ. 50-52):*

Կարճիկյանի հայտարարությունը վկայում էր, որ կապ կար Բաքվի դաշ-

նակցականների հետ, այլապես նա այնպես վստահորեն չէր հայտարարի, թե Բաքվի դաշնակցականները հանդես են գալիս Բաքվի սովետական իշխանության դեմ:

Այս կապակցությամբ ուզում եմ հետևյալ հանգամանքը նշել: Թիֆլիսի հայոց ազգային խորհրդի դաշնակցական ղեկավարները Սեյմում և Անդրկովկասյան կառավարության մեջ համագործակցում էին վրաց մենշևիկների և ադրբեջանցի մուսավաթականների հետ:

Բոլորովին այլ էր Բաքվում գործող դաշնակցականների կեցվածքը: Նրանք հասկանում էին, և դա, անշուշտ, Ռուսաստանի ազդեցության ու հեղինակության շնորհիվ էր, որ մուսավաթականների և նրանց դաշնակից Թուրքերի վտանգից Բաքվի հայությանը հնարավոր էր պաշտպանել միայն հենվելով սովետական իշխանության վրա: Հենվել սովետական իշխանության վրա, նշանակում էր անպայման նաև տվյալ դեպքում սովետական դարձած Ռուսաստանի աջակցության վրա:

*Այս մասին են վկայում 1918 թ. ապրիլի 6-ին Բաքվի սովետում Մելիք-Ցոլչյանի ելույթում հնչած հետևյալ խոսքերը. «Դաշնակցությունն ամուր կանգնած է խորհրդային իշխանության պաշտպանության գործում: Եթե հայկական գունդը հրապարակ եկաւ պաշտպանելու խորհրդային իշխանությունը, այդ միայն նրա համար, որ խորհրդային իշխանության շահերը նույն չափ թանկագին են հայ դեմոկրատիայի համար» (**«Ազատ»**, ապրիլի 11 (24), 1918 թ.):*

Բայց Բաքվի դաշնակցականների մոտ քիչ չէին այն ուժերը, որոնք դեմ էին բոլշևիկներին, Շահումյանի գլխավորած սովետական իշխանությանը և պատրաստ էին այս հողի վրա համագործակցել մենշևիկների, աջ էսէռների ու մյուս հակասովետական ուժերի, նույնիսկ մուսավաթականների հետ:

*Այս հողի վրա ընթացող խմորումները հասցրեցին նրան, որ շատերը դուրս եկան դաշնակցությունից և իրենց կոչելով «ձախ դաշնակցականներ», մինչև վերջ մնացին հավատարիմ սովետական իշխանությանը: Նրացից էին, օրինակ, Բաքվի սովետի պատգամավորներ Թաթեոս Ամիրյանը, Ավիս Նուրիջանյանը, Իսրայել Տեր-Ղազարյանը, Ակեքսանդր Կարապետյանը և ուրիշներ, որոնք դաշնակցության կենտկոմի որոշմամբ կուսակցության շարքերից դուրս են համարվում (**«Ազատ»**, մայիսի 14, 1918 թ.):*

Բավարարվեմ ասվածով, նկատի ունենալով, որ հաջորդ էջերում հանգամանորեն անդրադարձ կլինի այն մասին, թե ինչպես էր Բաքվի դաշնակցության ղեկավարությունն մոտ գերակշռում սովետական իշխանության հակա-

ռակորդների հետ միանալու, այդ իշխանության դեմ պայքարելու քաղաքականությունը:

4. «ԶՈՒՍՊ ԵՎ ՆԵՐՈՂԱՄԻՏ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ»

Մուսավաթականների խոտվությունը ճնշելուց հետո, Բաքու քաղաքի Հեղափոխական պաշտպանության կոմիտեն հրապարակում է Շահումյանի գրած դիմումը՝ ուղղված Բաքվի բոլոր քաղաքացիներին:

Դիմումի սկզբում, որը տպագրվել էր նաև «Արև» թերթում, նշվում էր, որ ինչպես Ռուսաստանում, այնպես էլ Բաքվում Հեղափոխության դեմ հարձակվող ուժերը սովետական իշխանության թշնամիներն էին:

«Հեղափոխության ամբողջ տարվա ընթացքում,- ասվում էր դիմումի մեջ,- Բաքվի բանվորների և զինվորների պատգամավորների սովետը ի նկատի ունենալով մուսուլմանական դեմոկրատիայի հետամնացությունը և մեր երկրում գոյություն ունեցող առանձնահատուկ ազգամիջյան հարաբերությունները, ամենամեծ զգուշությունն էր պահանջում պրոլետարական հեղափոխական տակտիկան կյանքում իրականացնելու գործում»:

Սակայն Բաքվի սովետը վախենում էր, որ մուսուլմանական դեմոկրատիան կարող է չհասկանալ իրեն և վճռական րոպեին հրապարակ գալ թշնամիների բանակում: Սովետը վախենում էր, որ «դասակարգային-քաղաքացիական կռիվը կարող էր ազգայնամոլ կուսակցություններին պատկանող պրովոկատորների շնորհիվ հայ-թուրքական կոտորած դառնալ և Անդրկովկասը մի քանի տասնյակ տարի ետ շպրտել»:

Միաժամանակ սովետը վարում էր «չափազանց զգույշ» քաղաքականություն, բայց պրովոկատորները քնած չէին, մշտապես փորում էին սովետական իշխանության տակը և «երբ նրանց թվաց, որ իրենք բավական ուժ ունեն սովետի վրա հարձակվելու, նրանք քաղաքացիական կռիվ սկսեցին»:

«Սովետը,- այնուհետև ասվում էր դիմումի մեջ,- ուրքի հանեց իր կարմիր բանվորական գվարդիան, կովկասյան կարմիր զորաբանակի միջազգային գումարտակները: Ուրքի ելավ Կասպյան կարմիր նավատորմը, կազմ ու պատրաստ սպասում էին օդաչուների դպրոցի սավառնորդները», որոնց օգնության են հասնում մի քանի հայկական զորամասեր:

«Կռիվը,- շարունակում էր դիմումը,- տևեց երկու օր և վերջացավ սովետական իշխանության կատարյալ հաղթանակով: Հաղթանակն այնքան զորեղ էր և վճռական, որ ապստամբները կարող էին բոլորովին ջախջախվել ու չքանալ»:

Սակայն, նշվում էր դիմումի մեջ, սովետը նրանց նկատմամբ դրսևորում է զուսպ և ներողամիտ վերաբերմունք: Եվ դա բացատրվում է հետևյալ հանգամանքով. խոտվարարների շարքերում «անկասկած, մեծամասնությունը քաղաքի չքավոր ազգաբնակչությունն էր կազմում, որին մոլորության մեջ էին գցել Թուրչիբաշևի և այլ պաշտոնական ու անպաշտոն մուսավաթականների նման տարրերը, որոնք ի չարն են գործ դնում քաղաքականորեն անգրագիտակից զանգվածների ազգային զգացմունքները»:

Դիմումը տեղեկացնում էր, որ պատերազմական գործողություններից ամենից ավելի վնասվել է չքավոր դասը և կռվի շարունակությունը կորստաբեր կլիներ ոչ թե ոճրագործ «ղեկավարների», այլ այն խավար զանգվածների համար, որոնց նրանք մոլորեցրել են»:

Այնուհետև հայտնվում էր, որ պաշտպանության կոմիտեն դադարեցրել է հարձակումը և հակառակ կողմի մոտ է ուղարկել «մի վերջնապահանջ, որի ի կատար ածելն ամենից առաջ ձեռնտու էր մուսուլման աշխատավոր զանգվածների շահերին»:

Դիմումը հատկապես նշում էր այդ վերջնապահանջի 3-րդ կետը, որը վերաբերում էր Բաքու-Թիֆլիս, Բաքու-Պետրովսկ երկաթուղիների բացմանը: Այս կապակցությամբ ընդգծվում էր, որ մուսավաթականները Գանձակում հակահեղափոխական ոգին ստեղծելով, Թիֆլիսի երկաթուղին իրենց մենաշնորհը դարձնելով, «Համաձայնության են եկել դաղստանցի հակահեղափոխականների հետ և գրավել են Պետրովսկ քաղաքը, որպեսզի Բաքուն երկու կողմից կտրեն ուրիշ կենտրոններից, բաքվեցիներին զրկեն Հյուսիսային Կովկասից ստացվող կենսամթերքից և այնուհետև այստեղից իրենց վայրենի հրոսակախմբերը առաջ շարժեն Բաքվի սովետական իշխանության դեմ»:

Դիմումն ազդարարում էր, որ այսուհետև վերջ է տրված այդ հանցավոր քաղաքականությանը և զգուշացնում էր. «Պարոն Թուրչիբաշևներն ու ընկերությունը և նրանց գանձակեցի բարեկամները պիտի անմիջապես բանան այդ ճանապարհները, այլապես նրանք պատասխանատու են սովետի առջև և ամենից առաջ պատասխանատվության կկանչվեն հենց պարոն Թուրչիբաշևներն ու «Մուսավաթ»-ի մյուս պարագլուխները, որոնք իբր տեր ու տիրական երթևեկում են այդ ճանապարհներով»:

Խոտվության օրերին թափված արյան համար պատասխանատու են մուսուլման կալվածատերերն ու կապիտալիստները, «որոնք նստել են ժողովրդի վզին և միշտ փարիսեցաբար այդ ժողովրդի անունից են խոսում»:

«Մենք,- ասվում էր դիմումի վերջում,- դիմում ենք մուսուլման բանվոր-

ներին և մուսուլման չքավորությանը և ասում ընկերներ ու եղբայրներ: Վերջիվ, ինչքան դուք տարաք ձեր հարստահարիչների լուծն ու իշխանությունը: Թող մարտի 18-21-ի ձեր կրած արյունալի սարսափները բանան ձեր աչքերը և ցույց տան ձեր թուրքաչների և մուսավաթականների ազգային քաղաքականության կորստաբերությունը և ամբողջ կեղծիքը նրանց այն հավաստիացումների, թե իրենք ժողովրդի բարեկամներն են»:

Դիմումը կոչ էր անում. «Միացեք բանվորների, զինվորների և նավաստիների պատգամավորների սովետի շուրջ, ուր չկա կործանարար խտրություն հայի, մուսուլմանի, ռուսի և վրացու մեջ, ուր բոլոր աշխատավորները և հարստահարվածները իրենց իսկական բարեկամներն ու պաշտպանները ունեն: Կեցցե՝ բոլոր ազգությունների աշխատավորների եղբայրությունն ու միությունը» («Արա», ապրիլի 8-9, 1918 թ.):

5. ՇԱՀՈՒՄՅԱՆԻ ՆԱՄԱԿԸ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԺՈՂԿՈՄՍՈՎԵՏԻՆ

1918 թ. ապրիլի 13-ին Շահումյանը Սովետական Ռուսաստանի Ժողկոմսովետին ուղարկած նամակում հանգամանորեն տեղեկացնում էր տեղի ունեցած մարտական գործողությունների և ձեռնարկած միջոցների մասին:

Նա հայտնում էր, որ մարտի 30-ից մինչև ապրիլի 1-ը, երեք օրվա ընթացքում «Մուսավաթ» կուսակցության ղեկավարած զինված մուսուլմանների բանդաների, մուսուլմանական «վայրենի դիվիզիայի» և սովետական զինված ուժերի միջև տեղի են ունեցել կատաղի մարտեր և հաստակ ընդգծում էր, որ սովետական զինված ուժերի շարքում կռվին մասնակցել են հայկական ազգային զորամասերը: Քաղաքային մարտերին երկու կողմից մասնակցել է 20 հազար մարդ, զոհվել է 3 հազար մարդ:

«Մարտերի արդյունքները,- հայտնում է Շահումյանը,- փայլուն են մեզ համար: Թշնամու ջախջախումը կատարյալ էր: Մենք նրանց թելադրեցինք այնպիսի պայմաններ, որոնց տակ անառարկելիորեն ստորագրեցին»:

Այդ պայմանների մեջ էին. անվերապահորեն ճանաչել Բաքվի սովետի իշխանությունը, զինաթափել «վայրենի» դիվիզիան, անհապաղ վերականգնել երկաթուղու աշխատանքը և բացել Բաքու-Թիֆլիս, Բաքու-Պետրովսկ երկաթուղին:

«Սովետական իշխանությունը Բաքվում,- գրում էր Շահումյանը,- շարունակ օգում էր կախված մուսուլմանական նացիոնալիստական կուսակցությունների դիմադրության պատճառով», որոնք բեկական ու խանական

մտավորականության գլխավորությամբ ամրացել էին Ելիզավետպոլում, առանալով մենշևիկների աջակցությունը, Բաքվում դարձել էին ագրեսիվ:

Նկատի ունենալով մուսուլմանական նացիոնալիստական ուժերի հարձակումը, Շահումյանը հայտնում էր, որ վճռվում էր Անդրկովկասի բախտը և ընդգծում էր, որ եթե նրանք Բաքվում հաղթեին, ապա Բաքուն «վերածվեր Աղրբեջանի մայրաքաղաք, բոլոր ոչ-մուսուլմանական տարրերը զրնաթափ կարվեին ու կկոտորվեին»:

«Մուսուլմանական հակահեղափոխական տարրերը,- շարունակում էր Շահումյանը,- դրության տերը կդառնային ամբողջ Անդրկովկասում: Եթե նկատի ունենանք նրանց քաղաքական նպատակները՝ Անդրկովկասի անջատումը Ռուսաստանից և ենթարկումը Թուրքական հովանավորությանը, պարզ է, որ նրանց հաղթանակը Բաքվում կտաներ դեպի Անդրկովկասի կորստը Ռուսաստանի համար»:

Այնուհետև Շահումյանը տեղեկացնում էր, որ Անդրկովկասյան սեյմում մենշևիկները զիջումներ են արել «Մուսավաթին» և համաձայնվել են Անդրկովկասն անկախ հայտարարելու, որ դա Թուրքիային չի բավարարել և պատերազմ է սկսել Անդրկովկասի դեմ:

Շահումյանը Թուրքիայի այդ հարձակումը կապում էր Բաքվում մուսուլմանական նացիոնալիստների ելույթի և իշխանությունը գավթելու հետ: Դա նշանակում էր, որ «Մուսավաթ» հակահեղափոխական, նացիոնալիստական կուսակցությունը պատերազմը Բաքվի սովետական իշխանության դեմ սկսել էր Թուրքիայի գիտությամբ ու նրա հանձնարարությամբ:

Իր նամակում Շահումյանը հիշատակում էր նաև Բաքվի սովետի տրամադրության տակ գտնվող դաշնակցության ղեկավարությամբ գործող 3-4 հազար զինվորից բաղկացած ազգային զորամասերի մասին: «Վերջինների մասնակցությունը,- նշում է Շահումյանը,- մասամբ ազգային կոտորածի բնույթ տվեց քաղաքացիական պատերազմին, բայց դրանից խուսափելու հնարավորություն չկար: Մենք գիտակցաբար համաձայնեցինք դրան: Մուսուլմանական չքավորությունը սաստիկ տուժեց, բայց նա այժմ համախմբվում է բոլշևիկների ու սովետի շուրջ»:

«Դաշնակցություն կուսակցությունը,- գրում էր Շահումյանը,- թեև նա մեզ առայժմ պաշտպանում էլ է ամեն բանում, առայժմ ոչինչ մի խոստացեք և ոչինչ մի տվեք: Նրանց ուժեղացնել այլևս պետք չէ: Եթե մեր պատվիրակները՝ Կոլպինսկին և Տեր-Պետրոսովն այդտեղ են, հաղորդեցեք, որ նրանց ամբողջ բերածը պետք է բացառապես մեզ համար լինի»:

Դաշնակցության ղեկավարությամբ գործող ազգային ջոկատներն արձա-

գանքում են Բաքվի պաշտպանության կոմիտեի կոչին և մասնակցում են ռազմական գործողություններին: Շահումյանը համաձայնվել էր այդ ջոկատների մասնակցությանը, ելնելով նրանց ունեցած ուժից և Բաքվի հայ բնակչության անվտանգությունն ապահովելու, նրանց կոտորածը կանխելու անհրաժեշտությունից:

Իսկ այդ վտանգը կար, քանի որ «Մուսավաթի» ղեկավարությամբ գործող մուսուլմանական նացիոնալիստական կոմիտեն չէր թաքցնում իր մտադրությունը և բացարձակորեն հայտարարում էր հայ բնակչությանը ոչնչացնելու մասին: Այդ կոմիտեի բանդաները թափանցելով քաղաք, իրենց համախոհների հետ միասին հարձակվում են հայկական թաղամասի ուղղությամբ: Միայն հայկական ջոկատների համառ դիմադրությունն է կասեցնում հայ բնակչության կոտորածը:

Այնուամենայնիվ մուսուլմանական բանդաները հասցրել էին գնդակոծել հայկական թաղամասը, որի հետևանքով հայ բնակիչներից շատերը վիրավորվում են, լինում են նաև անմեղ զոհեր, ավերվում են մի շարք տներ:

Երբ Բաքվի դաշնակցականների ղեկավարները հանդիպել էին Շահումյանին և հայտնել էին իրենց զինված ջոկատները պաշտպանության կոմիտեի տրամադրության տակ դնելու մտադրության մասին, Շահումյանը համաձայնվել էր, ելնելով խիստ պահանջ՝ որևէ գործողություն չձեռնարկել մուսուլման բնակչության նկատմամբ, մատնացույց անելով Բաքվում ռազմական դրություն հայտարարելու մասին պաշտպանության կոմիտեի հատուկ զգուշացումն այն մասին, որ առանց ազգային խտրության, քաղաքացիների իրավունքները խախտող յուրաքանչյուր անձ խստորեն կպատժվի ռազմական դրության համաձայն:

Դաշնակցության ղեկավարները խոստացել էին չխախտել այդ պահանջը: Սակայն, երբ հայկական թաղամասերի գնդակոծության, վիրավորների ու զոհվածների լուրը հասնում է հայկական ջոկատների մարտիկներին, նրանցից մի քանի խումբ, վրիժառությամբ լցված՝ հարձակվում են մուսուլմանական թաղամասերի վրա, որի հետևանքով վիրավորվում են ու զոհվում անմեղ մարդիկ:

Այս միջադեպի ժամանակ զոհերն ավելի շատ կլինեին, եթե Բաքվի հայ բնակչությունն անտարբեր մնար և օգնության չհասներ մուսուլման բնակչությանը: Նրանք կարողանում են իրենց պաշտպանության տակ վերցնել և ապաստան տալ տասնյակ հազարավոր մուսուլմանների (ՀՀ ԱԱ, ֆ. 223, ց. 1, գ.117, թ. 4):

Այս միջադեպը կարող էր Բաքվում առաջ բերել ազգամիջյան պատերազ-

մի վտանգ, մանավանդ, որ երկու կողմն էլ ունեին լավ զինված ջոկատներ: Շահումյանից պահանջվեցին հակայական ջանքեր այդ վտանգը վերացնելու համար: Նրա և դաշնակցության ղեկավարների ու հայկական ջոկատների հրամանատարների միջև տեղի ունեցած բանակցություններից հետո, վերջիններս խոստանում են այլևս թույլ չտալ ռազմական դրության վերոհիշյալ պահպի խախտում:

Ցնցած դրան, Շահումյանը սկսում է վերապահորեն վերաբերել հայկական ջոկատների հրամանատարների գործունեությանը, ինչը, որ նա արտահայտել է իր նամակում:

Շահումյանը վերոհիշյալ նամակում տեղեկացրել է, որ հայ, մուսուլման և ռուս բանվորներից բաղկացած կարմիր գվարդիան շրջակա մուսուլմանական գյուղերի հարձակումներից պաշտպանում է Բաքվի նավթահանքերը:

Սակայն ձեռք բերված հաջողություններով ռազմական գործողությունները չեն ավարտվել: Մարտեր են տեղի ունեցել Շամախիում: Ելիզավետպոլի մուսուլմանական ազգային կոմիտեի 3-հազարանոց ջոկատի ուժգին գրոհին չդիմանալով, կարմիր գվարդիական ջոկատը հարկադրված նահանջել է, իր հետ տանելով 25 հազար հայ և մոլոկան գաղթականների: Մուսուլմանական զորքերին օգնություն է ուղարկվել վրացի իշխան Մաքալովի հրամանատարությամբ երկու էշելոն, որոնք միանալով կարողացել են գրավել Բաքվից չորս ժամվա ճանապարհ հեռու գտնվող Հաջիկաբուլ կայարանը: Մուսուլմանական բանդաներ են կուտակվել նաև Բաքվի հարավում:

Հաղորդելով այս ամենի մասին, Շահումյանը գրում է. «Օդակը սեղմվում է Բաքվի շուրջը, և հավանորեն օրերս նոր, մեծ մարտեր տեղի կունենան» և վստահություն է հայտնում, որ «հաղթող դուրս կգանք»:

Նամակում Շահումյանը հայտնում էր Բաքվի սովետի անելիքների մասին, հատկապես ընդգծելով, որ պատրաստվում են ազգայնացնել նավթարդյունաբերությունը, բանկերը, ծովային տրանսպորտը:

*Նամակի վերջում Շահումյանը նորից անդրադարձել է Թուրքիայի սկսած պատերազմին և գրել է հետևյալը. «Ժողովրդական հեռագրից գիտեմ, որ պատերազմը Թուրքիայի հետ արդեն սկսվել է: Մեզ հարկավոր կլիներ հայտնել մեր վերաբերմունքը դեպի պատերազմը, և դեպքերի նախօրյակին ես պատրաստվում էի պաշտոնական հայտարարություն անել, որ մենք կողմնակից ենք Բրեստի հաշտության պայմանները կատարելու և չպետք է պատերազմ մղենք Թուրքիայի դեմ» (**Ստ. Շահումյան**, նույն տեղը, հ. չորրորդ, էջ 200-204):*

Շահումյանի նշած մեծ մարտերը սկսվում են նրանով, որ ապրիլի 15-ին պաշտպանության կոմիտեի անդամ Ի. Սուխարցևի հրամանատարությամբ Պետրովսկ է ուղարկվում էքսպեդիցոն ջոկատը, որը համառ մարտեր մղելով ջախջախում է իսամ Գոցինսկու բանդաները և ապրիլի 20-ին ազատագրում Բաքվի համար շատ կարևոր այդ քաղաքը:

Բաքվում ջախջախված մուսավաթական ուժերը փախուստի դիմելով կենտրոնանում են Գյանջա քաղաքում: Իսկ Բաքվի սովետի զորքերը գրավում են Լենքորանը, Շամախին, Ղուբան:

1918 թ. ապրիլի 1-ին Անդրկովկասյան սեյմը քննարկել է Բաքվում տեղի ունեցած դեպքերը: Ընդունվել է որոշում՝ Բաքուն գրավելու համար մի ջոցներ տրամադրել մուսավաթականներին: Համալրում ստացած մուսավաթական ուժերը փորձում են վերսկսել գրոհը, սակայն ապրիլի 7-8-ին Խուր դալանի մատույցներում հայկական գնդերից կազմված սովետական զորքերի առաջապահ զորախմբի կողմից ջախջախվում և ետ են շպրտվում:

Զկարողանալով խտությամբ միջոցով տապալել Բաքվի սովետական իշխանությունը, Անդրկովկասյան սեյմում գերիշխող մենշևիկներն ու մուսավաթականները դիմում են խորամանկության, որոշում ընդունելով միջնորդ պատվիրակություն ուղարկել Բաքու:

Այդ պատվիրակության ղեկավար նշանակված Ռամիշվիլին Շահումյանին ուղարկած հեռագրով հայտնում էր, որ իր նախագահությամբ Բաքու է ուղարկվում Սեյմի մեջ մտնող սոցիալիստական խմբակցության անդամներից, Երկրային սովետի գործադիր կոմիտեի անդամներից կազմված պատգամավորություն եղբարասպան պատերազմին վերջ տալու առաքելությամբ: Նա նաև ընդգծում էր, որ Թիֆլիսի հումմետականները համաձայն են այդպիսի պատվիրակություն ուղարկելուն, բայց չեն մտել պատվիրակության մեջ: Ռամիշվիլին հայտնում էր նաև, որ Սեյմի կողմից մշակվել են հաշտության մի քանի պայմաններ և խնդրում էր հնարավորություն ստեղծել, որպեսզի պատվիրակությունն անվտանգ անցներ ռազմաճակատի գիծը («Ակա», ապրիլի 11 (24, 1918 թ.):

Շահումյանը Պաշտպանության կոմիտեի անունից Ռամիշվիլուն ուղարկած պատասխան հեռագրում առաջին հերթին նշել է, որ հաշտարար պատգամավորության կարիքը ընավ չկա և ընդգծել է հետևյալը. «Եղբայրասպան պատերազմ Բագուում ամենևին չի եղել, այլ եղել է և շարունակում է, արդեն Բագվի սահմաններից դուրս, քաղաքացիական կռիվ հակայեղափոխական բեկերի ու խանների դեմ, որոնք ոտքի են ելել սովետական իշխանության դեմ և որոնց հետ Բագվի պրոլետարիատը ոչ մի հաշտություն և համաձայնություն չի կարող ունենալ»:

«Բագվի բանտրները,- շարունակել է Շահումյանը,- առանց ազգի խտրության, և նրանց թվում մուսուլման բանտրները, բոլոր նավթային շրջաններում միացել են Սովետի շուրջ և բաական ոյժ ունեն ջախջախելու սովետական իշխանության թշնամիներին»:

Սեյմի սոցիալիստական խմբակցություններին և Երկրային սովետին մեղադրելով «Գանձակի շրջանում բռնկած և մինչև Բագու հասած հակայեղափոխական հրդեհի համար», Շահումյանն ընդգծում էր հետևյալը. «Այն պատգամավորությունը, որ Ռամիշվիլու հեռագրին նայելով, հաշտության մի քանի պայմաններ է մշակել, ուզում է, անշուշտ, նոր ծառայություններ մատուցանել բեկական ու խանական հրոսակախմբերին, որոնք զինված են Անդրկովկասեան կոմիսարիատի ջանքերի շնորհիվ և այժմ գործում են Բագվի սովետական իշխանության դեմ»:

Այնուհետև Շահումյանը գրում էր. «Եթե Սեյմում յիրաւի սոցիալիստական կուսակցություններ գոյություն ունենային, նրանք կառաջարկեին ոչ թե հաշտություն հակայեղափոխականների հետ, այլ զինված օգնություն Բագվի յեղափոխական սովետին»:

Նշելով, որ Բաքվի պրոլետարիատը խոր զայրույթով ու արհամարանքով կհանդիպի հաշտարար պատգամավորությանը, Շահումյանը Պաշտպանության կոմիտեի անունից մերժում է Անդրկովկասյան սեյմում նստած իրենց սոցիալիստական համարող, բայց հակահեղափոխությանը ծառայող ուժերի պատգամավորության Բաքու գալու առաքելությունը: Շահումյանի գրած պատասխան հեռագիրը նրա հետ ստորագրել էին Ջափարիձեն, Կորգանովը, Սուխարցևը, Սաքո Սահակյանը և Նարիմանովը: («Ակա», ապրիլի 11 (24), 1918 թ.):

Այսպիսով, Շահումյանը մեկ անգամ ևս վճռականորեն մերկացրել է 1918 թ. մարտին խտությունը հայերի և մուսուլմանների միջև որպես ազգային պատերազմ ներկայացնելու մենշևիկյան-մուսավաթական բլոկի փորձերը և ընդգծել է Բաքվի հայ, մուսուլման, ռուս, վրացի, պարսիկ բանվորների համերաշխությունը:

ՄԵՆՇԵՎԻԿՆԵՐԸ ԿԵՂԾՈՒՄ ԵՆ ԻՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Մարտյան դեպքերի հետևանքով առաջացած սարսափելի աղետից Բաքվի բնակչությունը սկսում է ուշքի գալ, ինչին նպաստել են հակահեղափոխության պարտությունը, մուսավաթականների հակասովետական խռովության ճախողումը: Հաղթել էր սովետական իշխանությունը՝ հենվելով Բաքվի պրոլետարիատի, կարմիր զորամասերի և հատկապես հայկական կամավորական գնդերի վրա:

Շահումյանը իր բազմաթիվ ելույթներում վերլուծելով Բաքվի դեպքերը, դրանք գնահատել է որպես քաղաքացիական կռիվ, որը հրահրել էին մուսավաթականները սովետական իշխանությունը տապալելու համար: Ինչպես մյուս բոլշևիկ գործիչները, ճախ էսէռները, այնպես էլ Ռուսոմի առաջնորդությամբ գործող դաշնակցականների ղեկավարած Բաքվի հայոց ազգային խորհուրդը նույնպես հանդես էին գալիս Շահումյանի տեսակետի պաշտպանությամբ:

Ի տարբերություն այդ ամենի, Բաքվի մենշևիկները իրենց «Наш голос» *թերթի միջոցով մարտյան դեպքերը գնահատում են որպես ազգամիջյան կռիվ հայերի և մուսուլմանների միջև:* «Наш голос» *թերթը ուղղակի գրում էր. «Այն, ինչ որ պատահեց Բաքվում, քաղաքացիական կռիվ չէր, այլ մուսուլմանների և հայերի միջև եղած հին թշնամության արտահայտությունն էր» (*«Наш голос», *05.04.1918):*

Պատասխանելով մենշևիկների թերթին, Բաքվի դաշնակցականների «Արև» թերթը գրել է. «Ոչ ոք չէր կարող հաստատել, թէ իրանց մարքսիստ համարող մենշևիկները թույլ կտան պրովոկատորներին թիկունք հանդիսանալ և դասակարգային յախտն բախտն ազգամիջեան թշնամութիւններով բացատրել» («Արև», ապրիլի 7, 1918 թ.):

«Արև» թերթը, որին գաղափարական ուղղություն էր տալիս Ռուսոմը, «Վայրկեանը և մեր պարտականութիւնը» խմբագրական հոդվածում գրում էր նաև հետևյալը. «Այն, ինչ տեղի ունեցան մարտի 18-20-ին Բաքւի փողոցներում, ուրիշ ոչինչ չէր, եթէ ոչ հեղափոխութեան և հակայեղափոխութեան արիւնահեղ պայքար»:

«Այդ հակայեղափոխութիւնը,- շարունակում էր «Արև»-ը,- պատրաստած էր թուրք բէկերի և հողատէրերի ձեռքով: Մուսուլման դեմոկրատիան, թուրք աշխատաւոր ժողովուրդը ոչ մի մասնակցութիւն չունի այդտեղ: Ոչ ոք չի կարող մեղադրել թուրք ժողովրդին, թէ նա միացել է իր բէկերի ու հողատէրերի քաղաքականութեան: Բայց ոչ ոք չի կարող մեղադրել նաև հայ ժողովրդին: Բոլոր այն մարդիկ, որոնք աշխատում են այս էապէս դասակարգային և յեղափոխական պայքարը ցոյց տալ իբրև ազգամիջեան պատերազմ, խորապէս սխալւում են և վատ ծառայութիւն են անում աշխատաւորական և յեղափոխութեան դատին»:

Դաշնակցության թերթը գրում էր նաև, որ թուրք բեկերն ու հողատերերը հետևողականորեն գործում են Ռուսաստանի մեծ հեղափոխության դեմ, որ արևի պես պարզ է նաև այն ճշմարտությունը, որ նրանք գործում են թուրքական իմպերիալիստների թելադրանքով և «նրանց հետ միանգամայն ներդաշնակ»:

Հոդվածի վերջում «Արև»-ը գրում էր. «Կատարած դէպքերի էութիւնը, նրանց հիմքը պարզապէս յեղափոխութեան և հակայեղափոխութեան բախումն էր: Ապացոյց այն հանգամանքը, որ գիտակից մուսուլման աշխատաւոր մասսան բնաւ չըկամեցաւ մասնակցել այս բախումին և ցոյց տուեց, որ ինքը որևէ կերպ չի ուզում նպաստել իր բէկերի և հողատէրերի հակաժողովրդական և հակայեղափոխական գործին» («Արև», ապրիլի 9, 1918 թ.):

Ջնայած զգուշացումներին, մենշևիկների «Наш голос» *թերթը շարունակում էր մարտյան դեպքերի մասին պրովոկացիոն նյութեր հրապարակելու միջոցով խեղաթյուրել ճշմարտությունը: Այդ ամենը հաշվի առնելով Բաքվի հեղափոխական պաշտպանության կոմիտեն կասեցնում է* «Наш голос» *թերթի տպագրությունը:*

Մուսավաթականների մարտյան խռովությունը ճնշելու մասին Բաքվի սովետի նախագահ Ջափարիձեի, բոլշևիկների Բաքվի կոմիտեի նախագահ Նանեյշվիլու, ճախ էսէռների կազմակերպության նախագահ Սահակյանի և ազգային խորհրդի նախագահ դաշնակցական Գյուլխանդանյանի ստորագրությամբ հեռագիր է ուղարկվել Թիֆլիս՝ Սեյմի նախագահ Չխեիձեին: Նրանք նշում էին, որ Բաքվում դրությունը հանգիստ է և ստեղծված խաղաղությունը միայն սպառնում է խուրդալանում դիրքեր գրաված դաղստանյան գունդը, որը սպառնում է Բաքվի սովետական իշխանության դեմ ռազմական գործողություններ սկսել:

Հեռագրի հեղինակները Չխեիձեին գրել են. «Մեր տեղեկությունների համաձայն, Սեյմը ուզում է Բաքւի թշնամիների կողմն անցնել: Բաքւի բանտորների անունից, առանց ազգի ու կուսակցութեան խորութեան, նախազգուշացնում ենք ձեզ, որ այդ յանցանքը չգործէք» («Արև», ապրիլի 11, 1918 թ.):

Մարտյան իրադարձությունների հետո պարտություն կրած մուսուլման-

նական ազգային խորհուրդը հեռանում է Բաքվից և նորից ամրանում է Գյանջայում:

Հետագայում մուսավաթականները տարածում են, թե մարտյան դեպքերի ժամանակ հայերն անխնա կոտորել են թաթարներին: Սկզբում հրապարակում են, թե հայերի կողմից սպանվել ու վիրավորվել է 6 հազար թաթար: Կարճ ժամանակ անց, այդ թիվը նրանք հասցնում են 20 հազարից ավելի, ինչը, որ բացահայտ սուտ էր:

Բաքվի հայերը մարտյան դեպքերի ժամանակ փրկել են 3000 մուսուլման, այդ թվում իր հայասպանությամբ աչքի ընկած Բեյրութ Ջիվանշիրին, որը հետո, սեպտեմբեր անսին Բաքուն թուրքերի գրավումից հետո, պետք է դառնար Բաքվի հայերի կոտորածի գլխավոր կազմակերպիչներից մեկը (Архив русской революции, том. 9, Берлин, 1923, стр.122):

Մարտյան դեպքերի ժամանակ հայերն էլ են ունեցել մեծ թվով զոհեր, այդ թվում մարտի 20-ին զոհված Լևոն Աթաբեկյանը, որն Անդրկովկասյան սեյմում վճռականորեն հանդես էր եկել Ռուսաստանից անջատվելու և թուրքական կողմնորոշում ընդունելու դեմ: Լ. Աթաբեկյանը սկզբում եղել էր դաշնակցության անդամ, հետո հիասթափվել էր և մտել էր էսէռական կուսակցության մեջ: «Արև» թերթը նրան բնութագրում է «որպէս ջերմ հայրենասեր, տաղանդավոր մարդ, հռետոր և չնորհալի գրող» (**«Արև»**, մարտի 24, 1918 թ.):

Լևոն Աթաբեկյանը Բաքու էր եկել Շահումյանի հրավերով և համագործակցում էր նրա հետ: Լևոն Աթաբեկյանի անձնական գործը, չգիտեմ ինչու, «Գաղտնի» նշագրումով պահվում էր Բաքվի կուսակցական արխիվում և այդ պատճառով ինձ ժամանակին հնարավորություն չի տրվել ծանոթանալ դրա հետ:

1918 թ. ապրիլի 20-ին պաշտպանության կոմիտեն, սովետի հետ համաձայնեցնելով, Շահումյանի և Կորգանովի ստորագրությամբ ընդունում է դեկրետ Բաքվի քաղաքային դումայի ցրելու մասին:

Դումայի ցրելու հիմնական պատճառ էր համարվում այն, որ նրա ներկա կազմը բոլորովին չէր համապատասխանում քաղաքի բնակչության շահերին և շարունակում էր դրսևորել իր անընդունակությունը քաղաքային ինքնավարության պատասխանատու գործը վարելու մեջ:

Դեկրետով ինքնավարության գործը հանձնվում էր Բաքվի սովետին, որը ստեղծելու էր քաղաքային տնտեսության հատուկ բաժին (**Ստ. Շահումյան**, նույն տեղը, հ. չորրորդ, էջ 214):

Քաղաքային դումայի ցրումից հետո Բաքվում իշխանությունն ամբողջովին անցնում է Բաքվի սովետին: Դա մարտ ամսին տեղի ունեցած քաղաքական կրվի ուղղակի հետևանքն էր:

Հարկ եմ համարում նշել, որ 1919 թ. մուսավաթականները մարտյան դեպքերի տարեդարձի կապակցությամբ իրենց «Азербайджана», «Наш путь» և այլ թերթերում հրապարակում են հոդվածներ, որոնցում զրպարտել, կեղծել են և գլխի վրա շուռ տված են ներկայացրել իրական փաստերը:

Ըստ այդ հրապարակումների ստացվում է, որ Բաքվի նահանգի բոլոր մուսուլմանները, մասնավորապես Բաքվի մուսուլմանները, ի դեմս Բաքվի սովետի գործադիր կոմիտեի՝ հայերի, ինչպես նաև Բաքվի դեմոկրատիայի նկատմամբ եղել են «վերին աստիճանի քաղաքավարի» և միայն դաշնակներն ու բոլշևիկներն են վարվել «գայլերի նման, ձգտելով խժռել մուսուլմաններին»:

Մուսավաթականները նույնիսկ ստեղծել են հետաքննչական հանձնաժողով, որը չինծու նյութերի ու փաստերի հիման վրա փորձել է վարկաբեկել Բաքվի հայ բնակչությանն ու սովետական իշխանությանը:

Բայց այդ ժամանակ արդեն կենդանի չէին իբրև դաշնակցականներ մեղադրվող Շահումյանը, Առաքելյանը, Ջավարիձեն, Ավագյանը և մյուսները, որոնք չէին կարող արժանի հակահարված տալ կեղծարարներին: Կենդանի չէին նաև սոցիալիստ մուսուլմաններ Ազիզբեկովն ու Վեզիրովը, որպեսզի բարձրաձայն հայտարարեին այն ամբողջ կեղծիքի մասին, որ հրապարակ էին նետել մուսավաթականները:

Հրապարակելով այդ զրպարտությունները, մուսավաթականները նպատակ էին հետապնդում մոլորեցնել անտեղյակ մարդկանց և դրանով արդարացնել 1918 թ. սեպտեմբերին իրենց կատարած գազանությունները, հայտարարելով, որ այդ ժամանակ հայերի կոտորածը եղել է վրեժ՝ մարտյան դեպքերի համար:

Իսկ մարտյան դեպքերի ժամանակ մուսավաթականները փորձել էին հարձակվել քաղաքի տարբեր հատվածներում ապրող մուսուլմանների տների վրա՝ նպատակ ունենալով դա վերագրել հայերին ու սովետական իշխանությանը և այդ միջոցով մուսուլմաններին գրգռել հայերի դեմ:

Սակայն պետք է ասել, որ այդ պրովոկացիան հաջողություն չի ունեցել, քանի որ հայերը պատսպարել ու փրկել էին հազարավոր մուսուլմանների: Հայերը մուսուլմաններին ապաստան էին տվել Մայիլովի թատրոնի շենքում

(3500 մարդ), Եֆրեմով եղբայրների կրկեսում (800 մարդ), «Կոլիզեյ» կինոթատրոնում (800 մարդ), «Ռեկորդ» կինոթատրոնում (579 մարդ), Բուդարովի ուսումնարանում (218 մարդ), Միրոնովների բաղնիքում (306 մարդ) և այլն, թվով ավելի քան 13 հազար մարդ («Вперед», 02.04.1919):

Թեև ժամանակին մերկացվել են մուսավաթականների այդ սադրանքները, սակայն այժմ, մեր օրերում, նրանց հետնորդները նորից ասպարեզ են նետել դեռևս 1918-1919 թթ. հնարած կեղծիքը, մարտյան դեպքերը ներկայացնում են որպես ազգամիջյան պատերազմ և դրա մեղքը բարդում հայ բնակչության վրա: Կեղծարարները թաքցնելով ամբողջ ճշմարտությունը, փորձում են արատավորել Շահումյանի բարի անունը, նրան ներկայացնելով որպես ադրբեջանական ժողովրդի նկատմամբ գենոցիդ կազմակերպողի:

Ինչպես արդեն նշվել է Ադրբեջանի անկախ հանրապետության մայրաքաղաքը ի սկզբանե հռչակվել է ոչ թե Բաքուն, այլև Գյանջա քաղաքը:

1897 թ. մարդահամարի տվյալներով Բաքվում հայերը կազմում էին բնակչության մոտ 41 տոկոսը: Բաքվի նավթարդյունաբերության մեջ աշխատող հայ բանվորները կազմում էին 32 տոկոս: Հայ բանվորները ավելի մեծ թիվ էին կազմում մեխանիկական գործարաններում, ծխախոտի ֆաբրիկաներում և շինարարության մեջ: Բաքվում բնակչության այս հարաբերակցությունը պահպանվել էր նաև 1918 թվականին:

Բաքվում բնակչության մեծամասնությունը կազմում էին հայերն ու ռուսները: Այս հանգամանքն էլ հաշվի առնելով, իր հռչակման սկզբնական շրջանում Ադրբեջանի հանրապետությունը մտադրություն չի ունեցել Բաքվին տիրել և այն հռչակել որպես Ադրբեջանի մայրաքաղաք:

Այն ժամանակից սկսած, երբ Օսմանյան Թուրքիան խախտելով Բրեստի պայմանագիրը, գրավելով Հայաստանի զգալի մասը, սկսել է առաջ շարժվել դեպի Բաքու, այդ ժամանակից էլ ադրբեջանական մուսավաթականները, հենվելով թուրքական սվինների վրա, որոշել են գավթել Բաքուն և այն հռչակել իրենց մայրաքաղաք: Իսկ դա հնարավոր էր միայն Բաքվից ռուս և հայ բնակչությանը հեռացնելու միջոցով:

Մինչդեռ Բաքուն պատկանում էր Ռուսաստանին, և Բաքվի սովետական իշխանությունը Շահումյանի գլխավորությամբ Բաքուն պաշտպանում էր Ռուսաստանի համար: Հենց այս է պատճառը, այստեղ է թաքնված ամբողջ գաղտնիքը, թե ինչու մուսավաթականները, իսկ հետո, այսօր, մեր օրերում նրանց ժառանգորդ ադրբեջանցի կեղծարարները բոլոր միջոցներով վարկաբեկում են Շահումյանին և նրանից վրեժ լուծում Բաքուն Ռուսաստանից

չանջատելու համար:

Բաքուն Ադրբեջանի մայրաքաղաք դարձել միայն այն ժամանակ, երբ 1918 թ. սեպտեմբերի կեսերին Թուրքական զորքերը գավթեցին Բաքուն և իրենց հետ այստեղ բերեցին մուսավաթական կառավարությունը:

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԿՈՄԻՍԱՐՆԵՐԻ ՍՈՎԵՏԻ ՍՏԵՂԾՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅՈՒՆԸ

Բաքվի սովետի ապրիլի 25-ի նիստում Շահումյանը զեկուցել է ընթացիկ մոմենտի և իշխանության կազմակերպման մասին:

Զեկուցման սկզբում Շահումյանը հիշեցրել է այն պատճառները, որոնց հետևանքով սովետն ունեցել է չսիավոր ուղղություն: Եվ նկատի ունենալով, որ ռազմական գործողությունների ժամանակ ձեռք բերած հաջողությունները, Կովկասյան բանակի ռազմահեղափոխական կոմիտեի ջանքերը նպաստել են սովետի ուժեղացմանը, Շահումյանը նշել է, որ դա հնարավորություն է տվել ձեռնարկել միջոցառումներ և հարկադրել է հակահեղափոխականներին զգալ այդ ուժը:

Շահումյանն ընդգծել է. «Թուրքիայի պրոտեկտորատի,- Ադրբեջանի ավտոնոմիայի կողմնակից բեկերը, խաներն ու աղալարները շտապեցին, քանի ուշ չէ, ջախջախել Բաքվի սովետը: Բոլորին հայտնի են «վայրենի դիվիզիայի» այստեղ փոխադրելու փորձերը. ագրեսիվ և հարձակողական դիրք էր բռնել բեկերի ու խաների կազմակերպությունը: Մենք բավական ուժեղ էինք, որպեսզի ընդունեինք նրանց մարտահրավերը: Հետևանքները ցույց տվեցին, որ մենք չսխալվեցինք»:

Զեկուցման մեջ Շահումյանը նորից անդրադարձել է հայկական զինված ջոկատների խնդրին: Հարկ եմ համարում զեկուցման այդ հատվածը ամբողջությամբ մեջբերել: «Մեր քաղաքի ազգային կազմը վախեցնում էր մեզ: Մենք երկյուղ էինք կրում, որ պայքարն անցանկալի գունավորում կստանա: Մենք նույնիսկ ստիպված էինք դիմել հայկական գնդի օգնությանը: Մենք նույնիսկ չկարողացանք թույլ տալ մեզ նրանց ծառայությունից հրաժարվելու շայլությունը: Անհրաժեշտ էր օգտվել հայկական գնդի ծառայությունից, իսկ հաղթանակն այնքան էր խոշոր, որ այդ հանգամանքը քիչ է մթագնում իրականությունը: Եթե մենք զգույշ էինք այն ժամանակ, երբ թույլ էինք, այժմ մենք պետք է առավել ակտիվ լինենք:

Ազգային գունավորումը, որն անխուսափելիորեն ստացավ քաղաքացիական կռիվը, և այն հանգամանքը, որ կարմիր բանակի կողքին շարունակում

էին գոյություն ունենալ ազգային գնդերը՝ հարկադրեցին մեզ որոշակի պատերազմ մղել դրանց դեմ: Ճիշտ է, մենք ստիպված էինք նրանց օգտագործել, քանի որ նրանք հանդես եկան որպես մեր դաշնակիցներ, բայց նրանք պայքարի մեջ մտցրեցին ազգային տարր և ահա, Հանուն ինտերնացիոնալիզմի հաղթանակի, չպետք է հնարավորություն տալ ամրանալու ազգային խորհուրդներին ու գնդերին:

Հայկական ազգային խորհուրդն ինքնուրույն ձերբակալում, խուզարկում, բռնագրավում է և այլն- դրա դեմ պետք է միջոցներ ձեռք առնել: Քաղաքական ֆունկցիաներով օժտված պետք է լինի իշխանության միակ մարմինը՝ բանվորների, զինվորների և նավատորների պատգամավորների սովետը»:

Այնուհետև Շահումյանը խոսում է առաջիկա անելիքների մասին, կարևորելով չքավոր ու անտուն մուսուլմաններին օգնելու, բանկերի, տների, նավթարդյունաբերությունն ազգայնացնելու, քաղաքի չքավորության տնտեսական վիճակը բարելավելու, մասնավոր սեփականությունը սահմանափակելու անհրաժեշտությունը:

Նշելով, որ սովետի իշխանությունը ոչ թե գոյություն ունեցող կարգը պետք է պահպանի, Շահումյանն ազդարարել է. «Մենք այժմ կանգնած ենք իշխանության մարմնի՝ Ժողովրդական կոմիսարների սովետի ստեղծման անհրաժեշտության առջև»:

Նա հայտնում է, որ Հեղափոխական պաշտպանության կոմիտեն որոշել է կազմակերպել Բաքու քաղաքի ամբողջ հասարակական կարգն ընդգրկող մի քանի բաժիններ և ձեռնարկած միջոցառումները պետք է ընդգրկեն ամբողջ Բաքվի նահանգը:

Շահումյանը հիշեցրել է, որ քաղաքացիական կռվի ժամանակ նավթահանքերում հայերը, մուսուլմանները և ռուսները գործել են համերաշխորեն և պահպանել են խաղաղություն: Դրանից ելնելով Շահումյանը խնդիր է դրել արթնացնել մուսուլմանական դեմոկրատիայի գիտակցությունը, մատնանշելով, որ «Մուսավաթը» վերջնականապես վարկաբեկվել է, իսկ մուսուլմանական սոցիալիստական կուսակցություններն ավելի են ամրապնդել իրենց հեղինակությունը:

Շահումյանը համոզմունք է արտահայտել, որ Բաքվում ամրապնդվող սովետական իշխանությունը կկարողանա ազդել ամբողջ Անդրկովկասի վրա՝ այնտեղ սովետական իշխանություն հաստատելու համար:

Ինչ վերաբերում է Կովկասյան բանակի հեղափոխական կոմիտեին, ապա

նա պետք է հաշվետու լինի սովետի առջև:

Զեկուցման վերջում Շահումյանն ընդգծել է, որ Ժողովրդական կոմիսարների սովետը կազմվելու է բոլշևիկներից և ձախ էսէռներից: Երբ Շահումյանն արտասանում է այս խոսքերը, նիստում աջ կուսակցությունների ներկայացուցիչները աղմուկ են բարձրացրել, հայտնելով իրենց անհամաձայնության մասին:

Պատասխանելով նրանց, Շահումյանը բերել է անգլիական պառլամենտի օրինակը, որտեղ կառավարություն կազմելու իրավունքը տրվում է տիրապետող կուսակցությանը: Տվյալ դեպքում Բաքվում տիրապետող է բոլշևիկյան կուսակցությունը, որը և իր դաշնակցի՝ ձախ էսէռների հետ կազմելու է Ժողովրդական կոմիսարների սովետ՝ կառավարություն: «Այո,- ասել է Շահումյանը,- սոցիալիստ-հեղափոխականները ցույց տվին, որ նրանք բոլշևիկների նման կարող են մեռնել սովետական իշխանության համար, բայց հետևողական և ճիշտ մտածել նրանք դեռ չեն կարողանում» (**Ստ. Շահումյան**, նույն տեղը, հ. չորրորդ, էջ 210-213):

ԳԼՈՒԽ 17
ԲԱՔՎԻ ՀԱՅՈՑ ԱԶԳԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԻ ՀԱՐՑԸ

1917 թ. դեկտեմբերի վերջին Թիֆլիսի Հայոց ազգային խորհրդի որոշ մասը Բաքվում ևս կազմակերպվում է ազգային խորհուրդ:

Այս կապակցությամբ Բաքվի ազգային խորհուրդը 1918 թ. հունվարի 6-ին հրապարակած հայտարարության մեջ նշել է, որ հրապարակ գալով «պատմական բացառիկ օրերում», իր գործունեության «գլխավոր հիմքերից մեկը համարում է համերաշխ գործունեությունը կովկասեան բոլոր ազգերի հետ, ունենալով այն խորին համոզումը, որ առանց այդպիսի համերաշխ գործունեության անկարելի պիտի լինի ոչ կարգի վերահաստատումը մեր երկրում, ոչ արդիւնաւոր կռիւը յարաճուն անարխիայի դէմ, ոչ յաջող պաշտպանությունը հեղափոխության բերած ազատությունների և ոչ էլ վերջապէս չի նարար ու խաղաղ աշխատանքը հանուն այն մեծ ու նիւրական նպատակների, որոնց իրականացման համար այնքան զոհեր է տուել Ռուսաստանի և Կովկասի յեղափոխական դեմոկրատիան»:

Այնուհետև հայտարարության մեջ ընդգծվում էր, որ ազգային խորհուրդը գիտակցելով հայ ժողովրդի հանդեպ ստանձնած իր պատասխանատվությունը, պարտավորվում է գտնվել «սերտ գործունէության մէջ այն բոլոր պետական, յեղափոխական և ազգային կազմակերպությունների հետ, որոնք կռվում են յեղափոխական դեմոկրատիայի առաջադրած մեծ նպատակների համար» («Արև», հունվարի 6, 1918 թ.):

Նպատակ չունենալով ամբողջությամբ անդրադառնալ Բաքվի Հայոց ազգային խորհրդի գործունեությանը, անհրաժեշտ եմ համարում միայն նշել, որ տեսական ժամանակ նա վարում էր ճիշտ և օգտակար քաղաքականություն, եռանդուն մասնակցություն ունենալով Բաքվում ծավալված իրադարձություններին:

Կարևոր նշանակություն է ունեցել Բաքվի Հայոց ազգային խորհրդի համագործակցությունը Շահումյանի հետ, համատեղ աշխատանքը Բաքվի արվեստում, հեղափոխության նվաճումները պաշտպանելու և ամրապնդելու գործում:

Սակայն 1918 թ. մարտյան դեպքերից հետո, երբ Բաքվից հեռացվում է մուսուլմանական ազգային խորհուրդը, իրավիճակը կտրուկ փոխվում է: Խնդիրը կայանում էր նրանում, որ այդպիսի պայմաններում Բաքվում Հայոց ազգային խորհրդի գոյությունն այլևս դառնում էր անհասկանալի, մանավանդ որ մենշևիկներն ու էսէռները այդ փաստն օգտագործում էին սովետական իշխանության դեմ մուսուլմանական մասսաներին տրամադրելու գործում:

Այս հողի վրա էլ սկսում է բարդանալ Շահումյանի գլխավորած Բաքվի սովետական իշխանության և Հայոց ազգային խորհրդի միջև հաստատված համագործակցությունը: Հարկավոր էր գտնել կոմպրոմիսային որոշում: Դրա լավագույն օրինակը կար: Դա այն համաձայնությունն էր, որ հաստատվել էր Շահումյանի ու հայկական կամավորական զորաջոկատների հրամանատարների միջև, որով այդ ջոկատները մտցվեցին Բաքվի կարմիր բանակի կազմի մեջ: Ստորև ավելի հանգամանորեն կնշվի այդ մասին:

Այս համաձայնության արդյունքում, ինչպես մուսավաթականները, այնպես էլ մենշևիկներն ու էսէռները զրկվեցին սովետական իշխանությանը և Շահումյանին մեղադրելու այն բանում, թե մարտյան դեպքերը քաղաքացիական կռիվ չէր, այլև ազգային կռիվ էր հայերի ու մուսուլմանների միջև, որի ընթացքում պաշտպանվում էին միայն հայերի շահերը:

Այստեղ կարևոր եմ համարում անդրադառնալ մի կարևոր փաստի: Մարտյան դեպքերից հետո Բաքվի դաշնակցության կենտրոնական կոմիտեի առջև ծառացավ իր շարքերը մաքրելու խնդիրը: Բանը նրանումն էր, որ ինչպես նշել է «Արև» թերթը, դաշնակցության շարքերն էին ընդունվել նախկին շահագործողներից շատերը:

Այդ կապակցությամբ Բաքվի դաշնակցության կենտրոնական կոմիտեն հրապարակած հայտարարության մեջ նշում էր. «Էլ դիւքանչի չմնաց, էլ կառաւարիչ չմնաց ու կաշառակեր «ատարշիներ» չմնացին, բոլորը իրանց յեղափոխական յայտարարեցին և մտան յեղափոխական կուսակցությունների մէջ, ի թիւս և մեր կուսակցությեան մէջ, էն էլ այստեղ, մեր աչքի առաջ»:

Հայտարարությունը պահանջում էր դաշնակցության շարքերից վռնդել այնպիսիներին, որոնցից բացի վնասից, ոչ մի օգուտ չկա: Միաժամանակ ընդգծվում էր. «Մեր կռիւը դասակարգային է: Աշխատաւոր դասակարգը առանձին պիտի կազմակերպւի, իսկ շահագործողները, կեղեքիչները, վաշխառուները, կալվածատէրերը, բէկերը, դիւքանչիները և այլք՝ առանձին: Կեղեքիչները մեր մէջ տեղ չունեն, նրանք նենգ յեղափոխականներ են դարձած, թող կորչեն նրանք մեր շարքերից»:

«Դրանցով խառն մեր շարքերով,- նշվում էր հայտարարության մեջ,- մենք յեղափոխական գործ կատարել չենք կարող: Դրանց հետ խառն մեր շարքերով ազատությունը մենք պահել չենք կարող»:

Հայտարարությունն այնուհետև փաստում էր, որ հատկապես մարտյան դեպքերից հետո «մեր հակառակորդներից ոմանք, անգամ այժմեան դժուարին ու պատասխանատու մոմենտում, չը հրաժարեցին իրենց նեղսիրտ կուսակցամոլութիւնից և օգտուելով հայ աշխատաւորութեան ապրած ճգնաժամից, փորձեցին ջլատել նրա ոյժերն ու կազմակերպութիւնը: Թէ այդ հանգամանքը, և թէ Անդրկովկասի քաղաքական կացութեան անորոշութիւնը և մանաւանդ քաղաքացիական կռիւ ընթացքում ոչ աշխատաւոր տարրերի անխուսափելիօրէն հրապարակ գալը կուսակցութեան դրօշի տակ, մեր ընկերների շարքերում ևս առաջ բերին ինքնաքննադատութեան առողջ տրամադրութիւն, որը պիտի ողջունէր չիտակ և անձնէր կուսակցական անհատ» (**«Արտ»**, մայիսի 19, 1918 թ.):

Այս հարցն այնպիսի սրութեամբ էր դրված, որ Ռոստոմը հարկ է համարել դաշնակցության կենտկոմում հանդես գալ դասախոսությամբ կուսակցական ընթացիկ խնդիրների մասին:

Սակայն պետք նշել, որ չնայած Բաքվի դաշնակցության ղեկավարությունը ճիշտ էր գնահատել ստեղծված իրավիճակը, բայց չկարողացավ դրսևորել հետևողականություն, չլուծեց իր շարքերը մաքրելու խնդիրը և, ի վերջո, հայտնվում է այն ուժերի ազդեցության տակ, որոնցից այնպես կամենում էր ազատվել:

Եվ շուտով դրա հետևանքներն իրենց զգացնել տվեցին: Բաքվի հայոց ազգային խորհուրդը ղեկավարող դաշնակցական գործիչները հրաժարվում են հնարավոր կոմպրոմիսից և որդեգրում են Բաքվի սովետական իշխանությանը հակադրվելու մի քաղաքականություն, որը շուտով սկսված ռազմական գործողությունների ժամանակ ավելի է խորանում:

Ահա, թե ինչու էր Շահումյանը հանդես գալիս Բաքվի հայոց ազգային խորհուրդը լուծարելու առաջարկությամբ: Իհարկե, նաև պետք է նկատի ունենալ, որ դա այնքան էլ հեշտ ու անցավ գործ չէր: Դեռևս ապրիլի 2-ին պաշտպանության կոմիտեն վերջնագրով առաջարկել էր Բաքվի հայոց ազգային խորհրդին կազմացրել ազգային զորամասերը և դրանք միաձուլել գոյություն ունեցող և նոր կազմվող ինտերնացիոնալ սովետական զորքերի հետ:

1918 թ. ապրիլի 20-ին պաշտպանության կոմիտեն արձակում է հրամանագիր ուղղված հայկական ազգային խորհրդին: Հիշեցնելով ապրիլի 2-ին տրված վերջնագրի մասին, հրամանագրում ասվում էր, որ վերջնագրին չենթարկվող ազգային զորամասերը պետք հանվեն Բաքու քաղաքից:

Հայտնվում էր նաև, որ մինչև քաղաքից հեռանալը «ազգային զորամասերը պետք է ամբողջովին և անտարակելիորեն ենթարկվեն սովետական իշխանությանը: Ազգային նոր զորամասեր կազմելը, ինչպես և գոյություն ունեցող զորամասերն ընդարձակելն ամենախիստ կերպով արգելվում է: Սպառազինության, պարենի, հագուստի և այլ բաների սովետական պաշարներից օգտվել կարող են միայն սովետական ինտերնացիոնալ զորքերը»:

Հրամանագրի վերջում ասվում էր. «Ազգային խորհուրդները, որպես իշխանության մարմիններ, պետք է անմիջապես դադարեցնեն իրենց գոյությունը: Բռնագրավման, հարկումների, ձերբակալումների, խուզարկությունների իրավունքը և կառավարական իշխանության մյուս բոլոր ֆունկցիաները պատկանում են բացառապես Բանվորների, զինվորների և նավատորների պատգամավորների սովետին և նրա կամ սովետական կենտրոնական իշխանության կողմից առանձնացված կազմակերպություններին» (**Ստ. Շահումյան**, նույն տեղը, հ. չորրորդ, էջ 215):

Բաքվի հայոց ազգային խորհուրդը քննարկելով վերոհիշյալ հրամանագիրը, հրապարակել է իր պատասխանը, որտեղ ասվում էր, որ Բաքվում կատարված վերջին դեպքերի ժամանակ «իր կողմից չցանկանալով ոչ մի ատիթ տալ ազգային կրքերի բորբոքման և չցանկանալով նույնպես, որ իշխանության համար մղած կռիվը ստանայ ազգային բնույթ, դեռևս մարտի 21-ին ընդունել է ռազմա-յեղափոխական կոմիտեի մուսուլմանական կազմակերպություններին ուղղած վերջնագրի հետ միաժամանակ նաև հայ ազգային գնդերին վերաբերեալ կարգադրությունը»:

Այնուհետև պատասխանում ասվում էր, որ նկատի ունենալով ազգային զորամասերի վերաբերյալ այն պահանջը, ըստ որի դրանք պետք է հեռանան Բաքվից կամ էլ ենթարկվեն Բաքվի սովետին, Ազգային խորհուրդը հայտնում է իր պատրաստակամությունը և խնդրում է «որոշել ժամանակը և մատնանշել այն անձնատրությունները, որպեսզի մեր ներկայացուցիչների հետ միասին իրագործեն մեր ընդունած պայմանը»:

Ազգային խորհուրդների գործունեությունը դադարեցնելու պահանջի վերաբերյալ Բաքվի ազգային խորհուրդը հայտարարում է. «Հայ ազգային խորհրդի Բաքվի բաժանմունքը կազմած է զինատրաստ Կովկասեան ռազմաճակատի պաշտպանության գործին աջակցելու համար: Նա չի ներկայանում որպես իշխանության մի օրգան և ամենևին չի էլ ցանկանում լինել այդպիսին: Նա ոչ ձերբակալություններ է կատարում և ոչ էլ խուզարկություններ, իսկ մեր կողմից կատարած ռեկվիզիցիան եղել է Բ. Զ. Ն. պատգամատորնե-

*րի խորհրդի գործադրիր կոմիտէի թույլտութեամբ»: («**Ազա**», ապրիլի 11 (24), 1918 թ.):*

1918 թ. ապրիլի 26-ին հրավիրվում է պաշտպանության կոմիտեի ներկայացուցիչներ Շահումյանի և Կորգանովի ու Հայկական ազգային խորհրդի ներկայացուցիչներ Գյուխանդանյանի, Ն. Տեր-Ղազարյանի և Ի. Տեր-Օհանյանի համատեղ նիստ և կազմվում է համապատասխան արձանագրություն:

Ըստ կազմված արձանագրության, որը ստորագրել էին վերոհիշյալ ներկայացուցիչները, նիստում ընդունվում է հետևյալ որոշումը.

*«**Առաջին**. Երկրորդ Հայկական ազգային հետևակ գունդն ապակազմվում է, նրա մի մասը մտնում է Համազասպի գումարտակի, մյուսը՝ նոր կազմվող սովետական կարմիր գումարտակների կազմում:*

***Երկրորդ**. Համազասպի գումարտակները վերակազմվում են, ամբողջովին ենթարկվում սովետական իշխանությանը և մտնում Կարմիր բանակի մեջ, Կարմիր բանակի 16-րդ և 17-րդ գումարտակներ անվանումով:*

***Երրորդ**. 16-րդ և 17-րդ գումարտակների ընդհանուր հրամանատար նշանակվում է Համազասպը: 16-րդ գումարտակի հրամանատար նշանակվում է Սերգոն (փաստաթղթում ազգանունը չի նշված: Նրա ազգանունը Մանուչարյան է, որը զոհվում է օգոստոսի 5-ին Սեբաստացի Մուրատի հետ մարտին, թուրքերի գրոհը ետ մղելու ժամանակ՝ Վ. Պ.):*

17-րդ գումարտակի հրամանատար նշանակվում է Զիլինգարյանցը:

Մնացած հրամանատարական կազմի նշանակումը, Կարմիր բանակի ընդհանուր հիմունքներով, պատկանում է գումարտակների հրամանատարներին:

***Չորրորդ**. Համազասպի գումարտակները նախատեսվում են մոտ ապագայում արևմտյան ուղղությամբ ռազմական գործողությունների համար:*

*Երրորդ և չորրորդ կետերը հրապարակման ենթակա չեն» (**Ուղբեկստանի պետական կենտրոնական արխիվ**, ֆ. 1826, ց. 1, գ. 2, թ. 145):*

Ավելացնեմ, որ սույն աշխատությունն ավարտելու պահին վերոհիշյալ արձանագրության պատճենը հայտնաբերել եմ նաև ՀՀ Ազգային արխիվում (ֆ.1267, ց. 1, գ. 94, թ.47):

*Հարկ եմ համարում նշել, որ մամուլում հրապարակվել է միայն առաջին և երկրորդ կետերը: Այդ պատճառով էլ Բաքվի կոմունայի պատմությունն ուսումնասիրողներին հայտնի չի եղել 3-րդ և 4-րդ կետերը (**Լ. Ա. Խուրշուդյան**, Ստեփան Շահումյան, Եր. 1959, էջ 209-210): Իսկ, երբ 1967 թ. նոյեմ-*

բերին «Юность» ամսագրում Ա. Միկոյանը «Բաքվի կոմունայի օրերի մասին» հոդվածում հիշողությամբ ակնարկում է այդ կետերի մասին, արժանանում է, մեղմ ասած, ընդդիմախոսների կշտամբանքին:

Ուզբեկստանի պետական արխիվում ուսումնասիրություն կատարելու ընթացքում հայտնաբերել եմ վերոհիշյալ փաստաթուղթը, որը Բաքվի Հայկական ազգային խորհուրդն ուղարկել էր Դաշնակցություն կուսակցության Թուրքեստանյան կենտրոնին: Այդ փաստաթուղթն առաջին անգամ գիտական շրջանառության մեջ է դրվել 1968 թ. հոկտեմբերին «Լենինյան ուղիով» ամսագրում հրապարակված տողերիս հեղինակի «Բաքվի կոմունայի պաշտպանության համար» հոդվածում (էջ 88-89):

«Լենինյան ուղիով» ամսագրի խմբագիր Աղո Աղոյանը իմ հոդվածի առանձնատիպը ուղարկել էր Մոսկվա՝ Ա. Միկոյանին: Նա հայտնել էր իր գոհունակությունը և ցանկացել էր հանդիպել հոդվածի հեղինակի հետ: Նրա ցանկության համաձայն մեկնել եմ Մոսկվա, հանդիպել եմ Միկոյանին և զրուցել մեզ հետաքրքրող հարցերի մասին:

Վերոհիշյալ որոշումը կոմպրոմիսային բնույթ ուներ: Փաստորեն Շահումյանը համաձայնվել է հայկական ջոկատները պահպանել և մտցնել կարմիր բանակի կազմի մեջ, նկատի ունենալով, որ հայ մարտիկները ճնշող մեծամասնությամբ ազնվաբար կռվել են սովետական իշխանության պաշտպանության համար:

Ինչ վերաբերում է 3-րդ և 4-րդ կետերին, ապա դրանք չեն հրապարակվել, նկատի ունենալով, որ հայկական ջոկատների հրամանատարներ նշանակվել են նույն մարդիկ, որոնք դաշնակցության անդամներ էին:

Վերոհիշյալ որոշումն ընդունելուց հետո վերացվել է նաև Բաքվի Հայկական ազգային խորհուրդը:

Այսպիսին է մարտյան դեպքերի իրական պատմությունը:

Սակայն այժմ ադրբեջանական կեղծարարները այդ դեպքերը պատկերում են գլխի վրա շուռ տված, սովետական իշխանության դեմ մուսուլմանական ռեակցիոն խաների ու բեկերի մղած պայքարը ներկայացնելով որպես ամբողջ ադրբեջանական ժողովրդի պայքար:

Ահա, թե ինչ են գրում այդ կեղծարարները. «1918 թ. մարտյան դեպքերը ծանր փորձություն եղան ադրբեջանական ժողովրդի համար, որն այդ ժամանակ գնում էր ձեռք բերելու իր անկախությունն ու պետությունը: Ստեփան Շահումյանի գլխավորությամբ ձևավորված դաշնակ-բոլշևիկյան միավորման նպատակն էր Բաքվի, Շամախու, Ղուբայի և Ադրբեջանի մյուս տա-

ռածքների ադրբեջանական, մուսուլմանական, հրեական բնակչության ֆիզիկական ոչնչացումն ու մասսայական տեղահանումը: Նավթով ու այլ բնական պաշարներով հարուստ այս վաղնջական ադրբեջանական հողի վրա հայ նացիոնալիստները պլանավորել էին ստեղծել հայկական պետություն»:

«Ընդհանուր առմամբ,- շարունակում են կեղծարարները,- 1918 թ. մարտ-ապրիլին մինչև ատամները զինված դաշնակ-բոլշևիկյան ջոկատները ապանում են մոտ 50 հազար ադրբեջանցի, գլխավորապես կանանց, երեխաների ու ծերերի: 1918 թ. մարտյան դեպքերն ադրբեջանական ժողովրդի դեմ հայ նացիոնալիստների ագրեսիայի և տարածքային հավակնությունների 200-ամյա շղթայի արյունալի էպիզոդներից մեկն են»:

Իսկ նախորդ էջերում հիշատակված է. Իսմայիլովն էլ գրում է, թե «արխիվային նյութերի, պատմական փաստերի խոր վերլուծության հիման վրա բացահայտել է, որ 1918 թ. մարտին իրականացված ադրբեջանական ժողովրդի զենոցիդը կազմակերպվել է Ստեփան Շահումյանի կողմից:

Սույն աշխատության նախորդ էջերում բերված իրական փաստերի կապակցությամբ ադրբեջանական կեղծարարների այս տեսակետները ոչ միայն իրականության հետ որևէ առնչություն չունեն, այլև հակագիտական են, և չեն համապատասխանում պատմականության սկզբունքներին:

Ես ժամանակին ուսումնասիրել էի Ստեփան Շահումյանի վերաբերյալ Մոսկվայի, Թիֆլիսի և Երևանի արխիվներում պահվող նյութերին: Անհրաժեշտ էր իմ ունեցած նյութերը լրացնել Ադրբեջանի արխիվներում պահվող նյութերով և այդ նպատակով էլ 1988 թ. փետրվարի սկզբին մեկնեցի Բաքու: Ադրբեջանի պետական կենտրոնական և Կուսպատմության արխիվներում ուսումնասիրություն կատարելու ժամանակ խնդրեցի Հնարավորություն տալ ծանոթանալ Ստեփան Շահումյանի և Անդրանիկ Օզանյանի վերաբերյալ եղած նյութերին:

Սակայն Ադրբեջանի կուսպատմության ինստիտուտում մերժեցին իմ խնդրանքը, իսկ Պետական կենտրոնական արխիվի տնօրենը հայտնեց, թե Շահումյանի վերաբերյալ նյութերը կարող են ուսումնասիրողներին տրամադրել միայն Ադրբեջանական ՍՍՀ Նախարարների խորհրդի նախագահի առաջին տեղակալի թույլտվությամբ, որի տնօրինության տակ էր գտնվում արխիվի ընդհանուր ղեկավարությունը:

Բաքվում իմ գիտական ուսումնասիրությունների ընթացքում մեծապես իր խորհուրդներով ինձ օգնում էր Բաքվի կոմունայի պատմության լավագույն գիտակ պրոֆեսոր Նիկոլայ Մակեևը: Երբ նրան հայտնեցի իմ խնդրանքը մերժելու մասին, նա տեղեկացրեց, որ Ադրբեջանի պետական կենտրոնական արխիվում պահվում են Շահումյանի մասին սուտ տեղեկություններ պարունակող հուշագրություններ, որոնք շրջանառության մեջ չեն դրվում: Ենթադրում եմ, որ ամենայն հավանականությամբ, վերը նշված է. Իսմայիլովը «բարեխղճորեն» հենվել է այդ անհիմն տվյալների ու նյութերի վրա, և ուս ընթերցող հանրությանը ներկայացրել է դրանց տալով «հավաստիության» արժեք:

ՇԱՀՈՒՄՅԱՆԸ ԵՎ ՀԱՅԿԱԿԱՆ ԿԱՄԱՎՈՐԱԿԱՆ ԳՆԴԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

Նկատի ունենալով 1918 թ. մարտ-ապրիլին Բաքվում տեղի ունեցած դեպքերին հայկական զորաջոկատների մասնակցությունը, հարկ եմ համարում շատ համառոտ ներկայացնել, առհասարակ, այդ ջոկատների ստեղծման վերաբերյալ Շահումյանի ունեցած դիրքորոշումը:

Նախորդ էջերում հիշատակված Խոմիզուրին, կեղծելով իրականությունը, գրել է. «Երբ 1918 թ. սկզբին հայերը ստեղծում էին կամավորական ջոկատներ, բոլշևիկներն ամեն կերպ խոչընդոտում էին դրան... Հայկական կամավորական ջոկատների բոյկոտումը բոլշևիկյան առանձին խմբերի ինքնագործունեությունը չէր, դա ընդհանուր ռազմավարություն էր»: Եվ այնուհետև բերվում են Ստ. Շահումյանի հետևյալ խոսքերը. «Բոլշևիկները նույնքան անողոք պայքար են մղում հայ ազգայնականների (ի միջի այլոց, նաև հայկական ազգային գնդերի կազմակերպման) դեմ, որ նրանք տանում էին ողջ Կովկասում, այդ թվում՝ Բաքվում»:

Խոմիզուրիի խղճին ենք թողնում ոչ միայն այս խոսքերի սխալներով մեջբերումն ու սխալ ամսաթիվը, այլև հետևյալ ահավոր սուտ պնդումը. «Սակայն ի հեճուկս բոլշևիկների ջանքերի, հայկական կամավորական ջոկատներ, այնուամենայնիվ, կազմակերպվեցին: Այդ ժամանակ Շահումյանն ու Կորգանովը կարողացան հասնել այն բանին, որ այդ ջոկատներից մի քանիսը (մասնավորապես Համազասպի ու Ամիրովի ղեկավարած ջոկատները) տեղավորվեցին Բաքվում: Նրանք դա բացատրում էին այն բանով, որ այստեղ պետք է պայքարի միջնաբերդ ստեղծել թուրքերի դեմ: Արդյունքում հարավային ռազմաճակատը գլխատվեց»:

Նախ, պարզենք, թե ի՞նչ ոգիով է Ստ. Շահումյանը գրել վերոհիշյալ խոսքերը: 1918 թ. փետրվարի 4-ին «Бакинский рабочий» թերթում տպագրվել է նրա «Պատասխան քաղ. Ռասուլ-զադեին» հոդվածը:

«Մուսավաթ» կուսակցության այդ լիդերը, Բաքվի սովետում ելույթ ունենալով, հայտնել էր, որ մուսուլմանական ազգային գնդերը կազմվում են մեծահարուստներ Թաղիևի ու Նազիևի միջոցներով: Նկատի ունենալով այդ, Ստ. Շահումյանը գրել է. «Քանի որ այդ գնդերը կազմակերպվում են բուրժուազիայի կողմից և քանի որ նրանք ստեղծվում են... կարգը վերականգնելու համար, ապա այդ կարգը կլինի բուրժուական-ռոմանովյան: Այլ կարգ վերականգնել բուրժուազիան չի կարող» (**Ստ. Շահումյան**, նույն տեղը, հ. երրորդ, էջ 123):

Կովկասյան ռազմաճակատից ռուսական զորքերն անկանոն հեռանում էին, Թուրքական զավթիչները գրավում էին ռուսական զորքերից ազատված Արևմտյան Հայաստանի տարածքները և մոտենում էին Անդրկովկասին: Այսպիսի պայմաններում Ռասուլ-զադեն մուսուլմանական ազգային գնդերի ստեղծումն արդարացնում էր «կարգը վերականգնելու» պատճառաբանությամբ:

«Այժմ,- գրել է Շահումյանը,- ձեզ համար էլ պետք է պարզ լինի, քաղ. Ռասուլ-զադե, որ «կարգ» ասելով դուք հենց բուրժուական-կալվածատիրական «ավտոնոմիա», բուրժուա-ռոմանովյան կարգն եք հասկանում: Այժմ ձեզ համար էլ պարզ է, որ դուք գնդեր եք կազմակերպում ոչ թե չախսանների դեմ կռվելու համար, որոնք ամենևին ձեզ չեն խանգարում «ավերակների կույտի» գնով «կարգ» ստեղծելու, այլ, ընդհակառակը, ավերակների կույտի միջոցով ձեզ կաշկացնեն ձեր կարգը հաստատելու» (**Ստ. Շահումյան**, նույն տեղը, հ. երրորդ, էջ 127):

Ռասուլ-զադեն գրում էր. «Թուրքահայաստանն ինքնորոշման դեկրետ է ստանում, հայերը մոտենում են իրենց փայփայած «Դաշնակցություն» կուսակցության պաշտպանած իդեային, իսկ ինչ վերաբերում է կովկասյան ազգերջնջի ֆեդերալիստներին, ապա Բաքվի բոլշևիկները նրանց «ավերակների կույտով» են վախեցնում» (**Ստ. Շահումյան**, նույն տեղը, հ. երրորդ, էջ 125):

Ռասուլ-զադեի նպատակները բացահայտելու համար էլ Ստ. Շահումյանը գրել է. «Ձեզ թվում է, քաղ. Ռասուլ-զադե, թե բոլշևիկների վերաբերմունքը դեպի Հայաստանը և դեպի ազգրեջնջիները տարբեր է: Բայց խորապես ու չարաշար փսալում եք: Բոլշևիկները Հայաստանում նույնպես անողոք պայքար են մղում հայ նացիոնալիստների քաղաքականության դեմ (ի միջի այլոց, նաև հայկական ազգային գնդեր կազմակերպելու դեմ), ինչպիսի պայքար նրանք մղում են ամբողջ Կովկասում, այդ թվում նաև Բաքվում» (**Ստ. Շահումյան**, նույն տեղը):

Շահումյանը զգուշացնում էր. «Մենք պնդել ենք, որ կովկասյան նացիոնալիստների քաղաքականությունը, անկախ այն բանից, թե ինչպես են վերաբերվում դրան բոլշևիկները, կհասցնեն այն բանին, որ Կովկասը կվերածվի ավերակների կույտի: Կովկասյան նացիոնալիստներ-մուսուլմանական, հայկական, վրացական և այլն- քաղաքականությունն անխուսափելիորեն կհասցնի այդ ազգությունների ընդհարման» (**Ստ. Շահումյան**, նույն տեղը):

Ահա, թե ինչու այն ժամանակ, երբ Կովկասյան ռազմաճակատում գտնվում էին ռուսական զորքերը, որոնց միջոցով հնարավոր էր զսպել Թուրքերին, Ստ. Շահումյանը դեմ էր արտահայտվում ոչ միայն հայկական, այլև մյուս ազգային գնդերի կազմակերպմանը:

Շահումյանի քաղաքականությունը, նրա դիրքորոշումը հայկական ազգային գնդերի ստեղծման վերաբերյալ ունեցել է երկու փուլ: Այն հասկանալու համար, նախ, համառոտ անդրադառնանք հայկական ազգային գնդերի կազմակերպման շարժառիթներին:

«Հայոց ազգային խորհուրդը,- ինչպես գրում է Ա. Խատիսյանը,- դիմեց վարչապետ Կերենսքիին, խնդրելով թույլ տալ արևմտեան ճակատի բոլոր հայ զինտրներուն վերադառնալ Կովկաս և կազմել հատուկ հայկական զորաբանակ մը պաշտպանելու համար Կովկասեան ճակատը: Կերենսքին կը դանդաղէր, այնուհանդերձ հայկական զորաբանակը կը հավաքուէր Թիֆլիսի մէջ» (**Ա. Խատիսեան**, Հայաստանի Հանրապետութեան ծագումն ու զարգացումը, էջ 24):

Ըստ եղած տեղեկությունների՝ այս ընթացքում Կովկասյան ռազմաճակատում կար մոտավորապես 80 հազար հայ զինվոր: Եվ սա բավականաչափ մեծ ուժ էր Հայաստանի պաշտպանությունն ապահովելու համար:

1917 թ. հունիսի 28-ին Կերենսկին տվել է հրաման ազգային զորամասեր կազմելու մասին: Դրա հիման վրա Կովկասյան ռազմաճակատի հրամանատարությունը հուլիսի սկզբին նույնպես հրաման է արձակել:

Բայց գործը տեղից չէր շարժվում: 1917 թ. օգոստոսի 4-ին ՕԶԱԿՈՄ-ի անդամ Նազարյանցը հարկադրված նորից է դիմում Ժամանակավոր կառավարությանը հայկական բանակային կորպուս կազմակերպելու միջնորդությամբ:

Անցնում է մեկ ամսից ավելի: Միայն սեպտեմբերի 4-ին Կովկասյան ռազմաճակատի շտաբի պետ գեներալ Լեբեդինսկին նկատի ունենալով, որ եղած հայկական գումարտակները մնացել են դիրքերում ամուր կանգնած, Ժամանակավոր կառավարության առջև դնում է հայկական նոր զորամասեր ստեղծելու կարևորությունը:

Ռուսաստանի ռազմական պատմության պետական կենտրոնական արխիվում պահպանված նյութերը (հատկապես՝ 1818, 2003, 2100 ֆոնդերում) պերճախոս վկայում են Հայկական բանակային կորպուսի ձևավորման հետ կապված դժվարությունների մասին: Դրա շուրջ կատարվել էր մեծ քանակությամբ գրագրություն, բայց դարձյալ գործը տեղից չէր շարժվում:

Ինչպես արդեն նշվել է, ազգային զորամասերի ձևավորման մասին Կերենսկու հրամանը սկսեց կենսագործվել միայն այն ժամանակ, երբ Ռուսաստանում հաստատվել էր սովետական իշխանություն և Անդրկովկասն անջատվել էր Ռուսաստանից:

Կովկասյան ռազմաճակատում գտնվում էր 500 հազար զինվոր ունեցող ռուսական բանակը, որի ներկայության պայմաններում ազգային զորամասերի ձևավորումը բոլշևիկները Ստ. Շահումյանի գլխավորությամբ համարում էին վտանգավոր ձեռնարկում:

Անդրկովկասի երեք հիմնական ազգերը (հայեր, վրացիներ, ադրբեջանցիներ) իրենց քաղաքական կուսակցություններով ներկայացված էին Անդրկովկասյան իշխանության կազմում:

Այդ երեքի մեջ էլ ուրվագծվում էին խոր հակասություններ, որոնց լուծման համար նրանք, անշուշտ, պետք է դիմեին ռազմական ուժի: Այս հանգամանքը նույնպես հաշվի էր առնում Ստ. Շահումյանը և զգուշացնում այդ վտանգի մասին:

Այստեղ տեղին եմ համարում հիշեցնել անգլիական ոչ անհայտ գեներալ Դենստերվիլի հետևյալ խոսքերը. «Նրանք (այսինքն՝ անդրկովկասյան ժողովուրդները- Վ.Պ.) պետք է շարունակեն սպանել միմյանց, մինչև որ ուժասպառ լինեն, իսկ այդ ժամանակ երևի մենք հնարավորություն ունենանք այնտեղ կարգ ու կանոն հաստատելու»:

Վերջապես ում դեմ պետք է կռվեին ձևավորվող ազգային զորամասերը: Թուրքական զորքերի՞: Վրացիները ստացել էին Թուրքիայի դաշնակից Գերմանիայի հովանավորությունը, իսկ ադրբեջանցիները պատրաստ էին գրկախառնվել թուրքերի հետ:

Շահումյանն ելնում էր այն իրողությունից, որ ազգային զորամասերը ստեղծվում էին ոչ թե արտաքին ռազմաճակատը պաշտպանելու, այլ ապագա ազգամիջյան պատերազմների համար:

Կովկասյան ռազմաճակատ մեկնեցին միայն հայկական զորամասերը: Ռազմաճակատում նույնիսկ մի վրացի զինվոր չուղարկվեց, իսկ ադրբեջանցիների մասին խոսելն ավելորդ էր:

Փաստորեն թուրքերի դեմ միայնակ մնացել է հայկական ազգային զորամասը: Իհարկե, Ստ. Շահումյանը կանխատեսում էր այս ամենը և գտնում էր, որ Կովկասյան ռազմաճակատը հնարավոր է պահել միայն ռուսական բանակի միջոցով:

Հայկական կորպուսի հրամանատար է նշանակվում ռուսական բանակում մարտական ծառայությամբ աչքի ընկած գեներալ-լեյտենանտ Թովմաս Իվանովիչ Նազարբեկովը:

Հայաստանի Հանրապետության ազգային արխիվում պահպանվում է Թ. Ի. Նազարբեկովի ընդարձակ հուշագրությունը: Նա մանրամասն նկարագրել է կորպուսի կազմավորման գործընթացը՝ հատկապես չեշտելով հրամանատարական կազմի ընտրության ժամանակ հանդիպած դժվարությունները:

Նազարբեկովը վկայում է, որ շատերը բարձր պաշտոն ու աշխատավարձ էին պահանջում՝ չնայելով իրենց ունակություններին: Քիչ չէին նաև այնպիսիք, որոնք խուսափում էին հետու վայրերում ծառայելուց, հրաժարվում էին ռազմաճակատ մեկնելուց: «Զէր երևում հայրենասիրական ոգևորությունը», գտնում է Նազարբեկովը (ՀՀ ԱԱ, ֆ. 45, տետր 2, թ. 30):

Ինչո՞ւ գեներալ Նազարբեկովին չի հաջողվում ժամանակին իրականացնել հայկական բանակի կազմավորումը: Այդ մասին Վ. Թոթովենցը գրել է. «Զօր Նազարբէկով ռուսական բանակին մէջ իր ռազմագիտութեամբ անուն հանած մարդ էր, բայց կազմակերպութեան գործի մէջ կը գանդաղէր, որովհետեւ վարժուած էր այդ գործի համար ունենալ միշտ պէտք եղած օգնական ուժերը: Շուարած, ձեռքերը կապուած վիճակի մէջ էր Նազարբէկով, որովհետեւ անոր համար զորամասը պէտք էր պատրաստ ըլլար սկսելու համար ռազմական գործողութիւնները» (Վ. Թոթովենց, Զօր. Անդրանիկ եւ իր պատերազմները, էջ 275-276): Վ. Թոթովենցի գնահատականը մասամբ ճիշտ է:

Իսկ հայերեն լավ չիմացող Ա. Խատիսյանը խնդրին մոտենում է մի այլ կողմից. «Հայէրեն չէին գիտէր...զօրավար Սիլիկեանը եւ զօրավար Նազարբէկեանը: Եւ ասիկա անկասկած մեծ թերութիւն մըն էր, որ անկարելի էր արդէն ուղղել» (Ա. Խատիսեան, նույն տեղը, էջ 76):

Հայերենին չտիրապետելը, ինչ խոսք, մեծ մեղք չէր: Ցավալին այն էր, որ հրամանատարության մեջ կային անազնիվ մարդիկ, որոնց ամեն ինչ հետաքրքրում էր, բայցի իրենց պարտականությունները:

Ահա, օրինակ, Վահան Փափազյանի վկայությունը. «Դժբախտաբար, Արեշեանի պէս հրամանատարի մը յանձնուած էր ճակատը, որ անջիղ, Հայաստանի եւ հայութեան հետ չկապուած, ձեւապաշտ, անտարբեր ու բիւրոկ-

բատ մարդ մըն էր: Աւելի շատ հետաքրքրուած էր Թուրք զինուորներու եւ գերիներու անխնայ պահպանութեամբ եւ խնամքի խնդրով, քան ճակատի դրութեամբ» (Վ. Փափազեան, Իմ յուշերը, էջ 468-469):

Մեկ այլ վկայութեամբ երևում է, որ թալանը զգալի դեր էր խաղում զորքի բարոյալքման գործում:

Գարեգին Կաթողիկոս Հովսեփյանը գրել է. «Ժողովրդի մէջ ընդհանուր խռովութեան եւ քննադատութեան առարկայ էր յատկապես գեներալ Յովսէփեանը իւր մի քանի սպաների հետ. նրան «թալանի» եւ «անասնութների վաճառական» էին անուանում» («Պայքար», Բացատրիկ, 1943, էջ 62):

Պետք է նշել, որ դրութիւնն սոխրողջացնում էին այն ռուս սպաները, որոնք աչքի էին ընկնում իրենց հայատեացութեամբ:

Բայց հայկական կորպուսի ձևավորման գործում կային ավելի լուրջ բարդութիւններ, որոնց հաղթահարումը շատ դեպքերում վեր էր գեներալ Նազարբեկովի ու նրա զինակիցների ուժերից:

Ես նկատի ունեմ այն ժամանակ Անդրկովկասում ձևավորված ռազմաքաղաքական իրավիճակը, երբ այստեղ գործող քաղաքական ուժերի մի մասը բացահայտորեն Թուրքիայի նկատմանը դրսևորելով համակրանք՝ արտահայտվում էր թուրքական զորքի առաջ շարժվելու օգտին, մյուս մասն էլ այնքան էլ ոգևորված չէր թուրքերին դիմադրելու գործում:

Այսպիսով, Հայկական կորպուսը ձևավորվում էր աղրբեջանական մուսավաթականների և վրացական մենշևիկների անբարյացակամութեան ու խուլ դիմադրության մթնոլորտում: Ասածը փաստելու համար բերեմ միայն մեկ օրինակ: Սեյմի նիստում թուրքերի հնարավոր հարձակման դեպքում ազգային կորպուսների ուժերով դիմադրություն կազմակերպելու հարցը քննարկելու ժամանակ Նազարբեկովը հայտնում է իր կասարածի մասին: Իսկ աղրբեջանական կորպուսի հրամանատար գեներալ Շիխլինսկին և վրացական կորպուսի հրամանատար գնդապետ Ախմետելիևը հայտարարում են, որ պատրաստ չեն թուրքերի հնարավոր հարձակումը կասեցնելու համար:

Եվ սեյմի անդամները վերոհիշյալ հրամանատարների պատասխանատվության խնդիրը դնելու փոխարեն, լռությամբ համաձայնվել են մուսավաթական Խան-Խոյսկու հետ, որը հայտարարել էր. «Եթե ազգային կորպուսները ոչինչ չեն անելու, ապա ինչ կարիք կա դրանց կազմման համար ծախսեր անել» (ՀՀ ԱԱ, ֆ. 121, ց. 2, գ. 111, թ. 30):

Փաստորեն Խան-Խոյսկին մտածված կերպով արտահայտվում էր ազգային կորպուսների ստեղծման դեմ և ավելորդ էր համարում միջոցներ հատկացնել: Իհարկե, Խան-Խոյսկին ու իր համախոհներն առաջին հերթին և անպայման նկատի ունեին հայկական կորպուսը, բայց իրականում մուսավաթականները տենդորեն կազմակերպում էին իրենց ազգային գնդերը:

Վերջապես 1918 թ. սկզբին Հայոց ազգային խորհուրդը սթափվել է և հրապարակել է կոչ զորահավաքի մասին, որը պետք է իրագործվեր հայաշատ վայրերում: Զորակոչը տարածվում էր 19-45 տարեկան բոլոր տղամարդկանց վրա: Սահմանվում էր, որ «հասակավորները ծառայելու են թիկունքում, իսկ երիտասարդները՝ ճակատում»: Զինակոչից խուսափողները հայտարարվում էին «Հայրենիքի և յեղափոխութեան թշնամիներ», որոնք ենթարկվելու էին «ամենամեծ պատժի» («Ազա», Հունվարի 6, 1918 թ.):

Արձագանքելով զորակոչին Հովհ. Թումանյանը հրապարակել է Հայոց ազգային խորհրդին և «ազգի հերոս Անդրանիկին» ուղղված դիմումը, որով հայտնում էր, որ «ինքն իր բարոյական սրբազան պարտականութիւնն է համարում հայ ժողովրդի այս ճակատագրական պահին Ազգային խորհրդի և Անդրանիկի տրամադրութեան տակ դնելու իր չորս զաւակներին»:

Թումանյանի չորս աղջիկներն էլ ցանկություն էին հայտնել աշխատել թիկունքում գտնվող հիմնարկություններում:

Միաժամանակ Թումանյանը հայտնում էր, որ ամեն ամիս Ազգային խորհրդի զանձարան կմտնի հարյուրական ռուբլի («Ազա», Հունվարի 6, 1918 թ.):

Բացի բուն Հայաստանից, ազգային գնդեր են կազմակերպվել Բաքվում՝ տեղի դաշնակցականների ջանքերով, ինչպես նաև Միջին Ասիայի Աշխաբադ և Կոկանդ քաղաքներում: Այս վերջին երկու ջոկատները մնացել են իրենց կազմավորման վայրում և չեն մեկնել Անդրկովկաս:

Հայոց ազգային խորհրդի նախագահ Ա. Ահարոնյանը Թիֆլիսի հայկական թերթերում հրապարակում է իր «Ահազանգը»՝ կոչ անելով բոլոր դասալիքներին ետ վերադառնալ:

Իսկ ինչպիսի՞ն էր վիճակն արևմտահայ կամավորական գնդերում:

Երկու խումբով համառոտ այդ մասին:

***Նախ**, պետք է հիշել, որ պատերազմի առաջին երեք տարիներին Անդրկովկասի և Ռուսաստանի այլ շրջաններ էին գաղթել 300 հազար արևմտահայեր:*

1917թ. մայիսի 6-ին Երևանում գումարվում է արևմտահայերի առաջին համագումարը, որը խնդիր ուներ ապահովել արևմտահայերի վերադարձը իրենց պապենական հողեր: Իսկ ընտրված ապահովության խորհուրդը պետք է կազմակերպեր կռվող ջոկատներ կանոնավոր բանակի մեջ:

Արևմտահայ զինված ուժերի ընդհանուր հրամանատար է նշանակվում Անդրանիկը:

Եզրակացություն. Արևմտահայերից զորահավաք կազմակերպելու գործը նույնպես բավարար արդյունք չի ունենում: Զէյթուն հարթվում հակասություններն արևմտահայերի և արևելահայերի միջև:

Բանը հասել էր այնտեղ, որ նույնիսկ Արամ Մանուկյանը՝ համազգումարի հիմնական զեկուցողներից մեկը, չի ընտրվել Արևմտահայ խորհրդի շարքային անդամ, քանի որ նա ծնունդով արևելահայ էր:

Ահա թե ինչ է գրել այդ մասին Վահան Փափազյանը. «Արամին չուզեցին ընտրել, որովհետև ծագումով թուրքահայ չէր... Մարդ մը, որ գիտակցական տարիքէն նուիրուեցաւ թուրքահայ դատին... նեռուեցաւ անոր ազատագրական գործին, կրեց անհուն հոգեկան եւ ֆիզիկական տառապանք այդ ժողովրդին համար, բայց ծագումով իրենցմէ չհամարուեցաւ անհեթեթ եւ անարդար էր» (**Վ. Փափազյան**, Իմ յուշերը, էջ 441):

Իհարկե, այսպիսի վիճակը բացասաբար էր անդրադառնում ռազմաճակատի վրա: Շարքային զինվորը հանգիստ քթում էր դիրքերը, որովհետև իր հայրենի հողի համար չէր կռվում:

«Զօրավար Անդրանիկի Կովկասեան ճակատի պատմական օրագրութիւնը» (Պոստոն, 1924) գրքի մեջ հանդիպում ենք այսպիսի փաստի. Կարիրնում 1500-2000 զինվոր հրաժարվում էին կռվել և կապիտան Բոնապարտյանին պատասխանել են. «Չենք կռուիր, չենք կռուիր, մենք Ռուսահայաստան չատ հող ունինք, թող Թրքահայը կռուի»:

Անդրանիկին հաջողվում է հավաքել միայն 800 զինվոր:

Ժամանակի մամուլը, ինչպես և շատ հեղինակներ անդրադարձել են արևմտահայերի և արևելահայերի հակասություններին:

Ցանկանում եմ վկայակոչել Լեոյին: Խոսելով այդ հակասությունների մասին, Լեոն վշտով ընդգծում էր դրանց հետևանքով առաջացած խոտնաչփոթությունները հայկական կյանքում: Բանը հասել էր նրան, որ Թիֆլիսի ժողովներից մեկում արևմտահայ բժիշկ Բոնապարտյանը դիմելով արևելահայերին, գրչում էր. «Մենք ձեր կոտորածն էլ պիտի տեսնենք» (**Լեո**, Անցյալից, էջ 358):

Իսկ ինչպիսի՞ն էին ընդհանրապես ուժերի փոխհարաբերությունները Անդրկովկասում փետրվարյան հեղափոխությունից անմիջապես հետո:

Իհարկե, այս մասին շատ է գրվել, խնդրին մոտեցել են տարբեր կողմերից: Փորձեմ համառոտակի անդրադառնալ դրանց:

Արդեն նշվել է, որ ՕԶԱԿՈՄ-ի մեջ վրաց մենշևիկները ոչ միայն մեծամասնություն էին կազմում, այլև Լեոյի գնահատմամբ՝ «Զամաչելով իրենց սոցիալիստական կերպարանքից, համաձայնություն, կարելի է ասել, դաշնակցության մեջ մտան թուրք կալվածատեր և բուրժուա դասակարգերի հետ, որոնք արդեն մի ուժեղ կազմակերպություն էին ստեղծել «Մուսավաթ» անունով»:

Ստեղծված պայմանները, հիրավի, պետք է սթափեցնեին հայ քաղաքական ուժերին, որոնք պարզապես պարտավոր էին նոր պայմաններում վերախմաստավորել իրենց քաղաքականությունը, առավել ուշադրություն դարձնել ազգային միասնության ապահովմանը: Սակայն, բոլորը խոսում էին միասնությունից, իսկ գործնականում ոչ մի քայլ չէր կատարվում:

1917 թ. հոկտեմբերյան հեղափոխությունից անմիջապես հետո զարմանալի արագությամբ Անդրկովկասյան կոմիսարիատը ձեռնամուխ եղավ ազգային զորամասերի կազմակերպմանը, այն դիտելով Սովետական Ռուսաստանից անջատվելու կարևորագույն միջոց:

Ո՞վ էր այդ քայլից ամենից շատ տուժում: Իհարկե, հայ ժողովուրդը: Եվ ահա թե ինչու: Դիմենք Շահումյանին: Նկատի ունենալով ըստ ազգությունների առանձնանալու և ինքնորոշվելու ձգտումը, ազգային տարածքները սահմանագծելու փորձերը, սեփական ազգային զորամասերի ստեղծումը, Շահումյանը 1917 թ. դեկտեմբերի 17-ին ընդգծում էր. «Այս բոլորը կատարվում է սրվող դասակարգային պայքարի մթնոլորտում և Կովկասում գտնվող կեսմիլիոնանոց ռուս բանակի ներկայությամբ, որը իր հայրենիքից կտրված՝ երեք տարի պատերազմ է մղել, հենց այդ ազգությունների շահերը պաշտպանելով: Ռուս զինվորներին առանձնապես շատ է վրդովեցնում այն հանգամանքը, որ ազգային զորամասերը ռուս զինվորների հաշվին են զինվում ու զգեստավորվում: Հաճախ գնդեր են զինաթափ արվում տեղնուտեղն ազգային նոր զորամասեր զինելու համար»:

Այնուհետև Շահումյանը գրում էր. «Անջատողական ու նացիոնալիստական քաղաքականության նախաձեռնողները Կովկասում այս անգամ 1917 թվականին, եղան մենշևիկները, որոնք բացահայտորեն դարձան վրացական ազգային կուսակցություն: Ոչ թե հին նացիոնալիստ-դաշնակցականները, այլ առաջինը նրանք դրեցին Վրաստանի ազգային տարածքային ինքնավարության պահանջը, նրանք եղան ազգային գնդեր ստեղծելու նախաձեռնողները, և այդ քաղաքականության բոլոր ցավալի հետևանքների պատասխանատվությունը, բնականորեն, ընկնում է Ժորդանիայի, Գեգեչկորիի և ընկ. վրա» (**Ստ. Շահումյան**, նույն տեղը, հ. չորրորդ, էջ 56):

Շահումյանն ընդգծում էր, որ այդ պատասխանատվությունից վրաց մենշևիկները չեն խուսափի և նրանց համար ոչ մի արդարացում գոյություն չունի:

*Շարունակելով մերկացնել վրաց մենշևիկների դավաճանական քաղաքականությունը, անհանդուրժած Արևմտյան Հայաստանի ճակատագրով, Շահումյանը 1917 թ. դեկտեմբերի 20-ին գրում էր. «Ռուսական զորքերի անակնկալ ետ քաշվելը չափազանց ծանր դրություն է ստեղծում Թուրքահայաստանում: Մենք արդեն գիտենք այս անիծյալ պատերազմի ժամանակ հայերի կրած հարյուր հազարավոր զոհերի մասին» (**Ստ. Շահումյան**, նույն տեղը, հ. չորրորդ, էջ 61):*

*«Մենք,- շարունակում էր Շահումյանը,- բազմիցս մատնանշել ենք, որ բանակի ընդհանուր հոգնածության և հարազատ օջախը՝ խաղաղ կյանքի վերադառնալու նրա ցանկության պայմաններում անդրկովկասյան մենշևիկների, պարոնայք Գեգեչկորիների ու Ընկ. այդպիսի նացիոնալիստական ու հակահեղափոխական քաղաքականությունը պետք է անխուսափելիորեն հասցնի ամենաողբերգական հետևանքների» (**Ստ. Շահումյան**, նույն տեղը):*

Ռազմաճակատը հիմնականում անցնում էր հայկական տարածքներով: Ազգային գնդերի կազմակերպումը թիկունքում, ռազմաճակատից հայ և վրացի զինվորների փոխադրումը թիկունք ստեղծում էր այնպիսի կացություն, որ ռուս զինվորն իրեն զգում էր մեկուսացված և հոգեբանորեն տրամադրվում էր անմիջապես թողնել ռազմաճակատը և գնալ տուն: Դրանով ռազմաճակատում թշնամու առջև ճանապարհը բացվում էր, որը ոչ ոքի կարծես չէր հետաքրքրում: Ամեն ինչ արվում էր արագացնելու ռուսական զորքի հեռացումը ռազմաճակատից:

Ոչ ոքի չէր անհանգստացնում, որ զորքերի հեռացումով թշնամու առաջ բացվում էր Հայաստանի ճանապարհը: Վրաց մենշևիկներն ու աղրբեջանցի մուսավաթականներն ամեն ինչ անում էին, որպեսզի վերացնեին արգելքները Ռուսաստանից անջատվելու ճանապարհին:

Իսկ այդ արգելքների մեջ գլխավորը ռուսական բանակի ներկայությունն էր: Որքան շուտ հեռանար այդ զորքը, այնքան արագ կհասներ անդրկովկասյան ժողովուրդների անկախությունը: Բոլորը մոռացել էին Թուրքիային, կարծես այն այլևս դադարել էր վտանգավոր լինելուց:

Այս վտանգը խորապես գիտակցում էր Ստ. Շահումյանը և զգուշացնում էր ազգային զորամասերը կազմակերպելու, կովկասյան ռազմաճակատը մերկացնելու, այնտեղից ռուսական զորքերը ետ քաշելու վտանգի մասին:

Շատ շուտով այն ողբերգությունը, ինչի մասին մշտապես զգուշացնում էր Ստ. Շահումյանը, վրաց մենշևիկների ու աղրբեջանցի մուսավաթականների դավաճանությամբ իրականություն է դառնում: Թուրքերը շտապեցին օգտվել նպաստավոր պայմաններից, ձգտելով Հայաստանից որքան հնարավոր է շատ տարածքներ գրավել:

Իսկ երբ չհաջողվեց ռազմաճակատում պահել ռուսական բանակը, որի հեռանալուն զուգահեռ թուրքական զորքերը սկսել էին առաջ շարժվել, սպառնալով բուն Հայաստանին, Կովկասի գործերի արտակարգ կոմիսար Շահումյանը, թեև ստեղծված խառնաշփոթ ու խուճապային իրավիճակին, անհրաժեշտ միջոցներ է ձեռնարկում Սովետական Ռուսաստանի տարբեր ռազմաճակատներում գտնվող հայ զինվորներից կամավորական ջոկատներ կազմելու և Անդրկովկաս ուղարկելու գործը:

Շահումյանը գտնում էր, որ դեպի Հայաստան անարգել շարժվող թուրքերի դեմ, արդեն ռուսական զորքերի բացակայության պայմաններում, կարող են կանգնել միայն հայկական ջոկատները:

1917 թ. դեկտեմբերի վերջին, նկատի ունենալով ստեղծված նոր իրադրության պայմանները, երբ չի հաջողվում ռուսական զորքերը պահել ռազմաճակատում, Շահումյանն ու նրա համախոհները միջոցներ են ձեռնարկում ռազմաճակատում հայկական ազգային զորամասերն ամրապնդելու համար:

1917 թ. դեկտեմբերի 23-ին «Кавказский рабочий» *թերթի առաջնորդող հոդվածում Շահումյանը հույս էր հայտնում, որ, այնուամենայնիվ, կհաջողվի ռազմաճակատում պահել ռուսական զորամասեր, որոնք հայկական ազգային գնդերի հետ միասին կպաշտպանեն տեղի խաղաղ բնակչությանը:*

Պետք է ասել, որ ընթերցողներին քիչ է ծանոթ Շահումյանի ջանքերով հայկական կամավորական ջոկատների կազմավորման պատմությունը: Այդ էլ նկատի ունենալով փորձեմ համառոտակի անդրադառնալ դրան:

Անհրաժեշտ էր ամեն գնով կասեցնել առաջ շարժվող թուրքերին: Հարկավոր էր թուրքերի դեմ միայնակ մնացած հայկական զորամասերը համալրել նոր ուժերով: Ահա այդ գիտակցությամբ էլ Ստ. Շահումյանն եռանդուն ջանքեր էր գործադրում Հայաստանի ուղղությամբ կամավորական ջոկատներ ուղարկելու համար:

Շահումյանի առաջարկությամբ և Սովետական Ռուսաստանի Ժողկոմսովետի հանձնարարությամբ ազգությունների ժողովրդական կոմիսարիա-

տը Ի. Ստալինի ստորագրությամբ 1918 թ. մարտի 16-ին հրապարակում է հետևյալ մանդատը. «Սույնով տեղեկացվում է հեղափոխական կոմիտեներին, հեղափոխական շտաբներին, սովետներին և սովետական այլ հիմնարկություններին, որ հայ հեղափոխական կազմակերպություններն ազատ իրավունք ունեն կազմելու հայ կամավորական ջոկատներ և դրանց ֆինանսավորման նպատակով հարկման ենթարկել բուրժուազիային:

Հիշյալ սովետական հիմնարկներին առաջարկվում է չարգելել այդ ջոկատների շարժումը, որոնք կոչված են պաշտպանելու իրենց հայրենիքի ուղղությամբ շարժվող գերմանա-թուրքական բռնակալներից» (**Թուրքմենստանի պետական կենտրոնական արխիվ**, ֆ. 137, ց. 1, գ. 12, թ. 266):

Այս մանդատի իրականացման համար Սովետական իշխանությունները ձեռնարկում են շտապ միջոցներ: Բազմաթիվ փաստերից բերեմ մեկը: 1918 թ. մարտի 28-ին Ի. Ստալինի վերոհիշյալ մանդատի ստացումից 13 օր անց, Թուրքեստանյան երկրամասի ժողկոմսովետի նախագահ Ֆ. Կոլեսովը ստորագրում է հետևյալ մանդատը. «Թույլատրվում է Թուրքեստանյան երկրամասի բոլոր հայկական ջոկատներին անարգել անցնել հայրենիք՝ իրենց ազգային խնդիրներն իրականացնելու համար: Նշված ջոկատները, իբրև Սովետական իշխանության պաշտպաններ, անարգել անցման իրավունք ունեն իրենց ձեռքին ունեցած զենքով, իսկ զենք չունեցողները զինվում են տեղական սովետների կողմից: Բոլոր հիմնարկություններին ու կազմակերպություններին առաջարկվում է ազատել մոբիլիզացված հայերին: Երկաթուղային կազմակերպությունները նրանց տրամադրում են անհրաժեշտ շարժակազմ, պարենային կոմիսարիատներն առհասարակ թող են թողնում անհրաժեշտ սննդամթերք» (**Թուրքմենստանի պետական կենտրոնական արխիվ**, ֆ. 496, ց. 1, գ. 1բ, թ. 17):

1918 թ. ապրիլի 29-ին Թուրքեստանյան երկրամասի արտակարգ կոմիսար Պ. Կոբոզևը ստորագրած մանդատով պահանջում է բոլոր հիմնարկություններից ու կազմակերպություններից՝ անմիջապես ազատել մոբիլիզացված հայերին և ցույց տալ լիակատար աջակցություն հայկական ջոկատներին Բաքու անցնելու համար (**Ուզբեկստանի պետական կենտրոնական արխիվ**, ֆ. 25, ց. 1, գ. 61, թ. 136):

Վերոհիշյալ մանդատների հիման վրա Թուրքեստանի ռազմական կոմիսարիատն արձակում է հրաման, որով թույլատրվում էր կազմավորել զենքի տարբեր տեսակներով զինված հայ հեղափոխական ջոկատներ՝ Կովկաս ուղարկելու նպատակով:

Հրամանում ասվում էր նաև հետևյալը. «Հիշյալ ջոկատներն առանձին մարտական միավորումներով մտնում են Թուրքեստանյան բանվորա-գյուղացիական բանակի մեջ:

Մինչև նրանց Կովկաս մեկնելը, այդ ջոկատները տեղերում տանում են կայազորային ծառայություն, հանդիսանալով տեղական սովետական իշխանության և քաղաքի պաշտպանության հենարանը: Զենքը, հանդերձանքը, պարենավորման և դրամական վճարումները նշված ջոկատների անդամները ստանում են տեղում՝ պատգամավորների սովետներից սոցիալիստական կարմիր բանակում հաստատված կարգի համաձայն»:

Ռազմական կոմիսարիատը բոլոր սովետներից և զինվորական կազմակերպություններից պահանջում էր կատարել իրենց վրա դրված պարտականությունները (**Ուզբեկստանի պետական կենտրոնական արխիվ**, ֆ. 25, ց. 1, գ. 84, թ. 202, գ. 63ա, թ. 30):

Վերոհիշյալ դեկրետների համաձայն Միջին Ասիայի հայաշատ քաղաքներում (Տաշքենդ, Կոկանդ, Անդիջան, Սամարղանդ, Աշխաբադ, Կերկա, Զարջոյ, Մերվ և այլն) հայտարարվում է 19-45 տարեկան հայ տղամարդկանց ցուցակագրում՝ Անդրկովկաս մեկնելու համար («Наша газета», 16. 05, 1918 г.):

Այդ ջոկատների կազմակերպմանն աջակցելու նպատակով Շահումյանի հանձնարարությամբ Միջին Ասիայի հայաշատ քաղաքներ էին մեկնել Բաքվի սովետի անդամները:

Հայկական կամավորական ջոկատներ են կազմակերպվում Տաշքենդ, Աշխաբադ, Սամարղանդ, Մերվ (Մարի), Կերկա, Զարջոյ, Կոկանդ, Անդիջան, Ֆերգանա, Կրասնովոդսկ քաղաքներում: Դրանցից յուրաքանչյուրն ուներ 35-50 մարդ: Կամավորների մեծ մասը մասնակցել էր Արևմտյան ռազմաճակատում մղված մարտական գործողություններին և ուներ փորձ:

Հայկական կամավորական ջոկատների կազմավորման գործում համառ պայքար է ծավալվել մի կողմից տեղում գործող հայ բոլշևիկների, հնչակյանների ու մյուս կողմից դաշնակցականների միջև:

Վեհը զնում էր այն հարցի շուրջ, թե ո՞ւմ հանձնել այդ ջոկատները: Բոլշևիկներն ու հնչակյանները գտնում էին, որ այդ ջոկատները պետք է դրվեն արտակարգ կոմիսար Շահումյանի տրամադրության տակ: Սրա հետ համաձայն չէին տեղի դաշնակցականները, որոնք պահանջում էին ուղարկվող ջոկատները հանձնել Բաքվում գործող հայոց ազգային խորհրդի տնօրինությանը:

Իհարկե, խնդիրը նրանում էր, որ ինչքան կարելի է արագորեն ձևավոր-

ված ջոկատներն Անդրկովկաս ուղարկվեին: Մինչդեռ օրեր շարունակ անհարկի վիճաբանություն էր տեղի ունենում, թե ջոկատները Բաքվում ո՞ւմ հանձնվեին: Սա աննպատակ, որևէ օգուտ չտվող վեճ էր և դրա արդյունքում դաշնակցության կազմակերված ջոկատների մեծ մասը Բաքու չուղարկվեց: Դրանց կազմակերպիչները Հայաստանում էին, թե այդ ջոկատները տեղում էլ անելիք ունեն:

Ջնայած ստեղծված արգելքներին, վերոհիշյալ ջոկատների շատ մարտիկներ համաձայնվեցին մտնել Հնչակյանների ձևավորած ջոկատների մեջ, մեկնել Բաքու և մտնել Բաքվի սովետի տրամադրության տակ: Ըստ ձեռք բերված համաձայնության այդ ջոկատները Բաքու, Հայաստան պետք է ուղարկվեին Աշխաբադի պատգամավորական սովետի անդամների ուղեկցությամբ և դրվեին Ստ. Շահումյանի տրամադրության տակ:

Բաքու ուղարկվող ջոկատներին ուղեկցում էր դրանց եռանդուն կազմակերպիչ, Աշխաբադում Հնչակյան կուսակցության նշանավոր գործիչ Պետրոս Պետրոսովը (Պետրոսյանը), որը մեծ հեղինակություն էր վայելում:

Վերջին անգամ Պ. Պետրոսովը կազմավորված հերթական ջոկատը պետք է Բաքու տաներ 1918 թ. մայիսի 30-ին, բայց Կրասնովոդսկում նավ բարձրանալու ժամանակ նա ոտքի կոտրվածք է ստանում և այդ պատճառով չի կարողանում մեկնել:

Շահումյանը կարևոր նշանակություն էր տալիս Մինջին Ասիայի քաղաքներում կամավորական ջոկատների կազմակերպմանը, քանի որ այստեղից ավելի հեշտ էր դրանք Անդրկովկաս հասցնելը, քան Արևմտյան ռազմաճակատից:

Տաշքենդի և Աշխաբադի արխիվներում պահպանված նյութերի համաձայն ընդհանուր առմամբ, ոչ լրիվ տվյալներով, Բաքու մեկնած ջոկատների մարտիկների թիվը կազմում է մոտ 1500 մարդ: Տաշքենդի հայերի կամավորական ջոկատի մասին ինձ տեղեկություններ են հայտնել Սերգեյ Խուդայանցը և Արմենակ Հարությունյանը, որոնց հանդիպել եմ 1960-ական թվականներին Տաշքենդում:

Նրանք պատմում էին, որ երբ 1918 թ. ապրիլի սկզբին իրենց ջոկատներով գալիս են Բաքու, Շահումյանի հանձնարարությամբ Ղազախի ու Իջևանի վրայով մեկնում են Էջմիածին և մասնակցում Սարդարապատի ճակատամարտին: Այնուհետև նրանք վերադառնում են Բաքու, իսկ Կոմունարի անկումից հետո, մեծ դժվարություններ հաղթահարելով, վերադառնում են Տաշքենդ և եռանդով մասնակցում Ուզբեկստանում հակահեղափոխական ուժերի դեմ մղված մարտերին:

Շահումյանի կոչը և Ստալինի ստորագրած մանդատը ստանալուց հետո Ուրալյան ռազմաճակատում գտնվող կոմիսար Դավիթ Գալուստյանը (Կոլոտով) ևս կազմակերպում է հայ կամավորներից ջոկատ և հասնում է Տաշքենդ, Բաքու անցնելու մտադրությամբ:

1918 թ. հունիսի 17-ին Աշխաբադում էսէռներն ու մենշևիկները խռովություն էին բարձրացրել: Աշխաբադի հեղկոմին հավատարիմ մնացած ջոկատները, այդ թվում Պետրոս Պետրոսովի հրամանատարությամբ գործող Հնչակյան ջոկատը, կռվում էին հակահեղափոխությունը ճնշելու և քաղաքում կարգ ու կանոնը վերականգնելու համար: Սակայն նրանց վիճակը բարդանում է, երբ խռովարարներին են միանում թուրքմենական ցեղախմբերի պարագլուխները:

Աշխաբադի հեղկոմը օգնության համար դիմում է Սամարղանդի սովետի նախագահ Ա. Ֆրոլովին: Այդ ժամանակ Գալուստյանը իր ջոկատով արդեն հասել էր Սամարղանդ և միջոցներ էր որոնում Աշխաբադ անցնելու համար: Այստեղ էլ նա իր ջոկատով միանում է Աշխաբադին օգնության չտապող Ֆրոլովին և նրա գնացքով 1918 թ. հունիսի 24-ին հասնում Աշխաբադ:

Դ. Գալուստյանի ջոկատը մասնակցում է Աշխաբադի խռովության ճնշմանը, որի ընթացքում մի քանի մարտիկներ վիրավորվում են:

Հունիսյան խռովությունը ճնշելուց հետո, Ֆրոլովը, որը նշանակվել էր Անդրկասպյան մարզի արտակարգ կոմիսար, որոշում է հայկական ջոկատներին թույլ չտալ մեկնել Բաքու:

*1918 թ. հուլիսի 1-ին Շահումյանը Ֆ. Կոլեսովին ուղարկում է հետևյալ հեռագիրը. «Խնդրում եմ թույլատրել հայկական դրուժինաների մեկնումը: Ելիզավետպոլի ուղղությամբ մեծ մարտեր են մղվում: Դրությունը համարյա օրհասական է: Օգնությունն արտակարգ անհրաժեշտ է: Յուրաքանչյուր օր նշանակություն ունի: Խնդրում եմ ձեր աջակցությունը» (**Ուզբեկստանի պետական կենտրոնական արխիվ**, ֆ. 25, ց. 1, գ.. 66, թ. 35):*

*Հուլիսի 3-ին Կոլեսովը հեռագրով Շահումյանին հայտնում է. «Հայերի ջոկատներն ուղարկում ենք Աշխաբադի պատգամավորների սովետի անդամների ուղեկցությամբ» (**Ուզբեկստանի պետական կենտրոնական արխիվ**, ֆ. 25, ց. 1, գ. 66, թ. 42):*

Նույն օրը Կոլեսովը հեռագիր է ուղարկում Աշխաբադի սովետ և հայտնում է. «Թույլատրվում է հայկական ջոկատների մեկնումը դեպի Կովկաս: Դրուժինաները Բաքու են մեկնում Աշխաբադի պատգամավորների սովետի

*անդամի ուղեկցությամբ և այնտեղ կհանձնվեն Ժողկոմսովետի նախագահ Շահումյանի իրավասությանը» (**Ռազմահրամանի պահպանման կենտրոնական արխիվ**, ֆ. 25, ց. 1, գ. 66, թ. 44):*

*Կոլեսովի պահանջի հիման վրա հուլիսի 8-ին Ֆրունզը հեռագրում է Տաշքենդ, Ժողկոմսովետ. «Բաքվի ռազմական կոմիսարիատից ժամանած ներկայացուցիչը զինված ուժեր է խնդրում: Վաղն ուղարկում եմ հարյուր հայերի» (**Ռազմահրամանի պահպանման կենտրոնական արխիվ**, ֆ. 17, ց. 1, գ. 1179, թ. 305):*

Այս հեռագրի համաձայն Գալուստյանի ջոկատը նույնպես պատրաստվում էր հուլիսի 11-ին մեկնել Կրասնովոդսկի վրայով Բաքու:

Սակայն, 1918 թ. հուլիսի 11-12-ին Աշխաբադում անգլիացիների աջակցությամբ, կազմակերպվում է նոր խռովություն: Խռովարարների դեմ պայքարում էին նաև Բաքու մեկնելու համար պատրաստ հնչակյանների կազմավորած նոր ջոկատները Հ. Առուստամյանի, Ե. Եղիազարյանի, Ս. Խաչատրեկյանի հրամանատարությամբ, ինչպես նաև Գալուստյանի ջոկատը:

*Իսկանդարյանի հրամանատարությամբ գործող դաշնակցության ջոկատի վրա էր դրվել զինապահեստի պաշտպանությունը: Սակայն մարտի ամենամեծական պահին Իսկանդարյանն իր ջոկատով անցնում է խռովարարների կողմը և նրանց է հանձնում զինապահեստը (**Թուրքմենստանի պահպանման կենտրոնական արխիվ**, ֆ. 520, ց. 1, գ. 8, թ. 3):*

Զենք ու զինամթերքից զրկված սովետական զորաջոկատները ծանր պարտություն են կրում: Աշխաբադում տապալվում է սովետական իշխանությունը: Էսէռա-մենշևիկյան խռովարարներին հաջողվում է ձերբակալել Աշխաբադի ժողկոմսովետի ղեկավարներին:

*Ձերբակալվածների թվում էին նաև ծանր վիրավորված Պետրոս Պետրոսովը և Դ. Գալուստյանը, որոնց էսէռական դահիճները Ֆունտիկովի գլխավորությամբ գնդակահարում են 1918 թ. հուլիսի 21-ի գիշերը (**Թուրքմենստանի պահպանման կենտրոնական արխիվ**, ֆ. 205, ց. 1, գ. 1, թ. 20):*

Անգլիացիների թելադրանքով խռովարարները ձերբակալում ու գնդակահարում են նաև Անդրկասպիայի մի շարք քաղաքների (Կրասնովոդսկ, Մերվ, Կազանջիկ, Բայրամ-Ալի և այլն) սովետական աշխատողներին:

*Շահումյանը 1918 թ. հուլիսի 27-ին Լենինին ուղարկած հեռագրում հայտնում էր, որ Աշխաբադում ձերբակալվել են Հրահանգիչ Լացիսը, Բուզուլուկի ռազմաճակատի Գերգիսհրամ Կոլոստովը, Բուզուլուկի շտաբի պետ Միխայլովը, որոնց ազատելու նպատակով կապ է հաստատվել Կրասնովոդսկի գործադուլային կոմիտեի հետ (**Ստ. Շահումյան**, նույն տեղը, հ. Հինգերորդ, էջ 221):*

Աշխաբադում կատարված խռովության պատճառով փակվում է Բաքու տանող ճանապարհը: Հայկական կամավորական ջոկատներն այլևս հնարավորություն չեն ունենում մեկնել Բաքու:

Դրանցից էր նաև Սամարղանդում Հայկ Բժշկյանցի հրամանատարությամբ ստեղծված հայկական կամավորական ջոկատը: Կովկասյան ռազմաճակատում վիրավորված Հայկ Բժշկյանցը բուժման նպատակով գտնվում էր Սամարղանդում: Այստեղ էլ նա լուր է ստանում Թուրքական արշավանքի վերսկսման մասին:

Հայկ Բժշկյանցն անհապաղ գործի է անցնում: Սամարղանդում բուժվող հայ վիրավոր զինվորներից նա ձևավորում է կամավորների ջոկատ: Նրան եռանդով աջակցում էին Գրիգոր և Սաթենիկ Պալյանց ամուսինները:

Բժշկյանցի ջոկատը համալրվում է նաև Սամարղանդում բնակվող հայերով: Հայկ Բժշկյանցը ջոկատն եռանդով նախապատրաստում էր Բաքու մեկնելու համար:

Սակայն 1918 թ. մարտին Բուխարայում սկսված խռովության կապակցությամբ Թուրքեստանի ժողկոմսովետի որոշման համաձայն Հ. Բժշկյանցի ջոկատը ժամանակավորապես ուղարկվում է Բուխարայի ռազմաճակատ:

Բուխարայի էմիրի խռովությունը ճնշելուց հետո Հ. Բժշկյանցի ջոկատը վերադառնում է Սամարղանդ և պատրաստվում է մեկնել Աշխաբադով Բաքու: Բայց այս ժամանակ էլ Աշխաբադում խռովության հաղթանակն է խանգարում: Հ. Բժշկյանցը հարկադրված էր իր ջոկատը Հայաստան տանել Ուրալ - Կասպից ծով - Բաքու ուղիով: Բայց այս ճանապարհն էլ է փակվում:

Հ. Բժշկյանցն իր ջոկատով մնացել է Ուրալում, որտեղ միանում է Կարմիր բանակին, և մասնակցելով քաղաքացիական պատերազմին, ձեռք է բերում լեգենդար հրամանատարի համբավ:

Շահումյանի կոչը, Ստալինի ստորագրած մանդատը լայն արձագանք են գտնում նաև Արևմտյան ռազմաճակատում գտնվող հայ զինվորների մոտ: Ռազմաճակատի հրամանատարությունը ստանձնած Ա. Մյասնիկյանը եռանդով նպաստում էր հայ զինվորներից կամավորական ջոկատներ կազմակերպելու և դրանք Անդրկովկաս, Հայաստան ուղարկելու համար:

Այդ ջոկատներից մեկը ձևավորվել էր Հակոբ Մելքումյանի (Մելքումով) հրամանատարությամբ: Դրան է նվիրված 1996 թ. Բելգրադում, սպա 2012 և 2013 թթ. Երևանում լույս տեսած տողերիս հեղինակի «Էնվերի վերջը» գիրքը:

Մելքումովն իր ջոկատով Ռիզայից գալիս է Հյուսիսային Կովկաս, բայց արդեն ճանապարհը փակ էր և նա որոշում է մեկնել Աստրախան և Կասպից ծովով անցնել Բաքու: Այս մտադրությունն էլ չի իրականանում և Մելքումովը իր ջոկատով մտնում է Կարմիր բանակ: 1920 թ. հունվարին Մ. Ֆրունզեի երաշխավորությամբ նրան ուղարկում են Միջին Ասիա և նշանակում հեծյալ բրիգադի հրամանատար:

Մելքումովը մասնակցում է Միջին Ասիայում մղված բոլոր կարևոր ռազմական գործողություններին: Անգնահատելի սխրանք է գործում Մելքումովը, 1922 թ. հունիս-օգոստոսին ջախջախելով Էնվեր փաշայի 40-հազարանոց բանակը: Քաղաքացիական պատերազմի ռազմաճակատներում դրսևորած արիության ու ռազմական հմտության համար Մելքումովը չորս անգամ արժանացել է Կարմիր դրոշի շքանշանի:

Մյուս կամավորական ջոկատներից մեկը, որը ձևավորվել էր Օդեսայում, կարողանում է ծովով գալ Բաթում: 1918 թ. հունիսի սկզբին այդ ջոկատը հասնում է Թիֆլիս, որտեղից էլ պետք է մեկներ Հայաստան: Սակայն մենշևիկ մինիստր Ռամիշվիլին հրամայում է զինաթափել այդ ջոկատը: Ջոկատի 50 զինվորները դիմադրելու հնարավորություն չունեին, հարկադրված զենքերը հանձնում են և մեկնում են Ղարաքիլիսա, որտեղ ինչ-որ կերպ նորից զենք են ձեռք բերում: Այս մասին հայտնում է Քավթարաձեն 1918 թ. հունիսի 7-ին Բաքվի սովետին տրված զեկուցման մեջ (ՀՀ ԱԱ, ֆ. 1437, ց. 3, գ. 3, թթ. 12-37):

Շահումյանն եռանդուն ջանքեր էր գործադրում Բաքուն պաշտպանելու համար: Բաքվի պաշտպանությունը նա իրավացիորեն համարում էր նաև Հայաստանի պաշտպանություն: Ահա, թե ինչու Բաքու եկան վերոհիշյալ ճակատամարտերի չատ մասնակիցներ: Նրանց մեջ էին հանրահայտ դեմքեր Մուրատն ու Սեպուհը, որոնց «Շահումյանը ըսեր էր.- Կը լսե՞ք այս թնդանոթներու որոտը, թշնամին կաշխատի գրավել Պագուն որ հետո պիտի հարձակվի այն փոքրիկ ժողովուրդի վրա, որ քաշված է Երեւանի շուրջը, եւ որ չնչահեղձ կը տառապի: Պագուն պաշտպանել կը նշանակե Երեւանը պաշտպանել, գնացեք հանգստանալու, երկու օրեն ամեն միջոց կը դնենք ձեր տրամադրության տակ եւ դուք կը կազմեք ձեր կարմիր գունդը»:

Թուրքերին կասեցնելը չէր մտնում մենշևիկների ու մուսավաթականների ծրագրերի մեջ: Նրանք վաղուց Հայաստանն ու Բաքուն ծախել էին գերմանա-թուրքերին:

Ստեղծվել էր տարօրինակ վիճակ: Թուրքական զավթիչների դեմ իր հայրենի հողը պաշտպանելու համար միայնակ կռվում էր հայկական բանակը, որի մեջ էին նաև Շահումյանի ջանքերով այստեղ ուղարկված կամավորական ջոկատները, իրենց վրա կրելով ամբողջ ծանրությունը:

Սակայն Հայաստանի տարածքում կռվող հայկական բանակը համարվում էր Անդրկովկասյան կառավարության բանակ, իսկ ռազմաճակատի հրամանատարությունն իրականացնում էր իր հայատյացությամբ հայտնի վրացի գեներալ Օդիշելիձեն: Վերջինիս դավաճանական հրամանով էր, որ 1918 թ. ապրիլի 24-25-ին Կարսի հզոր ամրոցը հանձնվել է թուրքերին...

Մի կողմից մենշևիկներն ու մուսավաթականները ձգտում էին Հայաստանին զոհաբերելու միջոցով լուծել իրենց խնդիրները, մյուս կողմից միայնակ մնացած հայ ժողովուրդը, համախմբելով իր վերջին ուժերը, ձգտում էր ապահովել իր ֆիզիկական գոյությունը: Այս օրհասական գոտեմարտում հաղթեց հայ ժողովրդի հավաքական կամքը:

Ջիրականացան մենշևիկների ու մուսավաթականների ծրագրերը՝ հայ ժողովրդի հաշվին լուծել իրենց խնդիրները: Իսկ այդ ծրագրերն ամենայն վճռականությամբ ու կրքոտությամբ մերկացնում էր Շահումյանը, համարելով դրանք առհասարակ դավաճանություն Անդրկովկասի ժողովուրդներին:

Ահա թե ինչու մենշևիկներն ու մուսավաթականները մինչև այսօր չեն կարողանում ներել Ստ. Շահումյանին:

ԳԼՈՒԽ 18
ԲԱՔՎԻ ԺՈՂԿՈՍՍՈՎԵՏԻ ԿԱԶՄԱՎՈՐՈՒՄԸ

Դեռևս ապրիլի 9-ին Բաքվի սովետի նիստում ձայների մեծամասնությամբ որոշվել էր հանձնարարել սովետում մեծամասնություն կազմող բոլշևիկների և ձախ էսէռների խմբակցություններին և գործադիր կոմիտեին սովետի առաջիկա նիստի հաստատմանը ներկայացնել տեղական իշխանության՝ կառավարության կազմը:

Միաժամանակ որոշվել էր, որ կառավարությունը կազմված պետք է լինի բոլշևիկների և ձախ էսէռների ներկայացուցիչներից, ինչպես նաև անհատական կարգով դաշնակցության և աջ էսէռների ներկայացուցիչներից:

Ընդունված որոշման համաձայն էլ Շահումյանը 1918 թ. ապրիլի 25-ին Բաքվի սովետի նիստի հաստատման է ներկայացրել կառավարության հետևյալ կազմը.

Կորգանով՝ ռազմա-ծովային կոմիսար.
Զափարիձե՝ ներքին գործերի կոմիսար.
Ցիրլետով՝ ժողովրդական տնտեսության կոմիսար.
Սուխարցև՝ ճանապարհների հաղորդակցության կոմիսար.
Նարիմանով՝ քաղաքային տնտեսության կոմիսար.
Կոլեսնիկովա՝ ժողովրդական լուսավորության կոմիսար.
Կարինյան՝ արդարադատության կոմիսար.
Կիրեև՝ ֆինանսների կոմիսար.
Շահումյան՝ արտաքին գործերի կոմիսար.
Ցիբուլսկի՝ պարենավորման կոմիսար.

Միաժամանակ Շահումյանն առաջարկում է անհատապես աջ էսէռներից Սաքո Սահակյանին նշանակել երկրագործության կոմիսար, իսկ դաշնակցականներից Սիմոն Հակոբյանին՝ պետական վերահսկողության կոմիսար:

Կառավարության կազմի թեկնածուների ցուցակի հրապարակումից հետո աջ էսէռների և դաշնակցության խմբակցությունները հայտարարել են, որ դեմ են կառավարության կազմի մեջ իրենց ներկայացուցիչներին մտցնել անհատական ձևով և պահանջել են, որ կառավարությանը կարող են մասնակցել միայն որպես կուսակցություն:

Դաշնակցության ներկայացուցիչ Լ. Զառաֆյանը հայտարարում է, որ իրենց ընկերներից անհատական կարգով հրավիրված Սիմոն Հակոբյանը չի կարող մտնել կառավարության կազմի մեջ, մինչև չորոշվի դաշնակցության

մասնակցությունը կուսակցականորեն: Զառաֆյանը նշում է, որ «մինչև օրս իշխանության բոլոր մարմիններում եռանդուն մասնակցություն է ունեցել դաշնակցության խմբակցությունը, ինչպես եղավ, որ այժմ հեռացվում է նա նոր կազմակերպվող քաղաքական մարմնից»:

Այնուհետև Զառաֆյանը մատնանշել է այն փաստը, որ «դաշնակցությունը կուսակցությունը որպիսի եռանդով ու թափով պաշտպան կանգնեց խորհրդային իշխանությանը և այդ իշխանության համար մղելիք պայքարում ու սոցիալիստական կուռում շատ ուելի առաջ անցաւ թէ խորհրդում գտնուած այսպէս կոչած «սոցիալիստական» խմբակցություններից, Թիֆլիսի վրացական փոքրամասնականներից (նկատի ունի մենշևիկներին- Վ. Պ.) և թէ նոյնիսկ գերմանական սոց.-դեմոկրատներից»:

Իր ելույթի վերջում Զառաֆյանն ասել է. «Բայց լաւ գիտցէք, կառավարութիւն կազմող խմբակցութիւններ, որ ձեր այդ ապօրինի քայլերի դէմ բողոքում են ձեր իսկ կուսակցական շարքերից նաւթահանքային հարիւրաւոր բանտրներ» («Ազատ», ապրիլի 28, 1918 թ.):

Ս. Սահակյանը նույնպես հայտարարել է, թե ինքը կարող է մտնել կառավարության մեջ, միայն որպես աջ էսէռների խմբակցության անդամ: Ի պատասխան դրա, Շահումյանն ասել է, որ որևէ հիմք չկա բացառություն կազմել աջ էսէռներին, քանի որ նրանք չեն ընդունում Ռուսաստանի կենտրոնական իշխանությունը:

Աջ էսէռները խնդրին մոտենում էին նաև մեկ այլ տեսակետից: Նրանք, իհարկե, ծայրահեղ դեպքում, դեմ չէին իրենց ներկայացուցչի անհատական մասնակցությանը, բայց պահանջում էին, որ ոչ թե Շահումյանը ներկայացներ ազգությամբ հայ թեկնածուին, այլ ինքը՝ կուսակցությունը ներկայացներ իր թեկնածուին: Աջ էսէռներն այս կերպ փորձում էին Շահումյանին մեղադրել ազգայնականության մեջ, ասելով, որ նրա առաջարկած կառավարության մեջ 12-ից 5-ը հայեր են:

Ի վերջո, դաշնակցության և աջ էսէռների ներկայացուցիչները հայտարարում են, որ չնայած իրենք դեմ են անհատական ձևով ընտրությանը և չեն մասնակցի կառավարության կազմին, բայց «կանգնած լինելով խորհրդային իշխանության տեսակետի վրայ, երբէք չեն մերժի իրենց մասնակցությունը նրա մարմիններում և այսուհետ էլ կաշխատեն, ինչպէս մինչև օրս, ամեն կերպ աջակցել այդ իշխանության ամրապնդմանը»:

Համաձայնվելով այս պահանջին Ս. Սահակյանն ու Ս. Հակոբյանը հրաժարվում են անհատապես մտնել կառավարության կազմի մեջ:

Շահումյանի առաջարկությամբ նրանց պահանջը դրվում է քվեարկության: Ձայների մեծամասնությամբ սովետը որոշում է Սահակյանին ու Հարությանին հանել կառավարության կազմից:

Ամփոփելով կառավարության կազմի քննարկումը, Շահումյանը նշել է, որ աջ էսէռների և դաշնակցականների դժգոհությունը կրում է ձևական և ոչ երբեք քաղաքական բնույթ և հույս է հայտնում, ասելով, թե «ժամանակին այդ էլ կհարթվի» (*նույն տեղը*):

Քվեարկության է դրվում Շահումյանի առաջարկած կառավարության կազմը: Աջ էսէռներն ու դաշնակցականները քվեարկության ժամանակ կազմը: Աջ էսէռներն ու դաշնակցականները քվեարկության ժամանակ ձեռնպահ են մնում: Քվեարկության արդյունքով ընտրվում է Բաքվի կառավարությունը՝ Ժողովրդական կոմիսարների սովետը հետևյալ կազմով.

Շահումյան- Ժողկոմսովետի նախագահ, արտաքին գործերի կոմիսար, Կովկասի գործերի արտակարգ կոմիսար (89 կողմ, 70 ձեռնպահ, 1 դեմ).

Կորգանով- Ռազմա-ծովային գործերի կոմիսար, Կովկասյան բանակի ռազմա-հեղափոխական կոմիտեի նախագահ (76 կողմ, 69 ձեռնպահ).

Ջալիպով- Ներքին գործերի ժողովրդական կոմիսար, Բաքվի սովետի նախագահ (76 կողմ, 70 ձեռնպահ).

Ֆեդորով- Ժողովրդական տնտեսության խորհրդի նախագահ (76 կողմ, 72 ձեռնպահ).

Սուխարև (*ձախ էսէռ*)- Հաղորդակցության ճանապարհների , փոստի և հեռագրի կոմիսար (83 կողմ, 73 ձեռնպահ).

Նարիմանով («Հումմեթ»)- Քաղաքային տնտեսության գործերի կոմիսար (75 կողմ, 74 ձեռնպահ).

Կոլանովսկայա- Ժողովրդական լուսավորության կոմիսար (75 կողմ, 71 ձեռնպահ).

Կարինյան- Արդարադատության կոմիսար (78 կողմ, 69 ձեռնպահ).

Կիրեև (*ձախ էսէռ*)- Ֆինանսների կոմիսար (73 կողմ, 83 ձեռնպահ):

Թափուր են մնում երկրագործության և վերահսկողության գործերի ժողովրդական կոմիսարների պաստերը: Կարճ ժամանակ անց Մ. Ազիզբեկովն ընտրվում է նահանգային կոմիսար, Մ. Վեզիրովը (*ձախ էսէռ*)՝ երկրագործության կոմիսար, Ի. Ցիբուլսկին (*ձախ էսէռ*)՝ պարենավորման կոմիսար, Ս. Բոգդանովը՝ պետական վերահսկողության կառավարիչ, Ս. Տեր-Գաբրիելյանը՝ արտակարգ հանձնաժողովի նախագահ: Ն. Կուզնեցովը նշանակվում է Ժողկոմսովետի կառավարիչ և քարտուղար:

Բաքվի ժողովրդական կոմիսարների սովետը փաստորեն դառնում է

Անդրկովկասում միակ սովետական կառավարությունը, որն աչքի էր ընկնում իր ինտերնացիոնալ կազմով: Ժողկոմսովետի մեջ մտնող ռուսների, հայերի, վրացիների, ադրբեջանցիների ներկայացուցիչները, որոնք տարբեր կուսակցությունների էին պատկանում, տոգորված էին մեկ գաղափարով՝ հավատարմությամբ ծառայել բոլոր ազգերի աշխատավորների շահերին, ամրապնդել սովետական իշխանությունը:

Նրանցից միայն Ժողկոմսովետի ֆինանսների կոմիսար Ա. Կիրեևն էր, որ խախտելով հավատարմության երդումը, 1918 թ. հուլիսին կատարել էր պետական միջոցների վատնում, ինչի համար Արտակարգ հանձնաժողովի որոշմամբ գնդակահարվել է:

Բաքվի սովետի որոշմամբ Ժողովրդական կոմիսարների սովետը պատասխանատու էր սովետի և նրա գործադիր կոմիտեի առջև (**Ստ. Շահումյան**, նույն տեղը, հ. չորրորդ, էջ 218-223):

ԲԱՔՎԻ ԺՈՂԿՈՄՍՈՎԵՏԻ ՀՌՉԱԿԱԳԻՐԸ

Բաքվի սովետի նիստից հետո, 1918 թ. մայիսի 1-ին, հրապարակվել է Շահումյանի գրած Բաքվի ժողովրդական կոմիսարների սովետի հռչակագիրը, որտեղ նշվում էր, որ «այդպիսի տեղական կառավարման մարմնի ստեղծումն ամենևին չի նշանակում բաժանվել Համառուսաստանյան սովետական հանրապետությունից»:

Հռչակագիրն ազդարարում էր, որ Բաքվի ժողկոմսովետն ամենասերտ կերպով կապված կլինի Սովետական Ռուսաստանի կենտրոնական իշխանության հետ և Բաքվի բանվորներին ու նահանգի չքավոր գյուղացիությանը սերտորեն կմիավորի Ռուսաստանի բանվորների և գյուղացիների հետ: Ժողկոմսովետը տեղական պայմաններին համապատասխան կկենսագործի Ռուսաստանի բանվորագյուղացիական կառավարության բոլոր դեկրետներն ու կարգադրությունները:

Կարևորվում էր այն հանգամանքը, որ Բաքվի սովետը իր համար պարտադիր է համարում Սովետների Համառուսաստանյան հանգումարի որոշումները և գործում է Կենտրոնական գործադիր կոմիտեի և Ժողկոմսովետի հետ լիովին համերաշխ կերպով:

Ընդգծվում էր, որ Բաքվի սովետն ու նրա գործադիր կոմիտեն շարունակում են մնալ որպես օրենսդիր և գործադիր իշխանություն, իսկ Ժողկոմսովետը միայն տեխնիկական մարմին է, որը հեշտացնելու է օրենսդրության ու կառավարման գործը և իր գործունեության համար պատասխանատու է սո-

վետի առջև:

Այնուհետև հիշատակվում են այն սոցիալական միջոցառումները, որոնք պետք է կենսագործվեն նավթարդյունաբերության, բանկերի, քաղաքային տնտեսության, ծովային տրանսպորտի, երկաթուղիների, կալվածատիրական հողերը գյուղացիներին հանձնելու և այլ ասպարեզներում:

«Սովետական իշխանությունը,- ընդգծում էր հռչակագիրը,- միայն այն ժամանակ կլինի իսկական պրոլետարական իշխանություն, երբ նա մի շարք միջոցառումներով կահմանափակի բուրժուազիայի տնտեսական տիրապետությունը, կարելավի բանվոր դասակարգի ու քաղաքի չքավորության դրությունը»:

Նշված միջոցառումները կենսագործելու անհրաժեշտ միջոց է համարվում սկսված քաղաքացիական պատերազմը հաղթականորեն ավարտելը, որի համար հարկավոր է ունենալ ուժեղ կարմիր բանակ:

Այս ամենի կենսագործումը միայն Ժողկոմսովետի գործը չէ: Դրանց իրականացումը հնարավոր է Բաքվի ամբողջ պրոլետարիատի եռանդուն և կազմակերպված օգնությամբ: Հռչակագիրը շեշտում էր, որ «սովետական քաղաքականության հաջողության ու հաղթանակի միակ գրավականը իշխանության և ինքնավարության կոչված մասսաների ստեղծագործական աշխատանքն է»:

Հռչակագիրը կոչ էր անում «ընդհանուր պատասխանատվության գիտակցություն և համերաշխ ընդհանուր աշխատանք սովետի շուրջը՝ հանուն աշխատանքի ազատագրության մեծ իդեալների, որ հռչակել է Հոկտեմբերյան բանվորագյուղացիական հեղափոխությունը» (**Ստ. Շահումյան**, նույն տեղը, հ. չորրորդ, էջ 228-233):

ՌՈՒՍԱՍՏԱՆԻՑ ԱՆԴՐԿՈՎԿԱՍՆ ԱՆՋԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՍԵՅՄԻ ՈՐՈՇՈՒՄԸ

Սեյմի կողմից Անդրկովկասն անջատելու որոշման կապակցությամբ 1918 թ. մայիսի 1-ին Շահումյանը հանդես է գալիս Բաքվի սովետի նիստում: Նրա ելույթի մասին կարելի է գաղափար կազմել մեզ հասած լրագրային հաշվետվության շնորհիվ:

Իր ելույթի սկզբում խոսելով Սեյմի որոշման մասին, Շահումյանը նշել է, որ «եթե իրականանա այդ որոշումը, ապա ճակատագրական նշանակություն կունենա Անդրկովկասի համար ընդհանրապես և Բաքվի համար՝ մասնավորապես»:

Շահումյանն ընդգծել է, որ Սեյմի քաղաքագետները Ռուսաստանի դեմոկրատիայից անջատում են Անդրկովկասյան դեմոկրատիան և, Անդրկովկասի դեմոկրատիայի կարևոր կենտրոն Բաքվին հաշվի չառնելով, որոշում են կայացնում և այդ մասին «Նոյ Ռամիշվիլու բերանով հաղորդում են մեզ ի գիտություն և ի հրահանգ տեղիս քաղաքապետի և նահանգային կոմիսարի միջոցով»

Այնուհետև Շահումյանն այն միտքն է արտահայտում, որ եթե խնդիրը վերաբերեր միայն անջատման մասին ստացված թղթին, ապա կարելի է դա հաշվի չառնել և մի կողմ դնել, բայց «շատով գործ պիտի ունենանք Անդրկովկասն անջատողների իրական քաղաքականության հետ»:

«Եթե,- նշել էր Շահումյանը,- թուրքերին նրանք խոստանում են Կովկասի անջատում, ապա պիտի գան արդյունաբերական այս կարևոր կենտրոնը զենքով գրավելու և սովետական իշխանությունը ոչնչացնելու համար»:

Շարունակելով իր միտքը, Շահումյանն ասել է. «Մենք վաղուց գուշակել էինք Սեյմի քաղաքագետների տակտիկայի հետևանքները և թե մուսավաթականների հետ ձեռք-ձեռքի տալուց նրանք ինչ արդյունքի կհասնեն: Նրանց միակ նպատակն այժմ բոլշևիկների դեմ կատաղի կռիվ հայտարարելն է: Եվ եթե հաշվի առնենք այն հանգամանքը, որ Սեյմից հեռացել են դաշնակցականները, նշանակում է այնտեղ մնացած մենշևիկների խմբակցությունը իր բարեկամ մուսավաթականների հետ պիտի գան մեր դեմ: Նշաններն արդեն երևում են»:

Շահումյանն անդրադարձել է նաև Բաքվի դեմոկրատիայի դերին և շեշտել է, որ նա «փայլուն էջ կկազմի կովկասյան պատմության մեջ և հաղթական պիտի լինի կովկասյան մշակույթի և Անդրկովկասի հեղափոխության պատմության պայքարում»:

Շահումյանի ելույթից հետո հանդես են գալիս խմբակցությունների ներկայացուցիչները: Դաշնակցության անունից Մելիք-Յոլչյանը ասում է, որ հայ աշխատավորությունը այս ծանր վայրկյանին, ինչպես և միշտ մեր անցյալում իր բախտը օրգանապես կապել է Ռուսաստանի դեմոկրատիայի հետ, «որի հետ անխզելի կապերով կապված են պատմականորեն»:

«Ռուս դեմոկրատիայի բերանը,- ընդգծել է Մելիք-Յոլչյանը,- մեզանում խորհրդային իշխանությունն է, որին և փարել ենք մեր բովանդակ ուժով, նրա գոյությունը մեր գոյությունն է, նրա յարատևությունը մեր յաջողությունն է»:

Մելիք-Յոլչյանը նշել է, որ բեկերի ու աղալարների և Սեյմում նստածների նպատակն է թուլացնել աշխատավորական կռիվը, Կովկասն անջատել մայր

Ռուսաստանից և հայտարարել է հետևյալը. «Ով աւելի լաւ, քան հայ աշխարհագրութիւնը, շատ լաւ գիտակցում է, թէ ինչ է նշանակում տաճկական լուծը. դարեր շարունակ մենք պատմականօրէն ճաշակել ենք նրա «քաղաքակրթութիւնը»: Բէկ ու աղալարների որոգայթների դէմ կէրթանք բովանդակ ուժով, արեան գետեր կը հոսեցնենք մեր դիակներով հակայեղափոխութեան դէմ մղած պայքարում յանուն Անդրկովկասեան և Ռուսաստանի յեղափոխութեան, յանուն ռուս դեմոկրատիայի յաղթանակի, որի մէջն է նաեւ մեր փրկութիւնը» («Արև», մայիսի 9, 1918 թ.):

Բաքվի սովետը ձայների մեծամասնութեամբ ընդունել է Շահումյանի ներկայացրած բանաձևը, որտեղ նաև նշվել է հետևյալը.

Առաջին. Անդրկովկասյան սեյմն Անդրկովկասն անկախ հայտարարելու որոշումով քաղաքական-դավաճանական քայլ է կատարում: Նրանց դեկավարներն են Թիֆլիսի պաշտպանողական մենշևիկները և դրանով ցուցադրում են բեկերի ու խանների և վրացական կալվածատերերի, մենշևիկների հետ միասին եղած բլոկի հակահեղափոխական հաղթանակը, որով «ասպարէզ է տրւում ներս խուժելու տաճկական խանների զօրքին դէպի Անդրկովկասեան պրոլետարիատի բռնի կէրպով անջատումը Ռուսաստանի դեմոկրատիայից, ուստի և դրանով խոշոր հարուած է հասցնում պրոլետարական յեղափոխութեան և Անդրկովկասի բանուորութեան և գիւղացիութեան կուլտուրայի ազատ զարգացմանը»:

Երկրորդ. Բաքվի սովետը Բաքվի պրոլետարիատի անունից հայտարարում է, որ նա «իր վճռական հակահարուածը կուայ Թիֆլիսի հակայեղափոխական ներկայացուցչութեանը և կոչ է անում Թիֆլիսի շրջանի հայ, վրացի և թուրք գիւղացի աշխատաւորութեանը դէմ կանգնել Սեյմի որոշմանը և տապալել բէկ ու խանների, մուսավաթականների և մենշևիկների կառաւարութեանը և նրանց փլատակների վրայ բարձրացնել համայն Ռուսաստանի պրոլետարական և գիւղացիական սովետներից անբաժան Անդրկովկասյան սովետական իշխանութիւնը» («Արև», մայիսի 9, 1918 թ.):

Հարկ եմ համարում այստեղ մեջբերել Անդրկովկասը Ռուսաստանից անջատելու վերաբերյալ Բաքվի դաշնակցության տեսակետը, որն արտահայտվել է «Արև» թերթի խմբագրական հոդվածում:

«Անդրկովկասը,- նշվել է խմբագրական հոդվածում,- Ռուսաստանից անջատ և անկախ յայտարարուեց միմիայն այն պատրւակով (մուսավաթականների կողմից) և այն պատճառով (միւսների կողմից), որ Հնարաւորութիւն լինէր Բաթումը, Արդահանն ու Կարսը իրենց շրջաններով փրկել տաճիկ կառավարութեան ճանկերից, սակայն դէռ նոյնիսկ Անդրկովկասի անկախութիւնը պաշտօնապէս չը հռչակուած՝ Տաճկաստանը սկսեց պնդել, թէ այդ նահանգների մասին խօսք չի կարող լինել, որովհետև Բրեստի դաշնագրով նրանք իրեն են տրւած, իսկ այդ դաշնագրի ամեն մի տառը սուրբ է»:

«Պարզ էր,- ընդգծում էր թերթը,- որ Անդրկովկասի անկախ յայտարարելը Տաճկաստանին ամենից առաջ հարկաւոր էր նրա համար, որպէսզի Բրեստի դաշնագրի այդ նահանգների վերաբերեալ կէտը ամենահեշտ կերպով իր օգտին վճռի»:

«Չէ՞ որ,- շարունակել է «Արև»-ը,- այդ դաշնագրով այդ նահանգների ազգաբնակչութիւնը պիտի ինքնորոշէր, ինքը վճռէր իր պետական պատկանելիութիւնը: Դրա համար պէտք էր հանրաքվէի ենթարկէր այդ հարցը, որ երկար կը տեւէր և հաւանականօրէն ի մեսս Տաճկաստանի կը վճռէր, մինչդեռ Անդրկովկասեան սեյմը, Անդրկովկասն անկախ ճանաչելուց յետոյ, կարող էր որոշ չափով փոխարինել տեղական ազգաբնակչութեան ռէֆէրէնդումը»: Այնուհետև թերթը նշում էր, որ Թուրքիան ճարպկորեն հասնում է իր առաջին նպատակին և Բրեստի պայմանագրով Բաթումի, Արդահանի և Կարսի նկատմամբ «պակաս թողածը լրացնում է «անկախ» Անդրկովկասի սեյմի աջակցութեամբ»:

Այս ամենից հետո, Թուրքիան ձգտում էր իրագործել իր երկրորդ նպատակը՝ դրավել ամբողջ Անդրկովկասը, օգտագործելով, ինչպես նշվում էր թերթում, «դաւաճան աջակիցներին և ճագարի հոգեբանութիւն ունեցող խաղաղասէրներին»:

Թուրքական ագրեսիայի միակ արգելքը «Արև»-ը համարում էր Բաքվի սովետական իշխանութիւնը և ընդգծում էր հետևյալը. «Այդ իշխանութեան ոյժից և իմաստութիւնից է կախւած ազատել Անդրկովկասը տաճկական վտանգից և փրկել Ռուսաստանը վատելանիթի սովից և հետևաբար սնանկութիւնից» («Արև», մայիսի 11, 1918 թ.):

Զմեկնաբանելով Բաքվի հայոց ազգային խորհրդի դաշնակցական գործիչների դիրքորոշումը, ուզում եմ միայն ընդգծել դրա սկզբունքային հակասությունն ու անհամաձայնությունը Թիֆլիսի հայոց ազգային խորհրդի ղեկավար դաշնակցականների հայացքների ու տեսակետների հետ:

ԺՈՂԿՈՄՍՈՎԵՏԻ ԱՌԱՋԻՆ ՁԵՌՆԱՐԿՈՒՄՆԵՐԸ

Շահումյանի գլխավորությամբ Ժողկոմսովետն անմիջապես ձեռնամուխ է լինում իր առջև դրված սոցիալիստական հեղափոխության առաջադրած խնդիրների լուծմանը: Այս աշխատանքը Շահումյանից ու նրա ընկերներից պահանջում էր ոչ միայն հաստատակամություն, այլև սոցիալիստական պետության պրակտիկ խնդիրների լուծման հմտություն:

Հարկավոր էր կարգավորել քաղաքի ու նահանգի պարենավորման կարգերը, մասնավոր առևտուրը պակասեցնելու միջոցով ուժեղացնել պայքարն անզուսպ սպեկուլյացիայի դեմ, հասարակական աշխատանք ստեղծելու միջոցով վերացնել գործազրկությունը, ռմնևորներին պատկանող ընդարձակ բնակարանների հաշվին թեթևացնել բանվորների և քաղաքի չքավորների բնակարանային կարիքները, միջոցներ ձեռնարկել ազգայնացումն իրականացնելու համար և այլն, և այլն:

Ժողկոմսովետի գործունեության մեջ կարևորվում էր լուսավորության բնագավառը, որտեղ ձեռնարկվող միջոցառումների շնորհիվ մտցվելու էր պարտադիր և ձրի ուսուցում, ստեղծվելու էր պրոլետարական, ինտերնացիոնալ դպրոց:

Այս բոլոր խնդիրների լուծման մեջ ամբողջությամբ երևում են Շահումյանի պետական գործչի հմտությունը, Անդրկովկասում առաջին սովետական պետությունը կառուցելու անխոնջ հաստատակամությունը:

Որպես Ժողկոմսովետի նախագահ, Շահումյանը հաշվի էր առնում Սովետական Ռուսաստանի փորձը, որը նա կիրառում էր ոչ թե մեխանիկորեն կրկնելով, այլ ստեղծագործաբար իրականացնում էր տեղական պայմաններն ու առանձնահատկությունները հաշվի առնելով:

Այդպես է նա վարվել հին բուրժուակալվածատիրական պետական ապարատը ոչնչացնելու և նոր բանվորագյուղացիական կառավարման ապարատ ստեղծելու ժամանակ: Նախկին հիմնարկությունների փոխարեն տեղերում ստեղծվում էին սովետներ, դրանց գործադիր կոմիտեներ և այլն: Հին ոստիկանության փոխարեն ստեղծվում է բանվորագյուղացիական միլիցիա, վերացվում են հին դատարանները և ցարական օրենքները:

Ժողկոմսովետը հատուկ նշանակություն էր տալիս կաշառակերության դեմ կազմակերպվող պայքարին: Այդ կապակցությամբ մայիսի 8-ին ընդունված Ժողկոմսովետի դեկրետում ասվում էր, որ հանցավոր տարրերը թաքնվելով սովետական իշխանության կողմնակիցների դիմակի տակ վարկաբեկում են բանվորական նոր իշխանության մարմիններին:

*Ժողկոմսովետը հայտարարում էր, որ «անողոք կերպով պատժելու է կաշառակերության և պաշտոնական չարարկումների մեջ մերկացված բոլոր անձանց» և կոչ էր անում լայն աջակցություն ցույց տալ «հասարակական այդ խոցի դեմ» պայքարելու գործում (**Ստ. Շահումյան**, նույն տեղը, հ. չորրորդ, էջ 246):*

Բաքվի Ժողկոմսովետի դեմ ծառացած դժվարագույն հարցերից մեկը սովի վտանգն էր: Բաքվի մերձակայքում գտնվող մուսուլմանական գյուղացիները մուսավաթականների քարոզչության ազդեցությամբ դադարեցրել էին գյուղատնտեսական մթերքների ներկրումը: Փակ էր մնում հացառատ Կուբանի և Ստավրոպոլի ճանապարհը:

Ժողկոմսովետի միակ հույսը մնում էր Մոզանը, որտեղ միշտ առատ էր հացը: Բայց այստեղ էլ մեծապես սրվել էին ռուս և մուսուլման գյուղացիների հարաբերությունները և մշտապես առկա էր նրանց զինված ընդհարման վտանգը:

Սովի վտանգի կապակցությամբ 1918 թ. մայիսի 12-ին Շահումյանը «Бакинский рабочий» *թերթում հրապարակած «Սովի ոսկրոտ ձեռքը և մութ ագիտացիան» հոդվածում նշում էր, որ Բաքվի պրոլետարիատը պարենային ծանր ճգնաժամ է ապրում և բանվորները սովի են մատնված: Դրանից էլ օգտվում են մութ ուժերը՝ մենշևիկները, որոնք տարածում են պրովոկացիոն լոզունգներ և «քաղցած ու ջղայնացած բանվորներին գրգռում են իրենց ընտրովի կազմակերպությունների դեմ, սովետական իշխանության դեմ»:*

Մենշևիկներն իրենց քարոզներով մեղադրում էին բոլշևիկներին, որ խոստացած հացը չեն տալիս բանվորներին, սարքել են քաղաքացիական պատերազմ և թափում են բանվորների արյունը, որ նրանք «քաղաքացիական պատերազմի անվան տակ ազգային կոտորած սարքեցին, նրանք պաշտպանում են հայերին և բնաջնջում են մուսուլմանական չքավորությանը»:

Շահումյանը վճռականորեն մերժում է մենշևիկների տարածած այս պրովոկացիոն լուրերը և նշում է, որ սովետական իշխանությունն ամեն ինչ անում է հաց ստանալու համար, «երբ սովետական կարմիր բանակն իր արյունը թափելով, փորձում է ճանապարհներ բանալ հաց փոխադրելու համար, անխիղճ պրովոկատորները քաղցած բանվորներին գրգռում են սովետի դեմ»:

Ինչ վերաբերում էր բոլշևիկներին քաղաքացիական պատերազմ հրահրելու մեջ մենշևիկների մեղադրանքին, ապա Շահումյանը նշում էր, թե «որքան

անամոթություն է հարկավոր թափված արյան պատասխանատվությունը սովետական իշխանության վրա գցելու համար»:

Եթե սովետական իշխանությունը հակահարված չտար մուսավաթականների «վայրենի դիվիզիայի» հարձակումներին, ապա զոհերը տասնապատիկ չատ կլինեին, հանքերն ու գործարանները կավերվեին և դրանց հետևանքով սովետական իշխանությունը «ընդմիշտ թաղված կլիներ և Բաքու քաղաքն այժմ Ադրբեջանական խանության մայրաքաղաքը կլիներ»:

Շահումյանը նշում էր, որ պրովոկատորները ռուս բանվորների և հայերի միջև ազգային երկպառակություն են սերմանում և «մուսուլմանական հակահեղափոխականների դեմ սովետական իշխանության համար մղված պայքարում հայերի մասնակցությունը նրանք բացատրում են բացառապես ազգային թշնամությամբ և բոլորին ներշնչում են, թե Բաքվում չի եղել սովետական իշխանության համար մղվող պայքար, այլ եղել է միայն հայերի կողմից մուսուլմանների դեմ ուղված կոտորած»:

Շահումյանը ցույց էր տալիս, որ այդ պրովոկացիոն լուրերն ու կեղծիքը տարածող մենշևիկները ծառայում են մուսուլմանական հակահեղափոխությանը և աշխատում են բանվորների մեջ թշնամանք ու պառակտում սերմանել:

Պարենային ճգնաժամը կանցնի, գրում էր Շահումյանը և հույս էր հայտնում, որ Հյուսիսային Կովկասի, Աստրախանի, Ցարիցինի սովետական կազմակերպությունների օգնությամբ հացը կգա Բաքու, և «այն ժամանակ վայ պրովոկատորներին, որոնք դժվար լոսեին այդպես հանցագործաբար խարում էին քաղցած մասսաներին, որոնք ուզում էին քաղցած բանվորներին օգտագործել բանվորական սովետական իշխանության դեմ պայքարելու համար» (**Ստ. Շահումյան**, նույն տեղը, հ. չորրորդ, էջ 248-251):

Այստեղ հարկ եմ համարում նշել, որ այժմ, մեր օրերում, ադրբեջանական կեղծարարները հարություն են տվել մենշևիկների պրովոկացիոն լուրերին և դրանք ներկայացնում որպես ճշմարտություն, նպատակ հետապնդելով անվանարկել Շահումյանին և նրա ղեկավարած Բաքվի Ժողկոմսովետին:

1918 թ. մայիսի 14-ին Կենտրոնական Ժողկոմսովետին ուղարկած նամակում Շահումյանն անդրադարձել է Բաքվում տիրող պարենային վիճակին և նշել է, որ դա «սաստիկ դժվարացնում է մեր դրությունը...: Սովի և թուրքական երկյուղի հողի վրա ուժեղ խմորում կա մասսաների մեջ»:

Նույն նամակում Շահումյանը հայտնում էր, որ Լենքորանի գավառում տպավում է մոտ 10 միլիոն փութ ցորենի և գարու բերքահավաք: Հավաք-

ված ցորենը կբերվի Բաքու և սովի վտանգը որոշակիորեն կմեղմացվի (**Ստ. Շահումյան**, նույն տեղը, հ. չորրորդ, էջ 252-254):

ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻ ՄԱՍԻՆ

Սովետական իշխանության հակառակորդները ձգտում էին պարենային ճգնաժամը կապել իշխանության հարցի հետ և փորձում էին հանքագործարանային կոմիտեների կոնֆերանսի մայիսի 15-ի նիստում այդ երկուսը քննարկել միասին, նպատակ ունենալով բանվորական զանգվածների մոտ անցկացնել իրենց գիծը:

Սակայն գիտակից բանվորները մերժում են այդ փորձը և Շահումյանին հրավիրում են զեկուցելու իշխանության գործունեության մասին: Մայիսի 16-ին Շահումյանը հանդես է գալիս այդ կոնֆերանսում և հանգամանորեն խոսում է իշխանության մասին:

Շահումյանը հիշեցնում է, որ ընտրվելուց հետո երկու անգամ՝ Բալախանիում և Կասպիական նավատորմիղի ծովայինների ընդհանուր ժողովում հանդես է եկել հաշվետվությամբ:

Ինչպես այս զեկուցումը, այնպես էլ նախորդ էջերում նշված նրա մյուս ելույթներն ու հոդվածները վկայում են, որ Շահումյանը, ի տարբերություն իր շատ ժամանակակից գործիչներից, խորապես տիրապետում էր մարքսիստական աշխարհայացքին ու տեսությանը, և Անդրկովկասում դրանք կիրառում էր ստեղծագործաբար, ելնելով տվյալ պահին թելադրված անհրաժեշտությունից:

«Իշխանության հարցը,-ասել է նա,- ամեն մի հեղափոխության հիմնական հարցն է: Ունենալով տասնհինգամյա փորձ, մենք կարող ենք հայացք նետել դեպի ետ՝ անցած ուղու վրա»:

Շահումյանը ներկայացրել է 1905 թ. հեղափոխության առաջին օրից գոյություն ունեցող մենշևիկների և բոլշևիկների տեսակետն այն մասին, թե ում պետք է պատկանի իշխանությունը:

Մենշևիկներն այն տեսակետն էին արտահայտում, ըստ որի՝ «ռուսական հեղափոխությունը բուրժուական հեղափոխություն է, ուստի իշխանությունը պետք է պատկանի բուրժուազիային»: Մենշևիկները դեմ էին ժամանակավոր հեղափոխական կառավարության մեջ սոցիալիստների մասնակցությանը և գտնում էին, որ բանվորները պետք է «դրսից» գործադուլների միջոցով, այդ կառավարության վրա ճնշում գործադրելու միջոցով պաշտպանեն իրենց դասակարգային շահերը:

«Իսկ բոլշևիկները,- ընդգծում էր Շահումյանը,- պնդում էին հակառակը, այսինքն՝ մեր հեղափոխության զարգացման առանձնահատուկ պայմաններից ելնելով, Ռուսաստանում իշխանությունը պետք է պատկանի պրոլետարիատին ու չքավոր գյուղացիությանը»:

Այնուհետև Շահումյանը նշում էր, որ իշխանության հարցը նորից սրվել է 1917 թ. հեղափոխության ժամանակ: Նա ցույց է տալիս, թե ինչպես մենշևիկներն ու էսէռները իշխանությունը Պետրոգրադում հանձնել են բուրժուազիային, բանվորների պատգամավորների սովետին զրկելով ակտիվ գործողություններից և, ի վերջո, առաջ են քաշել կոալիցիոն կառավարության մասին տեսակետը:

Իրականում ոչ մի կոալիցիա չկար և 7-8 ամսվա ընթացքում մենշևիկներն ու աջ էսէռները «մոլորեցնում ու ծվատում էին երկիրը»: Շահումյանը ցույց էր տալիս, որ սոցիալիստները մտնելով բուրժուական կառավարության մեջ, կոծկում էին բուրժուական քաղաքականությունը, որը շարունակվել է մինչև 1917 թ. հոկտեմբեր:

Շահումյանը բացատրում էր Լենինի ապրիլյան թեզիսների իմաստը և ընդգծում է դրանց կենսագործման արդյունքով սովետական իշխանություն հաստատելու նշանակությունը:

Զեկուցման զգալի հատված Շահումյանը նվիրել է Բաքվում իշխանության հարցին: Նա հիշեցրել է, որ հեղափոխության առաջին օրերին Բաքվի բանվորների պատգամավորների սովետի կողքին գոյություն ուներ Հասարակական կազմակերպությունների գործադիր կոմիտե, որի մեջ բոլշևիկները պահանջում էին, որ Բաքվի սովետն ունենա ձայների մեծամասնություն: Մենշևիկներն առարկել են դրան, պատճառաբանելով, թե ձայների մեծամասնության կարիք չկա, որովհետև Հասարակական կազմակերպությունների գործադիր կոմիտեն հաշվի է առնում սովետի հայտարարությունները:

Քանի որ Հասարակական կազմակերպությունների գործադիր կոմիտեն մենշևիկների, աջ էսէռների ու դաշնակցականների աջակցությամբ պայքարում էր Բաքվի սովետի դեմ, բոլշևիկները պահանջում են վերացնել այդ գործադիր կոմիտեն:

Հակասությունները ավելի են սրվում, երբ բանվորների պատգամավորների սովետը հայտարարում է Բաքվում իշխանությունը իրեն պատկանելու մասին: Չհամաձայնվելով դրան, տոնալով բուրժուազիայից ֆինանսական աջակցություն, մենշևիկներն ու աջ էսէռները իբրև բողոքի նշան, դուրս են գալիս Բաքվի սովետից և ստեղծում են Հասարակական անվտանգության կոմիտե:

Սակայն Բաքվի պրոլետարիատը ցույց է տալիս իր հաստատակամությունը և ճնշում է էսէռա-մենշևիկյան դիտավորությունը: Դրա արդյունքում վերոհիշյալ կուսակցությունների վերնախավը ներկայացնող անձինք հարակղված են լինում վերադառնալ Բաքվի սովետ:

«Այժմ,- նշել է Շահումյանը,- սովետական իշխանությունը հաղթանակել է: Հիմա ոչ ոք չի համարձակվի հանդես գալ սովետական իշխանության սկզբունքների, գաղափարների դեմ»:

Երբ ավարտվում է քաղաքացիական պատերազմը ու սովետական իշխանությունը դառնում է իսկական, կազմվում է ժողովրդական կոմիսարների սովետը: Իշխանությունը ձեռք բերելուց հետո զգալիորեն ընդլայնվում է սովետի աշխատանքը: Այլևս գործադիր կոմիտեներով անկարելի էր լիակատար կերպով իրականացնել իշխանությունը: Ուստի անհրաժեշտություն էր դառնում ստեղծել կառավարություն, որի կոմիսարներից յուրաքանչյուրը պետք է կարգավորեր գործը և ընդուներ հարկավոր միջոցառումները:

«Այժմ,- հայտնում էր Շահումյանը,- քննադատություն է գնում արդեն ոչ թե սովետական իշխանության, այլ այն կազմակերպությունների ձևերի դեմ, այն անձանց դեմ, որոնք կանգնած են առանձին պաստերում: Ամենից առաջ ես կինդրեի ձեզ հաշվի առնել այն, թե ում դեմ է գնում քննադատությունը: Եթե անձանց դեմ է, ապա դա հեշտ վերացվող գործ է: Իշխանությունն ընտրովի է, ուստի բանվորների ներկայացուցիչները կարող են ընտրել ուրիշներին: Եթե խոսքը գնում է անձնավորությունների մասին, ապա թող ասեն, որ այսինչ անձը իր տեղում չէ, կորչի՝ նա, բա՞նտ նստեցնել նրան, եթե հանցանք է կատարել»:

Բայց պարզվում է, որ իրականությունն այդպես չէր: Կատարվում էր մութ խաղ: Մի կողմից քննադատներն ակնարկում էին առանձին անձանց մասին, մյուս կողմից պայքարում էին Բաքվի սովետի գործադիր կոմիտեի դեմ:

Շահումյանը նշում է, որ սովետական իշխանության հակառակորդների մութ աշխատանքը խափանելու համար հարկավոր է զանազանել առանձին անձանց քննադատելը սովետական իշխանության դեմ պայքարելուց: Նա հիշեցնում է, որ ժամանակին էսէռամենշևիկյան ու մյուս քննադատներին զգուշացրել է, և այժմ էլ հարկ է համարում կրկնել, որ «զուր եք մտածում, թե ամեն մի քննադատություն կարող է հաղթանակի հասցնել: Եթե ձեզ տարպալել են, ապա այդ նշանակում է, որ քննադատությունը եղել է ճիշտ: Բայց եթե դուք գնաք դեպի մասսաները և ագիտացիա անեք ընդդեմ նոր, սովե-

տական իշխանության, դուք ձեր վիզը կկոտրեք»:

Վերոհիշյալ զեկուցման մեջ Շահումյանն անդրադարձել է պարենային հարցին, որն ամեն մի իշխանության համար ծանր հարց է:

«Եթե,- ասել է Շահումյանը,- մարդ սոված է, նրա բանականությունը վատ է գործում, և այն ժամանակ կարելի է օգտագործել սովը, որպեսզի իրենց բանաձևերն անցկացնեն սովետական իշխանության դեմ: Հենց այդպես էլ վարվում են սովետական իշխանության թշնամիները»:

Շահումյանը հիշեցնում էր Նոբելի գործարանի միտինգը, որտեղ հավաքված սոված մարդիկ մեղադրանքներ էին նետում բոլշևիկների հասցեին և ասել է. «Այդ մեղադրանքներն ինձ չվիրավորեցին: Ինձ չվիրավորեցին և անձամբ իմ դեմ կատարված թշնամական հարձակումները»:

Բայց երբ միտինգի մասնակիցները հարցնում են, թե «ե՞րբ հաց կլինի», իսկույն հանդես են գալիս մենշևիկները և հայտարարում են, որ «բոլշևիկները փակել են իրենց թերթը, բոլշևիկները վռնդել են Հիմնադիր ժողովը» և սոված մասսան բարձրացնում է ձեռքերը՝ չիմանալով, թե ինչի համար են փակել այդ թերթը»:

Մենշևիկների գործադրած այս միջոցները Շահումյանը համարում է անարժան և ընդգծում է հետևյալը. «Կարելի է ժամանակավորապես զարգացնել ագիտացիան, բայց սովետական իշխանության դեմ հաղթանակ տարնելը խրթին գործ է, քանի որ սովետական իշխանությունը հիմք ունի հենց բանվորական մասսաների մեջ»:

Շահումյանը հաստատ համոզմունք էր հայտնում, որ պարենային ճգնաժամի անցնելուց հետո սովետական իշխանության հակառակորդների վիճակն ավելի կվատանա և ավել շատ կխայտառակվեն:

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՄԱՍԻՆ

Վերոհիշյալ զեկուցման մեջ Շահումյանը զգալի տեղ է հատկացրել քաղաքացիական պատերազմի հարցին, «քանի որ այն ոչ միայն տալիս է անցյալի քաղաքականության գնահատականը, այլ նաև՝ ապագայի քաղաքականության»:

«Սովետական իշխանությանը,- ընդգծել է Շահումյանը,- անհարժեշտ էր Բաքվում ստեղծել ռեալ զինված ուժ»: Նա հիշեցնում է, որ երբ Կովկասյան բանակի համագումարից հետո կազմված բանակի երկրամասային սովետը տեղափոխվում է Բաքու, բոլշևիկները որոշում են սովետական իշխանության համար ստեղծել ռեալ հիմք: Երեք ամսվա ընթացքում Կովկասյան բանակի

ռազմահեղափոխական կոմիտեի կատարած եռանդուն աշխատանքով Բաքվում ստեղծվում է ռեալ զինված ուժ: Դրա շնորհիվ սովետական իշխանությունը հնարավորություն է ստանում իրենից ուժ ներկայացնել:

«Դուք գիտեք,- հիշեցնում է Շահումյանը,- որ «մուսավաթ» կուսակցությունը սովետական իշխանության դեմ ապստամբություն էր նախապատրաստել ոչ թե այն բանի համար, որ սովետական իշխանությունը ինքնորոշման նրան հաճելի չէր, այլ այն բանի համար, որ մուսավաթականները պլան ունեին Բաքուն հայտարարելու ինքնավար Ադրբեջանի մայրաքաղաք»:

«Շամխորյան պատմությունը,- շարունակել է Շահումյանը,- երբ մուսավաթականները կոտորեցին հազարավոր ռուս զինվորների, արդեն ցույց տվեց նրանց ձգտումները: Նրանք իրենց հրոսակախմբերը զինեցին, որպեսզի վռնդեն Բաքվի սովետը և հայտարարեն Ադրբեջանի ինքնավարություն: Այդ կապակցությամբ նրանք ծրագրել էին Կովկասն անջատել Ռուսաստանից և հռչակել թուրքական պրոտեկտորատ»:

Շահումյանը պատմում է, որ մուսավաթականները հայտարարում էին. «Տեսնենք, դուք հենվեցեք զորքի (ռուսական) վրա, բայց զորքերը կգնան: Երբ կմեկնեն վերջին էշելոնները, ձեզ ոչ մի ուժ չի լինի»:

Շահումյանը հիշեցնում է Բաքվի քաղաքային դումայի անդամ, մուսավաթական լիդերներից մեկի իրեն ուղղված խոսքերը. «Ես անկեղծ մարդ եմ և ձեզ ուղղակի ասում եմ, որ առաջին հերթին պարապետի վրա կկախենք ձեզ, պարոն Շահումյան»: «Դա դատարկ խոսք չէր,- ասում է Շահումյանը,- դրանում ամփոփվում էր նրանց քաղաքականությունը վերջին ուժերի (ռուսական զորքերի) հեռանալու և Անդրկովկասյան կոմիսարիատի աջակցության հաշվարկը»:

Երբ մուսավաթականները Բաքու են ուղարկում սպաներին, Բաքվի սովետը ձերբակալում է նրանց շտաբը, զինաթափ է արվում նաև Բաքու մտած «վայրենի դիվիզիայի» մի մասը: Մուսավաթականները Բաքվի սովետին ներկայացնում են վերջնագիր՝ պահանջելով, եթե մինչև ժամը 6-ը ձերբակալվածները չազատվեն, ապա կսկսեն ռազմական գործողություններ: Եվ այն ժամանակ, երբ Բաքվի սովետի ներկայացուցիչները բանակցություններ էին վարում, մուսավաթականները չսպասելով դրանց ավարտին, ժամը 5-ին կրակ են բացում կարմիր գվարդիայի հեծելազորային ջոկատի վրա:

Պատմելով այս ամենի մասին, Շահումյանը բերում է Մարքսի խոսքերը՝ «Ամենալավ տակտիկան ոչ թե սպասելն է, այլ գործելը» և ընդգծում է, որ

ռազմահեղափոխական կոմիտեի շնորհիվ ստեղծված ուժը հնարավորություն է տվել ոչ միայն պաշտպանվել, այլև անցնել հարձակման:

Դիմելով ներկաների բանականությանը, Շահումյանն ասել է. «Եթե դուք դիմեցիք քննադատում եք, ապա դուք գիտե՞ք, թե ինչ կլիներ, եթե իշխանությունը պատկաներ մենշևիկներին: Մեր բոլորին կկոտորեին»:

Սովետական իշխանության տակտիկան գինված հակահարված տալու մեջ է: Եվ եթե այդ հակահարվածը չտրվեր, ապա, ինչպես նշել է Շահումյանը, «անհամեմատ ավելի շատ արյուն կհոսեր: Քաղաքի ամբողջ ոչ մուսուլմանական մասը կոչնչացվեր»:

«Երբ,- ընդգծել է Շահումյանը,- մեզ վրա հարձակվում են հակահեղափոխականները, ապա նա, ով հանդես է գալիս քաղաքացիական պատերազմի դեմ, հակահեղափոխության ծառան է: Նա աջակցում է մեր թշնամիներին, նրանց հնարավորություն է տալիս ոչնչացնելու հեղափոխության բոլոր նվաճումները: Այդպիսին է մեր տեսակետը: Այդ կարևոր է ոչ միայն անցյալի, այլև մոտակա ապագայի համար»:

Կովկասում հեղափոխություն է սկսվել բեկերի ու խանների դեմ, որոնք ձգտում են գրավել Բաքուն: Ստեղծված ծանր պայմանները թելադրում են պայքարել դրա դեմ: Այս ամենի մասին խոսելով, Շահումյանը հարցնում է Բաքվի պրոլետարիատի ներկայացուցիչներին՝ նրանց ձեռնտո՞ւ է արդյոք, քաղաքացիական պատերազմից հրաժարվելը, թե շարունակել զենքով պաշտպանել սովետական իշխանությունը, «Բաքվի պրոլետարիատի, Ռուսաստանի և Հեղափոխության համար պաշտպանել Բաքու քաղաքը»:

«Եթե,- շարունակել է Շահումյանը,- դուք ասում եք՝ «Կորչի՝ քաղաքացիական պատերազմը», դա նշանակում է, որ պետք է զենքը վայր դնել: Այդ դեպքում պետք է հետևողական լինել և ասել. «Անհապաղ թողնել Բաքու քաղաքը և ով Կովկասի անջատման կամ թուրքական տիրակալության կողմնակից չէ, պետք է հեռացվի Բաքվից»: Մեր խելացի հակառակորդները թող բացահայտ ասեն. «Կորչի՝ քաղաքացիական պատերազմը», հետևաբար՝ «Կորչի՝ կարմիր բանակը», թեպետև նրանք իրենք էլ են մտնում կարմիր բանակի մեջ, որպեսզի այնտեղ ագիտացիա տանեն»:

Շահումյանն անդրադարձել է բուրժուական թերթերի փակման կապակցությամբ ընդդիմադիր ուժերի քննադատությանը, թե սովետական իշխանությունը ռեպրեսիաներ է կիրառում մամուլի ազատության դեմ: Նա հատկապես նշում է մենշևիկների «Наш голос» թերթի մասին, որը ձգտում էր քաղաքացիական պատերազմում չեչտել ազգայնական տարրը և ընդգծում

է, որ «իրեն հարգող ամեն իշխանություն պետք է փակեր այդ թերթը»:

Իր ելույթի վերջում Շահումյանն ասել է. «Ես հայտարարում եմ. մեր առջև կանգնած է իշխանության հարցը: Իշխանությունը պետք է պատկանի պրոլետարիատին և չքավոր գյուղացիությանը՝ ամբողջ Ռուսաստանում: Իշխանությունը պետք է լինի սովետական: Սովետը պետք է լինի լիակատար տեր: Ներկայումս այդ իշխանությունը հաղթանակել է: Հարկավոր է իշխանությունը հետևողականորեն անցկացնել նաև տնտեսական կյանքում: Անհրաժեշտ է սահմանափակել շահագործումն ու սպեկուլյացիան, սոցիալական միջոցառումներ իրականացնել ազգայնացման և այլ հարցերի բնագավառում»:

Շահումյանն ընդգծել է հետևյալը.

Առաջին. Սովետական իշխանությունն առանձին անձանց իշխանությունը չէ: Չի կարելի նրան ասել՝ «Կառավարեցե՛ք, իսկ մենք միայն կպահանջենք ձեզանից»:

Երկրորդ. Սովետական իշխանությունն այնպիսի իշխանություն է, որտեղ յուրաքանչյուր բանվոր պետք է իրեն զգա նրա մի մասը: Բանվորների պատգամավորների սովետի յուրաքանչյուր անդամ պետք է իր վրա նայի ոչ միայն որպես օրենսդիրի, որը նիստի է գալիս և ձեռք բարձրացնում: Նա պետք է հսկի, որպեսզի բոլոր որոշումները կյանքում կենսագործվեն:

Երրորդ. Սովետական իշխանությունը մասսայական իշխանություն է: Նա կարող է պահպանվել միայն սովետի շուրջը միավորված բոլոր բանվորների ստեղծագործական ինքնագործունեության դեպքում:

Չորրորդ. Եթե մասսաների մեջ լինի այդպիսի ակտիվություն, այն ժամանակ իշխանությունը կլինի իսկապես բանվորական իշխանություն, որը կաշխատի աշխատավորների օգտին, այն ժամանակ միայն սովետական իշխանության սկզբունքը կհաղթանակի, բանվորագյուղացիական հեղափոխության շահերը վեր կդասվեն և հեղափոխությունը կհասցվի մինչև վերջ՝ հանուն բանվորների ու գյուղացիների ընդհանուր բարօրության (**Ստ. Շահումյան**, նույն տեղը, հ. չորրորդ, էջ 255-270):

«...ՄԵՆՇԵՎԻԿՆԵՐԸ ՄԵՂԱԴՐՈՂԻՑ ԴԱՌՆՈՒՄ ԵՆ ՄԵՂԱԴՐՅԱԼ»

Շահումյանի զեկուցումից հետո ծավալվում է լայն քննարկում: Հատկապես ակտիվություն է դրսևորում մենշևիկների ներկայացուցիչ Սադովսկին, սովետական իշխանությանը մեղադրելով ռեպրեսիաներ կիրառելու համար:

Եզրափակման խոսքով հանդես եկած Շահումյանը նշել է, թե մենշևիկները փորձում էին բոլշևիկների գլխավորած սովետական իշխանությանը մեղադրել: Բայց փաստերի ծանրության տակ մենշևիկները մեղադրողից դառնում են մեղադրյալ:

Անդրադառնալով այն դժգոհությանը, թե կառավարությունը կազմվել է միակողմանիությամբ, Շահումյանը նշել է հետևյալը. «Ժողովրդական կոմիսարների սովետում ներկայացուցչությունից զրկված են «դաշնակցություն» և աջ էսէռների կուսակցությունները, բայց այլ կերպ վարվել չէր կարելի: Նոր կառավարությունը հրավիրվեց սովետների կողմից և, հետևապես, պետք է կյանքում կիրառեր նրա քաղաքականությունը: Իսկ դրա համար հարկավոր էին սովետական իշխանության իսկապես հետևողական կողմնակիցներ, հետևողական ինտերնացիոնալիստներ, ինչպիսին դժբախտաբար, դեռ իրենց ցույց չեն տվել ո՛չ դաշնակները, ո՛չ աջ էսէռները»:

Երբ այդ կուսակցությունները իրենց ցույց կտան որպես սովետական իշխանության քաղաքականության անկեղծ կողմնակիցներ, ապա «նրանց առջև կբացվի մուտքը կառավարության կազմի մեջ»: Շահումյանը հիշեցնում է, որ այժմ կառավարության կազմի մեջ են հրավիրվում այդ կուսակցությունների առանձին ներկայացուցիչներ, որոնք սովետական իշխանությունը ճանաչելու գործում դրսևորել են իրենց եռանդն ու հետևողականությունը:

*Շահումյանը խնդիր էր դնում՝ «ամրապնդել սովետական իշխանությունը և վճռական հակահարված տալ նրա բոլոր հակառակորդներին, ինչպիսի լոզունգներով էլ նրանք քողարկվեն» (**Ստ. Շահումյան**, նույն տեղը, հ. չորրորդ, էջ 271-273):*

Հանքագործարանային կոմիտեների կոնֆերանսը 1918 թ. մայիսի 16-ին ընդունում է Շահումյանի գրած բանաձևը, որով հայտարարվում էր հետևյալը՝

***Առաջին**. Միակ իշխանությունը, որը կարող է պաշտպանություն և ճանաչում գտնել բանվորական լայն զանգվածներում, սովետական իշխանությունն է, այսինքն՝ հենց բանվորների և գյուղացիական չքավորության իշխանությունը:*

***Երկրորդ**. Կոնֆերանսն ընդունում է, որ սովետական իշխանությունը Բաքվում վարել է ճիշտ քաղաքականություն, մեկ ամսվա ընթացքում նարխապատրաստելով մի ռեալ զինված ուժ, որի շնորհիվ նա Բաքվի պրոլետարիատին, նավթարդյունաբերությունն ու սովետական իշխանությունը փրկեց լիակատար ոչնչացումից և բնաջնջումից:*

***Երրորդ**. Կոնֆերանսն ամբողջապես հավանություն է տալիս սովետի տնտեսական քաղաքականությանը և կոչ է անում այսուհետև ևս պայքար մղել բուրժուազիայի տիրապետությունը ոչնչացնելու համար, բարելավել բանվորների և քաղաքային չքավորության դրությունը, եռանդուն կերպով պայքարել սպեկուլյացիայի, կաշառակերության և մյուս հասարակական խոցերի դեմ:*

***Չորրորդ**. Կոնֆերանսը, դատապարտելով մութ ուժերի և սովետական իշխանության թշնամիների ու մենշևիկների կուսակցության քաղաքականությունը, որոնք ուզում էին պարենային ճգնաժամն օգտագործել սովետական իշխանության դեմ պայքարելու համար, բոլոր բանվորներին կոչ է անում էլ ավելի սերտորեն համախմբվել իրենց մարմինների շուրջ և կազմակերպված մասսայական ինքնագործունեության միջոցով էլ ավելի առաջ մղել հեղափոխությունը՝ ի շահ ամբողջ Ռուսաստանում տարածվող պրոլետարիատի և գյուղացիական չքավորության (**Ստ. Շահումյան**, նույն տեղը, հ. չորրորդ, էջ 274-275):*

ԺՈՂԿՈՄՍՈՎԵՏԻ ՁԵՌՆԱՐԿԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ

Բաքվի Ժողկոմսովետը Շահումյանի գլխավորությամբ եռանդուն միջոցներ էր կիրառում պարենային ճգնաժամը հաղթահարելու, բնակչությանն ու զորամասերին հացով ապահովելու համար:

Այդ նպատակին էր ուղղված նաև Շահումյանի և պարենային դիրեկտորիայի անդամների 1918 թ. մայիսի 17-ի դիմումը պարսիկ քաղաքացիներին: Այդ դիմումի մեջ նշվում էր, որ խախտվել է Ռուսաստանի և Պարսկաստանի միջև ավանդական ապրանքափոխանակությունը, ոչնչի են հավասարվել նախկինում եղած աշխույժ առևտրական հարաբերությունները:

Այժմ, ինչպես նշվում է դիմումի մեջ, եկել է ժամանակը վերջ դնելու ստեղծված վիճակին, վերականգնել ու կարգավորել խախտված հարաբերությունները, որը իր վրա էր վերցնում Բաքվի սովետի պարենավորման դիրեկ-

տորիան:

Պարսկական կողմին առաջարկվում էր, որ առանց միջնորդների, անմիջականորեն ռուսական պետական հիմնարկների հետ կնքվեն առևտրական գործարքներ: Բաքվի սովետը պարտավորվում էր պարսկական կողմին մատակարարել նավթ, մետաղ, կտորեղեն, շաքար և դրանց փոխարեն Պարսկաստանից ստանալ կենսամթերք:

Պարսկական կողմին առաջարկվում էր կատարել պարզ ապրանքափոխանակություն առանց դրամի մասնակցության, անմիջականորեն ապրանքն ապրանքի դիմաց: Առաջարկվում էր նաև, որ ռուսական ապրանքը հանձնելուց անմիջապես հետո պետք է բեռնվի պարսկական ապրանքը:

Ներկայացնելով իր առևտրական քաղաքականության այս հիմունքները, Բաքվի սովետը վստահություն էր հայտնում, որ կվերանան շատ թյուրիմացություններ և ավելորդ ծախսեր, շատ ժամանակ կխնայվի, եթե պարսկական կողմն ընդուներ առաջարկվող ծրագիրը (**Ստ. Շահումյան**, նույն տեղը, հ. չորրորդ, էջ 276-278):

Մայիսի 29-ին Ժողկոմսովետն արձակում է հրամանագիր Լենքորանի, Ջավաթի գավառներում և նրանց հարող շրջաններում բերքահավաքը կազմակերպելու մասին, ընդգծելով, որ դրանով սովետական իշխանությունը մեծ հույսեր է կապում պարենային ճգնաժամը հաղթահարելու հետ (**Ստ. Շահումյան**, նույն տեղը, հ. չորրորդ, էջ 316):

Բաքվի ժողկոմսովետը միջոցներ է ձեռնարկում պետական եկամտահարկի մուծումը կարգավորելու համար, այդ նպատակով մայիսի 17-ին հրապարակելով համապատասխան դեկրետ: Մայիսի 19-ին ժողկոմսովետը դեկրետով արգելում է բամբակի մասնավոր գործարքներ (գնում, վաճառում, դրավադրում և այլն) կատարելը:

Մայիսի 22-ին Ժողկոմսովետն ընդունում է դեկրետ հողի ընդերքն ազգայնացնելու մասին: Դեկրետը սահմանում էր. «Բաքվի շրջանում հողերի ամբողջ ընդերքը, որտեղ նավթի և օզոկերիտի հանույթ կամ նավթի և օզոկերիտի հետախուզություն է կատարվում, որոնք մինչև այժմ մասնավոր սեփականության իրավունքով պատկանել են մասնավոր անձանց, մասնավոր ընկերություններին, ինչպես նաև պետական հասարակություններին, անկախ այն բանից, թե իրենց՝ տերերի կողմից են մշակվել, թե վարձակալների կողմից, այսուհետև դառնում են պետական լիակատար սեփականություն»:

Վերանայվում են նաև մինչև 1917 թ. Հոկտեմբերյան հեղափոխությունը նավթաբեր հողերի վարձակալության մասին պետության հետ կնքված բոլոր պայմանագրերը (**Ստ. Շահումյան**, նույն տեղը, հ. չորրորդ, էջ 296-297):

Մայիսի 23-ին Ժողկոմսովետի որոշմամբ նախօրոք հայտարարված երկամսյա զորահավաքի ժամկետը երկարացվում է մինչև վեց ամիս և նշվում է, որ «կարմիր բանակ մտնող անձինք հոժարակամ պարտավորվում են նրա շարքերում մնալու նույնպես վեց ամիս, ընդհանուր հիմունքներով» (**Ստ. Շահումյան**, նույն տեղը, հ. չորրորդ, էջ 299):

Մայիսի 25-ին Ժողկոմսովետի ընդունած դեկրետով միջոցներ են ձեռնարկվում մաքսատների աշխատանքը կարգավորելու համար (**Ստ. Շահումյան**, նույն տեղը, հ. չորրորդ, էջ 299):

Մայիսի 28-ին Ժողկոմսովետի հրամանով տեղամասային, ենթաշրջանային, տնային և գործարանային բոլոր կոմիտեներին հանձնարարվում է 3 օրվա ընթացքում զորահավաքի հանձնաժողովին տեղեկություններ տալ իրենց տարածքում ապրող հասուկ զորքերի սպաների ու զինվորների մասին: (**Ստ. Շահումյան**, նույն տեղը, հ. չորրորդ, էջ 315):

«ՔԱՂԱՔԱԿԱՆ ԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՌՈՒՍԱՍՏԱՆՈՒՄ ԵՎ ԱՆԴՐԿՈՎԿԱՍՈՒՄ»

Ստեղծված դժվարին պայմաններում կենսական նշանակություն ունեցող պրոբլեմները լուծելու հետ միասին Շահումյանը շարունակում էր մշտապես հանդիպել բանվորների, գյուղացիների հետ, հանդես գալ նրանց առջև և պարզաբանել սովետական իշխանության խնդիրներից բխած քաղաքականության էությունը: Նա նաև նամակներ է ուղարկում Սովետական Ռուսաստանի ղեկավարներին՝ նկարագրելով Բաքվի սովետական իշխանության առջև կանգնած խնդիրների և դրանք լուծելու դժվարությունների մասին:

1918 թ. մայիսի 19-ին Շահումյանը հանդես է գալիս «Քաղաքական դրությունը Ռուսաստանում և Անդրկովկասում» զեկուցմամբ, որը պահպանվել է լրագրային շարադրանքով («Бакинский рабочий», 21. 05. 1918.):

Խոսելով Ռուսաստանի քաղաքական դրության մասին, Շահումյանը նշել է, որ հարկավոր է ելնել հետևյալից, որ այդ դրությունը «առաջացել է ոչ թե բանվորագյուղացիական կառավարության ստորագրած հաշտությունից, այլ, ինչպես և ինքը՝ հեղափոխությունը, հանդիսացել է համաշխարհային իմպերիալիզմի շահերի համար մղվող քառամյա համաշխարհային սպանդի

հետևանք, այն հանգամանքից, որ հեղափոխությունը ծնունդ է առել պատերազմի բոցերում և այդ հեղափոխության ընթացքը կապված է պատերազմի հետ»:

Շահումյանը նշում է նաև, որ պատերազմի հետևանքով Ռուսաստանում տիրող քաոսայումն արագացրել է հեղափոխության գալուստը, սակայն այդ հեղափոխությունը բավական չէր համաշխարհային սպանդը դադարեցնելու համար:

«Միայն համաշխարհային հեղափոխությունը,- ընդգծում էր Շահումյանը,- որ կտապալեր համաշխարհային իմպերիալիզմը, կկարողանար պաշտպանել մեր հեղափոխության առաջադրած լոզունգները»:

Եվ Շահումյանը գտնում էր, որ Ռուսաստանում կատարված հեղափոխության կրած և ապագայում կրելիք դժվարությունների պատճառները «թաքնված են այն բանում, որ մենք չունենք այդ համաշխարհային հեղափոխությունը»:

«Երբ տեղի ունեցավ Հոկտեմբերյան հեղաշրջումը և Ռուսաստանն առավելագույն ջանքերը գործադրեց,- բացատրել է Շահումյանը,- մենք տեսանք, որ համաշխարհային հեղափոխությունը ստիպում է իրեն սպասել: Մենք մեր մենակության փաստի առջև կանգնեցինք և հարկադրված եղանք Գերմանիայի թելադրած հաշտության պայմանները ստորագրել»:

Այնուհետև Շահումյանը, նկատի ունենալով, որ աջ սոցիալիստական մամուլը սուր կերպով քննադատում է բոլշևիկյան կուսակցությանը գերմանացիների հետ հաշտություն կնքելու համար, հիշեցնում է, որ բոլշևիկները նրանց պատասխանեցին այն բանով, «ինչով մենք էինք նրանց քննադատում այն ժամանակ, երբ այդ պաշտպանողական կուսակցությունները կանգնած էին իշխանության գլուխ. մենք ասում էինք՝ ոչ մի քաղաքական կուսակցություն չի կարող փոխել այն ծանր վիճակը, որ ստեղծվում է հանգամանքների պայմանական ընթացքով, բայց պատասխանատու կուսակցությունների գործողությունների քաղաքականությունը ոչ թե պետք է վատթարացնի, այլ պետք է բարելավի այդ վիճակը»

Այժմ, երբ այդ կուսակցությունները քննադատում են բոլշևիկներին, չեն տեսնում «իրենց պահանջները տիրաբար թելադրող օբյեկտիվ պայմանները, բայց, այնուամենայնիվ, թող նրանք ապացուցեն, որ մեր քաղաքականությունը վատթարացրել է վիճակը»:

Վերոհիշյալ կուսակցությունների քննադատությունը հաջողություն չունի, ինչի ապացույցը Շահումյանը համարում էր սովետական իշխանության

ամրապնդումը:

Շահումյանը նշում էր, որ բանվորները, գյուղացիները հասկացել են, որ ստեղծված պայմաններում Բրեստի հաշտությունն անհնար էր չստորագրել, և միաժամանակ ընդգծում էր, որ այդ հաշտությունը չէր կարող վերջ տալ համաշխարհային սպանդին: «Միայն քաղաքացիական պատերազմի եկը,- ասում էր նա,- համաշխարհային մասշտաբով կարող է հարցը լուծել»:

Այսպիսով Շահումյանը իր զեկուցման մեջ համաշխարհային հեղափոխության մասին խոսելիս, որոշակիորեն ընդգծում էր, որ այդ հեղափոխության հաղթանակի միջոցով հնարավոր է վերջ տալ համաշխարհային պատերազմին: Եվ Շահումյանի հույսերը համաշխարհային մասշտաբով հեղափոխության հաղթանակն ինքնանպատակ չէր, վերացական գաղափար չէր, այլ ուներ կոնկրետ խնդիր՝ ժողովուրդներին փրկել ամեն ինչ ոչնչացնող պատերազմից:

Բայց դրա հետ, իհարկե, կար նաև հետևյալ կարևոր հանգամանքը: Շահումյանը համոզված էր, որ միջազգային մասշտաբով հեղափոխության հաղթանակը պատերազմը վերացնելու հետ միասին կնպաստեր սովետական իշխանության ամրապնդմանը:

Եվ նրանք, ովքեր չեն հասկանում, ավելի հիշտը, գիտակցաբար չեն ընդունում Շահումյանի տեսակետը, նրան մեղադրում են որպես պերմանենտ հեղափոխության կողմնակից և նույնիսկ, չափազանցության մեջ ընկնելով, Շահումյանին համարում են Տրոցկու կողմնակից և դա հիմնավորում են մանկամիտ բացատրությամբ: Այդպես է վարվել, օրինակ, նախորդ էջերում հիշատակված աղրբեջանցի կեղծարար Է. Իսմայիլովը, որը Շահումյանի տրոցկիստ լինելը բացատրում է նրանով, թե Շահումյանը իր աշխատություններում, նամակներում ու ելույթներում երբեք չի հիշատակել Տրոցկու անունը և նրա հասցեին որևէ քննադատական խոսք չի ասել:

Ի գիտություն Իսմայիլովի և մյուս կեղծարարների, հարկ եմ համարում նշել հետևյալը.

Առաջին. *Շահումյանը մշտապես, լինելով Լենինի կողմնակիցը, բացի մեկ դեպքից, ինչի մասին խոսվել է նախորդ էջերում, երբեք չի առարկել Լենինին, միշտ համաձայն է եղել նրա տեսակետներին ու պաշտպանել է դրանք:*

Իր բոլոր տեսական աշխատությունների մեջ Շահումյանի արտահայտած պրոնունքները որևէ առնչություն չունեն տրոցկիզմի հետ, որովհետև Շահումյանը հաստատակամորեն կանգնած է եղել լենինյան դիրքերում:

Երկրորդ. *Շահումյանի ամբողջ նամակագրությունը վկայում է, որ նա մշ-*

տապես կապ է պահել այն գործիչների հետ (Ստալին, Օրջոնիկիձե և ուրիշներ), որոնք լավ գիտեին Անդրկովկասի պրոբլեմները: Իսկ Տրոցկին հեռու էր և լավագույն դեպքում մակերեսային պատկերացում ուներ Անդրկովկասի մասին:

Շահումյանը իր զեկուցման զգալի հատվածը նվիրել է Անդրկովկասին: Նա հիշեցնում է, որ Ծերետելին, Չխեիձեն և մյուս մենշևիկները, որոնք իրենց պասիվության և հեղափոխական քայլերից հրաժարվելու պատճառով դուրս էին շպրտվել Ռուսաստանի հեղափոխությունից, իրենց այդ քաղաքականությունը տեղափոխել են Անդրկովկաս:

Եվ որպես մենշևիկների կողմից դրսևորված պասիվ քաղաքականության արդյունք, Շահումյանը հիշատակում է, որ իրենց բեկերի ու խանների դեմ մուսավատների գյուղացիների ապստամբության ժամանակ մենշևիկները նպաստեցին մուսավաթականներին ուժեղանալ, զավթել իշխանությունը և գյուղացիներին նորից գցել իրենց ստրկացնողների լծի տակ:

Այնուհետև Շահումյանը բուրժուակալվածատիրական հոգեբանությանն ավելի մոտ կանգնած մենշևիկների այդպիսի վարքագծի արդյունք է համարում «Հետագա ամեն ինչ՝ անկախության հայտարարությունը, Թուրքիայի բոլոր պայմաններն ընդունելը՝ այդ բոլորը կանխորոշեցին ճակատային զորամասերի առաջին զինաթափումը»:

Շահումյանը փաստում է, որ ճանաչելով Անդրկովկասի անջատումը, առանց կռվի Կարսը հանձնելով, մենշևիկները 1918 թ. մայիսի 11-ին Բաթումի քաղաքում Թուրքիայի հետ բանակցություններ են վարում, «որոնք գլխավորապես նկատի ունեն Բաքուն»:

«Գերմանիան և Թուրքիան,- նշել է Շահումյանը,- շահագրգռված են այն բանում, որ Բաքուն անկախ Անդրկովկասի մասը կազմի և այժմ Բաթումում բանակցությունները վարվում են այն բանի շուրջը, որպեսզի կամ սեյմը Բաքվում մուսավաթներին պահպանելու «միջոցներ ձեռք առնի» կամ թե կարգ հաստատելու համար ճանապարհ տա գերմանա-թուրքական զորքերին»:

Անդրադառնալով Անդրկովկասում Գերմանիայի և Անգլիայի մրցակցությանը, Շահումյանը հայտնում էր, որ «Գերմանիան ու Թուրքիան շտապում են շարժվելու դեպի Բաքու, այդպես և անգլիացիների կողմից տեղադրվում ջանքեր են գործադրվում, որպեսզի կտրեն նրանց ճանապարհը»:

Զեկուցման վերջում Շահումյանը նշում էր, որ ստեղծված պայմանների թելադրանքով Բաքվի սովետը կվարի պաշտպանողական կամ հարձակողական քաղաքականություն: Երկու դեպքում էլ հեղափոխական Բաքուն

կանգնած է կարևոր իրադարձությունների առջև: Նա ընդգծում էր. «Ունենալով հավատարիմ ուժեր և օժանդակություն, մենք կարող ենք իշխանությունը մեր ձեռքում պահել և Անդրկովկասի ներքին ուժերի օժանդակությամբ մենք ոչ միայն կպահենք այն, այլև տարածելով այդ իշխանությունը, կկարողանանք տապալել հակահեղափոխության բունը, Ելիզավետպոլը և ձեռք մեկնել Թիֆլիսի պրոլետարիատին» (**Ստ. Շահումյան**, նույն տեղը, հ. չորրորդ, էջ 283-289):

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԼՈՒՄԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

1918 թ. մայիսի 21-ին Շահումյանը ելույթ է ունենում Բաքվի շրջանային սովետի նիստում, որի մասին կարելի է պատկերացում կազմել մեզ հասած լրագրային հաշվետվությունից:

Շահումյանը նախ նշել է, որ ժողովրդական լուսավորության գերատեսչությունը եղել է ցարական կառավարության ամենատեսակցիոն գերատեսչություններից մեկը և ընդգծում է, որ դա «միանգամայն հասկանալի է, դպրոցը, որտեղ ձևավորվում են մատաղ հոգիները, որտեղ դաստիարակվում են սերունդները, հարկավոր էր ցարական կառավարությանը, որպեսզի նա այդ դպրոցը պահեր իր ձեռքում ու դաստիարակեր այնպիսի մարդիկ, որոնք պետք էին ցարական կառավարությանը»:

Փետրվարյան հեղափոխությունից հետո դպրոցի դրությունը չի լավացել, այլ շատ տեսակետներից ավելի է վատթարացել:

Միակ արժեքավորը, շարունակում է հիշել Շահումյանը, այն է եղել, որ իր սովորած տարիներին «դպրոցը զտնե ինտերնացիոնալ էր, որ ազգային նեխած, ինքնապարփակված միջավայրի փոխարեն, մենք, այդ դպրոցից դուրս եկածներս հանդիպում էինք ուրիշ ազգությունների երեխաների հետ և համակվում էինք ինտերնացիոնալիզմի ոգով, այսինքն՝ ամենաարժեքավորն այն ամենից, ինչ պետք է լինի երեխաների դաստիարակության մեջ»:

«Երբ ես դիտում էի,- վերհիշում էր Շահումյանը,- թե ինչ դրության մեջ են ընկել իմ երեխաները, ես սարսափում էի, համեմատելով այն իմ վիճակի հետ, երբ ես ինքս աշակերտ էի: Միակ «բարելավումը» այն էր, որ մենք ստացանք ազգային դպրոց՝ ինտերնացիոնալ դպրոցի փոխարեն»:

Այնուհետև Շահումյանն ասել է, որ երբ իր երեխաները վերադառնալով դպրոցից, «սարսափով պատմում էին, որ իրենց կտրել են ուրիշ ազգությունների իրենց ընկերներից, տարել առանձին դասարան ու ստիպել անցածը սովորել ազգային լեզվով»:

Սա համարելով միջնակարգ դպրոցում կատարված միակ ռեֆորմը, Շահումյանը նշել է, որ Հոկտեմբերյան Հեղափոխությունից հետո հարկավոր էր ժողովրդական լուսավորության բնագավառում չհաշտվել «ոչ ցարական և ոչ էլ կղերական-պաշտպանողական դպրոցի հետ»:

Բաքվում նոր դպրոցի ստեղծման գործում սովետական իշխանությունը հանդիպում է սաբոտաժի «ամենառեակցիոն մանկավարժական» կազմի կողմից: «Այն ուսուցիչները,- ընդգծում է Շահումյանը,- որոնք իրենց երևակայության մեջ իրենց համարում են սերմնդների դաստիարակիչներ, երկրի «աղը», Բաքվում ամենառեակցիոն տարրեր հանդիսացան»: Շահումյանը նրանց անվանում էր «հին ռեժիմի իդեական սպասարկուներ, կապիտալի իդեական սպասարկուներ»: Այդպիսիների նկատմամբ պետք է վճռական միջոցներ ձեռնարկվեն:

Այնուհետև Շահումյանը պատմում էր, որ երբ ժողովրդական լուսավորության կոմիսար Կոլեսնիկովան հրավիրել է բոլոր մանկավարժներին և նրանց սովետական իշխանության անունից հայտարարել է, թե ովքեր ցանկանում են աշխատել նոր պայմաններով, պետք է դիմում ներկայացնեն: Մանկավարժները սկսում են աղմկել, ասելով, որ դա վիրավորում է իրենց ինքնասիրությունը և թույլ չեն տա իրենց հետ այդպես վարվել:

«Հիշեցեք,-ասել է Շահումյանը,- ցարական ժամանակ, երբ որևէ հրաման էր հրատարակվում, նրանք չինովնիկների առջև սողում էին ծնկաչոք, իսկ հիմա սովետի ներկայացուցչին դիմում տալը վիրավորական են համարում»:

Շահումյանը հույս էր հայտնում, որ ընկեր բանվորներն այդ ուսուցիչներին պետք է հայտարարեն. «Եթե դուք սողում էիք ցարական չինովնիկների առջև, ապա բարեհաճեցեք հիմա հաշվի նստել նորին մեծություն պրոլետարիատի կամքի ներկայացուցչուհու հետ»:

*Շահումյանը ներկաներին կոչ էր անում միասին «պայքարել նոր դպրոցի համար» (**Ստ. Շահումյան**, նույն տեղը, հ. չորրորդ, էջ 292-295):*

«ՀԱՂԹԱՆԱԿԻ ԳՐԱՎԱԿԱՆԸ»

1918 թ. մայիսի 24-ին, երբ Բաթումում շարունակվում էին Թուրքերի հետ բանակցությունները, Շահումյանը «Известия Бакинского Совета» *թերթում հրապարակած «Հաղթանակի գրավականը» հոդվածում նշում էր, որ արդեն փաստ է դարձել Բաքվի պրոլետարիատի ընդհարումը հակահեղափոխության հետ:*

Եթե առաջ Բաքվի պրոլետարիատը կռվում էր միայն «Անդրկովկասի կալվածատերերի դասի և նրանց զինված թեկուզ թուրք-գերմանական աղբյուրից օգնական ուժ և դրամական օգնություն ստացող բանդաների դեմ», ապա «այսօր,- ընդգծում էր Շահումյանը,- և հետագայում մենք բախվելու ենք ոչ միայն այդ բանդաների հետ: Նրանց հետ մեր դեմ են գործելու ոչ միայն սեյմի կանոնավոր զորքերը, այլ, որ կարևոր է, նաև գերմանական ու թուրքական զորքերը, կազմակերպված համաշխարհային իմպերիալիզմը: Վերջինը հնարավորություն ունի ամեն մի շատ կարճ ժամկետում մեր դեմ ուղղելու իր զորքերը»:

Չնայած, որ այս ամենը կբարդացներ դրությունը, բայց, այնուամենայնիվ, Շահումյանը գտնում էր, որ դա չէր ապահովի թշնամու հաղթանակը Բաքվի սովետական իշխանության դեմ: Նա նաև նշում էր, որ չի բացառվում սովետական իշխանության հաղթանակը:

Շահումյանը նկատի ուներ թշնամու պարտության հետևյալ շանսերը.

Մի կողմից իմպերիալիստական փոխադարձ մրցումը Անգլիայի և Գերմանա-Թուրքիայի միջև Պարսկաստանում անխուսափելի ընդհարումը «նվազեցնում է թշնամիների դիմադրության ուժը, և զգալի չափով հեշտացնում մեր դրությունը, ավելացնում է մեր հաղթանակի շանսերը»:

Մյուս շանսը Շահումյանը համարում էր այն, որ Բաքվի սովետական իշխանության կողմն էր «Ռուսաստանի ամբողջ պրոլետարիատը, ամբողջ հեղափոխական Հյուսիսային Կովկասը և ամբողջ անդրկովկասյան դեմոկրատիան, բոլոր գիտակից բանվորներն ու գյուղացիները»:

Շահումյանը հաղթանակի հասնելու գործում կարևորում էր հեղափոխական ուժերի համարձակությունն ու վճռականությունը: Բայց դրանք բավական չէին: «Առանց բանվորական լայն մասսաների և բոլոր հեղափոխական ակտիվ տարրերի եռանդուն աջակցության,- ընդգծում էր Շահումյանը,- սովետական իշխանությունն անզոր կլիներ ու անհաջողության կդատապարտվեր, որքան էլ նա վճռականորեն գործեր»:

Շահումյանը սովետական իշխանության հաղթանակի հարցը հասարակ քաղաքական հարց չի համարում: Դա իշխանությունը մի կուսակցությունից մյուսին անցնելու, կառավարության կազմի փոփոխության հարց չէ:

Սովետական իշխանության հաղթանակի հարցի «լուծումից է կախված բանվոր դասակարգի և ամբողջ չքավոր գյուղացիության գոյությունն այդ բառի լայն իմաստով»: Իսկ սովետական իշխանության պարտությունը «ոչ միայն բանվոր դասակարգին կզրկի անխուսափելի սովից ու կատաստրոֆից իրեն փրկելու, իր դրությունը բարելավելու և ամեն մի շահագործումից վերջնականապես ազատագրվելու հնարավորությունից: Այդ պարտության հետևանքը կլինի բանվոր դասակարգի մասսայական կոտորածը, նրա առա-

վել առաջավոր տարրերի գնդակահարումը»:

Այս սարսափելի հեռանկարը Շահումյանը չի համարում երևակայության պտուղ և նշում է, որ դա հաստատվում է ոչ միայն ֆրանսիական հեղափոխության ամբողջ պատմությամբ, այլև Ուկրաինայի և Ֆինլանդիայի կենդանի օրինակով: Շահումյանը հատկապես չեշտում է Ուկրաինայի օրինակը, որտեղ գերմանական զորքերը միանալով ներքին հակահեղափոխական ուժերի հետ գնդակահարում են ոչ միայն բոլշևիկներին, այլև նրանց հետ առնչություն չունեցող բանվորներին:

«Կյանքի այդ դառը դասերից հետո,- գրում էր Շահումյանը,- դժվար չէ երևակայել, թե ինչպիսի պատկեր կներկայացնի մեր երկրամասը հեղափոխության դեմ ունեցած առեղծությունից գազանացած բեկերի, թուրքական ֆեոդալների ու գերմանական յունկերների հաղթանակի դեպքում»:

Ստեղծված պայմաններում Շահումյանը բանվորներին կոչ էր անում ըմբռնել, որ «սովետական իշխանության գոյության ու հաղթանակի հարցը իրենց գոյության հարցն է»: Եվ բանվորները պետք է ցուցաբերեն մեծագույն սառնասրտություն ու հավատ: «Միայն բանվորների հեղափոխական կուվածությունն ու արտակարգ տոկունությունը կարող են մեր հաղթանակի հուսալի գրավականը լինել».- ընդգծում էր Շահումյանը:

*Հոդվածը Շահումյանն ավարտում էր հետևյալ խոսքերով. «Մեր հաստատ հաղթանակը ապահովել կարելի է միայն այն դեպքում, եթե մենք վճռական ու համարձակ լինենք քաղաքացիական պատերազմի ճակատում, մի կողմից, նույնպիսի վճռական քաղաքականություն վարենք հաստատված սոցիալական միջոցառումների կիրառման բնագավառում, սովետական իշխանության ու նրա սոցիալիստական քաղաքականության շուրջը համախմբելով ամբողջ չքավորությանը, բոլոր բանվորներին ու գյուղացիներին, մյուս կողմից» (**Ստ. Շահումյան**, նույն տեղը, հ. չորրորդ, էջ 305-308):*

ՍՈՒՍՈՒԼՄԱՆ ԳՅՈՒՂԱՑԻՆԵՐԻՆ ՀԱՍԱԽՄԲԵԼՈՒ ՀԱՄԱՐ

Բաքվի Ժողկոմսովետն անդուլ աշխատանք էր տանում գյուղացիությունը, մասնավորապես, մուսուլման չքավոր գյուղացիությանը իր շուրջը համախմբելու համար: Այդ նպատակով մի շարք գավառներում հրավիրվում են գյուղացիների պատգամավորների համագումարներ: Այդպիսի համագումար է հրավիրվել Շամախու գավառում, որտեղ 285 հազար գյուղացիների կողմից ընտրվել էր 299 պատգամավոր:

Բաքվի գավառում նույնպես եռանդուն աշխատանք էր տարվում և 1918 թ. մայիսի 26-28-ին հրավիրվում է գյուղացիական պատգամավորների սովետների առաջին համագումարը: Այդ համագումարին մասնակցում էր Բաքվի գավառում սովետական իշխանություն հաստատված գյուղերի 40 հազար գյուղացիների կողմից ընտրված 80 պատգամավոր:

Համագումարի բացման օրը երդիք է ունեցել Շահումյանը: Համագումարի պատգամավորներին Ժողկոմսովետի անունից ողջունելուց հետո, Շահումյանը հայտնել է, որ մինչև այդ համագումարը, Բաքվի սովետական կառավարության մեջ են եղել միայն բանվորները, իսկ այսօր «առաջին ուրախալի օրն է, այն օրը, երբ առաջին անգամ հավաքվել են գյուղացիների ընտրյալները, որպեսզի արտահայտեն իրենց կամքը և մասնակից լինեն իշխանությանը»:

Նկատելով, որ Բաքվի սովետը միակ «անկյունն է», որտեղ ընդլայնվում ու ամրապնդվում է սովետական իշխանությունը, Շահումյանը հույս էր հայտնում, որ Բաքվի սովետի աշխատանքը կտարածվի ամբողջ Անդրկովկասում, «կմիավորի բոլոր ազգությունների գյուղացիներին և դրա հետևանքով մեզ կտա բանվորագյուղացիական կառավարություն»:

Անդրադառնալով Անդրկովկասի մնացած մասում իր գոյությունը պահող բեկերի, խաների, հայ բուրժուազիայի իշխանությանը, Շահումյանը նշում է, որ այդ իշխանությունը չի վայելում գյուղացիական չքավորության վստահությունը և իրականության չեն համապատասխանում այդ իշխանության կողմնակիցների տարածած լուրերը, թե իբր պաշտպանում է չքավոր գյուղացիության շահերը: Հենց Ելիզավետպոլի նահանգում տեղի ունեցած ագրարային շարժումը բոլորովին հակառակն է ապացուցում:

Շահումյանը հիշեցնում էր, որ Ելիզավետպոլի նահանգի մուսուլման գյուղացիներն ասում էին, որ «իրենք իրենց կալվածատերերին, բեկերին ու խաներին իրենք սպանում են թուրքերի գալուց վախենալու պատճառով, որոնք բեկերի ու խաների շահերի պաշտպան կկանգնեն և գյուղացիների գրաված հողերը կվերադարձնեն նրանց, և այն ժամանակ բեկերն ու խաները դարձյալ կիշխեն գյուղացիների վրա»:

Շահումյանը խնդիր էր դնում՝ ուրքի հանել գյուղացիներին և նրանց ներգրավել սովետական իշխանության ընդհանուր թշնամիների դեմ պայքարում և Անդրկովկասում բանվորների և գյուղացիների միասնական կառավարություն ստեղծելու աշխատանքին:

Ինչպես իր բոլոր ելույթներում ու զեկուցումներում, այնպես էլ այս համագումարում Շահումյանը կարևորելով հայ և մուսուլման գյուղացիների փոխհարաբերությունները, նշում էր, որ նրանց միջև նկատվում է լիակատար մի-

աբանություն: Հայ և մուսուլման գյուղացիները գիտակցում էին, որ իրենց ընդհանուր թշնամին կալվածատերերն են:

«Եվ այն թշնամությունը,- ընդգծում էր Շահումյանը,- որի մասին խոսում են, ամենևին էլ չի բխում մասսաների առանձին տրամադրությունից, նրանց մեկը մյուսին չսիրելուց, այլ բեկերի, խաների ու հայ բուրժուազիայի սերմանած թշնամության հետևանք է հանդիսանում: Գյուղացիներն ինքնին, ինչ ազգության էլ որ պատկանեն, չեն կարող թշնամաբար վերաբերվել միմյանց, որովհետև ունեն ընդհանուր շահեր, ընդհանուր թշնամիներ»:

Եվ Շահումյանը սովետական իշխանության խնդիրն էր համարում բոլոր ազգությունների գյուղացիական մասսաներին միավորելը, որպեսզի նրանց դուրս բերի ընդհանուր թշնամու՝ կալվածատիրոջ դեմ: Շահումյանն ընդգծում էր, որ այդ միավորման հիմքի առաջին քարն է դրվում այս ժողովում:

Այնուհետև Շահումյանը խոսում է սովետական իշխանության համար մղվող պայքարում սպասվող նոր բարդությունների մասին և նշում է, որ նախկին կարգերը վերականգնելու, գյուղացիներին նորից իրենց ենթարկելու համար «բեկերն ու խաներն օգնության են կանչում Թուրքիային»:

Շահումյանը կոչ էր անում՝ չենթարկվել պրովոկացիոն ագիտացիային, «որը ձեր մեջ կսերմանի ազգային թշնամություն, մեկուսացում բանվոր դասակարգից»:

*Ելույթի վերջում Շահումյանը դիմել է մուսուլման գյուղացիների պատգամավորներին և ասել է հետևյալը. «Դուք պետք է միավորվեք բանվորների ու հայ գյուղացիների հետ՝ սովետական իշխանությունը պաշտպանելու համար: Որպես միասնական ընտանիք, որպես միասնական բանակ, դուք պետք է զինված ուժով պաշտպանեք բանվորագյուղացիական կառավարությունը բեկերից ու խաներից և նրանց պաշտպան Թուրքիայից» (**Ստ. Շահումյան**, նույն տեղը, հ. չորրորդ, էջ 310-313):*

ԱՆԴՐԿՈՎԿԱՍԻ ԴՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Բաքվի զավառի գյուղացիական պատգամավորների սովետների առաջին համագումարի ավարտից հետո, 1918 թ. մայիսի 29-ին հրավիրվում է այդ համագումարի և Բաքվի սովետի հանդիսավոր նիստը, որտեղ Անդրկովկասի դրության մասին զեկուցումով հանդես է եկել Շահումյանը:

Իր զեկուցման սկզբում Շահումյանը նշել է, թե սեյմի կողմից Անդրկովկասի անկախության հայտարարելը ինչ քաղաքականության հետևանք էր, և դա բացատրելու նպատակով նախ և առաջ տվել է «Մուսավաթ» կուսակ-

ցության բնութագիրը, ասելով, որ 1917 թ. հեղափոխության ընթացքում կազմակերպված այդ կուսակցությունը սկզբում Անդրկովկասի ամենաթույլ քաղաքական կուսակցությունն էր. որը չուներ «ոչ մի կազմակերպություն, ոչ մի կուսակցական ավանդույթ, ոչ մի իշխանություն, որը ոչ մի դեր չէր խաղում հեղափոխության սկզբում, երկրորդ տարվա սկզբին Անդրկովկասի ամենաուժեղ քաղաքական կուսակցությունը դուրս եկավ»:

Շահումյանը նշել է, որ «Մուսավաթը» ունեցել է երկու դաշնակից, որոնց շնորհիվ «այդ խղճուկ, չնչին կուսակցությունը դարձել է ամենաազդեցիկը, և վճռում է ամբողջ Անդրկովկասի բախտը»: Այդ դաշնակիցներն են եղել.

***Առաջին.** Մենշևիկների վրացական նացիոնալիստական կուսակցությունը:*

***Երկրորդ.** Մուսուլմանական դեմոկրատիայի տգիտությունն ու անկազմակերպվածությունը:*

«Եթե,- շարունակել է Շահումյանը,- տիրապետող կուսակցություններից՝ վրացական մենշևիկներից և հայկական «Դաշնակցություն» կուսակցությունից բաղկացած Անդրկովկասի կառավարությունը պաշտպաներ բանվորների և գյուղացիների շահերը և հեղափոխության պահապան կանգնած լիներ, ապա «Մուսավաթ» կուսակցությունը դեռ չծաղկած՝ կթառամեր»:

Եթե այդ կուսակցությունները լինեին իսկական հեղափոխական, սոցիալիստական կուսակցություններ, ապա նրանք կդաշնակցեին մուսուլմանական գյուղացիության հետ, որոնք բեկերի ու խաների դեմ հանդես կգային ինքնուրույն կերպով և իրենց բախտը կկապեին Բաքվի մուսուլմանական պրոլետարիատի հետ:

Եթե այդ կուսակցությունները լինեին իսկական հեղափոխական, սոցիալիստական կուսակցություններ, ապա, ինչպես նշում է Շահումյանը, հնարավոր էր ստեղծել ուժեղ ինտերնացիոնալ սովետական իշխանություն, որի համար «սարսափելի չէին լինի ոչ հայկական բուրժուազիան, ոչ էլ մուսուլմանական բեկերն ու խաները: Անդրկովկասի միավորված դեմոկրատիայի այդ իշխանության համար սարսափելի չէին լինի Թուրքական հրոսակները և գերմանական սպառնալիքները Բաթումի կողմից»:

«Սակայն,- ընդգծել է Շահումյանը,- Անդրկովկասում իշխանության գլուխ անցած ազնվական (վրաց մենշևիկների) և մանրբուրժուական (Հայ դաշնակցականների) կուսակցությունները բլոկի մեջ մտնելով «Մուսավաթի» հետ, ուժեղացրին բեկերին ու խաներին, զինեցին նրանց և հող պատրաստեցին Թուրքական տիրապետության համար»:

Շահումյանը եզրակացնում է, որ ի վերջո վրաց մենշևիկների, հայ դաշնակցականների և մուսավաթականների դաշինքը կործանեց հեղափոխությունն Անդրկովկասում:

Այնուհետև Շահումյանը հենվելով ստացված վերջին լուրերի վրա, ասում է, որ Անդրկովկասյան սեյմն Անդրկովկասի անկախությունը հայտարարել է «Մուսավաթի» պահանջով և Թուրքական իմպերիալիստների ճնշման տակ:

Նկատի ունենալով, որ սեյմի մեջ գտնվող կուսակցություններից ոչ մեկը չի կարողանա դիմադրել Անդրկովկասը գրավելու Թուրքական ցանկությանը, Շահումյանը հայտարարել է. «Ներկայումս կա երկու հնարավորություն՝ կամ սեյմի, մենշևիկների ու մուսավաթականների և **նրանց միջև կրած ու նրանց ետևում թաքնված դաշնակցականների** (ընդգծումն իմն է- Վ.Պ.) քաղաքականությունը կշարունակվի և Անդրկովկասը վերջնականապես կկտրի Ռուսաստանից ու կհանձնի Թուրքական բանդաների իշխանությանը կամ դրությունն արմատապես կփոխվի և նոր քաղաքականություն կսկսվի»:

Եվ այդ նոր քաղաքականությունը, համոզված ընդգծել է Շահումյանը, պետք է սկսի Բաքվի սովետը և ապագայում նրան միացած գյուղացիական պատգամավորների սովետը:

Նշելով, որ հայ, վրացի և մուսլման ժողովուրդների մեջ Անդրկովկասի իշխանությունների վարած քաղաքականությունը չի արժանանում բանվորական բոլոր մասսաների համակրանքին, Շահումյանը փաստել է, որ «Հայ մասսաները կենսականորեն շահագրգռված են այն բանում, որպեսզի քաղաքականությունն արմատապես փոխվի, որովհետև եթե այդ քաղաքականությունը շարունակվի, ապա հայ բնակչությանը գլխովին ոչնչացում է սպառնում, որը վիճակվեց նաև Թուրքահայաստանում»:

«Եթե նրանց (Հայերի) մեջ կան տատանվողներ,- շարունակել է Շահումյանը,- ապա դրանք բուրժուական տարրերն են, որոնք փողի օգնությամբ, հնազանդություն և նոր տերերին ծառայելու ցանկություն հայտնելով կփրկեն իրենց մորթին: Բայց ստեղծված իրադրության մեջ նույնիսկ նրանք էլ ենթարկվում են բնաջնջման վտանգին, ուստի և զարմանալի չէ, որ բուրժուական տարրերի մի մասը կոչում է նոր քաղաքականությունից, որը նրանց եկք է խոստանում ստեղծված կրիտիկական դրությունից»:

Հենվելով Թիֆլիսից ստացված լուրերի վրա, Շահումյանը հայտնում է, որ վրաց գյուղացիներն էլ ամենուրեք դուրս են գալիս սեյմի իշխանության դեմ և սպասում է շարժման ծավալմանը Բաքվի կողմից:

Մնում է մուսլմանական գյուղացիությունը, որը իր տգիտության պատճառով փոքր դեր չի խաղում որպես մուսավաթականների դաշնակից:

Շահումյանը ընթերցելով սեյմը ցրելու մասին հեռագիրը, ասում է, որ ստեղծվել են նոր պայմաններ, նոր դժվարություններ: Վրաստանի անկախության հռչակումը գնահատելով որպես նոր ավանտյուրա, նա հայտնել է. «Թուրքիան Անդրկովկասի կառավարությանը ուլտիմատում է ներկայացրել Նախիջևանի գավառը, բացի Օրդուբադից, Շարուր-Դարալագյազ գավառի կեսը, ամբողջ Սուրմալվի գավառը, Էջմիածին գավառը՝ Էջմիածին քաղաքով, Ալեքսանդրապոլի գավառի մեծ մասը՝ Ալեքսանդրապոլ քաղաքով և ամբողջ Ախալքալակի օկրուգը Թուրքիայի օգտին անջատելու մասին: Բացի դրանից, Թուրքիան պահանջում է զորքերի անարգել փոխադրումներ Անդրկովկասյան բոլոր երկաթուղիներով: Նրանց պետք է տրամադրվի նաև պարենավորում: Թուրքական նոտայում, ի միջի այլոց, մատնանշվում է, որ Բաքվում ու նրա մերձակայքում 100 հազար Թուրքեր ու մուսլմաններ սպասափներ են կրում իրենց հեղափոխականներ կոչող բանդիտներից»:

Այնուհետև տեղեկացնելով, որ Թուրքերը Անդրկովկասյան պատվիրակությանը, սկսած մայիսի 26-ի երեկոյան ժամը 6-ից, տվել են 72 ժամ իրենց նոտային պատասխանելու համար, Շահումյանը ծանոթացնում է Ժորդանիայի հաղորդման հետ, ըստ որի Բաթումի բանակցություններին մեկնած պատվիրակության մեջ գոյություն ունի երկու հոսանք:

Դրանցից մեկը հիմնվում է Բրեստի պայմանագրի վրա և ստանում է գերմանական պատվիրակության աջակցությունը:

Մյուս հոսանքն առաջարկում է Թուրքիային միացնել Անդրկովկասի ևս մի քանի մարզեր:

Կա նաև երրորդ հոսանքը, ավելացրել է Շահումյանը, որը էնվեր փաշայի գլխավորությամբ պահանջում է օկուպացնել ամբողջ Անդրկովկասը:

Շահումյանը նորից անդրադառնալով Վրաստանի անկախությանը, դա համարում է մենշևիկների նոր ոճրագործություն և ընդգծում. «Դա դավաճանության մի նոր փորձ է հանդեպ Վրաստանի հարևան հայ ժողովրդի,- աներևակայելի, անամոթ դավաճանություն»:

Վրաց մենշևիկների այդ դավաճանությունը հետևանք է այն բանի, որ Վրաստանին Գերմանիան առաջարկել է ընդունել իր հովանավորությունը, պայմանով, որ նա չխանգարի Թուրքիայի ու Գերմանիայի պլանների իրականացմանը:

Շահումյանը պարզաբանել է, որ Վրաստանի այդպիսի քաղաքականության արդյունքով կամ ամբողջ Հայաստանը կմիացվի Թուրքիային, Անդր-

կովկասի մնացած մասն էլ կրառնա ինքնավար Ադրբեջան, իսկ հետագայում նաև ամբողջ Անդրկովկասի օկուպացիա Թուրքիայի կողմից:

Եվ վրաց մենշևիկները թաքնվելով ինքնավար Վրաստանի հովանու տակ, ամբողջ միացյալ Անդրկովկասը թողնում են «թուրք-գերմանական հրոսակների կողոպտմանը»:

Այս ամբողջը ներկայացնելուց հետո Շահումյանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ հետագայի մասին: Նա հայտարարում է, որ Բաքվի սովետական իշխանությունն ամրապնդելով, հնարավորություն կունենա «եղբայրական ձեռք մեկնել Անդրկովկասի վրացի, հայ և մուսուլմանական գյուղացիությանը և նրանց հետ միասին թոթափել բեկերի, խանների լուծը և Անդրկովկասում ստեղծել սովետական իշխանություն»:

Շահումյանը իր ճառի զգալի մասը նվիրում է հայ ժողովրդին: «Այն կրիտիկական դրությունը,- ասել է նա,- որի մեջ դրվել են հայ մասսաները, դրդում է հայ գյուղացիներին զենքը ձեռքին դուրս գալ ու տապալել իրենց անամոթ ղեկավարներին՝ դաշնակցականներին, որոնք խայտառակ կերպով դավաճանել են նրանց»:

«Նրանց ձեռքին (դաշնակցականների),- նշել է Շահումյանը,- կար մոտ 30 հազար հայ ճակատային զինվոր: Այդ ուժով հրաշքներ կարելի էր գործել: Ես էլ չեմ խոսում զինված գյուղացիության հսկայական մասսայի մասին, որը մենակ կարող էր հաշիվ տեսնել թե՛ թուրքերի և թե՛ Անդրկովկասի բոլոր հակահեղափոխական ուժերի հետ»:

«Եթե,- շարունակել է Շահումյանը,- հայ գյուղացիների գլուխ անցած լիներին ոչ թե Չխենկելիից ու Ժորդանիայից ոչնչով չտարբերվող դավաճաններ, այլ իսկական հեղափոխականներ, ապա ժողովուրդը նման խայտառակ վիճակի չէր հասնի»:

Այնուհետև Շահումյանն անարգանքի սյունին է գամում մուսավաթականներին, որոնք գյուղացիության ուշադրությունը շեղելով ազգային շարժումից, նրանց վախեցնում էին հայկական վտանգի մասին, Բաքվի բոլշևիկների մասին, «որոնք միանալով հայերի հետ՝ իբր թե ուզում են ոչնչացնել ամբողջ մուսուլմանական բնակչությանը»:

Շահումյանը հույս էր հայտնում, որ մուսավաթականներին չի հաջողվի հայ-թուրքական կոտորած ծավալել այնպես, ինչպես դա փորձել էին 1918 թ. մարտ ամսին Բաքվում և որը կանխվել էր Բաքվի սովետի ջանքերով (**Ստ. Շահումյան**, նույն տեղը, հ. հինգերորդ, էջ 15-27):

Շահումյանի ճառի կապակցությամբ սկսվում է ակտիվ քննարկում:

Ելույթ ունեցողների մեծ մասը հավանություն են տալիս նրա եզրահանգումներին: Սակայն Շահումյանի դեմ հանդես են գալիս մենշևիկների ղեկավարներ Սաղովսկին և Այոլոն, ինչպես նաև Բաքվի դաշնակցականների լիդերներից Զառաֆյանը: Վերջինս փորձում էր արդարացնել Թիֆլիսում գտնվող իր կուսակիցներին և քննադատում է բոլշևիկներին Բրեստի խայտառակ պայմանագիրը ստորագրելու համար:

Իր եզրափակման խոսքում Շահումյանը պատասխանելով Զառաֆյանին, նշել է Բրեստի պայմանագիրը ստորագրելու օբյեկտիվ անխուսափելիությունը, երբ հաշվի առնելով անելանելի կացությունը, «զիջման ես գնում, ընդունում ես հաշտության ծանր պայմանները, գիտակցելով, որ այդ անխուսափելի է և ենթադրելով, որ ավելի լավ է ապագայի ելք ստեղծել քեզ համար, երբ իրադրությունը կփոխվի ու հեղափոխական տակտիկայի հաղթանակի հնարավորություն կտա»:

«Եվ ուրիշ բան է,- շարունակել է Շահումյանը,- երբ օբյեկտիվ դրությունը հնարավորություն է ստեղծում հեղափոխական տակտիկայի հաղթանակի համար, կուսակցությունը վարում է մի քաղաքականություն, որը կործանում է հեղափոխությունը»:

«Նրանք (դաշնակցականները) ասում են,- նշել է Շահումյանը,- որ հարկադրված էին կապիտուլյացիայի ենթարկվել թուրքերի առաջ, իսկ ես ասել եմ ու կրկնում եմ, որ օբյեկտիվ պայմաններն այնպես էին դասավորվել, որ Անդրկովկասում կար հսկայական զինված ուժ, որը պատրաստ էր դուրս գալու թույլ թուրքիայի դեմ»:

Շահումյանը մատնացույց էր անում, որ միայն հայկական ուժերը բավական էին թուրքերի հետ հաշիվ տեսնելու, և դիմելով Զառաֆյանին, ասել է. «Սակայն դուք մենշևիկների ու մուսավաթականների հետ կազմալուծեցիք զորքերի շարքերը, ոչ թե այն զորքերի, որոնք երեք տարվա պատերազմից հետո ծարավի էին հաշտության, այլ այն հայկական զորքերի, որոնք պատրաստ էին մեռնել և պահել իրենց երկիրը: Դուք այլասերեցիք այդ զորքերը՝ ահա որն է ձեր մեղքը, ահա, թե որն է ձեր ոճրագործությունը»:

Շարունակելով պատասխանել Զառաֆյանին, Շահումյանը նշում է, որ նույնիսկ այն ժամանակ, երբ Չխենկելին հաշվի չառնելով դաշնակցականներին, միանձնաբար հրամայում է Կարսը հանձնել թուրքերին, նրանք մեկ օրով հեռանում են սեյմից, իսկ մյուս օրը նրանք վերադառնում են և քվեարկում են հօգուտ Անդրկովկասի անջատման ու իրենց պատգամավորներին ուղարկում են Բաթում:

«Ձեր բարեկամները,- դիմում էր Զառաֆյանին Շահումյանը,- որոնց դուք պաշտպանության տակ եք առնում, պարոն Զառաֆյան, գերմանացիներին օգնության էին կանչում, որպեսզի ոչնչացնեն սովետական իշխանությունը Կովկասում»:

Պատասխանելով երկաթ ունեցողներից մեկի հարցադրմանը քաղաքացիական պատերազմի առաջին օրերին ազգային ընդհարման մասին, Շահումյանը նշել է, որ բոլոր ուժերը պետք է օգտագործել, որպեսզի քաղաքացիական պատերազմին «ոչ մի ազգային գունավորում չխառնենք, որպեսզի մուսլման և հայ գյուղացիությունը համախմբվեն սովետական իշխանության համար մղվող պայքարում»:

Միաժամանակ Շահումյանը մտավախություն էր հայտնում, որ «տասնյակ տարիների ընթացքում նացիոնալիստական ագիտացիայի միջոցով պահպանվող տգիտությունը կարող է պատճառ լինել, որ մուսուլմանական չքավորությունը ենթարկվի իր նացիոնալիստների ազդեցությանը»:

Եվ Շահումյանը խնդիր էր դնում՝ ոչ թե անջատել հայ և մուսուլմանական դեմոկրատիան, այլ «ավելի սերտորեն համախմբենք, վստահություն ներշնչենք, որպեսզի նրանք գիտակցեն իրենց շահերը և երես դարձնեն իրենց կեղեքողներից» (**Ստ. Շահումյան**, նույն տեղը, հ. հինգերորդ, էջ 28-36):

Շահումյանի զեկուցման կապակցությամբ միացյալ սովետների նիստը միաձայն (երեքի ձեռնպահությամբ) ընդունել է նրա առաջարկած բանաձևը, որով դատապարտվում էին Թիֆլիսի սեյմում նստած «անարգ բեկերն ու խաները և նրանց լակեյներ մենշևիկները, հայ նացիոնալիստ-դաշնակցականները», որոնք հանդգնել են հուչակել Անդրկովկասի անկախությունը, իսկ նրանց ներկայացուցիչները Բաթումում բանակցություններ են վարում Բաքվի սովետական իշխանության դեմ գերմանա-թուրքական զորքեր ուղարկելու մասին»:

Բանաձևը հայտարարում էր.

Առաջին. «Ինչպես Բաքվի դեմոկրատիան, այնպես էլ ամբողջ Անդրկովկասի բանվորներս ու գյուղացիներս ոչ մի դեպքում չենք հաշտվի Անդրկովկասը Հեղափոխական Ռուսաստանից անջատելու հետ և զենքը ձեռքներիս կկռվենք թուրք-գերմանական բանդաների դեմ և նրանց դաշնակիցների՝ դավաճաններ Չիխենկելիների, Չխեիդզե-Խոյսկիների և Ընկ. դեմ»:

Երկրորդ. «Ուզուրպատորների այդ խմբակի կնքած ոչ մի հաշտություն չի կարող ճանաչվել մեր կողմից»:

Բանաձևը Անդրկովկասյան սեյմի ցրումը և Անդրկովկասյան հանրապետության տրոհումը գնահատում էր որպես «նացիոնալիստական ավանտյուրա ու կայենական դավաճանություն թե՛ վրացական գյուղացիության և թե՛ առավել ևս հայ ու մուսուլման գյուղացիության և Անդրկովկասի ամբողջ պրոլետարիատի նկատմամբ»:

Բանաձևը վստահություն էր հայտնում, որ հեռու չէ այն ժամանակը, «երբ Բաքվի պրոլետարիատը և Բաքվի նահանգի գյուղացիները, արևմտյան Անդրկովկասից կտրված, եղբայրական դաշինքով կմիավորվեն վրացական և հայ գյուղացիության ու պրոլետարիատի հետ և զենքը ձեռքներին սովետական իշխանություն կհաստատեն Անդրկովկասում և կվերականգնեն միասնությունը մեծ հեղափոխական Ռուսաստանի հետ» (**Ստ. Շահումյան**, նույն տեղը, հ. հինգերորդ, էջ 38-40):

1918 թ. մայիսի 30-ին Լենինին ուղարկած հեռագրում Շահումյանը հաղորդել է վերոհիշյալ բանաձևի ամբողջ տեքստը (**նույն տեղը**):

ՆԱՄԱԿՆԵՐ ԼԵՆԻՆԻՆ ԵՎ ՍՏԱԼԻՆԻՆ

Այժմ կամենում եմ ընթերցողի ուշադրությանը ներկայացնել 1918 թ. ապրիլ-մայիս ամիսներին Շահումյանի այն նամակները, որոնք նա ուղարկել է Սովետական Ռուսաստանի ղեկավարությանը, նկատի ունենալով, որ դրանցում արծարծվել են Բաքվի սովետական իշխանության առջև ծառացած պրոբլեմներն ու դժվարությունները:

1918 թ. ապրիլի 13-ին Շահումյանը նամակով Սովետական Ռուսաստանի ժողկոմսովետին գրում էր այն տենդային վիճակի մասին, որի մեջ ապրում էին Բաքվում, և խնդրում էր Կասպից ծովի համար ուղարկել ականակիրներ և ռադիոկայան (**Ստ. Շահումյան**, նույն տեղը, հ. չորրորդ, էջ 199):

Ապրիլի 13-ին Շահումյանը Կենտրոնական ժողկոմսովետին ավելի հանգամանալից զեկուցագիր է ուղարկել, որի մասին արդեն խոսք է եղել նախորդ էջերում:

1918 թ. մայիսի 6-ին Մինչին Ասիայի արտակարգ կոմիսար Կոբոզևի միջոցով Շահումյանը ռադիոհեռագրով Կենտրոնական ժողկոմսովետին հաղորդել է սեյմի անդամ, դաշնակցության ներկայացուցիչ Ի. Կարճիկյանի ռադիոհեռագիրը: Կարճիկյանը հայտնում էր, որ հաշտություն կնքելու համար պատվիրակությունը մեկնել է Բաթում, և նշում էր, որ Թուրքիայի պայմանների մասին դեռևս ոչինչ հայտնի չէ:

Կարճիկյանը հայտնում էր, որ Կարսի պարետ Միշա Արզումանովին հանձնելու ժամանակ թուրքական կորպուսի պարետն անխուսափելի է համար-

լել Թուրքական զորքերն ուղարկել Բաքուն գրավելու և «Բաքվի շրջանում մուսուլմաններին փրկելու համար, եթե Անդրկովկասյան կառավարությանը կարճ ժամանակում չհաջողվի այդ անել»:

Կարճիկյանը տեղեկացնում էր նաև, որ Ելիզավետպոլի մուսուլմանական պատգամավորությունը հայտարարել է կառավարությանը, որ «ստիպված է դիմել Թուրքիային՝ Բաքվի և Շամախիի շրջանների մուսուլմանների փրկության համար»:

*Կարճիկյանի հեռագիրը հաղորդելուց հետո Շահումյանը նշում էր, որ անխուսափելի է համարում Բրեստի պայմանագրի խախտումը Թուրքերի կողմից և նրանց շարժումը դեպի Բաքու: «Անկախ այդ ռադիոհեռագրից,- գրում էր Շահումյանը,- դրությունը շատ լուրջ է», և անհրաժեշտ էր համարում «Բաքվի բազան ուժեղացնել հրամանատարական կազմով, սպառազինությամբ, զինամթերքով և պաշտպանության այլ միջոցներով» (**Ստ. Շահումյան**, նույն տեղը, հ. չորրորդ, էջ 244-245):*

Մայիսի 14-ին Կենտրոնական Ժողկոմսովետին Շահումյանը հայտնում էր, որ պայմանավորվածության համաձայն մի խումբ մարդկանց արդեն ուղարկել են Ռուսաստանի քաղաքներ ականակիրներ, ռադիոկայաններ և այլ տեսակի զինամթերք ձեռք բերելու համար և խնդրում էր նրանց շուտ ետ վերադարձնել:

*Այնուհետև Շահումյանը նկատի ունենալով Պարսկաստանում գտնվող ցարական բանակի գնդապետ Բիչերախովին, հայտնում էր, որ նրա մասին արդեն գրել է: (Շահումյանի այդ նամակը դեռևս չի հայտնաբերվել-Վ.Պ) (**Ստ. Շահումյան**, նույն տեղը, հ. չորրորդ, էջ 252-254):*

Մայիսի 20-ին Շահումյանը Լենինին ուղարկած հեռագրով հայտնում էր Կարճիկյանից ստացված տեղեկությունն այն մասին, որ Թուրքիան Բաթումում պահանջ է ներկայացրել թույլ տալ թուրքական զորքերին անցնել Ակբանդրապոլ-Ջուլֆա երկաթուղով Պարսկաստան, խոստանալով չխնայել բնակչությանը, հակառակ դեպքում՝ ուժով ճեղքել ու անցնել:

Կարճիկյանը հայտնում էր նաև, որ թուրքերը մայիսի 15-ին ռմբակոծելուց հետո գրավել են Ակբանդրապոլը: «Նկատի ունենալով,- ասված էր Կարճիկյանի հեռագրում,- որ Ակբանդրապոլի գավառում զորքերն ամբողջովին կազմալուծվել են և որ դիմադրության դեպքում Սուրմալուի, Էջմիածնի գավառների ամբողջ բնակչությունը սարսափելի աղետների կենթարկվի, մենք հարկադրված եղանք համաձայնել թուրքերի պահանջներին: Ակբանդրապոլի ամբողջ բնակչությունը հեռացել է և կուտակվել Փամբակի, Լոռի

*ռիի շրջանում, նույնպես և Սուրմալուի գավառի բնակչությունը: Այսօր տեղեկություններ ենք ստացել, որ Ախալքալակի բնակչությունը շարժվել է Ծալկայի կողմը: Բաթումում գտնվող պատվիրակությունը բողոք է ներկայացրել ուլտիմատումի առթիվ, բայց ուրիշների խորհրդով դա պատերազմի առիթ չի դարձրել, որոշել է շարունակել բանակցությունները» (**Ստ. Շահումյան**, նույն տեղը, հ. չորրորդ, էջ 290-291):*

*1918 թ. մայիսի 22-ին Շահումյանը Ստալինին ուղարկած հեռագրով հայտնում էր, որ թուրքերը գրավել են Ակբանդրապոլը և շարժվում են Ջուլֆայի ուղղությամբ, որ Ելիզավետպոլի բեկերը Բաքվի դեմ նոր արշավանք են սկսել, և գրում էր. «Շտապ հարկավոր է օգնություն մարդկանցով և զենքով: Անհրաժեշտ է փոխարինող: Բաքվի նահանգում և Դաղստանի մարզում սովետական իշխանություն կազմակերպելու համար ծախսեր են պահանջվում» (**Ստ. Շահումյան**, նույն տեղը, հ. չորրորդ, էջ 298-299):*

1918 թ. մայիսի 24-ին Կենտրոնական Ժողկոմսովետին ուղարկած ռադիոհեռագրով Շահումյանը բողոքում էր, որ արդեն 4-րդ ռադիոն է ուղարկում Տաշքենդի և Աստրախանի միջոցով, որոնք տեղ չեն հասել:

Շահումյանը նորից հիշեցնում էր Ակբանդրապոլը թուրքերի կողմից գրավելու և Ջուլֆայի ուղղությամբ առաջ շարժվելու մասին՝ Բաքուն գրավելու մտադրությամբ: Նա հայտնում էր, որ «Բաքու-Ջուլֆա ճանապարհը փակելու նպատակով ձեռնարկվել են որոշակի միջոցներ: Թիֆլիսից ստացվող անընդհատ հաղորդումներով տեղեկություն է ստացվում, որ Բաթումում թուրքերն ու գերմանացիները ներկայացրել են զորքերը Բաքու քաղաք տեղափոխելու գլխավոր պահանջը»:

Շահումյանը տեղեկացնում էր, որ մայիսի 23-ին Բաքվում գտնվող անգլիական հյուպատոսն այցելել է իրեն և հաղորդել է Թիֆլիսից ուղարկված լուրն այն մասին, որ Թիֆլիսում ուժեղանում է գերման-թուրքական կողմնորոշումը, որ նույնիսկ անգլիացիների ամենահավատարիմ բարեկամ հայերը երես են դարձնում նրանցից, որ անգլիացիներին մնում է Թիֆլիսից փախչել:

«Բաքվի դաշնակցականները,- շարունակել է Շահումյանը,- Թիֆլիսից հաղորդում են ստացել, թե իբր Բաթումում վրացիներին ավտոնոմիա են խոստանում՝ Վիլհելմի պրոտեկտորատով: Մնացած ամբողջ Անդրկովկասը պետք է ներկայացնի ավտոնոմ Ադրբեջան»:

Այնուհետև Շահումյանն անդրադարձել է Բաքվի սովետական իշխանության ռազմական նպատակների հարցին: Նա հայտնում էր, որ «մոտ ժամանվներս» պատրաստվում են գնալ Ելիզավետպոլի վրա, որ բռնել են Ելիզավետ-

պոլից հաղորդվող հեռագրական խոսակցություններ այն մասին, որ այնտեղից պատրաստվում է շարժում Բաքվի վրա 6 հազարանոց կանոնավոր զորքով:

«Եթե դրանք,- գրում էր Շահումյանը,- միայն Ելիզավետպոլի ուժերը լինեն, հեշտ կլինի նրանց ջարդել այստեղ ու անմիջապես մաքրել ճանապարհը մինչև Ելիզավետպոլ, իսկ գուցե նաև Թիֆլիս: Եթե նրանց ետևից գալու էլ լինեն Թուրքական զորքերը Բաթումից (և հարավից), համենայն դեպս մեզ անհրաժեշտ կլինի գրավել Եվլախի կամուրջը և պաշտպանական գիծը Քուռ ափի երկարությամբ»:

Շահումյանը նշում էր, որ Ելիզավետպոլից այն կողմ շարժվելը հարկավոր է հայերի ապստամբությունը բարձրացնելու համար, որը կազդի նաև վրացական գյուղացիության վրա և սեյմը կցրվի: Իսկ եթե այդ ապստամբությունը տեղի չունենա և Թուրքերը մինչև այդ կարողանան ամրացնել իրենց ձեռքում Վրաստանն ու Թիֆլիսը, այն ժամանակ Բաքվի սովետական իշխանությունը կմեկուսանա և ստիպված կլինի միայն Ապշերոնյան թերակղզին պաշտպանել:

Իսկ Ելիզավետպոլի վրա շարժումը հնարավոր չէր կազմակերպել անպատրաստ լինելու պատճառով, քանի որ Բաքվի սովետական ուժերը ցրված էին Բաքվի նահանգում և Դաղստանի մարզում: Դրա պատճառն այն էր, որ հրամանատարական կազմ չկար, չէին գտնվում հրամանատարներ նույնիսկ Ելիզավետպոլի ուղղությամբ շարժվող զորքերի համար: Այս կապակցությանբ Շահումյանը հիշեցնում էր, որ արդեն մի քանի անգամ գրել է Բիչերախովի մասին:

*Այնուհետև Շահումյանը հայտնում էր, որ Պետրովսկից Նանեյշվիլու գլխավորությամբ Բաքվին օգնության է գալիս 2000 մարդուց բաղկացած ջոկատը, որով հեշտանում է կապը Հյուսիսային Կովկասի հետ (**Ստ. Շահումյան**, նույն տեղը, հ. չորրորդ, էջ 300-304):*

*1918 թ. մայիսի 27-ին Լենինին ուղարկած հեռագրում Շահումյանը հայտնում էր, որ Բաքվի դրությունը վատանում է: Անդրկովկասյան կոմիսարիատը համաձայնություն է տվել թուրքական երկու գունդ դեպի Բաքու անցկացնելու մասին: Շահումյանը խնդիր էր դնում Բաքվին օգնություն կազմակերպել Աստրախանի վրայով, քանի որ Հյուսիսային Կովկասից օգնություն չէր սպասվում (**Ստ. Շահումյան**, նույն տեղը, հ. չորրորդ, էջ 314):*

«ՏՐԱՄԱԲԱՆԱԿԱՆ ՎԱԽՃԱՆ»

1918 թ. մայիսի 31-ին «Бакинский рабочий» *թերթում հրապարակված «Տրամաբանական վախճան» հոդվածում նշելով, որ Անդրկովկասում մենշևիկները կեղծավորաբար հայհոյելով բոլշևիկներին և զրպարտելով նրանց «դավաճանության», «Բրեստի հաշտության համար», դաշն կնքեցին գերմանական իմպերիալիզմի հետ, Շահումյանը գրում էր. «Մերժելով գերմանական գիշատիչների հետ կնքած Բրեստի «ամոթալի» հաշտությունը, փոխադարձ համաձայնության եկան և մի նոր պայմանագիր կնքեցին թշնամու առաջ կատարյալ ու խայտառակ կապիտուլյացիայի մասին» (**Ստ. Շահումյան**, նույն տեղը, հ. հինգերորդ, էջ 41-42):*

1918 թ. հունիսի 1-ին հրապարակվում է Շահումյանի գրած Բաքվի ժողկոմսովետի կոչն ուղղված «Անդրկովկասի բոլոր բանվորներին ու գյուղացիներին՝ առանց ազգի խտրության- մուսուլմաններին, հայերին, վրացիներին և ռուսներին Բաքվի պրոլետարիատից»:

Շահումյանը նշում էր, որ Անդրկովկասում ստեղծված սեյմի քաղաքականությունը Անդրկովկասն անջատել է Ռուսաստանից և երկիրը հանձնել է Թուրք նվաճողների ձեռքը, որ մենշևիկներն ու մուսավաթականները իրենց այդ քաղաքականությամբ դավաճանեցին Անդրկովկասի ժողովուրդներին և երկիրը վաճառեցին Թուրք փաշաներին:

Այնուհետև Շահումյանը գրում էր. «Ռուսաստանից Անդրկովկասն անջատելու խայտառակ ակտին մասնակցեցին նաև դաշնակցականները, իրենց դավաճանությունը բացատրելով հայ ժողովրդի ճակատագրի համար կրած երկյուղով: Այո՛, մենշևիկները վախենում էին մուսավաթականներից, դաշնակցականները վախենում էին մենշևիկներից, իսկ մուսավաթականները վախենում էին դաշնակցականներից:...Այդպես են իրենց արդարացնում նրանք բոլորը»:

*Շահումյանը հայտնում էր, որ Բաթումում գերմանա-թուրքական ավազակների հետ սկսված բանակցությունների ժամանակ առաջին խոսքը Բաքու քաղաքը գրավելն է վերաբերում: Դիմելով մուսուլման գյուղացիներին, Շահումյանը կոչ էր անում չհավատալ ստախոս մենշևիկներին ու մուսավաթականներին, որոնք հավատացնում են, «թե թուրքական զորքերին Բաքու են բերում մուսուլման գյուղացիությանը պաշտպանելու համար» (**Ստ. Շահումյան**, նույն տեղը, հ. հինգերորդ, էջ 45-49):*

«...ԲԱՔՈՒՆ ԿԴԱՌՆԱ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՕՐԻՆԱԿԵԼԻ ԿՈՄՈՒՆԱ»

Դեպքերը զարգանում էին արագությամբ: Բաքվի Ժողկոմսովետն անդուլ կերպով, արտաքին և ներքին դժվարությունները հաղթահարելու համար հսկայական աշխատանք տանելով առաջ էր շարժվում, կատարելով իր վրա ընկած պատասխանատվությունը:

Այդ շարքում առաջին, բարդ ու լայնամասշտաբ միջոցառումն եղել է Բաքվի նավթահանքերի ազգայնացումը, որի մասին Ժողկոմսովետը 1918 թ. հունիսի 2-ին հրապարակել է համապատասխան դեկրետ:

*Մինչ այդ, նավթարդյունաբերությունն ազգայնացնելու նպատակ ունենալու մասին Շահումյանը դեռևս 1918 թ. մարտի 13-ին Սովետական Ռուսաստանի Ժողկոմսովետին ուղարկած նամակում գրել էր, ընդգծելով հետևյալը. «Վաղուց որոշված է նավթային արդյունաբերության ազգայնացումը, որը պատրաստվում ենք իրագործել» (**Ստ. Շահումյան**, նույն տեղը, հ. չորրորդ, էջ 203):*

*Նույն հարցի մասին Շահումյանը խոսել է 1918 թ. ապրիլի 19-ին Բաքվի սովետի նիստում: «Մենք,- ասել է նա,- և հիմա և նախկինում կողմնակից ենք եղել ազգայնացմանը, և եթե կարելի է մեզ որևէ բանում հանդիմանել, ապա միայն նրանում, որ մենք ոչինչ չենք ձեռնարկել նավթարդյունաբերությունն ազգայնացնելու համար» (**Ստ. Շահումյան**, նույն տեղը, հ. չորրորդ, էջ 207):*

*1918 թ. ապրիլի 25-ին նոր կազմված Բաքվի Ժողկոմսովետի հռչակագրի մեջ Շահումյանը նորից դնում էր ամենամոտ ապագայում տնտեսության մյուս ճյուղերի, այդ թվում նավթարդյունաբերության ազգայնացման միջոցառումները կենսագործելու անհրաժեշտությունը (**Ստ. Շահումյան**, նույն տեղը, հ. չորրորդ, էջ 230):*

Նավթարդյունաբերության ազգայնացումն իրագործելու համար կատարվում է լուրջ և բազմակողմանի աշխատանք: Մշակվում են միջոցառումներ ձեռնարկությունների տրեստավորում կատարելու, նավթի գների առավելագույն չափը սահմանելու, բանվորների աշխատավարձը բարձրացնելու, նրանց նյութական շահագրգռվածությունը մեծացնելու համար:

Բնականաբար նավթարդյունաբերողները բոլոր միջոցներով ձգտում էին ձախողել ազգայնացումը: Բաքվի ժողկոմսովետը լի էր վճռականությամբ և չնայած նրան, որ կենտրոնական կառավարությունը չուներ որոշում ազգայնացման մասին, Ժողկոմսովետն ընդունում է դեկրետը, իսկ հունիսի 22-ին

*Բաքվի սովետում Շահումյանը հայտարարել է, որ «ոչ մի խոսք չի կարող լինել ազգայնացման հնարավոր վերացման մասին» (**Ստ. Շահումյան**, նույն տեղը, հ. հինգերորդ, էջ 139):*

1918 թ. հունիսի սկզբին Շահումյանը հանդես է եկել «Փարիզի կոմունայի մասին» դասախոսությամբ, որի լրագրային հաշվետվությունը հրապարակվել է 1918 թ. հունիսի 4-ին և 5-ին «Бакинский рабочий» թերթում: Շահումյանը հանգամանորեն շարադրել է Փարիզի կոմունայի պատմությունը, նշել է կոմունայի թույլ տված սխալները և ներկայացրել է Ռուսաստանում սովետական իշխանության ձեռնարկած առաջին քայլերը:

*Այնուհետև նա խոսել է Բաքվում սովետական իշխանության քաղաքականության մասին, ընդգծել է նավթային արդյունաբերության ազգայնացման նշանակությունը և ներկաներին չնորհավորել է «Բաքուն աշխատանքային կոմունա հայտարարելու առթիվ» (**Ստ. Շահումյան**, նույն տեղը, հ. հինգերորդ, էջ 50-58): Այս դասախոսությունից հետո էլ շրջանառության մեջ է մտնում «Բաքվի կոմունա» արտահայտությունը:*

1918 թ. հունիսի 6-ին Բաքվի Ժողկոմսովետն ընդունել է դեկրետ ժողովրդական դատարանների ստեղծման մասին: Սահմանվում էր, որ տեղական ժողովրդական դատարաններն ընտրվում են բանվորների, զինվորների և գյուղացիների պատգամավորների տեղական սովետների կողմից:

*Դատարաններում դատավարությունը տարվում էր տեղական լեզուներով և այլն (**Ստ. Շահումյան**, նույն տեղը, հ. հինգերորդ, էջ 66):*

*1918 թ. հունիսի 6-ին հրապարակվել է Բաքվի Ժողկոմսովետի դեկրետը Կասպիական առևտրական նավատորմի ազգայնացման մասին: Այս դեկրետի կիրառումն էապես կարգավորում էր նավթի առաքումը դեպի Աստրախան (**Ստ. Շահումյան**, նույն տեղը, հ. հինգերորդ, էջ 71-77):*

*1918 թ. հունիսի 7-ին Ռուսաստանի Ժողկոմսովետին ուղարկած նամակում Շահումյանը հայտնում էր նավթային ձեռնարկությունները, առևտրական նավատորմն ազգայնացնելու, դատական ռեֆորմի դեկրետի և այլ միջոցառումների մասին և ընդգծում էր. «Եթե մենք հաղթենք՝ Բաքուն կդառնա աշխատանքային օրինակելի կոմունա» (**Ստ. Շահումյան**, նույն տեղը, հ. հինգերորդ, էջ 79):*

Նույն օրը Շահումյանը Ստալինին հեռագրով հայտնում էր, որ Թիֆլիսի կայարանում ծածանվում է գերմանական դրոշը և ստեղծված է գերմանական պարեստատոն: Մենշևիկները գերմանացիների հետ միջոցներ են ձեռնարկում հայկական ջոկատները զինաթափելու համար: Իսկ Ելիզավետպոլում սպասում են Էնվեր փաշայի եղբոր գալուն: Լուրեր են տարածվում, որ

*Ելիզավետպոլում առաջիկայում կհոչակվի Ադրբեջանի անկախություն և այնտեղ են գալու թուրքական զորքերը, որոնք երեք օրում կգրավեն Բաքուն (**Ստ. Շահումյան**, նույն տեղը, հ. հինգերորդ, էջ 88-89):*

ԲԱՆԱՎԵՃ ԲԱՔՎԻ ՍՈՎԵՏՈՒՄ 1918 Թ. ՀՈՒՆԻՍԻ 7-ԻՆ

1918 թ. հունիսի 7-ին Բաքվի սովետում ՌԿ(բ)Կ Կովկասյան երկրային կոմիտեի անդամ Մ. Քավթարաձեն զեկուցել է Արևմտյան Անդրկովկասի դրության մասին: Նա խստորեն քննադատում էր հատկապես մենշևիկների քաղաքականությունը, նշելով, որ թուրքերին Բաթումի հանձնելը խայտառակ ակտ է, ընդգծում էր, որ Կարսում էլ կրկնվում է նույնը: «Հայերը,- ասում է նա,- այնտեղ կենտրոնացրել էին իրենց բոլոր ուժերը՝ զենքը, մարդկանց և ամենակրիտիկական պահին, երբ ամեն ինչ պատրաստ էր դիմադրության համար, նորից ստացվում է Ջիենկելու սատանայական հեռագիրը՝ «Առանց մարտի հանձնել Կարսը և հեռանալ»:

Այնուհետև Քավթարաձեն հանգամանորեն խոսել է Արևմտյան Վրաստանում ստեղծված դրության մասին և հայտնում էր, որ դեպի Հյուսիսային Կովկաս տանող ճանապարհին հանդիպել է հազարավոր գաղթական հայերի, որոնք կրել են սարսափելի զրկանքներ և որևէ տեղից նրանց օգնելու հույս չկա: Նա խնդիր էր դնում՝ բոլոր ուժերով պաշտպանել Բաքուն (ՀՀ ԱԱ, ֆ. 1437, ց. 3, գ. 3, թթ. 12-37):

Բաքվի մենշևիկների առաջնորդ Այոլյոն հանդես գալով, չի համաձայնվում Բաթումը և Կարսը հանձնելու մասին Քավթարաձեի տված գնահատականին, պաշտպանության տակ վերցնելով Բաթումի պայմանագիրը ստորագրած մենշևիկներին և նշում. «Անդրկովկասի վրա թափված բոլոր ճախորդությունների պատճառը Բրեստի պայմանագիրն է»:

Պատասխանելով Այոլյոյին, Մ. Ազիզբեկովը նշել է. «Եթե Անդրկովկասի մենշևիկները ձեռք-ձեռքի տված ուժենային, ապա կկարողանային դիմադրել Թուրքիային, անկախ այն բանից, որ բոլշևիկները ստորագրել են Բրեստի խայտառակ հաշտությունը»:

Այնուհետև ընդարձակ ելույթով հանդես է գալիս Շահումյանը: Նա հարկ է համարել «մի քանի բացատրություն տալ և, նախ և առաջ կանգ առնել Բրեստի չարաբաստիկ պայմանագրի վրա»:

«Փոխհարաբերությունները,- ասել է Շահումյանը,- պետությունների միջև որոշվում են ոչ թե թղթի կտորներով, այլ ուժերի ռեալ հարաբերակցությամբ» և հարցրել, թե ի՞նչ էր խանգարում Անդրկովկասին, որպեսզի չիրագործեր Բրեստի պայմանագիրը և պաշտպաներ իրեն դրանից:

«Մենք, բոլշևիկներս,- ընդգծում էր Շահումյանը,- երբեք չենք հայտարարել, անգամ երբ ստորագրել ենք այդ պայմանագիրը, որ այստեղ պետք է անպայման այն պահպանել: Մենք այդ պայմանագիրը դիտել ենք որպես պարտադրված պայմանագիր, որը պետք է հաշվի առնենք, քանի որ դիմադրության ցույց տալու համար պահանջված չափով ուժ չունենք»:

Շահումյանը հայտնում էր, որ ինքը որպես կենտրոնական իշխանության պաշտոնական ներկայացուցիչ Կարսը, Բաթումը և Արդահանը հանձնելու մասին ոչ մի հայտարարություն չի արել, «ենթադրելով, որ Կարսն ու Բաթումը պաշտպանելու համար Անդրկովկասը բավականաչափ ուժ ունի»:

Շահումյանը նկատի ուներ, որ Անդրկովկասի դեմ շարժվում էին ոչ թե գերմանական ուժեղ զորքերը, այլ «հոգնած ու կազմալուծված թուրքերը» և համոզված էր, որ Անդրկովկասը կարող էր իրեն պաշտպանել և չհանձնել թուրքերին այն, ինչ որ գիջված էր Բրեստի պայմանագրով:

*Իբրև ապացույց Շահումյանը հիշեցրել է, որ դաշնակցության կուսակցության տվյալներով Կովկասյան ամբողջ ռազմաճակատում թուրքերը իրենց ունեցած 18-20 հազար հոգնած ու կազմալուծված զորքով չէին կարող գրավել Անդրկովկասն ու շարժվել Բաքվի վրա: «Թուրքերը,- ավելացնում էր Շահումյանը,- մի քանի հարյուր մարդով կարող էին վերցնել Բաթումը, որովհետև նրանց դիմադրություն ցույց չեն տվել, կամ Կարսը, որը պաշտպանվում էր իրենց պարապդիմներից լքված հայկական զորքերով, բայց այնտեղ, ուր հակահարված կտանեն նրանք, սարսափելի չեն»: (**Ստ. Շահումյան**, նույն տեղը, հ. հինգերորդ, էջ 83-87):*

Սովետի նիստում մթնոլորտը գնալով չիկանում էր: Շահումյանի տեսակետի պաշտպանությամբ հանդես է գալիս Ջափարիձեն: «Անդրկովկասը,- նշել է նա,- կործանվում է ոչ թե Բրեստի պայմանագիրը ստորագրելով: Դա ճիշտ չէ: Անդրկովկասը կործանում է այն քաղաքականությունը, որն այստեղ բացահայտվեց: Անդրկովկասում տիրում է մենշևիկների թագավորությունը: Այնտեղ բոլշևիկները ոչ մի ուժ չէին ներկայացնում, իսկ մենշևիկներն ունեին հնարավորություն կազմակերպել ժողովրդին, պատրաստել նրան պաշտպանության համար, բայց նրանք ձգտում էին կտրվել հեղափոխական Ռուսաստանից և կապվեցին հակահեղափոխության հետ»:

*Այնուհետև Ջափարիձեն դիմել է շարքային դաշնակցականներին և նրանց կոչ է արել չենթարկվել Բաքվի հայոց ազգային խորհրդի հրամաններին(**ՀՀ ԱԱ, ֆ.1437,ց. 3, գ.3**):*

Սովետի նիստում հանդես է գալիս Բաքվի դաշնակցականների ղեկա-

վարներից Զառաֆյանը, որը կառարվածի համար մեղադրում է մենշևիկներին և մուսավաթականներին: Զառաֆյանը Կարսի, Բաթումի, Էրզրումի հանձնումը գնահատել է որպես դավաճանություն և «հանուն հաշտության, ընդդեմ պատերազմի բոլշևիկների քարոզչության արդյունք»:

«Ահա, թե ինչու,- շարունակել է Զառաֆյանը,- մենք հասանք այն խաղաղության, որ էնվեր փաշան, որի ձեռքերը ներկված են հայերի արյունով, մեզ ազատություն է տալիս: Մենք գիտենք այդ ազատությունը, դա թուրքերից ամենաուժեղն է, որով ուզում են քնեցնել մեր աշխատավոր ժողովրդին: Դա մենք լավ հասկանում ենք, բայց մենք նաև հասկանում ենք, որ մեր ընկերները ստիպված են եղել դա անել»:

*«Այո,- շարունակել է Զառաֆյանը,- նրանք (նկատի ունի Բաթումի պայմանագիրը ստորագրած իր կուսակիցներին- **Վ.Պ.**) մեղավոր են և ես նրանց չեմ պաշտպանում: Այդպիսի ազատություն, որը մեզ տալիս է թուրքական փաշան, մենք չենք ուզում: Մինչև արյան վերջին կաթիլը զենքը ձեռքներիս կպայքարենք նրանց դեմ: Հայ աշխատավոր տարրերը, միավորված դաշնակցությունն մարտական կուսակցության շուրջ, բարձր կպահեն կարմիր դրոշը, քանի որ նրանց հարկավոր չէ ազգային դրոշը»:*

Առաջ անցնելով, հարկ եմ համարում ասել, որ Զառաֆյանի այսպիսի դիրքորոշումը, ցավոք սրտի, ինչպես հաջորդ էջերում կնշվի, անասան չի մնացել, դեպքերի հետագա զարգացման ընթացքում փոխվել է և դարձել է Բաքվի հայ բնակչության ողբերգության գլխավոր պատճառներից մեկը:

ՁԵՌՆԱՐԿՈՒՄՆԵՐԸ ՇԱՐՈՒՆԱԿՎՈՒՄ ԵՆ

1918 թ. հունիսի 18-ին Բաքվի Ժողկոմսովետն ընդունում է որոշում կալվածատերերի, նրանց հավատարմատար անձանց և անաշխատ վարձակալների հողերի օտարման ու սոցիալիզացիայի մասին:

Այդ որոշմամբ հանձնարարվում էր. «Անհապաղ կատերել հողերի, ջենքերի, գույքի, գյուղատնտեսական մթերքների և նյութերի հանում բոլոր կալվածատերերի (բեգերի, խանների, մելիքների, իշխանների), նրանց հավատարմատար անձանց ու անաշխատ վարձակալների մասնավոր տիրապետությունից»:

*Որոշման համաձայն տեղական սովետները կազմակերպելու էին հողային կոմիտեներ, որոնք անմիջապես ձեռնամուխ էին լինելու այդ որոշման կատարմանը (**Ստ. Շահումյան**, նույն տեղը, հ. հինգերորդ, էջ 130):*

Հաջորդ օրը Բաքվի Ժողկոմսովետն ընդունած դեկրետով հողի սոցիալիզացիա է հայտարարել նաև ամբողջ Անդրկովկասում և Դաղստանում:

*Դեկրետի վերջում Շահումյանը գրում էր. «...Անհրաժեշտ եմ գտնում այժմեթ անցկացնել առանց ետգնման հողերի բռնագրավում բեկերի, խաների, կալվածատերերի, իշխանների, մելիքների, նրանց հավատարմատար ու անաշխատ վարձակալների տիրակալությունից՝ աշխատավոր երկրագործ բնակչության օգտագործման համար» (**Ստ. Շահումյան**, նույն տեղը, հ. հինգերորդ, էջ 132):*

*Բաքու քաղաքի բնակչությանը և զորքին պարենով ապահովելու գործը կազմակերպելու նպատակով 1918 թ. հունիսի 18-ին ներքին գործերի ժողկոմ Պ. Ջափարիձեն միաժամանակ նշանակվել է պարենային գործերի ժողովրդական կոմիսար (**Ստ. Շահումյան**, նույն տեղը, հ. հինգերորդ, էջ 131):*

*Հունիսի 22-ին Բաքվի ժողկոմսովետը ընդունել է որոշում, որով սպեկուլյացիայի, ավազակության և այլ հանցագործությունների դեմ պայքարն ուժեղացնելու նպատակով Աստրախանից նոր վերադարձած Ս. Տեր-Գաբրիելյանը նշանակվել է արտակարգ հանձնաժողովի նախագահ (**Ստ. Շահումյան**, նույն տեղը, հ. հինգերորդ, էջ 144):*

1918 թ. հունիսի 22-ին Շահումյանը Բաքվի սովետում զեկուցել է նավթային արդյունաբերության ազգայնացման մասին: Նա հայտնում էր, որ նավթային արդյունաբերության ազգայնացումը «բոլորովին դուր չի եկել նավթարդյունաբերողներին»:

Շահումյանը հանգամանորեն խոսել է ազգայնացումը ձախողելու նպատակով նավթարդյունաբերողների գործադրած միջոցների մասին և հայտարարել է, որ «ոչ մի խոսք չի կարող լինել ազգայնացման հնարավոր վերացման մասին»:

*Նա առաջարկում էր ազգայնացման դեմ մոթ ագիտացիային վերջ տալու համար հայտարարել հետևյալը. «Բաքվի պրոլետարիատի կամքով նավթային արդյունաբերությունն ազգայնացված է հայտարարված: Նոբելը, Մանթաշևը, Ղուկասովը և այլն զրկված են իրենց սեփականությունից, իրենց հարստություններից, որոնք ձեռք են բերված բանվոր դասակարգի աշխատանքով, և այդ հարստությունները պատկանում են ժողովրդին ու չեն կարող նրանից խլվել» (**Ստ. Շահումյան**, նույն տեղը, հ. հինգերորդ, էջ 136-140):*

1918 թ. հունիսի 22-ին Բաքվի սովետն ընտրում է Սովետների համառուսաստանյան 5-րդ համագումարի չորս պատգամավոր: Այս կապակցությամբ Շահումյանը ելույթ է ունեցել և հատկապես նշել է, որ այն ժամանակ, երբ Թիֆլիսում իշխանության գլխին կագնած մենշևիկները հալածում ու ձերբակալում են բոլշևիկներին, իսկ Բաքվում ստեղծված սովետական իշխա-

*նությունը չի հալածում մենշևիկներին և հանդուրժում է նրանց ներկայությունը սովետում (**Ստ. Շահումյան**, նույն տեղը, հ. Հինգերորդ, էջ 141-143):*

Բաքվում ոչ միայն մենշևիկների, այլև նրանց համախոհ աջ էսէռների ու դաշնակցականների նկատմամբ սովետական իշխանության և անձամբ նրա ղեկավար Շահումյանի հանդուրժողական քաղաքականությունը թելադրված էր ժողովրդավարության սկզբունքները չխախտելու անհրաժեշտությունից...

Որոշ ժամանակ անց, երբ արդեն Բաքվում տապալվել էր սովետական իշխանությունը, վերոհիշյալ ուժերը դառնալով իշխանության տեր, անմիջապես միջոցներ ձեռնարկեցին Բաքվի կոմիսարներին ձերբակալելու և նրանց նկատմամբ հաշվեհարդար տեսնելու համար:

ԳԼՈՒԽ 19
ՀԱՅԿԱԿԱՆ ՈՒԺԵՐԻ ՏԱՐԱԾ ՀԱՂԹԱՆԱԿՆԵՐԸ ԵՎ ԲԱԹՈՒՄԻ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ

Մինչև Բաթումի բանակցություններին և դրանց արդյունքով կնքված պայմանագրի մասին խոսելը, հարկ եմ համարում անդրադառնալ մինչ այդ տեղի ունեցած ռազմական գործողություններին:

1. ՍԱՐԴԱՐԱՊԱՏԻ ՀԵՐՈՍԱՄԱՐՏԸ

Ակբանդրապոլը գրավելուց հետո թուրքական զորքերի առջև բացվում է ճանապարհ՝ Հայաստանի վրայով անցնել Թիֆլիս ու Բաքու և դուրս գալ Հյուսիսային Կովկաս ու Թուրքեստան:

Թուրքական հրամանատարությունն էնվեր փաշայի առաջադրանքի հիման վրա զորամասերը բաժանում է չորս խմբի՝

Առաջին զորախումբը Մյուրսել բեյի հրամանատարությամբ շարժվելու էր դեպի Վորոնցովկա (այժմ Տաշիր): Այստեղից անցնելու էր Ղազախի ուղղությամբ և միանալու էր Թիֆլիսը գրավելու համար առանձնացված զորքին և հետո շարժվելու էր դեպի Բաքու:

Երկրորդ զորախումբը Ջամիլ Ջավադ բեյի հրամանատարությամբ հարձակումը զարգացնելու էր Սպիտակ-Ղարաքիլիսա-Դիլիջան-Ղազախ-Ելիզավետպոլ գծով: Ելիզավետպոլից այս զորախումբը շարժվելու էր դեպի Բաքու:

Երրորդ զորախումբը Էսադ փաշայի հրամանատարությամբ հարձակվելու էր Ակբանդրապոլ-Բաշապարան ուղղությամբ, նպատակ ունենալով դուրս գալ Երևան:

Չորրորդ զորախումբը հարձակումը զարգացնելու էր Ակբանդրապոլ-Երևան երկաթուղով:

Թուրքական հրամանատարությանը թվում էր, որ իր տարած հաղթանակներից հետո, ուժասպառ եղած հայկական ուժերն այլևս ուշքի չեն գա ու Թիֆլիսի ու Երևանի ուղղությամբ արշավը համարում էին զբոսանք:

Եթե Էրզրումից սկսած թուրքերը հարձակվում էին մեկ ուղղությամբ, մեկ գծով, ապա այժմ, Ակբանդրապոլի գրավումից հետո, փոխում են իրենց տակտիկան:

Թուրքական հրամանատարությանը հայտնի էր հայկական զորամասերում ստեղծված խառնաշփոթությունն ու հուսահատությունը: Եվ դրանից էլ օգտվելով, որոշվում է հարձակումը զարգացնել միանգամից, այն էլ չորս ուղղությամբ:

Թուրքական հրամանատարությունը համոզված էր, որ չորս ուղղությամբ զարգացնելով իր զորամասերի հարձակումը, պարտություններից ու նահանջից հուսալքված հայկական զորամասերին կզրկի ուժերը կենտրոնացնելու հնարավորությունից, չեն դիմանա ճնշմանը և գլխովին կջախջախվեն:

Պետք է ասել, որ թուրքական հրամանատարության հաշվարկները կարող էին արդյունավետ լինել: Բայց նրանք հաշվի չէին առել երկու կարևոր հանգամանք:

Նախ, չորս ուղղությամբ շարժվող թուրքական զորամասերն իրենց գործողությունները վարելու էին իրարից անկախ, ավելի ճիշտ, առանց համագործակցության: Իրենց ուժերի վրա վստահ թուրքերը պարզապես հաշվի չէին առել, որ չորս ուղղություններն էլ իրարից բաժանված էին գրեթե անհաղթահարելի լեռնաշղթաներով:

Երկրորդ հանգամանքն արդեն թուրքերի կամքից կախված չէր: Գեներալ Նազարբեկովը սթափվել էր և զգում էր իր ամբողջ պատասխանատվությունը սեփական ժողովրդի ճակատագրի համար:

Եվ այս իրողությունը հսկայական դեր է խաղում նրա ամբողջ ռազմական տաղանդի դրսևորման համար: Այժմ երևում էր գեներալ Նազարբեկովի ռազմական տաղանդի և հարազատ ժողովրդի ճակատագրի նկատմամբ դրսևորած պատասխանատվության ամբողջ հմայքը:

Գեներալ Նազարբեկովը կռահելով թուրքերի մտադրությունը, վերադասավորում է իր ունեցած ուժերը, որոնք, ճիշտ է, մեծաքանակ չէին, բայց խելացի ռազմավարության դեպքում, կարող էին ապահովել հաղթություն:

Հակառակորդին պետք է ջախջախել առանձին-առանձին և, որ ամենակարևորն է՝ զրկել նրան իր ուժերը միավորելու հնարավորությունից:

Ահա գեներալ Նազարբեկովի ստրատեգիայի հիմնական միջուկը: Եվ ունեցած ուժերն էլ նա դասավորում է դրան համապատասխան:

1. Ալեքսանդրապոլ-Երևան երկաթուղով հարձակվող թուրքական զորամասերին կասեցնելու առաջադրանքը դրվում է հայկական 2-րդ հրաձգային դիվիզիայի հրամանատար գեներալ Սիլիկովի վրա, որի զորախմբի մեջ էին մտնում նաև 3-րդ հետևակային բրիգադը, 2-րդ հեծյալ բրիգադի առաջին գունդը, Մակուի հետևակային գումարտակը և մի քանի այլ զորամասեր:

2. Ալեքսանդրապոլ-Բաշապարան գծով շարժվող թուրքական զորամասերի դեմ կենտրոնացվում է գնդապետ Աբրահամ Դոլուխանյանի հրամանատարությամբ գործող 6-րդ գունդը, որի զինվորների մեծ մասը ապարանցի էին, գնդապետ Զալինյանի պարտիզանական հեծյալ գունդը և գնդապետ Սիլինի սահմանապահ գումարտակը:

Այս զորախումբը, որը համալրվում է Ապարանի շրջանում կազմավորված կամավորական ջոկատներով, առաջադրանք ուներ թուրքերին թույլ չտալ գրավել Ապարանը և շարժվել Երևանի ուղղությամբ:

3. Համամլու-Ղարաքիլիսա ուղղությամբ շարժվող թուրքերին զրկել Դիլիջանը գրավելու և դեպի Լոռի շարժվելու հնարավորությունից: Այս խնդիրն իրականացնելու էին Լոռիում դիրքավորված Անդրանիկը և Դիլիջանում գտնվող զորաջոկատները:

Կարծում եմ անհրաժեշտություն չկա այստեղ մանրամասը շարադրել Սարդարապատի հաղթական ճակատամարտի ընթացքը, որի մասին ստեղծվել է ծավալուն գրականություն: Միայն հարկ եմ համարում նշել մեկ-երկու կարևոր հանգամանք:

Նախ, Սարդարապատի ուղղությամբ հարձակվող թուրքական զորամասը բաղկացած էր 4500-5000 զինվորից: Ուներ հրետանու 4 մարտկոց՝ 40 հրանոթով:

1918թ. մայիսի 21-ին, թուրքական զորքերն Ալեքսանդրապոլը գրավելուց 6 օր անց, առանց որևէ լուրջ դիմադրության հանդում են Սարդարապատ:

Նախապես մշակված ծրագրի համաձայն գեներալ Սիլիկովը սկսում է գրոհ և մայիսի 22-ին թուրքերին դուրս շպրտում Սարդարապատ գյուղից: Այս հարվածն այնքան անսպասելի էր, որ թուրքական զորամասն ուշքի չի գալիս և սկսում է անկազմակերպ նահանջել:

Կարո՞ղ էր Սիլիկովը միայն աշխարհազորային ջոկատների միջոցով հաղթել թուրքական կանոնավոր, մարտերում կոփված և լավ զինված զորքին:

Իհարկե, ոչ: Ես այս հարցադրումը կատարում եմ, որպեսզի ընթերցողի ուշադրությունը բևեռեմ տասնամյակներ շարունակ շրջանառության մեջ դրված այն մտայնության վրա, որի համաձայն Սարդարապատի հաղթանակը տարել է փոցխով ու գերանդիով զինված ժողովուրդը: Նույնը վերաբերում է Ապարանի ու Ղարաքիլիսայի ճակատամարտերին:

Իրականության մեջ մինչև առամները զինված թուրքական բանակը չէր կարող պարտվել անզեն ժողովրդից: Վերջապես անզեն ժողովուրդը չէր կարող շահել ոչ մի ճակատամարտ:

Իհարկե, ոգևորությունը լավ բան է, բայց դա իր չափն ունի, երևակայությունն էլ սահման ունի:

Իրականում Սարդարապատի ճակատամարտում թուրքական զինված ուժի դեմ հանդես է եկել հայկական զինված ուժը, հայկական բանակը՝ նախապես մշակված ծրագրով ու հմուտ հրամանատարությամբ:

Սարդարապատի ճակատամարտում բախվել են երկու ռազմական ուժ: Դրանցից մեկը գերմանական ռազմական դպրոցն անցած թուրք հրամանատարների գլխավորությամբ գործող թուրքական զորքն էր: Մյուսը՝ռուսական ռազմական դպրոցն անցած հայ հրամանատարների գլխավորած հայկական զորքն էր:

Եվ Սարդարապատի հաղթանակը ձեռք է բերվել հայ հրամանատարների հմուտ գործողությունների ու հայ զինվորների հերոսական կամքի շնորհիվ:

Ես այս հանգամանքը հատկապես եմ ընդգծում, քանի որ քիչ չեն այն հերինակները, որոնք Սարդարապատի հաղթանակին տալիս են տարբերային բնույթ, դրանով նսեմացնելով կամ էլ անտեսելով հայ հրամանատարների ռազմական հմտությունը:

Երկրորդ. Ովքե՞ր էին այդ հայ զինվորներն ու սպաները, որոնք միավորվել էին կանոնավոր զորաջոկատների մեջ: Նրանք այն զինվորներն ու սպաներն էին, որոնք ամբողջ հոգով զգացել էին Էրզրումի, Սարիղամիշի, Կարսի ու Ալեքսանդրապոլի կորուստը, ապրել էին պարտությունների ու նահանջի դառնությունը:

Եվ ինչպե՞ս պատահեց, որ այդ դաժան փորձություններով անցած հայ հրամանատարն ու զինվորն իրենց մեջ ուժ գտան ոչ միայն ուշքի գալ, այլև պարտության մատնել իրենից ավելի զորեղ թուրքական բանակին:

Այս հարցի պատասխանն անշուշտ, ձեռնտու չէ բոլոր նրանց համար, ովքեր հորինել են Սարդարապատի հաղթանակն իրենց վերագրելու առասպելը:

Նախորդ էջերում, որքան հնարավոր էր համառոտ ներկայացվել են Էրզրումը, Սարիղամիշը, Կարսը և Ալեքսանդրապոլը թուրքերին հանձնելու հանգամանքները: Շարադրվել են նաև այդ գործում դաշնակցության ղեկավար գործիչների գործելակերպն ու քաղաքականությունը:

Ուրեմն, ինչո՞ւ վերոհիշյալ ճակատամարտերում պարտված հայկական բանակը Սարդարապատում հաղթանակ է տարել:

Բայց Սարդարապատը միայն հաղթանակ չէր թուրքական զավթիչների դեմ:

Դա հաղթանակ էր ազգային դավաճանության դեմ:

Դա հաղթանակ էր պոռոտախոսության և երդվյալ թշնամու առջև ստորաքարշության դեմ:

Այսօրվա երիտասարդ սերնդին շատ քիչ բան է հայտնի 1918 թ. ստեղծված օրհասական վիճակի մասին: Նրա համար պարզ չէ, թե ինչու թուրքական զավթիչներին հաջողվեց հասնել մինչև Երևանի մատույցներ: Պարզ չէ նաև, թե ինչը նպաստեց Սարդարապատի, Ապարանի ու Ղարաքիլիսայի հաղթանակին:

Նշված ժամանակաշրջանում հայ ժողովրդի գործերի տնօրինումն իր վրա էր վերցրել Հիմնականում դաշնակցության գործիչներից կազմված Հայոց ազգային խորհուրդը՝ հայտնի գրող Ավետիս Ահարոնյանի գլխավորությամբ:

Իսկ ինչպե՞ս էր տնօրինում կամ ինչպե՞ս էր իր պարտականությունները կատարում Հայոց ազգային խորհուրդը: Ինչպե՞ս էր Թիֆլիսում նստած՝ ղեկավարում Հայաստանի և նաև ռազմաճակատի գործերը:

Փորձեմ շատ համառոտ պատասխանել այս հարցերին:

Հայոց ազգային խորհուրդը լրությամբ համաձայնվել էր, որպեսզի թուրքական զավթիչների դեմ ռազմաճակատում կռվող հայկական զորամասերը գտնվեին իր հայատյացությամբ հայտնի վրացի գեներալ Օդիշելիձեի ընդհանուր հրամանատարության տակ:

Ավելին, ազգային խորհուրդը դարձել էր այդ գեներալի հակահայկական հրամանների հլու կատարող:

Եվ այդ ամենի հետևանքով, ազգային խորհուրդն առանց ցավի ու խղճի, համաձայնվել է առանց որևէ դիմադրության, թուրքերին հանձնել Էրզրումը, Սարիղամիշը և Կարսը:

Արևմտահայությունը, որն երբեք չէր հաշտվել թուրքական բռնակալությանը և մշտապես պայքարում էր նրա դեմ, այդ ինչպե՞ս պատահեց, որ հարկադրված էր թուրքերին հանձնել վերոհիշյալ քաղաքները և բռնել նահանջի ու գաղթի ճանապարհը:

Ո՞վ էր արևմտահայությանը դրել այդպիսի ծանր վիճակի մեջ: Այս հարցի պատասխանն ունի մի հասցեատեր՝ դաշնակցության կողմից ղեկավարվող Հայոց ազգային խորհուրդը, որը փաստորեն միայն անունով էր ազգային:

Ազգային խորհուրդը լրությամբ է համաձայնվում վերոհիշյալ քաղաքների հանձնմանը, որով էլ, ինչպես հայկական զորամասերին, այնպես էլ արևմտահայությանը նետում է հուսահատության գիրկը, ստեղծելով խուճապ, անկազմակերպվածություն ու խառնաշփոթություն:

Էրզրումը, Սարիղամիշն ու Կարսը թուրքական զավթիչներին է հանձն-

վում բացահայտ դավաճանությամբ: Դրա հետևանքով էր, որ 1918 թ. մայիսի 15-ին Ակեքսանդրապոլը նույնպես առանց դիմադրության հանձնվում է թուրքերին:

Սակայն, 1918 թ. մայիսի 15-ից հետո, իրադարձություններն այլ զարգացում են ստանում:

Բաթումում թուրքերի հետ սիրախաղով զբաղված Հայոց ազգային խորհրդի դաշնակցական անդամները, բարեբախտաբար, հնարավորություն չունեցան խառնվելու Հայաստանում զարգացող իրադարձություններին: Նրանց ձեռքերը Հայաստան չէին հասնում:

Եվ վերոհիշյալը հաշվի առնելով, դժվար չէ պատկերացնել, թե ինչ կլիներ Հայաստանի և հայ ժողովրդի վիճակը, եթե հանկարծ Բաթումի պայմանագիրը ստորագրվեր մինչև Սարդարապատի հաղթանակը:

Էրզրումը, Սարիղամիշը, Կարսն ու Ակեքսանդրապոլը թուրք զավթիչներին հանձնողները չէին խորշի նաև Երևանն ու ամբողջ Արևելյան Հայաստանը թուրք զավթիչների ոտքերի տակ նետել: Այդպես կլիներ, որովհետև ով մեկ անգամ ուրանում է, ուրանալու է նաև շատ անգամ:

Բարեբախտաբար դա տեղի չունեցավ:

Պատմության թելադրանքով ազգային դավաճանների ձեռքը Երևանին չհասավ: Ճիշտ է, Երևանին նրանց ձեռքը չհասավ, բայց ստորագրելով Բաթումի պայմանագիրը, Սարդարապատի, Ապարանի, Ղարաքիլիսայի հաղթանակներն ոչնչի հավասարեցրին և հնարավորություն տվեցին, որպեսզի թուրքական հրանոթներն Ուլուխանլու կայարանից ուղղվեին Երևանի վրա:

2. ՂԱՐԱՔԻԼԻՍԱՅԻ ՃԱԿԱՏԱՄԱՐՏԸ

Հայկական կորպուսի հրամանատարությունը գիտակցում էր Ղարաքիլիսայի նշանակությունը: 1918 թ. մայիսի 16-ին Նազարբեկովի արձակած հրամանով գեներալ Արեշովին հանձնարարվում է կասեցնել թուրքերի առաջխաղացումը և թույլ չտալ մոտենալ Ղարաքիլիսային:

Գեներալ Արեշովի մասին վերևում արդեն հանգամանորեն խոսվել է: Վերջինս էլ հարկ է նշել, որ այդ ապաշնորհ և անպատասխանատու գեներալը շարունակում էր կարևոր պոստ զբաղեցնել: Նրա հանցավոր անփութության պատճառով թուրքերին հաջողվում է մայիսի 20-ին գրավել Ջաջուռը:

Այդ ընթացքում Անդրանիկ Օզանյանը Նազարբեկովի հրամանի համաձայն Ջալալօղլիից անցնում է Դսեղ՝ խնդիր ունենալով պաշտպանել Ակեքսանդրապոլ-Թիֆլիս երկաթուղին: Անդրանիկը մշտապես իր զորաջոկատի հետ միասին տանում էր 20.000 արևմտահայ գաղթական:

Թուրքերն անարգել մտել են Ղարաքիլիսա: Երեք օր թուրքական զինվորներին իրավունք է տրվել իրենց քմահաճույքով վարվել Ղարաքիլիսայի բնակչության հետ: Նրանց բարբարոսական գործողությունների մասին շատ է գրվել և այստեղ հարկ չեմ համարում նորից հիշատակել:

1918 թ. մայիսի 25-ին Ղարաքիլիսան գրաված թուրքերի դեմ հարձակվեցին հայկական զորամասերը: Դրանով էլ սկսվել է Ղարաքիլիսայի ճակատամարտը, որը տևել է մինչև մայիսի 28-ը:

Ինչպես հաղորդում է «Кавказское слово» թերթը, ճակատամարտին մասնակցել է թուրքական 10.000 զինվոր: Հայկական ուժերը բաղկացած էին 7.000 զինվորից: Չնայած գերակշիռ ուժերին, թուրքական զորքին չի հաջողվում իր ձեռքում պահել Ղարաքիլիսան և հայկական բանակի հարվածների ներքո հարկադրված հեռանում է այնտեղից, իր ետևում թողնելով ավերակույտի վերածած Ղարաքիլիսան:

Առհասարակ, Ղարաքիլիսայի ճակատամարտի մասին ծավալուն պաշտոնական տեղեկություններ քիչ են պահպանվել: Դրա փոխարեն ստեղծվել է հուշերի վրա հիմնված գրականություն, որն, ինչպես հայտնի է, մեծամասամբ կրում է սուբյեկտիվ բնույթ:

Դրանց հեղինակների մի մասն առաջ է մղում իր դերակատարումը, մի մասն էլ, ելնելով կուսակցական կորպորատիվ շահերից, կարևոր դեր է հատկացնում իրենց կուսակիցներին, նրանց վերագրելով հաղթանակներ ձեռք բերելու դափնեպսակը:

Այս առումով հատկապես աչքի են ընկնում դաշնակցությանը պատկանող կամ էլ նրան հարող հեղինակները, որոնք, օրինակ, Դրոյին համարում են Ապարանի ճակատամարտում հաղթանակի կերտող, իսկ Նժդեհին դարձնում Ղարաքիլիսայի հաղթանակի կազմակերպիչ:

Դրոյի խնդրին անդրադարձ կլինի ստորև: Իսկ ինչ վերաբերվում է Նժդեհին, ապա, չի կարելի աչքաթող անել Ղարաքիլիսայի ճակատամարտին մասնակից այն հայ հրամանատարներին, որոնք կադրային զինվորական էին և երբեք դաշնակցության անդամ չեն եղել:

Այդ հրամանատարներից մեկն էլ կապիտան Գուրգեն Մովսեսյանցն էր, որի մասին ջերմորեն է հիշում Հովհաննես Բաղրամյանը: (Հ. Բաղրամյան, Իմ հիշողությունները, Եր. 1979. էջ 88):

Բայց, դժբախտաբար, Ղարաքիլիսայի ճակատամարտում ձեռք բերված հաղթանակը չի հաջողվել ամրապնդել:

Թուրքական զորքերը ստանալով նոր համալրում, մայիսի 28-ին անցել են հակահարձակման:

Դեպքերի հետագա ընթացքի մասին հայկական կորպուսի շտաբի շատ լակոնիկ օրագրում գրի է առնվել հետևյալը, «Մայիսի 30-ին թուրքերը գրավում են Ղարաքիլիսան և Վարդանլին և, միաժամանակ առաջ են շարժվում: Նրանք կուտակվում են Թայչարոխում» (ՀՀ ԱԱ, ֆ. 121, ց. 2, գ. 2):

Այնուհետև հայտնվում էր, որ կորպուսի շտաբը Դիլիջանից տեղափոխվել է Ներքին Ախտա:

Ըստ օրագրի գրառման, Անդրանիկը պետք է գար Դիլիջան և ստանձներ այնտեղ մնացած ջոկատի հրամանատարությունը: Անդրանիկն իր զորաջոկատով Դիլիջան է հասնում այն ժամանակ, երբ թուրքերը նորից գրավել էին Ղարաքիլիսան: Հինց այդտեղ էլ Բաթումից ստացվել է հաշտություն կնքելու լուրը:

Անդրանիկին ոչինչ չէր մնում անելու: Նա Դիլիջանից Նազարբեկովին է ուղարկել Բաթումի պայմանագիրը չընդունելու մասին իր հայտնի հեռագիրը: Այս մասին ավելի հանգամանորեն անդրադարձ կլինի հաջորդ էջերում:

Այստեղ միայն կամենում եմ նշել հետևյալը: Հետագայում, երբ ժողովրդական հերոսը կենդանի չէր, կեղծարարները, իրենց կուսակցական կորպորատիվ շահերից ելնելով, Ղարաքիլիսայի ողբերգության համար անմիջական մեղավորներին պատասխանատվությունից փրկելու նպատակով հնարում են մի ահավոր սուտ՝ թուրքերի կողմից Ղարաքիլիսան գրավելու մեջ մեղադրելով Անդրանիկին:

Նրանք, ովքեր էրզրումի ողբերգության համար պատասխանատվությունը իրենց վրայից դրել էին Անդրանիկի վրա, նույն կերպ են վարվում նաև Ղարաքիլիսայի դեպքում:

Դեռևս 2007 թ. ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիայի գրականության ինստիտուտի ամսագրում հրապարակվել է Ստեփան Զորյանի նամակը: Անվանի գրողը հավատալով Անդրանիկին վարկաբեկելու նպատակով հորինված ստին, ժողովրդական հերոսին մեղադրել է Ղարաքիլիսայի ողբերգության համար:

Ստեփան Զորյանի մասնավոր նամակի հրապարակումը հիշեցի, որպեսզի մեկ անգամ ևս ընդգծեմ, որ այսօր էլ կեղծարարներին հանգիստ չի տալիս այն անշեջ սերը, որ հայ ժողովուրդը պահում է ժողովրդական հերոս Անդրանիկ Օզանյանի նկատմամբ:

Վերջապես Նժդեհին, Դրոյին և մյուսներին բարձրացնելու համար, բոլորովին էլ ազնիվ չէ, որ դա մեր օրերում արվում է Անդրանիկին նսեմացնելու կամ էլ վարկաբեկելու միջոցով:

3. ԱՊԱՐԱՆԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Մայիսի 19-ին Համամլուն (Ապիտակ) գրավելուց հետո թուրքական 3-րդ դիվիզիայի գնդերը (2000 զինվոր, 4 թնդանոթ և գնդացիրներ) շարժվում են դեպի Ապարան, նպատակ ունենալով դուրս գալ Էջմիածին և թիկունքից հարվածել Սարդարապատում գտնվող հայկական ուժերին:

Թուրքական զորախմբի հրամանատար Էսադ փաշային հայտնի էր դարձել Ապարանի բնակչության ծանր վիճակը, և համոզված էր, որ այստեղ էլ իրեն կդիմավորեն սպիտակ դրոշակով:

Երբ Ապարանում հայտնի է դարձել թուրքերի կողմից Ալեքսանդրապոլի գրավումը, միջոցներ են ձեռնարկվել խուճապը կասեցնելու համար: Եվ դա ունեցել է կարևոր նշանակություն թուրքերին դիմադրություն կազմակերպելու գործում:

Ինչպես Ղարաքիլիսայի, այնպես էլ Ապարանի ճակատամարտի մասին քիչ փաստաթղթեր են պահպանվել: Բացը լրացնելու նպատակով փորձեմ վերականգնել իրողությունը՝ հենվելով թե արխիվային տվյալների և թե Ապարանի ճակատամարտի մասնակիցների վկայությունների վրա, որոնց հեղինակների հետ առիթ եմ ունեցել հանդիպել ու զրուցել դեռևս 1950-ական թվականներին:

Եվ այսպես, երբ հայտնի է դարձել Ալեքսանդրապոլի գրավումը, մայիսի 16-ից սկսած Ապարանի բոլոր գյուղերից կանանց ու երեխաներին տեղափոխել են Ապարանի շրջանի վերջին գյուղից 12 կմ հեռավորության վրա գտնվող Իլանչաան (այժմ Արտաշավան) գյուղին հարող բարձունքների վրա:

Կանանց ու երեխաներին հեռու չեն տարել, որպեսզի աշխարհազորի մեջ մտածներից ոչ ոք չմտածեր նահանջի մասին: Գուցե դաժան էր այս միջոցը, բայց օրեր անց, ծավալված կռիվների ժամանակ, զգացվել է դրա համախմբող նշանակությունը:

Այդ օրերին Ղարաշվերան գյուղից Ապարան է գալիս նշանավոր Խենթի որդին՝ Արսեն Տեր-Պողոսյանը (Տեր-Պետրոսյան) իր զինախմբով: Այստեղ էր նաև Զամբու գյուղից Սեդրակ Զալալյանը: Այս երկուսն էլ դառնում են Ապարանի ինքնապաշտպանության կազմակերպիչն ու ոգևորողը:

Բայց նրանք գիտակցում էին, որ ոգևորությունը քիչ է հաղթելու համար: Հարկավոր էր խստապահանջ կարգապահություն մտցնել կազմակերպվող աշխարհազորի մեջ, մարդկանց վարժեցնել, իսկ դրա համար ժամանակ չկար:

Օգնության են գալիս դեռևս 1904-1905 թթ. ռուս-ճապոնական պատերազմի մասնակիցներից կենդանի մնացած հին զինվորները: Նրանց հետ էր

նույնիսկ 1877-1878 թթ. ռուս-թուրքական պատերազմի մասնակիցներից մեկը, որի անունը ցավոք հնարավոր չեղավ պարզել:

Մայիսի 20-ի ուշ երեկոյան աշխարհազորայինները հարմար դիրքեր են գրավել Ապարանից 3-4 կմ հեռու գտնվող Միրաք գյուղի կամուրջին հարող բարձունքների վրա: Նրանց էին միացել մոտակա գյուղերի եզդի կամավորները Ջահանգիր աղայի գլխավորությամբ:

Մայիսի 21-ի վաղ լուսաբացին թուրքերի հեծյալ հետախուզախումբը համոզվել է, որ կամուրջը ոչ միայն անմխաս է, այլև անպաշտպան: Վստահ դրանում, կամուրջին է մոտեցել թուրքական առաջապահ զորաջոկատը: Այդ պահին էլ Ապարանի պաշտպանները ուժգին կրակ են բացել: Թուրքերը հանկարծակի գալով, անկանոն կրակոցներով հեռացել են կամուրջից:

Ապարանցիների գրոհն իսկապես անսպասելի էր թուրքերի համար, որոնք համոզված էին, որ իրենց առջև կանոնավոր զորք չկա և անարգել կանցնեն Ապարանով:

Սակայն թուրքերին, ըստ երևույթին, չէր հաջողվել պարզել իրավիճակը և մայիսի 21-ի երեկոյան նորից ձեռնարկել են ուժեղ գրոհ: Մարտը տևել է մինչև գիշեր: Արդյունքում թուրքերը նահանջել են:

Մայիսի 22-ի վաղ առավոտյան սկսված հորդառատ անձրևից և կարկուտից հետո Ղոնդախսազ գյուղում գտնվող թուրքական ջոկատն ամբողջ կազմով վերսկսել է գրոհը, գործի դնելով թնդանոթներն ու գնդացիրները:

Թուրքական գրոհը հաջողությամբ ետ է մղվել Ապարանի հյուսիսային մատույցներում գտնվող բլուրի վրա դիրքեր գրաված պաշտպանների կողմից: Այստեղ աչքի են ընկել չորս եղբայրները, որոնց գործած սիրանքի պատվին այդ բարձունքը ժողովուրդը մինչ այժմ կոչում է «Թարգու քռա» անունով:

Բայց Ապարանի պաշտպանների վիճակը գնալով բարդանում էր: Պակասում էր զինամթերքը: Թուրքերի հաջորդ գրոհներին դժվար կլիներ դիմադրել:

Ահա, այսպիսին էր վիճակը, երբ մայիսի 24-ին Ապարանի պաշտպաններին գեներալ Սիլիկյանի հրամանով օգնության են շտապել գնդապետ Աբրահամ Դոլուխանյանի հրամանատարությամբ 6-րդ հրաձգային գնդի ապարանցիներից ձևավորված ջոկատը, գնդապետ Զալինյանի պարտիզանական գունդը, գնդապետ Սիլինի սահմանապահ գումարտակը, ինչպես նաև Զեմլյակի հրամանատարությամբ գործող պարտիզանական ջոկատը:

Ապարանի պաշտպանների շարքում գտնվող Զեմլյակի հետախույզներին հաջողվել էր պարզել, որ թուրքերը ստացել են համալրում և մտադիր են

դուրս գալ իրենց հենակետ Տանագիրմազ գյուղից, շրջանցել Ապարանը և Ղարանլուղ (Լուսագյուղ) ու Հաջիբաղր (Սարալանջ) գյուղերի վրայով հասնել Ջամբու գյուղ, որտեղից հնարավոր էր անցնել Քասախ գետի արևելյան ափ ու Ղարաբուլաղ (այժմ՝ Երնջատաղ) գյուղի միջով շարժվել դեպի Եղվարդ ու այնտեղից՝ Էջմիածին:

Ստացված տվյալները հաշվի առնելով, գնդապետ Դոլուխանյանը մյուս հրամանատարների հետ միասին մշակել է համապատասխան ծրագիր, որի համաձայն հնարավոր էր Գյուլուջա (այժմ՝ Վարդենիս) գյուղի մատույցներում շրջապատել թուրքերին և ջախջախել:

Այդ ծրագրի համաձայն պաշտպանները վերադասավորել են իրենց ուժերը:

Մայիսի 26-ին Ապարան է հասել Դրաստամատ Կանայանը (Դրո): Նա, օգտվելով իր հեղինակությունից, հաշվի չի առնում հետախուզության ձեռք բերած տվյալների հիման վրա Դոլուխանյանի մշակած ծրագիրը:

Դրոն պնդում էր իր ոչնչով չհիմնավորված ենթադրությունը, ըստ որի թուրքերն անպայման Տանագիրմազ (Հովիտ) գյուղից կշարժվեն Արագածի արևելյան լանջերով, կշրջանցեն Քուչակ գյուղը և Ղազնաֆար (Արագած)-Շիրաղալա (Վարդենուտ)-Բազարջուղ (Արայի) գյուղերով դուրս կգան Ապարան-Երևան խճուղի և կշարժվեն դեպի Աշտարակ:

Հնվելով իր ենթադրության վրա, Դրոն, անտեսելով հետախուզության ձեռք բերած տվյալներով հիմավորված Ապարանի պաշտպանության ղեկավարների կարծիքը, ստիպել է զորաջոկատները ետ քաշել Ապարանից դեպի Ղազնաֆար:

Այդ զորաջոկատները դիրքեր են գրավում Ապարանից 15-20 կմ հեռավորության վրա գտնվող Ղազնաֆար (Արագած)-Բլիներ (Շենավան) գյուղերի սահմանագծում: Դրոն համոզված էր, որ իր ծրագիրը կբերի հաջողություն:

Հայկական ուժերի տեղաշարժն անկասկած չի մնում: Օգտվելով դրանից, թուրքական հրամանատարությունը հնարավորություն է ստացել իրագործել իր մտադրությունը:

Թուրքերը շրջանցում են Ապարան գյուղը հյուսիսային կողմից, Մուլքի և Գյուլուջա (Վարդենիս) գյուղերի միջև ընկած հարթ տարածքով փորձում են դուրս գալ Երևան տանող խճուղի: Սակայն սկսված տեղատարափ անձրևի պատճառով նրանք հարկադրված դադարեցրել են շարժումը և կանգ առել Գյուլուջա գյուղում:

Թուրքերի առաջ շարժվելը հայտնի է դարձել Ապարանի պաշտպանե-

րին: Հարկավոր էր շտապ վերադասավորել ուժերը: Ապարանի պաշտպանության ղեկավարները ստիպել են Դրոյին սթափվել:

Մայիսի 28-ի վաղ առավոտյան, շարունակվող հորդառատ անձրևի պայմաններում, Ղազնաֆարում դիրքավորված զորաջոկատները 15-20 կմ տարածք կտրելով հասնում են Գյուլջայի մատույցներ:

Թուրքական զորաջոկատը փորձել է թույլ չտալ Ապարանի պաշտպաններին դիրքեր գրավել, պարտադրելով անհավասար մարտ: Թուրքերը ձեռնարկել են մի քանի գրոհ: Ամբողջ մարտի ժամանակ քաջաբար էր կռվում Զեմլյակը, իր օրինակով ոգևորելով մարտիկներին: Մայիսի 28-ի երեկոյան թուրքական հերթական գրոհի ժամանակ պորուչիկ Զեմլյակը զոհվում է:

Ապարանի պաշտպաններին, ի վերջո, հաջողվել է մեծ դժվարությամբ փակել թուրքերի ճանապարհը, թույլ չտալով նրանց դուրս գալ Երևան տանող խճուղի:

Մայիսի 29-ի վաղ առավոտյան թուրքական զորախումբը նոր գրոհ է ձեռնարկել և հասել է որոշակի հաջողության՝ Ապարանի պաշտպաններին հարկադրելով ետ քաշվել Գյուլջայից դեպի Մուքի տանող ճանապարհից:

Ամբողջ օրը տեղում էր հորդառատ անձրև: Հենց դրանից էլ օգտվելով Ապարանի պաշտպանների ջոկատներից մեկը Սեդրակ Ջալալյանի և Արսեն Տեր-Պողոսյանի հրամանատարությամբ Մուքի գյուղի կողմից դուրս են գալիս թուրքերի թիկունք և նրանց հանկարծակի բերում:

Խուսափելով շրջապատումից Էսադ փաշան իր զորախումբը ետ է տարել, տալով մեծ թվով զոհեր: Պաշտպաններից շատերն էլ զոհվել են ու ծանր վիրավորվել:

Տանազիրմազում իր զորաջոկատը կարգի բերելով Էսադ փաշան մայիսի 30-ին փորձել է Ապարանի վրա գրոհել Արագածի արևմտյան փեշերի կողմից: Բայց Ապարանի պաշտպանները զգոն էին:

Գնդապետ Դոլուխանյանը ճիշտ էր կռահել թուրքերի մտադրությունը: Հենց որ թուրքերը փորձում են մտնել Քասախ գետի կիրճը, բարձունքներում աննկատ դիրքեր գրաված պաշտպաններն ուժգին կրակ են բացել: Թուրքերի մտադրությունը ձախողվել է:

Թուրքական զորաջոկատը Ապարանի պաշտպանների հարվածների տակ հարկադրված նահանջել է և բռնել դեպի Համամլու փախուստի ճանապարհը:

Ապարանի պաշտպանները կրնկակոխ հետապնդում էին թուրքերին: Բոլորն էլ համոզված էին, որ թուրքերին կքշեն մինչև Ալեքսանդրապոլ: Ահա,

այսպիսի պայմաններում կատարվել է անսպասելին:

Ապարանի պաշտպանների մոտ եկած թուրքական բանագնացը տեղեկություն է բերում Բաթումի բանակցությունների մասին:

Դրոն, միակամ, անտեսելով պաշտպանության ղեկավարներին, որոշել է դադարեցնել թուրքերի հետապնդումը, որով էլ նրանց անարգել հեռանալու հնարավորություն է տվել:

Մեծ էր Ապարանի պաշտպանների դժգոհությունը: Դրոն, որի հեղինակությունը խախտվել էր զորաջոկատներն առանց որևէ հիմնավորման Ղազնաֆար ետ քաշելու համար, մեծ ջանքեր գործադրելով, կասեցրել է պաշտպանների հետագա հարձակումը:

Հենց դրա համար էլ Ապարանի մեծ եկեղեցու հրապարակում, Արսեն Տեր-Պողոսյանի ու Դրոյի միջև թունդ վեճ է առաջացել: Եվ խենթի որդին Դրոյի նկատմամբ խենթություն է արել, արժանանալով վեճին ներկա Ապարանի պաշտպանների հիացմունքին:

Այս մասին տողերիս հեղինակին ժամանակին պատմել են տարբեր գյուղերում ապրող Ապարանի պաշտպանության շատ մասնակիցներ, որոնք միաբերան արդարացի էին համարում խենթի որդու խենթությունը:

Անցել են տասնամյակներ: Վաղուց այս աշխարհին հրաժեշտ են տվել Ապարանի պաշտպանները: Եվ դրանից օգտվելով, կուսակցական կորպորատիվ շահերից ելնելով, առանց որևէ հիմքի, Դրոյին է վերագրվել Ապարանի հաղթանակը, հանիրավի մոռացության տալով դրա իսկական կազմակերպիչներին:

Փաստորեն, եթե Դրոյի միջամտությունը չլիներ, ապա Ապարանի պաշտպանները կարող էին հաջողությամբ զարգացնել իրենց հարձակումը մինչև Ալեքսանդրապոլ:

Ահա, այսպես ավարտվում է Ապարանի ճակատամարտը: Թուրքերին չի հաջողվում հասնել իրենց նպատակին:

Եթե Ապարանում թուրքերը հասնեին հաջողության, ապա մինչև Աշտարակ ու Էջմիածին դիմադրող ուժ չկար, որից էլ օգտվելով թուրքերը դուրս կգային Սարդարապատի պաշտպանների թիկունք և անմիջական վտանգ կստեղծեին հենց Երևանի համար:

Անիծելով ասեմ, որ Ապարանի հաղթանակի գործում մեծ էր Սեդրակ Ջալալյանի և Արսեն Տեր-Պողոսյանի մասնակցությունը: Անչափ կարևոր էր գնդապետ Աբրահամ Դոլուխանյանի դերը մարտական գործողությունները մշակելու և ղեկավարելու գործում:

Սակայն, հետագայում Ապարանի պաշտպանության իսկական հերոս-

ներն ու ղեկավարները մոռացության են մատնվել և դաշնակցության մամուլը առաջ է մղել Դրոյին, նրան ներկայացնելով իբրև Ապարանի պաշտպանության կազմակերպիչ ու ղեկավար:

Եվ այս առասպելն ամրապնդելու նպատակով Դրոյի աճյունը տեղափոխվել ու ամփոփվել է Ապարանի Հերոսամարտի հուշակոթողի մոտ, իսկական հերոսների անունները մոռացության մատնելով...

4. ԲԱԹՈՒՄԻ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ

1918թ. հունիսի 4-ին Բաթում քաղաքում կնքվում է «Խաղաղության և բարեկամության դաշինք Օսմանյան կայսրության և Հայաստանի Հանրապետության միջև»:

Մինչև ստորագրված պայմանագրին անդրադառնալը, հարկ եմ համարում ընթերցողին ներկայացնել մեկ-երկու փաստաթուղթ Բաթումի բանակցությունների ժամանակ տիրող մթնոլորտի մասին:

Առաջին. *1918 թ. մայիսի 13-ին Բաթումում Հովհաննես (Ռուբեն) Քաջազնունին և Ալեքսանդր Խատիսյանը տեսակցել են Խալիլ բեյի և Վեհիբ փաշայի հետ: Տեսակցությունը սկսվել է երեկոյան ժամը 11 և կեսին, ավարտվել գիշերվա ժամը 2.30-ին:*

«Խատիսովը,- ասվում է այդ մասին կազմված զեկուցագրում,- շատ ընդարձակ, բայց խճճված, խառնաշփոթ ելույթում բացատրեց, թե ինչու ենք մենք հարկ համարել ունենալ մասնավոր զրույց:...Տրապիզոնում մենք թուրքերի հետ համաձայնության եկանք, որ ընդունելով Բրեստի պայմանագիրը, մենք մեզ պաշտպանում ենք Թուրքիայի կողմից հետագա հավակնություններից. փախստականների վերաբերյալ նախապես ստացանք խոստում, որ նրանց թույլ կտրվի վերադառնալ հայրենիք, բնակվել Վանա լճի շրջակայքում և կպահեն զենքերը, քանի դեռ չեն զինաթափվի հարևան քրդերը: Այս խոստումներով մենք վերադարձանք Կովկաս:

Բայց Բաթումում թուրքերը մեզ պարտադրեցին նոր, ավելի ծանր պահանջներ:...Պարզվում է, որ մենք խաբվել ենք և ինքներս ակամա խաբել ենք մեր ժողովրդին, երաշխավորելով, որ թուրքերը իրենց պահանջներով Բրեստի պայմանագրից հետու չեն գնա».

Խատիսյանին պատասխանելով, Խալիլ բեյն ասել է հետևյալը, «Այն դրդապատճառները, որոնք հարկադրել են Թուրքիային պահանջել Երևանի նահանգի տարածքի նշանակալի հատվածը, վճռական դեր են խաղացել հայերի կողմից Բաքվում և Երևանի նահանգում մուսուլմանների նկատմամբ

հայերի գործադրած բռնությունների մասին Կովկասից եկող լուրերը: Թուրքիայում հասարակական կարծիքն ահավոր կերպով բորբոքված է և բավարարություն է պահանջում»:

Իսկ Վեհիբ փաշան պատմել է այն ահավոր բռնությունների մասին, որոնք թուրքերի նկատմամբ իբր թե կիրառել են նահանջող հայկական զորամասերը և որ ինքը սեփական աչքերով դա տեսել է Երզնկայում, Մամախաթունում և Էրզրումում: Դա տեսել են և իր զինվորները, բայց, այնուամենայնիվ, նրան հաջողվել է իր զինվորներին զսպել վրեժից, որ իր բանակը հայերի նկատմամբ իրեն պահել է բացարձակապես կոռեկտ, թույլ չտալով որևէ բռնություն խաղաղ բնակչության նկատմամբ:

Վեհիբ փաշան ասել է նաև, որ անցնելով 1877 թ. սահմանը, և հետո գրավելով Կարսը, նա բնակչությանը հայտարարել է, որ առանց ազգային խտրականության, կարող են հանգիստ մնալ իրենց տեղերում, որ նրանց կյանքն ու ունեցվածքը գտնվում են օսմանյան բանակի պաշտպանության տակ: Դժբախտաբար, շարունակել է Վեհիբ փաշան, հայերը իրեն չլսեցին և հեռացան քաղաքից: Նա ասում է՝ դժբախտաբար, քանի որ Թուրքիային շահեկան չէ խաղաղ աշխատողների փոխարեն ունենալ դատարկված երկրամաս:

Այնուհետև Վեհիբ փաշան ասել է, որ անգլիացիները շարժվում են դեպի Մոսուլ և Հյուսիսային Պարսկաստան: Թուրքերին հարկավոր է կանխել այդ շարժումը և անհապաղ գրավել Թավրիզը: Նա հայտնեց, որ ունի Էնվեր փաշայի հրամանը՝ ինչ գնով էլ լինի այդ գործողությունը կատարել առավել արագությամբ: Դրա իրականացման կարճ և միակ հնարավորությունը դա Ալեքսանդրապոլ-Ջուլֆա-Թավրիզ երկաթուղու գրավումն է (ՀՀ ԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 23, թ. 9-11):

Նկատենք, որ այս զրույցը տեղի է ունեցել հայկական զորամասերի նահանջի ժամանակ, երբ թուրքերն արդեն մոտենում էին Ալեքսանդրապոլին: Սրանով էր պայմանավորված Խատիսյանի խառնաշփոթ ելույթը: Բայց նաև պետք է ասել, որ թուրքական փաշան կեղծում էր, նահանջող հայկական զորամասերին վերագրելով թուրք բնակչության նկատմամբ կիրառված բռնությունների փաստը: Կեղծում էր, քանի որ նրա նկատի ունեցած տարածքներից թուրք բնակիչները վաղուց հեռացել էին:

Վեհիբ փաշան կեղծում էր նաև իր զինվորների «կոռեկտությունը» վկայակոչելով, քանի որ թուրքերն անխնա կոտորում էին բոլոր այն հայերին, որոնք չէին հասցրել հեռանալ նրա նշած քաղաքներից և այլ բնակավայրերից:

Երկրորդ. *1918 թ. մայիսի 27-ին, այս անգամ Վեհիբ փաշայի նախաձեռ-*

նությամբ, Քաջազնունին և Խատիսյանը մասնավոր հանդիպում են ունեցել Խալիլ բեյի և Վեհիբ փաշայի հետ:

Այս հանդիպման մասին կազմված տեղեկագրում նշվում էր. «Վեհիբ փաշան ասաց, որ ցանկացել է տեսնել մեզ, որպեսզի նորություններ հայտնի Ակեքսանդրապոլից: Ինչպես քաղաքի, այնպես էլ գյուղերի բնակիչների մեծ մասը մնացել են իրենց տեղերում: Նա հրավիրել է քաղաքի ներկայացուցիչներին և հարցրել է, թե արդյոք, բանակի վարքագծից բողոքներ կա՞ն: Նրան պատասխանել են, որ զորքերը իրենց լիովին կոռեկտ են պահում, բայց որոշ մուսուլման գյուղացիների կողմից հայերի նկատմամբ եղել են բռնության դեպքեր: Նա կարգադրել է գտնել մեղավորներին և պատժել: Արդյունքում 11 մարդ մահապատժի է ենթարկվել»:

Այնուհետև Վեհիբ փաշան ասել է. «Երևանի նահանգի սահմաններում իր զորքերի տեղաշարժը նպատակ ունի գրավել հարկավոր կետերը, որպեսզի հնարավոր լինի ապահովել դեպի Պարսկաստան շարժվող զորքերի անխոչընդոտությունը» (ՀՀ ԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 23, թ. 42):

Հարկ է նշել, որ այս հանդիպումը տեղի է ունեցել Սարդարապատի, Ապարանի և Ղարաքիլիսայի ճակատամարտերից հետո, որոնք ավարտվել էին հայկական ուժերի լիակատար հաղթանակով: Բայց, դժբախտաբար, հայկական պատվիրակությունն այդ հաղթանակների արդյունքները չի փորձել արտահայտել ստորագրված պայմանագրում:

Երրորդ. Խատիսյանն իր օրագրային գրառումների մեջ նշել է հետևյալը.

«Տրապիզոնից վերադառնալուց հետո որոշվեց մեկնել Ակեքսանդրապոլ՝ տեղում հայկական զորամասերի մարտունակությունը պարզելու համար: Այս նպատակով ապրիլի 6-ին մեկնեցինք: 18 ձայնով որոշվեց չընդունել Բրեստ-Լիտովսկի պայմանագիրը: Մուսավաթը հարց էր դրել՝ կնքել հաշտություն կամ դուրս է գալիս սեյմից: Պարզվում է, որ վրացիները ի վիճակի չեն պատերազմը շարունակել:

Մեր ներկայությամբ Չխենկելին հարցրեց Լևանդովսկուն և Օդիշելիձեին՝ քա՞նի օր կարող է դիմադրել Կարսը: Պատասխանեցին՝ 3-4 օր: Ապրիլի 10-ին նա հրաման տվեց հանձնել Կարսը: Ապրիլի 11-ին ես և Քաջազնունին հեռացանք կաբինետի կազմից, բողոք հայտնելով: Ապրիլի 12-13-ի գիշերը Ժորդանիան, Ծերեթելին և Գեգեչկորին ինձ ու Քաջազնունուն հայտնեցին, եթե հեռանում եք կաբինետից, ապա Վրաստանն անջատվում է:

Գնացինք Բաթում երկու պայմանով՝ Անդրկովկասի հանրապետության անկախություն և Բրեստ-Լիտովսկի պայմանագրի ընդունում:

Մայիսի 6-ին մեկնեցինք Բաթում (նոր տոմարով):

Երեկոյան ես զրուցել եմ Խալիլ բեյի հետ, որն ասաց, թե իրեն շատ է հետաքրքրում Կովկասի անկախությունը և նա դեմ կլինի Ռուսաստանին, ինչի համար ուզում է Կովկասը տեսնել ուժեղ և միասնական, բայց Թուրքերը վախենում են, որ մենք չենք կարողանա դրան հասնել: Նա ասում էր այն մասին, որ նրանք առաջ չեն գնա, բայց միաժամանակ ասում էր, որ կանեն այնպիսի առաջարկություն, որը, հավանաբար դուր չի գա ձեզ: Նրանց շատ էր հետաքրքրում այն հարցը, թե ինչպես մենք կարող ենք դիմակայել Ռուսաստանին, նրա Կովկաս շարժվելու դեպքում:

Մայիսի 10-ին հանդիպել եմ Ջեմալ փաշայի հետ, որը եկել էր հրաժեշտ տալու: Ջեմալը հայկական հարցի մասին ինձ ասաց. «Հայկական հարցի մասին կարելի է շաբաթներով խոսել: Թուրքիան այս պատերազմում ամեն ինչ դրել է խաղաքարտի վրա և պայքարը կյանքի ու մահվան համար է: Արաբական առածի համաձայն «Երբ մարդուն հասցվում է մահացու հարված, նա գոռում է անմարդկային լեզվով»: Թուրքիային հասցվեց անմարդկային հարված իր արտաքին թշնամիների կողմից և դա բնական էր, բայց հարվածը բալկանյան ժողովուրդների և հայերի կողմից՝ մահացու հարված է: Ահա, թե ինչու Թուրքիան պետք է ձեռնարկեր ինքնապաշտպանական միջոցներ: Եվ հայերի համար վրա հասան սև օրեր: Բայց գնացեք Ադանա, Դիարբեքիր, այնտեղ փողոցներում թափված են Ռիզայի և Տրապիզոնի սոված բնակիչները և մեռնում են սովից: Դուք հասկացեք և մեզ: Ես հասկանում եմ հայ ժողովրդի դառը վիճակը, երբ ես հրամանատարն էի Սիրիայում գտնվող զորքերի: Ես լավ էի վերաբերվում քրիստոնյաների և հայերի նկատմամբ, բայց ոչ որպես պոլիտիկ, և դա ես ապացուցել եմ՝ որպես մարդասեր: Ջարդ ու թալան ես չեմ ընդունում: Ես միշտ կուսակցության մեջ եղել եմ տաք գլուխների կարգավորող, ես խոստանում եմ նաև ձեր հարցում լինել այդպիսին:

Հասկացեք, որ կա պարսկական մի առակ. «Եթե փորձ անողը կրկնի իր փորձը, նա անպայման կզղջա»: Թուրքիան փորձ ունի հայերի հետ կապված: Այն նա չի կարող կրկնել: Զէ՞ որ տերությունների բոլոր միջամտությունները, հատկապես Անգլիայի, առաջ են եկել իբր հայերին օգնելու ցանկությունից, և ի՞նչ ստացան դրանից հայերը: Ոչինչ, նույնիսկ մինուսներ: Ահա, թե ինչու խորհուրդ եմ տալիս չձևակերպել այդ հարցը և այն չդնել հիմա: Ժամանակ տվեք վերքերը բուժելու համար: Զէ՞ որ հիմա չկա վստահություն հայերի և Թուրքերի միջև, իսկ առանց դրա, անհնար են բանակցությունները: Ես խաղաղություն եմ ուզում և աստված վկա է, որ աստծո նախախնամությամբ մեզ վերադարձվեց Կարսն ու Բաթումը և եթե դուք անմիջապես չճանաչեիք Բրեստ-Լիտովսկի պայմանագիրը, ապա դրանով մեզ

համար առիթ ստեղծեցիք ձեզ ներկայացնել էլի նոր պահանջներ: Բայց մենք, այնուամենայնիվ, Անդրկովկասի հետ ցանկանում ենք հանգիստ ու խաղաղ հարևանություն»:

Մայիսի 13- Հանդիպեցինք Խալիլ բեյի և Վեհիբ փաշայի հետ: Խալիլ բեյը պահանջեց բաց թողնել իրենց զորքերը Ջուլֆա-Թավրիզ: Զրույցը տևել է 3 ժամ: Հայկական տարածքային հարցի վերաբերյալ Խալիլը հայտարարեց, որ այդ պահանջներն ահավոր են, որ հայերի վարքագիծը Երևանի ու Բաքվի նահանգներում ստիպում են իրենց վերացնել հայկական ազդեցությունը և Անդրկովկասի ճակատագրում հայերի մասնակցությունը, որ այսպիսին է երիտթուրքերի կոմիտեի ամենավերջին որոշումը:

Անձամբ ինքը, Խալիլ բեյն արտահայտվեց այդպիսի պահանջի դեմ, բայց որպեսզի այն մեղմացվի, հարկավոր է ջանքեր և ժամանակ: Եվ գլխավորը՝ հայ ժողովրդի մեղանչումը և գիտակցումն այն բանի, որ այս պատերազմում հայերը ջարդված են Ռուսաստանի հետ միասին: Դեռ վաղաժամ է հայերի վերադարձը Թուրքիա:

Նույն օրը գերմանացի Լոսևը խորհուրդ էր տալիս դադարեցնել հարձակումները և զուսպ պահել: Հարկավոր է, քանի շուտ է, բացել թուրքական զորքերի ճանապարը դեպի Թավրիզ:

Այսպիսի պայմաններում մենք հայտարարեցինք՝ թող թուրքերը սկզբում ճանաչեն Բրեստ-Լիտովսկի պայմանագիրը, որից հետո մենք կթողնենք զորքերն անցնեն: Ի պատասխան դրա, Խալիլ բեյը հայտարարեց, թե վախենում է, որ եթե նա Կոստանդնուպոլսին հարցում անի Բրեստ-Լիտովսկի պայմանագիրը ճանաչելու մասին, ապա նրանք իրենից կպահանջեն, որպեսզի նա անմիջապես իրականացնի երկու ուլտիմատումը՝ տարածքները զիջելու և զորքերին անցկացնելու մասին:

Մենք հեռացանք այն կարծիքով, որ մենք կարող ենք տալ թույլտվություն զորքերի անցման համար միայն այն պայմանով, որ նրանք ետ վերցնեն իրենց տարածքային պահանջները: Երկու կողմերն էլ պարտավոր են իրենց կառավարություններին հարցում անել:

Մայիսի 15- Առավոտյան ժամը 5-ին Խալիլ բեյից և Վեհիբ փաշայից հաղորդում ստացանք, որ մայիսի 15-ի առավոտվանից Թուրքիայի զորքերը պետք է սկսեն տրանզիտային անցումը դեպի Պարսկաստան Ալեքսանդրապոլ-Ջուլֆա երկաթուղով: Դա միանգամայն անսպասելի էր: Այդ կապակցությամբ ես ժամը 8-ին ուղևորվեցի Լոսևի մոտ: Լոսևը ցնցվեց և ուժգին կայրացավ Թուրքերի վրա, որ նրանք իրեն չեն լսել և կատարել են այդ քայլը: Բոլոր դեպքերում նա խորհուրդ տվեց չսկսել թշնամական գործողություններ, բաց թողնել նրանց և գրել կտրուկ բողոք: Նա ասաց, որ ինքն էլ կբողոքի և հայտարարեց, որ 5 օր զրկված կլինի խոսելու հնարավորությունից: Եթե կապ լիներ, ապա, ակնհայտ է, Բրեստ-Լիտովսկի պայմանագիրը արդեն հարգված կլիներ:

Առավոտյան ժամը 10-ին տեղի ունեցավ հաշտության պատվիրակության նիստը և միաձայն որոշվեց բողոքել, բայց կառավարությանը տեղեկացնել, որ մենք շատ ենք խորհուրդ տալիս խաղաղությամբ թողնել զորքերն անցնեն հատկապես երկաթուղով:

Մայիսի 16- Ռասուլ Զադեն և Հաջինսկին առաջարկում են թուրքերին տալ Ախալցխայի և Սուրմալուի գավառները և այդ կերպ ընդառաջ գնալ մուսուլմաններին և թուրքերին: Ստացվում է, որ թուրքերը նրանց լիազորել են այդ պայմանները ներկայացնել:

Մայիսի 17- Նաղարբեկովի հեռագիրը վկայում է, որ մեր զորքերը չեն կարողացել պաշտպանել Ալեքսանդրապոլը և հանձնել են քաղաքը: Մայիսի 15-18-ի ընթացքում մենք ուղարկեցինք բողոքի նոտաներ երկաթուղին գրավելու դեմ, ինչպես նաև նոտա՝ դաշնակիցների մասնակցության մասին և նոտա՝ Բրեստ-Լիտովսկի պայմանագիրը ճանաչելու մասին:

Մայիսի 19- Հանդիպեցինք Լոսևին և ուղղակի հարց դրեցինք, կարո՞ղ է նա մեզ երաշխավորել Բրեստ-Լիտովսկի պայմանագիրը, թե՞ մենք համաձայնվենք Սուրմալուի և Ախալցխայի գավառների հնարավոր զիջումների վերաբերյալ թուրքերի առաջարկությանը: Նա նորից կրկնեց այն, ինչ ասել էր ինձ: Խալիլ բեյն ուղղակի մատնացույց արեց, որ հայերը պարտված են և պետք է ենթարկվեն: Մեր պատվիրակությունն այն տպավորությունը ստացավ, որ հայերի գործերը շատ վատ են դարձել:

Մայիսի 20-24- Ժորդանիան պոչ է խաղացնում, թե հնարավոր է ուլտիմատում և ուժգնորեն կանգնած է Վրաստանի անկախությունը հռչակելու վրա և այդ կերպ Թուրքիայի հետ կնքելու է սեպարատ հաշտություն: Իմ առարկությանը, թե գեղեցիկ չէ ընկերներին նետել դժբախտության մեջ, նա պատասխանեց. «Ազնիվ վարմունքն այն է, ինչ օգտակար է ժողովրդի համար» և որ «եթե դուք խեղդվում եք, ապա մենք պարտավոր չենք ձեզ հետ միասին խեղդվել», որ «Վրաստանը սովոր չէ լինել Թուրքերի իշխանության տակ, իսկ հայերը սովոր են, որ եթե մուսուլմաններն անջատվեն Անդրկովկասից, ապա Վրաստանը կհեռևի նրանց»:

Ես խորապես հուզվեցի և հարցրեցի Ռասուլ Զադեին, արդյոք Ադրբեջանը մտածո՞ւմ է անջատվել, նա պատասխանեց, որ այդպիսի մտքեր նրանք չունեն: Բացահայտ է, որ վրացիներն առիթ են փնտրում հայտարարելու Վրաստանի

անջատումը, չցանկանալով նախաձեռնությունը իրենց վրա վերցնել:

Եվ երբ հայտնի դարձավ, որ թուրքերը շարժվում են դեպի Թիֆլիս ու Երևան, Զիմենկելին այդ ժամանակ հայտարարեց, որ Վրաստանը, որպեսզի կասեցնի թուրքերին, պետք է հայտարարի Վրաստանի անկախություն, իսկ հայերը պետք է օգնություն փնտրեն գերմանացիների մոտ:

Մայիսի 23- Մենք եղանք Լոսևի մոտ և խնդրեցինք նրան օգնել հայերին պաշտպանելու գործում: Հատուկ հույսեր նա չտվեց և խնդրեց մտածել, թե որքանով է հայերի համար նպատակահարմար, որպեսզի Գերմանիան, չունենալով Կովկասում ռեալ ուժեր, հայտարարի այն մասին, թե նա հայերին վերցնում է իր պաշտպանության տակ:

Մենք 23-ի գիշերը ուղարկեցինք (Գերմանիային- Վ. Պ.) գրավոր հայտարարություն, խնդրելով օկուպացնել Կովկասի հայկական նահանգները: Մյուս կողմից մենք մայիսի 24-ին Կարճիկյանին ուղարկեցինք հեռագիր, խորհուրդ տալով թուրքերին ռազմական դիմադրություն ցույց չտալ և ամեն կերպ պահել զենքերը: Ենթադրում ենք ուղարկել երկու պատվիրակություն Բեռլին և Կ. Պոլիս, այն դեպքում, եթե Անդրկովկասյան պետությունն ընկնի:

25-ի գիշերը Ռաուբքեկովը մեզ զգուշացրեց, որ Խալիլ բեյը հրաման է ստացել ներկայացնել լիակատար ուլտիմատում:

Մայիսի 24- Ստացանք նամակ Լոսևից, որ նա հրաժարվում է միջնորդ լինել, քանի որ թուրքերը մերժել են նրա միջնորդությունը և համաձայնության նրա նախագիծը:

Մայիսի 25- Լոսևը ծրար է ստացել Շուլենբուրգից, որով նա հայտնում է, թե Վրաստանն ուզում է ինքնուրույնություն հայտարարել: 26-ին Ռասուլ Զադեն հեռագիր է ստանում, որով հայտնվում էր, թե 26-ին տեղի է ունենալու սեյմի կարևոր նիստ: Լոսևն ասում է, քանի որ Վրաստանն անջատվում է, չի լինելու Անդրկովկասը, ուստի և նրան անելիք չի մնում և մեկնում է:

Երեկոյան ժամը 10-ին Ժորդանիայից ստացվեց հեռագիր, որ Վրացական ազգային խորհուրդը նախապատրաստել է Վրաստանի անկախության մասին ակտը, որ նախնական բոլոր գործողությունները կատարել են և որ մայիսի 26-ի ցերեկվա ժամը մեկին այդ որոշումը կզեկուցվի սեյմին:

Երեկոյան ժամը 10-ին մենք (ես և Քաջազնունին) գնացինք Լոսևի մոտ: Նա ամենից առաջ խորհուրդ տվեց անմիջապես պատվիրակություն ուղարկել Բեռլին, հայտարարել Հայաստանի անկախություն, դա առայժմ չկապելով Վրաստանի ու Ադրբեջանի հետ, նրա պաշտպանությունը վստահել իրեն և Շուլենբուրգին, թուրքերի հետ չմտնել ռազմական ընդհարման մեջ և այդ

ամենն անել 2-3 շաբաթվա ընթացքում և հաշտության կնքումը չատրազրել միայն Թուրքիայի հետ:

Մայիսի 26- Ժամը մեկին Պապաջանյանը տեսակցել է Խալիլ բեյի հետ: Նա ասել է, որ ինքը Անդրկովկասյան կառավարությանը, եթե ոչ, ապա Անդրկովկասի ժողովուրդներին, այսինքն վրացիների, հայերի և թաթարների ազգային խորհուրդներին կներկայացնի ուլտիմատում և 3 օր կտրամի պատասխանի համար: Եթե հայերը կուզենան համաձայնվել ուլտիմատումին, ապա նրանք ոչ մի բանով դեմ չեն լինի, եթե հայերը 10 հազար քառակուսի կիլոմետրի վրա սարքեն իրենց հատուկ պետությունը: Նրանք այդ պետությունը կճանաչեն և նրա հետ կկնքեն հաշտություն:

Մենք որոշեցինք, որ Հայոց ազգային խորհրդի պատվիրակությունը կմեկնի Թիֆլիս ցերեկվա ժամը 3-ին: Մեկնեցին Օհանջանյանը, Պապաջանյանը, Վրացյանը, Զուրաբովը, Ջաֆարովը և Ռաուբքեկովը: Մենք, բոլորս կանգնած էինք մայթին: Մեկնումի ժամանակ կարծես զգացվում էր, որ փլուզվում է Անդրկովկասը, շարժվեցին ավտոմոբիլները, մեկնեցին պատվիրակները, մենք արցունքների միջից կատակում էինք և պարզ զգացվում էր, որ մուսուլմաններն ու հայերը միմյանց ավելի մոտ են, քան վրացիներն ու հայերը: Մենք բոլորս ճնշված էինք՝ մեզնից անջատվելու մասին Վրաստանի որոշմամբ:

Երեկոյան ժամը 10-ին ստացանք Խալիլ բեյից ուլտիմատում, որով նա պատասխանի համար տալիս էր 3-4 օր ժամանակ, պահանջելով ընդունել ամբողջ ուլտիմատումը, ընդ որում նրանք տարածքի մի մասը քչացնում էին, մի մասը՝ ավելացնում:

Մյուս կողմից, երեկոյան ժամը 10-ին ստացվեց հեռագիր, որ Վրաստանը իրեն հայտարարել է ինքնուրույն, որ սեյմը ցրվել է և Զիմենկելին նշանակվել է Վրաստանի արտաքին գործերի մինիստր:

Մայիսի 27- Ցերեկվա ժամը մեկին Խալիլ բեյն ու Վեհիբ փաշան խնդրեցին մեզ այցելել իրենց: Քաջազնունու հետ եղանք: Վեհիբ փաշան հայտարարեց, որ ինքը եղել է Ալեքսանդրապոլում և անտեղի սպասել է գեներալ Նազարբեկովին, որը չի եկել: Նա ասում է, թե նա առաջ է շարժվում, որպեսզի դրանով օգնի հաշտության բանակցություններն արագացնելու և խորհուրդ տվեց ժամանակ չկորցնել, բաց չթողնել վերջին պահը, ինչպես դա տեղի էր ունեցել Տրապիզոնում:

Վեհիբ փաշան ասաց, որ այսօր կվերցնեն Ղարաքիլիսան և այնտեղ կմնանեն 4 օր, մինչև մեր պատասխանի ստացումը: Խալիլ բեյը խնդրեց

պատասխան տալ Հայաստանի կառավարության անունից, ասաց, որ կապասի մինչև 30-ի երեկո և, որ նա գերազանց հասկանում է հայերի և Հայաստանի դրությունը, բայց այդ հաշտության ստորագրումից հետո նա հույս ունի, որ տարածքների հարցում Թուրքերն ու հայերը համաձայնության կգան:

Վեհիբ փաշան ասաց, որ հայկական զորքերը կռվել են լավ և որ Անդրանիկն անսովոր լավ է կատարում իր գործը և, նա մեծ բավականությամբ հույս ունի կնքել հայ-թուրքական ռազմական կոնվենցիա:

Դրան ես հայտարարեցի, որ թուրքերն ամեն ինչ արել են, որպեսզի փչացնեն հայերի հարաբերությունները Թուրքիայի հետ: Սրան նա պատասխանեց, որ իրենք անձնապես դրանում մեղավոր չեն և, որ Կովկասի մուսուլմանները խնդրել են հայերի և հայկական տարածքների համար:

Մայիսի 28- Մենք մեկնեցինք Թիֆլիս: Թիֆլիսում. ցերեկվա ժամը 5-ին իմացա, որ Դաշնակցություն կուսակցությունը, ազգային խորհուրդը դեմ են արտահայտվել ուլտիմատումի ընդունմանը: Մենք զեկույց ներկայացրինք և որոշվեց ժամը 7-ից մինչև 10-ը կայացնել Դաշնակցության կուսակցության նիստ (բյուրո և Թիֆլիսի կոմիտե): Պարզվում է, որ առավոտյան կուսակցությունը 8 ձայնով ընդդեմ 2-ի արտահայտվել է ուլտիմատումի դեմ:

Իմ և Քաջազնունու ելույթներից հետո քվեարկությամբ 9 կողմ, մեկ դեմով որոշվեց ընդունել ուլտիմատումը: Ընտրեցին պատվիրակություն՝ ինձ (նախագահ), Պապաջանյան և Քաջազնունի:

Մայիսի 30- Ցերեկվա ժամը 2-ին հասանք Բաթում: Ժամը 5-ին եղանք Խալիլ բեյի մոտ և խոսեցինք ընդունված որոշման մասին և խնդրեցինք մի քանի կետերում կատարել տարածքային զիջումներ:

Ժամը 6.30-ին ստորագրեցինք համաձայնություն ուլտիմատումի մասին և ժամը 7-ին ես Վեհիբին հանձնեցի ստորագրված ուլտիմատումը:

Մայիսի 31- Ժամը 10-ին մասնավոր նիստ՝ Վեհիբ փաշայի մոտ: Մենք զեկուցեցինք մեր հինգ ցանկության մասին (տարածքներ, զինվորներ): Նա ասաց, որ ժամը 5-ին մեզ կուղարկի տարածքների վերաբերյալ իր փոփոխությունների նախագիծը: Ժամը 6-ից մինչև գիշերվա ժամը 2-ը կարդացինք պայմանագիրը և ժամը 1.55-ին ավարտեցինք պայմանագրի քննարկումը և տարածքային որոշ ավելացումով տեքստում փոքրիկ ուղղումներ կատարելով: Պայմանագիրը ստորագրելու ենք վաղը, առավոտյան ժամը 9-ին:

Գիշերվա ժամը 2-ին մենք տուն վերադարձանք: Հաստավ տրամադրություն՝ կա Հայաստանը, բայց փոքրիկ ու վիրավորված:

Վեհիբ փաշան ասաց հայ զինվորների հոյակապ որակների մասին և Ղարաքիլիսայի տակ գերազանց մարտի մասին, որտեղ 10 հազար թուրքերի դեմ

կռվել է 7 հազար հայ զինվոր: Նրա խոսքերով հայերն ունեցել են մինչև 1500 սպանված ու վիրավոր:

Հունիսի 1- Ահարոնյանը ոչինչ չգիտեր Ղարաքիլիսայի մոտ 4 օր տևած մարտի մասին: Մենք նրան հայտնեցինք, նրանց կապը Նազարբեկովի հետ բողոքին կտրված է:

Հունիսի 2- Առավոտյան ժամը 10-ին ինձ մոտ եկավ Թերնի Սելիմ բեյը և հայտարարեց, որ վրացիներն ուզում են ամբողջ Բորչալուի գավառը, ես վճռականորեն հայտարարեցի, որ ոչ մի խոսք չի կարող լինել և վրացիների հետ այդ թեմայով չեմ խոսելու: Նա ասաց, որ երջանիկ կլինի, եթե թուրքերն ու հայերը համատեղ ամրապնդեն Ղարաքիլիսան, քանի որ այժմ հայերի և թուրքերի քաղաքականությունը պետք է միատեսակ լինի: Հայերը Կովկասի բուլղարներն են, իսկ վրացիները՝ սերբերը:

Հունիսի 3- Առավոտյան Ռամիշվիլին ինձ հայտնեց, որ նրանք առավոտյան ժամը 5-ին ստորագրել են պայմանագիրը:

Հունիսի 4- Երեկ եղա Խալիլ բեյի մոտ այն կապակցությամբ, որ մեզ պրզելվում է հարաբերություններ ունենալ Թուրքիայի դեմ պատերազմող տերությունների հետ: Այս կետը չկա Վրաստանի հետ պայմանագրում և ես խնդրեցի փոխել այդ կետը նաև մեզ համար և մուսուլմանական հոգևորականության պահպանման վերաբերյալ: Դիվանագիտական հարաբերությունների հարցի կապակցությամբ Խալիլն ասաց, որ նա չի կարող և նույնիսկ խորհուրդ չտվեց այդ կետը վերացնել, քանի որ Կ. Պոլսում Հայաստանի անկախության գաղափարի համար պայքարը շատ ուժեղ է եղել: Շատերը սկզբունքով չեն համաձայնվել անկախ պետության ձևավորմանը և դրա համար հարկավոր է այդ գաղափարը փայփայել: Հակառակորդները վախենում էին, որ Հայաստանը կանջատվի և դրա համար էլ չեն ցանկացել ստեղծել այդ պետությունը: Ահա, թե ինչու այդ կետը որպես կոմպրոմիս, թողնվել է:

Երեկոյան ժամը 7-ին մենք գնացինք պայմանագիրը ստորագրելու: Երեկոյան ժամը 9-ից մինչև գիշերվա ժամը 2-ը տեղի ունեցավ մեծ ճաշկերույթ: Առաջինը խոսեց Վեհիբ փաշան, ասաց, որ ողջունում է մեր բարեկամ վրացիներին ու հայերին: Ելույթ են ունեցել նաև Ռամիշվիլին, Հաջինսկին, Բամմատովը:

Ես ասցի, որ Հայաստանը երբեք չի ձգտել Թուրքիայի սահմաններում լիավատար ինքնուրույնության, նա ձգտել է միայն ավտոնոմիա, այն էլ Թուրքիայի լիակատար պետականության պահպանմամբ: Սակայն այժմ, երբ հաշտության բանակցությունների արդյունքով պատերազմն ավարտվել է,

հանդես է եկել գաղափարը և նույնիսկ իրականացվել է Հայաստանի անկախությունը, և, իհարկե, Հայաստանի անկախությունն առաջինը ճանաչող Թուրքիան դեմ չի լինի նրա հետագա զարգացմանն ու ծաղկմանը և, հայերը սովոր աշխատանքին, մշակութային առաջադիմությանը և իրենց ազատության համար շատ բան են տվել, կկարողանան նոր պայմաններում իրենց համար ստեղծել տանելի կյանք: Իհարկե, Հայաստանի տարածքը շատ փոքր է, բայց հիշելով Ֆրանսիացիների խոսքը. «Mon verre n'est pas grand, mais je bois de mon verre», մենք նույնպես կխմենք մեր բաժակից, հիշելով, որ լավ ապագայի հույսը մեր գլխավոր ժամանակն է:

Նպաստ բերը մատնացույց արեց, որ 200 տարվա ընթացքում Թուրքիան ի դեմս Ռուսաստանի ունի անողոք թշնամու, որ Թուրքիայի հանգիստ զարգացման հավերժական թշնամին եղել է Ռուսաստանը և ուստի նրա ժամանակավոր անհայտացումը Թուրքիային հնարավորություն է տվել զարգացնել իր ծրագիրը: Այդ ծրագրի մեջ մտնում է Կովկասյան ժողովուրդների ազատագրումը և դրա համար էլ ողջունում է Վրաստանի, Հայաստանի և Ադրբեջանի անկախությունը: Թուրքիան չի ուզում կուլ տալ այդ ժողովուրդներին ու այդ պետություններին, ընդհակառակը, նա նրանց ցանկանում է երջանկություն և առաջադիմություն:

Ճաշկերույթի ժամանակ Վեհիբ փաշան ինձ ակնարկեց, որ իրենք հաճույքով կգնան հայերի հետ ռազմական դաշինքի, ինչպես որ նրանք արել են բուլղարացիների հետ և որ դրանից Հայաստանը կարող է շատ օգուտ ունենալ: Խնդրեց մտածել այդ մասին և որ Էնվեր փաշան այդ թեմայով կխոսի: Ընդհանրապես նա հարցը դնում է պարզ և ուղղակի:

Հունիսի 5- Այսօր առավոտյան ժամը 10-ին եղանք Վեհիբ փաշայի մոտ: Նա ասաց, որ մեզ սպաներ կտա Բաքու անցնելու համար: Ասաց, որ սպաներ կտա նաև մեզ մինչև Երևան ուղեկցելու համար: Գիշերվա ժամը 2-ին մեկնեցինք Թիֆլիս» (ՀՀ ԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 657ա, թթ. 91-94):

Հարկ չեմ համարում այստեղ մեկնաբանել Խատիսյանի օրագրային գրառումը: Դա թողնում եմ ընթերցողին: Միայն ուզում եմ ընդգծել, որ այդ օրագրում նշված իրադարձությունները տեղի էին ունենում այն ժամանակ, երբ Սարդարապատի, Ապարանի և Ղարաքիլիսայի ճակատամարտերում պարտություն կրած թուրքական զորքերը բռնել էին փախուստի ճանապարհը:

Ինչպես, որ Բաթումի պայմանագրի ամբողջ տեքստում բարեկամության նշույլ նույնիսկ չկա, դաշնակցության նորօրյա գաղափարախոսները շարունակում են թմբկահարել, թե Բաթումի պայմանագիրը խաղաղության ու բարեկամության դաշնագիր էր, որ համաձայնագիրը ստորագրելով Թուրքիան պաշտոնապես ճանաչում է անկախ Հայաստանի գոյությունը և եզրակացնում. «Այսպիսով, իրականություն դարձավ ազատ ու անկախ Հայաստանը»:

Մինչդեռ Բաթումի ստորագրյալ ու ստրկական պայմանագիրը Հայաստանին չի դարձնում ազատ ու անկախ: Դա պարզ է դառնում Հենց Պայմանագրի 2-րդ հոդվածով, որով որոշվում են «ազատ ու անկախ Հայաստանի» սահմանները՝ 9 հազար քառ. կմ: Այդ հոդվածով Թուրքիային են հանձնվում Հայաստանի ամենահարուստ տարածքները:

Բացի Բրեստի պայմանագրով կատարված տարածքային զիջումից, Թուրքիան զավթում էր Երևանի նահանգից Սուրմալուի գավառը, Ալեքսանդրապոլի և Էջմիածնի գավառների մեծ մասը, Երևանի ու Շարուր-Դարալագյազի գավառների մի մասը: Հայաստանի տարածքը կազմում էր 9000 քառ. կմ. տարածություն, որտեղ բնակվում էին 230.000 հայ, 75.000 մուսլման, 5.000 քուրդ, 5.000 եզդի, 6.000 այլազգիներ (ասորիներ, մոլոկաններ և այլն), ընդամենը 321.000 մարդ: Բացի դրանից այդ փոքր տարածքի վրա տեղավորվել էր 300.000 արևմտահայ գաղթական (Ե. Սարգսյան, նույն տեղը, էջ 377):

3-րդ հոդվածում ասվում էր. «Հայկական հանրապետության կառավարության և Ադրբեջանի հանրապետության կառավարության միջև կնքված, նրանց փոխադարձ սահմանների որոշմանը վերաբերող համաձայնագիրը կհաղորդվի Օսմանյան կայսերական կառավարությանը»:

Սա նշանակում էր, որ այդ սահմանների հարցն անուղղակիորեն դրվում էր Թուրքիայի վերահսկողության տակ:

4-րդ հոդվածով «Թուրքիան պարտավորվում է զենքի ուժով օգնություն ցույց տալ Հայաստանի հանրապետության կառավարությանն այն դեպքում, երբ վերջինս այդ օգնությունը կխնդրի նրանից՝ երկրում կարգն ու հանգստությունն ապահովելու համար»:

Սա նշանակում էր, որ «ազատ ու անկախ Հայաստանի» պետության զինվորության պաշտպանությունը դրվում էր թուրքական զենքի վրա, եթե հանկարծ ժողովուրդն ըմբոստանար այդ խայտառակ պայմանագրի դեմ: Այս հոդվածը, ի միջի այլոց, նույնությամբ կրկնվում է 1920 թ. դեկտեմբերի 2-ին Ալեքսանդրապոլում կնքված պայմանագրում:

5-րդ հոդվածով «Հայաստանի հանրապետությունը պարտավորվում է

գործուն կերպով հակազդել, որպեսզի ոչ մի բանդա չկազմավորվի և չգինվի իր տարածքի սահմաններում, ինչպես և զինաթափել ու ցրել բոլոր բանդաները, որոնք կփորձեն թաքնվել այնտեղ»:

Իհարկե, թուրքերը նկատի ունեին առաջին հերթին այն աշխարհազորային ջոկատները, որոնք թուրքական զորքերին ջախջախել էին Սարդարապատի ու Բաշ-Ապարանի ճակատամարտերում և հատկապես Անդրանիկի զորաջոկատը: Վերջինիս մասին անդրադարձ կլինի հաջորդ էջերում:

6-րդ հոդվածով սահմանվում էր, որ Հայաստանի Հանրապետության մեջ ապրող մուսուլմանների կրոնն ու սովորույթները կհարգվեն: Շարադրվում են նաև մուսուլման բնակչության իրավունքները:

Իսկ Հայաստանի Հանրապետության անունից ստորագրողները նույնիսկ չեն փորձում խուք բացել Թուրքիային անցած տարածքներում ապրող հայերի իրավունքները հարգելու մասին: Նրանց այլևս Արևմտյան Հայաստանը չէր հետաքրքրում:

7-րդ հոդվածով կողմերը համաձայնվում են կնքել հյուպատոսական կոնվենցիա, առևտրական պայմանագրեր, որոնց վերաբերյալ բանակցություններ կսկսվեն այն ժամանակ, երբ Թուրքիան «իր հետ պատերազմի վիճակի մեջ գտնվող պետությունների հետ կկնքի ընդհանուր հաշտություն»:

Այս հոդվածի հիման վրա թուրքերը համաձայնվում են, որպեսզի իրենց կողմից զավթված Ակբանդրապոլում Հայաստանի կառավարությունը ներկայացուցիչ ունենա, որին դարձրել էին թուրքական հրամանատարության կամակատար: Իսկ Հայաստանի կառավարության հետ Թիֆլիսից Երևան եկած թուրքական ներկայացուցիչն իրեն պահում էր թելադրողի նման:

8-րդ հոդվածով կողմերը պարտավորվում էին «փոխադարձաբար թույլ տալ ամեն հնարավոր թեթևացում երկաթուղային տրանսպորտի նկատմամբ, սահմանելով ու կիրառելով իջեցված տարիֆներ»:

Կնքված պայմանագրով երկաթուղու մեծ մասն անցնում էր Թուրքիայի կողմից զավթված Հայաստանի տարածքով և Թուրքիան «մեծահոգաբար» Հայաստանի համար կիրառելու էր «իջեցված տարիֆներ»:

9-րդ հոդվածով Օսմանյան կայսրության և Հայաստանի Հանրապետության միջև փոստային և հեռագրական կապերը վերականգնվելու էին միայն Միջազգային փոստ-հեռագրական միության մեջ մտնելուց հետո:

Սա նշանակում էր, որ անուղղակիորեն Հայաստանի փոստ-հեռագրային կապը դրվում էր Թուրքիայի հակողության տակ և մինչև Թուրքիայի պարտությունը, Հայաստանը արտաքին աշխարհի հետ կապը պահում էր Թուրքիայի միջոցով:

10-րդ հոդվածով սահմանվում էր հետևյալը. «Պայմանավորվող կողմերից մեկի տարածքի բնակիչները կամ համայնքները, որոնք ունեն սեփականության և օգտագործման իրավունք սահմանի մյուս կողմում գտնվող անշարժ գույքի նկատմամբ, կարող են օգտագործել դրանք, չահագործել կամ վարձակալության տալ, վարել կամ վաճառել անձամբ կամ վստահված անձանց միջոցով»:

Կողմերը պարտավորվում էին արգելք չհարուցել այդ նպատակով բնակիչներին սահմանն անցնելու դեպքում:

Թուրքական արշավանքի հետևանքով նրա կողմից զավթված տարածքներից հայ բնակչության մեծ մասը գաղթել էր: Թուրք զավթիչները թալանել ու տարել էին բնակչության ունեցվածքը, ավերել ու ոչնչացրել էին տները, ջրաղացները, այգիները և այլն:

Չնայած այս ամենին, թուրքական կողմը պարզապես գաղթականներից ոչ մեկին արտոնություն չի տվել սահմանն անցնել և տնօրինել իր անշարժ գույքը:

11-րդ հոդվածով Հայաստանի Հանրապետությունը պարտավորվում էր, որպեսզի «Բաքու քաղաքից անհապաղ էվակուացվեն այնտեղ գտնվող բոլոր հայկական զինված ուժերը, ինչպես և ապահովել, որ այդ էվակուացումը առիթ չտա որևէ ընդհարման»:

Թե ինչ ծանր հետևանքներ է ունեցել այս հոդվածի կիրառումը Բաքվի հայ բնակչության համար, անդրադարձ կլինի հաջորդ էջերում:

12-րդ հոդվածով ուժի մեջ էր մտնում Բրեստ-Լիտովսկի պայմանագիրը:

Բրեստ-Լիտովսկում Գերմանիան իր դաշնակիցների հետ Սովետական Ռուսաստանին Կովկասի վերաբերյալ պարտադրել էր աննպաստ պայմաններ: Այդ մասին Լևոն Կարախանը հայտնում էր Թիֆլիս ուղարկած հեռագրով, որի մասին արդեն հիշատակվել է վերևում:

Անդրկովկասյան կառավարությունը խստորեն բողոքում էր, որ Ռուսաստանն իրավունք չուներ Կովկասի մասին պայմանագիր ստորագրել և հայտարարում էր, որ չի ճանաչում Բրեստի պայմանագիրը:

Բայց ահա Բաթումում դաշնակցականները համաձայնվում են երիտթուրքերի հետ և նրանց են հանձնում ոչ միայն Կարսն ու Արդահանը, այլև

Հայաստանի տարածքի զգալի մասը:

Երիտթուրքական կառավարության հետ Բաթումում ստորագրվում է նաև լրացուցիչ պայմանագիր: Ջեմ կամենում ընթերցողի ուշադրությունը ծանրաբեռնել դրա մեջբերումով և միայն բավարարվեմ նչել 1918 թ. հունիսի 2-ին գեներալ Նազարբեկովին Խատիսյանի, Քաջազնունու և Պապաջանյանի ուղարկած հրահանգը, որտեղ համառոտ շարադրվում էր պայմանագրի բովանդակությունը, հատկապես ընդգծելով, որ «Պատերազմի ժամանակամիջոցում մենք կարող ենք պահել մի դիվիզիա, որը կտեղավորվի Թուրքիայի համաձայնությամբ»:

Միաժամանակ նրանք Նազարբեկովին հանձնարարել են.

Առաջին. Դադարեցնել ռազմական գործողությունները Թուրքիայի դեմ:

Երկրորդ. Թույլ տալ թուրքական զորքերին Դիլիջանի վրայով անցնել դեպի Ղազախ (ՀՀ ԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 23, թ. 51):

Անհանգստանալով, որ Հայաստանում ժողովուրդը չի ընդունի Բաթումի պայմանագիրը, դրա ստորագրողները շտապում են խնդրել թուրքական հրամանատարությանը պայմաններ ստեղծել, որպեսզի Հայոց ազգային խորհրդի ներկայացուցիչները հնարավորություն ունենան մեկնել գավառներ և «տեղական հայ ժողովրդին տեղեկացնելու, որ Թուրքիայի և Հայաստանի միջև կնքված է հաշտության պայմանագիր և նրան բացատրելու այդ պայմանագրի մանրամասը և ուղղամիտ կատարման անհրաժեշտությունը»:

Որքան հնարավոր էր համառոտ կերպով ներկայացվեց Բաթումի պայմանագիրը:

1918 թ. հունիսի 2-ին Խատիսյանը պայմանագրի ստորագրման մասին հայտնում է Ա. Ահարոնյանին, գրելով հետևյալը. «Մենք անկախ հանրապետություն «Հայաստանի» անունից ստորագրեցինք պայմանագիրը: Այսպես գործն անիմաստ է: Ուստի մենք բոլորս գտնում ենք, որ այդ ակտը պետք է իրագործել: Բերում ենք մենք վատ հաշտության պայմանագիր, բայց բերում ենք Անկախ Հայաստան՝ տուն, բույն, որտեղ կհավաքվի ժողովրդական միտքը: Այս ամենը կմիացնի, կմիավորի, կբարձրացնի ոգին, իսկ դա կարևոր է» (ՀՀ ԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 23, թթ, 55, 63):

Նույն նամակում Խատիսյանը հայտնում է նաև Վեհիբ փաշայի հետ իր հանդիպման մասին: Վեհիբ փաշան հայտարարել է, որ «Թուրքիայի կողմից Հայկական պետության (թեև փոքր չափերի մեջ) կազմավորման մասին համաձայնությունը շրջադարձային կետ է Թուրքիայի պատմության մեջ, որ դա հայերի հետ հաշտվելու առաջին քայլն է և դրանից հետո հեշտ կլինի լուծել

մի շարք այլ հայկական հարցեր»:

Այնուհետև Վեհիբ փաշան Խատիսյանին հայտնում էր, որ Թուրքիայի այդպիսի վերաբերմունքին նպաստել են. «ա) հայերի քաղաքականության հառակությունը (սկզբում թշնամական, իսկ այժմ՝ հաշտվողական), բ) Ադրբեջանի հետ հաշտության համաձայնությունը, գ) ուլտիմատումին ճիշտ ժամանակին պատասխանելը, դ) Ղարաքիլիսայի տակ իրենց հայերնիքը պաշտպանող հայերի հարգանքի արժանի հերոսությունը»:

Խատիսյանը գրում էր նաև, որ Վեհիբ փաշան հայտնել է, թե Էնվեր փաշան մոտ օրերս գնում է Ալեքսանդրապոլ և իրեն խորհուրդ է տվել մեկնել Ալեքսանդրապոլ Էնվերին հանդիպելու համար: Էնվերին հանդիպելը Խատիսյանը համարում էր օգտակար (**նույն տեղը**):

Խատիսյանի այս նամակից կարելի է եզրակացնել, որ Վեհիբ փաշան խնամքով հայ պատվիրակներից թաքցրել է Սարդարապատի և Ապարանի ճակատամարտերում թուրքական զորքերի գլխովին ջախջախվելու փաստը և մտածված կերպով հիշատակում է միայն Ղարաքիլիսան, որը, չնայած հայկական ուժերի դիմադրությանը, գրավել էին թուրքական զորքերը:

Ավելորդ չեմ համարում ընթերցողին ներկայացնել նաև հունիսի 4-ին, պայմանագիրը ստորագրելուց առաջ Խալիլ բեյի և Խատիսյանի ելույթները:

Խալիլ բեյը հիշեցրել է այն մասին, որ պայմանագիրը «միջազգային հասարակության մեջ տեղ է բացում Հայաստանի հանրապետության համար», որ Թուրքիան ճանաչում է Հայաստանի գոյությունն ու անկախությունը և ասել է հետևյալը. «Ես չեմ ուզում կանգ առնել և հիշել պայքարի այն ցավալի դեպքերը, որ տեղի ունեցան մեր և հայերի միջև: Ես ուզում եմ միայն նշել, որ վերջին ժամանակներս Օսմանյան կայսրության կառավարությունը մեծ հաստատակամությամբ տիրեց իր զգացմունքների վրա և ինձ հանձնարարեց ստորագրել մի փաստաթուղթ, որով ճանաչվում է հայկական կառավարության գոյությունը»:

Խալիլ բեյը վստահություն էր հայտնում, որ «հայ ժողովուրդն օսմանյան կառավարության այս որոշման կարևորությունը լավ կըմբռնի և համաձայնության մի նոր էրա կբացվի մեր ժողովրդի և ձեր ժողովրդի միջև» (ՀՀ ԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 23, թ. 141ա):

Խալիլ բեյը թույլ է տալիս անասելի կեղծիք և մեկ ու կես միլիոն հայերի ոչնչացումը, Արևմտյան Հայաստանի հայաթափումը, ժողովրդին իր պատմական հայրենիքից զրկելը ներկայացնում որպես «ցավալի դեպքեր»:

Իր պատասխան խոսքում Խատիսյանը, իհարկե, արդարացնում է Խալիլ բեյի հույսերը: Նա նույնիսկ համարձակություն չի դրսևորել պատասխանել,

թե ինչ է նշանակում թուրքական բեյի ասած «ցավալի դեպքերը», և ասել է. «Հայաստանը, որի անունով պատիվ ունեմ խոսելու, երկար տարիներ շատ զոհողություններ է կրել, որպեսզի ազգային գոյության իրավունք ստանա: Այսօր բացահայտ կերպով այդ իրավունքը ստացավ և մտավ անկախ պետությունների շարքը»:

Պայմանագրի ստորագրման օրը Խատիսյանը գնահատել է որպես «Մեծ օր», որը «մի հանդիսավոր թվական կհանդիսանա հայերի պատմության էջերում»: Նա հույս էր հայտնում, որ չնայած Հայաստանի տարածքը մեծ չէ, բայց հայ ժողովուրդի ազատության, մշակույթի, աշխատանքի ընդունակությունները Հայաստանի համար արժանավոր տեղ կապահովեն հարևան պետությունների շարքում»:

Իր խոսքի վերջում Խատիսյանը հայտարարել է. «Մենք ուզում ենք, որ կայուն խաղաղություն և հավիտենական բարեկամություն հաստատվի օսմանյան կայսրության և Հայաստանի Հանրապետության միջև և մենք հաստատ համոզված ենք, որ մեր հայ եղբայրները, որոնք հեռացել էին Թուրքիայից, կկարողանան շուտով այնտեղ վերադառնալ և օսմանյան կառավարության ազնիվ քաղաքացիներ դառնալ, որին մենք մաղթում ենք երջանկություն, բարգավաճում և խաղաղություն» (ՀՀ ԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 23, թ. 141ա):

Խատիսյանի պատասխան խոսքի առթիվ, նկատի ունենալով Բաթումի պայմանագրի 6-րդ հոդվածը, հարկ եմ համարում ընդգծել հետևյալը: Այդ հոդվածով ամրագրվել է Հայաստանի տարածքում ապրող մուսուլմանների կրոնն ու սովորույթները հարգելու գործում Հայաստանի Հանրապետության պարտավորությունը և ոչ մի խոսք չկա Թուրքիայի տիրապետության տակ մնացած հայերի կրոնն ու սովորույթները Թուրքիայի կողմից հարգելու մասին:

Չհամարձակվելով այդ խնդիրն արծարծել պայմանագրի մեջ, հայկական պատվիրակության անունից ելույթ ունեցող Խատիսյանը նույնիսկ չի հիշում Թուրքահայաստանը, արևմտահայերին անվանում է Թուրքիայի քաղաքացիներ, չի բացատրում, թե ինչու են նրանք հեռացել Թուրքիայից և հույս է հայտնում, որ նրանք շուտով կվերադառնան Թուրքիա և կդառնան օսմանյան կայսրության ազնիվ քաղաքացիներ:

Բավարարվեմ այս դիտողությամբ և ընթերցողին հրավիրում եմ խորհել Խատիսյանի արտահայտած մտքերի շուրջ:

Բաթումի բանակցությունների և ստորագրված պայմանագրի կապակցությամբ հրամայաբար առաջանում է մի կարևոր հարց: Մի՞թե Սարդարապատի, Ապարանի և Ղարաքիլիսայի հերոսամարտերի իսկական կազմակերպիչներն ու ոգևորողները կարող էին ստորագրել Բաթումի ստորացուցիչ ու խայտառակ պայմանագիրը և ժողովրդին ներկայացնել իբրև «խաղաղության և բարեկամության» պայմանագիր:

Իհարկե, չէին կարող, չէին ստորագրի: Ընդհակառակը, նրանք լի էին վճռականությամբ՝ ազատագրելու Թուրքերից Ակբաբանդրապոն ու Կարսը:

Հարկ եմ համարում անդրադառնալ նաև մի հարցի, որը նույնպես հաճախ «մոռացության» է տրվում:

Խոսքը Բաթումում սկսված բանակցությունների կապակցությամբ Սովետական Ռուսաստանի վերաբերմունքի մասին է:

Բաթումի բանակցությունների ժամանակ Սովետական Ռուսաստանի արտաքին գործերի ժողկոմ Գ. Չիչերինը հայտարարում է բանակցող կողմերին, որ «Ռուսաստանի կառավարության լիազորված ներկայացուցիչներին ևս պետք է մասնակից դարձնել Բաթումի կոնֆերանսին, հակառակ դեպքում ՌՍՖՍՀ-ի կառավարությունը հարկ չի համարի ճանաչել առանց իր մասնակցության կնքված այդ պայմանագիրը»:

Այդ ժամանակ Անդրկովկասում Սովետական Ռուսաստանի միակ պաշտոնական ներկայացուցիչը Կովկասի գործերով արտակարգ կոմիսար Ստ. Շահումյանն էր, որը և պետք է մասնակցեր Բաթումի բանակցություններին:

Դաշնակցությանն ու երիտթուրքերին ձեռնտու չէր Սովետական Ռուսաստանի ներկայացուցչի մասնակցությունը և մերժում են նրա պահանջը:

Ռուսաստանից Անդրկովկասի անջատումից հետո Հայոց ազգային խորհրդում Ա. Ահարոնյանը հայտարարում էր. «Ընդունել առանց վարանմունքների աստրո-գերմանա-թրքական օրենսդրություն»:

Իսկ Տրապիզոնում Ա. Խատիսյանը հայտարարել էր. «Քանի որ Կովկասն անջատվել է Ռուսաստանից, հնարավոր է, որ հայերը կընտրեն իրենց համար թուրքական օրենսդրություն»:

Թրքասիրության այսպիսի արտահայտություններն արժանանում էին երիտթուրքերի ջերմ վերաբերմունքին:

Ահա, օրինակ, Ջեմալ փաշայի վկայությունը. «Դաշնակցություն կուսակցությունն ամենից շատ էր մեր նկատմամբ բարեկամաբար տրամադրված և վախենում էր Հայաստանի նկատմամբ Ռուսաստանի լծից» (Ջեմալ Փաշա, 1913-1919 յոդվածներ, Թիֆլիս, 1923, էջ 109):

Բաթումի պայմանագրի ստորագրումից հետո դաշնակցության գործիչ-

ներն ավելի մեղրածոր գովեստներ էին շռայլում արևմտահայությանը բնաջնջող երիտթուրքական պարագլուխների մասին:

Պայմանագիրը ստորագրելուց անմիջապես հետո Ա. Խատիսյանը հայտարարում է. «Այս փառավոր օրը հանդիսանում է նշանավոր տարեթիվ հայ ժողովրդի պատմության մեջ»

Իսկ երբ Ա. Խատիսյանը Բաթումից վերադառնում է Թիֆլիս, Հայոց ազգային խորհրդում պայմանագրի մասին զեկուցելիս, հայտարարում է հետևյալը. «...Թուրքերը զարգացած և ջենտլմեն մարդիկ են և Թուրքիայի հայերը չէն կարողացել նրանց հետ վարվելակերպ ունենալ»:

Ինչպես ասում են՝ մեկնաբանություններն, իսկապես, ավելորդ են:

Բաթումի պայմանագրի ստորագրումից հետո տեղի ունեցած փոփոխությունը նկատել է նաև այդ օրերին Բաքվից Տաշքենդ վերադարձած «Наша газета» թերթի խմբագիր Հայկ Մկրտիչևը, որը «Դարձյալ դավաճանություն» հոդվածում գրում էր. «Վերջին ժամանակներում մամուլի հայկական օրգաններում նկատվում է խոշոր հեղաշրջում Թուրքիայի և «Մուսավաթի» նկատմամբ: Մինչև այժմ այդ օրգաններում մենք հանդիպել ենք միայն հոդվածների, որոնք նկարագրել են հայերի նկատմամբ թուրքերի գազանությունները: Իսկ հիմա Թուրքիան հայտարարվում է Հայաստանի բարեկամ» («Наша газета», 09. 06. 1918 г.):

Ահա, շատ համառոտ Բաթումի պայմանագրի մասին: Կարծում եմ, որ ընթերցողի համար պարզ է դառնում, թե ինչպես այդ պայմանագիրը ստորագրողները հողին հավասարեցրին Սարդարապատում, Ապարանում և Ղարաքիլիսայում տարած հաղթանակները ու դարձան երիտթուրքերի կամակատարը:

«Наша газета» թերթի խմբագիր Հայկ Մկրտիչևը, որը Բաքու էր մեկնել Թուրքեստանի ժողկոմսովետի հանձնարարությամբ, 1918 թ. հունիսի 9-ին հրապարակում է Շահումյանի տված հարցազրույցը:

Մասնավորապես անդրադառնալով Բաթումում կնքված պայմանագրին, Շահումյանն ասել է հետևյալը. «Ա. Խատիսյանը հիացած է այդպես վերանձն դարձած թուրքերով: Զէ՞ որ, եթե նույնիսկ Կովկասում սրի քաշվի ամբողջ հայ ժողովուրդը, ապա բոլոր դեպքերում Ա. Խատիսյանի համար մի նիստրի պորտֆելն ապահովված է:

Թուրքերն արդեն այնքան էլ անմիտ չեն, որ հրաժարվեն այդպիսի փորձված պետական լակեյի ծառայությունից, ինչպիսին Խատիսյանն է»:

Այնուհետև Շահումյանը բացատրում էր, թե ինչու են թուրքերը խաղում հայերի հետ: «Պարզվել է,- նշում է Շահումյանը,- որ հայ-թուրքական հաշտության հիմնական պայմաններից մեկը վերաբերում է Բաքվից բոլոր հայկական զորամասերը դուրս հանելուն և հայերի աջակցությամբ Բաքուն բոլշևիկներից «մաքրելու» պահանջին»:

Այնուհետև Շահումյանը վկայակոչել է «Тверская правда» թերթի հաղորդումը, որի համաձայն Թիֆլիսից Ելիզավետպոլի վրայով թուրքական ապայի ուղեկցությամբ Բաքու է մեկնել հայկական պատվիրակությունը դաշնակցականներ Մ. Արզումանյանի և Մ. Հարությունյանի կազմով: Այդ պատվիրակության նպատակը պարզ է: Բաքվի հայերին փոխանցել Թուրքիայի պահանջը և նրանց հակել Բաքվից հեռանալ կամ ընտել «չեզոքություն» ստվեռական զորքերի հետ թուրք-ադրբեջանական հարձակվող զորքի ընդհարման ժամանակ»:

«Թուրքիայում հայ ժողովրդին կործանող ավանտյուրիստները,- շարունակում էր Շահումյանը,- չեն հանդարտվում: Երեկ նրանք թուրքահայերի հաշվին Վորոնցով-Դաշկովի հետ դաշինքով տանում էին անմիտ քաղաքականություն, այսօր նրանք «խելացի» են դարձել և տանում են «զգուշավոր» քաղաքականություն: Նրանք ուխտադրժության համար պարգևներ են ապատում Վեհիբ փաշայից»:

Շահումյանը հարկ էր համարում զգուշացնել կրակի հետ խաղացող հայ նացիոնալիստներին: «Հայոց ազգային խորհրդի «զգույշ» քաղաքականությունը,- ընդգծել է Շահումյանը,- կհասցնի կովկասյան հայերին նույն կործանարար հետևանքները, ինչին հասցրել էր նրա «համարձակ» քաղաքականությունը Թուրքիայում թուրքահայերի համար»:

«Եվ որպեսզի,-նշում էր Շահումյանը,- հայ նացիոնալիստներն արժանանան թուրքական փաշաների բարեհաճությանը, ուզում են նրանց արժեքավոր ծառայություն մատուցել՝ Բաքվի հայ մասայի մեջ մտցնելով բարոյալքում: Բայց նրանք մոռանում են, որ Բաքուն հանձնելով, նրանք հենց կորում են այն ճյուղը, որից նրանք դեռ կառչում են: Նրանք մոռանում են, որ եթե թուրքական փաշաները նրանց հետ ինչ-որ փափկանկատությամբ են վարվում, ապա միայն նրա համար, քանի դեռ Բաքուն դիմանում է: Բաքվի անկումով հայկական անփառունակ անկախությունից նույնիսկ փոքրիկ հետք չի մնա: Հայաստանը ուռնակոխ կլինի և հողին կհավասարեցվի»:

«Միամտություն կլինի մտածել,- ավելացնում էր Շահումյանը,- որ թեկուզ ինչ-որ փաստարկներ կարող են խելքի բերել Հայոց ազգային խորհրդի կուրացած նացիոնալիստներին, որոնք, ըստ երևույթին, որոշել են մինչև վերջ խաղալ քաղաքական «Иванушка дурачок»-ի դերը: Նրանք կշարունակեն ժողովրդական մասսաներին կործանման հասցնող իրենց անմիտ դավա-

ճանաչման քաղաքականությունը»:

Հարցազրույցի վերջում Շահումյանն ասել է. «Եվ մենք դիմում ենք այդ մասային: Մի գնացեք այդ դավաճան ազգային խորհրդի հետևից, երես թեքեք այդ ստոր և վախկոտ դավաճաններ Խատիսովներից ու Հարությունյաններից, այլապես դուք կկործանեք այն սուրբ գործը, որը դուք մինչև այժմ ինքնագոհ կերպով պաշտպանում եք, այլապես դուք կկործանեք նաև ինքներդ ձեզ: Վերջնականապես երես թեքեք ձեր արյամբ առատորեն անող արյունարբու բուրժուազիայից և վերջնականապես կանգնեք ինտերնացիոնալիզմի սրբազան դրոշի տակ» («Наша газета», 09. 06 1918 г.):

*Վերջապես կարևոր եմ համարում ընթերցողի ուշադրությանը ներկայացնել Բաքվի դաշնակցության կոմիտեի «Արև» պաշտոնաթերթում 1918 թ. հունիսի 9-ին «Նոր դավադրություն» առաջնորդող հոդվածում հրապարակված գնահատականը Բաթումի պայմանագրի վերաբերյալ: «Մենք ամենաեռանդուն կերպով բողոքում ենք բոլոր նրանց դեմ, որոնք ոտնատակ են տալիս հայ ժողովրդի կամքն ու որոնք ուզում են անջատվել Ռուսիայի դեմոկրատիայից: Հաշտության այն պայմանը, որ կապել է Թուրքիայի հետ Թիֆլիսի Ազգային խորհուրդը, **մատնություն մի նոր ակտ է համալիսանում** (ընդգծումն իմն է- Վ. Պ.), որի նպատակն է խորտակել կովկասեան ողջ դեմոկրատիայի միությունը և մեր երկիրը սրի ու հրի մատնել»:*

«Այդ պայմանագրով,- շարունակում է թերթը,- իրատունք է տրվում թուրք փաշաներին Անդրկովկասեան երկաթուղու գծով զորքեր տեղափոխել, որի նպատակն է՝ արշավանք Բաքվի սովետական իշխանության վրա, որը մեր երկրի միակ իշխանությունն է, որը կապում է մեզ Կենտրոնական Ռուսաստանի հետ:

Մենք վճռականորեն գտնում ենք, որ Կովկասի բոլոր ազգերի աշխատավոր մասսաները չեն կամենում անջատվել Մայր Ռուսիայից, բոլոր այդ մասսաները դէմ են Անդրկովկասի, Վրաստանի և Հայաստանի անկախության:

Վերջին խուքն այժմ պատկանում է Բաքվի պրոլետարիատին, աշխատավոր գյուղացիության, որի կարմիր արմիային և դրանց գլուխը կանգնած սովետական իշխանությունը, որը պետք է ընդխէ բոնատրներին ու մատնիչներին և հաստատէ Անդրկովկասի կենտրոնում սովետների իշխանության դրոշակը: Դէպի կռիվ ենք կոչում մենք ձեզ, Անդրկովկասի բոլոր ազգերի աշխատավոր մասսաներ: Հաղթությունը մերն է» («Արև», հունիսի 9, 1918 թ.):

Իսկ հաջորդ օրը, հունիսի 10-ին «Արև» թերթը, նկատի ունենալով իրեն հայկական գավառների ժամանակավոր բարձրագույն իշխանություն հռչակելու մասին Թիֆլիսի հայոց ազգային խորհրդի հայտարարությունը, որը հրապարակվում է առաջին էջում, գրել է հետևյալը.

«Սակայն փաստը կատարված է: Վրաց դաշանան մենշևիկների և մարդկայնությունից ու մարդկությունից զուրկ արիությունարբու մուսավաթականների ստոր դավադրության շնորհիվ առանց որևէ կռվի Անդրկովկասի անտիկ ամրոցները՝ Ղարսն ու Բաթումը յանձնվեց Տաճկաստանին, Անդրկովկասը Կենտրոնական պետությունից անջատված հայտարարվեց, Վրաստանն էլ նենգորէն անկախ պետություն հռչակվեց»:

Այնուհետև թերթը հայտնում էր, որ այդ բոլորից հետո Թիֆլիսի հայոց ազգային խորհրդից ստացվել է «Հայ աշխատավորության և մեր երկրի բոլոր ազգերի աշխատավորների կամքը, ցանկությունները ու ձգտումները ստանահարող մի վարկաբեկիչ հեռագիր: «Ստեղծում» է Հայաստան: Ազգային խորհրդի պատգամավորությունը Տաճկաստանի հետ խաղաղության պայմանագիր է ստորագրել և իրան ժամանակավորապէս հայկական գավառների «գարձրագույն» և «միակ» իշխանությունն յայտարարել»:

«Կատարել է այսպիսով,- հայտարարում է թերթը,- մի ոճիր: Կատարել է մի ակտ, որը ծաղր է հարիւր հազարներով զոհերի թափած արեան»:

Հայտարարված «անկախ» Հայաստանը գնահատելով որպես հայ ժողովրդի կամքին չհամապատասխանող փաստ, «Արև» թերթն ընդգծում էր, որ դա «երկաթէ շղթաներով կաշկանդում է մեզ, նոր պարան ձգում այդ տանջված ժողովրդի վիզը և վերջնականապէս կորում նրան յեղափոխական Ռուսաստանից, ռուս ըմբոստ աշխատավորներից»:

Բաքվի դաշնակցականների թերթը «ամենաբուռն կերպով» բողոքելով «Հայ ժողովրդի կամքը ոտնահարողների դէմ», հայտարարում էր. «Մենք չենք ցանկանում պոկել Ռուսաստանի աշխատավորությունից»:

*«Արև» թերթը իր խմբագրական հոդվածի վերջում գրում էր հետևյալը. «Թիֆլիսի հայ ազգային խորհրդի պատգամավորության Տաճկաստանի հետ ստորագրած խաղաղության պայմանագիրը **դավադրական մի նոր ակտ** է (ընդգծումն իմն է- Վ. Պ.), սրտի կսկիծով յայտարարում ենք մենք, որի նպատակն է Անդրկովկասի բոլոր աշխատավորության ուժերը ջլատել և մեր երկիրն այնուհետև սրի և հրի ճարակ դարձնել:*

Տաճկական բռնակալ փաշաներին ամենանողկալի կերպով իրատունք է տրված նաև «Անդրկովկասեան երկաթուղիներով տեղափոխել իր զորքերը», որի անմիջական հետևանքն է լինելու ոչնչացնել Բաքվի խորհրդային-աշխատավորական իշխանությունը, որը մեր երկրի աշխատավորության շահերի

միակ պաշտպանն է և Կենտրոնական պետության հետ կապ պահողը» («**Արև**», հունիսի 10, 1918 թ.):

Պետք այս առնչությամբ նկատել և հատուկ կերպով ընդգծել, որ Բաքվի դաշնակցականների հայտարարությունը միանգամայն անկեղծ էր, որի վրա ուշադրություն էր դարձրել նաև Վ. Տերյանը 1918 թ. հունիսի 30-ին Հայկական գործերի կոմիսարիատի «Կոմունիստ» թերթում հրապարակված հոդվածում: «Ինչպես հայտնի է,- գրել էր Տերյանը,- Թիֆլիսի Ազգային խորհրդի մեջ նստած մատնիչների մեծ մասը...դաշնակցություն կուսակցության անդամներն են: Այդ պարոններին Բաքվի «Արեւը», ամենայն իրավմամբ, դավաճան է անվանում, և մենք չենք կարող չհամաձայնել, որ այդ որակումը միանգամայն ճշմարիտ է» (**Վահան Տերյան**, Երկերի ժողովածու, հ. երրորդ, Եր. 1975, էջ 166):

Իսկ Բաքվի դաշնակցականների «Вперед» թերթը գրել էր հետևյալը. «Այն ժամանակ, երբ արյունաքամ եղած հայկական զորքերը անհավասար մարտեր էին մղում արշավող թուրքերի դեմ, և նահանջում էին անհամար զոհեր տալով, վրացական քաղաքական գործիչները գաղտնի, թուրքերի հետ բանակցություններ վարելով, կարգավորում էին իրենց գործերը՝ սրտալի բլոկ կազմելով կովկասյան թաթարական բեկերի ու խանների հետ»:

Այնուհետև թերթն ընդգծում էր, որ վրացի «սոցիալիստ» իշխանների ու աղրբեջանական բեկերի դաշինքը թուրքական փաշաների թելադրանքով «հայերի համար ստեղծեցին նոր թակարդ Անդրկովկասի «անկախության» տեսքով և հետո նոր ստեղծված երեք հանրապետությունների տեսքով»:

«Եթե,- եզրակացնում էր Բաքվի դաշնակցականների թերթը,- Վրաստանի համար հայտարարված անկախությունը ճարպիկ մանևր էր իրեն թուրքական սվիններից պաշտպանելու համար, եթե Աղրբեջանի համար անկախության հռչակումը համարվում էր մուսուլման ապստամբ գյուղացիների ավերածություններից բեկական կալվածքները փրկելու միջոց, ապա թուրքական զավթիչների կամայականությանը հանձնված Հայաստանի համար անկախության հայտարարումը եղավ իրենց հարևան դավադիրների կողմից չար ծաղրանք հայ ժողովրդի նկատմամբ, դավադիրներ, որոնք Պիղատոսի նման հեռացան, մաքրելով իրենց ձեռքերը» («Вперед», 05.01.1919):

Առայժմ բավարարվեմ ասվածով, քանի որ հաջորդ էջերում կնշվեն այն բոլոր պատճառները, որոնց ուժով Բաքվի դաշնակցականները հարկադրված են եղել փոխել իրենց դիրքորոշումը և ենթարկվել Թիֆլիսի ազգային խորհրդի **մատնիչների կամքին**:

ԳԼՈՒԽ 20
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ՀՌՉԱԿՈՒՄԸ

Նկատի ունենալով Բաթումի պայմանագիրը և Հայաստանի անկախության հռչակումը, Շահումյանը, «Советский Туркестан», թերթի թղթակցին տված հարցազրույցում ընդգծում էր հետևյալը. «Անկախ» Հայաստանի կազմում մտնում է միայն Երևանի նահանգը, այն էլ ոչ լրիվ: Մի՞թե հնարավոր է անկախ Հայաստանն առանց Մուշի, Վանի ու Էրզրումի, առանց բազմաչարչար հայ ժողովրդի, որի կեսը կոտորվել է Թուրքական Հայաստանում: Դա ոչ թե հանրապետություն է, այլ բուտաֆորիա, ինչպես վրացականը»: («Советский Туркестан», 23. 06 1918г.):

Ասածի կապակցությամբ հարկ եմ համարում մի քանի նկատառում ներկայացնել ընթերցողի ուշադրությանը:

Թուրքական զավթիչների դեմ Սարդարապատի, Ապարանի, Ղարաքիլիսայի ճակատամարտերում հայկական բանակի և աշխարհազորայինների տարած հաղթանակներն առաջ էին բերել հսկայական խանդավառություն, վերականգնվում էր ժողովրդի վստահությունը սեփական ուժերի նկատմամբ:

Մնում էր կատարել մի վճռական քայլ ևս: Դա Ալեքսանդրապոլի ազատագրումն էր, որը լիովին հնարավոր էր Սարդարապատի ու Ապարանի հաղթանակից հետո:

Ահա, թե ինչ է գրել Ս. Վրացյանը. «Մայիսի 28-ին ամբողջ ճակատի վրայ թուրքերը նահանջում էին անկարգ: Մեր սպայակոյտի այդ օրուայ հաղորդագրությունը ասում է այդ մասին. «Թուրքերը երեք օրուայ կռիվներից յետոյ, ջարդուած են և նահանջում են հապճեպով: Ոգևորությունը աներեւակայելի է»:

«Զորավար Սիլիկյանը, - շարունակում էր Վրացյանը,- այլևս մտածում էր աւելի լայն գործողություններ մասին- շարժուել դէպի Ալեքսանդրապոլ: Իր մտքում նա օրորում էր ուրիշ ծրագիր, որ միայն մտերիմներին էր յայտնում. մի կողմ թողնել Ալեքսանդրապոլը եւ յարձակվել Կարսի վրայ: Եւ համոզված էր, որ կը գրաւէր Կարսը: Իսկ Կարսի գրաւումով անխուսափելիորեն կը գրաւէր Ալեքսանդրապոլը, թիկունքից կտրուած թուրքերը չէին մնայ Շիրակում» (**Ս. Վրացյան**, նույն տեղը, էջ 91):

Ընթերցողին առաջարկում եմ չմոռանալ Ս. Վրացյանի վկայությունը՝ «Մայիսի 28-ին ամբողջ ճակատի վրա թուրքերը նահանջում էին անկարգ»:

Մայիսի 29-ին, երբ թուրքական զորքերը խառնաչփոթ նահանջում էին, Սիլիկյանը կոչով դիմում է հայ ժողովրդին, որտեղ ասվում էր. «Մենք պետք է ետ առնենք Ալեքսանդրապոլը, որը այնպես նենգորեն զրավեցին թուրքերը:

Մեր բոլորիս մտքերը ամբողջապես պետք է սեւեռած լինեն դէպի Ալեքսանդրապոլը: Մենք պետք է ետ առնենք այն և ապա միայն թուրքերի հետ բանակցութեան մեջ մտնենք հաշտութիւն կնքելու համար:

Մեզ բոլորիս շատ լաւ պէտք է հայտնի լինի, թէ որ աստիճանի գրգռվել է անկուշտ և միաժամանակ թույլ թուրք կառավարութեան ախորժակը: Նա պահանջում է ամբողջ Ախալցխայի, Ախալքալակի, Ալեքսանդրապոլի և Էջմիածնի գավառները Էջմիածնի վանքի հետ միասին և Երևանի, Նախիջևանի գավառների մեծ մասը:

Մի՞թէ մենք պէտք է տանենք այդպիսի անարգանք: ... Ոչ, երբէք, հայ ժողովուրդ, դու չպէտք է թույլ տաս այդպիսի անարգանք: Եվ անարգանքը տեղի չի ունենա, եթէ մենք հասնենք Ալեքսանդրապոլ»:

Սիլիկյանը հայ ժողովրդին ուղղած իր կոչն ավարտում էր հետևյալ խոսքերով. «Քեզ մնացել է մինչև Ալեքսանդրապոլ, հարկավոր է օգնել խրամատներում գտնվող մեր քաջերին և մի երեք-չորս օրից հետո մենք կհասնենք մեր նպատակին: ... Դեպի՝ Ալեքսանդրապոլ»:

Հայ ժողովրդին ուղղված կոչը փաստում էր մի կարևոր հանգամանք: Հայկական բանակի հրամանատարությանը հայտնի էին Բաթումի բանակցությունների ժամանակ թուրքերի ներկայացրած պահանջները:

Բանակի հրամանատարությունը ոչ միայն դեմ էր այդ պահանջներին, այլև գտնում էր, որ թուրքերի հետ բանակցություններ պետք է վարել միայն Ալեքսանդրապոլը ազատագրելուց հետո, որն այն ժամանակ միանգամայն հնարավոր էր իրագործել:

Ընթերցողի ուշադրությունը հարկ եմ համարում հրավիրել նաև այն հանգամանքի վրա, որ եթե հայկական բանակի հրամանատարությունը տեղյակ էր Բաթումի հայ-թուրքական բանակցությունների մասին, ապա, անպայման, մայիսյան հաղթանակների և հայկական բանակի հրամանատարության վերաբերմունքի մասին պետք է տեղյակ լինեին Բաթումում գտնվող ազգային խորհրդի ներկայացուցիչները:

Բայց կատարվում է անսպասելին: Դարձյալ նախաձեռնությունն իր ձեռքն է վերցնում դաշնակցության թրքասեր ղեկավարությունը, որի ներկայացուցիչները հունիսի 4-ին թուրքերի հետ ստորագրում են խայտառակ

պայմանագիր, թիկունքից հարվածելով հայկական բանակին ու հայ ժողովրդին:

Եվ այն պահին, երբ Սիլիկյանը պատրաստվում էր հայկական զորագնդերը տանել դեպի Ալեքսանդրապոլ, ստացվել է Նազարբեկովի հրամանը՝ դադարեցնել հարձակումը և թուրքերի հետ կնքել զինադադար:

Ս. Վրացյանը վկայում է, թե «Նազարբեկովի հրամանը զորքի մեջ ստեղծեց անսահման հուսահատություն»:

«Ազգային խորհուրդը,- գրել է Ս. Վրացյանը,- անընդհատ նիստեր էր գումարում, բայց որոշ եզրակացութեան չէր կարողանում յանգել. մեծամասնութիւն չէր կազմում: Արամը գրեթէ չէր մասնակցում այդ նիստերին, նա ամփոփուել էր իր մէջ և սպասում էր Զօր. Նազարբեկեանին: Ազգային խորհուրդն ալեկոծվում էր առանց նրան»:

Այնուհետև, նկարագրելով Երևանի ազգային խորհրդում ծավալված բուռն բանավեճը, Ս. Վրացյանը հայտնում էր, թե դաշնակցականները պահանջում էին «չեղյալ համարել Զօր. Նազարբեկեանի հեռագիրը հաշտության մասին, զօրքերի ընդհանուր հրամանատար նշանակել Զօր. Սիլիկյանին և շարունակել պայքարը»:

Իհարկե, Ս. Վրացյանը ճիշտ է նկարագրում Երևանի ազգային խորհրդում ստեղծված իրավիճակը: Բայց դրա հետ միասին փորձում է դաշնակցության վրայից հանել թուրքերի հետ ստորացուցիչ պայմանագիր ստորագրելու պատասխանատվությունը և մեղքը բարդել Նազարբեկովի վրա:

Հայտնելով, որ զորքը խիստ բացասական վերաբերմունք ունի «դեպի Բաթումի դաշնագիրը» և պահանջում է շարունակել պատերազմը, Ս. Վրացյանը գրում էր. «Այս տրամադրութեան ոյժ էր տալիս, մանաւանդ, այն հանգամանքը, որ, ըստ դաշնագրի պայմանների, երկրի ամենահարուստ մասը յանձնում էին թշնամուն, եւ Ղամարլուն, որ դէռ չէր գրաւած թիւրքերի կողմից, բայց դաշնագրով պիտի անցներ նրանց»:

Ս. Վրացյանը հայտնում էր նաև, որ «Ազգային խորհուրդը չկարողացավ միակամութիւն երաւն բերել, եւ Զօր. Սիլիկեանին մնաց ենթարկուել Զօր. Նազարբեկեանի հրամանին»:

*Կնքված պայմանագրի համաձայն, ինչպես գրել է Ս. Վրացյանը. «Թիւրքերը դիրքեր գրաւեցին Երեւանից 7 քիլոմեթր հեռու՝ թնդանօթների բէրանները ուղղելով դէպի Հայաստանի մայրաքաղաքը» (**Ս. Վրացյան**, նույն տեղը, էջ 122):*

Բաթումի պայմանագրի դեմ ըմբոստանում են բոլորը, բացի դաշնակցու-

թյան ղեկավարներից:

Գործող բանակում գտնվող հայ զինվորներն ու հրամանատարները վճռականորեն մերժում էին Բաթումի պայմանագիրը և այն ստորագրող գործիչներին անարգանքի սյունին գամում:

Բանակից ստացվում էին բողոքի բազմաթիվ նամակներ ու հեռագրեր: Բանակում տիրող մթնոլորտի, պայմանագրի նկատմամբ ձևավորված մերժողական վերաբերմունքի մասին ստացված բազմաթիվ հեռագրերից բերեմ միայն մեկը:

«Ոչ Թիֆլիսը, ոչ ալ Բաթումը,- հայտարարում էին հայ զինվորներն ու հրամանատարները,- լիազորված չեն հայերի անունից վերջնական բանակցութիւն վարելու Թուրքերի հետ: Հաշտութեան պայմանները կատարելապէս ամոթալի և ստորացուցիչ են հայերի համար: Ինչ եղբակցութեան էլ որ հանգեն այս կամ այն ազգային կազմակերպութիւնները, քանի դեռ հայ ժողովրդի ֆիզիկական գոյութեանը սպառնում է ահավոր վտանգը, մենք զենքը չենք թողնի և կկռվենք մինչև մեր արեան վերջին կաթիլը: Կորչի ամոթալի հաշտութիւնը» (**«Աշխատանք»**, հունիսի 8, 1918):

Ահա զինված ժողովրդի ու նրա բանակի վերաբերմունքը, նրա միակ պատասխանը Բաթումում կատարված դավահանութեանը:

Դիլիջանում գտնվող հայկական զորաջոկատների հրամանատարությունը ստանձնելու և Ղարաքիլիսան Թուրքական զավթիչներից ազատագրելու նպատակով այստեղ է գալիս Անդրանիկ Օզանյանը: Դիլիջան հասնելու ժամանակ էլ ստացվում է Բաթումի պայմանագրի ստորագրման լուրը: Բոմն էր ժողովրդական հերոսի զայրույթը:

Հենց Դիլիջանից Անդրանիկը Նազարբեկովին ուղարկում է հետևյալ հեռագիրը. «Ստրուկութեան շղթան դարձեալ ձեր վիզն ու ոտքը կանցնէք ձեր ձեռքով: Չեմ կրնար այս պայմաններուն հանդուրժել, մոռանալով մեր երեսուն տարիներուն զոհերը և մէկ միլիոն նահատակները: Ստացէք ինձմէ Տիլիճանը, որպէսզի ես մեկնիմ ուր որ կուզամ» (**Զօր. Անդրանիկ կը խօսի**, էջ 49):

Երևանում լույս տեսնող «Աշխատանք» թերթը 1918 թ. հունիսի 8-ին գրում էր. «Գրչի թեթև շարժումով մը վերջացավ ամէն ինչ, թաղվեցան ապագայ հույսերն ու երազները, թողնելով սեւ, մռայլ իրականութիւն մը՝ ճնշող, խորտակող և մահաւան չափ սարսռազդեցիկ: Տրապիզոնի եւ Բաթումի կատակերգութիւններն անսպասելի ու ողբերգական վախճան ունեցան, թեւաթափ ընելով հայ ժողովուրդը եւ մատնելով զայն ստրկական կենցաղի մը: **Նենգ ու դավաղիր թշնամին այս անգամ ալ հաջողեցաւ խաբկանքով ի գլուխ**

բերել իր զենքի ուժով ընել չկրցածը» (ընդգծումն իմն է-Վ.Պ.):

Արևմտահայ դաշնակցության «Աշխատանք» թերթը ցավով հարցնում էր. «Ինչո՞վ սրբէնք մեր ճակատի մուրը, եթէ միայն անարգանքի սիւնին բարձին պիտի լինինք, երբ միայն անեծքի պիտի արժանանանք»:

Արտահայտելով բոլոր նրանց տրամադրությունը, ովքեր դեմ էին Բաթումի պայմանագրին, նույն «Աշխատանք» թերթը գրում էր. «**Ընդունուած է Թուրքիոյ վերջնագիրը, գիջած են այդ հողատարածը ստանց հայութեան կամքին եւ կարծիքին, սպա ուրեմն գործուած է յանցանքներուն ամենամեծը, դաւաճանութեան ամենատգեղին, որոնց նմանը հայկական տարեգրութեան մէջ չէ եղած դեռ**»(**«Աշխատանք»**, հունիսի 8, 1918):

Ահա, այսպիսին է եղել ժամանակակիցների գնահատականը՝ այնպես սպանիչ:

Միայն հետո, քաղաքական շահերից ելնելով, իրենց գործած «յանցանքներու ամենասեւը, դաւաճանութեան ամենասոսկալին» կոծկելու նպատակով պայմանագիրը ստորագրողները սկսում են նոր փեթուրներ հագնել, ներկայանալ որպես հայ ժողովրդի փրկիչներ և «անկախության» ծխածածկությամբ բթացնել անտեղյակ մարդկանց գիտակցությունը:

Երևանում շարունակվում էին բողոքի ցույցերը, ոչ ոք չէր ընդունում Բաթումի պայմանագիրը: Սակայն, շուտով Արամ Մանուկյանը ստանում է Ա. Ահարոնյանի և Ն. Աղբալյանի նամակը, որով պահանջում էին վերջ տալ բողոքներին և ընդունել պայմանագիրը:

Այդ նամակում ասվում էր. «Հայոց ազգային խորհուրդն օրերս կը յայտարարի հանրապետութեան անկախութիւն: Այդ քայլը հրամայական անհրաժեշտութիւն է, որպէսզի քաղաքական արժեքավորութիւն տանք մեր ստորագրած պայմանագրին» (**ՀՀ ԱԱ**, ֆ. 200, ց. 1, գ. 562, թ. 11):

Արամ Մանուկյանին մնում էր ենթարկվել իր ղեկավարների պահանջին և հունիսի 9-ին հրավիրված Երևանի ազգային խորհրդին ստիպում է ընդունել պայմանագիրը:

Այս խորհրդի նիստում էլ Դանիել Բեկ-Փիրումյանն արտահայտելով հայկական բանակի վերաբերմունքը, զայրացած հայտարարել է. «Ես չեմ կարող իմ հաղթական զորքին հայտնել այդ խայտառակ լուրը, նրան ետ դարձնել իր արյունով նվաճած դիրքերից: Նահանջը կազմալուծիչ կլինի իմ զորքի համար: Ես գիծ չեմ վերադառնա: Գնացէք և այդ սև գործը դուք ինքներդ կատարէք» (**Հ. Թուրշյան**, Սարդարապատի հերոսամարտը, էջ 223):

Բաթումի պայմանագրի համաձայն Թուրքերն անցնում են Արաքս գետը:

Դավաճանությամբ խաբված հայկական բանակը, որը հաղթել էր ռազմաճակատում, ստիպված, գլխիկոր նահանջում էր:

Բաթումում կատարված դավաճանությունն առաջ է բերել նաև շարքային դաշնակցականների դժգոհությունը: Դրա արտահայտությունը Ի. Կարճիկյանի սպանությունն է:

*Ահա, թե ինչ է այդ մասին գրել Բաթումի խայտառակության գլխավոր հեղինակներից մեկը՝ Ա. Խատիսյանը. «Սպանիչը Եգոր Մինասեան, դաշնակցական մըն էր, որ բանտարկուած էր: Դատարանին մէջ ան յայտնեց, թէ սպանած է Կարճիկյանը նկատելով զայն մեղաւոր այն բանի համար, որ կովկասեան իշխանութիւնները զրկեցին Կովկասը ռուսական օգնութենէ եւ այդպէսով թուրքերուն հնարաւորութիւն տուին Պաքուի մէջ կոտորած սարքել» (**Ա. Խատիսեան**, նույն տեղը, էջ 97):*

Հարկ եմ համարում Խատիսյանի հաղորած տեղեկությունը լրացնել ընթերցողին ներկայացնելով Եգոր Տեր-Մինասյանի դատավարությունը: Եգորը, որը եղել է Դրոյի մանկության ընկերը, 1918 թ. նոյեմբերի 4-ին մտնում է խնամատարության մինիստր Կարճիկյանի առանձնասենյակ և պարենավորման կոմիսար Շարաֆյանի ներկայությամբ մաուզերի երեք կրակոցով սպանում է նրան ու փախչում:

Սպանությունը կատարելուց հետո Եգորը Դրոյին մի երկտող է ուղարկում, որով հայտնում էր, թե կհանձնվի միայն այն դեպքում, եթե իրեն դատեն ոչ թե զինվորական դատարանով, այլ սովորական դռնբաց դատարանով, որպեսզի «ժողովուրդն իմանայ այդ սպանութեան դրդիչները»:

Եգորի պահանջը կատարվել է և նա հանձնվել է Երևանի միլիցիային:

1919 թ. ապրիլի 30-ին սկսվել է Եգորի դատավարությունը: Նա հրաժարվել է դատապաշտպանից և ինքն է իրեն պաշտպանել: Դատավարության ավարտին դատախազը պահանջել է «պատժի ամենախստագոյն չափը»:

Տեր-Մինասյանին հնարավորություն է տրվել ասել իր վերջին խոսքը: Նա հանգամանորեն խոսել է հայ ժողովրդի ազատագրական պայքարի մասին, խորին հարգանքով հիշել է դաշնակցության հիմնադիրներ Քրիստափորին, Սիմոնին և Ռոստոմին:

Այնուհետև անդրադարձել է դաշնակցությունը կուսակցությանը և նրա անդամներին բաժանել է երեք խմբի:

Առաջին խմբի մեջ են մտնում Քրիստափորը, Սիմոնը, Ռոստոմը և հետո Արամ, Ռուբեն՝ «գաղափարական գործիչներ, որոնք գործել են ժողովրդի մեջ և ժողովրդի հետ են եղել ծանր օրերում»:

Նա չափազանց բացասական կարծիք է հայտնել երկրորդ խմբի գործիչների մասին, որոնք «եկել են շարունակելու Քրիստափորի և ընկերների սկսած գործը»: Ըստ նրա, այդ գործիչները «հաստատուն բարեկամներ չեն ժողովրդի, որովհետև նրանք միշտ խոյս են տվել այդ ժողովրդի մեջ գործելուց և գերադասել են կենտրոններում նստել, փափուկ կեանք վարել և այնտեղից թելադրել»:

Երրորդ խմբի մեջ Եգորը դասել է նրանց, ովքեր «յաճախ թոյլ են տալիս այնպիսի քաղաքական անիմաստ քայլեր, որ չափազանց վտանգաւոր հետևանքներ է ունենում հայ ժողովրդի շահերի վերաբերեալ»:

Տեր-Մինասյանը երրորդ խմբի մեջ է դասել Կարճիկյանին, որը «կամատրական շարժման կազմակերպիչներից և եռանդուն գործիչներից մէկն էր: Եւ որովհետև կամատրական շարժումը ունեցաւ այնքան տրագիկ հետևանք հայ ժողովրդի համար, ուստի և այդ դժբախտութեան համար հայ ժողովրդի առաջ գլխաւոր պատասխանատուներից մէկն էլ Կարճիկեանն է»:

Տեր-Մինասյանը խոսել է պատերազմի հետ կապված վերջին դեպքերի մասին և նկատի ունենալով Կարսի անկումը, նշել է, որ այդ ժամանակ Կարճիկյանը «մինիստր էր Կովկասեան սեյմի: Նա իբրև հայ ժողովրդի շահերի ներկայացուցիչ, նա պիտի չափազանց ուշադիր լիներ ամեն մի նոր երևոյթի կամ դէպքի: Եւ երբ Զիմենկելին իր պատմական հեռագիրն է ուղարկում Ղարսը թուրքերին յանձնելու համար, Կարճիկեանը ոչ մի դրական քայլ չի արել տեղեկացնելու ժամանակին հայ ներկայացուցիչներին Ղարսում և Ալեքսանդրապոլում, այդ դժբախտութեան առաջն առնելու համար»:

*Դատարանը Ե. Տեր-Մինասյանին դատապարտել է 10 տարվա տաժանակիր աշխատանքի, զրկելով բոլոր իրավունքներից (**«Ազատ»**, ապրիլի 30, 1919 թ.):*

ԹՈՒՐՔԻԱՆ «ԱՆԿԱԽ ՀԱՅԱՍՏԱՆ» Է ՍՏԵՂԾՈՒՄ ԻՐ ՍԵՓԱԿԱՆ ՇԱՀԵՐԻՑ ԵԼՆԵԼՈՎ

Վարպետորեն իրականացնելով «բաժանիր և տիրիր» թալանչիական սկզբունքը, երիտթուրքական կառավարությունը դեռևս Տրապիզոնի բանակցությունների ժամանակ պահանջել էր հռչակել Անդրկովկասի անկախություն, որը նշանակում էր անջատվել Ռուսաստանից:

Թուրքերի պահանջով հռչակվում է Անդրկովկասի անկախությունը: Նրանց պահանջով հռչակվում է նաև Հայաստանի, Վրաստանի ու Ադրբեջանի անկախությունը և Բաթումում սկսվում են առանձին բանակցություններ:

Թուրքական բանակի կրած պարտությունը երիտթուրքական կառավարությանը ստիպում է արագացնել հաշտության կնքումը, քանի որ իրավիճակը, իսկապես, զարգանում էր հայերի օգտին:

Հարկավոր էր արագացնել բանակցությունները և կնքել հաշտություն: Ու պարտված կողմը հաղթող կողմին ներկայացնող պատվիրակությանը տալիս է վերջնագիր՝ պատասխանել մինչև մայիսի 28-ը, որը նշանակում էր հռչակել անկախություն և անկախ երկրի անունից ստորագրել հաշտության պայմանագիր:

Հայաստանի գործերից շա~տ տեղյակ Ա. Ահարոնյանն ու Ն. Աղբալյանը Արամ Մանուկյանին վերոհիշյալ նամակում գրել էին. «Ձեր մղած մարտերի մասին իմացանք Վեհիբ փաշայից, չգիտենք, թէ որքան են հավատի նրա տված տեղեկությունները, համենայն դէպս մեր թեկուզ եւ փոքր ու թշուառ Հայաստանով պարտական ենք մեր զորքի անձնուրացությանը: Որքան մեզ հայտնի է, գերմանացիներն ու թուրքերը Կովկասը բաժանել էին Վրաստանի և Ադրբէջանի, հայերի համար ապահովելով միայն ֆիզիկական գոյությունն: Պէտք է ենթադրել, որ մեր զորքի դիմադրությունը նրանց հարկադրեց ճանաչել Հայաստանը» (ՀՀ ԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 562, թ. 11):

Այս նամակից կարելի է հետևյալ եզրակացության հանգել: Այո, ճիշտ է, հայկական բանակն անձնուրաց է կռվել հայրենիքի ազատագրության համար: Բայց ո՞վ էր իրավունք տվել այդ բանակի թիկունքում հաշտություն կնքել և տարած հաղթանակը ոչնչի հավասարեցնել:

Եվ այնուհետև, եթե հայկական զորքի դիմադրությունը հարկադրում է թուրքերին ճանաչել Հայաստանը, ապա ի՞նչ իրավունքով է ստորագրվում մի պայմանագիր, որով հաղթանակած բանակը հարկադրված նահանջում է ազատագրված տարածքներից:

Թուրքիան «անկախ Հայաստան» էր ստեղծում իր սեփական շահերից ելնելով, իր հետագա նպատակների համար:

Այստեղ, ըստ երևույթին, հարկ կա նորից դիմել դաշնակցության երևելի գործիչներին: Վրացյանը գրել է, որ Հայաստանի «անկախության յայտարարությունը, սակայն եղաւ... մայիսի 30-ին, աւելի արտաքին ճնշումների տակ, քան Ազգային խորհրդի յոժար կամքով»:

«Այսպիսով,- շարունակում էր Վրացյանը,- Հայաստանի անկախության հայտարարության օրը իսկապէս պէտք է համարուէր մայիսի 30-ը: Հակառակ դրան, համարում է մայիսի 28-ը, այսինքն այն օրը, երբ Ազգային խորհուրդը վճռեց հաշտության պատուիրակութիւն ուղարկել Բաթում: Անտրդակի կերպով, այս օրն էլ կարող է համարուէլ անկախության սկզբնաւորութիւն, որովհետեւ թուրքերը հաշտության բանակցութիւններ վարելու համար նախապայման էին դրել անկախության յայտարարութիւնը» (Ս. Վրացյան, նույն տեղը, էջ 130):

Իսկ բանակցությունների եռանդուն մասնակից Ա. Խատիսյանը լրացնելով Ս. Վրացյանին, գրել է. «Մեզի իրապէս ուրիշ ելք չէր մնար, բայց եթէ մեր կողմէ եւս յայտարարել Հայաստանի անկախութիւնը: Բախտորոշ դեր կատարեց այդ վերջնագիրը, զոր մենք ստացանք նոյն գիշերն իսկ թուրքերու կողմէ: Երեք օր ժամանակ կուտար վերջնագիրը ընդունելու այն դաժան պայմանները, զոր թրքական պատուիրակութիւնը ներկայացուցած էր Պաթումի խորհրդաժողովի առաջին նիստին իսկ, փակ ծրարով» (Ա. Խատիսյան, նույն տեղը, էջ 72-73):

Անչափ կարևոր է Խատիսյանի մեկ այլ վկայություն, որը նա գրել է 1918 թ. աշնանը, Կ. Պոլսում գտնվելու ժամանակ . «Յետագային իմացայ, որ երբ մենք բանակցութիւններ կը վարէինք Պաթումի մէջ, կատաղի վէճեր տեղի ունեցեր են Պոլսոյ երիտթուրքերու կոմիտէին մէջ այն մասին, թէ որ աստիճան նպատակայարմար է Կովկասի մէջ պահպանել հայկական պետութիւն մը: Այս մասին ինձ պատմեց Պոլսոյ մէջ 1918 թ. աշնան, մեծ վեզիր Թալէաթ փաշան հետեւեալ խօսքերով.

-Էնվեր փաշան կը գտնէր, որ քանի հայերը մեր թշնամիները եղած են եւ պէտք է միշտ ըլլան մեր թշնամիները ու հանգիստ չպիտի թողուն մեր Անատոլուի նահանգները, ուստի լաւ է, որ հիմնապէս բնաջնջուին անոնք նաև Կովկասի մէջ ինչպէս եղած են Թուրքիոյ մէջ: Իսկ փոքրիկ Հայաստան մը Կովկասի մէջ պատճառ պիտի դառնայ, որ միշտ ձգտի ընդարձակելու իր սահմանները եւ դառնայ յաւիտենական վտանգ Թուրքիոյ համար: Իսկ ես, շարունակեց Թալէաթ, պատասխանեցի, որ այդ ծրագիրը մըն է թէկուզ այն պատճառով, որ այսպէս թէ այնպէս երկու միլիոնի չափ ողջ մնացած հայեր կան այժմ եւ անհնար է զանոնք բոլորն ալ ոչնչացնել, ուստի աւելի լաւ է, որ անոնց զոհացում տրուի, որովհետեւ եթէ նոյնիսկ 100.000 հայեր մնան աշխարհի երեսին, մեզ հանգիստ չպիտի տան երբեք: Եւ վերջապէս փոքրիկ Հայաստան մը ստեղծելով մենք լուծած կրլլանք Հայկական հարցը եւ այդպէս կը ներկայանանք Հաշտության միջազգային խորհրդաժողովին»:

Այնուհետև Ա. Խատիսյանը հայտնել է, որ «Թալէաթ փաշայի տէսակէտը յաղթէր էր եւ Թուրքերը ստեղծեցին փոքրիկ Հայաստանը: Ատկէ ետքը Էնվէր փաշան օր մը պարծենալով ըսաւ ինձ. -«Ես լուծեցի շատ դժուարին

խնդիր մը, ստեղծեցի Հայաստանը, գոհացում տուի հայերու ազգային պահանջներուն, բայց այդ ըրի այնպիսի ձեւով մը, որ չգոհեցի Թրքական հողերէն ոչ մէկ թիզ իսկ»:

Ինչն էր դրդում երիտթուրքերին ստեղծել «փոքրիկ Հայաստան», ինչո՞վ էին ղեկավարվում Թուրքերը: Այս հարցի պատասխանը տալիս է Ա. Խատիսյանը, նշելով այն երեք կետերը, որոնցով ղեկավարվում էին երիտթուրքերը.

«Ա). Անոնք կերազէին ունենալ Կովկասի մէջ իրենց ազդեցութեան, եւ եթէ հնարաւոր է, իրենց հովանաւորութեան տակ չորս հանրապետութիւններ (Հայաստան, Վրաստան, Ադրբէջան եւ Հիւս. Կովկաս), միացած դաշնակցային կապերով, որով Թուրքիա բաժնուած պիտի ըլլար ամենէն սարսափելի թշնամիէն՝ Ռուսիայէն:

Բ). Թուրքերը հաշի կառնեն հայկական հարցին միջազգային բնոյթը եւ փոքրիկ Հայաստան մը ստեղծելով՝ կուզէին որոշ գոհացում մը տալ աշխարհի հանրային կարծիքին:

*Գ). Թուրքերը կուզէին ունենալ, յանձին Հայաստանի, հողամաս մը, ուր կարողանային հաւաքել հայերու մնացորդները Թուրքիոյ սահմաններէն» (**Ա. Խատիսյան**, նույն տեղը):*

Միայն հետագայում «պետական ականավոր գործիչ» Ա. Խատիսյանը, ինչպես հիմա նրան ոմանք անվանում են, պիտի է ընկնում Թուրքերի «փոքր Հայաստան» ստեղծելու քաղաքական խաղի իմաստը, խաղ, որին կամավոր ենթարկվել են դաշնակցության ղեկավարները:

*«Լոզանի մէջ, -գրել է Ա. Խատիսյանը,-հաշտութեան խորհրդաժողովի ատեն, չորս ամսուայ ընթացքին, Ըսէթ փաշա 22 անգամ զանազան առիթներով ու զանազան անձանց կրկնած է, որ Հայկական հարցը վերջնականապէս լուծուած է Հայկական հանրապետութեան ստեղծումով: Ասիկա Թուրքերուն ամէնազօրաւոր փաստարկութիւնն է, զոր լսած եմ բազմաթիւ քաղաքական գործիչներու բերնէն» (**Ա. Խատիսյան**, նույն տեղը):*

Փաստորեն «փոքրիկ Հայաստանի» ստեղծումը, Հայաստանի անկախության հռչակումը Թուրքական պետության լարած որոգայթն էր և Լեոյի խոսքերով ասած, «քաղաքական - դիվանագիտական երեխաները» չհասկացան ու ընդունեցին խայծը, անուղղելի փաս հասցնելով Հայկական հարցին:

Երկու խոսք այն մասին, թե հայկական շրջանակներում ինչպես է ընդունվել անկախության հռչակումը, ինչ տրամադրություններ կային դրա շուրջ:

Հարկ է դարձյալ դիմել Ս. Վրացյանին: Ահա, թե ինչ է նա գրել. «Ցնցութեան աղաղակներով ու ծափերով չընդունուէց նրա անկախութիւնը: Ընդ

*հակառակը, շատերի համար նա նկատում էր դժբախտութիւն: Հիւանդ երեխայ աշխարհ բերած մօր պէս, հայ ժողովուրդը գլուխ էր ծեծում սգաւոր եւ չգնում ականջին. «դու իմ ուրախութիւնն ես, դու՝ դժբախտութիւնը իմ» (**Ս. Վրացյան**, նույն տեղը, էջ 45-46):*

«Մինչ վրացիներն ու Թուրքերը, -շարունակում էր Վրացյանը,- յայտարարել էին իրենց անկախութիւնը, Հայոց ազգային խորհուրդը տատանում էր. այսպիսի զարհուրելի պայմաններում անկախութիւնը համարում էին դառն հեգնանք: Մայիսի 30-ին դեռ Ազգային խորհուրդը չէ ընդունել անկախութիւնը: Ընդհակառակը, խորհրդի այն նիստում, ուր ընդունուեց այս «յայտարարութիւնը», ձայների ճնշող մեծամասնութեամբ մերժուեց անկախութիւն յայտարարելու առաջարկը»:

Այնուհետև Վրացյանը գրել է. «Նախ հայ ժողովրդի համար ստեղծուել էր այնպիսի անտանելի կացութիւն, որ անկախ պետութիւն կազմելը դառն հեգնանք միայն կարող էր թուալ: Երկրի մեծագոյն մասը տաճիկների ոտքի տակն էր եղել, ժողովուրդը տնտեսապէս և ֆիզիկապէս քայքայված կամ Վրաստան եւ Հիւսիսային Կովկաս էր ապաստանել, եւ կամ թափուել էր այն լքարիկ հողամասը որ, Հայաստանի հիմքը պիտի դառնար: Ամէն տեղ լաց էր, թշուառութիւն և խուճապ: Ո՞վ սիրտ ունէր այս պայմաններում անկախութեան մասին մտածելու: Ո՞վ պիտի իրականացնէր եւ պաշտպանէր այդ անկախութիւնը:

*Հայ մտաւորականի համար, ստեղծուած պայմաններում, անկախութիւնը հաւասար էր տաճիկ բռնապետութեան վերադարձին, հայ ժողովուրդի նահատակութեան մի նոր շրջանի: Եւ դրանով է բացատրվում, որ Հայոց ազգային խորհրդի նիստը, ուր քննութեան առնուեց «անկախութիւնը», աւելի նման էր սգաւոր տան, ուր ննջեցեալ կար տարածուած» (**Ս. Վրացյան**, նույն տեղը, էջ 163):*

*«Բազմակողմանի քննելով, մի կողմից, երկրի ոյժերը եւ այն հանգամանքները, որոնց մէջ գտնվում է հայ ժողովուրդը,- շարունակել է Վրացյանը,- եւ միւս կողմից, քաղաքական եւ տնտեսական ստեղծուած դրութիւնը, Հայոց ազգային խորհուրդը սեղմեց իր սիրտը, եւ անողոք գիտակցութեամբ որոշեց վերջնականապէս ընդունել վերջնագիրը եւ ճանաչել Հայաստանի անկախութիւնը, իրեն յանձնելով պատմութեան դատաստանին» (**Ս. Վրացյան**, նույն տեղը):*

Կարևոր եմ համարում ընթերցողին ներկայացնել նաև Բաքվի դաշնակցության վերաբերմունքը, որն արտահայտել է «Արեւ» թերթը: Նշելով հայ-

կական, թուրքական և վրացական երեք նոր պետությունների հռչակման փաստը, թերթը գրում է, որ այդ «պետությունները հիմնելիս վրաց թաւադների շահերն արտայայտող սոցիալ դեմոկրատ մենշևիկները, հայ բուրժուազիայի կապիտալը փայփայող Թիֆլիսի Ազգային խորհուրդը, Թուրք բէկերի կալածների անձեռնմխելիութեան երկրպագու մուսաւաթը միամտաբար համոզած էին, որ համաշխարհային այս աղէտից-պատերազմից, յաղթող դուրս ելան կենտրոնական պետությունները՝ Գերմանիայի գլխաւորութեամբ»:

Այս էր պատճառը, որ նրանք ընդառաջ գնացին գերմանա-թուրքական «նենգ խորհուրդներին և ընդունեցին Անդրկովկասում «անկախ» պետություններ հիմնելու առաջարկը»:

Բաքվի դաշնակցականներն այն տեսակետն էին հայտնում, ըստ որի «Անդրկովկասն երեք անկախ պետություն յայտարարելը մեղմացրեց մի պահ մեր երկրի աշխատաւորութեան ապստամբութիւնն ընդդեմ տաճկական և գերմանական իմպերիալիստների առաջխաղացութեան և հնարաւորութիւն տուեց թշնամու զօրքերին ազատ փոխադրուել երկաթուղու գծերով Բագուն տիրելու»:

*Իսկապես ճիշտ էին Բաքվի դաշնակցականները: Եթե Հայաստանի անկախությունը չհռչակվեր, Բաթումի պայմանագիրը չկնքվեր, ապա Սարդարապատի և Ապարանի ճակատամարտերում հաղթանակ տարած հայկական զորամասերը պատրաստ էին ջախջախել փախչող թուրքերին և ազատագրել ոչ միայն Ալեքսանդրապոլը, այլև Կարսն ու Էրզրումը: **Դրանից հետո Հայաստանի անկախության հռչակումը և արդեն լիակատար պարտված թուրքերի հետ կնքված հաշտության պայմանագիրը այլ բովանդակություն կունենային:***

Բաքվի դաշնակցականները մատնանշում էին. «Մեր երկրի աշխատաւորութեան գլուխն անցած Խորհրդային իշխանութեան բռնած դիրքն անուշտ կարևոր է ներկայ աղետալից պարագայում: Այդ իշխանութեան խոհուն և յամառ գործելակերպից է կախուած յաղթող և բաց ճակատով դուրս գալու համաշխարհային այս տրագեդիայից»:

*Բաքվի դաշնակցականները զգուշացնում էին. «Զափազանց զգույշ պիտի լինել չընկնելու համար Թիֆլիսի «իմաստունների» նման իմպերիալիստների լարած որոգայթների մէջ: Մեր Խորհրդային իշխանութիւնը ծայրայեղ ճիգեր պիտի թափի աշխատաւորութեան կարմիր դրօշը բարձր պահելու համար»: (**«Ազատ»**, հունիսի 30 (17), 1918 թ.):*

*«Ազատ» թերթը գրում էր նաև, որ հայտարարված «անկախ» երեք հանրապետությունները փաստորեն ընկել են գերմանա-թուրքական բռնակալների ճիրանների մեջ և ընդգծում էր. «Սակայն իրագործուեց մեր իմպերիալիստների երազը, բայց ոչ այնպէս, ինչպէս իրանք էին ցանկանում՝ «ծովից ծով», այլ մի օպերետային հանրապետութիւն, որի ընդհանուր տարածութիւնը ոչ աւել է, քան 12.000 քառ. վերստ, այսինքն՝ ռուսական սովորական գաւառից աւելի նեղ ու փոքր»: (**«Ազատ»**, հունիսի 30 (17), 1918 թ.):*

Այսպիսին էր իրականությունը: Ես մտածված կերպով հարկ համարեցի բոլոր մեջբերումները կատարել դաշնակցության ղեկավար գործիչներից, որոնք հետագայում մոռանալով ամեն ինչ, իրավիճակը ներկայացնում են այլ բովանդակությամբ, այլ զարդարանքով:

Դրա վառ ապացույցը տալիս է «Դրոշակը», որը 1926 թ. «Բացատիկ» համարում ազդարարում էր. «Բայց եւ այնպէս ապագայ հայ պատմագիրը վիճաբան է մնալու դաշնակցութեան անձնուիրութեան, վառ հայրենասիրութեան, հայ ժողովրդի խուէալը մարմնացնող այն դիւցազներու վրայ, որոնք կամք են ունեցել հայութեան զոհասեղանին դնելու իրենց ողջ կեանքը, եւ որոնք պարզելով «մահ կամ ազատութիւն» հարիւր հազարաւոր զոհերու արեան գնով 1918 թ. մայիսի 28-ին իրականացրին մասամբ հայ աշխատաւոր ժողովուրդի փայփայած գաղափարները, Հայաստանի անկախութիւնը:

Հայ ժողովրդի դարաւոր ստրկութեան մէջ կազմուած նկարագիրն ազնուացնող դաշնակցութիւնը 1918 թուի ակտով եկաւ ցուցադրելու հայ կեանքի մէջ գերմարդկային ըմբոստացումներու և գիտակցութեան յաղթանակը»:

Գործից ու իրական պատմությունից անտեղյակ մարդկանց աչքերը փակելու և միտքը մթագնելու նպատակ է հետապնդում այսպիսի պնդումը, որն, ահա, քանի տասնամյակ է, արմատավորվում է հասարակական գիտակցության մեջ:

Բայց ո՞վ է դրա համար անհարմար զգում: Այսօր էլ մամուլը լեցուն է այդպիսի պնդումներով:

Այս պնդումը, արդեն մեր օրերում, Հայաստանի երրորդ հանրապետության ստեղծումով բարձրացվել է պետական մակարդակի:

Մայիսի 28-ը մեծ շուքով նշվում է որպես Հայաստանի անկախության օր և փառաբանվում է այդ անկախությունը «կերտող» դաշնակցությունը:

Մինչդեռ, ինչպես ընթերցողը նկատեց, անկախությունը ձեռք բերվեց ոչ թե «դաշնակցության հարյուր հազարավոր զոհերի գնով», այլ միայն ու միայն Թուրքիայի թելադրանքով:

Այս է դաղը ճշմարտությունը: Եվ հարկավոր էր գտնել տարրական բարեխղճություն ու ինքնասիրություն ունենային նման պնդումների հեղինակներն ու անկախության սկիզբը համարեին Հայկական բանակի ձեռք բերած հաղթանակի օրը՝ մայիսի 22-ը և ոչ թե այդ բանակի հաղթանակը ոչնչի հավասարեցնող դաշնակցության ղեկավարության կողմից Թուրքական վերջնագիրն ընդունելու օրը՝ մայիսի 28-ը:

1918 Թ. ՄԱՅԻՍԻ 28 ԵՎ 1920 Թ. ՆՈՅԵՄԲԵՐԻ 29

Ասվածի կապակցությամբ ընթերցողի ուշադրությունը հրավիրում եմ ևս մեկ հարցի վրա:

*1918 Թ. մայիսի 28-ին Հայաստանի անկախությունը հռչակվեց Թուրքիայի թելադրանքով: Այսինքն՝ արտաքին ուժի թելադրանքով: Բայց դա չի խանգարում, որպեսզի համազգային մասշտաբով մայիսի 28-ը նշվի որպես Հայաստանի առաջին հանրապետության հռչակման և անկախության օր, ուղեցույց ունենալով Խատիսյանի հետևյալ հայտարարությունը. «**Վերջապես բախտը մեզի Կովկասի մէջ քաղաքական գոյութիւն մը տիրացուց: Ասիկա ալ վերհանձն Թուրքիոյ կը պարտինք, ինչ որ անհերքելի ճշմարտութիւն մըն է: Ասիկա միշտ բարձրաձայնուած չիշատակելիք ճշմարտութիւն մըն է**» (ընդգծումն իմն է- Վ. Պ.):*

Թուրքիայի թելադրանքով «անկախ» դարձած Հայաստանից հեռանալով, դաշնակցությունը հայտարարել էր, թե Սովետական Հայաստանը կորցրել է իր անկախությունը:

*Պատասխանելով դաշնակցությանը Հայաստանի Ժողկոմսովետի առաջին նախագահ Ա.Մ. Մյասնիկյանը 1922 Թ. հունվարի 30-ին Հայաստանի սովետների առաջին համագումարում ասել է. «Բայց ի՞նչ էր ձեր անկախությունը,, հետաքրքիր է: Դուք կախված էիք Անտանտից, շրջապատված էիք ամեն կողմից, դուք ներքին չինարարությամբ չէիք կարող զբաղվել: Իսկ մենք խլեցինք այդ բոլոր կապերը, վերացրինք այս երկրի պլիսին կապված դամոկլյան սուրը և տվինք նրան իսկական անկախություն: **Անկախությունը նպատակ չէ աշխատավորության համար, այլ միջոց, իսկ նպատակն է՝ բարեկեցիկ կյանքը և բուսավոր ապագան, համոն որի երկիրը կռվում է** (ընդգծումն իմն է- Վ. Պ.): Նրանց քաղաքական նպատակն իբր թե անկախությունն է եղել, այնինչ՝ նրանք երկիրը սպանդանոց էին դարձրել»:*

1920 Թ. նոյեմբերի 29-ին Հայաստանում տեղի է ունեցել իշխանափոխություն: Հայ բոլշևիկները ստանալով Սովետական Ռուսաստանի բազմակողմանի աջակցությունը, երկրում հռչակեցին Սովետական իշխանություն: Այսինքն, այս անգամ էլ Հայաստանում առկա էր մեկ այլ արտաքին ուժի՝ Ռուսաստանի միջամտությունը:

Սովետական Հայաստանի ղեկավարները չվարվեցին Առաջին հանրապետության ղեկավարների նման, որոնք Թուրքիայի թելադրանքը կոծկելու, Թուրքերի կամակատար լինելը թաքցնելու համար ստեղծված պետությանը ավելացրին «անկախ» բառը, որն իրականում ոչ միայն դատարկ հնչյուն էր, ժողովրդին խաբելու և մոլորեցնելու միջոց, այլև հետագա պատասխանատվությունից խուսափելու նպատակ ուներ:

Փաստորեն մենք գործ ունենք պատմական զավեշտի հետ: Առաջին հանրապետությունը ստեղծվել է Թուրքիայի կամքով ու թելադրանքով, բայց դա նշվում է որպես ազգային տոն:

Երկրորդ հանրապետությունը ստեղծվել է Ռուսաստանի կամքով ու թելադրանքով: Բայց դա չի նշվում: Ընդհակառակը, ամեն կերպ վարկաբեկվում է ու մոռացության տրվում:

Պատմական զավեշտը կայանում է նաև հետևյալում: Թուրքիան հայ քաղաքական ուժերին ծուղակ նետելով, նրանց հարկադրել է մոռանալ Արևմտյան Հայաստանն ու անկախություն հռչակել Ռուսաստանին պատկանող հայկական տարածքի վրա:

Իսկ Ռուսաստանը ձգտում էր վերատիրանալ իր կորցրած տարածքները և դա կատարել է հայ բոլշևիկների ձեռքով:

Բոլոր դեպքերում Ռուսաստանն ավելի շատ իրավունք ուներ այդպես վարվելու, քան Թուրքիան, որը Ռուսաստանի շնորհիվ պահպանված Արևելյան Հայաստանը «նվիրել» է Հայոց ազգային խորհրդի կազմած կառավարությանը:

Եվ հիմա օրինական հարց է առաջանում. ինչո՞ւ Թուրքիայի թելադրանքով առաջին հանրապետության հռչակման օրը՝ մայիսի 28-ը նշվում է պետականորեն ու մեծ շուքով, իսկ Սովետական Ռուսաստանի թելադրանքով երկրորդ հանրապետության՝ Սովետական Հայաստանի հռչակման օրը՝ նոյեմբերի 29-ը ոչ միայն պետականորեն չի նշվում, այլև սովետական իշխանության 70 տարիների ձեռքբերումները ենթարկվում են ծաղրանքի:

Եթե Հայաստանի երրորդ հանրապետությունը, իսկապես, անկախ է, ապա նա պարտավոր է մայիսի 28-ին և նոյեմբերի 29-ին վերաբերվել միանշանակ, դրանք դիտել որպես դրսի թելադրանքի արդյունք:

Իսկ եթե երրորդ հանրապետությունը տեր է դարձել այն ամենին, ինչ հայ ժողովրդի ջանքերով ստեղծվել է երկրորդ հանրապետության գոյության 70 տարիների ընթացքում, ապա նոյեմբերի 29-ը պետք է նույնպես նշվի պատշաճ պետական մակարդակով:

Ես խորապես համոզված եմ, որ այդպես վարվելը բարոյական կլինի և անպայման կնպաստի մեր ազգային համերաշխությանը, ինչպես Հայաստանի ներսում, այնպես էլ Սփյուռքում:

ԵՐԿՈՒ ԽՈՍՔ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ԳԱՂԱՓԱՐԻ ՄԱՍԻՆ

Այժմ այն մասին, թե դաշնակցությունը, առհասարակ, ինչպես է վերաբերել Հայաստանի անկախության գաղափարին, իր գործունեության հենց սկզբից:

Այս հարցը, կարծում եմ, անչափ կարևոր է, քանի որ, հատկապես մեր օրերում, դաշնակցության գործիչները, նրա մամուլն անդադար քարոզում են, թե դաշնակցությունն է Հայաստանի անկախության կերտողը:

Հենց սկզբից հարկավոր է ընդգծել, որ դաշնակցությունն իր ծրագրում, մինչև Թուրքիայի պարտադրած «անկախությունը», երբեք չի դրել անկախության խնդիրը ոչ Արևմտյան Հայաստանում և ոչ էլ Արևելյան Հայաստանում:

*Այս է վկայում դաշնակցության երևելի գործիչ Ռուբեն Դարբինյանը, որը «Հայ քաղաքական մտքի դեգերումները» աշխատության մեջ գրել է. «Մի այն 1918 թ. է, որ Հայաստանի անկախությունը առաջին անգամ որոշակէս կը չեշտուի հայ ազգի գիտակցութեան մէջ, նախ, իբրեւ գահավէժ դեպքերի բերումով ստեղծուած փաստ եւ ապա՝ 1919 թ. իբրեւ յստակօրէն ձեւակերպուած քաղաքական պահանջ Հայկական հանրապետութիւնը ստեղծող կուսակցութեան՝ Հ.Յ. դաշնակցության ծրագրին մէջ» (**«Հայրենիք»**, հուլիս, 1923, էջ 121):*

Իսկ մինչ 1918 թվականը: Համառոտ այդ մասին ևս:

*1902 թ. Փարիզում գումարված օսմանցի ազատականների համաժողովին մասնակցող դաշնակցության ներկայացուցիչները պատրաստակամություն են հայտնում մասնակցել սուլթանի ռեժիմը տապալելուն և հայտարարում են. «Յայտնի ըլլալով որ այդ գործունեութիւնը ուղղուած է արդի ռեժիմի դէմ, եւ ոչ թէ Թուրքիոյ միութեան եւ կազմական գոյութեան դեմ» (**Մուշեղ Սերոբեան**, Հայկական մղձավանջը, էջ 58):*

Այդ համաժողովում վեճը բորբոքվել է միայն Բեռլինի կոնգրեսի 61-րդ հոդվածի շուրջ: Երկու կողմերը համաձայնության չեն եկել:

Այսինքն օսմանցիները չեն զիջում և ուզղակի հասկացնել են տալիս, որ այդ հոդվածի պահանջների կիրառումն իրենց ծրագրերի մեջ չի մտնում նույնիսկ, եթե իշխանությունն իրենց ձեռքը վերցնեն: Իսկ, ինչպես հայտնի է, 61-րդ հոդվածում չէր դրվում Հայաստանի անկախության խնդիրը:

1907 թ. Փարիզի համաժողովում, որին նույնպես մասնակցում էին դաշնակցականները, դրվեցին 1902 թ. ձևակերպած խնդիրները, որոնք վերաբերում էին միայն սուլթանի տապալմանը:

*Այս համաժողովում երիտթուրքերի պարագլուխներից մեկը, Ահմեդ Ռիզան առանց այլևայլության զգուշացնում էր. «... Մենք թշնամիներու պէս պիտի վարուինք բոլոր անոնց հետ, որոնք անջատողական դրօշակը պիտի պարզէին կամ պիտի ձգտէին փոխանցել կայսրութեան քաղաքական միութիւնը» (**«Հնչակ»**, թիվ 2, 1907, էջ 14):*

Ահմեդ Ռիզայի ահաբեկումը դաշնակցության դեմ չէր, քանի որ դաշնակցությունն լիովին դարձել էր երիտթուրքերի գաղափարակիցը: Այդ ահաբեկումն ուղղված էր սոցիալ-դեմոկրատ Հնչակյան կուսակցության դեմ: Եվ ահա, թե ինչու:

Պետք է ասել, որ Հնչակյան կուսակցությունը ճիշտ էր հասկացել երիտթուրքերի չովինիզմը և 1902 թ. մերժել էր հրավերը ու չէր մասնակցել Փարիզում գումարված «Իթթիհատի» առաջին համագումարին:

Իհարկե, երիտթուրքերը հասկանում էին, թե ինչ հետևանքներ կունենա համագործակցության մասին առաջարկության մերժումը Հնչակյան կուսակցության կողմից, ուստի շարունակաբար փորձում էին «լեզու գտնել» նրա հետ:

Համագործակցության համար երիտթուրքերը կարևոր պայման էին համարում, որպեսզի Հնչակն ընդուներ Միթհատյան սահմանադրության վերականգնումը: Հնչակյանները մերժել են:

*Այդ մասին «Հնչակ» թերթը գրել է. «Ուզում ենք թոթափել այն ստրկական լոյծը, որի տակ հեծում է, տնքում է, ճնշում է, չարչարում է հայ ժողովուրդը հետէ՝ խորտակել այն ամուր շղթաները, որոնցով կապած են նրանց ոտքերը և, վերջապէս, ազատել բռնի ուժով Հայրենիքը օսմանյան քաղաքական իշխանութիւնից և կազմել, ստեղծել մի նոր երիտասարդ Հայաստան սեփական կառավարութեամբ, սեփական օրենքներով, սեփական կարգերով ու կանոններով» (**«Հնչակ»**, թիվ 2, 1902, էջ 18):*

Հնչակյան կուսակցության ղեկավարներից Ս. Սապահ-Գյուլյանը որոշակիորեն արտահայտում է իրենց վերաբերմունքը այդ սահմանադրության մասին. «Մենք Միթհատեան սահմանադրութեան համար ոչ բերան կը հոգ-

*նեցնենք և ոչ ալ գրիչ: Հազար ափսոսդ կեանք եթէ ունենայինք մէկն էլ չէ-ինք տալ այդ «սահմանադրութեան» համար» (**Սապահ-Գիւլեան**, Ինքնա-վար Հայաստան, էջ 85-86):*

*Այն ժամանակ, երբ դաշնակցությունը եռանդով աշխատում էր Փարիզում կոնգրես հրավիրելու համար, Ս. Սապահ-Գյուլյանը Հնչակյան կուսակցության անունից վճռականորեն հայտարարում է. «Մենք նրանց (այսինքն՝ երիտթուրքերի- Վ. Պ.) հետ որևէ գործ ունենալ չենք կարող, ժամանակը այլևս անցած է հասկացողութեան գալու: Մեր ճակատագիրը, մեր բախտը նրանցից պիտի բաժանենք վճռականապէս, առանց տատանվելու» (**նույն տեղը**):*

Ավածից, կարծում եմ, պարզ է դառնում, թե երիտթուրքերն ինչո՞ւ էին ահաբեկում Հնչակյան կուսակցությանը, նրան համարելով իր գլխավոր ու վտանգավոր հակառակորդ:

*Անդրադառնալով Փարիզի համաժողովին, Արշակ Զոպանյանը գրել է. «Փարիզի վերջին Քոնկրէին մէջ սպաննուեցավ, կամ զէթ սպանման ճամբուն մէջ դրուեցավ բան մը, որ զեթ ի վեր է որեւէ հայ անհատ, այն է Հայկական դատը: «Օսմանեան պետութեան ընդդիմադիր տարրերու Քոնկրէսը» ժէօն Թիւրքերու համար մասնաւորապէս՝ յաղթանակ մըն է, եւ դիւրակեան կուսակցութեան (դաշնակցության) ապազգայնացման խաթարման վերջին դրուագը» (**«Անահիտ»**, Թիվ 1-4, 1908, էջ 44-47):*

Արշակ Զոպանյանը, այսպիսով, դեմ լինելով երիտթուրքերի հետ համագործակցությանը, միաժամանակ նշում էր, որ հայ հեղափոխական կուսակցությունները թող աջակցեին երիտթուրքերին, եթե վերջիններս կպաշտպաներեին Թուրքիայում ապրող ոչ թուրք ազգերի ինքնուրույնության կազմակերպման սկզբունքը:

*«ժէօն Թիւրքերու ստուար մեծամասնութիւնը,- այնուհետև շարունակել է Ա. Զոպանյանը,-ինքզինքը զուրկ ցոյց տուաւ անձնական նախաձեռնութեան ոգիէն ու Տաճկաստանի բոլոր այլատարր ազգութիւնները թրքացնելու, միաձոյլ «օսմանեան» ազգ մը կազմելու ակնայտնի բաղձանքն ունի. այն օրը, որ դաշնակցութեան «հայ» ուժերուն աջակցութեան շնորհիւ՝ թրքական արդի ռեժիմը տապալի, եւ սահմանադրութիւն մը հաստատուի, ժէօն Թիւրքերը ոչ մէկ ազգի գոյութիւն պիտի ընդունին Տաճկաստանի մէջ բացի օսմանեան ազգէն: Եւ նոյնիսկ հայ արիւնով հաստատուած այդ սահմանադրութիւնը, պիտի իբր զէնք գործածեն «Հայկական դատը» վերջնականապէս սպանելու համար: Ահա հեռապատկերը որ կը ներկայանայ, այն պարագային ուր հայ-թուրք նիզակակցութիւնը յաջողի օսմանեան սահմանադրութեան ռէժիմ մը հաստատել» (**նույն տեղը**):*

Արշակ Զոպանյանն այս տեսակետը հայտնել է անմիջապես Փարիզի կոնգրեսից հետո և կանխագուշակելով զգուշացրել, թե ինչ հետևանք կունենա երիտթուրքերի հետ համագործակցությունը:

Բայց ո՞վ էր լսողը: Իրեն հայ ժողովրդի առաջնորդ համարող դաշնակցության ղեկավարությունն ամբողջապես մերկվել էր Թուրքիայում հեղափոխությանը մասնակցելու ակտիվ դերակատարության մեջ և կորցրել էր իրավիճակը սթափ գնահատելու ունակությունը:

Իսկ երիտթուրքերն այլևս իրենց մտադրությունները չէին կոծկում հեղափոխության, եղբայրության, հավասարության մասին խոսքերով:

*Աղանայի 30 հազար հայ բնակչության կոտորածից հետո մեկ տարի անց, 1910 թ. օգոստոսին Սալոնիկում հրավիրված ժողովում Թալեաթը չեշտում էր. «Համաձայն սահմանադրութեան, բոլոր թրքահպատակները, թէ մուսիման, թէ քրիստոնեայ հաւասար են օրենքի առաջ: Բայց դուք գիտէք ինքներդ, որ այդ անիրագործելի է: Այդ գաղափարը նախ եւ առաջ կը կհակասէ Շերիաթին, կը հակասէ անոր եւ մեր անցեալը: Անոր դէմ կը բողոքէ հարիւր հազարաւոր յաւատացեալներու զգացմունքը: Թուրքիոյ մէջ հաւասարութեան մասին այն ատէն միայն կարելի է խօսիլ, երբ բոլոր տարրերն ալ կը ձուլուին, օսմանցի կը դառնան» (**Մուշեղ Սերոբեան**, Հայկական մղձավանջը, էջ 33):*

Ահա, թե ինչը չկարողացան հասկանալ դաշնակցության ղեկավարները: Եվ ցավալին այն էր, որ այդ «չհասկանալը» կատարվում էր գիտակցաբար:

Կարելի է դա հաստատելու շատ ապացույցներ բերել: Դրանցից միայն մեկն էլ հիշատակելը բավական կլինի ասվածը փաստելու համար:

*1907 թ. դաշնակցություն կուսակցության ժնևի չորրորդ համագումարում ընդունված որոշման մեջ ասվում էր. «Միեւնոյն ատեն, Թուրքերու մէջ տարածուած անհիմն թիւրիմացութիւններուն վերջ տալու համար, ժողովը պարտք կը համարէ յայտարարել, որ դաշնակցութիւնը Թուրքոյ մէջ ունեցած չէ եւ չունի անջատողական ոչ մէկ ձգտում (**Դաշնակ. կուսակցութ. 4-րդ համագումարում հաստատ. ծրագիր**, Թիֆլիս, 1907, էջ 21):*

Վերոհիշյալը միայն փաստում է այն մասին, որ դաշնակցությունը չի հետապնդել Արևմտյան Հայաստանի անկախության նպատակը:

Ավելին, 1909 թ. օգոստոսին շրջաբերականով դաշնակցությունը հայտնում է, որ կատարյալ համաձայնության է եկել «Իթթիհատ և Թերաքիի» կուսակցության հետ՝ հայրենիքի (այսինքն՝ Թուրքիայի- Վ. Պ.) ազատությունն ապահովելու, նրա հողային ու քաղաքական ամբողջականությունը

մշտապես պահպանելու մասին:

Երիտթուրքերի և դաշնակցության միջև 1909 թ. Ադանայի ողբերգությունից հետո կնքված համագործության դաշինքի 3-րդ կետում ասվում էր. «Օսմանեան նուիրական հայրենիքը անջնջելի է բաժանումէ զերծ պահելը երկու կազմակերպութեանց միացած գործունեության նպատակակէտը ըլլալով, անոնք, պիտի աշխատին գործնականապէս ցրել հանրային կարծիքին մէջ բռնակալ ռեժիմէն ժառանգ մնացած այն սուտ զրոյցները, թէ հայերը անկախութեան կը ձգտեն»

Բայց սա բոլորը չէ: Վերոհիշյալ համաձայնության ամբողջ տեքստը հրատարակել էր դաշնակցության «Ազատամարտ» թերթը, իսկ երիտթուրքերն այդ տեքստը ֆրանսերեն հրատարակել էին «Ժուրնալ դը Սալոնիկ» թերթում:

Կ. Պոլսում հրատարակվող «Բիւզանդիոն» և «Հայրենիք» թերթերը նկատել են այդ երկու տեքստերի միջև եղած տարբերությունը հատկապես համաձայնության 5-րդ կետի շարադրանքի մեջ:

Ըստ «Ազատամարտում» տպագրված տեքստի՝ 5-րդ կետն ազդարարում էր. «Իթթիհատ-Թերաքզը» և դաշնակցութիւնը իբրեւ իրատական նախազգուշացում ընդունելով մարտի 31-ի դեպքերը և Ադանայի ցասալի աղետը, որոշեցին աշխատիլ ձեռք ձեռքի տուած վերոյիշեալ հիմնական կետերու իրագործման համար»:

Իթթիհատի հրապարակած տեքստի 5-րդ կետում ասվում էր. «Միութիւն և յառաջադիմութիւն օսմանեան քոմիթէն եւ դաշնակցութեան օսմանեան քոմիթէն Կ. Պոլսոյ դեպքերեն ու Ադանայի կոտորածները արեան տուրք մը նկատելով իրենց ուշադրութիւնն և իրենց բոլոր ջանքերը պիտի ձգտին պահպանելու այն քաղաքական ուղղութիւնը, զոր միաբանութեամբ ընդունած են»:

Նկատելով այս տարբերությունը, «Հայրենիք» թերթը հարցնում էր. «Ինչն է իմաստը ասոր, արդեոք Ադանայի ջարդերը օրինաւոր արեան տո՞ւրք էին զոր պետք էր, որ վճարէինք» («Հայրենիք», 1 (14), սեպտեմբեր, 1909):

Իսկ «Բիւզանդիոն» թերթը հաղորդել է հետևյալը. «Հ.Յ. դաշնակցութեան եւ օսմանեան քոմիտէին միջեւ կնքուած համաձայնութեան հայերեն թարգմանութիւնը զոր հրատարակեց «Ազատամարտ», խեղաթիւրուած է, ինչպես կը տեսնուի բնագրէն: Ա. յօդուածը կըսէ. «Ոչ մէկ ջանք, ոչ մէկ զոհողութիւն պիտի խնայուի ամուր հիմքերու վրայ հաստատելու համար ամբողջական սահմանադրութիւնը ընդհանուր ձուլումը եւ միաբան գործակցութիւնը: Դաշնակցութեան օրկանին հրատարակուած պատճէնին մէջ չկայ

ընդհանուր ձուլումի խօսք: Ցեղային ձուլմա՞ն կակնարկուի արդիօք: Իսկ Ե. յօդուածին մէջ արեան տուրք նկատուած են Պոլսոյ դէպքերը և Ադանայի ջարդերը, մինչ դաշնակցութեան օրկանը, այս խօսքը թարգմանած է իրատական նախազգուշացում: Եւ յետոյ օսմանեան քոմիթէն դաշնակցութիւնը կը կոչէ «Դաշնակցութեան օսմանեան քոմիտէ»:

Այս փաստի վրա ընթերցողի ուշադրությունը սրեցի այն պատճառով, քանի որ դաշնակցությունը երիտթուրքերի հետ համաձայնագիր կնքելիս, թուրքերին կատարած զիջումները ձգտել է թաքցնել հայ ժողովրդից, թեև իր գործողությունները միշտ ներկայացրել է իբրև «փ շահ հայ ժողովրդի»:

Դաշնակցությունն այդպես է վարվել նաև 1920թ. դեկտեմբերի 2-ին Ալեքսանդրապոլի պայմանագրի դեպքում: Նշանավոր պատմաբան Լեոն ժամանակին բացահայտել է Ալեքսանդրապոլի պայմանագրի ստորագրմանն առնչվող կարևորագույն իրողություններ, որոնց մասին այսօրվա ընթերցողներից շատերը տեղյակ չեն, իսկ դաշնակցությունն էլ ձգտում է դրանց մասին չհիշել:

Լեոն պարզել է, որ Ալեքսանդրապոլում ստորագրված պայմանագրի հայերեն և թուրքերեն տեքստերը միատեսակ բնագիր չունեն: Նա նշել է, որ բաց թողնված տեղերը վկայում են, թե ինչու է «կատարվել կեղծիքը»:

«Նրանք,- ընդգծել է Լեոն,- այնքան ամոթալի են նույնիսկ Ալեքսանդրապոլի դաշնագրի պես մի խայտառակ թղթի մեջ, որ թուրք պատվիրակներն իբրև շնորհ, համաձայնել են ստորագրել Հայաստանի բաժին դաշնագրի օրինակն առանց այդ տեղերի» (Լեո, Թուրքահայ հեղափոխության գաղափարաբանությունը, հ. 2, Փարիզ, 1935, էջ 245):

Պարզվում է, որ պայմանագրի հայերեն բնագրի մեջ բաց է թողնված ամբողջ երրորդ հոդվածը, որի թուրքական բնագրում նշվել է. «Ինչպէս որ թիւրք, ռուս և բոլոր աշխարհի վիճակագրութիւնները և հաստատէալ ընկերային կացութիւնը ցոյց կուտան, այս առթիւ ալ կը վաւերացուի թէ օսմ. սահմանին վրայ հայ մեծամասնութիւն ունեցող որեւէ հողամաս չկայ»:

Պայմանագրի 5-րդ հոդվածի թուրքական բնագիրն այսպես է սկսվում. Զորրորդ յօդուածին յիշած Հայաստանի և Թուրքիոյ սահմանագծէն մինչեւ օսմանեան հին սահմանը գտնուող հողամասը այս դաշնագրով Թուրքիոյ կը մնայ եւ որուն վրայ Թուրքիա պատմական, ցեղական և իրաւական անուրանալի իրաւունքներ ունի»: Լեոն համեմատել ու ճշտել է, որ այս ամբողջ հոդվածը չկա հայերեն բնագրի մեջ:

Դաշնակցությունը, որը շատ է պարծենում Սևրի դաշնագիրը ստորագրե-

*լու համար, Ալեքսանդրապոլի պայմանագրով առաջինն է հրաժարվում դրանից, որով Անդրանիկի գնահատմամբ «Խատիսեանը ցեխերը կը թաթիէ այն գրիչը, որ Ահարոնեանը ստորագրել էր Սեւրի դաշնագիրը» (**Զօր. Անդրանիկ կը խօսի**, էջ 18):*

*Ահա, այս ամենն էլ նկատի ունենալով, Լեոն 1920թ. դեկտեմբերի 2-ի Ալեքսանդրապոլի պայմանագրի կապակցությամբ գրել է, որ դա «**ազգի մեռա դաշնակցության հավերժական ամոթն ու խայտառակությունը**»:*

*«Իրանք, դաշնակցությունը, - շարունակել է Լեոն, -այնքան խորն էին զգում իրանց այդ գործի նողկալի տգեղությունը, որ չհամարձակվեցին հրատարակել Ալեքսանդրապոլի դաշնագիրը» (**Լեո**, Անցյալից, էջ 455-456):*

Վերը շարադրվածը նկատի ունենալով, հարկավոր է մեկ անգամ ևս փաստել, որ Արևմտյան Հայաստանի անկախության գաղափարը չի մտել դաշնակցության ծրագրի մեջ: Դաշնակցությունը նույն տեսակետն է ունեցել նաև Արևելյան Հայաստանի նկատմամբ:

*Դաշնակցության երևելի գործիչ Ռուբեն Տեր-Մինասյանը գրել է. «Մինչև 1917 թուականը ոչ մի հայ կուսակցութիւն բնաւ չէ ձգտած Երեւանեան նահանգը բաժանել Ռուսաստանից, եւ նրանից կազմել Հայաստան» (**Ռուբէն**, Հայ յեղափոխականի մը յիշատակները, հ Է, էջ 120):*

*Իսկ 1917 թ. սեպտեմբերի 1-ին Ռոստոմը (Ստեփան Զորյան) Մ. Վարանդյանին ուղարկած նամակում գրել է. «Ռուսաստանի յեղաշրջումից անմիջապէս յետոյ յայտարարեցինք, որ դաշնակցութիւնը ոչ մի առանձնակի, ազգային պահանջ չի դնելու մինչեւ Սահմանադիր ժողովի գումարումը, դժուարութիւններ չյարուցանելու համար ժամանակաւոր կառավարութեան հանդէպ» (**Ռոստոմ**, Նամականի, Բեյրութ, 1999, էջ 634):*

Եվ վերջապես 1918 թ. ամռանը Կ. Պոլիս մեկնած հայկական պատվիրակության անդամներ Ահարոնյանն ու Խատիսյանը երիտթուրքական դահիճներ Թալեաթին ու Էնվերին երախտագիտություն են հայտնել Թուրքիային, որն «առաջինը հղացավ Հայաստանի անկախության գաղափարը»:

*Լավ, նկատի առնենք, որ Խատիսյանը նոր էր դարձել դաշնակցության անդամ, հայերեն քիչ էր կարդում և ծանոթ չէր դաշնակցության նախորդ գրականությանը: Բայց ինչ անուն .ռալ Ավետիս Ահարոնյանին, որը, ծնկի գալով սուլթանի առջև, նրան ասել է. «**Հայ ժողովուրդը երբեք չի մոռանա, որ օսմանյան կառավարությունն առաջինն է տվել անկախ Հայաստան ստեղծելու գաղափարը և առաջինն է նրան ճանաչել**»(ընդգծումն իմն է-Վ.Պ.)(ՀՀ ԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 657, թ. 200ա):*

Նկատեմ, որ Ահարոնյանը շատ լավ գիտեր իր հարազատ դաշնակցության պատմությունը և գիտեր, թե ինչ էր ասում:

Պատմության գավեշտը կրկնվել է նաև 1921 թ. փետրվարին, երբ Հայաստանի տարածքի մեծ մասը գավթել էր քեմալական Թուրքիան, իսկ մենշևիկյան Վրաստանն էլ գրավել էր Լոռին:

Այսպիսի պայմաններում դաշնակցությունը Ս. Վրացյանի գլխավորությամբ Երևանում կազմակերպել է խորհրդաժողով, տապալել սովետական իշխանությունը և հայտարարել է Հայաստանի անկախությունը վերականգնելու մասին:

Եվ այդ անկախությունը պաշտպանելու համար Վրացյանը դիմել է հայ ժողովրդի դահիճ Մուստաֆա Քեմալին, հայտարարելով, թե իր կառավարությունը հավատարիմ է մնում 1920 թ. դեկտեմբերի 2-ի պայմանագրին և խնդրել է ռազմական օգնություն...

Այժմ, նաև մեր օրերում դաշնակցությունը շատ է ձգտում իրեն վերագրել Հայաստանի անկախությունը հռչակելու գործում այնպիսի ծառայություն, որն իրականում նա չի կատարել, այլ օգտվել է «անկախ Հայաստան ստեղծելու» թուրքական գաղափարից:

Ահա, այսպիսին է Հայաստանի անկախության գաղափարի տեսությունը, որին անդրադարձ կատարվեց շատ համառոտակի: Սա էլ բավական է համոզվելու, որ դաշնակցությունը երբեք չի պայքարել Հայաստանի անկախության համար: Դաշնակցությունը Հայաստանի անկախությունը հռչակել է ոչ թե իր կամքով, այլ Թուրքիայի կամքով ու թելադրանքով: Եվ մոռացության տալով ճշմարտությունը, այդ անկախության հռչակումը համարում է իր պատմական ծառայությունը և ժողովրդից պահանջում հատուցում:

Դաշնակցությունը շատ հստակորեն իր ծրագրում և ամբողջ գործունեության մեջ կարևորել է Հայաստանի ազատագրումը Սովետական իշխանությունից, որի գոյության ամբողջ 70 տարիների ընթացքում դիմել է զանազան միջոցների՝ «դեմոկրատական» Թուրքիային գովաբանելուց մինչև Հիտլերյան ֆաշիզմի հետ համագործակցելը:

Բայց սա, ի միջի այլոց, քանի որ այդ թեման դուրս է ներկա աշխատության շրջանակներից:

ԳԼՈՒԽ 21
ՀԱՅԿԱԿԱՆ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ Կ. ՊՈԼՍՈՒՄ

Կարևորելով Կ. Պոլիս մեկնած հայկական պատվիրակության գործունեությունը, հարկ եմ համարում առանց մեկնաբանությունների, որոշ կրճատումով, ընթերցողի ուշադրությանը ներկայացնել մի քանի արխիվային փաստաթուղթ:

1. ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅԱՆ ՕՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1918 թ. հունիսի 13-ին երիտթուրքական կառավարության հրավերով Կ. Պոլիս է մեկնում հայկական պատվիրակությունը: Հենց առաջին օրից գրվել են պատվիրակության հետևյալ օրագրությունն ու արձանագրությունները:

«Հունիսի 13-ի գիշերը Թիֆլիսից մեկնեցին պատվիրակներ Ա. Ահարոնյանը (նախագահ), Խատիսյանը, ինչպես նաև զինվորական խորհրդական գեներալ Գ. Կորգանյանը, քաղաքացիական և աշխարհագրական խնդիրների խորհրդական Գ. Խատիսյանը, Ա. քարտուղար՝ Հակոբ Քոչարյանը, երկրորդ քարտուղար՝ Տ. Միրզոյանը, քարտուղար և դիվանագիտական կուրսեր՝ Լ. Լիսիցյանը, Թիկնապահ՝ Ա. Աղաբաբյանը և սպասավոր՝ Արշակ Հարությունյանը:

Հունիսի 19-ի երեկոյան պատվիրակությունը հասավ Պոլիս: Տեղավորվեցին Թոքաթլյան հյուրանոցում: Նույն շոգենավով Պոլիս էր եկել վրաց պատվիրակությունը:

Հունիսի 22-ին մեծ վեզիրն ընդունում է Ահարոնյանին, Խատիսյանին և Կորգանյանին: Ահարոնյանը հատուկ պատրաստած ճառով դիմում է մեծ վեզիրին:

Դրանից հետո այցելել են զինվորական մինիստր Էնվեր փաշային, ապա արտաքին գործերի մինիստր Նեսիմի բեյին, ծովային մինիստր Ջեմալ բեյին և արդարադատության մինիստր Խալիլ բեյին, որը նույնպես լինելու է Կ. Պոլի առաջիկա կոնֆերանսի նախագահը:

Նույն օրը երեկոյան Ահարոնյանը և Ա. Խատիսյանը եղան գերմանական դեսպան կոմս Բերեստորֆի մոտ: Հանդիպել են նաև Բուլղարիայի, Ավստրո-Հունգարիայի, Շվեդիայի դեսպաններին:

Հունիսի 28-ին «առավոտեան Մուխթար բեյը եկաւ մեզ մօտ Էնվեր փաշայի կողմից տեղեկութիւն տալու մեր շրջանում երկաթուղի գծի վերայ տեղի ունեցած դէպքերի մասին և խնդրելու, որ մեր պատուիրակութեան նախագահը դիմի մեր կառավարութեանը մի հեռագրով այդ առթիւ: Համապատասխան հեռագիրը կազմեց և ուղարկուեց օսմանեան կառավարութեան միջոցով» (ՀՀ ԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 8, թթ. 3, 4, 10):

Հուլիսի 4-ին մասնակցեցին սուլթանի թաղմանը:

*Հուլիսի 5-ին Ահարոնյանը և Խատիսյանը գնացին պալատ՝ նոր սուլթանին շնորհավորելու և ստորագրելու մասյանում (**Նույն տեղը**, թ. 12-13):*

*Հուլիսի 17-ին Մուխթար բեյը Էնվեր փաշայի կողմից խնդրեց, որ մենք տանք նրան մեր քարտեզը, ցույց տալով մեր ակնկալած սահմանները (**Նույն տեղը**, թ. 17):*

*Որոշվեց «պատրաստել և ներկայացնել քարտեզը նշանակելով. ա) Բաթումի պայմանագրի համաձայն մեր տարածքների սահմանները. բ) առանձին գոյնով նշանակել Տաճկաստանի գրաւած երկիրները Բրեստ-Լիտովսկի սահմաններից դուրս և գ) մտցնել քարտեզի մէջ բոլոր հայաբնակ գաւառները, նշանակելով առանձին թիւրքերի և վրացիների կողմից վիճելի համարուած մասերը, մուծելով նաև քարտեզի մէջ Զանգեզուրի գաւառի հարաւային կէսի արևմտեան մասը և Նախիջևանի գաւառի Օրդուբադի շրջանը» (**Նույն տեղը**, թ. 53):*

Հուլիսի 25-ին Ահարոնյանը, Խատիսյանը և վերջերս Պոլիս եկած Պապաջանյանը հանդիպեցին երիտթուրքերի կենտրոնի անդամներ Ռիզա բեյի և Բահաէտդին Շաքիրի հետ: Տեսակցությունը տևել է երկու ժամ: Այս հանդիպման ժամանակ, ինչպես նշվում է կազմված տեղեկանքում, պատվիրակները նրանց խնդրել են «անկեղծ կերպով յայտնել իրենց վերաբերմունքը դէպի Հայաստանը և հայերը»:

Շաքիրը նրանց պատմել է Ռոստոմի և Վռամյանի հետ Էրզրումում իր ունեցած խոսակցության մասին և ասել է, թե «նրանք այն միտքն էին յայտնել, որ Թիւրքիան չի կարող յոյս դնել հայերի վրայ, իհարկէ, դրանից յետոյ մենք էլ պիտի միջոցների դիմէինք և, իհարկէ, երկուստեք էլ սարսափներ եղան, բայց դրանք անխուսափելի են նման բարդ հանգամանքներում»:

Այնուհետև Բ. Շաքիրն անդրադարձել է Թուրքիայում հայկական հարցին և ասել է. «Ձեր համար լաւ է այն չը շոշափել, մենք ինքներս այն կը կարգաւորենք, դա մեր ներքին խնդիրն է: Ինչ վերաբերում է Կովկասյան Հայաստանին,- մեր զօրքերն անցան Բրեստ-Լիտովսկի սահմաններից աւելի հեռու, չնորհիւ իրենց ռազմական տրամադրութեան: Բայց այժմ մենք ցանկանում

ենք ձեզ հետ խաղաղ և բարեկամաբար ապրել, ուստի ձեր բոլոր խոսքերը մենք կրյայտնենք կուսակցութեան գլխաւոր կոմիտէին և շուտով կը հաւաքուի կուսակցութեան ընդհանուր ժողով ու կը յայտնենք ձեր խօսածը: Իսկ օրուայ հրատապ խնդիրներին կ'աշխատենք օգնել ձեզ վճռելու» (ՀՀ ԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 657 բ, թ. 121):

Հուլիսի 26-ին պատվիրակությունը նույն կազմով հանդիպում է Ռաուֆ բեյին, որն ասել է. «Թիւրքիայի հասարակական կարծիքը և պաշտօնական Թիւրքիան շատ են գնահատում այն հանգամանքը, որ Հայկ. հանրապետութիւնը չի խառնւում Թիւրքահայերի ներքին գործերի մէջ և այդ աւելի է անում Հայերի համար, քան միջամտութիւնը օգուտի տեսակետից» (ՀՀ ԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 657 բ, թ. 121):

Հուլիսի 29-ին կայացած պատվիրակության 10-րդ նիստում «Խատիսեանը զեկուցեց այն հարցերի մասին, որ շոշափուել էին արտաքին գ. նախարար Նեսիմի բեյի հետ իր ունեցած վերջին տեսակցութեան ժամանակ, նոյն օրը ճաշից յետոյ:

Հարց է ծագել, թէ ում համարել հայկական գերիներ, որ վերցուած է Ռուսաստանի հետ ունեցած պատերազմից: Նախարարը համաձայնել է Ա. Խատիսեանի պարզած տէսակետի հետ, այն է, որ համարել Հայաստանի գերիներ նրանց, որոնք ծնուած են հայկական գաւառներում և իրենց ճանաչում են Հայաստանի քաղաքացիներ: Նախարարը խոստացել է այդ մտքով ներկայացնել խնդրանքը Էնվեր փաշային և մինիստրների խորհրդին:

Գաղթականների մասին. ի նկատի ունենալով, որ շատ տեղերում դեռ կրքերը չեն խաղաղուել և կարող են exses-ներ լինել դրանց վերաբերմամբ, որոշել են, որ անմիջապէս նրանց կարելի է թոյլ տալ վերադառնալ Ալեքսանդրապոլի և Բաթումի շրջանները. իրենք արդեն հեռագրել են այդ երկու շրջանների մասին կարգադրութիւնը: Միւս շրջանների մասին հարցը դեռ քննութեան մէջ է և հետզհետէ կը թոյլատրուի, բացի Ղարսի ու Ախալքալակի շրջանները, որտեղ դեռևս դժուար է թոյլ տալը՝ ի նկատի առնելով սուր յարաբերութիւնները:

Երկաթուղիների մասին. մինիստրն առաջարկում է անմիջապէս հեռագրել մեր կառավարութեանը, որ այդ շրջանները իսկոյն բանան մեր հայկական զօրքերը և պաշտպանները: Այդ մտքով հեռագրերու են նաև Էսաղ փաշային Բաթում:

Այս առթիւ մինիստրը զանգատուել է Անդրանիկի վրայ, որ կամաւորներ է հաւաքում և շարունակ դիմադրութիւններ է ստեղծում թիւրքերի դէմ և խնդրել է միջոցներ ձեռք առնել նրա վրայ ազդելու համար» (**նույն տեղը**, թ. 55):

Օգոստոսի 7-ին պատվիրակության 11-րդ նիստում «Միք. Պապաջանեան յայտարարեց այն կարծիքը, որ մինչև այժմ մենք էլ, կառավարութիւնն էլ միայն դեկլարացիաներ ենք արել, ժամանակն է, որ դեկլարացիաներից անցնենք գործի և այդ մտքով էլ նրա կարծիքով, պէտք է խօսել մինիստրի հետ»:

Որոշվում է. «Այժմ պէտք է պնդել, որ Բաթումի դաշնագրի պայմանները զոնէ կատարուեն, որ է՝ մեր տարածքը մաքրուի տահիկ զօրքերից, երկաթուղին մեզ յանձնուի և գաղթականների վերադարձն իրագործուի: Բացի դրանցից պարզել, թէ վերջապես երբ է սկսուելու կոնֆերանսի աշխատանքը:

1918 թ. սեպտեմբերի 1-ի 18-րդ նիստում «...Պապաջանեանը դրեց հետևեալ հարցը. օգոստոսի 20-ի տեսակցութեան միջոցին Էնվեր փաշան մեզ դրեց մի հարց, որը իր կարծիքով ուշադրութեան ընդունելի ուներ, այն է՝ ընդունում ենք արդյոք մենք entente կամ դաշն կամ confederation Թիւրքիայի հետ, թէ ոչ: Եւ այդ հարցին մենք պէտք է որոշակի պատասխան տանք:

Մենք պէտք է ասենք 1) մենք ընդունում ենք սկզբունքով entente Թուրքիայի հետ, 2) մեր մասնակցութիւնը entente-մէջ չի կարող լինել ազդեցիկ, որ իրենք Թիւրքերն էլ ընդունում են, այլ միայն պաշտպանելու համար մեր շեզրքութիւնը, Թիւրքիային նպաստաւոր (благожелательный) չեզրքութիւն:

Ահարոնեանն էլ ընդունում է վերջին տեսակետը, այն է՝ մեր բարեմիտ չեզրքութիւն Թիւրքիայի վերաբերմամբ, պայմանով, որ Թիւրքիան յանձն է առնում ապահովել դաշնակիցների միջոցով, որ Ռուսաստանը չի առարկի մեր անկախութեան դէմ:

Որոշում է՝ այսօրուայ տեսակցութեան միջոցին Նեսիմի բեյի հետ խօսք բաց անել entente-ի խնդրի մասին» (**նույն տեղը**, թ. 74):

Սեպտեմբերի 13-ին 21-րդ նիստ. քննարկում են պատվիրակության նիստում Բեռլինից ստացված Ա. Զուրաբյանի և Վիեննայից՝ Հ. Օհանջանյանի նամակները: Նշվում է, որ «Ա. Զուրաբեանի նամակի որոշ մասերը ցոյց են տալիս նրա տեսակետների տարբերութիւնը մեր պատվիրակութեան և առհասարակ մեր կառավարութեան ու Ազգային խորհրդի բռնած ուղղութիւնից, հատկապէս մեր անկախութեան խնդրի վերաբերմամբ»:

Որոշվում է. «Նախ, հեռագրել Վիեննա՝ Հ. Օհանջանեանին, որ ի նկատի ունենալով Բեռլինում տեղի ունեցող կարևոր բանակցութիւնները, անմիջապէս վերադառնալ Բեռլին, թողնելով Վենդրիա գնալու մտադրութիւնը ուրիշ անգամ:

Երկրորդ, հեռագրել Ա. Զուրաբեանին՝ Բեռլին, որ Հ. Օհանջանեանի հետ

միասին ներկայացնեն ռուսաց կառավարության ներկայացուցչին մեր կառավարության անունից ուժգին բողոք՝ Հայաստանի անկախությունը չընդունելու առթիվ և պնդել անպայման, որ ճանաչի մեր անկախությունը, իբրև միակ միջոց մեր ժողովրդի փրկությունն ներկայումս:

Միևնույն ժամանակ խնդրել Ակ. Խատիսեանին առանձին նամակ ուղղել Ա. Զուրաբեանին, ցույց տալով, որ նա պիտի դեկավարվի Ազգային խորհրդի դիրեկտիվներով և ամեն կերպ մեր անկախությունը պաշտպանի»:

Խորհրդակցությունում քննարկվում է այդ օրվա հեռագիրներում տրված լուրը «Kreuz Zeifing» թերթում տպված լուրը, ըստ որի «Թիւրքիայի սահմաններն ապահովելու համար Ռուսաստանի կողմից պիտի Թիւրքիային կապուի և նրա կազմի մեջ մտնի կոնֆեդերատիվ կապերով՝ ամբողջ ավտոնոմ Հայաստանը»:

Այդ կապակցությամբ որոշվում է գրել Բեռլին, որ «մենք այդ մտքին համակրանքով ենք վերաբերվում, թողնելով, իհարկե, վերջնական լուծումը մեր կառավարությանը» (**նույն տեղը**, թթ. 78-79):

Սեպտեմբերի 14-ին 22-րդ նիստում լսվում է Երևանից եկած Հայաստանի խորհրդարանի անդամ Ա. Բաբայանի զեկուցումը: Նա շատ այլ հարցերի հետ անդրադարձել է Անդրանիկին և ասել է. «Անդրանիկի խումբը ներկայումս արդէն միանգամայն լուծարված պէտք է համարել»:

Սեպտեմբերի 15-ին պատվիրակության 24-րդ նիստում որոշվում է. «Անդրանիկի խմբի և ուրիշ խմբերի լուծարելը, երկաթուղու գծի ապահովությունը, զորքերի (թուրքական) կանոնավոր և անարգել տեղափոխությունը կատարել մեր աջակցությամբ»:

Սեպտեմբերի 20-ին 25-րդ նիստում որոշվում է Էնվեր փաշային խնդրել, որ ազդի Նուրի փաշայի վրա, որպեսզի Ադրբեջանից Հայաստանին տրվի մեկ և կես միլիոն փութ հաց:

Սեպտեմբերի 23-ին 26-րդ նիստում Ակ. Խատիսյանը հայտնում է, որ համդիպել է գեներալ Պոնյատովսկու հետ, որն ասել է, թե Էնվեր փաշայի կառավարիչ Սեկտ փաշան (գերմանացի) երևում է, որ հայերին լավ չի վերաբերվում և խորհուրդ է տվել աշխատել Բեռլինի միջոցով նրա վրա ազդել: Նա ասել է նաև, որ եթե դուք, հայերդ, ոչնչ կերպով ինքներդ հաջողացնեք ձեռք բերել Ռուսաստանի հաճությունը (օրինակ պատգամավորություն ուղարկել Երևանից), քանի որ նրանք հայերի մասին լավ կարծիք ունեն, դուք կարող եք de facto ձեր անկախությունն ապահովել:

Այս ավտորիտական գեներալի խորհրդով էլ Մոսկվա է ուղարկվում Հ. Զաքրիևի և Լ. Նազարյանի պատվիրակությունը:

Սեպտեմբերի 26-ին 28-րդ նիստում որոշվում է անպայման աշխատել Բրեստի սահմանները ստանալ և այդ մասին անմիջապես խոսել Թալեաթի հետ և առաջարկվում է՝ «դիմենք մեր կառավարությանը՝ Երևան, որպէսզի մի ուժեղ պատվիրակություն ուղարկի Մոսկվա՝ բոլշևիկների կառավարության հետ հարաբերություններ հաստատելու համար»:

Հոկտեմբերի 8-ին 30-րդ նիստում պարզվում է, որ վերջապես կոնֆերանս չի լինելու» (ՀՀ ԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 8, թթ. 3-85):

2. ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԾ ԶԵԿՈՒՅՑԱԳԻՐԸ

Արխիվում պահպանվել է նաև 1918 թ. հունիսի 19-ից մինչև նոյեմբեր ամիս հայոց պատվիրակության կազմած զեկուցագիրը, որտեղ, օրինակ, հունիսի 22-ի վերաբերյալ նշվում է հետևյալը. «Հունիսի 22-ին եղանք մեծ վեզիր Թալեաթ փաշայի և զինվորական մինիստր Էնվեր փաշայի մոտ և այդ ընդունելությունների միջոցին մենք որոշակի ներկայացրինք Հայաստանի ծանր վիճակը, գաղթականության սարսափելի կացությունը և չեշտելով մեր կառավարության և Ազգային խորհրդի որոշումը՝ ամեն ջանք գործ դնել սերտ կապ և բարեկամական յարաբերություններ պահպանել Թիւրքիայի հետ, **որն առաջինը հղացավ Հայաստանի անկախության գաղափարը**, պնդեցինք, որ հենց յանուն այդ բարեկամության պահպանման, Թիւրքիայի շահերը պահանջում են, որ Հայաստանը կարողանա իրոք գոյություն ունենալ և լինել կենսունակ ու դրա համար անհրաժեշտ է նրա սահմաններն ընդլայնել: Եվ հենց առաջին տեսակցության ժամանակ այդ երկու դեկավար անձինք իրենք խոստովանեցին, որ il faut elargir l'Armenie»:

Այնուհետև նշվում է, որ նույն երեկոյան պատվիրակությունը տեսակցություն է ունեցել գերմանական դեսպանի հետ, որը ցույց է տվել «այն քաջալերող վերաբերմունքը, որ դէռ Բաթումում դէպի մեզ ցույց է տուել գերմանական ներկայացուցիչ Ֆոն Լոսոֆը»:

Գերմանական դեսպան կոմս Բերեստորֆը պատվիրակությանը «ուղղակի յայտարարեց, որ Գերմանիան չի ընդունում Բաթումի դաշնագիրը ու պնդելու է Բրեստ-Լիտովսկի դաշնագրի սահմանների վրայ, որը յույս ունի յաջողեցնել Թիւրքիային ընդունել տալը»:

Պատվիրակության զեկուցագրում նշվում է, որ հետզհետէ պարզ է դառնում, որ կոնֆերանսը տեղի չի ունենալու, իսկ գերմանական դեսպանն էլ հայտնում է, որ Թուրքերն այլևս գերմանացիներին չեն լսում և խորհուրդ է

տալիս դիմել ավստրիական կառավարությանը և «խնդրել զորք ուղարկել Հայաստան երկրի ապահովության համար: Նույնանման թելադրանք եղել էր և Բեռլինում մեր ներկայացուցիչներին, որոնք և այդ մտքով գրառոր դիմում էին արել Ավստրո-Հունգարիայի Բեռլինի դեսպանին: Պոլսում ևս այդ ուղղությամբ բանակցություններ եղան մեր և ավստրիական զինուորական լիազոր Ոնյոստկովսկու միջև, որը միանգամայն հաստատություն տալով այդ մտքին, իր կողմից գրեց այդ մասին Վիեննա, միաժամանակ խորհուրդ տալով մեզ՝ առաջարկել մեր Բեռլինի ներկայացուցչին անմիջապես գնալ Վիեննա...»:

Ինչպես պատվիրակության երեք տետր պարունակող օրագրում, այնպես էլ զեկուցագրում հանգամանորեն նշվում է, թե Կ. Պոլսում գտնվող գերմանական, ավստրիական, բուլղարական դեսպանների հետ քանի անգամ են փոխայցելել, քանի անգամ հաշվերույթի են մասնակցել, քանի անգամ իրենք են հաշվերույթ տվել, ինչ շրջագայություններ են կատարել և այլն, և այլն և այս բոլորն՝ ապարդյուն, որևէ դրական արդյունք չեն տվել:

Զեկուցագրում հայտնվում է, որ ամիսներ տևած սպասողական դրության ընթացքում, պատվիրակությունը կարողացել է կատարել «ոչ պակաս կարևոր աշխատանք»: Իսկ ո՞րն էր այդ «ոչ պակաս կարևոր աշխատանքը»:

Այս հարցին պատասխանելու համար ներկայացնեմ զեկուցագրից մի ծավալուն հատված, որը, կարծում եմ, ընթերցողին շատ բան կասի: «Նա (այսինքն՝ պատվիրակությունը՝ Վ. Պ.) ունեցաւ մի շարք տեսակցություններ Թուրք յայտնի քաղաքական գործիչների, պառլամենտի անդամների, ազդեցիկ հրապարակախոսների հետ (Ահմեդ Ռիզա, Ժէօն Թուրքերի գլխավոր կոմիտեի ազդեցիկ անդամներ դոկտոր Նազիմ, Բահաէտդին Շաքիր և այլն)»:

Հիշեցնեմ, որ վերոհիշյալ անձինք հայ ժողովրդի ցեղասպանությունը կատարած գլխավոր հանցագործներից են և շարունակեմ մեջբերումը. «Եւ այդ բոլոր անձանց առաջ պատուիրակությունը աշխատում էր պարզել Հայաստանի ներկայ վիճակը, միաժամանակ չեշտելով, որ թե մեր և իր՝ Թուրքիայի շահերը պահանջում են սերտ բարեկամական կապ պահել Հայաստանի և Թուրքիայի մէջ, և որ մեր կառավարությունը և Պոլսի պատուիրակությունը ձգտելու է ամէն կէրպ այդպիսի կապեր հաստատել երկու հարևան ազգերի և պետությունների մէջ:

Եւ կարելի է ասել առանց պարծենալու, որ պատուիրակության ջանքերը այդ ուղղությամբ գործադրած է, հետզհետէ զգալի հետևանքներ ունեցան:

Պատուիրակությանը յաջողուեց թուրք կառաւարական շրջանակներում ու մանաւանդ հասարակական խաւերի ու մամուլի տրամադրությունների մէջ զգալի փոփոխություն առաջ բերել ուելի նպաստաւոր մտքով դէպի հայերը և հայկական դատը:

Եւ այդ երևոյթը հետզհետէ այնքան նշմարելի դարձաւ, որ հենց իրենք՝ թուրք մինիստրներից մի քանիսը մեզ դրա վրայ մատնացոյց էին անում:

Թալեաթ փաշան սեպտեմբերի 3-ին իր մօտ եղած տեսակցության ժամանակ մեր ուշադրությունը հրաւիրեց «Վաքիտ»-ի այդ օրուայ առաջնորդող յօդուածի վրայ հայկական հարցի մասին, իսկ արտաքին գործերի մինիստր Նեսիմի բեյը ուղղակի մեզ յայտնեց, որ հայկական պատուիրակության Պոլիս գտնուիլը և նրա բռնած դիրքը մեծ փոփոխություն է առաջ բերել թուրք հասարակության հայացքների մէջ և մեզ խորհուրդ տուեց շարունակել մեր աշխատանքներն այդ ուղղությամբ:

Պոլսի հայության վերաբերմամբ, ինչպէս վերը յիշեցինք, պատուիրակությունը սկզբից ի վեր բռնեց վերապահ դիրք և իր բոլոր տեսակցությունների ժամանակ, թէ կառավարության ներկայացուցիչների հետ և թէ թուրք հասարակական գործիչների և խմբագիրների հետ նա կրկնում էր, որ **նա եկած է միայն Կոմիտեան Հայաստանի կողմից և ոչ մի մատնություն չունի պատրաստ թուրքահայերի խնդրով, ընդունելով այդ իրողությունը թուրքական ներքին քաղաքականության խնդիր** (ընդգծումն իմն է- Վ. Պ.):

Պատուիրակությունը շարունակ խուսափում էր որևէ յարաբերություն ունենալուց տեղական հայերի հետ և նոյնիսկ երկար ժամանակ այցելության չը գնաց հայկական հիմնարկություն: Եւ պէտք է ասել, որ մեր բռնած այդ վերապահ դիրքը արդէն նկատուել էր թուրք կառավարության կողմից, որն առանձնապէս գնահատել էր մեր այդ վարմունքը:

Եւ չնայած նրան, որ մենք ուղղակի չէինք արծարծում թուրքահայության ներքին խնդիրները, կառավարությունը, ինքը, կարծես մեր ներկայությունից և մեր բռնած վերապահ դիրքից դրդուած՝ մի շարք կարգադրություններ արեց հայության վիճակը թեթևացնելու համար, ինչպէս օրինակ, աքսորեալ հայերի վերադարձի հրամանը, հայերին ազատ երթևեկելու իրաւունք տալը և այլն...:

Օգոստոսի 20-ին Էնվեր փաշան կարևոր խնդրի համար տեսակցության ժամանակ, ուղղակի մեզ առաջարկեց որոշ պայմաններով դաշն կապել թուրքիայի հետ, պարզ հասկացնելով, որ այդ դէպքում նրանք պատրաստ են անել մեզ ամէն տեսակ տերիտորիական և այլ զիջումներ:

Էնվերի այդ առաջարկին մենք պատասխանեցինք, որ պատրաստ ենք

պարզել այդ հարցով, իմացրինք, որ որևէ վճռական քայլեր անելու համար մենք նախապէս պէտք է ստանանք մեր կառավարութեան համաձայնութիւնը: Էնվեր փաշան հաւանութիւն տուեց այդ մտքին» (ՀՀ ԱԱ, ֆ. 200, ց. 2, գ. 34, թթ. 1-21):

3. Ա. ԽԱՏԻՍՅԱՆԻ ԶԵԿՈՒՑԱԳԻՐ-ՕՐԱԳԻՐԸ

Ա. Խատիսյանի ռուսերեն գրած զեկուցագիր-օրագիրն ընդգրկում է Տրապիզոնի բանակցութիւններից մինչև Կ. Պոլսի բանակցութիւնների ավարտը: Նախորդ էջերում այդ օրագրից մեջբերում արվել է Տրապիզոնի և Բաթումի բանակցութիւնների մասին:

Այժմ կամենում եմ Խատիսյանի օրագրից մեջբերել Կ. Պոլիս մեկնած պատվիրակության գործունեութիւնը վերաբերող հատվածը:

«Հունիսի 12- Քննարկում ենք կոնֆերանս մեկնելու հարցը: Ընտրեցին Ահարոնյանին, ինձ և Պապաջանյանին:

Հունիսի 13- Վրացիների հետ Փոթիից մեկնեցինք Կ. Պոլիս:

Հունիսի 19- Ցերեկվա ժամը 4-ին հասանք Կ. Պոլիս:

Հունիսի 22- Մենք այցելություն կատարեցինք Թալեաթին, Էնվերին, Ջեմալին, Խալիլին: Էնվեր փաշան ուղղակի ասաց Թուրքիայի հետ հայերի դաշինքի մասին, իսկ Ջեմալը՝ առաջիկա 20-30 տարիներին Կովկասյան բոլոր հանրապետութիւնների դաշինքի մասին:

Հունիսի 23- Հուլիսի 3- Այս 10 օրերի ընթացքում մենք զրուցել ենք դեսպանների հետ: Այսօր արդեն 2 շաբաթ է, բայց այստեղ մեր հարցը պատշաճ նական կարեկցանքից բացի Էնվերի մոտ ոչինչ չի առաջացնում: Մենք պատրաստել ենք մեծ հուշագիր, որտեղ խնդրում ենք 45 հազար քառակուսի կիլոմետր և մեկ ու կես միլիոն բնակչություն, ընդգրում մեզ սպասում են մեծ դժվարություններ Թուրքիայի հետ (Բրեստ-Լիտովսկի պայմանագիր), Վրաստանի հետ (Բորչալուի գավառ) և Ադրբեջանի հետ (Ղարաբաղ):

Հուլիսի 4- Մեռավ սուլթանը:

Հուլիսի 5-9- Այս օրերին մենք ճաշել ենք Էնվերի մոտ: Էնվերն ու Խալիլը մեզ հետ քաղցրությամբ են խոսում, բայց ոչ մի խոստում չեն տալիս: Վեհիբն որոշակիորեն խոսում է ռազմական կոնվենցիայի մասին: Մենք ասացինք, որ սկզբունքորեն դաշինքի դեմ չենք առարկում, բայց մատնացույց ենք անում մեր փոքր տարածքը, քիչ բնակչությունը և հայկական ուժերի ցրվածությունը 4 պետությունների միջև, որը տանում է դեպի 4 քաղաքականություն»:

Ընդմիջեմ Խատիսյանի օրագիրը և ընթերցողին ներկայացնեմ հուլիսի

10-ին Քաջազնունուն ուղարկած նրա նամակից հետևյալ հատվածը. «...Այսօր այստեղ եկավ Վեհիբ փաշան: Նրա հետ երկար խոսեցինք: Նա Էնվերի անունից առաջարկում է ռազմական alliance: Մենք շատ հաստատ ասացինք, որ առանց մեծ տարածքի և շատ բնակչության, նույնիսկ ծիծաղելի է խոսել մեր՝ որպես արտաքին ուժի մասին: Մենք սկզբունքով alliance-ը չենք մերժում... Էնվերը, Թալեաթը շատ սիրալիր են, բայց դեռևս ոչ մի խոստում չեն տալիս» (ՀՀ ԱԱ, ֆ. 200, ց. 1, գ.657 ա, թթ. 91-94):

«Օգոստոսի 20- Մենք եղանք Էնվեր փաշայի մոտ: Նա ասաց, որ բոլորից լավ կլինի Ադրբեջանի, Հայաստանի ու Թուրքիայի կոնֆեդերացիայի ստեղծումը: Էնվերը խոսում էր շատ դիպուկ, շատ խելացի և շատ անկեղծ: Էնվերի հետ խոսակցությունը մեզ վրա թողել է շատ խոր տպավորություն: Բայց նրա միտքն այնպես արմատական է, որ մենք ձեռնպահ մնացինք ըստ էության մեր անձնական հայացքն արտահայտել:

Օգոստոսի 21- Ինձ մոտ եկավ Խալիլ բեյը: Նա շատ կրքոտ խոսեց Հայաստանի կողմնորոշման մասին, ասաց, որ թուրքական իշխանությունները շատ դժգոհ են «ամբողջ հայ ժողովրդի անունից» Նուպար փաշայի և Կլեմանսոյի ելույթներից: Նա մատնացույց արեց, որ հայերը խաղում են 4 ճակատով՝ Եգիպտոս, Գերմանիա, Թուրքիա և բոլշևիկներ: Դա անվստահություն է առաջացնում հայերի նկատմամբ և դրա համար էլ մենք պետք է որոշակիորեն հայտարարենք, որ Նուպար փաշան իրավունք չունի խոսել Հայաստանի հանրապետության անունից: Դա կարևոր է նաև նրա համար, որ զինվորականների (թուրքական) մեջ կա կուսակցություն, որը հայերի նկատմամբ ընդհանրապես արտահայտում է վստահություն և որ շուտով պարլամենտում քննարկվելու է օրենքի նախագիծ հայերին 2 միլիոն լիր հատկացնելու մասին:

Մենք հանգամանորեն քննարկեցինք իրավիճակը և որոշեցինք գրել ինտերվյու այն մասին, որ Հայաստանի հանրապետությունից Նուպար փաշան լիազորություն չունի, որ ըստ էության նրա բարձրացրած հարցերը արդարացի են և մենք դրանց լուծումը սպասում ենք Թուրքիայից:

Օգոստոսի 31- Մեզ թվում է, որ Գերմանիան Հայաստանի հաշվին բավարարում է Թուրքիային և որ Թուրքիան արդեն ավելի քիչ է մեզ հաշվի առնում: «Կլինեք կամ մեզ հետ կամ մենք կլինենք ձեր դեմ»- այսպիսին է Էնվերի խոսքերի իմաստը:

Սեպտեմբերի 1- Մենք մեկ և կես ժամ եղանք արտաքին գործերի մինիստրի մոտ և մեր կողմից արեցինք 4 հայտարարություն. 1) հրապարակել Վրաստ-

տանը ճանաչելու վերաբերյալ Գերմանիայի և Ռուսաստանի պայմանագիրը, մեզ հասկանալի չէ, թե ինչու Հայաստանն ու Ադրբեջանը չեն ճանաչվել: 2) մենք համաձայն ենք Էնվեր փաշայի առաջարկությանը Թուրքիայի հետ մտնել Entente-ի մեջ (առանց մեր զորքերն օգտագործելու նրանց թշնամիների դեմ, ինչպես ասում է Էնվերը), որպեսզի Թուրքիան մեզ վերաբերվեր լիակատար վստահությամբ և ունենար ապահովված թիկունք ու երկաթուղի: 3) մենք խնդրում ենք մեզ վստահեցնել, որ Թալեաթ փաշան Բեռլին այցելելու ժամանակ կպաշտպանի մեր անկախությունը: 4) մենք պնդում ենք մեր տարածքների վրա, որոնք ցույց ենք տվել մեր պահանջների մեջ:

Թուրքերը մեզ պատասխանեցին. 1) Վրաստանի և Բաքվի մասին Ռուսաստանի հետ Գերմանիայի պայմանագրի վերաբերյալ Թուրքիան պաշտոնապես ոչինչ չգիտե և մնում է իր տեսակետին, այն է՝ բոլոր 4 հանրապետությունները պետք է լինեն անկախ և Բաքուն պետք է անցնի Ադրբեջանին: 2) որ Entente-ի ձևի մասին նա դեռ չի մտածել, բայց նա այդ հարցով Էնվերի հանձնարարությամբ լուրջ կզբաղվի և որ դա վստահության ու տարածքային հարցերում կունենա հակայական նշանակություն: 3) Թալեաթ փաշան, իհարկե, կխոսի կովկասյան հարցերի մասին և Թուրքիան չի հրաժարվի այն բանից, որ գործը կկարգավորվի: 4) ինչ վերաբերում է տարածքներին, ապա հարցը մնում է Բաթումի պայմանագրի սահմաններում:

Սեպտեմբերի 3- Ցերեկվա ժամը 12-ին մենք եղանք Թալեաթի մոտ: Նա շատ սիրալիր ընդունեց և ասաց, որ գնում է Բեռլին պաշտպանելու Թուրքիայի շահերը և որ հավատում է Հայաստանի անհրաժեշտությանը և կձգտի համնել նրա անկախությանը:

Սեպտեմբերի 6- Մեզ ընդունեց սուլթանը: Ահարոնյանը երկու միտք արտահայտեց. շնորհավորանք գահակալության առիթով, նրան և կայսրությունը ցանկանալով երջանկություն, իսկ հետո՝ շնորհակալություն անկախ Հայաստանի ստեղծմանն աջակցելու համար, որից մենք երբեք չենք հրաժարվի և որին կպաշտպանենք, մնալով Թուրքիայի բարի հարևաններ:

Սուլթանը պատասխանեց, որ ուրախ է տեսնելու ազատ և անկախ Հայաստանի հանրապետության ներկայացուցչին, որ նա այդ նոր պետությանը ցանկանում է երջանկություն և որ նա լիակատար կերպով վստահ է, որ երկու հարևան պետությունները՝ Թուրքիան և Հայաստանը կզարգանան հարնուն ժողովուրդների բարեկցության և որ նրանք միասին կպայքարեն ընդհանուր թշնամու (Ռուսաստանի) դեմ:

Ահարոնյանը պատասխանեց, որ սուլթանի խոսքերը կհաղորդի Հայաստանի ժողովրդին և նախապես վստահ է, որ հայ ժողովուրդը ուրախ կլինի լսել այդպիսի սիրալիր խոսքեր:

Սրան սուլթանը պատասխանեց, թե ուրախ է, որ հայ ժողովրդի մեջ հայտնվել են ուժեր, որոնք կարողացել են կազմակերպել ինքնուրույն պետություն և պատվիրակություն ուղարկել Կ. Պոլիս:

Սեպտեմբերի 11- Եղանք պառլամենտի փոխնախագահ Ջավիդ բեյի մոտ: Նա ասաց, որ Հայաստանի ստեղծման գլխավոր դժվարությունն այն է, որ Հայաստանը կանգնած է Թուրքիայի և Ադրբեջանի ճանապարհին: Հարկավոր է հանել երկու նպատակի, ստեղծել Հայաստան, որպեսզի լուծել հայկական հարցը և այնպես ստեղծել, որպեսզի ունենա անցում դեպի Ադրբեջան: «Մենք, ասում է նա, կորցնում ենք Ակսբիան, ուստի պետք է ստանանք Ադրբեջանը, Պարսկական Ադրբեջանը և Թուրքեստանը: Դա մեր իդեալն է, կարող է դա պատրանք է, բայց իդեալ է» (ՀՀ ԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 8, թթ.103-127):

4. ՔԾՆԱՆՔԸ ՍԱՀՄԱՆ ՉՈՒՆԻ

Ավելորդ չեմ համարում մեկ անգամ էլ ընդգծել, որ երիտթուրքական կառավարության հանցագործ պարագլուխների հրավերով Կոստանդնուպոլիս մեկնած հայոց պատվիրակության անդամներ Ա. Ահարոնյանը, Ա. Խատիսյանը, Մ. Պապաջանյանը, Ղորղանյանը շողոմ խոսքեր էին շռայլում, նրանց անվանելով հայոց փրկիչներ, հայոց պետականության հիմնադիրներ:

Կ. Պոլիսում բանակցությունների ժամանակ Ա. Ահարոնյանը Թալեաթ փաշային հայտարարում է. «Ձեզ կվստահեցնեմ, որ Թուրքիայի հայերի վիճակը մեզ երբեք չեն շահագրգռել: Մենք եկանք միայն խորհրդակցելու համար կովկասյան հայերի հանրապետության մասին և որոշելու համար մեր սահմաններն ու դիրքը, մեր զորավոր դրացին և պաշտպան եղող օսմանյան պետության հետ, որի բարեկամական հակումները մենք տեսանք Բաթումում տեղի ունեցած բանակցությունների ժամանակ... Նախ և առաջ մենք ուզում ենք համաձայնության գալ մեր զորեղ դրացի օսմանյան պետության հետ, որի հետ սահմանակից ենք, որից շատ օգնություն կսպասենք»:

Ի պատասխան այս ճոռոմ խոսքերի, Թալեաթն ասել է. «Դուք միշտ հավատարիմ եք եղել Թուրքիային և միայն վերջին ժամանակներս, շնորհիվ եվրոպական պետությունների գրգռումների, անցաք Թուրքիայի թշնամիների կողմը... Բայց այժմ հանգամանքները բոլորովին փոխվել են և ձեռնարկվելիք միջոցներն էլ, ըստ որում, պիտի փոխվեն»:

Էնվեր փաշայի մոտ ընդունելության ժամանակ Ա. Ահարոնյանը խնդ-

րում է, որ «Թուրքիան հանձն առնի ապահովել դաշնակիցների միջոցով, որպեսզի Ռուսաստանը չառարկի մեր անկախության դեմ»:

*Իսկ այդ անկախությունն ապահովելու նպատակով Ա. Խատիսյանն իր կողմից առաջարկում է. «**Թուրքիայի սահմաններն ապահովելու համար Ռուսաստանի կողմից, պիտի Թուրքիայի հետ կապվի և նրա մեջ մտնի ֆեդերատիվ կապերով ամբողջ ավտոնոմ Հայաստանը»:***

***Ա. Խատիսյանի այս առաջարկին պատասխանելով, Էնվերը Հայաստանում է. «Ես ձեր կողմից սպասում էի դրան: Ձեզ ճշմարտությունն ասած ի՞նչու համար պետք է ասեմ, որ դուք ձեր հույսը դրել էիք Ռուսաստանի վրա, կամ ավելի՝ Եվրոպայի վրա: Թուրքիան այժմ ձեզ անվախություն տվեց և այն տվեց ձեր դրության մասին երկար մտածելուց հետո: Իմ ստորագրությունը կա և այն երբեք չի ջնջվի: Դուք ոչ միայն կարող եք մեզ հետ լավ դրացիներ լինել, այլ նաև մեր դաշնակիցներ»*(ընդգծումն իմն է-Վ.Պ.):

*Թալեաթի և Էնվերի հետ հունիսի 22-ին տեղի ունեցած հանդիպման ժամանակ, ինչպես նշված է Կ. Պոլիս մեկնած հայոց պատվիրակության զեկուցագրում «մենք որոշակի ներկայացրինք Հայաստանի ծանր վիճակը, գաղթականների սարսափելի կացությունը և չեշտելով մեր կառավարության և Ազգային խորհրդի որոշումը- ամեն ջանք գործ դնել սերտ կապ և բարեկամական հարաբերություններ պահպանել Թուրքիայի հետ, **որն առաջինը հրաժարվեց Հայաստանի անվախության գաղափարը** (ընդգծումն իմն է-Վ.Պ.), պնդեցինք, որ համոն հենց այդ բարեկամության պահպանման, Թուրքիայի շահերը պահանջում են, որ Հայաստանը կարողանա իրոք գոյություն ունենալ և լինել կենսունակ, ու դրա համար անհրաժեշտ է նրա սահմաններն ընդլայնել» (ՀՀ ԱԱ, ֆ. 200, ց. 2, գ. 34, թ. 1-21):*

Պատվիրակության անդամներին բախտ է վիճակվում արժանանալ սուլթանի մոտ ընդունելության: Նրանք ծնկի են գալիս սուլթանի առջև, համբուրում նրա աջը և շնորհավորում բայրամն ու գահակալությունը:

*Դիմելով սուլթանին Ա. Ահարոնյանն ասել է.«Հայ ժողովուրդը երբեք չի մոռանա, որ **օսմանյան կառավարությունն առաջին է տվել անվախ Հայաստան ստեղծելու գաղափարը և առաջինն է նրան ճանաչել»** (ընդգծումն իմն է-Վ.Պ.), (ՀՀ ԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 657, թ. 200ա):*

Սուլթանը շնորհակալություն հայտնելով, պատասխանում է. «Հայաստանի անկախությունը թանկ է ինձ համար, ես Հայաստանի կառավարությունը համարում եմ իմ հարազատ զավակը»:

«Եթե չլիներ սուլթանը,- պատասխանում է Ահարոնյանը,- չէր լինի նաև

*ազատ ու անկախ Հայաստանը»: (**«Լրաքեր»**, 20 փետրվարի 1949):*

Ավելորդ չեմ համարում ընթերցողին հիշեցնել, որ հայոց ցեղասպանությունը կազմակերպած երիտթուրքական հանցավոր պարագլուխներին ու թուրքական սուլթանին այսպես քծնող Ա. Ահարոնյանը ինչ որ մի ժամանակ գրել էր նաև այսպիսի խոսքեր. «Այսքան չարիք թե մոռնան մեր որդիք, թող ողջ աշխարհ հայուն կարդայ նախատինք»:

Ո՞ւմ էր այս անեծքն ուղղված: Պատասխանը թողնում եմ ընթերցողին:

Պատվիրակության անդամները զգում էին Կ. Պոլսում երիտթուրքական հանցավոր պարագլուխների հետ իրենց վարած բանակցությունների ամբողջ եղկելիությունը և այդ պատճառով էլ Խատիսյանը Քաջազնունուն ուղարկած նամակում գրում էր. «Մենք շատ ենք վախենում մեր նամակներն ավելորդ անգամ հրապարակելուց, դրանցում շատ գաղտնիքներ կան և ժամանակից շուտ դրանց հրապարակելը շատ վտանգավոր է: Ի միջի այլոց, ես չգիտեմ, թե ո՞ւմ եք տալիս կարդալու: Ես գիտեմ ձեր անձնական ճշտապահությունը և դրա համար էլ պատվիրակության անունից խնդրում եմ, որպեսզի այն ամենը, ինչ վերաբերում է Թալեաթի ու Էնվերի հետ մեր նախնական բանակցություններին, պահել խիստ գաղտնի» (ՀՀ ԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 657, թ. 192-193):

5. ԽԱՏԻՍՅԱՆԻ ՈՒՂԱՐԿԱԾ ՆԱՄԱԿՆԵՐԸ Հ. ՔԱՋԱԶՆՈՒՆՈՒՆ

Հարկ եմ համարում նաև ընթերցողի ուշադրությանը ներկայացնել Հ. Քաջազնունուն Կ. Պոլսից Խատիսյանի ուղարկած մեկ-երկու նամակ:

1918 թ. սեպտեմբերի 1-ին ուղարկված նամակի սկզբում Խատիսյանը գրում է, որ Թուրքերը հայերին չեն վստահում, նկատի ունենալով հայերի դերը Բաքվում, Անդրանիկի գործողությունները և նրա կապը Պարսկաստանում անգլիացիների հետ, Փարիզում Նուպար Փաշայի ելույթները, Կ. Պոլսում հայկական պատվիրակության զսպվածությունը, Գերմանիայի դիմելը, Բաթումի պայմանագիրը չվավերացնելը, հին կապերը Ռուսաստանի հետ և արևմտահայերի լռությունը:

«Թուրքիան,- գրել է Խատիսյանը,- ընդհանրապես կարող է նվաճել մեր ամբողջ տարածքը: Միակ բանը, որ հայերի նկատմամբ կարող է նրան զսպել, կապված է Անտանտից վախի հետ: Այստեղ էլ մենք հանդիպում ենք հետևյալ փաստերին.

1. Թուրքերը հավատացնում են, թե ուզում են հայերի հետ բարեկամու-

թյուն, ցանկանալով մեկ ընդմիշտ լուծել հայկական հարցը:

2. Նրանք հաշվի են առնում Անգլիայի և Ամերիկայի հարձակումները, եթե նրանք նորից նեղացնեն հայերին»:

«Առաջին հարցի կապակցությամբ,- շարունակել է Խատիսյանը,- օգոստոսի 21-ին մենք շատ կարևոր զրույց ենք ունեցել Էնվեր փաշայի հետ, խոսել ենք մեկ ու կես ժամ: Նա հայտարարեց, որ հայերին կարելի է վերադարձնել Ակբասանդրապոլը, Ախալքալակը և էլի ինչ-որ բան, բայց դրա համար հայերը պետք է դուրս գան չեզոքության վիճակից և Թուրքիայի հետ կնքեն կոնֆեդերացիա (որպես անկախ Հայաստան) կամ entente (առանց հայկական զորքերն օգտագործելու նրանց թշնամիների դեմ)՝ նրանց թիկունքը, երկաթուղին պաշտպանելու և մի շարք այլ ծառայությունների ընդգրկումով:

Էնվերն ասաց, որ մեր կողմից այդ entente-ի սկզբունքների ընդունման դեպքում կհանձնարարի արտգործ. մինիստր Նեսիմի բեյին քննարկել տարբերը»:

Խատիսյանը գրել է, որ Էնվերի առաջարկությանը վերաբերվել են «բարվական զուսպ» և ասել են, թե «պատրաստ ենք քննարկել և պայման դնել վերադարձնել մեր տարածքները»:

Էնվերը պատասխանել է, թե «ինքը մեզ կխնդրի այդ հարցը քննարկել և բանակցել արտգործ. մինիստրի հետ»:

«Այսօր,- շարունակել է Խատիսյանը,- եղանք արտգործ. մինիստրի մոտ և ասացինք, որ այդ հարցի լուծումը կախված է Երևանի մեր կառավարությունից և որ մենք սկզբունքով համաձայն ենք կնքել «բարեկամական չեզոքության» իմաստով և խնդրում ենք նրան՝ տալ համաձայնության հիմունքները: Նա ասաց, որ կքննարկի, կմտածի և մեզ շուտով կհրավիրի խորհրդակցության»:

Այնուհետև Խատիսյանը դժգոհել է, որ Հայաստանից լուրեր չեն ստանում և գրել է հետևյալը. «...Մենք կարդում ենք, որ Բաքուն գրավել են անգլիացիները, որ նրանք վերցրել են Կրասնովոդսկ-Աշխաբադ երկաթուղին, որ Ուր միայում հայերը նրանց հետ են, մենք տեսանք, որ չնայած Ռոստոմի, Զավրիևի և մնացած մեր մյուս ընկերների ջանքերին, Ռուսաստանը չի ուզում ճանաչել մեր անկախությունը (ենթադրում ենք, որ ձեր այդ քաղաքականությունը, որից սպասում էք օգուտ Հայաստանից Թուրքերին ռուսների կողմից դուրս քշելու իմաստով) և դրա համար էլ տատանվում ենք, ձգձգում ենք, վախենալով կապել մեզ. իսկ ի միջի այլոց դա ուղղակի վնասում է մեզ:

Էնվերն ուղղակի ասում է. «Ձեզ մոտ Հոնաստանի քաղաքականություն

է՝ երկու ճակատով»: Միաժամանակ Խատիսյանը հայտնում է, թե թուրքական թերթերից մեկն էլ գրել է, թե Հայաստանը գործում է չորս ճակատով:

«Մենք,- գրում էր Խատիսյանը,- որոշել ենք թուրքերին տալ թույլ խոստում: Ես այդ դեպքում գրավել եմ միջին դիրք, Ահարոնյանը գտնում է, որ հարկավոր է էլի սպասել, իսկ Պապաջանյանը գտնում է, որ մենք նույնիսկ ուշացել ենք, քանի որ օգոստոսի 21-ին Էնվերի առաջարկությունը նա համարում է Հայաստանին ոչ պաշտոնական ուլտիմատում»:

Խատիսյանը հայտնում էր գերմանական դեսպանի հետ ունեցած հանդիպման մասին, ընդգծելով, որ նա հաստատ հույս չի տվել «մեր շահերը պաշտպանելու համար»: Դրանից էլ երևելով Խատիսյանը գրում էր. «Ես ամենի շատ սպասում եմ հայկական հարցը լուծելու համար թուրքերի ցանկությունից, քան նորից ձգել, եթե, իհարկե, նրանց մոտ չլինի ընդհանրապես այդ հարցը ոչնչացնելու արմատական ծրագիր, այլ տերությունների լռության դեպքում»:

Նույն նամակում Խատիսյանը հայտնում էր ավստրիական գեներալ Պոնյատովսկու հետ հանդիպման մասին, ընդգծելով հետևյալը. «Ավստրիական գեներալը խորհուրդ է տվել բոլոր միջոցները ձեռնարկել համոզելու Ռուսաստանին՝ ճանաչելու մեր անկախությունը, քանի որ Գերմանիան առանց Ռուսաստանի համաձայնության դրան չի գնա: Գերմանիան սարսափելի վախենում է Ռուսաստանից և նրա կամքին հակառակ ոչինչ չի անի: Դրա համար ասում եմ միջոցներ ձեռնարկեք Մոսկվայում»:

Խատիսյանը խորհուրդ էր տալիս բոլոր ուժերն օգտագործել ներազդելու Մոսկվայի կառավարության վրա, «որպեսզի նա ճանաչի մեր անկախությունը, դա անհրաժեշտ է որպես երաշխիք մեր գոյության համար»:

«Մոսկվայում,- գրում էր Խատիսյանը,- ասում են, թե մեզ խանգարում են Մակինցյանը, Տերյանը, Ավանեսյանը և այլ հայ բոլշևիկներ: Նրանց քաղաքականությունը մեզ համար կործանարար է, մինչև Ռուսաստանը գա, թուրքերը մեզ կուտեն»:

Այնուհետև Խատիսյանը հայտնում էր. «Նկատի ունեցեք, որ բոլշևիկներն առաջարկել են Ռոստոմին Կ. Պոլսում դեսպանի պաշտոն, նշանակում է, որ նրանք հավատում են կուսակցությանը: Գործադրեք ամեն ինչ ստիպելու նրանց (բոլշևիկներին- Վ. Պ.) ճանաչել մեզ: Այս պահին դա է մեր պաշտպանությունը»:

Նամակի վերջում Խատիսյանը գրում էր հետևյալը. «Նկատի ունեցեք, որ բամբակի, պղնձի, անտառանյութի արտահանումը ունի խոշոր քաղաքական

նշանակություն: Եթե մենք այժմ կարող ենք հումք տալ, ապա Ավստրիան ու Գերմանիան դրանից օգուտ ստանալու համար կարող են մեզ հենարան լինել: Ժողովրդի տատասկանքի, փափաքավանների տատասկանքի, պատմական իրավունքի մատնացույց անելը նեղգործում են ավելի թույլ, քան մեկ վազոն բամբակ կամ պղինձ տալու խոստումը: Դեսպաններն ուղղակի աղխուժանում են, երբ այդ մասին նրանց ասում ես (ընդգծումն ինն է - Վ. Պ.): Ուստի շտապ հաղորդեցեք, թե դրանցից ինչ կարող եք տալ» (ՀՀ ԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 657, թթ.188-191):

1918 թ. սեպտեմբերի 4-ին Քաջազնունուն ուղարկած նամակում Խատիսյանը հայտնում էր, որ Թալեաթը հայկական պատվիրակությանը հայտարարել է, որ Թուրքիան «հաստատ որոշել է Հայաստանին, Ադրբեջանին և Հյուսիսային Կովկասին տալ ինքնուրույնություն, որ դա իրենց խնդիրն ու պարտքն է և որ իրենք ոչ մի դեպքում չեն համաձայնվի նորից Ռուսաստանի հետ սահման ունենալու հետ»:

Այնուհետև Խատիսյանը հայտնում էր Բեռլինից ստացված Հ. Օհանջանյանի նամակի մասին, որտեղ նա գրել է, թե «Գերմանիան մեզ ոչինչ չի տա, որ Համոյի ներկայությունը Բեռլինում նույնիսկ համարում են ավելորդ և մեզ տալիս է Թուրքիայի ու Ռուսաստանի հայեցողությանը, այսինքն անարխիայի կամայականության: Այդպես է ցանկանում բոլշևիկների Ռուսաստանը»:

Իսկ Զուրաբյանը, հայտնում էր Խատիսյանը, իր երկար նամակում գտնում է, որ դա մեզ ձեռնտու է, քանի որ մենք նորից կլինենք Ռուսաստանի հետ:

«Պատվիրակությունը,- հայտնում էր Խատիսյանը,- երեկ պատասխանել է Զուրաբյանին, որ մենք վճռականորեն մերժում ենք նրա տեսակետը, մերժում է նաև Համոն: Զուրաբյանը կարծում է, թե դա հին տեսակի դեմոկրատական Ռուսաստանն է, մոռանալով, որ դա քաոս է...: Երեկ մենք իմացանք, որ դա Հինդենբուրգի քաղաքականությունն է: Նրան Ռուսաստանից հաց է հարկավոր և դրա համար նա զոհաբերում է Կովկասի ժողովուրդներին, ով կարող է թող վերցնի՝ Թուրքիան կամ Ռուսաստանը»:

«Այսպիսի պայմաններում,- շարունակում էր Խատիսյանը,- ավելի ցայտուն է երևում Թուրքիայի դերը: Ուստի մենք բազմակողմանի ուսումնասիրել ենք հարցը: Բուլղարական և ավստրիական դեսպանները վճռականորեն խորհուրդ են տվել ավելի մերձենալ Թուրքիային: Այդ նկատի ունենալով, մենք շատ լուրջ պրոյեկտ ենք ունեցել արտգործ. մինիստրի և Թալեաթի հետ

ու հայտարարել ենք, որ Թուրքիան Հայաստանի համար կարող է հանգիստ աշխատել և մենք պատրաստ ենք ապահովել նրա թիկունքը, տալիս ենք բարեկամության երաշխիք ու ծառայություններ, փոխադարձորեն մեզ տարածք ապահովելով:

Թալեաթը պատասխանել է, որ «ինքը գնում է (Բեռլին) հաստատ որոշմամբ հասնել ցանկալիին, որ հայերին նա հավատում է, քանի որ գիտե, որ հայերը խոսքի ասպետներ են, որ տարածքով պետք է ապահովել»:

Այնուհետև Խատիսյանը հայտնում էր, որ Թալեաթին Բեռլին ճանապարհելու ժամանակ նա մոտենում է Ահարոնյանին և ականջին ասում է. «Ես հույս ունեմ, կաշխատեմ, իսկ դուք այստեղ շարունակեք բանակցությունները արտաքին գործերի մինիստրի հետ: Եթե ձեր պատվիրակությունը պետք լինի Բեռլինում, ես ձեզ և ադրբեջանցիներին կկանչեմ »:

«Մենք,- շարունակել է Խատիսյանը,- տեսանելի տեղում կանգնած էինք Թալեաթի ու դեսպանների մոտ: Ես այս մանրուքը գրում եմ, որպեսզի ցույց տամ պահի բնույթը և այն, որ մենք և թուրքերն այժմ միմյանց կարիքն ունենք»:

«Առայժմ,-գրում էր Խատիսյանը,- Գերմանիան մեզ ուղղակի հանձնում է բոլշևիկյան հացի փոխարեն: Ավստրիական դեսպանը գտնում է, որ այդ քաղաքականությունը շատ կործանարար է և կարող է այսօր ետ մղել Թուրքիային, իսկ վաղը բոլշևիկների անկումից հետո նաև Ռուսաստանին (Լենինի և Ուրիցկու նկատմամբ ահաբեկչությունը ուժեղ տպավորություն է գործել)»:

Խատիսյանը հաղորդում էր, որ Կ. Պոլսի թերթերում Ռասուլ-Զադեն հայերի մասին տարածում է ամեն տեսակի նողկալի լուրեր, տալիս է հարցազրույցներ («Հայերը մեզնից խլում են Բաքուն», «Անդրանիկը ոչնչացնում է թուրքերին», «Շուշիի հայերն աղաչում են Ղարաբաղը տալ Ադրբեջանին», «Հայերը երեք ճակատով են քաղաքականություն տանում» և այլն):

Խատիսյանը հայտնում էր, որ Կ. Պոլսից շոգենավով 450 թուրք սպաների խումբը մեկնել է Ադրբեջան, Բաքվի գրավումը կազմակերպելու համար:

Հարկ եմ համարում Քաջազնունուն ուղարկած Խատիսյանի նամակից մի ընդարձակ մեջբերում ևս ներկայացնել ընթերցողի ուշադրությանը:

«Հասկացեք դուք, որ այսպիսի պայմաններում հարկավոր է այժմ Թուրքիայի հետ պահել լավ հարաբերություններ: ...Այժմ Գերմանիայի ուժի աղբյուրը Ռուսաստանի և Ուկրաինայի շուկան է և դրա համար էլ Գերմանիան ամեն ինչ անում է բոլշևիկներին ամրապնդելու համար, իմանալով, որ դա իրենց հենարանն է: Ես կարծում եմ, որ մեր ռուսական կողմնորոշում ունե-

ցողներին հարկավոր է պարզորոշ ասել, որ մենք սկզբունքորեն հակառակորդներ չենք, այլ պրակտիկորեն հասկանում ենք պահը. Ռուսաստանն այժմ Կովկասում չէ: Թուրքիան (դեռևս բավականաչափ ուժեղ) Ռուսաստանին չի ուզում, նա մեզ մի անգամ էլ կջնջի, եթե մենք հիմա նորից հենվենք Ռուսաստանի վրա:

Բոլշևիկյան Ռուսաստանը մեզ ոչինչ չի կարող տալ, ընդհակառակը, նա մեզ կծախի Գերմանիայի հայեցողությանը, իսկ Գերմանիան մեզ, ինչպես ուզի, կնետի Թուրքիայի ու Ռուսաստանի միջև: Ուրիշ տերություններ չեն երևում, ահա մեր վարքագծի աղբյուրը: Դրա համար հարկավոր է Զուբարովին (նա սեպտեմբերի 8-ին վերադառնում է Թիֆլիս) կտրականապես առարկել» (ՀՀ ԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 657, թթ. 192-193):

Խատիսյանի նամակների կապակցությամբ հարկ եմ համարում նշել հետևյալը: Իմ համոզմամբ նա սխալվում է Տերյանին և մյուսներին մեղադրելով այն բանում, որ Ռուսաստանը չի ճանաչում Հայաստանի անկախությունը:

Դրա փոխարեն նախ հարկավոր էր լսել Մոսկվայում գտնվող հայ բոլշևիկների խորհուրդը՝ ամբողջ ջանքերը կենտրոնացնել Սովետական Ռուսաստանի հետ հարաբերությունները կանոնավորելու, նրա հետ հստակ քաղաքականություն վարելու խնդրին և ոչ թե միաժամանակ դիվանագիտություն խաղալ Թուրքիայի, Ավստրո-Հունգարիայի և Գերմանիայի հետ:

Սխալ, ավելի ճիշտ, հեռանկար չունեցող դիվանագիտության սկիզբը դրվում է Բաթումի բանակցությունների ժամանակ, երբ Հայոց ազգային խորհրդի պատվիրակությունը ենթարկվելով Թուրքերի կամքին, մերժում է Սովետական Ռուսաստանի պահանջը Բաթումի բանակցություններին մասնակցելու մասին, մանավանդ, որ արտաքին գործերի ժողկոմ Չիչերինը հայտարարել էր, որ առանց Ռուսաստանի մասնակցության Բաթումում կնքվող պայմանագիրը Ռուսաստանի կառավարությունը չի ճանաչելու:

Շահումյանը նշանակվել էր Կովկասի գործերով արտակարգ կոմիսար: Որպես Սովետական Ռուսաստանի կառավարության ներկայացուցիչ ուներ լայն լիազորություն գործելու Սովետական Ռուսաստանի կառավարության անունից:

Այս հանգամանքն անտեսեցին Հայոց ազգային խորհրդի և անկախություն հռչակած Հայաստանի կառավարության դաշնակցական ղեկավարները: Նրանք Շահումյանի հետ համագործակցելու փոխարեն միացան վրացի մենշևիկներին ու ադրբեջանական մուսավաթականներին և ոչ մի միջոց

չխորշելով, ամեն ինչ արեցին, որպեսզի Շահումյանը չկարողանար Կովկասում գործել որպես Սովետական Ռուսաստանի լայն լիազորություններով օժտված ներկայացուցիչ:

Դրա փոխարեն նրանք իրենց ամբողջ հույսը կապեցին Թուրքիայի, Գերմանիայի ու Ավստրո-Հունգարիայի հետ:

Ավելին, Կովկասում գտնվող Սովետական կառավարության լիազոր ներկայացուցիչ Շահումյանին լսելու, նրա հետ համագործակցելու, նրա միջոցով Ռուսաստանի հետ հարաբերությունները կարգավորելու փոխարեն, Հայաստանի կառավարությունը Բեռլին էր ուղարկել Հ. Օհանջանյանին և Ա. Զուբարյանին, որոնք բանակցում էին Գերմանիայի ու Ավստրիայի հետ, որպեսզի ձեռք բերեին նրանց աջակցությունը՝ ազդելու Սովետական Ռուսաստանի վրա՝ ճանաչելու Հայաստանի անկախությունը:

Դրա հետ միասին Հայաստանի պատվիրակները, ինչպես ասում են, ձեռքի հետ էլ, ի միջի այլոց, բանակցում էին Բեռլինում Սովետական Ռուսաստանի դիվանագիտական ներկայացուցիչ Իոֆֆեի հետ, որը բացասական վերաբերմունք ուներ Հայկական հարցի նկատմամբ:

Այստեղ հարկ եմ համարում նշել, որ Ռոստոմին Կ. Պոլսում դեսպան նշանակելու առաջարկության մասին Խատիսյանի հայտնած տեղեկությունը ինձ չի հաջողվել ճշտել Մոսկվայում Արտաքին գործերի ժողկոմատի արխիվում, իսկ Ռոստոմն էլ այդ մասին ոչինչ չի գրել իր նամակներում:

Ամփոփելով Կ. Պոլիս մեկնած հայկական պատվիրակության գործունեությունը, հարկ եմ համարում ընթերցողին ներկայացնել նշված իրադարձությունների ժամանակակից և ականատես, պատմաբան Լեոյի հետևյալ վկայությունը.

«Եվ ստացվում էր ցավալի ու հեգնական հակադրություն: Այստեղ հայ ժողովուրդը փչանում էր արագորեն և գնում էր դեպի մի սոված ու ավելի անողոք ջարդարար ձմեռ, իսկ այնտեղ, Բոսֆորի ափում, Թոքաթլիյանի առաջնակարգ հյուրանոցում բնակություն էին հաստատել այդ նույն ջարդվող ու ոչնչացվող ժողովրդի ներկայացուցիչները, որը մաքի չափ օգնություն չէր հացնում, բայց դիպլոմատիա էր ներկայացնում, այսինքն ընդունում էր և տալիս էր այցելություններ, զանազան դատարկ հայտարարություններ էր անում:

Դիպլոմատիկական տակտը պահանջում էր, որ Հայաստանի պատվիրակության նախագահը ներկայանա սուլթանին: Եվ Ավետիս Ահարոնյանը ներկայացավ, հաճոյական խոսքեր ասաց սուլթանին, արժանացավ նրա հար-

մակրական ակնարկին: Դուք երևակայո՞ւմ եք...Հայդուկային գաղափարա-խոսությամբ անուն ստեղծած Ահարոնյանը թուրք սուլթանի առաջ գլուխ խոնարհած: Ահա այս հանգամանքն է, որ ես երբեք չեմ հասկացել, լինելով ըստ կոչման գրող... Տարիների ընթացքում ֆիդայական հմայքներ արծարծել գեղարվեստական գրականության միջոցով, տարիների ընթացքում սուլթանական զուլումի ամբողջ սարսափն ու զարհուրանքը ներկայացնել մի անանխընթաց լակոնությամբ և հետո գնալ նույն այդ զուլումի աղբյուր սուլթանին երկրպագելու... Ես այս չէի հասկանում... Ուստի սարսափի օրերում, սարսափներով խոշտանգված, ավելի մեծ սարսափ-սոված ձմեռվա աղջև կանգնած, ես մի հոգված գրեցի, որի մեջ պահանջում էի ամեն ինչ թողնել, ամեն ուրիշ հոգս ու ցավ մոռանալ, ծախել մեր ազգային բոլոր սեփականությունները մի նպատակի, միմիայն մեկի- հայ ժողովուրդն ապրեցնելու համար: Եվ պահանջներիս մեջ էր, ի միջի այլոց, և այն, որ Կ.Պոլսից ետ կանչվի այնքան թանկ նստող դիվանագիտական երեխաներից բաղկացած մեր պատվիրակությունը: Ավետիս Ահարոնյանը վերադարձավ Կ. Պոլսից, բայց այլևս ինձ հետ չէր խոսում: Այնքան բարձր համարում ուներ նա իր նոր, գրականագետին սպանող, բայց արտաքին զիգ-զագիներով հրապուրիչ արհեստի վրա» (**Աղբ**, Անցյալից, էջ 410-411):

6. ԹՈՒՐՔԱԿԱՆ ՍԱՍՈՒԼԻՆ ԽԱՏԻՍՅԱՆԻ ՏՎԱԾ ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑՆԵՐԸ

Ինչպես նշվել է նախորդ էջերում, Խատիսյանը զգուշացնում էր Քաղաքնոնոն գաղտնի պահել իր նամակները: Դա Քաղաքնոնոն հաջողվել է և նույնիսկ գաղտնի էին պահվում դաշնակցության ղեկավարության մեջ գտնվող շատ գործիչներից: Բայց գաղտնի չէին մնում Թուրքական մամուլում Խատիսյանի տված հարցազրույցները, որոնք թարգմանում և հրապարակում էր Թիֆլիսում լույս տեսնող «Ժողովրդի ձայն» թերթը:

«Ժողովրդի ձայն»-ը գրում էր, որ երկու ամիս է, ինչ հայոց պատվիրակությունը Կ. Պոլսում է, բայց «մինչև օրս ոչ մի դրական գործողություն չի կատարել»:

«Իսկ այստեղ եղած հայ ժողովրդի ստվար մասը,- շարունակում էր թերթը,- ցիր ու ցան եղած, տնից տեղից զրկված, ամեն կողմից հալածանքի ենթարկված, փողոցում մերկ տատապում է և օր ըստ օրէ նուազում, գերեզմանների կոյտեր աւելացնելով»:

Այնուհետև թերթը նշում էր, որ պատվիրակներից Խատիսյանը զբաղված

է տարբեր թերթերի ինտերվյուներ տալով, որոնք ոչ մի օգուտ չեն տալիս, որ դրանք վկայում են պատասխանատվության զգացմունքի և քաղաքագիտության կատարյալ բացակայության մասին:

«Մեր բոլորիս յիշողութեան մէջ,- շարունակում էր թերթը, նկատի ունենալով պատերազմի սկզբին Նիկոլայ Երկրորդ ցարի այցելության ժամանակ Թիֆլիսում կազմակերպված հանդեսների ժամանակ Խատիսյանի ելույթները,- դէռ թարմ են պ. Խատիսեանի հրաբխային, ներբողական ճառերը Ռուսաստանի հասցէին: Այժմ տեսեք, թէ նոյն Խատիսեանը ինչ երգեր է երգում Բոսֆորի ափերում»:

Այս կապակցությամբ «Ժողովրդի ձայն»-ը տեղեկացնում էր, որ թուրքական «Թէոֆերի էֆքեար» թերթի խմբագիր Նուրի բեյը Հայաստանի արտաքին գործերի նախարար Խատիսյանի հետ իր տեսակցության մասին գրել է հետևյալը. «Մէկ օր առաջ տեսակցած էինք տոքթ. Խատիսեանի հետ, որը...բոլորովին անկեղծ շեշտով յայտարարած էր, թէ Թիւրքիոյ մէջ զօրաւոր և աջակից կառաւարութիւն տեսնել կը փափակէր: Տոքթ. Խատիսեան կը սէ, թէ ռուս կառաւարութեան որևէ ձևով Կովկաս մուտքը խաբուած Հայութեան համար փափակելի բան մը չէ և Ռուսիոյ կառաւարութեան որևէ ձևով դարձին կարելիութիւնը: Նոյնիսկ փոքր չափով հանրապետական դարձած Հայութեան կողմէ բուռն կերպով պիտի մերժի. այս պատճառաւ Հայութիւնը իր բոլոր ինչքով և կեանքովը ամէն զոհողութեան յանձնառու պիտի ըլլայ: Որովհետև ռուս կառաւարութեան վերադարձին հեռանկարը Հայութեան Կովկասի մէջ ունեցած ազատութիւնը վերստին պիտի ջնջեն: Մինչդէռ Թիւրքիա, այս ազատութիւնը ճանչնալով իր բարեացակամութեան և վեհանձնութեան առաջին և փայլուն ապացոյցը տուաւ անհերքելիօրէն» (**«Ժողովրդի ձայն»**, սեպտեմբերի 5, 1918 թ.):

«Ժողովրդի ձայն»-ը բերել է թուրքական նույն թերթին Խատիսյանի մեկ այլ հայտարարություն, որն առանց մեկնաբանության ընթերցողին եմ ներկայացնում ամբողջությամբ:

«Միայն կամ ուղիղ Թիւրքիոյ հետ կռուի բռնուող Հայութեան խնդրոյն, այսինքն Հայկական խնդիր ըսուած հարցին մէջ հարատևող և հարատևուած փնտռել անտեղի բան է: Վեհանձնօրէն, մարդկօրէն պէտք է խոստովանել, որ այս կռիւը մեր՝ Հայերուս կողմէ հետապնդուած նպատակի մը համար եղած կռիւ մըն էր:

Կռիւը մէկ կողմով չըլլար: Ամեն կռի մէջ երկու կողմ պէտք է: Հայկական խնդրոյ մէջ կողմը մենք էինք և սկսողն ու դրդողն էինք: Անկախութիւն ձեռք

բերելու համար տարիներով յոգնեցանք, մեր միջոցներովը աշխատեցանք, և աշխատեցանք գործիքը ըլլալով այն տէրութիւններուն, որոնցմէ օգնութիւն կը յուսայինք:

Մէկ խօսքով Թիւրքիան տկարացնելու համար մեր ձեռքէն ամեն բան ըրինք: Մասնաւորաբար վերջին պատերազմը խաղացուելիք վերջին խաղն էր: Այս խաղին մէջ բոլոր ճիգով աշխատեցանք: Երբ մենք Թիւրքիոյ կեանքին կը սպառնայինք, բնական է, որ կարելի չէր երևակայել, թէ այս տէրութիւնը ձեռքերը ծալած անհոգ և անաշխատ պիտի մնայ:

Բնական է թէ այն, որուն դէմ յարձակում կը գործուէր, ինքզինքը պիտի պաշտպանէր այս կռիւին մէջ: Ամեն մարդէ առաջ մենք գիտէինք, որ Թիւրքիա ալ փոխադարձաբար ինքնապաշտպանութեան պիտի դիմէ և նոյն իսկ բուռն միջոցներ ձեռք պիտի առնէ:

Ահաւասիկ այս է հայկական խնդիրն ու հայկական կռիւը: Այս պահուս, երբ ամեն բան եղած գացած է, պատուաւոր մարդու մը պէս պէտք է խոստովանիլ, որ վերջին խաղն ալ կորսնցուցինք այն կռիւին մէջ, ուր մտած էինք մեր բոլոր ջանքերով: Մեր դիրքը շատ քիչ տարբերութեամբ պարտեալի մը դիրքն է:

Տարբերութիւնը ան է, որ մենք արդէն ազգային ու քաղաքական գոյութիւն չունէինք: Մենք մեծ սահմանի մը վրայ հիմնուած երևակայութեան ետևէ կերթայինք: Հիմակ այս երազին Թիւրքիոյ վերաբերող մասը հիմովին լուծուած է: **Այլևս Թիւրքիոյ հողերուն մէջ, մեր ընտրեալ նշանակութեամբ և նպատակով հայութեան մը վրայ չի կրնար խօսիլ: Թիւրքիոյ հողը թիւրքերունն է: Այս կողմին յատուկ խաղը մեզի համար բաց արձակուեցաւ և ատյան կոչուած է** (ընդգծումն իմն է- Վ. Պ.):

Վերջապէս բախտը մեզի Կովկասի մէջ քաղաքական գոյութեան մը տիրացուց: **Ասիկա ալ վերանձն Թիւրքիոյ կը պատկանի, ինչ որ անհերքելի ճշմարտութիւն մըն է: Ասիկա միշտ բարձրաբարբառ յիշատակելիք ճշմարտութիւն մըն է** (ընդգծումն իմն է- Վ. Պ.):

Այս դրութեան մէջ, հայկական խնդիրը պէտք է վերջնապէս փակել և բացատրել, թէ Թիւրքիան հաւանելով ուզելով առաջ քշուած հայկական խնդրոյն մէջ կայ ոչ հարատևհարատև: Այդ խնդրոյն մէջ Թիւրքիոս ինքնապաշտպանութեան համար հարկ եղած միջոցները միայն ձեռք առած է (ընդգծումն իմն է- Վ. Պ.):

Վերջ ի վերջոյ թէև մենք մեր նպատակին չհասանք, թէև Թիւրքիան չպարտուեցաւ և մենք պարտուեցանք, բայց հարկաւ ասոր մէջ Թիւրքիոյ վերազրելիք ոչ մէկ յանցանք չկայ: Այլևս այդ կռիւը վերջացած ու պատմութեան խառնուած է» (**«Ժողովրդի ձայն»**, սեպտեմբերի 7, 1918 թ.):

Հարկ չեմ համարում մեկնաբանել Խատիսյանի արտահայտած գնահատականը: Անաչառ ընթերցողին եմ թողնում դա: Միայն ուզում եմ նշել, որ այսօր, դեռևս շարունակվում է իրականությունը կեղծելու միջոցով Խատիսյանին ու մյուսներին փառաբանելը, նրանց անվանելով «ականավոր պետական գործիչներ» և հայ ժողովրդին նվիրված «ազգային գործիչներ»:

Բարեբախտաբար պատմության զարգացումն այլ ընթացք ստացավ և Թուրքիան պարտվելով դուրս եկավ պատերազմից ու իր զորքերը հանեց Անդրկովկասից: Ուստի դժվար չէ պատկերացնել, որ հակառակ դեպքում ինչ էր սպասվելու հայ ժողովրդին, եթե Կ. Պոլիս մեկնած «դիվանագիտական երեխաներ» Ահարոնյանն ու Խատիսյանը հայ ժողովրդի դահիճներ Թալեաթի ու Էնվերի հետ ստորագրեին նրանց առաջարկած *ultimatum*-ը...

Վերոհիշյալ փաստաթղթերի համառոտ շարադրանքը, ինչպես նաև սույն աշխատության մեջ նշված բազմաթիվ այլ փաստերի վկայակոչումը հնարավորություն կտա անաչառ ընթերցողին համոզվելու, թե հայ ժողովրդի համար ճակատագրական նշանակություն ունեցող 1918 թ. ձևավորված հետևյալ երկու դիրքորոշումից որն էր ճիշտ:

Առաջին. Շահումյանն առանց տատանվելու Ռուսաստանի, տվյալ դեպքում Սովետական Ռուսաստանի հետ էր կապում Անդրկովկասի, Հայաստանի ու հայ ժողովրդի փրկությունը և պայքարում էր այդ նպատակին հասնելու համար:

Երկրորդ. Կոստանդնուպոլիս մեկնած Հայաստանի Հանրապետության պատվիրակությունը հայ ժողովրդի փրկությունը կապում էր արևմտահայության ցեղասպանությունն իրագործած երիտթուրքական հանցավոր կառավարության պարագլուխներ Թալեաթի և Էնվերի հետ:

Ո՞վ էր նրանցից ճիշտ: Պատմությունը վաղուց տվել է այս հարցի պատասխանը:

ԳԼՈՒԽ 22
«ԱԴՐԲԵՋԱՆ» ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՏԵՂԾՈՒՄԸ

Բաքվի սովետական իշխանության դեմ միասնական ճակատով պայքարում էին մենշևիկները, մուսավաթականները և դաշնակցականները, որոնցից յուրաքանչյուրը հետապնդում էր իր նպատակը:

Բայց միաժամանակ այդ նպատակի հարցում նրանց մոտ կար խոր հակասություն, որն ավելի շատ դրսևորվում էր արտաքին ուժերի միջոցով դրանց հասնելու ձգտումը:

Մուսավաթականները ունեին բացահայտ թուրքական կողմնորոշում և ձգտում էին Թուրքիայի օգնությամբ հասնել իրենց նպատակին, այն է՝ բոլշևիկներից ազատել Բաքուն և դարձնել նոր ստեղծված Ադրբեջանական Հանրապետության մայրաքաղաք:

Ավելի բարդ էր մենշևիկների և դաշնակցականների միջև եղած հակասությունը, որը պայմանավորված էր սկզբում դեպի Թուրքիա և Գերմանիա ու հետո դեպի Անգլիա ունեցած կողմնորոշմամբ:

Այս հակասությունները հատկապես դրսևորվեցին 1918 թ. մարտ-ապրիլին, երբ Բաքվում մուսավաթականները խոտվություն էին բարձրացրել և սպառնում էին ոչ միայն Բաքվում հաստատված սովետական իշխանությանը, այլ նաև հայ բնակչությանը: Եվ քանի դեռ Կովկասյան ռազմաճակատում թուրքերի դեմ ռազմական գործողություններ էին ընթանում, դեռ թուրքերի հետ հաշտություն կնքելու մասին խոսք չկար, այդ ժամանակ Բաքվի դաշնակցականները իրենց զինված ջոկատներով կանգնեցին սովետական իշխանության պաշտպանության դիրքերում և որոշակի դեր խաղացին մուսավաթական խոտվությունը ճնշելու գործում:

Սակայն իրավիճակը փոխվում է Բաթումում կնքված հաշտությամբ, երբ վերոհիշյալ երեք կուսակցություններն էլ ընդունում են թուրքական կողմնորոշում և պարտավորվում են միասնական ուժերով կործանել Բաքվի սովետական իշխանությունը:

1918 թ. մայիսի 29-ին մուսավաթականները հռչակում են իրենց անկախ պետության ստեղծումը, որի տարածքների մեջ էին մտցվում Արևելյան և Հարավային Կովկասը: Իրենց հռչակած անկախ դեմոկրատական հանրապետությունը մուսավաթականներն անվանում են «Ադրբեջան» և Բաթումում Թուրքիայի հետ կնքում են պայմանագիր:

Այս պայմանագրի 4-րդ հոդվածում ասվում էր. «Ադրբեջանական հանրապետությունն իրավունք ունի Թուրքիայից պահանջել ռազմական օգնություն երկրի անվտանգությունը և կարգ ու կանոնը վերականգնելու համար»:

Պայմանագրի ստորագրման թանաքը դեռ չէր չորացել, երբ Ադրբեջանական հանրապետության ղեկավարները դիմում են Թուրքիային՝ խնդրելով ցույց տալ ռազմական օգնություն:

Այս խնդրանքի համաձայն թուրքերը իրենց զորքերը սկսում են տեղափոխել Գյանջա, որտեղ դեռևս մայիսի 27-ին իր շտաբով եկել էր Էնվերի խորթ եղբայր Նուրի փաշան:

Երբ թուրքական զորքերը կենտրոնանում են Գյանջայում, 1918 թ. հունիսի 17-ին Նուրի փաշայի թելադրանքով լուծարվում է մուսուլմանական ազգային խորհուրդը և դրա փոխարեն Խան-Խոյսկու գլխավորությամբ կազմավորվում է մուսավաթական կառավարություն:

Ջիտրանալով հետագա իրադարձությունների մեջ, այստեղ ուզում եմ միայն մի կարևոր հանգամանքի վրա բևեռել ընթերցողի ուշադրությունը:

Թուրքիայի գլխավոր նպատակն էր գրավել Բաքուն և տիրանալ նավթարբեր տարածքներին: Միաժամանակ, եթե դա հաջողվեր, ապա Թուրքիայի առջև բացվելու էին Հյուսիսային Կովկասի և Թուրքեստանի ճանապարհները: Սա էր թուրքական քաղաքականության գլխավոր նպատակը, բայց դա նրան չէր խանգարում մուսավաթականներին համոզելու, թե իր նպատակն Ադրբեջանի ազատագրումն է:

Մյուս կողմից՝ Բաքվի նավթին տիրանալու նպատակն ուներ Գերմանիան, որը, իր հերթին հայտարարում էր, թե օգնում է Թուրքիային՝ Կովկասում ամրապնդվելու համար:

Այսպիսով Բաքվի նավթի համար ներքին լուրջ հակասություններ ունեին Թուրքիան ու Գերմանիան, ամեն կերպ աշխատելով արտաքուստ պահել համագործակցությունը:

Բաքուն գրավելու հավակնություն ուներ նաև Անգլիան, որը գաղտնի կապեր էր հաստատել Բաքվում գործող անգլիասեր ուժերի հետ:

Բաքուն իր ձեռքում պահելու գործում մեծապես շահագրգռված էր Սովետական Ռուսաստանը, որը թեև գտնվում էր ներքին և արտաքին աննպաստ պայմաններում, ամեն հնարավոր միջոցով աշխատում էր օգնել Բաքվի սովետական իշխանությանը:

Այսպիսով Բաքվի շուրջ ստեղծվել էր խոշոր տերությունների հակասությունների մի հսկայական հանգույց, որից դուրս գալու համար Բաքվի սովե-

տական իշխանությանը հարկավոր էր կիրառել հմուտ դիվանագիտություն և օգտվել այդ հակասություններից:

Կարծում եմ կարիք կա պարզաբանել, թե ի՞նչու են մուսավաթականներն իրենց ստեղծած պետությունը կոչել «Ադրբեջան»: Այս հարցի վրա որոշ լույս է սփռում նշանավոր արևելագետ Վ. Բարտոլդը, նշելով, որ Աղվանքը «Ադրբեջան» կոչեցին Հեղափոխությունից հետո և այդ անունն ընտրվում է Ադրբեջանի Հանրապետության համար, քանի որ «ենթադրվում էր, թե այդ Հանրապետության ստեղծումով հնարավոր կլինի միավորել պարսկական Ատրպատականն Ադրբեջանի հետ» (**Վլադիմիր Պետրոսյան**, Ժամանակի հրամայականը, հ. առաջին, եր. 2008, էջ 585):

Այն տարածքը, որին կնքել են «Ադրբեջան», հնում հայտնի էր «Ատան» անունով, որն ընդգրկում էր Մեծ Հայքի արևելյան շրջանների՝ Արցախի և Ուտիքի մի քանի գավառներ: Ըստ Մովսես Խորենացու վկայության, այս գավառների իշխանական տների անվան ծագումը կապված է նախահայր Հայկազուն Ատանի հետ:

13-րդ դարի արաբական աղբյուրներում Ադրբեջանի ներկա տարածքը նույնպես անվանվում է «Ատան»:

Պարսիկ հեղինակներից Ա. Քասրավին գրել է. «Զարմանալի է, թե ինչպես այս օրերին Ատանը սկսել են անվանել Ադրբեջան, թեև դա մի այլ երկրամասի անուն է:...Մեզ համար հասկանալի չէ, թե ինչու մեր առանցի եղբայրները, որ անկախություն են հաստատել իրենց երկրում, անուն ընտրելու հարցում անտեսել են իրենց հինավուրց և պատմական անունը և մուրացկանի ձեռք են մեկնել դեպի Ատրպատականը: Եվ ի՞նչ հույսեր են փայփայում դրանով» (**Վլադիմիր Պետրոսյան**, նույն տեղը, էջ 586):

Իսկ մուսավաթականների հույս ունեին, որ ապավինվելով Թուրքիայի աջակցությանը, կզավթեին ամբողջ Ատրպատականը: Մուսավաթականների կողմից ուրիշ պետությանը պատկանող աշխարհագրական անվանումը սեփականացնելու պատճառով, Իրանը երկար ժամանակ չէր ուզում ճանաչել այդ նոր հանրապետությունը և նրա հետ մտնել դիվանագիտական հարաբերությունների մեջ:

Ավածին ավելացնեմ, որ մուսավաթականները իրենց «անկախ հանրապետությունը» «Ադրբեջան» են կոչել Թուրքիայի թելադրանքով, որի զորքերը նպատակ ունեին գրավել պարսկական Ատրպատականը: Թուրքիան կգրավեր Ադրբեջանը, հետո նաև Ատրպատականը և նրա նպատակը կատարեր ավարառուն տեսք:

Այս հանգամանքը ես հատկապես եմ ընդգծում, նկատի ունենալով, որ մեր իրականության մեջ դեռևս կան ուսումնասիրողներ, որոնք իրենց հրապարակումներում Ստալինին են վերագրում «Ադրբեջան» անունով պետություն ստեղծելը:

Նրանք այդպես են վարվում չիմանալով իրականությունը կամ էլ դրանով ուզում են ընդգծել Ստալինի հայատյացությունը, անգիտակցաբար Թուրքիայի նվաճողական քաղաքականությունը վերցնելով պաշտպանության տակ:

Ստեղծելով իրենց հանրապետությունը, մուսավաթականները հենց առաջին օրից կառավարության կարևոր խնդիրներից մեկը համարել են իշխանության մարմինների ազգայնացումը, հաշվի չառնելով, որ այդ խնդրի իրականացումը վեր է իրենց ուժերից: Այդ քաղաքականությունն ուղղված էր ռուսների և հայերի դեմ: Ոչ անհայտ չովինիստ Խոսրոփ բեկ Սուլթանովը և մյուսները բացահայտ խոսում էին այն մասին, որ Ադրբեջանում հայեր չպետք լինեն կամ եթե լինեն, ապա՝ թուրքական ռայայի (իրավազուրկի) վիճակում:

Բավարարվեմ ասվածով, քանի որ իմ նպատակի մեջ չի մտնում այստեղ հանգամանորեն անդրադառնալ Ատրպատական-Ադրբեջան փոխառնչություններին, ինչպես նաև «Ադրբեջան» կոչված հանրապետության պատմությանը:

ՊԱՀԱՆՋՎՈՒՄ Է ՈՒԺԵՐԻ ԳԵՐԼԱՐՈՒՄ

Թուրքիայի հետ կնքած ռազմական դաշինքի հիման վրա երկու դիվիզիայով մուսավաթականներին օգնության է գալիս խալիֆայական: Միաժամանակ Ելիզավետպոլում (Գյանջա) թուրք սպաների, ինչպես նաև ռուսական բանակի նախկին թաթար և վրացի սպաների հրամանատարությամբ ձևավորվում են թաթարական հեծյալ զորաջոկատներ:

1918 թ. հունիսի 10-ին Շահումյանը Լենինին ուղարկած հեռագրով հայտնում էր Թիֆլիսից ստացված հեռագրերի հաղորդումն այն մասին, որ Հայոց ազգային խորհրդի պատգամավորները Թուրքիայի հետ ստորագրել են հաշտության պայմանագիր, որի համաձայն «Թուրքիային են անցնում՝ Ակթամարդուլի և Երևանի գավառների մի մասը, Նախիջևանի, Ախալքալակի գավառները: Էջմիածինը, Երևանը, Աչտարակը...մնում են Հայաստանի սահմաններում: Սահմանագիծը մոտավորապես անցնում է Զոբանքյարա, Բոյուք-Վեդի, Արփա: Արևելյանը՝ դեպի արևմուտք Քասախ գետի ուղղությամբ ուղիղ գծով Էջմիածնից դեպի արևմուտք Արագածի գագաթի վրայով»:

Շահումյանը հայտնում է նաև, որ Հայոց ազգային խորհուրդը իրեն հայտարարել է Հայկական մարզերի միակ գերագույն իշխանություն և ժամանակավորապես ստանձնել է կառավարական ֆունկցիաները:

«Համաձայն պայմանագրի,- հայտնում է Շահումյանը հեռագրի վերջում,- Թուրքիային իրավունք է վերապահված զորքեր փոխադրելու Անդրկովկասյան երկաթուղիներով: Թուրքերը գալիս են Ղարաքիլիսա-Երևան խճուղով Աղստաֆա-Բաքու: Համաձայն Թուրքիայի հետ կնքված հաշտության, օրերս կսկսեն զորքերի փոխադրումը երկաթուղիներով մինչև Բաքու և Ջուլֆա»:

Շահումյանը Լենինին հաղորդում էր, որ իրենք սկսել են հարձակումը (**Ստ. Շահումյան**, նույն տեղը, հ. հինգերորդ, էջ 95-96):

Բաքվի սովետական իշխանության համար ստեղծվում է ծայրահեղ վտանգավոր վիճակ, որը հավասարապես ազդում էր նրա ներքին և արտաքին դրության վրա: Շահումյանը հասկանում էր ստեղծված բարդությունը և ձգտում էր հասնել նրան, որ Բաքվի ներսում թույլ չտալ միավորվելու դաշնակներին ու մուսավաթականներին այնպես, ինչպես նրանք միավորվել էին Թիֆլիսում:

Դեպքերի հետագա զարգացումը, ընթացող մարտական գործողությունները, որոնց հանգամանքներն անդրադարձ կունենի հաջորդ էջերում, ցույց են տալիս, որ առաջին շրջանում Շահումյանին հաջողվում էր իրականացնել այդ քաղաքականությունը և հասնել դրական արդյունքի:

Նախորդ էջերում արդեն նշվել է, որ Բրեստի պայմանագիրը ստորագրելուց հետո Թուրքիան Գերմանիայի հովանավորությամբ խախտել էր այդ պայմանագիրը և ձգտում էր նվաճել ամբողջ Անդրկովկասը, իսկ Սովետական Ռուսաստանի բողոքները թողնվում էին անհետևանք:

Բաթումի պայմանագիրը ստորագրելուց հետո Նուրի փաշայի հրամանատարությամբ գործող թուրքական զորքերը միացած մուսավաթականների կազմակերպած մուսուլմանական կորպուսին, 1918 թ. հունիսի կեսերին գրավում են Ելիզավետպոլի նահանգը, ուղղություն վերցնելով դեպի Բաքու:

Բաքուն գավթելու մեջ մեծապես շահագրգռված էր նաև Գերմանիան, որը նպատակ ուներ ամբողջությամբ իր ձեռքը գցել Բաքվի նավթը:

Բաքվի ուղղությամբ թուրք-գերմանական արշավանքի նախօրյակին Բաքվի սովետական իշխանությունն իր տրամադրության տակ ուներ 18 հազար զինվոր, 19 հրանոթ, յուրաքանչյուրի համար 1000 հատ արկ, 60 գնդացիր, 9 միլիոն փամփուշտ, երեք զրահագնացք: Մեծապես զգացվում էր

նաև հրամկազմի բացակայությունը (**Սովետական բանակի կենտրոնական արխիվ**, ֆ. 1, ց. 2, գ. 8, Գ. Կորգանովի զեկուցագիրը, թթ. 419-423):

Իհարկե, այս եղած ուժերն անչափ քիչ էին գերմանա-թուրքական գերակշիռ ուժերի համեմատությամբ, որոնց միացել էին նաև մուսուլմանական կորպուսին ձուլված մուսավաթականների կազմակերպած ավազակախմբերը: Իսկ Բաքվում գտնվող նրանց բազմաթիվ գործակալները պատրաստ էին առաջին իսկ հարմար պահին զենքն ուղղել սովետական իշխանության դեմ:

Ուժերը համալրելու համար Շահումյանը բազմիցս դիմել է Ռուսաստանի կենտրոնական սովետական իշխանությանը: Թեև Սովետական Ռուսաստանն այդ ժամանակ գտնվում էր ծանր վիճակում, բայց օգտագործում էր բոլոր հնարավորությունները Բաքվին օգնելու համար:

Ամենից առաջ ուշադրություն էր դարձվում Բաքվին պարենով օգնելուն: 1918 թ. հունիսին Ցարիցինից Բաքու է ուղարկվել 380 տոննա հաց, Հյուսիսային Կովկասից՝ 2600 տոննա հաց:

Կարևորվում էր Բաքվին ռազմական օգնություն կազմակերպելու գործը: Լենինի հանձնարարությամբ ուկրաինական ռազմաճակատից հանվել է Գ. Պետրովի զորախումբը և ուղարկվել Բաքու: Հուլիսի սկզբին Բաքու հասած Պետրովի զորախումբը մինչև վերջ ռազմաճակատում կռվել է թուրքերի դեմ:

Շահումյանի հանձնարարությամբ Մ. Տեր-Հարությունյանցը 1918 թ. հուլիսի սկզբին Լենինին է հանձնել Հյուսիսկովկասյան ռազմական օկրուգի մատակարարման բյուրոյի նամակը, որով խնդրվում էր շտապ կարգով մոտորային շարժիչ ունեցող 8-10 նավ ուղարկել Կասպից ծով և Քուռ գետ՝ Բաքվի ժողկոմսովետի տրամադրության տակ: Նամակում նշված էին նավերի տիպերը, և դրանք պետք է ապահովված լինեին հրանոթներով, գնդացիրներով և շարժիչների պահեստամասերով:

1918 թ. հուլիսի 13-ին Լենինն այդ նամակի վրա մակագրել է. «Ծովային գործերի ժողովրդական կոմիսարիատին. Շատ եմ խնդրում բոլոր միջոցները ձեռնարկել բոլոր հարմար տիպի ծովային ռազմանավերը Կասպիական ծով ուղարկելն արագացնելու համար» (**Վ. Ի. Լենին**, ԵԼԺ, հ. 50, էջ 139):

Մ. Տեր-Հարությունյանցը վկայում է, որ երբ հրեատանային գլխավոր վարչության պետը ձգձգել է այդ նավերին հրանոթներ ու գնդացիրներ տալը, Լենինը, իմանալով այդ մասին, կարգադրել է անմիջապես հատկացնել, այլապես նրան կհանձնի Ֆ. Ձերժինսկու գլխավորած ՉԵԿԱ-ին: Լենինի սպառնալիքը դեր է խաղում՝ պահանջված թնդանոթներն ու գնդացիրները տրամադրվել են Բաքու ուղարկվող նավերին (Воспоминание о В. И. Ленине, том 3, стр. 23):

Կարելի է էլի օրինակներ բերել Բաքվին ցույց տրվող օգնության մասին: Բայց, շատ հաճախ ուղարկված օգնությունը լրիվ չափով տեղ չէր հասնում կամ էլ դրանց մի մասը պահվել է այլ նպատակների համար:

Այս հարցի վրա որոշ չափով լույս է սփռում Աշոտ Խումարյանը: Նա 1918 թ. հուլիսին Շահումյանի նամակով մեկնել է Մոսկվա, հանդիպել է Լենինին և նրան տեղեկացրել Բաքվում ստեղծված վիճակի մասին: Լենինը Խումարյանին ուղարկել է Տրոցկու մոտ, հանձնարարելով ապահովել օգնության առաքումը: Տրոցկին այդ ժամանակ Սովետական Ռուսաստանի ռազմական գործերի ժողովրդական կոմիսարն էր:

Տրոցկու հետ հանդիպման մասին Խումարյանը գրել է. «Ես եղա Տրոցկու աշխատասենյակում, Մոսկվայում, նա ասաց. «Ձեր ինչին է պետք զորքը: Եթե Բաքուն գնա, նորից կգա» (ՀՀ ԱԱ, ֆ. 4033, ց. 6, գ. 276, թ. 20-21):

Խումարյանի համառությունը հարկադրել է Տրոցկուն կատարել Լենինի հանձնարարությունը: Բայց Բաքու ուղարկված գունդը տեղ չի հասնում: Բաքվին ցույց տրվող օգնության նկատմամբ Տրոցկին վարում էր անհասկանալի քաղաքականություն: Որպես ռազմական գործերի ժողկոմ նրան էին ենթարկվում այդ բնագավառի բոլոր հիմնարկությունները: Տրոցկին տեղյակ էր ռազմահակատներում տիրող իրավիճակին:

Տրոցկին գիտեր նաև Բաքվի սովետական իշխանության ծանր վիճակի մասին, ծանոթ էր այնտեղից ստացված լուրերին: Տրոցկին նաև գիտակցում էր Բաքվի կարևոր նշանակությունը Սովետական Ռուսաստանին նավթամթերքով ապահովելու գործում: Բայց Բաքվին ցույց տրվող օգնությանը նա կարևորություն չէր տալիս: Իհարկե, Բաքվի Ժողկոմսովետն ի վիճակի չէր նրա պահանջները կատարել: Եվ Տրոցկին, անտեսելով Լենինի ցուցումներն ու հանձնարարությունները, հաճախ Բաքու ուղարկվող զորքերն ու այլ օգնությունը կասեցնում էր կամ էլ դրանց չնչին մասն էր ուղարկում Բաքու: Այդպես է, օրինակ, Տրոցկին վարվել Պետրովի զորաջոկատի հետ, որից միայն 800 զինվորի է թույլ տվել մեկնել Բաքու:

Այս ամենը Տրոցկին կատարում էր առանց Լենինի գիտության: 1918 թ. օգոստոսի 23-ին Թուրքեստանի Ժողկոմսովետի նախագահ Ֆ. Կոլեսովին Լենինը հեռագրել է. «Կովկասի և Բաքվի մասին քիչ գիտենք: Տեղեկությունները ստուգված չեն»: Այնուհետև Լենինը հայտնում էր, որ Բաքվում ապի են իջել անգլիացիները և այնտեղ դրությունն անկայուն է:

«Գերմանացիները,- շարունակել է Լենինը,- համաձայն են երաշխիք տալ Բաքվի վրա չհարձակվելու, եթե մենք այնտեղից վռնդենք անգլիացիներին: Անհայտ է, թե գործերն այնտեղ (Բաքվում) ինչպես կդասավորվեն: Ռազմական օգնության մասին չգիտենք, ուր է այն: Կարծում ենք, որ ուշացվել է Ցարիցինի մոտ» (Վ. Ի. Լենին, ԵԼԺ, հ. 50, էջ 192):

Շահումյանի խնդրանքի համաձայն Լենինը կարգադրել էր Բաքու, նրա տրամադրության տակ ուղարկել նաև սուզանավեր: Որոշ ժամանակ անց, 1918 թ. օգոստոսի 28-ին Լենինը նախկին ցարական փոխծովակալ, Ծովային գործերի ժողովրդական կոմիսարիատի կոլեգիայի անդամ Վ. Ավրոֆատորին ուղարկած գրությամբ հետաքրքրվել է, թե «ինչպե՞ս է դրված Վոլգա և Կասպիական ծով սուզանավեր ուղարկելու հարցը և գրել է հետևյալը. «Ճի՞շտ է արդյոք, որ միայն հին սուզանավերը կարելի է ուղարկել: Քանի՞սն են դրանք: Ե՞րբ է կարգադրություն արված ուղարկելու մասին: Ի՞նչ է արված ընդհանրապես»:

Ավրոֆատորը, որն անմիջապես ենթարկվում էր Տրոցկուն, նույն օրը Լենինին պատասխանել է, թե «որոնում ենք ուղարկված սուզանավերը և որ պարզվում է ուղարկելու հնարավորությունը»:

Լենինը, զայրացած այս պատասխանից, օգոստոսի 29-ին Ավրոֆատորին գրել է. «Անհնար է սահմանափակվել այդպիսի անորոշությամբ- «որոնում ենք» (սեփական գո՞ւքը: Անհրաժեշտ է մինչև վաղը ինձ ներկայացնել «որոնողների» անունները, ամսաթիվը, երբվանից են նրանք որոնում և այլն):

«Պարզվում է ուղարկելու հնարավորությունը»- նույնպես աներևակայելորեն անորոշ է: Ե՞րբ և ո՞վ է կարգադրել «պարզել»: Ես խնդրում եմ վաղը (30.08) ինձ այդ հաղորդել ստույգ կերպով, պաշտոնապես: Որովհետև սուզանավերն ուղարկելու գործը մի բոպե անգամ հետաձգում չի հանդուրժում» (Վ. Ի. Լենին, ԵԼԺ, հ. 50, էջ 197):

1918 թ. օգոստոսի 30-ին մահափորձ է կատարվել Լենինի դեմ: Վիրավորված Լենինը ավելի քան մեկ ամիս, գտնվել է բուժման մեջ և հնարավորություն չի ունեցել զբաղվել պետության գործերով: Նրա փոխարեն Ժողկոմսովետի նախագահի պարտականությունները ստանձնել էր Կենտգործկոմի նախագահ Սվերդլովը, որը բոլորովին չի հետաքրքրվել Բաքվին օգնություն կազմակերպելու գործով:

Առաջ անցնելով, կարելի է վստահաբար ասել, որ եթե Տրոցկին Բաքվին ցույց տրվող օգնությանը վերաբերվեր պատասխանատվությամբ և կամայականորեն չկասեցներ նրա համար նախատեսված զորամասերի, զենքի ու զինամթերքի առաքումը, ապա շատ հնարավոր է, որ Բաքվի սովետական իշխանության և նրա ղեկավար Շահումյանի ճակատագիրն այլ ընթացք ունենար:

Այստեղ կամենում եմ մի հարցի շուրջ պարզություն մտցնել: 1918 թ. հուլիսի 8 (21)-ին Բաքվի սովետի «Известия» *և* «Бакинский рабочий» *թերթերում հրապարակվել էր Տրոցկու հուլիսի 5 (18)-ի ռադիոհեռագիրը՝ ուղղված Ռուսաստանի բոլոր օկրուգային և նահանգային զինկոմիսարներին, պատճենը՝ Բաքու, Շահումյանին:*

«Հայտնվում է,- ասվում էր այդ ռադիոհեռագրում,- որ Ժողկոմսովետը հաշվի առնելով ամբողջ միջազգային իրավիճակը, հրամայել է ռազմական գործերով ժողկոմիսարիատին ձեռնարկել ամենալուրջ միջոցներ սպիտակ-չեխերի խտացումը ամենակարճ ժամկետում ճնշելու համար, ուստի ձեզ հանձնարարվում է ձեր տրամադրության տակ եղած բոլոր զորամասերն աչքի անցկացնել և անհապաղ զեկուցել, թե դրանցից որոնք կարող են անմիջապես կամ առաջիկա օրերին ուղարկվել չեխոսլովակյան ռազմաճակատ, պահանջվում է մեծագույն ուշադրություն, բարեխղճություն և եռանդ այդ խնդրի լուծման համար»:

Որոշ ուսումնասիրողներ, ինչպես օրինակ, նախորդ էջերում հիշատակված Լ. Խուրշուդյանը և այլք, իրենց աշխատություններում ելնելով Տրոցկու վերոհիշյալ հեռագրից և հենվելով Բաքվի էսէռների «Знамя труда» *թերթի հաղորդման վրա, Տրոցկուն, մեղադրում այն բանի համար, որ նա հաշվի չառնելով Բաքվում ստեղծված վիճակը, Բաքվին օգնություն ցույց տալու փոխարեն, նա Բաքվի Ժողկոմսովետից պահանջում էր զորքեր ուղարկել չեխոսլովակյան ռազմաճակատ:*

Վերոհիշյալ ուսումնասիրողների ուշադրությունից հավանաբար վրիպել է «Бакинский рабочий» *թերթում հուլիսի 11 (24)-ին հրապարակված հետևյալ պարզաբանումը: «Տրոցկու հեռագիրը Բաքու է ստացվել որպես շրջաբերական և դրա կատարումը պարտադիր չէ Բաքվի համար: Սակայն Բաքվի էսէռների օրգան* «Знамя труда»*-ն ձգտում է ապացուցել, թե մենք մեր ընթերցողներին զցել ենք թյուրիմացության մեջ, նրանցից թաքցնելով ճշմարտությունը, թե խնդրեմ,* «Бакинский рабочий» *թերթը միշտ վստահեցրել է, որ Ռուսաստանից մեզ մոտ գալու է օգնություն, իսկ հիմա Ռուսաստանից մեզանից խնդրում են օգնություն:*

Մենք չարախոսներին պատասխանում ենք. այն օրը, երբ Բաքվում ստացվել է հեռագիրը, Բաքու է ժամանել Ռուսաստանից որպես օգնություն ուղարկված ջոկատը: Երկու օր անց, եկել է ավելի մեծ ջոկատ, քան Պետրովի ջոկատը: Այսօր եկել է նաև հեծյալ գնդի չտաբը, որին հետևելու է գնդի ժամանումը:

Հարց է առաջանում, եթե օգնության վերաբերյալ հեռագիրը մեզ վերաբերեր, մի՞թե այդ ուժերը կուղարկվեին Ռուսաստանից» («Бакинский рабочий», *11 (24). 07. 1918):*

Պետք է ասել, որ էսէռների թերթին ձայնակցում է դաշնակցության «Արեւ» թերթը, որն անգլիացիներին հրավիրելու բանաձևն ընդունելուց երեք օր անց, գրել է հետևյալը. «Թող նրանք (նկատի ունի Շահումյանին և նրա կողմնակիցներին - Վ. Պ.) իմանան, որ սովետական իշխանության ճգնաժամի և հակահեղափոխության գլխավոր մեղավորը իրենք են հանդիսանում. և, եթե ոչ այսօր, ապա վաղը Բաքվի աշխատավորներին վիճակված է լիակատար պարտություն, և դրա համար միակ պատասխանատուն կլինեն այսօրվա մեղավորները» (այսինքն՝ բոլշևիկները -Վ. Պ.):

Այնուհետև «Արեւ»-ը գրում էր. «Գերագույն սովետական իշխանությունը «Ստալինների» միջոցով պահանջում է միայն ընդունել Սովետների հարգումարի, ավելի ճիշտ, բոլշևիկների քաղաքականությունը և ոչ մի խոսք չի ասում Բաքվի պրոլետարիատին թեկուզ չնչին օգնություն ցույց տալու մասին»:

Բաքվի սովետի «Известия» *թերթն արձագանքելով «Արեւ»-ի հոդվածին, գրել է. «Թերթը գերազանց գիտե, որ դա ճիշտ չէ: Նրան հայտնի են այն հսկայական ռեալ ուժերը, մարդկանցով և զենքով, որոնք ուղարկվել են և ուղարկվում են այստեղ կենտրոնական սովետական կառավարության կողմից: Թերթն աղավաղում փաստերը, դիմում է ստի ու պրովոկացիայի, թյուրիմացության մեջ է գցում իր ընթերցողներին»* («Известия», *15 (28). 07.1918):*

ԳԼՈՒԽ 23
ԱՐԱՄ ՄԱՆՈՒԿՅԱՆԻ ԵՐԿՏՈՂԸ

Մինչև մարտական գործողություններին անդրադառնալը, հարկ եմ համարում նորից ընթերցողի ուշադրությունը հրավիրել Բաթումի պայմանագրի 11-րդ հոդվածի վրա, որով Հայաստանի Հանրապետությունը պարտավորվում էր, որպեսզի «Բաքու քաղաքից անհապաղ էվակուացվեն այնտեղ գտնվող բոլոր հայկական զինված ուժերը»:

Դրա կապակցությամբ անհրաժեշտ եմ համարում նշել, որ Հայաստանի Հանրապետության, ինչպես նաև դաշնակցության ղեկավարների մեջ բոլորը չէ, որ կողմ էին իրականացնել 11-րդ հոդվածի պահանջը:

Այս առումով առաջին հերթին ուզում եմ հիշել Արամ Մանուկյանին, որը հասկանում էր Սովետական Ռուսաստանի նշանակությունը հայոց ճակատագրում և փորձում էր կապվել Ռուսաստանի ժողկոմսովետի պաշտոնական ներկայացուցիչ Շահումյանի հետ: Արամ Մանուկյանը համագործակցում էր Երևանի բոլշևիկյան կազմակերպության ղեկավարներ Արշավիր Մելիքյանի և Պողոս Մակինցյանի հետ:

*Արամ Մանուկյանի նման այդ ժամանակ սովետական կողմնորոշում ուներ նաև Ռուբեն Տեր-Մինասյանը, այլապես Ա. Մանուկյանը չէր վստահի նրան և հակառուսական, հակասովետական կողմնորոշում ունեցող դաշնակցության ղեկավարների մեծամասնության պայմաններում, Թիֆլիսում գտնվող Ռուբեն Տեր-Մինասյանի մոտ չէր ուղարկի Պողոս Մակինցյանին հետևյալ ծածկագիր երկտողով. «Ապահով անցկացրեք: Անհրաժեշտ է: Պետք է մենք ամեն կերպ միանանք Ռոստոմին (Պաքուին): Քո էշը քշիր: Մեր մեջքը թէ ամուր չլինի, կը կրկնուի 1915 թիւը» (**Ռուբէն**, Հայ յեղափոխական մը յիշատակները, հ. 7, էջ 143):*

Արամ Մանուկյանի երկտողից հասկանալի է դառնում, որ Բաքվում գտնվող «Ռոստոմին միանալը» նշանակում էր միանալ Շահումյանի գլխավորությամբ այնտեղ հաստատված սովետական իշխանությանը: Երկտողից պարզվում է, որ Արամ Մանուկյանը գիտակցում էր Հայաստանի անվտանգության համար թուրք զավթիչների դեմ Բաքվի սովետական իշխանության ռազմական գործողությունները հաղթանակով ավարտելու նշանակությունը:

Այստեղ հարցադրման կարգով ուզում եմ ընթերցողների ուշադրությանը

ներկայացնել հետևյալը: Ռոստոմը (Ստեփան Զորյան) դաշնակցության երեք հիմնադիրներից մեկն էր և աչքի էր ընկնում իր սկզբունքայնությամբ, սեփական ժողովրդին անմնացորդ նվիրվածությամբ:

Դաշնակցության հիմնական ղեկավարությունը գտնվում էր Կովկասի քաղաքական կենտրոն Թիֆլիսում, որտեղ ձևավորվել ու գործում էր Հայոց ազգային խորհուրդը, որն իրեն հայտարարել էր որպես հայության գործերի տնօրինող: Հայոց ազգային խորհրդում գլխավոր դերը պատկանում էր դաշնակցության գործիչներին: Թիֆլիսում էին ստեղծվել Անդրկովկասի կառավարման մարմինները, որոնց մեջ մտել էին նաև դաշնակցության երևելի գործիչները:

Այստեղ օրինական հարց է առաջանում, ինչո՞ւ այդ ամենի մեջ չկար Ռոստոմը: Մի՞թե դա նույնպես նրա համեստության հետևանք էր, որի մասին շատ են խոսում հուշագիրները:

Ես ավելի շատ հակված եմ մտածելու, որ Անդրկովկասյան կառավարության մեջ մտած և հայոց ազգային խորհրդի ղեկավար դաշնակցական գործիչների հետ Ռոստոմն ունեցել է լուրջ հակասություններ:

Ես այսպես եմ մտածում, ելնելով հետևյալ իրողություններից: Դաշնակցությունն կուսակցությունը իր ամբողջ գոյության ընթացքում երբեք միասնական գաղափարախոսություն չի ունեցել: Հիշեցնեմ նախորդ էջերում նշված Անդրանիկ Օզանյանի գնահատականը և դրան ավելացնեմ հետևյալը

Միայն դրանով կարելի է բացատրել, թե ինչու է Ռոստոմը, գալով Բաքու, ջանքեր չի գործադրել մեկնել Անդրկովկասի քաղաքական կենտրոն Թիֆլիս, որտեղ այդ ժամանակ ընթանում էին հիմնական քաղաքական գործընթացները և նրա կարիքն այնտեղ առավելապես օգտակար կլիներ: Բայց Ռոստոմը հաստատվել է Բաքվում, որտեղ արդեն Շահումյանի գլխավորությամբ հռչակված սովետական իշխանությունը սերտորեն կապված էր Սովետական Ռուսաստանի հետ:

Դժբախտաբար ձեռքիս տակ չկան փաստեր հաստատապես պնդելու իմ ենթադրությունը և պատասխանել հետևյալ հարցերին, թե ինչո՞ւ, ի՞նչ նպատակով և կամ ի՞նչ պատճառով Ռոստոմը, ինչպես նաև Մուրատը Անդրկովկասի քաղաքական կենտրոն Թիֆլիսը թողած, հանգրվանեցին Բաքվում: Գուցե՞ խորացել էին նրանց և Թիֆլիսի հայոց ազգային խորհրդի միջև առաջացած տարաձայնությունները, հայտնի չէ: Հրապարակի վրա եղած և ինձ

համար մատչելի փաստերը հնարավորություն չեն տալիս այդ հարցերի շուրջ ավելի հաստատուն եզրակացության հանգել:

Բայց իմ ենթադրությունը հաստատելու համար անուղղակի օգնում է դաշնակցական գործիչներից մեկի վկայությունը, որը հրապարակվել է դեռևս 1919 թ. մարտին: Նա պատմել է հետևյալի մասին: 1918 թ. ամռանը Բաքվի կոմունայի պաշտպանության համար մղված մարտերի դժվար օրերին, Բաքվի դաշնակցության կենտրոնի նիստում շատերը տաքացած պահանջել են դիմել կտրուկ միջոցների՝ տապալել բոլշևիկների իշխանությունը և նրանց փոխարեն նշանակել ավելի ունակ մարդկանց, այսինքն դաշնակցության անդամների:

Այդ նիստի ժամանակ ելույթ է ունեցել Ռոստոմը և ասել է հետևյալը. «Այո, այժմ բոլշևիկների իշխանությունը թուլացել է, իր կոչման բարձրության վրա չի գտնվում, թույլ է տալիս սխալներ: Բայց ո՞վ է գալու բոլշևիկներից հետո: Մի՞թե նրանք բոլշևիկներից լավն են լինելու: Չէ՞ որ բոլշևիկների մեջ կան շատ պատրաստված մարդիկ, քան մյուս կուսակցությունների մեջ» («Вперед», 30.03.1919):

Անշուշտ, այդպես ասելով Ռոստոմը նկատի է ունեցել Բաքվում գործող մյուս կուսակցություններին՝ մենշևիկներին, էսէռներին և, իհարկե, նաև դաշնակցությանը:Այս կերպ Ռոստոմը պատասխանել է Գյուլֆանդանյանին, որն այդ օրերին Շահումյանից պահանջել էր հեռանալ և իշխանությունը հանձնել իրեն:

Ռոստոմը հեռատես էր, ուներ իրադարձությունները սթափ վերլուծելու և դրանք գնահատելու հիանալի հմտություն և նկատի էր ունեցել հատկապես մուսավաթականներին, երբ հարց էր տվել, թե ովքեր են գալու բոլշևիկներից հետո: Ռոստոմի այս գնահատականը որոշ ժամանակ զսպել է բոլշևիկների իշխանությունը տապալելու կողմնակից Գյուլֆանդանյանին ու նրա համախոհներին:

Վստահաբար կարելի է ասել, որ ի վերջո, Բաքվի Հայոց ազգային խորհրդում ղեկավար դիրք գրավող դաշնակցական գործիչներն անտեսել են Ռոստոմի զգուշացումը և, ինչպես կերևա հաջորդ էջերում իրենց քաղաքականությամբ Բաքվի սովետում միացել են մենշևիկներին ու էսէռներին, քվեարկել են Շահումյանի գլխավորած Ժողկոմսովետի դեմ և դրանով ճանապարհ հարթել Բաքվում մուսավաթական իշխանությունը հաստատելու համար...:

ՀԱՅԿԱԿԱՆ ՋՈԿԱՏՆԵՐԸ ՁԻՆԱԹԱՓԵԼՈՒ և ԲԱՔՎԻՑ ՀԵՌԱՑՆԵԼՈՒ ԽՆԴԻՐԸ

Բաթումի պայմանագրի 11-րդ հոդվածով Թուրքերը խոսում էին Հենց Արամ Մանուկյանի մատնանշած թիկունքին: Բայց խոսքերին դաշնակցության հակառուսական կողմնորոշում ունեցող ղեկավարների ձեռքով:

Ես հատկապես եմ ուշադրություն դարձնում այս խնդրին, որովհետև 1918 թ. Բաքուն թուրքերին հանձնելով, դավաճանները պայմաններ են ստեղծել 30 հազար հայ բնակչությանը կոտորելու համար:

Մի՞թե Բաքվից հայկական ջոկատներին հեռացնողները, Բաքուն թուրքերին հանձնողները չգիտեին, որ դրանով Բաքվի հայ բնակչությանը դնելու էին անկասելի աղետի մեջ:

Ոչ միայն գիտեին, այլև գիտակցորեն ստանձնել էին այդ ազգակործան դերը: Եվ որպեսզի այդ ազգային դավաճանությունը կոծկվի, դրա հեղինակները հետին թվով փորձել են մեղադրել Ստ. Շահումյանին, մի մարդու, որն ամեն կերպ ջանում էր համոզել Բաքվի դաշնակցականներին, չմերկացնել թուրքական զորքերի դեմ ճակատը, չվտանգել Բաքուն, անդադար մատնանշելով, որ այդ ամենից տուժելու է հատկապես Բաքվի հայ բնակչությունը:

Բաքվից հայկական ջոկատների դուրս հանելու պահանջը թուրքերը դրել էին մինչև Բաթումի պայմանագրի ստորագրումը: Նրանք այդ պահանջը դրել էին վրացի մենշևիկների և աղրբեջանական մուսավաթականների միջոցով:

Դեռևս 1918 թ. մարտի 20-ին, երբ Անդրկովկասյան սեյմի նախագահությունում քննարկվում էր Բաքվից հայկական ջոկատները հեռացնելու հարցը, Ն. Ռամիշվիլին հայտարարել էր. «Կառավարությունը, գիտակցելով երկրամասին սպառնացող բոլշևիկյան հարձակման վտանգը, միջոցներ է ձեռնարկել Բաքուն գրավելու և այնտեղ Անդրկովկասյան կառավարության իշխանությունը վերականգնելու համար կազմակերպելու համահավաք ջոկատ փորձված հրամանատարի գլխավորությամբ»:

«Կառավարությունը,- այնուհետև ասել է Ռամիշվիլին, գիտակցելով, որ Բաքվում բոլշևիկների տիրապետությունն Անդրկովկասի համար հավերժական վտանգ է ներկայացնում, որոշել է ձեռնարկել բոլոր միջոցները նրանց իշխանությանը վերջ տալու համար»:

Ռամիշվիլին տեղեկացնում է նաև, որ համահավաք ջոկատի կազմակերպումը հանձնարարվել է գեներալ Օդիշելիձեին (Վրաստանի պետական արխիվ, ֆ. 1819, ց. 1, գ. 4, թ. 3):

Մուսավաթականների ներկայացուցիչ Ռուստամբեկովը հայտարարել է, որ անհրաժեշտ է վճռականորեն ճնշել բոլշևիկյան շարժումը, բոլշևիկների հետևանքն Բաքվին և հարկավոր է, ամեն կերպ նրանց վերացնել գենքի ուժով: Ռուստամբեկովը հայտնել է, որ «մուսավաթ» խմբակցությունն աշխատում է այդ ուղղությամբ և իր հերթին հույս է հայտնել, որ «դաշնակցությունն կուսակցությունը կպաշտպանի Բաքուն բոլշևիկներից ազատելու տակտիկան» (**Վրաստանի պետական արխիվ**, ֆ. 1819, ց. 1, գ. 4, թ. 4):

Նիստին մասնակցող դաշնակցության անդամ և Անդրկովկասյան կառավարության ֆինանսների նախարար Խ. Կարճիկյանը հայտնել է, որ Բաքվի բոլշևիկների գլխավոր ուժը 5000 հայ զինվորներն են, որոնք ձգտում են վերադառնալ հայրենիք:

«Ոստի,- ընդգծել է Կարճիկյանը,- մեր գլխավոր խնդիրն է նրանց համար հայրենիք վերադառնալու հնարավորություն ստեղծել ու տալ անձեռնմխելիության երաշխիք: Եվ դրանով մենք մեր առջև դրված խնդրի մի մասը կլուծենք»:

Սեյմի նախագահությունն ընդունել է հետևյալ որոշումը. «Առաջարկել կառավարությանն արտահերթ կազմել համահավաք ինտերնացիոնալ և մարտունակ զորաջոկատ Բաքվում Անդրկովկասյան կառավարության իշխանությունը վերականգնելու համար» (**Վրաստանի պետական արխիվ**, ֆ. 1819, ց. 1, գ. 4, թ. 6):

Գերմանացիների ու թուրքերի պնդմամբ 1918թ. մարտի վերջին Անդրկովկասյան սեյմի ու կառավարության համատեղ նիստը նորից անդրադարձել է վերոհիշյալ խնդրին:

Նույն Ռուստամբեկովն իր ելույթում դնելով Բաքվի բոլշևիկների դեմ արտակարգ միջոցներ ձեռնարկելու պահանջը, հայտարարել է. «Բաքվի բոլշևիկ-դաշնակցական շարժումը գլխավորապես հենվում է մեծ թվով հայ զինվորների վրա»:

Ի պատասխան Ռուստամբեկովի այս հայտարարության, Կարճիկյանը վճռականորեն բողոքել է «բոլշևիկ-դաշնակցական շարժում» արտահայտության դեմ և պնդել, որ «Բաքվում բացառապես բոլշևիկյան շարժում է և որ դաշնակցությունը այն չի պաշտպանում և հանդես է գալիս նրա դեմ» (**Վրաստանի պետական արխիվ**, ֆ. 1819, ց. 1, գ. 5, թ. 12):

Փաստորեն գերմանա-թուրքական բլոկը ձգտում էր մինչև պայմանագրի կնքումը Անդրկովկասյան կառավարության ձեռքով ոչնչացնել Բաքվի սովետական իշխանությունը և այդ միջոցով իր ձեռքը գցել Բաքվի նավթը:

Անդրկովկասյան կառավարությունն ի վիճակի չեղավ կատարել թուրքերի պահանջը, չնայած որ զորքեր էր ուղարկել Բաքվի դեմ:

Ի վերջո, Բաքուն թուրքերին հանձնելու պարտականությունը Բաթումի պայմանագրով ստանձնել է դաշնակցականներից կազմված Հայաստանի կառավարությունը:

Միթե՞ դաշնակցականների մեջ չկար մեկը, որ սթափ գնահատեր իրավիճակը և փակեր դավահանության հանապարհը:

Իհարկե, կար և դա Արամ Մանուկյանն էր, որը կանխազգալով վտանգը, դրա մասին զգուշացրել էր Ռուբենին:

Այժմ հետևենք այն ընթացքին, թե ինչպես երիտթուրքերը հենց դաշնակցության ձեռքով հարվածեցին Արամ Մանուկյանի նկատի ունեցած «մեջքին»:

Մինչ այս հարցին անդրադառնալը, հարկ եմ համարում նշել հետևյալը: Կովկասյան ռազմաճակատի թուրքական զորքերը խախտելով Երզնկայի զինադադարը, անցնում են հարձակման, ուղղակի վտանգ ստեղծելով Արևելյան Հայաստանի հայ բնակչության համար:

Թուրքական զորքերի հարձակումը կասեցնելու նպատակով էլ, ինչպես նախորդ էջերում նշվել է, Բաքվում գտնվող հայ զինվորներից ևս կազմակերպվում է կամավորական գունդ: Սակայն թուրքական զորքերի հրամանատարության պահանջով մուսավաթականներն արեցին ամեն ինչ և հասան իրենց նպատակին՝ հայկական գնդին զրկելով Կովկասյան ռազմաճակատ մեկնելու հնարավորությունից, թեև մինչ այդ էլ, ինչպես նշվեց, դրվել էր հայկական ջոկատները Բաքվից հեռացնելու պահանջը:

Բայց 1918 թ. հունիսի 4-ին կնքված պայմանագրով թուրքերի թելադրանքով դրվում է վճռական պահանջ՝ զինաթափ անել և Բաքվից հեռացնել հայկական զինված ջոկատներին:

Թուրքերը մտադրություն ունեին առաջ շարժվել ու գրավել Բաքուն և գիտակցում էին, որ իրենց նպատակի իրագործմանը խանգարելու են այնտեղ գտնվող հայկական ջոկատները:

Եթե մինչև Բաթումի պայմանագիրը թուրքերին հարկավոր էր, որպեսզի հայկական ջոկատներին շրջափակեին Բաքվում և թույլ չտային մեկնել Կովկասյան ռազմաճակատ, ապա այժմ թուրքերին հարկավոր էր Բաքվից հեռացնել այնտեղ գտնվող հայկական ջոկատները և սովետական իշխանությանը զրկել պաշտպանվելու միջոցից:

ՇԱՀՈՒՄՅԱՆԻ ՊԱՏԱՍԽԱՆԸ ԶԱՌԱՖՅԱՆԻՆ

Ինչպես նախորդ էջերում նշվել է, Բաքվի սովետի հունիսի 7-ի նիստում դաշնակցության խմբակցության անդամ Զառաֆյանը իր ելույթի վերջում բոլշևիկներին մեղադրել է այն բանում, որ նրանց մեղքով Ելիզավետպոլը գտնվում է մուսավաթականների ձեռքին և պահանջել է «ստեղծել հանձնաժողով և կապացույցի իր մեղադրանքը»:

Նկատի ունենալով Զառաֆյանի այս հայտարարության առաջացրած աղմուկը, Շահումյանը հունիսի 8-ին նորից հանդես է գալիս և պատասխանելով նրա առաջ քաշած մեղադրանքին, ասել է հետևյալը. «Այստեղ մեղադրանք հնչեց, թե եթե Ելիզավետպոլը մեր ձեռքում չէ, եթե թուրքական բանդաները հնարավորություն ունեն շարժվելու, ապա դրանում մեղավոր են բոլշևիկները, ամենից առաջ՝ ես: Նա (Զառաֆյանը) հանդիսավորությամբ խոստանում է հետաքննության ժամանակ դա ապացուցել»:

«Երեք շաբաթ առաջ,- շարունակել է Շահումյանը,- երբ մենք Թիֆլիսից ստացանք տագնապալի տեղեկություններ, դաշնակցություն կուսակցության ներկայացուցիչները դիմեցին մեզ և հայտարարեցին, որ մենք նրանց թույլ տանք հայկական զորամասեր շարժել Ելիզավետպոլի ուղղությամբ: Մենք դեմ ենք արտահայտվել, որովհետև մենք չէինք կարող որևէ հաջողության հասնել, երկրորդ՝ թողնել այնտեղ հայկական զորամասերին, նշանակում էր ստեղծել հայ-թաթարական կոտորած Բաքվի սովետական իշխանության դրոշի տակ: Մենք գերադասեցինք քիչ ապասել, քանի որ ամենից առաջ հարկավոր էր ջոկատ ուղարկել Հյուսիս, որպեսզի պարենամթերք ձեռք բերվեր»:

Զառաֆյանը փորձում է արտահայտվել, բայց նրան թույլ չի տրվում և Շահումյանը շարունակել է իր խոսքը: «Այսօր,- ասել է նա,- ստացվել է Ահարոնյանի հեռագիրը և նա նոր փորձեր է հարուցում: Կսկսվեն տատանումներ, կսկսեն խոսել, որ ձևավորվել է հայկական կառավարություն: Ես նախազգուշացնում եմ ընկերներին և հատկապես դիմում եմ դաշնակցականներին, որպեսզի նրանք հակահարված տան այստեղի Քաջազնունիներին, հենց որ սկսվեն այդ տատանումները»:

Իր խոսքի վերջում Շահումյանն ասել է. «Գիտեք ընկերներ, ռազմաճակատում փոքր ինչ թուլացման դեպքում կսկսվի Քաջազնունու նման քաղքենիների մութ աշխատանքը: Նրանք կսկսեն խոտորության տանել: Կարող է պատահել, երբ որոշ տեղերում շարժումը սկսի կրել ազգային գունավորում, մենշևիկները կսկսեն նորից իրենց դավաճանական աշխատանքը, կսկսեն զգոնության, թե դա քաղաքացիական պատերազմ չէ, այլ ազգային կոտորած է և այլն: Կարող է սկսվել և այլ ագիտացիա՝ անգլիական իմպերիալիստների ձեռքն ընկնելու կոչերով»:

Շահումյանը կոչ է արել հաշվի առնել այդ ամենը և առաջարկել է բոլոր գիտակից ընկերներին, «գիտենալով այն ամենը, ինչ ապասում է նրանց, ժամանակին հակահարված տալ բոլոր նրանց, ովքեր կսկսեն իրենց աշխատանքը»:

Բաքվի սովետում Շահումյանն ու Այոլոն ներկայացրել են տարբեր բանաձևեր: Շահումյանի բանաձևն ընդունվել է միաձայն, վեց ձեռնպահով:

Այդ բանաձևում ասվում էր հետևյալը. «Բաքվի սովետը հաստատում է իր նախորդ որոշումներն Անդրկովկասյան սեյմի դավաճանական քաղաքականությունը դատապարտելու մասին և նշավակում է պարոնայք Ջիսեիձեին, Ջիսենկելոն և Քաջազնունուն որպես դավաճանների»:

Սովետը հայտարարում էր, որ «Բաքվի պրոլետարիատը մեկ մարդու նման կպաշտպանի իր կարմիր բանակին, որը շարժվել է, որպեսզի հակահարված տա Թիֆլիսի և Ելիզավետպոլի կողմից շարժվող հակահեղափոխական ավազակախմբերին»:

Սովետը համոզմունք էր հայտնում, որ «պրոլետարիատի միահամուռ աջակցությամբ կհաջողվի ոչ միայն պահպանել մեր երկրամասի հեղափոխական օջախ Բաքուն, այլև հաղթականորեն առաջ շարժվել և Անդրկովկասի բոլոր պրոլետարների, գյուղացիության հետ միասին երկրամասը փրկել ոչ միայն թուրքերի ու մուսավաթականների լծից, այլև Թիֆլիսի մենշևիկների ու դաշնակների դավաճան կուսակցություններից և Անդրկովկասում հաստատել սովետական իշխանություն ու վերականգնել միությունը հեղափոխական Ռուսաստանի հետ» (ՀՀ ԱԱ, ֆ. 1437, ց. 3, գ. 3):

Շահումյանի այս ելույթը և ընդունված բանաձևն անշան խմբագրումով տպագրվել են նրա Երկերի ժողովածուի 5-րդ հատորի 91-93 էջերում:

Բոլոր ուժերի համախմբման գործում կարևոր դեր է խաղում Բաքվի ԺողԿոմսովետի կոչը՝ ուղղված Անդրկովկասի բոլոր բանվորներին ու գյուղացիներին՝ առանց ազգի խտրության՝ մուսուլմաններին, հայերին, վրացիներին և ռուսներին:

1918 թ. հունիսի 1-ին հրապարակված Շահումյանի գրած կոչում, որը նրա հետ միասին ստորագրել էին նաև կոմիսարներ Զափարիձեն, Կորգանովը, Նարիմանովը, Ֆիրուզովը, Կարինյանը, Մ. Վեզիրովը, Կոլենիկովան, Սուխարցևը, Ցիրուլսկին, Կիրեևը և Կուզնեցովը, ասվում էր. «Մեր թշնամի-

ները գինվել և մեր դեմ են գալիս: Մենք ձեզ կոչ ենք անում ճնշողների՝ բեկերի, իշխանների, վաճառականների դաշինքին հակադրել բոլոր ազգությունների ճնշվածների դաշինքը: Ապստամբություն բարձրացրեք Բաքվի պրոլետարիատի վրա եկող արյունարբու վամպիրների դեմ»:

Կոչը համոզմունք էր հայտնում, որ բոլոր դավաճաններին քշելու դեպքում, բոլոր ուժերը եղբայրական դաշինքի մեջ համախմբելու դեպքում ոչ մի արտաքին թուրքական ուժ սարսափելի չի լինի:

Կոչի վերջում ասվում էր. «Ի զե՞ն եղբա՛յր գյուղացիներ, մուսուլմանե՛ր, վրացիներ՛ր, ի զե՞ն հայ գյուղացիներ: Եվ մի՛ք լսի ձեր նախկին առաջնորդներին, որոնք կրիտիկական րոպեին միշտ էլ դավաճանում են ձեզ և իրենց հանցավոր քաղաքականությամբ կործանել ու ոչնչացրել են իրենց ժողովրդին:

Բոլոր սև ուժերը ուրի՞ են ելել Բաքվի սովետի դեմ, Անդրկովկասի միակ ազատ անկյան դեմ: Բաքվի սովետի դրոշն ազատության դրոշն է և աշխատավորության եղբայրության դրոշը: Ամե՞նքդ մեր կարմիր դրոշի ներքո» (**Ստ. Շահումյան**, նույն տեղը, հ. հինգերորդ, էջ 45-49):

Բաքվի սովետի կոչը լայն արձագանք է գտել Բաքվի պրոլետարիատի մոտ: Կարմիր բանակ են մտնում մեծ թվով կամավորներ: Մինչ այդ իրականացվել էր զորահավաք, կազմավորվել էին նոր ջոկատներ:

Արդեն հունիսի 9-ին կազմ ու պատրաստ էին ռազմաճակատ մեկնող ուժերը: Այդ օրը, երեկոյան, Բաքվի կայարանում հավաքված հսկայական բազմության մասնակցությամբ տեղի ունեցած միտինգում ռազմաճակատ մեկնող կարմիրբանակայիններին ջերմ խոսքերով բարի երթ են մաղթել շատ հայտնի գործիչներ:

«Արեւ» թերթն այդ առիթով գրել է, որ հունիսի 9-ից «Ռուսաստանի մեծ յեղափոխության սանձարդ կազմող յեղափոխական Կարմիր բանակը ծառանալու է դրսից Բագվի վրայ արշաւող հակայեղափոխական մուսավաթական բանդաների, տաճկական ու գերմանական իմպերիալիստների կազմակերպած զորամասերի դէմ, որոնք գալիս են բնաջինջ անելու Բագվի բանտրա-գիւղացիական իշխանութիւնը, Անդրկովկասի և մեծ Ռուսաստանի յեղափոխական օջախը»:

Թերթն առանձնակի գոհունակությամբ է հայտնել, որ ռազմաճակատ մեկնող կարմիր բանակի կազմում «պատկառելի տեղ են գրաւում Համազասպի բատալիոնները՝ հայ աշխատաւորութիւնը, որոնք խոշոր պատմական դեր խաղացին խորհրդային իշխանութիւնը բարձրացնելու խնդրում, այսօր էլ նրանք գնում են արեան գնով նպաստելու խորհրդային իշխանութեան

կարմիր դրոշը ծածանելու Անդրկովկասի սիրտ Թիֆլիսում» («**Արեւ**», հունիսի 11, 1918 թ.):

Ռազմաճակատ մեկնող զորամասերի հետ էր նաև «Հ. Յ. դաշնակցութեան վետերան, գեղեցիկ երրորդութեան կենդանի մնացած ընկեր Ռոստոմը» («**Արեւ**», հունիսի 11, 1918 թ.):

ԲԱՔՎԻ ԴԱՇՆԱԿՑՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ԿՈՉԸ

Ռազմական գործողությունների նախօրյակին, 1918 թ. հունիսի 6-ին, Բաքվի դաշնակցության կենտրոնական կոմիտեն հրապարակել է իր կոչը, որտեղ հանգամանորեն նկարագրել է Անդրկովկասի անկախությունը հռչակելուց հետո տեղի ունեցած իրադարձությունները և հայտնել է հետևյալը. «Եւ այսպէս, ընկերներ, կեղծիքն ու դաւաճանութիւնը, բեկէրն ու կնյազները, Չիսենկելիներն ու «Մուսավաթ» ինտերնացիոնալ բուրժուազիան սուլթանականութեան հետ բլոկ կազմած՝ վեր են կացել մեզ վրայ»:

Այնուհետև դաշնակցության կոչում ասվում էր. «Կարմիր բանակի քաջարի եղբայրներ, աշխատաւոր ընկերներ, մեր թշնամին անարգ դաւաճանութիւնն է և սև բլոկը: Բայց մենք գնում ենք խորտակելու հակայեղափոխութիւնն ու բռնակալների արշաւը, կուելու ամենանուիրական իդէալների համար, խորացնելու աշխատաւորական յեղափոխութիւնը, հիմնաւորելու և հաստատելու բանտրա-գիւղացիական խորհուրդների իշխանութիւնը: Մենք գնում ենք պատժելու դաւաճաններին ու թոյլ չտալու, որ Անդրկովկասի աշխատաւորութիւնը բաժանեն Ռուսաստանի դեմոկրատիայից»:

Կոչն ազդարարում էր. «Սոցիալիստական Հերոս բանակ, ըմբոստ աշխատաւոր, հնչել է նաև քո յեղափոխական կռւի ու փառքի ժամը: Ի զե՞ն, թուրք, ռուս ու վրացի աշխատաւոր ընկերներ, գնում ենք շահագործողների և հակայեղափոխութեան դէմ կռւելու: Զէնքի դիմի՛ր, բազմաչարչար, բայց մարտական հայ բանտոր ու գեղջուկ»:

Կոչի վերջում հռչակվում էր. «Կեցցե՛ աշխատաւոր գիւղացիների և բանտրների եղբայրութիւնը: Կեցցե՛ սոցիալիստական կռիւը: Կեցցե՛ բանվորա-գիւղացիական խորհրդային իշխանութիւնը: Կեցցե՛ հայ յեղափոխական դաշնակցութիւնը:

Եւ թող չուտ գայ այն օրը, երբ Կովկասեան վեհ բարձունքների վրայ կը ծածանի ինտերնացիոնալի կարմիր դրոշակը» («**Արեւ**», հունիսի 11, 1918 թ.):

1918 թ. հունիսի 9-ին, կամիր բանակի զորամասերը ռազմաճակատ ու-

ղարկելուց առաջ, տեղի է ունեցել Բաքվի դաշնակցության ներկայացուցչական ժողովը, որին մասնակցել է 79 մարդ: Քննարկվել է «Թիֆլիսից ստացված Ազգային խորհրդի հեռագիրը և մեր բռնելիք դիրքը Թիֆլիսի Ազգային խորհրդի որոշման վերաբերմամբ» հարցը, որի մասին զեկուցել է Աբրահամ Գյուլխանդանյանը:

Գյուլխանդանյանը նշել է, որ Թիֆլիսի ազգային խորհուրդը Տաճկաստանի հետ խաղաղության պայմանագիր է կնքել, որի «հիման վրայ ստեղծում է «Հայկական ատոնոմիա» չափազանց խղճուկ և անորոշ սահմաններում»:

«Բացի այդ,- շարունակել է նա,- ազգային խորհուրդն իրեն յայտարարում է բաձրագոյն և միակ իշխանութիւն հայկական զաւառների, ժամանակաւորապէս ընդունելով իր վրայ կառավարչական ֆունկցիաներ»:

Այնուհետև Գյուլխանդանյանն անդրադարձել է Թիֆլիսի ազգային խորհրդի ընդունած «Անկախ Հայաստանի» սահմաններին և ընդգծել է, թե «որքան խղճուկ տեղ է յատկացուած հայ ժողովրդին և որպիսի սահմանափակումներով աշխատել են պայման առաջարկողները ոչնչութեան հասցնել հայ ժողովրդի քաղաքականապէս և կուլտուրապէս ազատ զարգանալու լայն ասպարէզը և թէ ինչպէս ամեն կողմից պատուար են կանգնել հարևան Ադրբեջան-Վրաստան «անկախ պետութիւնները» հայ ժողովրդի զարգացման, առաջխաղացման հանդէպ»:

«Դեռ մի կողմ թողնենք,- ասել է զեկուցողը,- այն կարևոր հանգամանքը, թէ որքա՞ն իրաւունք ունէին Թիֆլիսի Ազգային խորհրդում նստող մի բուն մարդիկ իրենց վրայ վերցնելու հայ ժողովրդի բախտի տնօրինման գերագոյն իրաւունքը, նախ՝ նման մի վարկաբեկիչ պայման ստորագրելիս և երկրորդ՝ հայաբնակ վայրերի թէկուզ ժամանակաւոր հայկական բարձրագոյն իշխանութիւն հայտարարելիս»:

Գյուլխանդանյանը ժողովի մասնակիցներին տեղեկացնում էր, որ Բաքվի դաշնակցության կենտրոնական կոմիտեն «քննութեան առնելով վերը յիշած խնդիրները, գտնում է, որ Թիֆլիսի Ազգային խորհուրդը Տաճկաստանի հետ խաղաղութեան այդպիսի պայմանագիր ստորագրելը և հայկական զաւառների «բարձրագոյն և միակ» իշխանութիւն յայտարարելու ակտը, ծաղր է հարիւր հազարաւոր հայ ժողովրդի թափած արեան»:

Գյուլխանդանյանը հայտնում էր նաև, որ «Կենտրոնական կոմիտեն ամենաբուն կերպով բողոքում է հայ ժողովրդի կամքը ոտնահարողների դէմ, նա պատմականօրէն և օրգանապէս կապուած է ռուս դեմոկրատիայի հետ, յեղափոխական Ռուսաստանի հետ և ոչ մի գնով չի ցանկանայ անջատել նրանից»:

«Թիֆլիսից ստացված Ազգային խորհրդի հեռագիրը,- ընդգծում էր Գյուլխանդանյանը,- ոչինչ չի աւելացնում եղած դրութեանը և ոչնչով չի փոխում Կենտրոնական կոմիտեի նախկին որոշումը, այլ ընդհակառակը, նորից ու նորից պնդում է, որ Անդրկովկասի բոլոր ազգերի աշխատաւորները երբեք չեն ցանկանում մեր երկիրն անջատել մայր Ռուսաստանից, մենք կազմում ենք նրա անբաժան մասը, բողոքում է նաև հայ աշխատաւորութեան կամքը «անկախ» Հայաստան հայտարարելու պատրուակով իրագործողների դէմ»:

Նկատի ունենալով, որ «Տաճկաստանի կառաւարութեան բուն նպատակն է Բաքվի խորհրդային իշխանութեան ոչնչացումը, յեղափոխական աշխատավորութեան բնաջնջումը», Գյուլխանդանյանը համոզմունք էր հայտնում, որ «Բաքվի խորհրդային իշխանութեան շուրջը խմբուած բանտարգիտացիական քաջարի կարմիր բանակին է մնում իր վերջնական յաղթական խօսքն ասելու տաճիկ բռնակալներին և գեղեցիկ Կովկասում ծածանելու խորհրդային իշխանութեան կարմիր դրօշակը»:

Իր զեկուցման վերջում Գյուլխանդանյանը հայտնում էր, որ Բաքվի հայոց ազգային խորհուրդը նույնպես ընդունել է Կենտրոնական կոմիտեի որոշման նման որոշում, որով «պատրաստակամութիւն է հայտնել ամեն կերպ աջակցելու Խորհրդային կարմիր բանակի յաջողութեանը»:

Քվեարկութեամբ ժողովը միաձայն հավանություն է տվել Բաքվի դաշնակցության կենտրոնական կոմիտեի որոշմանը («Ազատ», հունիսի 13, 1918 թ.):

ՌՈՍՏՈՄԻ ԵԼՈՒՅԹԸ

Վերոհիշյալ ժողովին ներկա էր նաև Ռոստոմը, որը նույնպես ելույթ է ունեցել: Նկատի ունենալով, որ Ռոստոմի այդ ելույթը քիչ է հայտնի, հարկ եմ համարում այն ներկայացնել ամբողջությամբ առանց մեկնաբանության:

«Ընկերներ, լսում ենք անուերջ մեղադրական խօսքեր և սուր դարձուածքներ մեր Թիֆլիսի ընկերների հասցեին, «ստոր» և ուրիշ ածականներով որակեցին նոյնիսկ նրանց արարքները, սակայն, եթէ նման պարագաներում Բրեստեան պայմանագիր ստորագրողները թոյլ են տալ «ստոր» վարմունք ամբողջ Ռուսաստանի նկատմամբ, արժանի կը լինէր նաև մեր Թիֆլիսի ընկերներին կպցնել «ստոր» մականունը:

Նման ածականներն աւելորդ են դառնում նամանաւանդ այն պարագաներում, երբ բոլորովին կտրուած-անջատուած ենք իրարից և զրկուած մօտիկից ծանօթանալու այնտեղի անցած-դարձածին:

Նման ըմբոստացում և գաղափարական դիմադրութիւն, ինչ հայ ժող-

վուրդն է ցուցաբերել հայկական գաւառներում, տեսնուած ու լսած չէ նոյ-նիսկ ամբողջ Ռուսաստանում:

Զգուշանանք առայժմ մեղադրական սուր խօսքեր գործածելուց մեր Թիֆ-լիսի ընկերների նկատմամբ, գուցէ առայժմ վաստակում են ժամանակը, գու-ցէ հայ ժողովրդի առաջ զինաթափման և կամ հայութեան մի ստուար մասի բնաջնջման խնդիր էր դրուած, հազար ու մէկ դժուար հանգամանքներ կարող են լինել, որոնց առաջ ստիպուած ստորագրել են պայմանագիրը, որովհետև ո՞վ չգիտէ, որ այսօրուա մեզ հասած հեռագրի տակ ստորագրած Ահարոնեանը, Հիմնովին հակառակ է պայմանագրի մէջ յիշատակուած բոլոր կէտերին:

Բացատրիկ քաջագործութեան ակտեր են կատարել մեր երկրում, հայաբ-նակ վայրերում և մենք լսում ենք նրանց մասին:

Իրաւո՞ւնք ունեն մեղադրելու նրանց, որոնք արդէն զաղափարական դի-մադրութեան կատաղի պայքարումն են, երբ ըմբոստացման արդէն գեղեցիկ օրինակներ են տուել, իսկ այստեղ նստողները դեռևս ոչինչ չարած, կամ ասե-լի ճիշտն ասած, երեք օրեայ քաղաքացիական սովորական կռիւներ տեսած անհատներ ենք միայն, կռիւներ, որոնց զլխաւորապէս զոհ գնացին չունեոր և ողորմելի անհատները, փողոցներում պատահականօրէն անց ու դարձ անողները:

Մեր պատուի համար դեռ պիտի զգուշանանք մեր մեղադրական խօսքից, անենք այն, ինչ նրանք չեն արել, մեր յեղափոխական գործունէութեամբ գե-ղարդասենք նրանց, մօտիկից ծանոթանանք իրադարձութեան և ապա միայն արտասանենք մեր կշռադատած խօսքը:

Եթէ որևէ մեղադրանք կարելի է ուղղել մեր Թիֆլիսի ընկերներին, այդ այն է, որ նրանք լաւ չեն չափել ու ձևել հայ աշխատաւոր ժողովրդի կռիւ-ոյժը, նրա թափն ու ոգևորութիւնը, ճիշտ հաշուի չեն առել, թէ որչափ ռազ-մական-դիմադրական ոյժ է ներկայացնում հայ աշխատաւորութիւնը. այս տէսակետից մեղադրելի են նրանք, որպէս ռազմական տակտիկական մի սխալ գործողներ, ինչպէս ռազմի դաշտում մի որևէ զորաւար տակտիկական սխալ է թոյլ տալիս իրեն, սակայն ի՞նչ գործ ունեն այստեղ «դաւաճան», «ստոր» և նման դարձուածքները, թէ Ահարոնեանի, թէ Կարճիկեանի և թէ Քաջազնունու նկատմամբ, երբ թէ մենք և թէ այդ բառեր գործածողները շատ լաւ գիտեն, որ յիշեալ մարդիկ երբէք արժանի չեն նման մականունների:

Ընկերներ, ի նկատի ունեցեք, որ նման պարագաներում սխալ հաշուներից բիսող անհատական ներընչումներն ահագին դեր են խաղում և խաղա-ցել են...» («Արեւ», Հունիսի 13, 1918 թ.):

ԳԼՈՒԽ 24
ՌԱԶՄԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍԿԻԶԲԸ

Բաքվի սովետական զորքերի ամբողջովին հայերից կազմված առաջա-պահ կորպուսը (հրամանատար գնդապետ Ղազարով, շտաբի պետ՝ գնդա-պետ Ավետիսով) 1918 թ. Հունիսի 10-ին գերմանա-թուրքական զորքերի հարձակումը կասեցնելու նպատակով Հաջիկաբուլ_Ելիզավետպոլ ուղղու-թյամբ առաջ է շարժվում և Հունիսի 11-ին գրավում է Սաղիրլու կայարանը, որից մի քանի կիլոմետր հեռավորության վրա գտնվող Քերար կայարանում դիրքեր էր գրավել հակառակորդի առաջապահ զորաջոկատը: Երկու օրվա ընթացքում հաջող գործողություններ վարելով, սովետական զորքերը Հունի-սի 12-ին գրավում են Քյուրդամիրը: Այս մարտերում իր հմտությամբ աչքի է ընկնում գնդապետ Ավետիսովը:

Սովետական զորքերի ընդհանուր հրամանատարն էր ռազմական կոմի-սար Կորգանովը: Շահումյանը եռանդով մասնակցում էր ռազմական գործո-ղությունների պլանավորմանը, հաճախակի լինելով ռազմաճակատում:

*Հունիսի 16-ին Համազասպի հրամանատարությամբ գործող բրիգադի առաջապահ գումարտակը, որի կոմիսարն էր Անաստաս Միկոյանը, յոթ ժամ շարունակ մարտեր է մղել վրացիներից, մուսավաթական թաթարների զոր-քերից և դաղստանցիների ավազակախմբերից կազմված զորախմբի դեմ և գրավել է Կարամարյան հայկական գյուղը: Թշնամին, մեծ կորուստներ տա-լով, հեռացել է մարտադաշտից (**Ա. Միկոյան**, Պայքարի ուղիով, գիրք առա-ջին, եր. 1972, էջ181-205 և այլն; «**Արեւ**», Հունիսի 21, 1918 թ.):*

Հունիսի 18-ին, չհաշտվելով այդ պարտության հետ, թուրքական զորքե-րը ձեռնարկել են հուժկու գրոհ՝ կորցրած դիրքերը վերականգնելու նպատա-կով:

*Այդ օրը նորից աչքի են ընկել Համազասպի բրիգադի հայ զինվորները, որոնք հինգժամյա մարտից հետո թշնամուն ետ են շպրտել, նրան պատճա-ռելով 500 զինվորի կորուստ: Այդ հակագրոհի ժամանակ թշնամին մարտա-դաշտում թողել է երկու հրանոթ, երկու գնդացիր: Մարտում զոհվել է 5 կար-միրբանակային, վիրավորվել՝ 49-ը: Մութն ու մառախուղը խանգարել են ավարտին հասցնել թշնամու հետապնդումը: «Արեւ» թերթում հրապարակ-ված նամակում նշվում էր, որ Կարամարյան գյուղի մատույցներում մղված մարտի ժամանակ աչքի են ընկել գթության քույրեր Արաքսյան, Ժասմենը և Ժերեբկովան (վերջինս վիրավորվում է), («**Արեւ**», Հունիսի 28, 1918 թ.):*

Վ. Տերյանը Բաքվից Մոսկվա վերադառնալուց հետո այդ օրերին մղված մարտական գործողությունների մասին զեկուցել է Հայկական զորքերի կոմիսարիատում, առանձնապես ընդգծելով եղած դժվարությունները («Правда», 19. 07. 1918 г.):

Հունիսի 23-ին Բաքու է հասնում լատիշական հրաձիգների մի վաշտ 6 զրահապատ ավտոմեքենայով և անմիջապես մեկնում ռազմաճակատ («Արեւ», հունիսի 27, 1918 թ.):

Վերոհիշյալ ռազմական գործողություններից հետո, Բաքվի ուղղությամբ գտնվող թուրքական զորքերը, որոնք Էնվեր փաշայի կողմից համալրվել են 15 հազարով, հունիսի 27-ին Գյոկչայի և Քյուրդամիրի շրջանում ձեռնարկել են հակահարձակում: Զորս օրվա համառ մարտերից հետո, սովետական ուժերը, որոնց թիվը զգալիորեն պակասել էր (15 հազար զինվորից մնացել էր 8 հազարը), հարկադրված նահանջել է:

Այս մարտերի մասին իր զեկուցագրում Կորգանովը հայտնում էր, որ մի շարք անբարենպաստ հանգամանքների պատճառով սովետական զորքերը նահանջել են դեպի Կարամարյան գյուղ: Դրա հետևանքով հակառակորդը հնարավորություն է ստացել դուրս գալ շրջապատումից: «Կռիվը,- գրում էր Կորգանովը,- շատ համառ էր, գործը հասնում էր սվինամարտի: Սարսափելի շոգից նեղվելով, ջուր հասցնելու հնարավորությունից զրկված, զինվորները հասնում էին մինչև ուշաթափության աստիճան, սակայն խիզախորեն պաշտպանում էին իրենց դիրքերը՝ միաժամանակ գրոհի նետվելով: Միայն մի զրամասի ձախ թևում, հակառակորդի մեծաթիվ հեծելազորը շրջանցելու պահին, նահանջեց և դրանով ազդեց ամբողջ ճակատի վրա: Կորուստները երկու կողմից էլ զգալի են: Հակառակորդի շարքերում կանոնավոր թուրքական զրամասեր են» («Известия Бакинского Совета», 02. 07.1918 г.):

Այս ամենից հետո Բաքվի սովետական զինված ուժերը սկսել են պաշտպանական մարտեր մղել, որին մասնակցել են դեռևս հունիսի 23-ին Ս. Տեր Գաբրիելյանի բերած 4 զրահամեքենան և 13 օդանավը:

Երբ հակառակորդի հեծելազորը ստեղծել է շրջապատման վտանգ, սովետական զորքերը սկսել են նահանջել գրաված դիրքերից: Օգնության հասած զրահամեքենաներից մեկին հաջողվել է անցնել թշնամու թիկունքը և զգալիորեն թեթևացրել է վիճակը: Հուլիսի 1-ին հաջողվել է վերականգնել դրությունը և սովետական զորքերը նորից գրավել են Գյոկչան:

Բաքվի Ժողկոմսովետը հայտարարել է նոր զորահավաք: Պարտադիր զինակոչի են ենթարկվել բոլոր ազգությունների պատկանող 1893-1897 թթ. ծնված քաղաքացիները: Բանակը համալրելու հետ միասին ձեռնարկվել են այլ միջոցներ:

Վիճակն այսպիսին էր, երբ Բաքվի Ժողկոմսովետը համաձայնվում է ընդունել գնդապետ Բիչերախովի առաջարկությունը՝ մասնակցել թուրքական զորքերի դեմ մղվող մարտերին: Բիչերախովի զորագունդը՝ 1500 լավ զինված կազակներով, գալիս է Հյուսիսային Պարսկաստանից և հուլիսի 7-ին դիրք է գրավում Քյուրդամիրի ուղղությամբ: Իսկ Բիչերախովն էլ ստանձնում է սովետական զորքերի աջ թևի հրամանատարությունը: Ձախ թևի հրամանատարը մնում է Կորգանովը:

1918 թ. հուլիսի 7-ին հակառակորդի ուժերը հարձակվել են Քյուրդամիրի ուղղությամբ, ձգտելով այն գրավել: Մարտը տևել է 12 ժամ: Թշնամին մեծ կորուստներ կրելով նահանջել է մարտադաշտից:

Այս բոլոր մարտական գործողություններին սովետական զորքերի ձեռք բերած հաղթանակների մեջ մեծ էր հայ կարմիրբանակայինների մասնակցությունը, որոնք միավորվել էին Համազասպի հրամանատարությամբ գործող բրիգադում:

Հետագա օրերին սովետական զորքերը, հիմնականում հայկական զորաջոկատները կռվում էին արիաբար, նոր հաղթանակ են տանում Գյուջիվանի և Կկյուջարի մոտ: Թշնամին փախուստի է դիմել: Զինվորների մոտ այլևս չէր նկատվում բարոյալքում, նրանք լի էին հարձակումը շարունակելու վճռակամությամբ:

1918 թ. հունիսի 29-ին Բաքվի սովետի նիստում Մելիք-Յոլչյանը, նկատի ունենալով ռազմաճակատում ձեռք բերված հաջողությունները, իր ելույթում կենսական խնդիր համարելով ռազմաճակատի հետագա կազմակերպումը, ողջունել է այդ գործում Ժողկոմսովետի ձեռնարկած միջոցառումները և նրան հաջողություններ է ցանկացել «սովետական իշխանության դեմ հարձակվող թշնամու դեմ մղվող պայքարում» («Известия Бакинского совета», 04. 07. 1918):

Սակայն 1918թ. հուլիսի 12-ից հետո ամեն ինչ փոխվում է:

ԱՆԳԼԻԱԿԱՆ ՀՅՈՒՊԱՏՈՍԻ ԿԱԶՄԱԿԵՐՊԱԾ ՀԵՂԱՇՐՋՄԱՆ ՓՈՐՁԻ ՁԱԽՈՂՈՒՄԸ

Մինչ ընթանում էին մարտական գործողությունները, հունիսի 12-ին Բաքվում անգլիական հյուպատոսի ղեկավարությամբ կազմակերպվում է հեղաշրջման փորձ: Այդ հեղաշրջման նպատակն էր տապալել սովետական իշխանությունը և Բաքու հրավիրել անգլիական զորք: Սակայն սովետական իշխանության ձեռնարկած վճռական միջոցներով հեղաշրջման փորձը ձախողվել է, ղեկավարները ձերբակալվել են:

1918 թ. հունիսի 15-ին Բաքվի սովետում Շահումյանը զեկուցել է սովետական իշխանության դեմ հունիսի 12-ին կադետների կազմակերպած դավադրության մասին, կոնկրետ փաստերով ցույց է տվել, որ դավադիրները գործել են անգլիացիների թելադրանքով, նպատակ են ունեցել ձերբակալել Շահումյանին և Բաքու հրավիրել «ընկեր անգլիացիներին»:

Այնուհետև Շահումյանն անդրադարձել է Բիչերախովի հարցին, հրապարակել է նրա նամակն ուղղված Բաքվի Ժողկոմսովետին, որտեղ գրում էր, թե Ռուսաստանի փրկությունը տեսնում է սովետական իշխանության մեջ: Բիչերախովը սովետական իշխանության դեմ ամեն մի երույթ համարում էր «ոճրագործ դավաճանություն», հանցագործություն էր անվանում սովետական իշխանության սաբոտաժը:

Շահումյանի զեկուցումից հետո ելույթ են ունեցել Զևինը, Կուզնեցովը (բոլշևիկյան խմբակցություն), Օհանջանյանը, Մելիք-Յոլչյանը, Մարտիրոսյանը (դաշնակցության խմբակցություն), որոնք պաշտպանել են Շահումյանի առաջարկությունը:

Բաքվում սովետական իշխանության դեմ կազմակերպված դավադրության մասին Շահումյանի զեկուցման առթիվ ընդունված բանաձևում ասվում էր. «Լսելով ընկ. Շահումյանի զեկուցումը սովետական իշխանության դեմ դավադրության մասին, սովետը պահանջում է ամենախիստ և անինա դատաստան տեսնել հակահեղափոխականների նկատմամբ, ովքեր համարձակվել են ձեռք բարձրացնել սովետական իշխանության վրա և հարվածել ռազմաճակատում մարտնչող բանակի թիկունքին: Սովետն անհրաժեշտ է համարում ռազմա-հեղափոխական տրիբունային հանձնել ավանտյուրային խառնված անձանց և զգուշացնում է, որ ամեն մի հակահեղափոխական փորձ կճնշվի որևէ ռեպրեսիվ միջոցի առջև չկանգնելով: Սովետն անհրաժեշտ է գտնում ցրել ճակատայինների միությունը, զինաթափել նրա անդամներին և հանձնել ռազմա-հեղափոխական տրիբունային» (ՀՀ ԱԱ, ֆ. 1437, ց. 1, գ. 242, թ. 1; ց. 2, գ. 73, թ. 1; «Ազատ», հունիսի 29, 1918 թ.»):

Բաքվի սովետի ընդունած բանաձևում հավանություն էր տրվում Ժողկոմսովետի գործունեությանը (Ստ. Շահումյան, նույն տեղը, հ. Հինգերորդ, էջ 100-127):

Հունիսի 16-ին սովետի ընդունած բանաձևը Շահումյանը հեռագրով հաղորդել է Լենինին ու Ստալինին (Ստ. Շահումյան, նույն տեղը, հ. Հինգերորդ, էջ 128-129):

ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ՃՆՇՈՒՄԸ ԹՈՒԼԱՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ

Սովետական Ռուսաստանի կառավարությունը միջոցներ էր ձեռնարկում գերմանական ճնշումը թուլացնելու համար, նրան երաշխավորելով տրամադրել Բաքվի նավթի մի մասը: Այդ մասին է վկայում նախորդ էջերում հիշատակված 1918 թ. հուլիսի 7-ին Լենինի հեռագիրը Ցարիցինում գտնվող Ստալինին. «Բաքվի վերաբերմամբ ամենակարևորն է, որ դուք անդադար կապի մեջ լինեք Շահումյանի հետ, որպեսզի Շահումյանը իմանար գերմանացիների առաջարկը, որ արված է դեսպան Իոֆֆեին Բեռլինում այն մասին, որ գերմանացիները կհամաձայնեին կանգնեցնել թուրքերի հարձակումը Բաքվի վրա, եթե մենք երաշխավորենք գերմանացիներին տալ նավթի մի մասը: Մենք, իհարկե, կհամաձայնվենք: Այսպես, ուրեմն, եղեք անողոք ձախ էսէռների նկատմամբ և հաճախակի տեղեկացրեք» (Վ. Ի. Լենին, ԵԼԺ, հ. 50, էջ 132):

Լենինի հանձնարարության համաձայն Ստալինը հուլիսի 8-ին Շահումյանին հայտնել է հետևյալը. «Մեր ընդհանուր քաղաքականությունն Անդրկովկասի հարցում կայանում է նրանում, որպեսզի հարկադրենք գերմանացիներին պաշտոնապես ընդունել վրացական, հայկական և ադրբեջանական հարցերը որպես Ռուսաստանի ներքին հարցեր, որոնց լուծմանը գերմանացիները չպետք է մասնակցեն: Հատկապես այս պատճառով մենք չենք ճանաչում Վրաստանի անկախությունը, որն ակներևաբար Գերմանիայի թելադրածն է: Հնարավոր է, որ մենք ստիպված լինենք զիջել գերմանացիներին Վրաստանի հարցում, բայց այդ զիջումը մենք կանենք այն պայմանով, որ գերմանացիներն ընդունեն չմիջամտել Հայաստանի ու Ադրբեջանի գործերին»:

Այնուհետև Ստալինը հայտնում էր, որ գերմանացիները համաձայն են «մեզ թողնել Բաքուն և խնդրում են դրա փոխարեն մի որոշ քանակությամբ նավթ բաժին հանել իրենց՝ որպես «համարժեք»» (Ստ. Շահումյան, նույն տեղը, հ. Հինգերորդ, էջ 192):

Բայց, ինչպես արդեն նախորդ էջերում նշվել է, Գերմանիան չէր բավար-

բարվում Բաքվի նավթի մի մասը ստանալ, քանի որ կար հնարավորություն գրավել Բաքուն և դառնալ Բաքվի նավթի տերը:

Սովետական Ռուսաստանը Բաքվին հասցնում էր օգնություն որքան կարողանում էր: Նկատի ունենալով Ռուսաստանում ստեղծված վիճակը, պետք է ասել, որ նա ուղղակի ավելին անել չէր կարող: Այս հանգամանքը հատկապես եմ ընդգծում, նկատի ունենալով որոշ հեղինակների պնդումը, թե Սովետական Ռուսաստանը մտադրություն չուներ Բաքվին վճռական օգնություն ցույց տալ, նույնիսկ մեղադրանք ներկայացնելով սովետական որոշ գործիչներին, որոնք հանգամանքների բերումով կապ ունեին Բաքվին օգնություն կազմակերպելու հետ:

Որքան ռազմաճակատում սրվում էր իրավիճակը, այնքան էլ Բաքվում ուժեղանում էին անգլիացիներին հրավիրելու կողմնակիցները: Այս հանգամանքը նկատի ունենալով Շահումյանը Բաքվի սովետում 1918 թ. հունիսի 15-ին ասել է հետևյալը. «Քաղաքական որոշ խմբերի կողմից քաջալերվող բոլոր փողոցային խոսակցությունները պետք է անպայման դեն շպրտվեն: Մեզ համար պարզ է դառնում, որ անգլիացիների հանդես գալը ռազմական տեսակետից ոչ մի օգուտ մեզ չի տա, բայց նրանց հնարավորություն կտա ամրանալու այստեղ և Բաքու քաղաքը դարձնել երկրորդ Պարսկաստան»:

*«Եթե պարզ է,- ընդգծում էր Շահումյանը,- որ մենք չենք անգլիացիներին օգտագործելու մեր նպատակների համար, այլ անգլիացիներն են մեզ օգտագործելու իրենց նպատակների համար, ապա մեր կողմից մի անիմաստ քաղաքականություն կլիներ անգլիացիների գիրկը նետվել» (**Ստ. Շահումյան**, նույն տեղը, հ. հինգերորդ, էջ 122):*

Անգլիացիներին հրավիրելու կողմնակիցները Հյուսիսային Կովկասում և Վոլգայի շրջանում նույնիսկ լուրեր էին տարածել, թե Բաքվի սովետական իշխանությունն անգլիացիների հետ համաձայնություն է կնքել գերմանա-թուրքական ավազակախմբերի դեմ համատեղ պայքարելու համար և, որ անգլիական զորքերն արդեն հասել են Բաքու:

*1918 թ. հունիսի 21-ին Շահումյանը վերոհիշյալ տարածքներում գտնվող քաղաքների սովետներին, ինչպես նաև Լենինին ուղարկած ռադիոհեռագրում հերքել է այդ տարածված պրովոկացիոն լուրերը, ընդգծելով, որ «Բաքվի սովետական իշխանությունը Բաքուն միատեղ պաշտպանելու համար և այլ նպատակով անգլիացիների հետ ոչ մի համաձայնություն չունի և չի կարող ունենալ» (**Ստ. Շահումյան**, նույն տեղը, հ. հինգերորդ, էջ 135):*

Սովետական զորքերը մարտական գործողությունները վարում էին չափազանց ծանր պայմաններում: Քյուրդամիր-Եվլախ տարածքի ճահճային պայմանները ստեղծել էին մալարիայի տարածման վտանգ: Անտանելի շոգն ու ջրի պակասը զգալի էին: Բայց այսպիսի պայմաններում սովետական մարտիկները դրսևորում էին կամային բարձր հատկություններ, լի էին վճռակամությամբ, Շահումյանի գնահատմամբ «այդ բանակը իրեն հիանալի կերպով է պահում»:

1918 թ. հունիսի 23-ին Լենինին ուղարկած նամակում Շահումյանը նկարագրել է ռազմաճակատում ստեղծված վիճակը և հայտնել է հետևյալը. «Տեղեկությունների համաձայն մեր հակառակորդը բավական ուժեղ է: Եթե մենք մեր առջև ունենայինք միայն Ելիզավետպոլի ավազակախմբերին, որքան էլ նրանց թիվը մեծ լիներ, եթե նրանց նույնիսկ միանային բոլոր վրացական մենշևիկյան ուժերը,- նրանք սարսափելի չէին լինի մեզ համար: Մենք նրանց հախիցը կգայինք, նույնիսկ, եթե նրանց միանային թուրքական ուժերը: Բայց մեզ վախեցնում են գերմանացիները»:

Իսկ այդ ժամանակ գերմանական մի դիվիզիա Բաթումում ափ էր իջել և պատրաստվում էր շարժվել Բաքվի ուղղությամբ: Հետախուզության նպատակով երկու գերմանացի սպա համարձակվել էին օդանավով Թիֆլիսից հասնել Բաքու և վայրէջք կատարել քաղաքի մատույցներում: Բաքվի անվտանգության ուժերը ձերբակալել են այդ սպաներին, որոնք ներկայացնում են մանդատներ, թե լիազորված են տեղեկություններ հավաքել գերմանական և ավստրո-հունգարական ռազմագերիների մասին և նույնիսկ խնդրում են բենզին տալ Թիֆլիս վերադառնալու համար: Շահումյանի հանձնարարությամբ գերմանացի սպաները չորս մարդու ուղեկցությամբ տարվել են Մոսկվա:

*Վերոհիշյալ նամակում Շահումյանը հայտնում էր նաև հետևյալը. «Մեր դրությունը միջազգային տեսակետից իսկապես սոսկալի է: Անկախ Վրաստան, անկախ Ադրբեջան, որպես թե անկախ Հայաստան, Գերմանիայի պրոտեկտորատը, Թուրքիայի ձգտումը՝ զավթել Անդրկովկասն առանց ադրբեջանական անկախության և այլն և այլն- մյուս կողմից՝ անգլիացիները, այս բոլորը ստեղծում են մեզ համար մերթ նպաստավոր, մերթ վտանգավոր մոմենտների մի շատ բարդ կոմբինացիա» (**Ստ. Շահումյան**, նույն տեղը, հ. հինգերորդ, էջ 146-152):*

Ա. ԽԱՏԻՍՅԱՆԻ ՆԱՄԱԿԸ

Դեռևս 1918 թ. հունիսի 2-ին Բաթումից Ա. Ահարոնյանին ուղարկած նամակում Խատիսյանը գրում էր, որ Թուրքերը հույս ունեն, թե ստորագրվող պայմանագրով Բաքվից կէվակուացվեն հայկական զորաջոկատները: Բայց, եթե դա տեղի չունենա, հայտնում էր Խատիսյանը, ապա Թուրքերը զորք կուղարկեն Բաքու: «Մենք,- գրում է Խատիսյանը,- խնդրեցինք սպասել, մտածելով, որ կարելի է այնտեղից հայերին բաց թողնել գնալ իրենց տները» (ՀՀ ԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 23, թ. 64):

Իսկ հունիսի 3-ին, Բաթումի պայմանագիրը ստորագրելուց մեկ օր առաջ, Ա. Խատիսյանը Հայաստանի հաշտության պատվիրակության անունից Կովկասյան ռազմաճակատի օսմանյան զորքերի գլխավոր հրամանատար Վեհիբ փաշային հանձնել է հետևյալ նամակը. «Բաքվից հայկական ջոկատները էվակուացիայի ենթարկելու և քաղաքի արդյունաբերական մասերը հնարավոր պատահարներից զերծ պահելու նպատակով, որը հետաքրքրում է թե մուսուլմաններին, թե հայերին և վերջապես այդ հարցի վերջնական ու կատարյալ լուծման համար պատիվ ունեմ ձերդ գերազանցությանը խնդրելու, որ նախքան Բաքու թուրքական զորքեր ուղարկելը, բարեհաճի իր աջակցությունը մեզ ընձեռնել, թույլ տալով Հայաստանի կառավարության հատուկ հանձնաժողովին ազատորեն ու ապահով ճանապարհ դնելու մինչև Բաքու, որպեսզի միջոցներ ձեռք առնի և արագորեն հաջողացնի հայկական ջոկատների էվակուացումն այդ քաղաքից, ինչպես նաև օգնել այն հայերին, որոնք ցանկանում են Հայաստան գալ» (ՀՀ ԱԱ, ֆ. 200, ց. 1, 23, թ. 75ա):

Վեհիբ փաշան Խատիսյանի նամակին պատասխանել է, որ ինքը գոհունակությամբ է ընդունում Բաքու՝ Հայաստանի կառավարության կողմից «հատուկ հանձնաժողով ուղարկելը՝ հայկական զորքերը էվակուացիայի ենթարկելու և քաղաքն ու նրա արդյունաբերական շրջանները պատահական դեպքերից պաշտպանելու նպատակով» (ՀՀ ԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 23, թ. 162):

Հունիսի 10-ին Թիֆլիսի հայոց ազգային խորհուրդը Թուրքական հրամանատարությանը հայտնում էր, որ բոլշևիկների հետ բանակցելու համար Բաքու է գործուղել Միքայել Արզումանյանին և Մարտիրոս Հարությունյանին, որոնք փորձել են մուսուլմանական ազգային խորհրդի պատվիրակների հետ միասին անցնել Բաքու, բայց այդ հնարավորությունը չեն ունեցել և վերադարձել են» (ՀՀ ԱԱ, ֆ. 200, ց. 1, 23, թթ. 131ա, 163):

Այս մասին հունիսի 11-ին ուղարկված մի նամակում, որը Բաքու էր հասել հունիսի 28-ին, հայտնվում էր հետևյալը. «Տաճկաստանի առաջարկած պահանջների մեջ կայ նաև մի կէտ, որով պահանջում է, որ Հայկական կառավարությունը միջոցներ ձեռք առնի զինաթափ անելու Բաքում գտնված հայկական զորամասերը»:

Նամակագիրը տեղեկացնում էր նաև, որ հայկական կառավարությունը Թուրքերին հայտնել է, որ Բաքվում հայկական զորամասեր չկան, այլ կա միայն Կարմիր բանակ, որի նկատմամբ որևէ միջոց չի կարող կիրառել:

«Ջնայած դրան,- շարունակում էր նամակագիրը,- տաճիկներն այնուամենայնիվ առաջարկեցին Հայ ազգային խորհրդին կազմել 5 հոգուց բաղկացած մի պատգամավորություն Բագու ուղարկելու համար: Այդ պատգամավորությունը պիտի ուղարկվի Գանձակի և Շամախու վրայով Բագու»:

Ըստ նամակի հեղինակի «տաճիկները հաստատացնում են, որ իրենք չարփազանց լավ և մտադիկից ծանօթ են Բագվի մեծամասնականների ուժերի հետ, մանրամասնօրէն գիտեն նրանց դասաւորությունը և քանակը» («Արեւ», հունիսի 28 (15), 1918 թ.):

Իսկ հունիսի 30 (17)-ին «Արեւ» թերթը իր ընթերցողներին տեղեկացնում էր, որ Թուրքերի և մուսավաթականների պնդումով կազմակերպվել է 5 հոգուց բաղկացած մի պատգամավորություն, որն արդեն Թիֆլիսից ճանապարհվել է Գանձակի վրայով դեպի Բաքու «բանակցելու համար Կարմիր բանակը զինաթափ անելու և Բագուն յանձնելու Աղրբէջանին: Պատգամաւորութեան մէջ մտնում են՝ մի տաճիկ, 2 Թուրք և 2 հայ»:

Միաժամանակ թերթը հայտնում էր, որ պատգամավորները վաղուց են ճանապարհվել, բայց դեռևս Բաքու չեն հասել («Արեւ», հունիսի 30 (17), 1918 թ.):

Քյուրդամիր կայարանն ու գյուղը մինչև սովետական զորքերի կողմից գրավելը, այնտեղ էին հասել Վեհիբ փաշայի հանձնարարությամբ Հայաստանի կառավարության և Հայոց ազգային խորհրդի կազմած հանձնաժողովի անդամներ Միքայել (Միշա) Արզումանյանը և Մարտիրոս Հարությունյանը, որոնք մուսուլմանական ազգային խորհրդի ներկայացուցիչների ուղեկցությամբ պետք անցնեին Բաքու և այնտեղի Հայոց ազգային խորհրդին հանձնեին Բաթումի պայմանագրի 11-րդ հոդվածը կատարելու պահանջը:

Սակայն հունիսի 12-ին սովետական զորքերի տարած հաղթանակը և հակառակորդի փախուստը խանգարել են այդ հանձնաժողովին անցնել ռազմաճակատի գիծը և ձեռնունայն վերադարձել Թիֆլիս:

Կ. Պոլսում գտնվող պատվիրակության անդամներ Ահարոնյանն ու Խա-

տիսյանը ուշադրությամբ հետևում էին Բաքվից հայկական զորաջոկատները հեռացնելու խնդրին և մշտապես պահանջում էին իրականացնել Բաթումի պայմանագրով ստանձնած պարտավորությունը և այդ մասին իրենց տեղյակ պահել:

Կատարելով այդ պահանջը, 1918 թ. հունիսի 27-ին Թիֆլիսի Հայոց ազգային խորհրդից Կ. Պոլսում գտնվող պատվիրակությանը հայտնվել է հետևյալը. «...Համաձայն մեր յանձնառութեան՝ այստեղից Գանձակի վարյով թաթար պատուիրակների հետ ազգային խորհուրդը դէպի Բագու ուղարկեց Մ. Արզումանեանին և Մ. Յարութիւնեանին՝ հայ զօրամասերը Բագուից դուրս յանելու յանձնարարութեամբ: Նրանք վերադարձան անցեալ օրը, գնացել էին մինչև տաճիկ զօրքերի առաջատար դիրքերը՝ Միսիսլի կայարանը (Քիւրդամիրից այս կողմը)» (ՀՀ ԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 657 ա, թ. 13):

1918 թ. հուլիսի 25-ին իրենց ուղևորության մասին Մ. Արզումանյանն ու Մ. Հարությունյանը Թիֆլիսի Հայոց ազգային խորհրդին ներկայացրած զեկուցագրում գրել են. «Բաթումի դաշնագրով Բագուի վերաբերմամբ մեր յանձն առած պարտականութիւնը կատարելու նպատակով Ազգային խորհուրդը մեզ հրահանգեց Բագու գնալ: Ինչպես արդեն զեկուցել ենք, մեր առաջին ճանապարհորդութիւնն անյաջող անցաւ և մենք չը կարողացանք Բագու մտնել» (ՀՀ ԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 47, թթ. 2-4):

Հունիսի 27-ին Մ. Արզումանյանն ու Մ. Հարությունյանը Թիֆլիսի Հայոց ազգային խորհրդին հանձնած ավելի ընդարձակ զեկուցագրում հայտնում են իրենց ձախողված առաքելության մասին: Նրանք Գանձակում հանդիպել են Նուրի փաշային, խորհրդակցել նրա հետ, ստացել ցուցումներ և հունիսի 14-ին շարունակել են իրենց ճանապարհը: Սակայն հունիսի 15-ին Մուստալի կայարանում երբ պատրաստվում են ապիտակ դրոշակով անցնել ռազմաճակատի գիծը, թուրքական հրամանատար Նազիմ բեյը «անապատի կարգադրում է վերադառնալ, քանի որ բոլշևիկների վրա վստահ չէ և կարպանեն պատվիրակներին»:

Այնուհետև Արզումանյանն ու Հարությունյանը իրենց զեկուցագրում հայտնում էին հետևյալը. Նուրի փաշայի խնդրանքով «մեր միջնորդութեամբ անարիւն անցաւ Գանձակի հայութեան զինաթափումը: Մեր յորդորով Գանձակի շրջակայքի հայ գիւղերը, որոնց ոմբակոծութիւն էր սպառնում, թողտուին, որ քոչն անցնի» (ՀՀ ԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 23, թ. 179):

Հայ բնակիչները ենթարկվել են «համայն հայ ժողովրդի գործերը տնօրինող» Թիֆլիսի հայոց ազգային խորհրդի ներկայացուցիչներին և զենքերը

հանձնել են... թուրքերին: Կարճ ժամանակ անց, թուրք դահիճները հեշտությամբ հաշվեհարդար են տեսել զինաթափ եղած հայ բնակիչների նկատմամբ: Նրանցից շատ քչերին է հաջողվել փրկվելով անցնել Բաքու և Ղարաբաղ:

Որոշ ժամանակ անց, 1918 թ. նոյեմբերի 5-ին Հարությունյանն ու Արզումանյանը Հայաստանի Հանրապետության արտաքին գործոց նախարարին ուղղված զեկուցագրում նշել են, որ երեք անգամ փորձել են անցնել Բաքու, բայց չի հաջողվել: Հայտնում էին նաև, թե Վրաստանի, Ադրբեջանի կառավարությունները և թուրքական զորքերի հրամանատարությունը ինչքան ջանք էին գործադրում պատվիրակությունը Բաքու անցկացնելու համար:

Հարությունյանն ու Արզումանյանը գրում էին. «Մենք ունէինք յատուկ քաղաքական միսիա՝ իրագործել Բաթումի դաշնագրի 11-րդ յոդուածը» (ՀՀ ԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 47, թթ. 7-8):

Հանձնաժողովի ետ վերադառնալն առաջ է բերել Էսադ փաշայի (սա այն փաշան էր, որի դիվիզիան ջախջախվել էր Ապարանի ճակատամարտում) զայրույթը, որի վրա Վեհիբ փաշան դրել էր Բաքվում հայկական ջոկատների զինաթափման իրականացումը:

1918 թ. հուլիսի 3-ին Էսադ փաշան Հայոց ազգային խորհրդին ուղարկած նամակում դժգոհում էր, որ Արզումանովը չի կարողացել անցնել Բաքու Բաթումի պայմանագրի 11-րդ հոդվածի համաձայն այնտեղ գտնվող հայկական զորքերը դեպի Հայաստանի Հանրապետության տարածք դուրս բերելու համար և շարունակում էր. «Այդ հայկական զորքերը միացել են բոլշևիկներին, մշտապես հարձակվում են մեր զորքերի վրա: Ես ձեզ խնդրում եմ ձեռնարկել բոլոր հնարավոր միջոցները, որպեսզի ապահովել նշված զորքերի անջատումը բոլշևիկներից համաձայն հաշտության պայմանագրի բովանդակության և շտապ կարգով ընդունել արմատական ու համապատասխան միջոցներ մուսուլմաններին բռնություններից ու ավերածություններից ազատելու համար, հայկական զորքերը Հայաստանի խորքը տեղափոխելով» (ՀՀ ԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 657, թ. 35):

Հաջորդ օրը, հուլիսի 4-ին Էսադ փաշան նոր նամակով Թիֆլիսի Հայոց ազգային խորհրդից պահանջել է նորից ներկայացուցիչ ուղարկել Բաքու և գրել է հետևյալը. «Բաթումում կնքված պայմանագրով հայկական կառավարությունը պարտավորվել է իր ազդեցությամբ կանխել Բաքվում գտնվող հայերի ռազմական գործողությունները, որոնք միացել են բոլշևիկներին: Բայց այդ նպատակով Ելիզավետպոլ ուղարկված հայկական պատվիրակու-

թյունը, որին ուղեկցում էր կապիտան Հուսեյին էֆենդին, չի կարողանում անցնել Բաքու»:

Էսադ փաշան պահանջում էր նոր պատվիրակություն ուղարկել Բաքու, որպեսզի հայկական զորքերին հասցվի Բաթումի դաշնագրի 11-րդ կետի պայմանները կատարելու պահանջը (ՀՀ ԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 657, թ. 36):

Ապարանի ճակատամարտից մի կերպ ճողոպրած թուրքական փաշային Թիֆլիսի հայոց ազգային խորհուրդը 1918 թ. հուլիսի 4-ին պարտք է համարել տեղեկացնել հետևյալը. «Չնայած հայոց ազգային խորհուրդը երկար թուղթ և հեռագրի փակ լինելու հետևանքով այլևս կապ չունի Բաքվի և Ադրբեջանի այլ վայրերի հետ, այնուամենայնիվ, հաշտության պայմանագրի հիման վրա և հանուն արյունահեղության վերացման, մտահոգված է այն մտքով, որպեսզի ձեռնարկի իրենից կախված ամեն ինչ այդ հարցը կարգավորելու համար»:

Թուրքական փաշային հայտնվում էր նաև, որ «այդ նպատակով Հայոց ազգային խորհուրդը Բաքու է գործուղել Միքայել Արզումանովին և Մարտիրոս Հարությունյանին, բայց, դժբախտաբար, այդ գործուղումն ավարտվել է անհաջողությամբ, քանի որ հայկական պատվիրակությանը Քյուրդամիրի վրայով չի հաջողվել անցնել Բաքու»:

Այնուհետև պատասխանի հեղինակը շողոմաբար գրել է. «Համարձակվում եմ ձեզ, ձերդ գերազանցություն, վստահեցնել որ այն ամենը, ինչ կախված է ազգային խորհրդից, կկատարվի» (ՀՀ ԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 657ա, թ. 53):

1918 թ. հուլիսի 6-ին տեղի ունեցած Երևանի ազգային խորհրդի և թուրքական բանակի հանձնաժողովի միացյալ նիստում քննարկվել է Բաքվի ռազմաճակատից հայկական ուժերը հեռացնելու խնդիրը: Թուրքերի թելադրանքով որոշվել է. «Հայկական հանձնաժողովը խնդրում է կորպուսի հրամանատար գեներալ Նազարբեկովին հարուցված հարցի մասին գրավոր հրաման ուղարկել Բաքվի հայկական ուժերի պետին թուրքական հրամանատարության միջոցով»:

Վերջապես 1918 թ. հուլիսի 12-ին զինաթափվելու մասին նամակը մի ռուս գերու միջոցով հաջողվել է հասցնել Քյուրդամիրում կռվող հայկական զորաջոկատի հրամանատար Համազասպին:

Ռուս գերուն ռազմաճակատի գծով անցկացրել էր Գանձակի դաշնակցության ղեկավար Ս. Տեր-Իսրաելյանը, որին այդ ծառայության համար Նուրի փաշան պարգևատրել է թուրքական մեդալով (**նույն տեղը**):

Ռազմաճակատում գտնվող Շահումյանին հայտնի է դարձել վերոհիշյալ

փաստը և այդ մասին նա 1918 թ. հուլիսի 16-ին Բաքվի սովետի արտակարգ նիստում հայտնել է հետևյալը. «Օրերս ես եղա ռազմաճակատում, և դրությունն ինձ այնպես է պատկերանում, որ հակառակորդի ուժերը մերից ավելի չեն: ...Ստացված տեղեկությունների համաձայն՝ հակառակորդին չի հաջողվում փոքրիշատե կանոնավոր զորամասեր կազմակերպել: Տեղական բնակիչները հանդես են գալիս առանձին ավազակախմբերով, որոնք կարող են մեզ հասցնել երկաթուղուն հարձակումներ գործելով, բայց լուրջ գործողություններ չեն կարող կատարել: Դրա համար էլ հակառակորդը հարկադրված եղավ օգնություն խնդրել Նազիմ փաշայից»:

«Հենց այն ժամանակ էլ,- շարունակել է Շահումյանը,- Քիրարից մեզ հաղորդում էին, որ թուրքերի կողմից սպիտակ դրոշակով բանագնաց անցավ մեզ մոտ, բերելով մի ծրար, որի բովանդակությունը ես ձեզ առանձին կհայտնեմ ու խնդրեմ այն քննության առարկա դարձնել: Իսկ այժմ կասեմ, որ այդ բանագնացը Բալաջարիի սպաքավարն է: Նա մեր նահանջի ժամանակ քնած է եղել Քյուրդամիրի այգիներից մեկում և այդպիսով թուրքերի ձեռքն է ընկել» (**Ստ. Շահումյան**, նույն տեղը, հ. հինգերորդ, էջ 187):

Շահումյանը իր ելույթում հայտնել է այդ ռուս սպաքավարի հաղորդած տեղեկությունների մասին, որոնք հաստատվել են օդային հետախուզության միջոցով:

Այնուհետև Շահումյանն անդրադարձել է Սովետական Ռուսաստանից ստացվող օգնությանը, հայտնել է, որ Սարատով քաղաքում Բաքվի համար բեռնվում է 300 վագոն զենք ու զինամթերք, այդ թվում զրահապատ ավտոմեքենաներ, 20 միլիոն փամփուշտ:

Բաքվի պաշտպանության ժամանակ Համազասպի հրամանատարությամբ գործող բրիգադի գործողությունների մասին կազմված օրագրում Համազասպի անունով բանագնացի բերած նամակի մասին նշված է հետևյալը. «Նամակի բովանդակությունը մոտավորապես այսպիսին էր. «Հայաստանում պատերազմն ավարտվել է: Ձևավորվել է կառավարություն: Նրանք, որպես պատվիրակներ ուղարկվել են Բաքվի ազգային խորհուրդ և խնդրում են նրանց թույլ տալ մեր դիրքերով անցնել: Պատասխանը խնդրել են ուղարկել նույն ռուսի միջոցով: Ստորագրել են Միշա Արզումանով և Հարությունյանց»:

Այնուհետև օրագրում ասվում էր հետևյալը. «Գալիս է Շահումյանը, կարդալով նամակը, որոշեցին թույլ չտալ պատվիրակներին անցնել Բաքու և չհրապարակել նամակի բովանդակությունը, որպեսզի բանակում առաջ չբերվեն

պառակտում և խմորումներ: Քանի որ Հայաստանում պատերազմն ավարտվել է, ավելորդ ատիթ չտալ ագիտատորներին քարոզելու ռազմական գործողությունները դադարեցնելու մասին» (ՀՀ ԱԱ, ֆ. 121, ց. 2, գ. 94, թ. 18):

Ճիշտ է, բանագնացների նամակը չի հրապարակվում, Շահումյանն էլ հարկ չի համարում դրա բովանդակության մասին խոսել: Բայց բանագնացների բերած նամակը իր ազդեցությունը թողնում է բանակի հրամանատարների և առաջին հերթին Համազասպի, ինչպես նաև Բաքվի հայոց ազգային խորհրդի դաշնակցական ղեկավարների վրա, որը և ունենում է ճակատագրական նշանակություն:

Այստեղ հարկ եմ համարում նշել մի կարևոր իրողություն: Նախորդ էջերում նշվել է, թե Բաքվի Ժողկոմսովետ կազմելու ժամանակ ինչպիսի տարաձայնություն էր առաջացել բոլշևիկների և դաշնակցականների միջև: Սակայն թուրքական արշավանքի նախօրյակին այդ տարաձայնությունը ետին պլան է մղվել և բոլշևիկների գլխավորած Բաքվի Ժողկոմսովետի ու դաշնակցության ղեկավարների միջև հաստատվել է համերաշխություն՝ թշնամուն միասնական ուժերով դիմադրելու գործում: Դրա արդյունքով և ռազմաճակատում էր հաղթանակներ ձեռք բերվում և քաղաքի ներսում էր տիրում հանգիստ վիճակ:

Սակայն դրությունը սկսել է փոխվել այն պահից, երբ վերոհիշյալ բանագնացների բերած նամակը քննարկվել է Շահումյանի ու բանակի հրամանատարների մասնակցությամբ: Խախտվել է նաև ձեռք բերված պայմանավորվածությունը նամակը չհրապարակելու մասին:

«Արեւ» թերթն այդ իրողությունը ժխտելու նպատակով 1918 թ. հուլիսի 19-ին գրել է հետևյալը. «...Ցայտարարել, որ թուրքական բանակից Մ. Յարութիւնեանը և Մ. Արզումանեանը «բանակցութիւններ են վարում՝ Բագուի դաշնակցականների հետ», ստոր պրովոկացիա է: Արզումանեանը և Յարութիւնեանը Թիֆլիսի պաշտօնական հիմնարկութիւններից ուղարկած պատգամաւորներ են, որոնք դիմել են մեր զօրքերի հրամանատարներին՝ թոյլ տալ իրենց անցնել Բագու: Այդ մասին իմացել են ամենից առաջ բոլշևիկները, որոնք էլ իր հերթին յայտնել են դաշնակցականներին»:

«Դաշնակցութիւնը,- շարունակում էր «Արեւ»-ը,- ամենից ուժեղ պնդողն է եղել, որ ոչ Արզումանեանին, ոչ Յարութիւնեանին և ոչ էլ նրանց հետ եկած թուրք պատգամաւորներին չպիտի ընդունել: Եւ այսօր էլ յայտարարում ենք, որ այո, չպէտք է ընդունել ոչ մի պատգամաւորութիւն Թիֆլիսից, քանի մենք չենք կանգնեցրել այնտեղ Խորհրդային իշխանութեան կարմիր դրօշակը»:

(«Արեւ», Հուլիսի 19, 1918 թ.):

Այս օրերից էլ սկսած մի կողմից «Արեւ» թերթը, մյուս կողմից «Бакинский рабочий» թերթը վերականգնում են իրար դեմ անխնա քննադատական հոդվածներ տպագրելը, այդ կերպ բացահայտելով առաջացած հակասությունները, որոնք կապված էին անգլիացիներին Բաքու հրավիրելու և թուրքերի դեմ կռիվը դադարեցնելու խնդրին:

ԳԵՐՄԱՆԱ-ԹՈՒՐՔԱԿԱՆ ՀՐԱՄԱՆԱՏԱՐՈՒԹՅԱՆ, ԱԴՐԲԵՋԱՆԻ ԵՎ ՎՐԱՍՏԱՆԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՀԱՆՋԸ

Սակայն, պետք է նշել, որ թուրքական հրամանատարությունը չի բավարարվել Հայաստանի Հանրապետության կառավարության պահանջը Բաքվի ռազմաճակատում հերոսաբար կռվող հայկական զորաջոկատների հրամանատարներին հասցնելով:

1918 թ. հուլիսի 22-ին գերմանական գլխավոր շտաբի ավետաբեր սպան՝ օբեր-լեյտենանտ Պարագվիզն անցնելով ռազմաճակատի գիծը, գնդապետ Ղազարովին հայտարարել է, որ եկել է բանակցելու Բաքու քաղաքն առանց մարտի հանձնելու մասին:

Գերմանական սպան Ղազարովին է հանձնել գերմանական հրամանատարության նամակը, որտեղ ասվում էր հետևյալը. «Մեր անկեղծ ցանկությունն է ավելորդ արյուն չթափել: Մեզ հայտնի է թուրքերի նկատմամբ ձեր ունեցած առելությունը: Դրա համար էլ մենք՝ գերմանացիներս եկել ենք, որպեսզի ձեզ հավաստիացնենք, որ ձեր կողմից Բաքու քաղաքը հանձնելու դեպքում ձեր նկատմամբ ոչ մի անարդարություն և չարություն թույլ չի տրվի: Բաքվի հայերի կյանքը, ունեցվածքն ու ազատությունը կլինի անձեռնմխելի»:

Այնուհետև նամակում ասվում էր, որ գերմանացիները «պարտք են համարում, որ նրանք մեր հպատակներին (պարոն Նեելին և նրան շրջապատողներին) ժամանակին զգուշացրել ու հնարավորություն են տվել հեռանալ Բաքվից, երբ նրանց վտանգ է սպառնացել», որի համար իրենք պատրաստ են հայերին օգնել:

«Եթե դուք,- զգուշացնում էին գերմանացիները,- այս նամակի քաղաքը չեք ուզենա հանձնել առանց մարտի ու անմիտ վիճակում, ապա կլինի կռիվ:

Հայերի կյանքը և ունեցվածքը կոչնչացվի: Բայց իմացեք, որ դուք դրանով խաղում եք ոչ հայկական, ոչ ռուսական, այլ անգլիական քաղաքականություն»:

Այնուհետև նշվում էր, թե «Հայկական հանրապետությունը դա ընդունել է և մտել է Գերմանիայի հետ բարեկամական հարաբերությունների մեջ և Գերմանիան ձեռք է բերել Թուրքիայի համաձայնությունը, որպեսզի հայ փախստականները կարողանան ազատ և անվտանգ վերադառնալ հայրենիք»:

«Մենք,- ասվում էր նամակում,- ձեզանից պահանջում ենք միայն հետևյալը.

1. Անմիջապես հանձնել նավթային քաղաք Բաքուն:

2. Խաղաղություն և բարեկամություն:

Դրա փոխարեն մենք ձեզ խոստանում ենք,

1. Որ Բաքու քաղաքը չի լցվելու Թուրքական զորքերով և որ, եթե ձեզ ցանկալի է, Բաքու քաղաք տանող բոլոր ճանապարհների պահպանմամբ կարող են զբաղվել գերմանական զորքերը:

2. Քաղաքի բոլոր բնակիչների կյանքը, ունեցվածքը և ազատությունը կմնան անձեռնմխելի:

3. Վերջ կտրվի քաղաքի գնդակոծմանը:

4. Մեր կողմից փակված ջրագիծն անմիջապես կբացվի»:

Գերմանացիներն առաջարկում էին նաև իրենց նամակի պատասխանը հանձնել չեզոք հողի վրա՝ Քյուրդալանի ու Բալաջարի միջև և զգուշացնում էին. «Եթե դուք կհրաժարվեք մեր առաջարկությունից, ապա ամբողջ պատասխանատվությունն ընկնում է ձեր վրա: Այդ ժամանակ պարզ կլինի, որ հակառակ Հայաստանի հանրապետության խաղաղ մտադրություններին, Անգլիայի հրամանով ուզում եք թափել հայերի և ռուսների արյունը» (ՀՀ ԱԱ, ֆ. 223, ց. 1, գ.112, թ. 1; «Вперед», 09.03.1919):

1918 թ. օգոստոսի 31-ին Բաքվի հայոց ազգային խորհուրդը գերմանացիների վերոհիշյալ պահանջներին ուղարկած պատասխանում նախ տարակուսանք է հայտնել, թե ինչու է այդ դիմումը «հասցեագրված միայն հայերին» և ավելացրել է. «Չէ՞ որ ներկա պատերազմը մղում է Ռուսաստանը ի դեմս տեղի ռուսական իշխանության և ոչ թե քաղաքի բնակչության առանձին մասերը: Այս բոլորը, իհարկե, լավ հայտնի է հակառակորդին, բայց ակնհայտ է, որ ինչ-որ մեկին ձեռնտու է ամեն ինչ բարդել հայերի վրա, որպեսզի հարմար փաստարկ գտնել նրանց ոչնչացնելու համար»:

Բաքվի հայոց ազգային խորհուրդը կտրուկ բողոքում էր հայերի հասցեին պարունակող ահաբեկման դեմ, բայց իր պատասխան նամակում ոչինչ չի ասում քաղաքը հանձնելու կամ չհանձնելու մասին (ՀՀ ԱԱ, ֆ. 223, ց. 1, գ.112, թ. 2; «Вперед», 09.03.1919):

Գերմանա-Թուրքական հրամանատարությանը պատասխան նամակ ուղարկելու հետ միասին Բաքվի հայոց ազգային խորհուրդը Ա. Գյուլիսանդանյանի ստորագրությամբ Բաքվում գտնվող Մեծ Բրիտանիայի հյուպատոսին է հանձնել դիմում, որտեղ հայտնվում էր, թե ստացվել են առանց մարտի քաղաքը հանձնելու մասին նամակներ, որոնք պարունակում են հայ բնակչության հասցեին սպառնալիքներ:

«Մենք,-ասվում էր դիմումի մեջ,- այդ բոլոր դիմումները թողել ենք մինչև այժմ անպատասխան, քանի որ ամենքի համար պարզ է, որ դիմելը միայն հայերին աննպատակ ակտ է: Չէ՞ որ ներկա պատերազմը մղում է Ռուսաստանը ի դեմս տեղի սովետական իշխանության և ոչ թե քաղաքի բնակչության մի մասը»:

Այնուհետև նշվում էր, որ չի կարելի լռության մատնել գերմանա-Թուրքական հրամանատարության նամակի այն հատվածը, որտեղ ասվում էր. «Եթե դուք այդ նավթի քաղաքը չեք ուզում անմիջապես և առանց մարտի հանձնել, ապա կլինի կռիվ: Հայերի կյանքը և ունեցվածքը կոչնչացվի»:

«Այդպիսի սպառնալիքը,- ասվում էր Գյուլիսանդանյանի դիմումի վերջում,- ոչնչացնել ամբողջ հայկական բնակչությունը, պատերազմների պատմության մեջ չլսված դեպք է, որի համար մենք վճռականորեն բողոքում ենք ամբողջ աշխարհի առջև Թուրքական և հատկապես գերմանական հրամանատարության սպառնալիքի դեմ և խնդրում ենք ձեզ, պարոն հյուպատոս, այս մասին հայտնել ձեր թագավորական կառավարությանը, ինչպես նաև գերմանական և Թուրքական շտաբներին» («Вперед», 09.03.1919):

Միաժամանակ համանման դիմում է հանձնվում նաև Բաքվում գտնվող չեզոք տերությունների ներկայացուցիչներին:

Ադրբեջանի Հանրապետության արտաքին գործերի մինիստր Հաջինսկին Բաքվի հայոց ազգային խորհրդին ուղարկած երկրորդ նամակում դժգոհում էր, որ «Բաքվի հարցը խաղաղությամբ լուծելու շահերից» բխող իր առաջին նամակի պատասխանը չի ստացվել և գրում էր հետևյալը. «Չգիտեմ ինչով է ղեկավարվում կոմիտեն (նկատի ունի Բաքվի հայոց ազգային խորհուրդը- Վ. Պ.) և ինչի վրա է հույսը դրել: Իմ խղճի պարտքն եմ համարում գործադրել բոլոր ջանքերը և ասել հետևյալը. ինչ էլ որ լինի Բաքուն պետք է նվաճվի: Ոչ մի ուժ, լինի անգլիական, բոլշևիկյան, մենշևիկյան, չի կարող մեզ կանգնեցնել:

Ինձ, որպես բաքվեցի, հետաքրքրում է հայերի և մուսուլմանների փոխհարաբերությունների հարցը: Ժամանակն է ուշքի գալ: Դեռ ժամանակ կա կասեցնել հրդեհը»:

«Ես խնդրում եմ ձեզ հավատալ,- գրում էր նամակի վերջում Հաջինսկին,- որ ձեր բարձրացրած սպիտակ դրոշակը ձեզ անձեռնմխելիության լիակատար երաշխիք կտա: Ես իմ պատմական պարտքը կատարեցի: Մնացածը կախված է ձեզանից»:

Այդ նույն օրերին Բաքվի հայոց ազգային խորհրդի անունով ստացվում է Վրաստանի ներքին գործերի մինիստր Ռամիշվիլու ռադիոգիրը, որով նա հաղորդում էր իրեն հանձնված Թուրքական զինավոր հրամանատարության հետ համաձայնեցված ադրբեջանական կառավարության ներկայացուցիչներ Ջաֆարովի և Մելիք-Ասլանովի միջնորդության հետևյալ պայմանները.

«1. Անվերապահորեն ճանաչել Ադրբեջանական հանրապետության իշխանությունը:

2. Հանձնել քաղաքը, նավթահանքերը, պետական և հանրային ամբողջ ունեցվածքը:

3. Հանձնել հրետանին:

4. Ադրբեջանական կառավարությունը իր կողմից երաշխավորում է բնակչության ունեցվածքի ու անձնական անձեռնմխելիություն, բոլոր ցանկացողներին տրվում է իրավունք ազատ կերպով արտահանել իրենց բեռը»:

Ռամիշվիլին պահանջում էր, որ վերոհիշյալ պայմանները քննարկելուց հետո անհապաղ իրեն հայտնել ազգային խորհրդի կարծիքը և նաև տեղեկացնել՝ Բաքու պատվիրակություն ուղարկել, թե ոչ (ՀՀ ԱԱ, ֆ. 223, ց. 1, գ.112, թ, 3; **«Вперед»**, *28.03.1919):*

Այսպիսով պարզ է դառնում, որ Բաքուն պաշտպանող հայկական զորամասերը ռազմաճակատից հեռացնելու, Բաքուն Թուրքերին հանձնելու գործում Թիֆլիսի հայոց ազգային խորհուրդը, Հայաստանի Հանրապետության կառավարությունը, Ադրբեջանի մուսավաթական կառավարությունը, Վրաստանի մենշևիկյան կառավարությունը և գերմանա-Թուրքական զորքերի հրամանատարությունը գործում էին միասնաբար, ունենալով մեկ նպատակ՝ տապալել սովետական իշխանությունը և Բաքուն հանձնել Թուրքերին:

ԱՆԳԼԻԱՑԻՆԵՐԻՆ ՀՐԱՎԻՐԵԼՈՒ ՀԱՐՑԸ

Շուտով Բաքվում ստացվում են լուրեր անգլիական զորքերի Էնզելի հասնելու մասին: Օգտվելով դրանից Էսէռա-մենշևիկյան բլոկը սկսել է եռանդով քարոզել անգլիացիներին Բաքու հրավիրելու մասին: Գերմանա-Թուրքական զորքերի դեմ ռազմական գործողություններ վարելու փոխարեն, նրանք ինչպես քաղաքում, այնպես էլ ռազմաճակատում տանում էին քայքայիչ աշխատանք, բնակիչներին ու զինվորներին համոզելով, թե Բաքուն կարելի է փրկել միայն անգլիացիներին հրավիրելու միջոցով:

1918 թ. հուլիսի 16-ին Բաքվի սովետում ունեցած վերոհիշյալ ելույթում Շահումյանը նորից ուշադրությունը բևեռել է անգլիացիներին հրավիրելու հարցի վրա և հայտարարել է. «Անգլիացիներին հրավիրելը, մեզ զգալի ուժեր չտալով կռիվը շարունակելու համար, միայն կարող է Բաքուն դարձնել Անգլիայի սեփականություն և Ռուսաստանի համար Բաքուն կկորչի ընդմիշտ»:

Շահումյանը քննադատել է այն անսկզբունք նացիոնալիստական կուսակցություններին, որոնք «կարող են փոխել իրենց կողմնորոշումը, այսօր լինել ռուսական, վաղը՝ գերմանական, մյուս օրը՝ անգլիական կողմնորոշման կողմնակից»:

Բայց, ընդգծել է նա, հեղափոխական պրոլետարիատի, նավաստիների և կարմիրբանակայինների կուսակցությունը չի կարող կանգնել այդպիսի տեսակետի վրա: Այդ կուսակցությունը նկատի առնելով Բաքվի «հատուկ կարևոր նշանակությունը» չի բացառում այլ կուսակցությունների հետ համատեղ գործողությունների հնարավորությունը:

«Այդ ուղղությամբ,- ասել է Շահումյանը,- մենք որոշ զիջումներ կանենք մինչև որոշ սահման՝ մինչև որ կկարողանանք հանուն սովետական հեղափոխության պաշտպանել Բաքուն և Անդրկովկասը, ***այլ ոչ թե տալ նրա համար, որպեսզի փրկենք այստեղ գտնվող բնակչության մի մասի գոյությունը»:*** *(ընդգծումն իմն է - Վ.Պ.):*

«Եթե դուք,- շարունակել է Շահումյանը,- հրավիրեք անգլիացիներին ու մի կողմ քաշվեք մեր նշած ճանապարհից, ապա Ռուսաստանի կառավարությունը կարող է միայն ափսոսալ այն ուժերը, որ նա տրամադրել է Բաքվին՝ հեղափոխությունը պաշտպանելու և ոչ թե նրա համար, որպեսզի այդ միջոցներից օգտվեն սովետական իշխանությունը ցրելու, բոլշևիկներին գնդակահարելու համար»:

Շահումյանը իր ելույթն ավարտել է համոզմունք հայտնելով. «Մենք չենք

*կարող հանձնվել օտարերկրյա իմպերիալիստների ձեռքը, մենք կպայքարենք մեր անկախության համար ու կպաշտպանենք այն մեր ուժերով: Այս դեպքում մենք առանց անգլիացիների օգնության էլ բավականաչափ ուժ ունենք» (**Ստ. Շահումյան**, նույն տեղը, հ. հինգերորդ, էջ 178-195):*

Բաքվի սովետն ընդունել է անգլիացիներին չհրավիրելու մասին Շահումյանի առաջարկած բանաձևի նախագիծը:

Այժմ կամենում եմ ընթերցողի ուշադրությունը հրավիրել իմ կողմից ընդգծված Շահումյանի վերոհիշյալ խոսքերի վրա: Ինչպես երևում է, Շահումյանը որևէ ժողովրդի անուն չի տալիս, այլ միայն օգտագործում է «բնակչության մի մասը» արտահայտությունը:

Որոշ հեղինակներ ու քաղաքական գործիչներ, ինչպես անցյալում և հատկապես մեր օրերում, իրենց կորպորատիվ գաղափարախոսական շահերից ու նպատակներից ելնելով, Շահումյանի այս արտահայտության մեջ տեսնում են հայերին և դրա վրա հիմնվելով, Շահումյանին մեղադրում են ու նրան են վերագրում հեղափոխության հաղթանակի համար հայ ժողովրդին զոհաբերելու մտադրությունը:

Քիչ է, եթե ասեմ, որ արատ ու սրբապղծություն է այսպիսի մտադրություն վերագրել Շահումյանին, մի մարդու, որն իր ամբողջ գիտակցական կյանքը նվիրաբերել է սեփական ժողովրդի գոյատևման մեծ գործին:

Դաշնակցության զանգվածներից Շահումյանին վերոհիշյալ քննադատողները «մոռանում են», որ, իրենց կուսակցությունը, երբ թուրքերի առջև բացում էր Բաքվի ճանապարհը, հաշվի չէր առնում Բաքվի հայերի անվտանգության ապահովումը: Հակադարձելով նրանց, չեմ սխալվի, եթե ասեմ, որ իրականում այդ կուսակցությունը հանուն Բաքվում սովետական իշխանության տապալման, խաղաքարտի վրա է դրել Բաքվի հայ բնակչության ճակատագիրը, նաև իր խղճին է ծանրացած 30 հազար հայերի ոչնչացման մեղքը: Սա է դառը ճշմարտությունը:

Բաքվի «Известия» թերթը հուլիսի 19-ին առաջին էջի վրա հրապարակում է Շահումյանի գրած «Ընկեր բանվորներին, նավաստիներին, կարմիրբանակայիններին և Բաքու քաղաքի բոլոր բնակիչներին» ուղղված կոչը:

«Ժողովրդի թշնամիները, ասում էր այդ կոչում,- կամենում են օգտվել ռազմահակատում ժամանակավոր անհաջողությունից, որպեսզի անգլիացիների աջակցությամբ տապալեն բանվորա-գյուղացիական սովետական իշխանությունը:

Անգլիական գործակալներն ու վարձկանները տանում են մութ, պրովոկացիոն, հակասովետական ագիտացիա: Նրանք պահանջում են Բաքու հրավիրել անգլիացիներին իբր թե ռազմահակատի պաշտպանության համար, բայց իրականում Գերմանիայի դեմ պատերազմ հրահրելու միջոցով ցանկանում են հանքերը, գործարաններն ու ֆաբրիկաները բուրժուազիային վերադարձնել, նավթն ու բենզինն անգլիացիներին հանձնել, բանվորներին սանձահարել, Բաքվի սովետական իշխանությունը ոչնչացնել, հակահեղափոխական չեխոսլովակների հետ կապվել և խեղդել սովետական, սոցիալիստական հանրապետությունը»:

*Դիմումը կոչ էր անում. «Հեռու քշեք անգլիացիներին ծախված հուդաներին, ժողովրդի դավաճաններին: Կորչեն անգլիական գիշատիչ-իմպերիալիստներն ու նրանց ստոր լաքեյները» (**«Известия»**, 6 (19 (. 07. 1918):*

*Ջնայած Բաքվի սովետի վերոհիշյալ որոշմանը, Բաքվի հայոց ազգային խորհուրդը Ժողկոմսովետի նախագահ Շահումյանից գաղտնի, , մենշևիկների և էսէռների համաձայնությամբ, անգլիական հյուպատոսի երաշխավորությամբ, ազգային խորհրդի անդամ, երդվյալ հավատարմատար, դաշնակցական Սերգեյ Տեր-Ղազարյանին ուղարկել է Էնզելի՝ գեներալ Դենստերվիլի հետ բանակցելու Բաքվի պաշտպանության համար անգլիացիներին հրավիրելու մասին (*Архив русской революции*, том 9, ст. 129):*

Այդ մասին գեներալ Բագրատունին վկայել է, որ Բաքվի հայոց ազգային խորհուրդն անգլիացիների հետ բանակցությունները սկսել է վարել մարտյան դեպքերից հետո, երբ մայիս ամսին Պարսկաստան է գործուղվել Տեր-Ղազարյանը, որը հանդիպել է գեներալ Դենստերվիլին: Անգլիական գեներալը խոստացել է հուլիսի սկզբին ոչ պակաս մեկ դիվիզիա ուղարկել Բաքու:

*Բաքվի հայոց ազգային խորհրդի ներկայացուցիչներ Մ. Տեր-Պողոսյանը և Սարգիս Արարատյանը նույն կերպ հունիսին մեկնել են Էնզելի և հանդիպել են անգլիացիների հետ: Նրանց անգլիացիներն ասել են, թե «մեզ հայերը պետք են միայն սկզբում, հետո ամեն ինչ կվերցնենք մեր վրա» (**նույն տեղը**):*

*Գեներալ Բագրատունին հայտնում էր, որ Բաքվի հայոց ազգային խորհուրդն անգլիացիների հետ բանակցությունները վարում էր առանց Բաքվի Ժողկոմսովետի և Շահումյանի գիտության ու թույլտվության: Նա գրել է, որ բոլշևիկները հենց սկզբից, մինչև իրենց իշխանության վերջը, դեմ են եղել անգլիացիներին հրավիրելուն (**նույն տեղը**):*

Գեներալ Բագրատունին վկայում էր նաև, որ այդ ժամանակ Բաքվում

գտնվող տիկին Զապել Եսայանը ևս մասնավոր կերպով խոսել է անգլիացիների հետ, որոնք խոստացել են Բաքվում իրենց զորքը հասցնել 40 հազարի (ՀՀ ԱԱ, ֆ.1267, ց. 1, գ. 94, թ. 68):

Իսկ Բաքվի դաշնակցականները հայտարարում են ի լուր աշխարհի, որ «դաշնակցությունը չէ, որ հրավիրում է անգլիացիներին, այլ բոլշևիկների ստեղծած այլանդակ կարգերը, աննորմալ պայմանները» («Արև», հուլիսի 19, 1918 թ.):

ԳՆԴԱՊԵՏ ԱՎԵՏԻՍՈՎԻ ՊԱՀԱՆՋԸ

Բանագնացի միջոցով Երևանից ստացված հրահանգը ճակատագրական դեր է խաղում:

Հայկական զորաջոկատների հրամանատարներ Համազասպը, Ավետիսովը և Ղազարովը Բաքվի ազգային խորհրդի ղեկավարներ Ս. Մելիք-Յոլչյանի և Ա. Գյուլխանդանյանի հետ համաձայնության գալով, փոխում են իրենց դիրքորոշումը:

Ավետիսովը պահանջել է բարձրացնել սպիտակ դրոշակ և թուրքերի հետ սկսել հաշտության բանակցություններ:

Ավետիսովն իր այս քայլն արդարացնում էր, ասելով, «եթե չհաշտվենք, ապա թշնամին կոչնչացնի Բաքվի 160 հազար քրիստոնյա բնակչությանը»:

Մինչ այդ ռազմաճակատում թուրք զավթիչներին հերոսաբար դիմադրող հայկական զորաջոկատներում հրամանատարների ցուցաբերած վախկոտությունը և թուրքերի դեմ կռիվը դադարեցնելու մտադրությունն առաջ է բերել խոր բարոյալքում: Այս մասին 1918 թ. հուլիսի 20-ին Շահումյանը հայտնել է Ստալինին (**Ստ. Շահումյան**, նույն տեղը, հ. հինգերորդ, էջ 198):

Իսկ հուլիսի 23-ին Շահումյանը Լենինին հաղորդել է հուլիսի 20-ի վիճակով ռազմաճակատում տիրող դրության մասին: «Դավաճանական հանգամանքների պատճառով բրիգադի հրամանատար Համազասպի՝ նահանջի վերաբերյալ բոլորովին անտեղի հրամանից հետո մեր բանակը նահանջեց սկզբում մինչև Շամախի, այնուհետև ավելի»:

Այնուհետև Շահումյանը տեղեկացրել է, որ «Известия» թերթում անգլիասիրական ագիտացիայի խիստ քննադատության պատճառով Բիչերախովը հրաժարվել է բանակի հրամանատարությունից, որը ժամանակավորապես հանձնված է շտաբի պետ Ավետիսովին: Շահումյանը հեռագրի վերջում նշում էր. «Անհրաժեշտ է ռազմական օգնություն ուղարկել Ռուսաստանից, այլապես դրությունը կարող է անհուսալի դառնալ» (**Ստ. Շահումյան**, նույն տեղը, հ. հինգերորդ, էջ 201):

Իրավիճակն ավելի է սրվել, երբ անգլիական հրամանատարության հանձնարարությամբ գործող Բիչերախովը լքելով ռազմաճակատը, հեռացել է իր զորամասով («Известия», 10 (23). 07. 1918):

«...ԱՆԳԼԻԱԿԱՆ ՈՍԿԻՆ ՎԱՂՈՒՑ ԱՇԽԱՏՈՒՄ Է ԲԱՔՎՈՒՄ»

Անգլիացիներին Բաքու հրավիրելու կողմնակից ուժերը եռանդով գործում էին ինչպես ռազմաճակատում, այնպես էլ թիկունքում: Բաքվում կազմակերպված միտինգների մասնակիցներին նրանք համոզում էին, թե ուրիշ այլ ելք չկա Բաքուն թուրքական զորքերից պաշտպանելու համար, բացի անգլիացիներին հրավիրելուց: Անգլիացիներին հրավիրելու կողմնակիցները նույնիսկ չէին խորշում և հայտարարում էին, թե սովետական իշխանությունը փրկելու համար անգլիացիներին հրավիրելը դարձել է անհրաժեշտություն:

Հուլիսի 22-ին այդպիսի միտինգներից մեկն էլ տեղի է ունեցել Կասպիական ռազմական նավատորմիղի նավաստիների և ծառայողների մասնակցությամբ: Միտինգի մասնակիցների առջև հանդես է եկել Գ. Կորգանովը: Նա ներկայացրել է ռազմաճակատում տիրող իրավիճակը, ընդգծել է, որ բոլոր հնարավորությունները կան թուրքերին ոչ միայն դիմադրելու, այլև ետ շպրտելու համար:

Կորգանովը նշել է նաև, որ եղած ուժերով Բաքվի սովետական իշխանությունը ի վիճակի է առանց անգլիացիների հրավիրելու իրեն պաշտպանել: Միաժամանակ նա հիշեցրել է, թե Սովետական Ռուսաստանից ինչքան օգնական ուժ է ժամանել և էլի ինչ ուժերի են սպասում:

Կորգանովից հետո ելույթ են ունեցել ձախ էսէռների կողմից Վեզիրովը և բոլշևիկների կողմից նավաստի Մարգարյանը, որոնք պաշտպանել են Կորգանովի փաստարկները և նավաստիներին կոչ են արել չհավատալ բոլոր նրանց, ովքեր փրկությունը տեսնում են անգլիացիներին հրավիրելու մեջ:

Նավաստիների մոտ որոշակի ազդեցություն ունեցող աջ էսէռների անունից հանդես է եկել Եվանգուլյանը և կոչ է արել պաշտպանել անգլիացիներին հրավիրելու օգտին ներկայացված բանաձևը: Երկար բանավեճից հետո նավաստիների միտինգը 121 ձայնով, ընդդեմ 7-ի ընդունել է անգլիացիներին հրավիրելու օգտին բանաձևը:

Ստեղծված այսպիսի պայմաններում, 1918 թ. հուլիսի 24-ին, հրապարակվում է Շահումյանի գրած Բաքվի ժողկոմսովետի կոչը՝ ուղղված բան-

վորներին ու կարմիրբանակայիններին: «Վայրենի Թուրքիան,- ասում էր կոչում,- մեր դեմ է շարժել իր զորքերը: Բաքվի պրոլետարիատը, զենքի տակ կանգնելով, դուրս եկավ այդ զորքերի դեմ և մի շարք հերոսական մարտերում ապացուցեց, որ ինքը կարող է կռվել ու մեռնել հանուն հեղափոխության»:

Այնուհետև նկատի ունենալով վերջին օրերին կրած պարտությունը, կարծես հույս էր հայտնում, որ դա հուսահատություն չի առաջացնի և չպետք է թույլ տալ, որ թշնամին մտնի Բաքու:

«Ո՛չ, ընկերներ, ընդգծում էր Շահումյանը,-մեր մեջ չի գտնվի այնպիսի դավաճան, որը համարձակվի առաջարկել զենքը ցած դնել և անձնատուր լինել թուրքական արհամարելի բռնադատիչներին: Մենք դեռ թարմ զորքեր ունենք ռազմաճակատում: Մենք դեռ կարող ենք մեր շարքերից նոր գումարտակներ ստեղծել: Բացի դրանից՝ հենց նույն հոգնած ու նահանջած ջոկատները, մի փոքր հանգստանալուց և ուշքի գալուց հետո, նորից հրացան կվերցնեն ու կկռվեն թշնամու դեմ»:

Նկատի ունենալով, որ անգլիական ոսկին «վաղուց աշխատում է Բաքվում», Շահումյանը մատնացույց էր անում նրանց, ովքեր բարեկամների անվան տակ ստորաբար դավաճանում են, դարձել են անգլիական իմպերիալիստների կողմնակիցներ: Նա գրում էր. «Ե՛վ անգլիական ոսկով կաշառված գիտակից դավաճանները, և՝ նրանց անգիտակից սպասարկուները, այսպես կոչված սոցիալիստական կուսակցություններից,- նրանք բոլորն էլ այն մասին են խոսում, թե անգլիական իմպերիալիզմը լավ է թուրքականից, ուստի և մենք պետք է Բաքու հրավիրենք անգլիացիներին»:

«Անգլիական ստոր ագիտացիան,- զգուշացնում էր Շահումյանը,- բարձրյալքում է մեր զորքերը և սպանում է ինքնագործունեության ոգին պրոլետարիատի մեջ»:

Շահումյանը հիշեցնում էր, որ երբ սեյմը ենթարկվելով թուրքերի պահանջին հայտարարում է Անդրկովկասի անկախություն, դա դավաճանություն էր, երբ վրացական մենշևիկները վճռում են, թե գերմանական իմպերիալիզմը թուրքականից լավն է և Վրաստան են հրավիրում գերմանացիներին, նույնպես դավաճանություն է: «Եվ հիմա,-ընդգծում էր Շահումյանը,- մեզ առաջարկում են հենց նույնպիսի դավաճաններ լինել այստեղ, Բաքվում, մեզ առաջարկում են հրաժարվել Ռուսաստանից և Բաքուն, Ռուսաստանի ամբողջ արդյունաբերության այս կենտրոն ներվը, հանձնել անգլիացիների ձեռքը»:

Կոչը դիմում էր բոլոր նրանց, ովքեր կողմնակից են սովետական իշխանությանը, ովքեր դեմ են Բաքուն անգլիական իմպերիալիստների ձեռքը հանձնելուն, ովքեր չեն կարող դավաճաններ հանդիսանալ, համախմբել բոլոր ուժերը և կարգի հրավիրել «չափ ու սահման անցած ավանտյուրիստներին»:

Բաքվի պրոլետարիատին կոչ էր արվում «վերջ դնել անգլիացիների օգտին մղվող դավաճանական ագիտացիային և, համախմբվելով իր հեղափոխական սովետի շուրջ, ուժեր պատրաստելու թշնամուն հակահարված տալու և մեր ազատությունն ու անկախությունը պաշտպանելու համար»:

Շահումյանը գրում էր. «Ռուսաստանը մեզ հայրաբար միլիոններով դրամական միջոցներ է տալիս, միլիարդների զենք է տալիս մեզ, սկսել է կենդանի օգնություն ուղարկել մարդկանցով:

Մենք կարող ենք նոր պահանջներ առաջադրել մեր եղբայրներին Ռուսաստանում, բայց օտարերկրյա զորքեր չպետք է մտցնենք մեր երկիրը:

*Մենք հնարավորություն ունենք նոր գումարտակներ կազմակերպելու մեր միջից: Եթե Բաքվի պրոլետարիատը հեղափոխական է ոչ միայն խոսքով, այլև գործով, նա մենակ հաջողությամբ կկարողանա պաշտպանել Բաքուն Ռուսաստանի համար» (**Ստ. Շահումյան**, նույն տեղը, հ. հինգերորդ, էջ 202-205):*

ԳԼՈՒԽ 25
«ՉԵՄ ԿՐՆԱՐ ԱՅՍ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՆ ՀԱՆԴՈՒՐԺԵԼ...»

Տարօրինակ, նաև անբացատրելի քաղաքականություն էր վարում Բաքվի հայոց ազգային խորհուրդը: Բաքուն Թուրքերից պաշտպանելու միակ ուժեղ և հավատարիմ ուժը հայկական զինված ջոկատներն էին, որոնք հերոսաբար կռվում էին Թուրք զավթիչների դեմ և լի էին հաղթանակի հասնելու վճռականությամբ:

Բայց ենթարկվելով Թուրքիայի թելադրանքով գործող Հայաստանի Հանրապետության կառավարության ղեկավարների պահանջին, ինչպես նաև Վրաստանի, Ադրբեջանի կառավարությունների և գերմանա-Թուրքական հրամանատարության ճնշմանն ու խոստումներին, հայկական ջոկատների հրամանատարներն ու Բաքվի հայոց ազգային խորհրդի ղեկավարները բարձրացրին սպիտակ դրոշակ և հրաժարվեցին Թուրքերի դեմ կռվելուց՝ Բաքվի ճանապարհը բացելով նրանց առջև:

Միաժամանակ այդ նույն հրամանատարներն ու ազգային խորհրդի ղեկավարները, դադարեցնելով Թուրքական զորքերին դիմադրելը, միացել էին նրանց, ովքեր պահանջում էին Բաքուն Թուրքերից պաշտպանելու համար հրավիրել անգլիացիներին:

Բայց միայն դա չէր:

Հայաստանի Հանրապետության կառավարությունը միջոցներ էր ձեռնարկում Թուրքերի թելադրանքով ստանձնած Բաթումի պայմանագրի 5-րդ հոդվածի պահանջը կատարելու համար:

Նորից հիշեցնեմ այդ հոդվածը: «Հայաստանի Հանրապետությունը պարտավորվում է գործուն կերպով հակազդել որպեսզի ոչ մի բանդա չկազմավորվի և չգինվի իր տարածքի սահմաններում, ինչպես և զինաթափել ու ցրել բոլոր բանդաները, որոնք կփորձեն թափանցել այնտեղ»:

Այսպես, Թուրքիայի թելադրանքով պայմանագրում նշված «բանդաների» հիշատակումը վերաբերում էր ինչպես Անդրանիկի զորաբանակին, այնպես էլ հայկական այն կամավորական ջոկատներին, որոնց մասնակցությամբ Սարդարապատի ու Ապարանի ճակատամարտերում ջախջախվել էին Թուրքական դիվիզիաները:

Այն օրերին, երբ Հայաստանի Հանրապետության դաշնակցական ղեկավարները դարձել էին երիտԹուրքերի հլու կամակատարը և միջոցներ էին

ձեռնարկում Բաքվի ռազմաճակատից հայկական ուժերին հեռացնելու մասին նրանց թելադրած ստորացուցիչ պայմանագրի 11-րդ հոդվածի պահանջները կատարելու համար, երբ Համազասպն ու մյուսները դրան համապատասխան պահանջում էին սպիտակ դրոշակ բարձրացնել ու հանձնվել Թուրքերին, այդ նույն ժամանակ Նախիջևանում գտնվող Ժողովրդական հերոս Անդրանիկ Օզանյանը բոլորովին ուրիշ կերպ էր գործում:

Անդրանիկի այդ գործունեությունը հասկանալու համար ավելորդ չեմ համարում ընթերցողին շատ համառոտ հիշեցնել հետևյալը:

1918 թ. մայիսի վերջին Անդրանիկը իր ջոկատով գալիս է Դիլիջան և պատրաստվում է հարձակվել և Ղարաքիլիսան ազատագրել Թուրք զավթիչներից: Սակայն հունիսի 2-ին ստացվում է տեղեկություն Թուրքերի հետ հաշտվելու մասին և Անդրանիկին արգելվում է կատարել իր մտադրությունը:

Անդրանիկը 1918 թ. հունիսի 2-ին գեներալ Նազարբեկովին, Կաթողիկոսին և Երևանի ազգային խորհրդին ուղարկում է իր հայտնի հեռագիրը, որտեղ գայրացած գրում է հետևյալը. «Վեց հարիւր տարվան ստրկութեան շղթան դարձեալ ձեր վիզն ու ուրքը կ'անցնենք ձեր ձեռքով: Չեմ կրնար այս պայմաններուն հանդուրժել մոռնալով մեր երեսուն տարեան զոհերը եւ մէկ միլիոն նահատակները» (**Զօրավար Անդրանիկ կը խօսի**, էջ 26-27):

Ընդունելով Բաթումի պայմանագիրը, Անդրանիկը հեռանում է Դիլիջանից և մեկնում է Նոր Բայազետ, որտեղ փոքր ինչ դադար առնելուց հետո, հունիսի 10-ին Ղարանլուղի (այժմ Մարտունի) վրայով, անցնում է Դարալագյազ, հետո՝ Նախիջևան: Այստեղից նա Ջուլֆայի վրայով հունիսի 23-ին հասնում է Խոյ:

ԷՆՎԵՐ ՓԱՇԱՅԻ ՊԱՀԱՆՋԸ

Այն ժամանակ, երբ Անդրանիկը պատրաստվում էր անցնել Ջուլֆայի վրայով, Էնվեր փաշան Հայաստանի կառավարության ղեկավարներից պահանջում է պայմանագրի 5-րդ հոդվածի հիման վրա կասեցնել Անդրանիկի շարժումը և ոչնչացնել նրան:

Ի պատասխան այս պահանջի, 1918 թ. հունիսի 17-ին Հայաստանի Հանրապետության ղեկավարները հետևյալ հեռագիրն են ուղարկում Էնվեր փաշային:

«17 հունիսի, 1918 թ., Երևանից

Հեռագիր

Նորին գերազանցություն մեծարգո Օսմանյան կառավարության զինվորական մինիստր Էնվեր փաշային

Կոստանդնուպոլիս

Հայաստանի Հանրապետության կառավարությունը պատիվ ունի հայտնելու ձերդ գերազանցությանը, հանուն մեր բարեկամության, իրազեկ դարձնելու ձեզ այն մասին, որ Անդրանիկ փաշան խուսափել է մեր կառավարությունից, իմանալով, որ զինվորական դատի պիտի ենթարկվի մեր զինվորական մինիստրին չենթարկվելու համար:

Անդրանիկ փաշան տաճկահպատակ հայերից կազմել է առանձին զորաբանակ, նպատակ ունենալով անցնել Ջուլֆայի կամուրջը և Խոյի ու Սալմաստի շրջանում միանալ Վանից նահանջող ժողովրդին: Նա մտադիր է ուժեղ բանակ կազմել, ստեղծել սեպարատ պետություն և հարձակվել ձեր վրա: Խնդրում ենք միջոցներ ձեռք առնել նրան վերջնականապես ջախջախելու համար:

Հայաստանի Հանրապետության կառավարության նախագահ՝ Հ. Քաջազնունի

Հայաստանի Հանրապետության զինվորական մինիստր՝ Արամ փաշա Մանուկյան

Հայաստանի կառավարության խորհրդի նախագահ՝ Սահակյան» (Զ. Ա. Պետրոսյան, Առաջին համաշխարհային պատերազմը և արևմտահայությունը 1914-1916 թթ., Եր. 1965, էջ 213):

Ընթերցողին եմ թողնում այս հեռագրի հեղինակներին գնահատական տալը:

ԳԵՆԵՐԱԼ ՆԱԶԱՐԲԵԿՈՎԻ ՀՐԱՄԱՆԸ

Անդրանիկը մտադրություն ուներ մեկնել Բաղդադի ուղղությամբ, միանալ անգլիական զորքերին և շարունակել կռիվը թուրքերի դեմ:

Սակայն, Անդրանիկին չի հաջողվել իրականացնել իր ծրագիրը, հանդիպելով թուրքերի ուժեղ դիմադրությանը: Նա հարկադրված հուլիսի 7-ին վերադարձել է Նախիջևան, ամբողջ ճանապարհին թուրքական առանձին ջոկատների հետ զինված ընդհարումներ մղելով:

Մինչ այդ, 1918 թ. հուլիսի 6-ին Հայկական կորպուսի հրամանատար գեներալ-լեյտենանտ Նազարբեկովը հրապարակել էր հետևյալ հրամանը. «Նկատի ունենալով իմ մարտական հրամաններին Անդրանիկի կողմից բաղ-

մաթիվ անգամ չկատարելը և հունիսի 5-ին Դիլիջանի շրջանից նրա ջոկատի ինքնակամ հեռանալը հակառակ իմ հրամանի՝ մնալ այդ շրջանում մինչև փոխարինողների ժամանումը, ես ընդունում եմ, որ ինչպես անձամբ Անդրանիկը, այնպես էլ նրա ջոկատը ոչ միայն ընդհանուր գործին օգուտ չեն բերել, այլ, ընդհակառակը, մնասում են մշտական թալանով, խաղաղ բնակչության նկատմամբ բռնություններ կիրառելով, մշտապես մարտական հրամանները չկատարելով:

Նկատի ունենալով շարադրվածը, հրամայում եմ Անդրանիկի ջոկատը հուլիսի 6-ից հեռացնել ինձ վստահված կորպուսի զորքերի կազմից» (ՀՀ ԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 112, թ. 17):

Հուլիսի 13-ին Անդրանիկը գալիս է Ապրակունիս գյուղ: Այստեղ Ղարաբաղի ազգային խորհրդի անդամներից մեկն Անդրանիկին հայտնում է Ելիզավետպոլի ուղղությամբ ընթացող ռազմական գործողությունների, թուրքերի կողմից Գանձակը գրավելու և դեպի Բաքու արշավելու, Ղարաբաղի համար վտանգ ստեղծելու մասին:

Ստեղծված իրադրությունը հաշվի առնելով, Անդրանիկը որոշում է անցնել Ղարաբաղ, թիկունքից հարվածել Բաքվի ուղղությամբ հարձակվող թուրքական զորքերին և թեթևացնել Բաքվի պաշտպանների վիճակը (Ծ. Գ. Աղայան, Հայ ժողովրդի ազատագրական պայքարի պատմությունից, Եր. 1976, էջ 619):

Միաժամանակ Անդրանիկին հայտնի էր դարձել, որ թուրքերը ձգտում են գրավել Նախիջևանը և այնտեղից Զանգեզուրի վրայով անցնել Ղարաբաղ, դուրս գալ Գանձակ ու միանալ Բաքվի ուղղությամբ հարձակվող զորքերին:

Եվ արդեն Նախիջևանում գտնվող Անդրանիկը, որին միացել էր Վանից վերադարձող ռուս զինվորների ջոկատը, կարողացել է կասեցնել թուրքերի արշավանքը, և ձախողել նրանց մտադրության իրականացումը: Այդ մասին Ակբանդրապոլում գտնվող Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացուցիչ Մ Մուսինյանին է հայտնել Քյազիմ Կարաբեքիրը, ընդգծելով, որ «Անդրանիկը Ջուլֆայի գծի վրա ընդհարում է ունեցել թուքական զորքի հետ» և պահանջել է նրա դեմ վճռական միջոցներ ձեռնարկել (ՀՀ ԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 30, թ. 72):

Մուսինյանը նաև գրում էր, որ իր «կարծիքով Անդրանիկի կատարած գործի կապակցությամբ Նազարբեկովը պիտի պատասխանի, որ Անդրանիկն արդեն հայ զորամասերի շարքերից հանված է»: Մուսինյանն ավելացնում էր, որ այդ մասին թուրքերին տեղեկացրել են (ՀՀ ԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 30, թ. 72):

Չկարողանալով զենքի միջոցով Անդրանիկին դուրս մղել Նախիջևանից,

երիտթուրքական կառավարությունը Հայաստանի Հանրապետության կառավարությանը հիշեցնում է 5-րդ հոդվածի մասին և խստորեն պահանջում դա անհապաղ կատարել, այն է՝ ոչնչացնել Անդրանիկին կամ նրան հանձնել իրենց, ծայրահեղ դեպքում ստիպել նրան հեռանալ Նախիջևանից:

*Թուրքական այս պահանջի կապակցությամբ գեներալ Նազարբեկովը Հայաստանի Հանրապետության ղեկավարների ցուցումով Ալեքսանդրապոլում գտնվող թուրքական զորքերի հրամանատարությանը ուղարկում հետևյալ հեռագիրը. «Հայտնեցեք թուրքական ընդհանուր հրամանատարին, որ զորավար Անդրանիկը ինքնագլուխ կը կռվի Նախիջևանի, Խոյի եւ Ջուլֆայի շրջաններուն մէջ: Մենք անոր ըրածներուն եւ ոչ մէկին պատասխանատու չենք, մեզի հետ ոչ մէկ կապ չունի ան» (**Զօրավար Անդրանիկի Կովկասեան ճակատի պատմական օրագրութիւնը**, 1914-1917, Պոսթոն, 1924, էջ 127):*

ԱՀԱՐՈՆՅԱՆԻ ՈՒ ԽԱՏԻՍՅԱՆԻ ՀԵՌԱԳՐԵՐԸ

*Սփյուռքի նշանավոր գրող, ազգային և հասարակական գործիչ Գերսամ Ահարոնյանը իր «Մեծ երազին ճամփուն վրայ» արժեքավոր գրքում անդրադառնալով Կ. Պոլիս մեկնած Հայոց պատվիրակության վարքագծին, նշել է, որ նրա անդամները ոչ միայն համաձայնվել են Բաթումի ստորացուցիչ պայմաններին, այլև պարտավորվել են պատերազմ մղել Թուրքիայի հակառակորդների դեմ: Այդ հակառակորդներից մեկն էլ Անդրանիկն էր, քանի որ «ազգային հերոսը կը մերժէր ընդունել Պաթումի «տիկտաթը» եւ արեւմտահայ դատին գերեզմանումը» (**Գերսամ Ահարոնեան**, Մեծ երազին ճամփուն վրայ,Պէյրութ, 1964, էջ 112):*

Էնվեր փաշայի հանձնարարությամբ Ահարոնյանը 1918 թ. հունիսի 28-ին Կ. Պոլսից Հայոց ազգային խորհրդին և Հայաստանի Հանրապետության վարչապետ Քաջազնունուն ուղարկել է հետևյալ հեռագիրը. «Կովկասյան ռազմաճակատի օսմանյան հրամանատարությունը հայտնում է կառավարությանը, որ հայկական զորքերը խոչընդոտում են երկաթուղով թուրքական զորքերի անցմանը: Հաղորդելով մեզ այդ մասին, օսմանյան կառավարության ներկայացուցիչներն առաջարկում են միջոցներ ձեռնարկել խուսափելու անօգուտ ընդհարումներից ու միջադեպերից: Խնդրվում է անհապաղ ստուգել տեղի ունեցե՞լ են այդպիսի փաստեր և ո՞ր շրջանում, շտապ տալով անհրաժեշտ ցուցումներ դադարեցնելու օսմանյան զորքերի դեմ ամեն մի թշնամական գործողություն» (ՀՀ ԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 657, թ. 17ա):

Զբաղարարվելով այս հեռագրով, Ահարոնյանը հունիսի 29-ին ուղարկում է նույն հասցեներով հետևյալ հեռագիրը. «Հեռագրեցեք, իսկապե՞ս

հայկական զորքերը կամ ավազակախմբերը դիմադրություն են ցույց տալիս թուրքական զորքերի տրանսպորտին... Անհրաժեշտ է ձեռնարկել բոլոր միջոցները տվյալ պահին խուսափելու ընդհարումներից ու թյուրիմացություններից, մանավանդ որ մենք Բաթումի պայմանագրով իրավունք չունենք դիմադրել թուրքական զորքերի տրանսպորտին, ինչը որ մեր բարձրագույն հրամանատարությանը պետք է լավ հայտնի լինի» (ՀՀ ԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 657, թ. 8):

Օգոստոսի 1-ին Ահարոնյանի և Խատիսյանի ստորագրությամբ Երևանում ստացվել է հետևյալ հեռագիրը. «Խնդրում ենք անհապաղ բանակցություն վարել Էսադ փաշայի հետ Երևան-Բաթում ուղիղ գծով հեռագրական կապ հաստատելու համար: Օսմանյան կայսերական կառավարությունը հավանություն է տալիս այս նախագծին: Կայսերական կառավարությունը բողոքում է, որ Անդրանիկն ու նրա մարդիկ անհանգստացնում են թուրքական զորքերին: Խնդրվում է ստուգել և վճռական միջոցներ ձեռնարկել, որպեսզի վերջ տրվեն այդ անցանկալի փաստերին, եթե դրանք իսկապես տեղի են ունեցել» (ՀՀ ԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 657, թ. 107ա):

Բաթումի պայմանագրի և վերոհիշյալ հեռագրի պահանջով էլ գեներալ Նազարբեկովը արձակել է վերոհիշյալ հրամանը՝ Անդրանիկի կամավորական գունդը ցրելու մասին:

ԱՆԴՐԱՆԻԿ ՕԶԱՆՅԱՆԻ ՀՐԱՄԱՆԸ

Ի պատասխան Նազարբեկովի պահանջի, 1918 թ. հուլիսի 30-ին, արդեն Զանգեզուրում գտնվող Անդրանիկն արձակել է հետևյալ հրամանը.

«Հայկական առանձին հարուածող Աղրիաղի (այսպես է գրված հրամանում-Վ.Պ.) սպայակոյտին և զինտրներին.

1. Նկատի ունենալով Երևանի հայկական հանրապետության քաղաքական, ռազմական և տնտեսական մեզ համար անհրաժեշտ հանգամանքները.

2. Նկատի ունենալով, որ տաճկական և հայկական կառավարությունների հաշտության պայմանագրով պէտք է հայկական կառավարությունը ունենայ մէկ դիվիզիա զօրքից ոչ ավելի, թուրքական զինտրական իշխանության պահանջմամբ զինսթափ պիտի արվի ամբողջ Աղրիատը, որպէս տաճկահայ առանձնայատուկ մէկ զորամաս.

3. Նկատի ունենալով, որ զինաթափ լինելուց յետոյ տաճկահայ գաղթականության և զօրամասերու ֆիզիկական գոյութիւնը վտանգվում է, առաջարկում եմ.

1. Զը գնալ Հայկական Հանրապետության սահմանների մէջ և ոչ մի

պայմանով զինաթափ չը լինել, առանց եւրոպական և հայկական պետութեանց գարանդիայի:

2. Այն զինուորները, որոնք գտնում են իրենց ֆիզիքական ապահովութիւնը Երևանի նահանգում, և նրանք, որոնք ինչ-ինչ պատճառներով չեն ուզում շարունակել իրենց զինուորական ծառայութիւնը, այդպիսիները կարող են հեռանալ Ադրիատից:

3. Նրանք, որոնք պիտի մնան Ադրիատի մէջ և պէտք է շարունակեն իրենց զինուորական ծառայութիւնը, պէտք է ենթարկին զինուորական խիստ դիսցիպլինի, կատարելով ամէն մի զինուորական հրաման սրբութեամբ:

4. Երբ գարանդիան տրուեց և երաշխաւորուեց եւրոպական պետական յայտնի անձնաւորութիւններով և ներկայացուցիչներով, այդ դէպքում միայն կարող եմ շարժուել իմ ցոյց տուած վայրը, ուր ապահովուած կը լինի թրքահայ գաղթականութեան և զօրամասերու ֆիզիքական և բարոյական գոյութիւնը:

5. Այս պայմանները չընդունելու դէպքում հարկադրուած եմ յանուն թրքահայ վերջին մնացած բեկոր գաղթականութեան և զօրամասերու ֆիզիքական և բարոյական ապահովութեան, զէնքը վայր չը դնել մինչեւ վերջին շունչ» (ՀՀ ԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 112, թ. 8):

ԱՆԴՐԱՆԻԿԻ ՀԵՌԱԳԻՐԸ ՇԱՀՈՒՄՅԱՆԻՆ

Ստեղծված պայմաններում Անդրանիկը համոզվում է, որ այն իրական ուժը, որին կարելի է ապավինել, դա Սովետական Ռուսաստանն է, որի հետ կապվելու միակ հնարավոր միջոցը Բաքվի կոմիսարների իշխանությունն է Ստեփան Շահումյանի գլխավորությամբ:

1918 թ. հուլիսի 14-ին Անդրանիկը հրավիրել է ռազմական խորհուրդ և խորհրդակցելով իր մարտական ընկերների հետ, հրապարակել է հետևյալ հրամանը.

«1. Այս օրվանից ես իմ ջոկատով ամբողջապես ենթարկվում եմ ռուսական կենտրոնական կառավարության, անցնում նրա տրամադրության տակ:

2. Նախիջևանի գավառը ռուսական հանրապետության անքակտելի մասն է համաձայն Բրեստ-Լիտովսկի հաշտության պայմանագրի»:

Այնուհետև Անդրանիկը Նախիջևանի գավառում մտցրել է ռազմական դրություն և անկախ ազգությունից, բոլոր բնակիչներից պահանջել է անհապաղ զինաթափվել: Նա վճռական միջոցներ է ձեռնարկում թուրքական և մուսավաթական գործակալներին մերկացնելու և չեզոքացնելու համար:

Անդրանիկը դավաճաններ և օրենքից դուրս էր համարել բոլոր նրանց, ովքեր չեն ճանաչի Սովետական Ռուսաստանի կառավարության իշխանությունը և կոժանդակեն նրա թշնամիներին:

Անդրանիկն իր համար վերջնականապես բացառված էր համարում վերադարձը դեպի դաշնակցության կուսակցություն, որի ղեկավարությունը Բաթումի պայմանագիրը կնքելուց հետո այլևս ոչ մի հեղինակություն չուներ:

Եվ այն ժամանակ, երբ Բաքվի ռազմահակատում գտնվող հայկական ջոկատների հրամանատարները պահանջում էին սպիտակ դրոշակ բարձրացնել և Բաքուն հանձնել թուրքերին, 1918 թ. հուլիսի 14-ին ստացվում է Շահումյանի անունով Նախիջևանի Ապրակունիս գյուղում գտնվող Անդրանիկի հեռագիրը: Ահա այդ հեռագիրը.

«Կովկասի գործերի կոմիսար Շահումյանին:

Անառարկելիորեն ենթարկվելով Բրեստ-Լիտովսկի պայմանագրին, Նախիջևանի գավառը, ուր ներկայումս գտնվում եմ իմ ջոկատով, հայտարարում եմ Ռուսաստանի Հանրապետության անբաժանելի մասը:

Խնդրում եմ հայտնել ում հարկն է, որ ես իմ ջոկատով այսօրվանից գտնվում եմ Ռուսաստանի կենտրոնական կառավարության տրամադրության տակ և ենթարկվում եմ նրան:

Կաշխատեմ արգելակել թուրքական զորքերի մուտքը Նախիջևանի գավառ: Սպասում եմ պատասխանի և կարգադրության: Գեներալ-մայոր՝ Անդրանիկ»:

Անդրանիկի այս հեռագիրը հրապարակվել է 1918 թ. հուլիսի 18-ին «Бакинский рабочий» *թերթում ճիշտ այն օրերին, երբ հայկական ջոկատների հրամանատարներին էր հասել սպիտակ դրոշակ բարձրացնելու և ռազմահակատից հեռանալու պահանջը:*

«Бакинский рабочий» *թերթն Անդրանիկի հեռագիրը հրապարակելու կապակցությամբ գրել է նաև հետևյալը. «Ինչպես հայտնի է, Պարսկաստանի սահմանակից Նախիջևանի գավառը Հայաստանի և Թուրքիայի միջև կնքված պայմանագրով անցնում է վերջինիս: Բայց, այնուամենայնիվ, այնտեղ թուրքեր չկան: Այնտեղ, մեզնից հեռու ընկած այդ անկյունում, ժողովուրդն իրեն կապված է զգում բանվորա-գյուղացիական Ռուսաստանի հետ: Այնտեղ գյուղացիները, հին հեղափոխական-պարտիզան Անդրանիկի գլխավորությամբ, սովետական այդ անկյունը պաշտպանում են թուրքերի արշավանքից»:*

Թերթը նաև ընդգծում էր, որ մի բուն նախիջևանցիներ ի վիճակի են կասեցնել թուրքերի արշավանքը և անգլիացիների օգնության կարիքը չունեն: «Նրանք,- հայտնում էր Թերթը,- քիչ են, բայց ուժեղ են: Նրանք ուժեղ են նրանով, որ չունեն բարի բարեկամներ մենշևիկներից, էսէռներից և դաշնակցականներից: Նրանք այլասերված չեն բուրժուազիայի անբարոյական վարձկանների կողմից» («Бакинский рабочий», 19. 07. 1918 г.):

Պետք է նշել, որ Անդրանիկի հեռագիրը Շահումյանին և վերջինիս պատասխանը «Бакинский рабочий» թերթում հրապարակվել է այն օրերին, երբ անգլիացիներին Բաքու հրավիրելու կողմնակիցները բուռն գործունեություն էին ծավալել ոչ միայն քաղաքում, այլև ռազմաճակատում: Նրանք ամեն ինչ անում էին նսեմացնել Անդրանիկին և բարձրացնում էին անգլիական զորքերի հաղթական ուժի նշանակությունը:

Ցավով պետք է նշել, որ այդ գործին ներքաշվել էր նաև այդ օրերին պատահական բերումով Բաքվում գտնվող Հրաչյա Աճառյանը: «Արև» թերթը հուլիսի 18-ին հրապարակել էր Անդրանիկի հեռագիրը Շահումյանին: Իսկ հաջորդ օրը, 1918 թ. հուլիսի 19-ին «Արև» թերթում Աճառյանը հրապարակել է «Անդրանիկի հեռագիրը» խորագրով ծավալուն հոդվածը:

Իր հոդվածի սկզբում Աճառյանը գրել է, թե «Անդրանիկի հեռագիրը մեզ ասում է շատ բան», որի վրա հարկ է համարում հրավիրել ընթերցողի ուշադրությունը:

Վկայակոչելով Պարսկաստանում տարածված անգլիական թռուցիկները, Աճառյանը գրել է, որ թուրքերն անցել են Ջուլֆայի վրայով Թավրիզ և այնտեղ հայտարարել են, «թէ իրենց յաջորդ ծրագիրն է Արդաբիլի և Աստարայի վրայով անցնել դէպի Կասպից ծով և թիկունքից հարուածել Բագուն»:

Սրանից էլ ելնելով Աճառյանը կասկածանքի տակ է դրել Անդրանիկի հեռագրում հայտնված տեղեկության իսկությունը: Աճառյանը գրում էր. «Անդրանիկի հեռագիրն ասում է, թէ Ջուլֆան և Նախիջևանի գաւառը ոչ միայն տաճիկների տիրապետութեան տակ մնած կամ գրաւած չէ՝ համարձայն հայ-տաճկական հաշտութեան պայմանագրին, այլև արգելած է տաճկական զօրքերի մուտքը դէպի Նախիջևանի գաւառի սահմանները»:

«Որեմն ի՞նչ եղաւ Ջուլֆա և Թաւրիզ արշաւած տաճկական բանակը,- շարունակում էր Աճառյանը,- որ թիկունքից Բագուն պետք է հարուածէր: Նա ոչ միայն գոյութիւն չունի այլևս Թաւրիզում, այլև գոյութիւն չունի Ջուլֆայում, հակառակ պարագային նրա առաջին գործը պիտի լիներ խլել Ջուլֆայի անթեղ հեռագրի կայանը և ցրել Անդրանիկի զօրախումբը»:

Եվ Աճառյանը եզրակացնում էր. «Բայց ոչ միայն այդպիսի բան տեղի ունեցած չէ, այլ ընդհակառակը, Անդրանիկը իբր տէր ու տիրական խօսում է իր բանակի մասին, որը պիտի արգելէ թուրքերի մուտքը դէպի Նախիջևանի գաւառի սահմանները»:

Այնուհետև Աճառյանը դնում էր հետևյալ հարցը. «Ինչ պատճառով են թուրքերը հրաժարվել Բաքուն թիկունքից հարվածելու իրենց ծրագրից և «Ջուլֆայից էլ աւելի հեռու քաշուել»:

Եվ Աճառյանը եզրակացրել է, գրելով, թե դա անգլիական ուժն է, որ «քշել է տաճիկներն Պարսկաստանից, թեև է տալ հայ մարտիկներին (նիմթապէ՞ս թէ բարոյապէս, այդ մեզ յայտնի չէ), լարելու իրենց ուժերը մաքրելու իրենց սահմանների շրջանը տաճիկների ապատակութիւններից»:

Այսպիսով Աճառյանը նսեմացնում էր Անդրանիկի դերը թուրքերի ներխուժումը դեպի Նախիջևան և Ջուլֆա կասեցնելու գործում, դա վերագրում էր միայն անգլիական ուժին և այդ կերպ հիմնավորում Բաքուն պաշտպանելու համար անգլիական ուժին ապավինվելու, անգլիացիներին հրավիրելու գաղափարը:

Հոդվածի վերջում Աճառյանը գրել է. «Մեր առաջ կանգնած է ուրեմն ամենաղժւար խնդիրը. մեր առաջն է տաճիկների կազմակերպած ոյժը, աշխատենք մենք էլ, լարենք մեր ուժերը և եթէ յաջողի մեզ վանել այս կողմից էլ թշնամուն, կարող ենք ասել, որ Կովկասի փրկութեան ժամը հնչել է»:

Աճառյանի հոդվածի կապակցությամբ հարկ եմ համարում նշել, որ Անդրանիկը հաջողությամբ կասեցրել է թուրքական առաջապահ զորամասերի մուտքը Նախիջևան: Միաժամանակ թուրքերի դեպի Պարսկաստան շարժվելը կասեցվել է ոչ թե անգլիական ուժի կողմից, այլ Ակբասանդրապոլի դեպոյի մեքենավար ռուս Վինոգրադովի անձնազոհ սխրանքի շնորհիվ, որի մասին հաղորդել է նաև «Արև» թերթը:

Վինոգրադովին ստիպել են տեղափոխել թուրքական զինվորներին՝ զենքով ու զինամթերքով Սարիղամիշ-Ակբասանդրապոլ գծով դեպի Ջուլֆա: Ակբասանդրապոլի կայարանից դուրս գալուց հետո 6-րդ վերստի վրա մեքենավարները սովորաբար պարտադիր կերպով դանդաղեցնում էին ընթացքը՝ վթարից խուսափելու համար:

Իսկ Վինոգրադովը հենց այդ տեղամասում արագացրել է շոգեքարշի արագությունը: Արդյունքում շոգեքարշը վագոնների հետ միասին դուրս են ընկնում գծից և գլորվում զառիթափից: Զոհվում է Վինոգրադովը: Թուրքական զինվորներից քչերն են փրկվում: Թուրքական զորքերով լցված հաջորդ գնացկազմը նույնպես խորտակվել է 6-րդ կիլոմետրի վրա եղած երկաթգծերի շարքից դուրս գալու պատճառով («Արև», հունիսի 11, 1918 թ.):

«...ՀԱՆՁԻՆՍ ՁԵԶ ՈՂՋՈՒՆՈՒՄ ԵՄ ԻՍԿԱԿԱՆ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՀԵՐՈՍԻՆ»

Անդրանիկի վերոհիշյալ հեռագիրը հուլիսի 17-ին Շահումյանը հեռագրով հաղորդել է Լենինին, ավելացնելով հետևյալը. «Զուլֆայից, հայկական ժողովրդական առաջնորդ Անդրանիկից ես ստացել եմ հետևյալ հեռագիրը: Իմ կողմից կպատասխանեմ. «Ողջունում ենք առաջարկությունը, ամուր մնացեք»: Խնդրում եմ ձեր պատասխանը: Շահումյան» (ՀՀ ԱԱ, ֆ. 130, ց. 2, գ. 569, թ. 11բ):

Իսկապես, Շահումյանն անմիջապես պատասխանել է Անդրանիկին, նրան ուղարկելով հետևյալ հեռագիրը, որը 1918 թ. հուլիսի 20-ին հրապարակվել է «Бакинский рабочий» *թերթում:*

Ահա, Շահումյանի հեռագիրը. «Ձեր հեռագիրը ստացա: Լրիվ տեքստը հաղորդեցի Մոսկվա՝ կենտրոնական կառավարությանը: Իմ կողմից հանձին ձեզ ողջունում եմ՝ իսկական ժողովրդական հերոսին: Եթե պարոնայք Քարջանունին և մյուսները ձեզ նման լինեին, հայ գյուղացիությունն այժմ այսպիսի ողբերգություն չէր ապրի:

Ողջույն հաղորդեցեք ձեր դրոշի ներքո կռվող բոլոր քաջ զինվորներին և ամբողջ աշխատավոր բնակչությանը, որը տառապում է թե՛ թուրքական սվինից և թե՛ ազգային առաջնորդների դավաճանությունից:

Չնայելով ոչ մի դժվարությունների, կոչ եմ անում ձեզ չիջեցնել հեղափոխական դրոշը:

Բաքվի պրոլետարիատը Ռուսաստանի իշխանության ուժգին աջակցությամբ հերոսական պատերազմ է մղում բեկական բանդաների դեմ՝ Քյոր դամիրի և Աղսուի ուղղությամբ:

Երբ մենք հաղթենք թուրքերին, խաներին ու բեկերին, վրացական իշխաններին ու հայ բուրժուազիային, այն ժամանակ ամբողջ Անդրկովկասի միավորված գյուղացիները և բանվորները իրենց ընդհանուր համագումարում կհաստատեն սովետական իշխանություն և նորից կկապվեն Ռուսաստանի մեծ հանրապետության հետ:

Ուրախ կլինեի ձեզ անհրաժեշտ աջակցություն ցույց տալու հնարավորության համար: Թերևս դուք ուղիներ գտնեք կապի համար:

*Կովկասի գործերի արտակարգ կոմիսար և Բաքվի ժողովրդական կոմիսարների սովետի նախագահ՝ Ս. Շահումյան» (**Ստ. Շահումյան**, նույն տեղը, հ. հինգերորդ, էջ 199):*

1918թ. հուլիսի 24-ին Ռուսաստանի կենտրոնական թերթերից մեկը՝

*«Известия»-ն հաղորդում էր հետևյալը. «Բաքվից հաղորդում են, որ հայկական նշանավոր հասարակական գործիչ, չետնիկ Անդրանիկից ստացվել է ռադիո-հեռագիր, որով նա հայտարարում է, որ ինքը լիակատար կերպով ենթարկվում է Ռուսաստանի կենտրոնական իշխանությանը, պարտավորվում է կատարել նրա բոլոր կարգադրությունները և իր տրամադրության տակ եղած բոլոր ուժերով Երևանի նահանգի Նախիջևանի գավառը պաշտպանել թուրքական իմպերիալիզմի ասպատակությունից» (**«Известия»**, 24. 07. 1918 г.):*

Այնուհետև, նույն թերթը Անդրանիկին գնահատում էր որպես Թուրքիայում հայերի ապստամբության կազմակերպիչ, ժողովրդական զանգվածների մեջ մեծ հեղինակություն վայելող, որին ժողովուրդն անվանում է «Քաջ Անդրանիկ», «Մեր Անդրանիկ»: Թերթը հատկապես ընդգծում էր, որ Անդրանիկն օժտված է ստրատեգիական մեծ տաղանդով:

«Известия»-ն հիշեցնելով Անդրանիկի խոսքերն այն մասին, որ ինքը զինվոր է, «ճնշվածների, ստրկացվածների բանակի զինվորն է և որտեղ պայքար կա ազատության համար, պայքար կա իշխողների դեմ, այնտեղ էլ իմ տուն է», իր կողմից ավելացնում է. «Պատահական չէ նրա վճիռը՝ աշխատել Սովետական Ռուսաստանի հետ համերաշխ, դա դարավոր ստրկությունից դուրս նետվող, իր թշնամիներին ու բարեկամներին ճանաչած հայ գյուղացիության վճիռն է: Ահա թե ինչու այս իրադարձությունը Սովետական Ռուսաստանի խոշոր հաղթանակն է»:

«Անդրանիկը,- շարունակել է «Известия» թերթը,- դուրս է եկել գյուղացիական Հայաստանի խորքերից և իր արյունով է ձուլված նրա հետ: Նա հանդիսանում է գյուղական դեմոկրատիայի առաջնորդը և զգայուն կերպով ոնկնդրում է ժողովրդին տանջանք բերող հառաչանքը: Իրականում կատարում է իրեն ապարեզ բերած գյուղացիության կամքը: Եվ պատահական չէ նրա որոշումը՝ գործել Սովետական Ռուսաստանի կամքին համապատասխան: Դա դարավոր ճնշումից ազատագրվող գյուղացիության որոշումն է, որը ճանաչել է արդեն իր թշնամիներին և բարեկամներին»:

*Այս կապակցությամբ հարկ եմ համարում նշել նաև, որ նույն «Известия» թերթում, մի քանի օր անց, «Վ. Գ.-յան» և «Տ. Տ.-յան» ստորագրությամբ հրապարակված հոդվածի հեղինակներն արտահայտելով իրենց անհամաձայնությունը Անդրանիկին տրված վերոհիշյալ գնահատականի հետ, հատկապես ընդգծում են, թե Անդրանիկը «ոչ թե հայ գյուղացիության, այլ ամբողջ հայ ժողովրդի շահերն է արտահայտում, չունենալով դասակարգային մոտեցում» (**«Известия»**, 31. 07. 1918 г.):*

*Այս հոդվածի հեղինակները, ինչպես նաև նրացից հետո այլոք, հավանաբար, գաղափար չեն ունեցել Կ. Մարքսի հետևյալ տեսակետի մասին, որը նա արտահայտել է 1863 թ. լեհական հեղափոխության ժամանակ: «Քանի դեռ կենտրոնական ժողովուրդը կաշկանդված է օտարերկրյա զավթիչների կողմից, նա ըստ անհրաժեշտության բոլոր ուժերը, իր բոլոր ձգտումները, իր ամբողջ եռանդն ուղղում է արտաքին թշնամու դեմ, և այսպիսով, քանի դեռ նրա ներքին կյանքը մնում է ջլատված, նա ի վիճակի չէ պայքարելու սոցիալական ազատագրման համար» (*К. Маркс и Ф. Энгельс, Соч. Том 18, ст.. 555*):*

Այս հանգամանքը լավ գիտեր Շահումյանը և նա Անդրանիկին անվանում էր «Ժողովրդական հերոս»:

Այդ օրերին «Бакинский рабочий» *թերթը հայտնում էր. «Հայտնի պարտիզան Անդրանիկը չի ենթարկվում ազգային խորհրդին, չի ճանաչում Հայաստանի անկախությունը և պաշտպանում է ռուսական կողմնորոշումը»:*

Այնուհետև թերթն ավելացնում էր «Զնայած Հայաստանի կառավարությունը համաձայնության է եկել Թուրքիայի հետ, Անդրանիկն իր ջոկատով շարունակում է պայքարել թուրքերի դեմ» («Бакинский рабочий», *18. 07,.1918 г.):*

1918 թ. հուլիսի 20-ին Բաքվի դաշնակցականների պաշտոնաթերթ «Արեւ»-ը նույնպես տպագրում է Շահումյանի պատասխան հեռագիրը ժողովրդական հերոս Անդրանիկին և իր կողմից ավելացրել է հետևյալ երկտողը. «Պարոնայք Շահումյաններ, եթէ դուք լինէիք այնքան խոհուն և շրջահայեց, որ կարողանայիք բարձունքից իջնել դէպի ռէալ հողը և ճշտօրէն ըմբռնել ու թափանցել մասնաւորապէս կովկասեան և առհասարակ մեր շրջապատի իրականութեան մէջ և հաշի առնէիք մեզնում ապրող ժողովուրդների ռեալ պայմաններն ու կովկասեան աշխատաւորութեան շահերը, օր առաջ ականջալուր լինէիք կեանքի հրամայական պահանջներին և գործնական քայլերի անցնէիք, փոխանակ ճոռոմաբան ֆրազներով կերակրելու աշխատաւորութիւնը, անշուշտ, ոչ Քաջազունիները, ոչ Անդրանիկները և ոչ էլ հայ աշխատաւորութիւնը, որոնց հետ միասին բովանդակ աշխատաւորութիւնը, այո, իրաւք չէր ապրի այսօրուա ողբերգական վիճակը» («Արեւ», *հուլիսի 20, 1918 թ.):*

Պետք է նկատել, որ Բաքվի դաշնակցականների այս գնահատականը վկայում է, որ նրանց մոտ արդեն լիակատար կերպով զգացվում էր սովետական իշխանության հետ համագործակցելը մերժող թևի ազդեցության ուժեղացումը, որի կրողները վերջնականապես հրաժարվել էին Շահումյանի և նրա գլխավորած Ժողկոմսովետի հետ համագործակցելուց և բացահայտորեն անցել էին հեղափոխության հակառակորդների կողմը, միաժամանակ փորձելով Շահումյանի վրա բարդել այնպիսի մեղադրանքներ, որոնք իրենք էին արդեն կատարում և այդ կերպ կոծկում իրենց քաղաքականության իրական նպատակները:

Այդ մասին է վկայում, օրինակ, հուլիսի 18-ին «Արեւ» թերթի հրապարակած «Որտե՞ղ է ճշմարտությունը» հոդվածը, որով արդարացնելով դաշնակցության վերոհիշյալ թևի որդեգրած քաղաքականությունը, հայտարարվում էր, թե «մեր պայքարը կոալիցիոն բոլշևիկների դէմ է»:

«Մենք,- հայտարարում էր թերթը,- պաշտպանում ենք խորհրդային իշխանությունը, և պիտի պաշտպանենք այն: Խորհրդային իշխանությունը բանտրա-գյուղացիական իշխանություն է, աշխատավոր դասակարգի իշխանություն է: Բոլշևիկները զուր են ձգտում այդ իշխանությանը տալ նեղ կուսակցական-բոլշևիկեան բնաւորություն: Այդ հանդուրժելի չէ և թոյլ չի տրվի նրանց ոչ մի սոցիալիստական կուսակցության կողմից» («Արեւ», *հուլիսի 24, 1918 թ.):*

Դաշնակցության այս թևը, որը բացահայտորեն հանդես էր գալիս թուրքերին չդիմադրելու պահանջով և անգլիացիներին Բաքու հրավիրելու օգտին, խորամանկորեն խուսափում էր ասել, թե անգլիացիների ներկայությամբ ինչպես են պատրաստվում պահպանել սովետական իշխանությունը, և կամ անգլիացիները ինչպես են հանդուրժելու Բաքվում բանվորա-գյուղացիական իշխանության գոյությունը:

Բավարարվեմ առայժմ ասվածով, քանի որ հետագա էջերում այդ մասին ավելի հանգամանորեն անդրադարձ կլինի:

ԱՆԴՐԱՆԻԿԻՆ ԶՐՊԱՐՏԵԼՈՒ ՓՈՐՁԵՐԸ

Անդրանիկը Նախիջևանում ձգտում էր հաստատել կարգ ու կանոն, վճռականորեն հետամուտ էր ազգամիջյան ընդհարումները կանխելուն:

Ավելին, Անդրանիկը հավասարապես էր վերաբերվում տեղի հայ և մահմեդական բնակչությանը, ամեն կերպ աշխատում նրանց միջև խաղաղություն հաստատել: Այս մասին կան բազմաթիվ փաստեր: Ահա, դրանցից մեկը:

Պատասխանելով Նախիջևանի գավառի մուսուլման բնակչության ներկայացուցիչների նամակին, Անդրանիկը 1918 թ. հուլիսի 14-ին գրել է. «Հարիվ միայն մի քանի օր է, ինչ զբաղվում եմ Նախիջևանի գավառի սահմաններ-

լում և չեմ հասցրել գլուխ հանել այդ ավերիչ կոտորածներից:

Հայերի և մուսուլմանների լարված հարաբերություններն ինձ էլ են զարմացնում, քանի որ առանձին պետությունների միջև պատերազմական հարցերը չի կարող լուծել տեղական բնակչությունը:

Ձեր ներկայացուցիչները կարող են ինձ ներկայանալ բանակցությունների համար, որի մասին անհրաժեշտ է նախազգուշացնել Նախիջևանի հայկական իշխանություններին» (Ծ. Պ. Աղայան, Հայ ժողովրդի ազատագրական պայքարի պատմությունից, Եր. 1976, էջ 633):

Մուսուլման գյուղացիներին ուղղված մեկ այլ դիմումում Անդրանիկը գրում էր. «Մենք, հայերս, համաշխարհային պատերազմի այս չորս երկար ու ձիգ տարիներու ընթացքին ձեր հանդէպ ոչ մէկ անգամ չենք ցուցաբերել թշնամական ու անմարդկային վերաբերմունք, պարզ գիտակցելով, որ մենք դարավոր եղբայրներ ենք, եւ որ մեզնից իւրաքանչիւրը լիակատար իրաւունք ունի ապրելու իր տանը, իր ընտանիքով շրջապատուած:

Որպէսզի մէկընդմիշտ վերջ տրվեն մեր միջեւ ամէն կարգի թիւրիմացութիւններին ու բարդութիւններին, մենք Զանգեզուրի գաւառի հայերս, կոչ կ՚ընենք մեր եղբայր մուսուլմաններին, հանուն խաղաղութեան, խաղաղ գոյակցութեան եւ մարդասիրութեան, ամէն մէկը մեզնից մնա իր շրջանում, առանց որեւէ ձգման խախտելու իր հարեւանի իրաւունքը եւ դրանով իսկ հնարավորութիւն տայ, որպէսզի նման հարցերը հիմնովին լուծուեն պատասխանատու եւ հեղինակաւոր կառավարական շրջաններում» (ՀՀ ԱԱ, ֆ. 370, ց. 1, գ. 51, թ. 22):

Անդրանիկը, որպես բոլոր ճնշվածների բարեկամ ու նրանց ճնշողներից պաշտպան, իր մղած ամբողջ պայքարի ընթացքում անշեղորեն ղեկավարվել է իր հռչակած հետևյալ սկզբունքով. «Թիւրք խաղաղ բնակչութեան դէմ ոչ մի ոխ չունիմ, ես կը կռվիմ միայն բեկերի եւ կառավարութեան դէմ» («Հորիզոն», 3 օգոստոսի, 1913):

Անդրանիկը Նախիջևանի մահմեդական բնակչության նկատմամբ ոչ մի բռնություն չի գործադրել: Այդ են ապացուցում Անդրանիկին ուղղված բազմաթիվ շնորհակալական նամակները:

Ես այս հանգամանքը հատկապես եմ ընդգծում և, ահա, թե ինչու:

1988 թ. հունվար-փետրվար ամիսներին Բաքվում գտնվող կուսակցության արխիվում նյութեր էի հավաքում դիսերտացիայի համար: Ինձ հետաքրքրում էր այն հարցը, թե Բաքվի կոմունայի կապակցությամբ արխիվում, արդյոք, պահպանվո՞ւմ են Անդրանիկի մասին նյութեր:

Արխիվի տնօրենն ինձ ներկայացրեց երկու հաստափոր գործ, որոնց վրա գրված էր «Об Андранике Озаняне»: Ուրախությամբ ստացա այդ գործերը և սկսեցի ծանոթանալ: Երկու գործում էլ ես չգտա ոչ մի պաշտոնական փաստաթուղթ, ոչ մի հավաստի վավերագիր:

Այդ գործերը լցված էին Ադրբեջանում լույս տեսնող թերթերում տպագրված ու անտիպ հիշողություններով, որոնց հեղինակները պատմում էին Նախիջևանում, Զանգեզուրում, Ղարաբաղում մահմեդական բնակչության նկատմամբ Անդրանիկի կատարած բռնությունների մասին:

Ես հասցրեցի ամենայն ուշադրությամբ կարդալ միայն ռուսերեն գրված ձեռագիր 400 հուշագրություն և հաշվել դրանց հեղինակների կողմից նշված զոհերի քանակը: Թվերի գումարումից ստացվեց 214 հազար մարդ, այսինքն Անդրանիկը 1918 թ. Նախիջևանում մի քանի օր մնալու ընթացքում կոտորել է այդքան ադրբեջանցի:

Կատարածս հաշվարկը ներկայացրի կուսպատմության ինստիտուտի արխիվի գծով տեղակալին և հետաքրքրվեցի, թե ունե՞ն տվյալներ 1918 թ. Նախիջևանի ադրբեջանական բնակչության թվաքանակի մասին: Պարզվեց, որ չունեն: Տեղակալը հանձնարարեց ընթերցասրահի վարիչին՝ ստուգել իմ կատարած հաշվարկը: Թվերը նույնն էին:

Իսկ եթե ավելացվեին նաև մեծ քանակով ադրբեջաններեն գրված հուշերի մեջ նշված Անդրանիկի «զոհերի» քանակը, ապա կստացվեր մի աստղաբաշխական թիվ: Իմ զրուցակիցը ազնիվ գտնվեց և ընդունեց Անդրանիկ Օզանյանին վերագրվող «զոհերի» թվի ամբողջ անհեթեթությունը և խոստացավ այդ նյութերը շրջանառության մեջ չդնել:

Կարծում եմ, որ ընթերցողին անպայման կհետաքրքրի Անդրանիկ Օզանյանի վերաբերյալ այդքան մեծ ծավալով նյութերի ստեղծման շարժառիթը:

Նախ, հիշեցնեմ, որ Անդրանիկին անվանարկելու սկիզբը դրել է Ղարաբաղի հայության դահիճ, ոչ անհայտ Սուլթանովը:

Այն ժամանակ, երբ Անդրանիկը փորձում էր Զանգեզուրի վրայով անցնել Ղարաբաղ և հասնել Բաքու, Սուլթանովն ադրբեջանական կառավարության նախագահ Խան-Խոյսկուն ուղարկած հեռագրով հայտնում էր, թե «արդեն մի քանի օր է, որ Զանգեզուրի գավառում հայերն Անդրանիկի գլխավորությամբ անխնա բնաջնջում են մահմեդականներին»:

«Անդրանիկի ղեկավարությամբ,- շարունակում էր այս կեղծարարը,- հայերն անվերադարձ կերպով վճռել են ոչնչացնել մահմեդականներին: Մեզ ապշեցնում է այն հանգամանքը, որ այժմ, երբ ամբողջ Եվրոպան և ամբողջ

աշխարհը, զենքերը վայր դրած հաշտություն են աղաղակում, հայերը հայտնի ավազակ Անդրանիկի առաջնորդությամբ սրի ու հրի են մատնում մահմեդականներին, համաձայնելով Կովկասում դաշնակից պետությունների ներկայությունից» (ՀՀ ԱԱ, ֆ. 223, ց. 1, գ. 115, թ. 2):

Խան-Խոյսկին այս կեղծիքներով լեցուն հեռագրի պատճենը ուղարկում է անգլիական զորքերի հրամանատար, գեներալ Թոմսոնին, որն էլ իր հերթին է ճնշում գործադրում Հայաստանի կառավարության նկատմամբ, պահանջելով «կարգի հրավիրել Անդրանիկին»:

Խան-Խոյսկուն ձայնակցում էր մուսավաթական «Азербайджан» թերթը, Անդրանիկի մասին հրապարակելով կեղծ ու չինծու փաստեր: Այդ թերթի հրապարակած կեղծիքներն այնքան ակնառու էին, որ Շուշիում գտնվող ադրբեջանական կառավարության ներկայացուցիչ Աբդուլ Ցաղրեկ Հասանովն անգլիական միսիայի ներկայությամբ Անդրանիկին ասել է. «Այժմ, երբ ես եկա և երջանկություն ունեցա ծանոթանալ ձեզ և Զանգեզուրում ձեր գործունեությանը, իմ մոտ ձևավորվել է սեփական կարծիքս ձեր մասին, գեներալ: Ես համոզվեցի այն չարամտության, չհիմնավորված և կեղծ տեղեկությունների մեջ, որոնք հրապարակվել են «Азербайджан» թերթում» («Вперед», 12. 01.1919):

1918 թ. օգոստոսի 15-ին Վրաստանում Ադրբեջանի դիվանագիտական ներկայացուցիչ Ջաֆարովը Վրաստանում Հայաստանի հանրապետության գործերի հավատարմատար Ա. Ջամալյանին հայտնում էր, որ Անդրանիկի հայկական զինված ջոկատը Հայաստանի սահմաններից անցել է Ադրբեջանի տարածք, գրավել է Գորիս քաղաքը, Զանգեզուրի գավառի մի մասը և շարժվում է դեպի Շուշի:

Ջաֆարովը դա համարում էր Ադրբեջանի Հանրապետության նկատմամբ բացահայտ ոչ բարեկամական գործողություն և իր կառավարության անունից վճռական բողոք հայտնելով, պահանջում էր «արտակարգ միջոցներ ձեռնարկել այդ զորամասերն Ադրբեջանի սահմաններից հեռացնելու համար, հակառակ դեպքում Ադրբեջանի Հանրապետության կառավարությունը պատասխանատու չէ հետևանքների համար և դա բացառապես ընկնում է Հայաստանի Հանրապետության կառավարության վրա» (ՀՀ ԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 112, թ. 1):

Ջամալյանն անմիջապես պատասխանել է Ադրբեջանի դիվանագիտական ներկայացուցչին, հայտնելով, որ «ինչպես գեներալ Անդրանիկը, այնպես էլ նրա ամբողջ ջոկատը Առաջին հայկական կորպուսի հրամանով հանված են հայկական զորքերի ցուցակից» և չեն ընդունում Հայաստանի Հանրապետության իշխանությունը»:

«Այսպիսով,- գրում էր Ջամալյանը,- գեներալ Անդրանիկը և նրա ջոկատը ոչ մի առնչություն չունեն հայկական ազգային զորքերի հետ և հետևաբար Հայաստանի Հանրապետության կառավարությունը որևէ կերպ չի կարող պատասխանել նրանց անպատասխանատու գործունեության համար» (նույն տեղը, թ. 2):

Զբավարարվելով Ջամալյանի այս պատասխանն ուղարկելուց, ՀՀ արտաքին գործերի մինիստրը նրան կարգադրել է Հայաստանի կառավարության անունից Ադրբեջանի կառավարությանը հայտնել հետևյալը. «Մեկ անգամ ևս հաստատելով, որ գեներալ Անդրանիկի ջոկատը հանված է Հայկական կորպուսի կազմից և հեռացել է ներկա Հայաստանի տարածքից դեռևս մինչև Հայաստանի կառավարությունը, որ Զանգեզուր և Ղարաբաղ նա թափանցել է ոչ թե Հայաստանից, այլ Թուրքիայից (Նախկին Նախիջևանի գավառից), որ գեներալ Անդրանիկը, ինչպես դա երևում է նրա հրամանից ու կոչերից, չի ընդունում Հայաստանի Հանրապետությունը և նրա կառավարությանը, չի համարձակվում մտնել Հայաստանի տարածք՝ վախենալով, որ կարող է զինաթափ արվել և դատի տրվել»:

Վերջում Հայաստանի կառավարությունը հաստատում էր, որ «այսպիսով Հայաստանի Հանրապետությունը գեներալ Անդրանիկի ջոկատի հետ որևէ անուղղակի և ուղղակի կապ չունի և հետևաբար չի կարող պատասխանատվություն կրել Զանգեզուրում և Ղարաբաղում գեներալ Անդրանիկի գործողությունների համար» (նույն տեղը, թ. 3-4):

Զբավարարվելով այս հաղորդումներով Ջամալյանը սեպտեմբերի 17-ին Թիֆլիսում գտնվող գերմանական և ավստրո-հունգարական դիվանագիտական պատվիրակություններին, Օսմանյան պետության ներկայացուցիչ Աբդուլ Քերիմ բեյին և Ադրբեջանի ներկայացուցիչ Ջաֆարովին է հանձնում Անդրանիկի վերոհիշյալ կոչի թարգմանությունը:

Այսպիսով, Հայաստանի կառավարության հետ միասին Գերմանիան, Ավստրո-Հունգարիան, Թուրքիան և Ադրբեջանը, գիտակցելով, թե ինչ հետևանք կունենար, եթե Անդրանիկն իր ջոկատով անցներ Բաքու և կանգներ Բաքվի պաշտպանների շարքում, ուստի դիմել են բոլոր միջոցների և կասեցրել են Անդրանիկի առաջխնթացը:

Իր հերթին էլ Բաքվի ազգային խորհուրդն էլ հալած յուղի տեղ ընդունելով Սուլթանովի թիսած կեղծիքը, իր նիստերից մեկում, քննարկելով այդ հար-

ցը, պաշտպանել է Անդրանիկի հարցում վերոհիշյալ պետությունների դիրքորոշումը և Հայաստանի հանրապետության կառավարությունից պահանջել է միջոցներ ձեռնարկել դադարեցնելու մահմեդական բնակչության դեմ գործադրվող բռնությունները:

Սովետական իշխանության հաստատումից հետո, տասնամյակներ շարունակ, Ադրբեջանում խուսափում էին բարձրաձայն խոսել Անդրանիկի գործադրած «բռնությունների» մասին: Սովետական Հայաստանում էլ աշխատում էին չհիշել Անդրանիկի մասին, նաև ելնելով այն հանգամանքից, որ Անդրանիկի մահից հետո Ա. Ահարոնյանը գրել էր, թե «Անդրանիկը մեռավ որպես դաշնակցական»:

Բայց պիտավորը չգրված օրենքի ուժ ստացած այն իրավիճակն էր, ըստ որի Ադրբեջանում և Հայաստանում խուսափում էին Անդրանիկի (ադրբեջանցիները՝ բացասական, մենք՝ դրական), և Նաբի ավազակապետի (մենք բացասական, նրանք՝ դրական) մասին գրել, ելնելով երկու հարևան հանրապետությունների միջև բարեկամական հարաբերությունները պահպանելու պայմանից:

Սակայն, երբ Սովետական Հայաստանի պատմաբաններից Արամայիս Մնացականյանը Անտոն Քոչինյանի եռանդուն աջակցությամբ 1963 թ. տպագրված «Վ. Ի. Լենինը և հայ ժողովրդի պայքարը» գրքում հրապարակում է Շահումյանին ուղարկած Անդրանիկի հեռագիրն ու Շահումյանի պատասխանը, կարծես թե լռության սառույցը կոտրվում է:

Եվ 1960-ական թվականներից Սովետական Հայաստանում լայն շարժում է սկսվում Ժողովրդական հերոս Անդրանիկ Օզանյանի ունեցած դերը օբյեկտիվորեն գնահատելու համար:

Հայաստանում սկսված այդ շարժումը կանխելու նպատակով Ադրբեջանում կազմակերպվել է վերոհիշյալ հիշողությունները գրելու և դրանք ՍՄԿԿ Կենտկոմ հասցնելու գործընթացը: Ի միջի այլոց, Ադրբեջանի ղեկավարների թելադրմամբ Հայաստանում բնակվող մի շարք ադրբեջանցիներ նույնպես դիմում-հուշագրություններ ու բողոքներ են ուղարկել ՍՄԿԿ Կենտկոմ, պահանջելով թույլ չտալ ադրբեջանական ժողովրդի «դահիճ» Անդրանիկի մեծարումը: Այդ նյութերի մի մասը պահվում է նաև ՀՀ Ազգային արխիվում (տես՝ առաջին ֆոնդում պահպանված նյութերը):

1960-1970-ական թվականներին Հայաստանի կոմկուսի Կենտկոմի առաջին քարտուղար, Հայաստանի ղեկավար Անտոն Քոչինյանի եռանդուն ջանքերի շնորհիվ, նաև նրանից հետո, Կարեն Դեմիրճյանի օրոք, ադրբեջանցիներին չի հաջողվել իրականացնել իրենց նպատակը: Հայաստանում սկսվում են հրատարակվել մեծ տպաքանակով պատմագիտական գրքեր նվիրված Անդրանիկի կյանքին ու գործունեությանը:

Քոչինյանի գիտությամբ ու համաձայնությամբ Թալինի շրջանի Ուշան գյուղում կանգնեցվել է Անդրանիկի հուշարձանը:

Ոչինչ, որ Անդրանիկի հուշարձանի հիմնումն այսօր առանձին անձինք ներկայացնում են, թե դա կատարվել է իշխանություններից գաղտնի, որ Սովետական Հայաստանի ղեկավարները դեմ են եղել Անդրանիկի մեծարմանը:

Եվ այդ անձինք, օգտվելով նրանից, որ ժամանակին, հանգամանքների բերումով, հարկ չի համարվել բարձրաձայն խոսել իրականության մասին, Քոչինյանի գիտությամբ կատարվածը հանրությանը հրամցնում են որպես Քոչինյանի կամքին հակառակ ուրիշների կատարած համարձակ քայլ և այլն և այլն: Բայց, դա, հավանաբար, կարևոր չէ: Կարևորը կատարվածն է:

Իմ ուշադրությունը գրավեց նաև Բաքվի արխիվում պահպանվող այդ հուշագրություններից մեկը, որի հեղինակը գրում էր, թե ինքը լավ հիշում է, որ Անդրանիկը 1920 թ. խանգարել է Նախիջևանում սովետական կարգեր հաստատելուն և բռնություն է գործադրել Ռուսաստանին համակրողների նկատմամբ:

Հանդիպեցի Ադրբեջանի կուսպատմության ինստիտուտի այն աշխատակցին, որը, ինչպես ինձ ներկայացրին, համարվում էր Բաքվի կոմունայի պատմության գիտակ:

Ես նրան բացատրում եմ, որ Անդրանիկը չէր կարող 1920 թ. լինել Նախիջևանում, որովհետև նա 1919 թ. գարնանն արդեն հեռացել էր Եվրոպա: Զրուցակիցս համառում էր և պնդում, որ ավելի շատ հավատում է հուշագրին, քանի որ եղել է այդ ամենի ականատեսը:

Լավ, պատասխանում եմ ես, այդ դեպքում ինչ են ասում Ստ. Շահումյանի և Անդրանիկի փոխանակած հեռագրերը, որոնք նույնիսկ տպագրվել են 1918 թ. Ռուսաստանի կենտրոնական մամուլում և հենց «Бакинский рабочий» թերթում:

Անպատասխան էր զրուցակցիս պատասխանը. «Մենք այժմ զբաղված ենք այդ հեռագրերի իսկությունը պարզելով: Դա ժամանակին ստեղծված կեղծիք է»:

Հետո, հասկանալի պատճառներով, ինձ չհաջողվեց տեղեկանալ, թե Բաքվի կեղծարարները, արդյոք, հասցրեցի՞ն «ստուգել» այդ փաստերի իսկությունը...

Բայց վերադառնամ պատմության շարադրանքին:

1918 թ. հուլիսի 17-ին 10-հազարանոց բանակով Խալիլ բեյը հարձակ-

վում է Նախիջևանի վրա: Մի քանի օր շարունակ Անդրանիկի զորաջոկատը թուրքերին ցույց է տալիս ուժեղ դիմադրություն: Սակայն ուժերն անհավասար էին և Անդրանիկը հարկադրված հեռանում է Նախիջևանից: Նախիջևանի և Ջուլֆայի հայ բնակչությանն իր հետ վերցնելով, Անդրանիկը հեռանում է Զանգեզուր, այստեղից Ղարաբաղ անցնելու մտադրությամբ:

1918 թ. նոյեմբերի 19-ին Անդրանիկ Օզանյանն արձակում է հրաման, որով հայտարարվում էր այդ օրվանից թաթարների և թուրքերի դեմ ռազմական գործողությունները դադարեցնելու մասին:

Հայտնելով, որ դաշնակիցները պահանջել են անհապաղ դադարեցնել բոլոր ռազմական գործողությունները, Անդրանիկը գրում էր. «Ինձ են ներկայացել դաշնակիցների ներկայացուցիչներ անգլիական և ֆրանսիական կապիտանները և հայտարարեցին, որ արդեն որոշվել է Կովկասում թույլ չտալ պատերազմ: Թուրքական զորքերը պետք է հեռանան: Բաքուն և Բաթումը գտնվում են անգլիացիների ձեռքին, որոնք չարժվում են դեպի Թիֆլիս: Բոլոր հարցերը պետք է լուծվեն հաշտության կոնֆերանսում»:

Իր հրամանում Անդրանիկը նաև հայտնում էր, որ իրեն հասցված գլխավոր հրամանատար, անգլիական գեներալ Թոմսոնի նամակում «ինձ զգուշացնում են, որ այսուհետև յուրաքանչյուր թշնամական գործողություն կարող է վատ ազդեցություն թողնել հայկական հարցի լուծման վրա» («Вперед», 24. 01.1919):

Վերջապես ընթերցողի ուշադրությանը ներկայացնեմ մեկ այլ, իմ կարծիքով, նույնպես կարևոր փաստ: 1919 թ. փետրվարին Բաքվում լույս տեսնող «Вперед» *թերթը տպագրում է մուսավման սոցիալիստների* «Заря» *թերթում հրապարակված հետևյալ հաղորդումը. «Ինչպե՞ս, ինչպիսի՞ նկատառումներով է այժմ գեներալ Անդրանիկը պաշտպանություն գտել հայ դաշնակների մոտ, այն նույն հայ քաղաքական գործիչների, որոնք իրենց ազգային խորհրդի բերանով մի քանի ամիս առաջ նույն Անդրանիկին և նրա ամբողջ ջոկատին հայտարարեցին օրենքից դուրս, նրան հանելով հայկական կորպուսի ցուցակից»:*

Պատասխանելով մուսավման սոցիալիստների թերթի հաղորդմանը, «Вперед» *թերթի դաշնակցական խմբագիրները, ի տարբերություն, Թիֆլիսի հայոց ազգային խորհրդի և Հայաստանի Հանրապետության կառավարության մեջ գտնվող դաշնակցականների, հայտարարում են, որ «սահմանազատվում է ազգային խորհրդի այն հայ մտավորականներից, որոնք կորցնելով հոգեկան հավասարակշռությունը, տեսնելով իրենց դեմ ուղղված*

թուրքական սվիններն ու զենքը, վարկաբեկեցին գեներալ Անդրանիկին»:

Այնուհետև «Вперед»*-ն ընդգծում էր, որ «ինչպես նախկինում, այնպես էլ հիմա թուրքական ռեժիմի դեմ Սասունի ապստամբության հանճարեղ ոգեշնչող և ղեկավար Անդրանիկին համարել ու համարում ենք արժանավոր ժողովրդական հերոս»:*

Անդրադառնալով Նազարբեկովի վերոհիշյալ հրամանին, թերթը գրում էր. «Դեռ մեծ հարց է, թե ո՞վ է նրանցից ճիշտ, Նազարբեկո՞վը, թե՞ Անդրանիկը: Պատմության անաչառ դատը կգնահատի այդ երկուսի ծառայությունը, բայց մեզ համար պարզ է, որ Անդրանիկը փրկել է Զանգեզուրի և Ղարաբաղի բնակչությանը թուրքական արշավանքից և անխուսափելի կոտորածից» («Вперед», 02. 02.1919):

Անհրաժեշտ եմ համարում բավարարվել սաված, քանի որ Անդրանիկի զորախմբի մարտական գործողություններին, ինչպես նաև Հայաստանից նրա հեռանալու հանգամանքները լուսաբանվել են մի շարք աշխատություններում, ինչպես նաև իմ «Հայաստան. 1918 թվական» գրքում և այդ պատճառով կրկնելու անհրաժեշտության կարիքը չկա:

Միայն հարկ եմ համարում նշել, որ արտասահման մեկնելուց առաջ, Անդրանիկը 1918 թ. ապրիլի 30-ին Հովհ. Թումանյանի հետ միասին այցելել է Վրաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարար Գեգեչկորիին:

Այդ հանդիպման ժամանակ Անդրանիկը շնորհակալություն է հայտնել ջերմ ընդունելության համար և ասել է հետևյալը. «Թող հայ-վրացական ընդհարման անցյալի տխուր փաստը մոռացության տրվի և թող խանգարիչ հանգամանք չը հանդիսանայ ստեր ձգելու դարերով պատմականօրէն բախտակից երկու ժողովուրդների բարեկամությանն ու համերաշխությանը»:

«Ես,- ասել է իր խոսքի վերջում Ժողովրդական Հերոսը,- ոչ մի անգամ, իմ կեանքի ընթացքում երբեք չեմ ձգտել անձնական փառքի և երջանկութեան: Ես շարունակ ձգտել եմ մի բանի համար, մայրենի ժողովրդի ազատագրութեան և երջանկութեան համար: Ես իմ ծառայութիւնների համար հատուցումն չեմ փնտրել, ցանկանում եմ միայն, որ երջանիկ լինի իմ ժողովուրդը, որին ես ծառայում եմ իմ ամբողջ կեանքով» («Ալիք», մայիսի 4, 1919 թ.):

ԳԼՈՒԽ 26
ԲԱՔՎԻ ՍՈՎԵՏԻ 1918 թ. ՀՈՒԼԻՍԻ 25-Ի ՆԻՍՏԸ

Ռազմաճակատում դրությունը գնալով ծանրանում էր: Դրա հետ միասին Բաքվում ավելի էր շիկանում քաղաքական մթնոլորտը:

Նախորդ էջերում նշվել է, որ 1918 թ. հուլիսի 16-ին Բաքվի սովետի նիստում մերժվել է անգլիացիներին հրավիրելու մասին աջ կուսակցությունների առաջարկությունը: Միաժամանակ ընդունվել է Շահումյանի առաջարկությունը՝ ծանոթանալ ռազմաճակատի դրությանը և հուլիսի 25-ի նիստում նորից քննարկել անգլիացիներին հրավիրելու հարցը:

Հուլիսի 18-ին Շահումյանը «Бакинский рабочий» *թերթի առաջնորդող հոդվածում գրում էր, որ Բաքվի սովետական իշխանության թույլ տեղը դա «թիկունքում հնարավոր դավաճանությունն է»:*

«Մեր թշնամին, մեր ուժեղ թշնամին,- գրում էր Շահումյանը,- գտնվում է մեր միջավայրում: Դրանք մեր այն ընկեր բանվորներից են, որոնք ընկել են պ.պ. Այոլոների, բուրժուազիայի գործակալների և շատ հաճախ նաև գերմանա-թուրքական իմպերիալիզմի ստոր ագիտացիայի ազդեցության տակ»:

«Մեր Բաքվի բուրժուազիան,- շարունակում էր Շահումյանը,- առանց ազգային տարբերության, և՝ ռուսական, և՝ հայկական, և՝ մուսուլմանական, ամբողջությամբ չահագրգռված է նրանում, որպեսզի մեր բանակը ջախջախվի և, որպեսզի Բաքուն անցնի գերմանացիների, անգլիացիների կամ թուրքերի ձեռքը»:

Այնուհետև Շահումյանը բացատրում էր, թե հայ բուրժուազիան ցանկանում է, որ գան անգլիացիները, մուսուլմանական բուրժուազիան սպասում է թուրքերին, իսկ ռուսական բուրժուազիան ուրախ է, որ բոլոր դեպքերում Բաքվում կջախջախվի սովետական իշխանությունը:

«Դժվար չէ,- գրում էր Շահումյանը,- կռահել, թե ինչի կհասցնի անգլիացիներին հրավիրելը: Դա նշանակում է Բաքու քաղաքը վերածել երկու իմպերիալիստական ճամբարների՝ անգլիական ու գերմանական բախման սպարեզ»:

Դրանից էլ երնելով և նկատի ունենալով, որ անգլիացիների Բաքու գալը Գերմանիային նոր առիթ կտա միջամտելու Սովետական Ռուսաստանի գործերին, Շահումյանը նշում էր. «Արդյունքում մենք ոչ միայն չենք լավացնի մեր ստրատեգիական դրությունը, այլ կվատացնենք այն, չխոսելով այդ քայլի քաղաքական հետևանքների մասին: Թող մտածեն այս մասին բոլորը և

նաև բանվորների անկեղծ բարեկամները, որոնք անգլիացիների օգնության մեջ տեսնում են Բաքվի փրկությունը»:

«Մենք,- վերջում ընդգծում էր Շահումյանը,- ունենք բավարար, անչափ բավարար ուժ, որպեսզի ետ մղենք թուրքական հորդաների արշավանքը: Թող ամբողջ Բաքվի պրոլետարիատը համակվի վերջապես, Ռուսաստանի արդյունաբերության գլխավոր ներով Բաքուն պաշտպանելու անհրաժեշտության գիտակցությամբ և Բաքուն կփրկվի Ռուսաստանի և իր համար» (**«Бакинский рабочий»**, *18.07.1918):*

Հուլիսի 21-ին Շահումյանը մեկնել է Հաջիքաբուլի ռազմաճակատ: Այստեղ գտնվող կարմիր բանակի շտաբում նա անց է կացրել հրամանատարների և քաղաքական աշխատողների խորհրդակցություն:

Իսկ այդ ժամանակ Բաքվի բոլոր շրջաններում շարունակվում էին մետինգները, որոնց մի մասի մասնակիցներն արտահայտվում էին անգլիացիներին հրավիրելու օգտին, մյուսների մասնակիցները պաշտպանում էին բոլշևիկների դիրքորոշումը՝ չհրավիրել անգլիացիներին:

Այս մետինգներում քննարկվող հարցերի կուլմինացիոն կետն է դառնում 1918 թ. հուլիսի 25-ին հրավիրված Բաքվի սովետի, շրջանային սովետների, նավային կոմիտեների և Կովկասյան կարմիր բանակի ռազմահեղափոխական կոմիտեի արտակարգ միացյալ նիստը:

Ռազմաճակատից նոր վերադարձած Շահումյանը իր ելույթում անդրադառնում է քաղաքական և ռազմական դրությանը՝ կապված անգլիացիներին հրավիրելու հարցի հետ: Շահումյանը հայտնում էր, որ այդ հարցը ինքն է դրել այն պատճառով, որ ընդհատակյա ագիտացիա է մղվում «մի կարևոր հարցի շուրջը, որը կարող է վճռական նշանակություն ունենալ Անդրկովկասի հեղափոխության գործի համար»:

Այնուհետև Շահումյանը, որպես պաշտոնական փաստաթուղթ, հրապարակել է անգլիացիներին հրավիրելու վերաբերյալ Ռուսաստանի կենտրոնական կառավարության տեսակետը, որը 1918 թ. հուլիսի 20-ին Ստալինի ստորագրությամբ հաղորդվել էր ռադիոհեռագրով:

Այդ ռադիոհեռագրում ասվում էր հետևյալը. «Վերջին տեղեկություններ համաձայն Բաքվի Սովդեպի նարոդնիկական խմբակցությունները ձգտում են հրավիրել վայրագ անգլիացիներին, իբր թե օգնելու համար թուրքական զավթիչների դեմ մղվող պայքարում: Նկատի ունենալով Մուրմանում և Հեռավոր Արևելքում անգլո-ֆրանսիացիների այդպիսի օգնության փորձը, կարելի է վստահությամբ ասել, որ նարոդնիկական խմբակցությունը

ները, իրենք էլ այդ բանը չգիտակցելով, հող են նախապատրաստում Բաքվի և նրա շրջանների օկուպացիայի համար:

Դրա հետ միասին, կասկածից վեր է, որ նարոդնիկական կուսակցությունների փորձը տնայնագործական եղանակով կյուծի միջազգային քաղաքականության հարցը, մինչդեռ Սովետների Համառուսաստանյան 5-րդ համագումարը որոշակիորեն արտահայտվել է Ռուսաստանի սովետական հանրապետության անկախ քաղաքականության օգտին, անկախ ինչպես գերմանացիներից, այնպես էլ անգլիացիներից: Նարոդնիկական կուսակցությունների այդպիսի փորձը Ռուսաստանի կազմակերպված կամքի կոպիտ խախտում է ի հաճույս մի բուռ անպտուղ-գիրանոիական իմպերիալիստների»:

Այնուհետև Ստալինը Համառուսաստանյան ԿԳԿ-ի և Ժողովրդական կոմիսարների սովետի անունից պահանջում էր «ամբողջ Բաքվի սովետից, բանակից ու նավատորմից լիովին ենթարկվել համայն Ռուսաստանի բանվորների և գյուղացիների կամքին»:

Ի կատարումն Սովետների 5-րդ համագումարի որոշման, Ստալինը Բաքվի Ժողկոմսովետից նաև պահանջում էր անվերապահորեն կենսագործել անկախ միջազգային քաղաքականություն և վճռական պայքար մղել օտարերկրյա կապիտալի գործակալների դեմ, ընդհուպ մինչև համապատասխան հանձնաժողովների անդամների ձերբակալումը»:

Ստալինի հեռագրի կապակցությամբ Լենինը հուլիսի 22-ին ռադիոգրով Շահումյանին հայտնում է. «Կարող եմ միայն լիովին պաշտպանել Ստալինի հեռագիրը Բաքվի սովդեպի նարոդնիկական խմբակցության դեմ և սովետների 5-րդ համագումարի կամքի վերաբերյալ» (**Վ. Ի. Լենին**, ԵԼԺ, հ. 50, էջ 144):

Այնուհետև Շահումյանը հրա պարակել է Սովետների 5-րդ համագումարի ընդունած բանաձևը, որով հավանություն էր տրվում Համառուսաստանյան Կենտգործկոմի և Ժողկոմսովետի քաղաքականությանը և խստորեն դատապարտում է այն խմբերի «փորձերը, որոնց նպատակն է բռնի կերպով վիժեցնել Ռուսաստանի աշխատավորների խաղաղության կամքը»:

Բանաձևում ասվում էր նաև հետևյալը. «Սովետական հանրապետության գերագույն մարմնի որոշման հետ տարաձայնվող ամեն մի ելույթ կլինի միայն իմպերիալիստների և հակահեղափոխականների օգտին: Հաստատում ենք Ստալինի հեռագիրը, կտրականապես պահանջում ենք, որ Բաքվի սովետը, բոլոր բանվորները, բանակը, նավատորմն անպայման ենթարկվեն համագումարի որոշումներին և Համառուսաստանյան ԿԳԿ-ի ու Ժողկոմսովետի

ցուցումներին»:

Սովետների 5-րդ համագումարի որոշման համաձայն Շահումյանն առաջարկում էր անգլիացիներին հրավիրելը համարել որպես միջազգային հարց և հանել քննարկումից:

«Մենք,- ասում էր նա,- այնքան էլ ահեղ և ուժեղ թշնամի չունենք մեր առջև, որ չկարողանանք մեր ուժերով ու միջոցներով դնել պաշտպանության հարցը: Հարկավոր է վերջ տալ այդ ագիտացիայի մտցրած երկպառակությունը: Ոչ մի Անգլիա չի փրկի մեզ, եթե մեզ մոտ գժտություն ու կատաղի ներքին պայքար է սկսվում»:

Շահումյանը կոչ էր անում քննարկել, թե ինչ միջոցներով կարելի է ստեղծել միասնություն և ռազմաճակատը պաշտպանել: Նա տեղեկացնում էր, որ հուլիսի 25-ին Աստրախանից հասնելու է 5 առագաստանավ, որով Ռուսաստանից բերվում է 80 հրանոթ, 160 գնդացիր, 10 հազար հրացան, 20 հազար հատ փամփուշտ և այլն:

Շահումյանն առաջարկում էր քննարկումից հանել անգլիացիներին հրավիրելու հարցը, դրա փոխարեն լսել ռազմաճակատի ներկայացուցչի զեկուցումը և լուծել սովետական իշխանությունը պաշտպանելու համար զորքերն ուժեղացնելու հարցը:

Իր առաջարկությունը հիմնավորելու համար Շահումյանը նշել է, որ Բաքուն ինքնուրույն պետություն չէ և հանդիսանում է Ռուսաստանի մի մասը և այդ պատճառով էլ նա իրավունք չունի ինքնուրույն կերպով վճռել արտաքին քաղաքականության հարցերը (**Ստ. Շահումյան**, նույն տեղը, հ. հինգերորդ, էջ 206-210):

Այնուհետև Շահումյանը ներկայացրել է բոլշևիկյան խմբակցության, ձախ էսէռների ու ձախ դաշնակցականների անունից կազմված բանաձևը:

Այդ բանաձևով սովետի գործադիր կոմիտեին ու Ժողկոմսովետին հանձնարարվում էր հանգստանալու պայմաններ ստեղծել ռազմաճակատից վերադարձող հոգնած զորամասերի համար, հայտարարել նոր զորահավաք, դիմել հեղափոխական Ռուսաստանին, կոչ անելով զորք ուղարկել Բաքվի պաշտպանությունն ուժեղացնելու համար:

Իսկ անգլիացիներին հրավիրելու վերաբերյալ բանաձևի նախագծում ասվում էր հետևյալը.

«ա) Նկատի ունենալով, որ Բաքվի տարածքում անգլիական զորքերի երևալը նշանակելու է այդ քաղաքի օկուպացիա անգլիական իմպերիալիզմի կողմից և Բաքու քաղաքը կորչելու է Ռուսաստանի համար,

բ) նկատի ունենալով, որ այդ ագիտացիան քայքայում է ներքին հեղափոխական ճակատը, անհամաձայնություն և բարոյալքում է մտցնում բանակում և խանգարում պրոլետարիատի ինքնագործունեությանը, խանգարում է նոր անհրաժեշտ զորամասերի ստեղծմանը, առանց որոնց մենք թե՛ անգլիացիների հետ և թե՛ առանց անգլիացիների կկործանենք պաշտպանության մեր գործը,

*գ) նկատի ունենալով Սովետների համառուսաստանյան 5-րդ համագումարի ընդունած որոշակի որոշումը որևէ իմպերիալիստների Ռուսաստանի տարածք հրավիրելու դեմ, ինչպես և՝ Կենտրոնական կառավարության որոշակի հայտարարությունը, որը թույլ չի տալիս անգլիացիներին Բաքու հրավիրել,- Բաքվի սովետը որոշում է Բաքուն պաշտպանել սեփական հեղափոխական ուժերով ու հեղափոխական Ռուսաստանի ուժերով և վերջ դնել անգլիացիների հրավիրման օգտին մղվող ամեն մի քայքայիչ ու բարոյալքիչ ագիտացիայի» (**Ստ. Շահումյան**, նույն տեղը, հ. հինգերորդ, էջ 213-214):*

Էսէռա-մենշևիկյան բլոկի և նրան միացած դաշնակցության ներկայացուցիչները իրենց ելույթներում մերժել են Շահումյանի առաջարկությունը և պնդել են քվեարկել իրենց ներկայացրած բանաձևի օգտին: Այդ բանաձևում ասվում էր հետևյալը.

Առաջին. *Հրավիրել անգլիացիներին:*

Երկրորդ. *Կազմել կոալիցիոն կառավարություն:*

Երրորդ. *Կենտրոնական սովետական իշխանությունը ճանաչելուց հրաժարվում է Բաքվի սովետը:*

Քվեարկությամբ այդ բլոկի ներկայացուցիչները չահել են ձայների մեծամասնություն: Նրանց բանաձևի օգտին տրվել է 258 ձայն, իսկ Շահումյանի առաջարկությունը պաշտպանող բոլշևիկները, ձախ էսէռներն ու ձախ դաշնակցականները ստացել են 236 ձայն:

ՇԱՀՈՒՄՅԱՆԻ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ

Քվեարկությունից հետո Շահումյանը հանդես է գալիս հայտարարությամբ: Նա նախ նշել է, որ 500 ներկանների 23 ձայնի մեծամասնությամբ անցել է աջ էսէռների բանաձևը և իրենց հրճվանքն արտահայտող աջ ուժերին դիմելով, ասել է հետևյալը. «Ես հարցնում եմ, ինչ առիթով եք դուք հրճվում: Դուք դեռ Անգլիային չեք տեսել, բայց դուք կորցրեցիք Ռուսաստանյան կենտրոնական իշխանությունը: Դուք դեռ Անգլիային չեք գտել, բայց կորցրեցիք մեզ»:

*Որպես սովետական իշխանության պատասխանատու ներկայացուցիչ Շահումյանը բողոքել է այդ դավաճանության դեմ և հայտարարել հետևյալը. «Իբրև իշխանության ներկայացուցիչ, իմ վրայից հանում եմ ամեն մի պատասխանատվություն հետագա քաղաքականության համար: Մեր կուսակցության անունից ես հայտարարում եմ, որ պատասխանատվությունն այդ դավաճանության համար մենք մեզ վրա չենք վերցնի» (**Ստ. Շահումյան**, նույն տեղը, հ. հինգերորդ, էջ 218):*

Անդրադառնալով էսէռա-մենշևիկյան-դաշնակցական բլոկի ներկայացրած բանաձևի ընդունմանը, Շահումյանը բոլշևիկների, ձախ էսէռների ու ձախ դաշնակցականների անունից հայտարարել է.

Առաջին. *«Անգլիացիների հրավիրումը մենք համարում ենք դավաճանություն հեղափոխական Ռուսաստանի նկատմամբ: Այդ դավաճանության մեջ մենք ձեզ հետ միասին չենք ընթանա, ձեր քաղաքականությունը մենք չենք կարող պաշտպանել»:*

Երկրորդ. *«Մեզ առաջարկում են կոալիցիոն կառավարություն սովետի մեջ մտնող բոլոր կուսակցություններից: Մենք ասում ենք՝ կառավարությունը տեխնիկական մարմին է, որն աշխատել կարող է միայն այն ժամանակ, երբ միատարր է: Մենք խոսում ենք միատարր կառավարության մասին, մանավանդ այսպիսի կրիտիկական րոպեներին: Ունենալով միատարր կառավարություն՝ որպես տեխնիկական ապարատ, մենք հանուն ռազմաճակատի պաշտպանության և պրոլետարիատի միավորման՝ աշխատանքի ենք կոչում բոլոր կուսակցություններին: Նրանք, ովքեր խոսում են բոլշևիկների ֆրակցիոն քաղաքականության մասին, անամոթաբար զրպարտում են: Ոչ մի կոալիցիոն կառավարության մենք չենք մասնակցի»:*

Երրորդ. *«Քանի որ սովետի մեծամասնությունն ասաց, որ ինքը սովետական իշխանությունը ճանաչում է միայն տեղում և հրաժարվում է Ռուսաստանի սովետական իշխանությունը ճանաչելուց, մենք գտնում ենք, որ եթե նավատորմի ընկերները քվեարկել են դրա օգտին, ապա նրանք չեն հասկացել, թե ինչի համար են քվեարկել: Ես այդ ասում եմ այն պատճառով, որ նավատորմը միշտ էլ միահամուռ կերպով արտահայտվել է Ռուսաստանի սովետական իշխանությունը ճանաչելու օգտին: Քանի որ այդ բանաձևի օգտին քվեարկել են դաշնակցականները, որոնք երեկ իրենց կուսակցական կոնֆերանսում որոշել են, որ ճանաչում են թե՛ Ռուսաստանի և թե՛ Բաքվի իշխանությունը, ինչպես նա կա, և ոչ մի փոփոխություն չեն հանդուրժի, ապա նրանք քվեարկել են առանց բավականաչափ կշռադատելու:*

Ինչ վերաբերում է աջ էսէռներին ու մենշևիկներին, ապա նրանք միշտ էլ եղել են սովետական իշխանության թշնամիները»:

Այնուհետև նկատի ունենալով այն իրողությունը, որ սովետական իշխանության թշնամիներն օգտվելով ռազմաճակատում կրած անհաջողություններից, կատարել են իրենց հանցավոր գործը, Շահումյանը դիմել է նրանց և ասել հետևյալը. «Այս պայմաններում դուք, այս բանաձևն ընդունողներդ, խզեցիք ամեն մի կապ ձեր, դավաճանական տեսակետի վրա կանգնածներիդ ու մեր միջև: Մենք մեր վրայից վերցնում ենք պատասխանատվությունն այն հանցավոր քաղաքականության համար, որ դուք սկսում եք և հրաժարվում ենք ժողովրդական կոմիսարների պատերից»:

*Իր ելույթը Շահումյանն ավարտել է հայտարարելով, որ Ռուսաստանի կենտրոնական կառավարությանը տեղյակ կպահի հեղափոխական Ռուսաստանի նկատմամբ սովետի աջ կուսակցությունների կատարած «սև ապերախտության ու դավաճանական ակտի» մասին (**Ստ. Շահումյան**, նույն տեղը, հ. հինգերորդ, էջ 215-217):*

Երբ Շահումյանն ավարտել է իր խոսքը, հանդես է եկել մենշևիկների պարագլուխներից Այոլոն և հայտարարել, թե երեք խմբակցությունների վերհիշյալ բանաձևը պետք ընդունել որպես բոլշևիկների հեռացում սովետից:

Ի պատասխան Այոլոյի Ջափարիձեն հայտարարել է. «Այոլոն ամբողջովին աղավաղում է երեք խմբակցությունների հայտարարությունը: Դրանից ամենևին էլ չի բխում այն տակտիկան, որ իբր մենք հեռանում ենք սովետից, որ մենք լվանում ենք մեր ձեռքերը: Ո՛չ, ժամանակը թելադրում է մեզ, որպեսզի մենք աշխատենք ոչ թե եռապատիկ, այլ տասնապատիկ ավելի, քան նախկինում, որովհետև հանձինս անգլիական իմպերիալիստների, հանդես են եկել թշնամիներ, որոնց դուք կանչել եք, բայց այդ քաղաքականության համար մենք չենք կարող պատասխանատվություն կրել: Բարեհաճեք այն դուք վարել»:

*Այնուհետև Ջափարիձեն ընդգծում էր, որ սովետից բոլշևիկների կուսակցությունից ոչ ոք չի հեռանա և կմասնակցեն աշխատանքին (*Джапаридзе П. А. Избранные статьи, речи и письма 1905-1918 гг., М. 1958, стр. 272*):*

*Ջափարիձեից հետո նորից խոսք է վերցնում Շահումյանը. «Ես ուզում եմ լրացնել ընկեր Այոշայի հայտարարությունը: Մենք կաշխատենք, բայց կպայքարենք թե՛ գերմանացիների դեմ և թե՛ այն դավաճանական քաղաքականության դեմ, որին դուք անցել եք» (**Ստ. Շահումյան**, նույն տեղը, հ.*

հինգերորդ, էջ 217):

*1918 թ. հուլիսի 26-ին Շահումյանը հեռագրով Լենինին ու Ստալինին հայտնել է Բաքվի սովետում անգլիացիներին հրավիրելու վերաբերյալ բանաձևի ընդունման մասին: «Դաշնակցականները,- նշել է նա,- իրենց քվեարկությամբ մեր նկատմամբ բացահայտ դավաճանություն կատարեցին: Ձախ կեսը (նկատի ունի ձախ դաշնակցականներին- **Վ. Պ.**) հայտարարեց, որ ընդունված որոշումը կհամարի մի խայտառակ դավաճանություն ու սև ապերախտություն բանվորագյուղացիական Ռուսաստանի հանդեպ, և որ նա իր վրայից վերցնում է ամեն մի պատասխանատվություն ընդունված որոշումների համար»:*

*Այնուհետև Շահումյանը նշել է, որ անգլիացիներին հրավիրելու բանաձևի ընդունումը վերջնականապես բարոյալքել է բանակը և կազմալուծել է թիկունքը, մեծացնելով Բաքուն հանձնելու վտանգը: Դրությունը փրկելու համար Շահումյանը խնդրում էր օգնության համար շտապ զորքեր ուղարկել Ռուսաստանից (**Ստ. Շահումյան**, նույն տեղը, հ. հինգերորդ, էջ 219-220):*

*Հուլիսի 27-ին Լենինին ուղարկած հեռագրում Շահումյանը հայտնում էր, որ նախօրյակին ռազմաճակատում սկսված նահանջը կասեցվել է, որ ստանում են Ռուսաստանից ուղարկված օգնությունը, իսկ «հատկապես կենդանի զինվորական ուժի ժամանումը բարձրացնում է բնակչության ոգին» (**Ստ. Շահումյան**, նույն տեղը, հ. հինգերորդ, էջ 222):*

*Հուլիսի 29-ին, պատասխանելով Շահումյանին, Լենինն ուղարկած հեռագրում գրում էր. «Սովետների 5-րդ համագումարի և կենտրոնական սովետական իշխանության որոշման դեմ դաշնակների ամեն մի գործողություն դիտվելու է որպես ապստամբություն և որպես դավաճանություն: Զորքեր ուղարկելու համար միջոցներ ձեռք կառնենք, բայց հաստատապես խոսք տալ չենք կարող» (**Վ. Ի. Լենին**, ԵԼԺ, հ. 50, էջ 148-149):*

«ԱՐԵՒ» ԹԵՐԹԸ ԹԱՔՑՆՈՒՄ Է ՃՇՄԱՐՏՈՒԹՅՈՒՆԸ

Բաքվի սովետի հուլիսի 25-ի նիստից հետո «Արև» թերթը դաշնակցության անունից փորձել է բացատրել և արդարացնել անգլիացիներին հրավիրելու մասին բանաձևի օգտին քվեարկելը:

«Մենք,- հայտարարում էր թերթը խմբագրական հոդվածում,- դեմ ենք բոլոր իմպերիալիստներին, ինչպես անգլիական, ֆրանսիական, այնպես էլ գերմանական և տաճկական: Պետք է բոլոր ոյժերով, բոլոր միջոցներով կռվել դրանց դեմ»:

«Պէտք է կռուել, այո,- շարունակում էր «Արեւ»-ը,- բայց չէինք կարողանում տանել այդ կռիւը բոլոր ճակատներում, շնորհիւ մեզ համար աննպաստ դասաւորուած պայմանների, անելանելի կացութեան, որի յանցանքը, յամենայն դեպս մեզ վրայ չի ընկնում»:

Այնուհետեւ թերթը գրում էր, որ ստեղծուած դժուար դրութեան պատճառով «մեր քաղաքը պիտի մտնեն տաճկական բանդաները եւ ստեղծեն արեան բաղնիքներ...առանձնապէս հայ աշխատաւորութեան վերաբերմամբ», ուստի հաւատացնում էր, որ «տաճկական բանդաների Բաքու մտնելուն արգելք կարող է հանդիսանալ ներկայ պայմաններում միայն օտար ոյժը՝ Անգլիան»:

«Արեւ»-ը գրում էր նաեւ, թէ չի ուրանում, որ անգլիական իմպերիալիստների ձգտումները նոյնպես վտանգաւոր են աշխատաւորութեան համար եւ փաստարկում էր, թէ «մենք կանգնած ենք տրագիկական երկընտրանքի առջեւ: Տաճկական բանդաներ եւ անգլիական իմպերիալիզմ: Այս երկու ոյժերից ո՞րն է աւելի կործանիչ աշխատաւորութեան համար: Աշխատաւոր դասակարգը ո՞ր դէպքում աւելի կտուժէ- անգլիացիների՞ գալով, թէ՝ տաճիկների»:

Թերթը նշում էր, որ տաճիկների Բաքու ներխուժելը մահաբեր է աշխատաւորութեան համար եւ ընդգծում էր. «Ով չի ըմբռնում այս իրողութիւնը եւ խուսափում է մեր հարցին ճիշտ պատասխանելուց, նա իրականութեանը նայում է կոյր աչքերով: Թող չասեն մեզ, որ անգլիական եւ տաճկական ոյժերը հաւասար կործանիչ են»:

«Իսոր ըմբռնելով այս ծանր կացութիւնը,- արդարանում էր դաշնակցութեան պաշտոնաթերթը,- ստիպուած ենք, ներկայ դէպքում, անգլիացիների առաջխաղացութիւնը դէպի մեր երկիր աշխատաւորութեան համար աւելի քիչ վնասակար համարել: Այս ընտրութիւնը կատարում ենք մենք հակառակ մեր կամքի, համոզուած լինելով, որ ժամանակաւոր է» (**«Արեւ»**, հուլիսի 27, 1918 թ.):

Բաքվի դաշնակցականների քաղաքականութիւնը, նրանց դիրքորոշումը, ինչպես նշվել է նախորդ էջերում կտրուկ փոխվել էր այն օրից, երբ Բաքվում ստացվել էր արշաւող Թուրքերի դեմ ռազմական գործողութիւնները դադարեցնելու մասին Հայաստանի հանրապետության, Թիֆլիսի ազգային խորհրդի ղեկավարների եւ նրանց հետ միացած Թուրքական հրամանատարութեան, Վրաստանի եւ Ադրբեջանի կառավարութիւնների պահանջը: Նրանք, իհարկե, հասկանում էին այդ պահանջի, մեղմ ասած, եղկելի բնոյթը, բայց և կատարեցին:

Իհարկե Բաքվի դաշնակցականներն այնքան միամիտ չէին, որ իրենց դիրքորոշման մասին խոսեին բացահայտորեն և օգտագործել են իրենց զինանոցում եղած բոլոր միջոցները մի կողմից արդարացնել իրենց քաղաքականությունը, մյուս կողմից՝ վարկաբեկել Շահումյանին ու նրա ղեկավարած ժողկոմսովետին, բոլշևիկներին և նրանց հետ համագործակցող ձախ էսէռներին ու ձախ դաշնակցականներին:

Այդ մասին են վկայում Բաքվի դաշնակցության պաշտոնաթերթ «Արեւ»-ի միջոցով նրանց հրապարակած խմբագրական հոդվածները: Ահա մի քանի օրինակ:

Առաջին. *1918 թ. հուլիսի 28-ին «Արեւ» թերթը «Ճակատագրական վայրկեան» խմբագրական հոդվածում գրել է, որ Բաքվի Ժողկոմսովետը կորված է եղել կյանքից, հեռու է գտնվել բանվորական լայն մասսաների տրամադրությունից, նեղ կուսակցական բարձունքից է վարել իր քաղաքականությունը և ընդգծում էր. «Փառաւոր միայնութեան մէջ մնացած և կղզիացած, կեանքից կտրուած լիդերները, որ վերջին ժամանակներս գործում էին բարձունքներից, առանց ականջալուր լինելով կեանքի իրական պահանջներին՝ հիասթափած ու պարտուած, վերադարձան կրկին իրենց վայրերը, զգալով, որ նրանք շատ են հեռացել կեանքից, որ ուժի հողն ընկել է նրանցից»:*

«Այստեղ,- շարունակում էր «Արեւ»-ը,- իրար ճակատած բախում են երկու հոսանք՝ կառաւարական և կեանքի, իրականութեան հոսանքը, բարձունքը և վարի խաւը, սկզբունքը և իրականութիւնը: Եւ ինչպէս միշտ, այս անգամ էլ կեանքը, իրականութեան ձայնը յաղթանակեց»:

Այնուհետև նկատի ունենալով հուլիսի 25-ին Բաքվի սովետում տեղի ունեցած քվեարկության արդյունքները, «Արեւ»-ը գրում էր. «Կառաւարութիւնը հրաժարական տուեց, բայց նա իրաւունք ունէ՞ր այս ծանր օրերին հրաժարական տալու, նման վարմունք այս պարագաներում, երբ վտանգած է Ռուսական յեղափոխութեան Անդրկովկասում միակ յենարան կազմող Բաքուն և նրա պրոլետարիատը, երբ թշնամին արդէն մեր դռանն է կանգնած, երբ նախատեսնում է վտանգ Ռուսաստանից կտրելու, երբ թիկունքն անարպահով և յղի է նոր անակնկալներով»:

Ինչ որ ասվում է, առաջին հայացքից ճշմարիտ է: Բայց Բաքվի դաշնակցականները չէին ասում այն մասին, որ Ժողկոմսովետը հրաժարական է տվել իր ներկայացրած բանաձևը չընդունելուց, իր քաղաքականությունը հավա-

նությունն չտանալուց հետո:

Եթե նրանք, իսկապես, ուզում էին, որ Ժողկոմսովետը հրաժարական չտար, ապա պետք է նախ, քվեարկեին անզգիացիներին չհրավիրելու օգտին առաջարկված բանաձևի համար և երկրորդ, մերժեին Հայաստանի հանրապետության ղեկավարների, Թիֆլիսի հայոց ազգային խորհրդի, գերմանաթուրքական հրամանատարության, Վրաստանի ու Ադրբեջանի կառավարությունների պահանջը, Բաքվի ռազմաճակատը չմերկացներին թուրքերի դեմ և շարունակեին պայքարը:

Այնուհետև Թերթը իր ընթերցողներից թաքցնում էր, թե անգլիացիների ներկայությամբ ինչպես էին պահպանելու Անդրկովկասում ռուսական հեղափոխության միակ հենարան կազմող Բաքվին և նրա պրոլետարիատին («Արև», հուլիսի 28, 1918 թ.):

Երկրորդ. 1918 թ. հուլիսի 31-ին «Արև» թերթը «Աշխատավորությունն է այդպես ցանկանում» խմբագրական հոդվածում գրում էր. «Ներկայ հասարակարգի տիրապետության օրոք ռեալ ոյժի շնորհիվ միայն կարել է հաստատակչությունն պաշտպանել իմպերիալիստական պետությունների կատաղի մրցակցության մէջ և ունենալ ուրույն քաղաքականություն:

Այդ ռեալ ոյժի բացակայության դէպքում պետությունը չի կարող իր հաստատակչությունը պահել և ոչ էլ, հետևաբար, անկախ քաղաքականություն վարել»:

«Այս պարզ ճշմարտությունը,- փաստում էր թերթը,- չեն գիտակցում ոչ բոլշևիկները, ոչ ձախ էսէռները և ոչ էլ նոյնիսկ Կովկասեան գործերի արտակարգ կոմիսարը»:

Այնուհետև դարձյալ անդրադառնալով հուլիսի 25-ին ընդունված բանաձևին, «Արև»-ը պարզաբանում էր, որ դրանով «որոշել է դիմել անգլիական ոյժի օգնության, ապատելու մեր քաղաքը տաճկական բանդաների ավերածություններից» և դա հիմնավորում էր, գրելով հետևյալը. «Որովհետև պաշտպանելու համար ցանկացած ռեալ ոյժը մենք չունենք: Եթէ ունենայինք այն, ոչ ոք չէր համարձակի մեզանից այդպիսի քայլ անել, խախտել մեր ազատ քաղաքականությունն վարելու հիմունքները: Զօրահակատի դրությունը, ինչպէս կոմիսար Շահումեանն է նկարագրում Լենինին և Ստալինին, օրէ-օր վատթարանում է, անհրաժեշտ է Ռուսաստանից շուտափոյթ զօրամասեր ուղարկել»:

«Շահումեանը Հեռագրում է,- շարունակում էր թերթը,- որ դաշնակցականները իրենց ձայնությամբ՝ անգլիացիների առաջխաղացությանը արգելք չեղան, հետևապէս դատաճանությունն գործեցին: Իսկ ի՞նչ կասի Կովկասեան գործերի արտակարգ կոմիսարը տասնեակ հազարատոր բանտորների վերաբերմամբ: Չէ՞ որ բանտորությունն է պահանջել ամսիս 24-ի բազմամարդ միտինգներում անգլիացիներին հրավիրել»:

Եվ սովածից էլ երնելով թերթը եզրակացնում էր, որ դաշնակցությունը կատարել է «հազարատոր բանտորների կամքը, իսկ բոլշևիկները և ձախ էսէռները բանտորության կամքը ոտնահարողներ են եղել միայն: Եթէ դատաճանություն է կատարած, կատարած է այն ամենից առաջ բանտորության կամքը ոտնահարող բոլշևիկների և ձախ էսէռների կողմից» («Արև», հուլիսի 31, 1918 թ.):

Այս կապակցությամբ հարկ եմ համարում ասել հետևյալը: Ինչպես արդեն նշվել է, բոլշևիկների և ձախ էսէռների մեծամասնությունը գտնվում էր ռազմաճակատում: Եվ այդ պատճառով այն միտինգներում, որոնք անցնում էին մենշևիկների, աջ էսէռների և դաշնակցականների գերակշիռ մասնակցությամբ, ընդունվում էին անգլիացիներին հրավիրելու բանաձևեր:

Նրանք իրենց ելույթներում ռազմաճակատում տիրող իրավիճակը ներկայացնում էին անհուսալի և դրությունը փրկելու միակ միջոցը համարում էին անգլիացիներին հրավիրելը: Եվ այդ ամենի արդյունքով միտինգների մասնակիցներին այլ բան չէր մնում անել, քան համոզվել ու պաշտպանել անգլիացիներին հրավիրելու առաջարկությունը:

Բայց պետք է նշել, որ բազմաթիվ էին նաև այն միտինգները, որտեղ ընդունվում էին Ժողկոմսովետին պաշտպանելու, թուրք-գերմանական ուժերի դեմ պայքարն ուժեղացնելու, անգլիացիներին հրավիրելու պահանջը մերժելու օգտին բանաձևեր:

Պետք է նկատի ունենալ նաև, որ ռազմաճակատ էին մեկնել նաև սովետի մի շարք բոլշևիկ, ձախ էսէռ և ձախ դաշնակցական պատգամավորներ: Ահա այդպիսի պայմաններում տեղի ունեցած քվեարկության ժամանակ բոլշևիկներից ու ձախ էսէռներից ու ձախ դաշնակցականներից ներկա էին ընդամենը 236 պատգամավորներ: Աջ ուժերը՝ մենշևիկներն ու աջ էսէռները նույնպես ունեին 236 պատգամավոր: Վճռական պահին դաշնակցության 23 պատգամավորներն անցնում են աջ ուժերի կողմը և արդյունքում 259 ձայնով ընդունվում է անգլիացիներին հրավիրելու օգտին բանաձևը:

Ստեղծված պայմաններում 23 դաշնակցականների ձայնը որոշակի նշանակություն ուներ: Եթե նրանք քվեարկեին Շահումյանի ներկայացրած բանաձևի օգտին, ապա դա շատ կարևոր նշանակություն կունենար քաղաքում

և ռազմաճակատում սկսված խոճապային տրամադրությունները մեղմելու, ինչպես նաև գերմանա-թուրքական զավթիչների դեմ ուժերը համախմբելու համար: Եվ որ ամենակարևորն է՝ այդ դեպքում Բաքվի սովետը վստահություն էր հայտնում Ժողկոմսովեի գործունեությանը, որը մեծապես կնպաստեր սովետական իշխանության դրությունը կայունացնելու համար:

Երրորդ. 1918 թ. օգոստոսի 7-ին «Արեւ» թերթը «Ակներև դաւաճանութիւն» խմբագրական հոդվածում գրում էր. «Բաքվի Ժողովրդական կոմիսարների խորհուրդը տեղական իշխանութիւնն էր և այստեղի պատերազմի վարողը, ոչ միայն բոլոր միջոցները չսպառեց մեր քաղաքը պաշտպանելու աշխատանքների համար, ոչ միայն չաշխատեց, ինչպէս էլ որ լինի, Բաքուն չյանձնել տաճիկներին և գերմաններին, այլևս բացարձակապէս խոչընդոտ հանդիսացաւ այն բոլոր սոցիալիստական կուսակցութիւններին, որոնք ցանկացան պատերազմի յաջող ելքին նպաստել»:

«Արեւ»-ը մեղադրում էր Բաքվի Ժողկոմսովետին Ռուսաստանի աշխատավորությանը դավաճանելու համար և նշում էր, թե դա ծանր է խոստովանել, բայց փաստ է և շարունակում էր. « Բաւական է յիշել հենց այն, որ ժողովրդական կոմիսարների յուլիսի 30-ի փախուստից յետոյ, և **փաստորէն նրանց կողմից Բաքուն տաճիկներին և գերմանացիներին յանձնելուց յետոյ** (ընդգծումը իմն է - Վ.Պ.), տեղիս աշխատաւորութիւնը, միացած ռազմական նավատորմիղի նաւաստիների հետ, մինչև այսօր առանց դրսի օգնութեան, պահում են մեր նաւթաշխարհը»:

«Արեւ»-ը Ժողկոմսովետին մեղադրում էր նաև այն բանում, թե նա «չէր ցանկանում, որ Բաքուն պաշտպանած լինի թշնամիներից»:

«Մենք,- ասում էր հոդվածի վերջում,- բաւականին փաստեր ունենք և ապագայ պատմաբաններն էլ դէռ աւելի ապացոյցներ կգտնեն ցոյց տալու, որ տեղիս Ժող. կոմիսարների իշխանութիւնը ցանկացել է դաւաճանորեն յանձնել մեր քաղաքը թշնամուն»:

Այս կապակցությամբ հարկ եմ համարում նշել հետևյալը: Դաշնակցության Բաքվի կենտրոնական կոմիտեն իր պաշտոնաթերթի միջոցով, մեղմ ասած, իրականությունը ներկայացրել է գլխի վրա շուռ տված, Շահումյանի գլխավորած Ժողկոմսովետին մեղադրելով այն բանում, որ բոլոր միջոցները չի գործադրել Բաքուն գերմանա-թուրքական զավթիչներից պաշտպանելու համար, որ խոչընդոտել է թշնամու դեմ հաղթող պատերազմ մղելու համար բոլոր սոցիալիստական կուսակցությունների ջանքերի իրականացմանը:

Իրականում Բաքվի սովետական իշխանությունը Շահումյանի գլխավորությամբ ամեն ինչ անում էր ռազմաճակատում իրավիճակը կայունացնելու, զորաջոկատների մարտունակությունը բարձրացնելու, թիկունքում սաբոտաժի դրսևորումները, որոնք կազմակերպվում էին նշված սոցիալիստական կուսակցությունների՝ մենշևիկների, աջ էսէռների կողմից, վերացնելու համար:

Ասվածը հաստատելու համար բերեմ միայն մեկ օրինակ: Հունիսի 17-ին Կարամարյան գյուղի ուղղությամբ գործող 16-րդ 17-րդ գումարտակները սրընթաց մտնում են մարտի մեջ և հանկարծակի գրոհով ստիպում են թշնամուն նահանջել, մարտադաշտում թողնելով 500 սպանված ասկյար, մեկ հրանոթ, երեք գնդացիր, մեծ քանակության հրանոթի արկ և այլ զինամթերք:

Մարտի ընթացքում 16-րդ գումարտակից զոհվում է 5 և վիրավորվում 45 մարդ: Ինչպես գումարտակի հրամանատարի օգնական պորուչիկ Պետրոսյանը, 1-ին վաշտի հրամանատար ենթապորուչիկ Ղարիբյանը, 3-րդ վաշտի հրամանատարի օգնական Բաբայանցը, ենթապորուչիկներ Նուսնուսյանը, Փիրվերդյանը վիրավորվում են, բայց շարունակում են մնալ մարտադաշտում և իրենց օրինակով ոգևորում մարտիկներին:

Ձեռք բերված հաղթանակը անչափ տպավորիչ էր: Կարմիրբանակայիները իրենց հրամանատարների հետ միասին ձգտում էին շարունակել փախչող թշնամուն հետապնդել և վերջնականապես ջախջախել նրան, քանի դեռ ուշքի չէր եկել:

Սակայն թիկունքում գտնվող վերոհիշյալ «սոցիալիստական» կուսակցությունների կողմնակիցները սաբոտաժի միջոցով խոչընդոտում են պարենի և ռազմամթերքի առաքումը, որի պատճառով էլ դադարեցվում է թշնամուն հետապնդելը: Այսպես շարունակվում է 6 օր:

Ի վերջո բրիգադի հրամանատար Համազասպի պահանջով ռազմաճակատ են գալիս կորպուսի հրամանատար, գնդապետ Ղազարովը և ռազմածովային կոմիսար Կորգանովը: Տեղի է ունենում նրանց, Ռոստոմի, Համազասպի և շտաբի պետ, կապիտան Մուսայելյանի մասնակցությամբ խորհրդակցություն: Որոշվում է այլևս չսպասել Բաքվից պարենի ստացմանը և տեղում կազմակերպել հացահատիկի հավաքում: Վելունցին էլ հանձնարարվում է սայլեր հավաքել՝ խմելու ջուր հասցնելու համար (ՀՀ ԱԱ, ֆ. 1267, ց. 1, գ. 94, թ. 7):

Բացահայտորեն իրականությանը չի համապատասխանում թերթի պնդումն այն մասին, թե Ժողկոմսովետը «չէր ցանկանում, որ Բաքուն պաշտպանած լինի թշնամիներից»: Ահա այդ մասին երկու վկայություն:

Առաջին. *Համազասպի բրիգադի մարտական գործողությունների մասին օրագրում նշվում է. «Բանակի շտաբը գտավ, որ իրավիճակը վտանգավոր (կրիտիկական) է և հարց է բարձրացնում քաղաքը հանձնել հակառակորդին, դրան հակառակվում են քաղաքի գործադիր կոմիտեն (նկատի ունի Շահումյանի գլխավորած Բաքվի սովետի գործադիր կոմիտեն- Վ. Պ.) և Ռոստոմը ու որոշվում է քաղաքը պաշտպանել մինչև վերջին մարդը» (ՀՀ ԱԱ, ֆ. 1267, ց. 1, գ. 94, թ. 9):*

Երկրորդ. *Գեներալ Բագրատունին վկայում է, որ իր նպատակն է եղել որքան հնարավոր է ձգձգել Բաքվի պաշտպանությունը մինչև Ռուսաստանից սպասվող ուժերի տեղ հասնելը, որոնք արդեն դուրս էին եկել Աստրախանից: Նա վկայում է, որ Շահումյանը համաձայն է եղել իր առաջարկի հետ, նկատի ունենալով, որ Բաքվի պաշտպանությունն անհրաժեշտ ու կարևոր է Ղարաբաղի և Երևանի նահանգի հայ բնակչության անվտանգության համար: Բագրատունին հայտնում է, որ դրանում համոզում է Ռոստոմին, որն իր հերթին ձգտում էր զինվորներին համոզել, որ ամեն ինչ կորած չէ և նրանց հույս էր ներշնչում (ՀՀ ԱԱ, ֆ. 1267, ց. 1, գ. 94, թ. 69 հ. ե.):*

Այսպիսով, պարզվում է, որ Շահումյանը մինչև վերջ կանգնած էր Բաքուն գերմանա-թուրքական զավթիչներից պաշտպանելու դիրքերում: Պարզ է դառնում, որ Ռոստոմը հակառակ Բաքվի դաշնակցության ղեկավարների, կողմնակից է եղել մինչև վերջ Բաքուն պաշտպանել գերմանա-թուրքական զավթիչներից, գիտակցելով դրա ամբողջ նշանակությունը:

Բագրատունու այս վկայությունից կարելի է եզրակացնել, որ Ռոստոմը դեմ է եղել թուրքերի առջև սպիտակ դրոշակ բարձրացնելուն և անգլիացիներին Բաքու հրավիրելուն: Կարելի է եզրակացնել նաև, որ այդ հարցերում Ռոստոմը մնացել է մենակ և չի կարողացել ազդել Բաքվի դաշնակցության ղեկավարների վրա:

Բաքվի դաշնակցության ղեկավարները գերադասել են համագործակցել սովետական իշխանության թշնամիներ մենշևիկների և աջ էսէռների հետ և, ինչպես միշտ, աշխատել են այս անգամ էլ առաջինը լինել՝ անգլիացիներին հրավիրելու գործում:

Իսկ ինչ վերաբերում է «Արեւ» թերթի այն պնդմանը, թե ապագա պատմաբաններն ավելի շատ ապացույցներ կգտնեն Ժողկոմսովետի դավաճանության մասին, ապա պետք է ասել, որ դա ոչ միայն անհեթեթություն է, այլև Շահումյանի խոսքերով ասած՝ «անապնիվ զրպարտություն է»:

Բաքվի ողբերգությունից որոշ ժամանակ անց, Բաքվի դաշնակցության երևելի գործիչներ Ս. Մելիք-Յոլչյանը, Ա. Գյուլխանդանյանը և մյուսները, մոռացած իրենց հրապարակային կոչերը Շահումյանի գլխավորած Բաքվի սովետական իշխանությունը պաշտպանելու մասին, հրապարակ են բերել իրենց «հիշողությունները», որոնցում, մեղմ ասած, կեղծել են ամբողջ իրականությունը: Այդ մասին անդրադարձ կլինի հաջորդ էջերում:

Միայն կամենում եմ նշել, որ դժբախտաբար, հատկապես մեր օրերում, առանձին ուսումնասիրողներ միակողմանի հենվելով այդ հիշողությունների վրա, կրկնում են նրանց տված գնահատականները և ավելի խառնաշփոթում տեղի ունեցած պատմական իրադարձությունները, միաժամանակ հաճելի սնունդ տալով աղրբեջանցի կեղծարարներին...

ԺՈՂԿՈՄՍՈՎԵՏԻ ՀՐԱԺԱՐԱԿԱՆՆ ՈՒՆԵՐ ՁԵՎԱԿԱՆ ԲՆՈՒՅԹ

Անհրաժեշտ եմ համարում նշել, որ Ժողկոմսովետի հրաժարականի մասին Շահումյանի հայտարարությունն ուներ ձևական բնույթ, թելադրված էր տակտիկական նկատառումներով: Այդ մասին 1918 թ. օգոստոսի 17-ին Լենինին և Ստալինին ուղարկած հեռագրում Շահումյանը գրել է հետևյալը.

*«Սովետի արտակարգ ժողովում անգլիացիներին հրավիրելու մասին հայտնի բանաձևն ընդունելուց հետո, թեև ձևականորեն Ժողկոմսովետը հրաժարական էր տվել, բայց փաստորեն շարունակում էինք մեր աշխատանքը: Հետևյալ օրը գործադիր կոմիտեն միաձայն որոշեց խնդրել Ժողկոմսովետին շարունակել իր աշխատանքը մինչև նոր իշխանության կազմակերպումը: Ջորքերի ու նավատորմի մեջ նույնպես փոփոխություն է կատարվել: Սովետական զորքերը միաձայն արտահայտվեցին անգլիացիներին հրավիրելու դեմ, և ծովայինների ընդհանուր ժողովում ընդունվեց մեր բանաձևը» (**Ստ. Շահումյան**, նույն տեղը, հ. հինգերորդ, էջ 249):*

Բաքվի սովետի նիստից հետո, գիշերը Շահումյանի նախաձեռնությամբ հրավիրվել է Բաքվի կուսակցական կոմիտեի արտահերթ խորհրդակցություն: Ներկայացնելով ստեղծված իրավիճակը, Շահումյանը կոչ է արել չընկճվել և ավելի վճռականորեն գործել:

Այդ խորհրդակցությանը մասնակցած Ա. Միկոյանը գրել է. «Մեզանից շատերը հանդես եկան իրենց պոստերից ժողովրդական կոմիսարների հեռանալու վերաբերյալ բոլշևիկների խմբակցության ընդունած որոշման դեմ: Առաջարկություն ընդունվեց իշխանությունը չհանձնել, մանավանդ, որ սովետը փաստորեն նոր իշխանություն չէր ընտրել: Նախկինում գոյություն ունեցած իշխանության բոլոր մարմինները՝ սովետի գործկոմը, Ժողովրդական

*կոմիսարների սովետը, պետք է շարունակեն իրենց աշխատանքը» (**Ա. Ի. Միկոյան**, Պայքարի ուղիով, գիրք առաջին, եր. 1972, էջ 210):*

Որոշվել է նաև Բաքվի բանվորների շրջանում զորահավաք կազմակերպել կարմիր բանակի շարքերը համալրելու համար, քաղաքում մտցնել արտակարգ դրություն և միջոցներ ձեռնարկել հակահեղափոխական ագիտացիա կատարող անձանց դեմ:

1918 թ. հուլիսի 27-ին հրավիրված Բաքվի համաքաղաքային կուսակցական կոնֆերանսը հաստատել է վերոհիշյալ ընդունված որոշումները:

Հուլիսի 28-ին Բաքվի ժողկոմսովետը հրաման է արձակել կարմիր բանակի շարքերը համալրելու համար լրացուցիչ զորահավաք կատարելու մասին:

Նույն օրը Բաքվի սովետի գործկոմը Շահումյանի, Ջափարիձեի և Շերզադաևի ստորագրած կոչով դիմել է բնակչությանը: Այդ կոչում ասվում էր հետևյալը. «Բաքու քաղաքի բնակչությանը ի գիտություն հայտնվում է, որ գործադիր կոմիտեն իր լրիվ կազմով առաջվա նման շարունակում է կանգնած մնալ բանվորագյուղացիական սովետական իշխանության պաշտպանության դիրքերում, և սովետի դեմ ուղղված ամեն մի փորձ անողոքաբար կճնշվի սովետի կողմից:

*Գործադիր կոմիտեն դիմում է բոլոր զորամասերին, նավաստիներին ու բանվորներին և բոլոր նրանց, ովքեր անկեղծորեն թանկ են գնահատում սովետական իշխանությունը, և կոչ է անում պաշտպան կանգնել սովետներին ու երկաթե օղակի նման համախմբվել սովետի շուրջը, որպեսզի պատշաճ հարկահարված հասցնենք այս օրհասական պահին գլուխ բարձրացնել հանդգնած մեր ոսոխներին և լաստ արժանվույն դիմավորենք մեր դեմ շարժվող լիտիացած թշնամուն» (**Ա. Ի. Միկոյան**, նույն տեղը):*

1918 թ. հուլիսի 27-ին ժողկոմսովետի որոշմամբ փակվում է Բաքվի դաշնակցականների «Вперед» թերթը հակահեղափոխական, շովինիստական ուղղություն ունենալու պատճառով: Այդ թերթը մի կողմից քարոզում էր թուրքերի հետ հաշտություն կնքել, մյուս կողմից կոչ էր անում Բաքու հրավիրել անգլիացիներին:

Բաքու քաղաքում և ռազմաճակատում տեղի էին ունենում բուն մի տինգներ, որոնց մեծ մասում հայտնվում էր սովետական իշխանությանը հավատարիմ մնալու, անգլիացիներին հրավիրելը մերժելու մասին:

Ահա շատ օրինակներից մեկը: 1918 թ. հուլիսի 27-ին Կովկասյան 8-րդ կարմիր գումարտակի 1-ին և 3-րդ վաշտերի զինվորների, հրահանգիչների, հրամանատարների ընդհանուր ժողովը լսելով «Սովետական իշխանության մասին» հարցը, որոշել է. «8-րդ կարմիր գումարտակը միշտ կանգնած լինելով պրոլետարիատի իշխանության շահերի պաշտպանության դիրքերում, այժմ էլ կանգնած է այդ իշխանության կողմը: Բացի այդ իշխանությունից ուրիշ ոչ մի իշխանություն չենք ճանաչում: Դրա համար որոշում ենք Բաքվի սովետ ուղարկել երկու ներկայացուցիչ՝ 1-ին վաշտից Վասիլի Կոկորևին և Սերգեյ Դանիելյանին, հարցնելու և ցուցումներ ստանալու համար. իրո՞ք սովետների իշխանությունը գոյություն ունի և ինչպես մենք պետք է հետագայում գործենք այդ իշխանության շահերի համար, իշխանություն, որին մենք միայն ճանաչում ենք»:

*Շահումյանը զինվորներին շնորհակալություն է հայտնել աջակցության համար և իր պատասխանում նրանց կոչ է արել՝ ուժեղացնել ռազմաճակատը: Միաժամանակ Շահումյանը նշում էր, որ սովետների իշխանությունը գոյություն ունի և կճնշի ներքին հակահեղափոխական երևույթները: «Ներքին թշնամին չնչին է,- գրում էր Շահումյանը,- նրանից վախենալու հարկ չկա: Մեզ հոգս է պատճառում միայն արտաքին թշնամին և մեր ռազմաճակատի դրությունը: Եթե դուք, ընկերնե՛ր, դիմանաք, ամեն ինչ լավ կլինի» (**Ստ. Շահումյան**, նույն տեղը, հ. հինգերորդ, էջ 224):*

Բաքվում ստեղծված ծանր օրերին այնտեղ գործող Հայ սոցիալ-դեմոկրատական բանվորական կուսակցությունը, զգալով սովետական իշխանության համար ստեղծված սպառնալիքի հետևանքները, հուլիսի 23-ին ընդունել է հետևյալ բանաձևը, որտեղ ասվում էր, որ օտարերկրյա ուժերի հրավիրման շուրջ սովետական իշխանության և այլ քաղաքական հոսանքների միջև բորբոքված գաղափարական պայքարն ամեն օր ընդունում է ավելի ու ավելի վտանգավոր ու ծանր ձև, որը կործանարար կերպով սպառնում է պրոլետարիատի ու դեմոկրատիայի շահերին:

Դրանից էլ ելնելով Հայ ս.դ.բ. կազմակերպությունը «ընկերական կոչով դիմում է Բաքվի ամբողջ դեմոկրատիային՝ ներկա պահին վերջ տալ ամեն տեսակի ներքին պայքարին, որը կարող է միայն նպաստել մեր դարպասների մոտ կանգնած թշնամու հաջող հարձակմանը»:

Այնուհետև կազմակերպությունը դիմում էր «բոլոր ընկերներին՝ ամեն կերպ աջակցել սովետական իշխանությանը, վերականգնել կարմիր բանակի մարտական ուժերը» («Известия Бакинского Совета», 27.07.1918 г.): Ճիշտ է, Բաքվում գործող Հայ սոցիալ-դեմոկրատական բանվորական կուսակցությունը շարունակում էր հակասության մեջ մնալ բոլշևիկյան կուսակցության հետ, բայց դա նրա ղեկավարներին չխանգարեց, որ զգան բոլշևիկների ղեկավարությամբ գործող սովետական իշխանությունը պաշտպանելու անհրաժեշտությունը:

ՀՈՒԼԻՍԻ 28-ԻՆ ՏԵՂԻ ՈՒՆԵՑԱԾ ԶՈՐԱՀԱՆԴԵՍԸ

1918 թ. հուլիսի 28-ին Բաքվի Ազատության հրապարակում կազմակերպվել է ռազմահայաստանի մեկնող հեղափոխական զորքերի զորահանդես:

Զորահանդեսում հնչակվել են հետևյալ կոչերը. «Ամո՛թ վախկոտներին, զորակոչից խուսափողներին», «Բոլորը զենքի դիմեն բանվորա-գյուղացիական բանակի շարքերում», «Ամեն ինչ ռազմահայաստի համար», «Կորչե՛ն գերմանա-թուրքական և անգլիական իմպերիալիստները», «Գերմանա-թուրքական գավթիչները գրավել են ամբողջ Անդրկովկասը, ուզում են գավթել նաև Բաքուն: Կորչե՛ն բռնադատիչներն ու գավթիչները», «Կորչե՛ն դավաճանները, որոնք ուզում են Բաքուն հանձնել անգլիացիներին», «Անգլիացիների օգտին ագիտացիան մեր եղբայրական ընտանիքում մտցնում է անմիաբանություն և թուլացնում է ռազմահայաստը: Կորչի՛ այդ ագիտացիան», «Կեցցե՜ միացյալ մեծ Ռուսաստանի հանրապետությունը», «Բաքուն միայն Ռուսաստանի համար», «Կորչե՛ն մատնիչներն ու դավաճանները»:

Զինվորներին ճառով դիմել է Գ.Պետրովը: Նա ասել է, որ թշնամին մոտեցել է Բաքվի դարպասներին և կոչ է արել «ահեղ վտանգի առջև միավորվել, մոռանալ բոլոր ներքին երկպառակությունները»: Պետրովը վստահություն է հայտնել, որ բոլոր ուժերը համախմբելու դեպքում հնարավոր է «մեր ուժերով ետ մղել հակառակորդին»:

Զորահանդեսի մասնակիցներին դիմել է նաև Գ. Կորգանովը: «Չնայած ծայրահեղ լուրջ դրությանը,- ասել է նա,- մենք պետք է հաղթենք, քանի որ մեր հակառակորդը գործում է մահակի հարկադրանքով, թիկունքում ունենալով իրենց ժամանակավոր իշխողների դեմ ապստամբող գյուղացիների և բանվորների դժգոհությունը»:

Հուլիսի 28-ին, երեկոյան ժամը 7-ին Մայիլովի թատրոնի դահլիճում կազմակերպվել է կարմիրբանակայինների, կազակների ու նավաստիների ժողով, որին ներկա է եղել 1700 մարդ:

Ժողովը բացել է Բաքվի կայազորի պետ Տամարկինը և առաջինը խոսքը տվել է Շահումյանին, որին զինվորները դիմավորելեն ոգևորությամբ: Շահումյանը ողջունել է կարմիրբանակայիններին, Պետրովի ջոկատին, ներկա գտնվող Կովկասի կարմիր բանակի բոլոր զինվորներին:

Այնուհետև անդրադառնալով առավոտյան կազմակերպված զորահանդեսին, Շահումյանը նշել է, որ հարկավոր էր իրեն բաժին ընկած փորձությունները տատանվող և չփոթված Բաքվի պրոլետարիատին ցույց տալ հեղափոխական կարմիր բանակի ուժն ու զինվածության հզորությունը:

«Հարկավոր է,- շարունակել է նա,- համոզել բոլորին մեր դեռևս չօգտագործված ուժը, նաև ինչպես մարդկանց, այնպես էլ տեխնիկական միջոցների պատրաստի պաշարները»:

Շահումյանը Բաքվի սովետական իշխանության առաջնահերթ խնդիրն էր համարում զորահավաքի անցկացման միջոցով բանակի շարքերի համալրումը:

Շահումյանն անդրադարձել է թիկունքում տարվող պրովոկացիոն աշխատանքին և նշել է, որ «Նույնիսկ պայքարի և քաղաքացիական պատերազմի առաջին օրերին բոլոր ռազմահայաստներում կարմիրբանակայիններն առաջ էին գնում և հաղթում էին»:

«Բայց այն ժամանակ,- շարունակել է նա,- ջարդված, բայց դեռ երկրի երեսից չվերացված բուրժուազիան տանում էր իր մութ ագիտացիան ու պրովոկացիոն աշխատանքը թիկունքում: Ռազմահայաստի վատ պայմանները, ջրի պակասը, շոգը, հիվանդությունները հարկադրեցին մեզ նահանջել: Այս անհաջողության հետ միասին ներքին թշնամին զգաց պրոլետարիատի թուլությունը և փորձեց դա օգտագործել իր ստոր մտադրություններն իրականացնելու համար»:

Շահումյանն ընդգծում էր, որ հեղափոխական ճակատը սեղմվել է երկու կողմից՝ դրսից և ներսից: «Այն ժամանակ,-ասել է նա,- թիկունքը՝ ներքին թշնամին հանդես եկավ կեղծավոր ցանկությամբ՝ օգնել արյունաքամ բանակին, խոսելով անգլիական իմպերիալիստների կողմից օգնության մասին»:

Դիմելով ներկա գտնվող կարմիրբանակայիններին, Շահումյանը հարցնում էր. «Որտե՞ղ է մեր օգնությունը» և այդ հարցին որպես պատասխան, ընդգծել է. «Միայն Ռուսաստանում, միայն կենտրոնի հեղափոխական ընկերներից մենք կարող ենք ստանալ աջակցություն»:

«Պրոլետարիատը,- պարզաբանում էր Շահումյանը,- հեղափոխականների տեսակետով չի կարող դիմել ճնշողներից որևէ մեկի և համբուրել մտրակով զինված նրա ձեռքն այն բանի համար, որ այդ ձեռքը կարող է ավելի քիչ անխղճաբար հարվածել, քան մյուս ճնշողը: Դա ստրկամիտ դատողություն է, ստրկամիտ հարցադրում, ստրկամիտ հոգեբանություն»:

Այնուհետև անդրադառնալով աջ ուժերի արտահայտած տեսակետին, ըստ որի անհնարին է կարճ ժամանակում բանակ ստեղծել, Շահումյանն ասել է, որ «Բաքվում շատ են վարժված, փորձված զինվորները, որոնք կռվել են վերջին կամպանիայի ժամանակ, պաշտպանելով ուրիշի շահերը: Նրանք դեռևս չեն եղել բանվորների և գյուղացիների պաշտպանության ռազմահա-

կատում: Հարկավոր է նրանց կանչել, ընդգրկել և մենք անմիջապես կդառնանք ահարկու ուժ»:

Իր ելույթի վերջում Շահումյանը ընդգծել է Բաքվի նշանակությունը Սովետական Ռուսաստանի համար և հայտարարել է, որ «Բաքվի բանվորները պայքարում են ոչ միայն իրենց քաղաքի, իրենց տան համար, այլև ամբողջ Ռուսաստանի համար: Այդ պատմական միսիան պետք է կատարեն Բաքվի ընկեր բանվորները, նրանց կոչ անելով մղել փառավոր պայքար մինչև վերջ՝ հաղթել կամ մեռնել պատվով»:

Շահումյանից հետո հանդես է եկել Պետրովը: Նա վերլուծել է ռազմաճակատում տիրող վիճակը, համոզմունք է հայտնել, որ կհաջողվի համախմբել բոլոր ուժերը և հասնել հաղթանակի:

Իր ելույթի վերջում Պետրովը շնորհակալություն է հայտնել Շահումյանին, նրա անխոնջ, մեծ և անգնահատելի աշխատանքի համար և ներկաներին խնդրել է «չմոռանալ, որ ընկեր Շահումյանի դեռևս պատանի երկու որդիները համարձակորեն պայքարում են կարմիր բանակի շարքերում» («Известия Бакинского Совета», 30. 07. 1918 г.):

ՀԱՅԿԱԿԱՆ ԶՈՐԱՄԱՍԵՐԸ ՀԵՌԱՆՈՒՄ ԵՆ ՌԱԶՄԱՃԱԿԱՏԻՑ

Չնայած այն իրողությանը, որ հուլիսի 27-ին հաջողվել էր կասեցնել նահանջը, բայց ռազմաճակատում չէր թուլանում լարվածությունը: Հայկական ջոկատների հրամանատարների բռնած դիրքն ավելի էր խորացնում կազմալուծումը: Դա թուրքական զորքերին հնարավորություն է տալիս անցնել հարձակման և հուլիսի 30-ին ընդհուպ մոտենալ Բաքվին:

3000-ից ավելի զինվոր ունեցող հայկական զորամասերի հրամանատարները հրաժարվում են դիրքեր գրավել զգեստ չունենալու պատճառաբանությամբ: Դրա հետևանքով 32 կմ ձգվող ռազմաճակատում մնացել էր ընդամենը 400 մարդ:

Բիչերախովի հեռանալուց հետո Կոմունայի բանակի հրամանատար նշանակված գնդապետ Ավետիսովը հուլիսի 30-ին Շահումյանին հայտարարում էր, որ արդեն քաղաքի ճակատագիրը վճռված է: Նա պահանջում էր իրեն թույլ տալ սպիտակ դրոշակ բարձրացնել և սկսել թուրքերի հետ հաշտության բանակցություններ: Ավետիսովի փաստարկն այն էր, որ եթե հաշտություն չկնքվի, ապա թուրքերը ուժով կներխուժեն քաղաք և կոչնչացնեն Բաքվի 160 հազար քրիստոնյա բնակչությանը:

Ռազմաճակատում դրությունը գնալով դառնում էր անկառավարելի: Բանն այնտեղ էր հասել, որ Գյուլիսանդանյանը Շահումյանին ասում է. «Իմ-չու իշխանությունը չեք հանձնում, մենք առանց ձեզ էլ գործը գլուխ կբերենք» (Последние дни комиссаров Бакинской коммуны, с. 19):

Այդ «գործը գլուխ բերելը» նշանակում էր սպիտակ դրոշակ բարձրացնել թուրքերի առջև, նրանց հետ հաշտություն կնքել և անպիտացիներին Բաքու հրավիրել, ինչի հետ, որ Շահումյանը վճռականորեն դեմ էր, գտնելով, որ եղած ուժերով հնարավոր է թուրքերին դիմադրել մինչև Ռուսաստանից նոր օգնական ուժեր ստանալը:

Ահա այսպիսի ծանր պայմաններում 1918 թ. հուլիսի 30-ին տեղի է ունեցել Բաքվի սովետի նիստ: Դեռևս 1918 թ. հունիսի 29-ին Բաքվի սովետի նիստում դաշնակցության անունից Ս. Մելիք-Յոլչյանը իր ելույթում ընդգծել էր. «Ռազմաճակատի կազմակերպումը կենսական խնդիր է, հրամայաբար թելադրված յուրաքանչյուրին, ինչի մեջ զգացվում է զինվորի կամքը և մենք ողջունում ենք Ժողկոմսովետի այդ քայլը և նրան ցանկանում ենք հաջողություններ սովետական իշխանության վրա հարձակվող թշնամու դեմ պայքարում» (*«Известия Бакинского Совета», 04.07.1918)*

Իսկ սովետի հուլիսի 30-ի նիստում դաշնակցականներն արդեն խոսում էին թուրքերի հետ հաշտություն կնքելու մասին: Այլ էսեռներն ու մենշևիկները պնդում էին հրավիրել անպիտացիներին: Միաժամանակ երեքն էլ պահանջում էին Ժողկոմսովետից՝ տալ հրաժարական:

Ելույթ է ունեցել նաև Շահումյանը: Նա հրապարակել է գործադիր կոմիտեի և Բաքվի հայոց ազգային խորհրդի հասցեով ստացված թուրքական զորքերի հրամանատար Շևքեթ փաշայի ստորագրած նամակը:

Թուրքական փաշան գրել էր հետևյալը.

«Բաքու քաղաքի պարոնայք քաղաքացիներ.

Ընկերներ, Աստծո օգնությամբ թուրքական կանոնավոր զորքերը մոտեցել են Բաքու քաղաքին:

Որտեղով անցել են թուրքական զորքերը, բոլորին չնորհվել է ազատ կյանք:

Հայերը, ինչպես և մուսուլմանները կօգտվեն բոլոր իրավունքներից և կստանան օգնություն:

Բոլշևիկների համար աշխատող Բիչերախովին մի հավատացեք, քանի որ նա ձեր հայրենիքը կհասցնի կործանման:

Թուրքերից միշտ դուք կստանաք ազատ կյանք:

Դիմավորեք մեզ սպիտակ դրոշակներով և աղ ու հացով:

Եթե դիմադրություն ցույց տրվի, ապա Բաքու քաղաքի բոլոր բնակիչներին զգուշացնում եմ, որ մեր զորքերը հարկադրված կլինեն ձեզ զրկել ազատ կյանքից և կովելով գրավել գեղեցիկ ու հարուստ Բաքու քաղաքը:

Դրա համար նախօրոք զգուշացնում եմ Բաքու քաղաքի բոլոր բնակիչներին՝ թույլ չտալ դա:

Մենք՝ թուրքական կանոնավոր զորքը ոչ մի բանի, ոչ էլ հողի կարիք չունենք: Մեր սուրբ պարտքն է բոլոր ժողովուրդներին, առանց ազգային խտրականության, փրկել բարբարոսությունից ու ճնշումից» (ՀՀ ԱԱ, ֆ. 1437, ց. 1, գ. 252, թթ. 1-2):

Այնուհետև Շահումյանը նշել է, որ թուրքական փաշայի փաստաթուղթը շատ հետաքրքիր է, «բացի դրանից պարզ է, որ ռազմաճակատի ու Բաքու քաղաքի ճակատագիրը արդեն որոշված է»:

*Շահումյանը տեղեկացնում էր. «15 րոպե առաջ ինձ Բալաջարից հայտնեցին, որ այնտեղ կանգնած զորամասերն արդեն նահանջում են: Ժողկոմտվեսի անունից հայտարարում եմ, որ մեր վրայից հանում ենք ամբողջ պատասխանատվությունը և որպես իշխանություն դադարում ենք գոյություն ունենալուց: Այն տարրերը, որոնք ուզում են հաշտության բանակցությունների մեջ մտնել, ձեռքերն ազատ են և կարող են գործել» (**նույն տեղը**):*

«...ՍՈՑԻԱԼԻՍՏՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՄԻԱԿ ԱՐԺԱՆԻ ՔԱՅԼԸ»

1918 թ. հուլիսի 29-ին Համառուսաստանյան կենգործկոմի և Մոսկվայի սովետի համատեղ նիստում Լենինն անդրադարձել է Բաքվում տեղի ունեցող իրադարձություններին և հայտնել է, որ անգլո-ֆրանսիական իմպերիալիզմին հաջողվել է Բաքվի սովետում մեծամասնություն ստանալ ընդեմ բոլշևիկների և նրանց հավատարիմ մնացած ձախ էսէռների:

Լենինը նաև ընդգծել է, որ անգլո-ֆրանսիական իմպերիալիզմին հաջողվել է «ստանալ 30 ձայնի գերակշռություն այն բանի հետևանքով, որ ընդեմ մեզ նրանց կողմն է անցել հայ-կիսասոցիալիստների դաշնակցություն կուսակցության հսկայական մասը»:

Այնուհետև Լենինը ընթերցել է Բաքվից ստացված ընդարձակ հաղորդումը տեղի ունեցած մարտական գործողությունների, Բաքվի սովետի նիստի, մյուս իրադարձությունների մասին և անդրադառնալով Բաքվում սովետական իշխանության համար ստեղծված դժվարին դրությանը, անգլիական ինտերվենտների հետ դաշինք կնքելուց Բաքվի բոլշևիկների հրաժարվելը գնահատել է որպես սոցիալիստների համար միակ արժանի քայլ:

«Անգլո-ֆրանսիական իմպերիալիստների հետ,- ընդգծել է Լենինը,- որևէ համաձայնություն կնքելուց վճռականորեն հրաժարվելը Բաքվի ընկերների միակ ճիշտ քայլն է, քանի որ չի կարելի հրավիրել նրանց, առանց ինքնուրույն սոցիալիստական իշխանությունը, թեկուզ կտրված տարածքում, վերածելու իմպերիալիստական պատերազմի ստրուկի»:

*Լենինը Բաքվում ծավալված իրադարձությունները գնահատելով որպես Սովետական Ռուսաստանի դեմ անգլո-ֆրանսիական իմպերիալիզմի գործողությունների օղակներից մեկը, ասել է. «Եվ ահա այժմ, երբ այդ առանձին օղակները մեզ համար պարզ են դարձել, մեր հանրապետության ռազմական և ընդհանուր ստրատեգիական դրությունը դարձել է միանգամայն որոշակի: Հյուսիսում Մուրմանը, արևելքում չեխոսլովակյան ռազմաճակատը, հարավարևելքում Թուրքեստանը, Բաքուն և Ատրպատականը՝ մենք տեսնում ենք, որ անգլո-ֆրանսիական իմպերիալիզմի կողմից կտրված չղթայի գրեթե բոլոր օղակները իրար հետ միացած են» (**Վ. Ի. Լենին**, ԵԼԺ, հ. 37, էջ 1-9):*

Նույն օրը Լենինը Շահումյանին է ուղարկել վերոհիշյալ հեռագիրը, որից հետո ուղիղ գծով խոսակցություն է ունեցել Ատրպատականի ռազմական խորհրդի անդամ Էլիոմիչի հետ և նրանից խնդրել է հաղորդել, թե «ճի՞շտ է արդյոք, որ Բաքվում ժողկոմտվեսը հրաժարական է տվել: Եվս մի հարց. եթե դա ճիշտ չէ, ապա բոլշևիկների իշխանությունը դեռ որքա՞ն ժամանակ հույս ունի դիմանալու Բաքվում»:

*Էլիոմիչի հարցին. «Ե՞րբ սպասել Ատրպատանում օգնություն Բաքվի համար, ի՞նչ չափով, որպեսզի նավակներ և պարեն պատրաստենք», Լենինը պատասխանել է. «Հաստատապես խոստանալ չենք կարող, քանի որ այստեղ ևս զորքերի պակաս կա» (**Վ. Ի. Լենին**, ԵԼԺ, հ. 50, էջ 149-150):*

ԳՆԴԱՊԵՏ ԱՎԵՏԻՍՈՎԻ ՍՊԱՌՆԱԼԻՔԸ

Հուլիսի 30-ի երեկոյան Բաքվի հայոց ազգային խորհրդի դաշնակցական ղեկավարների հրավիրած խորհրդակցությունում գնդապետ Ավետիսովը զեկուցել է, որ անխուսափելի է դարձել Բաքուն թուրքերին հանձնելը և անհրաժեշտ է թուրքերի հետ հաշտության բանակցություններ սկսել:

Համազասպը, Ղազարովը և դաշնակցության մյուս անդամները համաձայնվել են Ավետիսովի առաջարկության հետ:

Այս խորհրդակցությունից հետո, հուլիսի 30-ի գիշերը դաշնակցություն կուսակցության կոմիտեն հրավիրել է Բաքվում գտնվող հայ բուրժուազիայի նշանավոր դեմքերին: Խորհրդակցելուց հետո որոշել են առավոտյան թուր-

քերի առջև սպիտակ դրոշակ բարձրացնել: Նրանք որոշել են նաև հաշտության պատվիրակության կազմը: Իսկ հայ բնակչության անվտանգությունն ապահովելու երաշխիք ունենալու նպատակով այդ պատվիրակության մեջ են մտցրել Բաքվում գտնվող չվերական հյուպատոսին:

Տեղեկանալով դաշնակցականների ընդունած որոշման մասին, Ժողկոմսովետը հուլիսի 30-ի գիշերը դեմ է արտահայտվել որևէ հաշտության բանակցության և դիմել է Բաքվի բանվորներին կոչ անելով զենք վերցնել ու պաշտպանել քաղաքը:

Միաժամանակ Ժողկոմսովետը հայկական զորամասերի հրամանատարներից պահանջել է իրենց զորքերը տեղափոխել ռազմաճակատ: Դաշնակցության ներկայացուցիչը Շահումյանին հայտնել է, որ ռազմաճակատ են ուղարկվում 16 և 18-րդ գումարտակները՝ 1300 մարդով և խոստացել է հուլիսի 31-ին ռազմաճակատ ուղարկել ևս 3000 մարդ: Իրականում այդ ամենի փոխարեն ռազմաճակատ է ուղարկվել միայն 320 մարդուց բաղկացած ջոկատը, որը, սակայն, մարտական գործողությունների չի մասնակցել:

Հուլիսի 31-ի առավոտյան ժամը 11-ին զորքերի հրամանատար գնդապետ Ավետիսովը նորից է դիմել Ժողկոմսովետի նախագահ Շահումյանին և հայտարարել է, թե թուրքերը ուժեղացրել են գրոհը և անխուսափելի է դարձել քաղաքի հանձնումը: Ավետիսովը հայտնում էր նաև, որ ռազմաճակատ հասած 320 զինվորները մարտերին չեն մասնակցում:

Սպառնալով Շահումյանին, Ավետիսովը հայտարարել է. «Եթե թույլ չտաք ինձ անմիջապես սպիտակ դրոշակ բարձրացնել, հարյուր հազարավոր զոհերի արյունը ձեր խղճի վրա է ծանրանալու»:

Դեռ Շահումյանը չէր հասցրել քննարկել Ավետիսովի հայտարարությունը, երբ Ժողկոմսովետ են գալիս Բաքվի հայոց ազգային խորհրդի ղեկավար Ա. Գյուլիսանդանյանը և գնդապետ Ղազարովը: Նրանք Շահումյանին տեղեկացնում են, որ Բաքվի հայոց ազգային խորհուրդը քիչ առաջ տեղի ունեցած նիստում վերջնականորեն որոշել է թուրքերի առաջ սպիտակ դրոշակ բարձրացնել ու անձնատուր լինել հաղթողների գթասրտության:

Շահումյանը հայոց ազգային խորհրդի և հայկական զորաջոկատների հրամանատարների վարքագիծը որակել է որպես դավաճանություն և կտրականապես մերժել է նրանց հետ որևէ համաձայնություն:

Բաքվի կարմիր բանակի զորքերի հիմնական կորիզը կազմում էին հայ

կական զորաջոկատները, որոնք, ինչպես նշվել է նախորդ էջերում, հերոսաբար էին կռվում թուրք զավթիչների դեմ և լի էին հաղթելու վճռականությամբ: Եվ դժվար չէ պատկերացնել, որ այժմ իրենց հրամանատարների և Բաքվի ազգային խորհրդի ղեկավարների դատապարտելի վարքագծի հետևանքով հայկական ջոկատներում ստեղծված բարոյալքումը, թշնամուն դիմադրելուց հրաժարվելը ինչքան կորստաբեր են եղել Բաքվի կոմունայի համար:

Բայց դա բոլորը չէր: Օգտվելով սովետական իշխանության չափազանց ծանր վիճակից, անգլիական իմպերիալիզմի կողմնակիցները կարողացել են նորից թափանցել նավատորմ և համոզել նավաստիներին հրաժարվել Ռուսաստանի կենտրոնական սովետական իշխանությունից, ամբողջապես ենթարկվել անգլիական դրածո Բիչերախովին և նավերը ուղարկել Էնզելի՝ անգլիական զորքերը Բաքու փոխադրելու համար:

Այսպիսով, Շահումյանի գլխավորությամբ գործող Բաքվի Ժողկոմսովետը հայտնվել էր կրկնակի դավաճանության փաստի առջև: Ժողկոմսովետը չէր կարող համաձայնություն գալ անգլիական իմպերիալիզմի հետ, անգլիացիներին Բաքու հրավիրել: Ժողկոմսովետը նաև չէր կարող հաշտության բանակցություններ սկսել գերմանա-թուրքական բլոկի հետ և համաձայնվել Բաքուն հանձնել թուրքերին:

1918 թ. հուլիսի 31-ին ցերեկվա ժամը 3-ին գնդապետ Ավետիսովը Շահումյանին երրորդ անգամ հայտնել է սպիտակ դրաշակ բարձրացնելու, հաշտության բանակցություններ սկսելու և քաղաքը թուրքերին հանձնելու մասին:

*Ցերեկվա ժամը 4-ին, ինչպես գրել է Շահումյանը, «Ունենալով բանակի հրամանատար Ավետիսովի և Պետրովի շտաբի պետ ընկ. Ստեպանովի վճռական հայտարարությունը, որ քաղաքը հանձնելն արդեն անխուսափելի է և մի քանի ժամվա հարց և, մյուս կողմից էլ՝ չցանկանալով խանգարել բնակչությանը օգտագործել վերջին միջոցը՝ հաղթողի գթասրտությանը անձնատուր լինելու ցանկությունը, Ժողովրդական կոմիսարների սովետը որոշեց հրաժարվել իր լիազորություններից և նավերով էվակուացիայի ենթարկել ռազմական ուժերն ու Սովետական Ռուսաստանին պատկանող պետական գույքը» (**Ստ. Շահումյան**, նույն տեղը, հ. հինգերորդ, էջ 228-229):*

ԲԱՔՎԻ ԲԱՆՎՈՐՆԵՐԻՆ ՈՒՂՂՎԱԾ ԿՈՉԸ

Բաքվի բանվորներին ուղղված կոչում Շահումյանը շարադրել է վերջին օրերին տեղի ունեցած դեպքերը և նշել է, որ դրանց կարճ թվարկումը բավական է, «որպեսզի պարզ լինի, թե ինչու Ժողովրդական կոմիսարների սովետը գերադասեց թշնամին քաղաք ներխուժելիս քաղաքացիական կռիվ չսարքել, այլ դիմել պատմենտական ձևով իշխանությունից հրաժարվելուն, որպեսզի հեռագրի համար պատասխանատվությունն իրենց վրա վերցնեն նրանք, ովքեր կարող են հաշտվել թուրքերի հետ կամ Բաքու հրավիրել անգլիացիներին»:

«Մենք,- շարունակում էր Շահումյանը,- չէինք կարող լինել ոչ այն մարդկանց թվում, ովքեր անձնատուր են լինում թուրքական փաշաների ողորմածությանը, փրկում են իրենց կաշին, բոլշևիկներին ու ռուսական զորքերին մատնելով թուրքական բանդաների ձեռքը՝ հոշոտելու, և ոչ էլ նրանց թվում, ովքեր, չնայած հայրենասիրության վերաբերյալ կեղծավոր ֆրազներին, պատրաստ են Բաքուն հանձնել անգլիացիներին: Մենք որոշեցինք փրկել Ռուսաստանի սովետական իշխանությունը հավատարիմ հեղափոխական զորքերը, որպեսզի սպասելով Աստրախանից եկող զորքերին, նրանց հետ միասին կռիվ հայտարարենք երկու ճակատում՝ թուրքական ու անգլիական իմպերիալիզմին և պաշտպանենք Բաքուն հեղափոխական Սովետական Ռուսաստանի համար»:

*Անդրադառնալով նրանց, ովքեր գոռում են «բոլշևիկների փախստականության մասին», Շահումյանը մատնացույց էր անում դաշնակցություն կուսակցության ներկայացուցիչներին, «որոնք հենց իրենց մանրբուրժուական կիսատ-պռատությամբ ու վախկոտությամբ բարոյալքեցին հակառակորդին հիանալի կերպով հաղթելու ընդունակ զորքերը և որոշեցին ապատակ դրոշակ բարձրացնել»: Շահումյանը մատնացույց է արել նաև էսէռներին ու մենշևիկներին, «որոնք նույն մորթապաշտական քաղքենիական խուճապի պատճառով ճչացին անգլիացիների մասին, երբ կարելի էր իր ժամանակին ուղի հանել ամբողջ պրոլետարիատին»: «Մենք ծանր օրեր ենք ապրում,- ընդգծում էր Շահումյանը,- դաշնակների դավաճանությունն ու անգլիացիների շանտաժը շատ շուտով կպարզվի պրոլետարիատի համար և այն ժամանակ վայ պրպարտիչներին ու դավաճաններին» (**Ստ. Շահումյան**, նույն տեղը, հ. հինգերորդ, էջ 225-230):*

Սովետական Ռուսաստանի արտաքին գործերի ժողկոմի տեղակալ Լևոն Կարախանը 1918 թ. օգոստոսի 1-ին արդեն հրաժարական տված ժողկոմ-

սովետի նախագահ Շահումյանին ուղարկած հեռագրում ընդգծում էր. «Անդրկովկասը կործանելով և Բաքուն ոչնչացնելով, հայ ժողովրդին բնաջնջելով անգլո-ֆրանսիական գործակալները ստեղծում են նոր ռազմաճակատ ընդդեմ Գերմանիայի: Բաքվի պրոլետարիատը պետք է մերժի հակահեղափոխական դավաճաններին, մենշևիկյան, էսէռական կամպանիային ու անգլո-ֆրանսիական գործակալներին և իր հույսը դնի միայն Ռուսաստանի պրոլետարիատի վրա»:

Իր հեռագրում Կարախանը տեղեկացնում էր նաև Սովետական Ռուսաստանի և Գերմանիայի միջև տեղի ունեցած բանակցությունների մասին, որոնց արդյունքով Գերմանիայի պնդմամբ թուրքերը դադարեցրել էին ռազմական գործողությունները (ՀՀ ԱԱ, ֆ.1437, ց. 2, գ. 76, թ. 1-2):

Թուրքիայի կողմից ռազմական գործողությունների դադարեցմանը նպաստել էր նաև օգոստոսի 3-ին թուրքական գրոհի ետ մղումը, որի մասին խոսք կլինի հաջորդ էջերում:

Կարախանի հեռագիրը չի հասել Շահումյանին: Այդ հեռագիրը, որը թաքցրել էր Ցենտրոկասպիայի դիկտատուրան, հրապարակվել է նրա «Տեղեկագրում» օգոստոսի 21-ին:

ԳԼՈՒԽ 27
ՑԵՆՏՐՈԿԱՍՊԻԱՅԻ ԴԻԿՏԱՏՈՒՐԱՅԻ ՍՏԵՂԾՈՒՄԸ

Ժողկոմսովետի հրաժարականից հետո 1918 թ. օգոստոսի 1-ին Բաքվում անգլիական հյուպատոս Մակ-Դոնելի հավանությամբ էսէռները, մենշևիկները ու դաշնակցականները կազմում են Ցենտրոկասպիայի և գործադիր կոմիտեի նախագահության դիկտատուրա-կառավարությունը: Այդ կառավարության մեջ մտել էին մենշևիկներ Սադովսկին ու Այոլոն, էսէռներից Ումանսկին ու Աբրահամ Վելունցը, դաշնակցականներից Առաքելյանն ու Ս. Մելիք-Յոլչյանը:

Ցենտրոկասպիայի դիկտատուրան օգոստոսի 2-ին հրապարակել է իր առաջին կոչը, որտեղ ասվում էր. «Ամենածանր րոպեին, երբ ռուսական հեղափոխության թշնամին հայտնվել է Բաքու քաղաքի դարպասների մոտ, Բաքվի Ժողկոմսովետը վայր է դրել իր լիազորությունները: Ներծծված նեղ կուսակցական քաղաքականությամբ, այդ իշխանությունը իր գոյության կարճ ժամանակամիջոցում, հասցրեց նրան, որ ոչ արտաքին, և ոչ էլ ներքին ճակատներում չստեղծեց այն բարոյական ու նյութական պայմանները, որոնք հնարավորություն կտային Բաքվի պրոլետարիատին և կարմիր բանակին հաջող պայքար տանել Բաքուն պահպանելու հեղափոխական Ռուսաստանի համար»:

«Բաքվի պրոլետարիատը և քաջարի բանակն ու նավատորմը,-այնուհետև ընդգծվում էր կոչում,- Հուլիսի 25-ին սովետի արտահերթ ընդլայնված նիստում իրենց քվեարկությամբ հավանություն չտվեցին իր լիազորությունները վայր դրած Ժողկոմսովետի քաղաքականությանը»:

Կոչն ազդարարում էր, որ «ժամանակավոր գործկոմի նախագահությունը Ցենտրոկասպիայի ռազմական նավատորմի դիկտատուրայի հետ լիակատար միասնությամբ հանդիսանում է քաղաքի գերագույն իշխանություն: Այլ իշխանություն չկա և նրան են ենթարկվում քաղաքի բոլոր հիմնարկությունները»:

Այս կոչը ստորագրել էին Աբրահամ Վելունցը, Լև Ումանսկին (աջ էսէռներ), Մելիք-Յոլչյանը (դաշնակցական), Այոլոն (մենշևիկ) (ՀՀ ԱԱ, ֆ. 1437, ց. 3, գ. 11, թ1; «Бюллетень диктатуры Центрокаспия и временного исполкома». *02. 08 1918* г.*):*

Կոչը ստորագրած կուսակցությունների ներկայացուցիչները ոչ մի խոսք չեն ասում Բաքվի Ժողկոմսովետի գործունեությունը խանգարելու, ռազմահակատում անգլիացիներին հրավիրելու ագիտացիայով կազմակերպած առաջացնելու իրենց քայքայիչ գործողությունների մասին և ստեղծված վիճակի համար մեղադրում են Բաքվի ժողովրդական կոմիսարներին:

«Ցենտրոկասպիայի դիկտատուրա» անունով ստեղծված կառավարությունը մենշևիկ Սադովսկու գլխավորությամբ առաջին հերթին ցրում է Բաքվի սովետը, փակում է բոլշևիկյան թերթերը, կապ է հաստատում Անդրկասպիայի էսէռների և Վրաստանի մենշևիկների հետ:

Նկատի ունենալով, որ Բաքվում սովետական իշխանության տապալումը, Բաքվի Ժողկոմսովետի հրաժարականը և Անդրկասպիայում սովետական իշխանության տապալումը կատարվել են համարյա նույն ժամանակում, կարմենում եմ ընդգծել հետևյալը.

Առաջին. *Ինչպես Անդրկասպիայում, այնպես էլ Բաքվում աջ էսէռների, մենշևիկների և դաշնակցականների առավել ակտիվացումը 1918 թ. հուլիսին պատահական զուգադիպություն չի եղել:*

Երկրորդ. *Ինչպես Անդրկասպիայում, այնպես էլ Բաքվում աջ էսէռները, մենշևիկները և դաշնակցականներն ապավինվում էին անգլիացիներին և գործում էին նրանց թելադրանքով:*

Երրորդ. *Ինչպես Անդրկասպիայում, այնպես էլ Բաքվում անգլիական ինտերվենտների սվիններ վրա հենված աջ էսէռների, մենշևիկների և դաշնակցականների իշխանությունը խոսքով իրենց հայտարարում են սովետական իշխանության կողմնակիցներ, բայց գործնականում կատաղի պայքար են ծավալում սովետական իշխանության դեմ:*

Նրանք Աշխատաղում սպանում են Անդրկասպիայի Ժողկոմսովետի բոլոր անդամներին, իսկ Բաքվում նախապատրաստում են Ժողկոմսովետի անդամների հետ հաշվեհարդարի կազմակերպումը:

Չորրորդ. *Անդրկասպիայի և Բաքվի աջ էսէռները, մենշևիկներն ու դաշնակցականներն անգլիական իմպերիալիստների թելադրանքով գործում էին միմյանց հետ համաձայնեցված ծրագրով:*

*Այդ մասին են վկայում Թուրքմենստանի արխիվներում պահպանված փաստաթղթերը (**Թուրքմենստանի պետական կենտրոնական արխիվ**, ֆ. 118, 137, 159, 580; **Թուրքմենստանի կոմկուսի արխիվ**, ֆ. 24,), Սովետական Թուրքեստանի մամուլում հրապարակված նյութերը (*«Наша газета», «Советский Туркестан», «Горнист», «Трудовая мысль»*), ինչպես նաև Պարսկաստանում անգլիական զինված ուժերի հրամանատար գեներալ Դենստերվիլի հուշերի գիրքը (*Британский империализм в Баку и Персии 1914-1918 гг., М. 1924*):*

ԹԱԴԵՎՈՍ ԱՄԻՐՅԱՆԻ ՎՃՌԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Հուլիսի 31-ին Բաքվի Ժողկոմսովետի ղեկավարներն ու աշխատողները, ինչպես նաև սովետական զորաջոկատները Շահումյանի հետ միասին հարվածել էին նավահանգստում և պատրաստվում էին նավերով մեկնել Աստրախան:

Օգոստոսի 1-ին, երեկոյան Շահումյանը, Ջափարիձեն, Շեբոլդաևը, Ս. Տեր-Գաբրիելյանը և մյուս գործիչները բարձրանում են նավ: Նրանց տանող նավը շատ չէր հեռացել ափից, երբ երեկոյան ժամը 11-ին մոտեցել է «Աստրաբաղ» ռազմանավը: Ցենտրոկասպիայի դիկտատուրայի անունից պահանջում են ետ վերադառնալ, սպառնալով գնդակոծել:

Այնուհետև ձերբակալել են Շահումյանին և Ս. Տեր-Գաբրիելյանին (մյուսներին նավաստիները կարողացել էին թաքցնել) ու տեղափոխել են ռազմանավ:

Երբ ձերբակալելու եկած նավաստուն հարցնում են, թե ում կարգադրությամբ են ձերբակալում, նա պատասխանել է՝ Ցենտրոկասպիայի, և ավելացրել է, որ բոլոր ձերբակալվածները կգնդակահարվեն չոգենավի վրա, քանի որ «ժողովուրդը» պահանջում է կոմիսարներին ափ դուրս բերել, որպեսզի դաժան հաշվեհարդար տեսնի նրանց հետ:

Ինչպես վկայել է Ս. Տեր-Գաբրիելյանը, որը Շահումյանի հետ գտնվում էր նույն նավում, հրաժարվել են կատարել զինված նավաստիների պահանջը: Կարճ ժամանակ անց ռազմանավից նավ են բարձրացել նավաստիները և Ցենտրոկասպիայի դիկտատուրայի անունից պահանջել են Շահումյանին և Տեր-Գաբրիելյանին տեղափոխվել ռազմանավ, հակառակ դեպքում սպառնալով գնդակոծել նավը:

Եվ որպեսզի անմեղ զոհեր չլինեն Շահումյանը համաձայնվել է և Տեր-Գաբրիելյանի հետ միասին ենթարկվել են նավաստիների պահանջին: Ռազմանավի հրամանատարը, որը թունդ հակահեղափոխական էր, սկսել է Շահումյանին ու Տեր-Գաբրիելյանին ծաղրի ենթարկել, սպառնալով գնդակահարել:

Երբ ռազմանավն արդեն մոտեցել էր ափին, Թադևոս Ամիրյանը (Ամիրով) տեղեկանալով Շահումյանին ձերբակալելու մասին, Ցենտրոկասպիայի դիկտատուրայի ղեկավարներից պահանջում է Շահումյանին անհապաղ ազատել, սպառնալով իր ջոկատով ավերել քաղաքը:

Ամիրյանի սպառնալիքը զգաստացրել էր դիկտատուրայի ղեկավարներին և նրանց ներկայացուցիչ Լեմլեյնը Կորգանովի ուղեկցությամբ բարձրանում է ռազմանավ, ներողություն է խնդրում Շահումյանից տեղի ունեցած թյուրիմացության համար:

Երկու խոսք Թադևոս Ամիրյանի մասին: Նա դաշնակցության անդամ էր և հայերից կազմված հեծյալ ջոկատի հրամանատարն էր: Հրաժարվում է հետևել դաշնակցության ղեկավարների օրինակին և իր ջոկատով մնացել է ռազմաճակատում և շարունակել է կռվել Թուրքերի դեմ: Չհամաձայնվելով դաշնակցության ղեկավարությամբ գործող Բաքվի ազգային խորհրդի քաղաքականության հետ, Թ. Ամիրյանը մինչև իր կյանքի վերջը հավատարիմ է մնացել սովետական իշխանությանը, զոհվելով 1918 թ. սեպտեմբերի 20-ին, որպես Բաքվի 26 կոմիսարներից մեկը:

Տեղի ունեցածի կապակցությամբ Ցենտրոկասպիայի դիկտատուրան հրապարակել է կոչ՝ ուղղված Բաքվի բանվորությանը: Հայտնելով, որ Բաքվի ժողովրդական կոմիսարները հրաժարական են տվել, կոչը փաստում էր. «Ընկա՛ նեղ կուսակցական բոլշևիկների կառավարությունը, ընկա՛ նրա համար, որ քիչ էր մնացել Բագուն յանձնէր գերմանո-տաճկական յափշտակիչներին: Վարկաբեկ եղած ղեկավարներից երես դարձրին աշխատավորները. յուլիսի 26-ի լայնացրած Խորհրդի ժողովն անվստահություն յայտնեց բոլշևիկ կառավարության»:

Դիկտատուրան հայտնում էր, որ Բաքվի սովետի պահանջով քաղաքի պաշտպանության համար սոցիալիստական բոլոր կուսակցություններից կազմվել է կոալիցիոն կառավարություն, որին հրաժարվել է մասնակցել Շահումյանը, որը, իբր թե, հուլիսի 30-ին Բաքվի սովետում հայտնել էր, թե քաղաքը հնարավոր չէ պաշտպանել և տվել են հրաժարական:

Ճիշտ է, բոլշևիկները Շահումյանի գլխավորությամբ հրաժարվում են կոալիցիոն կառավարության մեջ մտնել, բայց նա երբեք չի հայտարարել, թե անհնար է քաղաքը պաշտպանել:

«Այսպիսով,- հայտարարում էր Դիկտատուրան,- Բագվի Կոմիսարների խորհուրդը բանակն ու թիկունքը կազմալուծեց և Բագուն անպաշտպան դարձրեց, յետոյ լա՛ւ համարեց ձեռները լանջա՛ և փախչել»:

Շարունակելով կեղծել իրականությունը, Դիկտատուրան հայտնում էր. «Կոմիսարները քաղաքն ու ազգաբնակությունը իր բախտին թողնելով և մոտեցող թշնամուն յանձնելով, նաւերով փախան, որպէսզի Աստրախան գնան: Այս փախուստն ամբողջապէս լքում առաջ բերեց բանակում և ահաբեկում քաղաքում: Թշնամին անհաւատալի արագութեամբ քաղաքին մոտեցաւ,

նրանց մի քանի զօրամասերն արդէն մուտք էին գործում քաղաքի ծայրամասերը, մինչդէռ քաղաքում ոչ մի իշխանութիւն գոյութիւն չունէր, այդ իշխանութիւնը իր բոլոր իրերով փոխադրուել էր նաւը և դաւահանել իր պաշտօնին: Այդ ծայրայեղ ծանր ըոպէին կազմուեց նոր իշխանութիւն»:

Յենտրոկասպիայի դիկտատուրայի կոչը ստորագրել էին աջ էսեռների, մենշևիկների և դաշնակցականների ներկայացուցիչները, այդ թվում՝ Մելիք Յոլչյանն ու Առաքելյանը: (**«Արեւ»**, օգոստոսի 9, 1918 թ.):

Յենտրոկասպիայի դիկտատուրան իշխանությունը իր ձեռքն էր վերցրել օգոստոսի 1-ին, իրեն հայտարարել էր Բաքվի գերագույն իշխանություն և այդպիսի պայմաններում հասկանալի չէ, թե ինչու պետք է այլևս իշխանություն չունեցող Ժողկոմսովետի հեռանալը քաղաքում ստեղծեր լքում և ահաբեկում:

«Արեւ» թերթը նույն օրերին հրապարակել է Բ. Իշխանյանի ընդարձակ հոդվածը, որտեղ նա փաստել է հետևյալը. «Յուլիսի 24-ին եղաւ Բաքվի բոլշևիզմի բարոյական-քաղաքական պարտութիւնը, իսկ 31-ին՝ նրա փաստական և ֆիզիկական պարտութիւնը»: (**«Արեւ»**, օգոստոսի 9, 1918 թ.):

Այս կապակցությամբ հարկ եմ համարում նշել, որ Բ. Իշխանյանը, որը նաև ղեկավարում էր Բաքվում գործող հայ սոցիալ-դեմոկրատական բանվորական կուսակցության կազմակերպությունը, մինչ այդ հանդես էր գալիս բոլշևիկներին և դաշնակցականներին հաշտեցնելու կոչերով և խուսափում էր բոլշևիկների հասցեին որևէ քննադատական խոսք ասել կամ նրանց քաղաքականության դեմ հանդես գալ: Բայց հենց որ հոչակվում է Յենտրոկասպիայի դիկտատուրան, նա ապարեզ է գալիս և ազդարարում է բոլշևիզմի բարոյական, քաղաքական ու ֆիզիկական պարտության մասին:

Օգոստոսի 4-ին ձերբակալությունից ազատված Շահումյանը միացել է Բաքվի Պետրովսկի հրապարակում հավաքված իր զինակիցներին: Ասոիճանաբար այստեղ են հավաքվել նաև Կոմունային հավատարիմ մնացած զորաջոկատները՝ թվով 3000 մարդ, սովետական աշխատողները: Այստեղ, Պետրովսկի հրապարակում ստեղծվել էր Լևոն Շահումյանի գլխահատմամբ «մի տեսակ պետություն պետության մեջ»:

Այդ ժամանակ Բիչերախովը մերկացրել էր ռազմաճակատը և հեռացել էր Պետրովսկ: Իսկ դաշնակցությունն իր զորաջոկատները հանել էր ռազմաճակատից և տեղափոխել էր քաղաք:

ԹՈՒՐՔԱԿԱՆ ԳՐՈՀԸ ԵՏ Է ՄՂՎՈՒՄ

Թուրքերին հայտնի էին դարձել Բաքվում տեղի ունեցած դեպքերը և նրանք, հաշվի առնելով, որ սովետական զորաջոկատներն էլ պատրաստվում են հեռանալ Բաքվից, օգոստոսի 3-ին մոտենցել են քաղաքին և սկսել են հրանոթային գնդակոծություն, առաջ բերելով խուճապ: Յենտրոկասպիայի ղեկավարները խուճապի մատնելով, կորցրել էին իրենց գլուխը:

Այդ ծանր կացության ժամանակ Շահումյանի ցուցումով Պետրովի ջոկատի մարտիկները ժամը 3-ին թնդանոթները նավերից իջեցրել են ափ և սկսել են կրակել Բիբի-Հեյբաթի բարձունքի վրա դիրքեր գրաված թուրքերի ուղղությամբ: Երեք ժամվա ընթացքում թնդանոթները 8000 արկ են արձակել թուրքերի վրա: Միաժամանակ Շահումյանը թուրքերի դեմ է ուղարկել Պետրովսկի հրապարակում եղած ջոկատներին: Գրոհին մասնակցում էին նաև Ժողկոմսովետի բոլոր անդամները:

Մարտերը շարունակվել են օգոստոսի 5-6-ին: Օգոստոսի 6-ի երեկոյան ժամը 6-ին թուրքերը մեծ թվով կորուստներ կրելով, ետ են նահանջել Բիբի-Հեյբաթից մինչև 15 կմ : Ձախողվում է թուրքերի ներխուժումը Բաքու (**Ստ. Շահումյան**, նույն տեղը, հ. հինգերորդ, էջ 248; **Ստեփան Շահումյանը ժամանակակիցների հուշերում**, էջ 324; А. Б. Кадишев, Интервенция и гражданская война в Закавказье, М. 1960, ст8. 131)

Այսպիսով, Բաքվի Ժողկոմսովետը, նույնիսկ իշխանությունից հրաժարվելուց հետո, երբ պատրաստվում էր սովետական ջոկատների հետ հեռանալ Բաքվից, թուրքերի հարձակումով քաղաքի համար ստեղծված վտանգի ժամանակ Շահումյանի գլխավորությամբ մեկ անգամ էլ փրկում են Բաքվի բնակչությանը:

Օգոստոսի 5-6-ին ձեռնարկած անհաջող գրոհից հետո, թուրքերը մոտ մեկ ամիս չէին համարձակվում շարժվել Բաքվի վրա: Այս գործում որոշակի դեր են խաղացել նաև նախորդ էջերում նշված Բրեստի պայմանագրի առնչությամբ Սովետական Ռուսաստանի ձեռնարկած դիվանագիտական քայլերը:

Թուրքերի դեմ սովետական զորաջոկատների տարած հաղթանակը վկայում է, որ Յենտրոկասպիայի դիկտատուրան անզոր էր քաղաքը թուրքերից պաշտպանելու գործում: Նրանք նույնիսկ Շահումյանին ու Պետրովին չնորհակալություն են հայտնել Բաքուն փրկելու համար:

Այդ հաղթանակը մեկ անգամ ևս ապացուցել է, որ հնարավոր էր ոչ միայն թուրքերի արշավանքը կասեցնել, այլ նաև նրանց ջախջախել ու ետ շպր-

տել և ցույց է տալիս թուրքերի առջև ապիտակ դրոշակ բարձրացնելու կողմնակիցների ոչ միայն անճարակությունը, այլև թուրքերի կամքին ենթարկվելը, որը հետո միայն պետք է բացահայտվեր:

Բաքվում ստեղծվում է հետաքրքիր իրավիճակ: Մի կողմում իշխանությունը գավթած Ցենտրոկասպիայի դիկտատուրայի անճարակությունն էր, մյուս կողմում՝ Շահումյանի գլխավորությամբ սովետական ուժերը, որոնց արգելվել էր էվակուացվել և մնացել էին քաղաքում անորոշ դրության մեջ:

Սովետական ջոկատների տարած այս վերջին հաղթանակը քաղաքի բնակչության վրա թողնում է մեծ տպավորություն, վերատին հավանալու և գնահատելու Բաքվում կատարված իրադարձությունների իմաստը:

ԲԱՔՎԻ ԲՈԼՇԵՎԻԿՆԵՐԻ ԿՈՆՖԵՐԱՆՍԸ

Ահա, այսպիսի պայմաններում որոշվում է հրավիրել Բաքվի բոլշևիկների կոնֆերանս, որտեղ ստեղծված դրության մասին զեկուցում է Շահումյանը, որը գնում է իշխանությունը գրավելու անհրաժեշտությունը: Այդ մասին նա 1918 թ. օգոստոսի սկզբին հեռագրով հայտնում է Լենինին ու Սվերդլովին, ընդգծելով, որ եթե «անհապաղ այժմ տրվի 1000 ավելից բաղկացած մի ուժ, ապա իշխանությունը կվերականգնվի և Բաքուն դեռ կկարողանա դիմանալ մինչև նոր ուժերի գալը» (**Ստ. Շահումյան**, նույն տեղը, հ. հինգերորդ, էջ 233-234):

Ինչպես հիշում է Միկոյանը, երկար վեճերից հետո վերոհիշյալ կոնֆերանսը որոշում է «զինված ուժերը չէվակուացնել Աստրախան, այլ, ընդհակառակը, օգտագործելով բաքվեցիների տրամադրության բեկումը հօգուտ բոլշևիկների, վերատին գավթել իշխանությունը: Գործնականում դա հնարավոր էր: Հակառակորդը քաղաքում ավելի քիչ ուժեր ուներ, քան մենք, իսկ ռազմաճակատից, միևնույն է, նա չէր հացնի իր զորքերը բերել: Մենք հույս ունեինք, Բաքվում հավաքելով մեր բոլոր ուժերը և զորքով օգնություն ստանալով Աստրախանից, պաշտպանել մեր քաղաքը» (**Ա. Ի. Միկոյան**, նույն տեղը, էջ 227):

Կոնֆերանսից հետո Շահումյանը կոչով դիմել է Բաքվի բանվորներին: Նա հիշեցնում էր, որ Ժողկոմսովետի հրաժարականից հետո Բաքուն «պաշտպանվում էր գլխավորապես Պետրովի հերոսական ջոկատի շնորհիվ, շնորհիվ նույն Պետրովի հրետանու, որը թև էր տալիս կռվող պրոլետարիատի հերոսական ջանքերին»:

Շահումյանը համոզված էր, որ «դեռ կմոտենան զորքեր Ռուսաստանից,

այդ իրը թե «վախկոտ» բոլշևիկյան զորքերը, և Բաքուն կփրկվի: Կփրկվի ոչ թե կարմիր բանակը քայքայող ու իսկապես երկչոտ ավետիսների և համազգասների ապիտակ դրոշակով և ոչ էլ անգլիացիների ու նրանց սպասավորների երևակայական օգնությամբ, այլ բանվորա-գյուղացիական Ռուսաստանի զորքերով, մեզ օգնության հասնող սովետական զորքերով»:

Կոչի վերջում Շահումյանը գրում էր. «Հերոսաբար քաղաքի պաշտպանությանն անցած Բաքվի պրոլետարիատը իսկական բարեկամներ ու պաշտպաններ կունենա միմիայն Հանձինս Ռուսաստանից եկած սովետական զորքերի: Միմիայն նրանք պրոլետարիատի հետ միասին կպաշտպանեն Բաքուն գերմանա-թուրքական և անգլիական իմպերիալիստներից: Կենտրոնական իշխանության ուղարկած՝ ռազմական կոմիսար ընկեր Պետրովի ջոկատն արդեն այդպիսի կռիվ է մղում:

Ընկեր բանվորնե՛ր, անցեք ընկ. Պետրովի ջոկատի դրոշակի տակ, մեզ համար այնքան թանկագին բանվորա-գյուղացիական Ռուսաստանի դրոշակի տակ, որտեղից նա ուղարկված է» (**Ստ. Շահումյան**, նույն տեղը, հ. հինգերորդ, էջ 231):

Թուրքերի հարձակման ետ մղումը, իսկապես, ոգևորություն էր առաջացրել: Բանվորները խմբերով գալիս էին Պետրովսկի հրապարակ, հայտնելով իրենց համերաշխությունն այստեղ գտնվող սովետական ուժերին: Նույնիսկ կազմակերպվել էր զորքերի ուսուցում:

Իհարկե, Պետրովսկի հրապարակում կուտակված սովետական ջոկատները թուրքերի գրոհը ետ շպրտելուց հետո կարող էին հեշտությամբ տապալել ամուր հենարան չունեցող դիկտատուրայի իշխանությունը: Այդ դեպքում չէր բացառվում նաև քաղաքացիական պատերազմի հնարավորությունը:

Բայց կար մի նուրբ հանգամանք ևս: Բանը նրանումն էր, որ Ցենտրոկասպիայի դիկտատուրայի իշխանությունը պաշտպանող ուժերի մեջ էին հիմնականում դաշնակցականների ղեկավարած զինված ջոկատները: Սովետական ուժերի մեջ էին նաև մեծ թվով հայ մարտիկներ, ինչպես նաև Թադևոս Ամիրյանի ջոկատը, որը նույնպես աչքի էր ընկել օգոստոսի 3-ին թուրքերին ետ շպրտելու ժամանակ:

Փաստորեն, եթե սկսվեր քաղաքացիական պատերազմ, ապա դա վերածվելու էր եղբայասպան պատերազմի, որին երբեք Շահումյանը չէր գնա: Այդ նպատակով էլ նրա հանձնարարությամբ քաղաքի տարբեր շրջաններ էին մեկնել կուսակցական կազմակերպիչներ՝ խնդիր ունենալով շոշափել վերոհիշյալ ջոկատների զինվորների տրամադրությունը, որոնք չէին մասնակցել

օգոստոսի 3-ին թուրքերի դեմ մղված մարտական գործողություններին:

Իսկ երբ օգոստոսի 4-ին Բաքու եկան անգլիական զորքերը, Շահումյանը քաղաքացիական պատերազմի հնարավորությունը բացառել է, նկատի ունենալով, որ դրանից կօգտվեն արտաքին թշնամիները՝ ոչ միայն արդեն Բաքու եկած անգլիական զորքերը, այլև Բաքվի մատույցներում գտնվող թուրքական զորքերը: Դա մեծապես բարդ իրավիճակ կստեղծեր և սովետական ուժերն առանց Ռուսաստանից սպասվող օգնության չէին կարողանա դրության տերը լինել:

ԱՆԳԼԻԱՑԻՆԵՐԻՆ ԸՆԴՈՒՆՈՒՄ ԵՆ ՃՈԽՈՒԹՅԱՄԲ

Օգոստոսի 4-ին Բաքվի նավահանգստում էսէռ-մենշևիկյան և դաշնակցական բլոկի կազմած Յենտրոկասպիայի դիկտատուրայի ղեկավարները մեծ շուքով դիմավորում են անգլիական զորքերով բեռնված նավերը: Նախորդ օրը թուրքական գրոհը ետ մղելուց հետո, արդեն խրոխտացած, նրանք իրենց «Бюллетень»*-ի մեջ գրում են, թե եթե չլիներ անգլիացիների ժամանումը, թուրքերը չէին նահանջի (*«Бюллетень»*, 05. 08 1918* г.*):*

Գեներալ Դենստերվիլն անմիջապես հրապարակել է իր հռչակագիրը, որտեղ նշում էր, թե Բրիտանական կառավարությունը իր դաշնակիցների հետ Բաքվի բնակչության հրավերով ուղարկել է զորք և ռազմապաշար շրջապատված քաղաքին օգնելու համար:

Անգլիական գեներալն ազդարարում էր.

*«**Առաջին**. Բաքվում Բրիտանական կառավարությունը ոչ մի շահ չունի բացի դաշնակիցների ընդհանուր շահերից՝ կապված գերմանական իմպերիալիզմի դեմ պայքարի հետ: Անգլիական զորքերի գալու նպատակն է պայքարել թուրքերի և գերմանացիների դեմ:*

***Երկրորդ**. Բրիտանական զորքերի կողմից ոչ ոք իրավունք չունի միջամտել Ռուսաստանի ներքին քաղաքականությանը և բոլոր քաղաքական կուսակցություններն ու ազգությունները հավասար են Բրիտանական կառավարության և նրա դաշնակիցների աչքում:*

***Երրորդ**. Բրիտանական զորքերը գործում են դաշնակիցների գիտությամբ և Յենտրոկասպիայի ժամանակավոր դիկտատուրայի ու Բիչերախովի զորքերի համաձայնությամբ» (*«Бюллетень»*, 09, 08. 1918* г.*):*

Յենտրոկասպիայի դիկտատուրան իր տրամադրության տակ չուներ որևէ խելացի զինվորական գործիչ: Միակ զինվորականը, որ կարող էր իր

վրա վերցնել քաղաքի պաշտպանությունը՝ նախկին զինավոր շտաբի սպա գեներալ Հակոբ Բագրատունին էր, որի ուղը մի քանի ամիս առաջ կտրել էին նրա դեմ մահափորձ կատարելու հետևանքով:

Հ. Բագրատունին հետևողականորեն հանդես էր գալիս թուրքերի դեմ կռիվը շարունակելու օգտին: Նա խոր վիշտ էր ապրում, տեսնելով, թե հայ զինվորներն ինչպես էին մասսայաբար լքում թուրքերի դեմ ռազմաճակատը, չհասկանալով, որ ռազմաճակատի մերկացնելու, Բաքուն թուրքերի կողմից գրավելու դեպքում զազազած մուսուլմանական ավազակախմբերն ամենից առաջ դաժան դատաստան են տեսնելու հայ բնակիչների նկատմամբ: Հաշմանդամ գեներալը հենց այդ ամենի համար էլ հակասության մեջ էր մտել Բաքվի հայոց ազգային խորհրդի պարագլուխների հետ:

*Այդ էր պատճառը, որ չի ընդունվում Բագրատունու թեկնածությունը, որին, որպես հայի, դեմ էին նաև Յենտրոկասպիայի ծովայինները (*Архив русской революции, том 9, стр.131*):*

Օգտվելով այդ հանգամանքից Բաքու ժամանած գեներալ Դենստերվիլն անմիջապես հավակնում է իր ձեռքը վերցնել քաղաքի պաշտպանության ղեկավարումը: Անգլիացիները տեղադրում են մարտկոցները, ստեղծում են փշալարային պատնեշներ: Եվ այդ ամենը կատարում էին ցուցադրական գործողություններով:

Օգոստոսի 7-ին, երբ արդեն սովետական իշխանությանը հավատարիմ ուժերը ետ էին շպրտել թուրքական գրոհը, երբ արդեն Բաքու էին եկել անգլիացիները, Յենտրոկասպիայի դիկտատուրայի ուշքի եկած ղեկավարները Կրասնովոդսկի միջոցով ուղարկած հեռագրով հայտնում են Բաքվի Ժողկոմսովետի կողմից լիազորությունները վայր դնելու մասին: Այդ հեռագրում ասվում էր. «Ընկալ նեղ Ֆրասկցիոն բոլշևիկյան իշխանությունը: Ընկավ, որովհետև իր քաղաքականությամբ Բաքուն և նրա նավթային շրջանը քիչ էր մնացել տար գերմանա-թուրքական գիշատիչների ձեռքը»:

Հեռագրի հեղինակները շարունակելով կեղծել իրականությունը, հայտարարում էին. «Այս տագնապալի ժամին կազմվել է նոր իշխանություն, որը ...իր սուրբ պարտքն է համարում Ռուսաստանի հետ անխզելի կապ հաստատել և մինչև վերջին կաթիլը կպաշտպանի Բաքուն ու նրա նավթային շրջանը հեղափոխական Հայրենիքի համար»:

Իրենց դավաճանությունը կոծկելու նպատակով հեռագրի հեղինակները հայտնում էին. «Իր առջև ունենալով թշնամու՝ հանձին գերմանա-թուրքական բանակի, գերակշռող և կազմակերպված ուժը, սեփական ուժերով հույս

չունենալով պաշտպանել Բաքուն, ժամանակավոր իշխանությունը ստիպված դիմել է Պարսկաստանում անգլիական հրամանատարությանն ընդհանուր թշնամու դեմ համատեղ համաձայնեցված գործողությունների համար ռազմատեխնիկական համաձայնություն կնքելու մասին, մեր ներքին գործերին դաշնակիցների կողմից բոլորովին չմիջամտելու պայմանով»:

*Ցենտրոկասպիայի դիկտատուրայի ղեկավարները իրենց հեռագիրը եզրափակում էին ահավոր ստով. «Բաքվի սովետը հույս ունի նավթային շրջանը պահել Հեղափոխական Ռուսաստանի համար: Ամբողջապես գիտակցելով Բաքվի նավթի հակայական նշանակությունը Ռուսաստանի արդյունաբերության համար, ժամանակավոր իշխանությունը հրաման է արձակել, չնայած սրված ռազմական դրությանը, շտապ կարգով շարունակել նավթի առաքումը դեպի Աստրախան» (**Թուրքմենստանի պետական կենտրոնական արխիվ**, ֆ. 118, ց. 1, գ. 21, թթ. 25-26):*

Վերոհիշյալ հեռագիրը ստացվել է նաև Մոսկվայում և այդ կապակցությամբ օգոստոսի 9-ին Լենինը Աստրախանի սովդեպին և Կասպից-կովկասյան ռազմաճակատի ռազմահեղափոխական խորհրդի անդամ Ն. Անիսիմովին. հեռագրել է հետևյալը.

*«Դրությունը Բաքվում ինձ համար, այնուամենայնիվ, պարզ չէ: Ո՞վ է կանգնած իշխանության գլուխ: Որտե՞ղ է Շահումյանը: Հարցում արեք Ստալինին և գործեցեք բոլոր հանգամանքները նկատի առնելով. դուք գիտեք, որ ես լիովին վստահում եմ Շահումյանին: Այստեղից չի կարելի հարկանալ դրությունը և արագ օգնելու հնարավորություն չկա» (**Վ. Ի. Լենին**, ԵԼԺ, հ. 50, էջ 162):*

Թուրքերը քաղաքում ունեին իրենց գործակալները, որոնք ուղղորդում էին հակառակորդի հրետանուն, որն ուղիղ նշանառությամբ գնդակոծում էր հատկապես քաղաքի հայկական թաղամասերը, այդ թվում գեներալ Բագրատունու տունը, Հայկական բարեգործական ընկերության շենքը, եպիսկոպոսի նստավայրը, «Եվրոպա» հյուրանոցը, որտեղ իջևանել էր գեներալ Դենստերվիլը և այլն:

Օգոստոսի 8-ին Ցենտրոկասպիայի դիկտատուրան մենշևիկ Սադովսկու և դաշնակցական Մելիք-Յոլչյանի ու մյուսների գլխավորությամբ, ի պատիվ անգլիացիների, ճոխ ընդունելություն են կազմակերպել:

Սադովսկին իր ողջույնի ճառում նաև ասել է հետևյալը. «Հասել է ժամանակը, երբ Ռուսաստանը պետք է կռվի Բրեստ-Լիտովսկի հաշտության դեմ, հասել է մոմենտը, երբ մենք մեր ճիգերը պետք է կոորդինացնենք արևմտյան

և իտալական ռազմաճակատներում մեր դաշնակիցների ճիգերի հետ: Մեզ համար Ապշերոնյան թերակղզում տեղի ունեցող պատերազմը միջազգային մասշտաբի մի հարց է»:

Իսկ Մելիք-Յոլչյանը իր ճառում ասում էր. «Ընկերներից մի քանիսը սարսափում էին, որ եթե անգլիացիներին այստեղ թույլ տանք, դրանով մենք եվրոպական պատերազմ առաջ կբերենք: Բայց մենք կանգ չենք առնում դրա առջև, մենք պետք է կապվենք Անգլիայի ու Ֆրանսիայի հետ և նորից պատերազմ հայտարարենք կենտրոնական կայսրություններին, որպեսզի ազատվենք նրանց լծից» («Бюллетень», 09. 08. 1918г.):

Հարկավոր էր Բաքվի բնակչությանը բացատրել Ցենտրոկասպիայի դիկտատուրայի որդեգրած քաղաքականությունը և մերկացնել այն իրականացնող կուսակցություններին: Դրա համար հարկավոր էր ունենալ մամուլ, իսկ դրանից զրկվել էր իշխանությունից հեռացած ժողկոմսովետը, քանի որ նոր իշխանությունները փակել էին «Бакинский рабочий» *թերթը:*

Ի վերջո Միկոյանին մի խումբ ընկերների հետ միասին հաջողվում է Բաքվի տպարաններից մեկում, անպեղալ պայմաններում օգոստոսի 11-ին տպագրել «Бакинский рабочий» *թերթի վերջին 126-րդ համարը:*

ԳԼՈՒԽ 28
«ՆՈՐ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ԿԵՐՊԱՐԱՆՔԸ»

Անգլիացիներին դիմավորելու ժամանակ հնչած վերոհիշյալ ելույթների կապակցությամբ Շահումյանը 1918 թ. օգոստոսի 11-ին «Бакинский рабочий» *թերթում հրապարակել է «Նոր իշխանության կերպարանքը» հոդվածը:*

Հոդվածի սկզբում Շահումյանը բերել է Սադովսկու և Մելիք-Յոլչյանի ելույթների վերոհիշյալ հատվածները և ընդգծել է հետևյալը. «Այսպես ուրեմն, ընկեր բանվորներ, մեր «նոր» իշխանությունը, հանձինս և՝ մենշևիկ Սադովսկու, և՝ դաշնակ Մելիք-Յոլչյանի, բացեիբաց հայտարարում է, որ անգլիացիներին հրավիրել է ոչ թե բնակչությանը Թուրքերի վայրագությունից փրկելու և ոչ էլ Բաքուն Ռուսաստանի համար փրկելու նկատառումով, որի մասին միայն միամտորեն մտածում էիք դուք ձեր միտինգներում ու բանվորական պատգամավորների սովետում, այլ որպեսզի Ռուսաստանին Անգլիայի և Ֆրանսիայի հետ միասին քաշեն նոր պատերազմի մեջ ընդդեմ Գերմանիայի և Ավստրիայի»:

Շահումյանը հիշեցնում էր, որ բանվորա-գյուղացիական Ռուսաստանը որոշել է ամեն կերպ խուսափել Գերմանիայի դեմ պատերազմը վերսկսելուց, քանի որ դեռևս ի վիճակի չէ նման պատերազմ սկսելու, որը նրան վերջնական կործանման կհասցնի: Հենց այդ նպատակով էլ սովետների 5-րդ համագումարը հայտարարել էր երկու կողմ իմպերիալիստական կոալիցիաների նկատմամբ չեզոք քաղաքականություն:

Իսկ սադովսկիներն ու մելիք-յոլչյանները, նշում էր Շահումյանը, որոշում են «հակառակ Սովետական Ռուսաստանի կամքի՝ նրան քաշել նոր կործանարար պատերազմի մեջ», և հարցնում էր բանվորներին, մի՞թե նրանք պաշտպանում են այդ քաղաքականությունը և կողմ են Սովետական Ռուսաստանին նոր պատերազմի մեջ ներքաշելուն:

Շահումյանը հատկապես անդրադարձել է դաշնակցություն կուսակցության վարքագծին և գրել է հետևյալը. «Դեռ երեկ, պատգամավորների սովետի ընդլայնված նիստում, այդ կուսակցության ներկայացուցիչ Մելիք-Յոլչյանը երդվում էր, թե իր կուսակցությունը հավատարիմ է Սովետական Ռուսաստանին, հավատացնում էր, թե կուսակցությունը լիովին ճանաչում է կենտրոնական սովետական իշխանությունը և ենթարկվում է նրան: Իսկ այսօր, նույն մարիոնետ պ-ն Մելիք-Յոլչյանի բերանով դաշնակցություն կուսակցությունն այսպիսի հայտարարություն է անում անգլիական իմպերիալիստների առջև: Ի՞նչ է այս, ընկեր բանվորներ, և ամենից առաջ մենք հարցնում ենք դաշնակցություն կուսակցությանը վստահող հայ բանվորներին՝ ի՞նչ է այս,- քաղաքակա՞ն կուսակցություն, թե՞ քաղաքական չաղատաններ ի կուսակցություն, ստախոսների և փարիսեցիների կուսակցություն»:

Այստեղ հարկ եմ համարում ընդմիջել Շահումյանին, և ընթերցողի ուշադրությանը նորից ներկայացնել ժողովրդական հերոս Անդրանիկ Օզանյանի հետևյալ կարևոր դիտողությունը. «Դաշնակցությունը, փոփոխվեցավ հարգար ուղղության: Օր մը ռուսասէր էր, միւս օր ռուսատեաց, օր մը Թուրքերու թշնամին էր, միւս օր անոնց բարեկամը, օր մը անգլասէր էր, միւս օր կը պոռար «անկցի Անգլիան», օր մը Պարսկաստանի բարեկամն էր, միւս օր կը կոտէր անոր դէմ: Այս հանգամանքը միայն ցոյց կուտայ թէ դաշնակցութիւնը զուրկ էր այն հեռատեսութենէն եւ իմաստութենէն, զոր անպայման պէտք է ունենայ ժողովրդի մը ճակատագրին հետ խաղացող ոեէ անհատ կամ կազմակերպութիւն: Ղեկը կորսնցուցած մարմին մը ինչպե՞ս պիտի կրնար ղեկավարել ազգ մը: Ահա թէ ինչու համար մեր ազգը առաջնորդուեցաւ աղէտէ աղէտ եւ դժբախտութենէ դժբախտութիւն» (Զօր. Անդրանիկ կը խոսի, էջ 16):

Այնուհետև Շահումյանը նշել է, որ ստախոսությամբ ու փարիսեցիությամբ աչքի են ընկնում նաև մյուս կուսակցությունները, որոնք «գոռում էին ու գոռում են, որ անգլիացիներին հրավիրում են Բաքվի սովետական իշխանությունը փրկելու համար»: Իսկ այժմ, երբ ողջունում են անգլիացիներին, այդ կուսակցությունների ներկայացուցիչների խոսքում ոչ մի խոսք չկա սովետական իշխանության մասին: Նրանք «չհամարձակվեցին նույնիսկ ծուտուն հանել սովետական իշխանության մասին»:

«Նոր իշխանությունը,- շեշտել է Շահումյանը,- դաշնակների, աջ էսէռների, մենշևիկների և նավատորմիկի հրամանատարական կազմի իշխանությունը, արդեն մերկացրել է իրեն, որպես մի իշխանություն, որն անջատեց Բաքվի պրոլետարիատը Սովետական Ռուսաստանից, որն ի հաճույս անգլիական իմպերիալիստների, կամենում է նրան ներգրավել նոր պատերազմի մեջ, մի իշխանություն, որը չի համարձակվում խոսել Բաքվում սովետական իշխանության մասին, որն արդեն մատնել է այդ իշխանությունն անգլիացիներին և նրանց վարձկան Բիչերախովին»:

Իսկ ի՞նչ պետք է անեն այն ուժերը, որոնք հավատարիմ են մնացել սովետական իշխանությանը: Այս հարցին Շահումյանը պատասխանել է հետևյալ

կերպ. «Մի՞թե անցնել դավաճանների շարքերը և կռվել անգլիական զորքերի հետ կողք-կողքի ի փառս անգլիական իմպերիալիզմի և Ռուսաստանը նոր իմպերիալիստական սպանդի մեջ քաշելու համար: Ո՛չ մի դեպքում: Բաքվի պրոլետարիատն ու Կասպիական ռազմական նավատորմիկը մոլորության մեջ են ընկել անգլիացիների վարձկան Բիչերախովի ագիտացիայով, որը խաբեց մեր վստահությունը»:

«Մյուս կողմից,- շարունակել է Շահումյանը,- դաշնակցություն կուսակցության դավաճանական վարքի և հակահեղափոխական հրամանատարական կազմի՝ ավետիսովների, արուտյունովների և ուրիշների ագիտացիայի հետևանքով պրոլետարիատը մեզ հետ միասին անելանելի վիճակի մեջ էր դրված»:

Մենշևիկների, աջ էսէռների ու դաշնակցականների համաձայնությունը Շահումյանը գնահատել է որպես ոճրագործություն և ընդգծել է, քանի դեռ այդ համագործակցությունը գոյություն ունի, Բաքվի բանվորներն ու նավաստիները գերադասում են անգլիական իմպերիալիստներին: Բայց Շահումյանը հույսը չէր կորցնում և հավատում էր, որ Բաքվի բանվորներն ու նավաստիները կզգաստանան, որ Սովետական Ռուսաստանը դեռ կվերադառնա Բաքու:

«Կգա ոչ թե նրա համար,- գրում էր հոդվածի վերջում Շահումյանը,- որ գերմանա-թուրքերին կամ անգլիացիներին ճանաչի որպես Բաքվի տերեր, այլ նրա համար, որ վռնդի թե՝ մեկին և թե՝ մյուսին, որպեսզի վերականգնի Բաքվի ու Ռուսաստանի միասնությունը և նորից այստեղ, գուցեև ամբողջ Անդրկովկասում հաստատի սովետական բանվորական սոցիալիստական իշխանություն»:

Եվ Շահումյանը չէր կորցնում հույսը, գրելով, որ «այդ դեռ կլինի» (**Ստ. Շահումյան**, նույն տեղը, հ. հինգերորդ, էջ 235-240):

«ԱՆԱՁՆԻՎ ԶՐՊԱՐՏԻՉՆԵՐ»

1918 թ. օգոստոսի 11-ին «Бакинский рабочий» թերթում Շահումյանը հրապարակել է նաև «Անազնիվ զրպարտիչներ» հոդվածը: Դա նրա գրած վերջին հոդվածն է, որով Շահումյանը պատասխանել է Ցենտրոկասպիայի դիկտատուրայի ղեկավարների տարածած զրպարտություններին և տալիս է նրանց կուսակցությունների քաղաքական ֆիզիոնոմիայի գնահատականը, որն այսօր էլ չի կորցրել իր այժմեականությունը:

Շահումյանը գրել է. «Անակնկալ կերպով իշխանությունը զավթած գար-

դա դաշնակցականները, աջ էսէռները և վերակենդանացած մեռելները՝ մենշևիկները, ժողովրդական կոմիսարների դեմ իրենց ձեռնարկած վայրենի հալածանքների մեջ կորցրել են ամեն մի հավասարակշռություն»:

Այդ կուսակցությունների թերթերը, տարածում են սուտ տեղեկություն, թե գերմանական շտաբի հետ Բաքու եկած Սովետական Ռուսաստանի պաշտոնական ներկայացուցիչը բերել է Շահումյանին հասցեագրված Լենինի նամակը, թափանցիկ կերպով հասկացնել տալով, թե Շահումյանը համագործակցում է թուրք-գերմանական բլոկի հետ Բաքուն նրանց հանձնելու համար:

Եվ տարածելով այս սուտը, նրանք հնարել են երկրորդ սուտը, պնդելով, թե անգլիացիներին հրավիրելով նրանք ձախողել են Բաքուն թուրք-գերմանական բլոկին հանձնելու կոմիսարների մտադրությունը: Տարածելով այս սուտը նրանք սովետական իշխանությանը մեղադրել են դավաճանության մեջ:

Իր հոդվածում Շահումյանը տեղեկացնում էր, թե քննիչ հանձնաժողովը պարզել է, որ ոչ մի գերմանական շտաբ Բաքու չի եկել, իսկ Սովետական Ռուսաստանից եկած ներկայացուցիչը Լենինից որևէ նամակ չի բերել:

Երբ բացահայտվում է տարածված սուտ լուրերի բուն նպատակը, նոր իշխանության ներկայացուցիչն արդարանում է, հայտարարելով, թե դա խմբագրության մեղքով է եղել և կենթարկվի պատասխանատվության:

Օգոստոսի 9-ին Բաքվի դաշնակցականների թերթը հրապարակել է Սովետական Ռուսաստանի նավթային արդյունաբերության ղեկավարներից մեկի՝ Ս. Սալկոյի հեռագիրը Ռուսաստանի ժողտնտխորհի նավթային սինդիկատի կառավարիչ Զ. Դոսերին՝ Աստրախանի միջոցով Շահումյանին հաղորդելու համար:

Այդ հեռագրում ասվում էր. «Սուրհանդակի միջոցով հաղորդեցեք Դոսերին. Լենինը իրեն տված անձնական զեկուցագիրը լսելուց հետո ասաց, որ Բաքվի իրադարձությունների քաղաքական իմաստի գնահատականը նա անմիջականորեն հաղորդել է Բաքվի Ժողկոմսովետին, Բաքվի Ժողտնտխորհին: Վճռական պահին անհրաժեշտ է ղեկավարվել բաքվեցիների ընդունած այն որոշումներով, որ վերաբերում է գերմանացիների սպասվող հարձակման ժամանակ: Ընդամենը, այդ տեսակետից ոչ մի տարբերություն չպետք է անել» (**Я. Раттаузер**, Арест и гибель комиссаров Бакинской коммуны, Баку, 1928, стр.. 19):

Անդրադառնալով այս հեռագրին, Շահումյանը նշել է, որ «այնտեղ խոսվում է Բաքվի սովետի այն որոշման մասին, որն ընդունվել էր, երբ սպառ-

վում էին գերմանացիք և մատնանշվում է, թե Լենինն առաջարկում է վճռական պահին, նոր պայմաններում, այն է անգլիացիների ժամանման դեպքում ևս իրագործել այն որոշումը, որն ընդունվել էր, երբ «սպասվում էին գերմանացիք»:

Շահումյանն ընդգծում էր, որ Սալկոյի հեռագիրը «չի կարող հասկանալի լինել ամեն մի բանվորի համար, բայց դա հասկանալի է դաշնակցություն կուսակցության լիդերներին, որոնց «Հառաջ» թերթն առանձնապես անարմոթ կերպով զրպարտում է մեզ այդ հեռագրի առթիվ»:

«Եթե,- շարունակել է Շահումյանը,- այդ հեռագիրը հասկանալի չէ ամեն մեկի համար և կարող է շատերին մոլորության մեջ ձգել, ապա, համենայն դեպս, մենք անվանում ենք ուղղակի, դաշնակցություն կուսակցության լիդերները՝ Արարատյանը, Գյուլխանդանյանը, Զորյանը (ի միջի այլոց նկատեմ, որ այստեղ Շահումյանն առաջին անգամ է հիշատակում Ռոստոմ Զորյանին-Վ.Պ.), հիանալի գիտեն, թե ինչումն է բանը, և եթե նրանք բոլորքով հանդես չեն գալիս իրենց թերթի անամոթ զրպարտության դեմ, ապա նրանք մասնակից են այդ զրպարտությանը»:

Եվ այսպիսի սուտ լուրեր տարածելով, նոր իշխանությունները Բաքվի կոմիսարներին մեղադրում են, թե նրանք «Լենինի հետ միասին կամեցել են Բաքուն ծախել գերմանացիներին»:

Ավածի կապակցությամբ Շահումյանը հարկ է համարել հանգամանորեն բացատրել իրողությունը: Նա գրել է. «Որքան անձնական ատելություն պետք է ունենան նոր քաղաքականության ղեկավարները՝ նման եզրակացություններ անելու համար: Բաքվի Ժողկոմսովետը շարժվեց Գյուլդամիրի ուղղությամբ այն պահին, երբ մեզ հաղորդեցին, թե գերմանական զորքերը Թիֆլիսի վրայով գալիս են Բաքվի դեմ: Մենք պատերազմ հայտարարեցինք Հենց գերմանա-թուրքերին: Լենինը պահանջում էր մեզնից ձեռք առնել բոլոր միջոցները, որպեսզի գերմանացիք Բաքուն գրավելու դեպքում՝ նրանք այստեղ նավթի պաշարներ չկարողանան ստանալ»:

Այնուհետև Շահումյանը հայտնում էր, որ Բաքվի սովետի նիստերից մեկում իր առաջարկությամբ ընդունված բանաձևով որոշվել էր ոչնչացնել ամբողջ նավթարդյունաբերությունը, բայց այն գերմանացիներին չհանձնել: Շահումյանի կարգադրությամբ հանվում են նաև նավթատար խողովակները, որպեսզի գերմանացիների կողմից քաղաքը գրավելու դեպքում, նրանք չկարողանան օգտվել դրանցից և նավթ տեղափոխել: Նույնը պետք է կատարվեր Բաքուն անգլիացիների կողմից գրավելու դեպքում:

«Այս բոլորը,- շարունակում էր Շահումյանը,- շատ լավ հայտնի է այսօր

կառավարող կուսակցությունների լիդերներին, որոնց ես կարդացել եմ այս հարցի առթիվ Լենինի ու Ստալինի անձամբ գրած նամակները և որոնց հանձնարարված է եղել այդ միջոցառումները նախապատրաստելու և կենսագործելու պատասխանատու աշխատանքը: Եվ այդ մարդիկ այժմ անամոթաբար զրպարտում են կամ անամոթաբար լռում, երբ նրանց ընկերները զրպարտում են»:

Շահումյանը նորից հարկ է համարել անդրադառնալ դաշնակցականներին և գրել է հետևյալը. «Օ~, դաշնակցականներին շատ է ձեռնտու մեզ զրպարտել: Մենք մատնանշեցինք նրանց որոշումը՝ ապիտակ դրոշակ բարձրացնել և քաղաքը հանձնել թուրքերին: Նրանք չեն հանդգնի հերքել փաստերը, որովհետև այդ հիմնավորապես գիտեն հարյուրավոր մարդիկ: Բայց որպեսզի մոլորեցնեն բնակչության լայն խավերին, նրանք հնարում են այն անամոթ սուտը, թե իբր մենք կամեցել ենք հանձնել քաղաքը: Իրեն արդարացնելու համար նման ստոր միջոցների դիմող կուսակցությունը ոչ թե հեղափոխական կուսակցություն է, այլ անազնիվ զրպարտիչների կուսակցություն»: Այս ամենը Շահումյանը նաև վերագրում էր աջ էսէռներին ու մենշևիկներին, որոնք «պատմական ծանր րոպեին» կարողանում են դավաճանության ու խաբեության միջոցով «գլխահան անել բանվորական մասսաներին»:

Շահումյանը զգուշացնում էր, որ նրանք զրպարտությամբ ու խաբեությամբ երկար պահպանվել չեն կարող և ընդգծում էր. «Եվ որքան հանցավոր է ձեր խաբեությունը ներկայումս, այնքան խիստ է լինելու բանվորների դատաստանը ձեր նկատմամբ ապագայում: Համենայն դեպս անազնիվ զրպարտիչների կնիքը ձեզ չի հաջողվի սրբել ձեր ճակատից, ինչպես չկարողացան սրբել այդ կնիքը նրանք, ովքեր հուլիսյան դեպքերից հետո զրպարտեցին Լենինին, Լունաչարսկուն, նրանց քշեցին բանտ և ընդհատակ: Չէ՞ որ այդ ժամանակ էլ զրպարտիչները մոլորեցրին բանվորների մեծ մասին»:

*Շահումյանը իր հոդվածն ավարտել է հետևյալ հետգրությամբ. «Դաշնակցականների թերթն առանձնապես ջանում է անձամբ իմ դեմ գրգռել մոլորվող մութ մասսաներին և ձգտում է ինձ հանձնել նրանց ինքնադատաստանին: Դա դժվար գործ չէ: Դա, թերևս ձեզ հաջողվի, բայց, պարոններ, այդ ձեզ չի օգնի: Մեզ համար ավելի կարևոր է գիտակից բանվորների դատաստանը, պատմության դատաստանը, և նա ձեզ համար ավելի սոսկալի կլինի, քան ամբոխի ինքնադատաստանը, որին դուք դիմում եք» (**Ստ. Շահումյան**, նույն տեղը, հ. հինգերորդ, էջ 241-244):*

ԱԲՐԱՀԱՄ ԳՅՈՒԼԽԱՆԴԱՆՅԱՆԻ ՏԵՍԱԿԵՏԸ

Առաջ անցնելով հարկ եմ համարում անդրադառնալ Բաքվի դաշնակցականների ղեկավարներից մեկի՝ Ա. Գյուլխանդանյանի տեսակետին, որը նա արտահայտել է 1919 թ. մարտի 11-ին Բաքվի դաշնակցականների կոնֆերանսում «Բաքվի պաշտպանությունը և դաշնակցության դերը» զեկուցման մեջ:

Գյուլխանդանյանը նշել է, որ լիարժեք և բազմակողմանի գնահատել այնքան խոշոր պատմական իրադարձություն, ինչպիսին հեղափոխական դեմոկրատիայի կողմից թուրք-թաթարական արշավանքից Բաքու քաղաքի պաշտպանությունն է, «մեզ՝ ժամանակակիցներիս և մասնակիցներիս համար անհնարին է»:

«Միայն տարիներ անց,- ընդգծել է նա,- երբ այն կը դառնայ պատմության սեփականությունը, անկողմնակալ պատմաբանը կարող է օբյեկտիվ գնահատական տալ ամբողջ տեղի ունեցածին»:

«Այնուամենայնիվ,- շարունակում էր Գյուլխանդանյանը,- փորձեմ հնարաորության սահմաններում արտահայտել մեր կարծիքն այն տիտանական պայքարի նշանակության մասին, որ մղել ենք մենք Բաքվի դեմոկրատիայի մնացած մասի հետ՝ ձգտելով պահպանել Անդրկովկասի հեղափոխության վերջին պատար Բաքուն: Պէտք է նկատի ունենալ, որ քաղաքի պաշտպանությունը մեզ համար ունէր կարևոր նշանակություն կապված հայկական դեմոկրատիայի ֆիզիկական գոյությունը պաշտպանելու համար»:

Այնուհետև Գյուլխանդանյանը նշել է Վրաստանի քաղաքական ղեկավարների դավաճանությունը, որը «Անդրկովկասը հասցրեց Ռուսաստանից անջատելուն և այնուհետև կիսանկախ հանրապետությունների կազմակերմանը, հայկական դեմոկրատիային դրեց լիակատար մեկուսացման վիճակի մէջ»:

«Վրաց մենշևիկները,- շարունակել է նա,- չը խորշելով ոչ մի միջոցի առջև Վրաստանի անկախությունն ամրապնդելու համար, աջակցել են նշանակալի չափով թուրքերի ներխուժմանն Անդրկովկաս: Էլ չենք խօսում մուսուլմանական մուսավաթ կուսակցության մասին, որը վաղուց նախապատրաստում էր թուրքերի մուտքը: Այսպիսով հայկական դեմոկրատիային հարկ եղաւ միայնակ, իր թոյլ ուսերի վրայ կրել Կովկասեան ռազմաճակատի պաշտպանության գործը, քանի որ նա դրա մէջ տեսնում էր իր ֆիզիկական գոյությունը պաշտպանելու մասին հարցի լուծումը»:

Գյուլխանդանյանը բացատրում է, որ այդ ամենի հետևանքով թուրքերը հասնում են մինչև Բաքու, որտեղ իշխանությունը գտնվում էր բոլշևիկների ձեռքին և կարմիր բանակը մղում էր հասատ պայքար թուրքական ուժերի դեմ: Նա նշում էր, որ կարմիր բանակը պայքարը շարունակել է այնքան ժամանակ, քանի դեռ չէր կտրվել իր թիկունքից:

«Սակայն այն պահից,- ասել է Գյուլխանդանյանը,- երբ իր անկազմակերպածության հետևանքով թիկունքը կորցրեց հնարաորությունը բաւական չափով բավարարելու բանակի կարիքները, որը գտնում էր տրոպիկական շոգի, վարակիչ հիանդությունների, բուժօգնության, պարենի բացակայության ծանր պայմաններում, մեր հիւծած բանակը սկսեց աստիճանաբար նահանջել դէպի Բաքվի մատույցներ»:

Նշելով, որ Նուրի փաշան իշխանություններից պահանջել է հանձնել քաղաքը, Գյուլխանդանյանը շարունակել է. «Հուլիսի 29-ին կառաարության ղեկաար Շահումեանը ի լուր ամենքի հայտարարեց, թէ այժմանից քաղաքն անհնար է պաշտպանել, որ բանակի հրամանատարությունը Բալաջարում պատրաստ է պարզել սպիտակ դրոշակ: Ղեկաարների միջև տարաձայնությունները, ուժեղ կենտրոնի և ընդունակ գլխաւոր հրամանատարի բացակայությունը քայքայում են Կարմիր բանակը»:

Ընդմիջեմ Գյուլխանդանյանի զեկուցումից մեջբերում կատարելը և ասեմ հետևյալը: Շահումյանը երբեք չի հայտարարել, թե քաղաքն անհնար է պաշտպանել, այլ ընդհակառակը, նա միշտ պնդում էր և ապացուցում, որ հնարավոր է գերման-թուրքական արշավանքից ոչ միայն պաշտպանել Բաքուն, այլև թշնամուն ջախջախել ու ետ շպրտել Բաքվի մատույցներից:

Այնուհետև Շահումյանը հրաժարական է տվել ոչ թե նրա համար, որ հնարավոր չի գտել Բաքուն պաշտպանել: Նա հրաժարական է տվել, քանի որ Բաքվի սովետը մեծամասնությամբ քվեարկում է անպիտանիներին հրավիրելու օգտին:

«Սակայն,- շարունակել է Գյուլխանդանյանը,- քաղաքը փրկելու ամեն մի հույսից կորցրած բոլշևիկների և պայքարը դեռևս շարունակելու ցանկություն ունեցող միաս կուսակցությունների միջև կարճատև պայքարի արդիւնքով բոլշևիկեան իշխանությունը փոխարինեց նոր իշխանությունը ի դէմս Ցենտրոկասպիայի դիկտատուրայի և Բաքվի սովետի ժամանակաւոր գործկոմի, Բաքվի պաշտպանությունը շարունակեց»:

Այստեղ էլ է Գյուլխանդանյանը խեղաթյուրում իրականությունը: Շահումյանի գլխավորությամբ բոլշևիկները մինչև վերջ վստահ էին քաղաքը պաշտպանելու գործում, եթե «մյուս սոցիալիստական կուսակցություններ-

ը» շահագրգռված լինեին դրանում և ռազմաճակատում ու թիկունքում ապակողմնորոշող ու քայքայիչ ագիտացիա չտանեին այն մասին, թե թուրքերի դեմ անհնար է պայքարը շարունակել, և կոչ չանեին հրավիրել անգլիացիներին:

Գյուլխանդանյանը նույնիսկ իրենց է վերագրել օգոստոսի 1-5-ին մղված մարտերում թուրքերին ետ շպրտելու փաստը և հայտնել է, որ այդ օրերին 40 զինվորների ու սպաների ուղեկցությամբ Բաքու ժամանած գնդապետ Ստոքսը, որը պետք է ճշտեր անգլիական զորքերն ափ դուրս գալու հնարավորությունը, ասել է հետևյալը. «Վստահ եղեք, որ մեր զորքերը ժամանակին կը հասնեն Բագին օգնության: Ես համարձակվում եմ վստահեցնել, որ ոչ միայն կը պաշտպանենք քաղաքը, այլև կը կարողանանք ետելի առաջ ընթանալ»:

Գյուլխանդանյանը չի մոռանում նշել թուրք-գերմանական հրամանատարության, Ադրբեջանի կառավարության պահանջների, Ռամիշվիլու միջնորդության մասին և ընդգծում է դրանց մերժելու հանգամանքը: Բայց նա «մոռանում» հիշատակել թուրքերի դեմ ռազմական գործողությունները դադարեցնելու մասին Թիֆլիսի հայոց ազգային խորհրդի և Հայաստանի հանրապետության դաշնակցական ղեկավարության պահանջը, որի կատարման հետևանքները շատ ողբերգական եղան Բաքվի հայության համար:

Շարունակելով դեպքերի նկարագրությունը, Գյուլխանդանյանը հարկադրված նշել է, որ դիկտատուրայի մեջ մտած սոցիալիստական կուսակցությունների միջև համերաշխություն չի հաստատվել, քանի որ նրանցից յուրաքանչյուրը ձգտում էր կառավարության կազմում շատ տեղ ունենալ:

Վերջապես, հայտնում էր Գյուլխանդանյանը, սեպտեմբերի 1-ին «կորցնելով ամեն մի հույս հաջող պայքար տանելու համար, դիկտատուրան տեղեկացրեց, որ անհնար է ունեցած ոյժերով պաշտպանվել բազմաքանակ հակառակորդից, անգլիական զորքերը պետք է հեռանան քաղաքից»:

Երբ անգլիացիների հեռանալու մասին հայտնի է դարձել Բաքվի հայոց ազգային խորհրդին, նրա ներկայացուցիչները մեկնել են նավահանգիստ և հանդիպել արդեն նավ բարձրացած Ստոքսին: Ըստ Գյուլխանդանյանի վկայության, նրանք Ստոքսին հարցրել են, թե «Ինչո՞ւ են անգլիական զորքերը հեռանում ռազմաճակատից»: Ստոքսը նրանց պատասխանել է. «Մենք հեռանում ենք քաղաքից, անխուսափելի է քաղաքի հանձնումը: Ձեզ մնում է պարզել սպիտակ դրոշակ»:

Բանագնացները խնդրում են գոնե 3 օրով հետաձգել զորքերի էվակուացումը, որպեսզի հնարավոր լինի քաղաքից հեռացնել կանաց ու երեխաներին, որից հետո «մեր զորքերը ձեր զորքերի հետ կը հեռանան քաղաքից»:

Ստոքսը այդ պայմանին չի համաձայնվել: Ստոքսի մոտ են գնում դիկտատուրայի ներկայացուցիչներն այդ նույն խնդրանքով: Նրանց նույնպես Ստոքսը մերժել է:

«Դրանից հետո,- շարունակել է Գյուլխանդանյանը,- դիկտատուրան որոշում է հանձնել Բագուն: Ստեղծված պայմաններում, դիշերա ժամը 12-ին հայոց ազգային խորհուրդը որոշում է հրաժարվել հակառակորդին մարտ տալու տրամադրությունից և սկսել բնակչության ու զորամասերի էվակուացիան...»:

*«Այսպես ողբերգականօրէն աւարտեց,- եզրափակում էր իր զեկուցումը Գյուլխանդանյանը,-յեղափոխական Բագվի պայքարը թուրք-թաթարական հակայեղափոխության դէմ» (**«Արև»**, մարտի 16, 23, 26, 1919 թ.):*

ՍՈՎԵՏԱԿԱՆ ՈՒԺԵՐՆ ԷՎԱԿՈՒԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՀՌՉԱԿԱԳԻՐԸ

Լենինը, մինչև իր վիրավորվելը, ուշադրությամբ հետևում էր Բաքվում զարգացող դեպքերին, փորձում հնարավորության սահմաններում օգնություն հասցնել: Հուլիսի վերջին Բաքու է ուղարկվում 80 թնդանոթ, 160 գնդացիր, 1000 հատ հրացան, զրահապատ ավտոմեքենաներ, մեծ քանակությամբ ռազմամթերք:

*Ցարիցին և Սարատով ուղարկած հեռագրերով Լենինը պահանջում էր արագացնել Բաքու ուղարկվող զորքերին տեղ հասցնելը և այլն: Հուլիսի 29-ին Աստրախանի ռազմական խորհրդի անդամ Էլիսովիչի հետ ուղիղ գծով խոսակցության ժամանակ նա խնդրում է «միայն հաղորդեք, ճի՞շտ է արդյոք, որ Բաքվի Ժողկոմսովետը հրաժարական է տվել... Եթե դա ճիշտ է, ապա ինչքան ժամանակ կարող է դիմանալ բոլշևիկների իշխանությունը Բաքվում» (**Վ. Ի. Լենին**, ԵԼԺ, հ. 50 էջ 521):*

1918 թ. օգոստոսի 10-ին Պետրովսկի հրապարակում կազմակերպված ճամբարում տեղի է ունեցել Բաքվի բոլշևիկների երկրորդ կոնֆերանսը: Շահումյանը ներկայացրել է ստեղծված դրությունը և նշել է, որ Սովետական Ռուսաստանը հնարավորություն չունի արագորեն օգնության հասնել և որ այդպիսի պայմաններում սեփական ուժերով հնարավոր չէ երկար դիմանալ:

Եվ ստեղծված վիճակից որպես ելք՝ Շահումյանն առաջարկել է Ժողկոմսովետի տրամադրության տակ եղած ուժերով ու գույքով էվակուացվել

Ատրախան, հույս հայտնելով, որ շուտով կվերաղառնան ու կվերականգնեն սովետական իշխանությունը:

*Ինչպես վկայում է Միկոյանը, Շահումյանի առաջարկությունը ստացել է մեծամասնության պաշտպանությունը: «Ընկերների մի փոքր խումբ,- հիշում է Միկոյանը,- հանդես եկավ այդ առաջարկության դեմ, պահանջելով կենսագործել նախորդ կոնֆերանսի ընդունած որոշումը, այսինքն՝ տապալել Ցենտրոկասպիայի դիկտատուրան, իշխանությունը վերցնել մեր ձեռքը և Բաքվի պրոլետարիատի աջակցությամբ սեփական ուժերով վոնդել ինտերվենտներին» (**Ա. Ի. Միկոյան**, նույն տեղը, էջ 230):*

Իհարկե, այս առաջարկության կողմնակիցները հաշվի չէին առնում, որ ստեղծված պայմաններում դա անհնարին էր իրականացնել, և կունենար ծանր հետևանքներ:

1918 թ. օգոստոսի 12-ին Շահումյանի, Ջապարիձեի, ռազմական կոմիսար Պետրովի և Կենտրոնական Ժողկոմսովետի ներկայացուցիչ Պոլուխինի ստորագրությամբ տարածվել է Ռուսաստանի կենտրոնական սովետական իշխանության և Բաքվի կոմունիստական կազմակերպությունների ներկայացուցիչների Շահումյանի գրած հռչակագիրը սովետական զորքերի էվակուացիայի առթիվ:

Հռչակագրում նշվում էր, որ հուլիսի 30-ին և 31-ին ռազմաճակատը մերկացրած Բիչերախովի դավաճանության, ինչպես նաև դաշնակցություն կուսակցության կողմից իր զորամասերը ռազմաճակատից հեռացնելու պատճառով Բաքվի պրոլետարիատը դրվել է ծանր պայմանների մեջ և մոլորության մեջ է գցված Բաքուն զավթելու ձգտող անգլիական իմպերիալիստների վարձկանների կողմից, որոնք ռազմական համաձայնություն կնքեցին անգլիացիների հետ և հակառակ բանվորա-գյուղացիական Ռուսաստանի կամքի, հակառակ Կենտրոնական սովետական իշխանության արգելքի, Բաքու կանչեցին անգլիական զորքերին:

Եվ նկատի ունենալով, որ արդեն Բաքու քաղաքում են գտնվում անգլիական զորքերը, իսկ Բաքվի մատույցներում՝ թուրք-գերմանական զորքերը, Շահումյանը ընգծում էր, որ այդ պահից Բաքվի սոցիալիստական պաշտպանությունը վերածվել է երկու իմպերիալիստական կոալիցիաների պատերազմի, որ «Հեղափոխական ռազմաճակատ Բաքվում այլևս չկա, այլ կա իմպերիալիստական ռազմաճակատ: Պայքարում են երկու ուժեր, որոնք հավասարապես թշնամի են Ռուսաստանի բանվորա-գյուղացիական սովետական իշխանությանը»:

«Այդ պահից,- ազդարարում էր Հռչակագիրը,- Ռուսաստանի սովետական իշխանության քաղաքական և զինվորական ներկայացուցիչները և Ռուսաստանից ուղարկված ռազմական ուժերը չեն կարող մնալ Բաքվում և անգլիական իմպերիալիստների աջակիցները լինել, աջ էսէռների, մենշևիկների և դաշնակցականների ազդեցությամբ կատարված դավաճանության մասնակիցները լինել»:

Նկատի ունենալով, որ Բաքվի պրոլետարիատը մոլորության մեջ է գտնվում և անգլիացիներին գերադասում է ռուսական սովետական ուժերից, հռչակագիրը չեշտում էր, որ այդպիսի պայմաններում թուրք-գերմանացիներին և անգլիական իմպերիալիստներին հակահարված տալու համար սովետական ուժերը չունեն բավականաչափ զորքեր, ուստի չեն կարող մնալ Բաքվում և հարկադրված են հեռանալ:

*Հռչակագրի վերջում նշվում էր, որ սովետական ուժերը հեռանալով Բաքվից, որի կորուստը կարող է ճակատագրական նշանակություն ունենալ Սովետական Ռուսաստանի համար, «չեն կորցնում իրենց հույսը, որ Բաքվի բանվորներն ու Կասպիական նավատորմիկի նավաստիները կհասկանան, թե նրանց ինչպիսի դավաճանության մեջ քաշեցին աջ կուսակցությունները: Նրանք հույս ունեն, որ բանվորա-գյուղացիական Ռուսաստանը դարձյալ կգա Բաքու, և Բաքվի պրոլետարիատը կրկին կկապվի հարազատ Հեղափոխական Ռուսաստանի հետ և նորից կկանգնի Սովետական Սոցիալիստական Ռուսաստանի դրոշի ներքո» (**Ստ. Շահումյան**, նույն տեղը, հ. հինգերորդ, էջ 245-246):*

Օգոստոսի 25-ին վերոհիշյալ հռչակագիրը հեռագրով հաղորդվել է Լենինին ու Սվերդլովին:

ՑԵՆՏՐՈԿԱՍՊԻԱՅԻ ԴԻԿՏԱՏՈՒՐԱՅԻ ԽԱՐԴԱԽՈՒԹՅՈՒՆԸ

Օգոստոսի 12-ին Շահումյանի նախաձեռնությամբ տեղի է ունեցել Բաքվի բոլշևիկյան կոմիտեի նիստ: Նրա առաջարկությամբ ընդունվել է որոշում՝ Բաքվում ընդհատակյա աշխատանքը չարունակելու համար թողնել մի շարք ընկերների, այդ թվում Ա. Միկոյանին, Լևոն Միրզոյանին, Սերգո Մարտիկյանին, Արտակ Ստամբոլցյանին, Գ. Ստուրուային, Ս. Յակուբովին, Ի. Անաչկինին և ուրիշների:

Էվակուացիայի մասին հռչակագրի հրապարակումից հետո Բաքվի կոմիտեի հանձնարարությամբ բանակցություններ են վարվում Ցենտրոկասպի-

այի դիկտատուրայի ներկայացուցիչների հետ, որպեսզի նրանք թույլ տային սովետական ուժերին անարգել հեռանալ Բաքվից և մեկնել Աստրախան:

Միկոյանը հիշում է. «Մենշևիկներն ուրախ էին ազատվելու բոլշևիկյան այդպիսի զգալի ուժից և անմիջապես համաձայնվեցին դրան, սակայն պահանջելով, որ մենք նրանց հանձնենք ամբողջ զենքն ու զինամթերքը: Շահումյանը կտրականապես մերժեց նրանց այդ պահանջը: Նա մեր ներկայացուցիչներին հանձնարարեց հայտարարել, որ զենքը պատկանում է Սովետական Ռուսաստանին» (**Ա. Ի. Միկոյան**, նույն տեղը, էջ 234):

Մենշևիկները միաժամանակ փորձել են իրենց կողմը գրավել կոմիսար Պետրովին իր ջոկատի հետ միասին: Պետրովը մերժել է և հայտարարել, որ թուրք-գերմանացիների դեմ կկռվի միայն մեկ պայմանով՝ եթե Բաքվից հեռացվեն անգլիացիները: Իսկ Ցենտրոկասպիայի դիկտատուրան պաշտպանվում էր միայն անգլիական սվիններով և Պետրովի պահանջը մերժվել է:

Երկար վեճից հետո Դիկտատուրայի ներկայացուցիչները համաձայնվում են, որ սովետական ուժերն էվակուացվեն զենքով:

«1918 թ. օգոստոսի 14-ի կեսօրից հետո,- հիշում է Միկոյանը,- իրար հետևից 17 շոգենավեր, որոնցում գտնվում էին մեր զորամասերն ու տեխնիկան, սկսեցին հեռանալ Բաքվի նավահանգստից: Առաջինը ճանապարհ ընկավ «Կոլեսնիկով» շոգենավը, որտեղ գտնվում էին ժողովրդական կոմիսարները և բազմաթիվ այլ պատասխանատու աշխատողներ» (**Ա. Ի. Միկոյան**, նույն տեղը, էջ 235):

Չնայած, որ կոմիսարները Բաքվից հեռացել էին Դիկտատուրայի համաձայնությամբ, օգոստոսի 15-ին նրա պաշտոնաթերթն առաջնորդող հոդվածում գրում էր, թե «գիշերը նախկին ժողովրդական կոմիսարները Շահումյանի գլխավորությամբ փախել են շրջափակված քաղաքից» («Бюллетень», 15. 08. 1918г.):

Երբ նավախումբը հասնում է Ժիլոյե կղզի, սկսվում է ուժեղ փոթորիկ և նավերը, որոնց մեծ մասը նավթատար էին և ունեին ցածրանիստ տախտակամած, հարկադրված են լինում կանգ առնել:

Բաքվից շոգենավերի դուրս գալուց անմիջապես հետո Ցենտրոկասպիայի դիկտատուրան ձեռնարկել է դրանց հետապնդումը: Ժիլոյե կղզուն են մոտեցել երեք ռազմանավ և գնդակոծելու ահաբեկումով պահանջել են սովետական ուժերին տանող նավերին վերադառնալ Բաքու: Շահումյանը Ջաֆարիձեի, Պետրովի, Ազիզբեկովի և Ֆիրուզովի հետ միասին բարկասով անցնում են բոլոր նավերով, կոչ անելով մերժել ենթարկվելու պահանջը:

Ռազմանավերն առաջին արկերն ուղղել են «Կոլեսնիկով» շոգենավի վրա: Ռմբակոծվել են նաև մյուս նավերը, որոնք վնասվում են, սպանվում և վիրավորվում են մի շարք մարդիկ: Սկսվել է խուճապ հատկապես այն նավերի վրա, որտեղ գտնվում էին կանայք ու երեխաներ:

Եթե նավերը նախապես հարմարեցված լինեին և Պետրովի հրանոթներով սկսեին պատասխան կրակ բացել, ապա ռազմանավերը կդադարեցնեին ռմբակոծումը, գուցեև հեռանային, մանավանդ, որ դրանց նավաստիներից շատերը սկզբում հրաժարվել էին կրակ բացել նավերի վրա:

Որպեսզի Շահումյանի գլխավորությամբ կոմիսարները չձերբակալվեին, որոշվում նրանց նստեցնել «Լեյլա» բարկաս և աննկատ դուրս հանել շրջափակումից և տանել Աստրախան: Բարկասի անձնակազմը համաձայնվում է և Շահումյանին ու մյուս ընկերներին վերցնելով ուղղվել են դեպի Աստրախան:

Սակայն կարճ ժամանակ անց, բարկասի անձնակազմը հրաժարվել է առաջ գնալ, վախենալով, որ Բաքվում իրենց ընտանիքներին կհալածեն և վերադարձել են Ժիլոյե կղզի, որտեղ կանգնած «Գեոկ-Թեփե» ռազմանավն էլ վերցրել է Շահումյանին: Այս մասին օգոստոսի 22-ին «Бюллетень»-ը ծաղրանքով հայտնում է, գրելով, թե «Գեոկ-Թեփե» ռազմանավը կռվով նվաճել է Շահումյանին:

Սովետական նավերը հարկադրված ենթարկվել են օգոստոսի 17-ի առավոտյան ռազմանավերի հսկողությամբ վերադարձել են Բաքու, որտեղ էլ զինաթափվել են: Ձերբակալվում է 35 մարդ: Շահումյանի մոտից բռնագրավում են պորտֆելը՝ շատ կարևոր փաստաթղթերով, այդ թվում Լենինի գրած մի քանի նամակներ, որոնք հրապարակվում են «Бюллетень»-ի մեջ:

Ցենտրոկասպիայի դիկտատուրայի ղեկավարները, այսպես զավդրաբար ու խարդախությամբ կատարել են անգլիացիների առաջադրանքը, ինչի մասին գեներալ Դենստերվիլը անթաքույց հրճվանքով գրել է, թե «տրված կտրուկ հրամանն անհապաղ կատարվեց» (**Դենստերվիլ**, նույն տեղը, էջ 183):

Ձերբակալված Բաքվի կոմիսարներին տարել են Բայիլովի և Շամախինյան բանտերը: Հաղորդելով Շահումյանի և մյուս կոմիսարների ձերբակալության մասին, Դիկտատուրայի ղեկավարները նրանց մեղադրել են ռազմաճակատից փախուստի դիմելու և իրենց հետ արժեքներ տանելու փորձի մեջ, ճգնելով ամեն կերպ նրանց վարկաբեկել բնակչության աչքում և արդարացնել իրենց ոխտադրժությունը:

Հիշելով այս մասին, Միկոյանը հայտնում էր նաև, որ Բաքվի բոլշևիկյան

*կոմիտեն, ձախ էսէռների ու ձախ դաշնակցականների կոմիտեները Դիկտատուրայի անդամներին ներկայացրել են վերջնագիր և զգուշացրել են. «Եթե մեր ընկերների գլխից թեկուզ մի մազ պակասի, Դիկտատուրայի բոլոր անդամների նկատմամբ կկիրառվի անձնական տեռոր» (**Ա. Ի. Միկոյան**, նույն տեղը, էջ 236):*

1918 թ. օգոստոսի 16-ին «Արեւ» թերթը «Ահա և ֆինալը» հոդվածում ծաղրանքով հայտնել է, որ Բաքվի տիրահուչակ ժողովրդական կոմիսարները Անդրկովկասի արտակարգ կոմիսար Շահումյանի և կենտրոնական կառավարության լիազոր, գնդապետ Պետրովի գլխավորությամբ գաղտագողի ծվել են, որ նրանց հովանավորությամբ փախել են նաև բոլոր բոլշևիկյան «Հերոսները»:

«Այս ճգնաժամային պահին,- շարունակում էր «Արեւ»-ը,- երբ Բագվի ամբողջ աշխատատորությունը օղակած է թուրք-տաճկական և գերմանական զորքերով, մեր «կարմիր յեղափոխականները» և «միակ սոցիալիստները» դաւաճանօրէն և խարդախօրէն յափշտակեցին և իրենց հետ փախցրեցին զինական հարուստ միջոցները, թողնելով Բագվի աշխատատորին տաճկական յաթաղանի առջև»:

*Նկատի ունենալով Շահումյանին, Պետրովին, Ջափարիձեին և մյուս կոմիսարներին, «Արեւ»-ը պահանջում էր, որ «...այդ ժողովրդական թշնամիները չպէտք է ազատուեն Բագվի յեղափոխական դեմոկրատիայի արդար և անողոք ցասումից: Նման հասարակական թալանչիները չպէտք է անպատժի մնան»: (**«Արեւ»**, օգոստոսի 16, 1918 թ.):*

Իհարկե, դաշնակցության պաշտոնաթերթ «Արեւ»-ը ձայնակցում էր Յենտրոկասպիայի դիկտատուրայի ղեկավարներին, որոնք պատրաստվում էին Շահումյանին ու մյուս կոմիսարներին զինվորական դատարանի միջոցով մահապատժի ենթարկել:

1918 թ. սեպտեմբերի 9-ին մենշևիկների խոսափող «Жизнь» թերթը նույնպես կեղծել է իրականությունը, նշելով, թե Բաքվի նախկին իշխանությունը փախչել է քաղաքի համար ստեղծված ծանր պայմաններում և ոչ մի խոսք չի ասում այն մասին, թե իրենք՝ մենշևիկները ինչ պայքար էին մղում սովետական իշխանության դեմ, ինչ պարագայում է ընդունվել անգլիացիներին հրավիրելու մասին սովետի բանաձևը:

Դրա փոխարեն «Жизнь» թերթը դժգոհում էր, որ Բաքվի նոր ընտրված սովետում ոչ միայն տեղ են ստացել դավաճան-բոլշևիկները, այլև նրանց նախագահությունում տեղ է տրվել, «թեև նրանք իրենց փոքրաքանակ թվով այնտեղ չպետք է ընկնեին»:

*Թերթը «բոլշևիկներին համարում էր «ոչ թե մեր կուսակցական հակառակորդներ, այլ ռազմական հակառակորդներ» և պահանջում էր հեռացնել ասպարեզից և նրանց հետ վարվել պատերազմի ժամանակվա օրենքներով՝ ոչնչացնել ֆիզիկապես (**«Жизнь»**, 09.09.1918):*

Այս կապակցությամբ հարկ եմ համարում նշել, թե Շահումյանը ինչպիսի վերաբերմունք ուներ իր քաղաքական հակառակորդների նկատմամբ: Նա նրանց քննադատում էր, ձաղկում հեղափոխությանը դավաճանելու, սովետական իշխանության դեմ բանսարքություններ կազմակերպելու, Սովետական Ռուսաստանից անջատվելու կոչերի համար, բայց երբեք թույլ չտվեց իր քաղաքական հակառակորդների նկատմամբ ֆիզիկական հաշվեհարտար կազմակերպել:

Դա ոչ թե Շահումյանի թուլության արդյունքն էր, այլ նրա խոր դեմոկրատական, մարդասիրական հատկություններն անկեղծ դրսևորումն էր, որն այդպես էլ չկարողացան հասկանալ ու գնահատել նրա քաղաքական հակառակորդները, որոնք այժմ, պահանջում էին նրան մահապատժի ենթարկել, դրսևորելով իրենց, մեղմ ասած, անմարդկային որակները:

Կարծում եմ նաև հարկ կա պարզաբանել, թե ինչու Շահումյանն ու մյուս կոմիսարները հրաժարական տալուց և հատկապես անգլիացիների գալուց հետո որոշել են հեռանալ Բաքվից:

***Առաջին**. Բաքվի սովետական իշխանությունը, որը վճռականորեն դեմ էր անգլիացիների գալուն, հնարավորություն չուներ կռվել երկու ճակատով՝ Բաքուն պաշտպանել միաժամանակ կռվելով գերմանա-թուրքական զորքերի և Բաքու մտնող անգլիացիների դեմ:*

Շահումյանը հաշվի էր առնում նաև Բաքու քաղաքում անգլիացիներին հրավիրող ուժերի ստեղծած վտանգը: Այսպիսի պայմաններում միանգամայն իրական էր նաև քաղաքացիական պատերազմի վտանգը՝ բազում զոհերի հետևանքով:

***Երկրորդ**. Յենտրոկասպիայի դիկտատուրայի ղեկավարությունը ստանձնած մենշևիկները, աջ էսէռները և դաշնակցականները չէին թաքցնում իրենց խոր ատելությունը Շահումյանի ու մյուս կոմիսարների նկատմամբ: Ինչպես նշվել է նախորդ էջերում, հրապարակելով իրականությանը չհամապատասխանող փաստեր, նրանց մեղադրելով դավաճանության մեջ, հող էր նախապատրաստվում Շահումյանի ու մյուս կոմիսարների նկատմամբ ֆիզիկական հաշվեհարդար տեսնելու համար:*

***Երրորդ**. 1918 թ. հուլիսի կեսերին անգլիացիների եռանդուն աջակցությամբ Անդրկասպիայում աջ էսէռները, մենշևիկները և հետո նրանց միացած*

դաշնակցականները կազմակերպեցին խռովություն, տապալեցին մարզի սովետական իշխանությունը և գնդակահարեցին Անդրկասպիայի Ժողկոմսովետի բոլոր ղեկավարներին, այդ թվում Պ. Պետրոսովին և Գալուստյանին: Անգլիացիների մանակցությամբ խռովարարները սպանեցին նաև Մարիի, Զարջոյի, Կերկայի, Կիզիլ-Արվատի, Կազանջիկի, Կրասնովոդսկի և այլ ընակավայրերի սովետների գերի ընկած բոլոր ղեկավար բոլշևիկներին և նրանց շատ համակիրներին:

Դիկտատուրայի հաստատած տեռորի պայմաններում և հատկապես անգլիացիների Բաքու գալուց հետո, Շահումյանն ու մյուս կոմիսարները, նկատի ունենալով Անդրկասպիայում կատարվածը, ոչ մի երաշխիք չունեին իրենց կյանքի ապահովության համար:

Ահա, այս երեք իրողությունները հաշվի առնելով Շահումյանը և մյուս կոմիսարներն ընդունել են միակ հնարավոր որոշումը՝ հեռանալ Բաքվից: Այն էլ՝ ոչ թե գաղտագողի, թաքուն, ինչպես դա փորձում էին ներկայացնել դիկտատուրայի ղեկավարությունը ստանձնած կուսակցություններն ու նրանց մամուլը, այլ բացահայտ, նախապես հրապարակելով իրենց հեռանալու մասին հռչակագիրը և Դիկտատուրայի համաձայնությունը ստանալով:

«ՊԱՏՄԱԿԱՆ ՄԵԽԱՆԻԶՄ»

Շահումյանին և մյուս կոմիսարներին ձերբակալելուց հետո, 1918 թ. օգոստոսի 16-ին տեղի է ունեցել Բաքվի դաշնակցության ներկայացուցչական ժողովը: Ըստ «Արեւ» թերթի հաղորդման, զեկուցողը, որի անունը չի հիշատակվել, գոհունակությամբ խոսել է անգլիացիներին հրավիրելու գործում դաշնակցականների ունեցած դերի մասին և ասել է հետևյալը.

«Մենք վաղուց զգում էինք, որ եղած ուժերով հազիվ թէ կարող էինք մեր ֆրոնտը պաշտպանել, քանի որ համոզված էինք Բաքվի վրայ եկող արշավի ժամանակ պիտի գործ ունենայինք ոչ միայն տեղական թուրքերի- մուսավաթականների կազմակերպած ոժերի հետ, այլ տաճկա-գերման, կուխների մէջ մարզված կանոնատոր զօրքի հետ, ուստի դեռ **շատ վաղուց մտածում էինք** (ընդգծումը իմն է - Վ. Պ.) դրսի ուժի օգնության մասին. իսկ այդ դրսի ուժը մեր հին դաշնակից Անգլիան էր, որի շահերը ներկայ դէպքում և Բաքվի ճակատում ներդաշնակում էր մերի հետ»:

Այնուհետև զեկուցողը շարունակել է. «Քանի խնդիրը տեղական թուրք բէկերի ու մուսավաթականների շրջանակումն էր, այստեղ կարող էինք գլուխ հանել մեր սեփական ուժերով, բայց մենք գործ պիտի ունենայինք կանոնատոր զօրքի հետ, պատմական մեխանիզմի ենթարկված բանակի հետ, մի բանակ, որը կռուել է նոյնիսկ եւրոպական ճակատներում»:

Զեկուցողը հայտնում էր, որ Բաքուն պաշտպանող բանակն ուներ պատկառելի թվով մարտիկներ, մեծ քանակությամբ ռազմամթերք, որոնք ըստ նրա, բավարար չեն եղել բանակի ուժեղության համար: Նա նշում էր, որ բանակին «պակաստում էր պատմական մեխանիզմը, որով օժտված էր թշնամին»: Զեկուցողը Կարսի, Էրզրումի, Ալեքսանդրապոլի անկումը բացատրում է «միայն այդ մեխանիզմի բացակայությամբ»:

Այնուհետև զեկուցողը շարունակել է. «Ժամացույցի շատ թանկագին քարեր ու գոհարներ ունէինք, բայց պակաստում էին վինտերը և ժամացույցը կանոնատոր չէր կարող բանել... Ռուսաստանի պետական զինտրական ուժը քայքայված էր, նման անիներ ջարդված, քարերը կոտրատած ժամացույցի, նա չէր բանում, շատ ջանք թափեցինք այդ մեխանիզմը վերականգնելու, քիչ բան յաջողեցանք: Այդ պարագաներում, երբ կանգնած ենք Ռուսաստանի և Անդրկովկասի յեղափոխության, Բագվի արդինաբերության, ուրիշ խստքով Ռուսաստանի տնտեսական կեանքին սնունդ տուող Բագվի պաշտպանության մեծ խնդիրների առաջ, կամայ-ակամայ լրջորէն պիտի մտածէինք և աչքներս յարէինք մի կարող ուժի, կազմակերպված մեխանիզմի, մեր դաշնակից անգլիական պետության»:

Եվ զեկուցողն արդարանալու համար, խոսում էր այն մասին, թե շատ անգամ են դիմել Սովետական Ռուսաստանի կառավարությանը խնդրելով օգնություն, բայց այդ օգնությունը չի ստացվել:

Այնուհետև զեկուցողը մտածված կերպով անգլիացիներին հրավիրելու հարցում Շահումյանին դարձրել է իրենց համախոհը, ասելով հետևյալը. «Երբ բոլշևիկ լիդերների հետ խոսում էինք անգլիացիներին հրավիրելու մասին, բացատրելով իրերի դասաւորումով այդ անհրաժեշտ կեանքի հրամայական պահանջը, նրանք ընդդիմանում էին, բայց մի ժամանակ եկաւ, երբ իրենք էլ համամիտ էին և նոյնիսկ փորձեր արին իմանալու, թէ որքան ուժ կարող են հասցնել անգլիացիները, ագէնտ չը հանդիսանան մեր դիմումներին և այդ շրջանում շատ բան այդ հողի վրայ կատարուեց նրանց գիտությամբ և նրանց աջակցությամբ»:

«Եթէ անգլիացիներին հրավիրելու խնդիրը,- այնուհետև փաստում էր զեկուցողը,- դաւահանական քայլ է, դաւահանական քայլ պիտի համարել նաև Շահումեանի այդ շրջանում որոշ մասնակցությեան խնդիրը»:

Զեկուցողը հայտնում էր, որ թեև Շահումյանը համաձայն էր անգլիացի-

ներին հրավիրել, բայց «դժբարանում էր դրական պատասխան տալ», քանի որ սպասում էր կենտրոնական կառավարության պատասխանին, որը «դժբախտաբար եղաւ բացասական» և դրանով էլ բացատրում է Շահումյանի տրամադրության փոխվելը:

Վերջում զեկուցման հեղինակը նշել է. «Մի կարևոր հանգամանք, սակայն, մոռացութեան չպիտի տանք այստեղ. նրանք (բոլշևիկները) ամեն բան էին անում Բաքուն Ռուսաստանի համար պաշտպանելու, բայց անհար էին: Սակայն, երբ խնդիրը եկաւ այն տեղը, թէ որի՞ն նախապատուութիւն պիտի տալ Բաքուն յանձնելու դէպքում, նրանք նախընտրեցին գերմանացիներին, մի կողմ թողնելով նախկին դաշնակիցներին՝ անգլիացիներին» («Ակա», օգոստոսի 22, 1918 թ.):

Բաքվի դաշնակցականների ընդհանուր ժողովում տրված զեկուցման ամբողջությամբ ներկայացնելուց հետո կարևոր եմ համարում նշել հետևյալը.

Առաջին. Զեկուցողը մտածված կերպով խուսափում է ժամանակը կոնկրետ նշելուց և բավարարվում է միայն ասել, թե շատ վաղուց էին մտածել անգլիացիներին հրավիրելու մասին: Մինչդեռ, գեներալ Բագրատունու վկայությամբ, դաշնակցականները մայիս ամսից սկսել էին ոչ միայն մտածել, այլև որոշակի քայլեր ձեռնարկել անգլիացիներին Բաքու հրավիրելու համար:

Երկրորդ. Իբրև «պատմական մեխանիզմի» բացակայության փաստ, զեկուցողը հիշում է Էրզրումի, Կարսի և Ալեքսանդրապոլի անկումը, դա վերագրելով այդ կարևոր քաղաքների պաշտպանության գործում հայկական զորքերի անկարողությանը: Իսկ թե այդ քաղաքների անկման գործում ինչքան էին մեղավոր Թիֆլիսի հայոց ազգային խորհրդի և Անդրկովկասյան կառավարության մեջ պաշտոններ ստացած դաշնակցական գործիչները, խուսափում է զեկուցողը հիշել այդ մասին:

Նա նույնիսկ իր հնարած «պատմական մեխանիզմից» դուրս է թողնում Սարդարապատի և Ապարանի հերոսամարտերում փառահեղ հաղթանակ տարած հայոց բանակին և հարկ չի համարում այդ մասին հիշել:

Երրորդ. Զեկուցողը մտածված կերպով, ապագայի համար արդանալու եզրեր է ստեղծում, հայտարարելով, թե անգլիացիներին, որպես կարող ուժի, հրավիրել են Սովետական Ռուսաստանի համար Բաքուն պաշտպանելու նպատակով և նա խուսափում է բացատրել, թե ինչպես ռուսական հեղափոխության երդվյալ թշնամի Անգլիան կարող էր իրեն թույլ տալ Բաքուն պաշտպանել Սովետական Ռուսաստանի համար:

Եթե մի պահ հավատանք զեկուցողի այդ մտքին, ապա պետք է ենթադրել, որ գործ ունենք այս դեպքում քաղաքական տհասների հետ, որոնք փորձում են հակահեղափոխական ուժերի օգնությամբ պաշտպանել հեղափոխությունը: Բայց, իրականում մենք գործ ունենք ոչ թե քաղաքական տհասների, այլ Սովետական Ռուսաստանի, սովետական իշխանության հակառակորդների հետ:

Չորրորդ. Քննադատության չի դիմանում նաև զեկուցողի այն պնդումը, թե Շահումյանը կողմնակից է եղել անգլիացիներին հրավիրելուն: Դա բացարձակորեն չի համապատասխանում իրականությանը: Շահումյանը հենց սկզբից իր ելույթներում, հոդվածներում մշտապես դեմ է արտահայտվել անգլիացիներին հրավիրելուն: Շահումյանը փաստերով հիմնավորում էր, որ Բաքվի սովետական իշխանությունը ունի այնքան ուժ, որ կարող է ոչ միայն դիմադրել թուրք-գերմանական զորքերին, այլև նրանց ետ շպրտել ու հասնել հաղթանակի: Իսկ դրան հասնելու համար Շահումյանը մշտապես կոչ էր անում համախմբել բոլոր ուժերը:

Ավելին, բոլոր նրանց, ովքեր պահանջում էին փրկության համար հրավիրել անգլիացիներին, Շահումյանը մատնացույց էր անում Ուկրաինայի օրինակը: Երբ ուկրաինացիները օգնության համար հրավիրում են գերմանացիներին, նրանք օգտվում են դրանից և ամբողջովին օկուպացնում են Ուկրաինան: Եվ ուկրաինական ժողովուրդը հարկադրված մեծ զոհողություններ պահանջող կռիվ է սկսում Ուկրաինան Գերմանիայի օկուպացիոն զորքերից ազատագրելու համար:

Հինգերորդ. Բացահայտորեն իրականությանը չի համապատասխանում զեկուցողի այն պնդումը, թե Շահումյանը գերադասել է Բաքուն գերմանացիներին հանձնել: Կրկնում եմ, որ Շահումյանը վստահ էր, որ սովետական ուժերով միանգամայն հնարավոր է հաղթանակ տանել թուրք-գերմանական զորքերի դեմ, և երբեք, ոչ մի դեպքում, ոչ մի տեղ նա որևէ ակնարկ չի արել Բաքուն գերմանացիներին հանձնելու մասին:

ԳԼՈՒԽ 29
ՁԱԽ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲՅՈՒՐՈՅԻ ՎԵՐՋՆԱԳԻՐԸ

Յենտրոկասպիայի դիկտատուրայի դեմ գործողությունները կոորդինացնելու նպատակով բոլշևիկների, ձախ էսէռների և ձախ դաշնակցականների կուսակցությունները կազմում են ձախ սոցիալիստական կուսակցությունների բյուրո, որոնց ներկայացուցիչները Միկոյանի գլխավորությամբ Դիկտատուրայի դեկավար Սաղովսկուն են ներկայացրել վերոհիշյալ վերջնագիրը:

Միաժամանակ այդ բյուրոն սկսում է տպագրել ու հրապարակել թռուցիկներ, որոնցով բանվորներին կոչ էր արվում իրենց ժողովներում որոշումներ ընդունել «Բաքվի պրոլետարիատի ապօրինի ձերբակալված առաջնորդներին» անհապաղ ազատելու պահանջով:

Բաքվի կոմիսարներին ձերբակալելու մասին բնակչության մեջ առաջ բերած հուզումները Դիկտատուրայի դեկավարներին հարկադրել են օգոստոսի 18-ին հրավիրել ֆաբրիկա-գործարանային կոմիտեների և արհմիությունների վարչությունների կոնֆերանս և այնտեղ անց են կացրել (117 կողմ, 20 դեմ) բանաձև, որով Բաքվի կոմիսարները և ձերբակալվածները համարվել են դավաճաններ ու ժողովրդի թշնամիներ:

Օգոստոսի 18-ին Յենտրոկասպիայի դիկտատուրայի նիստը քննարկել է Շահումյանի և Կորգանովի հայտարարությունը իրենց և Շահումյանի որդի Սուրենին ձերբակալումից ազատելու և Ռուսաստան անարգել անցնելու մասին: Ընդունվել է որոշում՝ մերժել և այդ հարցը հանձնել հակահեղափոխության դեմ պայքարի արտակարգ հանձնաժողովին («Бюллетень», 24. 08. 1918 г.):

Այս կապակցությամբ ձախ կուսակցությունների բյուրոն նոր դիմում է ներկայացրել Սաղովսկուն, պահանջելով անհապաղ ազատել ձերբակալված կոմիսարներին և ստեղծել միջկուսակցական քննիչ հանձնաժողով, որպեսզի նրա քննությանը հանձնվեն Բաքվի կոմիսարների դեմ առաջադրված մեղադրանքները:

*Ինչպես հայտնում է Միկոյանը, այս պահանջը մերժվել է և օգոստոսի 19-ին ձերբակալված կոմիսարները հանձնվել են Դիկտատուրայի աջ էսէռների գլխավորությամբ կազմված արտակարգ հանձնաժողովի տնօրինությանը (**Ա. Ի. Միկոյան**, նույն տեղը, էջ 244-245; «Бюллетень», 24. 08. 1918 г.):*

Իսկ հետաքննությունը հանձնվել է նախկին ցարական ժանդարմ ժուր-

վին, որը, մինչև 1917 թ. մատնակցել էր Շահումյանի հարցաքննություններին:

Այդ օրերին Լենինին Բաքվից մի նամակ է ուղարկվել, որտեղ հանգամանորեն նկարագրվել էր Բաքվում տեղի ունեցած իրադարձությունների, ինչպես նաև Շահումյանի ու մյուս կոմիսարների ձերբակալման մասին: Սակայն այդ նամակը տեղ չի հասել, քանի որ բռնագրավել էին Դիկտատուրայի գործակալները:

Եվ փաստորեն անտեղյակ լինելով Շահումյանի և մյուս կոմիսարների ձերբակալումից, 1918 թ. օգոստոսի 21-ին Լենինը և Չիչերինը Աստրախանի պատգամավորների սովետի ղեկավարներին հանձնարարում են Շահումյանին տեղյակ պահել այն մասին, որ գերմանացիները համաձայն են Բաքուն չգրավել, եթե այնտեղից հեռացվեն անգլիացիները: Իհարկե, այդ հեռագիրը, որի մասին խոսք է եղել նախորդ էջերում Բրեստի պայմանագրի կապակցությամբ, չէր կարող հասնել Շահումյանին: Իսկ հասնելու դեպքում էլ Շահումյանն այլևս դրա իրականացման համար որևէ հնարավորություն չուներ:

Իսկ օգոստոսի 23-ին Ֆ. Կոլեսովին ուղարկած հեռագրում Լենինը նշել է, որ Կովկասի և Բաքվի մասին քիչ տեղեկություններ ունի, որ իրեն հայտնի է միայն Բաքու եկած անգլիացիների և այնտեղ դրության անկայունության մասին:

«Գերմանացիները,- շարունակել է Լենինը,- համաձայն են երաշխավորել Բաքվի վրա չհարձակվելը, եթե մենք այնտեղից դուրս քշենք անգլիացիներին: Հայտնի չէ, թե այնտեղ գործերն ինչպես կդասավորվեն: Ռազմական օգնության մասին չգիտենք, թե որտեղ է այն: Կարծում ենք, որ կանգնեցված է Ցարիցինի մոտ»:

*Այնուհետև Լենինը Կոլեսովին հայտնում էր, որ Թուրքեստանի սովետական իշխանությանը հնարավոր կլինի օգնություն ցույց տալ, եթե հաջողվի «անգլիացիներին դուրս քշել Բաքվից» (**Վ. Ի. Լենին**, ԵԼԺ, 50, էջ 367):*

ՊԱՏԱՆԴ ՎԵՐՑՆԵԼՈՒ ՄԻՋՈՑԸ

1918 թ. օգոստոսի 25-ին Աստրախանից ուղարկված հեռագրով Լենինին և Սվերդլովին հայտնվել է Շահումյանին ու մյուս կոմիսարներին ձերբակալելու և Բաքվում տիրող վիճակի մասին: Հեռագրի հեղինակներ Աստրախանի նահանգի ներքին գործերի կոմիսար Աշոտ Խումարյանը, Բաքվի նախկին ժողովրդական կոմիսար Ս. Մարգարյանը, Համառուսաստանյան կենտգործկոմի անդամ Ն. Կուզնեցովը նշել են, որ չի բացառվում անգլիական սվիններին ու ռևոլ. վրա հենված Յենտրոկասպիայի դիկտատուրայի իշխանության

կողմից ձերբակալված կոմիսարների հետ հաշվեհարդար տեսնելը և առաջարկել են նրանց կյանքն ապահովելու նպատակով պատանդ վերցնել «էսէռների, մենշևիկների և դաշնակների աչքի ընկնող գործիչների»:

Այդ նպատակով էլ 1918 թ. օգոստոսի 29-ին Մոսկվայում ձերբակալվել և որպես պատանդ են պահվել այստեղ բանակցությունների համար եկած դաշնակցության երևելի անդամներ Հ. Զավրիևն ու Լիպարիտ Նազարյանցը:

Նրանց ձերբակալման մասին Ա. Ջամալյանը հայտնել է Կ. Պոլսում գտնվող Ահարոնյանին, որն էլ 1918 թ. սեպտեմբերի 27-ին Բեռլինում գտնվող սովետական դեսպան Իոֆֆեին խնդրում է Շահումյանի և նրա ընկերների ձերբակալման համար պատանդ վերցված Զավրիևին ու Նազարյանցին ազատել (ՀՀ ԱԱ, ֆ. 200, ց.1, գ.141, թ. 217ա):

1918 թ. սեպտեմբերի 28-ին Թիֆլիսում Հայաստանի Հանրապետության դիվանագիտական ներկայացուցիչ Ջամալյանն արտաքին գործերի մինիստր Տիգրանյանին հայտնել է Զավրիևին և Նազարյանցին ձերբակալելու մասին: Միաժամանակ Ջամալյանը դիմել է Մոսկվայում գերմանական դեսպանին, Բեռլինում գտնվող Համո Օհանջանյանին, ինչպես նաև Վ. Տերյանին ու Լ. Կարախանին:

«Առանձին հեռագրով,- հայտնում էր Ջամալյանն արտաքին գործերի մինիստրին,- ես խնդրում եմ գերմանական կառավարության և Իոֆֆեի միջամտությանը, իսկ երկրորդ հեռագրով նախազգուշացնում, որ մենք ռէպրէսիա միջոցներ ձեռք կառնենք, եթէ ձերբակալածներին բաց չթողնեն: Երկրորդ հեռագիրը մասնատը բնոյթ է կրում»:

Այնուհետև Ջամալյանը մինիստրին խորհուրդ էր տալիս «խստագույն տեղյոյդ մեծամասնականների հետ, որ նրանք դիմեն Մոսկվայի իրենց ընկերներին և չափավորեն նրանց եռանդը» (ՀՀ ԱԱ, ֆ. 200, ց.1, գ.141, թ. 5):

1918 թ. նոյեմբերի 7-ին բոլշևիկ Արշավիր Մելիքյանը նամակ է ուղարկել Մոսկվա՝ Ժողկոմսովետ՝ Հայկական գործերի կոմիսար Ավանեսովին, Լենինին, Տրոցկուն, Մակինցյանին և Տերյանին: Նա գրում էր, որ ծանոթացել է Ավանեսովի ուղարկած հեռագրին և հայտնում է այդ մասին իր կարծիքը:

Մելիքյանը նշում էր. «Հատուկ առաքելությամբ Մոսկվա բանակցությունների համար եկած բժիշկ Զավրիևին և Լիպարիտ Նազարյանցին որպես պատանդներ ձերբակալելն անարդարացի քայլ է: Դաշնակցությունն կուսակցության անդամների վերաբերմունքն անձամբ Շահումյանի նկատմամբ թշնամական չի եղել և նրան հարգել են:

Այնուհետև Մելիքյանը հայտնում էր, որ «դեռևս մինչև Բաքվի դեպքերը նրանք երկու անգամ աջակցել են Շահումյանին շատ ծանր իրավիճակներում: Դժվար է թույլ տալ, որ նրանք մեղավոր են եղել Շահումյանի և մյուս ընկերների ճակատագրում, նրանց ձերբակալումից հետո»:

«Ստեղծված պայմաններում,-ընդգծում էր Մելիքյանը,- կուսակցությունը (դաշնակցությունը) ի վիճակի չէ իրական քայլեր ձեռնարկել ընկերների գտնվելու վայրը պարզելու և նրանց վիճակը թեթևացնելու համար»:

Նամակի վերջում Մելիքյանը թախանձագին խնդրում էր հաշվի առնել իր գրածը և ազատել Զավրիևին ու Նազարյանցին (ՀՀ ԱԱ, ֆ. 200, ց.1, գ.141, թ. 20):

Առաջ անցնելով նշեմ, որ 1918 թ. նոյեմբերի 17-ին Զավրիևին հնարավորություն է տրվում հեռագրել Թիֆլիս, Երևան, Թեհրան, Էնզելի և հայտնել իր և Նազարյանցի ձերբակալման մասին, որ իրենց բոլշևիկյան կառավարությունը պահում է «որպես պատանդ Շահումյանի և նրա որդիների փոխարեն»:

«Կառավարությունը,- հայտնում էր Զավրիևը,- մեր ճակատագիրը կապել է Շահումյանի ճակատագրի հետ, պնդում է, որ դաշնակցությունը նրան հանձնել է հակառակորդին, որ նրա հիգերն ամբողջովին կախված է կուսակցությունից, ուստի այժմ միայն մեր կուսակցությունը կարող է հասնել ազատմանը: ...Մենք խորը շնորհակալ կլինենք ձեզանից, եթե դուք հնարավոր համարեիք Շահումյանին ազատելու գնով ազատել մեզ»:

Զավրիևի ռադիո-հեռագրին կցված է Վ. Ավանեսովի հետևյալ ծանոթագրությունը. «Զավրիևը և Նազարյանցը պատանդ են վերցվել ոչ միայն ընկ. Շահումյանի և նրա երեխաների համար, այլ նաև Զափարիձեի, Պետրովի և Բաքվում ձերբակալված մյուս ընկերների համար»:

Ավանեսովը հայտնում էր, որ Զավրիևի հեռագիրը ոչ թե բխում է Ժողկոմսովետից, այլ իր՝ որպես հայկական գործերի կոմիսարից: «Այս տեղեկությունը հայտնելով դաշնակցություն կուսակցության կենտկոմին,- վերջում գրում էր Ավանեսովը,- մեկ անգամ ևս առաջարկում եմ սկսել այդ կապակցությամբ բանակցություններ, հակառակ դեպքում ամբողջ պատասխանատվությունն ապագայի համար ընկնում է դաշնակցության կենտկոմի վրա»: Ավանեսովը պատասխանի համար տալիս էր 14 օր (ՀՀ ԱԱ, ֆ. 1437, ց. 2, գ. 77, թ. 2-3):

Հիմա դժվար է ասել, թե օգոստոսի 29-ին ձերբակալված ու պատանդ վերցված լինելուց հետո, ինչու է Զավրիևն այդ մասին Հայաստանի Հանրապետության ղեկավարներին հայտնում բավական ուշացած, միայն նոյեմբե-

ղի 17-ին, երբ սեպտեմբերի 20-ին Շահումյանն ու մյուս կոմիսարներն արդեն գնդակահարվել էին, մանավանդ, որ դեռ օգոստոսի 29-ին դաշնակցության անդամները Յենտրոկասպիայի դիկտատուրայի կառավարության մեջ ունեին ազդեցիկ դիրք:

1918 թ. դեկտեմբերի 4-ին Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի մինիստրը Ջամալյանին հանձնարարում է Ավանեսովին և Սովետական Ռուսաստանի արտաքին գործերի ժողկոմատին ուղարկել հետևյալ հեռագիրը. «Պատանդ վերցված Ջավրիևն ու Նազարյանցը ոչ անձամբ, ոչ հայոց ազգային խորհուրդը չեն ունեցել և չունեն որևէ կապ Շահումյանի, Ջափարիձեի, Պետրովի և մյուսների ձերբակալման հետ: Ըստ վերջին տեղեկությունների, նրանք ձերբակալվել են Յենտրոկասպիայի դիկտատուրայի և գործադիր կոմիտեի ժամանակավոր նախագահության կողմից: Մենք որևէ հնարավորություն չունենք ձեռք բերել պատանդների փոխանակման համար: Վճռականորեն պահանջում ենք ազատել Ջավրիևին և Նազարյանին» (ՀՀ ԱԱ, ֆ. 200, ց.1, գ.141, թ. 14):

1919 թ. հունվարի 4-ին դաշնակցականների միջնորդությամբ Բաքվում գտնվող դաշնակից զորքերի հրամանատար գեներալ-մայոր Թոմսոնը Կարմիր խաչի միջոցով ուղարկած հեռագրով հայտնում էր, որ որոշել է ազատել իր ենթակայության տակ գտնվող բոլշևիկ գերիներ Վարվարա Ջափարիձեին և Լևոն ու Սուրեն Շահումյաններին, պայմանով, եթե սովետական իշխանությունը կազատի Մոսկվայում ձերբակալված դոկտոր Ջավրիևին և գրող Լիպարիտ Նազարյանցին ու կաջակցի նրանց վերադառնալ Կովկաս:

Միաժամանակ Թոմսոնը ներկայացրել է պահանջ. ձերբակալումից կազատի նաև Սաթո Մարտիկյանին, Ամիրովի երկու եղբայրներին, Ֆիոլետովային, Սամսոն Կանդելակիին և Մարո Մարտիկյանին, «եթե սովետական իշխանությունը վերոհիշյալ պայմաններով կազատի Վլադիկավկազում ձերբակալված բլոկտանական միսիայի 11 անդամներին» (ՀՀ ԱԱ, ֆ. 1437, ց. 1, գ. 257, թ. 3):

Հակոբ Ջավրիևի և Լիպարիտ Նազարյանցի ազատման մասին գրագրությունը շարունակվել է մինչև 1919 թ. մարտի 28-ը: Այդ օրն արդեն Սովետական Ռուսաստանի Կենտգործկոմի նախագահության քարտուղար նշանակված Ավանեսովը Թիֆլիս՝ Հովհաննես Թումանյանին ուղարկած հեռագրով հայտնել է. «Վեց շաբաթ առաջ Նազարյանցն ու Ջավրիևն ազատվել են և գտնվում են ազատության մեջ: Շտապ միջոցներ ձեռնարկել պատանդների փոխանակման համար» (ՀՀ ԱԱ, ֆ. 1437, ց. 1, գ. 259, թ. 1; ֆ. 200, ց.1, գ.141, թ. 23):

Հայաստանի վարչապետ Քաջազնունին Վրաստանի Հանրապետության

նախագահ Ն. Ժորդանիային հեռագրել է հետևյալը. «Նկատի ունենալով, որ այժմ ազատված հասարակական գործիչ դոկտոր Հակոբ Քրիստափորի Ջավրիևի և հասարակական գործիչ Լիպարիտ Նազարյանցի Մոսկվայից այսօր մեկնելը կախված է Վրաստանում ազատության մեջ գտնվող Վարվարա Ջափարիձեի և Լևոն Շահումյանի մեկնման մասին Սովետական իշխանությանը հայտնելուց, ինդրում եմ չմերժել և այդ մասին ռադիոյով հայտնել Մոսկվայի Ժողկոմսովետին» (ՀՀ ԱԱ, ֆ. 1437, ց. 1, գ. 260, թ. 1):

Մարտի 30-ին Թիֆլիսից Ավանեսովին ռադիո-հեռագրով հայտնվում է, որ Վարվարա Ջափարիձեն և Շահումյանի որդիներն այժմ «ազատված են առանց որևէ երաշխավորության և սահմանափակումների ու կարող են մեկնել, որի մասին Ջափարիձեն Մոսկվա մեկնող հատուկ ցրիցի միջոցով ուղարկված նամակով կհայտնի Ստալինին» (ՀՀ ԱԱ, ֆ. 1437, ց. 1, գ. 259, թ. 2):

Նույն կերպ գերությունից ազատվում են ձերբակալված վերոհիշյալ բոլշևիկները:

Աղրբեջանի կոմկուսի պատմության ինստիտուտի արխիվում եղած թիվ 303 ֆոնդի առաջին ցուցակի 17 և 21-րդ գործերը նույնպես պարունակում են նյութեր Սովետական Ռուսաստանի իշխանությունների կողմից էսէռներին, մենշևիկներին և դաշնակցականներին պատանդ վերցնելու, նրանց փոխանակելու մասին նյութեր:

ԲԱՔՎԻ ՍՈՎԵՏԻ ՆՈՐ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

*Չնայած անգլիացիների Բաքու գալուն, թուրքական հարձակման վտանգը մնում էր: Իրականություն չէին դառնում բնակչության վիճակը բարելավելու, սովի վտանգը կանխելու, աշխատանքով ապահովելու մասին նոր իշխանությունների խոստումները: Այդ ամենի փոխարեն բնակիչները տեսնում էին, որ Ատրպատականի փոխարեն 40 հազար փութ նավթն ուղարկվում է Էնզելի՝ անգլիացիներին: Ավելին, անգլիացիները պահանջում են ամեն ամիս իրենց տալ 80 հազար փութ նավթ (**Ստ. Շահումյան**, նույն տեղը, հ. հինգերորդ, էջ 249):*

Եվ բնակչության հաստատացող դժգոհությունը վերացնելու, իրենց իսկական նպատակները կոծկելու համար Դիկտատուրան նախաձեռնում է Բաքվի սովետի ընտրությունների կազմակերպումը:

Դրանով նպատակ էր հետապնդվում նախ ազատվել բոլշևիկների ներկայությունից և երկրորդ՝ ցույց տալ, թե ընտրում են նոր սովետական իշխանություն:

Ընտրությունների օրը նշանակվել է օգոստոսի 28-ին: Ազատության մեջ մնացած բոլշևիկները, չնայած բոլոր արգելքներին, կարողանում են Բաքվի սովետի կազմում անցկացնել 28 պատգամավոր, այդ թվում ձերբակալված 9 կոմիսարներին՝ Շահումյանին, Ջափարիձեին, Զևինին, Ցիոլետովին, Ազիզբեկովին, Բասինին, Կորգանովին, Մալիգինին, Բոգդանովին: Ընտրվածների մեջ էին նաև Միկոյանը, Ստուրուան և ուրիշներ: Իսկ ձախ էսէռներից և ձախ դաշնակցականներից ընտրվել է 7 պատգամավոր:

Միկոյանը վկայում է, որ առաջավոր բանվորները պաշտպանել են իրենց պահանջը պատգամավոր ընտրված Շահումյանին ու մյուսներին բանտից ազատելու մասին:

1918 թ. սեպտեմբերի 5-ին գործկոմի շենքում պետք է սկսվեր նոր սովետի առաջին նիստը: Այդ ժամանակ էլ Բաքվի մերձակա բարձունքից թուրքերի արձակած ռումբերից մեկը դիպչում է գործկոմի շենքին: Նիստը տեղափոխվում է անմոտանգ տեղ:

Հենց այդ նիստի ժամանակ էլ բոլշևիկ պատգամավորները պահանջել են կալանքից ազատել ընտրված պատգամավորներին և նրանց հնարավորություն տալ մասնակցելու սովետի աշխատանքին: Այս պահանջը մերժվել է: Սադովսկին հայտարարել է, որ կալանավորված կոմիսարների դեմ հարուցվել են հանցագործություն կատարելու մեղադրանքներ, որոնք վերջնականապես կապացուցվեն դատարանում:

«Քանի դեռ,-եզրափակել էր Սադովսկին,- ժողովրդական դատարանը նրանց չի արդարացրել, նրանք չեն կարող զբաղեցնել պատգամավորի պատվավոր աթոռը»: Ստուրուան պատասխանել է. «Այդ դեպքում պետք է դատել այն պրոլետարներին, որոնք քվեարկել են կոմիսարների օգտին» («Бюллетень», 08.09.1918):

Սեպտեմբերի 5-ին սովետի նիստում բոլշևիկ պատգամավորներ Ստուրուան և Միկոյանը ձախ էսէռների և ձախ դաշնակցականների պաշտպանությամբ պահանջել են ազատել կոմիսարներին և ստեղծել միջկուսակցական հանձնաժողով և դրան հանձնել կոմիսարների գործի քննությունը: Քվեարկությամբ այս առաջարկությունը մերժվել է: («Бюллетень»,09.09.1918):

Բաքվի սովետի սեպտեմբերի 7-ին, 10-ին և 11-ին տեղի ունեցած նիստերում բոլշևիկ պատգամավորները պահանջում էին ցրել Անդրկասպիայի դիկտատուրայի ապօրինի կառավարությունը և ընտրել նոր իշխանություն: Այս առաջարկությունը նույնպես մերժվել է:

Սեպտեմբերի 10-ին արտակարգ ռազմա-հետաքննչական հանձնաժո-

ղովն ավարտում է աշխատանքը և որոշում է ձերբակալված կոմիսարներ Շահումյանի, Կորգանովի, Վեզիրովի, Ցիոլետովի, Ջափարիձեի, Կոստանդյանի և Պետրովի գործը հանձնել զինվորական դատարանին» («Бюллетень», 11.09.1918):

Սովետի նիստի ժամանակ բոլշևիկ պատգամավորները բողոքել են այդ որոշման դեմ և պահանջել անհապաղ կալանքից ազատել Բաքվի կոմիսարներին: Հանդես եկած Այոլոն, Սադովսկին և մյուսները կրկնել են կոմիսարների հասցեին թխված զրպարտությունները և չկարողանալով նիստը շարունակել, շտապել են այն փակել:

Բոլշևիկ պատգամավորները միջոցներ են մշակում սեփական ուժերով Շահումյանին ու մյուսներին բանտից ազատելու համար:

Սեպտեմբերի 11-ին Բաքվի սովետում կազմվել է Ցենտրոկասպիայի դիկտատուրայի նոր կառավարություն հետյալ մինիստրներով.

Արտաքին գործերի - Մերիսալու (էսէռ), տեղակալ՝ Ս. Սահակյան (աջ էսէռ).

Ներքին գործերի - Ավ. Առաքելյան (դաշնակ.).

Ժողովրդական տնտեսության- Զիմնիկով (էսէռ).

Ֆինանսների- Մելիք-Յոլչյան (դաշնակ).

Պարենավորման- Սուխորուկով (էսէռ).

Ճանապարհային հաղորդակցության- ինժեներ Ավ. Օհանջանյան (դաշնակ.).

Ջրի և տրանսպորտի- Կրիլցով (էսէռ).

Արդարադատության- Նաջարյան (էսէռ).

Քաղաքային տնտեսության- Գ. Գրիգորյան (անկուս).

Լուսավորության- Բլինով (անկուս):

Ռազմածովային գործերի մինիստր է հրավիրվում գեներալ Բազրատունին, որի թեկնածությանը չի համաձայնվում ծովայինների հրամանատարությունը:

Մենշևիկ Սադովսկին նշանակվել է կառավարության նախագահ:

Սոցիալիստական կուսակցությունների բլոկի կազմած այս կառավարությունն էլ մեծաղղորդ հայտարարություններով, հույսն անգլիացիների վրա դրած, հայտարարել է Բաքուն թուրք-գերմանական զորքերից պաշտպանելու իր վճռականության մասին:

ԴԻԿՏԱՏՈՒՐԱՅԻ ՂԵԿԱՎԱՐՆԵՐԻ ՓԱԽՈՒՍՏԸ

Ցենտրոկասպիայի դիկտատուրայի պարագլուխները հայտնվել էին անելանելի վիճակի մեջ; Դեռևս սեպտեմբերի 1-ին գեներալ Դենիկինը նրանց տեղեկացրել էր, որ անգլիական զորքերը հեռանալու են Բաքվից: Մյուս կողմից ուժեղանում էր բնակչության դժգոհությունը նոր իշխանությունների քաղաքականությունից:

Խաթարվում էր նաև դաշնակցության հեղինակությունը: Այդ հեղինակությունը վերականգնելու նպատակով դաշնակցության ներկայացմամբ Ռուստոմը 1918 թ. օգոստոսի 31-ից Դիկտատուրայի հրամանով լիակատար իրավունքներով նշանակվում է Ցենտրոկասպիայի և գործադիր կոմիտեի ժամանակավոր դիկտատուրայի անդամ («Ակա», սեպտեմբերի 5, 1918 թ.):

Ստանալով համալրում, թուրքական զորքերը օգոստոսի 29-ին և սեպտեմբերի 1-ին ձեռնարկել են նոր հարձակում: Նրանք գրավել են «Ցեխային հրաբուխ» կոչվող բարձունքի դիրքերը և ցամաքի կողմից Բաքուն ամբողջությամբ վերցրել են շրջափակման մեջ:

1918 թ. սեպտեմբերի 13-ին թուրքական զորքերն ամբողջ ճակատով վերսկսել են ուժեղ գրոհ, սպառնալով ներխուժել Բաքու: Սեպտեմբերի 14-ի երեկոյան անգլիացիները ցուցադրաբար հեռացել են դիրքերից: Գեներալ Դենիկինը նույնիսկ Ցենտրոկասպիայի դիկտատուրայի ղեկավարներին տեղյակ չի պահել այդ մասին:

Մինչ այդ, Բաքվի սովետի բոլշևիկ պատգամավորները ներկայացրել էին քաղաքը պաշտպանելու իրական ծրագիր և դրա շուրջ բանակցություն են վարել Ցենտրոկասպիայի դիկտատուրայի պարագլուխների հետ:

Բոլշևիկներն առաջարկում էին մի քանի օրվա ընթացքում, մինչև Աստրախանից 10 հազար մարտիկներից բաղկացած սովետական օգնական ուժերի Բաքու հասնելը, հարկավոր է Բաքվից հեռացնել անգլիացիներին և վերսկսել նավթի առաքումը դեպի Ռուսաստան: Բոլշևիկների առաջադրած պայմանների մեջ կարևորվում էր նաև ձերբակալված կոմիսարներին անհապաղ ազատելու պահանջը: Նախատեսվում էր իշխանության հարցը լուծել թուրքերին Բաքվի մատուցներից քշելուց հետո:

Դիկտատուրայի ղեկավարները չեն առարկել բոլշևիկների առաջարկին և դրել են պայման՝ կհամաձայնվեն, եթե դրա տակ դրվի Սովետական Ռուսաստանի կենտրոնական կառավարության ներկայացուցիչ Շահումյանի ստորագրությունը, որը գտնվում էր Բայիլովի բանտում:

Ստուրուան Շահումյանին ներկայացրել է առաջարկների տեքստը, որի

հետ նա համաձայնվել է, ավելացնելով Սովետական Ռուսաստանը ճանաչելու պահանջը:

Երբ Շահումյանի ստորագրությամբ վավերացված առաջարկները ներկայացվել են Դիկտատուրայի ղեկավարներին, վերջիններս համաձայնվել են ընդունել մի պայմանով, որ սովետական զինված ուժերի փոխարեն հնարավորություն ստեղծվի Բաքու փոխադրել Սովետական Ռուսաստանի դեմ խռովություն բարձրացրած չեխոսլովակյան զորամասերին:

Իհարկե, Դիկտատուրայի ղեկավարներն այս պայմանը դնելով ցույց էին տալիս, որ նրանք ոչ միայն Բաքուն պաշտպանելու, այլև ձերբակալված կոմիսարներին ազատելու որևէ մտադրություն չունեին:

Ցենտրոկասպիայի դիկտատուրայի ղեկավարների մեջքով համաձայնությունը տեղի չի ունեցել: Եվ փոխանակ կազմակերպելու Բաքվի պաշտպանությունը հարձակվող թուրքերից, Դիկտատուրայի ղեկավարները շտապում էին հաշվեհարդար տեսնել ձերբակալված Շահումյանի ու մյուս կոմիսարների նկատմամբ: Նրանք մտադրություն ունեին, եթե դա չհաջողվեր իրականացնել, ապա կոմիսարներին պահել բանտում: Այդ դեպքում կոմիսարները թուրքերի ներխուժման ժամանակ կհայտնվեին նրանց ձեռքը:

Բաքվի բոլշևիկները Միկոյանի ղեկավարությամբ ձեռնամուխ են լինում Շահումյանին ու մյուս կոմիսարներին բանտից ազատելու գործին: Միկոյանին, որպես Բաքվի սովետի պատգամավոր, հաջողվել է սեպտեմբերի 14-ի երեկոյան պահակախմբի ուղեկցությամբ մտնել բանտ և ազատել ձերբակալվածներին:

Սեպտեմբերի 14-ի երեկոյան անգլիացիների հեռանալուց հետո Դիկտատուրայի պարագլուխների չփոթվածությունն ավելի է ուժեղացել: Նրանց ոչինչ չէր մնում անելու, բացի փախուստից: Սեպտեմբերի 15-ի առավոտյան նրանք իրենց զորքերի մնացորդներով նույնպես փախչում են Բաքվից: Սկսվել է անկառավարելի խուճապ:

Այսպիսով Շահումյանին ու մյուս կոմիսարներին փախուստի և դավաճանության մեջ մեղադրող դիկտատուրայի ղեկավարները, մոռանալով իրենց խոստումը Բաքուն թուրքական զավթիչներից պաշտպանելու մասին, փախչում են քաղաքից և թուրքական զորքերին հնարավորություն են տալիս հաշվեհարդար տեսնել բնակչության նկատմամբ:

ԴԱՐՁՅԱԼ ԹԱԴԵՎՈՍ ԱՍԻՐՅԱՆԸ

Շահումյանն ու մյուս կոմիսարները Միկոյանի ուղեկցությամբ շտապում են կառամատույց, որտեղ կանգնած «Սևան» նավով պետք է հեռանային Բաքվից: Սակայն նավը տեղում չէր, այն գավթել էին Յենտրոկասպիայի դիվ-տաստուրայի ղեկավարներ մենշևիկներ Սաղոմսկին, Այոլոն, աջ էսէռ Վելոնցը և մյուսները ու փախել էին քաղաքից:

Դիվտաստուրայի ղեկավարների հետ Բաքվից դեպի Պետրովսկ են հեռացել նաև մի քանի օր առաջ ռազմահակասը լքած դաշնակցականների ջոկատները, իրենց հրամանատարներ Համազասպի, Ավետիսովի, Ղազարովի, Բաքվի ազգային խորհրդի լիդերներ Գյուլխանդանյանի ու Մելիք-Յոլչյանի հետ միասին, որոնք չէին մոռացել Հայաստանի հանրապետության կառավարության ղեկավարներից ստացած հրամանը՝ չկռվել Թուրքերի հետ և հեռանալ Բաքվից:

Այդ նրանք էին, որոնք հուլիսի 30-31-ին Շահումյանի առջև դրել էին իրենց պահանջը՝ սպիտակ դրոշակ բարձրացնելու միջոցով փրկել Բաքվի Հայությանը: Նրանք այլևս չէին հիշում այդ մասին և քաղաքից հեռացան, մոռանալով Բաքվի Հայ բնակչությանը պաշտպանելու մասին իրենց ճառերն ու խոստումները:

Քաղաքում սկսվել է ահավոր խուճապ: Անպաշտպան մնացած բնակիչները խոնվում են նավահանգստում: Սակայն այստեղ գտնվող նավերը, որոնք չեն կարողանում բոլորին ընդունել, շտապով դուրս են գալիս բաց ծով:

Իսկ բանտից ազատված կոմիսարները նավահանգստում չգտնելով «Սևան» նավը, որոշում են գիշերը թաքնվել քաղաքում: Այդ պահին նավահանգստում նրանք հանդիպում են Թադևոս Ամիրյանին, որը պատրաստվում էր իր ջոկատի 200 զինվորների հետ «Թուրքմեն» նավով հեռանալ Բաքվից:

Թ. Ամիրյանի առաջարկով Շահումյանն ու մյուս կոմիսարները նրա հետ բարձրանում են ուղևորներով լեփ-լեցուն «Թուրքմեն» նավը և հեռանում Բաքվի նավահանգստից:

ԲԱՔՎԻ ՀԱՅ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԿՈՏՈՐԱԾԸ

Սեպտեմբերի 15-ի առավոտյան ժամը 9-ին, առաջինը քաղաք են ներխուժել մուսավաթական հրոսակները և հարձակվել են հայկական թաղամասերի վրա: Բարբարոսները նույնիսկ չեն խնայում կանանց ու երեխաներին, սպանելով նրանց դաժան տանջանքի ենթարկելով:

*Նախորդ օրվա առավոտյան ժամը 9-ին Բաքվի պաշտպանության դիրքերում մնացած հայերից կազմված մի փոքրաթիվ ջոկատի հրամանատար էսէռ, ինժեներ Եվանգուլյանը, տեսնելով, որ հետագա պայքարն անիմաստ է այլևս, իր հրացանի սվինին կապել է սպիտակ դրոշակ և գնացել է թուրքերին ընդառաջ: Հասնելով Մյուրսել փաշայի զորակայան, նրան հայտնել է, որ քաղաքը հանձնում է և խնդրել է խնայել հայ բնակչությանը: Այս Եվանգուլյանը մնացել է Մյուրսել փաշայի մոտ մինչև թուրքերի Բաքվից հեռանալը (*Архив русской революции, т. 9, стр. 135*):*

Այդ մասին վկայում է նաև Բագրատ եպիսկոպոսը, գեներալ Թոմսոնին հայտնելով հետևյալը. «Սեպտեմբերի 2 (15)-ին քաղաքը թուրք-ադրբեջանական զորքերի կողմից գրավելու նախօրյակին, նրանց ընդառաջ ուղարկվել է պատվիրակություն սպիտակ դրոշակով, հույս ունենալով, որ էքսցեսներ թույլ չեն տրվի և քաղաքում կվերականգնվի կանոնավոր կյանքը: Պատվիրակությանը, որի կազմի մեջ մտնում էին դանիական և պարսկական հյուպատոսները, թուրքական զորքերի հրամանատար Մյուրսել փաշան պաշտոնապես վստահեցրել է խաղաղ բնակչության անվտանգության մասին» (ՀՀ ԱԱ, ֆ. 223, ց.1, գ.116, թ. 3):

Մեր պատմության մեջ սա էլ որ երրորդ դեպքն է, երբ ժողովրդին առաջնորդելու գործը ստանձնած վախկոտներն ու մորթապաշտները դիմադրությունն կազմակերպելու փոխարեն, հավատալով թշնամու կեղծ խոստումներին, նրա առջև բարձրացրել են սպիտակ դրոշակ և դրա հետևանքով ոչ միայն կոտորվել է հայ բնակչությունը կամ բռնել գաղթի ճանապարհը, այլև թշնամում են հանձնվել մեր քաղաքներն ու անառիկ ամրոցները:

Առավոտյան ժամը 11-ին թուրքական կանոնավոր զորքերի հետ քաղաք են մտել Ադրբեջանական կառավարության անդամները: Թուրքական առաջապահ գնդերը հրետանային կրակն ուղղել են նավահանգստի վրա, որտեղ կուտակվել էին մեծ թվով փախստական հայեր:

*Այդ օրերի մասին «*Правда*» թերթում տպագրված ականատեսներից մեկի վկայությամբ անպաշտպան մնացած հայերը, չփոթության մեջ ընկած, նետվում էին ոտների ընտանիքները: «Ոտները նրանց պահում էին նկուղներում, տանիքներում՝ ուրիշ փրկություն չկա: Փախչել հնարավոր չէ, թուրքերը գրավում են քաղաքի բոլոր թաղամասերը, թալանում են տները...:Հազարավոր թուրք զինվորներ վիստում էին քաղաքում, ներխուժում տագնապով ու սարսափով համակված հայերի տները, սպանում դաշույնով, ատրճանակներով, գնդակահարում տեղն ու տեղը փողոցում, վայր նե-*

տում բարձրահարկ շենքերի վերին հարկերից» («Правда», 21. 09. 1918):

Բաքվում գործող ռուսների ազգային խորհրդի անդամներ Յա. Սմիրնովը, Ա. Լեոնտովիչը, դոկտոր Գինդեսը և ուրիշներ մեծ ջանքերով կարողանում են օգնել պաշտպանվելու ունակությունից զրկված հայերին: Թուրքերը չեն խնայում նաև այն ռուս ընտանիքներին, որոնք հայերին ապաստան էին տվել: Ժամանակակիցների վկայությամբ շատ հայեր էլ փրկվում են թաթարների օգնությամբ (Архив русской революции, т. 9, стр. 135):

Թուրքական զորքերը ներխուժում են հայկական թաղամաս՝ Արմենաքենդ, որտեղ արդեն իրենց սև գործն էին անում մուսուլմանական ավազակախմբերը: Արմենաքենդում պատսպարվել էին նաև մի քանի տասնյակ հազար ունեզուրկ հայ փախստականներ: Նրանց բոլորին անխղճաբար ոչնչացրել են: Հայերի կոտորածը շարունակվել է 4-5 օր:

Ադրբեջանական կառավարությունն էր ուղղություն տալիս հայ բնակիչներին ոչնչացնելու գործողությունները, բայց դա նրան չէր խանգարում հայտարարել, թե անկարող է սանձել հայերի կոտորածն իրականացնող կատաղած ամբոխին, և դրանով ավելի էր ոգևորում ջարդարարներին:

Հայերի մասսայական կոտորածը, որը շարունակվել է մի քանի օր, անմիջապես ղեկավարում էր ներքին գործերի մինիստր Բ. Ջիվանշիրը: Այդ կոտորածը պաշտոնապես ավարտվել է միայն Բաքվում գտնվող արտասահմանյան հյուպատոսությունների միջամտությունից հետո:

Բաքվի ծովափից ոչ հեռու նավերից մեկը, որի վրա բարձրացել էին նախատեսվածից շատ ավելի փախստական հայեր, կորցնելով հավասարակշռությունը խորտակվել է, իր հետ ծովի անդունդը տանելով հարյուրավոր մարդկանց:

Կոտորածն ավարտելուց հետո, ադրբեջանական կառավարության հրահանգով քաղաքի նոր իշխանությունը հավաքել է սպանված հայերի 20 հազարից ավելի դիակ և կառքերով տեղափոխել քաղաքից դուրս, բոլորին թաղելով մի տեղում: Սա պաշտոնական տեղեկությունն է: Իսկ, թե որքան սպանվածների են թաղել հարազատները, որքան դիակներ են հայտնաբերվել հետո, հայտնի չէ:

Դեպքերի ականատեսը հայտնում է նաև, որ հայերի կոտորածից հետո Բաքվի փողոցներից հավաքվել են հազարավոր մանկահասակ որբերի, որոնց ծնողները սպանվել էին: Այդ երեխաներին պատսպարել են ռուսների ազգային խորհրդի անդամները (Архив русской революции, т. 9, стр. 133-135):

Նույնն է վկայում նաև Բաքվի հայերի կոտորածից հետո ազգային խորհրդի նախագահ դարձած Բագրատ եպիսկոպոսը, որը 1918 թ. նոյեմբերի 10-ին անգլիական գեներալ Թոմսոնին հայտնում էր հետևյալը. «Սպանված հայերի թիվը մոտավորապես 20 հազար է: Դիակների մեծ մասը, հետքերը թաքցնելու նպատակով, Սալյանի զորանոցների մոտ գաղտնի այրել են»:

Այնուհետև եպիսկոպոսը նկարագրում էր հայերին կոտորելու զարհուրելի դեպքերը, թե ինչպես են թուրք զինվորները «երիտասարդ աղջիկներին ու տղաներին գազանաբար բռնաբարել հաճախ ամուսինների և հարազատների ներկայությամբ» (ՀՀ ԱԱ, ֆ. 223, ց. 1, գ.116, թթ. 1-7):

Բաքվում գտնվող ամերիկյան միսիային ուղարկած նամակում Բագրատ եպիսկոպոսը հայտնում էր հետևյալը. «Թուրք-ադրբեջանական իշխանությունը պնդում է, որ 1918 թ. սեպտեմբերի դաժանությունները պատասխան են մարտյան դեպքերին» (ՀՀ ԱԱ, ֆ. 223, ց. 1, գ.117, թ. 4):

Այստեղ հարկ եմ համարում մի մեջբերում կատարել դաշնակցության երևելի գործիչ Արշակ Ջամալյանի հաղորդումից, որն այդ օրերին Թիֆլիսից ուղարկել էր Երևան:

«Երեկ,- գրում էր նա,- Խալիլ փաշան նոր էր վերադարձել ռազմաճակատից, ուր նա գնացել էր ռազմական գործողությունները ղեկավարելու համար, այցելության եկավ ինձ: Տեսակցությունը տևեց մեկ և երեք քառորդ ժամ: Ընդհանրապես խոսում էինք Բաքվի վերջին գործողությունների մասին»

Եվ կարծես ոչինչ չէր պատահել: Կարելի էր հանգիստ զրույցել Բաքվի հայության դահիճներից մեկի հետ:

Իսկ հետագայում Ա. Խատիսյանը, որը որպես հայոց պատվիրակության անդամ, գտնվում էր Կ. Պոլիսում, առանց խղճի խայթի, «անմեղ» տեսք ընդունելով, գրել է. «Մինչ մենք բանակցություններ կը վարէինք Պոլսոյ մէջ պաշտոնական անձնավորութիւններու հետ, ինկա Պաքուն, որուն գրաման առեն թուրքերը սարսափելի կոտորած մը սարքած էին՝ ջարդելով մոտ 30.000 հայ»:

Բացի Բաքվի հայ բնակչության կոտորածից, թուրք զավթիչները դաժան հաշվեհարդար են տեսել գերի ընկած հայ զինվորների նկատմամբ, որոնց թիվն այդպես էլ մնացել է անհայտ: Հայ գերիների նկատմամբ իրենց գործադրած գազանությունը կոծկելու նպատակով Նուրի փաշան Ջամալյանին ուղարկած նամակում հայտնում էր, թե ժամանակին ստացել էր հրահանգ, որի համաձայն, եթե թուրք զինվորների դեմ Բաքվում կռվող հայ զինվորնե-

ը հանձնվեին առանց դիմադրության, ապա թույլ կտրվեր նրանց մեկնել Հայաստան: «Բայց քանի որ,- գրում էր Նուրի փաշան, կոծկելով հայ գերի զինվորներին ոչնչացնելու փաստը,- դեպքերն այդ կերպով տեղի չունեցան և մենք Բաքու մտանք կռվով, մենք դեռ կարգադրություն չենք արել գերիների մասին» (ՀՀ ԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 47, թ. 12):

Ահա, այսպես Բաքվի հայ բնակչության ողբերգությամբ կատարվեց Բաթումի պայմանագրի 11-րդ հոդվածի պահանջը:

Ընկավ Բաքուն: Երիտթուրքերը հնարավորություն ստացան նոր ցեղասպանություն կազմակերպել, այս անգամ Բաքու քաղաքի հայ բնակչության նկատմամբ:

Հնարավո՞ր էր կասեցնել թուրքերի գրոհը և պաշտպանել Բաքուն: Իհարկե, հնարավոր էր: Եթե Ցենտրոկասպիայի դիկտատուրայի ղեկավարներն ու նրանց հետ միացած դաշնակցական հրամանատարներն ընդունեին Շահումյանի հավանությանն արժանացած ծրագիրը, ցանկություն ունենային ուժերը համախմբել և միասնական ճակատ ստեղծել, ապա միանգամայն հնարավոր էր ոչ միայն Բաքուն պաշտպանել, այլև ջախջախել թուրքերին այնպես, ինչպես կատարել էին սովետական ուժերը օգոստոսի առաջին օրերին:

Թուրքերի կողմից Բաքուն գրավելը նշանակում էր Բրեստի պայմանագրի խախտում, որին նպաստել է նաև 1918 թ. հունիսի 4-ին կնքված Բաթումի պայմանագիրը:

Նախորդ էջերում արդեն անդրադարձ եղել է այն մասին, թե Սովետական Ռուսաստանը ինչ ջանքեր էր գործադրում Անդրկովկասում Բրեստի հաշտության պայմանները կատարելու համար, որոնք այդպես էլ հաջողությամբ չեն պսակվել: Եվ 1918 թ. սեպտեմբերի 20-ին Սովետական Ռուսաստանը հատուկ նոտայով չեղյալ է համարել Բրեստի պայմանագրով Թուրքիային վերաբերող հոդվածները:

Սովետական նոտայում ասվում էր. «Օսմանյան կառավարությունն անցած կես տարվա ընթացքում, չնայած սովետական կառավարության բազմաթիվ բողոքներին, անընդհատ խախտում էր Բրեստ-Լիտովսկի պայմանագիրը: Այժմ, վերջապես ի լրումն այդ բոլորի, նա գրավեց և սարսափելի ավերման ենթարկեց ռուսական հանրապետության կարևորագույն քաղաքներից (Բաքուն) մեկը»:

*Սովետական նոտայի վերջում հայտարարվում էր, որ Օսմանյան կառավարությունը դրանով ցույց է տվել, որ «Բրեստ-Լիտովսկի պայմանագիրը Ռուսաստանի և Թուրքիայի միջև այլևս գոյություն չունի» (*Документы

внешней политики СССР, т. 1, стр. 490-492):

Սույն աշխատության համար նախատեսված ծավալը ինձ թույլ չի տալիս հանգամանորեն անդրադառնալ Ադրբեջանը զավթած թուրքական իշխանությունների գործադրած բռնություններին, ուստի ուզում եմ միայն նշել, որ թուրքական զինվորական իշխանությունները նույնիսկ չէին նկատում Ադրբեջանի հանրապետության մուսավաթական կառավարության գոյությունը:

Իսկ այդ կառավարության պատվիրակության ղեկավարներ Ռասուլ-Զադեն և Թոփչիբաշևը 1918 թ. հուլիսին Կ. Պոլսում հավատարմության երդում էր տալիս սուլթանին: Էնվեր փաշայի ներկայությամբ Ռասուլ-Զադեն սուլթանին խնդրում էր իր «բարձր հովանավորության տակ վերցնել ինչպես Ադրբեջանը, այնպես էլ բոլոր մահմեդական ժողովուրդներին, ստեղծել հզոր մահմեդական պետություն մահմեդական աշխարհի կենտրոն Թուրքիայի գլխավորությամբ»:

*Իսկ մյուս մուսավաթական Թոփչիբաշևը սուլթանին ասում էր. «Ալլահի ողորմածությամբ ինձ հաջողվեց հասնել նպատակիս՝ տեսնել բոլոր մահմեդականների խալիֆին ու թուրքերի փադիշահին: Մենք ադրբեջանական թուրքերս միշտ կլինենք և ցանկանում ենք ապրել բոլոր մահմեդականների խալիֆի՝ օսմանների փադիշահի ողորմածությամբ» (**Ադրբեջանի կենտրոնական պետական արխիվ**, ֆ. 211, ց. 1, գ. 30, թ. 1-2):*

Ավելորդ չեմ համարում հիշեցնել, որ այդ նույն ժամանակ Կ. Պոլսում գտնվող հայկական հանրապետության պատվիրակներ Ահարոնյանն ու Խատիսյանը, որոնք նույնպես սողում էին սուլթանի առջև, փոխադարձ ընդունելություններ ու ճաշկերույթներ էին կազմակերպում Բաքվի հայերի ողբերգության կազմակերպիչների հետ...

Բաքվում 30 հազար հայերի կոտորածի մասին Ջամալյանը հեռագրով հայտնել է Կ. Պոլսում գտնվող Ահարոնյանին: Վերջինս էլ 1918 թ. հոկտեմբերի 24-ին Ջամալյանին հեռագրով պատասխանել է, որ կոտորածի մասին տեղյակ է պահել մեծ վեզիրին, որն էլ Բաքու ուղարկած հեռագրով պահանջել է Բաքվում կատարված սպանությունների համար պատժել մեղավորներին (ՀՀ ԱԱ, ֆ. 200, ց. 1. գ. 657բ, թթ. 239ա, 242ա):

Բաքուն գավթելուց հետո թուրքական հրամանատարությունը ձեռնարկում է հարձակում Դերբենդի և Պետրովսկ քաղաքների ուղղությամբ: Այստեղ Բիչերախովը Ցենտրոկասպիայի դիկտատուրայի կառավարության նախկին անդամներ էսէռների, մենշևիկների և դաշնակցականների մասնակ-

ցությամբ ստեղծել էր իր կառավարությունը, այն կոչելով Մերձկասպյան կառավարություն: 1918 թ. հոկտեմբերի սկզբին Թուրքերը մոտեցել են Պետրովսկին, որը պաշտպանում էին Բիչերախովի ջոկատը և Բաքվից այստեղ էվակուացված հայկական զորաջոկատները:

Էնզելիից ծովով Պետրովսկ են գալիս նաև այնտեղ Բաքվից հեռացած հայկական ջոկատների մնացորդները՝ լի վճռականությամբ կռվել արշավող Թուրքերի դեմ: Հարկ չեմ համարում անդրադառնալ Պետրովսկի ուղղությամբ շարժվող Թուրքերի դեմ Բիչերախովի ընդհանուր հրամանատարությամբ ծավալված ռազմական գործողություններին:

Միայն ուզում եմ փաստել հետևյալը: Բաքվի ռազմաճակատում գտնվող և դաշնակցության ենթակայության տակ եղած հայկական ջոկատները, ինչպես նախորդ էջերում նշվել է, Թուրքերի դեմ լավ էին կռվում և աչքի էին ընկնում իրենց սխրագործությամբ:

Բայց քանի որ ստացվել էր Հայաստանի Հանրապետության ղեկավարների ցուցումը Բաթումի պայմանագրի պահանջը կատարելու մասին, Բաքվի հայոց ազգային խորհուրդ հարկադրված է լինում ենթարկվել այդ պահանջին և դադարեցնում է Թուրքերին դիմադրելը, նպատակ ունենալով Թուրքերի դեմ կռիվը շարունակել Բաքու հրավիրվող անգլիացիների միջոցով:

Իսկ հիմա, գտնվելով Պետրովսկում, հայկական ջոկատների հրամանատարությունը իրենց ձեռքը պահող դաշնակցականներին այլևս չէր կաշկանդում Հայաստանի Հանրապետության ղեկավարության պահանջը, որը վերաբերում էր միայն Բաքվին, և եռանդով մասնակցել են Թուրքերի դեմ ծավալված ռազմական գործողություններին: Այստեղ էլ հայկական ջոկատներն աչքի են ընկել իրենց մարտունակությամբ:

Բաքվի անկումից հետո «Борьба» թերթը գրել էր. «Բաքվի գրավումը Թուրքիայի համար համարվում է մեծ քայլ իր քաղաքական ազդեցությունն ընդլայնելու դեպի հյուսիս՝ Թուրանական գաղափարը իրականացնելու ճանապարհին»:

Թերթը նշում էր նաև, որ Թուրքական իմպերիալիստների առջև բացվում է հրապուրիչ հեռանկար իր ազդեցությունը հաստատելու Հյուսիսային Կովկասում և օսմանյան կայսրության շուրջը հավաքելու հյուսիսի մուսուլմանական ժողովուրդներին: «Բաքվի գրավմամբ,- եզրափակում էր «Борьба» թերթը,- թե է առնում պանիսլամիստների վաղեմի ձգտումը՝ իր ազդեցությանը ենթարկել Անդրկովկասի տարածքը» («Борьба», 16. 09. 1918):

«Трудовая знамя» թերթը գրել է. «Ի ամոթ և խայտառակություն Անդրկովկասի դեմոկրատիայի Բաքուն ընկավ նաև նրանց աջակցությամբ, որոնք կապիտուլյացիայի ենթարկվեցին գերմանա-Թուրքական իմպերիալիզմի առջև, որոնք Բաթումի պայմանագիրը կատարելու համար Թուրքական բանդաներին անցկացրին ընդդեմ Բաքվի հեղափոխական պրոլետարիատի» («Трудовая знамя», 18. 09. 1918):

ՌՈՍՏՈՄԻ ԵՎ ՄՈՒՐԱՏԻ ՄԱՍԻՆ

Բաքվի իրադարձություններին մասնակցած և որոշակի դերակատարություն ունեցած Մելիք-Յոլչյանը, Գյուլխանդանյանը, Ակչուրյանը, Սեպուհը և այլոք Հետագայում իրենց հուշագրություններում, մեղմ ասած, թույլ են տվել անճշտություններ և իրենց վրայից մեղքը բարդել են Շահումյանի վրա:

Մելիք-Յոլչյանը, օրինակ, 1925 թ. հուլիսին «Հայրենիք»-ի մեջ տպագրված իր հուշերում մոռանալով Բաքվից իրենց փախուստը, մեղադրել է Շահումյանին՝ փախուստի դիմելու և Թուրքերի Բաքու մուտք գործելու պարագայում անխուսափելի դարձող կոտորածների առաջը չառնելու մեջ:

Սույն աշխատության նախորդ էջերից, համոզված եմ, որ ընթերցողին արդեն պարզ պետք է լինի Մելիք-Յոլչյանի արտահայտած մտքի անհեթեթությունը: Սեբաստացի Մուրատի հետ Բաքու եկած Սեպուհը իր «Հուշերի» մեջ պատմել է Շահումյանի հետ ունեցած հանդիպման մասին: Նրանք իբր թե փորձել են համոզել Շահումյանին, որ եթե Թուրքական զորքերը Բաքու ներխուժեն, ապա անխնա կկոտորեն քաղաքում գտնվող տասնյակ հազարավոր հայերի:

Մուրատի և Սեպուհի հետ, իր հերթին զարմանում է այս մասին պատմող նորօրյա դաշնակցականամետ հեղինակներից մեկը և գրում է, որ Շահումյանը պատասխանել է, որ ինքը գիտե այդ մասին, բայց և այնպես, պիտի աշխատի «...որ անգլիացիք ոտք չդնեն այս երկիրը, նույնիսկ եթէ գիտենա, որ եթէ այդ պիտի արժե Հայութեան արիւնը: Եւ յամառօրէն մերժեց»:

Այնուհետև Սեպուհը շարունակել է. «Մուրատի հետ հազար ու մի առուէ եւ աղբիւրէ ջուր բերինք, որ կերպով մը համոզենք, բայց ան ըսաւ դարձեալ.

Իմ որոշումս վերջնական է, ինծի համար Թուրքի մուտքը Բաքու՝ աւելի նախընտրելի է, քան անգլիացիներունը, որովհետեւ Թուրքինը ժամանակաւոր է, իսկ անգլիացիք, երբ մտնեն տեղ մը, դժուար դուրս կելլեն...:

Բայց չէ՞ որ Թուրքերը կուգան կը կոտորեն հայերը, իսկ անգլիացիք գոնէ հանգիստ կը ձգեն մեզ:

Վերջապէս Շահումեան հաստատ մնաց իր որոշման վրայ, իսկ մենք Թո-

ղուցինք հեռացանք՝ ուրիշ հնարք մը մտածելու»: (Մեջբերումը՝ ըստ Հ. Գևորգյանի «Սեբաստացի Մուրատ» գրքից, Եր. 2004, էջ 356):

Վերոհիշյալ հեղինակը գրում է, որ 1918 թ. օգոստոսի 2-ին Բաքու եկած Մուրատն ու Սեպուհը դաշնակցության ներկայացուցիչներ Ռոստոմի և Աբրահամ Գյուլխանդանյանի խորհրդով հանդիպում են Շահումյանին: Ըստ հեղինակի, Ռոստոմն ու Գյուլխանդանյանը նրանց պատվիրել էին Շահումյանի մոտ բարձրացնել անգլիացիներին Բաքու հրավիրելու հարցը: Նրանք, պատմում է հեղինակը, հիասթափված հեռանում են Շահումյանի մոտից, և նախորդ 355-րդ էջում վերոհիշյալ մեջբերումն է կատարում «Ռոստոմ» գրքից (1979, էջ 338):

Այս կապակցությամբ հարկ եմ համարում հիշեցնել, որ Շահումյանը օգոստոսի 2-ին գտնվում էր ձերբակալման մեջ, հետևաբար Մուրատի և Սեպուհի հետ նրա հանդիպումն այդ օրը չէր կարող տեղի ունենալ: Գուցե նրանք Շահումյանին հանդիպել են հետագա օրերին, ապա այդ ժամանակ Շահումյանը որևէ իշխանություն չուներ և Բաքվում ստեղծվել էր Յենտրոկասպիայի դիկտատուրան, որի մեջ ղեկավար դիրք ունեին դաշնակցականները և հասկանալի է, որ այդպիսի պարագայում Գյուլխանդանյանի կամ Ռոստոմի համար Շահումյանին դիմելու որևէ անհրաժեշտություն չկար:

Այնուհետև, դեռևս հուլիսի 25-ին, Բաքվի սովետը ձայների մեծամասնությամբ ընդունել էր անգլիացիներին հրավիրելու բանաձևը, դաշնակցության պատվիրակները, ինչպես նշվել է նախորդ էջերում, արդեն, առանց Շահումյանի գիտության, մեկնել էին անգլիացիներին հանձնելու հրավերը, ուստի օգոստոսի 2-ին Բաքվի դաշնակցականների ղեկավարների համար որևէ կարևորություն չուներ Շահումյանի համաձայնությունը:

Գյուլխանդանյանը իր թշնամական վերաբերմունքը Շահումյանի նկատմամբ չէր թաքցնում, իսկ Ռոստոմը Շահումյանի հետ միջնորդավորված կապի կարիքը չուներ, քանի որ նրանց միջև կար փոխադարձ հարգանքի վերաբերմունք:

Այնուհետև նույն հեղինակը հենվելով Եր. Խաթիսյանի վկայության վրա, նշում է, որ Բաքու մեկնելուց առաջ, Մուրատն ու Սեպուհը Աստրախանում հանդիպում են Շահումյանի կնոջն ու տղային՝ Սուրենին, որը նրանց պատմում է Բաքվի մատույցներում տեղի ունեցող կռիվների մասին (նույն տեղը, էջ 353):

Այս պատմությունը նույնպես ճշմարիտ չէ, քանի որ Սուրենն այդ ժամանակ Բաքվում էր և ձերբակալվել էր Շահումյանի հետ միասին: Սուրեն Շահումյանը Աստրախանում եղել է 1918 թ. մայիսին, Մոսկվա մեկնելու ժամանակ: Եթե մայիս ամսին Մուրատը Սուրենին հանդիպել է Աստրախանում, ապա վերջինս չէր կարող պատմել «Բաքվի մատույցներում մղվող թեժ կռիվների մասին և առանձնակի ջերմությամբ ընդգծում Համազասպի և նրա մարտական ընկերների սխրագործությունը (նույն տեղը, էջ 353): Սա էլ իրական չէ, քանի որ մայիսի ամսին կռիվը չէր սկսվել:

Նախորդ էջերում բերված բոլոր օբյեկտիվ փաստերը ժխտում են իմ կողմից ընդգծված Շահումյանին վերագրվող միտքը: Դա պարզապես չի համապատասխանում իրականությանը, որ հորինել են դաշնակցության գաղափարախոսները և շարունակաբար կրկնում են նաև մեր օրերում, ինչպես հեռատեսությամբ, այնպես էլ ապարդյուն նետված աշխատություններում:

Զավեշտը կայանում է նրանում, որ Բաթումի պայմանագիրը ստորագրած դաշնակցության պարագլուխները և նրանց հետևորդները թաքցնում են Բաքուն թուրքերին հանձնելու համար ստանձնած պարտավորությունը կատարելու մասին դառը ճշմարտությունը, որի հետևանքով Բաքվում թուրքական յաթաղանին զոհ դարձավ 30 հազար հայ:

Նրանք խուսափում են հիշել, որ Բաթումի պայմանագիրը ստորագրած և Հայաստանի Հանրապետության ղեկավարությունը ստանձնած դաշնակցության պարագլուխների ստիպմամբ Բաքվի դաշնակցական գործիչներ Գյուլխանդանյանը, Մելիք-Յոլչյանը, Համազասպը, ինչպես նաև գնդապետներ Ավետիսովը, Ղազարովը և մյուսները զենքը վայր դրեցին, թուրքերի առաջ սպիտակ դրոշակ բարձրացրին ու նրանց առջև բացեցին Բաքվի ճանապարհը:

Բաքվի դաշնակցականները «Արեւ» թերթի էջերում իրենց տված գնահատմամբ այդ մատնությունը մոռացության տալով, նրանք ու նրանց հետևորդները իրենց գործած մեղքը բարդել են Շահումյանի վրա, որն իբր թե համաշխարհային հեղափոխության շահերին զոհաբերել է Բաքվի հայությանը:

Վերջապես մի հանգամանք ևս: Ինչպես նշվել է, Սեբաստացի Մուրատը Բաքու էր եկել 1918 թ. օգոստոսի 2-ին և իր հեղինակությամբ որևէ բանով չէր կարող ազդել Բաքվի դաշնակցականների ղեկավարների վրա, որոնց հարմար կարևոր էր Բաթումի պայմանագրի պահանջի կատարումը: Մուրատին, որն իր ամբողջ գիտակցական կյանքը նվիրել էր թուրքական բռնակալական տիրապետությունից արևմտահայության ազատագրման գործին, մնում էր մի բան՝ մասնակցել Բաքվի պաշտպանության համար մղված վերջին մար-

տերին (օգոստոսի 6-ին)և զոհվել հերոսաբար:

Ինչ վերաբերում է Ռոստոմին (Ստեփան Զորյան), ապա պետք է ասել հետևյալը: Ռոստոմը դաշնակցության հիմնադիրներից էր և, դատելով նրա մասին եղած հուշագրություններից, ուներ մեծ հեղինակություն:

Ե՞րբ է եկել Ռոստոմը Բաքու: Հուշագիրներից Զապել Եսայանը գրել է, թե Ռոստոմը «Բագուի կուսներուն նախօրեակին հասաւ այնտեղ եւ մնաց մինչեւ վերջը, մինչեւ թուրքերուն քաղաք մտնելը» (**Ռոստոմ. մահուան վեցամեակին առթիվ**, Բեյրութ, 1979, էջ 28):

Բայց Ռոստոմի Բաքու գալու մասին հավաստի տեղեկությունը հայտնել է գեներալ Բագրատունին: Գեներալն Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ մասնակցել էր ռազմական գործողություններին Արևմտյան ռազմաճակատում և աչքի էր ընկել իր հմտությամբ: 1917 թ. նոյեմբերից մինչև 1918 թ. փետրվարը նա գտնվել է Պետրոգրադում: Այստեղ էլ նրան հասել են Կովկասյան ռազմաճակատում թուրքական արշավանքի մասին լուրերը: Եվ նա որոշել է մեկնել Կովկասյան ռազմաճակատ:

Գեներալ Բագրատունին վկայել է, որ 1918 թ. մարտի սկզբին Ռոստոմի հետ եկել է Բաքու: Նրանք մտադրություն են ունեցել մեկնել Թիֆլիս: Սակայն մուսավաթականները փակել էին երկաթուղին, խզվել էր կապը Թիֆլիսի հետ և Բագրատունին ու Ռոստոմը հարկադրված մնացել են Բաքվում, մասնակցել են մարտյան իրադարձություններին: Գեներալը հարգանքով է վերաբերվել ինչպես Շահումյանի, այնպես էլ Ռոստոմի նկատմամբ:

Ս. Վրացյանը 1929 թ. գրել է. «Ռոստոմը մասնակցեց եւ Բագուի ազատամարտին, ամենատաղնապալի շրջանում: Այստեղ էլ նրա անձնական հմայքը շատ բարձր էր, ոչ միայն ընկերների, այլեւ հակառակորդների աչքին. Ստ. Շահումեանը, որը մի. ժամանակ միահեծան տէրն էր Բագու, ակնածանքով էր վերաբերում նրան եւ հաճախ հետեւում էր նրա խորհուրդներին» (**նույն տեղը**, էջ 208):

Հուշագիրներից Արամ Ակչուջյանն էլ գրել է, թե «Առանձնապէս Ստեփան Շահումեանը, Ալեշա Ջափարիձէն, բժ. Լ. Աթաբէկեանը եւ այլք հարկառակորդ կուսակցական ղեկավարներ հիացումով էին խօսում նրա մասին եւ յաճախ նրա հետ խորհրդակցելու էին գալիս» (**նույն տեղը**, էջ 322):

Մեկ ուրիշը՝ Ռուբեն Դարբինյանը վկայել է, որ 1917 թ. ապրիլին Թիֆլիսում տեղի ունեցած դաշնակցության շրջանային ժողովի և Հայկական հարմագումարի փակումից հետո, վերադարձել են Բաքու և որոշել են ստեղծել հայոց ազգային խորհուրդ, որը կազմվել է հետևյալ անձանցից. Աբրահամ

Գյուլիսանդանյան, Խանասորի խմբապետ Վարդան, Կ. Բարունակյան (դաշնակցականներ), բժիշկ Լևոն Աթաբեկյան (էսէռ), Նարիման Տեր-Ղազարյան (մենշևիկ), Հ. Տեր-Միքայելյան (Ժողովրդական կուսակցություն), Ս. Տեր-Ղազարյան (ունևոր դասից): Գյուլիսանդանյանն ընտրվել է ազգային խորհրդի նախագահ:

Այնուհետև Ռուբեն Դարբինյանը, առանց ամսաթիվը նշելու, գրել է. «Ազգային խորհրդի առաջին իսկ նիստին մէջ որոշուեցաւ խորհրդակցական ձայնով հրաւիրել Ռոստոմը, Յովհ. Քաջազնունին եւ բժ. Իսախանեանը: Շաբաթներ ետք, նոյնպէս խորհրդակցական ձայնով հրաւիրուեցան նաեւ տիկին Զապել Եսայեանը եւ Ռ. Քաջբերունին՝ իբրեւ արեւմտահայերուն ներկայացուցիչներ» (**նույն տեղը**, էջ 317):

Ռուբեն Դարբինյանը հայտնում էր նաև, որ թեև Ռոստոմը ընտրվել էր խորհրդակցական ձայնով, «բայց ան փաստորեն դարձաւ Բագուի Ազգային Խորհուրդին իրական ղեկավարը: Եւ ինչ որ ուշագրաւ էր, դաշնակցականներուս չափ ոչ-դաշնակցականներն ալ մեծագոյն կարեւորութիւնը կու տային Ռոստոմի խորհրդին» (**նույն տեղը**, էջ 317-318):

Այստեղ բնականաբար հարց է առաջանում. եթե Ռոստոմը, իսկապես, օգտվում էր ավելի մեծ հեղինակությունից, ապա, նա այդքան կարևոր խորհրդի մեջ, պետք է որ խորհրդակցական ձայնով չընտրվեր:

Այնուհետև Ռ. Դարբինյանը չփոթելով ամսաթիվը, հայտնում էր, թե 1918 թ. մարտի 3-ին ազգային խորհուրդը Ռոստոմի առաջարկությամբ հայտարարում է հայերի զորակոչ և գրում է հետևյալը. «...Որոշուեցաւ առաջարկել Բագուի Գործատերերու, Գիւղացիներու եւ Զինուորներու Սովետին, որ պատրաստուի կռուելու Հայրենիքի ու Հեղափոխութեան թշնամիներուն դէմ եւ կոչ մը ալ հրատարակէ այդ իմաստով» (**նույն տեղը**, էջ 319):

Մինչդեռ Բաքվի սովետը Շահումյանի գլխավորությամբ համառ պայքար էր մղում հեղափոխական Բաքվի պաշտպանությունը կազմակերպելու համար և ձեռքերը չէր ծալել՝ սպասելով Բաքվի հայոց ազգային խորհրդի կոչին՝ «կռուելու Հայրենիքի ու Հեղափոխութեան թշնամիներուն դէմ»:

Վերոհիշյալ Ա. Ակչուջյանը գրել է, որ մուսավաթականները դիմել էին Բաքվի հայոց ազգային խորհրդին Բաքուն իրենց հանձնելու մասին: Նրանք ասել էին. «Եթէ հայերը իրենց համաձայնութիւնը տան, յետ քաշեն իրենց ռազմական ուժը եւ իրենց կողմնակցութիւնը հայտնեն Բագուն ազերիներին յանձնելու, Բանուորական Խորհուրդը ոչինչ անել չպիտի կարողանայ, մանաւանդ, որ Ռուսաստանից ռազմական ոչ մի օժանդակութիւն չի ստանում»

*(**Նույն տեղը**, էջ 324):*

Մուսավաթականներին պատասխանելու համար հրավիրվել է Բաքվի դաշնակցության ժողով, որտեղ, ըստ Ակչուջյանի վկայության, ձևավորվել է երկու տեսակետ:

Առաջինն Աբրահամ Գյուլխանդանյանի տեսակետն էր. «Քանի որ դաշնակցությունը ազգերի անկախության պաշտպանն է, մենք չէ, որ պիտի ընդդիմանանք Ադրբեջանի հողը իր տերերին յանձնելուն: Մեր դարաւոր հարեւանությունը եւ ապագայի կենակցության պարագան պէտք է թելադրեն մեզ, որ մենք աջակցինք մեր հարեւան ժողովրդին իր անկախության տիրանալու: Մեր ընդդիմությունը թշնամությունն պիտի առաջ բերէ մեր միջեւ եւ կարող է աղիտալի հետեւանքներ ունենալ ամբողջ Ադրբեջանի հայության համար, որ զանցառելի թիւ չի կազմում»:

Երկրորդը Ռոստոմի տեսակետն էր: «Նա գտնում էր, որ թէեւ գաղափարականօրէն Աբրահամը ճիշդ էր, բայց գործնականօրէն, այսինքն՝ հայ ժողովրդի ֆիզիքական գոյության եւ հայկական հարցի լուծման տեսակէտից աղիտալի հետեւանքներ պիտի ունենայ, եթէ մենք այժմ Բաքուն Ադրբեջանի Թուրքերին յանձնելու վճիռ տայինք»:

Այնուհետեւ Ակչուջյանը գրել է, որ Ռոստոմն ասել է հետեւյալը. «Մենք գիտենք, որ Ադրբեջանի կառավարության թիկունքում կանգնած է Տաճկաստանը: Նա է, որ գծում է ադրբեջանցիների անելիքը, իսկ Տաճկաստանի նպատակը մեր ազգային հարցի տեսակէտից պարզ է: Տաճիկները ձգտում են հայ ազգի ֆիզիքական ոչնչացման եւ արդէն մէկ միլիոն սրածել են եւ մայր երկիրը ավերել»:

*Ըստ Ակչուջյանի վկայության դաշնակցության ժողովը քվեարկել է Ռոստոմի առաջարկության օգտին և որոշել է մերժել մուսավաթականներին: Հիմա դժվար է ասել, թե Ակչուջյանը ինչու չի հիշել, թե երբ է տեղի ունեցել վերոհիշյալ ժողովը: Նա միայն նշել է, որ դրանից հետո սկսվել է կռիվը (**Նույն տեղը**, էջ 325-326):*

Այնուհետև Ակչուջյանը պատմել է հայկական զորքերի ու հայ բնակչության նահանջի մասին:

*Ակչուջյանը դարձյալ չփոթելով ամսաթիվը, հայտնում էր, թե սեպտեմբերի 1-ին անգլիացիները պետք է հեռանային Բաքվից և այդ կապակցությամբ հրավիրվել է ազգային խորհրդի նիստ: Ըստ Ակչուջյանի որոշվել է չհետևել անգլիացիներին, չհեռանալ քաղաքից և Ռոստոմի առաջարկությամբ շարունակել կռիվը, «քաղաքը չտալ թշնամուն ու պաշտպանուել, քանի դեռ կարելի էր» (**Նույն տեղը**, էջ 337):*

Հարկ եմ համարում հիշեցնել, ինչպես նշվել է նախորդ էջերում, անգլիացիները Բաքվից հեռացել են սեպտեմբերի 14-ի երեկոյան: Ակչուջյանի նպատակն է եղել, ցույց տալ, թե դաշնակցության ղեկավարած զորամասերը շարունակել են թուրքերի դեմ կռվել նույնիսկ անգլիացիների հեռանալուց հետո: Թե ինչու է նա դեպքերի օրերը «չփոթում», հետևությունը թողնում եմ ընթերցողին:

Այնուհետև Ակչուջյանը պատմում էր Բաքվի հայերին քաղաքից հեռացնելու մասին, որի կազմակերպումը դրվել էր Գերասիմ Բալայանի վրա:

Իր հուշերում Ակչուջյանն այնպես է խճճվել կեղծիքի մեջ, որ այդպես էլ ոչ կարողացել է դրանից դուրս գալ և ոչ էլ հիմնավորել իր հնարածը: Դա հատկապես վերաբերում է Ռոստոմի և Շահումյանի փոխհարաբերություններին:

Ահա մի երկարաշունչ մեջբերում. «Ես չգիտեմ, թէ մինչեւ Բաքուի դէպքերը Ստեփան Շահումեանը որտե՞ղ էր հանդիպել Ռոստոմին եւ ի՞նչ փոխյարաբերութիւններ էին նրանք ունեցել իրար հետ: Սակայն, այն օրից, երբ Ռոստոմը եկաւ Բաքու, Ստեփանը սկզբում, որպէս բոլշեւիկների լիդերը, եւ յետոյ, որպէս կառավարութեան գլուխ, միշտ չփման մէջ էր մեզ եւ մասնաւորապէս Ռոստոմի հետ:

Ցայտնի էր, որ Ստեփանը եւ իր շրջապատը խորին ակնածանք ունէին նրա հանդէպ: Նրա կարծիքը եւ առաջարկութիւնները Ստեփանի համար վճռական նշանակութիւն ունէին: Մենք գիտէինք, որ բոլոր ծանրակշիռ խնդիրներում նա անմիջապէս դիմում էր Ռոստոմի օգնութեան:

*Պատահել էր (եւ այդ մենք ստոյգ գիտէինք), որ իրենց կենտրոնում, երբ մի խնդիր լուծելու համար դժուարութեան էին յանգել, Շահումեանը խնդիրը առկախ էր թողել, ապա տակն ու վրայ էր արել քաղաքը, գտել էր Ռոստոմն եւ խորհրդակցել հետը» (**Նույն տեղը**, էջ 354):*

Ակչուջյանն այնքան է խորացել իր անհեթեթ պատմության մեջ, որ Շահումյանին ներկայացրել է որպես խղճուկ գիմնազիստ, պատմելով, թե մի անգամ Շահումյանը գալիս է Ռոստոմին հանդիպելու: Պահակը հայտնել է, որ Ռոստոմը քնած է և չի կարող նրան արթնացնել: Շահումյանը շատ է խնդրել արթնացնել Ռոստոմին, իբր թե ասելով, որ եթե մեկ ժամից չխոսի Ռոստոմի հետ, ապա «առաջ կգան այնպիսի բարդություններ, որ հետո մարսել պիտի չկարողանանք»:

Ինչևէ, շարունակեմ հետևել Ակչուջյանի հորինած հեքիաթին: Պարզվում է, որ Շահումյանի հետ ընդհարվել է Պետրովը և սպառնացել է դիմել զենքի,

որ Պետրովը ձերբակալել է իր հետ բանակցելու մեկնած Ջավարիձեին, Զևինին և Վեզիրովին:

«Շահումյանը,- շարունակել է հեքիաթասացը,- հանդարտ խօսելու եղանակը կորցրել էր: Գունատ էր ու ջղագրգիռ»: Լսելով Շահումյանին, պատմում է Ակչուջյանը, Ռոստոմը գնացել է Պետրովի մոտ և նրան իր հեղինակությամբ հաշտեցրել է Շահումյանի հետ:

Ասել, որ այս միջադեպը լրիվ Ակչուջյանի երևակայության արդյունքն է, քիչ է: Մանավանդ, եթե նկատի ունենանք, որ Շահումյանն ամբողջությամբ վստահում էր Պետրովին: Նրանց միջև ստեղծվել էր փոխադարձ հարգանքի մթնոլորտ և Պետրովն անվերապահ ենթարկվում էր Շահումյանի գլխավորած Ժողկոմսովետի բոլոր կարգադրություններին: Իրականության մեջ գրություն չունի որևէ ապացույց Շահումյանի և Պետրովի ընդհարման մասին:

Այս հեքիաթը ստեղծելով Ակչուջյանի նպատակն է եղել ցույց տալ, թե Ռոստոմը մեծ ազդեցություն է ունեցել ոչ միայն Շահումյանի, այլև Պետրովի վրա, որին ներկայացրել է որպես կարգ ու կանոնին չենթարկվող մեկի:

Այնուհետև Ակչուջյանը հնարել է մի փաստ ևս: Ըստ նրա վկայության, Շահումյանը դաշնակցության հետ բախում չունենալու նպատակով «կանխաբ կամենում էր մեր Կ. Կոմիտէի համաձայնութեան գալ: Գալիս էր ինքնաշարժով, մտնում էր մեծ ժողովի սենեակը եւ նստում մեզ հետ ժողովի: Իրեն հետաքրքրող խնդիրների քննութիւնից եւ նրանց մասին որոշում տալուց յետոյ, լռելեան դուրս էր գալիս սենեակից եւ հեռանում նոյն ինքնաշարժով»:

Ակչուջյանը հայտնում էր նաև, թե Շահումյանի հետ եղել են սուր վեճեր, բայց խնդիրը փակվել է «երկու կողմը բաւարարող վճիռով», քանի որ «Ռոստոմի ներկայությունը փրկարար դեր էր կատարում, մանաւանդ Ստեփանին համաձայնութեան բերելու տեսակէտից» (**Նույն տեղը**, էջ 356):

Ակչուջյանը մի զավեշտալի դեպք էլ է հնարել: Նա գրել է, որ Ռոստոմը որոշում է մեկնել Թիֆլիս, որպեսզի ձեռք բերեր Թիֆլիսի աջակցությունը թուրքերի դեմ կռվում: Երբ Շահումյանին հայտնի է դարձել այս մասին, նա գնացել է դաշնակցության կոմիտե:

Դարձյալ հայցելով ընթերցողի ներողամտությունը, մեջբերում եմ Ակչուջյանի հնարած և Շահումյանին վերագրված հետևյալ խոսքերը, որ նա իբր թե ասել է դաշնակցության կոմիտեում. «Այստեղ՝ Բաքւում վճռւում է Կովկասի, հայ ժողովրդի եւ նոյնիսկ Ռուսաստանի խնդիրը, իսկ դուք ուզում էք ուղարկել Ռոստոմին, որին ոչ ոք չի կարող փոխարինել: Այստեղ բազմապիսի կազմակերպութիւններ շարունակական բախման մէջ են: Այն ո՞վ է, որ կարողանա հարթել Յենտրօ Կասպիի (Կասպից ծովի նաւատորմի կենտրոնի) եւ մեր հրամանատարութեան բախումները, որոնք երբեմն այնքան սուր բնոյթ են ստանում, որ քիչ է մնում նաւերը իրենց թնդանօթները ուղղեն քաղաքի վրայ: Ո՞վ կարող է հարթել Ռազմայեղափոխական Կոմիտէի, Յենտրօ Կասպիի, հրամանատարութեան եւ կառավարութեան միջեւ ծագած վեճերը: Մենք՝ բոլշեւիկներս մեր մէջ ծագած եւ չհարթուող վէճերը նրա միջոցով ենք հարթած: Մոռացե՞լ էք, երբ մեր Կենտրոնը երկու մասի էր բաժանուել, Ռոստոմը մեզ համաձայնութեան բերեց: Հապա դո՞ւք՝ ինքներդ, ձեր Ազգային խորհրդի եւ Կ. Կոմիտէի, ձեր Կ. Կոմիտէի եւ Բանուորական խորհրդի ֆրակցիայի, ձեր թթու ազգայնականների եւ ձախ ընկերվարականների սուր վէճերը ո՞վ պիտի հարթէ»:

Շարունակելով իր հեքիաթը, Ակչուջյանը հաճույքով հնարում էր, թե երբ բոլորից գաղտնի Ռոստոմը նավ է բարձրանում, որպեսզի մեկնի Պետրովսկ նավահանգստի վրայով դեպի Թիֆլիս, Շահումյանը ինչ-որ կերպ իմանում է այդ մասին, շտապում է նավահանգիստ և «երկու զինուորի ուղեկցութեամբ մտնում է նաւ»:

Եվ իբր թե Շահումյանը դիմելով Ռոստոմին ասել է. «Ձեր ընկերները յամառում են, բայց այս քաղաքից ոչ ոք չի կարող մեկնել՝ առանց իմ թոյլտուութեան, ձեզ Հիմա զինուորները նաւից ցած կ՝իջեցնեն, եթէ դուք դուրս չգաք ինձ հետ»:

Իսկ Ռոստոմն էլ իբր թե փորձել է Շահումյանին համոզել, որ «ձեռք քաշի իր մտադրութիւնից»: Սակայն Շահումյանը համառել է և տեսնելով, որ իր թախանձանքները չեն ազդում Ռոստոմի վրա, հայտարարել է. «Ուրեմն, դուք ձերբակալուած կը տարուիք իմ բնակարանը»:

Այս խոսքերը լսելով, Ռոստոմը հնազանդվել է և Շահումյանը նրան տարնում է իր բնակարան, հետո դաշնակցության կենտրոնին հեռախոսով հայտնել է, որ Ռոստոմը ձերբակալված է և գտնվում է իր բնակարանում ու ասում. «Մինչեւ որ ձեր Կ. կոմիտէն խոստում չտայ, որ պիտի թոյլ չտայ Ռոստոմին մեկնելու քաղաքից, նա կը մնայ ձերբակալուած: Եւ թէկուզ գործը հասնի գլխատած բախումի, ես պիտի չզիջեմ» (**Նույն տեղը**, էջ 357-358):

Ակչուջյանն այսքանը հնարելով չի բավարարվում: Անդրադառնալով անգլիացիներին Բաքու հրավիրելու իրողությանը, նա հորինել է հետևյալ հեքիաթը. ««Էս-էրները եւ Էս-դեկները իրենց հաւանութիւնը տուել էին եւ մենք կարող էինք խնդիրը դնել Բանուորական խորհրդում, տապալել կառավարութիւնը, որ գլխաւորում էր Ստեփան Շահումեանը, եւ կազմել նոր կա-

ռավարութիւն, որը եւ անգլիացիներին Բագու կը բերէր: Բայց մենք չէինք ուզում խնդիրը այդ ձեւով կարգադրել, որովհետեւ դա կարող էր բախումների առիթ ստեղծել: Բոլշեւիկները ունէին քաղաքում իրենց զրահապատ ջոկատը եւ բոլշեւիկեան տրամադրութիւններով վարակուած մի երկու ռուսական գնդեր: Կար նաեւ Ռազմայեղափոխական կոմիտէի գունդը, մեծ մասամբ կազմուած վրացիներից, որ միանգամայն ենթակայ էր Զապարիձէին: Այդ պատճառով Ռոստոմը մի քանի անգամ խոսել էր Ստեփանի հետ եւ ի վերջոյ, նրանք համաձայնութեան էին եկել, որով՝ անգլիացիք ցամաք պիտի իջնէին եւ Ստեփան Շահումեանը, Մուրմանսկի դէպքի օրինակով, իր կառավարութեան կողմից պիտի բողոքէր անգլիացիների այդ քայլի դէմ, եւ խնդիրը պիտի փակուէր դրանով»:

Եվ Ակչուջյանը միամիտ ու իրողությունից անտեղյակ ընթերցողներին տանում է հեքիաթի խորքը, հավատացնելով, թե «Այս համաձայնութեան նախապայմանն էր խիստ գաղտնապահութիւնը: Յենտրո-Կասպին էլ, որ արդէն մենշեւիկների ձեռքն էր, որոշել էր լռութիւն պահել անգլիական զորքը Բագու փոխադրող նաւերը մեր ջրերը մտնելու մասին: Սակայն, այդ լռութիւնը չը պահուեց: Մեր հայ սոցիալ-դեմոկրատներից մէկը պարծենկոտութիւնից թելադրուած թէ անփորձութիւնից, իր մտերիմ մի բոլշեւիկ ռուսի հետ խօսելիս, յայտնել էր այդ գաղտնիքը: Բոլշեւիկը անմիջապէս խնդիր էր յարուցել եւ իրար խառնել Իսպոլկոմը:

Նոյն երեկոյեան մեր ժողովին եկաւ Ստեփանը, խիստ վրդովուած, եւ յայտնեց եղելութիւնը»:

Հեքիաթասաց Ակչուջյանը շարունակում էր. «Պարզուեց, որ գաղտնիքը դուրս տուող սոցիալ-դեմոկրատը Հայոց ազգային խորհրդի անդամ էր: Նրան զսպան եւ կանչեցին: Ստեփանը պարզեց նրա շնորհիւ ստեղծուած կացութիւնը եւ յայտնեց, որ այլեւս իր տուած խոստումը յետ է առնում եւ Բանտարական խորհրդի առաջիկայ նիստի մէջ պիտի հրապարակի: Ինչ խօսք, որ թէ կառավարութիւնը, եւ թէ բոլշեւիկ պատգամաւորները եւ ձախ էսէռները պիտի ընդդիմանային եւ անգլիացիներին հրաւիրելու խնդիրը պիտի վիժէր: Երբ այդ լսեց մեր սոցիալ-դեմոկրատը, ուշաթափվեց, եւ նրան մեծ դժուարութեամբ ուշքի բերին սպասման սենեակում»:

«Յաջորդ օրը,- ավարտել է իր հեքիաթն Ակչուջյանը,- Ստ. Շահումեանը տեսնուել էր Ռոստոմի հետ եւ խնդրել, որ դաշնակցութիւնը չտապալի իր կառավարութիւնը՝ խուսափելու համար քաղաքացիական կռուից: Բայց Ռոստոմը չէր կարողացել նրան խօսք տալ, քանի որ, առաջին՝ ինքը կողմնակից

էր անգլիացիներին Բագու բերելուն եւ, երկրորդ՝ նոյն գիշեր Կ. Կոմիտէն որոշել էր տապալել Ստեփան Շահումեանի կառավարութիւնը՝ անգլիացիներին Բագու բերել տալու համար» (**նույն տեղը**, էջ 360-361):

Իրականում, Շահումյանը, ինչպես նշվել է նախորդ էջերում, սկզբունքորեն դեմ էր անգլիացիներին հրավիրելուն և այդ մասին բազմիցս արտահայտվել է հրապարակավ: Եվ այնուհետև, եթե Շահումյանը և Ռոստոմը գաղտնի պայմանավորվել էին, ապա ինչու պետք է Ռոստոմը Շահումյանի մոտ ուղարկեր այդ հարցով Մուրատին:

Շահումյանը մշտապես մատնանշում էր, որ Բաքվի սովետական ուժերը հենվելով Սովետական Ռուսաստանի օգնության վրա, առանց անգլիացիներին հրավիրելու, կարող են ոչ միայն դիմադրել Բաքվի վրա հարձակվող թուրքերին, այլև նրանց ջախջախել ու ետ շպրտել: Դա այդպես էր մինչև այն ժամանակ, քանի դեռ դաշնակցության ղեկավարությամբ կռվող հայկական ջոկատների հրամանատարները չէին ստացել Հայաստանի կառավարության պահանջը, չէին հետևել Բիչերախովին և չէին հեռացել ռազմաճակատից: Այդ ամենը, ինչպես նաև անգլիացիներին հրավիրելու մասին բանաձևի ընդունումն անուղղելի ազդեցություն են ունեցել ռազմաճակատում մնացած մյուս զորամասերի բարոյալքման և թիկունքի կազմալուծման համար:

Այդ մասին Շահումյանը Լենինին ուղարկած հեռագրում նշել է հետևյալը. «Մեր զորքերի հիմնական անձնակազմը՝ հայկական զորամասերը, որոնք սկզբից խիզախորեն մարտնչում էին, այժմ բարոյալքված են հրամանատարական կազմի մի մասի վախկոտության և անգլիական ագիտացիայի շնորհիվ» (**«Красный архив»**, *4-5, 1938*, стр. *24*):

Հուշագիր-հեքիաթասացներից մեկն էլ Գրիգոր Ամիրյանն է, որը նույնպես չի նշում ժամանակը: Նա 1960 թ. «Հայրենիք» ամսագրում հրապարակված հուշերում հայտնում էր, որ Ստեփան Շահումյանի նամակ-հրավերով գալիս են Բաքու և նրա հանձնարարությամբ տեղավորվում են Սերգո Մարտիկյանի տանը: «Բագուի կոմներու ամենատաք մէկ շրջանի մէջ էր, որ Մուրատի, Սեպուհի, Ստեփան Շաղիկեանի ու բժիշկ Ակչակ Պողոսեանի հետ հատանք այնտեղ»:

Մուրատը և Սեպուհը, ինչպես պատմել է Ամիրյանը, գնում են շտաբ և հանդիպում են Ռոստոմին: Ռոստոմին հանդիպելուց հետո նրանք վերադարձել են և իրենց ստացած տպավորության մասին հայտնել են հետևյալը. «Բագուն ճգնաժամային դրութեան մէջ է: Մոսկուա վճռական կերպով մերժած է օգնական ուժեր ղրկել, իսկ անգլիացիներու կողմէ էնզելիէն օգնական

ուժեր ղրկուելու առաջարկին՝ բացարձակապէս դէմ է Ստեփան Շահումեանը»:

Այնուհետև նրանք հայտնում էին, թե Ռոստոմը իրենց հանձնարարել է, որ Շահումյանի հետ «վաղուան մեր տեսակցութեան ընթացքին հայ ժողովուրդին սպառնացող ահաւոր վտանգը մատնանշենք եւ թախանձանք խնդրենք, որ չընդդիմանայ անգլիացիներու առաջարկին»:

Հաջորդ օրը Մուրատն ու Սեպուհը Ս. Մարտիկյանի միջնորդությամբ հանդիպում են Շահումյանին: Իսկ Ամիրյանն ու Ծաղիկյանը մեկնում են շտաբ, որտեղ գտնվում էին Ռոստոմը, Գյուլխանդանյանը, Արարատյանը, Բալայանը և ուրիշներ, որոնք «անհամբեր կը սպասէին Մուրատի ու Սեպուհի վերադարձին՝ իմանալու համար Շահումեանին հետ իրենց ունեցած տեսակցութեան արդիւնքը»:

Շահումյանի հետ Մուրատի հանդիպման մասին Ամիրյանը հայտնում էր հենվելով իր ներկայությամբ իբր թե Մուրատի և Հրաչյա Աճառյանի հետևյալ երկխոսության վրա:

«-Երկուքդ ալ Աւագ Ուրբաթ դարձած էք,- ըսաւ Հրաչեան,- մարդ կը սարսափի երեսներուդ նայելու: Բայց մեր համբերութիւնն ալ չարաչար մի գործածէք: Ի՞նչ եղաւ ձեր տեսակցութեան արդիւնքը: Գոնէ երկու խօսք չէ՞ք ըսեր...

-Հրաչեա՛յ, լաւ արդիւնք որ ունենար՝ առանց հարցումիդ ալ պիտի ըսէինք: Բայց ի՞նչ կրնանք ըսել, երբ յուսախաբ ու հիասթափ բաժնուեցանք Շահումեանէն: Մեր եւ անոր տեսակէտներուն միջեւ այնպիսի խոր տարբերութիւններ կան, որ անկարելի է լաւ բան մը սպասել իրմէն:

- Բայց գո՞նէ Բագուի մէջ խճողուած հարիւր հազարէ աւելի հայութեան գոյութեան սպառնացող վտանգը չի՞ զգար Շահումեանը...

- Այո՛, կը զգայ, բայց չուզեր մեր առաջարկած ձեւով հեռացնել այդ վտանգը: Անգլիացիները երբ Բագու մտնեն,- կրսէ, - այլեւս չենք կրնար զանոնք հեռացնել: Մինչդեռ եթէ թուրքերը մտնեն, ռուսները շատ դիւրութեամբ զանոնք դուրս կը շպրտեն:

- Իսկ մինչեւ այդ շպրտումը ի՞նչ կ՚ըլլայ հայութեան վիճակը այստեղ: Բարձուն թուրքերուն կողմէ գրաւուելէն յետոյ՝ ի՞նչ կ՚ըլլայ Հայաստանի վիճակը: Չէ՞ որ Հայաստանը այժմ կապուած է գրեթէ Բագուի ճակատի անցուդարձերուն հետ: Բագուն գրաւելէ յետոյ՝ թուրքերը կը վերադառնան Հայաստան՝ ջարդելու համար մեր ժողովուրդը հոն եւս:

- Ճիշտ այդ հարցումը տուինք մենք: Բայց այդ հարցումը բոլոր հայերուն

չդիմերուն վրայ է բացի բոլշեւիկներէն: Գիտե՞ս թէ ինչ պատասխանեց մեզի Շահումեանը. «Համաշխարհային Յեղափոխութեան յաղթանակին համար ի՞նչ նշանակութիւն ունի հայ ժողովուրդի գոյութիւնը»:

- Եւ դուք լսեցի՞ք այդ անգութ արտայայտութիւնը պաղարիւնութեամբ:

- Թքել ենք յաղթանակին վրայ, որ պիտի չահուի հայ ժողովուրդին ոչնչացումով,- ըսինք ու բաժնուեցանք»:

Այս երկխոսությունից հետո, ըստ Ամիրյանի պատմածի «Հրաչեա Աճառեանը իր հայրենասիրական զգացումներուն մէջ այնքան բուռն կերպով ազդուեցաւ Շահումեանի խօսքերէն, որ ուշաթափ եղաւ եւ բժիշկ Պողոսեանի խնամքին յանձնեցինք զինք» (**նույն տեղը**, էջ 389-390):

Այնուհետև Ամիրյանն անդրադարձել է Դիկոստուրայի կողմից Շահումյանի, Ջափարիձեի, Պետրովի և այլոց ձերբակալելու և անգլիացիներին հրաւիրելու մասին ու անտեղյակ մարդկանց համար հորինել է իր հեքիաթը, գրելով հետևյալը. «Ճիշտ այդ օրը Անաստաս Միկոյեանը Աստրախանէն բեռնուած նաւով մը կը հասնի Բագու: Դեռ ծովուն վրայ, լսելով Կասպեան նաւատորմի տիքտաթուրա յայտարարելն ու բոլշեւիկ ղեկավարներու ձերբակալութիւնը, անմիջապէս շոգենաւին ցուցը դարձնել կու տայ դէպի Փիսխա ու ամենայն արագութեամբ կը վերադառնայ Աստրախան»:

Հեքիաթասացն իր պատմությունն ավարտել է գրելով. «Զար լեզուներ կ՚ըսէին, որ շոգենաւին վրայ գտնուած ռազմամթերքը ծով թափել տուած էր (Միկոյանը- Վ. Պ.) կասկածելով, որ Կասպեան նաւատորմը կրնար Հետապնդել շոգենաւը եւ, ձերբակալման պարագային, Բագուի պաշտպանները կրնային օգտուիլ ռազմամթերքէն» (**նույն տեղը**, էջ 393):

Մինչդեռ իրականում, ինչպես ասվել է նախորդ էջերում, Միկոյանը Դիկոստուրայի իշխանության հաստատման և դրանից հետո մնացած օրերին, մինչև 1918 թ. սեպտեմբեր ամիսը մշտապես գտնվել է Բաքվում և այդ օրերին երբեք չի մեկնել Աստրախան:

Թուրքերի դեմ ռազմական գործողությունները դադարեցնելու, նրանց առվև սպիտակ դրոշակ բարձրացնելու և Բաթումի պայմանագրի պահանջը կատարելու եռանդուն դերակատարներից էր Բաքվի դաշնակցության լիդերներից մեկը՝ Սերգեյ Մելիք-Յոլչյանը:

1925 թ. «Հայրենիք» ամսագրում հրապարակած իր հուշերում Մելիք-Յոլչյանը նույնպես ոչ մի խոսք չի ասում դաշնակցության ղեկավարությամբ գործող Հայաստանի հանրապետության կառավարության պահանջի մասին, որով հանձնարարվում էր անվերապահորեն կատարել Բաթումի պայ-

մանագրով ստանձնած պարտավորությունը, այն է՝ դադարեցնել Թուրքերի դեմ կռիվը և Բաքուն հանձնել նրանց:

Եվ դրա փոխարեն Մելիք-Յոլչյանը գրել է. «Հայ զինուորներն ու զինուորականները, չնայած իրենց ունեցած հսկայական կորուստներին եւ զրկանքներին, չտանջալով եւ ոչ մի օգնություն, չէին մտածում, անգամ չէին երեւակայում, որ իրենք պէտք է պարտուեն եւ քաղաքը տան Թշնամուն: Նրանք դեռեւս լի էին յաղթութեան կորովով եւ ազատութեան ու հայրենասիրութեան զգացումով: Միայն զիսատր հրամանատարությունը, Աւետիսեանի դեկավարությամբ, նկատի ունենալով կոտոր ուժերի անհաւասարությունը եւ մերոնց յոգնածությունն ու հիւծուածությունը, կասկածում էր, թէ կարելի պիտի լինի երկար ժամանակ քաղաքը պաշտպանել եւ փրկել ժողովուրդը, մանաւանդ հարիւր հազարանոց հայությունը»:

«Բալաքար կայարանից,- շարունակել է Մելիք-Յոլչյանը,- որը գտնուում է Բագուից 15 վերստ Հեռաւորության վրայ, Աւետիսեանը մի շարք ստիպողական պահանջներ է անում եւ պաշտօնական հեռագիրներ ուղարկում Շահումեանին եւ Կարգանեանին, խնդրելով օգնական ուժեր, առաջարկելով հակառակ դէպքում սկսել բանակցություններ Թշնամու հետ ազգի թեթեւացնելու համար գալիք արհաւիրքները: Նա յայտնում է, թէ այլապէս, այսինքն՝ քաղաքը ուժով վերցնելու դէպքում, անխուսափելի է համարում զարհուրելի կոտորածը, մանաւանդ որ տաճիկ հրամանատարությունը արդէն ուղարկել էր վերջնագիր քաղաքը յանձնելու» (*Ռուսում*, էջ 370):

Նախորդ էջերում արդէն այս մասին հանգամանորեն անդրադարձ եղել է, ուստի այստեղ միայն ուզում եմ հիշեցնել, որ Աւետիսովը Շահումյանին հուլիսի 30-ին է ուղարկել հեռագիր, պահանջելով իրեն թույլ տալ թուրքերի առջև սպիտակ դրոշակ բարձրացնել: Բնականաբար Շահումյանը չէր կարող դրան տալ իր համաձայնությունը:

Ստանալով Շահումյանի մերժումը, Աւետիսովը դիմել է հայոց ազգային խորհրդին: Հուլիսի 30-ի երեկոյան հայոց ազգային խորհուրդը համաձայնվել է Աւետիսովի հետ և որոշել է թուրքերի հետ սկսել բանակցություններ, հաստատել է բանակցելու համար մեկնող պատվիրակության կազմը:

Այս ամենի մասին Շահումյանը տեղեկացրել է հուլիսի 30-ին գումարված սովետի վերջին նիստի ժամանակ:

Մելիք-Յոլչյանը իր հուշերում ժխտում էր հայոց ազգային խորհրդի որոշման փաստը և հորինել է իր հեքիաթը, գրելով, թէ սովետի նիստից հետո «Նորից բռնում եմ Շահումեանին, դատապարտում նրա քայլը եւ ասում.

-Արդեօք դուք չե՞ք մտածում, որ ձեր բռնած դիրքով Բագուայ աշխատաւորությունը, միեւնոյն թշում եւ հայ զանգուածը եւ ամբողջ հայությունը գցում էք դարաւոր թշնամու գիրկը, որ պիտի բնաջնջի նրան վերջնականապէս:

Շահումեանը պատասխանում է ինձ.

-Ես ձեզ պատասխանում եմ ընկեր Լենինի խօսքերով. «Երբ անտառն են կտրում, տաշեղները ցրում են»: Մենք կատարում ենք համաշխարհային հեղափոխություն, որի ժամանակ ժողովուրդներ եւ ազգեր կարող են ոչնչանալ: Ինչ ցաւ, եթէ սոցիալիզմը իրագործելու համար անգամ հայ ազգը զոհվի» (*Նույն տեղը*, էջ 372):

Այնուհետև հեքիաթասաց Մելիք-Յոլչյանը մեղադրում է Շահումյանին՝ փախուստի դիմելու և թուրքերի Բաքու մուտք գործելու պարագայում անխուսափելի դարձող կոտորածների առաջը չառնելու մեջ:

Սույն աշխատության նախորդ էջերում շարադրված իրադարձությունների ընթացքը, դրանց առնչությամբ Շահումյանի ամբողջ գործունեությունն աներկբա ապացուցում են, որ դաշնակցության գործիչների կողմից հետագա տարիներին հրամցված «տեղեկությունները» որևէ առնչություն չունեն իրականության հետ և հետապնդում են հետևյալ նպատակը.

Առաջին. Հայ ժողովրդին միջազգային հեղափոխության ու սոցիալիզմի հաղթանակին զոհաբերելու մասին տեսակետը Շահումյանին վերագրելով, փորձում են նսեմացնել նրա ունեցած մեծ հեղինակությունը և խամրել սերունդների մոտ նրա հմայքը:

Դաշնակցական գործիչների հիշողություններում Շահումյանին վերագրվող այդ տեսակետի վերաբերյալ վկայություններից բացի, որևէ այլ պաշտոնական, հավաստի փաստաթուղթ գոյություն չունի: Չէր էլ կարող ունենալ, քանի որ իր բոլոր ելույթներում, հրապարակված աշխատություններում ու հոդվածներում Շահումյանը միշտ իր տեսակետն արտահայտել է հստակ և միշտ վճռականորեն հանդես է եկել իր ժողովրդի շահերի պաշտպանությամբ:

Տարիներ շարունակ Մոսկվայի, Բաքվի, Թիֆլիսի, ինչպես նաև Երևանի արխիվներում ուսումնասիրել եմ Շահումյանի գլխավորությամբ գործող Բաքվի Ժողկոմսովետի գործունեության առնչվող բազմաթիվ փաստաթղթեր, վստահաբար կարող եմ ասել, որ դաշնակցական հուշագրողների պնդումները հիմնավորող որևէ վկայություն չկա:

Երկրորդ. Դաշնակցության բոլոր հուշագիրները Բաքվում տեղի ունեցած

իրաղարձությունների մեջ Ռուսաստանին անսահման մեծարելով, ներկայացնում են որպես գլխավոր գործիչ: Դաշնակցական հուշագիրները Ռուսաստանին, որին նույնիսկ չէին վստահել Բաքվի հայոց ազգային խորհրդի լիարժեք անդամ ընտրել, այդպես մեծարելով, ցույց են տվել, որ Բաքվում ամեն ինչ կատարվել է Ռուսաստանի կամքով, նրա գիտությամբ, նրա առաջարկությամբ ու նրա հավանությամբ:

Այդպես նրանք վարվել են միտումնավոր կերպով, իրենց մեղավորությանն անուղղակիորեն մասնակից դարձնելով Ռուսաստանին:

Ովքեր ծանոթ են Ռուսաստանի ամբողջ գործունեությանը, նրանք պարզապես չեն կարող հավատալ, որ Ռուսաստանը հավանություն է տվել կամ համաձայնվել է դադարեցնել Բաքվի վրա արշավող թուրքերի դեմ ռազմական գործողությունները և սպիտակ դրոշակ բարձրացնել:

Վերջապես, իմ համոզմամբ, վերոհիշյալ ու մի շարք այլ հուշագիրներ, մտահոգված ապագայում իսկությունը բացահայտվելու հնարավորությունից և իրենց վրայից Բաքվի հայ բնակչության կոտորածի համար պատասխանատվությունը գցելու նպատակով Ռուսաստանին գովաբանելով, ձգտել են նրան դարձնել քավության նոխազ:

Իսկ Ռուսաստանն էլ կենդանի չէր, որպեսզի սատեր կեղծարարներին, որոնք իրենց գործած դավաճանությունը ձգտում են կոծկել, թաքնվելով Ռուսաստանի հեղինակության ետևում:

Այդպես է վարվել, օրինակ, Ս. Վրացյանը, որը 1921 թ. փետրվարյան խռովության ժամանակ, մարտի 15-ին հայ ժողովրդի դահիճ Մուստաֆա Քեմալի ղեկավարած Թուրքիայի Ազգային մեծ ժողովի կառավարությանը և արտաքին գործոց կոմ.ասարությանը ուղարկել է սեփական ձեռքով գրած հետևյալ նամակը. «Ազատելով բոլշևիզմի անունով Հայաստան մտած օտար լուծից՝ Հայաստանի ժողովուրդը լիքն է խորունկ վճռականությամբ ապրելու ազատ ու անկախ եւ ամենամտերիկ բարեկամական յարաբերություններ ստեղծելու իր հարեւանների եւ, առաջին հերթին, տաճիկ ժողովուրդի հետ: Իմ կառավարությունը Տաճկաստանի եւ Հայաստանի միջեւ միջազգային նորմալ եւ բարեկամական յարաբերություններ սկսելու բացա է համարում այն պայմանները, որոնք ձեւակերպած են անցիալ տարւայ դեկտ. 2-ին Ալեքսանդրապոլում կնքած հայ-տաճկական դաշնագրի մէջ եւ յետագային ստեղծուած իրական պայմանները:

Տոգորած լաւագոյն զգացումներով դէպի տաճիկ ժողովուրդը եւ նրա ազատութեան համար մարտնչող Ազգային մեծ ժողովի կառավարութիւնը

եւ սպասելով Ձեր կողմից շտապոյթ կարգադրութեան երկու երկրների միջեւ բարեկամական կապեր հաստատելու եւ քաղաքական ու տնտեսական-առեւտրական յարաբերութիւններ սկսելու խնդրի մասին՝ իմ կառավարութիւնը կարծում է, որ հարցի լուծումը արագացնելու ամենայարմար ձեւը անձնական տեսակցութիւնն է» (ՀՀ ԱԱ, ֆ. 37, ց. 1, գ. 9, թ.65):

Նույն Վրացյանը 1921 թ. մարտի 18-ին Կարաբեքիր փաշայի միջոցով Մուստաֆա Քեմալին ուղարկել է հետևյալ դիմումը. «Հաճեցեք, ներկայ դիմումն շտապ կերպով հասցնել Ձեր բարձր իշխանութեան, եւ ինչպէս անձամբ բացատրել եմ Ձեզ՝ շտապեցնել, որ շտապոյթ պատասխան ստացի:

Իր ազատութեան եւ անկախութեան համար մարտնչող Հայաստանի կուիւը բոլշեւիկների դէմ, մեր համոզումով ծառայում է ոչ միայն Հայաստանին, այլեւ առաջատար Ասիայի բոլոր ազգերի օգտին: Այդ պատճառով Հայաստանը յոյս ունի, որ իր կուի ընթացքում ինքը կը ստանայ օգնութիւն իր հարեւաններից եւ առաջին հերթին, տաճիկ ժողովուրդի կենսական շահն էլ պահանջում է Հայաստանի յաղթական դուրս գալն այս կուից եւ անկախ մնալը:

Այս համոզմունքից ելնելով Հայաստանի կառավարութիւնը խնդրում է Թուրքիայի Ազգային մեծ ժողովի կառավարութեանը յանուն երկու ազգերի փոխադարձ շահի ըստ կարելոյն շուտ՝

1. Վերադարձնել Երեւան Տաճկաստանում գտնուող հայ զինուորական ռազմագերիներին:

2. Տալ որոշ պայմաններով հայ բանակին ռազմամթերք, առաջին հերթին ռուսական երեք գծանի հրացան կամ տաճկական մաուզերի փամփուշտներ եւ կամ Ռոսի ու Լեբելի սիստեմի հրացաններ:

3. Հաղորդել մեզ, թէ արդյո՞ք Ազգային մեծ ժողովի կառավարութիւնը, հնարաւո՞ր է գտնում հասցնել Հայաստանին զինուորական օժանդակութիւն եւ եթէ կարող են, ի՞նչ չափով եւ եղանակով, եւ ի՞նչ ժամանակամիջոցում:

Սոյն դիմումն անելով Հայաստանի կառավարութիւնը հիմնում է այն բարեկամական յարաբերութիւնների վրայ, որոնք հիմք են արուած Ալեքսանդրապոլի դաշնագրից սկսած եւ որոնք խանգարուած են բոլշեւիկների իշխանութեան ժամանակ: Խորին յարգանքներով Հայաստանի կառավարութեան նախագահ՝ Սիմէոն Վրացեան» (ՀՀ ԱԱ, ֆ. 37, ց. 1, գ. 9, թթ 51,.66):

Հայ ժողովրդի դահիճներ Մուստաֆա Քեմալից և Քյազիմ Կարաբեքիրից ռազմական օգնություն խնդրող Վրացյանը գրել է. «Ամէն անգամ, երբ ես մատնում եմ դժուարութեան, երբ անլուծելի հարցեր մաշում են միտքս,

ես ինձ հարց եմ տալիս՝ իմ տեղը ինչ կ՝անէր Ռոստոմը այս պայմաններում: Եւ ինչ որ, իմ կարծիքով, պիտի անէր Ռոստոմը՝ անում եմ ես»:

Սիրալվել է Վրացյանը: Ռոստոմը երբեք նրա նման չէր վարվի: Նա երբեք հայ ժողովրդի դահիճներին չէր դիմի օգնության խնդրանքով, այլ դրա փոխարեն, իր հեղինակությամբ, Վրացյանին նրա արարքի համար արժանի տեղը ցույց կտար:

ԲԵՅԲՈՒԹ ՋԻՎԱՆՇԻՐԸ

Սույն աշխատության նախորդ էջերից ընթերցողներին հայտնի է Ջիվանշիրի անունը: Նա եղել էր Շահումյանի դպրոցական և ուսանողական տարիների ընկերը: Հաճախ օգնության է հասել Շահումյանին, նրան ազատելով ոստիկանության հալածանքներից:

Հետագայում դարձել էր խոշոր նավթարդյունաբերող, մտել էր «Մուսավաթ» կուսակցության մեջ և հայտնի էր որպես մոլի նացիոնալիստ: Դառնալով մուսավաթական կառավարության ներքին գործերի մինիստր, Ջիվանշիրը հայտնի է դառնում որպես անզուսպ հայատյաց և 1918 թ. սեպտեմբերին ղեկավարում հայերի սեպտեմբերյան սպանդի իրականացումը:

1918 թ. սեպտեմբերին, երբ թուրքերը գրավել էին Բաքուն, այնտեղ մնացած Շահումյանի քարտուղար Օլգա Շատունովսկայան, Սուրեն Աղամիրովը և Ալեքսանդր Բարանովը փորձել են հեռանալ Թիֆլիս: Սակայն կայարանում նրանք մատնությամբ ձերբակալվել են թուրքական ժանդարմների կողմից:

Թուրքական ժանդարմները նրանց դաժանորեն ծեծել են, պահանջելով հայտնել Շահումյանի տեղը, բայց արդյունքի չեն հասել: Ձերբակալությունից մի քանի շաբաթ անց թուրքական բանտի գլխավոր հրամանատար Նուրի փաշայի հրամանով հաստատվել է նրանց կախելու դատավճիռը:

Շատունովսկայան պատմել է, որ իրեն թուրքական պահակախմբի ուղեկցությամբ բանտից տարել են Ռոստիլդի տուն: «Մտանք մի մեծ առանձնասենյակ,- հիշել է Շատունովսկայան,- որտեղ, ի զարմանս ինձ, տեսա Բեյբութ Ջիվանշիրին, որը Ստեփան Շահումյանի մանկության ընկերն էր: Նրանք միասին էին մեծացել, միասին ուսման գնացել Գերմանիա: Ստեփանն ավարտեց փիլիսոփայության ֆակուլտետը և դարձավ պրոֆեսիոնալ հեղափոխական, իսկ Ջիվանշիրը՝ գործարանատեր-ինժեներ, կապիտալիստ: Հանուն ճշմարտության պետք է ասել, որ դրանից հետո ևս Ջիվանշիրը չէր մոռանում Ստեփանի հին բարեկամությունը և դեռ հեղափոխությունից առաջ Ստեփան-

նին բազմիցս փրկել է բանտից, դրամական օգնություն ցույց տվել, թաքցրել ընդհատակյա նյութեր և այլն»:

Այնուհետև Շատունովսկայան պատմում էր, որ 1918 թ. մարտյան դեպքերի ժամանակ, կարմիրգվարդիական ջոկատը գնդակակոծում է այն տունը, որի տանիքից գնդացրով կրակում էին նրանց վրա: Այդ տանն ապրում էր Ջիվանշիրը:

Ինչպես վկայել է Շատունովսկայան, Ջիվանշիրին հաջողվել է «փնաց տալ Ստեփան Շահումյանին, նրան խնդրելով փրկել իրեն: Շահումյանն ուղարկել է Սուրեն Աղամիրովին և իր որդի Սուրենին՝ նրանց հանձնարարելով իր մոտ բերել Ջիվանշիրին և նրա կնոջը: Նրանց բարեհաջող կերպով բերեցին Շահումյանի տուն, որտեղ այն ժամանակ գտնվում էի նաև ես: Նրանք այստեղ բնակվում են մի երկու շաբաթ»:

Ջիվանշիրը հետաքրքրվել է, թե որտեղ է Շահումյանը և ասել է հետևյալը. «Ես ներքին գործերի մինիստր եմ: Ինձ զեկուցել են, որ Ստեփանը քաղաքում է և որ դուք չեք ուզում հայտնել նրա հասցեն: Ես ձեզ հատկապես կանչեցի, որ դուք ինձ տաք նրա հասցեն: Ես Ստեփանի բարեկամն եմ: Նա ինձ փրկեց մահվանից, այժմ էլ ես եմ ուզում փրկել նրան: Եթե Ստեփանին գտնեն, ապա կարող են նրան տեղնուտեղը սպանել: Նրա հասցեն տվեք ինձ»:

*Շատունովսկայան պատասխանել է, որ Շահումյանը քաղաքում չէ: Իսկ Ջիվանշիրը չէր հավատում և շարունակում էր խնդրել: Չչատանալով պատասխան, Ջիվանշիրը նրան նորից բանտ է ուղարկել: Հետո Ջիվանշիրի հրամանով բանտից ազատվել են Շատունովսկայան, Աղամիրովն ու Բարանովը և մեկնել են Թիֆլիս (**Ա. Ի. Միկոյան**, նույն տեղը, էջ 263-267):*

ԳԼՈՒԽ 30
«ԱՀԱ ՇԱՀՈՒՄՅԱՆԸ»

«Թուրքմեն» նավը, որի վրա բարձրանում են կոմիսարները, Բաքվից հեռացող վերջին նավերից մեկն էր: Նավն ամբողջովին լցված էր փախստականներով: Այստեղ էին նաև դաշնակցականների ղեկավարած ջոկատների մի խումբ զինվորներ և անգլիական երկու սպա:

«Թուրքմեն» նավը գրանցված էր Կրասնովոդսկի նավահանգստում և այնտեղ էլ ուղևորվում էր: Բաց ծով դուրս գալուց հետո, Թ. Ամիրյանին հաջողվում է համոզել նավապետին շարժվել դեպի Աստրախան:

Սակայն մի քանի դաշնակցական սպաներ անգլիացիների հետ միասին էսէռների ազդեցության տակ գտնվող նավային կոմիտեի միջոցով և զենքի ահաբեկումով ստիպել են նավապետին Աստրախանի փոխարեն շարժվել Կրասնովոդսկի ուղղությամբ:

1918 թ. սեպտեմբերի 16-ին «Թուրքմեն» նավը հասնում է Կրասնովոդսկի ծովախորշ: Ափից տրված հրահանգով նավը խարիսխ է գցում: Շոգենավին բարկասով մոտեցած Կրասնովոդսկի նավահանգստի զինվորական պետը վերցրել է անգլիական սպաներին ու դաշնակցական սպա Լալայանին և վերադարձել նավահանգիստ (Путеводитель музея 26 Бакинских комиссаров (город Красноводск), Ашхабад, 1968, стр. 33):

Լալայանը, որը կրում էր Գեորգիևյան խաչ, ինչպես հիշում է Միկոյանը, «հայտարարում է, թե «կարևոր տեղեկություններ ունի հաղորդելու տեղական իշխանություններին» (**Ա. Ի. Միկոյան**, նույն տեղը, էջ 273):

Սեպտեմբերի 17-ի առավոտյան ծովախորշում գտնվող «Թուրքմեն» նավին հրաման է տրվում մոտենալ Ուֆրա նավամատույցին: Նավամատույցը շրջապատվել էր զորքով, ափին կանգնած անգլիական զրահագնացքի թնդանոթները ուղղվել էին նավամատույցի վրա: Նավամատույցում քայլում էր Կրասնովոդսկի անգլիական կայազորի պետ գնդապետ Բատտինը, «Թուրքմեն» նավից իջած երկու անգլիական սպաների ուղեկցությամբ: Փոքր ինչ հետու կանգնած էր «Վյատկա» շոգենավը, որի նավասանդուխտի մոտ կանգնել էին Կրասնովոդսկի գործադուլային կոմիտեի էսէռ ղեկավարներ Կունը, Կոնդակովը և Ալանիան: Նրանց հետ էր նաև դաշնակցական սպա Լալայանը:

Նրանք արդեն գիտեին, որ «Թուրքմեն» նավի վրա են գտնվում Բաքվի կոմիսարները և պատրաստվում էին նրանց ձերբակալել: Նավասանդուխքով

ուղևորները սկսում են իջնել նավից: Բոլոր ուղևորներին առաջարկել են զինաթափվել: Սկսվում է խուզարկություն: Միայն Միկոյանի մոտ է զենք հայտնաբերվել:

Քանի որ էսէռները դեմքով չէին ճանաչում կոմիսարներին, վերջիններս որոշել էին չմնալ մի տեղում, այլ ցրվել փախստականների մեջ: «Թուրքմեն» նավի վրա եղած բանվորներից մեկը հետագայում հիշել է հետևյալը. «Ցույց տվեք մեզ կոմիսարներին,- գոռում է ինչ-որ մեկը,- և այդ ժամանակ բոլորիդ կազատենք»: Ջնայած տախտակամածն ու նավամատույցը լիքն էր ժողովրդով, տիրում է քար լռություն: Յուրաքանչյուրը դեմքով գիտեր կոմիսարներին, բայց ոչ ոք չի ուզում դառնալ դավաճան: Լռում են նավաստիները և կարմիրբանակայինները, լռում են կանայք, նույնիսկ երեխաները: Եվ հանկարծ լսվում է ինչ-որ մեկի ձայնը. «Ահա Շահումյանը»: Ամբոխից առանձնանում է մատնիչը՝ թուրը կողքից կախված սպիտակգվարդիական ապան» (Путеводитель музея 26 Бакинских комиссаров (город Красноводск), Ашхабад, 1968, стр. 35-36):

Դա դաշնակցական Լալայանն էր, որը կոմիսարներին դեմքով ճանաչում էր և նրա մատնությամբ էլ բոլորին խուզարկել են ու տեղափոխել «Վյատկա» նավ (Путеводитель музея 26 Бакинских комиссаров (город Красноводск), Ашхабад, 1968, стр. 36):

«Վյատկա» նավի վրա կոմիսարներին հայտնել են, որ ձերբակալվել են Կրասնովոդսկի գործադուլային կոմիտեի որոշմամբ: Ձերբակալվում է 37 մարդ: Կատարվել է նոր խուզարկություն և այս անգամ Յա. Զևինի գրպանից հանելեն մի ցուցակ: Այդ ցուցակում նշված էր 25 ազգանուն, որոնց Բաքվի բանտում եղած ժամանակ, Զևինը, որպես բանտախցի ավագ, մնում էր բաժանել:

Գտնելով այդ ցուցակը, որտեղ հիշատակվում էին Շահումյանի, Ազիզբեկովի, Ջափարիձեի, Ֆիոլետովի, Կորգանովի և մյուսների ազգանունները, էսէռները ձերբակալված 37 մարդուց առանձնացրել են նրանում նշված 25 մարդուն: Կարճ ժամանակ անց, Լալայանի մատնությամբ Զևինի մոտից գտնված ցուցակում մտցվել է նաև Թադևոս Ամիրյանը:

Շահումյանը բողոքել է այդ ապօրինության դեմ, որը թողնվել է անհետևանք: Դրանից հետո Շահումյանը կազմել է Յենտրոկասպիայի դիվտարության հասցեով ռադիոգիր, որը Ջափարիձեի, Կորգանովի, Ֆիոլետովի, Պետրովի, Զևինի, ինչպես նաև իր ստորագրությամբ ուղարկվել է Բաքու:

Նկարագրելով Բաքվից սկսված ուղևորության մասին, ռադիոգրում

Հայտնվում էր, որ Կրասնովոդսկում «չնորհիվ մի քանի ուղևորների պրովոկացիոն հայտարարությունների, տեղական իշխանությունների մոտ կարկած ծագեց, թե մենք խուճապի ժամանակ փախել ենք բանտից և Բաքվից մեկնել ենք առանց Դիկտատուրայի գիտության: Դա ահիթ եղավ մեր ձերբակալությանը, մեզ հետ ձերբակալեցին նաև մի տասն այլ անձանց, նրանց թվում հենց իրեն՝ ջոկատի պետ Ամիրովին»:

Ռադիոգրում նշված տասն անձինք էին Անաստաս Միկոյանը, Սամսոն Կանդելակին, Ջափարիձեի կին Վարվառան, Շահումյանի որդիներ Լևոնը և Սուրենը, Ֆիոլետովի կին Օլգան, Թաթևոս Ամիրյանն ու նրա կին Մարիան, Սաթենիկ Մարտիկյանը և Մարո Թումանյանը:

*Այնուհետև կոմիսարները խնդրում էին հաստատել, որ իրենք ազատվել են բանտից Դիկտատուրայի կարգադրությամբ և նպաստել, որ իրենց ուղարկեն Պետրովսկ (**Ստ. Շահումյան**, նույն տեղը, հ. հինգերերդ, էջ 253-254):*

Հետագայում, ինչպես նշել է Միկոյանը, այդ հեռագիրը Կրասնովոդսկի իշխանությունները չեն հաղորդել Բաքու:

*Ձերբակալվածներին պահում էին բանտային դաժան պայմաններում: Նրանց զրկել էին սննդից, ջրից: Սեպտեմբերի 18-ին Շահումյանը, Գ. Կորգանովը, Վ. Պոլուխինը, Գ. Պետրովը ձերբակալվածների անունից բողոք են հայտնել Կրասնովոդսկի գործադրողական կոմիտեին՝ պահանջելով հայտնել իրենց ձերբակալման պատճառը և վերջ տալ անօրինականությանն ու ծաղրանքին (**Ստ. Շահումյան**, նույն տեղը, հ. հինգերերդ, էջ 255-257):*

*Հաջորդ օրը բանտախուց է մտել կալանատան պետը և հայտնել է ձերբակալվածների դիմումի վրա իր պետի կատարած մակագրությունը. «1. Ձերբակալվածներին հայտնել, որ բանտը հարմարավետության համար չէ: 2. Կարելի է խնդրել, բայց ոչ պահանջել: Ընդհանրապես ձերբակալվածներին մատնացույց արեք՝ ավելի շատ մտածել և քիչ գրել» (*Путеводитель музея 26 Бакинских комиссаров (город Красноводск), Ашхабад, 1968, стр. 37):

«...ԲՈԼՇԵՎԻԿՆԵՐՆ ԱՆՎՏԱՆԳ ԵՆ ՄԻԱՅՆ ՄԵՌԱԾ ԺԱՄԱՆԱԿ»

Բաքվի կոմիսարների ձերբակալման մասին Կոմը հեռագրեր է ուղարկել Անդրկասպիայի էսէռա-մենշևիկյան կառավարության ղեկավար Ֆունտիկովին և նրա միջոցով անգլիական միսիայի ղեկավար գեներալ Մալեսոնին:

Սեպտեմբերի 17-ին Անդրկասպիայում գործող անգլիական միսիայի Կրասնովոդսկում գտնվող ներկայացուցչության պետ գնդապետ Բատտինը ևս միսիայի ղեկավար գեներալ Մալեսոնին հեռագրով տեղեկացրել է բոլշևիկյան առաջնորդներ Պետրովին, Շահումյանին, Ավագյանին, Ջափարիձեին և Կորգանովին ձերբակալելու մասին:

Իր հերթին Մալեսոնը սեպտեմբերի 19-ին հեռագրել է անգլիական զինվորական շտաբին, նշելով նաև հետևյալը. «Պահանջել ենք Աշխաբադի կառավարությունից վերոհիշյալ լիդերներին ինձ հանձնելու մասին, վերջիններիս Հնդկաստան ուղարկելու համար, քանի որ նրանց Անդրկասպիայում գտնվելը ներկայումս խիստ վտանգավոր է»:

Բայց կոմիսարների ճակատագիրն արդեն որոշվել էր: Նրանք վտանգավոր են և պետք է ոչնչացվեն՝ այսպիսին էր գաղութարարների կամքը: Եվ այդ վճիռը պետք է իրագործեին արդեն իրենց ձեռքերն արյան մեջ թաթախած էսէռներն ու մենշևիկները:

Սեպտեմբերի 18-ին Կրասնովոդսկի էսէռա-մենշևիկյան գործադրողական կոմիտեի ղեկավար Կոմը հեռագրել է Պետրովսկում գտնվող Բիչերախովին. «Խնդրում ենք շտապ հեռագրել, թե ինչպես վարվել նախկին կոմիսարների և Թ. Ամիրովի հետ, ընդդրում ենթադրում ենք, որ եթե ձեր կողմից առարկություն չի լինելու, նրանց հանձնել ռազմա-դաշտային դատարանին»:

Բիչերախովը չի ուշացրել պատասխանը. «Հավանություն եմ տալիս Բաքվի կոմիսարներին ձերբակալելու ձեր գործողությանը: Բաժանում եմ նրանց ռազմա-դաշտային դատարանին հանձնելու մասին ձեր առաջարկությունը: Իմ կարծիքը պաշտպանում է Յենտրոկասպիայի դիկտատուրան» (Путеводитель музея 26 Бакинских комиссаров (город Красноводск), Ашхабад, 1968, стр. 38):

Մալեսոնը տագնապի մեջ է ընկել իմանալով Կրասնովոդսկում Բաքվի կոմիսարների հայտնվելու մասին: «Ճիշտ է,-ասել է Մալեսոնը,- կոմիսարներն անգեն էին այն իմաստով, որ նրանցից խլվել էր հրազենը, բայց նրանք տրանսպորտում էին ագիտատորի ավելի ահարկու զենքի, որի շնորհիվ մասսաներն անցնում են նրանց կողմը և առաջանում են բոլշևիկյան նոր ապստամբություններ»:

Այնուհետև անգլիական գեներալը գրում էր. «Նրանք (նկատի ունի Անդրկասպյան մարզի կառավարիչներին- Վ. Պ.) համաձայնվեցին ինձ հետ, որ այդ մարդկանց ներկայությունն Անդրկասպիայում ցանկալի չէ և նաև այն բանի հետ, որ բոլշևիկներն անվտանգ են միայն մեռած ժամանակ» (Путеводитель музея 26 Бакинских комиссаров (город

Красноводск), Ашхабад, 1968, стр. 42-43):

Այդ օրերին Անդրկասպյան կառավարության զորքերը ռազմաճակատում լուրջ պարտություն էին կրել և չդիմանալով Տաշքենդի կողմից հարձակվող սովետական ուժերի ճնշմանը, Զարջոյ քաղաքի մատույցներից սկսել էին նահանջել դեպի Աշխաբադ:

Այս հանգամանքը Ֆունտիկովի կառավարության մոտ առաջացրել էր տատանումներ և հնարավոր էր համարվում կոմունարներին օգտագործել սեփական կաշին փրկելու համար: Սակայն այդ մտադրությունը չէր կարող վրիպել անգլիական օկուպանտների աչքից, որոնք ամեն ինչ արեցին, որպեսզի էսէռներն ու մենշևիկներն այլևս սովետական ուժերի հետ համաձայնության եզրեր գտնելու հույսի վերջին կամուրջը:

Անգլիացիները վստահեցնում էին Ֆունտիկովին, որ շուտով տեղ կհասնեն բրիտանական ուժերը և Անդրկասպիայի սահմանները ներխուժած սովետական զորքերին դուրս կշպրտեն ու դրանով կստեղծվի հնարավորություն գրավել նաև Տաշքենտը:

Անգլիացիները հանում են իրենց նպատակին: Նրանց խոստումներից ոգևորված Աշխաբադի կառավարության պարագլուխ էսէռ Ֆունտիկովը սեպտեմբերի 18-ին շտապ կերպով կազմել է արտահերթ գնացք և իր կառավարության անդամների ուղեկցությամբ մեկնել է Կրասնովոդսկ: Այստեղ անգլիացիների մասնակցությամբ տեղի ունեցած կառավարության գաղտնի նիստում էլ ընդունվել է որոշում կոմունարներին գնդակահարելու մասին:

Դահիճների պարտականությունը ստանձնել են Մալեսոնի մերձավոր օգնական Ռ. Տիգ-Ջոնսը և Անդրկասպիայի կառավարության ղեկավար էսէռ Ֆունտիկովը: Կազմվել է երկու վագոնով հատուկ գնացք: Սեպտեմբերի 19-ին այդ գնացքը բերվել է Կրասնովոդսկ: Կայարանում Ֆունտիկովի գլխավորությամբ մշակվել է կոմիսարներին ոչնչացնելու տեխնիկական պլանը:

Դեռևս սեպտեմբերի 19-ի երեկոյան կոմիսարներին նախազգուշացրել էին, թե նրանց Կրասնովոդսկից տանելու են Աշխաբադի մարզային բանտ, քանի որ Կրասնովոդսկում «նեղված» է:

Սեպտեմբերի 19-ի լույս 20-ի գիշերվա ժամը մեկին կալանատուն է մտել Անդրկասպյան կառավարության հանձնաժողովը և կոմիսարներից մեկի՝ Զևինի մոտ պատահականորեն պահպանված ցուցակի համաձայն առանձնացրել է 26 մարդ ու պատանդների անվան տակ դուրս տանում, իբր թե Հնդկաստան տեղափոխելու համար:

Իսկ երբ կալանավորները հարցրել են, թե ինչու չեն տանում բոլորին և ինչ

կլինի մնացածների հետ, դահիճները պատասխանել են՝ մնացածը վաղն ազատ կարձակվեն:

Շահումյանը ջերմորեն հրաժեշտ է տալիս մնացող ընկերներին, գրկում է իր երկու որդիներին...

Բոլոր ձերբակալվածներին տեղավորել են կալանավորների համար նախատեսված վագոնում, իսկ մյուսում՝ դահիճները: Գնացքն առանց լույսերը վառելու, գաղտագողի շարժվել է Կրասնովոդսկի կայարանից:

Առավոտյան ժամը 5-ին գնացքը կանգնել է Ախչայ-Կույմա և Պերեվալ կայարանների միջև 207 վերստի վրա: Գնացքն անմիջապես շրջապատել են անգլիական զինվորները: Հետո դուրս են բերել ձերբակալված կոմիսարներին: Նրանց բաժանել են երեք խմբի և տարել անապատի խորքը: Անգլիական դահիճները ոչ միայն գնդակահարում էին կոմիսարներին, այլև քարատում էին նրանց: Կտրել են կոմիսարներից 17-ի գլուխը:

Կոմիսարների հետ սպանվել է նաև միակ պատահական վկան՝ կայարանի ծերունի պահակը, որը մոտեցել էր և հետաքրքրվել, թե ինչու է գնացքը կանգնել կես ճանապարհին և ազդանշան չի տալիս:

Կոմիսարների գնդակահարությանը ներկա են եղել և իրագործել են Անդրկասպյան կառավարության անդամներ Ֆունտիկովը, Յակովլևը, Սեղիխը, Կուրիլևը, Խուդոլոժկինը, Դրուժկինը, Կունը, Անդրկասպիայում անգլիական միսիայի ղեկավար Տիգ Ջոնսը և ուրիշներ:

Անդրկասպիայի էսէռա-մենշևիկյան կառավարության խոսափող «Голос Средней Азии» *թերթը, որի խմբագիրներն անտեղյակ արդեն կատարված փաստին, հայտնում էին հետևյալը. «Բախտը մեզ նորից ժպտացել է, մեր ձեռքն են ընկել Բաքվի ճակատագրի նախկին վճռողները: Մեր ավարի մեջ է գտնվում նշանավոր հերոսներից մեկը՝ Ս. Շահումյանը, որին վաղուց կնքել են «Կովկասի Լենին»: Նրանք անվստահության թունավոր սերմեր էին ցանում փրկության մասին բաքվեցիների կանչին վեհանձնորեն արձագանքած մեր դաշնակից անգլիացիների նկատմամբ: Նրանք պնդում էին, թե անգլիական իմպերիալիստների կողքին կռվելը խայտառակություն է ազնիվ հեղափոխականների համար:...Նրանք մեր ձեռքումն են: Մենք ապրում ենք բարբարության էպոխայում: Ուրեմն օգտվենք դրա օրենքներից: Այն ընդհանուր, արյուն՝ հանուն արյան, գլուխ՝ հանուն գլխի: Յուրաքանչյուր սպանված էսէռի ու բուրժուայի համար՝ բոլշևիկի գնդակահարություն: Այժմվանից պատասխան կտան Ս. Շահումյանի, Գ. Պետրովի, Ղ. Զախարիձեի, Գ. Կորգանովի և մյուսների գլուխները: Մենք նույնիսկ կանգ չենք առնի նրանց*

դաժան տանջանքների, մինչև սովամահության ենթարկելու և ներառյալ քառատելու առջև» («Голос Средней Азии», 20.09. 1918; Материалы музея 26-ти Бакинских комиссаров (город Красноводск), стр. 43):

Սեպտեմբերի 21-ին գեներալ Մալեսոնը, կոմունարների սպանության գլխավոր կազմակերպիչը, անպիսական միսիայի գլխավոր շտաբին հեռագրով հաղորդելով կոմունարների սպանության լուրը, գրում էր. «Բաքվի 26 նախկին առաջնորդների...մահապատիժը քաղաքականապես ձեռնտու է, քանի որ այդ նշանակում է, որ Աշխատավորի կառավարությունն այրել է բոլշևիկների նկատմամբ բոլոր կամուրջները: Աշխատավորի համաձայնողականները Շահումյանին, Պետրովին և մյուսներին կդիտեին իբրև շանս՝ սեփական մորթին փրկելու համար, քանի դեռ վերջիններս ողջ կմնային»:

Անհրաժեշտ եմ համարում անուն առ անուն հիշել Բաքվի 26 կոմիսարներին, ովքեր 1918 թ. սեպտեմբերի 20-ին դարձան անպիսական ինտերվենտների և էսէռա-մենշևիկյան դավադիրների զոհը:

Ստեփան Շահումյան- *ՌԿ(բ)Կ Կենտկոմի անդամ, Կովկասի գործերի արտակարգ կոմիսար, Բաքվի ժողկոմսովետի նախագահ և արտաքին գործերի կոմիսար:*

Պրոկոֆի Ջապարիձե- *ՌԿ(բ)Կ Կենտկոմի անդամության թեկնածու, Բաքվի սովետի նախագահ, ներքին գործերի և պարենավորման կոմիսար:*

Մեշադի Ազիզբեկով- *Բաքվի նահանգային կոմիսար, գյուղացիական սովետի նախագահ, կոմկուսի անդամ:*

Իվան Ֆիոլետով- *Ժողովրդական տնտեսության խորհրդի նախագահ, կոմկուսի անդամ:*

Գրիգորի Կոլոսանով- *Կովկասյան բանակի ռազմա-հեղափոխական կոմիտեի նախագահ, ռազմածովային գործերի կոմիսար, կոմկուսի անդամ:*

Պավել Զևին- *Աշխատանքի կոմիսար, կոմկուսի անդամ:*

Արսեն Ամիրյան- «Бакинский рабочий» *թերթի խմբագիր, կոմկուսի անդամ:*

Սուրեն Հովսեփյան- *Բաքվի սովետի* «Известия» *թերթի խմբագիր, Ռազմա-հեղափոխական կոմիտեի անդամ, կոմկուսի անդամ:*

Միր-Հասան Վեզիրով- *Հողագործության կոմիսար, ձախ էսէռ:*

Գրիգորի Պետրով- *Կենտրոնական իշխանության ռազմական ներկայացուցիչ, ռազմական ջոկատի հրամանատար, ձախ էսէռ:*

Վլադիմիր Պոլուխին- *Ռազմածովային գործերի կոմիսար, կենտրոնի ներ-*



Բաքվի 26 կոմիսարների գնդակահարությունը (նկարիչ Ի. Բուդրանի)

կայացուցիչ, կոմկուսի անդամ:

Իվան Մալիգին- *Կովկասյան բանակի ռազմա-հեղափոխական կոմիտեի նախագահի տեղակալ, կոմկուսի անդամ:*

Բաղրատար Ավագյան- *Բաքու քաղաքի պարետ, կոմկուսի անդամ:*

Մեր Բաբին- *Կովկասյան բանակի ռազմա-հեղափոխական կոմիտեի անդամ, կոմկուսի անդամ:*

Մարկ Կորզանով- *Կովկասյան բանակի ռազմա-հեղափոխական կոմիտեի անդամ, կոմկուսի անդամ, Գրիգորի Կորզանովի եղբայրը:*

Ֆեոդոր Սոլնցև- *Զինվորական գործիչ, կոմկուսի անդամ:*

Ադամ Կոստանդյան- *Պարենավորման գործերի կոմիսարի տեղակալ, Բալախանիի շրջանային պարենավորման կոմիսար, կոմկուսի անդամ:*

Սոլոմոն Բոգդանով- *Կովկասյան բանակի ռազմա-հեղափոխական կոմիտեի անդամ, կոմկուսի անդամ:*

Անատոլի Բոգդանով- *Սովետական աշխատող, կոմկուսի անդամ:*

Արմենակ Բոլոյան- *Սովետական աշխատող, կուսակցական պրոպագանդիստ, կոմկուսի անդամ:*

Էյժեն Բեզոզ- *Նավաստի, Կովկասյան բանակի կապի պետ, կոմկուսի անդամ:*

Իվան Գաբիչև- *Բրիգադի կոմիսար, կոմկուսի անդամ:*

Թադևոս Ամիրյան (Ամիրով)- *Հայկական հեծյալ ջոկատի հրամանատար, «ձախ» դաշնակցության անդամ:*

Իվան Նիկոլայևիչ- *Բանվոր, սովետական աշխատող, կոմկուսի անդամ:*

Իրանի Մատաքար- *Բանվոր, սովետական աշխատող, կոմկուսի անդամ:*

Իսայ Միշև- *Կովկասյան բանակի ռազմա-հեղափոխական կոմիտեի գործերի կառավարիչ, անկուսակցական:*

ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆԸ ԿՈԾԿԵԼՈՒ ՓՈՐՁԵՐԸ

Կատարած ոճրագործությունից հետո, դահիճներն ամեն ինչ անում էին կոմունարների գնդակահարությունը գաղտնի պահելու համար: Նույնիսկ Անդրկասպյան կառավարության 1918 թ. սեպտեմբերի 20-ի նիստի արձանագրության մեջ համարձակություն չեն ունեցել թողնել որևէ գրավոր վկայություն:

Գեներալ Մալեսոնը նույնիսկ կոմիսարներին գնդակահարելուց հետո Աշխաբադի կառավարության հետ գրագրություն էր վարում ձերբակալված կոմունարներին Հնդկաստան տեղափոխելու մասին, իսկ «Ախալբադկա»

թերթը գնդակահարությունից անմիջապես հետո հաղորդում էր, թե բոլոր կոմունարները բարեհաջող հասել են Աշխաբաղ և պետք է շարունակեն ճանապարհը դեպի Հնդկաստան:

Կոմունարների ճակատագրով անդուլ հետաքրքրվում էին Բաքվում ու Մոսկվայում:

*Սակայն Անդրկասպիա եկած ընկերների որոնումներն արդյունք չէին տալիս: Ի վերջո, Աշխաբադի ընդհատակյա կոմիտեի անդամ Աշոտ Ստեփանյանը (հետագայում հայտնի ճարտարապետ, Մոսկվայի Մետրոպոլիտենի մի շարք կայարանների, բազմաթիվ խոշոր գործարանների, ինչպես նաև «Ռոսիա» հյուրանոցի նախագծերի հեղինակ) մեծ դժվարությամբ կարողացել է 1918 թ. դեկտեմբերին հասնել Մոսկվա և Յաս. Սվերդլովին ու Վ. Ավանեսովին տեղեկացրել է կոմունարների ճակատագրի մասին (**Թուրքմենստանի պետական արխիվ**, ֆ.59, ց. 1, գ. 26, թ. 20; «Туркменская искра», 05. 12. 1967):*

Դրան հետևել է սովետական կառավարության առաջարկությունը՝ կատարել գերիների փոխանակում կոմունարների հետ:

1919 թ. մարտի 5-ին Թիֆլիսից Աստրախան է ուղարկվել ռադիոգիր, որով հաստատվում էր, թե Ստ. Շահումյանն ու Պ. Ջափարիձեն անգլիական հրամանատարության տնօրինության տակ չկան և որ նրանք, ըստ տեղական լուրերի, ինքնագլուխ կերպով սպանվել են բանվորների կողմից սեպտեմբերին Կիզիլ Արվատի մոտ: Սա անգլիական ինտերվենտների առաջին պաշտոնական փորձն էր կոմունարների սպանության մեղքը բանվորների վրա գցելու համար:

1919 թ. մարտի 12-ին էսէռ Զայկինն իրենց «Знамя труда» թերթում իր կուսակցության վրայից պատասխանատվությունը գցելու նպատակով հրապարակել է փաստեր կոմունարների սպանության մասին, այդ հանցագործության մեջ մեղադրելով անգլիական հրամանատարությանը, հատկապես ընդգծելով կապիտան Տիգ-Ջոնսի եռանդուն մասնակցությունը:

Սովետական Ռուսաստանի արտգործժողկոմատը կոմունարների սպանության կապակցությամբ հանդես է գալիս բողոքի նոտայով, որը գրավել է Եվրոպայի բանվորական ու դեմոկրատական լայն շրջանների ուշադրությունը և առաջ է բերել խոր վրդովմունք:

Անգլիական ինտերվենտները շտապել են արդարանալու միջոցներ փնտրել, ամեն կերպ աշխատելով իրենց վրայից գցել կատարված ոճիրի պատասխանատվությունը: Այդ նպատակին էր ուղղված գեներալ Մալեսոնի հեռագիրը, որը հրապարակվել է 1919 թ. մարտին Բաքվի մենշևիկների «Искра»

թերթում: Անդրկասպիայի կառավարությանն ուղարկած հեռագրում Մալեսոնը գրում էր. «Հաղորդեցեք կոմիտեին, որ ես մեծագույն վշտով իմացա, որ գերիները սպանված են: Մինչև այժմ գերմանացիները և մյուս վայրենիներն են մեղադրվել այդպիսի գազանությունների մեջ: Իմ կարծիքով անհրաժեշտ է խստագույն պատժել մարդասպաններին որպես դաս մյուսներին» (*«Искра», 14. 13. 1919)*:

1919 թ. մարտին մուսավաթիստների «Заря» *թերթը հրապարակել է անգլիական շտաբի հաղորդումը, որտեղ ասվում էր, թե բրիտանական իշխանությունները և մասնավորապես կապիտան Տիգ-Ջոնսը ոչ մի առնչություն չունեն կոմունարների գնդակահարության հետ:*

«Կապիտան Տիգ-Ջոնսը,-ասվում էր հայտարարության մեջ,- առաջարկել է կոմիսարներին ուղարկել Հնդկաստան, բայց Աշխարհի կոմիտեի անդամներից մեկն այդ առաջարկին պատասխանել է, թե ինքն այդ առթիվ կարող է իր կարգադրությունն անել»:

Ըստ անգլիական շտաբի հայտարարության, երկու օր դրանից անց, կապիտան Տիգ-Ջոնսն իմացել է այդ կարգադրության հետևանքով կոմիսարների սպանության մասին: Իսկ կապիտանն էլ «այդ մասին անհապաղ հաղորդել է գեներալ Մալեսոնին»:

Անգլիական շտաբը նաև տեղեկացնում էր, թե որոշ ժամանակ անց, Աշխարհի կոմիտեի վերոհիշյալ անդամը գալիս է Տիգ-Ջոնսի մոտ և «հուզված կերպով հայտնում է, որ Շահումյանի ազգականները տեղեկություններ են պահանջում նրա գտնվելու վայրի մասին և խնդրում է կապիտան Տիգ-Ջոնսին՝ հաստատելու, որ կոմիսարներն ուղարկվել են Հնդկաստան: Իսկ կապիտան Տիգ-Ջոնսը զայրույթով հրաժարվում է նրա խնդրանքը կատարել»:

«Սրանով էլ,- ասվում էր հայտարարության վերջում,- սահմանափակվում է կապիտան Տիգ-Ջոնսի մասնակցությունը կոմիսարների սպանության մեջ: Իսկ Զայկինի հայտարարությունները միանգամայն սուտ են և արվել են անգլիացիների դեմ հասարակական կարծիքը գրգռելու միակ նպատակով» («Заря», *26. 03. 1919)*:

Անդրկասպիան կառավարող էսէռներն ու մենշևիկները նույնպես աշխատում էին թաքցնել իրենց կատարած ոճրագործությունը, փորձելով իրենց վրայից գցել կոմունարների սպանության պատասխանատվությունը:

Ինչպիսի՜ ցինիկություն, թե անգլիական գեներալի կողմից, թե անգլիական ինտերվենտների կամակատար էսէռների, մենշևիկների, մուսավաթականների կողմից և թե նաև մեր օրերում:

Միայն հետո, երբ գեներալ Մալեսոնն ապահով կյանք էր վարում Լոնդոնում, 1933 թ. գրել է հետևյալը. «Մեր ափերում հանկարծակի երևաց Ռուսաստանի խոշոր ագիտատորների խումբը: Ճիշտ է, կոմունարներն անգեն էին այն առումով, որ հրազենը նրանցից վերցվել էր, բայց նրանք տիրում էին ավելի հզոր զենքի, քան հրազենը՝ փորձված ագիտատորի ուժին, որը տիրում է ամբոխին և առաջ բերում բոլշևիկյան նոր ապստամբություններ: Բնակչության տատանվողության և քաղաքականապես խախտության առկայության դեպքում լրիվ հնարավոր կլիներ, որ նրանք շուտով երկիրը նորից բոլշևիկյան կդարձնեին և այդ ժամանակ ի՞նչ կլինեին մեր բոլոր պլանները: Բացի դրանից, ինչպիսին կլիներ Մերվի (այժմ՝ Մարի քաղաք- Վ.Պ.) ռազմաճակատում կռվող մեր զորքերի վիճակը, որոնք առջևում բոլշևիկյան հսկա-ռակորդներ ունենալու հետ միասին, այդպիսի հակառակորդ կոմենային նաև թիկունքում: Պարզ էր, որ այդպիսի խմբի գալն Աշխարհ պետք էր ձախողել ամեն գնով: Բոլշևիկները կարող են անվնաս լինել, երբ նրանք մեռած են»:

ՄՈՐՈՒՔ ԿԱՐՈՆ ԼՈՒԾՈՒՄ Է ՇԱՀՈՒՄՅԱՆԻ ՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՎՐԵԺԸ

*...Բաքվի կոմունարների սպանությունը խոր զայրույթ է առաջ բերել: Բաքվի բանվորները բողոքի հզոր ցույց են կազմակերպել, որից սարսափած իշխանություններն ուժեղացրել են անգլիական միսիայի շենքի հսկողությունը: Անդրկասպիայի կառավարության ներքին գործերի մինիստրը 1919 թ. ապրիլին ձեռնարկել է լրացուցիչ միջոցներ Բաքվից եկած բոլոր հայերի փաստաթղթերը ստուգելու համար, քանի որ նրան հասած տեղեկությունների համաձայն «բոլշևիկներին համակրող բաքվեցի հայերը մտադրվել են Անդրկասպյան մարզում տեռորիստական ակտեր ձեռնարկել այն անձանց դեմ, որոնք նրանց կողմից կասկածվում են Շահումյանի և Բաքվի մյուս բոլշևիկ կոմիսարների գնդակահարության մեջ» (**Թուրքմենստանի պետական արխիվ**, ֆ. 383, ց. 1, գ. 26, թթ. 63-64)*:

1919 թ. հունվարին «Искра» *թերթը հրապարակել է Բաքվի կոմիսարներին սպանելու մեջ Կունի ունեցած մասնակցության մասին: Այդ կապակցությամբ Կունը թերթի խմբագրին էր ուղարկել կեղծիքներով լեցուն նամակ, ամեն կերպ ժխտելով իր մասնակցությունը: «Ոչ ոքի,-գրում էր Կունը,- մինչև անցյալ տարվա դեկտեմբերի 31-ը (1918 թ.-Վ. Պ.) չենք ձերբակալել գնդա-*

կահարելու ահաբեկումով»: (**Թուրքմենստանի պետական արխիվ**, ֆ. 118, ց. 1, գ. 19, թ. 19-20):

Արդար դատաստանից խուսափելու համար Կունը և նրա տեղակալ Դոբլոնրավովը փախել են Կրասնովոդսկից: Գեներալ Մալեսոնի աջակցությամբ Կրասնովոդսկից տարվել է նաև գնդակահարության մասնակից Դրուժկինը:

Մինչև օրս էլ չի անցնում ազնիվ մարդկանց ցասումը Ստ. Շահումյանի ու մյուս կոմունարների չարանենգ սպանության կազմակերպիչների նկատմամբ: Այն վրդովեցրել է բոլոր ազնիվ մարդկանց սրտերը:

Ահա, բազմաթիվ փաստերից մեկը: 1993 թ. հոկտեմբերի 2-ին Թալինի շրջանի Զովասար գյուղում, վերջապես հայրենի հողում ամփոփվել է սիրված հերոս, հայոնի ֆիդայի Մորուք Կարոյի աճյունը:

Եվ այդ հերոսին, ահա, թե ինչ ափթով եմ հիշում: 1928 թ. խուսափելով ապօրինի հետապնդումներից, Կարապետ Ավոյի Ավոյանը՝ Մորուք Կարոն անցել է Իրան: Նա բնակություն է հաստատել Երկրորդ համաշխարհային պատերազմի ժամանակ պատերազմող կողմերի հետախուզությունների կարևոր կենտրոն դարձած Թեհրանում:

Եվ ահա, ինչպես պատմել է հայոնի դաշնակցական գործիչ Կարո Սասունին, Մորուք Կարոն իր ընկերոջ՝ Պետոյ Ղազարի (ն. Դաշտենցի «Ռանչպարի կանչը» վեպի Զնգիկ Պետոն) հետ հայտնվում է երկու անգլիացի սպաների պատվին մի քանի պարտիկների կազմակերպած ճաշկերույթին: Հավաքվածների զրույցի թեման պատերազմն էր, որն ընդմիջվում էր կենացներով:

Անգլիացի սպաներից մեկն առաջարկում է իր ընկերոջ կենացը, հատկապես ասելով, որ նա արժանի է հատուկ գովեստի, քանի որ նա բոլշևիկ Շահումյանի սպանողն է, ըստ երևույթին, մտածելով, որ դրանով կշահի բոլշևիկյան իշխանությունների կողմից հալածված Մորուք Կարոյին համակրանքին:

Լսելով անգլիացուն, Մորուք Կարոն տարակուսանք է հայտնել որ չի հավատում, թե իր ներկայությամբ իրեն պատվողն իր թշնամի Շահումյանի ապանողն է: Անգլիացին մանրամասն պատմել է կոմունարների սպանությունը և հպարտորեն ավելացրել, որ ինքն էլ առաջինն է կրակել Շահումյանի վրա:

Մորուք Կարոն համոզվել է, որ իր առջև կանգնած է Ստ. Շահումյանին սպանողը և հենց ռեստորանում գնդակահարել է նրան: Մյուս սպան ծանր վիրավորվել է: Բարեկամների աջակցությամբ Մորուք Կարոն կեղծ անձնագրով անցել է Բեյրութ, որտեղ էլ բնակվել է մինչև պատերազմի վերջը:

1945 թ. Մորուք Կարոն վերադարձել է Իրան և բնակություն հաստատել Համադան քաղաքում: Այստեղ էլ նա 1949 թ. դեկտեմբերի 6-ին մահացել է

սրտի կաթվածից: Հայ ազատագրական պայքարի պայծառ հերոսը մինչև կյանքի վերջին շունչը հավատացած էր, որ լուծել է իր համար մեծապես հարգված մարդու՝ Ստ. Շահումյանի եղեռնական մահվան վրեժը...

ԱՐԴԱՐ ԴԱՏԱՍՏԱՆԸ ՉԻ ՈՒՇԱՆՈՒՄ

1919 թ. հուլիսի 9-ին սովետական զորքերն ազատագրել են Աշխաբադը: Այստեղ էլ հայտնաբերվել են կոմունարների սպանությունն անգլիացիների կողմից կազմակերպելու վերաբերյալ փաստաթղթերը: Այդ փաստաթղթերը, որոնք մինչև օրս չեն կորցրել իրենց այժմեականությունը, տպագրվել են Անդրկասպիական ռազմահակատի «Горнист» («Շեփորահար») թերթի 1919 թ. նոյեմբերի 26-ի, 29-ի, դեկտեմբերի 2-ի, 3-ի համարներում «Անգլիական «քաղաքականությունը» Թուրքեստանում» ընդհանուր վերնագրով:

Տեղին եմ համարում ընթերցողին ասել, որ «Горнист» թերթի խմբագիրն էր Սամվել Ղևոնդյանը (Դեյվանդով), որը հետո դարձավ Հայոնի ռազմական գործիչ, նրա տեղակալն էր Տիգրան Մելքումյանը (հետագայում սովետական ռազմա-օդային ուժերի և հրթիռային տեխնիկայի ճանաչված կոնստրուկտոր):

1919 թ. սեպտեմբերի 20-ին Շահումյանի և մյուս կոմիսարների գնդակահարության տարեդարձի կապակցությամբ Կովկասի երկրամասային կոմիտեն և Բաքվի կոմունիստական կազմակերպությունը տարածել են թռուցիկ, որտեղ նկարագրվել են Բաքվի կոմունայի տապալմանը նախորդած իրադարձությունները և բացահայտվել են հակահեղափոխության հաղթանակի պատճառները:

«Մենք,- ասվում էր թռուցիկում,- չպետք է ընկճվենք մեր ղեկավարների կործանման կապակցությամբ, այլ պետք հաստատապես հիշենք մեր թանկագին ուսուցիչների պատգամները: Բաքվի պրոլետարիատը նրանց ձգտումները պետք է դարձնի իր ձգտումները, նրանց դրոշը իր դրոշը և դա կլինի մեր զոհված ընկերների լավագույն հուշարձանը» (**Ադրբեջանի կոմկուսի արխիվ**, ֆ.276, ց. 1, գ. 396, թ. 1):

1919 թ. դեկտեմբերի 20-ին հայտնաբերվել է Ստ. Շահումյանի և մյուս կոմունարների սպանության վայրը: Այդ մասին Տաշքենտ, Սովետական Թուրքեստանի կենտրոնական ուղարկված հեռագրում հայտնվում էր, որ ՌԿԿ Կազանջիկի կազմակերպությունը հայտնաբերել է «գնդակահարված Բաքվի 26 կոմիսար ընկերների դիակները ու տեղափոխել է Կազանջիկ» և խնդրվում էր հեռագրել, թե ինչ ձեռնարկել հետագայում (**Ուզբեկստանի**

կոմկուսի արխիվ, ֆ. 60, ց. 1, գ. 768, թ. 1):

*Նույն օրն էլ Վ. Կույբիշևը ՌԿ(բ)Կ Կենտկոմին և Համառուսաստանյան Կենտգործկոմի նախագահությանն ուղարկել է հետևյալ հեռագիրը. «Անդրկասպիայում մեր զորքերի կողմից գրավված Պերսայ և Ախչա-Կույսա կայարանների միջև գտնվում է այն վայրը, որտեղ թաղված են դավաճանաբար գնդակահարված ընկերներ Շահումյանը, Ջափարիձեն, Պետրովը և Բաքվի մյուս ընկերները: Կրասնովոդսկը գրավելուց հետո ենթադրվում է հանդիսավորությամբ բացել դիակները: Պահանջվում է խմանալ, ենթադրվո՞ւմ է արդյոք նրանց մարմինների տեղափոխումը, թե հուղարկավորության վայրը թողնում էք մեր հայեցողությանը» (**ՍԼԻ կենտրոնական կուսակցական արխիվ**, ֆ. 79, ց. 1, գ. 79, թ. 35):*

Թուրքեստանի կոմկուսի կենտկոմն ու ժողկոմսովետն անհապաղ այդ մասին հեռագրել են Մոսկվա: 1920 թ. փետրվարի 23-ին Համառուսաստանյան կենտգործկոմն ընդունել է հատուկ որոշում Ստ. Շահումյանի և մյուս կոմունարների աճյունները Բաքու տեղափոխելու մասին: Որոշվել է նաև, մինչև Բաքվի ազատագրումը, կոմունարների աճյունները տանել Աշխաբադ: Այստեղ էլ կանգնեցվել է նրանց նվիրված ժամանակավոր հուշարձան:

*1920 թ. մարտի 16-ին Անդրկասպիայի մարզային հեղկոմը Թուրքեստանյան հանձնաժողովի հեռագրի հիման վրա քննարկել է «Ընկ. Շահումյանի ու մյուսների գերեզմանին ժամանակավոր հուշարձան կանգնեցնելու և այն ցանկապատելու, ինչպես նաև նրանց գերեզմանները պահպանելու համար միջոցներ տրամադրելու հարցը» (**Թուրքմենստանի պետական արխիվ**, ֆ. 12, ց. 1, գ. 25, թ. 25): Միաժամանակ 26 կոմիսարների գնդակահարության տեղում կառուցվել է ժամանակավոր հուշարձան:*

*1920 թ. հունիսի 13-ին Բաքվի սովետի առաջին նիստը որոշել է Ստ. Շահումյանի և մյուս կոմունարների աճյունները տեղափոխել Բաքու և այդ մասին հեռագիր է ուղարկվում Լենինին, միաժամանակ խնդրելով աջակցել, որպեսզի Բաքու մեկնեն Շահումյանի ու Ջափարիձեի կանայք (**Ադրբեջանի կոմկուսի արխիվ**, ֆ. 303, ց. 1, գ. 39, թ. 1):*

*1920 թ. հուլիսի 8-ին Համառուսաստանյան կենտգործկոմը որոշել է կոմունարների թաղումը կազմակերպել Արևելքի ժողովուրդների համագումարի ժամանակ (**Հոկտեմբերյան հեղափոխության կենտրոնական արխիվ** (Մոսկվա), ֆ. 1235, ց. 37, գ. 5, թթ. 153-154; **Ադրբեջանի կոմկուսի արխիվ**, ֆ. 303, ց. 1, գ. 41, թ. 1):*

1920 թ. սեպտեմբերի 1-ին 37 ազգությունների ներկայացուցիչների մասնակցությամբ Բաքվում բացվել է Արևելքի ժողովուրդների համագումարը, որի պատգամավորները քաղաքի աշխատավորների հետ միասին խոր ակնածանքով ու մեծագույն հարգանքով Ստ. Շահումյանի ու մյուս կոմունարների աճյունները 1920 թ. սեպտեմբերի 10-ին ամփոփել են Ազատության հրապարակում, որը վերանվանվում է «26 կոմիսարների հրապարակ»:

Թաղման արարողության մասին հրապարակված հաղորդման մեջ հայտնվում էր, որ «առջևից տարվում են ընկ. Շահումյանի և նրա ընկերներ Ջափարիձեի, Զևինի, Ազիզբեկովի և Ֆիոլետովի դագաղները: Նրանց հետևում են մյուս 21 ընկերների դագաղները»:

Թաղման ժամանակ երդիք է ունեցել նաև Ն. Նարիմանովը, որը մասնավորապես, նշել է հետևյալը. «Այս կայուն, աղնիվ հերոսներն ընկան Անգլիայի ձեռքից, այն Անգլիայի, որը միշտ խոսում է իր մարդկայնության մասին: Ահա այդ մարդկայնության արդյունքը՝ 26 դագաղները...»: («Азербейджанская беднота», 10. 09. 1920):

1924 թ. սեպտեմբերի 20-ին Բաքվի Ազատության հրապարակում դր-

Ստ. Շահումյանի տուն-թանգարանը Ստեփանավան քաղաքում

վում է 26 կոմիսարների հիշատակը հավերժացնող հուշարձանի հիմքը: Այս տեղ կառուցվում է հուշահամալիր, որը վերջերս Ադրբեջանի իշխանությունների որոշմամբ քանդվել է «քաղաքաշինության պահանջների» պատրվակով:

Իսկ հետագայում Ավչա-Կույմա և Պերեվալ կայարանների միջև, 207 կիլոմետրի վրա Բաքվի կոմունարների գնդակահարության վայրում կառուցվում է նրանց հիշատակը հավերժացնող հուշարձան, որին մշտապես այցի էին գնում բազմաթիվ մարդիկ՝ հարգանքի տուրք մատուցելով կոմունարների հիշատակին:

Տարիներ անց, կոմունարների սպանության մեջ մեղադրվող շատ անձինք հայտնաբերվում են և դատի տրվում: 1921 թ. ապրիլի 19-26-ին Թուրքեստանյան ռազմաճակատի հեղափոխական տribունալը նրանց բոլորին գնդակահարության է դատապարտել:

Բաքվի 26 կոմիսարների գնդակահարության վայրում կառուցված հուշարձանը

Երկրորդ դատավարությունը տեղի է ունեցել Բաքվում 1926 թ. ապրիլի 17-29-ին: ՍՍՀՄ Գերագույն դատարանի զինվորական կոլեգիայի արտագնա նիստը գնդակահարության է դատապարտել կոմունարների սպանության գլխավոր կազմակերպիչ Ֆունտիկովին և մյուս մասնակիցներին:

Երրորդ դատավարության ժամանակ, որը նույնպես տեղի է ունեցել Բաքվում 1927 թ. մարտի 1-6-ին, գնդակահարության է դատապարտվել Շչեգոլյուտինը, որը եղել էր կոմիսարներին տեղափոխող գնացքի մեքենավարը:

ՇԱՀՈՒՄՅԱՆԻ ԵՎ ՄՅՈՒՍ ԿՈՄՈՒՆԱՐՆԵՐԻ ՀԻՇԱՏԱԿԸ ՉԻ ԽԱՄՐՈՒՄ

Շահումյանի և մյուս կոմունարների կերպարը տարիներ շարունակ հատուկ տեղ է ունեցել սովետական նկարիչների ստեղծագործության մեջ: Դրանց մեջ են Վ. Պավլոցկու «Կոմիսարների դուրս բերումը Կրասնովոդսկի բանտային խցից», Ի. Բրոդսկու «Կոմիսարների դուրս հանումը վագոնից» և այլ կտավներ:

Հայտնի է նշանավոր նկարիչ Ի. Բրոդսկու «Բաքվի 26 կոմիսարների գնդակահարումը անգլիական իմպերիալիզմի գործակալների կողմից» մեծ համբավ ձեռք բերած ցնցող կտավը, որը շատ մոտ է պատմական ճշմարտությունը: Կտավը պատկերում է չարանենգ սպանության դժոխային պատկերը:

Հուշակավոր քանդակագործ Ս. Մերկուրովը ստեղծել է Շահումյանի անկրկնելի արձանը, որը դրվել է Երևանի կենտրոնում նրա անվան հրապարակում: Մերկուրովը նաև Բաքվում կառուցված հուշահամալիրում Շահումյանի և մյուս կոմունարների քանդակների հեղինակն է: Մոսկվայի կենտրոնի հրապարակներից մեկը կոչվում է Բաքվի 26 կոմիսարների անվամբ:

ՀԿԿ անդամները Ռուբեն Թովմասյանի գլխավորությամբ բարեկարգում են Ստ. Շահումյանի հուշարձանի շրջակայքը

Հայ գեղանկարչության մեջ Շահումյանի կերպարը կերտել են նշանավոր նկարիչներ Հ. Կոջոյանը, Հ. Ռոխկյանը և ուրիշներ:

Շահումյանին իրենց ստեղծագործություններն են նվիրել մի շարք գրողներ: Նրանց մեջ առաջինը Վահան Տերյանն է, որը «Կանցնեն դարեր...» բանաստեղծության մեջ գրել է.

«Կանցնեն դարեր,
Դարեր երկար ու անթիվ,
Բայց քո անունը ազնիվ
Կմնա հավետ կենդանի:
.....
Քո անունը, որպես ծածանվող դրոշ,
Անունդ կարմիր, հրե ապարոշ,
Կըտանի ամբոխն արբած,
Որպես սրբություն՝ գլխաբա՜ց...» (**Վահան Տերյան**, Երկերի ժողովածու, հ. երկրորդ, 1973, էջ 159):

Վ. Տերյանը Շահումյանին նվիրել է նաև «Գազել խնդության» բանաստեղծությունը.

Սիրտդ, որպես վառ ատրուշան, պահիր վառ,
Սիրտդ հրկեզ, մթնում դաժան, պահիր վառ:

Սիրտդ խանդոտ, հրաբորբոք, պահիր վառ,
Խինդը տենդոտ, սերդ վահան, պահիր վառ:

Զար աշխարհի խավարի դեմ, պահիր վառ,
Որպես դրոշ արնանման, պահիր վառ:

Հեռվում անտուն, եղիր խնդուն, պահիր վառ,
Սիրտդ բորբոք՝ վարդդ վառման, պահիր վառ:

Որպես խարույկ ելնող վկա, պահիր վառ,
Արևի պես սիրտդ վառման, պահիր վառ...

Իսկ նշանավոր բանաստեղծ Հակոբ Հակոբյանը 1920 թ. գրել է «Ստեփան Շահումյանին» բանաստեղծությունը.

Աչքերդ կապույտ եթերի նման
Եվ հոգիդ շուշան,
Սիրտդ խորունկ ծով, ազնիվ, աննման,
Ընկեր Շահումյան:

Զայնդ զանգակի վսեմ մի ղողանջ
Թափանցել գիտեր
Եվ ոգևորել շեշտումն իր աքանչ
Վհատված սրտեր:

Խոսքդ չէ՛ր լոկ խոսք, այլ պատգամ հզոր
Կայծակնող ու վառ,
Թշնամիներդ և մինչև այսօր
Քեզնից դողահար:

Դու հո չմեռար, նորից կյանք առար,
Եվ հաղթ քո մահով
Ծլեց ու աճեց մի նոր գաղափար,
Փռվեց աշխարհով:

Մահդ խթանող ցնցեց շատերին
Մեր կուռ շարքերում,
Օ՜, ե՛լ ու մի տես քո մարտիկներին
Կռվի դաշտերում:

Քայլում են ահա հազար հազարով
Քո ճանապարհով,
Եվ երդվում քո տեղ վրեժդ լուծել՝
Դե՜հ, գնա՜ս բարով...

1928 թ. Եղիշե Չարենցը գրել է «Բալլադ քսանվեցի մասին», որտեղ Շահումյանին ներկայացնում է Կարմիր Կոմանդորի պատկերով: Ահա, մի հատված այդ բալլադից.

Եվ ասում է նա-Կոմանդորը.
-«Տոկացե՛ք, ընկերնե՛ր անգին.
.....
Բացվել է հորիզոնը լուսե,
Պայքարով ակոսել մի կյանք.
Ձեզ համա՛ր գիշերով մի սև
Ավազե դաշտերում մենք ընկանք:
Քանդվեց էինք մենք, քանդվեց,
Բայց անթի՛վ, անթի՛վ է մեր անունը.
Ոչ գնդա՛կը մեզ սպանեց
Եվ ոչ էլ կսպանե հոգնությունը:
Քանի կաք, ընկերնե՛ր, քանի կաք,
Քանի կա աշխատանքն անդուլ-
Մեր երթին-վախճան չկա,
Մեր պայծառ գործին- պարտություն:
Տոկացե՛ք, ընկերնե՛ր, մենք ձեզ հե՛տ ենք,
Տոկացե՛ք, ընկերնե՛ր անգին,
Որ անցնենք այս նեղ արահետը
*Եվ հասնենք ցանկալի կյանքին...» (**Եղիշե Չարենց**, Երկերի ժողովածու, Եր. 1986, էջ 194-195):*

1931 թ. սեպտեմբերի 19-ին Երևանում Շահումյանի արձանի բացման կապակցությամբ նշանավոր գրող Ակազանը գրել է «Արձան Ստեփան Շահումյանին» բանաստեղծությունը, որտեղ կան նաև հետևյալ տողերը

Մի՞թե միայն բազալտե պատվանդանով վեհանիստ,
Մի՞թե միայն քարեղեն խոյանքներով ամրակուռ-
Մենք դնում ենք հատուցման քո արձանը գրանիտ
Եվ ջերմացնում ենք նրան մեր սրտերի կրակով:
.....
Մենք արձան ենք դնում քեզ և՝ Բազալտի և՝ կամքի
Ե՛վ կատուցման գլոհի պատվանդանով անխորտակ,
Մենք կուխմեր ենք մղում- հաղթանակի ու փառքի
Քո արնաներկ դրոշով, անմահ ընկեր Շահումյան:
19.09. 1931 թ.

Ընթերցողի ուշադրությանը ներկայացնեմ նաև մի հատված 1935 թ.

Գուրգեն Մահարու գրած «Բալլադ նվիրված Ստեփան Շահումյանին»-ից հետևյալ հատվածը.

Հեռու, հեռավոր Աղչա-Կույմից
Բերեց քրքիջը բրիտանական
Բորենիների,- խանձող քամին...
Ու կանչը նրա,- «Մենք դեռ կգանք»՝
Ահեղ որոտաց մեր սրտերում,
Տափաստաններում մեր լայնանիստ,
Մեր ոստաններում մոտ ու հեռու,
Կայարաններում անհանգիստ...:

Նշանավոր բանաստեղծ Վահագն Դավթյանը «Կոմունիստները» պոեմում գրել է նաև հետևյալը,

«Լենինյան լույսով հորիզոններն են ծայրեծայր այրվում,
Խավարն են ճեղքում «Ավրորա» նավի ահեղ զարկերը,
Ու Կրոնշտադտում, Պերեկոպի տակ, Ախչա-Կույմում
*Մեռնում են խիզախ կոմունիստները»(**Վահագն Դավթյան**, Գարնան անձրև, Երևան, 1970, էջ 2):*

Շահումյանին նվիրված բանաստեղծություններ են գրել նաև Նայիրի Զարյանը, Վաղարշակ Նորենցը, Սողոմոն Տարոնցին, Գեղամ Սարյանը և ուրիշներ:

Ռուս գրականության մեջ Շահումյանի ու նրա զինակիցների կերպարին անդրադարձել է Եսենինը: Ահա մի հատված նրա «Երգ քանվեցի մասին» բալլադից.

Նրանք էին,
Քանվեց.
26 էին նրանք.
26:
Շերիմները նրանց
Ավազով չծածկվեց:
Ոչ ոք չի մոռանա
Նրանց մահն արնոտ
207-րդ վերստի մոտ:
Գիշերն է թավալում

Լուսնին՝ սեխի պես.
Ալիքներն են ծովի
Փոքում ստին հեզ...
Հենց այսպես մի գիշեր՝
Մշուշ ու դուման,
Նրանց սիրտը խոցեց
Վաչան անգլիական... (ՀՀ ԱԱ, ֆ. 1437, ց. 2, գ. 103):

1978 թ. Շահումյանի ծննդյան 100-ամյակի կապակցությամբ Սովետական Հայաստանի կառավարության ու ՀԿԿ Կենտկոմի որոշմամբ Ստեփանավան քաղաքում կառուցվել է տուն-թանգարան:

Տուն-թանգարանում ցուցադրվում են Շահումյանի կյանքն ու գործունեությունն արտահայտող հարուստ փաստական նյութեր:

Ստ. Շահումյանի հիշատակը վառ են պահում Երևանի Շահումյանի անվան դպրոցի (տնօրեն՝ Կարինե Սաքանյան) ուսուցիչներն ու աշակերտները: 85 տարի Երևանի թիվ 1 դպրոցը կրում է Շահումյանի անունը: Անցած տասնամյակներում բազմաթիվ սերունդներ են դաստիարակվել ու կրթվել այդ դպրոցում: Նրանց մեջ են Հայրենական մեծ պատերազմում տարած հաղթանակի հերոս մասնակիցները, գիտության ու արվեստի բազմաթիվ գործիչները, մանկավարժները, ինժեներները, բժիշկները, արտադրության

Դպրոցի աշակերտները կատարում են Շահումյանին նվիրված երգը

Ս.Շահումյանի դերակատարն է Շահումյանի անվան դպրոցի 8-րդ դասարանի աշակերտ Արամ Առաքելյանը

առաջավորները, որոնք իրենց ներդրումն ունեն Հայաստանի ժողովրդական տնտեսության տարբեր բնագավառների զարգացման գործում:

2013 թ. հոկտեմբերի 18-ին, Շահումյանի անվան դպրոցում նախկին

Մի տեսարան Ս.Շահումյանի ծննդյան 135-ամյակին նվիրված երեկոյի դահլիճից: Առաջին շարքում (աջից ձախ). Կարինե Սաքանյան՝ դպրոցի տնօրեն, Արամ Սադոյան՝ Կենտրոն համայնքի ղեկավար, Լիլիա Վարդգեսյան՝ դպրոցի փոխտնօրեն, Արմեն Սանթրոսյան՝ դպրոցի նախկին շրջանավարտ, ՀՀ ժող. արտիստ

Երեկոյի մի խումբ մասնակիցներ Շահումյանի կիսանդրու առջև: Ձախից աջ՝ Գեղամ Գալստյան, Վազգեն Սաֆարյան, Կարինե Սաքանյան, Վլադիմիր Պետրոսյան, Ռուզաննա Սարուխանյան, Բաբկեն Վարդանյան

մանկավարժների, շրջանավարտների, աշակերտների, ծնողների ու բազմաթիվ հյուրերի մասնակցությամբ հանդիսավորությամբ նշվել է Ստեփան Շահումյանի ծննդյան 135 և դպրոցը նրա անվամբ կոչելու 85-ամյակները:

Ստ. Շահումյանի ու մյուս կոմունարների եղեռնական մահից անցել է 95 տարի: Անպիսական գաղութարարները և նրանց պնակալեզները բազմիցս փորձել են իրենց վրայից գցել կոմունարներին ապանելու պատասխանատվությունը և անամոթ ստի միջոցով ձգտել արատավորել նրանց բարի անունն ու հիշատակը:

Սակայն միևնույնն է, ոչ անպիսական գաղութարարների, ոչ էլ նրանց կամակատար էսէռների, մենշևիկների ու մուսավաթականների, ոչ էլ վերջինիս նորօրյա հետևորդների փորձերը չեն կարող խամրել հայ ժողովրդի արժանավոր զավակ Ստեփան Շահումյանի անունն ու գործը:

ՎԵՐՋԱԲԱՆԻ ՓՈԽԱՐԵՆ

Ստեփան Շահումյանի կյանքի ու գործի պատմությունն ավարտելուց առաջ հարկ եմ համարում երկու խոսքով ընթերցողին ներկայացնել նրա հարազատների ճակատագիրը: Նրա մայրը՝ Ելիզավետա Շահումյանը մինչև իր կյանքի վերջը՝ 1931 թ. մարտ ամսի սկիզբը, հավատացել էր, որ իր որդուն տարել են Հնդկաստան և անհամբերությամբ սպասում էր նրա վերադարձին («Заря Востока», 18. 03. 1931 г.):

Շահումյանի կինն էլ՝ Եկատերինա Սերգեևնան երկար ժամանակ չէր հաշտվում ամուսնու կորստի հետ և հավատում էր, թե ի վերջո կվերադառնա անպիսական գերությունից: Նա մահացել է 1942 թվականին:

Շահումյանի որդիներից Սուրենը, ազատվելով Աշխաբադի բանտից, երկար ու վտանգավոր ճանապարհ անցնելով, հասել է Մոսկվա: Այստեղ նա ընդունվել է ռազմական ակադեմիա, որն ավարտելուց հետո նշանակվել է Օրյոլ քաղաքում գտնվող հետևակային ուսումնարանի պետ:

Երբ այս ուսումնարանը վերակազմվում է որպես տանկային ուսումնարան, Սուրենը նշանակվում է դրա պետ: Հաշվի առնելով Սուրենի ունակությունները, ՍՍՀՄ պաշտպանության ժողովրդական կոմիսարիատը նրան վստահել է սկզբում Բելոռուսիայի, հետո նաև Լենինգրադի ռազմական օկրուգների զրահատանկային զորքերի հրամանատարությունը:

Սակայն Աշխաբադի բանտում անցկացրած ծանր օրերն անհետևանք չեն մնացել: Կարմիր բանակի բրիգադի հրամանատարի աստիճան ստացած Սուրենը երկարատև հիվանդությունից հետո, մահացել է 1936 թվականին:

Շահումյանի մյուս որդին՝ Լևոնը նույնպես հայտնվել էր Անդրկովկասյան բանտերում: Աշխաբադի բանտում նրա ոտքի վերքը բարդացել է և սկսվել է գանգրենա: Տեղի հայ բժիշկներից Պետրոսյանը բանտի հիվանդանոցում վիրահատել է և դրանով կանխվել է գանգրենայի խորացումը:

1930 թ. Լևոնի հիվանդությունը սրվել է և դրա հետևանքով նրա հիվանդ ոտքն անդամահատվել է: Երկար տարիներ Լևոնը զբաղվել է ժուռնալիստիկայով, խմբագրել է մի շարք թերթեր Բաքվում, Մոսկվայում, Լենինգրադում, Ռոստովում և այլն: Տարիներ շարունակ տարել է կուսակցական ղեկավար աշխատանք: Նա երկու տասնամյակից ավելի եղել է «Սովետական մեծ հանրագիտարանի» գլխավոր խմբագրի տեղակալը:

Լևոն Շահումյանը մահացել է 1971 թ. մայիս ամսին, հետաքրքրությամբ Բաքվի 26 կոմիսարներին նվիրված հաղորդումը տեսագրելու ժամանակ:

Ստեփան Շահումյանի կյանքը, նրա գործն ու ճակատագիրը մշտապես

հուզում են հայ մարդուն: Նրա մասին ստեղծվել է մեծաքանակ գրականություն: Եվ թվում է, որ նրա մասին ասվել է ամեն ինչ: Ամեն ինչ հայտնի է և նոր բան ասելու ոչինչ չի մնացել:

Բայց անաչառ ընթերցողը, ծանոթանալով իր ուշադրությանը հանձնված իմ աշխատությանը, կհամոզվի, որ այդպես չէ: Այս առումով արժե հիշել ռուս հեղափոխական դեմոկրատ Վ. Բելինսկու հետևյալ զգուշացումը. «Կյանքը խորն է, անսպառ և բազմակողմանի անսահման: Որքան էլ այն արտացոլեք, միշտ լուսաբանելու բան կմնա: Որքան էլ որ ջանք թափեք, միևնույն է, կգրեք այդ կյանքի մի քանի էջ և երբեք չեք գրի նրա ամբողջական գիրքը» (В. Белинский, Полное собрание сочинения, том 8, М. 1955, стр. 123):

Բելինսկու զգուշացումը վերաբերում է նաև Շահումյանին: Իսկապես, Շահումյանի մասին ամեն ինչ ասված չէ: Եվ միշտ նրա մասին ասելու բան մնում է, մանավանդ մեր օրերում, երբ Շահումյանի գաղափարական հակառակորդները մինչև օրս հանգիստ չեն մնում, և պատեհ ափթի դեպքում հաճույքով զբաղվում են նրան վարկաբեկելու, անվանարկելու անշնորհակալ գործով, նրա լուսապայծառ կյանքն ու գործը ներկայացնում կեղծելով ու խեղաթյուրելով:

Ես փորձել եմ այս աշխատությամբ ցույց տալ, թե ինչու են նրա գաղափարական հակառակորդներն այդպես շովինիստական անողոքությամբ հարձակվում Շահումյանի վրա, թե մեր հարևան երկրներում և, թե նաև Հայաստանում:

Սույն աշխատության մեջ ես Շահումյանին պատկերել եմ իր ամբողջ էությամբ, և որքան հաջողվել է նրան ներկայացրել իր հայացքներով, որպես ազնիվ հեղափոխական գործիչ, մտածող, փիլիսոփա, պետական գործիչ և հատկապես որպես ազգային գործիչ, իր ժողովրդի հոգերով մտահոգված, նրա ապագայի մասին անհանգստացող անհատականություն:

Ստեփան Շահումյանը զոհվել է իր կյանքի ամենից վառ տարիքում, 40 տարին չբոլորած: Շահումյանն ապրել է 14.783 օր կամ 354.792 ժամ: Եվ երբ նրա ապրած տարիները վերածում ենք օրերի ու ժամերի, ակնհայտ է դառնում, թե ինչքան կարևոր է իմանալ նրա ապրած կյանքի յուրաքանչյուր օրվա մասին:

Այս առումով էլ, սույն աշխատությամբ ձգտել եմ Շահումյանի կյանքի պատմությունը լրացնել թեկուզ մեկ էջով ու նոր հայացք ձգել նրա կյանքի ու ճակատագրի վրա:

Պատմությունից հայտնի են շատ ու շատ տաղանդավոր ու հանճարեղ գործիչներ, որոնց կյանքի ուղին ծննդից մինչև վերջ, շատ կարճ է եղել: Նրանց շարքում է նաև Շահումյանը:

Շահումյանը չի ընտրել տրորված ճանապարհ: Նա ի տարբերություն իր շատ ժամանակակիցների, չի կրկնել ուրիշներին: Եվ կարծես թե Գյոթեի հետևյալ դիտողությունը վերաբերում է Շահումյանի կյանքին ու գործին. «Ինձ ավելի սիրելի է իր սեփական ճանապարհին մոլորվող ու որոնող պատանին, քան այն մարդիկ, որոնք վստահ գնում են ուրիշի ճանապարհով» (Гете И. В. Философский сборник, стр. 115):

Հանրահայտ արտահայտություն է. «Նա ընկավ մարտական դիրքում»: Շահումյանն էլ ընկավ մարտական դիրքում, չդավաճանելով իր ժողովրդին, հավատարիմ մնալով իր պատվին ու անվանը:

Այսօր, մեր օրերում, երբ Շահումյանի գաղափարական հակառակորդները, թե Հայաստանում և թե հարևան երկրներում ամեն միջոցի դիմում են անվանարկելու հայ ժողովրդի արժանավոր զավակ Ստեփան Շահումյանի անունն ու հիշատակը, թող իմ այս աշխատությունն էլ ծառայի որպես նրա կյանքի պատմությունը նոր սերունդներին օբյեկտիվորեն ներկայացնելու միջոցներից մեկը:

Թե որքանով է դա ինձ հաջողվել, թողնում եմ անաչառ ընթերցողի դատին:

ՎԵՐՋ

ԱՆՁՆԱՆՈՒՆՆԵՐԻ ԲԱՌԱՐԱՆ

Ա

Աբաշիձե Կ., սոցիալ-ֆեդերալիստ, ՕԶԱ-ԿՈՄ-ի անդամ - *2. 23*
Ա. Բոգդանովիչ, Ստ. Շահումյանի ծածկանուններից - *1. 362*
Աբրահամյան Ալեքսանդր, սոցիալ-դեմոկրատ, Նոր-Բայազետի ուսուցիչ - *1. 209*
Աբդուլ Համիդ Երկրորդ (1842-1918), թուրքական սուլթան 1876-1909 թթ. - *1. 276, 277, 286*
Աբդուլ Քերիմ բեյ, Թիֆլիսում օսմանյան կառավարության ներկայացուցիչ - *2. 421*
Աբխազավա, վրացի մենշևիկ - *1. 532*
Աբովյան Խաչատուր (1805-1848), հայ մեծ լուսավորիչ - *1. 32, 62*
Ադելյան (Դանիելյան) Ազարյա (1871-1903), Ստ. Շահումյանի դասընկերներից, հետագայում հայտնի գյուղագիր - *1. 64, 69, 70*
Ադոյան Ադա, հասարակական, քաղաքական գործիչ, «Լենինյան ուղիով» ամսագրի խմբագիր - *2. 204*
Ադոնց (Տեր-Ավետիքյան) Նիկողայոս (1871-1942), հայ նշանավոր պատմաբան - *2. 104, 105*
Ազատյան Տիգրան, Բաքվի բոլշևիկյան կազմակերպության անդամ - *1. 260*
Ազիզբեկով Մեշադի (1876-1918), Բաքվի սովետի նախագահ, գնդակահարվել է Բաքվի 26 կոմիսարների հետ միասին - *1. 379, 466; 2. 167, 194, 227, 269, 478, 492, 525, 531, 538*
Ազիզբեկովա Մ., Ազիզբեկովի դուստրը, պատմաբան - *1. 13*
Աթաբեկյան Լևոն (1875-1918), ձախ էսէռ, բժիշկ, բանաստեղծ, հասարակական-քաղաքական գործիչ - *1. 478; 2. 193, 506, 507*
Աթաբեկյանց Հռիփսի (1870-1916), սոցիալ-դեմոկրատ, թարգմանիչ - *1. 107, 161, 432*
Աթաբեկով Ն., Ստ. Շահումյանի ուսանողական ընկերներից - *1. 70*
Ալազան (Գաբուզյան) Վահրամ (1903-1966), հայ գրող - *1. 19; 2. 542*
Ալանիա, աջ էսէռ, Կրասնովոդսկի գործադուլային կոմիտայի անդամ, Բաքվի 26 կոմիսարների սպանության կազմակերպիչներից - *2. 524*
Ալբեր Թոմա, ֆրանսիացի սոցիալիստ նախարար - *2. 45*
Ալեքսանդր Երկրորդ (1818-1881), Ռուսաստանի ցար - *1. 223*
Ալեքսանդր Երրորդ (1845-1894), Ռուսաստանի ցար - *1. 223*
Ալեքսեև Մ. (1857-1918), ցարական բանակի գեներալ, Ռուսաստանի Գերագույն գլխավոր հրամանատարության շտաբի պետ - *1. 461; 2. 19*
Ալիբեկյան, կադետ - *1. 210*
Ալիոև Սերգեյ (1866-1945), հեղափոխական գործիչ - *1. 136*
Ալիխանյան Իսահակ (1876-1946), հայ բեմի վարպետ - *1. 54*
Ալչուջյան Արամ, Բաքվի դաշնակցության ղեկավարներից - *2. 506, 509, 511- 516*
Ալտաֆատեր Վ., Սովետական Ռուսաստանի ծովային ժողկոմատի աշխատակից - *2. 364*
Ամմենտելին, վրացական կորպուսի հրամանատար - *2. 211*
Անարոնյան Ավետիս (1866-1948), հայ գրող, դաշնակցություն կուսակցության ղեկավարներից - *1. 187, 365, 481; 2. 56, 62, 114, 119, 212, 278, 296, 301, 305, 315, 318, 331-334, 341, 343, 346, 348, 350, 353, 356, 379, 388, 389, 410, 411, 424, 491, 504*
Անարոնյան Գեորգ (1916-1981), գրող, Սփյուռքի նշանավոր հասարակական-ազգային գործիչ - *2. 410*
Անմեդ Ռիզա, երիտթուրքական գործիչ - *1. 278, 286; 2. 326, 339*
Աղամալյան Տիգրան, դաշնակցական, Էրզրումի մարզի կոմիսար - *2. 114-116*
Աղամիրով Սուրեն, Բաքվի երիտասարդական կազմակերպության անդամ - *1. 474; 2. 525, 526*
Աղայան Ծատուր (1912-1982), հասարակական-քաղաքական գործիչ, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր - *1. 12; 2. 409, 420*
Աղայան Ղազարոս (1840-1911), հայ գրող, մանկավարժ - *1. 40, 80, 82-86, 88-92*
Աղբալյան Նիկոլ (1873-1947), հայ գրականագետ, մանկավարժ, դաշնակցական գործիչ - *1. 478; 2. 315, 318*
Անմառյան Հրաչյա (1876-1953), հայ նշանավոր բանաստեղծ, լեզվաբան - *2. 414, 415, 517, 518*

Ամեմյան, դաշնակցական, Պետական դումայի անդամ - *2. 22*
Ամիրյան Արսեն (1878-1918), հեղափոխական գործիչ, "ԸՈՍԱՌՎՈՍՈՌ ԲՈՈՏՎԵՈՌ" թերթի խմբագիր, գնդակահարվել է Բաքվի 26 կոմիսարների հետ միասին - *1. 72; 2. 531*
Ամիրյան Գրիգոր, Բաքվում դաշնակցական գործիչ - *2. 513, 515, 518*
Ամիրյան (Ամիրով) Թադևոս, ձախ դաշնակցական, գնդակահարվել է Բաքվի 26 կոմիսարների հետ միասին - *2. 182, 206, 456, 457, 461, 496, 523- 526, 532*
Ամիրյան Իսահակ, հայ ժողովրդական կուսակցության անդամ - *1. 477*
Ամիրյան Մարիա, Թադևոս Ամիրյանի կինը - *2. 526*
Այաքս, Ստ. Շահումյանի ծածկանուններից - *1. 361*
Աղալը, Բաքվի մենշևիկների ղեկավարներից - *2. 171, 260, 269, 372, 432, 454, 493, 496*
Անանյան Միշա, Ստ. Շահումյանի դասընկերներից - *1. 54*
Անանուն Դավիթ (1879-1943), հրապարակախոս, «Սոցիալ-դեմոկրատական բանվորական հայ կազմակերպության» («ապեցիֆիկների») ղեկավարներից - *1. 320, 322, 323-325, 328-342, 362, 395-397, 477*
Անաշկին Ի., Բաքվի ընդհատակյա աշխատող - *2. 477*
Անդրեաս, Սիմոն Տետեյանի դասընկերը - *1. 4*
Անիսիմով Ն. Ա. (1892-1920), Կովկասյան ռազմածակատի ռազմահեղափոխական կոմիտեի անդամ - *2. 464*
Անուշ Արմեն, Բեյրութի Հայկազյան վարժարանի տնօրեն - *1. 6*
Աշուրով, մուսավաթական գործիչ - *1. 455, 519*
Առաքելյան Համբարձում (1855-1917), «Մշակ» թերթի խմբագիր - *1. 209, 212, 213*
Առաքելյան Ա., դաշնակցական, Ցենտրոկասպիայի դիկտատուրայի կառավարության ներքին գործերի մինիստր - *2. 454, 458, 493*
Առուստամյան Հ., Աշխաբադի հնչակյան ջոկատի հրամանատար - *2. 221*
Ատրյան Ա., Ստ. Շահումյանի ուսանողական ընկերներից - *1. 70*
Ատրիբեկյան Ա., Հայ ժողովրդական կուսակցության անդամ - *1. 481*
Ավագյան Սրբուհի, Սիմոն Տետեյանի մայրը - *1. 4*
Ավագյան Թադևոսար (1883-1918), Բաքվի սովետի գործկոմի քարտուղար, Բաքու քաղաքի պարեհ, գնդակահարվել է Բաքվի 26 կոմիսարների հետ միասին - *2. 194, 527, 531*
Ավանեսյան (Ավանեսով) Վասիլ (1884-1930), սովետական պետական, կուսակցական գործիչ - *2. 346, 488- 491, 532*
Ավետիսյան Հրանտ (ծնվ. 1927), ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս - *2. 25*
Ավետիսյան Վարդան (1911-1975), հասարակական-քաղաքական գործիչ, պատմաբան - *1. 11, 406, 413*
Ավետիսով (Ավետիսյան), գնդապետ, հայկական գնդի շտաբի պետ - *2. 379, 400, 446, 449-451, 496, 505, 516*
Ավերյանով Պյոտր, Թուրքահայաստանի գլխավոր կոմիսար - *2. 26*
Ավոյան Կարապետ (Մորուք Կարո), հայտնի ֆիդայի - *2. 535, 536*
Արազի (Մովսես Մելիքի Հարությունյան) (1878-1864), հայ գրող - *1. 39, 45*
Արամ Վրույր (1863-1924), դերասան, լուսանկարիչ - *1. 54*
Արասխանյանց Ավետիք (1857-1912), նշանավոր տնտեսագետ, 1889-1900 թթ. եղել է «Մուրճ» ամսագրի խմբագիրը - *1. 73, 91*
Արարատյան Սարգիս, դաշնակցական, Բաքվի հայոց ազգային խորհրդի անդամ - *2. 399, 470, 514*
Արաքսյա, հայկական գնդի գթության քույր - *2. 379*
Արեշյան (Արեշով), գեներալ - *2. 136, 147, 209, 279*
Արզումանյան Մակիչ (1919-1988), պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր - *1. 12, 106, 107, 114, 131, 376, 379*
Արզումանյան Միշա (Միքայել), Կարսի ամրոցի պարեհ - *2. 138, 262, 305, 387-392*
Արիստոտել (մ.թ.ա. 384-322), հույն փիլիսոփա և գիտնական - *1. 93*
Արծրունի Գրիգոր (1845-1892), «Մշակ» թերթի հիմնադիր-խմբագիր - *1. 37, 38, 87, 333, 364*
Արկերյան Արշակ, Բաքվի բանվոր, բոլշևիկ - *1. 208, 212-214*
Արմենակ Պյոտր (1886-1919), Ալեքսանդրապոլի բոլշևիկյան կազմակերպության ղեկավարներից, մասնակցել է Բաքվի կոմունայի ստեղծմանը - *1. 472*

Բ

Բաբայան Ա., Հայաստանի խորհրդարանի անդամ - *2. 335*
Բաբախանյան Ա., փիլիսոփայական գիտությունների թեկնածու - *1. 11*
Բաբայան Երվանդ, Հալեպի Կիլիկյան վարժարանի տնօրեն - *1. 6*
Բաբայանց, 3-րդ վաշտի հրամանատարի օգնական - *2. 439*
Բաբան Ջաֆար (1899-1961), Բաքվի երիտասարդական կազմակերպության անդամ - *1. 474*
Բագեշոտ, ազգային հարցի վերաբերյալ գերմանացի տեսաբան - *1. 165, 166, 168*
Բագրատ Եպիսկոպոս, Բաքվի հայոց թեմի առաջնորդ - *2. 497-499*
Բագրատունի Հակոբ, գեներալ, ռուսական բանակի գլխավոր շտաբի բարձրաստիճան սպա - *2. 399, 440, 463, 464, 484, 493, 506*
Բադան Ա., բոլշևիկ. Պետական դումայի անդամ - *1. 376, 377*
Բալայան Գերասիմ, Բաքվի դաշնակցության գործիչ - *2. 509, 514*
Բահաէտդին Շաքիր, Երիտթուրքական գործիչ - *2. 332, 337*
Բաղդասարյան Գ., պատմաբան - *1. 11*
Բաղրամյան Հովհաննես (1897-1982), Սովետական Միության մարշալ - *2. 279*
Բամմատով, լեռնական իշխան - *1. 510; 2. 297*
Բայկով Բորիս, երդվյալ հավատարմատար -*1. 151, 152*
Բայրոն (1788-1824), անգլիացի բանաստեղծ -*1. 39, 45*
Բասին Մեր, ձախ էսէռ, Բաքվի սովետի անդամ, ռազմա-հեղափոխական կոմիտեի անդամ, գնդակահարվել է Բաքվի 26 կոմիսարների հետ միասին - *1. 490; 2. 492, 531*
Բատիրև, Բաքվի բոլշևիկյան կոմիտեի անդամ - *1. 230*
Բատտին, անգլիացի գնդապետ - *2. 524*
Բարանով Ալեքսանդր, Բաքվի Ժողկոմսովետի աշխատակից - *2. 520, 522*
Բարխաշև Բ., Բաքվի երիտասարդական կազմակերպության անդամ - *1. 474*
Բարսեղյան Խիկար (ծնվ. 1918), հասարակական-քաղաքական գործիչ, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր - *1. 12, 105, 107, 138, 164, 241, 244, 298, 299, 352, 357, 378*
Բարսեղով Յուրի, պատմաբան - *2. 63, 64*
Բարտոլդ Վասիլի (1869-1930), նշանավոր արևելագետ - *2. 357*
Բարունակյան Կ., դաշնակցական, Բաքվի ազգային խորհրդի անդամ - *2. 507*
Բաուեր Օտտո (1882-1938), ավստրիական սոցիալ-դեմոկրատիայի ղեկավարներից - *1. 306*
Բեբել Ավգուստ (1840-1913), գերմանական սոցիալ-դեմոկրատիայի և 2-րդ ինտերնացիոնալի ականավոր գործիչ - *1. 101, 102, 269*
Բելեցկի, ոստիկանական դեպարտամենտի պետ - *1. 391*
Բելինսկի Վիսարիոն (1811-1848), ռուս հեղափոխական դեմոկրատ - *1. 32, 38, 86, 323; 2. 548*
Բեկ-Փիրումյան Դանիել, Սարդարապատի հերոսամարտի կազմակերպիչներից - *2. 313*
Բեհբութով Ռաշիդ, ադրբեջանցի երգիչ - *1. 15*
Բենկենդորֆ, Ռուսաստանի դեսպանը Լոնդոնում - *2. 18*
Բեռնշտայն Էդուարդ (1865-1959), գերմանական սոցիալ-դեմոկրատ, օպորտունիզմի գաղափարախոս - *1. 269*
Բերգ Էյժեն, Կովկասյան բանակի կապի պետ, գնդակահարվել է Բաքվի 26 կոմիսարների հետ միասին - *2. 531*
Բերեստորֆ, Գերմանիայի դեսպանը Կ. Պոլսում - *2. 331, 336*
Թժկյանց Հայկ (Գայ) (1887-1938), քաղաքացիական կռիվների լեգենդար հերոս - *2. 222*
Թիչերսխով Լ., ցարական բանակի գնդապետ - *2. 263, 265, 381, 382, 400, 401, 446, 447, 451, 458, 462, 467, 476, 502, 513, 527*
Թիմմարկ Օտտո (1815-1898), գերմանական կանցլեր - *1. 535*
Թիցենկո Ա., ձախ էսէռ - *2. 67*
Թյուքենեն Ջ. (1854-1924), Անգլիայի դեսպանը Ժամանակավոր կառավարության մոտ - *1. 448*
Թոգդանով Անատոլի, Բաքվի սովետի անդամ, բոլշևիկ, գնդակահարվել է Բաքվի 26 կոմիսարների հետ միասին - *2. 531*
Թոգդանով Սուլտան, Կովկասյան բանակի ռազմա-հեղափոխական կոմիտեի անդամ, բոլշևիկ, գնդակահարվել է Բաքվի 26 կոմիսարների հետ միասին - *2. 531*

Թոլխովիտինով, ցարական բանակի գեներալ - *2. 25*
Թոկով Ի., Բաքվի բանվոր, բոլշևիկ - *1. 208, 210*
Թոնապարտյան, արևմտահայ գործիչ, բժիշկ - *2. 213*
Թորիսով, Բաքվի նավթահանքի ինժեներ - *1. 239, 240, 241*
Թորյան Արմենակ, կուսակցական պրոպագանդիստ, գնդակահարվել է Բաքվի 26 կոմիսարների հետ միասին - *2. 531*
Թրուսով Վալերի (1873-1924), ռուս անվանի բանաստեղծ, 1916 թ. Թիֆլիսում, Բաքվում, Երևանում կարդացել է դասախոսություններ հայ գրականության մասին, հայ ժողովրդի բարեկամ - *1. 394*
Թրոդսկի Իսահակ (1883-1939), գեղանկարիչ -*2. 539*
Թուրնով Անդրեյ, «ձախ կոմունիստ», սովետական պետական և կուսակցական գործիչ -*2. 68*
Թուխարին Նիկոլայ (1888-1938), «ձախ կոմունիստ», սովետական պետական և կուսակցական գործիչ - *2. 67, 68, 69*
Թունիաթով Զիա, ադրբեջանցի պատմաբան - *1. 17*
Թուրցև Վ. Լ., էսէռական կուսակցության ղեկավարներից - *1. 413, 453*

Գ

Գաբիանի, վրացի հեղափոխական գործիչ - *1. 111*
Գաբիշև Իվան, բրիգադի կոմիսար, գնդակահարվել է Բաքվի 26 կոմիսարների հետ միասին - *2. 532*
Գալոյան Գալուստ (1927-2003), հասարակական-քաղաքական գործիչ, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս - *1. 12*
Գանին, Տրապիզոնի բանակցությունների մասնակից, մուսավաթական - *2. 122*
Գալստյան Գեղամ, հասարակական-քաղաքական գործիչ - *1. 18*
Գալուստյան (Կոլոստով) Դավիթ, Ուրալյան ռազմաճակատի կոմիսար - *2. 220-222, 482*
Գասպարյան Ն., պատմաբան - *1. 11*
Գեբելս Իոզեֆ, ֆաշիզմի գաղափարախոս - *1. 17*
Գեգեչկորի Ե., մենշևիկ, Անդրկովկասյան կոմիսարիատի նախագահ - *1. 497, 500, 505, 508, 516-518, 525, 534, 536, 539; 2. 55, 97, 100, 125, 129,134, 159, 215, 290, 427*
Գեդ Ժյուլ (1845-1922), ֆրանսիական սոցիալիստական շարժման և 2-րդ ինտերնացիոնալի կազմակերպիչներից ու ղեկավարներից մեկը - *1. 269*
Գերցեն Ալեքսանդր (1812-1870), ռուս հեղափոխական-դեմոկրատ - *1. 32*
Գինդես, Բաքվում ռուս ազգային խորհրդի անդամ - *2. 498*
Գինտցե, Բեռլինի համալսարանի պրոֆեսոր - *1. 112*
Գյոթե Յոհան Վոլֆգանգ (1749-1832), գերմանացի բանաստեղծ - *1. 32, 39; 2. 549*
Գյուլխանդանյան Աբրահամ, Բաքվի հայոց ազգային խորհրդի նախագահ, դաշնակցական - *1. 18; 2. 192, 203, 367, 375, 376, 395, 400, 440, 447, 470, 472, 473, 474, 475, 496, 503, 504, 507, 514*
Գոգոլ Նիկոլայ (1809-1852), ռուս գրող - *1. 38*
Գոդունով Բորիս (1809-1852), ռուսական ցար - *1. 33*
Գոլիցին Գրիգորի (1838-1907), Կովկասի կառավարչապետ 1896-1904թթ. - *1. 82*
Գորկի Մաքսիմ (1868-1936), ռուս գրող - *1. 33, 46, 63, 108, 109, 253- 255, 398, 452, 453*
Գոլոշչապով, Շուշիի և Զանգեզուրի գեներալ-նահանգապետ - *1. 184*
Գվազավա, մենշևիկ, Տրապիզոնի բանակցությունների մասնակից - *2. 123*
Գրենբերգ, Ռիգայի պոլիտեխնիկական ինստիտուտի տնօրեն - *1. 77*
Գրիգորյան Զավեն (ծնվ. 1910), հասարակական-քաղաքական գործիչ, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր - *1. 12*
Գուլաձե Յա., Թիֆլիսի 4-րդ գիմնազիայի տնօրեն - *1. 238*
Գուսյատնիկով Պ., գրքի հեղինակ - *1. 77*

Դ

Դանիելյան Նիկոլայ, Ստ. Շահումյանի դասընկերներից - *1. 54*
Դալլաքյան Ալոնդ, պատմական գիտությունների դոկտոր - *1. 12*
Դաշտոյան Ռուբեն (1879-1937), Ստ. Շահումյանի դասընկերներից, Սովետական Հայաստանի կուսակցական և պետական գործիչ - *1. 45, 54, 79, 95, 266*

Դավթյան Վահագն (1922-1996), հայ բանաստեղծ - *2. 543*
Դարբինյան Ռուբեն, դաշնակցության տեսաբան - *1. 278-284; 2. 323, 506*
Դարվին Չարլզ (1809-1882), անգլիացի բնագետ, էվոլյուցիոն տեսության հիմնադիր - *1. 38*
Դեմիրել, Թուրքիայի նախկին նախագահ - *2. 11*
Դեմիրճյան Դերենիկ (1877-1956), հայ նշանավոր գրող, ՀՀ ԳԱ ակադեմիկոս - *1. 395*
Դեմիրճյան Կարեն (1832-1999), Հայաստանի կոմկուսի Կենտկոմի առաջին քարտուղար - *2. 422*
Դենիկին Անտոն (1872-1947), ցարական բանակի գեներալ, Երկրորդ համաշխարհային պատերազմի ժամանակ հրաժարվել է համագործակցել հիտլերականների հետ - *2. 61*
Դենստերվիլ, Պարսկաստանում անգլիական զինվորական ջոկատի հրամանատար, գեներալ - *2. 203, 399, 455, 462, 463, 464, 479, 494*
Դեհ, գեներալ - *2. 139*
Դիբենկո Պավել (1889-1938), Սովետական Ռուսաստանի ծովային գործերի ժողկոմ - *2. 165*
Դյումա Ալեքսանդր-հայր (1802-1870), ֆրանսիացի գրող - *1. 297*
Դոբրոլյուբով Նիկոլայ (1836-1861), ռուս հեղափոխական-դեմոկրատ - *1. 32, 38, 86, 314, 453*
Դոլուխանյան Աբրահամ, գնդապետ, Բաշ-Ապարանի հաղթանակի կազմակերպիչ - *2. 274, 282-284*
Դոնսկոյ, աջ էսէռ, Կովկասյան բանակում Ժամանակավոր կառավարության կոմիսար - *1. 505, 507, 511*
Դուբինսկի-Մուխադե Իլյա, Ստ. Շահումյանի մասին գրքի հեղինակ - *1. 11, 38, 40, 71, 79, 100, 110, 137, 216, 239, 244*
Դումբաձե, հայ-վրացական միացյալ գնդի հրամանատար - *2. 173*
Դուրյան (Զըմպարյան) Պետրոս (1851-1872), հայ բանաստեղծ - *1. 5*
Դուռնովո, ցարական Ռուսաստանի ՆԳ նախարար - *1. 144*

Ե

Եզյան (Եզով) Կարապետ (1835-1905), բանաստեղծ, պատմաբան, Ռուսաստանի ներքին գործերի և լուսավորության նախարարություններում բարձրաստիճան պաշտոնյա - *1. 60*
Եկմալյան Մակար (1856-1905), հայ կոմպոզիտոր, մանկավարժ - *1. 53*
Եղիազարյան Գ., Ստ. Շահումյանի դասընկերներից - *1. 69*
Եղիազարյան Ե., Աշխաբադում կազմակերպված հնչակյան ջոկատի հրամանատար - *2. 221*
Եղիշե (5- րդ դար), հայ պատմիչ - *1. 362*
Եմելիկիձե Ավել (Աբել) (1877-1937), Բաքվի բոլշևիկյան կազմակերպության անդամ, սովետական պետական և կուսակցական գործիչ - *1. 252, 260, 298, 303, 305, 381*
Եմելիկիձե Եպիֆան - *1. 298*
Եսայան (Հովհաննիսյան) Զապել (1878-1943), հայ գրող, թարգմանիչ - *2. 399, 506*
Եսենին Սերգեյ (1895-1925), ռուս բանաստեղծ - *2. 543*
Եվանգուլյան, աջ էսէռ - *2. 401, 497*
Երզնկյան Արամայիս (1879-1938), հեղափոխական, սովետական պետական և կուսակցական նշանավոր գործիչ - *1. 38, 79, 95, 110, 111, 206*
Երիցյան Ալեքսանդր (1841-1902), հայ պատմաբան, հնագետ - *1. 29, 32, 35, 46, 60*
Երիցյան Գարեգին (1879-1966), նկարիչ, դրամատուրգ, Ստ. Շահումյանի դասընկերներից - *1. 29, 30, 41, 46, 48, 49, 53- 55, 60*
Եփրեմիձե, վրացի հեղափոխական գործիչ - *1. 111*
Եֆիմով Վ. (Սարատովեց), Բաքվի բոլշևիկյան կոմիտեի անդամ - *1. 228, 230*

Զ

Զալինյան, գնդապետ, պարտիզանական գնդի հրամանատար - *2. 275, 282*
Զայցև, ոստիկանության քննիչ - *1. 239*
Զառաֆյան Լևոն, Բաքվի դաշնակցության ղեկավարներից - *2. 225, 226, 259, 260, 270, 371*
Զավարյան Սիմոն (1866-1913), դաշնակցության հիմնադիրներից - *1. 37, 38, 201, 209-213, 214, 215, 333; 2. 314*
Զավրիև (Զավարյան) Հակոբ (1866-1920), դաշնակցական, բժիշկ, Թուրքահայաստանի նահանգապետի օգնական, ՕԶԱԿՈՄ-ի անդամ - *2. 23-27, 114, 116, 336, 345, 488-492*
Զավրյան Հովհաննես, հայոց ազգային խորհրդի լիազոր - *2. 104, 105*
Զարյան (Եղիազարյան Հայաստան) Նայիրի (1900-1969), հայ բանաստեղծ, արձակագիր, դրամատուրգ - *2. 543*
Զեմլյակ, պարտիզանական ջոկատի հրամանատար - *2. 282, 284*
Զիաթխանով, Պետական դումայի անդամ - *1. 182, 183*
Զիմմեր, Բեռլինի համալսարանի պրոֆեսոր - *1. 112, 129*
Զիմնիկով, աջ էսէռ, Ցենտրոկասպիայի դիկտատուրայի կառավարության մինիստր - *2. 493*
Զինովև Ալեքսանդր, ռուս փիլիսոփա - *1. 22, 25*
Զինովև Լ., (1883-1936), սովետական պետական և կուսակցական գործիչ - *1. 308*
Զոլա Էմիլ (1840-1902), ֆրանսիացի գրող - *1. 68*
Զոլոտարյով, Բորչալուի զինվորական հրամանատար - *1. 199*
Զոմբերգ Վեռներ (1863-1941), գերմանացի տնտեսագետ - *1. 267, 297*
Զորյան Ստեփան (1889-1967), հայ գրող -*2. 280*
Զվենարյով, Կովկասյան բանակի երկրային կենտրոնի ներկայացուցիչ - *1. 510*
Զուրաբյան (Զուրաբով, Զոհրաբյան) Արշակ (1873-1920), սոցիալ-դեմոկրատ, Պետական 2-րդ դումայի պատգամավոր, 1917 թ. ընտրվել է Պետրոգրադի սովետի գործկոմի անդամ - *1. 79, 95, 106, 113, 201; 2. 293, 334, 335, 347, 350*
Զևին Պավել (Յակով) (1884-1918), Բաքվի բոլշևիկյան կազմակերպության անդամ, ժողկոմսովետի աշխատանքի կոմիսար, գնդակահարվել է Բաքվի 26 կոմիսարների հետ միասին - *1. 388, 391; 2. 382, 492, 510, 525, 529, 531, 538*

Է

Էլիավա Ն. (1885-1937), սոցիալ-դեմոկրատ - *1. 137, 257*
Էլիովիչ, Աստրախանի ռազմական խորհրդի անդամ - *2. 449, 475*
Էնգելս Ֆրիդրիխ (1820-1895), գիտական կոմունիզմի հիմնադիրներից - *1. 66, 107, 108, 111, 115, 120, 129, 130, 159-164, 269, 308, 315, 324, 335, 336, 399, 432; 2. 416*
Էնվեր փաշա (1881-1922), երիտթուրքական կուսակցության ղեկավարներից, Թուրքիայի ռազմական մինիստր - *2. 35, 222, 258, 269, 270, 298, 301, 330-336, 340-347, 356, 358, 380, 405-408, 499, 501, 553*
Էսադ փաշա, թուրքական 3-րդ դիվիզիայի հրամանատար - *2. 273, 281, 284, 333, 389, 390, 409*
Էֆենդիև Սուլթանբեկ (1887-1938), Բաքվի սովետի անդամ, «Հումմեթ» կազմակերպության հիմնադիրներից - *1. 490*

Թ

Թադևոսյան Հակոբ, Ստ. Շահումյանի դասընկերներից - *1. 54*
Թալեաթ փաշա Մեհմեդ (1874-1921), երիտթուրքական կուսակցության պարագլուխ, Օսմանյան կայսրության ներքին գործերի մինիստր և պրեմիեր-մինիստր - *2. 35, 92, 93, 326, 330, 336, 338, 339, 349, 350, 356, 504*
Թամամյան Նուպար, Մելբոնյան վարժարանի գրականության ուսուցիչ - *1. 7*
Թամամշև Ն., բոլշևիկներին համակրող տպարանատեր - *1. 137*
Թաղիև, կալվածատեր, մուսավաթական կուսակցության ղեկավարներից - *1. 528; 2. 151, 153, 207*
Թարգուլյան Հ., Ստ. Շահումյանի ուսանողական ընկերներից - *1. 70*
Թոթովենց Վահան (1894-1937), հայ գրող, հրապարակախոս - *2. 114, 116, 119, 136, 210*
Թոմսոն, գեներալ, անգլիական զորքերի հրամանատար - *2. 420, 424, 490, 497, 499*
Թոռլաքյան Միսակ (1889-1968), հայ վրիժառու - *2. 164*
Թորգոմ, գնդապետ - *2. 115*
Թորոսյան, դաշնակցական, Էրզրումի կո-

միսարի օգնական - *2. 112*
Թուփչիբաշև Ալի, մուսավաթական կուսակցության հիմնադիրներից - *1. 519, 532; 2. 24. 114-116. 163. 166, 182, 501*
Թուփչյան Եղիշե, դաշնակցական գործիչ - *1. 165. 180, 187. 188. 293. 297*
Թուփուրիձե, Բաքվի քաղաքապետարանի բժիշկ - *1. 392*
Թումասյան Բարունակ, Բեյրութի ՀԲԸՄ-ի պատասխանատու - *1. 4*
Թումանյան Անուշավան (1882-1963), ուսուցիչ, Ստ. Շահումյանի դասընկերներից - *1. 54, 66, 84*
Թումանյան Աշոտ (1881-1951), ուսուցիչ, Ստ. Շահումյանի դասընկերներից - *1. 54*
Թումանյան Լևոն, ձախ էսէռ - *2. 132*
Թումանյան Հովհաննես (1869-1923), հայ բանաստեղծ, արձակագիր, հասարակական գործիչ - *1. 32, 37. 39, 41. 48. 49. 62. 64, 73. 79. 80. 81. 146. 395; 2. 212, 422. 490*
Թումանյան Մ., Տրապիզոնի բանակցությունների պատվիրակության գործերի կառավարիչ - *2. 121*
Թումանյան Մարո (ծնվ.1880), Բաքվի Ժողկոմսովետի աշխատակից, 1921-1927 թթ. ՀԿԿ Կենտկոմի կինբաժնի վարիչ - *2. 524*
Թուրշյան Հարություն, պատմաբան - *2. 313*
Թևզայա, Երզնկայի բանակցությունների վրացի մասնակից - *2. 96*

Ժ

Ժասմեն, հայկական գնդի գթության քույր - *2. 379*
Ժերեբկովա, հայկական գնդի գթության քույր - *2. 379*
Ժիտոմիրսկի, ոստիկանության գաղտնի գործակալ - *1. 105, 106*
Ժորդանիա (Կոստրով) Նոյ (1870-1953), վրաց մենշևիկների ղեկավարներից, Վրաստանի ազգային խորհրդի նախագահ - *1. 111. 214, 216, 309. 310. 379, 380. 386. 502. 504, 505. 508. 521. 532-534; 2. 54, 55. 159. 160. 164. 189. 215. 256-259. 288. 291, 292. 491*
Ժորես Ժան (1859-1914), ֆրանսիական և միջազգային սոցիալիստական շարժման գործիչ - *1. 269. 421*

Ի

Իշխանյան Բախշի (1879-1921), Հայ սոցիալ-դեմոկրատական բանվորական կազմակերպության («սպեցիֆիկներ») հիմնադիրներից - *1. 102, 104, 130, 323; 2. 458*
Իոֆֆե Ա. Ն. (1883-1937), սովետական դիվանագետ - *2. 67. 68. 86. 92- 94. 350. 383. 488*
Իսախանյան Տիգրան, բժիշկ, Բաքվի ազգային խորհրդի անդամ - *1. 206; 2. 507*
Իսահակյան Ավետիք (1875-1957), հայ բանաստեղծ, արձակագիր, հասարակական գործիչ - *1. 39. 395*
Իսկանդարյան, Աշխաբադի դաշնակցականների ջոկատի հրամանատար - *2. 221*
Իսմայիլով Ա., «Աղալաթ» կազմակերպության ներկայացուցիչ - *2. 180*
Իսմայիլով Էլմար, ադրբեջանցի պատմաբան - *1. 13.14. 52. 310. 393; 2. 28. 153. 154. 205. 248*
Իսմեթ Ինենյու (1884-1972), թուրքական պետական և ռազմական գործիչ - *2. 318*
Իսրայելյան Կարապետ, Ստ. Շահումյանի դասընկերներից - *1. 54*
Իսրայելյան Մերգո, Ստ. Շահումյանի դասընկերներից - *1. 54*
Իվանիցկի Ֆ., Թուրքահայաստանի գլխավոր կոմիսարի օգնական - *2. 26*
Իվանով Ռոդոլֆ, ռուս պատմաբան - *1. 14*

Լ

Լազայան Երվանդ (1864-1931), հայ ազգագրագետ, բանահավաք, հնագետ - *1. 64. 65*
Լալայան, դաշնակցական սպա, Ստ. Շահումյանի մատնիչը - *2. 524. 525*
Լատոն, Բեռլինի համալսարանի պրոֆեսոր - *1. 130*
Լեբեդինսկի, գեներալ, Կովկասյան ռազմաճակատի շտաբի պետ - *2. 137. 208*
Լեժավա Նոյ, Ալեքսանդրապոլի բոլշևիկյան կազմակերպության անդամ - *1. 473*
Լենին (Ուլյանով) Վլադիմիր (1870-1924), սովետական պետության հիմնադիր - *1. 17. 68, 99, 102. 105-107. 110. 111, 118. 119. 148. 149, 243. 260, 261. 302-303. 305, 309-320. 323, 353. 354, 376-379. 384. 386, 387. 389, 390. 413, 415. 416, 437. 446. 447, 452.*

453. 465. 466, 471. 484, 490. 498-502. 506. 521. 524, 542. 543, 546; 2. 29-31. 40. 46. 47. 51, 59, 63, 64. 66, 68. 69. 76, 77, 82-88, 94. 99. 100, 222. 237, 248. 262, 263. 265. 350. 360- 364. 385- 387. 402. 416. 419. 431. 435. 436. 439. 451, 452 463. 467, 472.473. 474. 478. 480. 482. 490. 491, 516. 520. 533. 541
Լեո (Առաքել Բաբախանյան) (1860-1932), պատմաբան, հրապարակախոս, գրականագետ և գրող - *1. 395. 415. 481; 2. 101. 103. 109, 110. 121, 123, 138. 213. 214. 318. 328-350. 351*
Լեոնտովիչ Ա., Բաքվի ռուս ազգային խորհրդի անդամ - *2. 498*
Լերմոնտով Միխայիլ (1814-1841), ռուս բանաստեղծ, արձակագիր, դրամատուրգ - *1. 38. 39*
Լիբկնեխտ Կարլ (1871-1919), գերմանական և միջազգային բանվորական շարժման գործիչ - *1. 269*
Լիսարիտյան Ժիրայր, ՀՀ նախկին նախագահի նախկին խորհրդական - *2. 12. 13*
Լիսիցյան Լևոն (1892-1921), արվեստաբան, հասարակական գործիչ - *2. 331*
Լլոյդ Ջորջ Դավիդ (1863-1945), Մեծ Բրիտանիայի վարչապետ - *2. 119. 166*
Լյադով Նիկոլայ (1872-1947), հեղափոխական գործիչ, ՌՍԴԲԿ Կենտկոմի ներկայացուցիչ, Բաքվի Ժողկոմսովետի ժողտնտխորհրդի նախագահի տեղակալ -*1. 110. 136*
Լոգյան Բագրատ, Ալեքսանդրապոլի բոլշևիկյան կազմակերպության անդամ - *1. 472*
Լոմով Ա., «ձախ կոմունիստ» - *2. 68*
Լոպուխին, ցարական ոստիկանական դեպարտամենտի տնօրեն - *1. 148*
Լոտֆ (Լոսն), Գերմանիայի ներկայացուցիչը Բաթում քաղաքում - *2. 291-292. 336*
Լվով Գ., իշխան, ժամանակավոր կառավարության մինիստր-նախագահ - *2. 25*
Լուկաշին (Սրապիոնյան) Սարգիս (1883-1937), սովետական պետական և կուսակցական գործիչ - *1. 466; 2. 29*
Լունաչարսկի Անատոլի (1875-1933), սովետական պետական և հասարակական գործիչ - *1. 465; 2. 471*
Լուսինյան Լևոն, ավանտյուրիստ, իրեն Կիլիկիայի հայոց թագավորության ժառանգորդ ներկայացնող - *1. 161. 162*
Լևանդովսկի, Կովկասյան ռազմաճակատի հրամանատարներից - *2. 285*

Խ

Խալիլ, թուրքական պետական և զինվորական գործիչ - *2. 145, 286. 288-296. 294-296. 301. 331. 339. 340. 358. 423. 499*
Խաթանասյան Երվանդ, Բաքվի դաշնակցության գործիչ - *2. 504*
Խաժակ (Չագալյան) Գարեգին (1867-1915), դաշնակցական գործիչ - *1. 133. 201. 202. 405*
Խանզատյան Սրապիոն, Հալեպիի Կիլիկիյան վարժարանի պատմության ուսուցիչ - *1. 7*
Խան-Խոյսկի Ֆաթալի, խոշոր կալվածատեր, «Մուսավաթ» կուսակցության պարագլուխ - *1. 494. 533; 2. 159, 166. 211, 212. 420*
Խանոյան Սարգիս (1880-1937), հեղափոխական, սովետական պետական գործիչ - *1. 45. 95*
Խաչատուրյան Գարեգին, Կ. Պոլսի պատրիարք - *1. 5; 2. 12*
Խաչատրյան Կարապետ, Ալեքսանդրապոլի բոլշևիկյան կազմակերպության անդամ - *1. 473*
Խաղամով Մ., ՕԶԱԿՀՄ-ի նախագահ - *2. 23. 60. 61*
Խաս-Մամեդով Ֆ., Տրապիզոնի բանակցությունների մասնակից, մուսավաթական - *1. 533; 2. 123. 159*
Խատիսյան (Խատիսով) Ալեքսանդր (1874-1945), Թիֆլիսի քաղաքագլուխ, հետագայում դաշնակցական գործիչ - *1. 414. 415; 2. 24. 56. 57. 101-103. 113. 121-123. 127. 130. 141. 144. 208. 210. 286-288. 296. 299-304. 314. 317. 318. 322. 330-332. 335. 337. 340. 342-352. 354. 386. 387. 409. 499. 501*
Խատիսյան Գ., գործարարատեր, հայկական պատվիրակության խորհրդական - *1. 208; 2. 331*
Խարատարեկյան Սամսոն, Աշխաբադի հնչակյան ջոկատի հրամանատար - *2. 221*
Խիտարով, Թիֆլիսի վաճառական - *1. 30. 31*
Խիտարով Ստեփան, Ստ. Շահումյանի դպրոցական ընկերներից - *1. 30*
Խմիզուրի Գ., գրքի հեղինակ - *1. 15. 16. 21; 2. 206*
Խրիմյան Մկրտիչ (1820-1907), Ամենայն հայոց կաթողիկոս - *1. 184*
Խուդայանց Մերգեյ, Տաշքենդի հայկական ջոկատի կամավոր - *2. 219*

Խումարյան Աշոտ (1875-1938), հեղափոխական գործիչ, աշխատել է Անդրկովկասի կուսակցական և սովետական մարմիններում - *1. 45, 79, 95; 2. 361, 487*
Խուրշուդյան Լենդրուշ (ծնվ.-1927), պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր - *1. 11; 2. 203, 361*

Ծ

Ծառուկյան Անդրանիկ (1913-1989), գրող, սփյուռքահայ հրապարակախոս, ազգային գործիչ - *1. 3*
Ծատուրյան Ալեքսանդր (1865-1917), հայ բանաստեղծ - *1. 395*
Ծերեթելի Ակակի (1840-1915), վրացի նշանավոր բանաստեղծ - *1. 49*
Ծերեթելի Ի. Գ. (1882-1959), վրացի մեշնիկ, Ժամանակավոր կառավարության մինիստր - *1. 461, 467, 498; 2. 45, 248, 288*

Կ

Կալեդին Ա. (1861-1918), ցարական բանակի գեներալ - *1. 461, 502-505, 507; 2. 51, 61*
Կալինին Միխայիլ (1875-1946), սովետական պետական և կուսակցական գործիչ - *1. 413*
Կախոյան Աստուր («Բանվոր Խեչո») (1874-1937), հեղափոխական գործիչ, սովետական աշխատող - *1. 205, 206, 233, 375*
Կամենև (Ռոզենֆելդ) Լ. Բ. (1883-1936), սովետական պետական և կուսակցական գործիչ - *1. 300; 2. 67*
Կանանյան Դրաստամատ (Դրո) (1883-1956), դաշնակցական գործիչ - *2. 142, 283-286, 314*
Կանդելակի Սամսոն, Բաքվի ժողկոմսովետի աշխատակից - *2. 490, 526, 529*
Կապուտիկյան Սիլվա (1919-2006), հայ բանաստեղծ - *1. 19*
Կասյան Սարգիս (1876-1938), սովետական պետական գործիչ, Հայաստանի հեղկոմի առաջին նախագահ - *1. 152, 199, 207, 352*
Կասպարով (Կասպարյանց) Վլադիսլավ (1883-1917), Բաքվի բոլշևիկյան կոմիտեի անդամ - *1. 252, 260, 298, 377, 380*
Կարաբեքիր Քյազիմ (1882-1948), թուրքական պետական, զինվորական գործիչ - *2. 406, 516, 518*
Կարախան (Կարախանյան) Լևոն (1889-1937), Սովետական Ռուսաստանի արտաքին գործերի ժողկոմի տեղակալ - *2. 67, 78, 83, 97, 299, 452, 453, 488*
Կարապետյան Ալեքսանդր, ձախ դաշնակցական - *2. 182*
Կարասուլով, ցարական բանակի գեներալ - *1. 503-505, 507*
Կարելին Վ., ձախ էսէռ - *2. 67*
Կարինյան Արտաշես (1886-1982), Բաքվի Ժողկոմսովետի արդարադատության կոմիսար, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս - *1. 266, 466; 2. 225, 227, 372*
Կարճիկյան Խաչատուր, դաշնակցական գործիչ - *2. 101, 129, 181, 182, 263, 292, 312, 314, 368, 369*
Կաուցկի Կարլ (1854-1938), գերմանական սոցիալ-դեմոկրատիայի և 2-րդ ինտերնացիոնալի լիդերներից - *1. 102, 140, 207, 269, 289, 297, 319, 413, 421*
Կերենսկի Ալեքսանդր (1881-1970), էսէռ, Ժամանակավոր կառավարության պրեմեր-մինիստր - *1. 427, 452, 490, 497; 2. 36, 45, 46, 47, 208, 207*
Կեցխովելի Լադո (1877-1903), սոցիալ-դեմոկրատ - *1. 46*
Կիրակոսյան Ջոն (1929-1985), հասարակական-քաղաքական գործիչ, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր - *1. 12; 2. 406*
Կիրև, Բաքվի Ժողկոմսովետի կոմիսար, գնդակահարվել է պետական միջոցները վատնելու համար - *2. 225, 227, 228, 372*
Կլաուս Վացլավ, Չեխիայի նախագահ - *1. 23*
Կլեմանտ Ժորժ (1841-1929), Ֆրանսիայի պրեմիեր-մինիստր 1906-1909 և 1917-1920 թթ. - *2. 166, 340*
Կլուչևսկի Վասիլի (1841-1911), ռուս պատմաբան - *1. 93*
Կյուլման Ռիխարդ, Գերմանիայի արտաքին գործերի մինիստր, Բրեստի բանակցություններում գերմանական պատվիրակության ղեկավար - *2. 72*
Կնունյանց Բոգդան (1878-1911), հեղափոխական գործիչ - *1. 95, 103, 110, 131*
Կոբոզեն Պյոտր (1876-1941), Թուրքեստանյան երկրամասի արտակարգ կոմիսար - *2. 164, 215, 262*
Կոլեսնիկովա Նադեժդա (1882-1968), Բաքվի Ժողկոմսովետի լուսավորության կոմիսար - *1. 207, 214, 215, 241, 244, 265, 375, 377-381, 388, 391, 393, 394, 495 ; 2. 225, 227, 249, 372*
Կոլեսով Ֆեոդոր, Թուրքեստանի Ժողկոմսովետի նախագահ - *2. 217, 220, 221, 361, 487*
Կոլոնտայ Ալեքսանդրա (1872-1952), կուսակցական գործիչ, սովետական դիվանագետ - *1. 447*
Կոմիտաս (Սողոմոնյան Սողոմոն) (1869-1935), հոգևորական, հայ նշանավոր երգահան - *1. 79*
Կոնդակով, աջ էսէռ, Կրասնովոդսկի գործադուլային կոմիտեի անդամ, Բաքվի 26 կոմիսարների սպանության կազմակերպիչներից - *2. 524*
Կոնովալով Ա. Ի. (ծնվ. 1875), խոշոր գործարանատեր, Ժամանակավոր կառավարության առևտրի և արդյունաբերության մինիստր - *1. 490*
Կոջոյան Հակոբ (1883-1959), գեղանկարիչ - *2. 540*
Կոռնիլով Լ. (1870-1918), ցարական բանակի գեներալ - *1. 461- 463*
Կոստանյան Արամ, պարենավորման կոմիսարի տեղակալ, գնդակահարվել է Բաքվի 26 կոմիսարների հետ միասին - *2. 493, 531*
Կոստանյան Ս., Ստ. Շահումյանի դասընկերներից - *1. 69*
Կորգանով /Ղորղանյան/ Գրիգորի (1886-1918), Կովկասյան բանակի ռազմահեղափոխական կոմիտեի նախագահ, ռազմա-ծովային կոմիսար, գնդակահարվել է Բաքվի 26 կոմիսարների հետ միասին - *1. 515; 2. 163, 178, 179, 190, 194, 203, 206, 225, 227, 362, 374, 381-383, 403, 442, 447, 459, 489, 495, 496, 519, 530, 533, 534*
Կորգանով Մարկ, Գրիգորի Կորգանովի եղբայրը, ռազմահեղափոխական կոմիտեի անդամ, գնդակահարվել է Բաքվի 26 կոմիսարների հետ միասին - *2. 531*
Կորգանյան (Ղորղանյան) Գ., գեներալ, հայկական պատվիրակության զինվորական խորհրդական - *2. 331*
Կրասնով Պ. Ն. (1869-1947), ցարական բանակի գեներալ, Երկրորդ համաշխարհային պատերազմի ժամանակ համագործակցել է հիտլերականների հետ, որի համար մահապատժի է ենթարկվել սովետական դատարանի վճռով - *2. 61*
Կրուպսկայա Նադեժդա (1869-1939), Վ. Ի. Լենինի կինը, սովետական պետական և կուսակցական գործիչ - *1. 262, 380, 415, 416*
Կուզնեցով Նիկոլայ (1885-1937), Կովկասի արտակարգ կոմիսարիատի, Բաքվի սովետի և Ժողկոմսովետի քարտուղար - *1. 535, 536, 543, 544; 2. 178, 227, 372, 382, 487*
Կույբիշև Վալերիան (1888-1935), սովետական պետական և կուսակցական գործիչ - *2. 537*
Կում, աջ էսէռ, Կրասնովոդսկի գործադուլային կոմիտեի անդամ, Բաքվի 26 կոմիսարների սպանության կազմակերպիչներից - *2. 524, 527, 530, 535*

Հ

Հակոբյան Գ. Ս., պատմաբան - *1. 13, 78*
Հակոբյան Ժանետա, «Ազգ» թերթի հեղինակներից - *1. 20, 21*
Հակոբյան Հակոբ, նկարիչ - *1. 19*
Հակոբյան Հակոբ (1866-1936), հայ բանաստեղծ - *1. 73, 83, 233, 266, 361, 395; 2. 540*
Հակոբյան, պրոֆեսոր, արևմտահայության ներկայացուցիչ - *1. 478*
Հակոբյան Սիմոն, դաշնակցական գործիչ - *2. 225- 227*
Համազասպ (Սրվանձտյան Համազասպ) (1873-1921), դաշնակցական գործիչ - *2. 172, 203, 206, 373, 379, 391, 392, 400, 405, 449, 496, 505*
Համբարձումյան, Խնուսի կոմիսար - *2. 25*
Համբարձումյան Տրդատ - «Խթան» (Փարիզ) թերթի հրատարակիչ - *1. 6*
Հաջինսկի, մուսավաթական Ադրբեջանի արտաքին գործերի նախարար - *2. 166, 292*
Հասանով Աբդուլ Ֆազ-բեկ, մուսավաթական Ադրբեջանի կառավարության ներկայացուցիչը Շուշիում - *2. 420*
Հարությունյան Արմենակ, Տաշքենդի հայկական ջոկատի անդամ - *2. 219*
Հարությունյան Արտուշ, Ստ. Շահումյանի դասընկերներից - *1. 54*
Հարությունյան Հովհաննես (Վանո), Ստ. Շահումյանի դասընկերներից - *1. 41, 69,*

105, 388, 389, 424
Հարությունյան Մարտիրոս, դաշնակցական գործիչ - *2. 305, 381-391*
Հարությունյան Շմավոն (1813-1993), պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր - *1. 13*
Հարությունյան Սամսոն (1869-1941), հայ ժող. կուսակցության անդամ - *1. 419*
Հարությունյան Սեդրակ, Ստ. Շահումյանի դասընկերներից - *1. 54*
Հեգել Գեորգ Վիլհելմ Ֆրիդրիխ (1770-1831), գերմանացի փիլիսոփա - *1. 130*
Հելվեցյան Հարություն, բողոքական քահանա, հայ քաղաքական բանտարկյալների օգնության կենտրոնական հանձնախմբի կազմակերպիչներից - *2. 6*
Հելվեցիուս Կլոդ Ադրիան (1715-1771), ֆրանսիացի փիլիսոփա մատերիալիստ, 18-րդ դարի ֆրանսիական հեղափոխության գաղափարախոս - *1. 298*
Հելֆերիխ, գերմանացի դիվանագետ - *2. 87*
Հեսնե, գերմանացի պրոֆեսոր - *1. 165, 166*
Հինդենբուրգ, գերմանացի ռազմական գործիչ - *2. 347*
Հոլբախ Պոլ Հանրի (1723-1789), ֆրանսիացի փիլիսոփա մատերիալիստ և աթեիստ - *1. 298*
Հոմերոս (ապրել է մ.թ.ա. 12-7-րդ դարերի միջև), Հին Հունաստանի առասպելական պոետ - *1. 297*
Հովհաննիսյան Աշոտ (1887-1972), հասարակական-քաղաքական գործիչ, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս - *1. 162*
Հովհաննիսյան Հովհաննես (1864-1929), հայ բանաստեղծ, մանկավարժ-1. 297, 395
Հովհաննիսյան Նուբար, գործարանատեր (Փարիզ) - *1. 6*
Հովսեփյան Գարեգին (1867-1952), մշակութային գործիչ, մանկավարժ, հայագետ, 1898 թ. ձեռնադրվել է վարդապետ, 1945 թ. կաթողիկոս Մեծի տանն Կիլիկիո - *2. 211*
Հովսեփյան Հովհաննես, հասարակական-քաղաքական գործիչ, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր -*1. 13*
Հովսեփյան, գեներալ - *2. 211*
Հովսեփյան Սուրեն (1890-1918), Բաքվի «Իզվեստիա» թերթի խմբագիր, գնդակահարվել է Բաքվի կոմիսարների հետ միասին - *2. 526, 531*
Հորացիոս (մ.թ.ա 65-8), հռոմեացի բանաստեղծ - *1. 22*
Հոֆման, գերմանացի գեներալ - *2. 76*
Հուսեյին էֆենդի, թուրքական բանակի կապիտան - *2. 390*

Ձ

Ձերժինսկի Ֆելիքս (1877-1926), սովետական պետական և կուսակցական գործիչ - *1. 447, 465; 2. 68, 360*

Ղ

Ղազարյան Արշակ, դաշնակցության «Նոր հոսանք» թերթի խմբագիր - *1. 361, 362*
Ղազարյան Գ., Ստ. Շահումյանի ուսանողական ընկերներից - *1. 70*
Ղազարյան Զարմայր, Ստ. Շահումյանի դասընկերներից - *1. 42*
Ղազարյան Հրանտ (ծնվ. 1930 թ.), հասարակական գործիչ, փիլիսոփա, «Հայաստան» հրատարակչության գլխավոր խմբագիր (1966-1976 թթ.) և «Հայաստան» հրատարակչության գլխավոր տնօրեն (1976-1991 թթ.):
Նրա աշխատած տարիներին հրատարակվել է ավելի քան 3000 անուն գիրք մի քանի տասնյակ միլիոն տպաքանակով: Մեծ է Հ. Ղազարյանի վաստակը հայ պատմիչների, Հայ ժողովրդի պատմությանն առնչվող հույն պատմիչների երկերի, Հայոց ցեղասպանության, հայ, ռուս և այլ երկրների դասական գրողների, փիլիսոփաների, պատմաբանների, գրականագետների, բազմաթիվ այլ բնագավառների գիտնականների ստեղծագործությունների, հեղափոխական գործիչների, Հայրենական մեծ պատերազմի նշանավոր զորահրամանատարների մասին աշխատությունների հրատարակման գործում:
Գրահրատարակչության ասպարեզում ունեցած բազմամյա վաստակի համար Հայկական ՍՍՀ Գերագույն խորհրդի նախագահության հրամանագրով Հ. Ղազարյանը 1976 թ. արժանացել է Հայաստանի մշակույթի վաստակավոր գործչի պատվավոր կոչմանը, իսկ 2013 թ. մայիսին ՀՀ Նախագահի հրամանով պարգևատրվել է Մովսես Խորենացու մեդալով -*1. 28*
Ղազարով, գնդապետ, կորպուսի հրամանատար - *2. 379, 393, 400, 439, 449, 450, 496, 505*
Ղարիբյան, վաշտի հրամանատար - *2. 439*
Ղարիբջանյան Բագրատ (1890-1920), Անդրկովկասում հեղափոխական շարժման գործիչ, Հայաստանի կոմկուսի հիմնադիրներից - *1. 472*
Ղարիբջանյան Գեորգ (1920-1999), հասարակական-քաղաքական գործիչ, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս - *1. 12, 13, 112, 472*
Ղևոնդյան (Գեյվանով) Սամվել, սովետական ռազմական գործիչ - *2. 536*

Մ

Մալեսոն, գեներալ, Անդրկասպիայում անգլիական միսիայի ղեկավար - *2. 527-530, 532-535*
Մալիգին Իվան, Կովկասյան բանակի ռազմա-հեղափոխական կոմիտեի նախագահի տեղակալ, գնդակահարվել է Բաքվի 26 կոմիսարների հետ միասին - *2. 492, 531*
Մալինովսկի Ռ. Վ. (1876-1918), պրովոկատոր, գնդակահարվել է 1918 թ. - *1. 303, 304, 415, 418*
Մալխասյան Ստեփան (1857-1947), բանաստեղծ, լեզվաբան, բառարանագիր - *1. 53*
Մախարաձե Ֆիլիպ (1868-1941), սովետական պետական և կուսակցական գործիչ - *1. 309, 310, 386, 469, 471*
Մախմուդով Յաղուբ, Ադրբեջանի ԳԱ պատմության ինստիտուտի տնօրեն - *1. 14*
Մակ-Դոնել, Բաքվում անգլիական հյուպատոս - *2. 454*
Մակեև Նիկոլայ, Բաքվի պետական համալսարանի պրոֆեսոր - *2. 205*
Մակինցյան Պարոս (1884-1937), գրականագետ, բարգմանիչ, Սովետական Հայաստանի ժողկոմսովետի նախագահի տեղակալ - *1. 394, 395, 397, 398; 2. 30, 346, 365, 488*
Մահարի Գուրգեն (1903-1969), հայ գրող - *2. 543*
Մամիկոնյան Ն., Ստ. Շահումյանի դասընկերներից - *1. 69*
Մանանդյան Հակոբ (1873-1952), հայ պատմաբան, Սովետական Միության և ՀՍՍՀ ԳԱ ակադեմիկոս - *1. 481*
Մանդելշտամ Մ., Բաքվի սովետի անդամ - *1. 455*
Մանթաշով Ալեքսանդր (1842-1911), դրամատեր, բարերար - *1. 58-61, 100; 2. 272*
Մանթաշով Նադյա, Ա. Մանթաշովի դուստրը - *1. 59, 60*
Մանթաշով Վանյա, Ա. Մանթաշովի որդին - *1. 59, 61*
Մանուկյան Արամ (Հովհաննիսյան Սարգիս) (1879-1919), դաշնակցական գործիչ - *2. 213, 313, 314, 316, 365, 368, 370, 407*
Մանուչարյան Միքայել (Մկրտիչ) (1885-1963), բանվոր-հեղափոխական, Ստ. Շահումյանի դասընկերներից - *1. 100, 102-105, 111, 130*
Մանուչարյան Մերգո, գումարտակի հրամանատար - *2. 203*
Մառ Նիկոլայ (1864-1934), արևելագետ, հայագետ, լեզվաբան - *1. 54*
Մարգարյան Սմբատ, բոլշևիկյան կուսակցության անդամ - *1. 466; 2. 403, 490*
Մարտինով Պ., Բաքվի քաղաքագլուխ - *1. 232, 235, 242, 300, 301*
Մարտինով, Բաքվի ժանդարմերիայի պետ, ռոտմիստր - *1. 243*
Մարտով Լև (1873-1923), մենշևիկյան կուսակցության ղեկավար գործիչ - *1. 234*
Մարտիկյան Սաթենիկ, Բաքվի Ժողկոմսովետի աշխատակից - *2. 490, 526*
Մարտիկյան Մերգո (1874-1954), սովետական պետական և կուսակցական գործիչ - *1. 45; 2. 477, 513, 514*
Մարտիրոսյան, դաշնակցական, Բաքվի սովետի անդամ - *2. 382*
Մարքս Կարլ (1818-1883), գիտական կոմունիզմի հիմնադիր - *1. 38, 46, 66, 73, 108, 111, 115, 159-163, 171, 250, 267, 269, 288, 297, 308, 323, 324, 327, 402; 2. 169, 240, 416*
Մելիք-Ազատով, մուսավաթական գործիչ, ադրբեջանական կառավարության ներկայացուցիչ - *1. 533; 2. 396*
Մելիքյան Ա. Մ., հայ ուսանողների համագումարի մասնակից - *1. 73*
Մելիքյան Արշավիր (1879-1937), Երևանի բոլշևիկյան կազմակերպության ղեկավարներից, Սովետական Հայաստանում զբաղվել է մանկավարժությամբ ու հրապարակախոսությամբ - *1. 233, 266; 2. 365, 488, 489*
Մելիքյան Հենրիկ (1926-2004), հասարակական-քաղաքական գործիչ, պատմական գի-

սությունների դոկտոր, պրոֆեսոր - *1. 12*
Մելիքյան Հովակիմ, բժիշկ, դաշնակցական գործիչ - *2. 141, 146*
Մելիքյան Մելիք («Դեղուշկա») (1868-1918), Անդրկովկասի հեղափոխական և սոցիալ-դեմոկրատական շարժման մասնակից - *1. 95, 298*
Մելիք-Յոլչյան Մերգեյ, դաշնակցական գործիչ, Յենտրոկասպիայի դիկտատուրայի կառավարության ֆինանսների մինիստր - *1. 18; 2. 102, 178, 182, 230, 382, 383, 400, 440, 447, 454, 458, 464-466, 493, 496, 503, 505, 515, 516*
Մելքոնյան Կարո, պատմաբան - *1. 12*
Մելքումյան (Մելքումով) Հակոբ (1885-1963), հայկական կամավորական գնդի հրամանատար - *2. 223*
Մելքումյան Տիգրան, Սիջին Ասիայում քաղաքացիական կռիվների մասնակից, հրթիռային տեխնիկայի կոնստրուկտոր -*2. 536*
Մետաքսա Իրակլի, Բաքվի սովետական աշխատող, գնդակահարվել է Բաքվի 26 կոմիսարների հետ միասին - *2. 532*
Մեսրոպ Մաշտոց (361-440), հայերեն այբուբենի ստեղծող - *2. 9*
Մերխալոև, աջ էսէռ, Յենտրոկասպիայի դիկտատուրայի արտաքին գործերի մինիստր - *2. 493*
Մերկուրով Մերգեյ (1881-1952), քանդակագործ - *2. 539*
Միլյուկով Պավել (1859-1943), պատմաբան, կադետների կուսակցության ղեկավար, Ռուսաստանի Ժամանակավոր կառավարության արտաքին գործերի մինիստր 1917 թ. - *1. 352, 454*
Միկոյան Անաստաս (1895-1978), կոմունիստական կուսակցության և սովետական պետության ականավոր գործիչ - *1. 15, 469, 472, 476; 2. 26, 27, 204, 379, 441, 442, 460, 465, 476-478, 480, 486, 492, 495, 496, 515, 523-526*
Միհրանյան Եղսան, Սիմոն Տեռեյանի կինը - *1. 6*
Միշնե Իսայ, ռազմա-հեղափոխական կոմիտեի գործերի կառավարիչ, գնդակահարվել է Բաքվի 26 կոմիսարների հետ միասին - *2. 532*
Միրբախ Վ. (1871-1918), Գերմանիայի դեսպանը Սովետական Ռուսաստանում - *2. 84, 85*
Միրզոյան Լևոն (1897-1938), սովետական պետական և կուսակցական գործիչ - *2. 477*
Միրզոյան Սալոմե, մանկապարտեզի դաստիարակչուհի - *1. 29*
Միրզոյան Տ., հայկական պատվիրակության բարտուղար - *2. 331*
Միրոյան Արմենակ, դաշնակցական, Էրզրումի միլիցիայի պետ - *2. 114*
Միքայելյան Քրիստափոր (1859-1905), դաշնակցության հիմնադիրներից - *1. 333; 2. 314*
Մկրտիչև Հայկ, «ԾՈՒՔՈ ՀԱՅԱՅՈՒ» թերթի խմբագիր - *2. 304*
Մկրտչյան Բ., Բաքվի Բայիլովյան բանտի բժիշկ - *1. 392*
Մյասնիկյան Ալեքսանդր (Ալ. Մարտունի) (1886-1925), կոմունիստական կուսակցության և սովետական պետության ականավոր գործիչ, Սովետական Հայաստանի Ժողկոմսովետի առաջին նախագահ - *1. 233, 234, 242, 441; 2. 52, 53, 62, 221, 322*
Մյուրսել փաշա, թուրքական զորախմբի հրամանատար - *2. 273, 497*
Մնացականյան Արամայիս (1911), պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր - *1. 12; 2. 422*
Մոպասան Գյ-դե (1850-1893), ֆրանսիացի գրող - *1. 68*
Մովսես Խորենացի (410-490), հայ պատմիչ - *1. 362; 2. 357*
Մովսեսյանց Գուրգեն, կապիտան, Ղարաքիլիսայի հաղթանակի կազմակերպիչներից - *2. 279*
Մովսիսյան Ռաֆիկ, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր - *1. 13*
Մովսիսյան Սուրեն, պատմաբան- *1. 11*
Մոդրակցի Մ., Բաքվի բանվոր, բոլշևիկ - *1. 208*
Մորել, Երզնկայի, Էրզրումի զորամասերի հրամանատար - *2. 111, 114, 117*
Մռավյան Ասքանազ (1886-1929), հեղափոխական, Հայաստանի և Անդրկովկասի կուսակցական և պետական գործիչ - *1. 155, 209, 522*
Մուխթար բեյ, թուրքական պետական գործիչ - *2. 332*
Մուսայելյան, կապիտան, շտաբի պետ-*2. 439*
Մուսինյան Մ., Հայաստանի հանրապետության ներկայացուցիչն Ալեքսանդրապոլում - *2. 407*
Մուրադյան Արտեմ, հասարակական գործիչ - *1. 28*
Մուրացան (Գրիգոր Տեր-Հովհաննիսյան)

(1854-1908), հայ գրող - *1. 404*

Յ

Յակովլև Ն., ՌՍԴ(բ)Կ Կենտկոմի ներկայացուցիչ - *1. 377*
Յակուբով Ս., Բաքվի ընդհատակյա աշխատող - *2. 477*
Յակուշև, Բաքվի բոլշևիկյան կոմիտեի անդամ - *1. 230*
Յանկովսկի Կ., Կովկասի ուսումնական օկրուգի հոգաբարձու - *1. 32*
Յաստրով, Բեռլինի համալսարանի պրոֆեսոր - *1. 111*
Յուդենիչ Նիկոլայ (1863-1933), ցարական բանակի գեներալ, Կովկասյան ռազմական հրամանատար 1917 թ. - *2. 25*
Յուժանին Մ., Ստ. Շահումյանի ծածկանուններից - *1. 119*

Ն

Նաբի, ավազակապետ - *2. 422*
Նազարբեկյան (Նազարբեկ) Ավետիս (1866-1939), Հնչակյան կուսակցության հիմնադիրներից - *1. 40, 104, 126*
Նազարբեկյան (Նազարբեկով) Թովմաս (1855-1928), հայկական կորպուսի հրամանատար - *2. 118, 135, 137-140,142-144, 146-148, 210, 209, 274, 278, 280, 291, 299, 311, 312, 390, 405, 406, 409, 425*
Նազարյանց Լիսարիտ, Սոսկվա մեկնած հայոց պատվիրակության անդամ - *2. 208, 336, 488, 490, 491*
Նազիմ, երիտթուրքական գործիչ - *2. 337*
Նազիմ բեյ, թուրքական զորքերի հրամանատար - *2. 388, 391*
Նազիև, կալվածատեր, մուսավաթական գործիչ - *1. 528; 2. 207*
Նալբանդյան Միքայել (1829-1866), հայ գրող, փիլիսոփա, հեղափոխական դեմոկրատ - *1. 32, 40, 47, 87, 334*
Նակաշիձե, Բաքվի նահանգապետ - *1. 117, 152*
Նանեյշվիլի Վ. (1878-1940), Բաքվի բոլշևիկյան կոմիտեի նախագահ - *2. 192, 265*
Նաջարյան, աջ էսէռ, Յենտրոկասպիայի դիկտատուրայի կառավարության արդարադատության մինիստր - *2. 493*
Նավասարդյան Վահան, դաշնակցական գործիչ - *2. 136*
Նար-Դոս (Միքայել Հովհաննիսյան) (1867-1933), հայ գրող - *1. 401, 402*
Նարիմանով Նարիման (1871-1925), Բաքվի բոլշևիկյան կոմիտեի անդամ, Բաքվի ժողկոմսովետի քաղաքային տնտեսության ժողկոմ - *1. 379; 2. 167, 176, 178, 180, 190, 225, 227, 372, 538*
Նեսիմի բեյ, Թուրքիայի արտաքին գործերի նախարար - *2. 94, 331, 333, 336, 338, 345*
Ներսիսյան Մկրտիչ (1910-1999), ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս - *1. 13*
Նժդեհ Գարեգին, դաշնակցական գործիչ - *1. 420; 2. 280*
Նիկոլայ Երկրորդ Ռոմանով (1968-1918), Ռուսաստանի վերջին ցարը - *1. 352, 432, 451, 533, 538; 2. 17, 19, 55, 352*
Նիկոլայշվիլի Իվան, սովետական աշխատող, գնդակահարվել է Բաքվի 26 կոմիսարների հետ միասին - *2. 532*
Նիկոլենկա, Լ., Տոլստոյի ավագ եղբայրը - *1. 250*
Նորենց (Երիցյան) Վաղարշակ (1906-1973), հայ գրող - *2. 543*
Նյուշին, Բաքվի բոլշևիկյան կոմիտեի անդամ - *1. 230*
Նուպար Պողոս, արևմտահայության ներկայացուցիչը Փարիզի խաղաղության վեհաժողովում - *1. 372; 2. 340, 344*
Նուսնուսյան, ենթասպա - *2. 439*
Նուրի բեյ, թուրքական թերթի խմբագիր - *2. 352*
Նուրի փաշա, թուրքական զինվորական - *2. 114, 335, 356, 359, 388, 390, 473, 499, 520*
Նուրիջանյան Ավիս (1896-1937), ծախ դաշնակցական, հետագայում բոլշևիկյան կուսակցության անդամ, Սովետական Հայաստանում կատարել է կուսակցական, պետական աշխատանք - *2. 182*

Շ

Շալյապին Ֆեոդոր (1873-1938), ռուս երգիչ - *1. 33*
Շահազիզ Սմբատ (1840-1907), հայ բանաստեղծ, մանկավարժ - *1. 395*
Շահան Նաթալի (1884-1983), հայ ազգային-ազատագրական շարժման գործիչ - *2. 519*
Շահպարոնյան Բագրատ, «Նոր-Դար» թերթի աշխատակից - *1. 419*

Շահվերդյան Դանուշ (Դանիել) (1883-1941), սովետական պետական և կուսակցական գործիչ - *1. 37, 79, 95, 233, 471*
Շահումյան (Շահումով) Գևորգ Դավարի, Ստ. Շահումյանի հայրը - *1. 29, 236, 264*
Շահումյան (Տեր-Գրիգորյան) Եկատերինա (1879-1942), Ստ. Շահումյանի կինը - *1. 34, 36, 47-53, 62, 63, 68, 80, 92, 236, 302, 352, 389, 390; 2. 547*
Շահումյան Եղիսաբեթ (Ելիզավետա, Եկատերինա) Թոմասի, Ստ. Շահումյանի մայրը - *1. 30, 236, 264; 2. 547*
Շահումյան Լևոն (1903-1971), Ստ. Շահումյանի կրտսեր որդին, ժուռնալիստ, հրապարակախոս, Սովետական մեծ հանրագիտարանի գլխավոր խմբագրի տեղակալ - *1. 207, 236, 391; 2. 458, 490, 491, 526, 547*
Շահումյան Հայկանուշ, Ստ. Շահումյանի քույրը - *1. 29, 236*
Շահումյան Մարիա, Ստ. Շահումյանի դուստրը - *1. 236*
Շահումյան Նատալյա, Ստ. Շահումյանի քույրը - *1. 29, 236, 352*
Շահումյան Նիկոլայ, Ստ. Շահումյանի կրտսեր եղբայրը - *1. 29*
Շահումյան Սուրեն (1902-1936), Ստ. Շահումյանի ավագ որդին, կուսակցական և ռազմական գործիչ - *1. 78, 236, 391, 474; 2. 486, 490, 504, 505, 526, 547*
Շատրով, ոստիկանության գնդապետ - *1. 390-392*
Շատունովսկայա Օլգա, Բաքվի բոլշևիկյան կոմիտեի անդամ - *1. 474; 2. 520, 522*
Շարաֆյան, պարենավորման կոմիսար - *2. 314*
Շարբաբջյան Գրիգոր (1884-1936), բեմանկարիչ, Հայ արվեստագետների միության ղեկավարներից - *1. 482*
Շարոնին, ֆրանսիացի գնդապետ - *2. 60*
Շեբոլդաև Բորիս (1895-1938), Բաքվի սովետի անդամ, Բաքվի Ժողկոմսովետի ռազմա-ծովային ժողկոմի տեղակալ, գնդակահարվել է Բաքվի 26 կոմիսարների հետ միասին - *2. 442, 456*
Շեքսպիր Ուիլյամ (1564-1616), անգլիացի դրամատուրգ, բանաստեղծ - *1. 32, 39, 55, 56*
Շիլեր Յոհան (1759-1805), գերմանացի բանաստեղծ, դրամատուրգ, պատմաբան - *1. 32*
Շիխլինսկի, գեներալ, մուսավաթական կորպուսի հրամանատար - *2. 173, 211*
Շիրինյան Լևոն, գրքույկի հեղինակ - *1. 18*
Շիրվանզադե Ալեքսանդր (1856-1935), հայ գրող, դրամատուրգ - *1. 32, 82-84, 365*
Շլյոմսկի Գ., սոցիալ-դեմոկրատ - *1. 387*
Շմոլեր, Բեռլինի համալսարանի պրոֆեսոր - *1. 112, 130*
Շորոմ, անգլիացի գեներալ - *2. 60*
Շուլենբուրգ, գերմանացի դիվանագետ - *2. 292, 293*
Շնքեթ փաշա, Բաքվի վրա հարձակվող թուրքական զորքերի հրամանատար - *2. 88, 91, 447*

Ռ

Ռոսկերչյան Արտաշես, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր - *1. 12, 74*
Ռոսկյան Դանիել, Կիպրոսի Մելքոնյան կրթարանի տնօրեն - *1. 4*

Չ

Չալխուշյան Գրիգոր, արևմտահայ ազգային գործիչ - *1. 481*
Չայկին, աջ էսէռ - *2. 533, 534*
Չարենց (Սողոմոնյան) Եղիշե (1897-1937), հայ բանաստեղծ, արձակագիր, մշակութային գործիչ - *2. 541, 542*
Չեխով Անտոն (1860-1904), ռուս գրող - *1. 68, 262*
Չեռնով Վիկտոր (1876-1952), աջ էսէռների լիդերներից, Ժամանակավոր կառավարության հողագործության մինիստր - *2. 45*
Չերնանովի Ստանիսլավ, ռուս պատմաբան - *1. 14*
Չերնիշևսկի Նիկոլայ (1828-1889), ռուս հեղափոխական դեմոկրատ, գրող, հրապարակախոս - *1. 32, 38, 86, 314, 323*
Չերնոմազով Միրոն, ոստիկանության գաղտնի գործակալ - *1. 243, 244, 246, 262, 265, 267, 298-301, 303, 304*
Չիլինգարյանց, 17-րդ գումարտակի հրամանատար - *2. 203*
Չիլինկիրյան Հովհաննես, Սվյուռքի նշանավոր ազգային-հասարակական գործիչ, հրապարակախոս, պատմաբան, հայ բա-

ղաքական բանտարկյալների օգնության կենտրոնական հանձնախմբի կազմակերպիչներից - *2. 6*
Չիչերին Գեորգի (1872-1936), Սովետական Ռուսաստանի արտաքին գործերի ժողկոմ - *2. 80-90, 92, 94, 95, 303, 349, 487*
Չխեիձե Ն. Ա. (1864-1926), մենշևիկյան կուսակցության ղեկավարներից - *1. 461, 465, 468, 498; 2. 103, 192, 193, 248, 372*
Չխենկելի Ակակի (1874-1959), մենշևիկյան կուսակցության ղեկավարներից, Ժամանակավոր կառավարության ներկայացուցիչ Անդրկովկասում, ՕԶԱԿՈՄ-ի անդամ, Վրաստանի արտաքին գործերի մինիստր - *1. 455, 533, 534, 536; 2. 23, 55, 86,121, 122, 124, 127, 129, 130, 134, 139-143, 158, 159, 259, 260, 288, 292, 293, 315, 374*
Չոպանյան Արշակ (1872-1954), գրող, բնանդատ, հասարակական գործիչ - *1. 278; 2. 325, 326*

Պ

Պալեոլոգ Ժորժ (1859-1944), Ֆրանսիայի դեսպանը Ռուսաստանում - *2. 18*
Պալլմյան Շավարշ, Իսկյուտարի քահանա - *1. 5*
Պալյան Երվանդ, հնչակյան գործիչ - *1. 103, 104*
Պալյանց Գրիգոր, Սամարղանդի հայկական ջոկատի կոմիսար - *2. 222*
Պալյանց Սաթենիկ, Սամարղանդի հայկական դպրոցի ուսուցչուհի - *2. 222*
Պանդուխտ, հնչակյան գործիչ - *2. 136*
Պապաջանյան (Պապաջանով) Միքայել (1865-1926), 4-րդ Պետական դումայի անդամ, կադետ, ՕԶԱԿՈՄ-ի անդամ - *1. 209, 210; 2. 23, 122,158, 293, 294, 299, 332, 334, 339, 342, 346*
Պաստրյուլին, Թիֆլիսի նահանգային ժանդարմերիայի պետ - *1. 299*
Պավլովիչ Մ.,«Ժորեսի մահը» գրքի հեղինակը - *1. 421*
Պավլոցկի, գեղանկարիչ - *2. 539*
Պատկանյան Ռափայել (1830-1892), բանաստեղծ, արձակագիր, հասարակական գործիչ - *1. 395*
Պարագվիգ, գերմանական բանագնաց սպա - *2. 393*
Պարոնյան Վ., Ստ. Շահումյանի դասընկերներից - *1. 69*
Պարվուս (1869-1924), գերմանական սոցիալ-դեմոկրատական կուսակցության անդամ, հետո դարձել է մենշևիկ, սերտորեն համագործակցել է երիտթուրքական կուսակցության պարագլուխների հետ, եղել է գերմանական իմպերիալիզմի գործակալ - *1. 124*
Պենդյուրին, կոմիսար - *2. 164, 165*
Պեպինով Ալի, մուսավաթական, էրզրումի բաղաքապետարանի բարտուղար-2. 114
Պետրոս Մեծ (1672-1725), Ռուսաստանի կայսր - *1. 344*
Պետրոսյան Նորիկ, հասարակական-քաղաքական գործիչ, ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր - *1. 18*
Պետրոսյանց (Պետրոսով) Պետրոս, Աշխաբադի կարմիր բանակի հրամանատար - *2. 219-221, 482*
Պետրոսյան, գումարտակի հրամանատարի օգնական - *2. 439*
Պետրով Գեորգի (1892-1918), Բաքվի կարմիր բանակի հրամանատար, գնդակահարվել է Բաքվի 26 կոմիսարների հետ միասին - *2. 360, 361, 363, 444-446, 451, 459-461, 475, 476, 478-480, 489, 490, 493, 496, 510, 515, 526, 527, 530, 537*
Պետրուխնի Գրիգորի (1878-1858), 4-րդ Պետական դումայի անդամ, սովետական պետական և կուսակցական գործիչ - *1. 304, 306*
Պիսարև Դմիտրի (1840-1868), ռուս հրապարակախոս, հեղափոխական-դեմոկրատ - *1. 38, 86*
Պիկո Ժորժ, ֆրանսիացի դիվանագետ - *2. 17*
Պլեխանով Գեորգի (1856-1918), մարքսիզմի ռուս տեսաբան ու պրոպագանդիստ, բանվորական ու սոցիալիստական շարժման գործիչ - *1. 99, 103, 105, 111, 117, 269, 297, 298, 323, 380, 383, 402*
Պլինիուս Կրտսեր (62-114), Հին Հռոմի պետական գործիչ, գրող - *1. 295*
Պլևե Վ. Կ. (1846-1904), ցարական Ռուսաստանի Ոստիկանական դեպարտամենտի պետ, ներքին գործերի նախարար - *1. 117, 224*
Պյատնիցկի Օ., սովետական պետական և կուսակցական գործիչ - *1. 413*
Պոլետաև Նիկոլայ (1872-1930), սովետական պետական և կուսակցական գործիչ - *1. 413*

Պոլուխին Վլադիմիր (1886-1918), Սովետական Ռուսաստանի Ժողկոմսովետի ներկայացուցիչը Բաքվում, գնդակահարվել է Բաքվի 26 կոմիսարների հետ միասին - *2. 476, 526, 531*
Պոկրովսկի Միխայիլ (1868-1932), պատմաբան, սովետական պետական և կուսակցական գործիչ - *2. 67, 68*
Պոնյատկովսկի, գեներալ, Ավստրո-Հունգարիայի ներկայացուցիչը Կ. Պոլսում - *2. 348*
Պոռչյան Պոռչ (1883-1918), Պերճ Պոռչյանի որդին, ձախ էսէռ, Սովետական Ռուսաստանի Ժողկոմսովետի փոստ-հեռագրի ժողկոմ, 1918 թ. մարտին հրաժարվել է պաշտոնից և մասնակցել է Մոսկվայում էսէռների խռովությանը - *2. 40*
Պրժեվալսկի, ցարական բանակի գեներալ, Կովկասյան ռազմաճակատի գլխավոր հրամանատար - *1. 507, 511; 2. 51, 110, 111*
Պրուդոն Պիեռ (1809-1865), ֆրանսիացի հրապարակախոս, տնտեսագետ, անարխիզմի հիմնադիրներից մեկը - *1. 288*
Պուշկին Ալեքսանդր (1799-1837) ռուս բանաստեղծ, արձակագիր, դրամատուրգ - *1. 32, 38, 39, 79*

Ջ

Ջալալյան Մեղրակ, Բաշ-Ապարանի հերոսամարտի ղեկավարներից - *2. 281, 284, 285*
Ջահանգիր աղա, Բաշ-Ապարանի հերոսամարտին մասնակցած եզդի կամավորների հրամանատար - *2. 282*
Ջամալյան (Իսահակյան) Արշակ (1882-1940), դաշնակցական գործիչ - *1. 362; 2. 96, 110, 420, 421, 488, 490, 499, 501*
Ջավադ բեյ, թուրքական զորամասի հրամանատար - *2. 273*
Ջավիդ բեյ, թուրքական պառլամենտի փոխնախագահ - *2. 342*
Ջափարիձե Պրոկոֆի (Ալոշա), (1880-1918), Բաքվի սովետի նախագահ, գնդակահարվել է Բաքվի 26 կոմիսարների հետ միասին - *1. 136, 208, 214, 216, 228, 230, 233, 375, 377, 381, 410, 466, 471, 490; 2. 176-179, 190, 192, 194, 225, 227, 270-272, 432, 442, 456, 476, 478, 480, 489, 490, 491, 492, 493, 510, 515, 525, 526, 527, 530, 531, 532, 537, 538*
Ջափարիձե Վարվարա, Պ. Ջափարիձեի կինը - *2. 490, 491*
Ջաֆարով Մ., սկզբում կադետ, հետո մուսավաթական, ՕՁԱԿՀՄ-ի անդամ, աղրբեջանական կառավարության ներկայացուցիչ - *2. 23, 24, 122, 158, 293, 396, 420, 421*
Ջեմալ փաշա (1872-1922), երիտթուրքական կուսակցության պարագլուխներից - *2. 289, 303, 331, 339*
Ջիվանշիր Բեյբութ, Շահումյանի ուսանողական տարիների ընկերը, հետագայում մուսավաթական Աղրբեջանի ներքին գործերի նախարար - *1. 239, 389; 2. 166, 193, 498, 520, 522*
Ջորջաձե, ցարական պահնորդական բաժնի գործակալ - *1. 300*
Ջունկովսկի, ցարական Ռուսաստանի ներքին գործերի փոխնախարար - *1. 360*

Ռ

Ռամիշվիլի (Իսիդոր) Նոյ (1881-1926), մենշևիկ, Վրաստանի ներքին գործերի նախարար - *1. 206, 532; 2. 132, 189, 190, 223, 230, 295, 368, 396, 474*
Ռասուլ-Զադե, մուսավաթական գործիչ - *1. 527-529, 532; 2. 174, 175, 206, 207, 291-292, 348, 501*
Ռաուֆ բեյ, Տրապիզոնի բանակցություններում թուրքական պատվիրակության ղեկավար - *2. 124, 126-128, 130, 333*
Ռիզա Ամեն, երիտթուրքական գործիչ - *2. 332*
Ռիզել Կ., Բաքվի բոլշևիկյան կոմիտեի անդամ - *1. 252*
Ռիկարդո Դավիթ (1772-1823), անգլիացի տնտեսագետ - *1. 297*
Ռիֆաաթ փաշա, Թուրքիայի դեսպանը Բեռլինում - *2. 93*
Ռոդբերտուս Կ., գերմանացի քաղաքատնտեսության տեսաբան - *1. 297*
Ռոստոմ (Ստեփան Զորյան), (1867-1919), դաշնակցության հիմնադիրներից - *2. 131, 182, 191, 192, 201, 314, 326, 329, 330, 332, 345, 346, 350, 365-367, 374, 376, 440, 470, 494, 504, 506, 507-514, 516, 518, 520*
Ռուխկյան Հրաչյա (ծնվ. 1915), գեղանկարիչ - *2. 540*
Ռուսո Ժան Ժակ (1712-1778), ֆրանսիացի լուսավորիչ, փիլիսոփա, մանկավարժ - *1. 28*
Ռուստամբեկով, մուսավաթական գործիչ - *2. 181, 369*

Ս

Սադովսկի Մ., Բաքվի մենշևիկների առաջնորդ, Յենտրոկասպիայի դիկտատուրայի կառավարության նախագահ - *1. 460, 461, 476; 2. 242, 260, 454, 464, 492, 493, 496*
Սազոնով Սերգեյ (1860-1927), Ռուսաստանի արտաքին գործերի նախարար1910-1916 թթ. - *2. 17, 18, 20, 21*
Սալկո, Ռուսաստանի նավթային արդյունաբերության ղեկավարներից - *2. 469, 470*
Սահակյան Սաքո, Բաքվի աջ էսէռների ղեկավար, Յենտրոկասպիայի դիկտատուրայի կառավարության անդամ - *1. 442, 456; 2. 178, 190, 225-227, 493*
Սահակյան Սիմակ (1879-1961), հեղափոխական շարժման մասնակից, սովետական պետական աշխատող, Հայաստանի ժողովրդական ուսուցիչ - *1. 79, 374*
Սահակյան, Հայաստանի խորհրդի նախագահ - *2. 405*
Սաղաթելյան Հովհաննես, դաշնակցական, Պետական դումայի անդամ - *1. 208, 209, 212- 214, 289*
Սամուելյանց Քրիստափոր, սոցիալ-դեմոկրատ - *1. 237*
Սայաթ-Նովա (1712-1795), հայ բանաստեղծ, աշուղ - *1. 332*
Սայքս Մարկ, անգլիացի դիվանագետ - *2. 17*
Սապահ-Գուլյան (Տեր-Դանիելյան) Ստեփան (1861-1928), Հնչակյան կուսակցության ղեկավարներից - *1. 128; 2. 325*
Սարգսյան Երվանդ (ծնվ. 1913), պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր - *1. 12; 2. 119, 123, 297*
Սարյան Գեղամ (1902-1976) հայ բանաստեղծ - *2. 543*
Սարյան Մարտիրոս (1880-1972), հայ մեծ նկարիչ - *1. 482*
Սարուխանյան Մ., Ստ. Շահումյանի ուսանողական ընկերներից - *1. 69, 70*
Սարուխանյան Նորիկ, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր - *1. 12*
Սաքանյան Կարինե, Երևանի Ստեփան Շահումյանի անվան դպրոցի տնօրեն - *2. 544*
Սեբաստացի Մուրատ, հայ ազատագրական շարժման գործիչ - *2. 112, 117, 135-137, 203, 223, 366, 503, 504-505, 513, 514*
Սեպուհ, դաշնակցական գործիչ - *2. 114, 136, 503, 504, 513, 514*
Սերոբյան Մուշեղ, սփյուռքահայ պատմաբան - *2. 324, 326*
Սիկիկյան (Սիկիկով) Սոսխես (1862-1932), ռուսական բանակի գեներալ-մայոր, 1918թ. մայիսին Սարդարապատի հերոսամարտի հրամանատար - *2. 210, 274, 275, 282, 309, 310, 311*
Սիլին, գնդապետ, սահմանապահ գումարտակի հրամանատար - *2. 275, 282*
Սիլվին Մ., «Բանվոր դասակարգի ազատագրության պայքարի միության» անդամ - *1. 68*
Սիմոնյան Սիմոն (1914-1986), Սփյուռքի նշանավոր ազգային-հասարակական գործիչ, գրող - *1. 7*
Սիմոնյան Վասիլ, Ստ. Շահումյանի դասընկերներից - *1. 48, 53, 54, 69*
Սլոմինսկի, կադետական գրող - *1. 421*
Սկոբելև, Ժամանակավոր կառավարության անդամ - *2. 45*
Սմիթ Ադամ (1723-1790), շոտլանդացի տնտեսագետ և փիլիսոփա - *1. 297*
Սմիթ Վիլսեն, ԱՄՆ-ի հյուպատոս - *2. 60, 59*
Սմիրնով, Երկնկայի բանակցությունների մասնակից - *2. 96*
Սմիրնով Յա., Բաքվում ռուս ազգային խորհրդի անդամ - *2. 499*
Սոլնցև Ֆեոդոր, զինվորական գործիչ, գնդակահարվել է Բաքվի 26 կոմիսարների հետ միասին - *2. 531*
Սոկոլնիկով Գ., սովետական դիվանագետ - *2. 78*
Սպանդարյան Թելիզար, Ս. Սպանդարյանի եղբայրը - *1. 417*
Սպանդարյան Սպանդար (1849-1922), հրապարակախոս, «Նոր դար» թերթի հիմնադիր-խմբագիր, Ս. Սպանդարյանի հայրը - *1. 401, 402, 412, 413, 415, 419*
Սպանդարյան Սուրեն (1882-1916), պրոֆեսիոնալ հեղափոխական, հրապարակախոս, գրաքննադատ, ՌՍԴ/բ/Կ Կենտկոմի անդամ - *1. 74, 95, 152, 199, 207, 208, 214, 228, 230, 233, 262, 298, 299, 300, 401-420*
Սվերդլով Յակով (1885-1919), սովետական պետական և կուսակցական գործիչ - *1. 303, 413, 418, 419; 2. 94, 362, 460, 477, 487, 532*

Ստալին (Ջուղաշվիլի) Իոսիֆ (1873-1953), Սովետական Ռուսաստանի ազգությունների ժողկոմ, ՍՍՀՄ ղեկավար - *1. 207, 208, 215, 233, 310, 384, 410, 413, 414, 418, 419, 447, 465, 521, 524; 2. 29, 30, 38, 40, 42, 43, 63-66, 86, 87, 163, 164, 217, 220, 222, 248, 262, 263, 268, 358, 383, 400, 427, 428, 432, 436, 441, 464, 471, 491*
Ստամբոլցյան Արտակ (1895-1937), Բաքվի կոմունայի գործիչներից, կուսակցական ղեկավար աշխատանք է կատարել Մոսկվայում և այլ քաղաքներում - *2. 477*
Ստասովա Եղենա (1873-1966), սովետական պետական և կուսակցական գործիչ - *1. 414, 418*
Ստավրովսկի, մենշևիկ, Էրզրումի քաղաքապետ - *2. 114*
Ստարցև Գ., «Баку» թերթի խմբագիր-հրատարակիչ 1902-1918 թթ. - *1. 254*
Ստեցենկո, Թիֆլիսի ռեալական ուսումնարանի դաստիարակ - *1. 57*
Ստեփանյան Աշոտ, Աշխաբադի ընդհատակյա բոլշևիկյան կազմակերպության անդամ - *2. 532*
Ստոլիպին Պյոտր (1862-1911), ցարական Ռուսաստանի ներքին գործերի մինիստր, մինիստրների խորհրդի նախագահ - *1. 224*
Ստոքս, անգլիացի գնդապետ - *2. 474, 475*
Ստուրուա Գ. (1870-1931), պրոֆեսիոնալ հեղափոխական, Վրաստանում սովետական պետական գործիչ - *2. 477, 492, 494*
Սրմաքեշյան Լուսաբեր, Նազարեթ Սրմաքեշյանի մայրը - *2. 5*
Սրմաքեշյան Հրանտ, Նազարետ Սրմաքեշյանի հայրը - *2. 4, 5*
Սրմաքեշյան Նազարեթ, Սփյուռքի նշանավոր ազգային-հասարակական գործիչ, հրապարակախոս, հայ քաղաքական բանտարկյալների օգնության կենտրոնական հանձնախմբի կազմակերպիչներից - *2. 4, 5, 6, 8*
Սրմաքեշյան Սոնա, Նազարեթ Սրմաքեշյանի կինը - *2. 5*
Սուլթանով Խոսրոֆ բեկ, Ղարաբաղի նահանգապետ - *2. 358, 419*
Սուխանով Նիկոլայ (1882-1931), տնտեսագիտության տեսաբան, հրապարակախոս, աջակցել է Ժամանակավոր կառավարությանը - *1. 297, 421*
Սուխարցև Ի. (1880-1931), ձախ էսէռ, Բաքու քաղաքի հեղափոխական պաշտպանության կոմիտեի քարտուղար - *2. 178, 179, 189, 190, 225, 227, 372*
Սուխորուկով, աջ էսէռ, Յենտրոկասպիայի դիկտատուրայի կառավարության մինիստր - *2. 493*
Սումնոլկյան Գաբրիել (1825-1912), հայ դրամատուրգ, հասարակական գործիչ - *1. 32, 395*
Սուրենին, Ստ. Շահումյանի ծածկանուններց - *1. 153, 298, 299, 303, 387*

Վ

Վագներ Ադոլֆ (1835-1917), տնտեսագետ, Բեռլինի համալսարանի պրոֆեսոր - *1. 101, 111, 112, 129*
Վազգեն Առաջին (1908 1994), Ամենայն Հայոց Կաթողիկոս - *2. 12*
Վարանդյան (Հովհաննիսյան) Միքայել (1872-1934), պատմաբան, հրապարակախոս, դաշնակցության տեսաբան - *1. 115-123, 145, 267-271, 285-289, 320, 321, 322, 343-351, 419; 2. 329*
Վարդանյան Վ., բժիշկ, բոլշևիկներին համարող - *1. 165*
Վարդումյան Մելիք, Ստ. Շահումյանի ընկերներից - *1. 67*
Վարժապետյան Ներսես (1837-1884), Կ. Պոլսի պատրիարք - *1. 162*
Վեբեր Մաքս (1864-1920), սոցիոլոգ, տնտեսագետ, Բեռլինի համալսարանի պրոֆեսոր - *1. 129*
Վեզիրով Միր Հասան (1886-1918), ձախ էսէռ, Բաքվի Ժողկոմսովետի հողագործության կոմիսար, գնդակահարվել է Բաքվի կոմիսարների հետ միասին - *1. 490; 2.194, 227, 372, 401, 493, 510, 531*
Վելունց Աբրահամ, աջ էսէռ, Յենտրոկասպիայի դիկտատուրայի կառավարության անդամ - *2. 439, 454, 494, 496*
Վեհիբ փաշա, Կովկասյան ռազմաճակատի թուրքական զորքերի հրամանատար - *2. 73, 96-101, 108, 110, 111-113, 116, 120, 135, 137-145, 286-288, 290-296, 300, 301, 305, 316, 339, 340, 386, 387, 389*
Վեսելովսկի Յուրի (1872-1919), ռուս գրաքննադատ, բանաստեղծ, թարգմանիչ, հայ մշակույթին նվիրված աշխատությունների հեղինակ - *1. 394*

Վերմիշև Քրիստոֆոր (1863-1933), Թիֆլիսի քաղաքային դումայի նախագահ, «ՊԼՍց» թերթի խմբագիր - *1. 199, 245, 247, 455-461*
Վիլհելմ Երկրորդ (1859-1940), Գերմանիայի կայզեր 1888-1918 թթ. - *1. 427, 429; 2. 264*
Վիլսոն Վուդրո (1856-1924), ԱՄՆ-ի նախագահ 1913-1921 թթ. - *2. 166*
Վինոգրադով, Ալեքսանդրապոլի դեպոյի մեքենավար - *2. 413*
Վիշինսկի, ցարական բանակի գնդապետ - *2. 145*
Վորոնցով-Դաշկով Ի. Ի. (1837-1916), Կովկասի փոխարքա 1905-1916 թթ. - *1. 400, 428; 2.152, 305*
Վրացյան Սիմոն (1886-1969), դաշնակցական գործիչ - *1. 282, 476, 477, 480; 2. 47, 48, 56, 62, 96-98, 101, 108, 118, 120, 121, 132, 135, 136, 293, 309, 311, 316-319, 506, 518-520*

Տ

Տամարկին, Բաքվի կայազորի պետ - *2. 444*
Տարոնցի (Մելսիսյան) Սողոմոն (1904-1971), հայ բանաստեղծ, թարգմանիչ - *2. 543*
Տետեյան Գրիգոր, 1987 թ. Եվրոպառլամենտի առջև առաջին ցույցերի կազմակերպիչը: Այդ ցույցերի արդյունքով Եվրոպառլամենտն ընդունել է հայոց ցեղասպանությունը իրագործած երիտթուրքական իշխանություններին դատապարտող բանաձևը, Սիմոն Տետեյանի հայրը - *1. 4*
Տետեյան Դանիել-Գրիգոր - Սիմոն Տետեյանի որդին - *1. 6*
Տետեյան Եղիսան, Սիմոն Տետեյանի կինը - *1. 6*
Տետեյան Իսկուհի, Սիմոն Տետեյանի քույրը - *1. 4*
Տետեյան Հովսեփ, Սփյուռքի ազգային, հասարակական գործիչ, Սիմոն Տետեյանի եղբայրը - *1. 4*
Տետեյան Սինաս, Սիմոն Տետեյանի եղբայրը - *1. 4*
Տետեյան Սիլվա, Սիմոն Տետեյանի դուստրը - *1. 6*
Տետեյան Սիմոն, Սփյուռքի ազգային, հասարակական գործիչ - *1. 3, 4*
Տետեյան Սրբուհի, Սիմոն Տետեյանի մայրը - *1. 4*
Տերեշչենկո Մ., ժամանակավոր կառավարության արտաքին գործերի նախարար - *2. 26*
Տերյան (Տեր-Գրիգորյան) Վահան (1885-1920), հայ բանաստեղծ, հասարակական գործիչ - *1. 37, 39-41, 72, 133, 135, 266, 362, 367, 394, 466; 2. 29- 36, 47, 52, 63, 64, 307, 308, 346, 349, 380, 488, 540*
Տեր-Առաքելով, Բաքվի սովետի անդամ - *1. 456*
Տեր-Գաբրիելյան Սահակ (1886-1937), Բաքվի արտակարգ հանձնաժողովի նախագահ, Սովետական Հայաստանի Ժողկոմսովետի նախագահ - *2. 227, 272, 380, 456*
Տեր-Գրիգորյան Արամ, Ստ. Շահումյանի դասընկերներից - *1. 37*
Տեր-Գրիգորյան Հեղուշ, Ստ. Շահումյանի կնոջ քույրը - *1. 34, 36, 47, 50, 62, 63, 68, 80, 302*
Տեր-Գրիգորյան Ներսես, Վ. Տերյանի ազգական - *2. 30*
Տեր-Գրիգորյան Սարգիս, Ստ. Շահումյանի կնոջ հայրը - *1. 48, 243*
Տեր-Իսրայելյան Ս., Գանձակի դաշնակցականների ղեկավար - *2. 390*
Տեր-Խաչատրյան Երվանդ, բանասեր - *1. 21*
Տեր-Հարությունյանց Մ., Բաքվի սովետի անդամ - *2. 360*
Տեր-Հովհաննիսյան Ոսկի, հայ գրող Մուրացանի կինը - *1. 404, 413, 416*
Տեր-Ղազարյան Իսրայել, ձախ դաշնակցական - *2. 182*
Տեր-Ղազարյան Ղազար, հեղափոխական գործիչ - *1. 206*
Տեր-Ղազարյան Նարիման, մենշևիկ, Բաքվի ազգային խորհրդի անդամ - *1. 206; 2. 203, 507*
Տեր-Ղազարյան Մերգեյ, Բաքվի ազգային խորհրդի անդամ - *2. 399, 507*
Տեր-Ղևոնդյան Ռուբեն, Ստ. Շահումյանի դասընկերներից - *1. 37*
Տեր-Մինասյան Եգոր, դաշնակցության անդամ - *2. 314, 315*
Տեր-Մինասյան Ռուբեն (1882-1951), դաշնակցական գործիչ - *1. 81; 2. 113, 121, 315, 330, 365*
Տեր-Միքայելյան Հայկ, Հայ ժողովրդական կուսակցության անդամ, Բաքվի ազգային խորհրդի անդամ - *1. 481; 2. 507*
Տեր-Պետրոսյան Լևոն, ՀՀ նախկին նախագահ - *2. 12-14*
Տեր-Պետրոսյան Սիմոն (Կռամ) (1882-1922), պրոֆեսիոնալ հեղափոխական,

զոհվել է 1922 թ. Թիֆլիսում թուրք ոճրագործների ձեռքով - *1. 111, 207, 299, 300, 521, 522; 2. 187*
Տեր-Պողոսյան (Տեր-Պետրոսյան) Արսեն, Բաշ-Ապարանի հերոսամարտի ղեկավարներից - *2. 281, 284, 285*
Տեր-Պողոսյան Մ., դաշնակցական, Բաքվի ազգային խորհրդի անդամ - *2. 399*
Տեր-Օհանյան Ի., Բաքվի ազգային խորհրդի ներկայացուցիչ - *2. 203*
Տերտերյան Եղիշե, Հալեպի Վարդանյան վարժարանի բահանա - *1. 4*
Տիգ-Ջոնս, կապիտան, անգլիական միսիայի ներկայացուցիչն Աշխաբադում, Բաքվի կոմիսարների գնդակահարության կազմակերպիչներից - *2. 528, 533, 534*
Տիգրանյան, Հայաստանի հանրապետության արտաքին գործերի մինիստր - *2. 488*
Տիրյուտին, Թիֆլիսի ռեալական ուսումնարանի տնօրեն - *1. 32*
Տոլստոյ Լև (1828-1911), ռուս գրող - *1. 245-252, 289, 314*
Տորոշելիձե Մ., հեղափոխական գործիչ - *1. 110, 468, 469; 2. 27*
Տվերդոխլեբով, շտաբս-կապիտան - *2. 114*
Տրոնով Վ., Բաքվի բանվոր, բոլշևիկ - *1. 208*
Տրոցկի (Բրոնշտեյն) Լև (1879-1940), ռուսական առաջին հեղափոխության մասնակից, Հոկտեմբերյան հեղափոխությունից հետո Սովետական Ռուսաստանի արտաքին գործերի, այնուհետև ռազմական և ծովային գործերի ժողկոմ, ներկուսակցական ընդդիմության ղեկավար 1923-1929 թթ.,1929 թ. վտարվել է ՍՍՀՄ-ի տարածքից - *2. 67-69, 76, 248, 361, 362*
Տուգան-Բարանովսկի Մ. Ի. (1865-1919), «ձեգալ մարքսիզմի» ներկայացուցիչ, կադետ, տնտեսագիտության տեսաբան - *1. 297*
Տուրգենև Իվան (1818-1883), ռուս գրող - *1. 32, 38, 314*

Ր

Ռաֆֆի (Մելիք-Հակոբյան Հակոբ) (1835-1885), հայ գրող, հրապարակախոս, հասարակական գործիչ - *1. 32, 50, 206*
Ռաֆֆի Արամ, հայ գրող Ռաֆֆու որդին - *1. 206*

Տ

Տերտչաձե Մ., վրացի պատմաբան - *2. 27, 28*
Տիբուլսկի, ձախ էսէռ, Բաքվի Ժողկոմսովետի պարենավորման կոմիսար - *2. 225, 227, 372*
Տիտակայա Միխայիլ (Սիխա) (1865-1950), սովետական պետական և կուսակցական գործիչ - *1. 106, 136, 205, 215, 232, 233, 237, 244, 471*

ՈՒ

Ուրումյան Կոմո (ծնվ. 1927), հասարակական-քաղաքական գործիչ, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր -*1. 13*
Ումանսկի Լև, աջ էսէռ - *2. 454*
Ուսուբբեկով Ն., մուսավաթական գործիչ - *2. 166, 292, 293*
Ուտիցկի Մոիսեյ (1873-1918), «ձախ կոմունիստ» - *2. 68, 348*

Փ

Փափազյան Վահան (1876-1973), Արևմտահայ ապահովության խորհրդի նախագահ, դաշնակցական գործիչ - *2. 136, 210, 213*
Փափազյան Վրթանես (1864-1920), հայ գրող - *1. 288-297*
Փարամազ (Մաթևոս Սարգսյան) (1875-1915), Հնչակյան կուսակցության գործիչ, երիտթուրքերի կողմից կախաղան է բարձրացվել 1915 թ. - *1. 128, 129, 287*
Փերիվերդյան, ենթասպա - *2. 442*
Փիրումյան Նիկոլայ, Ստ. Շահումյանի դասընկերներից - *1. 69, 70, 72, 73*

Ք

Քաբանյան Ռուբեն (1881-1966), սովետական պետական և կուսակցական գործիչ - *1. 299*
Քալանթար Ալեքսանդր (1855-1913), «Մշակ» թերթի խմբագիր 1892-1913 թթ. - *1. 333*
Քալանթար Լևոն, (1891-1959), թատերագետ, ՀՍՍՀ արվեստի վաստակավոր գործիչ - *1. 394*
Քաջազնունի (Տեր-Հովհաննիսյանց) Հովհաննես (1868-1938), դաշնակցական գործիչ - *1. 297; 2. 121, 128, 129, 132, 138, 142, 145, 286, 288, 292, 294, 371, 406, 414, 490, 507*
Քաջբերունի Ռ., արևմտահայերի ներկայացուցիչը Բաքվի ազգային խորհրդում - *2. 507*
Քավթարաձե Ա., Բաքվի սովետի, Կովկասի երկրային կոմիտեի անդամ - *1. 386; 2. 223, 268-270*
Քարասվի Ա., պարսիկ պատմաբան - *2. 359*
Քեմալ Մուստաֆա Աթաթուրք (1888-1938), թուրքական հանրապետության նախագահ 1923-1938 թթ. - *2. 518, 519*
Քոչարյան Հակոբ, հայկական պատվիրակության քարտուղար - *2. 331*
Քոչարյան Ռոբերտ, ՀՀ նախկին նախագահ - *2. 11*
Քոչինյան Անտոն (1913-1990), Հայաստանի կոմկուսի Կենտկոմի առաջին քարտուղար - *2. 422, 423*

Օ

Օբամա Բարակ, ԱՄՆ-ի նախագահ - *1. 23*
Օղիշելիձե, վրացի գեներալ - *2. 73, 113-116, 119, 139, 140, 142, 224, 277, 288, 368*
Օգանյան Անդրանիկ (1865-1927), հայ ազգային-ազատագրական շարժման ականավոր գործիչ, Ժողովրդական հերոս - *1. 476, 481; 2. 57, 58, 103, 104, 114-120, 136, 142, 144, 205, 210, 212, 213, 278, 280, 290, 294, 297, 312, 329, 333, 335, 344, 348, 366, 405-417, 419-422, 424, 467*
Օկինշևիչ Ռաիսա, Բաքվի բոլշևիկյան կազմակերպության անդամ - *1. 215*
Օկինշևիչ Ա., մենշևիկ, Բաքվի սովետի անդամ - *1. 497*
Օհանջանյանց Լ., բոլշևիկներին համակրող հրատարակիչ - *1. 252*
Օհանջանյան Ավ., դաշնակցական, Բաքվի սովետի անդամ, Ցենտրոկասպիայի դիկտատուրայի կառավարության մինիստր - *2. 382, 493*
Օհանջանյան Համո (1873-1947), դաշնակցական գործիչ - *1. 204; 2. 101, 293, 334, 347, 350, 488*
Օնիաշվիլի, վրացի մենշևիկ - *2. 101*
Օսինսկի Վալերիան (1887-1938), «ձախ կոմունիստ», սովետական պետական և կուսակցական գործիչ - *2. 68*
Օրախելաշվիլի (Մամիա) Իվան (1881-1937), Վրաստանի կոմկուսի Կենտկոմի նախագահ, Վրաստանի հեղկոմի նախագահ, ՍՍՀՄ ժողկոմսովետի նախագահի տեղակալ - *1. 469*
Օրջոնիկիձե Գրիգորի (1886-1937), պրոֆեսիոնալ հեղափոխական, սովետական պետական և կուսակցական գործիչ - *1. 207, 261-263, 414; 2. 248*
Օուեն Ռոբերտ (1771-1858), անգլիացի ուտոպիստ-սոցիալիստ - *1. 66*

Ֆ

Ֆահրադյան Եռոք, գրաշար - *1. 112*
Ֆեոդորին, ժանդարմերիայի գնդապետ - *1. 353*
Ֆերեշյան, դաշնակցական, Էրզրումի կոմիսարի օգնական - *2. 112*
Ֆիլոլետով Իվան (1884-1918), Բաքվի ժողտնտխորհրդի նախագահ, գնդակահարվել է Բաքվի 26 կոմիսարների հետ միասին - *1. 379, 386, 410, 466, 490, 493, 495; 2. 225, 227, 372, 478, 492, 493, 525, 526, 531, 538*
Ֆիլոլետովա Օլգա, Ի. Ֆիլոլետովի կինը - *2. 490, 526*
Ֆրանգուլյան Սերգեյ, պատմաբան - *1. 162*
Ֆրունզե Ալեքսեյ, Սամարղանդի սովետի նախագահ - *2. 220, 221*
Ֆրունզե Միխայիլ (1885-1925), սովետական պետական, կուսակցական և ռազմական գործիչ - *2. 223*
Ֆունտիկով, աջ էսէռ, Անդրկասպիայի կառավարության ղեկավար, Բաքվի 26 կոմիսարների սպանության կազմակերպիչներից - *2. 221, 527-530, 539*
Ֆուրյե Շարլ (1772-1837), ֆրանսիացի ուտոպիստ-սոցիալիստ - *1. 66*

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Նազարեթ Սրմաքեշյանի կենսագրությունը....4

ԳԼՈՒԽ 12
Սովետական Ռուսաստանի Ժողկոմսովետի դեկրետը
«Թուրքահայաստանի մասին»....33
դ. «Թուրքահայաստանի մասին» դեկրետը....40
ե. «Թուրքահայաստանի մասին» դեկրետի իրագործման երաշխիքները....43

ԳԼՈՒԽ 13
Բրեստ-Լիտովսկի պայմանագիրը և Հայաստանը....66
1. Երեք տեսակետ....66
2. Բրեստում ստորագրված զինադադարը....69
3. Երզնկայի զինադադարը....71
4. Բանակցությունների ընթացքը....73
5. Սովետական Ռուսաստանի հետագա դիվանագիտական քայլերը....83
6. Բրեստ-Լիտովսկի պայմանագրի հետևանքները....95

ԳԼՈՒԽ 14
Շահումյանի զգուշացումն անտեսելու հետևանքները....108
1. Էրզրումը հանձնվել է դավաճանությամբ....108
2. Տրապիզոնի բանակցությունները....120
3. Կարսի անկումը....134
4. Ալեքսանդրապոլի հանձնումը....144

ԳԼՈՒԽ 15
Շահումյանի «Փոքրիկ բացատրությունը»....149
Շահումյանը զգուշացնում է ազգամիջյան պատերազմների մասին....155
«Ստեղծված վիճակից դուրս գալու միակ ելքը»....158
Սեփական ուժեր ստեղծելու անհրաժեշտությունը....162
«Մուսավաթ»-ի ազդեցության ուժեղացումը....165
Շահումյանի դասախոսությունը....168

ԳԼՈՒԽ 16
Մուսավաթականների զինված խռովությունը....172
1. Երիտթուրքական հրամանատարության պահանջով արգելվում է
հայ զինվորներին վերադառնալ Հայաստան....172
2. Ռասուլ-Զադեն ահաբեկում է....175
3. Մուսավաթականները սկսում են զինված խռովությունը....175
4. «Զուսպ և ներողամիտ քաղաքականություն»....183

5. Շահումյանի նամակը Ռուսաստանի Ժողկոմսովետին....185
6. Մենշևիկները կեղծում են իրականությունը....191
Ժողովրդական կոմիսարների սովետի
ստեղծման անհրաժեշտությունը....196

ԳԼՈՒԽ 17
Բաքվի Հայոց ազգային խորհրդի հարցը....199
Շահումյանը և հայկական կամավորական գնդերի կազմակերպումը....206

ԳԼՈՒԽ 18
Բաքվի ժողկոմսովետի կազմավորումը....225
Բաքվի Ժողկոմսովետի հռչակագիրը....228
Ռուսաստանից Անդրկովկաս անջատելու մասին Սեյմի որոշումը....229
Ժողկոմսովետի առաջին ձեռնարկումները....233
Իշխանության հարցի մասին....236
Քաղաքացիական պատերազմի մասին....239
«Մենշևիկները մեղադրողից դառնում են մեղադրյալ»....242
Ժողկոմսովետի ձեռնարկած միջոցառումները....244
«Քաղաքական դրությունը Ռուսաստանում և Անդրկովկասում»....246
Ժողովրդական լուսավորության խնդիրները....250
«Հաղթանակի գրավականը»....251
Մուսուլման գյուղացիներին համախմբելու համար....253
Անդրկովկասի դրության մասին....255
Նամակներ Լենինին և Ստալինին....262
«Տրամաբանական վախճան»....265
Բաքուն կդառնա աշխատանքային օրինակելի կոմունա....266
Բանավեճ Բաքվի սովետում 1918 թ. հունիսի 7-ին....268
Ձեռնարկումները շարունակվում են....271

ԳԼՈՒԽ 19
Հայկական ուժերի տարած հաղթանակները և Բաթումի պայմանագիրը....273
1. Սարդարապատի հերոսամարտը....273
2.Ղարաքիլիսայի ճակատամարտը....278
3. Ապարանի պաշտպանությունը....281
4. Բաթումի պայմանագիրը....286
ԳԼՈՒԽ 20
Հայաստանի անկախության հռչակումը....309
Թուրքիան «անկախ Հայաստան» է ստեղծում
իր սեփական շահերից ելնելով....315
1918 թ. մայիսի 28 և 1920 թ. նոյեմբերի 29....322
Երկու խոսք անկախության գաղափարի մասին....323

ԳԼՈՒԽ 21
Հայկական պատվիրակությունը Կ. Պոլսում.....331
1. Պատվիրակության օրագրությունը և արձանագրությունները.....331
2. Պատվիրակության կազմած զեկուցագիրը.....336
3. Ա. Խատիսյանի կազմած զեկուցագիր-օրագիրը.....339
4. Քննանքը սահման չունի.....342
5. Խատիսյանի ուղարկած նամակները Հ. Քաջազնունուն.....344
6. Թուրքական մամուլին Խատիսյանի տված հարցազրույցները.....351

ԳԼՈՒԽ 22
«Աղրբեջան» հանրապետության ստեղծումը.....355
Պահանջվում է ուժերի գերլարում.....358

ԳԼՈՒԽ 23
Արամ Մանուկյանի երկտողը.....365
Հայկական ջոկատները զինաթափելու և Բաքվից հեռացնելու խնդիրը.....368
Շահումյանի պատասխանը Ջառաֆյանին.....371
Բաքվի դաշնակցության կենտրոնական կոմիտեի կոչը.....374
Ռոստոմի ելույթը.....376

ԳԼՈՒԽ 24
Ռազմական գործողությունների սկիզբը.....379
Անգլիական հյուպատոսի կազմակերպած հեղաշրջման փորձի ձախողումը.....382
Գերմանական ճնշումը թուլացնելու համար.....383
Ա. Խատիսյանի նամակը.....386
Գերմանա-թուրքական հրամանատարության, Աղրբեջանի և Վրաստանի կառավարությունների պահանջը.....393
Անգլիացիներին հրավիրելու հարցը.....397
Գնդապետ Ավետիսովի պահանջը.....400
«Անգլիական ոսկին վարուց աշխատում է Բաքվում».....401

ԳԼՈՒԽ 25
«Չեմ կրնար այս պայմաններուն հանդուրժել».....404
Էնվեր փաշայի պահանջը.....405
Գեներալ Նազարբեկովի հրամանը.....406
Սիարոնյանի և Խատիսյանի հեռագրերը.....408
Անդրանիկ Օզանյանի հրամանը.....409
Անդրանիկի հեռագիրը Շահումյանին.....410
«Հանձինս ձեզ ողջունում եմ իսկական ժողովրդական հերոսին».....414
Անդրանիկին զրպարտելու փորձերը.....417

ԳԼՈՒԽ 26
Բաքվի սովետի 1918 թ. հուլիսի 25-ի նիստը.....426
Շահումյանի հայտարարությունը.....430
«Արև» թերթը թաքցնում է ճշմարտությունը.....433
Ժողկոմսովետի հրաժարականն ուներ ձևական բնույթ.....441
Հուլիսի 28-ին տեղի ունեցած զորահանդեսը.....444
Հայկական զորամասերը հեռանում են ռազմաճակատից.....446
«Սոցիալիստների համար միակ արժանի քայլը».....448
Գնդապետ Ավետիսովի սպառնալիքը.....449
Բաքվի բանվորներին ուղղված կոչը.....452

ԳԼՈՒԽ 27
Ցենտրոկասպիայի ղեկտատուրայի ստեղծումը.....454
Թադևոս Ամիրյանի վճռականությունը.....456
Թուրքական գրոհը ետ է մղվում.....460
Բաքվի բոլշևիկների կոնֆերանսը.....462
Անգլիացիներին ընդունում են ծոխությամբ.....462

ԳԼՈՒԽ 28
«Նոր իշխանության կերպարանքը».....466
«Անազնիվ զրպարտիչները».....468
Աբրահամ Գյուլխանդանյանի տեսակետը.....472
Սովետական ուժերն էվակուացնելու մասին հուշագիրը.....475
Ցենտրոկասպիայի ղեկտատուրայի խարդախությունը.....477
«Պատմական մեխանիզմ».....482

ԳԼՈՒԽ 29

Ձախ սոցիալիստական կուսակցությունների բյուրոյի վերջնագիրը.....486
Պատանդ վերցնելու միջոցը.....487
Բաքվի սովետի նոր ընտրությունները.....491
Դիկտատուրայի ղեկավարների փախուստը.....494
Դարձյալ Թադևոս Ամիրյանը.....496
Բաքվի հայ բնակչության կոտորածը.....496
Ռոստոմի և Մուրատի մասին.....503
Բեյբութ Ջիվանշիրը.....520

ԳԼՈՒԽ 30

«Ահա Շահումյանը».....523
«Բոլշևիկներն անվտանգ են միայն մեռած ժամանակ».....527
Հանցագործությունը կոծկելու փորձերը.....532
Մորուք Կարոն լուծում է Շահումյանի սպանության վրեժը.....535
Արդար դատաստանը չի ուշանում.....536
Շահումյանի և մյուս կոմունարների հիշատակը չի խամրում.....539
Վերջաբանի փոխարեն.....547
Անձնանունների բառարան.....550

ՆԱԶԱՐԵԹ ՍՐՄԱՔԵՇՅԱՆԻ ՀՈՎԱՆԱՎՈՐՈՒԹՅԱՄԲ ՏՊԱԳՐՎԱԾ ԳՐՔԵՐԻ ՑԱՆԿ

Վլադիմիր Պետրոսյան, Գրիգոր Հարությունյանի ժամանակը, գիրք երրորդ, Երևան, 2008 թ., 526 էջ.

Նազարեթ Սրմաքեշեան, Ազգովի գպաստանանաք, Երևան, 2011 թ. 168 էջ

Վլադիմիր Պետրոսյան. Ստեփան Շահումյան. նրա կյանքի պատմությունը, գիրք երկրորդ, Երևան, 2013 թ., 580 էջ.

ՎԼԱԴԻՄԻՐ ՊԵՏՐՈՍՅԱՆԻ ՀԵՂԻՆԱԿՈՒԹՅԱՄԲ ՏՊԱԳՐՎԱԾ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1. Ապարանի անցյալն ու ներկան. Երևան, 1960, 37 էջ.
2. Ինտերնացիոնալիզմի դրոշին հավատարիմ. Երևան, 1983, 368 էջ.
3. Անդրկովկասի և Միջին Ասիայի բոլշևիկյան կազմակերպությունների համատեղ պայքարի պատմությունից. Երևան, 1987, 327 էջ.
4. Էնվերի վերջը. Բեյրութ, 1996, 190 էջ.
5. Արարատը այնտեղ է մնա Երևանի կողմը. Բեյրութ, 2001, 176 էջ.
6. Ռուբեն Սևակը և մեր ժամանակը. Երևան, 2003, 302 էջ.
7. Կոմս Լորիս-Մելիքով. Երևան, 2005, 479 էջ.
8. Զմոռանանք. Արևմտահայության ազգային-ազատագրական պայքարը 20-րդ դարի երկրորդ կեսին. Երևան, 2006, 813 էջ.
9. Հայաստան. 1918 թվական. Երևան, 2007, 211 էջ.
10. Ժամանակի հրամայականը, հատոր առաջին. Երևան, 2008, 801 էջ.
11. Հայաստանի պատմություն (համահեղինակ՝ Լ. Ղարիբջանյան), Երևան, 2008, 245 էջ.
12. Գրիգոր Հարությունյանի ժամանակը. առաջին հատոր. Երևան, 2008, 474 էջ.
13. Գրիգոր Հարությունյանի ժամանակը. երկրորդ հատոր. Երևան, 2008, 516 էջ.
14. Գրիգոր Հարությունյանի ժամանակը. երրորդ հատոր. Երևան, 2008, 526 էջ.
15. Ռուբեն Սևակի աչքերով. Երևան, 2009, 219 էջ.
16. Հայաստան. 1919-1922 թվականներ. առաջին հատոր. Երևան, 2011, 623 էջ.
17. Հայաստան. 1919-1922 թվականներ. երկրորդ հատոր. Երևան, 2011, 675 էջ.
18. Նիգ-Ապարան. Երևան, 2011, 1008 էջ.
19. Էնվերի վերջը (երկրորդ լրամշակված հրատարակություն). Երևան, 2012, 256 էջ.
20. Ստեփան Շահումյան. նրա կյանքի պատմությունը, առաջին հատոր, Երևան, 2013, 555 էջ.
21. Ստեփան Շահումյան. նրա կյանքի պատմությունը, երկրորդ հատոր. Երևան, 2013, 580 էջ.
22. Անտոն Քոչինյանի ժամանակը. Երևան, 2013, 582 էջ.
23. Էնվերի վերջը (3-րդ հրատարակություն). Երևան, 2013, 256 էջ.
24. Վլադիմիր Մովսիսյան. կյանքը և գործը. Երևան, 2013, 323 էջ.

Վ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՄԲ ԿԱՄ ԸՆԴԱՐՁԱԿ ԱՌԱՋԱԲԱՆՈՎ ՏՊԱԳՐՎԱԾ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1. Գուրգեն Յանիկյան. Նպատակ և ճշմարտություն, Երևան, 1999.
2. Սասուն Գրիգորյան. Հավերժության լուսամատյան, Երևան, 2002.
3. Յովհաննէս Չիլինկիրեան, Թուրքերուն (իբր թէ) չգիտցած իրականութիւնները, առաջին հատոր (հայերեն, թուրքերեն, անգլերեն, ֆրանսերեն), Երևան, 2005.
4. Անտոն Քոչինյան. Անավարտ հուշեր, Երևան, 2008.
5. Յովհաննէս Չիլինկիրեան, Թուրքերուն (իբր թէ) չգիտցած իրականութիւնները, երկրորդ հատոր, Երևան, 2009.
6. Վլադիմիր Սիսակյան, Խաղողն Արագածի փեշերին, Երևան, 2009.
7. Советская Армения в годы Великой отечественной войны (1941-1945), сборник документов и материалов, Ереван, 2009.
8. Дны сквозь строчки. Из рабочих дневников Карена Демирчяна, Ереван, 2010.
9. Յովհաննէս Չիլինկիրեան, Վերադարձ Հայաստան, Երևան, 2011.
10. Նազարեթ Սրմաքեշեան, Ազգովին զգաստանանաք, Երևան, 2011.
11. Յովհաննէս Չիլինկիրեան, Սուտերէ եւ սխալներէ ազատուած Ռուբէն Սեւակի հերոսական կեանքի պատմութիւնը, Երևան, 2012.
12. Սասուն Գրիգորյան. Մեր հերոսները և վինուժի գեներալները (1988-2012 թթ.), Երևան, 2012.
13. Արամայիս Երզնկյան. Դեմք, լեգենդ (հայերեն և ռուսերեն), Երևան, 2012.
14. Բաբկեն Վարդանյան. Զրույց կյանքիս հետ, Երևան, 2012.
15. Յովհաննէս Չիլինկիրեան, Թուրքերուն (իբր թէ) չգիտցած իրականութիւնները (հայերեն, թուրքերեն), երրորդ հատոր, Երևան, 2013.

ՎԼԱԴԻՄԻՐ ԳԵՎՈՐԳԻ ՊԵՏՐՈՍՅԱՆ

ՍՏԵՓԱՆ ՇԱՀՈՒՄՅԱՆ. ՆՐԱ ԿՅԱՆՔԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ

Հատոր երկրորդ

ВЛАДИМИР ГЕВОРГОВИЧ ПЕТРОСЯН

СТЕПАН ШАУМЯН. ИСТОРИЯ ЕГО ЖИЗНИ

Том второй

«Նոյյան Տապան» հրատարակչություն

Հրատարակչության խմբագիր՝ Տիգրան Հարությունյան
Համակարգչային շարվածքը՝ Հարություն Աթոյան
Էջադրումը և շապիկի ձևավորումը՝ Դիանա Գրիգորյան
Սրբագրությունը՝ Մարատ Պետրոսյան

Տպագրությունը՝ օֆսեթ: Չափսը՝ 60X 84, 1/16
Թուղթը՝ օֆսեթ, ծավալը՝ 36.25 մամուլ
Տպաքանակը՝ 300 օր.:
«Նոյյան Տապան» տպագրատուն
ՀՀ, Երևան 0009, Իսահակյան 28
Հեռ. (374) 060 276462
Էլ. փոստ՝ contact@nt.am
Կայք՝ http://www.nt.am